Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿԻՐ ԵՒ ԴՐԱՑԻՔ

ԱՐՑԱԽ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА АРМЕНИСТИКИ
ARMENOLOGICAL LIBRARY

ЕП. МАКАР БАРХУТАРЯНЦ
Bishop MACAR BARKHUTARIANTS

СТРАНА АЛУАНК И СОСЕДИ

THE LAND OF ALUANK AND THE NEIGHBOURS

АРЦАХ

ARTSAKH

ГАНДЗАСАР GANDZASAR
БОГОСЛОВСКИЙ ЦЕНТР THEOLOGICAL CENTER
Ереван 1999 Yerevan

ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ

ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿԻՐ ԵՒ ԴՐԱՑԻՔ

ԱՐՑԱԽ

ԳԱՆՁԱՍԱՐ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Երեւան 1999

ԳՏՀ 941 (479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Բ 358

Նուիրուում է Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակին
եւ
Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի վերաբացման 10-ամեակին

Խմբագրական յանձնախումբ

Պարոյր Մուրադեան (գլխ. խմբագիր), տ. Մեսրոպ քհն. Արամեան, տ. Գրիգոր վրդ. Մաքսուտեան, հ. Լեւոն Զէքիեան, Պիոն Յակոբեան, Պաւել Զորանեան (քարտուղար)

Հատորը կազմեց *Պաւել Զորանեան*

Խմբագիր՝ *տ. Մեսրոպ քհն. Արամեան*

Բարխուտարեանց Մ.
Բ 358 *Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ: – Եր., Գանձասար, 1999:*

Մակար Բարխուտարեանցի «Աղուանից երկիր եւ դրացիք» եւ «Արցախ» ուսումնասիրութիւնների վերահրատարակումը պայմանաւորուած է նրանց եզակի պատմագիտական եւ աղբիւրագիտական նշանակութեամբ: Այս երկերը բազմիցս օգտագործուել են գիտական ուսումնասիրութիւնների ժամանակ եւ ուղեցոյց ծառայել Արցախի յետագայ նկարագրութիւնների համար:

Հեղինակը տեղեկութիւններ է հաղորդում ոչ միայն բնաշխարհի, օդտակար հանածոների, կենդանական աշխարհի, պատմական յուշարձանների, բնակչութեան ազգային կազմի, զբաղմունքի, ընտանեկան ու կրթական վիճակի մասին տուեալներ, բանաւոր աւանդութիւններ, այլեւ ընդօրինակում է վանքերում եւ եկեղեցիներում պահուող ձեռագրերի յիշատակարանները, մեծ պատասխանատուութեամբ հաւաքում եւ վերծանում վիմագիր արձանագրութիւնները եւ այլն:

Բ $\frac{0503020913}{846(01)-99}$ 99 ԳՄԴ 63.3(2Հ)

Էջադրումը՝ Ռուբէն Գրիգորեանի

ISBN 99930-70-01-7 © «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 1999

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Ա
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ՊԱՐԳԵՒԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

Մեկենասութեամբ
Նշան եւ Մարգրիթ Աթնզեանների
ի յիշատակ իր ծնողներ
Նիկողոս եւ Թումե Աթնզեանների

Sponsored by
Nishan and Margrit Atinizian
in memory of his parents,
Nigoghos and Toumé Atinizian



ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ

ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Մակար Բարխուտարեանցը[1] XIX դարի II կէսի հայ մշակոյթի ու հայագիտութեան երախտաւորներից է: Նա ծնուել է 1832 թ. Արցախի Խնածախ գիւղում[2]: Սկզբնական կրթութիւնը ստացել է հայրենի գիւղում, ապա 1862 թ. միաբանակցել Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին: 1862-1868 թթ. ուսանել է Ժառանգաւորաց վարժարանում, ուսման վերջին երկու տարիներին աշակերտել յայտնի մանկավարժ, կրօնական եւ հասարակական գործիչ Մելքիսեդեկ արքեպս. Մուրադեանին[3] եւ 1869 թ. յունիսի 22-ին ձեռնադրուել սարկաւագ: Երուսաղէմի Եսայի պատրիարքի կողմից 1870 թ. ձեռնադրուել է վարդապետ: 1875 թ. եղել է տպարանի տեսուչ, իսկ 1876 թ. մեկնել Կ. Պոլիս եւ ստանձնել Զմիւռնիայի առաջնորդական փոխանորդի պաշտօնը ու միաժամանակ վարել նաեւ քարոզչի, լուսարարի եւ հիւանդանոցի տեսչի պաշտօնները:

1880 թ. Գէորգ IV Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով ընդունուել է Էջմիածնի միաբանութեան անդամ, 1881 թ. աշխատանքի նշանակուել Շուշու ռեալական, իսկ 1882-ին՝ նաեւ թեմական դպրոցներում որպէս կրօնի ուսուցիչ: 1888 թ. նշանակուել է Սաղեանի վանքի վանահայր եւ վանական դպրոցի տեսուչ, իսկ 1889 թ. կարգուել Շամախու հայոց մայր եկեղեցու քարոզիչ: 1890 թ. մարտի վերջերին թողնելով այդ պաշտօնը՝ նա ճանապարհորդում է Դաղըստան՝ հետազօտելու երկրամասն ու տեղի հայկական հնութիւնները: Այդ ճանապարհորդութեան արդիւնքն է ստորեւ վերահրատարակուող «Աղուանից Երկիր եւ Դրացիք» աշխատութիւնը: 1892 թ. կարգուել է Ալէքսանդրապոլի թեմի առաջնորդական փոխանորդ, որտեղ մի քանի ամիս մնալուց յետոյ կրկին հրաւիրուել է Էջմիածին եւ 1894 թ. փետրուարի 17-ին նշանակուել Սաղեանի վանահայր:

1894 թ. սեպտեմբերի 28-ին ձեռնադրուել է եպիսկոպոս, 1895 թ. հաստատուել Շամախու թեմի առաջնորդ եւ մնացել այդ պաշտօնում մինչեւ յաջորդ տարուայ դեկտեմբերի 20-ը: Այնուհետեւ նշանակուել է Էջմիածնի Մայր տաճարի լուսարարապետ եւ վանական կառավարութեան անդամ, եղել է Սինոդի անդամ: 1904 թ. հիւանդութեան պատճառով հրաժարուել է այդ պաշտօնից: Այնուհետեւ նշանակուել է Ագուլիսի Ս. Թովմա Առաքելի վանքի վանահայր, սակայն հիւանդութեան պատճառով չի մեկնել այնտեղ: Մահացել է 1906 թ. փետրուարի 6-ին Էջմիածնում:

Մակար Բարխուտարեանցը թողել է գրական-գեղարուեստական բաւական հարուստ ժառանգութիւն. «Միրզա եւ Աննա» (Զմիւռնիա, 1876), «Արազը տարին կտարի» (Շուշի, 1883), «Պըլը-Պուղի» (Թիֆլիս, 1883). «Զօպանն ու նշանածը» (Թիֆլիս, 1883), «Զնաշխարհիկ տղայ» (Շուշի, 1886), «Բարոյական առածներ» (Տփխիս, 1898), որոնք նա հրատարակել է Ուստա Գեւորգ Բարխուտարեանց ստորագրութեամբ[4]:

---

1 Պահպանուած է ազգանուան գրութեան հեղինակային ձեւը:

2 Մ. Բարխուտարեանցի կենսագրական տուեալները վերցուած են «Ազգագրական հանդէս», 1906, գիրք 13, N 1, էջ 227-228: «Արարատ», 1906, N 2, էջ 116-117: Մ. Աղաւնունի, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 240: Վերջինում ծննդեան թուականը նշուած է 1839 թ., որ կրկնուած է նաեւ Գ. Ստեփանեանի «Կենսագրական բառարան»-ում (հտ. Ա, Երեւան, 1973, էջ 186): Ուղղելի է նոյն տեղում նաեւ Մ. Բարխուտարեանցի ծննդավայրի «Զանգեզուրի Խնածախ գիւղում» նշումը, քանզի Մ. Բարխուտարեանցը իր իսկ աշխատութեան մէջ վկայում է. «Խաչենի Խնածախ գիւղում՝ հեղինակիս ծննդավայրում...» (տե՛ս «Աղուանից երկիր եւ դրացիք», Թիֆլիս, 1893, էջ 156: Հմմտ. ստորեւ, էջ 85):

3 Կենսագրութիւնը տե՛ս «Լումայ», 1903, էջ 222-228: Հմմտ. Մ. Աղաւնունի, նշ. աշխ., էջ 277-278: Մ. Բարխուտարեանցի «երկտողիկը» նրա մահուան առիթով տե՛ս «Պատմութիւն Աղուանից», հտ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 88-89:

4 Տե՛ս Գ. Բարխուտարեանց, Արազը տարին կտարի, Շուշի, 1883, էջ 23 ծնթ.: Մ. Բարխուտարեանց, Քննադատութիւն քննադատութեանց, Տփխիս, 1888, էջ 13-14, 44, 54-55:
Հմմտ. Մ. Աղաւնունի, Միաբանք եւ այցելուք..., էջ 240:

Հեղինակել է նաև կրոնական մի շարք աշխատություններ. «Քրիստոնէական վարդապետութիւն Հայաստանեայց առաքելական եւ սուրբ եկեղեցւոյ» (Տփխիս, 1895), «Մատչելի քարոզներ հայ ժողովրդականաց կարդալու համար» (տետր Ա-Բ, Վաղարշապատ, 1900-1901), «Աստուածային հրահանգ հանրապարտուց» (Թիֆլիս, 1902):

Գիտակցելով Արցախի պատմութեան խոր ուսումնասիրութեան եւ ազատագրական շարժումների հանգամանալից նկարագրութեան անհրաժեշտությունը եւ ոգեւորուած Բաֆֆու դեռեւս 1882 թ. «Մշակում» տպագրուած «Խամսայի մելիքությունները»[1] աշխատության թողած մեծ տպաւորությամբ ու նաեւ հենուելով վերջինիս վրայ[2]՝ Մ. Բարխուտարեանցը 1886թ. Ապրես Բէկնազարեանցի անունով հրատարակում է «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատությունը[3]: Այնտեղ փորձ է արուած ականատես հօր եւ որդու անունից ներկայացնելու Արցախի XVIII դարի երկրորդ կէսի եւ XIX դարի սկզբի իրադարձությունների նկարագրությունը: Աշխատության քննադատությամբ հանդէս են եկել Բաֆֆին[4] եւ Լեոն[5], ցոյց տուել մի շարք անճշտություններ, որոնք պէտք է, ըստ գրախօսների, գոյություն չունենային, եթէ շարադրուած լինէին ականատես եւ իրադարձություններին ժամանակակից ու մասնակից անձնաւորությունների կողմից եւ, ըստ այդմ էլ, եկել այն եզրայանգման, որ «Գաղտնիքը» յօրինուած է Մակար Բարխուտարեանցի կողմից, իսկ Ապրես Բէկնազարեանցը մտացածին անձնաւորություն է: Մ. Բարխուտարեանցը 1888 թ. հանդէս է եկել «Քննադատություն քննադատությանց» վերնագրով գրքոյկով[6], որտեղ շրջանցելով «Գաղտնիքի» հեղինակի հարցը եւ մէկ առ մէկ պատասխանելով Լեոյի առարկություններին, գրեթէ անխտիր պաշտպանում է «Գաղտնիք Ղարաբաղում» շարադրուած դրոյթները, բացառությամբ աննշան մէկ-երկու անճշտությունների, որոնք նա վերագրում է կամ իր (որպէս գրքի աշխարհաբար թարգմանչի) եւ կամ՝ տպարանային սրբագրման վրիպումներին: Այդ հանգամանքը ու նաեւ այն, որ Մակար Բարխուտարեանցը իր յետագայ աշխատություններում անվերապահօրէն օգտագործում է «Գաղտնիքը» որպէս պատմական հաւաստի սկզբնաղբիւր, ստիպում են մտածելու, որ նա, չնդունելով հանդերձ եղած քննադատությունները, միանգամայն վստահ է նրանում նկարագրուած իրադարձությունների ճշգրտությանը, արտատպել է որոշ խոշոր հատուածներ իր «Պատմություն Աղուանից» աշխատության մէջ[7] ու դրանով իսկ կողմնակիօրէն ապացուցել երկի հեղինակի հարցում քննադատների տեսակէտի ընդունելի լինելը:

Եղած քննադատությունները հայագիտության նուիրեալ մշակին մղեցին ձեռնամուխ լինելու ընտրած բնագաւառը աւելի եռանդագին ու առաւել հիմնաւոր ուսումնասիրելու գործին: Պատմական Աղուանքի ու Արցախի նկարագրությունը Մ. Բարխուտարեանցը դիտում էր որպէս Աղուանքի պատմությունը շարադրելու համար նիւթերի հաւաքման աշխատանքների նախապատրաստական փուլ: Նիւթերի հաւաքման ընթացքը, սակայն, պարտադրեց նորովի մօտեցում այդ աշխատանքներին: Նա արդէն ժամանակին նկատել էր, եւ այդ հնչում է նաեւ խիստ այժմէական, որ հայրենի հնությունների նկատմամբ «մեր անտարբերությունից օգուտ են քաղում օտարները»: Հաւաքուած ու դասաւորուած նիւթերն ու նկարագրությունները ի վերջոյ ընդունեցին այնպիսի ձեւ ու ծաւալ, որ ձեռք բերեցին ինքնուրոյն արժէք եւ գոյատեւելու իրաւունք: Ընթերցողների սեղանին դրուեցին «Աղուանից Երկիր եւ Դրացիք» ու «Արցախ» աշխատությունները: Կատարուած հետազօտական աշխատանքները համոզեցին հեղինակին, եւ

1 Վերջին հրատարակությունը տե՛ս Բաֆֆի, Երկերի ժող., հտ. IX, Երեւան, 1987, էջ 417-625:
2 Լեո, Վէ՞պ, թէ պատմություն (Ղարաբաղի անցեալը Ապրես Բէկնազարեանցի գրչի տակ), Շուշի, 1887:
3 «Գաղտնիք Ղարաբաղի», հեղինակությունն Ապրեսի Բէկնազարեանց. Ս. Պետերբուրգ, 1886, ԺԱ. էջ 406:
4 Բաֆֆի, Երկ. ժող., հտ. X, Երեւան, 1964, էջ 383-494, 641-643:
5 Լեո, նշ. աշխ.:
6 Մակար վրդ. Բարխուտարեանց, Քննադատություն քննադատությանց, Տփխիս, 1888, 110 էջ:
7 Մակար Բարխուտարեանց, Պատմություն Աղուանից, հտ. Ա, Վաղարշապատ, 1902, հտ. Բ, Թիֆլիս, 1907: Հմմտ. «Գաղտնիք Ղարաբաղի», էջ 173-218:

նա ստիպուած էր արձանագրել նաեւ, որ «մէն մի հայրենի նահանգ հետազօտելն անկ է ընկերությանց եւ հարուստ անձանց, որպէսզի կարողանան... մասնագէտ, հմուտ անձանց եւ ականաւոր լուսանկար(իչ)ների ձեռքով ի լոյս հանել նախնական ամէն մի հնություն եւ արձանագրություն իրենց իսկական ոճով ու ձեւերով: Սակայն տեսնելով, որ ժամանակի անողոք ճիրանները լափում ու եղծում են մեր թանկագին հայրենիքի՝ Արցախի ամենապատուական հնությունները եւ արձանագրությունները, տեսնելով, որ տգէտ եւ թշնամի ձեռներ քանդում, աւերում եւ ոչընչացնում են հայրենի սրբազան աւանդները, տեսնելով, որ ցեցերը կրծում եւ անյայտացնում են անգին ձեռագիրների յիշատակարաններում եղած պատմական մարգարիտները... պարտք համարեցի... աղքատօրէն հետազօտել... եւ գոնէ կազմել մի ուղեցոյց՝ ապագայ հմուտ մասնագէտների համար»:

Մակար Բարխուտարեանցի գիտական վաստակը առաւել գնահատելի է նրա ստորեւ վերահրատարակուող տեղագրական բնոյթի «Աղուանից Երկիր եւ Դրացիք» ու «Արցախ» աշխատություններով[1]: Նրանք յետագայում բազմիցս օգտագործուել են գիտական ուսումնասիրությունների ժամանակ, ուղեցոյց ծառայել Արցախի յետագայ նկարագրությունների ընթացքում[2] եւ իրենց նշանակությունը չեն կորցրել նաեւ այժմ: Մ. Բարխուտարեանցի պատմագիտական ուսումնասիրությունները, որոնք ժամանակին հայերէնով առաջին գիտական քայլերն էին Աղուանք երկրամասի ուսումնասիրման ու աղուանագիտական խնդիրների լուծման ճանապարհին[3], ներկայումս, գիտական մեծաքանակ գրականության[4] առկայության պայմաններում անգամ, պահպանել են իրենց պատմագիտական արժէքը, չեն կորցրել այժմէականությունը եւ ձեռք են բերել նաեւ քաղաքական հրատապություն:

1 «Արցախի» հրատարակությեան առիթով Խաչիկ վրդ. Դաղեանը «Խ. Վ.» ստորագրությամբ «Արարատ» ամսագրի էջերում հանդէս է եկել մեծ դիտողությամբ: «Արցախի» հեղինակը, նրա կարծիքով, հետեւել է Հ. Ղ. Ալիշանին՝ Ղալադարասին Բերդաձոր անուանելով: Խ. Դաղեանը հենուելով «Բերդաձորայ սուրբ Գրիգորայ ուխտի կամ Կարմիր վանքի, որ գտնուում է հին Վաղահասից բարձր դէպ արեւմուտք, Լաբան կոչուած ձորում, հին Վաղահասից 10 վերստ հեռաւորությամբ» XIII դարի երկու արձանագրությունների վրայ, գրում է. «Արցախի հին Բերդաձոր գաւառի տեղը գտնուում է Ջաւանշիր գաւառի Վաղահաս գիւղի մօտ եւ ոչ թէ Ջանգեզուր կամ Ջաբրայէլ գաւառներում» («Արարատ», 1896, էջ 80): Մակար Բարխուտարեանցի գրած պատասխանը (տպագրուած նոյն տեղում «Բացատրություն» վերնագրով) ձեռագիր վիճակում պահպանուել է նաեւ ՀՀ ՊԿՊԱ Խաչիկ Վրդ. Դաղեանի ֆոնդում (տե՛ս ֆ. 319, ցուց. 1, գործ 271): Չհամաձայնելով առաջարկուած տարբերակին՝ Մ. Բարխուտարեանցը գրում է. «Արդ՝ եթէ արդարեւ յօդուածագիրն սխալուած չէ Բերդաձոր վանք մասնաւոր անունը Բերդաձոր գաւառի տեղ առնելով, կը խնդրէինք, որ պատմական փաստերով մատնանիշ անէր իւր գտած Բերդաձոր գաւառի չորս կողմերի բնական սահմանագծերը, նորա սահմանակից գաւառների անունները եւ բուն Բերդաձոր-Ղալադարասի գաւառի անունը: Երաշխաւորում ենք... որ այն ժամանակ մենք սիրով կուղղէինք մեր սխալը, եթէ արդարեւ սխալ կը լինի նախնի պատմությեանց վերայ հիմնուած Բերդաձոր գաւառի տեղը»: Ի դէպ, Սեդրակ Բարխուտարեանը, բերուած երկու արձանագրություններից երկրորդը տեղում չգտնելով, բերում է Խ. Դաղեանի հրատարակությունից՝ ծանօթագրելով միաժամանակ, թէ «թուում է, հրատարակիչը սխալւում է» (տե՛ս «Դիւան հայ վիմագրության», V, էջ 120):
2 Երուանդ Լալաեան, Երկեր, հտ. 2, Երեւան, 1988, էջ 45:
3 Մ. Բարխուտարեանցի գրքերից առաջ լոյս էր տեսել թերեւս միայն Ց. Մանանդեանի գերմաներէն աշխատությունը. «Beitraege zur albanischen Geschichte», Leipzig, 1897.
4 Մատենագիտությունը տե՛ս Ց. Անասեան Հայկական մատենագիտություն, հտ. Ա, Երեւան, 1958, էջ 613-622: Նոյնի «Նոր հայեացք աղուանագիտության բնագաւառում», "Armeniaca", Վենետիկ, 1969, էջ 289-315: Ա. Մնացականեան, Աղուանից աշխարհի գրականության հարցերի շուրջ, Երեւան, 1966, (ռուս. Երեւան, 1969): Բ. Ուլուբաբեան, Դրուագներ Հայոց Արեւելից կողմանց պատմության (V-VII դդ.), Երեւան, 1981: Նոյնի, Խաչենի իշխանությունը X-XVI դդ., Երեւան, 1975:
А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987. "Нагорный Карабах" (историческая справка), Ереван, 1988.
Ա. Շահնազարեան, Վահրամեանների իշխանությունը, Երեւան, 1991, եւ բազում այլ աշխատություններ:

Երբ Մակար Բարխուտարեանցը ձեռնամուխ էր եղել տեղագրական իր աշխատութիւնների կազմելուն[1], *հայագիտութիւնը արդէն իսկ բաւական փորձ եւ նուաճումներ ունէր այդ ընագաւառում*[2]. *լոյս էին տեսել Յ. Շահխաթունեանցի, Սարգիս Ջալալեանի, Ներսէս Սարգիսեանցի եւ այլոց աշխատութիւնները*[3]: *Դաղստանի երկրամասի իր արժէքաւոր նկարագրութիւններից որոշ հատուածներ հրատարակել էր Ռոստոմ բէկ Երզնկեանցը*[4]:

Նախորդ ուսումնասիրողների օրինակով Մակար Բարխուտարեանցը նկարագրութիւնների մէջ ընդգրկում է ոչ միայն բնաշխարհի, օգտակար հանածոների, կենդանական աշխարհի, պատմական յուշարձանների, բնակչութեան ազգային կազմի, զբաղմունքի, ընտանեկան ու կրօնական վիճակի մասին տուեալներ, բանաւոր աւանդութիւններ, այլեւ ընդօրինակում է վանքերում եւ եկեղեցիներում պահուող ձեռագրերի յիշատակարանները, մեծ պատասխանատուութեամբ հաւաքում եւ վերծանում վիմագիր արձանագրութիւնները եւ այլն:

Մ. Բարխուտարեանցի տեղագրական աշխատութիւններում հրատարակուած ձեռագրերի այն յիշատակարանները, որ գրուած են մինչեւ XV դ. ներառեալ եւ XVII դ. առաջին երեք քառորդում, յետագայում վերահրատարակուել են Գարեգին Յովսէփեանի[5], *Լեւոն Խաչիկեանի*[6], *Աշոտ Յովհաննիսեանի ու Վազգէն Յակոբեանի*[7], *Արտաշէս Մաթեւոսեանի*[8] *կազմած ժողովածուների մէջ: «Արցախում» նկարագրուած ձեռագրերի յետագայ ճակատագրերի ճշգրտման առումով արժէքաւոր են Գ. Յովսէփեանի, Օ. Եգանեանի, Յու. Վարդանեանի ուսումնասիրութիւնները*[9]:

Վիմագրերի հաւաքումը Հայաստանում թէեւ սկսուել է դեռեւս XVIII դարի սկզբից Եսայի Հասան Ջալալեանի կողմից[10] *եւ ապա XIX դարի սկզբից շարունակուել Ներսէս Աշտարակեցու նախաձեռնութեամբ*[1] *եւ XX դարասկզբին արդէն հասել որոշակի նուաճումների*[2], *իսկ վերջին տասնամեակներին հրատարակուել գիտական բարձր մակարդակով կազմուած «Դիւան հայ վիմագրութեան» մի շարք հատորներ*[3], *սակայն արուածը դեռեւս հեռու է արձանագրութիւնների ամբողջութիւն ընդգրկելուց*[4]: *«Արցախի» ընդգրկած տարածքի յուշարձանները ներկայացնում են «Դիւանի» Մ. Բարխուդարեանի կազմած հինգերորդ եւ Ս. Աւագեանի ու Հռ. Ջանփոլադեանի կազմած վեցերորդ հատորներում:*

Ձեռնամուխ լինելով պատմական Արցախի տարածքի արձանագրութիւնների հաւաքմանը՝ Սեդրակ Բարխուդարեանը սահմանափակուել էր, սակայն, հաւաքելով միայն մինչեւ XVIII դարը ներառեալ, իսկ XIX դարի արձանագրութիւնները գրեթէ դուրս են մնացել նրա հրատարակութիւնից: Աւելին, նրա բերած արձանագրութիւնների մի զգալի մասը տեղում ինքը չի տեսել կամ այլեւս չի գտել եւ վերցրել է Մ. Բարխուտարեանցի գրքից եւ երբեմն՝ վրիպումներով[5]:

---

1 Մ. Բարխուտարեանցը Աղուանքում եւ Արցախում իր ճանապարհորդութիւնները կատարել է Շուշիում եւ Շամախիում պաշտօնավարելու տարիներին (1881-1888 թթ., 1888-1891 թթ.): Նշելի է, որ այդ աշխատանքը շարունակել է Մեսրոպ Սմբատեանցը՝ ուղեցոյց ունենալով նաեւ Մ. Բարխուտարեանցի գիրքը: Տե՛ս նրա «Նկարագիր Ս. Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից, որք ի Շամախւոյ թեմի», Տփխիս, 1896, էջ 73:

2 XIX դարի հաւաքչական-նկարագրական ու տեղագրական-ազգագրական գրականութեան համառօտ տեսութիւնը տե՛ս Գր. Խալաթեանց, Նիւթեր հայ ազգագրութեան պատմութեան. «Էմինեան ազգագրական ժողովածու», հտ. 7, Մոսկուա, 1908, էջ 37-38:

3 Յովհաննէս եպս. Շահխաթունեանց «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ», հտ. Ա-Բ, Էջմիածին, 1842: Ս. Ջալալեանց Մանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842, մասն Բ, Տփղիս, 1858: Ն. Սարգիսեանց, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:

4 «Մեղու Հայաստանի», 1859, N 1, 2, 28, 31, 40, 51, 52: Ռոստոմ բէկ Երզնկեանցի անտիպ աշխատութիւնների մասին տե՛ս Վ. Գրիգորեան, Ռոստոմ բէկ Երզնկեանցը եւ Դաղստանի մասին նրա գրած աշխատութիւնները, «Բանբեր Երեւանի Համալսարանի», 1971, N 3, էջ 178-183:

5 Գ. Յովսէփեան, Ցիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1950:

6 «ԺԴ. դ. հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1950: Նոյնի «ԺԵ. դ. հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն Ա, Երեւան, 1955, մասն Բ, Երեւան, 1958, մասն Գ, Երեւան, 1967:

7 Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1601-1620 թթ.), հտ. Ա, կազմեցին Վազգէն Յակոբեան, Աշոտ Յովհաննիսեան, Երեւան, 1974, հտ. Բ. (1621-1640 թթ.), Երեւան, 1978, հտ. Գ. (1641-1660 թթ.), կազմեց Վ. Յակոբեան, Երեւան, 1984:

8 «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ Ե-ԺԲ. դդ.»: Աշխատասիրութեամբ Ա. Ս. Մաթեւոսեանի, Երեւան, 1988: «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», ԺԳ. դար, կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1984:

9 Գ. Յովսէփեան, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան, հտ. Ա, Երեւան, 1983, էջ 254-290: Օ. Եգանեան, Գանձասարի հայերէն ձեռագրերի հաւաքածուն, «Էջմիածին», 1971, Դ, էջ 59-64: Նոյնի, Գետաշէնի աւագ Սուրբ Նշան մատրան հայերէն ձեռագրերը, «Էջմիածին», 1971, Թ, էջ 54-61: Նոյնի, Թարգմանչաց վանքի հայերէն ձեռագրերը, «Էջմիածին», 1971, Ե, էջ 57-58: Նոյնի, Մեծ Բանանց գիւղի Ս. Լուսաւորիչ եկեղեցու հայերէն ձեռագրերի հաւաքածուն, «Էջմիածին», 1970, ԺԲ, էջ 52-53: Յու. Վարդանեան «Գանձասարի Կարմիր Աւետարանը» եւ նրա շուրջերկրականը», «Խորհրդային Ղարաբաղ», 1990, N 57:

10 Եսայի Հասան-Ջալալեանի կողմից հաւաքուած արձանագրութիւնները իր լրացումներով հրատարակել է դեռեւս Յ. Շահխաթունեանցը. «Արձանագրութիւնք աշխարհին Աղուանից, զորս ժողովեաց յեկեղեցեաց եւ ի խաչարձանից Եսայի կաթողիկոս նոցին Աղուանից ի թուականութեանն Հայոց ՌԺԿԷ. (1718) ի մի տետր» (տե՛ս Յովհ. Շահխաթունեանց. նշ. աշխ., հտ. Բ, էջ 356-379, հրատարակչի լրացումներն ու գաւազանագիրքը տե՛ս նոյն տեղում, էջ 379-382, 330-349):

1 «Աստանօր հրամանաւ Ներսիսի շրջեցայ ի մերձակայ վանորայս եւ օրինակեցի զամենայն նախնի արձանագրութիւնս աշխարհին, գտեալս յորմունս եկեղեցեաց, ի խաչաքարս եւ ի վէմն ապառաժից, սկսեալ ի Գանձասարայ մինչեւ ի Հաղբատ եւ ի Սանահին, զորս եւ մատուցի նմա, առ իս պահելով զօրինակս նոցա, որք յետոյ կորեան» (Մեսրովբ Թաղիադեան, Ուղեգրութիւններ, հոդուածներ, նամակներ, վաւերագրեր, Երեւան, 1975, էջ 177):

2 «Վիմական տարեգիր», կազմեց Կ. Կոստանեանց, ՍՊԲ, 1913: Надписи Гандзасара и Авантука. Собрал и приготовил к печати Иосиф Орбели, Петроград, 1919. (շարուածք): Վերջինիս մասին տե՛ս Բ. Ա. Ուլուբաբեան, Ակադեմիկոս Յովսէփ Օրբելին եւ Խաչէնը (փաստաթղթեր եւ տեղեկութիւններ), «Բանբեր Հայաստանի արխիւների», 1972, N 1, էջ 197-203): Խ. ծ. վրդ. Դաղեան, Մեծարանց, որ եւ Ս. Յակոբայ վանից արձանագրութիւնները, «Բանասէր», Փարիզ, 1901, հտ. III, պրակ Բ-Գ, էջ 135-147:

3 «Դիւան հայ վիմագրութեան», պր. I, Անի, կազմեց Յ. Օրբէլի, Երեւան, 1966: Պրակ II (Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի շրջաններ), կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, 1960: Պրակ III (Վայոց ձոր, Եղեգնաձորի եւ Ագիզբեկովի շրջաններ), կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, 1967: Պրակ IV, (Գեղարքունիք, Կամոյի, Մարտունու եւ Վարդենիսի շրջաններ), Երեւան, 1973: Պրակ V, (Արցախ), կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, 1982: Պրակ VI (Իջեւանի շրջան), կազմեցին Ս. Ա. Աւագեան, Հռ. Մ. Ջանփոլադեան, Երեւան, 1977:

4 Այդ առումով արժէքաւոր են վերջին տարիներին հրապարակուած նոր ուսումնասիրութիւնները, տե՛ս Գ. Սարգսեան, Անապատ կամ Նոր Վարագ վանքը եւ նրա վիմագրութիւնը, «Էջմիածին», 1952, Թ-Ժ, էջ 21-29, ԺԱ-ԺԲ, էջ 27-34: Նոյնի, Դեղձնուտի վանքը եւ նրա վիմագրութիւնը, «Էջմիածին», 1953, Դ, էջ 33-43: Նոյնի, Մակարավանք, «Էջմիածին», 1954, Բ, էջ22-34, Գ, 19-22, Դ, էջ 30-36, Ե, էջ 46-52: Նոյնի, Առաքելոց վանքը եւ գիւղատեղը, «Էջմիածին», 1955, Է, էջ 33-39, Ը, էջ 31-39: Նոյնի, Ծիմուրատի վանքը, «Էջմիածին», 1956, Գ, էջ 20-28: Նոյնի, Կապտավանք, «Էջմիածին», 1957, Բ-Գ, էջ 52-58: Ծ. Մկրտչեան, Ռ. Աբգարեան, Ս. Կարապետեան, Մոխրենիսի «Օխտը դռնի» վանքը, «Էջմիածին», 1982, ԺԱ-ԺԲ, էջ 46-50: Ս. Կարապետեան, Բացառիկ յօրինուածքով միջնադարեան յուշարձան, «Էջմիածին», 1983, Դ, էջ 58-61: Նոյնի, «Արցախի որմնափակ խաչքարերը, «Էջմիածին», Ը, էջ 34-40: Նոյնի, «Խաչաձեւ գմբէթաւոր երկու եկեղեցիներ Արցախի նահանգում», Պատմա-բանասիրական հանդէս, 1983, N 2-3, էջ 203-205: Նոյնի, Ջրաբերդի անապատը, «Էջմիածին», 1984, Ե, էջ 50-53: Նոյնի, Խրխափորի ձորահովտում գտնուող պատմաճարտարապետական յուշարձանները եւ դրանց նորայայտ արձանագրութիւնները, ՊԲՀ, 1884, N 2, էջ 223-238: Նոյնի, Պտրեցիք գետահովտի պատմաճարտարապետական յուշարձանները ըստ նորայայտ արձանագրութիւնների, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1984, N 8, էջ 75-86: Նոյնի, XVII դարի վանական երկու համալիր Արցախում, ՊԲՀ, 1985, N 1, էջ 225-231: Նոյնի, Հաթերքի պատմաճարտարապետական յուշարձանները, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1986, N 5, էջ 86-89: Նոյնի, Վանքաշէնը եւ յուշարձանները (Շամախու Գարդման գաւառում), «Էջմիածին», 1986, ԺԱ-ԺԲ, էջ 106-109: Նոյնի, Պատմական խոշկաշէնը եւ նրա յուշարձանները, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1985, N 10, էջ 76-80: Նոյնի, Պատմական Հայաստանի Կապաղակ գաւառի թրքախօս հայկական գիւղերը, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1988, N 1, էջ 40-52: Նոյնի, «Պատմական Սոկուլոյ գիւղը եւ նրա յուշարձանները, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1988, N 3, էջ 106-111: Նոյնի, Ադր. ԽՍՀ Թոուզի շրջանի հայկական պատմաճարտարապետական յուշարձանները, «Էջմիածին», 1989, Ա, էջ 51-55: Նոյնի, Մատրասա գիւղը եւ նրա յուշարձանները, ՊԲՀ, 1989, N 2, էջ 225-233: В. А. Арутюнян, С. Г. Карапетян, Н. М. Саркисян, Монастырский комплекс сурб Аствацацин в гавере Цар. ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1989, N 7, էջ 82-91: Կ. Ղահրամանեան, Միջնադարեան մի նորայայտ յուշարձան, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1978, N 5: Ա. Ա. Քերոբեան, Ինը Մասանց Անապատը ըստ նորայայտ վիմագրերի, ՊԲՀ, 1984, N 4, էջ 237-238: Բ. Ուլուբաբեան, Գանձասար, Երեւան, 1981: Հ. Փափազեան, Մելիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրութիւնը, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1985, N 5, էջ 75-78:

5 Հմմտ. օրինակ «Դիւան հայ վիմագրութեան», V, էջ 178, N 633, որտեղ բաց է թողնուած 1 տող:

Այդ առումով եւս Մ. Բարխուտարեանցի գիրքը ձեռք է բերում սկզբնաղբիւրի նշանակութիւն՝ ընդգրկած լինելով մինչեւ իր այցելութեան ժամանակը եղած արձանագրութիւնների մեծ մասը[1]:

Մակար Բարխուտարեանցի աշխատութիւնները օգտագործելու ժամանակ, սակայն, պէտք է նկատի ունենալ, որ նրանք գրուել են XIX դարի վերջին, երբ դեռեւս չկային «ադուանական» խնդրի խորհրդային շրջանի խեղաթիւրումները: Մ. Բարխուտարեանցի մօտ Ադուանքը զուտ աշխարհագրական միաւոր է, ընդգրկում է հարաւային Դաղստանից մինչ Կուր գետն ընկած տարածքը, բնակեցուած է եղել բազմալեզու ցեղերով եւ միասնական ադուան ժողովուրդ չի ձեւաւորուել: Համոզուած լինելով, որ, չնայած մահմեդականութեան տարածմանը, այնտեղ «տակաւին կան անյայտ մնացած շատ թանկագին հարստութիւններ հայ պատմութեան համար», նա վճռում է անձամբ հետազօտել երկիրը:

Մ. Բարխուտարեանցի ստորեւ վերահրատարակուող աշխատութիւններն ունեն սկզբնաղբիւրի նշանակութիւն նաեւ մի այլ առումով: Նա իր «Ադուանից Երկիր եւ Դրացիք» աշխատութիւնում ականատեսի իրաւասութեամբ կազմել եւ մէջ է բերում մահմեդականացած հայկական գիւղերի ցանկ, յաճախակի նշում ինչպէս բռնի մահմեդականութեան անցնելու փաստեր, այնպէս էլ արդէն իսկ թրքախօս դարձած հայկական բնակավայրեր[2]: Բռնի մահմեդականացման են ենթարկուել ինչպէս Արցախի, այնպէս էլ Կուր գետի ձախափնեակի բազմաթիւ հայկական գիւղեր[3]: Նման ճակատագրի են արժանացել սակայն ոչ միայն հայ ժողովրդի բեկորները, այլեւ տարածքում բնակուող քրիստոնեայ այլ ցեղեր եւ ժողովուրդներ[4]: Արեւելեան Անդրկովկասի եւ մասնաւորապէս Ափշերոնի թերակղզու եւ շրջակայ բնակավայրերի մահմեդականացումը կատարուել է ուշ միջնադարում, քանզի նրանց քրիստոնեայ լինելու հանգամանքը արձանագրուած է նախորդող ժամանակաշրջանի ինչպէս վիմագիր յուշարձաններում, այնպէս էլ պատմողական այլ սկզբնաղբիւրներում[5]: XIV-XV դդ. գործիչ Աբդ ար-Ռաշիդ ալ Բակուվիի վկայութեամբ. "Близ города (Баку - Պ.Զ.) много селений и каждое имеет укрепленную цитадель с прочными

1 Այդ առումով առանձին կարեւորութիւն ունի Մատենադարանի արխիւային բաժնի կաթողիկոսական դիւանում պահուող մի անստորագիր վաւերագիր, որ վերնագրուած է. «Շուշի քաղաք, Նիւթեր»: Վաւերագրում ներկայացուած են Ագուլեցոց եւ Ղազանչեցոց եկեղեցիները, նրանց վիմագրերն ու ձեռագրերի յիշատակարանները: Սոյն վաւերագիրն օգտագործել է Լ. Խաչիկեանը՝ «ԺԵ. դարի յիշատակարանների» Բ. հատորում արտատպուած N 207 յիշատակարանի համար յղելով ինչպէս «Արցախը», այնպէս էլ այդ վաւերագիրը եւ վերջինից լրացուցիչ տեղեկանք բերելով: Վաւերագրի արխիւային օրինակի վրայ Լ. Խաչիկեանի ձեռագրով մատիտով գրուած է. «Հաւանաբար Մ. Բարխուտարեանցի «Արցախի» նիւթերից»: Վաւերագրի համեմատութիւնը «Արցախի» տպագիր օրինակի հետ կասկած չի թողնում, որ այն «Արցախի» նախնական տարբերակի մասն է, որը, դատելով պահպանուած այդ հատուածից, եղել է աւելի ընդարձակ, աւելի մանրամասն, եւ, ըստ այդմ, աւելի արժէքաւոր եւ որի համաոստումով էլ կազմուել է տպագրութեան համար հիմք ծառայած ձեռագիրը: Բաւական է ասել, որ վաւերագրում նկարագրուած Ագուլեցւոց եկեղեցու 15 ձեռագրերից տպագիր օրինակում բերուած է միայն 5 ձեռագրի նկարագրութիւն: Նոյնն է վիճակը նաեւ վիմագրերի առումով: Վաւերագրի մէջ եղած վիմագրերի մի մասը չի արտացոլուել «Դիւան հայ վիմագրութեան» հինգերորդ հատորի մէջ:

2 Նրանց համար Մ. Բարխուտարեանցը թուրքերէնով քարոզ է կարդում (տե՛ս ստորեւ): Հմմտ. Ս. Կարապետեան, Պատմական Հայաստանի Կապաղակ գաւառի թրքախօս հայկական գիւղերը, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.) 1988, N 1, էջ 40-52:

3 Նոյն տեղում: Հմմտ. Ղազար քահ. Ցովսէփեան, Ակնարկներ ուտիացի եւ մահմեդական հայերի մասին, Թիֆլիս, 1904: Բացի ականատեսների վկայութիւններից ու պատմողական աղբիւրներում եղած տուեալներից կան այդ մասին վկայող նաեւ բազմաթիւ արխիւային վաւերագրեր: Տե՛ս ՄՄ. «Արխիւ Ալ. Երիցեանի», թղթ. 150, վաւ. 7, 8, 9, 11, 14, 24, 25, 26: XIX դ. կէսերին յայտնուեցին նաեւ բռնի ռուսադաւանութեան ենթարկելու դէպքեր: Նման փաստերի արձանագրումներ տե՛ս նոյն տեղում, վաւ.. 62, 63, 220, 221, 222 եւ այլն:

4 "Армяно-русские отношения в первой трети 18-го века", сб. док., Т. 2, Е., 1967, с 90-91. А. Р. Шихсаидов, Эпиграфические памятники Дагестана 10-17 вв. как исторический источник, М., 1984, с. 51.

5 "Английские путешественники в Московском государстве в 15-ом веке". Перевод с англ. Ю. В. Готье Л., 1937, с.279.

стенами. Все жители этих селений - христиане, а жители города исповедуют толк имама аш-Шафий[1]":

Ուշ միջնադարում Կուր գետի ձախափնեակում հայ համայնքների գոյատեւմանը զգալի չափով նպաստել են Արցախից կատարուած արտագաղթերը: Տարբեր պատճառներով Արցախից արտագաղթի ճանապարհը բռնած ժողովրդական զանգուածները հանգրուանել են մարման եզրին կանգնած շրջակայ հայկական բնակավայրերում: Մակար Բարխուտարեանցը իր այցելած իւրաքանչիւր բնակավայրի համար նշում է ինչպէս տուեալ բնակավայրում հանգրուանած հայերի եկման վայրերը, այնպէս էլ նրանց քանակը: Հայկական լիովին հանգած կամ լքուած բնակավայրերը երբեմն վերակենդանացել են յետագայ նման արտագաղթերի շնորհիւ[2]: Արտագաղթերը իրենց հերթին պատճառ են դարձել Արցախի ու Ուտիքի զգալի հայաթափման, քանզի ինչպէս նշում է Մ. Բարխուտարեանցը. «Արցախում այժմ աւերակ են երկք քաղաք, տասն գիւղաքաղաք եւ 360 գիւղ, որոնց բնակիչներն գաղթած են այլեւայլ կողմեր»: Նման հայաթափ գիւղեր ու բնակավայրեր մուտք են գործել ու հիմնուել մահմեդական քոչուոր ցեղերի ներկայացուցիչները, որի հետեւանքով յայտնուել են բազմաթիւ մահմեդական բնակավայրեր՝ հայկական անուանումներով, քրիստոնէական յուշարձաններով ու հայագիր արձանագրութիւններով[3]: Ըստ այդմ էլ մի աւելորդ անգամ ներկայ աշխատութեան ընդգրկած փաստերով եւս ապացուցւում է, որ շինծու են ադրբեջանական կեղծարարների այն պնդումներն ու յայտարարութիւնները, իբր Արցախը (ադրբ. երկերում՝ Ադուանք) հայաբնակ ու հայկական է դարձել միայն XIX դարում[4]:

1 Абд. ар-Рашид ал-Бакуви, Китаб талхис ал-асар ваджаиб ал малик ал-Каххар, М., 1971, с. 89-90. Բաքուից 30 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Բուգովնա թուրքաբնակ գիւղի մօտ «Եղիա Մարգարէի եւ Անդրեաս առաքելոց» մատուռի մասին տե՛ս Մեսրոպ արքեպս. Սմբատեան, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի Վանուց Սաղիանի եւ միւս վանօրեից եւ ուխտատեղեաց եւս քաղաքացն եւ գիւղօրէից, որք ի Շամախայ թեմի. Տփխիս, 1896, էջ 172-174: Մատուռի բեմի ճակատակալ քարի վրայ կայ հայերէն արձանագրութիւն. «Ես՝ Ներսէս քահանայ շինեցի զջրհորս. թ. ՊՀ. (1421) (նոյն տեղում, էջ 173): Նոյն Բուգովնա գիւղում գտնուող դամբարանի մուտքին կայ արաբատառ շինարարական արձանագրութիւն հետեւեալ բովանդակութեամբ. "Эта усыпальница Шмавона, сына Тарсы (армянина) Бахрами. В месяц мухаррама семьсот шестого года (=1306 г.)" (տե՛ս Сима Керимзаде, Надписи памятников архитектуры Азербайджана 11-15 вв., Баку, 1970, (автореф. канд. дисс.)

2 Նուկզար գիւղը Մ. Բարխուտարեանցը համարում է 19-րդ դ. սկզբին գեներալ Ցիցիանովի ժամանակ գաղթած Կոտայքից, այն դէպքում, երբ գիւղում կան շիրմաքարեր թուագրուած Հայոց ՉԽԷ. (1298) թուականով, իսկ վանքը կառուցուած է դեռեւս 1679 թ.:

3 Նման բնակավայրերի քանակը զգալի է ներկայիս ԼՂՀ-ին յարող ադրբեջանաբնակ շրջաններում: Ներկայ Աղդամի շրջանի Սոֆուլու գիւղի մօտ յայտնաբերուել է հայերէն արձանագրութեամբ տապանաքար եւ տեղափոխուել Ադրբ. պետական պատմ. թանգարան: Վերծանութիւնը տե՛ս ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, N 1:

4 Անդրադառնալով Աղուանքի էթնիկական դիմագծին՝ Ֆ. Մամեդովան իր "Политическая история и историческая география Кавказской Албании" (Баку,1986) գրքում գրում է. "Армянские поселения на территории Азербайджана появились значительно позднее, в конце 18-го, в начале 19-го вв." (էջ 40): Այդ կեղծիքը կրկնում է Դ. Ա. Ախունդովի «Ադրբեջանի հին եւ վաղմիջնադարեան ճարտարապետութիւնը» (Բաքու, 1986, ռուս.) գրքում, որտեղ աղուանական-ադրբեջանական են յայտարարւում ոչ միայն նախաքրիստոնէական շրջանի, այլեւ միջնադարեան հայ ճարտարապետական յուշարձանները: Արդարացնելու համար այդ վարմունքը նա եւս յիշեալ յուշարձանները յայտարարում է աղուանական եւ, ընդունելով հանդերձ աղուան ժողովրդի (էթնոսի) գոյութիւնը, գրում է. "Большая часть албан исповедовавшая ислам, впоследствии стали называться азербайджанцами, а исповедавшие христианство, после присоединения из церквей в 1836 г. к русской церкви путем объединения с армянской (присоединенной к русской церкви в 1828 г.) постепенно стали называться армянами" (տե՛ս էջ 225, ծնթ.): Այդ անհեթեթութիւնը քողարկելու համար վկայակոչում է Լինչի յայտնի "Армения" գիրքը: Աւելորդ է ասել, որ Լինչի գրքում այդպիսի բան չկայ եւ չէր էլ կարող լինել: Իրականում Լինչը, խօսելով Արցախի մասին, գրում է. "Населенная с незапамятных времен армянским народом, колонизованная татарскими эмигрантами, эта арена охоты и кочевья курдов представляет солидный наружный оплот для Армении со стороны Каспийского моря". (Х. Ф. Линч, Армения. Путевые очерки и этюды, т. 1, Тифлис. 1910 г., с. 553)

Նշելի են նաեւ Մ. Բարխուտարեանցի պատմաաշխարհագրական եզրայանգումների կարեւորութիւնն ու արժէքը ինչպէս ամբողջութեամբ Արցախ ու Աղուանք երկրամասերի, այնպէս էլ նրանց գաւառների սահմանային բաժանումների եւ կրած փոփոխութիւնների ուսումնասիրման համար ու, ըստ այդմ էլ, վերջիններիս կարեւորութիւնը «Աղուանք» տերմինի ճիշտ ընկալման առումով[1]: Դեռեւս Մ. Բարխուտարեանցն էր ճշգրտել բուն Աղուանքի սահմանները. «Երբ ծնւում է եւ Աղուանից Արշակունի թագաւորութիւնը, այն ժամանակ Կուր գետը լինում է ճարաւային սահման, Ալազանն՝ արեւմտեան, այն վաղեմի պարիսպն, որ իբր սահման եւ արգելիչ պատուար ձգուած է Դարբանդից մինչ Ալազան գետակն՝ հիւսիսային եւ Կասպից ծովն՝ արեւելեան»: Նա նկատել է նաեւ յետագայում Աղուանք հասկացութեան ընդարձակումը՝ պայմանաւորուած քաղաքական սահմանների փոփոխութեամբ. «Ե. դարում Աղուանից թագաւորութեան (ճիշտը՝ մարզպանութեան - Պ. Զ.) ձեռքն է ընկնում նաեւ Երասխ գետի, Հակարի գետակի, Սոթի սահմանի, Գարդմանի, Կայէնի լեռների եւ Խրամ գետակի աջ կողմի միջեւ եղած տարածութիւնը եւս: Ուրեմն վերջին սահմաններն են. արեւելքից՝ Կասպից ծովը, հիւսիսից՝ այն հին պարիսպն, որ երկարցած է Դարբանդից մինչեւ Ալազան, արեւմուտքից՝ Ալազան եւ Խրամ գետակները եւ հարաւից՝ Կայէնի լեռներն, ամբողջ Գարդման, Գանձակ եւ Արցախ եւ Երասխի ձախ ափերը: Այս սահմանների մէջ տարածուած երկիրը հայերից կոչուած է Աղուանք[2] »: Այս դրոյթների իրական լինելը առ այսօր միտումնաւոր խեղաթիւրումներից փրկելու նպատակով կրկին.ու կրկին բազմաթիւ այլ սկզբնաղբիւրների օգնութեամբ եւս ապացուցելու հարկ է լինում[3]:

Մ. Բարխուտարեանցը ուրոյն ոճ ունի, գրել է աշխարհաբար, օգտագործել նաեւ գրաբարեան քերականական ձեւեր: Երկարութեան չափի միաւոր «Աղուանից Երկիր եւ Դրացիք» գրքում ընդունուած է վերստը, սաժէնը, կանգունը, քայլը եւ այլն: Այդ աշխատութեան մէջ յուշարձանների նկարագրութեան ժամանակ չափերը չեն տրուած: Այլ է «Արցախում». նկարագրութեան իւրաքանչիւր դէպքում նշւում են եկեղեցու կամ տաճարի չափերը, ընդ որում՝ որպէս չափի միաւոր օգտագործւում է մետրական սիստեմը (մետր, սանտիմետր): Անցման փուլ է նախանշում «Արցախի» նիւթերից Մատենադարանի արխիւային օրինակը, որտեղ Շուշիի եկեղեցիների չափի միաւոր օգտագործուած է քայլը եւ ոչ մետրը, ինչպէս տպագիր օրինակում է:

1 Եղած գիտական գրականութեան տեսութեան ու Մ. Բարխուտարեանցի որոշ տեսակէտների քննութիւնը տե՛ս Բ. Ոլուբաբեան, Դրուագներ, էջ 17-26: Նոյնի, Խաչենի իշխանութիւնը... էջ 31-53: А. А. Акопян, Албания-Алуанк..., էջ 64-74, 86-90:

2 Տե՛ս ստորեւ, էջ 33:

3 С. И. Юшков, К вопросу о границах древней Албании. - "Исторические записки АН СССР", т. 1, М., 1937, с. 137. А. Ш. Мнацаканян, նշւ. աշխ., էջ. 25-35: А. П. Новосельцев, К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в античный период. - "Кавказ и Византия", вып. 1, Е., 1979 г., с. 10-18. А. А. Акопян, Албания-Алуанк..., с. 24-35. А. Акопян, П. Мурадян, К. Юзбашян, К изучению истории Кавказской Албании, ՊԲՀ, 1987, N 3, էջ 116-189. Б. Арутюнян, Когда отсутствует научная добросовестность. ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1987, N 7, էջ 33-56: Ш. В. Смбатян, Еще раз о южной границе Кавказской Албании, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), N 10, էջ 3-17: 1989, Г. С. Свазян, Арцах в исторических первоисточниках, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1989, N 11, էջ 3 -14: П. Мурадян, История - память поколений. Проблемы истории Нагорного Карабаха, Е., 1990. "К освещению проблемы истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении", т. 1, Е., 1991 г., Բ. Ց. Ցարութիւնեան, Արցախի, Հայոց արեւելից կողմերի եւ Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդէս», 1994, N 1-2, էջ 256-266, 1995, N 1, էջ 191-207:

Վերահրատարակուող աշխատութիւններում ընդօրինակուած արձանագրութիւններն ու ձեռագրերի յիշատակարանները թուագրուած են հիմնականում հայկական «մեծ» եւ հազուադէպ՝ նաեւ «փոքր» ու «հայկական քրիստոնէական» թուականութեամբ: Մակար Բարխուտարեանցին ծանօթ չեն եղել հայոց «փոքր» թուականի սկիզբն ու «հայկական քրիստոնէական» թուականի գոյութեան փաստը, ուստի նրանց փրկչական թուականութեան վերածման ժամանակ թոյլ են տրուած վրիպումներ: Տողատակ ծանօթագրութիւնների մէջ հեղինակն իր տարակուսանքն է յայտնել տոմարական թուացեալ անհամապատասխանութիւնների համար: Հայոց «փոքր» թուականի սխալ վերծանութեան դէպքը, ըստ որի Յովհաննէս Սարկաւագի կողմից մտցուած հայոց անշարժ տոմարն իբր սկսուել է 1116 թուականին (ճիշտը՝ 1084 թ. օգոստոսի 11), «Արցախից» վերցնելով կրկնել է նաեւ Կ. Կոստանեանցը «Վիմական տարեգիր» գրքում (էջ 33, հմմտ. նաեւ էջ VII): Վերացուել են նկատուած վրիպակները եւ ուղղագրական անճշտութիւնները, շտկուել են կէտադրական շեղումները, նորովի կազմուել անուանացանկերը:

Պ. Ա. Զորաեան

ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿԻՐ

ԵՒ

ԴՐԱՅԻՔ

ՄԻՋԻՆ ԴԱՂՍՏԱՆ

ՆՊԱՏԱԿ

Հրամայուած լինելով գրել « Պատմութիւն Աղուանից »՝ որոշեցի նախ հետազօտել Աղուանից երկիրը, ծանօթանալ բնական դրից, լեռներին եւ դաշտերին, գետերին եւ հանքերին, կլիմային եւ բերքերին, հնութեանց եւ ազգաբնակութեանց, գաւառներին եւ լեզուներին եւ ապա գրել աշխարհաբար պատմութիւնը:

Ներկայ դարումս հետազօտած են այս երկիրը մի քանի օտարազգի հետախոյզներ. բայց ոչ ըստ օրինի՝ հայերն: Թէեւ բազմաշխատ Կ. վրդ. Շահնազարեան եւ Ս. եպիսկոպոս Ջալալեան շրջած են տեղ-տեղ, բայց չեն յաջողած հետազօտել մանրամասնաբար, վասն զի այն ժամանակներում դեռ անգրաւ եղած է Դաղստանն, վասն որոյ եւ վտանգաւոր՝ ամէնուրեք ազատ շրջելը: Այս պատճառաւ հաւատացած լինելով, որ տակաւին կան անյայտ մնացած շատ թանկագին հարստութիւններ հայ պատմութեան համար, վասն որոյ վճռեցի անձամբ հետազօտել երկիրը:

1890 թուի մարտ ամսի վերջում հրաժեշտ տուի Շամախու եկեղեցում քարոզչական պաշտօնիցս եւ հեռացայ ապրիլ 6-ին: Որովհետեւ Դարբանդն է Աղուանից երկրի վերջին ծայրն՝ արեւելեան հիւսիսային սահմանն. որոշեցի այդ իսկ քաղաքից սկսել իմ հետազօտութիւնը: Բագուի կայարանից նստայ Մերկուրի ընկերութեան « Ալէքսանդր Գ » շոգենաւում Դարբանդ ելնելու: Սակայն հայ աստիճանաւոր ոմն, որ ուղեկից էր ինձ, խորհուրդ տուաւ ինձ երթալ Միջին-Դաղստան, ասելով. « Ես ականատես եմ. Դաթունա գիւղի մօտ կայ մի հայկական եկեղեցի », եւ՝ օգտակար համարելով նպատակիս, յորդորեց գնալ եւ ականել:

Արդարեւ օգտակար առաջարկութիւն. զի ծանօթանալու էի եւ Աղուանից դրացի երկիրներին, որ ոչ սակաւ կարեւոր էր իմ նպատակին: Բայց որովհետեւ ճանապարհորդում էի սեփական ծախքովս, անբաւական էր դրամս եւ միանգամայն վհատեցուցիչ՝ անծանօթ երկրում նիւթականի մասին կրելիք տագնապս, վասն որոյ տատամսում էի վճռել՝ գնա՞լ, թէ՞ չգնալ:

Վերջապէս վճռեցի սիրով կրել ամէն նեղութիւն, միայն թէ անձամբ տեսնել հնութիւնը. միայն թէ անձամբ ծանօթանալ երկրին, որի բնակիչներն յաճախակի արշաւելով այնքա՜ն վնասներ տուած էին Աղուանից երկրին եւ Հայաստանին: Տեսնել երկիրը, ուր արշաւած էին Հայոց թագաւորներից եւ զօրավարներից քաջերն: Հետեւապէս փոխանակ Դարբանդ ելնելու՝ ելայ Պետրովսկ:

Համառօտ կը նկարագրեմ Միջին եւ Արեւելեան-Դաղստանի մասերը բացի կարեւոր համարուած կէտերից եւ ապա սկսեմ գրել Աղուանից երկրի մասին: Երկասիրութիւնս իբրեւ մի ծաղկեփունջ նուիրելով հայ գրականութեան եւ իբրեւ ամենակարեւոր նիւթ հայ պատմութեան՝ մնամ ամենախոնարհ ծառայ Հայոց:

ՄԱԿԱՐ Ծ. ՎՐԴ. ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ

ՊԵՏՐՈՎՍԿ

Այս փոքրիկ քաղաքն հիմնուած է Կասպեան ծովի արեւմտեան ափում ռուսաց Մեծն Պետրոս կայսեր անուամբ: Ունի խնամքով շինուած, գեղեցիկ, ապահով եւ փոքր նաւահանգիստ եւ պատուական կլիմայ:

Քաղաքիս բնակիչներն են ռուս եւ հայ, մեծամասնութիւնն է ռուս տարրն: Կան եւ մի քանի պանդուխտ պարսիկներ:

Հայք, որ գաղթած են Ղզլարից, Արցախից, Նուխուց եւ Աղէքսանդրապոլից, զբաղում են առեւտրով եւ այգեգործութեամբ: Կան եւ ոմանք պանդուխտ հայեր, որք վարձքով ծառայում են այգիներում: Հայք ունին Պօղոս-Պետրոս անուն մի քարաշէն եկեղեցի, որի գոյութիւնն աւելի չէ 20 տարուց: Եկեղեցին, որ ենթարկուած է Հաշտարխանի Հոգեւոր կառավարութեան, ունի 3,000 ռուբլի դրամագլուխ, մի քահանայ եւ մի նորաշէն ծխական ուսումնարան, որի մէջ տակաւին ո՛չ վարժապետ կայ եւ ո՛չ աշակերտ:

Քաղաքումս կայ 40 հայ ծուխ, որի մէջ (միջին հաշուով) լինում է տարեկան 15 ծնունդ, 1 պսակ եւ 3 ննջեցեալ: Զարմանալու են ընթերցողք՝ համեմատելով ծնուածների թիւը պսակուածների թուոյն հետ: Այստեղ եւս ներգործած է մի ազգակործան ազդեցութիւն՝ չամուսնանալու մոդան: Տեսնւում են 50 տարեկան ամուրի հայ երիտասարդներ եւ 40 տարեկան օրիորդներ: Եթէ այսպէս շարունակուի այս տնաւեր մոդան, 60 տարուց յետոյ գուցէ հայ չգտնուի քաղաքումս: Աւելորդ է յայտնել, թէ տարէցտարի զգալի կերպով նուազում է եւ ծննալների թիւն:

ԹԱՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱ

40 վերստ է Պետրովսկից մինչեւ Թամիր-խան-Շուրա: Խճուղին շինուած է առանձին խնամքով:

38 վերստի վերայ է Քեաֆուր-Ղումխն, որ հիմնուած է արքունի ճանապարհի ձախ կողմում, դէպի գետակն թեքուած մի լեռնալանջի վերայ: Այս է շամխալների[1] մայրաքաղաքն: Մի մեծ ժայռի գլխին դեռ կանգուն մնում է նոյն շամխալների ապարանն:

Թամիր-խան-Շուրա քաղաքն, որ շինուած է մի դաշտահովտի վերայ, ծածկուած է պտղատու եւ անպտուղ ծառերով: Այսու ամենայնիւ ամռան ծանր է օդն եւ կլիման եւ անախորժ՝ ջուրն: Միջին-Դաղստանի դուռն համարուած է քաղաքս, վասն որոյ ռուսաց կառավարութիւնն շինել տուած է այստեղ մեծամեծ զօրանոցներ, որոց մէջ բնակւում են մօտ 5000 զօրականներ՝ իւրեանց աստիճանաւորներով միասին: Քաղաքումս նստում է եւ Դաղստանի ընդհանուր կառավարիչ կենեզ Նիկոլայ Զօրաբովիչ Ճաւճաւաձէն, որի ապարանի արեւելեան հանդէպ բարձրացած է Երկայնաբազուկ-Մովսէս Արղութեանցի հսկայ եւ թափծու արձանն: Ուշագրաւ է արձանի երեւոյթն: Բարձրահասակ եւ հսկայակազմ Արղութեանցն ծածկած է երկար եաւինջին, կախած աղեղնաձեւ թուրը, աջ ձեռնում բռնած հեռադիտակը եւ ձախ ձեռնում՝ չաչանի գլխարկը: Իւր գնացքը ուղղած դէպի Միջին-Դաղստան, մեծ-մեծ քայլերով գնում է առաջ, կարծես թշնամեաց դիրքը եւ ամրութիւնները անձամբ դիտելու զգուշաւոր հետազօտութեամբ: Այցելուաց պատկառանք եւ սարսափ է ազդում արձանի վեհութիւնն, որի պատուանդանին վերայ փորագրուած է ռուսերէն տառերով. «Երկայնաբազուկ-Մովսէս Արղութեանց կառավարիչ Դաղստանի նահանգին 1847-1853»: Բայց արձանն դրուած է 1878-ին:

1 Շամխալներն, իբրեւ խազրաց թագաւորական հետագայ սերունդ, որդւոց որդի իշխում էին ծովեզերեայ կողմերիս: Այժմ վերջացած է այս ցեղն. մնացած է միայն օրիորդ ոմն, որ ուսանում է Պետերբուրգում:

Պատմում են. «Երբ Արղութեանցիս հարցնում են մահամերձ ժամում. «Ո՞վ կարող է բռնել ձեր տեղը»: Պատասխանում է. «Իւան Դաւիդիչ Լազրեւն»: Ըստ վկայութեան Արղութեանցիս՝ իւր մահից յետոյ ռուսաց կառավարութիւնն այդ պաշտօնը յանձնում է շուշեցի Յովհաննէս Դաւթեան Եղիազարեանցին, որ ամէնուրեք հռչակուած է ԼԱԶՐԵԻ անուամբ:

Բացի ռուս զինուորականներից քաղաքումս բնակում են նաեւ հայ, հրէայ, լեկզի, պարսիկ եւ վրացի գերդաստաններ:

60 ծխից բաղկացած են հայ բնակիչներն, որք գաղթած են Ղզլարից, Մոզդոկից, Շամախուց եւ Արցախից: Կան եւ մի քանի պանդուխտ հայեր: Սոքա ամէնքն զբաղւում են վաճառականութեամբ, հիւսնութեամբ, մանրավաճառութեամբ, կօշկակարութեամբ, դերձակութեամբ եւ սափրչութեամբ: Հայք ունին Ս. Աստուածածին անուն մի հին եկեղեցի, որի չորս պատերն շինուած են թրծեալ աղիւսով, իսկ ձեղունն եւ կաթողիկէն՝ փայտով:

Եկեղեցումս կայ երկու ձեռագիր աւետարան, գրուած բամբակեայ հաստ թղթի վերայ: Ա. աւետարանը գրած է Մատթէոս անուն ոմն եւ ստացած է (գնած է) Տիկին-Էմին ոմն: Բայց յիշատակարանից յայտնի չէ, թէ ուր գրուած է. միայն յայտնի է թուականն, որ է ՋԻԶ. (1477): Բաւական գեղեցիկ են աւետարանիս մանր գրերն, սակայն գեղեցիկ չեն չորս աւետարանչաց պատկերներն, թռչնաձեւ գլխատառերն, ծաղիկներն եւ լուսանցների նկարներն: Յիշատակարանից երեւում է, որ Տիկին-Էմին նուիրած է աւետարանս ոմն Սարգիս քահանայի. բայց թէ ո՞ւր, կրկին անյայտ է: Սարգիս քահանային Երէցկին-Տինարն վաճառում է աւետարանս Յովհաննէսի որդի Դանիէլին «ՃԾ» թանկայ դրամի՝ միջնորդութեամբ Ղարա-Քեշիշին: Ապա կցուած է «Յիշատակարան»-ին. «Ի թուականին ՋԾ. (1501) ի պարոնութեան Յալբանդ փաթիշահին ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ կամք սասանեալ անօրինաց եւ ի պատուհասից վասն ծովացեալ մեղաց մերոց. ո՛վ սուրբ ընթերցողդ... ով ոք հանդիք (հանդիպիք) սմայ, յիշեցէք ի Քրիստոս միաբերան ողորմիայիւ զ Դանիէլ»: Շարայարուած է նաեւ. «Կամաւն Աստուծոյ ես Ուլուբէկս եւ Դանիէլս մեր սրտաքցութեամբ տվաք զսուրբ աւետարանս Ղուկաս վարդապետի դատաստան: Եւ ես Ղուկաս վարդապետս առի եւ իմ սրտի կամաքցութեամբ ետու յիշատակ ի դուռն Հռոմայրի Սուրբ Նշանին[1] անմահ եւ յաւիտենական յիշատակ. եւ ով ոք յանդգնի հանել զսայ ի դրանէ Սուրբ Նշանին, նա ի Սուրբ Նշանէն կապած եւ անիծած լիցի եւ մի՛ տեսցէ զԽաչի լոյսն ի յաւր (յօր) դատաստանին, ի թվին ՋԿԸ. 1519»:

Թէ՛ «Յիշատակարան»-ի եւ թէ՛ աւետարանչաց պատկերների պարապ երեսների վերայ յականէ յանուանէ նշանագրուած են զանազան անձինքներից յիշեալ վանքին նուիրուած անօթների, զգեստների, անշարժ կալուածների եւ ընծայողների անուններն: Հուսկ ուրեմն գրուած է վերջին թերթի վերայ. «Հընծայամ (ընծայեմ) աէս (այս) ավետարանս Տամիրխան Շուրի հայոց եկեղեցին ես Տիփլիզու քաղաքացի Գէօրգ Դէմինեան Դէմուրովս 1856 ամի»:

Իսկ միւս գրչագիր աւետարանի յիշատակարանում նշանակուած է, որ գրուած է այն Վանայ Վարագայ վանքում: Գրողն եղած է նոյն ուխտի միաբաններից Կիրակոս վարդապետն. «ի ՌԺԸ. ամի (1569) ի հայրապետութեան տեառն Մուխայէլ Կաթուղիկոսին սուրբ Աթոռոյն Էջմիածնայ եւ ի Գրիգորիս Կաթողիկոսին Աղթամարայ եւ ի տեղապահութեան Շամիրամակերտին Խոսրով փաթիշահին (փաշային), որ յայսմ ամի սկիզբն արար պարսպին Վանայ քաղաքին»: Փոքրինչ յետոյ աւելացնում է. «Սխալանաց գրիս անմեղադիր լերուք, աղաչեմ, զի ի դառն եւ ի նեղ ժամանակիս գրեցաւ, որ փախուցեալ եմք ի ձեռաց Քրդացն եւ կամք ի ղարիբութիւն եւ կար մեր այս էր»: Շարայարուած է յիշատակարանին. «Եւ արդ ես՝ Մխիթար քահանայս ետու գրել զսուրբ աւետարանս եւ եդի ի գեաւղս, որ կոչի Արջակ, ի դուռն Սուրբ Գէորգեայ զաւրավարին յիշատակ հոգւոյ իմոյ...»:

1 Վանքս գտնւում է Լօռի գաւառի Օձուն գիւղի մօտերքում:

Գեղեցիկ են աւետարանիս պատկերներն, ծաղկանկարներն ու թռչնագրերն: Աւետարանիս սկզբում նկարուած են Քրիստոսի թաղման, դժոխքի աւերման, Յիսուսի յարութեան, համբարձման, հոգեգալստեան, դատաստանի, խաչելութեան, աւետման, ծննդեան, մկրտութեան, քառասնօրեայ գալստեան, Ղազարոսի յարութեան, պայծառակերպութեան, ծաղկազարդի, ոտնլուայի եւ չորս աւետարանչաց պատկերներն, որք ոսկեզօծուած եւ գունաւորուած են գոյնըզգոյն, բայց վայելուչ ներկերով: Մարկոս աւետարանչի պատկերի տակ գրուած է սպիտակ ներկով՝ «ՁՆկարող սորա Զաքարիա եպիսկոպոսՆ յիշել 'ի Տէր, աղաչեմ»: Նրբագնին ականողն եզրակացնում է, որ բոլոր պատկերները եւ ծաղիկներն ու նախշերը նկարուած եւ ոսկեզօծուած են նոյն եպիսկոպոսի վրձինով եւ գրչով, վասն զի ամէնուրեք փայլում են միեւնոյն ընտիր ճաշակն եւ գեղարուեստի նրբութիւնն:

Ուշադրութեան արժանի են աւետարանիս չորս կողակալ, մագաղաթեայ թերթերն, որոց վերայ գրուած մեսրոպեան տառերի (ամբողջապէս գրուած է գլխատառերով) գոյութիւնն պակաս չէ 1000 տարուց: Անշուշտ իմացաւ ընթերցողն, որ աւետարանիս իսկական թղթերից չեն կողակալներն, այլ առնուած են հին աւետարանից եւ գրուած այստեղ: Աւետարանիս առաջի կողի վերայ (արտաքուստ) կան 4 մետաղեայ մանր խաչեր, որոց վերայ փորագրուած են. «Ղզլար յամասա»: «Աւետիս Մաւի». «Վարդխաթուն». «Մուրզախանի»[1] : Իսկ վերջին երեսին վերայ կայ մի միջակ եւ 3 փոքրիկ խաչ, որոց շրջապատն զարդարուած է խիտ առ խիտ արծաթեայ աստեղանիշ բեւեռներով:

Եկեղեցիս ունի իւր հիւսիսային կողմում 2 սեննակ. որ ծառայում է իբր միդասեան վարժոց, ուր ուսանում են հայերէն եւ ռուսերէն 15 երեխայք: Եկեղեցին ունի միայն 300 ռուբլի: Սակայն ժրաջան հոգաբարձուք, անձեռնմխելի պահելով այս գումարը, վարժապետի 300 ռուբլի տարեկան ռոճիկը հայթայթում են ուսանողաց ծնողներից եւ այլ աղբիւրներից: Մաքուր գտայ եկեղեցու աւազանը, խորանը, սեղանը, անօթները եւ զգեստները՝ շնորհիւ հոգատարութեան արժ. Գէորգ քահանայ Փարեմուզեանցին, որ հոգեւոր հովիւն է հայոց:

Հայոց մէջ լինում է միջին հաշուով տարեկան 15 ծնունդ, 1 պսակ եւ 8 ննջեցեալ:

Արժ. քահանայի հետ ներկայացանք ընդհանուր կառավարիչ կնեազ Նիկոլայ Զօրաբովիչ Ճաւճաւաձէին: Այս ազնուափայլ անձն ընդունեց մեզ ամենայն քաղաքավարութեամբ եւ յարգալիր սիրով եւ, մեր նպատակն իմանալուց յետոյ, ասաց. «Շատ ուրախ եմ, որ վերջապէս հայերն եւս ուշադրութիւն են դարձնում ազգային հնութեանց հետախուզութեանց վերայ, քանզի մինչեւ ցայսօր հայերից ոչ ոք այցելած չէ Դաղստանիս այդ նպատակով: Պատրաստ եմ ամէն կերպով ձեզ օգնելու. նամակներ կը տամ ձեզ Ղունիբի, Խունձախի, Դարբանդի եւ Ղասմ-քեանդի նաչալնիկներին յանձնելու, որք ըստ ամենայնի կ'աջակցեն ձեզ եւ կը դիւրացնեն ձեր հետազօտութիւնները»: Ապա անձամբ բերաւ ձայնքաղ շարականի մեծութեամբ մի ոսկեզօծ եւ փառակազմ մատեան, որ տպուած է Պետերբուրգում: Մատեանս պարունակած է Վրաստանի ամբողջ հնութիւնները, արձանագրութիւնները, յիշատակարանները՝ զանազան դարերի իսկական գրուածների եւ փորագրուածների ձեւերով: Մի աշխատութի՜ւն, որ ունի խիստ մեծ արժէք եւ մեծ գին:

ԱՐԿԱՋ ԱՒԵՐԱԿ ԳԻՒՂԱՏԵՂԻ

Թամիր-խան-Շուրայի եւ Ղազանիշ գիւղի միջեւ գտնւում է Արկաղ աւերակ գիւղատեղին, որի մասին ասում է տեղական աւանդութիւնն. «Շատ ժամանակ առաջ գալիս է հայոց զօրավար ոմն մեծ զօրքով, յաղթում լեկզիներին (ալանաց), շատ գերի տանում երկրիցս եւ բնակեցնում Հայաստանում»: Խորենացին (Բ. գիրք, ԾԲ. գլ.) ճշմարտում է այս աւանդութիւնը՝ գրելով. «Քանզի մեռաւ Հայր Սաթենկանն, եւ այլ ոմն բռնացեալ թագաւորեաց աշխարհին Ալանաց եւ Հալածէր զեղբայրն Սաթենկան, զոր վաննալ հերքէ Սմբատ եւ տիրացուցանէ 'ի վերայ ազգին զեղբայրն Սաթենկան եւ զերկիր հակառակորդացն աւերէ. զամենայն միահամուռ ածէ գերի սաստիկ յԱրտաշատ: Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարեւելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշական գաւառ, 'ի վերայ պահելով զբնիկ անունն Արտազ. քանզի եւ աշխարհն՝ ուստի գերեցան՝ Արտազ կոչի մինչեւ ցայսօր»: Արկազի շրջանակներում պակաս չեն եւ այլ աւերակ գիւղատեղիներ:

ՂՈՒՆԻԲ

Ստացանք յանձնարարական նամակները եւ փոշտով գնացինք դէպի Ղունիբ, որ է վերջին ապաստանարան Շէյխ-Շամիլի: Այս բնութենաստեղծ եւ անմատչելի ամրոցն անջրպետուած է իւր շրջակայ լեռներից լայնատարած եւ խորանդունդ ձորերով եւ բարձրացած չորս կողմի լեռներից: Կարծես թէ բնութիւնն շռայլած է Ղունիբին ամէն տեսակ յարմարութիւն, որ լինի միակ անառիկ ամրոց ամբողջ Դաղստանում: Վիմահերձ եւ բարձրագոյն քերծեր են ամրոցի չորս կողմերն, միայն արեւելեան հարաւային կողմից ունի մի ամենադժուարատար մուտք, որ ամրապնդուած է քարուկիր հաստ պատով: Արեւմտքից արեւելք թեքուած է ամրոցիս մակերեւոյթն, որի երկարութիւնն է մօտ 15 վերստ, իսկ լայնութիւնն՝ 2-6: Այս տարածութեան վերայ կան բերրի վարելահողեր, պատուական խոտահարք, գեղեցիկ անտառ, առատ ջուր եւ ջրաղաց: Բայց կան նաեւ տեղ տեղ սալացեալ ապառաժներ եւ անձրեւաջրի հեղեղատներ: Գարնան, ամռան եւ աշնան ունի հիանալի՜ օդ, սքանչելի՜ տեսարան եւ ուշագրա՜ւ երեւոյթ:

Սարահարթ ամրոցիս արեւելեան կողմին մօտ է Շէյխ-Շամիլի առանձին գիւղն, որի մէջ այժմ դեռ կանգուն են Շէյխի ապարանն, կանանոցն եւ աղօթարանն, բայց հետզհետէ մօտենում են քայքայուն դրութեան: Ահա այս անառիկ բերդն էր, որ երկար տարիներ կարողացաւ անաւաճելի պահել Միջին-Դաղստանը՝ ռուսաց հզօր կայսրութեան սարսափելի ուժերի դէմ:

Ռուս զօրաց հրամանատարները, տեսնելով, թէ անհնար է գրաւել ամրոցս, սկսում են ական հատանել Ղունիբի հիւսիսային կողմից դէպի ներս: Սակայն տեսնելով, թէ խիստ դժուարին է տեղ հասուցանել՝ շարունակ ապառաժ կտրելով, թողնում են կիսատ: Ականի բերանը կամ դուռն երեւում է տակաւին հեռի տեղերից: Այնուհետեւ մտածում են ուրիշ հնարք. շինում են չուանեայ սանդուխներ եւ 1859 թուին մի գիշեր մինչեւ արշալոյս բարձրանում Ղունիբ բերդիս արեւմտահարաւ կողմից եւ լուսաբացին շրջապատում Շէյխ-Շամիլի բնակարանը: Վերջինս, պաշարուած տեսնելով զինքը ռուս զօրքով, մտնում է իւր մզկիթն աղօթելու: Պատմում են, թէ բացի Լազրեւից ոչ ոք չէ համարձակւում դնալ Շէյխի մօտ եւ յայտնել, որ անձնատուր լինի: Շէյխն, իւր մօտ կանգնած տեսնելով Լազրեւը, ասում է սմա. «Բայց դու էլ լա՜ւ տղամարդ եղած ես հա՛. հսկայ հասակովդ եւ աննկուն քաջութեամբդ, այո՛, կաս այնքան, որքան լսած եմ բազմիցս քո համբաւի մասին»: Ապա անձնատուր է լինում Շէյխն եւ փոխադրւում Պետերբուրգ:

Շէյխի բնակարանից դէպի հարաւ-արեւելք, փոքր-ինչ հեռի, կայ այն քարն, որի վերայ նըստած ռուս զօրաց հրամանատար Բարեատինսկին ընդունած է Շէյխը եւ ղրկած Պետերբուրգ հանդերձ գերդաստանով:

Ռուսաց եկեղեցու հիւսիսային կողմում, որ շինուած է բերդիս դրան մօտ, շարուած են Շէյխից գրաւած 14 հատ փոքր, կարճ եւ կոպիտ թնդանօթներ եւ 244 հատ թնդանօթագնդակներ, որք ձուլուած են ամրոցումս:

Տեղւոյս գաւառապետ պ. Զիլաեւի մօտ կայ մի արծաթեայ բուրվառ եւ մի պղնձեայ ջրաթաս, որք, ըստ ասութեան բազմաց, ունին հայերէն արձանագրութիւն: Բայց պ. Զիլաեւի բացակայութեան պատճառաւ չարժանացանք տեսնել այն անօթները եւ ընդօրինակել արձանագրութիւնները, որք գուցէ կարող էին յայտնել, թէ ի՞նչ տեղից բերուած են:

Ամրոցս գրաւելու վերջն ռուսներն այս տեղ շինած են եկեղեցի, զօրանոցներ, դատարաններ, բնակարաններ եւ վաճառանոցներ եւ աւելի ամրացրած ամրոցիս մուտքը:

1 Մնաց անընթեռնելի մի բառ կամ երկու:

ՃՈԽ[1]

Այս մեծ գիւղն, որ աւելի է 300 տանից, գտնւում է Ղունիբի հարաւային կողմում 20 վերստ հեռաւորութեան վերայ: Ճոխի բնակիչները բոլորովին տարբերւում են շրջապատող բոլոր լեկզիներից՝ իւրեանց հայկական տիպերով, բնաւորութիւններով եւ սովորութիւններով: Զանազանւում են նաեւ անուններով եւ ազգանուններով ու կերակուրներով. օր., սոցա մէջ կան Փանոս (Ստեփաննոս), Գէորգի (Գէորգ), Շահնազար եւ այլ անուններ եւ ազգանուններ, որ պահպանուած են ցարդ: Ճոխցիք ո՛չ աղջիկ հարս են տալիս միւս լեկզիներին եւ ո՛չ հարս բերում նոցանից, այլ իւրեանց օրիորդները ամուսնացնում են միայն իւրեանց երիտասարդների հետ:

Ճոխ գիւղի մօտ կան եկեղեցու աւերակի հետքեր եւ քրիստոնէական ձեւով ամփոփուած հանգստարաններ: Գիւղիս կերակուրներն նման են հայոց կերակուրներին, ինչպէս են՝ թանաւ, կաթնաւ, խաշիլ, շփ.թ, քալակեօշ (չորթանով եփած կերակուր) խճողակ, կլոլակ եւ այլն:

Ճոխում կայ հետեւեալ աւանդութիւնն. ամէն մեծ բայրամ օրերում, տարին մի անգամ, գիւղի աւագ կարդացողն կատարում է մեծ հանդէս. պատենից հանում է հին թուրը եւ երեք անգամ բարձրացնում եւ զայրագին իջեցնում է նոյն թուրը Ռոճա գիւղի վերայ, որ գտնւում է Ճոխի հանդէպ: Այս արարողութիւնն կատարւում է շքեղ հանդիսով եւ ներկայութեամբ մեծ բազմութեան: Պատճառը բացատրում են սոյն խօսքերով.– «Մեր նախնի պապերն աւանդած են որդւոց որդի, թէ հայ եղած են գիւղիս բնակիչներն: Գալիս է արաբացւոց Աբու-Միսլիմ զօրավարն, թրի ուժով ընդունել տալիս դաղստանցւոց մահմեդական կրօնը եւ նստում Ռոճա գիւղում: Հայ-քրիստոնեայ Ճոխն, ստիպեալ նոյն զօրավարի բռնաբարող եւ մահատու սրից, ակամայ ընդունում է մահմեդական կրօնը: Այս պատճառաւ, 'ի նախատինս Աբու-Մսլիմի, շարժած են երեք անգամ թուրը մեր նախնիք, ապա նոյնը աւանդած եւ մեզ: Ահա այս է պատճառն, որ մենք եւս տարին մի անգամ կատարում ենք այս աւանդութիւնը: Որդւոց որդի աւանդուած է մեզ, որ Աբու-Մսլիմի իսկական թուրն է այս. աւանդուած է մեզ նոյնպէս՝ ո՛չ աղջիկ առնել այլ լեկզիներից եւ ո՛չ աղջիկ տալ այլ լեկզիների: Վերջապէս միշտ յարգուած է եւ յարգում ենք այս հնաւանդ սովորութիւնները»:

Կասկած չկայ, սոցա նախնիքն գերեվարուած են կա՛մ Աղուանից երկրից եւ կա՛մ Հայաստանից՝ նախքան արշաւանքն արաբացւոց, ինչպէս հաստատւում է սոցա մէջ մնացած աւանդութեամբ:

Որքան ուրախացաւ ոմն Ճոխցի երիտասարդ աստիճանաւոր, որ ռուսաց ծառայութեան մէջ է, երբ տեսաւ մեզ: Նա մօտեցաւ եւ ասաց. «Թէեւ անծանօթ եմ, սակայն միշտ ցանկանում եմ մօտենալ ձեզ: Ասես, թէ մի աներեւոյթ զօրութիւն կամ ձեռք մղում է զիս փարիլ եւ գրկել զձեզ»:

«Ի՞նչպէս կարող ես չմօտենալ, մինչդեռ արիւնիցս է Ձեր արիւնն: Ահա այդ ազգային արիւնն է այն աներեւոյթ զօրութիւնն կամ ձեռն, որ մագնիսաբար քաշում է զՁեզ դէպի ինձ»,– պատասխանեցի եւ մտերմաբար փարուեցայ եւ նստեցուցի մօտս՝ տեսնելով նորա մէջ զարթնած՝ ազգակցութեան քնած արիւնը իբր երաշխաւոր ճշմարիտ զգացման եւ անկեղծ սիրոյ:

Շատ հարցեր տուաւ հայոց մասին եւ ստացաւ պատասխանները. ապա պատուով ճանապարհ դրաւ մեզ:

185 վերստ է Պետրովսկից մինչեւ Ճոխ:

1 Լեկզիների բարբառներում չգտանք ճոխ արմատ կամ ճոխ բառ: Թուի, թէ հայերէն է բառս, որ նշանակում է հարուստ, փարթամ կամ ընչեղ:

ԿԻՐՃ[1]

Նշանաւոր կիրճս գտնւում է Աւար-Ղոյսու գետի աջ ափի մօտ, Ղարա-Դաղ կայարանից եւ զօրանոցից ոչ այնքան հեռի: Դէմ առ դէմ արձանացած են երկու քարեայ, բարձրագոյն եւ լերկ սարեր: Ահա լեռներիս մէջ ընկած է կիրճն, որ տանում է Ղունիբից Խունձախ: Կրճի յատակից մինչեւ գագաթի բացուածքը գրեթէ պակաս չէ 80 սաժէնից: Միաչափ չէ կրճի բացուածքի լայնութիւնն, այլ գագաթից սկսեալ դէպի յատակն հետզհետէ լայնանում է զգալի երեւութով: Կրճի անցքն՝ լինելով խոռոչաւոր եւ ոլոր-մոլոր՝ վասն որոյ դժուարաւ է թափանցում արեգակի լոյսն մինչեւ յատակն: Կրճիցս անցնելու ժամանակ, որ տեւում է մօտ քառորդ ժամ, ձիերի քալուածքի աղմուկներն յարուցանում են սոսկալի արձագանք, որք սարսափ են ազդում չտես անցորդաց վերայ: Մանաւանդ, երբ մթնապատ տեղերում ձիապաններն ստէպ-ստէպ արձակում են գոռոցի ձայներ, դղրդում է կիրճն, որոտում՝ արձագանքն, զարզանդում՝ անցորդն, տրոփում՝ սիրտն, փշաքաղում՝ մազերն եւ սարսռում՝ ամբողջ մարմինն: Ձիապանների յաճախակի գոռալու պատճառն այն է, որ, եթէ աւազակներ կամ գազաններ լինին պահուած մութ խորշերում, խոյս տալով հեռանան եւ չվնասեն ուղեւորներին: Կրճիս յատակով հոսում է մի առու:

Կրճիս հարաւային մուտքի ձախ կողմի բարձրութեան վերայ կայ մի քարայր, որի մէջ մեղր շինած են մեղուներն: Պատմում են, թէ ռուսաց Աղէքսանդր Բ. կայսրն կրճիս այցելած ժամանակ ոմն լեկզի, գետնից մինչեւ քարայրի մուտքն փայտեայ ցիցեր ցցելով, իբր կռուան ոտից, եւ բարձրանալով, իջեցրած է մեղր, մեծարած կայսեր եւ պարգեւ ստացած 25 ռուբլի:

Այս ուշագրաւ եւ հիանալի բացուածքի մասին խորհրդածողն յանգում է հետեւեալ եզրակացութեան: Սկզբում, անշուշտ, միապաղաղ եղած են երկու սարերս, որոց հարաւային եւ արեւելեան լայնագոգ լանջերի հեղեղներն եւս միանալով առուի հետ՝ նախ վազած են բացուածքի գագաթով: Ապա անձրեւի հեղեղներն, տարէցտարի կտրելով ապառաժ սարը միջից, հասցրած են այժմեան դրութեան: Շրջանկատ հետախոյզն հեղեղների համանման գործը տեսնում է եւ շատ տեղերում, ինչպէս են Ղապալա գաւառի Ղութղաշէն գիւղից վերեւ եղածն եւ Շուշուց ներքեւ Մազի-կամուրջ կոչուած տեղի հեղեղատների բացած եւ կտրած ապառաժ սալ քարերն:

ԽՈՒՆՁԱԽ

Աւար գաւառի գաւառագլուխն է Խունձախն, ուր բնակում է գաւառապետն, ռուս բնակիչներ եւ մօտ 5000 ռուս զինուորական: Ռուսներն տիրապետելուց յետոյ այստեղ շինած են կրաշաղախ ցեխով եւ քարով ամուր դղեակ, գեղեցիկ զօրանոցներ, սիրուն բնակարաններ եւ մի խաչաձեւ եկեղեցի: Դաղստանի ամենալաւ մասն կարելի է համարել Խունձախը, որը հիմնարկուած է մի դալարագեղ, ծաղկազարդ եւ լայնագոգ լեռնահովտի վերայ: Խունձախի արեւելեան հանդէպ կայ մի բարձրագոյն սարահարթ, որ ծածկուած է գուդանահերկի արտերով եւ ցելերով: Այս միակ գուդանահերկի հողն է, որ տեսանք Դաղստանի լեռնային մասում՝ 215 վերստ ճանապարհորդելուց յետոյ:

Սարահարթս ունի հիանալի օդ, ուշագրաւ տեսարան եւ զմայլելի դիրք: Սարահարթիս հարաւային եւ արեւելեան լանջերի ստորոտները քերելով՝ սրընթաց խոխոջում է Աւար-Ղոյսու գետն, որ, իբր սահմանագլուխ, բաժանում է Աւար գաւառը Ղունիբի գաւառից: Սարահարթիցս նայողն արեւելեան կողմում տեսնում է աղխաղխալ լեռնաշղթաներ, ձուաձեւ, ձկնաձեւ, լիսեռնաձեւ, վրանաձեւ սարեր, անդնդախոր եւ մանուածոյ ձորեր: Տեսնում է հիւսիսային կողմում սղոցաձեւ, սլաքաձեւ, սոկոնաձեւ եւ գլխարկաձեւ լեռներ, լեռնակներ, բլրակներ, թումբեր, խութեր եւ անհամար ձորեր: Արեւմտեան կողմում հեռուից պատկերանում են ձիւնագագաթ լեռներ, իսկ մօտից՝ Խունձախի կանաչազարդ լեռներն: Հարաւային կողմում արձանա-

1 Ռուսերէն՝ Սալանցովոյէ ուշչելիէ:

նում են մօտուստ Ղունիքն, Համեստաձեւ, Թամբաձեւ, արկղաձեւ, սաղաձեւ եւ գեղարդաձեւ լեռներ եւ լեռնակներ, խոր-խոր ձորեր եւ ձորակներ. իսկ հեռուստ՝ ամենաբարձր լեռնաշղթան, որ ալեզարդուած է մշտապատ ձիւնով:

Ռուսաբնակ Խունձախի արեւելեան հանդէպ է եւ լեկզիաբնակ Խունձախ աւանն: Աւելորդ է յիշեցնել, թէ առաջինն վերջնիցս առած է Խունձախ անունը:

Ռուսական Խունձախում կառքով մօտեցանք գաւառապետի տան: Աւար գաւառի գաւառապետ կնեազ Վախվախովն, որ կանխաւ տեղեակ էր մեր գալուն, իջաւ մինչեւ գետնայարկի մեծ դուռն, դիմաւորելով բարեւեց ազնուաբար, ընդունեց նամակը եւ հրաւիրեց վերնայարկն: Ապա ներկայացուց մեզ իւր ազնիւ գերդաստանը եւ պ. Ջիլաեւի ընտանիքը, որ իւր քենին է: Ազնուափայլ կնեազն, պատուական նախաճաշով մեծարելուց յետոյ, մեզ հետ ղրկեց իւր ձիապանը՝ իբր առաջնորդ եւ մի աստիճանաւոր՝ ի նշան պատուոյ:

ՓԱԹԱՆՈՂ

Խունձախից դէպի հարաւ գնալով իջանք մի սարսափելի եւ բարձրադոյն քերծի տակ: Ուղին այնքան զառիվայր էր, որ մօտ չորս վերստ իջանք ոտքով: Աւարական բարբառով փաթանող նշանակում է փարախ ոչխարաց: Փաթանողս մի խաչաձեւ եւ քառակուսի եկեղեցու աւերակ է, որի չորս պատերն տակաւին կանգուն են կիսով չափ, իսկ աւերեալ՝ մնացած մասերն: Երեւի թէ անսիւն եղած է տաճարս, որ շինուած է ամբողջապէս տորոնագոյն տաշած քարով եւ կրաշաղախ ցեխով: Տաճարս չունի հայոց եկեղեցու սեփական յատկանիշը, այն է՝ աւազան հիւսիսային պատում եւ խորհրդարան սեղանի աջ ու ձախ կողմերում. այլ ունի վրացական ձեւ, վասն որոյ մեր կարծիքով եկեղեցիս պատկանում է վրաց: Լեկզիները, կարկատելով արեւելեան որմի փլուածքները եւ փայտերով ծածկելով պատերի գլուխը, փոխարկած են փարախ ոչխարաց: Ցատակն ծածկուած է կանգնաչափ բարձրութեամբ աղբով: Թէ ո՞ր դարում շինուած է տաճարս, դժուարին է որոշել:

Տաճարիս հարաւային կողմում կայ մի գիւղի աւերակ, կալատեղեր, մարագաբակեր եւ հանգստարան: Գերեզմանների վերայ ձգուած են մեծ-մեծ, բայց անտաշ եւ անարձանագիր քարեր: Որ քրիստոնէի են գերեզմաններս, ապացոյցն այն է, որ ամէն նշաններով եւ յատկութիւններով բոլորովին տարբերւում են մահմեդականաց, մանաւանդ լեռնականացս գերեզմաններից: Տակաւին դիւրութեամբ նշմարւում են աւերակ բակերից, որ գիւղս բաղկացած է եղել 80 տուն բնակիչներից:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Փաթանողից իջանք Աւար-Ղոյսու գետի ձախ ափն եւ անցանք Դաթունա գիւղի գլխով: Համարեա թէ մի եւ կէս վերստ եւս յառաջ գնալով գիւղիցս նոյն պողոտայով, ապա ծռուեցանք աջ կռան վերայ եւ մի նեղուցով մտանք մի ձորի մէջ, որից հոսում է մի գետակ եւ թափւում Աւար-Ղոյսու գետի մէջ: 10 րոպէաչափ բարձրացանք մե՛րթ գետակի միջով, մե՛րթ՝ աջ եւ մե՛րթ ձախ եզերքներով: Եւ ահա երեւացաւ մի թոնրաձեւ, բայց լայնադոգ եւ տափարակ տեղ, որի վերնակողմումն՝ մի եկեղեցի:

Փոքր է եկեղեցիս եւ հիմնուած մի մեծատարած եւ միապաղաղ սալ քարի վերայ: Տաշուած եւ տորոնագոյն քարերով շինուած են բոլոր անկիւնաքարերն, երկու դռներն (արեւմտեան եւ հարաւային կողմերից), չորս նեղ լուսամուտներն, ամբողջ խորանն, բեմն եւ չորս սաղաձեւ կամարներն, որք հաստատուած են հարաւային եւ հիւսիսային որմերի մէջ՝ առանց սիւների: Իսկ մնացեալ մասերն շինուած են անտաշ քարերով: Խորանի աջ ու ձախ կողմերում կան գեղեցիկ խորհրդարաններ: Հարաւային խորհրդարանի վերեւից, որմի մէջ կայ մի գեղեցիկ, բայց գաղտնի պահարան: Խորանի կարակնաձեւ քարերին յարմարեցրած են մի փակակալ քարեայ դուռը, որը փակած ժամանակ բոլորովին անյայտանում է ծածկապահարանի գոյութիւնն, իսկ յայտնւում՝ բացած ժամանակ: Կասկած չկայ, որ գաղտնի դարանումս պահած են եկեղեցուս արծաթեղէն անօթները, զարդերը եւ զգեստները՝ գողութեան եւ յափշտակութեան վտանգներից ազատելու նախազգուշութեամբ: Եկեղեցիս ունեցած է եւ աւազան, եւ վարագուրի երկաթ, բայց յայտնի երեւում է, որ քանդուած է աւազանի կամարն եւ ծակուած պատն: Այժմ անյայտացած են ինչպէս աւազան քարն, նոյնպէս եւ վէմ եւ սեղան քարերն եւ վարագուրի երկաթն: Եղծուած են բեմի եւ այլ տեղերի օծեալ փոքրիկ խաչերն եւ արձանագրութիւնն. անեղծ մնացած է միայն խորանի վերնակամարի ճակատի խաչն: Տաճարիս յատակն լի է անասնոց աղբով, պատերն, կամարներն եւ ամբողջ թաղն՝ սեւացած ծխով: Երեւում է, որ հովիւներն ձմռան գիշերներում իւրեանց հօտն այստեղ մակաղած եւ կրակ վառած են, որով ծխոտուած եւ ունջակալած է ձեղունն: Ահա այս դրութեան մէջ է տաճարիս ներսի կողմն:

Արտաքուստ անխախտ է ամենայն ինչ բացի աւազանի քանդուած տեղից: Ամբողջապէս անխախտ մնում են սուրբ տանս տանեաց սալկախ քարերն, միայն տեղ-տեղ բուսած են խոտեր: Այնչափ ամուր է այս կրաշաղախ ցեխով շինուած եկեղեցին, մինչեւ անգամ կարծես թէ թափծու է, ղի քարից աւելի քարացած է ցեխն: Ճարտարապետութեան ձեւից եւ շինութեան արտաքին նշաններից երեւում է, որ 500 տարուց աւելի չէ եկեղեցուս գոյութիւնն:

Գեղեցիկ գետակն կարկաչահոս շռռում է եկեղեցու հիւսիսային կողմից, պատում արեւելեան կողմով, ապա հանդարտ հոսում հարաւային կողմից. վասն որոյ թերակղզի ձեւացած է տաճարիս տեղն:

Գետակի ձախ ափում՝ եկեղեցու հարաւային կողմում կայ մի աւերակ գիւղատեղի, որի մօտ եւ հանգստարան, բայց անարձանագիր են տապանաքարերն: Բոլորովին աւերուած են բնակարանների պատերից մի մասն, կիսաւեր՝ միւս մասն, բայց դեռ կանգուն՝ երրորդ մասն, որ դիմադրելով ժամանակի աւերիչ բռնութեանց դէմ, պահած է իւր գոյութիւնը: Հարկ է յայտնել, որ բոլորովին տարբերւում են աւերակիս պատերն լեռնաբնակ մահմեդականացս բնակարանների պատերի ձեւից. քանզի վերջնոցս բնակարանները շինուած են գետնի երեսին պարզ հողէ ցեխով, ինչպէս են Աղուանից դաշտի եւ Արարատեան նահանգի հայ բնակչաց այժմեան կամ հին տների որմերն: Գետնափոր եղած են եւ Փաթանողի բնակչաց բնակարանները: Որոշակի երեւում է աւերակիս բակերից եւ պատերից, որ խիտառխիտ շինուած են եղել տուներն կամ, լաւ եւս է ասել, եղած են պատկից: Հաշուելով բակերը՝ 80 գերդաստանից աւելի եղած լինելու չէ բնակչաց ծխաթիւը:

Ասես թէ ամենագէտ Նախախնամութիւնն առանձին խնամքով պատրաստած է այս տեղը՝ թշուառ հայ պանդուխտները պատսպարելու, սփոփելու եւ մխիթարելու սոյն խուժադուժ եւ բարբարոս լեռնականաց մէջ: Եկեղեցին եւ գիւղատեղին ամէն կողմերից շրջապատուած են անմերձենալի լեռներով եւ պարսպանման ժայռերով: Երեւի թէ ամրապնդուած է եղել եւ մուտքն՝ պատով եւ դռնով: Մշտադալար եւ անփութ գենի (գի) ծառերով զարդարուած են եկեղեցու եւ աւերակի շուրջը: Վճիտ գետակն, ջրվէժ կազմած, անցնում է գիւղի առջեւից, որ դարձրած է եւ ջրաղաց: Դալարազգեստ խոտերով եւ ծաղիկներով ծածկուած են գետակի աջ ու ձախ եզերքները: Պետրովսկից մինչեւ տաճարս մօտ 250 վերստ է մեր շրջած տեղերով, իսկ 200 վերստ՝ ուղղակի փոշտի ճանապարհով եւ Աւար-Ղոյսու գետի եզերքով:

Գիւղիս բնակիչ հայերն ո՞ր երկրից կամ ո՞ր գաւառից գերուեցան եւ բերուցեան այստեղ. ո՞ր թուականին եղած է գերեվարութիւնն. ի՞նչ տեսակ նեղութիւններ կրած են. արդեօք նահատակուեցա՞ն, բնաջինջ եղան աւերակիս հայերն, թէ Ճոխի բնակչաց նման ձուլուեցան մահմեդականութեան հետ. հալածուեցա՞ն եւ այստեղից, թէ՞ տեղափոխուեցան ուրիշ քրիստոնէաբնակ երկիրներ – չունիմ հաւաստի տեղեկութիւն: Եթէ Ղազարոսի նման յանկա՛րծ յարութիւն առնէին այս ննջեցեալներից ծերունիներ, կընկնէի նոցա ոտքերի առջեւ, թախանձելով պատմել կը տայի իւրեանց գլուխներով անցածները եւ մի ըստ միոջէ կգրէի այստեղ եւ բաւականութիւն կտայի իմ յարգելի ընթերցողներին:

ԶԱՆԿԻ ԽԱՐԻԹՈՆ ՕՂԼՈՒ ՑՈՒՑՄՈՒՆՔԸ

Վերադարձանք Դաթունայ գիւղն, որպէս զի հարցափորձելով եկեղեցու եւ աւերակ գիւղի բնակչաց մասին՝ կարողանայինք աւելի տեղեկութիւններ հաւաքել ծերունիներից: Մեր առաջնորդն հրաւիրեց գիւղի մէջ ամենից ծերը՝ Զանկի Խարիթոն օղլուն: Թարգմանի բերանով խնդրեցինք ծերունուց, որ ուղղակի պատասխանէր միայն մեր հարցերին:

–Քանի՞ տարեկան էք եւ ի՞նչ գիտէք եկեղեցու մասին:

–Գրուած չէ իմ ծննդեան թուականը, միայն կարող եմ ասել, որ 80 տարեկան եմ եւ այս գիւղի ամենից ծերունին եւ իմ Դաթունա պապից հինգերորդ պորտն եմ ես՝ որդուց որդի հաշուելով: Դաթունա (Դաւիթ) պապս կիւրճի (վրացի) եղած է, որ գերի բերուելով Կիւրճստանից՝ հիմնած է այս գիւղը: Գիւղումս այժմ կայ 300 տուն. այս 300 տունն յետագայ սերունդ են Դաթունա պապիս: Քրիստոնեայ Դաթունա պապս ակամայ ընդունած է մեր մահմեդական կրօնը, վասն որոյ մահմեդական ծնուած են նորա յետագաներն, ինչպէս եւ մենք: Իմ լսելով՝ մօտ 300 տարի անցած է իմ Դաթունա պապի գերի ընկնելուց մինչեւ ցայսօր:

–Ի՞նչ գիտէք եկեղեցու եւ աւերակ գիւղի մասին. ի՞նչ ազգից եղած են գիւղի բնակիչներն. ո՞վ շինած է եկեղեցին. ինչպէս տեսած եւ լսած էք, պատմեցէք:

–Իմ պապ Դաթունան գտած է եկեղեցին եւ գիւղի աւերակը այնպէս, ինչպէս է այժմ՝ անմարդաբնակ: Այն ժամանակից ցարդ որդուց որդի աւանդելով՝ ինձ հասած է, եւ ես աւանդած եմ մարդաբնակ: Այն ժամանակից ցարդ որդուց որդի աւանդելով՝ ինձ հասած է, եւ ես աւանդած եմ երկար շղթայ[1], որ կախուած էր եկեղեցու միջից[2], բայց թէ ո՞վ տարած է այժմ, չգիտեմ. չեմ կարող ծերութեամբս եւ բամազանի[3] ծոմապահութեան օրերուս սուտ խօսել. սուտ խօսելը մեղք է:

–Արձանագրութիւն եւ փորուած փոքր խաչեր կայի՞ն եկեղեցու քարերի վերայ եւ ի՞նչ եղան:

–Գրեր էլ կային, փոքր խաչեր էլ: Բայց մեր սուրբ Շէյխ-Շամիլն, յաղթուելուց մի քանի տարի առաջ իմանալով, որ այս տեղ կայ քրիստոնէից եկեղեցի, հրամայեց քանդել եւ ոչնչացնել: Բայց այնքան ամո՛ւր, այնքան կա՛րծր եւ այնքան զօրե՛ղ էր, որը չկարողացան քանդել, որովհետեւ կրացեխն, որ քարերի հետ միացած է, քարերից աւելի քարացած է պնդութեամբ: Միայն թէ հազիւ կարողացան ծակել նորա (եկեղեցու) հիւսիսային պատը (աւազանի ետեւի պատը), որ բարակ էր: Մեր սուրբ Շէյխ-Շամիլն, երբ լսեց, որ չէ քանդւում, հրամայեց մուրճով ջնջել գրերը եւ խաչերը: Մեր սուրբ Շէյխ-Շամիլը Ռուսաստան տանելուց յետոյ այս տեղ եկաւ Լազրեւն եւ ստիպեց մեզնից շատերին, որ ասենք ճշմարիտը խաչերի, գրերի, քանդուածքի եւ աւերակ գիւղի բնակչաց մասին: Ինչպէս գեներալ Լազրեւին ասած եմ ճշմարիտը, թէ այդ ամէնն քանդուած է մեր սուրբ Շէյխի հրամանաւ, նոյնպէս ասացի եւ քեզ ճշմարիտը:

–Եկեղեցու պահարանի փակակալ դռնաքարը ո՞վ բացած է:

–Այնպէս բաց տեսած եմ մանկութիւնիցս. բայց թէ ո՞վ բացած է, չգիտեմ:

–Պահարանի միջից եկեղեցական իրեր, այսինքն խաչեր, աւետարաններ, արծաթեղէն զարդեր հանա՞ծ են, եւ ի՞նչ եղան արդեօք. ի՞նչպէս գիտէք: Ես թանկ գնով կը գնեմ:

-Ամենեւի՛ն տեղեկութիւն չունինք: Պահարանի դռնաքարը միշտ բաց տեսած ենք եւ պահարանը՝ դատարկ:

–Անկասկած տեսած էք խորանի երկու քարերն (վէմ եւ սեղան քարերն). ի՞նչ եղան:

–Այո՛, տեսած ենք, ջարդուեցան նոյն մարդոց ձեռնով գրերը եւ խաչերը եղծելուց յետոյ:

1 Դամիր (երկաթեայ) զինջիլ:
2 Կանթեղ կամ ջահ կախելու համար:
3 Օրիջի ծոմապահութեան օրեր:

ՀԱՅԿԱԿԱՆ, ԹԷ ՅՈՒՆԱԿԱՆ

Լսեցինք, որ մեզնից առաջ եկեղեցուս այցելած է վրացի լուսանկարիչ պ. Ալէքսանդր Սոլոմոնովիչ Ռոինովը, հանած եկեղեցուս լուսանկարը եւ տարած Թիֆլիսի «Մուզէյ» կոչուած հնադարանը: Պարոն Ռոինովն ինքն կարծած եւ շատերին կարծել տուած է, ինչպէս ասում են շատերն, թէ եկեղեցին պատկանում է վրացւոց: Պարոնն իւր կարծիքը կամ ենթադրութիւնը հիմնած է որպէս թէ հետեւեալ հիման վերայ: Եկեղեցուն մօտ է Դաթունա գիւղն, որի հիմնադիրն՝ Դաւիթն (Դաթունան), եղած է ազգաւ վրացի: Աւանդութեամբ ասում են, թէ երկու վրացի վարդապետներ մի ժամանակ բնակած են նոյն եկեղեցում: Շէյխ-Շամիլի անձնատուր լինելուց յետոյ Լազրեւն այս տեղից Կախեթ եւ Վրաստան վերադարձրած է բազմաթիւ վրացի գերդաստաններ, որք շատ տարիներ առաջ գերի բերուած էին Դաղստան: Ուրեմն եկեղեցին պատկանում է վրաց:

Կարդարանային պ. լուսանկարչի կարծիքն ու ենթադրութիւնները, միայն եթէ եկեղեցին ունենար յունական կամ վրացական եկեղեցու առանձին նշանները: Արդէն յայտնի է, որ վրացւոց եկեղեցին բաժանուած է Հայաստանեայց եկեղեցուց փրկչական 597-606-ին. եւ ստացած յունական եկեղեցու առանձնայատկութիւնը, այսինքն է բաժանումից յետոյ վրացւոց տաճարներն չունին ո՛չ աւազան հիւսիսային պատում եւ ո՛չ խորհրդարաններ՝ սեղանի երկու կողմերում եւ ո՛չ ամբողջ սեղանը ծածկելու վարագոյր, որք յատուկ են միայն հայոց եկեղեցուն: Եթէ ընդունուի եկեղեցին իբր 500 տարուան շինութիւն, հիմնարկուած կը լինի այն 1390 թուին: Վրացիք բաժանուած են 597–606-ին. բաժանումից յետոյ մինչեւ տաճարի հիմնարկութիւնն անցած է 784 տարի: Վրացւոց եկեղեցին, որ ըստ ամենայնի ընդունած էր յունական եկեղեցու յատկութիւնները՝ չէր կարող պահպանած լինել 1390-ին հայոց եկեղեցու առանձնայատկութիւնը – աւազան պատում եւ խորհրդարաններ՝ խորանի աջ ու ձախ կողմերում եւ մեծ վարագուրի երկաթ:

Նպատակ չունինք ծանրանալ այս խնդրի վերայ. միայն թէ, ինչպէս ապացուցանում է Մովսէս Կաղանկատուացին, Դաղստանումս նախ քարոզած է Աղուանից Գրիգորիս կաթուղիկոսն. «Եւ երթեալ (Գրիգորիսի) 'ի Մազքթաց աշխարհն... եւ քարոզէր զանճառելի Երրորդութիւնն» (Մով. Կաղ., տպ. 'ի Մոսկ., եր. 30):

Երկրորդ՝ Ե. դարում արդէն հայադաւան քրիստոնէութիւն կար Աւարի երկրումս «Յունան Հոնաց եպիսկոպոսապետ, որ 'ի Մազքթաց աշխարհէն էր» (նոյն, եր. 43):

Երրորդ՝ Է. դարում Աղուանից Իսրայէլ եպիսկոպոսն Աւարի կողմերս գալով՝ քարոզեց եւ լուսաւորեց հոնաց եւ խազրաց ժողովուրդը. «Իսրայէլ նշանագործ եպիսկոպոսն Մեծ-կողմանց... որ զբազում աշխարհս խազրաց եւ հոնաց դարձոյց ի քրիստոնէութիւն» (նոյն, եր. 236. տե՛ս նաեւ 188-208): Սոյն պատմական փաստերը ունենալով հանդերձ՝ չենք վստահանում աւելի տարեթիւ տալ եկեղեցու հիմնարկութեանն, վասն զի կրկնում ենք, որ առ առաւելն 500 տարուց աւելի լինելու չէ եկեղեցու հիմնարկութիւնն:

ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ[1]

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ. Կասպից եւ Սեւ ծովերի մէջ՝ արեւելքից արեւմուտք, ձգուած է Կովկասեան հսկայ լեռն: Նոյն դիրքով սարիս հիւսիսային կողմից ձգուած են նաեւ պարք լեռնաշղթաների, որք աստիճանաբար ցածանալով մօտենում են ծովին: Ծովեզերքից նայողին թւում է, թէ մի բնութենաստեղծ վերելակ սանդուխ են այս աղխաղխեալ լեռներն, որ դրուած են հիւսիսից հարաւ, որոց վարի աստիճանն է ծովեզերքի փոքր լեռն, իսկ վերինն՝ վերջին ձիւնապատ սարն: Մէն մի լեռ ճիւղաւորուելով՝ կազմած է գրեթէ անհամար լեռնակներ, լեռնաբազուկներ,

1 Կարեւոր տեղեկութիւններս չէ վերաբերում միայն միջին-Դաղստանին, այլեւ՝ բոլոր Դաղստանին:

ձորեր եւ ձորակներ, կիրճեր եւ վիհեր: Բայց Հայաստանի լեռների նման անտառապատ եւ կանաչազարդ չեն Կովկասեան լեռների հիւսիսային լեռնաշղթաներն. այլ ամենաբարձրների գագաթներն ծածկուած են մշտապատ ձիւներով, իսկ մնացեալ մասերն եւ միանգամայն լեռներից եւ բլուրներից շատերն, լերկ, անզարդ, ապառաժ եւ ժեռ քարադէզեր են: Բայց տեղ-տեղ կան տարբեր մեծութեամբ հովիտներ, լեռնահովիտներ եւ սարահարթեր, որք երեւում են կանաչազարդ եւ սիզաւէտ: Միայն կայ մի դաշտ, որ տարածուած է ծովեզերքով Ղզլարի կողմից դէպի Դարբանդ, ուրեք-ուրեք լայն դիրք ստացած եւ ուրեք-ուրեք՝ նեղ դիրք: Ամենամեծ հովիտն է Թամիր-խան-Շուրայինը:

ՀՈՂ. Համեմատական ճիշտ հաշուով՝ Դաղստանի ամբողջ տարածութեան հարիւրից հինգ մասն միայն պիտանի հող է, իսկ մնացեալ 95 մասն՝ անպէտք եւ անօգուտ. վասն զի ապառաժոտ, աւազոտ եւ քարոտ լեռներ եւ ձորեր են: Արդիւնաբեր են միայն դաշտերի. ջրարբի հովիտների եւ սարահարթերի հողերն: Արդիւնաբերութեան քանակութիւնը իմ յարգելի ընթերցողաց եւ ազնիւ բանասիրաց ճշտիւ հաղորդելու համար՝ յայտնում եմ, որ ցորենի եւ գարու մի սերմը կամ մի հատիկը հողն աւելացնում է հնգից ո՛չ նուազ եւ 15-ից ո՛չ աւելի:

ԳԵՏԵՐ. Կան 3 գլխաւոր գետեր – Ղարա-Ղոյսու, Սալթի-Ղոյսու եւ Աւար-Ղոյսու, որ սկիզբ են առնում ձիւնապատ լեռներից, անօգուտ հոսում խոր-խոր ձորերով. միախառնուելով կոչւում Սուլակ եւ թափւում Կասպից ծովն: Գետերս ընդունում են իւրեանց աջ ու ձախ կողմերից օժանդակ գետակներ, վտակներ եւ առուներ: Հարկ է յայտնել, թէ բացի գետերիցդ կայ եւ 2 փոքր գետ. մին թափւում է ծովը Դարբանդի եւ Պետրովսկի միջով, իսկ միւսն հոսում է երկու Քեաֆուր-Ղումուխների միջով: Վերջինս է, որ դարձնում է շատ ջրաղացներ եւ ջրում պարտէզներ եւ բանջարանոցներ: Բայց դժուարանում ենք որոշել, թէ երկու գետերիցս ո՞րն է նախնիքներից Խազիր կամ Խազր կոչուած գետը: Ընդհանրապէս սակաւ է ջուրը շատ տեղերում. բայց լաւ են աղբիւրների ջուրերն առհասարակ:

ՓԱՅՏ. Խիստ սակաւ են անտառներ եւ ծմակներ: Մայր ծառերի ընտիր անտառներ միայն գտնւում են ձիւնապատ լեռների հիւսիսային ստորոտներում եւ լանջերում. մանաւանդ Աւար-Ղոյսու գետի ակունքներում: Ինչպէս Կուր գետը սալերով շինութեանց համար փայտեղէն է մատակարարում Թիֆլիսին, նմանապէս Աւար-Ղոյսուն՝ Միջին-Դաղստանի մեծ մասին: Հազիւ թէ ուրեք-ուրեք երեւում են թուփեր եւ մացառներ, բացի յիշեալ անտառից: Սակայն հարկ է յայտնել, որ հովիտներում տեղ-տեղ աճեցնում են բարտի ծառեր:

ԿԼԻՄԱ. Բարեխառն է ամռան ծովահայեաց տեղերի օդն եւ կլիման. ծանր եւ վնասակար՝ մեծ հովիտների օդն եւ կլիման. գովելի եւ առողջարար՝ փոքր հովիտների եւ սարահարթերինը. խիստ եւ անախորժ՝ մեծ սարերինը:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ. Լեռնային Դաղստանում ճանապարհորդողն ստիպուած է շարունակ բարձրանալ օձապտոյտ եւ տաղտկալի ճանապարհներով լեռների գլուխներն եւ նոյնանման ճանապարհներով իջնել խոր-խոր ձորերի հովիտների մէջ: Ասես թէ անսպառ են աղխաղխալ լեռներ եւ լեռնագօտիներ, խճճուած, մճճուած, խճողուած, կցկցուած, փաթաթուած, անջատուած եւ ճեղքուած լեռներ, լեռնակներ, բլուրներ, բլրակներ, թումբեր, ձորեր եւ ձորակներ: Ռուսաց տիրապետութիւնից յետոյ Պետրովսկից մինչեւ Ղունիբ եւ Խունձախ եւ Ղալի-Ղումուխ հարթուած են թումբեր, պատառուած լեռներ, լցուած ձորեր, շինուած երեւելի կամուրջներ եւ պատրաստուած արքունի պողոտայ եւ խնամքով շինուած խճուղի: Ընտիր են փոշտի ձիերն, ընտել՝ կառավարներն եւ վայելուչ՝ կայարաններն:

ԲԱՐԲԱՌՆԵՐ. Զորօրինակ Դաղստանում կան շատ տարբեր ցեղեր եւ զանազան ազգեր, նմանապէս կան եւ շատ տարբեր բարբառներ, որոնց գլխաւորներն են անտիական, աւարական, բոթլիխական, թոքիտական, ղումուխական եւ աղ-ղօշական բարբառներն: Այս բարբառներն այնքան զանազանւում են իրարից, մինչեւ անգամ չեն հասկանում միմեանց ասածները եւ խօսածները: Եւ զորօրինակ հայոց, վրաց եւ ուտեաց բարբառներում յաճախ գործածական են ծ, ճ, խ, ղ, հ, ճ, ջ, եւ ք ձայներն կամ տառերն, որք գրեթէ անգործածելի են եւրոպական շատ բարբառներում կամ գործածելի են սակաւ ուրեք, յաճախակի գործածական են Դաղստանի բարբառներում: Այս մերձաւոր նմանութիւնը քննելն արտաքոյ է մեր նպատակից, վասն որոյ թողնում ենք մասնագէտ լեզուաքննիչներին:

ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ. Դաղստանում աւանդութիւն կայ, որպէս թէ իւրեանց առաջին նահապետ Կովկասն եղած է Յաբեթի ցեղից եւ Հայկ նահապետի եղբայրն[1]: Այս պատճառաւ որպէս թէ լեկզիները պատուիրում են որդւոց որդի ո՛չ վնասել հայոց, ո՛չ սպանել հայ անհատ. բացառութիւն են վրէժխնդրութեան դէպքերն (անցեալն ապացուցանում է հակառակը): Որպէս թէ Հայկի եւ Կովկասի մերձաւորութեան պատճառաւ այնքան մօտ են հայոց, որ եղբօրորդի են անուանում հայերին: Որպէս թէ սոյն մերձաւորութեան պատճառաւ Հայոց թագաւորներից մի քանիսն (Արտաշէս եւ Տրդատ) ամուսնութեան կապով յարգեցին նախնի արիւնակցութիւնը:

ԿՐՕՆ. Հաւանական է, որ Դաղստանի նախնի կրօնն եղած լինի տարրապաշտութիւն կամ կռապաշտութիւն, ինչպէս եղած էին իւր դրացի ազգերինն: Հիւսիսային Կովկասի նախնի ցեղերն (որոց մասին է մեր խօսքը), մերթ Եւրոպա արշաւելով եւ մերթ Ասիա, տեսնում էին այս երկիրների պաշտած առարկաները եւ ընդօրինակում, ինչպէս Հայաստանն եւ այլ երկիրներ՝ Յունաստանից: Դեռ է. դարում լեռնականներս ունէին կոց մեհեաններ, պաշտելի ծառեր, հսկայի արձան Թանգրի-խան-աստուած անուամբ, որին զոհում էին խորոված ձի: Ունէին նաեւ քըրմապետներ, կախարդներ, վհուկներ եւ քաւդեայք: Բաց յայսցանէ պաշտում էին կրակ, կայծ, ջուր, լուսին եւ այլն[2]: Կաղանկատուացին գրում է նոյն գլուխներում, թէ Աղուանից իշխանների խորհրդով զըրկուեցաւ այս կողմերն Իսրայէլ եպիսկոպոսն, որ քարոզելով հաւատացնում է Քրիստոսին ժողովուրդը. կործանում կուռքերը, կտրել տալիս պաշտելի ծառը, շինել տալիս խաչեր, տնկել տալիս շատ տեղերում եւ տարածում հայադաւան քրիստոնէութիւնը:

Ը. դարում՝ 737-ին, արշաւում է այս կողմերն Եգիպտ Բ. խալիֆայի զօրավար Աբու-Մըսլիմն, որ թրի եւ քարոզի ուժով տարածում է մահմեդական կրօնը: Լեռնային լեկզիներն աշակերտելով կոչւում են Ղազի-Ղումուխ, այս է՝ ախոյեան հաւատոյ ղումուխցիների դէմ. իսկ դաշտաբնակ եւ հովտաբնակ լեկզիներն՝ Բաշլի քաղաքի եւ շրջակայ գաւառների բնակիչներն, չընդունելով մահմեդականութիւն՝ անուանւում են Քեաֆուր-Ղումուխ (անհաւատ Ղումուխ): Շատ ժամանակից յետոյ մահմեդականութիւնն հետզհետէ տարածւում է՝ Դպասարան, Կայթաղ, Քեօբաչի, Աղ-Ղոշա եւ այլ գաւառներում եւս, որ եղած են հայադաւան եւ հպատակած Աղուանից կաթողիկոսութեան եւ միանգամայն համարուած Աղուանից երկրի գաւառներ: Այս է հներից Շրուան կոչուած երկիրը:

Մահմեդական կրօնը թէեւ տարածուած է լինում Դաղստանում, սակայն բաժանուած է լինում շատ աղանդների: Ներկայ դարիս Բ. քառորդի սկզբում Շէյխ-Շամիլն, կամենալով ի մի ձուլել այդ բաժանուած աղանդները եւ հաւաքական ուժերով դիմադրել ռուսաց արշաւանքներին, հաստատում է Միւրիւրական աղանդը: Շէյխ-Շամիլն հրաւիրում է բոլոր աղանդաւորների հոգեւոր գլուխները եւ աշխարհական երեւելիները եւ կազմում մեծ ժողով, որ Դաղստանի համար ընտրէ մի բանիմաց գլուխ: Եւ երբ միաձայն հաւանութեամբ շէյխ է ընտրւում ինքն Շամիլն, ասում է ժողովականներին. «Որովհետեւ իսլամների օրէնսդիր Մուհամադ մեծ մարգարէն ուղղակի աստուծուց իրաւունք ստացաւ օրէնքներ դնելու. որովհետեւ իւրաքանչիւր

1 Ստեփ. Օրբել. Ա. գլ. եւ Վարդ. Բարձրբերդցի եր. 124 հաստատում են աւանդութիւնս, երեւի թէ լեկզիներից առնելով: Սակայն Կ. վրդ. Շահնազարեանն գրում է. «Տարաձայնութիւն մեծ է առ հին եւ նոր մատենագիրս ի մասին ստուգաբանութեան լերինս (Կովկասու): Նախնի Հայք՝ ըստ Եղիշէի (եր. 133.), ըստ Սեբէոսի (եր. 64) եւ ըստ Մովսիսի Կաղանկատուացւոյ (բ. 2), Կապկոհ կոչէին զայն. որդիք յանուն Կովկասու՝ նորաստեղծ եղբօրն Հայկայ՝ Կովկաս անուանեն» (ի յառաջաբանի Պատ. Աղ., եր. 8): Իսկ Բ. հատ. եր. 78 գրած է նա. «Հայկ, որ ի սկզբանէ անտի միածին համարեալ էր հօր իւրում Թորգոմայ, յետ ի վերայ անցանելոյ 300 եւ աւելի ամաց՝ ստացաւ, ըստ վկայելոյ Ստ. Օրբէլեանց եւ նմանեաց իւրոց, այլ եւս եղբայրս եւս (եօթն)՝ Քարթլոս, Բարդաւս, Մովկան, Լեկան, Հերաւս, Կովկաս, Եգրէս»:

2 Մով. Կաղ., հատ. Բ., գլ. ԼԹ., խ., ԽԴ.:

շէյխ սերուած է լինում նոյն մեծ մարգարէի յետագայ սուրբ սերնդից. եւ որովհետեւ անձիւր շէյխ յաջորդ է նոյն օրէնսդիր մեծ մարգարէին. ապա ուրեմն իւրաքանչիւր գլխաւոր շէյխ իրաւունք ունի 'ի պահանջել հարկին դնել նոր օրէնքներ: Եւ որովհետեւ միաձայն հաւանութեամբ շէյխ ընտրեցիք զիս եւ ձեր ազատ կամքով գլուխս հաստատեցիք զիս. ապա ուրեմն ես եւս իրաւունք ունիմ սահմանել նոր օրէնքներ յօգուտ հայրենեաց եւ 'ի պահպանութիւն մեր կրօնի: Բայց ինչպէս հնազանդուեցան մեր մեծ մարգարէի ասածներին զանազան ազանդաւոր ազգեր, ցեղեր եւ լեզուներ եւ նոյն իսկ մեր նախնիքն, դուք եւս նոյնպէս հնազանդելու էք իմ հաստատելիք օրէնքներին, որպէսզի լինինք մի սիրտ եւ մի հոգի եւ պաշտպաննենք մեր ազատ հայրենիքը եւ կրօնը»: Երբ ժողովականները միաձայն հաւանութեամբ արտայայտում են ընդունելութեան հաճութիւն, ապա Շէյխ-Շամիլն հաստատում է Միւդիւրական օրէնքը[1]:

Շէյխ-Շամիլն, այսպիսով, յաջողում է միացնել դաղստանարնակ ազանդները եւ զանազան ցեղերի սրտերը եւ նահատակ անուանել, որք սպանուելու են հայրենիքը պաշտպանելու պատերազմներում[2]:

Արք եւ կանայք առո՛ղջ, պնդակա՛զմ, ժի՛ր, աշխատասէ՛ր եւ տոկո՛ւն են: Շատ տեղերում, հողի եւ հարթ երկրի պակասութեան պատճառաւ ջարդած եւ կորած են լեռներ, բլուրներ եւ ապառաժ քարալանջեր, հեռի թափած՝ հանուած քարակոյտերը. հող բերած ուրիշ տեղերից եւ լցրած կորուած տեղերը եւ ցանած նոյն հողերի վերայ ցորեն, գարի, հաճար եւ եգիպտացորեն եւ ուրեք-ուրեք տնկած տանձի, խնձորի, դամոնի, ծիրանի եւ բարտի ծառեր: Այս տեսարաններն ներկայացնում են տեսնողներին ածուաձեւ սանդուխներ՝ դրուած ապառաժ սարերի եւ բլուրների լանջերին: Գետեզերքներում տեղ-տեղ մշակուած են եւ որթայգիներ. բայց թթու են լինում գինիներն՝ երկրի բարձրութեան եւ ցրտութեան պատճառաւ: Աւելի դիւրագրգիռ եւ զայրացկոտ են արականք, որք միշտ կրում են իւրեանց վերայ երկայրիներ: Բայց յարգուած է սոցա մէջ հիւրասիրութիւնն իբրեւ սրբազան աւանդութիւն:

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Իբր սրբութիւն յարգուած է բոլոր լեկզիների մէջ բարոյականութիւնն, ինչպէս նահապետական երկիրներում: Բայց այս յարգութիւնն ոչ նթէ յառաջանում է սրտի ազնուութիւնից եւ կրթեալ բանականութիւնից, այլ մահուան երկիւղից. որովհետեւ յաճախ սպանւում են անբարոյական արք եւ կանայք: Վերին աստիճան յարգուած է պատիւն. անպատուութեան դէպքերն բազմիցս լուծւում են սպանման վրէժխնդրութեամբ. այսինքն՝ պատիւ արատաւորողներն պատժւում են սպանուելով իւրեանց ոսոխներից: Միւս մահմեդականաց նման՝ սովորութիւն չըկայ երես ծածկելու իգական սեռի մէջ (նամէ-հրամ), այլ քրիստոնէից նման ազատ են եւ արձակ ու համարձակ:

Համարեա թէ լեկզիներն ընդհանրապէս չեն սիրում ուսում եւ կրթութիւն եւ դաստիարակութիւն (բացառութիւնն խիստ աննշան է): Գրեթէ իւրաքանչիւր ոք դաստիարակւում է միայն նորանով, ինչ որ տեսնում եւ սովորում է իւր ծնողներից, դրացիներից եւ ընկերներից: Ահա այս է ամէն ոքի ուսումնարանն, վարժոցն եւ կրթարանն, վասն որոյ վայրենի են շատ գիւղերի բնակիչներն: Միայն թէ սակաւ տեղերում հոգեւորականներն սովորեցնում են տղայոց հասարակ կարդալ եւ արաբերէն լեզուով գրուած զուրան: Հարկ է յայտնել, թէ խիստ սակաւ է ուսանողաց թիւն, զի կարդում են գրեթէ միայն նոքա, որք իբրեւ հոգեւորականների զաւակներ պատրաստւում են հոգեւորական լինելու ապագայում: Բայց Թամիր-խան-Շուրայում բացուած է տէրութեան ծախքով ռէալական եւ քաղաքական ուսումնարան (նմանապէս Պետրովսկում, Դարբանտում եւ մի քանի տեղերում՝ քաղաքական ուսումնարաններ), այսու ամենայնիւ խիստ սակաւ

1 Այս օրէնքով պարտաւորւում է իւրաքանչիւր արու անհատ (թէ՛ հոգեւորական լինի եւ թէ՛ մարմնաւորական), որ զինուոր լինի կրօնի եւ հայրենեաց պաշտպանութեան համար եւ մէն մի լեռնական աղանդաւոր ձուլուի 'ի մի սիրտ եւ 'ի մի հոգի:

2 Սպանուածներն ընդհանրապէս ամփոփուած են ճանապարհների աջ ու ձախ կողմերում. որպէս զի «Աստուած ողորմի» ասեն անցորդներն: Հաւատացնում են, որ պատերազմում սպանուածների թւում եղած են եւ պատերազմող կանայք, բայց առնացի հագուստներով:

լեկզի տղայք միայն են յաճախում: Քրէական յանցանք է համարուած լեկզիների մէջ իգական սեռի ուսում տալն, քանզի «կը փոխարկուին մարմնացեալ դեւեր...», Քեաֆուր-Ղումուխի օրիորդն, որ ուսանում է Պետերբուրգում, թէ ի՞նչ համարում ունի լեկզիների աչքում, թողում ենք ընթերցողաց իմաստասիրութեան:

ԱՐՈՒԵՍՏ. Դաղստանում ծաղկած են մի քանի ասիական արուեստներ: Արդէն շատ գիւղերում շինում են ասիական հրացան, ատրճանակ, երկսայրի, վառօդեղջիւր, վառօդշարան, դանակ եւ այլ գործիքներ: Շինում են նաեւ արծաթի զարդեր թէ՛ զինուց համար եւ թէ՛ արանց եւ կանանց համար: Մանաւանդ նշանաւոր է նրբագործ սաւատն եւ չիւթիշին՝ թէ՛ արծաթից եւ թէ՛ Վարշաւի արծաթից շինուած: Գաւառիցս են ելնում քեօբաչի կոչուած շալերն, որք ունին միխակի գոյն եւ թանկ արժողութիւն: Համարեա թէ ամէն գիւղում կան դերձակներ, դարբիններ, կօշկակարներ, սափրիչներ, մուշտակակարներ, հիւսներ, որմնադիրներ, գլխարկակարներ եւ այլն:

Հարկ է յայտնել, որ ամէն տեղ փայլում է իգական սեռի ճարտարութիւնն: Կանայք եւ օրիորդք մատնիլիկով մանում են ոչխարի, այծի եւ ուղտի բուրդ եւ գործում սպիտակ, երկնագոյն, մոխրագոյն, շագանակագոյն, սեւ, սեւագոյն, շիկագոյն, դեղնագոյն, եւն գուններով ընտիր շալեր, շինում են եափնջաններ, հիւսում գորգ, կարպետ, չուալ, խուրջ, գուլբայ եւ ձեռնոց: Որքա՜ն անխարդախ, ամուր, ընտիր եւ ազնիւ են մանաւանդ ծանրագին շալերն եւ երեւելի եափնջաններն: Հարկ է յայտնել, թէ Դաղստանի ոչխարն բոլորովին տարբերւում է իւր բրդի ազնուութեամբ եւ մսի քաղցրութեամբ Արցախեան, Արարատեան եւ Շիրակեան գաւառների ոչխարներից. իսկ այծն՝ իւր մազերի փափկութեամբ եւ երկարութեամբ: Ոչխարի եւ այծի բուրդը եւ մազը ոչ թէ խուզում են ուրիշ տեղերի նման, այլ քաշում եւ հանում են ձեռներով:

ԶԳԵՍՏ. Բացի պաշտօնական արանց հագուստներից, որ ռուսաց ծառայութեան մէջ են, առ հասարակ տեղական ձեւով ձեւուած եւ կարուած են բոլորի զգեստներն: Արականները ծածկում են երկարածիլ եւ գեղագանգուր մազերով գառնենի գլխարկ, հագնում են շալ կէյմէ, կուրծքը կոճակներով միացած արխալուղ, չիթէ կամ կտաւէ շապիկ, նեղ անդրավարտիկ, սպիտակ կամ սեւ գուլպայ եւ պարզ տրեխներ կամ ոտնամաններ: Իգական սեռի հագուստն գլխովին տարբեր է միւս բոլոր մահմեդական կանանց զգեստներից: Երկար շապիկ, երկար արխալուղ, փաթաթուած եւ լաչակներով ծածկուած գլուխներ – ահա կանանց զգեստներն, որք ըստ ամենայնի սերտ նմանութիւն ունին Արցախի կանացի զգեստներին: Թէ՛ արականք եւ թէ՛ իգականք ձմռանը հագնում են ոչխարենի երկար մուշտակներ եւ ամռանը՝ կարճ:

ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ. Թէեւ Դաղստանն համարուած է մասն Եւրոպայի ըստ աշխարհագրական բաժանմանց, սակայն իւր կերակուրներն ամենեւին նման չեն եւրոպականին, այլ գլխովին ասիականին, մանաւանդ հայկականին, բացի խնկալ կերակրից: Պարզ եւ նահապետական են լեռնականացս կերակուրներն, որք են թերախորով կամ խաշած ձու, ձուազեղ, եփած հաւ, վառեկ, կաթն, մածուն, պանիր, կարագ, կաթնաւ, թանաւ, չորթանաւ (քալակեօշ), խաշիլ, շփոթ, խաւիծ, խաշու ոտնագլուխ, հարիսա, խճողակ (տոլմա), կլոլակ, (քուֆթա), խորոված, տհալ, փլաւ եւ այլն: Թոնրահաց, գաթայ, բլիթ, թերթերուտ, հասալի, լօշ (եուխայ) հալուա եւ այլն: Բայց պատուաւոր կերակուրն է խնկալն, որը եփում են չորս տեսակ՝ մսի կամ հաւի ջրով, որոց մէջ լինում են բռնաչափ խմոր, ընկուզաչափ խմոր, քառակուսի, բայց մատնաչափ հաստ խմոր եւ մանր ու բարակ ջարդած խմոր: Ոսկրահան են անում միսը՝ լաւ եփելուց յետոյ, մանր ջարդում նոյն միսը, խառնում իւր մսաջրի հետ, լցնում եւ խմորը (չորսից կամեցած տեսակը), եփում միասին եւ ապա ուտում ծեծուած սխտորով:

ՈՐԴԵԾՆՈՒԹԻՒՆ. Համարեա թէ ներկայ դարումս ոչ մի տեղում այնքան աւելի չէ որդեծնութեան աճումն, որքան Դաղստանում: Բնաւ մուտք գործած չէ այստեղ եւրոպական տնաւեր մոդան՝ ուշ ամուսնանալու սովորութիւնն, եւ վերադիր դրամ կամ այլ ինչ տալու կանոնն: Այստեղ չկան 50 տարեկան ամուրի երիտասարդներ եւ 40 տարեկան օրիորդներ, որք (կորուսած լինելով որդեծնութեան ժամանակը՝ ապարդիւն է մնում ամուսնութիւնը) ըստ օրինի չեն ծառայում մարդկութեան աճելութեան նպատակին: Այլ այստեղ ամուսնանում են երիտասարդ-

ներն 20-25 տարեկան հասակում եւ օրիորդները՝ 15-17 տարեկան: Բայի ապահարզանի որոշեալ գումարից, որը ամուսնացող երիտասարդները շէրի կոչուած օրէնքով պարտաւոր են վճարել կնոջ՝ արձակած միջոցին, ամուսնանալու ժամանակ իբր բաշլըղ[1] վճարում են (ըստ կարողութեան) նշանուած օրիորդի ծնողաց նաեւ 15-80 ռուբլի, եւ ապա ամուսնանում: Աճելութեան պատճառն է բնութեան պահանջած ճանապարհով ամուսնանալը: Բազմակնութիւնը թէեւ ընդունած են շատ մահմեդական ցեղեր, բայց ծաւալ չունի այստեղ: Հազիւ թէ գտնուի հարիւրից հինգ մարդ, որ ունենայ 2 կին: Աւելի յարգուած է միակնութիւնը:

ՄԱՔՐՈՒԹԻՒՆ. Տակաւին մուտ գործած չէ լեկզիների մէջ մաքրասիրութիւնն, որ մին է առողջապահութեան գլխաւոր պայմաններից: Ընդհանրապէս աղտոտ են գիւղացւոց տունները, որք շինուած են խիտ առ խիտ: Ամէն տեղ երեւում են ձախուծուռ եւ նեղ փողոցներ, անկարգ եւ անկանոն սրահներ եւ տեւ ու անճաշակ հիւղեր: Անսարք եւ անկարգ են տնամիջի կահ ու կարասեաց դասաւորութիւնն, անօթների եւ գործիքների զետեղումն եւ անմաքուր՝ բնակարանների յատակները: Աւելի անմաքուր են անկողիններն եւ փոխնորդներն եւ բոլոր զգեստները: Ոչինչ չենք գրում բակերի եւ փողոցների դրութեանց մասին, զի ընթերցողք կարող են դուշակել:

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՒՂԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ. Զնայելով այս անմաքուր կենցաղավարութեան, սակաւ են հիւանդներ: Գոգցես լեռնասուն օդի զօրեղ մաքրութիւնն մաքրում եւ հալածում է անմաքրութեանց թունաւոր ներգործութիւնը: Եղած հիւանդութեանց գլխաւոր տեսակներն են՝ ծաղիկ, կարմրուկ, խաւարթ, փորահարութիւն, հազ, չուպան, սաթալջամ, եաթալաղ (տիֆ), պօկուռեցք, դող, ջերմ (հովիտներում) եւ այլն: Բժշկութիւնները կատարում են փորձառու արք, պառաւ կանայք եւ սափրիչք՝ զանազան միջոցներով: Բայց մահն տանում է իւր բաժինը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ. Ասես թէ Դաղստանում դեռ կենդանի՛ են հայկական յիշատակնե՛ր, որք իբրեւ անմահ, բայց խօսուն արձաններ ողջունում են հայ այցելուաց: Հայոց Սըմբատ Մամիկոնեան զօրավարի յիշատակն, որ Արտաշէս Բ-ի հրամանաւ արշաւեց հայկական զօրքով, գերեվարեց բազմաթիւ ալան գերդաստաններ եւ տարաւ Հայաստան (Խոր., Բ. գիրք, ԾԲ. գլ.): Դեռ անմահ է Հայոց Վաղարշակ թագաւորի յիշատակն, որ անցնելով Ճորա կապանից հալածեց խազրաց զօրքը, թէեւ մեռաւ քաջութեամբ եւ զինքը զոհ բերաւ Հայաստանի համար (Խոր., Բ. գիրք, ԿԵ. գլ.): Դեռ կենդանի է Խոսրով Մեծի քաջագործութիւնն, որ իւր հօր մահուան վրէժը լուծելու նպատակաւ անցնում է Կովկաս սարից, լուծում իւր հօր մահուան վրէժը, առնում հարիւրից մին պատանդ եւ կանգնում հելլենացի գրով արձան (Խոր., Բ. գիրք, ԿԵ. գլ.): Տակաւին գոգցես խօսում է Քաջն-Տրդատ թագաւորի դիցազնագործութիւնն, որ միջակտուր անելով Բասլաց թագաւորը՝ անցնում է Հոնաց երկիրն, իւր հետ միաբանում հիւսիսային ազգերը, առնում պատանդներ եւ դառնում յաղթանակաւ (Նոյն գիրք, ՁԵ. գլ.): Նմանապէս Քաջն-Վարդան Մամիկոնեանի եւ Աղուանից Վաչէ Բ. թագաւորինն (Եղիշէ, եր. 247 եւ 387): Կարծես թէ այս երկրում տակաւին լսւում են Աղուանից Գրիգորիս կաթուղիկոսի, Հոնաց Յունան եւ Իսրայէլ եպիսկոպոսների քարոզներն (Մով. Կաղ., եր. 30, 43 եւ 192):

Ասես թէ լեռների գլուխներին եւ ձորերի ու հովիտների մէջ դեռ լսւում են կենաց Մատաթեանցի, Մովսէս Արղութեանցի, Յովհաննէս Եղիազարեանցի (Լաղրեւի) եւ Տէր-Աստուածատրեանցի արձակած ահարկու հրամանների ձայներն եւ յաղթանակների փառաց համբաւները:

Վերադարձանք Թամիր-խան-Շուրա, մի քանի քարոզներով մխիթարեցինք հայ ժողովուրդը, խորին շնորհակալութիւն յայտնեցինք գերազնիւ կենաց Նիկոլայ Ճաւճաւաձէին եւ ուղեւորուեցինք դէպի Դարբանդ: Շնորհակալութիւն յայտնեցինք նաեւ արժ. Գէորգ քահանայ Փարեմուզեանցին, որ օգնած էր մեզ այս գործում անձնուիրաբար:

---

1 Նահապետական սովորութեամբ սրբագործուած եւ դարերի ընթացքում աստուածադիր օրէնքի ոյժ ստացած է բաշլըղ տուրքը, որ կար եւ Հայաստանում:

ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿԻՐ ԵՒ ԴՐԱՑԻՔ

ՁԵԿՈՒՑՈՒՄՆ

Դաղստանից վերադառնալուց յետոյ ամբողջ եօթն ամիս շրջելով հետազօտեցի Դարբանդ, Ղուբա, Բագու, Շամախի, Շաքի եւ Ճառ քաղաքները եւ սոցա բոլոր գաւառները: Գործիս մէջ զետեղեցի որոշակի երկրիս պատմութեանց ծանօթ սահմանագլուխները եւ կարգաւ նկարագրեցի լեռները եւ լեռնակները, դաշտերը եւ դաշտակները, գետերը եւ գետակները, ծովը եւ լճակները, անտառները եւ մացառները, եղէգները եւ շամբերը եւ միանգամայն բոլոր ծառերի եւ թփերի տեսակների անունները՝ յականէ յանուանէ: Բնական նկարագրութեանց շարքում նշանակեցի նաեւ ոսկու եւ արծաթի, պղնձի եւ կապարի, աղահանքի եւ յեսանաքարի, ջերմուկների եւ նաւթահանքերի, հրաբուխների եւ քարահանքերի, սուրբ եւ անսուրբ կենդանեաց եւ թռչնոց, գազանաց եւ սողնոց տեսակների անունները եւ գտնուած տեղերը:

Կարգաւ նշանակեցի բնակող ամբողջ ցեղերի անունները բնակութեան տեղերը սահմաններով հանդերձ, կրօնական եւ քաղաքական, պատմական եւ աւանդական համառօտ անցքերը, մի քանի ցեղերի բարբառներից հատուածներ եւ միանգամայն բոլոր քաղաքների եւ գաւառների փոփոխեալ եւ այժմեան անունները հանդերձ ծանօթագրութեամբ: Անուշադիր չթողի կոապաշտ դարերի պաշտամունքները, մեհեանների տեղերը եւ հանգստարանների դիրքերը:

Բացի հայ գրականութեան ծանօթ բերդերից՝ գտայ բաւականին շատ հին բերդեր, որք ցարդ անծանօթ մնացած էին հայ գրականութեան: Բայց որովհետեւ անյայտացած են շատերի անուններն, եւ աւանդութիւնն անգամ տկարանում է մտաբերել եւ յիշել անունները, վասն որոյ բարւոք համարեցի հայկական Ա., Բ., Գ., Դ. եւն. թուահամարներով ներկայացնել բերդերը իմ յարգելի ընթերցողաց եւ ազնիւ բանասիրաց:

Հաւաքագրեցի եկեղեցեաց, վանօրէից եւ ուսումնարանաց արձանագրութիւնները, քահանայից, վարժապետաց եւ վարժուհեաց, աշակերտաց եւ աշակերտուհեաց որքանութիւնը, միայն հայ բնակչաց այժմեան ծխաթիւը, արականաց եւ իգականաց քանիութիւնը, միամեայ ծնելոց, պսակելոց եւ ննջեցելոց թիւը՝ ճշտելով հոգեւոր եւ մարմնաւոր կառավարութեանց տետրակներից եւ քահանաների չափաբերականներից: Որքան հնար եղաւ, զգուշութեամբ նշանակեցինք բոլոր քաղաքների, գաւառների եւ գիւղերի օդի, ջրի եւ կլիմայի յատկութիւնները, ամենից երկար ապրողների տարեթիւերը, տեղական բոլոր բերքերը[1] եւ պտուղների տեսակները, եւն, եւն: Ընդօրինակեցի բոլոր գրչագրերի եւ հին հանգստարանների հարկ համարուած *յիշատակարանները* (կամ հատուածներ) եւ *արձանագրութիւնները*: Անուշադիր թողած չեմ եկեղեցեաց, վանօրէից եւ ուսումնարանաց դրութիւնները, կալուածների եւ եկամտների քանակութիւնը, քահանայից եւ վարժապետաց վիճակները, տեղական հիւանդութեանց գլխաւոր տեսակները, մահմեդականացեալ հայոց արժմեան ծխաթիւը, եւն, եւն:

Թէ որքա՜ն նեղութիւն, դժուարութիւն եւ աշխատութիւն կրեցի հետախուզութեանցս ժամանակ, գործիս մէջ տեսնելու են բարեմիտ ընթերցողք: Նեղութեանց մէջ անգամ պակաս չեն մխիթարութիւն եւ սփոփանք. վասն զի մոռանում է մարդ իւր կրած բոլոր նեղութիւն եւ տաժանելի աշխատութիւն, երբ ամէն ինչ տեսնում է իւր աչքով, մօտուստ շօշափում ձեռքով, զննում զգուշաւոր հետազօտութեամբ եւ ապա գրում տեսածները: Այսու ամենայնիւ անկարելի

1 Չյաջողեցաւ ինձ հետազօտել Սալեանը, վասն որոյ ոչինչ չգրեցի ձկանց եւ ձկնհաւկիթների արդիւնաբերութեանց մասին: Եթէ յաջողէ ինձ Աստուած հետազօտել եւ Արցախը, գրելու եմ «Արցախի» մէջ:

է մոռանալ այն սրտաճմլիկ տպաւորութիւնները եւ ցաւալի զգացումները, զորս դրոշմում են խուզարկուների զգայուն սրտերի վերայ նախնեաց հնութիւնների արտաքին աւեր տեսքն եւ քայքայուն դրութիւնն: Ժամանակի անողոք ճիրաններն լափում եւ անյայտացնում են նախնեաց թանկագին հնութիւնները, եւ մարդկային աւերիչ ձեռներ հետապնդում են եղծել եւ անհետացնել հնութեանց մնացեալ փշրանքները:

Շատ ջանացի զետեղել գործիս մէջ *Աղուանից երկրի* եւ *դրացի երկիրների* աշխարհագրութեան քարտէզը եւ բոլոր քաղաքների, վանքերի, բերդերի, ականաւոր հնութեանց, նաւթահանքերի, եւն. *նկարները* եւ իւրեանց իսկական ձեւերով տպագրել տալ բոլոր արձանագրութիւնները, սակայն այս շնորհքը զլացան ինձ հանգամանքներն եւ անյարմար պարագաները: Այս պատճառաւ թողի ապագային աջողութեան եւ յարմար ժամանակի օժանդակութեան: Այսու ամենայնիւ հարկ է յայտնել որ այս գիրքը կարող է մատակարարել ամենամեծ դիւրութիւն ազգային մասնագէտ հնախոյզներին եւ իբրեւ առաջնորդ կամ ուղեցոյց ծառայել հետազօտողներին եւ հայրենագիտութիւն ուսանողներին:

Ի վերջոյ հրապարակաւ յայտնում եմ իմ ամենախորին շնորհակալութիւնը, այն արժ. քահանայից, մեծ. իշխանաց, բազմահոգ տանուտեարց, բազմաշխատ վարժապետաց եւ ազնիւ երիտասարդաց, որք անձնուիրաբար օժանդակեցին ինձ այս ծանր գործում:

Յուսալով, որ այս իմովսանն երկասիրութիւնն կ'արժանանայ հայ բանասիրաց ազնիւ ներողամտութեան, մնամ ամենախոնարհ ծառայ հայ գրականութեան:

ՄԱԿԱՐ Ծ. ՎՐԴ. ԲԱՐԽՈՒՏԱՐԵԱՆՑ

ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Երկրիս պատմութեան ծանօթ սահմաններն էին Հայոց Վաղարշակ թագաւորի ժամանակ արեւելքից Կասպից ծովը, հիւսիսից՝ Կովկաս լեռն, արեւմտից՝ Հնարակերտ ամրոցն եւ հարաւից՝ Արցախեան լեռներն մինչեւ Երասխ: Այս սահմանների մէջ կուսակալ կարգուած էր Սիսական Առանն՝ Վաղարշակ թագաւորից[1]:

Բայց երբ ծնւում է եւ Աղուանից Արշակունի թագաւորութիւնն, այն ժամանակ Կուր գետը[2] լինում է հարաւային սահման, Ալազանն՝ արեւմտեան, այն վաղեմի պարիսպն, որ իբր սահման եւ արգելիչ պատուար ձգուած է Դարբանդից մինչեւ Ալազան գետակն՝ հիւսիսային, եւ Կասպից ծովն՝ արեւելեան:

Ե. դարում Աղուանից թագաւորութեան ձեռքն է ընկնում նաեւ Երասխ գետի, Հակարի գետակի, Սոթի սահմանի[3], Գարդմանի, Կայէնի լեռների եւ Խրամ գետակի աջ կողմի միջեւ եղած տարածութիւնն եւս: Ուրեմն վերջին սահմաններն են արեւելքից Կասպից ծովը, հիւսիսից այն հին պարիսպն, որ երկարցած է Դարբանդից մինչեւ Ալազան, արեւմտից՝ Ալազան եւ Խրամ գետակներն եւ հարաւից՝ Կայէնի լեռներն, ամբողջ Գարդման, Գանձակ, Արցախ եւ Երասխի ձախ ափերն[4]: Այս սահմանների մէջ տարածուած երկիրն հայերից կոչուած է Ադուանք (Մխիթար Գօշ՝ «յաշխարհիս Առանայ», եր. 74), վրացիներից՝ Ռանի, Զենդերից՝ Այերիանս (Առերի հայոց), պարսիկներից՝ Առան կամ Առանշահ, արաբներից՝ Ռան եւ եւրոպացիներից՝ Ալբանիա:

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԼԵՌՆԵՐ. Լեռներից ամենամեծն եւ ամենաբարձրն է Կովկասն, որ ընկած է Կասպից եւ Սեւ ծովերի մէջ, արեւելքից արեւմուտ դիրքով: Այս ահագին լեռն է, որ՝ իբր բնութենասաղմ եւ յաւիտենական ամբարտակ եւ անփոփոխելի պատուար բաժանում է, ինչպէս բնական սահման, Ասիան Եւրոպայից: Լեռնաշղթայիս ամենաբարձր գագաթներն են Էլբրուս եւ Կազբեկ[5] արեւմտեան կողմում, իսկ Շահդաղ (լեռների թագաւոր), Թիֆան-դաղ եւ Շէյխ-Շալբրուս՝ արեւելեան կողմում, որոց գագաթներն ծածկուած են մշտապատ ձիւներով: Կովկասեան լեռնաշղթաներից ամենաբարձրն է հարաւայինն, որ բազմաթիւ սարաւանդներով, լեռնաբազուկներով, անդնդախոր ձորերով եւ ձորակներով, յանկարծ խոնարհած է Բաղասական դաշտի եւ Զարզուէնի դաշտակի վերայ: Իսկ հիւսիսային կողմն, ինչպէս նկարագրած ենք Դաղստանի մասում, բազմաշղթայ է, որ աստիճանաբար կամ սանդղաձեւ ցածանալով, հասնում է ծովին եւ տեղ-տեղ՝ դաշտերին: Թէեւ անպակաս են եւ հիւսիսային կողմում սարաւանդներ, լեռնաբազուկներ, տարբեր խորութեամբ ձորեր եւ ձորակներ: Լերանս բարձր գագաթն սկսուած է Շամախու մօտից՝ Բաբա-դաղից, եւ շարունակուած դէպի Էլբրուս: Այս հսկայ լեռն հայոց պատմագիրներից՝ Ագաթ. (տպ. Թիֆ., եր. 453), Խոր. (տպ. Վենետ., եր. 19), Թովմ. Արծ. (տպ. Պետ., եր. 175), անուանում են Կաւկաս, Եղիշէն, Կաղանկատուացին եւ Սեբէոսն՝ Կապկոհ[6], իսկ մնացեալք՝ Կովկաս. եւրոպացիք՝ Կօկազ, լեկզիներն՝ Եալ-բուզ (սառցագագաթ), պարսիկները՝ Կոհկաֆ, եւ արարացիք՝ Բաֆքաֆ:

Երկրորդն է Արցախի լեռնաշղթան, որ սկսուած է Երասխի ձախ ափից, անցած Արցախի, Գանձակի, Գարդմանի գլուխներով եւ միացած Գեղարքունեաց, Կայէնի եւ Կանգարի լեռներին: Լեռնաշղթայիս բարձրագոյն գագաթներն են Մռաւ եւ Արութիւն՝ Գանձակից վերեւ, Քիրս՝ Շուշուց վերեւ, Դիզափայտ՝ Գոիչ վանուց վերեւ: Լեռնաշղթաս արձակած է դէպի հիւսիս, Արցախի Գանձակի եւ Գարդմանի դաշտի կողմերն հարիւրաւոր, բազմաճղի լեռնագօտիներ, սարաւանդներ եւ լեռնաբազուկներ, որք, աղխաղխելով միմեանց, կազմում են ուրեք-ուրեք անդնդախոր ձորեր եւ ահարկու վիհեր, սարսափելի կիրճեր եւ զարհուրելի նեղուցներ, օձապտոյտ ձորակներ եւ լերկ սպառաժներ, վիմահերձ քերծեր, խոխոմներ եւ խրամներ եւ միանգամայն սարգաձեւ, ձկնաձեւ, ձուաձեւ, թամբաձեւ եւ լիսեռնաձեւ լեռնակներ, բլուրներ, թումբեր եւ սեռեր:

ՓՈՌՐ ԼԵՌՆԱՇՂԹԱՆԵՐ. Այն երկարաձիգ լեռնաշղթան, որ ընկած է Վատնեան դաշտի, Կովկաս լերան, Աղուանից եւ Զարզուէնի դաշտերի մէջ, սկսուած է Դարբանդի գլխից, անցած Ղուբայի տակովը, հասած մինչեւ Բագու, ապա դարձած դէպի արեւմուտ, անցած Շամախու եւ Նուխու տակերով եւ հասած մինչեւ Թիֆլիս: Եւ ապա Թիֆլիսի տակով ծռուած դէպի Պարսկաստան, անցած դաշտաբերանով, միացած Գարդմանի, Գանձակի եւ Արցախի լեռնոտեաց եւ հասած Երասխի մօտերքը: Զանազան անուններ ստացած է փոքր լեռնաշղթաս, օրինակ՝ սկսած տեղերում կոչւում է Դարբանդի սար, Ղուբայի մօտ՝ Շաբրանի սար, ապա՝ Աւշարան եւ այլն: Շամախու մօտերքում ունի առանձին անուններ. իսկ Կոկիսոն գետակից մինչեւ Նուխու կողմերն ընդհանրապէս կոչւում է Բոզ-դաղ (Եսայ. Կաթ., տպ. Երուս., եր. 27, Պոզ): Որովհետեւ լեռնակիս այս մասն գրեթէ ամբողջապէս բաղկացած է մոխրագոյն եւ փխրուն հողից. այս է Բոզ-դաղ կոչուելու պատճառն: Դարբանդից սկսեալ մինչեւ Երասխ գետը տեղ-տեղ ընդհատւում է լեռնաշղթաս նեղ եւ խոր ձորերով, որոց միջից անցնում են գետեր եւ գետակներ: Համարեա թէ ամէնուրեք կազմում է լեռնաշղթաս զանազան մեծութեամբ սարահարթեր, դաշտակներ եւ հովիտներ: Բայց Նուխու գաւառների մէջ ընկած մասն անպէտք է ամենամեծ մասամբ, վասն զի նախ զուրկ է բուսականութիւնից եւ երկրորդ՝ անմատչելի է ընտանի անասուններից: Այս մասում ամէնուրեք երեւում են խռնեալ, խտացեալ, անջատեալ, աղխաղխեալ, շղթայաշարեալ մերկ-մերկ հողեայ լեռներ, սրածայր, ատամնաձեւ, սեպաձեւ, անզարդ սարակներ, բլրախմբեր, թումբեր եւ լիսեռնաձեւ լերկ սեռեր եւ անախորժ երեւոյթներ, մանաւանդ Աղուանից դաշտաբերանի կողմերում: Անթիւ եւ անհամար են անձրեւի հեղեղատներն, բայց բոլորովին անջրդի եւ տխրատեսիլ:

ԳԵՏԵՐ ԵՒ ԳԵՏԱԿՆԵՐ. Ամենամեծն է Կուր[1] գետն, որ Խրամ գետաբերանով մտնում է Աղուանից երկիրն, Արաշ գաւառի Բանդակ գիւղի մօտ կազմում մի ջրվէժանման փոքր ջրավազ, անխօս հարսի նման լուռ ու մունջ ոլոր-մոլոր անցնում Աղուանից եւ Գարգարացւոց կամ Արցախի դաշտերի միջով եւ ապա թափւում է Կասպից ծովը: Բայց գորովագութ մօր նման ընդունում է իւր ծոցն իւր աջ կողմից Խրամ, Զորագետ (յետոյ միացեալ), Աղստեւ, Հասան, Տաւուշ (կամ Թովուզ), Զակամ, Շամքոր, Բանանց, Գանձակ, Կուրակ, Սեւ (Ղարա չայ), Տրտու (Թարթար), Խաչէն եւ Գարգար գետակները, որք բղխում են Կանգարի, Փամբակի, Ծաղկունեաց, Գաբրուայ, Գարդմանի, Գեղարքունեաց, Ծարի, Գանձակի եւ Արցախի լեռների հիւսիսային եւ արեւելահայեաց լանջերից: Իսկ ձախ կողմից ընդունում է Ալազան, Կախաւան, Արջկան, Դուրկան, Կոկիսոն (Գեօգ-չայ), Գարդման (այժմ Գիրդման), Սպիտակ (Աղ-սու) եւ Փիր-Սհաթ գետակները, որք բղխում են Կովկասեան լեռնաշղթայի հարաւային լանջերից, սկսեալ Բաղասական (Բալաքեանի) կողմից մինչեւ Շամախու մօտ Մազրա գիւղաւանի լեռներն: Ահա այս մեծ գետն հայերէն անուանւում է Կուր, վրացերէն՝ Մթկուարի, պարսկերէն եւ տաճկերէն՝ Քեռւռ:

Երկրորդ մեծ գետն է Երասխ, որ Մեծ-Սիւնեաց սահմաններից մտնում է Արցախի դաշտն, ուրեք-ուրեք հոսում սրընթաց, գրկախառնւում եւ միանում իւր քոյր Կուր գետին, կարօտակէզ սէրը յագեցնելուց յետոյ բաժանւում եւ ճիւղաւորուած թափւում Կասպից ծովը: Երասխն իւր ձախ կողմից ընդունում է Հակարի գետակը եւ մի քանի փոքրիկ գետակներ, որք են Ղոզլու,

---

1 Խոր., Բ. գիրք, Ը. գլ. եւ Մով. Կաղ., Ա. հատ., Դ. գլ.:

2 Փաւս. Բուզ., Ե. դպր., ԺԳ. գլ.:

3 «Հատանէ եւ զսահման Աղուանից Ըռմբի խոռն. Ծար գաւառ, Աղահեճ, ընդ որ Աղուանոյ գետն հատանէ մինչ ի Քարավազի կամուրջն» (Ս. Օրբել., ԾԷ. գլ.):

4 Մատեն. Խոր., տպ. Վենետ., եր. 606:

5 Եւրոպացի արդի մատենագիրներից ոմանք հետեւեցնում են, թէ Կօկազ անունն ծագած է Կաւզբ ազգանունից, օրինակ, կասպից ցեղ, Կասպից ծով, Կազբեկ լեռ, վասն զի Կազբից ժողովուրդն, որ բնակած էր Բագուի սահմաններում, ապա Դարբանդի կողմերով եւ ծովեզերքով անցնելով՝ բնակած էր Կազբեկ լերան հիւսիսային կողմում:

6 Եղիշէ, եր. 145, Մով. Կաղ., եր. 89 «Կապիկու» Սեբ., եր. 37:

1 Զենք նկարագրում լեռների, գետերի եւ դաշտերի այն մասերը, ակունքները եւ շարունակութիւնները, որք արտաքոյ են Աղուանից երկրիցն եւ յայտնի գրականութեան:

Ղուրու-չայ (Թաղլարի գետակ) եւ Քէօնդալան: Առաջին գետակն հոսում է Մեծ եւ Փոքր Սիւնեաց սահմանից եւ բաժանում է Մեծ-Սիւնիքը Փոքր-Սիւնիքից: Իսկ մնացեալներն բղխում են Դիզափայտ սարի արեւելեան եւ հիւսիսային կողմերից: Այս գետն հայերից կոչւում է Երասխ, յոյներից՝ Արաքսիս, պարսիկներից եւ տաճիկներից՝ Արազ:

Կովկասեան լեռնաշղթայի հիւսիսային եւ արեւելեան լանջերից սկիզբ են առնում եւ Կասպից ծովն թափւում Դարբանդից մինչեւ Բագու՝ Ռուբաս, Փոքր-Սամուր, Մեծ-Սամուր, Գուսար, Ղուբա, Աղ-չայ, Զաղաջուղ, Վալվալա, Շաբրան, Դաւաչի, Կիլհին, Աթա, Արրաթ եւ Սուղայիդ գետերը:

ԱՄԵՆԱՄԵԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ. Առաջին կարգի աղբիւրն, որ կարող է դարձնել երեք ջրաղաց, բղխում է Կովկասեան սարի հիւսիսային լանջից, Թիֆան-Դաղի եւ Ղարա-Դաղի միջից: Ունի պատուականագոյն, ցուրտ, քաղցրահամ եւ ախորժելի ջուր: Սաստիկ արտավիժելու պատճառաւ՝ ական մօտ փրփրում է ջուրն եւ եռացեալ կաթսայի նման շրջապատոյտ անելով՝ գոգցես եռում, եփում, պճպճում եւ գոյացնում անհամար պղպջակներ: Այնքա՜ն ուշադրաւ են յորձանքի ձայնն, պղպջակների պատկերն եւ շրջապտուտի տեսարանն, մինչեւ անգամ մարդ կամենում է փոխ առնել երկու աչք եւ երկու ականջ եւս եւ նայել ու լսել անյագաբար: Ակից 40 քայլ հեռի դէպի վեր նստողն, ասես թէ գետնի տակից լսում է ուժգին փոթորկի, ահեղ որոտման եւ ահարկու երկրաշարժի ձայներ: Մանաւանդ աւելի սաստկանում են ձայներն, երբ մարդ ականջները մօտեցնում է գետնին: Երեւի թէ շատ բարձրից է շուշռում այս ստորերկրեայ ջրվէժը: Ահա այս է Գուսար գետի ակն:

Երկրորդ աղբիւրն, որ մօտ երկու ջրաղացի ջրի չափ է, գտնւում է Շամախու Գարդման (Գիրդեման) գաւառում, Գիրկ գիւղի դիմաց՝ հարաւահայեաց հովտում: Անախորժ, ծանր եւ վնասակար է աղբերականս ջուրն, որ ունի մի տեսակ անբացատրելի գոյն, որ մօտ է երկաթի գոյնի:

Երրորդ աղբիւրն, որ դարձնում է մի ջրաղաց եւ մի ջրատինկ, գտնւում է Նուխու Ղաբալա գաւառի Խաչմաս գիւղի արեւելեան կողմում, ուտիական աւերակ մի գիւղատեղի մօտ, մի խոր ձորում: Ազնուագոյն, գովական, ցուրտ եւ թեթեւ է աղբերականս ջուրն, որ ունի մարսեցուցիչ զօրութիւն: Բայց որովհետեւ ջուրս ելնում է մի ամենամեծ խողովակից, վասն որոյ հաւանական է, որ բերուած լինի մօտակայ Կովկաս սարի հարաւահայեաց լանջից: Խեցեղէն խողովակների մեծութիւնն, երկարութիւնն եւ ամրութիւնն ապացոյց են խիստ հեռաւոր անցեալի բրտական արուեստի ճաշակին եւ ճարտարութեան: Իսկ քարացեալ կրացեխի ամրութիւնն, որ կարծես ի մի ձուլուած է խողովակների հետ, զարմացնում է տեսնողները՝ ժամանակի որմահիւսութեան վարպետութեամբ:

Զորրորդ աղբիւրն, որ դարձնում է մի ջրաղաց, գտնւում է Արցախի Տիգրանակերտ (այժմ՝ Թառնագիւտ) աւանի մօտ: Աղբիւրս, որ շատ հեռի չէ մեծ ճանապարհից, բղխում է մի մեծ սարի ստորոտից երկու ակից եւ միանում իսկոյն եւեթ: Եւ որովհետեւ հոսում է ջուրը սպիտակ քարերի միջով, վասն որոյ ունի արծաթափայլ եւ վճիտ գոյն, այսուամենայնիւ անախորժ է ըմպելեաց, հետեւապէս եւ անառողջարար, բայց սքանչելի է թէյի համար: Աղբերակից փոքր-ինչ հեռի՝ ջուրն իւր երկու եզերքներում գոյացնում է կանաչագոյն, բայց լպրծուն բոյսեր, որոց նմաններն ընդհանրապէս տեսնւում են վատ ջրերի՝ առուների եւ առւակների ափերում եւ ճահճային տեղերում:

ԴԱՇՏԵՐ. Ամենամեծ է Գարգարացւոց կամ Արցախի դաշտն, որ լեզուակաձեւ սկսուելով Թիֆլիսի արեւելեան կողմերից եւ հետզհետէ լայնանալով տարածուած է Կուր եւ Երասխ գետերի եւ Արցախի, Գանձակի եւ Ղազախի փոքր լեռնաշղթայի մէջ: Դաշտիս նշանաւոր մասն է Մուղանի դաշտ հռչակուածն, որ ընկած է Կուր եւ Երասխ գետերի մէջ եւ յայտնի է իւր պատմական անցեալով:

Երկրորդն է Աղուանից դաշտն, որ սուրանկիւնաձեւ սկսուած է Արաշ գաւառի Քանդակ գիւղի վերեւից, աստիճանաբար լայնացած եւ տարածուած Բօզ-դաղ լեռնաշղթայի, Կուր գետի ձախ ափերի եւ Կասպից ծովի միջեւ:

Երրորդն է Վատնեան դաշտն, որ երկարաձիգ եւ նեղ դիրքով ընկած է Կասպից ծովի եւ փոքր լեռնաշղթայի միջեւ՝ Դարբանդից մինչեւ Բագուի կողմերը: Զորրորդն է Զարղունի[1] դաշտն, որ տախտակաձեւ սկսուած է Կոկիսոն գետակի աջ եզրից, ընկած Կովկաս սարի եւ Բօզ-դաղ լեռնաշղթայի միջեւ, ապա Ճառի մօտ լայնանալով, հասած է մինչեւ Ալազան գետակն: Լայնացած տեղս է Բաղասական դաշտը:

ԴԱՇՏԱԿՆԵՐ. Ամենանշանաւորն է Սարուճա յորջորջուածն, որ ընկած է Բօզ-դաղի վերայ իւր երկարութեամբ, սկսուած Կոկիսոն գետակի աջ կողմի բարձրութիւնից, ընդհատուած Դուրկար եւ Արջկան գետակներով եւ վերջացած Նուխի տանող ճանապարհի մօտ:

Երկրորդն է Գարդման եւ Կոկիսոն գետակների եւ Կովկաս ու Բօզ-դաղ լեռնաշղթաների մէջ ընկածն, որը կարելի է անուանել եւ գեղեցիկ ու ընդարձակ հովիտ:

Երրորդն է Արաշ գաւառի Խանաւատ գիւղի դաշտակն՝ Արջկանի աջ ափում:

Զորրորդն է Գիրկ գիւղի դաշտակն, որ սկսուած է վերոյիշեալ մեծ աղբիւրի մօտերքից եւ հասած մինչեւ Աղ-սու գետակի աջ կողմն:

Հինգերորդն է Պաշնճաղ գիւղի մօտի դաշտակը: Բացի երկրորդ դաշտակից, մնացեալք ընկած են Բօզ-դաղ լեռնաշղթայի մէջերքում:

Վեցերորդն է Կովկասեան լեռնաշղթայի եւ փոքր լեռնաշղթայի մէջ ընկած դաշտակն, որ սկսուած է Դարբանդի արեւմտեան կողմից դէպի Ախտու կողմերն եւ դէպի Ղասմ-Բեանդի կողմերն, ապա ընդհատուած, ապա Ղուբայի արեւելեան կողմից կրկին սկսուած եւ վերջացած Քիլուար գիւղի հիւսիսային հանդէպում:

ԱՆՏԱՌՆԵՐ. Նշանաւոր անտառներ տարածուած են Արցախի, Գանձակի Գարդմանի, Ղազախի եւ Սեւորդեաց Մեծ լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերի վերայ: Նմանապէս Կովկասեան Մեծ լեռնաշղթայի ստորոտից մինչեւ կէսն ծածկուած են անտառներով, այնպէս որ Ալազանից մինչեւ Շամախու մօտերքն սարիս հարաւահայեաց, իսկ Ալթի-Աղաջից մինչեւ Ղուբայի արեւմտեան կողմերն՝ հիւսիսահայեաց լանջերն ծածկուած են անտառներով: Կան կաղնի, սղոցի, ընկուզի, հաճարկի, թեղի, լայնատերեւի, տխկի, կռզենենի, հացի, բեխի, ճղանի, լորենի, սզնի, կիչի (վայրի կեռասի), գենի (գիհի), ցրդնի, մայրի (սակաւ), ճըռ-տանձի, ճըռ-խնձորի, տկողնի (արքայակաղնի), զկռի (ղղնարի), ծտի տանձի, մոխրի տանձի, սալորի, լկրթնի եւ թքենոնի (միայն Արցախի կողմերում) ծառեր:

Նշանաւոր են նաեւ այն անտառներն, որք ընկած են Կուր գետի աջ ու ձախ ափերում, սկսեալ Քանդակ գիւղից դէպի վար՝ ծովակողը: Բացի վերոյիշեալ ծառերի տեսակներից, այստեղ կան նաեւ սաղուզի[2], սուտ ընկուզի եւ կարմիր ծառեր, որք կոչւում են տեղական բարբառով եալանզոզի եւ ղըզըլ-աղաճ: Այսպէս են եւ Վատնեան դաշտի եւ ծովեզերքի միջեւ տարածուած անտառներն, միայն սաղուզի չկայ այստեղ: Նմանապէս եւ Գուսարի, Ղասմ-Բեանդի եւ Զարղունի դաշտի անտառներն առատ են եւ գեղեցիկ, նոյն տեսակ ծառերով:

Իսկ Բօզ-Դաղ լեռնաշղթայի վերայ ընդհանրապէս բուսնում են միայն գենի, ցրնդի, սաղուզի եւ սակաւ ուրեք՝ կաղնի եւ սզնի ծառեր. նմանապէս եւ Ղուբայի Շաբրան գաւառի լեռնամասում՝ Խալթան գիւղի շրջանակներում:

Փոքր լեռնաշղթայի վերայ՝ Արցախի, Զամակի եւ Ղազախի կողմերում, անպակաս են մացառուտներ, շամբեր, ծմակներ եւ թաւուտ թուփեր, որոնց մէջ կան դժնիկ, մասրի, գերմասրի, մորենի, ցախաւելի, թբլղի եւ այլ թուփեր:

Կուր գետի աջ ու ձախ կողմերում անտառանման կանգնած են մի քանի տեսակ եղէգներ եւ զանազան լայնատերեւ եւ երկայնաձիգ խոտեր, նոյնպէս եւ Նուխու եւ Շամախու գաւառնե-

1 Բոլոր Յասմաւուրքներն եւ Ղ. Վ. Ինճիճեան գրած են Զարղունի դաշտ: Նիժ գիւղաքաղաքի մօտ կայ մի գիւղ, որ ցարդ եւս կոչւում է Զարղուն: Երեւի ընդօրինակողների սխալ է, Պատ. Աղուան., տպ. ի Մոսկ.՝ Զերգունի եւ տպ. ի Փար. Զերգունի անունն:

2 Ամենակարծր, խիստ ծանր եւ անփութ եւ անպտղատու ծառ, որ փշոտ է եւ ունի նեղ-նեղ տերեւներ: Բաւականին հաստանում է ծառն, բայց շատ չէ բարձրանում:

ում ուրեք-ուրեք եւ Վատնեան դաշտի ծովակողմերում: Բայց այժմ չկան Կաղանկատուացու ակնարկած ձիթենիքը:

Պակաս չեն եւ ընտանի ծառոց անտառներ կամ միայնակ բուսած ծառեր, ինչպէս են կաղամախի, սօսի, բարտի եւ ուռի, մանաւանդ Արցախի դաշտային մասում. Գանձակում եւ Նուխու Ղաբալա գաւառում: Աղուանից երկրի ամենահաստ ծառն, որ կաղամախի է, գտնւում է Ղաբալու Վարդաշէն գիւղաքաղաքում: Ծերունազարդ ծառս, որ տակաւին շատ առոյգ է ըստ երեւոյթին, մօտ է հայոց եկեղեցուն: Ծառիս բնի հաստութիւնն է քսան եւ չորս (24) արշին ռուսի՝ շրջապատից չափելով: Եթէ յայտնէր իւր ծննդեան տարեթիւը, գրելու էի թէ քանի՞ տարեկան է ծառս, որ այնքան ուշագրաւ է եւ փառաւոր իւր տեսքով:

ԱՄԱՌԱՆՈՑՆԵՐ. Աղուանից երկիրն հարուստ է եւ ամառանոցներով: Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Նուխու եւ Ճառի (Զաքաթալա) գաւառարնակ ժողովրդոց հովւական դասակարգի ամառանոցներն են Կովկաս սարի հիւսիսային եւ հարաւային գագաթներն եւ սարահարթերն, ձորակներն եւ սարալանջերն: Լերանս գագաթնագիծն տարուան բոլոր եղանակներում գրեթէ ծածկուած է մշտասառոյց ձիւնով, միջի մասերն արօտատեղի են առանց անտառի, իսկ ստորին մասերն ծածկուած են թանձր անտառներով թէ՛ հիւսիսային եւ թէ՛ հարաւային կողմերից: Լերանս միջնամասերն գարնան ամիսներում, գոյնզգոյն գործած գորգերի նման, զարդարւում են հազարագոյն եւ երփներանգ ծաղիկներով եւ խոտերով: Հարկ է յայտնել, որ Կովկաս սարիս հարաւահայեաց լանջերի համարեա թէ կէս մասերն ապառաժ քարեր են՝ ցցուած եւ հետեւապէս անմատչելի եւ անբոյս, այսու ամենայնիւ իբր ամառանոց բաւական են անասուններ դարմանելու:

Արցախի, Գանձակի, Գարդմանի եւ Սեւորդեաց ամառանոցներն են իւրեանց լեռներն, որք չունին այնքան ապառաժ եւ անզարդ տեղեր Կովկասի պէս, այլ հիանալի են դալարագեղ սարահարթերով, հարթակներով, հովիտներով, ձորերով, լանջերով, գերազանց ականակիտ եւ առատ ջրերով:

ԶՄԵՌԱՆՈՑՆԵՐ. Արցախի, Գանձակի, Ղազախի եւ Սեւորդեաց անասնադարման ժողովրդոց ձմեռանոցներն են Կուր գետի աջ ափերն կամ այսպէս կոչուած Մեծ դաշտն՝ Խրամ գետակից մինչեւ Երասխ:

Նուխու, Շամախու եւ Բագուի գաւառների ձմեռանոցներն են Աղուանից դաշտն, իսկ Ղուբայի եւ Դարբանդինն՝ Վատնեան դաշտն:

Շատ տարիներ այս դաշտերում ձիւնը չէ զօրում մնալ նստած, այլ շուտով հալւում է եւ անհետանում: Վասն որոյ դաշտերս ունին անասուններ աճեցնելու ամէն տեսակ յարմարութիւններ եւ դարմանելու միջոցներ, այն է՝ շատ տարիներ ձմեռան եղանակում անգամ ոչխարներն արածելու խոտ են գտնում արօտներում:

ՎԱՅՐԻ ՍՈՒՐԲ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՒ ԹՌՉՈՒՆՆԵՐ. Առատ են որսալու կենդանիներ Կովկասեան եւ Արցախեան անտառներում եւ ամառանոցներում, ինչպէս են քօշ, եղջերու, եղնորթ եւ կինճ, մացառուտներում՝ նապաստակ, փասեան, կաքաւ, սալամն, մոշահաւ եւ դաշտերում՝ հօտերով այծեամն, կատակ հաւ, լորամարգի, հաւփալ, աղաւնի եւ տատրակ: Կուր գետի անտառներում եւ եղէգնաշամբերում խիստ առատ են մանաւանդ կինճ եւ եղջերու. իսկ ջրերում եւ լճակներում՝ վայրի սագ եւ բադ:

ԳԱԶԱՆՆԵՐ ԵՒ ԱՆՍՈՒՐԲ ԹՌՉՈՒՆՆԵՐ. Առիւծ, վագր, յովազ, ինձ (Կովկաս լեռներում), իսկ ամէն անտառներում՝ արջ, գայլ, լուսեմն, աքիս, դաշտերում եւ մացառներում՝ աղուէս, չաղալ[1], գիշերի եւ սեւականջ (տեղական բարբառով՝ զարա-զուլաղ):

ԳԻՇԱԿԵՐ ԹՌՉՈՒՆՆԵՐ. Արծիւ, անգղ, գառնաբարձ, լաչին, բազէ, կարմիր բազէ, ուրուր, ցին, հողմահար, ճայ, ձկնկուլ, ղուլ, բու, ագռաւ, կաչաղակ եւն.:

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ. Գոմէշ, եզն, կով, ոչխար, այծ, ուղտ, ձի, ջորի, աւանակ: Ականաւոր են Արցախի ոսկեգոյն նժոյգներն:

1 Ճագար չէ այս, այլ նմանութիւն ունի աղուէսի թէ՛ մեծութեամբ եւ թէ՛ կերպարանքով: Մազերն տորոնագոյն են եւ անազնիւ, գործ են ածում մուշտակի համար: Իսկ գիշերու մորթուց շինում են հրացանի պատեան:

ՀԱՆՔԵՐ

ՈՍԿԻ. Ախտի քաղաքից վերեւ կայ մի լեկզիաբնակ գիւղ՝ Իղրի անուն: Գիւղիս մօտ կայ ոսկու հանք:

ԱՐԾԱԹ. Յիշեալ Իղրի գիւղի մօտ կայ նաեւ արծաթի հանք:

Երկրորդ արծաթահանքն գտնւում է Շամախու Գեօգչայ գաւառի Խանագեալ թրքաբնակ գիւղի մօտերքում, մի ձորի մէջ, որ ընկած է Կովկաս սարի հարաւահայեաց լանջի վերայ: Արծաթի նման պսպղում եւ փայլում է ապառաժ քերձի ճակատն, մանաւանդ արեգակի ճառագայթները դիպած ժամանակ: Մի քանի տարի առաջ, ոմանք դրամաննդ լեկզիներ գալով ծածուկ հալում են առատօրէն արծաթիցս եւ կտրում ռուսաց 20 կոպէկանոցի ձեւով բաւականին դրամ: Ապա իմանալով կառավարութիւնն Սիբիրիա է աքսորում դրամաննգները:

Երրորդ արծաթահանքն գտնւում է Նուխու գաւառի Խաչմաս գիւղի արեւմտահիւսիս կողմում՝ Փիլիպպու կոչուած գիւղի մօտ:

Չորրորդ արծաթահանքն գտնւում է Նուխու գաւառի Ճալէթ եւ Մուխանց գիւղերի մէջ եղած սարաւանդակի վերայ: Մի քանի տարի առաջ գաւառապետի օգնականն գաւառիս մարդիկներով բանալ տուած է հանքս եւ կտորներից ղրկած Թիֆլիս՝ վերլուծելու եւ փորձելու:

Հինգերորդ արծաթահանքն գտնւում է նոյն գաւառի Օրաբան եւ Քունգիւտ գիւղերից վերեւ Կալ-տակ անուն հին բերդի արեւելեան կողմի հանդէպ եղած սարի վերայ՝ գետակի ձախ կողմում:

ԿԱՊԱՐԱԽԱՌՆ ԱՐԾԱԹ. Գտնւում է Նուխուց 60 վերստաչափ հեռի Խնս գիւղի մօտ՝ Խնս կոչուած գետակի վերայ: Կայ նաեւ Սամուր գետի ակունքներում Կուրումի գիւղի մօտ, որ 60 վերստաչափ հեռի է Ղուբայից:

ԿԱՊԱՐ. Նշանաւոր կապարահանքն գտնւում է Ախտի քաղաքից վերեւ՝ Ղռուշ լեկզիաբնակ գիւղի մօտ, որ մատակարարում է առատ կապարի պաշար:

Երկրորդ հանքը գտնւում է Ալազան գետակի կողմում՝ Շիլտի անուն գիւղի մօտերքում:

ՊՂՆՁԱՀԱՆՔ. Գտնւում է յիշեալ Օրաբան եւ Քունգիւտ գիւղերից վերեւ:

ԾԾՄԲ ԱՀԱՆՔ. Գտնւում են Շամախու գաւառի Մարազա գիւղաւանի մօտ[1]:

ՔԱՐԱՀԱՆՔԵՐ

ՅԵՍԱՆԱՔԱՐ. Ընտիր յեսանաքարերն, թէ՛ անուաձեւ լինին եւ թէ՛ սրոցաձեւ, արտահանւում են Ախտի քաղաքի կողմից:

Ա. Շինութեանց քարահանքեր կան Ճառի եւ Շաքուայ գաւառներում: Միայն կարելի է լաւ համարել Ճալեթի քարահանքն, որով շինուած է Ճալեթի նոր վանքն:

Բ. Քարահանքն, որ գտնւում է Դուրկան գետակի աջ ու ձախ կողմերում, Խոշկաշէն գիւղի մօտ, արտադրում է տորոնագոյն, բայց սպունգի նման ծակոտկէն չիչ քար: Սոյն քարով շինած են Խոշկաշէնի Եղիշ-Առաքեալ վանքը եւ շատ գիւղերի եկեղեցիներ:

Գ. Քարահանքերն, որ գտնւում են Շաքուայ գաւառների վերջին գիւղերում՝ Ամուր-աւանում եւ Բլեղում եւ սոցա լեռների վերայ, աւելի լաւ են չիչ քարից: Քարերն, տաշած ժամանակ՝ երեւում են մոխրագոյն, մի քանի տարի անցնելուց յետոյ ապա ստանում են ոսկու գոյն: Այսպէս են նաեւ Շամախու Գեօգչայ գաւառի Վանքաշէն եւ Ռուշանաշէն գիւղերի հանքերի քարերն:

Դ. Բագուի եւ Դարբանդի քարահանքերի քարերն աւելի կակուղ են եւ բաց տորոնագոյն եւ միանգամայն թեթեւ, համեմատելով Արցախի քարերի հետ:

1 Գործածական չեն այժմ արծաթահանքերից եւ պղնձահանքերից եւ ոչ մին:

Բոլորովին տարբեր են Շամախու քարահանքերի քարերն, վասնզի լի են ծովային խեցեմորթի պատեաններով: Այնչափ շատ են այս քարացեալ լուղակներն, մինչեւ անգամ ասես թէ ամբողջ լեռներն գոյացած են ծովային կենդանիներից[1]:

Զուզեցինք հանքերիս շարքում գրել որձաքարերի հանքերը կամ մատնացոյց անել գըտնուած տեղերը, զի կան շատ տեղերում: Սակայն մեր սիրելի ընթերցողաց մի դաղափար տալու նպատակաւ ասում ենք, որ Աղուանից երկրում ընդհանրապէս կան միապաղաղ. քառակուսի եւ շերտ քարեր: Միապաղաղ են տորոնագոյն քարերի, չիչ քարերի, խեցեմորթ քարերի եւ տեղ-տեղ կրաքարերի հանքերն: Քառակուսի են ելնում հանքերից որձաքարերն: Իսկ շերտաքարերն, որ ունենում են թղթի բարակութիւնից սկսեալ մինչեւ հինգ արշին կամ աւելի հաստութիւն, գտընուում են սպիտակ, մոխրագոյն եւ երկնագոյն քարահանքերում, մանաւանդ Ղուբայի կողմերում:

ՔԱՐԱԾՈՒԽ. Այս նիւթից գտնուում է Կոկիսոն (Գեօգչայ) գետակի ձախ ափում: Գետակս է, որ բաժանում է Շամախու հոգեւոր կառավարութեան սահմանը Արցախի թեմի հոգեւոր կառավարութեան սահմանից: Քարածխի հանքն գտնուում է Վանքաշէն եւ Բօզաւանդ գիւղերի մէջ եղած գետափում: Երկու գաղղիացի գետակիս մէջ լողանալու ժամանակ գտնում են քարածխահանքը, որից մի կտոր տանում եւ թողնում են անտառապետի (հայազգի է) մօտ, որ նստում է Իվանովկայ մալականի գիւղում, բայց որոշակի չեն յայտնում հանքի տեղը՝ մեզ անյայտ պատճառաւ:

ՔԱՐԱՑԵԱԼ ՈՉԽԱՐՆԵՐ. Քարացեալ կենդանիքս գտնուում են Շէյխ-Շալբրուս սարի վերայ, որ առանձնացած է իւր չորս կողմի լեռներից եւ բարձրացած հսկայաբար Կովկասեան ամենաբարձր լեռնաշղթայի վերայ՝ Շահ-դաղի մօտ: Շէյխ-Շալբրուսի գլուխն բարձրանալու համար կայ միմիայն մի նեղ անցք: Անցքն, կամ լաւ եւս է ասել կիրճն, այնքան նեղ է, որ հաստ մարդիկ ստիպւում են կողքի վերայ բարձրանալ: Կրճիս երկու կողմերի ապառաժներն ձեւացած են բարձր պատեր, որոնց մէջ ընկած է ելեւմուտ անելու նեղ անցքն: Սարիս գլուխն բարձրացած ժամանակ՝ հեռուից երեւում են ոչխարի հօտն, իւր հովիւն եւ հովուական շներն: Բայց մօտեցած ժամանակ երեւում են քարացեալ հովիւն իւր հովուական ցպով, քարացեալ էգ ու որձ ոչխարներ կանգնած եւ քարացեալ հովուական գամբռ: Յայտնի երեւում են ոչխարի արտաքին բոլոր նշաններն, որք են գլուխներ, ականջներ, եղջիւրներ, աչքեր, ոտներ, կճղակներ եւ բրդով մորթիներ: Բայց հարկ է յայտնել, որ կոտրուած են այժմ մի քանիսի մի-մի ոտն, մի քանիսին՝ մի-մի եղջիւրն եւ մի քանիսին՝ ականջն:

Քարացեալ ոչխարներից փոքր-ինչ վերեւ կայ մի ուխտատեղի Շէյխ-Շալբրուս անուն, որի անուամբ կոչուած է լեռս, որ ունի մի հիանալի եւ դալարագեղ սարահարթ: Լեկզիների աւանդութիւնն տալիս է հետեւեալ բացատրութիւնը. «Ուխտատեղումս ամփոփուած է Շէյխ-Շալբրուս ճգնաւորի ս. մարմինն, որ 40 տարի ճգնուած է այստեղ, ապա վախճանուած եւ այստեղ թաղուած, ինչպէս երեւում է իւր գերեզմանն: Ճգնաւորիս կենդանութեան ժամանակ ոչ մի հովիւ չէ համարձակած հանել իւր հօտը սարիս գլուխն՝ սուրբ Շէյխ-Շալբրուսի ահից ակնածելու պատճառաւ: Քարացեալ ստահակ հովիւս յանդգնում եւ հանում է այստեղ իւր հօտը, վասն որոյ Շէյխն քանիցս ազդարարում է բարձր ձայնով յետ դարձնել հօտը եւ չհամարձակուել մօտենալ, սակայն ականջ չէ դնում հովիւն: Այս պատճառաւ անիծում է ս. Շէյխն եւ իսկոյն քարանում են ոչխարներն ու շներն[2]»:

1 Եթէ ենթադրուի, որ մի ժամանակ Կասպից ծովն միացած է եղել Սեւ ծովի հետ եւ բաժանուելուց յետոյ խեցեմորթներից գոյացած են լեռներս, գուցէ հաւանական լինի: Բայց տարակուսութիւնն նորանումն է, որ նմանօրինակ քարեր եւ քարահանքեր չեն երեւում Արցախի, Գանձակի, Թիֆլիսի, Նուխու եւ Դարբանդի ու Ղուբայի կողմերում: Ծանօթագրելով այս իրողութիւնը՝ քննութիւնը թողնում ենք հնագիտաց:

2 Կան համանման քարացեալ հովիւ, ոչխարներ եւ շներ նաեւ Բաշլու գիւղի մօտ, որ գտնուում է Դարբանդի հիւսիսային կողմում՝ մի քանի ժամաւ հեռի (արտաքոյ Աղուանից երկրից): Քարացեալ հովիւն յենած է իւր ձեռնափայտին եւ կանգնած են շներն եւ ոչխարներն: Կրակատեղի վերայ դեռ մնում է քարացեալ կաթսան: Թէեւ Շիա մահմեդականների գերեզմանների վերայ տեղ-տեղ կան խոյաձեւ եւ ձիաձեւ տապանաքարեր, ինչպէս են Արցախի Ղարաղաճ կոչուած տեղինն, սակայն սիւնու մահմեդականներն չունին այսպէս տապանաքարեր: Բաց

Հիանալի՜ են գագաթիս կենսատու օդն, ուշագրաւ տեսարանն եւ շրջակայ երեւոյթներն: Հիւսիսային կողմում, ի հեռուստ երեւում են Կասպից ալեծածան ծովն, Դարբանդի, Կուրի, Ախտու գաւառներն իւրեանց դալարագեղ դաշտերով: Մօտուստ արձանացած են Շահ-Դաղ, Շահ-Նարաթ եւ Թիֆան-դաղի լեռներն, որք, ասես թէ, հսկայազարմ ծերունիներ են՝ վեհապանծ կանգնած կարճահասակ մարդոց մէջ՝ իւրեանց բարձր դիրքով եւ բաց գլխով: Իսկ արեւելեան եւ արեւմտեան կողմերում եւ ներքեւում պատկերանում են բազմաճղի աղխաղխալ լեռնաշղթաներ, օձաձեւ դալարուած ձորեր, նաւակաձեւ ընկած ձորակներ, վիմահերձ եւ խորթ լեռնաճակատներ, մերկ եւ անզարդ բլուրներ եւ անմազ գլուխների նման կնտակ լեռնագլուխներ:

ԱՂԱՀԱՆՔ. Գլխաւոր աղահանքն (ծովային աղ) գտնուում է Բագուի հիւսիսային կողմում: Այս հանքն տալիս է մեծ քանակութեամբ աղ, որ գործ է ածւում ամէն տեսակ պէտքերի: Բայց ստոր է աղը համեմատելով Կողբի, Կաղզվանի եւ Հին-Նախիջեւանի հանքային քարաղերի հետ:

Երկրորդն գտնուում է Սալեանի կողմերում: Բայց այս աղը գործ են ածում ոչ թէ ուտելու համար, այլ՝ ձկան ապուխտ եւ ձկնհաւկիթ աղելու:

Երրորդն գտնուում է Դարբանդի մօտերքում: Սակայն այս եւս գործ չէ ածւում կերակրի եւ ուտելեաց համար, այլ միայն կաշիներ եւ մորթիներ աղելու համար, վասնզի խիստ դառն է:

ՀՐԱԲՈՒՂԽՆԵՐ. Աղուանից երկրում գտնուած հրաբուխներն ընդհանրապէս գազային են եւ ոչ ժայթքող: Ա. եւ գլխաւոր հրաբուխն, որ կոչւում է Աթաշկեահ, գտնուում է Ղուբայի լեռնային գաւառի Խինալղ կամ Խնալղ գիւղի մօտ, Շէյխ-Շալբրուս սարից ցած: Հրաբղխիս տեղի տարածութիւնն կալաչափ է եւ աւազուտ, իսկ շրջապատն դալարագեղ է եւ կանաչազարդ: Կալաչափի վերայ կան երեք թոնրաձեւ փոսեր զանազան մեծութեամբ, յորոց բարձրանում են հրդեհանման կրակ եւ սարսափելի բոցեր: Ցանկացող այցելուներն հրաբուղխներիս վերայ ոչ միայն եփում են կերակուրներ, այլ եւ պատուական խորոված: Թոնրաբերանների վերայ ծածկում են շերտաքարեր, որոց վերայ շարում են աղած միսը, որ խորովւում է ըստ կարգին եւ աւելի համով է լինում քան փռան մէջ խորոված:

Մօտ 26 տարի առաջ գալիս են այստեղ Հնդկաստանից հրապաշտներ եւ շինում բնակարաններ կամ անում նորոգութիւններ, որոց աւերակներն երեւում են տակաւին: Ապա չկարողանալով դիմանալ լեռնային վաղահաս եւ թանձրատարափ ձեան, սաստկագին բուքերին եւ անտանելի ցրտերին՝ վերստին տեղափոխւում են Բագու: Բայց սարիցն իջնելու ժամանակ շատերն կոտորւում են բքի եւ ցրտի սաստկութիւնից:

Երկրորդ համանման հրաբուղխ գտնուում է Բագուի հիւսիսային կողմում՝ Սուրախանի կոչուած տեղում: Տարբերութիւնն այն է միայն, որ այստեղ եղածներն չունին բնական թոնրի ձեւ, այլ տեղ-տեղ փորուած են յատկապէս փոսեր, որոց վերայ դիզում են կրաքարեր: Ապա նետում են փոսերի մէջ վառ լուցկին, իսկոյն վառում եւ կիր են դարձնում հետզհետէ քարերը: Իսկ երբ կամենում են անցուցանել կրակները, փոսերի մէջ լցնում են մի քանի բուռն հող եւ անմիջապէս անցնում կրակներն: Ո՜րքան օգտակար են հրաբուղխներս, վասն զի դիւրութեամբ եւ ժամանադին կիր են մատակարարում թէ՛ Բագուին եւ թէ՛ մօտակայ գիւղօրէից:

Երրորդ յար եւ նման հրաբուղխ կայ նաեւ Շամախու կողմերում՝ Լահիճ գիւղաքաղաքից դէպի արեւմտահիւսիս՝ Սանվարի յորջորջուած տեղում, որ գտնուում է Բաբա-դաղի հարաւային ստորոտում: Այս եւս ունի թոնրաչափ բերան, մշտավառ է, բայց չունի ծուխ:

Չորրորդ նոյնանման հրաբուղխ կայ նաեւ Հաւթասիով գիւղի մօտ, որ ժամաչափ ճանապարհաւ հեռի է Լահիճից՝ գետեզերքով դէպի վեր:

Հինգերորդ. կան հրաբուղխներ եւ Շամախուց շատ ցած երկաթուղու վերի կողմերում: Հրա-

յայսցանէ ճգնաւորներ եղած չեն սիւնուներից ցարդ եւ ոչ լսուած: Մանաւանդ այս սարի գլխի սառնամանիք տեղում դժուարաւ կարող է ապրել ճգնաւոր ձմռան եղանակներում: Եթէ ընդունուի, որ ձեռագործ են քարերս, գուցէ հաւատալի լինի, բայց այն ժամանակ խիստ զարմանալու է նրբագործ գեղարուեստի՜ վերայ: Եթէ հանգըստարան է այս. ուրեմն ո՞ր ժամանակից մնացած է. դժուարին է ստուգել:

բուղխներս մշտավառ չեն, այլ երբե՛մն-երբեմն վառւում են շարաթներով եւ ամիսներով եւ երբեմն-երբեմն բոլորովին անցնում՝ թողնելով անցած տեղերում այրուած եւ սեւացած հողեր: Մի քանի տարիներ առաջ այստեղ երեւցած է մի ահագին, սիւնաձեւ հրեղէն խարոյկ եւ անյայտացած մի քանի ժամից յետոյ[1]:

ՀԱՆՔԱՅԻՆ ՋԵՐՄՈՒԿՆԵՐ. Առաջին ծծմբային ջերմուկն գտնւում է Ախտի քաղաքում՝ Մեծ Սամուր գետի ձախ կողմում: Ռուսաց կառավարութիւնն շինել տուած է ջերմկիս վերայ գեղեցիկ հիւանդանոց, առանձնասենեակներ, բաղանիս եւ լուացուելու աւազաններ: Կան նաեւ բժիշկներ, դեղատուն եւ հիւանդապահներ: Վերջապէս նախապատրաստուած են բժշկական եւ առողջապահական ամէն միջոցներ: Բազմամեայ փորձերով արդէն հաստատուած է ջերմկիս օգտակարութիւնն եւ միանգամայն փրկարար ազդեցութիւնն: Գարնան եւ ամռան եղանակներում խռնւում է մեծ բազմութիւն Դարբանդից, Ղուբայից, շրջանակներից եւ Գուսարի ռուս աստիճանաւորներից եւ զինուորականներից:

Երկրորդ ծծմբային, պատուական ջերմուկն գտնւում է Լիփնայ երկրում, այս է Ղուբայի գաւառի Խալթան գիւղից ներքեւ՝ մի խորանդունդ ձորի մէջ: Ջորիս միջով վազում է մի ջրաղաց դարձնելու չափ ջուր, որի աջ ափից բղխում է բազկաչափ հաստութեամբ խիստ տաք ծծմբային ջուր: Ջերմկիս վերայ շինուած է մի շատ հին, քառակուսի գմբեթաւոր շինութիւն, իսկ յատակի մէջտեղում մի մեծ քառակուսի աւազան. լուացուած ջուրն փոխւում է աւազանի տակի խողովակն բանալով եւ փակուելով: Աւանդութեամբ ասում են՝ շինութիւնս շինել տուած է Աղէքսանդր Մակեդոնացին: Ուղիղ սորա հանդէպից՝ ջրի ձախ ափին, նոյնպէս բղխում է նոյնաչափ հաստութեամբ տաք ջուր, որի տաքութեան աստիճանն ստոր է աջ կողմի ջրից: Շինութիւն չունի այս, բայց բնական քարայր ձեւացած է: Ափսո՜ս, որ այս պատուական ջուրն չունի պատսպարուելու սենեակներ: Բարեպաշտ ոմն քանի տարիներ առաջ շինել տուած է վեց սենեակներ, որոց լուսամուտների շրջանակները եւ դռները գողացած եւ տարած են մահմեդականներն: Բազմաթիւ են յաճախորդներ Բագուից, Շամախուց, Ղուբայից եւ մօտակայ գիւղերից, որոց ամենամեծ մասն բնակում են վրաններում:

Երրորդ ծծմբային ջերմուկն գտնւում է Նուխու Ղապալա գաւառի Բում անուանեալ գիւղից վերեւ, մի խոր ձորում: Տաք ջուրս, որ աւելի առատ է եւ յորդահոս, բղխում է Շահ-Դաղի հարաւահայեաց ստորոտից՝ մի ժայռից, եւ թափւում Դուրկեան գետակի մէջ՝ ականց մօտ: Նշանաւոր է եւ ջերմուկս իւր համբաւով եւ մատակարարած բժշկութեամբ: Յաճախորդների համար շինուած են մի քանի սենեակներ Կարմիր-Վան գիւղացի լեկզիներն, որ մօտ է ջերմկիս: Գարնան եւ ամռան եղանակներում հաւաքւում են այս Պրոպատիկէի մօտ յօդացաւ, քամի, ջերմ եւ դող ունեցող հիւանդների եւ ցաւագարների մեծ բազմութիւն, մի քանի դաւառական բժիշկներ եւ պաշտօնական անձինք հանդերձ գերդաստաններով: Հիանալի է մանաւանդ տեղիս օդն ու ջուրն:

Չորրորդ ծծմբային ջերմուկն գտնւում է Նուխու դաւառի Կախաւան գիւղաքաղաքից վերեւ՝ գետաձորում: Այս ջուրն, որը Եսայի Կաթուղիկոսն անուանում է Ինի-Սելու (ռուս. Իլի-Սու), վատ չէ, միայն թէ ժայռեր են ջերմկի շրջապատներն, եւ միանգամայն նեղ եւ վտանգաւոր յաճախորդաց պատսպարուելու տեղին՝ հետեւապէս եւ անյարմար գարնան եւ ամռան եղանակներում, վասնզի ստէպ-ստէպ յորդում են տեղատարափներ Կովկասեան սարի վերայ, ծովանում են հեղեղներ եւ առաջացնում ջրահեղձ մահ յաճախորդաց մէջ: Մի քանի տարի առաջ խեղդուած են մի քանի յաճախորդ մարդիկ:

ԾԾՄԲԱՅԻՆ ՑՈՒՐՏ ՋԵՐՄՈՒԿՆԵՐ. Առաջինն՝ որ կոչւում է Բատով, գտնւում է Շամախու Գարդման (Գիրդիման) գաւառում, Զարկեարան հայաբնակ գիւղից ներքեւ: Կաղնի եւ տխկի ծառերի տակից եռացեալ կաթսայի նման քլքլում է բազկաչափ հաստութեամբ աղբերակն, որ չափազանց վճիտ է եւ արծաթափայլ, ապա հոսում է դէպի վար: Աղբերակի մօտ շինուած է մի ստորերկրեայ, բայց անշուք բաղանիս, որի յատակի մէջտեղում՝ մի աւազան: Բաղանեաց մօտ վառուած է մի մեծ խարոյկ՝ լի բռնաչափ մեծութեամբ շատ քարերով: Հրաշէկ քարերս թափւում են աւազանի մէջ, տաքանում է ջուրն, որի մէջ լողանում են ցաւագարներն եւ առողջները: Հանքային ջրիս մօտ կան կանաչազարդ հարթակներ, փոքրիկ-փոքրիկ հովիտներ եւ տերեւախիտ ծառոց փառաւոր հովանիներ, որք ծածկուած են խիտ առ խիտ վրաններով: Այստեղ գալիս են միայն ամռան եղանակներում:

Երկրորդ յար եւ նման ջուրն գտնւում է նոյն Զարկեարան եւ Քեւանդի գիւղերի մէջ եղած ձորում: Այստեղ կայ եւ պատուական երկաթաջուր, որ կոչւում է Դամիր-Բուլաղ:

Երրորդ նոյն եւ նման ծծմբաջուր գտնւում է Շամախու Կոկիսոն (Գեօգ-չայ) գաւառում՝ Դիալլու թրքաբնակ գիւղի մօտ: Տարբերութիւնն այն է միայն, որ այս ջուրն աւելի առատ է, քան Զարկեարանի մօտ եղածն:

Չորրորդն գտնւում է Շաքուայ գաւառում՝ Կախաւանից ներքեւ Մարսան թրքաբնակ գիւղի մօտ:

Հինգերորդը գտնւում է Ղուբայի գաւառում՝ Թալաբի գիւղից վերեւ Ջիմի անուն մահմեդականաբնակ գիւղի մօտ: Ջրիս նմանն կայ եւ Կախաւանի արեւմտեան կողմում:

ՆԱՒԹԱՀԱՆՔԵՐ

Առաջին եւ գլխաւոր նաւթահանքն գտնւում է Բագուի հիւսիսային կողմում՝ Բալախանի կոչուած տեղում: Մի լայնագոգ եւ աւազուտ հովիտ է Բալախանին, որ Բագուի հետ կապուած է երկաթուղով եւ հեռախօս թելերով: Հեռուից նայող անծանօթ այցելուն տեսնում է Բալախանում բարձր, քառակուսի սրածայր, խիտ առ խիտ, երկաթագոյն, Եգիպտոսի բուրգերի նման բուրգեր, բայց մօտեցած ժամանակ համոզւում է, որ բուրգերն ոչ թէ քարուկիր, այլ փայտաշէն գործարաններ են, որք ծառայում են հորերից սեւ նաւթ հանելու շոգեքարշ մեքենաներով: Իւրաքանչիւր նաւթահորատէր շինել տուած է այստեղ բնակարաններ թէ՛ իւր համար եւ թէ՛ իւր գործաւորների համար: Կան նաեւ ուտելեաց եւ ըմպելեաց վաճառանոցներ եւ երկաթի գործարաններ, որք պատրաստում են նաւթահորերի համար խողովակներ, փորելու, փորուածքը արտահանելու եւ այլ գործիքներ: Կան նաեւ մղիչ գործարաններ, որք շոգեքարշ մեքենաներով՝ խողովակների միջով մղում են Բալախանու ամբարների սեւ նյութերը Բագուի Սեւ քաղաքի նաւթաւազանների մէջ՝ սպիտակ նաւթ պատրաստելու:

Նաւթահորերը փորում են ինչպէս շոգեքարշ մեքենաներով, նոյնպէս նաւթը հորերից արտահանում են շոգեքարշ մեքենաներով: Նաւթն ելնում է զանազան խորութիւնից ըստ տեղւոյն եւ ըստ պատահման, այսինքն 80-180 սաժէն խորութիւնից: Մէն մի նաւթահորի մօտ պատրաստուած են փոսեր, որոց մէջ լճանում են արտահանուած կամ արտավիժուած նաւթերն, զորս մղում են փոքր մղիչ մեքենաներով Բալախանու նաւթամբարներն եւ այստեղից մեծ մղիչ մեքենայով Սեւ քաղաքն:

Ուշագրաւ է աւելի նաւթի արտավիժի տեսարանն: Նաւթն, գրեթէ իւր շարժուած տեղից մինչեւ դէպի գետին խոնարհուած տեղի բարձրութիւնն, շատրուանի նման արտավիժուելով բարձրանում է աւելի քան 250 սաժէն: Արտավէժներն, խողովակների մեծութեան եւ փոքրութեան համեմատ, 1-2 ջրաղացի ջրի հաստութեամբ յորդած շարունակ հոսում են սեւ նաւթ եւ տեւում են օրերով, շաբաթներով եւ երբեմն՝ ամիսներով: Արտավիժելու ժամանակ լսւում են սաստիկ փոթորկի, ահեղ որոտման եւ տեղատարափ հեղեղների խառնաշփոթ ձայներ: Կարծես թէ ուժգին ցնցմամբ շարժւում է երկիրն ոտներիդ տակ եւ քայքայւում դժոխքն՝ մանաւանդ արտավէժների մերձաւոր շրջանակներում: Շատ անգամ նաւթի հետ արտավիժւում են աւազներ, խիճեր եւ զանազան մեծութեամբ քարեր եւ հորերի շրջապատը ձեւացնում աւազակոյտ բլուրներ եւ երբեմն աւազով ծածկում մերձակայ շինութիւնները: Ուժեղ քամիներ պատահած ժամանակ նաւթահեղեղներն՝ փոխանակ թափուելու յատկացեալ լճակների մէջ՝ մղուելով հողմերի բռնութիւնից

1 Հրաբուղխների մասին տե՛ս նաեւ ի շարս Մեհենաց: Վառուող եւ անցնող հրաբուղխներս գտնւում են Հաջի-Կաբուլ կայարանի մօտերքում: Այս է միայն արտավիժող հրաբուղխն:

ողողում եւ սեւացնում են շատ դրացիների բնակարանները: Շատ անգամ արտահանուած աւազներն խարտում եւ տեղ-տեղ ծակոտում են մատնաչափ հաստութեամբ երկաթ խողովակները:

Բայց կան եւ այնպիսի նաւթահորեր, որոց նաւթն հանդարտօրէն բղխում է առանց բարձրանալու եւ հոսում գետօրէն:

Երկրորդ նաւթահանքն գտնւում է Բագուի հարաւային կողմում՝ ծովի արեւմտեան ափի վերայ: Այս նաւթահանքի գործարաններն եւ գործիքներն իւրեանց բոլոր պարագաներով նման են Բալախանում եղածներին: Տարբերութիւնն այն է միայն, որ նաւթահանքիցս ստորերկրեայ եւ անյայտ անցքով վտակօրէն հոսում է ծովի մէջ նաւթահեղուկն: Բագուի հանդէպ ծովի մէջ եռացեալ կաթսայի պէս պղպջում եւ ջրի երեսը նաւթազօծում է ծովի տակից վեր բարձրացող հեղուկն: Վառ լուցկին այստեղ ծովի երեսին ձգածին պէս, իսկոյն վառւում է նաւթն եւ ծաւալւում կրակն:

Երրորդ նաւթահանքն գտնւում է Աւշառանի մօտերքում, որ երբեմն հոսում է ապրիւրի նման:

Չորրորդ նաւթահանքն գտնւում է Ղուբայի գաւառի Քիլվար գիւղի հարաւային կողմում նաւթասարի ստորոտում: Չորս մօտ առ մօտ ակունքներից բղխում է սեւ նաւթն եւ միախառնւելով թափւում յատուկ շինուած աւազանի մէջ: Շրջաբնակ գիւղացիներն գալիս եւ ամաններով տանում են նաւթիցս:

Հինգերորդն գտնւում է Քիլվար գիւղի հարաւ-արեւելեան կողմում, Գովջան գետակի ձախ ափում: Գետակս բղխում է Շիհար-Երի կոչուած աւերակ քաղաքատեղի արեւմտեան լանջերից եւ յետոյ խառնւում Դաւաչի գետին: Մերթ ընդ մերթ այնքան առատ հոսում է սեւ նաւթն, մինչեւ անգամ գետակի ջրի երկու չափիցն աւելի:

Վեցերորդն գտնւում է Շամախու գաւառի Մատրասա գիւղի աջ ու ձախ կողմերում: Բայց աւելի առատ է իւր ձախ-արեւելեան կողմինն, որ խիստ մօտ է գիւղին: Սեւ նաւթն լճակ-լճակ երեւում է գետնի երեսին շատ տեղերում: Նաւթի հետ պլթպլթում եւ արտավիժում են սպիտակ գունով ջուր եւ ցեխ, իսկ աջ կողմինն մատակարարում է կուպր, որով կպրամածում են բնակարանների տանիքները:

Եօթներորդ նաւթի նշաններ երեւում են Շամախու արեւելեան կողմի ձորում, ուր փորած են մի քանի տարիներ առաջ մի նաւթահոր, բայց մնացած է կիսատ:

Ութերորդ՝ Շամախու Գարդման (Գիրդման) գաւառի Գիւրճվան գիւղի մօտ՝ Ահի-Դարա անուն ձորում:

Իններորդ՝ նոյն գաւառի Քեւանդի գիւղի հիւսիս-արեւելեան կողմի ձորում: Գիւղիս Զարկեարան տանող ճանապարհի տակին՝ առուի աջ կողմից (ջրաղացի մօտից) ժամանակ-ժամանակ բղխում է սեւ նաւթ:

Տասներորդ՝ Բագուի Սուրախանի կոչուած կռապաշտական մեհենի արեւմտակողման ձորում մի հորից ելնում է բնական սպիտակ նաւթ:

Ուշիմ խուզարկուն երբ տեսնում է, որ Բագուի, Ղուբայի եւ Շամախու գաւառների շատ տեղերից արտահոսում են նաւթեր, յանգում է այն եզրակացութեան, որ նաւթի վերայ բազմած են այս գաւառներն, մանաւանդ Շամախի եւ Բագու քաղաքներն: Իսկ երբ տեսնում է, որ Բալախանու նաւթերի արտավէժը բարձրանում է մինչեւ 250 սաժէն, խելամտում է, թէ այս նաւթի ստորերկրեայ մեծ ամբարն կամ ակունքներն լինելու են բարձրադոյն եւ հեռաւոր տեղերում, որ կարողանում են ճնշել եւ այսչափ բարձրացնել արտավէժը:

Բացի առաջին եւ երկրորդ նաւթահանքերից, որք գործածութեան մէջ են, մնացեալներն անձեռնմխելի մնում են ցարդ:

ԿԱՍՊԻՑ ԾՈՎ

Այս ծովի դիրքն՝ երկարութիւնն, ընկած է հարաւից հիւսիս: Ծովս՝ թոռները եւ ծոռները սիրող պառաւ տատի պէս ընդունում եւ իւր գորովագութ ծոցում քնացնում է շատ գետեր: Բայց

մեզ հարկաւոր են միայն Աղուանից երկրիցն ընդունած գետերն, որոց մասին արդէն կանխաւ տեղեկութիւն տուած ենք ազնիւ ընթերցողաց:

Ծովս ունի շատ հին ու նոր անուններ, զորս ստացած է դարերի ընթացքում իւր շուրջ բնակող ազգերի անուններից: Օրինակ, վրկաններից ստացել է ծով Վրկանայ. կասպերից՝ ծով Կասպից, մասքութներից՝ ծով Մասքթաց, խազիրներից՝ ծով Խազրաց, եւն: Բայց այժմ ասւում է Բագուի ծով, Ռաշտի ծով, Դարբանդի ծով, Հաշտարխանի ծով եւն: Ծովս է Աղուանից երկրի արեւելեան սահմանն:

Գարնան, ամռան եւ աշնան եղանակներում պատահում է, որ հանդարտ է լինում ծովս: Պայծառ երկնքի պէս գեղածիծաղ եւ դուրեկան է լինում իւր երեւոյթն. իսկ իւր երեսն, ասես թէ մեծատարած ջինջ հայելի է, որի մէջ ցերեկները լողում է արեգակն, իսկ պարզ գիշերներին՝ արծաթափայլ լուսինն եւ պսպղուն աստղները: Խաղաղ երթեւեկում են շոգենաւերն, առագաստաւորներն եւ նաւակներն՝ թողլով իւրեանց ետեւից Մեր Կաթին նման նախշուն գօտի ջրի երեսին:

Սակայն երբեմն-երբեմն հրացանների ձայներից զարթնած եւ բարկութիւնից կատաղած առիւծի նման մռնչում, գոռում եւ գոչում է ահեղ ձայնով, յարուցանում անսաստ ալիքներ, ստեղծում ջրային լեռներ եւ ձորեր, լեռնակներ եւ ձորակներ, բանում սոսկալի վիհեր եւ ահարկու փոսեր, ջարդում եւ փշրում շատ առագաստաւոր նաւեր եւ նաւակներ, քայքայում ծովային բաղանիսներ եւ կամուրջներ, զոփի եղանակով պար ածում նաւահանգստի նաւերը եւ կարծես սպառնում է քանդել իւր սահմանի պատուարները եւ դուրս յորդել սահմանից:

Բագուի արեւելեան հանդէպ ծովի մէջ կայ մի կղզի Զիրա անուամբ, որ չունի ընդարձակ տարածութիւն եւ ո՛չ բնակիչ, զի չունի խմելու ջուր: Միայն ախորժելի զբօսարան է գարնան եւ ամռան եղանակներում:

ԼՃԱԿՆԵՐ

Առաջին լճակն գտնւում է Թիֆան-Դաղի գագաթի մօտ հիւսիսահայեաց կողմում: Լճակս շատ մեծ չէ, բայց ունի գեղեցիկ տեսք, քաղցր, սառնորակ եւ ախորժելի ջուր, որ չափազանց խոր է երեւում: Ըստ երեւութին՝ ոչ ջուր է ընդունում արտաքուստ եւ ո՛չ ջուր է արտահանում: Ասում են, թէ Գուսար գետի ակն (մեզ ծանօթ մեծ աղբիւրն) ջուրը ընդունում է լճակիցս ստորերկրեայ անյայտ երակով: Լճակումս երեւում է մի ուշագրաւ նշան, որ շատ զարմացնում է այցելուները եւ միանգամայն ենթարկում անվերջ մտածմանց: Փոքր-ինչ հեռուից նայած ժամանակ լճակումս երեւում է մի երկար տախտակ. բայց երբ մօտենում է այցելուն, անյայտանում է տախտակն: Ներկայանում եւ աներեւութանում է միեւնոյն տախտակն լճակիս որ եւ է կողմից դիտած ժամանակ: Բայց թէ ի՞նչ առարկայից է ընդունում լճակն տախտակի պատկերը եւ ներկայացնում այցելուաց: Ցարդ իմացող եղած չէ այս գաղտնիքը: Երկինքն պարզ եւ յստակ, լճակի շրջակայքում չկան տախտակաձեւ առարկաներ, որ մարդ կարողանայ գոնէ վերջ տալ իւր խորին մտածութեանց մի որ եւ է ենթադրութեամբ:

Լեկզիներն գաղտնիքը բացատրում են հետեւեալ աւանդութեամբ.

«Մենք լսած ենք մեր պապերից եւ մեր պապերն իւրեանց պապերից, թէ այս տախտակն Նոյ նահապետի տապանի տախտակիցն է: Տապանն ջրի երեսին շրջած ժամանակ հանդիպում է այս կողմերն եւ սաստիկ քամին փրցնում է տախտակս, ձգում ջրի երեսին: Բայց երբ ցածանում է ջուրն, տախտակս մնում է լճակիս երեսին, որ պահպանում է ինչպէս սուրբ աւանդ եւ պահպանելու է մինչեւ աշխարհիս վերջն: Այս է պատճառն՝ որ ծուկ չէ գոյանում լճակիս մէջ[1] »:

1 Նոյն խօսքերը մենք գրեցինք ո՛չ իբրեւ ճշմարտութիւն, այլ իբրեւ աւանդութիւն: Ցայտնի է, որ իրական տախտակն չէ կարող աներեւութանալ: Բայց թէ ջուրն ի՞նչ առարկայից է ընդունում տախտակի ստուերը, մնում է գաղտնիք:

Երկրորդ նոյն եւ նման լճակ (առանց տախտակի) գտնւում է Ղուբայի գաւառում Նովուր կոչուած ամառանոցում (Քիլվար եւ Խալթան գիւղերի մէջ բարձրացած մի սարի հիւսիսահայեաց լանջի հարթակի վերայ): Այս եւս ջուր չէ ընդունում արտաքուստ, բայց դարնան եղանակում ջուր է տալիս իւր արեւելեան կողմին կցուած փոքրագոյն լճակին: Երկոցունց շրջապատներում բուսած են լեռնային եղէգնաբոյսեր: Անախորժ է ջուրն եւ անրմպելի: Երկոցունց մէջ բացի գորտից եւ կրիայից չկան ուրիշ լողակներ:

Երրորդ լճակն գտնւում է Շամախու գաւառի Մէսարի վանքի հիւսիսային կողմում: Կլորակ է լճակն եւ լի կողակ ձկներով: Արտաքուստ չէ ընդունում ջուր, բայց արտահոսում է: Եղէգնուտ է իւր արեւմտեան եւ հիւսիսային կողմերն, իսկ կանաչազարդ՝ արեւելեան կողմն: Ջուրն անախորժ է եւ ծանր:

Չորրորդն, որ գտնւում է Սաղիան գիւղի արեւելահարաւ հանդէպ. ձորի միւս կողմում, փոքրիկ լճակ է՝ ծածկուած եղէգնով:

Հինգերորդ լճակն, որ ունի մի վերստաչափ երկարութիւն եւ կէս վերստաչափ լայնութիւն, գտնւում է նոյն Սաղիան գիւղի արեւմտահիւսիս կողմում, Փախրաքիւշ շինի մօտ: Լճակս, որ թէ՛ ընդունում է ջուր եւ թէ՛ արտահանում, լի է օձերով, գորտերով, կրիաներով եւ տզրուկներով: Լճակիս տեղն խոր փոս է, ջուրն՝ անախորժ եւ վատ, եւ իւր շրջապատն՝ խիստ եղէգնուտ:

Վեցերորդ լճակն գտնւում է Շամախու Կոկիսոն (Գեօգչայ) գաւառում, Կարմախանի գիւղի մօտ: Այս եւս ո՛չ ջուր է ընդունում եւ ո՛չ ջուր արտահանում, բայց քաղցր է ջուրն[1]:

ԲՆԱԿԻՉՆԵՐ

Աղուանից երկրի հեռաւոր անցեալն ծածկուած է խորին մթութեան թանձր քողով: Մարդկային ծաւալման ի՞նչ հոսանքներ տեղի ունեցած են այս երկրում, ի՞նչ տեղափոխութիւններ եղած են անդրպատմական դարերում, ինչպիսի պատերազմներ եւ յաղթութիւններ կատարուած են, ի՞նչպիսի գերեվարութիւններ, աւարառութիւններ պատահած են, քանի՞ անգամ աղքատացած է երկիրս գերիներ տալով եւ քանի՞ անգամ հարստացած գերիներ ընդունելով. յիշատակութեան արժանի որպիսի՞ գործեր գործուած են, եւն եւն: Այս հարցերի պատասխանը ո՛չ ոք չէ կարող ստուգիւ տալ բերանացի կամ գրել ճշտութեամբ: Գիրն եւ պատմութիւնն, որք ամենաթանկագին հարստութիւններ են ազգաց համար եւ հաւատարիմ աւանդապահ անցեալի յիշատակը ապագայ սերնդոց համար, շատ ուշ ծնած են այս երկրում: Որպէս երեւում է յետագային պատմութիւններից, Աղուանից նախնի բնակիչներն, գրեթէ ընդհանրապէս լինելով հովիւ եւ երկրագործ եւ վարելով նահապետական կենցաղավարութիւն, ուշ չեն դարձրած գրագիտութեան:

Այսչափ մթութեանց առաջ մնում է շուար գրողն եւ ափիբերան՝ հետազօտողն, վասն որոյ որպէս լուութեամբ անցած են նախնի եւ արդի հեղինակներն երկրիս անցեալի մասին, ակամայից լուութեամբ անցնում ենք եւ մենք եւ հետեւում միայն պատմութեանց ծանօթ իրողութեանց, մինչեւ ժամանակն պարզէ այս մութ կէտերը:

Հայկազն Սիսակից սերւում են գարգարացւոց, գարդմանցւոց, ուտէացւոց եւ ծովդէացւոց ժողովուրդներն եւ իշխանութիւնները (Ագաթ. եր. 593, Խոր. Բ. գիրք Ը. գլ., Բուզ. Գ. գպլր. ԺԷ. գլ.):

Գարգարացիք ժառանգում են Գարգարացւոց (Արցախի) մեծ դաշտը եւ լեռները:

Գարդմանցիք ժառանգում են Գարդմանի ընդարձակ լեռները:

Ուտիացիք ժառանգում են Աղուանից դաշտը եւ Կովկասեան լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերը՝ Կասպից ծովեզրից մինչեւ այժմեան Կախաւան գիւղաքաղաքը:

Ծովդէացիք ժառանգում են Բաղասական դաշտը եւ Կովկասեան լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերը՝ Կուր գետի Ալազան եւ Կախաւան գետակների միջնավայրը:

1 Լճերի շարքում չենք համարում Կուր գետի աջ ու ձախ ափերում լճացեալ ջուրերը, որք լցւում են գետի յորդած ժամանակ եւ ապա ցամաքում ցածացած ժամանակ:

Ի շարս իշխանացն Հայաստանի յսկանէ յանուանէ յիշատակում է Ագաթանգեղոս նաեւ հետեւեալները.

«Ութերորդ իշխանն Գարգարացւոց.

Երկոտասաներորդ իշխանն Մաւդէացւոց.

Երեքտասաներորդ իշխանն Ուտիացւոց» (եր. 593):

Սեւորդիք, որք չեն յիշւում պատմութեանց մէջ մինչեւ Է. դարն[1], բնակում են Խրամ եւ Աղստեւ գետակների մէջ՝ լեռնային եւ դաշտային մասերում:

Փայտակարանն բաժանուած էր երեք մասի: Ա. մասն ընկած էր Երասխ գետի աջ ափի եւ Կասպից ծովի մէջ, որ հաշւում է մասն Ատրպատականի: Բ. մասն ընկած էր Կուր եւ Երասխ գետերի խառնուրդի մէջ, այս մասումն էր Փայտակարանի Վարդանակերտ քաղաքն: Գ. մասն էր Բագուն իւր գաւառներով, իսկ մեծ քաղաքն Փայտակարան շինուած էր այժմեան Սալեանի տեղում: Մեզ կարեւոր են միայն Բ. եւ Գ. մասերն, որք բնական սահմաններով կցուած են Աղուանից երկրին: Այս մասերն, որք սկզբում պատկանում էին Հայոց թագաւորութեան[2], ապա անցնում են Աղուանից թագաւորութեան: Կասպից ցեղն, որ եկած էր Բագտրիայի կողմից, նախ բնակում է Փայտակարանի Ա. մասում, հետզհետէ անցնում է Բ. եւ Գ. մասերն եւ ժառանգում Բագուի բոլոր գաւառները, այն է՝ Կասպից ծովի, Սուղայիդ գետի եւ Կովկաս սարի արեւելեան լանջերի միջավայրը մինչեւ՝ Շամախու մօտերքն (Աշխարհ., Խոր., եր. 609-610):

Լփնաց ցեղն[3] բնակում էր Սուղայիդ եւ Դաւաչի գետերի մէջ եւ Կովկասեան սարի հիւսիսահայեաց լանջերի վերայ, ինչպէս երեւում է Մով. Կաղանկատուացու Պատմութիւնից եւ նոյն իսկ այժմեան բնակավայրից:

Ճղբաց ցեղն բնակում էր Դաւաչի եւ Ղուբա կոչուած գետերի եւ ծովի միջավայրում եւ լեռնամասում:

Մազքթաց ցեղն, որ եկած էր հիւսիսային կողմից եւ հետզհետէ ծովեզերքով հասած Աղուանից երկիրն, բնակում էր Դարբանդի, Կասպից ծովի եւ Փոքր լեռնաշղթայի մէջ:

Որ այս ցեղերն բնակում էին այս տեղերում, վկայում է եւ Մովսէս Կաղանկատուացին. «Իսրայէլ եպիսկոպոս Մեծ կողմանց... յուղարկեալք...'ի Պերոզապատ քաղաքէ... անցանէին ընդ գետն մեծ Կուր, անցանէին ընդ սահմանս Աղուանից... հասանէին 'ի քաղաքն Լփնաց... եւ անտի անցանէին յաշխարհն Ճղբաց առ ստորոտով լերինն մեծի... եւ երթեալ ի վաղնջուց թագաւորանիստն հասանէին կայանս, յայն տեղի, ուր վկայեաց սուրբն Գրիգորիս կաթողիկոսն Աղուանից: Անտի յետ աւուրց ինչ հասանէին ի դուռն Զողայ, որ է մերձ ի Դարբանդ» (Մով. Կաղ., Բ. հատ., ԼԹ. գլ.):

Այն հնադարեան պարիսպն, որ ձգուած է Դարբանդից մինչեւ Ալազան, Կովկաս սարի հիւսիսային կողմին հպած տեղը ձեւացնում է սրածայր եռանկիւնի: Եռանկիւնուս հիւսիսային կողմն է պարսպի ամուր պատն, հարաւակողմն է Կովկաս սարն եւ արեւելեան Փոքր լեռնաշղթան, որ երկարած է Դարբանդից դէպի Ղուբա: Այս ընդարձակ եռանկիւնին, լինելով պարսպի ներսի կողմում, պատկանում էր Աղուանից երկրին: Եռանկիւնուս մէջ բնակում էին մի քանի ցեղեր, զորս յիշատակում է Խորենացին ի շարս Սարմատացւոց՝ գրելով. «Թաւասպարք, հեճմատակք, փասխք, փուսխք, փիկոնակք, բաքանք, մազքութք մինչեւ ցԿասպից ծովն, յոր եւ բազուկն Կովկասայ հպի, ուր ածեալ է զպարիսպն Դարբանդայ» (Աշխարհ., եր. 604-605): Յիշում է նաեւ Բուզանդ (Գ. գպլր. Է. գլ.) (Սաննսան թագաւորն Մազքթաց). «Ժողովեաց զամենայն զօրս... փոխաց, թաւասպարաց, հեճմատակաց... գաթաց եւ գղուարաց, գուգարաց եւ ճղբաց» եւ ել ի

1 «Զուէ զօրու ծանու հրոսակ Գէորգեայ նահապետին սեւորդեաց, որք սակս սեւ կոչեցելոյ հաւուն իւրեանց՝ ազգն այն յանուն սեւորդիք անուանէին» (Յովհ. Կաթ., եր. 234): Մեր նպատակից արտաքոյ է քննել ցեղերի ծագումը, միայն յիշեցնում ենք ազնիւ ընթերցողաց, որ գարդմանցւոց ցեղի անունն չկայ Ագաթանգեղոսում եւ ոչ սեւորդեաց անունն՝ Խորենացու եւ Եղիշէի մէջ:

2 Ագաթ., եր. 624., Բուզ., եր. 210:

3 Լփնաց երկիրն եւ ցեղն այժմ կոչւում է Լահիճ, իսկ բարբառն՝ լահճերէն:

վերայ թագաւորին Հայոց (Խոսրովու Բ.-ի): Բայց որովհետեւ Ե. դարում Պարսից իշխանութեան տակ ընկած էր Աղուանից երկիրն եւ Վարդան Մամիկոնեան տեղ-տեղ խրամատած էր պարիսպը եւ դաշն կապած հոնաց հետ, վասն որոյ գրում է Եղիշէն (177 եւ 246-247). «Սակայն եւ վասն նոցա (հոնաց, որպէսզի չմտնէին խրամատեալ տեղերովն Աղուանից երկիրն) կուտեաց զբազում այրուձին արեաց (զօրավարն Պարսից) արգել եւ փակեաց զդրունս ելին նոցա... կոչէր... զզօրսն լփնաց, զճղբաց եւ զվատն, զգաւն եւ զդղուարն, զխրսանն եւ զհնճմատակն, զփասխն եւ զփուսխն եւ զփիւքաւնան եւ զամենայն զօրս Թաւասպարանն եւ զլեռնային եւ զդաշտային եւ զամենայն ամրակողմն (եռանկիւնու մէջ եղածները) լերանցն (Կովկասու.)»: Գրում է նաեւս Կաղանկատուացին, թէ (եր. 70) Սուրբն Մեսրոպ «ձգէր զքարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտէացւոց եւ ի Լփնից եւ ի Կասպս եւ ի դուռն Զողայ եւ յայլ ազգի ազգիսն, զորս գերութեամբն էր ածեալ Աղէքսանդրի Մակեդոնացւոյ[1] եւ նստուցեալ զմեծ լերամբն Կովկասու զ Գարդարս[2], զկամիճիկս, հեփթաղան դարձուցեալ ի հաւատս՝ զկարգ Աստուածապաշտութեան ուսուցանէր, զոր ի վաղնջուց ուսեալն էին եւ մոռացեալ, եւ բոլորովին քարոզ եւ առաքեալ խուժադուժ սարոտանեացն լինելով»:

Դիտմամբ մէջ բերինք վերեւի հատուածները, որպէսզի ազնիւ բանասէրներն դիւրաւ կարողանան շօշափել, համեմատել եւ համոզուել, որ այդ ցեղերն այդ ժամանակ բնակում էին նոյն պարսպի ներսի կողմում – Աղուանից երկրի մասում: Խորենացու «փիկոնակք եւ բաքանք», Բուզանդի «փոխաց, գաթաց եւ գուգարաց», Եղիշէի «վատն, գաւն եւ խրսանն» տարբեր յատուկ անուններն եւ Կաղանկատուացու «յայլ ազգի ազգիսն» մեր համոզմամբ ոչ այլ ոք են, եթէ ոչ միեւնոյն ցեղերն: Տարբերութիւններն, մեր համեստ կարծիքով, միայն սխալներ են գրչագրերի: Գրչից գրիչ անցնելով ձեռագիրներն՝ կարծում ենք, որ սղրդած են սխալներ, օր. Բուզանդի «փոխաց»-ն Եղիշէի եւ Խորենացու «փուսխն» է, «գաթաց»-ն Եղիշէի «գաւն» է, իսկ «Գուգարաց»-ն սխալմամբ կրկնուած է «Գղուարաց» անուան տեղ:

Որ այս ցեղերն բնակում էին Աղուանից երկրում, որ այս ցեղերն ընդունած էին հայադաւան քրիստոնէութիւն ս. Լուսաւորչի, Աղուանից Գրիգորիս Կաթուղիկոսի եւ ս. Մեսրոպի քարոզութիւններով եւ մտած հայոց եկեղեցու ծոցն, հաստատւում է Հայաստանի այն նախարարական ցանկերով, որք գտնւում են պ. Կ. Կոստանեանցի Հիւսուածքի Գ. հատորում, որից քաղում ենք հետեւեալը.

Նախարարութիւն Աղուանից Գ. դարում	Նախարարութիւն Աղուանից Դ. դարում	Նախարարութիւն Աղուանից Ե. դարում
Իշխանն Գարգարացւոց Իշխանն Ծովդէացւոց Իշխանն Ուտիացւոց (Ագաթ. եր. 593)	Խաչեանք. Բաղասականք. Զորարնակք (Գուցէ Սեւորդիք) Գարդմանայ տէր.	Ուտէացի.
Կազբք Կազբունիք		Գարդմանաց տէր Կասպէից տէր.
	Ճիղբք Լեռնականք (Գուցէ Լփնիք) Հեճմատակք, Գորոդուարք, Լեկանեանք, Դարբանդեանք.	

1 Ցանկալի է իմանալ, թէ որտեղի՞ց բերած է Աղէք. Մակեդոնացին այս ցեղերը, ի՞նչ էին սոցա տեղափոխութեան պատճառներն, ո՞յք եղած էին եռանկիւնուս նախկին բնակիչներն եւ ի՞նչ եղան:

2 Այս եւս սխալ է գրչագրի. ուղիղն է Դղուար:

ԿՐՕՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Յիսուսի Քրիստոսի ծննդից շատ տարիներ առաջ աղուանից ժողովուրդն շրջապատուած է եղել տարբապաշտ դրացիներով:

Պարսկաստանն պաշտում էր հրապաշտութեան աղանդը, որի հեղինակն եղած է Զրադաշտն Ա. Դարեհի հայր Վշտասպի օրով: Թէեւ Աղէքսանդր Մակեդոնացին կործանած էր այս աղանդը Պարսկաստանում, սակայն վերստին նորոգւում է Սասանեան թագաւորների օրով:

Հայաստանի բնակիչներն պաշտում էին արեգակը եւ լուսինը: Արտաշէս Ա. Յունաստանից Հայաստան է բերում յունաց չաստուածները՝ Եփեստեայ, Աթենասայ, Արամազդի, Ապողոնի, Հերակլեայ եւ Արտեմիդեայ արձանները եւ աւելացնում իւր ունեցած Անահիտ, Գիսանի եւ Վահագն կուռքերի վերայ:

Վրացիք պաշտում էին Ամպրոպային Արամազդի եւ Հայոց Վահագն թագաւորի արձանները:

Հիւսիսային ազգերն ունէին ծառապաշտական աղանդներ:

Այսչափ տարբապաշտ դրացիներով շրջապատուած Աղուանքն չէր կարող ազատ մնալ տարբապաշտութիւնից: Տակաւին տեղ-տեղ երեւում են կռատան նշաններ եւ նշմարւում են հետքեր:

Ա. Աղուանից կրօնական զգացմանց նուիրատեղին եւ գլխաւոր կենտրոնն եղած է Եօթընփորակեան բագինն Բագուի հիւսիսային կողմում, որ այժմ կոչւում է Սուրախանի: Այժմ չեն նշմարւում այստեղ հնութեան հետքեր, որովհետեւ շատ տարիներ առաջ Հնդկաստանից հրապաշտներ գալով նորոգած են շինութիւնը, որ ունի քառակուսի ձեւով պարիսպ: Պարսպիս ներսի կողմում շինուած են միարանից կացարաններ, իսկ մէջտեղին մօտ՝ ննջեցելոց դիակներ այրելու վառարան: Հաւանական է, որ շինութեանց հիմքերն հնութիւն եղած լինին: Շինութեանս հարաւային հանդէպ եղած լեռնակից ստորերկրեայ խողովակներով բերուած է հրաբղխային շոգին եւ բաժանած մասերի: Մի մասն դիակ այրելու վառարանին յատկացրած են, մի մասն՝ կրօնապետի սենեկին եւ երրորդ՝ աւելի մեծ մասն, շինութեան ծովակողի դրան դիմաց եղած մեծ խողովակին: Վառ լուցկին խողովակների բերաններին մօտեցրած ժամանակ, իսկոյն վառւում են, իսկ քարով փակելուն պէս՝ անցնում:

Բ. բագինն շինուած է եղել Ղուբայի գաւառի Խինալղ կամ Խինալուղ գիւղի մօտերքում Աթաշկեահ կոչուած հրաբղխի մօտ, բայց իբր ամռան եղանակներում միայն պաշտպանման տեղի: Այստեղ նշմարւում են վաղնմի հնութեան հետքեր, որոց վերայ յետոյ Հնդկաստանից եկած հրապաշտներն շինած են շինութիւններ, (տե՛ս 'ի շարս հրաբուղխների):

Գ. բագինն գտնւում է Ղուբայ գետի ձախ կողմում՝ Մալականի նորաշէն գիւղի ստորոտում: Բաւական ընդարձակ եղած է շինութիւնս, որի պատերից տեղ-տեղ փլած եւ ահագին կտորներն ընկած՝ մնում են դեռ անքակ: Դժուար է ճշտիւ որոշել շինութեան տարեթիւը, միայն թէ 2000 տարուց աւելի լինելու է սորա գոյութիւնն:

Դ. բագինն շինուած է Շամախու մօտ Սաղիանի վանքի հարաւային կողմում: Բայց այս մնում է տակաւին կանգուն եւ շինուած է քառակուսի ձեւով: Զորս անկիւններում ունի չորս միջակ սենեակներ, արեւելեան կողմից՝ մի դուռն եւ շինութեան վերայ՝ մի բոլորձի եւ բարձրագոյն գմբէթ: Տաշած քարերով շինուած այս կրաշաղախ շինութիւնն այն աստիճան ամուր է, մինչեւ անգամ հազարաւոր տարիներ դիմադրած է այն սաստիկ շարժերին, որովք քանիցս կործանուած է Շամախին: Ծխոտուած եւ մրոտուած են սենեակների պատերն, նամանաւանդ կամարակապ ձեղուններն:

Ե. Մեհեանն շինուած է եղել Շաքի քաղաքի Ղարալա գաւառի Հոմէնք անուանեալ տեղում, Բում գիւղից վերեւ Կովկասեան սարից կախուած մի լեռնաբազկի վերայ: Այժմ հազիւ են նշմարւում շինութեան հետքերն: Աղուանից պատմիչը գրում է, թէ Եղիշա[77] առաքեալն «անցեալ ընդ դաշտակն Ջերգունի (Զարզունի) ի տեղի զոհարանի դիւցամոլ կռապաշտիցն՝ անդ

1 Եղիշէ. որ ձեռնադրուած էր Տեառնեղբայր Յակովբոս Առաքեալից:

էառ զնահատակութեան պսակն: Եւ անդէն ի գուբ մի մահապարտաց ընկեցան պատուական նշխարքն եւ ծածկեցան 'ի տեղւոջն, որ կոչի Հոմէնք» (Մով. Կաղ., եր. 9):

Զ. Գտնւում է Շաքի քաղաքի արեւմտեան հանդէպ եղած սարի գլխին: Շինութեան ստորին մասն մնում է ամբողջապէս կանգուն. կառուցեալ է կրաշաղախ ցեխով եւ հոյակապ կամարներով:

Է. Զոհարանն գտնւում է Նուխու եւ Ճառի մէջ եղած Կախաւան գիւղաքաղաքի մօտ եւ կոչւում Քուրմուղլս (գուցէ բազմութիւն քրմաց): Այս մի ահագին եւ միապաղաղ քար է ցըցուած. որի մէջն փորուած է եւ որ վերեւից ունի մի երդիկ իբր ծխնելոյզ. իսկ ներքեւից՝ մի փորուած դուռն: Փորուածքի պատերն սեւացած են մխով:

Բայց թէ աղուանք ի՞նչ անուն կուռքեր կամ արձաններ էին պաշտում. յայտնի չէ որոշակի: Յայտնի է միայն, որ սեւորդիք պաշտում էին բարտի ծառեր. արեգակն եւ լուսին, մինչեւ իւրեանց մկրտուիլն: Նոյնպէս բոլորովին անյայտ է եւ Արցախի հին կրօնն եւ պաշտամունքն:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆ

Աղուանից ժողովրդեան ազգային, կրօնական եւ քաղաքական ճակատագիրն միացած է եղել Հայաստանի ճակատագրի հետ. իշխանութիւնն՝ իշխանութեան հետ, նախարարութիւնն՝ նախարարութեան հետ, թագաւորութիւնն՝ թագաւորութեան հետ, փառքն՝ փառաց հետ եւ անկումն՝ անկման հետ:

Հայաստանի առաջին լուսաւորութեան հետ քրիստոնէական լուսաւորութիւնն ողջունում է Աղուանից մայրաքաղաքն Զողայ՝ Եղիշ Առաքեալի քարոզութեամբ: Սոյն Առաքեալն քարոզելով հասնում է Աղուանից Ղաբալա գաւառն, մտնում եւ քարոզում Սահառ[1] քաղաքում: Յետոյ գնում է Նուխու մօտ եղած Գիս գիւղաւանն, լուսաւորում ժողովուրդը ճշմարիտ աստուածապաշտութեան լուսով, կառուցանում առաջին եկեղեցին եւ մատուցանում պատարագ: Ապա սերմանելով Աստուծոյ խօսքերը եւ աշակերտելով շատերը՝ անցնում է Զարդունի դաշտակով եւ նահատակւում Հոմէնք կոչուած գիւղամոլ զոհարանում (Մով. Կաղ., եր. 8-9):

Հայաստանի երկրորդ եւ ընդհանուր լուսաւորութեան հետ՝ քրիստոնէական ընդհանուր լուսաւորութիւնն ծաւալւում է եւ Աղուանից երկրում ս. Գրիգոր Լուսաւորիչ առաքելասարաս Հայրապետի ձեռով, որպէս երկնառաք հրէշտակի ձեռով: Ամէնուրեք ծաւալւում է քրիստոնէութիւնն. շինւում են եկեղեցիներ եւ կարգւում հոգեւոր պաշտօնեաներ: Կուռտուններն կամ բագիններն փոխւում են տաճարների, քրմութիւնն՝ քահանայութեան, զոհագործութիւնն՝ պատարագի եւ սնոտիապաշտութիւնն՝ աստուածպաշտութեան: Վերջապէս Աղուանից երկրի բնիկ (գարգարացւոց, գարդմանցւոց, ծովդէացւոց եւ ուտիացւոց) եւ եկամուտ ազգերն կասպից. լփնաց, ճղբաց, մազքթաց եւ եռանկիւնու մէջ բնակող ցեղերն ձուլւում եւ միանում են Հայաստանեայց Առաքելական եւ Ս. Եկեղեցու հետ քրիստոնէական կրօնով, դաւանութեամբ եւ եկեղեցւով[2]:

Հայաստանի գրական եւ մատենագրական լուսաւորութեան հետ՝ գրականութեան եւ մատենագրութեան[3] լուսաւորութիւնն մտնում է Աղուանից երկիրն ս. Մեսրոպի ձեռով, որ միեւնոյն ժամանակ լինում է քարոզիչ առաքեալ եւ երկրորդ լուսաւորիչ, ինչպէս տեսանք կանխաւ: Բայց հազար ափսո՜ս, որ աղուանից մատենագրութիւնն այրւում է Զ. դարում խազրաց ձեռով (Մով. Կաղ., եր. 10 եւ 91):

1 Փարիզում տպուածում՝ Սաճառ, իսկ Մոսկուայում տպ.՝ Սոճառ:

2 «Որք էին ամենեքեան հաւատացեալք ի մի կաթողիկէ առաքելական եկեղեցի» (Եղիշէ, եր. 15, 32-33. 93 եւ 246-247):

3 Միջին Դաղստանից մինչեւ Ճառն ամէնուրեք խուզարկեցինք եկեղեցիների, գրչագրերի, հանգստարանների եւ բեղդերի արձանագրութիւնները եւ յիշատակարանները, որպէսզի գէթ գտնէինք աղուանից գրերի հետքը: Միայն գտանք մի քանի տառեր, որք փորագրուած են Դարբանդի հիւսիսային պարսպի արտաքին կողմում՝ պ. Անդրէաս Զաքարեանի պարտիզում: Տառերս սերտ մերձաւորութիւն ունին Մեսրոպեան գլխագիր տառերին սակաւ տարբերութեամբ, որոց մասին՝ յետոյ:

Աղուանից եկեղեցին Դ. դարից սկսեալ մինչեւ ԺԹ. դարի առաջին քառորդն ունեցած է իւր առանձին կաթողիկոսութիւնը, եպիսկոպոսութիւնը եւ հոգեւոր իշխանութիւնը: Սակայն Հայոց եւ աղուանից միացեալ եկեղեցու սերտ կապը անքակտելի պահպանելու հեռատեսութեամբ. ընտրեալ կաթողիկոսացուներն օծումը միշտ ընդունած են Հայոց ընդհանուր հայրապետներից, բացի մի քանի ճըռ եւ ինքնակոչ կաթուղիկոսներից, որպէս ապացուցանում են պատմութիւնները: Դեռ Զ. դարում Աղուանից կաթուղիկոսներին ուղղեալ նամակների երեսներին գրում էին «Աղուանից, Լփնաց եւ Զողայ Կաթուղիկոսին» (Մով. Կաղ., եր. 275):

Բայց հարկ է յայտնել, որ ոչ մի երկիր, ո՛չ մի ժողովուրդ ենթարկուած չէ այնքան կրօնական եւ հաւատափոխութեան հալածանաց, որքան աղուանից ժողովուրդը: Հետզհետէ յաջորդում են միմեանց պարսից կրակապաշտական եւ արաբացւոց մահմեդական դարձնելու բռնաբարութիւնները, նահատակութիւններն, մարտիրոսութիւնները եւ անբացատրելի հալածանքները: Թողում ասել Զինկիզ-Խանի, Լանկ-Թամուրի, Ջհան-Շահի, Ջալալիների, Ա. Շահ-Աբասի, Օսմանցւոց, Նադր-Շահի եւ լեկզիների գործած արիւնահեղութիւնները եւ սպանութիւնները, որք անասելի են եւ անհամար:

Այս կրօնական հալածանքները, նահատակութիւններն ու բռնութիւնները քանդում են Աղուանից տունը: Այսօր ծովդէից, կասպից եւ մազքթաց (Աղուանից երկրում մնացեալ մասերն), լփնաց, ճղբաց եւ եռանկիւնու մէջ եղած ցեղերն ամբողջապէս մահմեդական դարձած են. Ուտեաց մի փոքր մասն յունադաւանութիւն ընդունած է, իսկ ամենամեծ մասն՝ մահմեդականութիւն: Ուտեաց ազգիցն մնացած է հայադաւան միայն վեց գիւղ, լփնաց ցեղից՝ մի գիւղ եւ ճըղբաց ցեղից՝ մի գիւղ: Այնպէս որ, այսօր մօտ 150000 ծուխ ժողովուրդ կրօնափոխ եղած է յիշեալ ցեղերից, որք են ծովդէացիք, ուտիացիք, լփնացիք, կասպեցիք, ճղբացիք, մասքթացիք եւ եռանկիւնու մէջ բնակող ամբողջ ցեղերն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Արդէն ծանօթացանք Աղուանից երկրի բնակչաց, ազգութեանց եւ կրօնական կենաց, այժմ ծանօթանանք քաղաքական կենաց: Թէպէտ քաղաքական գործերն ամենամեծ մասամբ թաղուած են անյայտութեան մէջ, սակայն համառօտ դասաւորում ենք՝ ինչ որ կարողացանք ձեռք բերել պատմութիւններից:

Աբրահամ նահապետն ԺԱ. ծնունդն էր Սեմից, իսկ Հայկազն Սիսակն՝ Ժ. ծնունդ Յաբեթից՝ ըստ Խորենացուն[1] Մովսիսի օրով, Քրիստոսից մօտ 1600 տարի առաջ, Հրէից ժողովրդեան թիւն անցնում էր միլիոնից՝ արական եւ իգական միասին հաշուելով[2]: Այս աճումն եղած էր միայն 350 տարուայ միջոցում: Ենթադրում է հարցասէր միտքն, թէ այսչափ բազմացած լինելու էր եւ Սիսակի ցեղն նոյնչափ միջոցում:

Խորենացին, հետեւելով Ս. Գրոց ոճին, Գունդ[3] է անուանում Սիսակի ցեղը. «Մոռացումն եղեւ մեզ յառաջին Մատենին յիշատակել զ Գունդն Սիսական, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի» (Խոր., Բ. գիրք, Ը. գլ.):

Ա. Մօտ 1828 տարի Քրիստոսից առաջ Հայկազն Արամ նահապետը նուաճում է արեւելեան կողմերը (իմանալու է եւ Աղուանից երկիրը) եւ կարգում նուաճեալ ցեղերի վերայ իշխաններ Սիսական ցեղից (Խոր., Ա. գիրք, ԻԴ. գլ.):

Երկրորդ. Հայկազն՝ Տիգրան Երուանդեան, Փրկչից մօտ 550 տարի առաջ, Մարաց Աժդահակի դէմ պատերազմելու համար, հայ զօրաց հետ տանում է նաեւ վրաց եւ աղուանից «ընտիր զօրքերը» (Խոր., Ա. գիրք, ԻԹ. գլ.): Այս խօսքերից երեւում է նախ, որ աղուանք հպատակ էին Հայոց թագաւորութեան՝ սկսեալ Արամի օրից. եւ երկրորդ, որ աղուանք ունեցած են ընտիր զօրք:

1 Խոր. Ա.. գիրք, Ե. եւ ԺԲ. գլ.:

2 Թուոց Ա. 45-46, Գ. 39 եւ Ելից ԼԲ. 28:

3 Թուոց Գ. 18, 19, 20, 33 եւ այլն:

Երրորդ. Հայոց Վաղարշակ թագաւորից կարգւում է կուսակալ Սիսական Առանն Աղուանից երկրի վերայ[1]: Ակներեւ է, որ Վաղարշակ թագաւորն՝ հետեւելով Արամի կարգադրութեան, վերըստին յատկացնում է կուսակալութեան իրաւունքը Սիսակի ցեղին՝ Առանին: Կաղանկատուացին ընդարձակելով Խորենացու խօսքերը, գրում է. «Վաղարշակ արքայ Հայոց, որ ի կարգել իւրում զՀիւսիսայինսն՝ կոչեաց զվայրենի եկամուտ[2] ազգս, որ ի դաշտէն Հիւսիսոյ (Վատենան դաշտ) կամ որ զստորոտով Կովկասու, կամ որ ի հովիտս եւ ի խորաձորս գՀարաւով մինչեւ ցմուտս դաշտին: Պատուէր առնէր՝ զաւազակութիւն եւ զմարդադաւութիւն թագուլ եւ Հարկաց արքունի հնազանդ կալ: Ապա կարգեաց նոցա առաջնորդս եւ վերակացուս, յորոց գլխաւոր ոմն ի Սիսական տոհմէ Յաբեթական ծննդոց կարգի հրամանաւ Վաղարշակայ՝ Առան անուն, որ ժառանգեաց զդաշտս եւ զլերինս Աղուանից»:[3] Յայտնի է, որ Առան անուանի էր եւ ամէն մտաւոր եւ հանճարեղ գործով առաջին մարդ: Բայց յայտնի չէ, թէ քանի՞ տարի վարեց կուսակալութեան պաշտօնը, ո՞ր յաջորդեց Առանին, քանի՞ կուսակալներ տեղակալեցին եւ ի՞նչ յատկութեան տէր մարդիկ էին: Բազմաշխատ Կ. վրդ. Շահնազարեան (Յառաջ. պատ. Աղուան., եր. 65-66) առնելով Հռով. պատմութիւնից, գրում է, թէ Հռովմայեցւոց Պոմպէոս զօրավարն 60-70 տարի Քրիստոսից առաջ սաստիկ պատերազմում է Աղուանից զօրաց հետ, բայց չկարողանալով յաղթել, կանգնեցնում է սահմանապահ լեգէոն:

Երբ զօրանում է Պարսկաստանի Արշակունեան թագաւորութիւնն, ապա հետզհետէ ծնում է Արշակունի թագաւորներ եւ թագաւորութիւններ Հայաստանում եւ Բագրատիայում եւ Աղուանքում եւ Վրաստանում: Դժուարին է գտնել Աղուանից թագաւորութեան ծննդեան տարեթիւը: Այսչափ միայն յայտնի է, որ փրկչական Ա. դարում Աղուանից մայրաքաղաքն էր Զոզայ, ուր եւ նստում էր Աղուանից Արշակունի թագաւորն[4]: Աղուանից թագաւորութիւնն ծնւում է Ա. Քաջն-Վաչականով[5] եւ վախճանւում Բարեպաշտ-Վաչական[6] Գ.-ով է, դարի առաջին քառորդում: Ահա թագաւորաց անուններն.

Քաջն-Վաչական Ա.
Վաչէ Ա.
Ուռնայր - քրիստոնեայ
Վաչական Բ. »
Մրհաւան »
Սատոյ »
Ասայ »
Եսուաղէն »
Վաչէ Բ. »
Վաչական Գ. »

Որպէս կանխաւ յայտնած ենք, աղուանք Գ. դարից սկսեալ մինչեւ Ը. դարն ունեցած են եւ նախարարութիւն:

Վաչականեան թագաւորութեան անկումից յետոյ Աղուանից երկրի վերայ իշխում են Սասանեան Միհրան եւ իւր յետագայ սերունդն մինչեւ Թ. դարն, որոց ամենամեծ մասն եղած է քրիստոնեայ (ընդունած են հայադաւան քրիստոնէութիւն):

1 Խոր., Բ. գիրք, Ը. գլ.:
2 Կարդացողն անշուշտ ըմբռնեց, որ «եկամուտ ազգերն» էին կազպք, լփնիք, ճիղրք, մազքութք եւ եռանկիւնու մէջ բնակող ցեղերն:
3 Մով. Կաղ., եր. 6-7:
4 Մով. Կաղ., Ա. հատ., Զ. գլ. եւ Բ. հատ., ԼԹ. գլ.:
5 Մով. Կաղ., եր. 32-33:
6 Զարմանալի է, որ Կաղանկատուացին գրած չէ գովելի թագաւորիս մահը եւ թաղումը: Ստեփ. Օրբէլեան ԽԵ. գլ. գրում է. «Ի դրան եկեղեցւոյն (Վահանայ Վանուցն) վիմարդեան մահարձանօք, յորում հանգուցեալ կան ի շիրմի բազում թագաւորք եւ թագուհիք Աղուանից եւ Բաղաց»: Իսկ ԻԱ. գլխի վերջերում գրած է. «Ապա մեռան ի Բարկուշատ թագաւորն Վաչական եւ Աբլ-Աբաս (փեսայ իւր)»:

Ժ. դարում յարութիւն է առնում Աղուանից թագաւորութիւնն Համամ իշխանով:

Համամ թագաւոր (Ստ. Օրբել., ԾԵ. գլ., Մով. Կաղ., եր. 269)
Ատրներսեհ թագաւոր (Յով. կաթ., եր. 273):
Փիլիպպոս կամ Փիլիպէ թագաւոր (Մատ. Ուռ., եր. 4 եւ 279):
Սենեքերիմ թագաւոր (Մով. Կաղ., եր. 273 եւ Ստ. Օրբէլ, ԿԱ. գլ.):
Գրիգոր, որդի Սենեքերիմայ թագաւոր (Մատ. Ուռ., եր. 279):

Կրկին անգամ յաւիտեան մեռնում է թագաւորութիւնն եւ թաղւում Գրիգոր թագաւորի գերեզմանում ԺԲ. դարում:

Այնուհետեւ Աղուանից երկիրն դարձեալ կառավարւում է իշխաններով:

ԺԵ. դարում Ջհան-Շահի հրամանաւ իշխանութիւնն փոխւում է մելիքութեան: Մելիքութիւնն մաքառելով՝ ըստ կարելւոյն, ամէն խոչընդոտների դէմ, պահպանում է իւր գոյութիւնը մինչեւ 1830 թիւն եւ ապա մեռնում:

Ոչ մի երկիր ենթակայ եղած չէ վերջին աստիճան ճնշման, սրածութեան, արիւնահեղութեան, սովի եւ գերեվարութեան, որքան Աղուանից երկիրն: Աղուանից երկիրն, լինելով հիւսիսից հարաւ եւ հարաւից հիւսիս անցուդարձ անելու միակ ճանապարհն կամ դուռն, բազմիցս ոտնակոխ է լինում յաճախակի անցուդարձ անող բռնաւորների հրոսակներից՝ մանաւանդ քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ:

Փրկչական Ա. դարում ալանները՝ միացնելով իւրանց հետ բոլոր լեռնականները, հեղեղի նման խուժում են Դարբանդի դռնից եւ ոտնակոխ անում Աղուանից երկիրը: Միայն Արտաշէսի հուժկու սուրը տանում է յաղթութեան փառքը եւ յետ մղում հրոսակները[1]:

Բ. դարում նոյն դռնից արշաւում են խազրաց եւ բասլաց միաբանեալ զօրքն եւ մարախի նման ծածկում Աղուանից երկիրը: Հասնում է Հայոց Վաղարշ թագաւորն եւ ազատում երկիրը եւ կոտորելով հալածում նոյն դռնից[2]:

Գ. դարում ներս են յորդում նոյն լեռնականներն եւ հեղեղի պէս աւերմամբ ողողում Աղուանից երկիրը: Դիմաւորում է իւր զօրքով Մեծն-Տրդատ եւ հալածում մինչեւ իւրանց բնակած լեռները[3]:

Ե. դարում Աղուանից երկիրն ընկնում է հրապաշտ պարսից իշխանութեան ներքեւ, աւերւում է երկիրն, քանդւում են եկեղեցիքն, նահատակւում են բազմաթիւ եւ հաստատահաւատ քրիստոնեայք, եւ ակամայ ընդունում հրապաշտութիւն թուլահաւատ ժողովրդականք:

Ե. դարում հոնք, Զ. եւ Է. դարում խազիրք լցւում են Աղուանից գաւառները. կողոպտում, կեղեքում, գերեվարում, այրում եկեղեցիները եւ մատենագրութիւնները, աւերում երկիրը եւ նահատակում շատ մարդիկ[4]:

Ը. դարում Աղուանից երկրին տիրում են արաբացիք, գործ դնում մոլեռանդութեամբ սուր եւ տանջանք, շատերին բռնի ընդունել տալիս մահմեդականութիւն եւ նահատակում չընդունողներից շատերը եւ Աղուանից իշխանները: Մանաւանդ Բուղա հրէշը լուանում է արիւնով երկիրը եւ բազմաթիւ խազիրներ տեղափոխում եւ բնակեցնում Աղուանից Քուստի գաւառում, որի պատճառաւ այժմ կոչւում է Ղազախ այս գաւառը[5]:

ԺԱ. դարում Աղուանից երկիրն ընկնում է Սելճուկեան տիրապետութեան ներքեւ. ԺԳ. դարում Թաթարաց եւ ԺԴ-ԺԵ. դարում Լանկ-Թամուրեան եւ Ջհան-Շահեան արշաւանաց: Խիստ դժուարին է պատկերացնել այստեղ այն սոսկալի սպանութիւնները եւ բազմաթիւ գերեվարութիւնները եւ աւերմունքները, զորս կրեց Աղուանից քրիստոնեայ ժողովուրդն այդ արշաւող

1 Խոր., Բ. գիրք., Ը. գլ.:
2 Խոր., Բ. գիրք., ԿԵ. գլ.:
3 Խոր., Բ. գիրք, ՁԵ. գլ.:
4 Մով. Կաղ., եր. 73-78, 91 եւ 104-129:
5 Տես Կ. վրդ. Շահնազարեան, Յառաջ. պատ. Աղուանից:

բռնաւորներից: Ցանկացողներն թող բարեհաճին ականել Մով. Կաղ., Յովհ. Կաթ., Կիր. Գանձ., Թով. Մեծոբեցու պատմութիւնները:

ԺԷ.-ԺԸ. դարում օսմանցւոց եւ պարսից պատերազմավայր է դառնում Ադուանից երկիրն. երկու սրերի մէջ են մնում ողորմելի բնակիչները եւ մեծապէս վնասւում թէ՛ կեանքով եւ թէ՛ գոյքով:

ԺԸ. դարի երկրորդ քառորդում արշաւում է Նադր-Շահն Ադուանից երկիրն. կործանում Շամախի քաղաքն եւ դատարկում շատ գիւղեր եւ 700,000 գերի հայեր եւ վրացիներ տանում Պարսկաստան[1]:

1712 եւ 1722 թուականներում լեկզիներն եւ խազիրներն յարձակւում են Շամախու, Շաքուայ, Արցախի եւ Գանձակի գաւառների վերայ, կողոպտում, կոտորում, կրակում բնակութիւնները եւ շատ հայեր գերելով փոխադրում իւրեանց երկիրներն (Եսայ. կաթ., եր. 23-26 եւ 35-40): 1796-1826 տեղի են ունենում երկրումս ռուս-պարսկական պատերազմներն, վերջապէս ռուսաց տիրապետութեան ներքեւ է ընկնում Ադուանից երկիրն: Այսչափ սպանութիւններն եւ գերեվարութիւնները դատարկում են խղճալի Ադուանից երկիրը. եւ հաւատափոխութիւններն նուազեցնում են ճռաքաղ եղածների թիւը: Աւերւում են եկեղեցիները. քայքայւում վանքերը եւ հետզհետէ իսպառ նուազում ուսումն ու ուսումնականութիւնը:

ԲԱՐԲԱՌՆԵՐ

Արցախի, Գարդմանի եւ Գանձակի ժողովուրդն պահպանած է իւր հայերէն պապենական լեզուն, զոր համեմատելով Մեծ-Սիւնեաց բարբառի հետ, որից ծնած է, չունի նշանաւոր տարբերութիւն: Բոլորովին անհետացած են կասպից, մասքթաց եւ ծովդէացւոց բարբառները: Եռանկիւնու մէջ բնակող ցեղերն այժմ գրեթէ մեծ մասամբ խօսում են լեկզիների բարբառով: Ճղբաց գաւառներում առհասարակ խօսում են որպէս թէ լփնաց բարբառով. որ կոչւում է լահիճերէն: Բայց մեզ յայտնի չէ, թէ տեղափոխուա՞ծ է ուրիշ տեղ ճղբաց ցեղն, թէ 'ի մի ձուլւած է լփնաց ցեղի հետ ինչպէս մահմեդական կրօնքով, նոյնպէս եւ լեզուով: Լփնաց-լահճաց եւ ուտիացւոց ցեղերն պահած են ցարդ իւրեանց սեպհական բարբառները: Հետաքրքիր բանասիրաց եւ հնդեւրոպական բարբառները իմաստասիրողաց մի ճաշակ տալու նպատակաւ մէջ ենք բերում լահճաց, լփնաց եւ ուտիացւոց բարբառներից հետեւեալը.

Հայերէն	Լահճերէն	Հայերէն	Լահճերէն	Հայերէն	Լահճերէն
Տարի	Սալ	ամիս	մահ	շաբաթ	հէւթա
օր	ռուզ	երկուշաբթի	դիւշաբթի	երեքշաբթի	սաշամբի
չորեքշաբթի	չարշամբի	հինգշաբթի	ֆէնջշամբի	ուրբաթ	առնա
շաբաթ	շամբի	կիւրակէ	քրաքի	հաց	նուն
ջուր	օ կամ ով	կրակ	աթաշ	մարդ	աղամին
կին	ղէն կամ զէան	տղայ	քուբ	աղջիկ	քիլա
հարսն	արուս	փեսայ	եղնէ	ղլուխ	սէար
մազ	մու	ճակատ	փիշնի	յօնք	բիւրգ
ականջ	ղուշ	աչք	չիմ	երես	ռու
քիթ	վինի	ինքն	խիշդանի	իւրեանք	խիշդանիւն
խեղճ	խեղճ	գնալ	ռաւթան	դալ	իմարան
խաղալ	վազիսղէն	սրբել	բուրուֆ	սպանել	քիւշդէն
ինձ համար	բէրը մէն	քեզ համար	բէրը թըն	նորա համար	ուրա բէրի
մօտ	նէղիկ	հեռի	բուդրուբ	ինչպէս	չը թարզ
այսպէս	իւթովրիւն	այդպէս	հէաչիքը	այսօր	իմրուզ
վաղն	սարահ	ամէն օր	յարուզ	շուտ	ղու

1 Աբր. Կրետ., եր. 58:

Հայերէն	Լահճերէն	Հայերէն	Լահճերէն	Հայերէն	Լահճերէն
ուշ	դիր	անցեալ տարի	կիւրիւշտէլ սալ	ես	մէն
դու	թիւ	նա	ու	մենք	իմուն
դուք	իշմուն	նորա	ուհա	ափսո՜ս	հայի՜ֆ
վա՛յ	վա՛յ[1]				

Հայերէն	Ուտիերէն	Հայերէն	Ուտիերէն	Հայերէն	Ուտիերէն
Աստուած	Ռիխաֆուխ	հրեշտակ	ֆարշտա	արքայութիւն	ջաննադ
երկինք	գեոգ	արեգակն	ըէղ	լուսին	խաշ
աստղք	խարուն	ամպ	լուլութ	անձրեւ	ադալա
եղեամն	ղռով	ձիւն	իժ	կարկուտ	թէադար
որոտումն	գիւռուփսուն	հողմ	մուշ	եղանակ	հաւա
ամառն	ղառիժոդիլ	ձմեռն	իժէն	աշուն	դայի մոդիլ
գարուն		դար	բաճառուէն	տարի	ուսէն
ամիս	խաշ		(100 տարի)	օր	դի
կէսօր	բիլադար	երկուշաբթի	բաշամաթ	երեքշաբթի	խիրշամաթ
չորեքշաբթի	բիրշամաթ	հինգշաբթի	խօշամաթ	ուրբաթ	փարասբի
շաբաթ	շամաթ	կիւրակէ	բէինդ	հայր	բարա
մայր	նանա	եղբայր	վիչի	քոյր	խունչի
հօրեղբայր	բարավիչի	մօրեղբայր	դայի	հօրեղբօրորդի	միրաս, ամիկունդար
մօրեղբօրորդի	դայունդար	եղբօրորդի	վիչէդար	քեռորդի	խունչէդար
պապ	քալբարա	տատ	քալնանա	հարսն	բին
եղբայրակին	վիչէրին	ազգական	ղովում	մարդ	ադամար
կին	չբուխ, ճուխ	տղայ	ղար	աղջիկ	խինար
մանուկ	այյել	երիտասարդ	ջայիլ	ծերունի	ահիլ
պառաւ	ղօջա	ծով	դարիա	գետ	էուխ
առու	արխ	ալբիւր	օրէյին	ջուր	խէ
լիճ	գեոլ	փոքրիկ	կիծի[2]	վրան	չադիր
հովիւ	չօրան	դոմէշ	քեալ	գոմշակով	գեամիւշ
մողի	գեատակ	կով	չուր	եզն	ուս
որթ	մողի	ոչխար	էղէլ	խոյ	ղօչ
բուրդ	խա	կաթն	մուճանաղ	մածուն	նակղէլ
սեր	մուճանաղնաղօ	պանիր	ղուսմէ	իւղ	ճային
խնոցի	խնոցի	կաթսայ	լէվէտ	արօր	խիշ
լուծ	բօյնդրուղ	սամի	սամի	սամէտ	սամէտ
կորի	կորի	սերմն	ցիլ	ցորեան	արում
կորեակ	տայինա	բրինձ	բրինձ	կալ	էճ
աշան	հաշան	եղոլի	եարա	հոսելի	չալանգեօղ
ցախաւել	մուգուլ	շատարար	շատարա	ամբար	համբար
ալիւր	խարի	հաց	շում	դաթայ	բիշի
տանձի	արրախոդ	խնձորի	էշնախոդ	շագանակի	ծարուլլախոդ
սերկեւիլի	փուշիննախոդ	նռնենի	ալամնախոդ	արքայակաղնի	ուղնախոդ
դամոնի	ղամբուլ	կեռասի	խայնախոդ	սալորի	ղօշնախոդ
հոնի	զոկղալախոդ	թզենի	թոխաննախոդ	որթենի	ճապ
գգիր	գիղիր	1	սա	2	պա
3	խիր	4	բիպ	5	խօ
6	իւղ	7	վուղ	8	մուղ

1 Այս բարբառով են խօսում լփնիներից հայադաւան մնացած Քիլվար գիւղի ժողովուրդն, որ Ղուբայի գաւառումն, եւ այն գաղթական լփնացի հայերն, որք Ջուբովի ժամանակ Ղուբայի գաւառիցս տեղափոխուած են Ռուսաստան եւ բնակում են այժմ Մոզդոկի Ղուրա եւ Մաջար եւ Ղզլարի Սարաֆան գիւղերում: Էա փափուկ եւ միավանկ հնչելու է ընթերցանութեան ժամանակ:

2 Արցախեցիք հնչում են պիծի:

Հայերէն	Ուտիերէն	Հայերէն	Ուտիերէն	Հայերէն	Ուտիերէն
9	վույ	10	վիծ	11	սածէ
12	պածէ	13	խիրէձէ	14	րիպէձէ
15	խօձէ	16	ուղէձէ	17	վուղէձէ
18	մուղէձէ	19	վույէձէ	20	դա
30	սաղովիծ	40	պաղօ	50	պաղովիծ
60	խիրխօ	70	խիրխովիծ	80	
90	բիբխօ	100	բաճ	1,000	հազար
10,000	վիծ հազար	100,000	բաճ հազար	1,000,000	միլիոն
ոմանք	սաէմօտ	ամեներեան	բիւթիւն	ես	դու
դու	ուն	նա	շէնօ	մենք	նան
դուք	էֆան	նորա	շէնօր	իմ	բէզի
քո	վի	նորա	շէտա	մեր	բէշի
ձեր	էֆի	նոցա	շէտաղօ	ինքն	իզէն
իւր	իզ	այս	մէնօ	այդ	շէնօ
այն	քանօ	ամառանոց	էյլաղ	ձմեռանոց	ղշլաղ
լեռ	բուրուխ	փարախ	ագլ	մակաղատեղ	մէագեալ
փայտ	ուշ	խոտ	օ	գլուխ	բուլ
բերան	ժոմոխ	աչք	փուլ	ականջ	խմուխ
երես	չո	բեղ, բեղեր	բիղուր	շեռն	ամ, բուլ
մէջք	ճապան	ոտք	թուռ, թուր	արածել	ուբեստեսուն
կթել	չախտեսուն	տարացնել	գամզեսուն	գնալ	թաղին
գալ	էղին	նստիլ	արցին, արցեսուն	խոսիլ	այդփեսուն
ասել	փեցուն	խմել	ուղէն	վերեւ	ալա
ներքեւ	օղա	կամաւ	քեֆէն	լոնի	գօրին
բայց	ամմա	եթէ	ագեար	եւ, ու	դա
կամ	եա	իբր թէ	սարի	մատ	իշա
հեռի	ախիլ	այստեղ	հա միա	այնտեղ	գի ա
շատ	կէօլէօ	սակաւ	կիձի	լաւ	շէլ
վատ	փիս	հողի	էլմուխ	մարմին	լաշակ
միտք	հալզ	սիրտ	ուկ	աւազակ	արազակ
յունվար	յունվար	փետր.	փետր.	մարտ	մարտ
ապրիլ	ապրիլ	շուտ	ուսին	ուշ	ճայի
այս կողմն	մաղա-մէչօ	այդ կողմն	քա չօ	ե՛կ այստեղ	մի էքի՛
կերակուր բե՛ր	ու քալաշէ էչա				

Տան տէրն տեղեկութիւն չունի:
Կօժին կոնջողօ էգալ թէ դու ապա[1] *:*

1 Թէեւ մեծ ճեղութեամբ հաւաքեցինք այդ բառերը, այսու ամենայնիւ այն ձայների իսկականն չէ, ինչպէս արտասանում են նոքա, այլ մերձաւորը: Որպէս գրած է Խորենացին (Գ. գիրք, ԾԴ. գլ.) «կոկորդախօս, աղխազուր, խժական, խեցբեկագոյն» է այս բարբառն, հետեւապէս եւ դժուարագրելի: Որքան հնար եղաւ, որքան կարողացանք, զգուշութեամբ աշխատեցինք նոյնութեամբ պատկերացնել այստեղ սոյն լեզուին յատուկ եղած ձայները, սակայն խոստովանում ենք, որ անհնարին է իսկութեամբ պատկերացնել:

ՓՈՓՈԽՄՈՒՆՔ

Այսչափ քաղաքական եւ կրօնական փոփոխութիւններն յառաջ են բերում Աղուանից երկրում մեծամեծ փոփոխութիւններ: Երկար դարերի հոլովումն, տիրող կառավարութեանց փոփոխութիւններն եւ հնչիւնների տարբեր ձայներն եւ այլ եւ այլ պատմագրաց գրիչներն հետզհետէ գրոշմում են միեւնոյն տեղանուան վերայ տարբեր անուններ: Օրինակ գարգարացւոց բնակութեան տեղին, որ սկզբում կոչուած էր Գարգար[1]*, հետզհետէ ընդունում է Արցախ*[2]*, Փոքր-Սիւնիք*[3] *Խաչենք, եւ Ղարաբաղ*[4] *անունները:*

Ահա այսպիսի փոփոխութեանց ենթարկուած են նաեւ բոլոր գաւառների, քաղաքների, աւանների եւ գետերի անուններն եւս: Մեր յարգելի բանասէրները եւ ազնիւ ընթերցողները ծանօթացնելու համար այսչափ բաղմափոփոխ տեղանուանց հետ, պարտք համարեցինք կրել տաժանելի, բայց համբերատար նեղութիւն եւ դասաւորել այստեղ գաւառների եւ քաղաքների նախկին, փոփոխեալ եւ այժմեան անունները:

Բայց նախ հարկ է կանխաւ պարզել մի խնդիր, որն ո՛չ միայն ցարդ մնացած է մթութեան մէջ, այլ եւ պատճառած է մեծ շփոթութիւն: Որպէսզի մեր յարգելի բանասէրք եւ ընթերցողք աղատ լինին շփոթութիւնից, կարեւոր համարեցինք նախ բացատրել շփոթութեան շարժառիթները եւ ապա դասաւորել գաւառների փոփոխեալ անունները: Ահա շփոթութեան պատճառը: Աղուանից երկրում կայ երկու Գարգման գաւառ: Ինչպէս միւս պատմաբանները, նոյնպէս եւ Կաղանկատուացին եւ շարայարողն անխտիր գործ դրած են Գարգման գաւառ անունը առանց զանազանելու մէկը միւսից: Որովհետեւ երկու գաւառներս հեռի են իրարից երեք աւուր ճանապարհաւ, որովհետեւ երկոցունց մէջ եւս նստած են ջոկ-ջոկ ցեղերից իշխաններ, եւ որովհետեւ երկոցունց մէջ եւս կատարուած են պատմական գործեր եւ իրողութիւններ, վասն որոյ պարտք համարեցինք որոշակի մատնանիշ անել տեղերը: Արդէն յայտնի է Արցախի Գարգման գաւառի տեղին, որի մէջ միշտ գահակալած են հայազուն իշխաններ, ինչպէս տեսանք Դ. դարի իշխանաց շարքում «Գարգմանայ տէր»-ը:

Այժմ ծանօթանանք միւս Գարգման գաւառին, որ մին է Շամախու գաւառներից եւ գտնւում է սոյն քաղաքի արեւմտեան կողմում եւ որն այժմ կոչւում է Գիրգիման: Գարգմանիս նախկին իշխաններն էին Առանի իշխանական տոհմի յետագաներն, որք յորջորջւում էին Առանձահիկ կամ Եռանշահիկ տիտղոսով: Գրում է Կաղանկատուացին, թէ Զ. դարում Սասանեան «Միհրանն այն ազգային Խոսրովու (արքային պարսից)... առեալ երդս իբրեւ երեսուն հազար, անցանէ 'ի կողմն Աղուանից... կամէր մտանել 'ի Խազիրս եւ յաւելուլ 'ի թշնամիսն (Խոսրովու): Նա (Խոսրով) իսկ եւ իսկ առնէ զիր... զկնի Միհրանայ, թէ՝ «Եղբա՛յր իմ եւ հարազատ, մի՛ լիցի քեզ հեռանալ յինէն թշնամութեամբ... ուր հրովարտակդ իմ հասանէ, երկիրդ այդ քեզ լիցի 'ի բնակութիւն...»: Եւ ի գալ հրովարտակին պատահի նմա ի սարոտն գաւառին Գարգմանայ, զոր առեալ ընթերցաւ եւ լի եղեւ ուրախութեամբ: Եւ տեսեալ զբարեխառնութիւն աշխարհին՝ հաճեցաւ 'ի նմա լինել բնաբար. եւ շինեաց յիւր անուն քաղաք[5] *մի՝ կոչելով զնա Միհրաւան: Իսկ 'ի գալ գարնանային աւուրցն ելանէ ի վեր կոյս Գարգման գաւառին, դաւով առ ինքն կոչէ 'ի գլխաւորացն արս երկոտասան, սրով բառնայ զնոսա եւ տիրէ աշխարհին... Լինի սորա (Միհրանայ) որդի Արմայէլ, որ ծնաւ զՎարդ, Վարդ ծնաւ զՔաջն-Վարդան, որ շինեաց զբերդն Գարգմանայ զերիս ամս, եւ 'ի ննեգելն 'ի սիրտ իւր՝ զնախնական ազգս Հայկազնեայց զԵռանշահիկս... կոչէ*

1 Ցարդ եւս Գարգար է կոչւում այն գետակն, որ սկիզբն է առնում Զառիստ գաւառի լեռներից, բաժանում Խաչեն գաւառը Վարանդայից, հոսում գարգարացւոց դաշտի միջով եւ խառնւում Կուր գետին:
2 Խոր., Գ. գիրք., Գ. գլ.: Ասող., եր. 65 եւն:
3 Մով. Կաղ., եր. 272: Ասող., եր. 107 եւն:
4 Առաջին անգամ պատահում ենք Ղարաբաղ անուան, որը գործածած է Թովմ. Մեծոբ. (եր. 20) 1388 թուին:
5 Այժմ քաղաքատեղին կոչւում է Աղ-սու, որ գտնւում է Շամախուց 36 վերստ ներքեւ սարի ստորոտում: Թէեւ գիւղ է Աղ-սուն, սակայն դեռ երեւում են քաղաքի պարսպի մնացորդ հետքերն:

որպէս 'ի ճաշ... եւ 'ի ճաշի անդ արեամբ նոցա արար գլխատումն արանց վանքանից... Այսպէս եղեւ նոցայն տիրել Աղուանից: Նաեւ (Քաջն Վարդան) զվայրաստան ազգն Կովկասու հնազանդեցոյց ինքեան» (Մով. Կաղ., եր. 135-136):

Այժմ պարզուած է մթութիւնն: Այսուհետեւ գործ կածենք Շամախու Գարդման եւ Արցախի Գարդման տեղանունը, որպէսզի այլեւս տեղի չտայ տարակուսութեան, շփոթութեան եւ երկմտութեան:

Հաւանական է երեւում մեզ, որ աճած լինին Արցախի Գարդմանի բնակիչներն, որոց մի մասն՝ տեղի նեղութեան պատճառաւ, տեղափոխուած եւ իւր նախկին գաւառի անունը դրօշմած լինի Շամախու Գարդմանիս վերայ: Նմանօրինակ դէպքեր անպակաս եղած են ամէն երկիրներում, որոց մասին աւելորդ ենք համարում բերել օրինակներ:

Աղուանից բուն գաւառներն իւրեանց բնական դիրքով բաժանուած են երեք մասի՝ ստորին, միջին եւ վերին: Անհրաժեշտ է հետեւել բնութեան սոյն բաժանմանց:

Ա. Ստորին գաւառներն, որք ամբողջապէս դաշտային են, ընկած են Կուր գետի ձախ ափերի եւ Բօզ-դաղ լեռնաշղթայի մէջ՝ Կասպից ծովեզերքի կողմից մինչեւ Քանդակ գիւղը:

Բ. Միջին գաւառներն ընկած են Բօզ-դաղի վերայ՝ սարիս շարունակութեան դիրքով:

Գ. Վերին գաւառներն ընկած են Բօզ-դաղի եւ Կովկասեան ամենաբարձր լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան մէջ՝ Շամախու արեւելեան կողմից մինչեւ Ալազան:

ՍՏՈՐԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ

Ա. գաւառն, որ ընկած է Փիր-Սհաթ եւ Աղ-սու գետակների, դաշտաբերանի եւ Կուր գետի մէջ, ստացած է Հնջար[1], Համբասի[2], Հնճարի[3] անուններըը, այժմ՝ Ղաշունի գաւառ:

Բ. գաւառն, որ ընկած է Աղ-սու եւ Կոկիսոն գետակների, դաշտաբերանի եւ Կուր գետի մէջ, ստացած է Քաղա[4], Քաղադաշտ[5], Քաղանատ[6] եւ Շրուան[7] անուններըը, այժմ՝ Բարկիւշատ:

Գ. գաւառն, որ ընկած է Կոկիսոն գետակի, Բօզ-դաղի հարաւահայեաց լանջերի եւ Կուր գետի մէջ, ստացած է Հաբանդ[8], Հաբանք[9], Աղբերդ[10], Աղ-դաշ, Արաշ անուններըը, այժմ՝ Արաշի գաւառ:

ՎԵՐԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ

Դ. գաւառն, որ ընկած է Աղ-սու եւ Սուղայիդ կամ Սուքման գետակների, դաշտաբերանի եւ Կովկաս լեռնաշղթայի գագաթնագծի հարաւահայեաց լանջերի մէջ, ստացած է Ոստանի[11], Ոստան[12], Հաշու[13], Շամախի անուններըը, այժմ՝ Կապրիստանի գաւառ:

Ե. գաւառն, որ ընկած է Աղ-սու եւ Գիրդիման գետակների, դաշտաբերանի եւ Բաքա-դաղ լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերի մէջ, ստացած է Մարզպանեան[1], Մարձպանեան[2], Գարդման[3] եւ Դասան[4] անուններըը, այժմ՝ Գիրդիման: Ահա այս է Շամախու Գարդման գաւառն, որ կոչւում է և՛ Լահիճ գաւառ, և՛ Գիրդիման գաւառ:

Զ. գաւառն, որ ընկած է Գարդման կամ Գիրդիման եւ Կոկիսոն կամ Գեօգ-չայ գետակների, դաշտաբերանի եւ Կովկասեան լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերի մէջ, ստացած է Բեխ[5], Բեթ[6], Կոկիսոն[7] անուններըը, այժմ՝ Գեօգչայի գաւառ:

Է. գաւառն, որ ընկած է Կոկիսոն եւ Օրաբան գետակների, Բօզ-դաղի հիւսիսահայեաց եւ Կովկաս սարի հարաւահայեաց լանջերի մէջ, Զարզուղի դաշտակի վերայ, ստացած է Գեղաւու[8], Գեղաուէ[9], Կապադակ[10] անուններըը, այժմ՝ Ղապալա: Գաւառիս Կոկիսոն գետակի ձախ ափից սկսուած տեղն լեզուակաձեւ է, մէջտեղն՝ գոգաւոր եւ լայն, իսկ Օրաբան գետակին մօտեցած տեղն՝ նեղ:

Ը. գաւառն, որ ընկած է Օրաբան, Արջկան եւ Կախաւան[11] գետակների, Կովկասեան լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերի եւ Զարզուղի հարաւային դաշտաբերանի մէջ, ստացած է Շաքէ[12], Շաքէ Ոստան[13], Շաքի[14] անուններըը, այժմ՝ Նուխի:

Թ. գաւառն, որ ընկած է Կախաւան եւ Զաքաթալի արեւմտեան կողմի գետակների, Դարբանդեան պարսպի շարունակութեան եւ Բաղասական դաշտաբերանի մէջ, ստացած է Կամբեխճան[15], Կամբէճան[16], Կապիճան[17], Ճար[18] եւ Ճառ անուններըը, այժմ՝ Զաքաթալա:

Ժ. գաւառն, որ ընկած է Ճառի սահմանի, պարսպի շարունակութեան, դաշտաբերանի եւ Ալազան գետակի մէջ, ստացած է Բաղասական[19] գաւառ, Բաղասական դաշտ[20], Ճարո-Բելաքան անուններըը, այժմ՝ Բալաքեան:

ՄԻՋԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ

ԺԱ. գաւառն, որ ընկած է Բօզ-դաղի հիւսիսային եւ հարաւային շղթաների մէջ, Կոկիսոն գետակից սկսեալ եւ մինչեւ Արջկան գետակն երկարացեալ մի գեղեցիկ դաշտակի վերայ, ստա-

---

1 Ղեւոնդ , Պատ., եր. 132:
2 Խոր., Աշխարհ., եր. 606 եւ Ձեռագիր.:
3 Մով. Կաղ., եր. 170:
4 Ղեւոնդ, նոյն եր.:
5 Խոր., Աշխարհ., նոյն եր.:
6 Մով. Կաղ., եր. 94:
7 Երկու գաւառներս միասին կոչուած է Շրուան, Կիր., եր. 114, Վարդ., Աշխարհ., Ես. Կաթ., եր. 26:
8 Ղեւոնդ, նոյն եր.:
9 Խոր., Աշխարհ., նոյն եր.:
10 Մով. Կաղ., եր. 244: Գաւառիս վերնամասն նշդարաձեւ մտած է Կուր գետի եւ Բօզ-դաղի մէջ:
11 Ղեւոնդ, Պատ., եր. 132:
12 Խոր., Աշխարհ., եր. 606:
13 Մով. Կաղ., եր. 65:

1 Ղեւոնդ, նոյն եր.: Կոչւում է Մարզպանեան, որովհետեւ գաւառումս էին բնակում Աղուանից իշխող Միհրանեան մեծ իշխաններն, որք մարզպան էին կոչւում պարսկերէն:
2 Խոր., նոյն եր.: Ուղիղ է մարզպան, ձեռագրի սխալ՝ մարձպան:
3 Մով. Կաղ., եր. 135-136: Վարդ. Բարձ., եր. 135:
4 Ես. Կաթ., եր. 23:
5 Ղեւոնդ եւ Խոր., նոյն երեսներ:
6 Մով. Կաղ., եր. 65:
7 Վարդ., Աշխարհ. (ձեռագիր):
8 Ղեւոնդ, եր. 132.:
9 Խոր., Աշխարհ. եր. 606: Աղուանից բոլոր գաւառներից ամենագեղեցիկն է այս գաւառն, որ նշանաւոր է իւր բարեխառն օդով եւ կլիմայով, առատ ջրերով, աղբիւրներով եւ գետակներով, մանաւանդ դրախտանման պտղալի պարտէզներով եւ ազնիւ մետաքսով: Թերեւս այս առանձնայատկութեանց պատճառաւ կոչուած է Գեղաւու:
10 Մով. Կաղ., եր. 65 եւ 184:
11 Ես. Կաթ., եր. 23 անուանում է Ղախ, իսկ գետակը՝ Ինիսելու:
12 Ղեւոնդ, Պատ., եր. 132:
13 Խոր., նոյն եր.:
14 Մով. Կաղ., եր. 94 եւ 170: Հարկ է յայտնել, որ Շաքի քաղաքի գոյութիւնից առաջ կոչուած էր Ուտի գաւառ (Մով. Կաղ., 170-171):
15 Ղեւոնդ, նոյն եր.:
16 Խոր., նոյն եր.:
17 Մով. Կաղ., եր. 140 եւ 144:
18 Ես. Կաթ., եր. 23:
19 Մով. Կաղ., եր. 94:
20 Խոր. եւ Ղեւոնդ, նոյն երեսներ:

ցած է Խոզմազ [1], Հոզմազ[2], Հոզի[3] եւ Դաշտակ[4] անուններ. այժմ դաշտակիս միջի մասն կոչուում է Սարուջա: Բայց այժմ այս գաւառը միացրած են Արաշի գաւառի հետ:

ԺԲ. գաւառն, որ ընկած է նոյնպէս Բօզ-դաղի վերայ. Արջկան եւ Ալապան գեւտակների. Զարդունի դաշտակի եւ Աղուանից դաշտաբերանի մէջ. կոչուած է Խենի[5]:

ՓԱՅՏԱԿԱՐԱՆԻ ԳԱՒԱՌՆԵՐ

Գրած է Խորենացին (եր. 609-610) «Փայտակարան յելից կայ Ուտիոյ առ Երասխաւ. գաւառս ունի երկոտասան, զոր այժմ Ատրպատական ունի. Հրաքոտպերոյ, Վարդանակերտ. Եւթնփորակեան բագինք, Ռոտիբաղա, Բաղանոտ, Առոսպիժան, Հանի. Ամրի, Բագաւան. Սպանդարանպերոյ, Որմզդպերոյ, Ալեւան: Լինի 'ի նմա բամբակ անրաւ եւ գարի ինքնարոյս»: Հարկ է յայտնել, որ մի քանի ձեռագրերում գրուած են. «Հրաքոտ Պերոյ, Վարդանակերտ. Եւթնփորակեան բագինք, Ովտիբաղա, Բաղանոստ, Բուռոս. Պիճանհանի. Ամրշի. Բագաւան. Սպանդարան Եպերոյ, Որմզդեպերոյ, Ալաւան»: Վերջին հաշուոյս լինում է 13 գաւառ: Այս սխալն իսկոյն երեւում է Սպանդարան, Եպերոյ անջատեալ անունների մէջ. որ է սխալ գրչագրի. ուղղագրութիւնն է Սպանդարան-Պերոյ կամ Սպանդարանէպերոյ. ինչպէս է Որմզդէպերոյն: Ուրեմն այս հաշուով վերստին լինում է 12 գաւառ: Փայտակարան էր կոչուում ամբողջ նահանգն Փայտակարան քաղաքի անուամբ: Կուր եւ Երասխ միախառնուելուց յետոյ՝ բաժանուում են վերստին եւ այնպէս թափուում ծովը: Երկու գետերի եւ ծովի մէջ ընկած չորն ձեւացած է եռանկիւնի կըզեակ: Ահա կղզեկիս վերայ եղած է Փայտակարան քաղաքն. որ այժմ կոչուում է Սալեան:

Փայտակարանի այն գաւառներն, որք ընկած էին Երասխ գետի աջ ափերի վերայ մինչեւ Կասպից ծովն, ինչպէս են Հրաքոտպերոյ, Առոսպիժան, Սպանդարանպերոյ, Որմզդպերոյ, Աթշի եւ Պիժանհանի[6] (Ատր-Պեջան), արտաքոյ են Աղուանից երկրի սահմանից. հետեւապէս եւ մեր հետախուզութիւնից: Մենք միայն կը խօսենք այն գաւառների մասին. որք գտնուում են Աղուանից հողի վերայ:

Մնացեալ վեց գաւառներից որոշակի յայտնի են մեզ Վարդանակերտն. որ այժմ կոչուում է Ջաւատ, Փայտակարանն, որ անուանուում է Սալեան. Բագաւանն՝ Բագու. Եւթնփորակեան բագինն՝ Սուրախանի, Ալեւանն՝ Աւշառան:

ՉՈՂԱ Ա ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԱՂՈՒԱՆԻՑ

Թէպէտ Դարբանդն է Աղուանից երկրի նախադուռն եւ հիւսիսային սահմանի ծայրն, որից հարկ իսկ էր սկսել, սակայն կարեւոր համարեցինք նախադասել Զողան. վասն զի քաղաքիս անուամբ ճանաչուած է ի հնումն Դարբանդ բերդաքաղաքն. օր.՝ Դուռն-Ճորայ. Կապան-Ճորայ[7], Պահակ-Ճորայ[8], քաղաք-Զողայ, Դուռն-Զողայ[9] եւ այլն:

1 Ղեւոնդ, նոյն եր.:
2 Խոր., նոյն եր.:
3 Մով. Կաղ., եր. 241:
4 Եւ. Կաթ., եր. 241:
5 Գաւառիս անունը յիշում են միայն Ղեւոնդ եւ Խորենացին նոյն երեսներում, բայց Կաղանկատուացին չէ յիշում: Բոլոր գաւառների մէջ անպիտանագոյնն է Խենի գաւառս, վասն զի շատ տեղերն զուրկ են բուսականութիւնից եւ ջրից:
6 Գաւառներիս անունները տեսնել ցանկացողն կարող է գտնել Ղեւոնդ պատմագրի եր. 101:
7 Խոր., Բ. գիրք, ԿԵ. գլ.:
8 Եղիշէ, եր. 19 եւ 178 եւն:
9 Մով. Կաղ., եր. 8 եւ 91 եւն:

Դարբանդից մօտ 1 1/2 ժամ ճանապարհ դէպի հարաւ, Վատնեան դաշտի վերայ, եղած է Աղուանից Ա. մայրաքաղաքն Զողայ մի գետակ ի աջ եղերքում: Այժմ քաղաքիս տեղը մի շէն է Մոլլա-Խալիլ անուամբ, որ բաղկացած է 6 մահմեդական տներից[1]: Այսու ամենայնիւ բոլորովին անհետացած չեն քաղաքի նշանների հետքերը: Մոլլա-Խալիլից մինչեւ Հրէից աւանի գլուխն, 3 1/2 վերստ տարածութեան վերայ նոյն գետակի աջ եղերքով, երեւում են տնատեղերի բակերն եւ շինութեանց հետքերը. բայց ծածկուած խիտ անտառներով եւ թանձրամած մացառուտներով: Երեւի թէ քաղաքս ունեցած չէ պարիսպ Դարբանդի հրաշալի բերդաքաղաքի մօտաւորութեան պատճառաւ: Հրէից աւանն. որ աւելի է 150 ծխից, շատ տուներ շինուած են աւերակիս քարերով. նմանապէս եւ մերձակայ տաճկաբնակ գիւղերի տներից շատերն:

Ա. դարում Եղիշ Առաքելն քաղաքիցս սկսեց իւր քարոզութիւնը. «Մտանէ 'ի Մազքութս (Եղիշա)... եւ սկիզբն առնէ քարոզութեան 'ի Զողայ» (Մով. Կաղ., եր. 8): Քաղաքիս մօտ՝ գետակի ձախ ափում, նահատակուած է ս. Լուսաւորչի թոռն եւ Աղուանից Ա. կաթուղիկոսն Գրիգորիս՝ Մազքթաց Սանեսան թագաւորի հրամանով (Մով. Կաղ., եր. 30): Նահատակութեան տեղի՝ հին մատրան տեղում բարեպաշտուհի եւ ազնուափայլ տիկին ոմն ի հրամանէ շինել տուած է սրբատաշ քարով եւ կրաշաղախ ցեխով մի գեղեցիկ եւ հոյակապ մատուռ, որի գլուխը ծածկել տուած է հաստ եւ կանաչաներկ թիթեղով: Մատուռս ունի մի փոքրիկ, բայց գեղեցիկ խորան, երկու խորհրդանոցներ, վէմ եւ օծեալ սեղան, վայելուչ բեմ, երկաթեայ ճաղերով անջատուած դասեր եւ հինգ լուսամուտ: Խաչաձեւ են եւ փորուած միակտուր քարերից արեւելեան եւ արեւմտեան լուսամուտներն. իսկ նեղ եւ ե՛րկար են երկու հարաւային եւ մի հիւսիսային լուսամուտներն: Վերնակամարից կախուած է մի փոքրիկ վայելուչ եւ բիւրեղազարդ ջահ ժողովրդատեղի եւ առնի մէջտեղում:

Մատրանս դրան ճակատակալ քարն (արեւմտեան կողմում) կրում է հետեւեալ արձանագրութիւնը.

«Ես Տիկին Եղիսաբէթ Կաճկաճեանց կառուցի մատուռս 'ի յիշատակ իմ եւ ամուսնոյս: Տէր յիշէ մեզ, յորժամ բանք սպառին եւ գործք թագաւորեն, 'ի 1879 թ. Ք. (Թուին Քրիստոսի)»:

Օրհնեա՛լ լինի Տիկնոջ յիշատակն Սիօնի մէջ:

Մատրանս հարաւային կողմում կայ մի տապանաքար, որի վերայ փորագրուած է.

«Այս է Սրբին ծառայող Խաչատուր Աղսախկալովին (տապանն) 1857 թ.»:

Հանգուցեալս, ըստ վկայութեան բազմաց, մօտ 40 տարի սպասաւորած է Ս. Գրիգորիսի մատրանն եւ այս իսկ տեղում վախճանուած ու թաղուած:

Մեծ ուխտատեղի է մատուռս, ուր գալիս են ամէն տարի ուխտի մեծ բազմութիւն ո՛չ միայն հայերից. այլ եւ լեկզիներից, ձիաներից եւ սիւննուներից: Տարին երկու անգամ պատարագ է լինում մատրանս մէջ:

Որ այս տեղում եղած է Զորայ կամ Զողայ կամ Ճողայ եւ կամ Ճորայ թագաւորանիստ քաղաքն եւ ս. Գրիգորիսի նահատակութեան տեղին, վկայում է ականատես Կաղանկատուացին գրելով. (Իսրայէլ եպիսկոպոս եւ ընկերք իւր) «երթեալ 'ի վաղնջուց 'ի թագաւորանիստն, հասանէին կայանսն՝ յայն տեղին, ուր վկայեաց սուրբն Գրիգորիս կաթուղիկոսն Աղուանից: Անտի յետ աւուրց ինչ հասանէին 'ի Դուռն Զողայ»:

Մինչեւ Փրկչ. 551 թուական Աղուանից կաթողիկոսները նստում էին երբեմն այստեղ եւ երբեմն Դարբանդում, բայց «Յետ այսորիկ գերեցաւ 'ի Խազրաց աշխարհս Աղուանից. հրկէզ եղեն եկեղեցիք եւ կտակարանք... յորժամ սկիզբն հայ թուականին եղեւ. 'ի սոյն ամի փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղուանից 'ի Զողայ քաղաքէն 'ի մայրաքաղաքն Պարտաւ վասն հինահալած արշաւանաց թշնամեաց Խաչին Քրիստոսի» (Մով. Կաղ., եր. 91):

1 Ս. եպս. Ջալ.՝ «տունք աւելի քան զհարիւր»:

ՀԱՆԳՍՏԱՐԱՆ ՉՈՂԱՅ ՔԱՂԱՔԻ

Հանգստարանս այժմ ճանաչուում է Պողոս-Բուլաղ անուամբ: Հայանուն կրող աղբիւրս գըտնուում է յիշեալ Հրէայ աւանից վերեւ եւ Ղուլլար կայարանից եւ մահմեդականարնակ գիւղից ներքեւ, Վատնեան դաշտի վերայ: Մի ծերունազարդ կաղնի ծառի արմատների միջից բղխում է բազկաչափ հաստութեամբ ցուրտ, քաղցրահամ եւ վճիտ աղբիւր: Աղբերականս աջ ու ձախ կողմերից, մի-մի քայլ հեռի, բղխում են երկու բարակ աղբիւրներ եւս, նոյնպէս երկու ծառերի տակից: Ահա այս է Պողոս-Բուլաղն, որոց վերայ բուսած տերեւախիտ ծառերի թանձր հովանիներն փայլ են տալիս աղբերականց վերայ եղած հարթին, որ իւր գալարագեղ եւ երփներանգ ծաղկունքներով, գոգցես ներկայացնում էր մի ընութենատեղծ եւ միապագաղ պորտ:

Պողոս-Բուլաղի աջ ու ձախ կողմերում կան լայնատարած հանգստարաններ՝ զարդարուած հայերէն արձանագրութիւններով: Տապանաքարերից շատերը կլանած է երկիրն եւ անյայտացրած իւր ծոցում: Շիրմաքարերից շատերը ծածկած եւ անյայտացրած են վաղեմի անտառն եւ թանձրամած ծմակն եւ մացառուտն: Տեղ-տեղ երկճղի կաղնի ծառերն փոքրութիւնից բուսնելով տապանաքարերի երկու կողմերից եւ հետզհետէ մեծանալով, մարդաչափ եւ աւելի բարձրացրած են գետնից մի քանի քարեր: Իսկ տապանաքարերից ամենամեծ մասը տարած են շրջաբնակ մահմեդականներն, շինած բնակարաններ եւ շարած արքունի ճանապարհի կամուրջների վերայ՝ Դարբանդի մօտերքից մինչեւ Մեծ-Սամուր գետն, մօտ 35 վերստ տեղ: Այդ ամէնը տեսանք մեր իսկ աչօք եւ շատ ցաւեցանք:

Աղբերականց ձախ կողմում եղած են Աղուանից թագաւորների, կաթողիկոսների եւ թագաւորազունների գերեզմաններ: Շատերի վերայ շինուած են եղել յատուկ մատուռներ եւ քարուկիր հանգիստներ, ինչպէս յայտնի երեւում է նշաններից: Սրբատաշ քարերն անյայտացրած են մահմեդականաց անգութ ձեռներն. բայց հողերն գոնեա իրրեւ գորովագութ մայրեր՝ դեռ պահած են իւրեանց ծոցում մատրանց հիմքերը եւ գերեզմանների նշանները:

Իսկ աղբերականց աջ կողմում ամփոփուած են վարդապետաց, քահանայից եւ ժողովրդոց մարմիններն: Որպէսզի կարողանայինք ստուգիւ իմանալ, թէ ո՞ր թուականից մինչեւ որ թուականն ամփոփուած էին այստեղ հայեր, ամբողջ հինգ ժամ հաւաքագրեցինք արձանագրութիւնները: Ութն կացնաւոր մարդիկ եւ եօթն բահաւոր անձինք շարունակ կոտորում էին հարկ եղած տեղերի ծառերը եւ մացառները եւ փորելով հանում հողում անյայտացած տապանաքարերը: Մեր գտած արձանագրութիւններից երեւեցաւ, որ Հայոց Ի. թուականից մինչեւ ՌՄԽԴ. (571-1796 Փրկչ.) անընդհատ ամփոփուած են ննջեցեալներ: Այս մի հաստատ ապացոյց է, որ Աղուանից թագաւորական եւ կաթողիկոսական աթոռներն Զողայիցս Պարտաւ փոխադրուելուց յետոյ՝ Զողայաբնակ ժողովուրդն մնացած է իւր տեղում: Իսկ 1796-ին Դարբանդի եւ Ղուբայի քաղաքներում եւ գաւառներում բնակուող բոլոր հայերն ռուսաց Զուբով զօրավարի հետ գաղթում են Ռուսաստան եւ բնակութիւն հաստատելով՝ մնում այնտեղ:

Ի յարգանս ազնիւ բանասիրաց՝ մէջ ենք բերում մեր հաւաքագրած արձանագրութիւններից միայն հետեւեալը, որպէսզի ծանօթանան նաեւ ժամանակի անուններին:

«Պայեաթ	թվ. Հայոց Ի.»:
«Սավալան	թ. Հ. Լ.»:
«Վարդան	թ. Հ. Խ.»:
«Հասան	թ. Հ. Հ.»:
«Վախթանգ	թ. Հ. Ճ.»:
«Ըստակէս երէց	թ. Հ. ՃԾ.»:
«Տէր Մուքայէլ	թ. Հ. Մ.»:
«Նազար	թ. Հ. ՄԾ.»:
«Պետրոս վարդապետ	թ. Հ. Յ.»:
«Բուլբուլ տիրացու	թ. Հ. Ն.»:
«Կահան է	թ. Հ. Շ.»:
«Տրթադ է	թ. Հ. ՈԱ.»:
«Այս է տապան Նազարին	թ. Հ. ՉԺ.»:
«Այս է տապան Նշանգային (կնոջ գերեզ.)	թ. Հ. ՉՀ.»:
«Յիշատակ է առ Աստուած Առաքելիս (Խաչարձանի շուրջն)	թ. Հ. ՊԺԲ.»:
«Այս է հանգիստ Մկրտիչ աբեղային	թ. Հ. ՊԺԳ.»:
«Խոջա Ստեփան	թ. Հ. ՊՀԷ.»:
«Աւսալ»	
«Սուլթան»	
«Տէր Իսրայէլ յիշեցէք ՝ի Քրիստոս	թ. Հ. ՋԻ.»:
«Գորգի տապան է	թ. Հ. ՋՀԵ.»:
«Այս է տապան Ամիրջանին	թ. Հ. ՌՃԾ.» (տապանաքարիս երկարութիւնն է 10 թիզ):

«Այս է հանգիստ Օրտուխանին թ. Հ. ՌՃԾ.»: (Իսկ սորա վերայ կայ արեգակի եւ 4 ջրափարչի պատկեր):

«Այս է հանգիստ Թաթար-Խանին թ. Հ. ՌՃՀ.»:

«Սբ. խաչս յիշատակ է Պուճային»:

«Հանգիստ տէր Սարգսին» (անթուական):

«Այս է հանգիստ Պողոսին...» (ջնջուած է թուականն, գուցէ սորա անուամբ կոչուած է «Պողոս-Բուլաղ»):

Աղուանից կաթուղիկոսներին ուղղած նամակների երեսներին գրում էին «Աղուանից, Լբփնայ եւ Զորայ կաթուղիկոսի»: Ինչպէս տեսանք, վասն որոց հարկ է յիշեցնել, թէ «Զորայ» անուամբ հասկանում էին եւ եռանկիւնում բնակող ժողովուրդը, որք հայադաւան էին այն ժամանակ:

ԴԱՐԲԱՆԴ

Աղուանից երկրի նախագուռն է Դարբանդն, որ հիմնուած է Կովկասեան փոքր լեռնաշղթայից դէպի ծովն կախուած մի լեռնաբազկի վերայ, արեւել. 42 եւ հիւս. 66 աստիճանի վերայ:

Բերդաքաղաքս երկու միջնապատերով բաժանուած է եղել երեք մասի եւ միացած՝ երկու զուգահեռական պարիսպներով, որոց արեւմտեան ծայրերն նեղանալով հպած են վերնաբերդին, որ կոչւում է Նարին-Ղալա, իսկ արեւելեան ծայրերն միացած են եղել ծովի մէջ: Այսպէս ուրեմն Դարբանդն բաժանուած է եղել չորս մասի՝ ծովային բերդ, ստորին քաղաք, միջին քաղաք եւ վերին բերդ: Ա. ծովամասի համար գրած է Խորենացին. «աշտարակ ի ծովուն կացեալ» (եր. 605): Արաբացի Էդրէս անուն ոմն աշխարհագիր գրած է, թէ ծովի մէջ մտած մասն ներկայացնում էր մի ամուր նաւահանգիստ՝ նաւերի պաշտպանութեան համար: ԺԶ. դարում ճանապարհորդ ոմն Անդղիացի գրած է, թէ կէս մղոն (3 վերստաչափ) ծովի մէջ մտած էր պարիսպների շարունակութիւնն նոյն ամրութեամբ եւ ծովի մէջ միացած ահագին բուրգերով: Բայց այժմ բոլորովին քանդուած է այս մասն: Այսու ամենայնիւ տակաւին նշմարւում են ծովամասնեայ պարսպիս հետքերն նաւակով հետազօտած ժամանակ, վասն որոյ շոքենաւերն խիստ հեռի են կանգնում ծովեզերքից, որպէսզի չվնասուին պարիսպների հիմունքներին զարնուելով:

Բ. մասում, որ սկսուած է ծովեզերքից, բնակում են հայերն եւ ռուսներն: Մասումս են եւ վաճառանոցներն:

Գ. մասում բնակում են մահմեդականներն՝ Շիա եւ Սիւննիւ:

Դ. մասում, որ է Նարինղալան, բնակում են քաղաքապահ զինուորականներն իւրեանց մեծաւորներով միասին:

Բ. եւ Գ. մասերն ունեցած են 8 դռներ, որից 3-ն հիւսիսային պարսպից եւ 5-ն հարաւային պարսպից: Հիւսիսային դռներն ծովեզերքից սկսեալ Ա. անուանւում է Դաշ-Ղափու (Քարե-դուռն), Բ.-ն՝ Ղրելար-Ղափու (Քառասնից դուռն), Գ.-ն՝ Ջառչի-Ղափու (Մունետկի դուռն),

որք ցարդ մնում են կանգուն: Հարաւային պարսպի վերայ ծովեզերքից սկսեալ Դ-ն՝ Դուպարա-Ղափու (կրկնադուռն), Ե-ն՝ Ենի-Ղափու (Նոր-դուռն), Զ-ն՝ Օրթա-Ղափու (միջնադուռն), Է-ն՝ Բայեաթ-Ղափու (հին-դուռն), Ը-ն՝ Ղալա-Ղափու (բերդի դուռն): Ամբողջ մնում են հիւսիսային պարիսպն՝ ծովեզերքից սկսեալ, իւր 3 դռներով, մնում են եւ հարաւային 2 դուռն, որք են Բայեաթ-Ղափու եւ Ղալա-Ղափու: Բայց դռներալ Երմոլովի ժամանակ քանդուած են Բ. մասի միջնապատն եւ հարաւային պարիսպն իւր 3 դռներով: Բոլոր դռների ճակատակալ քարերն ունին արաբերէն եւ պարսկերէն լեզուներով արձանագրութիւններ:

Բոլոր բերդերի այժմեան շրջապատն է 5 վերստ, երկարութիւնն՝ 2-ից աւելի, լայնութիւնն՝ 1 վերստից պակաս, պարիսպների բարձրութիւնն՝ 4-5 սաժէն եւ հաստութիւնն՝ 1 սաժէն:

Աղուանից թագաւորական պալատն, կաթուղիկոսական վեհարանն եւ մայր եկեղեցին գըտնւում են Գ. մասում, կից միմեանց: Այժմ պարսիկներն վեհարանը փոխած են մոլլաների բնակարաններ, պալատը փոխած են ուսումնարան, իսկ մայր եկեղեցին՝ ազոթատեղի, որ կոչւում է Ջումա-մէչիտի: Եկեղեցիս իւր մէջ ունի 40 հաստաբուն սիւներ, որք ապացոյց են խիստ հեռաւոր հնութեան՝ նոյնպէս եւ չորս պատերն: Միայն թէ քանդած են խորանի եւ երկու աւանդատան ներսի պատերը եւ կամարները եւ ցածացրած ձեղունը: Այս նորոգութիւնները արած են տաճկաց 1116-ին: Բաւական ընդարձակ է եկեղեցին, երեւի թէ հայազգաւան մեծ բազմութիւն եղած է քաղաքումս: Աւելի ընդարձակ եւ գեղեցիկ է եկեղեցու վեհարանի եւ պատատի բակն, որ արդէն մի եղած է 'ի հնուց: Արաբացիք Դարբանդի պարիսպները քանդած ժամանակ՝ անքակ պահած են Աղուանից Կաթուղիկոսարանը, «Եւ 'ի հարիւր ութսուն թուականին Հայոց (732-ին) դարձեալ Մսլիման շինէ զ Դարբանդ յանուն տաճկաց (արաբացւոց), այլ զկաթուղիկոսարանն Աղուանից ո՛չ աւերէ, որ դեռ եւս կայ 'ի նմա» (Մով. Կազ., եր. 259):

Դ. Բերդն, որ է Նարին-ղալան, շինուած է լեռնարգկի գիրքով, այսինքն լայն է բերդիս արեւելեան կողմն, նեղ ու եռանկիւնաձեւ՝ արեւմտեան կողմն, իսկ խորանդունդ ձոր՝ պարսպի հիւսիսային կողմն: Բերդս եւս ունի նոյն հաստութեամբ եւ բարձրութեամբ ամրագոյն պարիսպ, հաստատուն բուրգեր եւ երեք դուռն արեւելեան, հարաւային եւ արեւմտեան կողմերից եւ մի մեծ, խոր եւ խաչաձեւ ջրամբար: Որովհետեւ ջուր եղած չէ բերդումս, վասն որոյ ստորերկրեայ ականով եւ խեցեղէն խողովակներով բազկաչափ ջուր բերած են 2 վերստ հեռաւորութիւնից, այժմ եւս վազում է ջուրն: Ընթերցողը դուշակեց, որ կամարակապ ջրամբարն շինուած է 'ի պաշար պատերազմի: Բերդս այժմ զինուորանոց է ռուսաց:

Նարին-ղալայիս վերի ծայրից սկսուած է նոյն հաստութեամբ պարիսպ եւ շարունակուած դէպի Կովկաս մեծ լեռն: Բռնեցինք պարսպիս հետքը, որն թէեւ շատ տեղերում քանդուած է, բայց ամենուրեք երեւում է հիմքն, եւ գնացինք մօտ 4 վերստ դէպի արեւմուտք Փոքր-լեռնաշղթայի վերայով: Վերջապէս հասանք մի դղեկի, որ ունի 12 սաժէն երկարութիւն, 10 սաժէն լայնութիւն, 4-5՝ բարձրութիւն, մի եւ կէս սաժէն՝ պարսպի հաստութիւն, 4 բուրգ՝ չորս անկիւններում եւ մի դուռն արեւելեան կողմից: Այս դղեակն, որ ամբողջապէս շինուած է տաշած քարով, իւր խիստ հեռաւոր հնութեամբ բոլորովին զանազանւում են Դարբանդի բոլոր բերդերից:

Այն շղթայաձեւ պարիսպն, որ շարունակուած է Նարին-ղալայից եւ միացած դղեկիս, շարունակուած է եւ դղեկից դէպի արեւմուտք միեւնոյն հաստութեամբ եւ բարձրութեամբ: Շարունակութիւնն նախ իջնում է Դապասարանեան հովտի մէջ, ապա բարձրանում է դէպի Կովկաս մեծ լեռն եւ անյայտանում Սինեւ սարի ձորում: Որքան կարում էին մեր աչքերի տեսութիւնն եւ դիտակի մօտեցնող առաձգութիւնն, պարզ երեւում էր շարունակութիւնն: Պարսպի շարունակութեան վերայ, զանազան հեռաւորութեամբ շինուած են ամուր բուրգեր, որք թէ՛ ծառայած են պարսպի հաստատութեան եւ թէ՛ իւր պահականոցներ՝ պարապապահ զինուորականների համար: Թէեւ տեղ-տեղ խրամատուած է պարիսպը, սակայն դեռ կանգուն է ամենամեծ մասամբ: Պարսպիս շարունակութիւնը, մեծ սարին հպելուց յետոյ, անցած է լեռնաշղթաների գլուխներով, իջած Կախաւանից վերեւ Կովկաս մեծ սարի հարաւակողմն, ապա լանջերի ստորոտներով հասած Ճառն եւ այս տեղից նոյն ուղղութեամբ մինչեւ Ալազան: Պ. Ի. Բերեզինա (Բ. հատ., եր. 21-23) ասում է, թէ կենաց Կանդեմիրն պարիսպս ամբողջապէս կանգուն գտած է իր հետազօտութեան ժամանակ. ծովեզերքից մինչեւ Ալազան մօտ 400 վերստ տարածութիւն ունի պարիսպս: Ահա այս է այն հանրահռչակ պարիսպն, որ գրաւած է պատմութեանց եւ ճանապարհորդական գրուածոց մէջ նշանաւոր էջեր:

Պարսպիս հիւսիսային կողմով, ծովեզերքից մինչեւ Կովկասի հիւսիսահայեաց լանջերն, ընկած են երեք գաւառներ՝ Կայթաղ՝ ծովեզերքից սկսեալ, Բէօթաչի՝ միջին գաւառ, Ղումուխ՝ վերին կամ լեռնային գաւառ: Արաբացւոց պատմաբան Մասուդին գրում է, թէ Ղումուխ գաւառի բնակիչները քրիստոնեայ էին եւ այն ժամանակ կառավարւում էին քրիստոնեայ տանուտէրներով:

Ս. Լուսաւորչի, ս. Գրիգորիսի եւ ս. Մեսրոպի ցանած աւետարանական սերմերն բոլորովին չորացած չէին. նմանապէս Զողայում նստող կաթուղիկոսներին: Դեռ ցայսօր քրիստոնէական նշանի հետքերն անհետացած չեն Ղումուխի գաւառից: Քրիստոնէաձեւ գերեզմաններ, նոր մկըրտելների պարանոցներից կախած փոքրիկ խաչեր, հին արծաթեայ անարձանագիր բուրվառներ եւ եկեղեցական իրեր տակաւին երեւում են Բէօթաչի եւ Ղումուխ գաւառներում:

Վերոտին գառնանք դէպի Դարբանդ:

Կովկասեան սարով հիւսիսից հարաւ անցնելու համար կայ մի քանի անցքեր, որոց

Առաջինն է Սեւ ծովի եզերքով, բայց այս անցքն ունեցած չէ պատմական եւ քաղաքական մեծ նշանակութիւն:

Երկրորդն է Դարիալ կիրճն, որ այժմ կոչւում է Վլադի-կաւկաս եւ բանում է շարունակ:

Երրորդն է Բալաքեանի կիրճն, որ տանում է դէպի Աւար-Ղոսյու գետն եւ դէպի Ղումուխ գաւառը:

Չորրորդն է Ճառի կիրճն, որով եկած էր Շէյխ-Շամիլն մեծ զօրքով Ճառի վերայ իւր անձնատուր լինելուց առաջ:

Հինգերորդն է Շաքի քաղաքի արեւելակողմն եղած կիրճն, որը ռուսաց կառավարութիւնն հարթելով շինած է ճանապարհ, որով լեկզիներն իւրեանց վաճառքները փոխադրում են Շաքի ծախելու: Բայց այդ կիրճն անցնում է պարսպի խրամատուած տեղով:

Վեցերորդն, որ անցնում է Աղուանից երկրիցն Աղուանից երկիրը, Թիֆան-դաղի ուղին է: Այս ուղին բանում է միայն յունիս, յուլիս եւ օգոստոս ամիսներում: Դարբանդի, Ախտու եւ Ղուբայի կողմերից անցնում են Թիֆան-դաղով եւ իջնում Ղաբալու Ղութզաշէն աւանի վերայ: Թիֆան-դաղի սարահարթի վերայ շինուած են մօտ առ մօտ ապաստարաններ, որպէս զի պատսպարուին բուքից նեղեալներն, իսկ սարիս հարաւային լանջում շինուած է մի ընդարձակ եւ սրբատաշ քարով կառուցեալ կամարակապ իջեւան, ուր անվարձ պատսպարւում են ճանապարհորդներն: Իջեւանս շինել տուած է 130 տարի առաջ Ղաբալեցի Ամր-Ալի-Բաբա մահմեդականն իւր յիշատակ: Մօտ 25 տարի յառաջ Թիֆան-դաղիս վերայ բուքից խեղդուած են 164 մահմեդական ճանապարհորդներ: Քանի՜ առատ են այստեղ որսալու քօշեր եւ ուլեր, որք հօրաններով վազվզում են աջ ու ձախ:

Եօթներորդն, որ ունի հանգստատար ճանապարհ հիւսիսից հարաւ անցնելու եւ ստացած է պատմական եւ քաղաքական հանրահռչակ նշանակութիւն, Դարբանդի անցքն է: Ինչպէս տեսանք՝ ամրափակուած է եղել անցքը ծովեզերքից մինչեւ Բալաքեան չինական պատուարի նման ամուր պարիսպներով, անմատչելի բուրգերով, երկաթեայ դռներով եւ ամրագոյն պահակներով: Անցքս մերձաբնակ ազգերի, քաղաքի, ամրութեան եւ դռների անուններով ստացած է զանազան դարերում այլ եւ այլ անուններ, ինչպէս են «Դրունք Ալանաց»[1], «Դրունք Կասպից»[2], «Դուռն Ճորայ»[3], «Կապան Ճորայ»[4], «Կապան Զողայ»[5], «Պահակ Ճորայ»[6], «Դրունք Զողայ,

1 Ագաթ., եր. 26 եւ 624:
2 Խոր., Բ. գիրք, ՁԶ. գլ.: Ղեւոնդ, եր. 160:
3 Խոր., Բ. գիրք,ԿԱ. գլ.:
4 Խոր., Բ. գիրք, ԿԵ. գլ.:
5 Խոր., Գ. գիրք, ԺԲ. գլ.:
6 Եղիշէ, եր. 19, 178 եւ 387: Եւ Ղեւոնդ, եր. 41 եւ 101: Սեբ., եր. 28 եւ 69:

Դուռն Զողայ»[1], «Դուռն Աղուանից, Դուռն Խազրայ, Դուռն Հոնայ», «Կապանի, Դարբանդ»[2], «Դուռն երկաթեայ (Դեր-Բէնտ)», «Բաբ-էլ-աբուաբ (դրունք դրանց)», «Դամուր-գափու»[3] եւ այլն:

Համարեա թէ Հայաստանի, Վրաստանի եւ Աղուանից երկրի եւ մինչեւ անգամ Պարսկաստանի ապահովութիւնն հիւսիսային ազգերի արշաւանաց նկատմամբ կախուած էր այն բերդերի, պահակների եւ դռների ամրութիւնից: Քանի որ ոչ էին Հայոց Արտաշէս, Մեծն-Խոսրով եւ Մեծն-Տրդատ թագաւորներն, Աղուանից թագաւորութիւնն եւ Զուանշիր-իշխանն, չէին համարձակւում հիւսիսային ազգերն աներկիւղ արշաւանք գործել դէպի Աղուանից եւ Հայոց երկիրն: Բայց երբ մեռան սոքա, այնուհետեւ երբեմն պարսից եւ երբեմն յունաց Հերակլի զրդմամբ արշաւում էին հիւսիսայինք եւ մեծամեծ վնասներ պատճառում Աղուանից եւ Հայոց երկրներին: Այս դռներով յաղթանակաւ անցան Ալանաց, Խազրաց, Բասրաց եւ Հոնաց երկիրներն՝ Հայոց Սմբատ զօրավարն եւ Վաղարշ, Մեծն-Խոսրով եւ Մեծն-Տրդատ թագաւորները:

Դարբանդ քաղաքի գոյութիւնն ունի է 2000 տարուց եւ միանգամայն հոչակաւոր՝ իւր պատմական եւ քաղաքական անցեալով: Բազաբիս երկար ժամանակ տիրեցին հայերն, Ա. դարից մինչեւ Ե. դարի սկիզբն՝ աղուանք, Ե. դարում՝ պարսիկները, Զ. դարում՝ խազիրք, Է. դարում վերստին պարսիկները, Ը. դարում՝ արաբները, ԺԱ.-ԺԲ.՝ Աղուանից Սենեքերիմ եւ Գրիգոր թագաւորներն, ապա՝ Լանկ-Թամուրն, ապա՝ պարսիկներն եւ հուսկ ուրեմն՝ ռուսներն:

Մեծ տարաձայնութիւն կայ Դարբանդի եւ իւր պարիսպների հիմնադրի մասին: Ահագին պատուարով ամրափակել եւ բոլորովին խզել Եւրոպայի հիւսիսային հարաւորդակցութիւնը Ասիայից: Այսպիսի մի նշանաւոր հանճար յատկացնում են ոմանք միայն Աղէքսանդր Մակեդոնացուն: Այս կարծեաց նպաստում են եւ հայոց պատմագիրներից ոմանք: Ագաթանգեղոս (եր. 26) գրած է.«Սկսանէր Խոսրով Ա. թագաւորն Հայոց... բանալ զդրունս Ալանաց եւ զիւրոյ պահակին, հանել զզօրս հոնաց»: Յայտնի երեւում է խօսքերից, որ Վաղարշի եւ Խոսրովի ժամանակ արդէն կային թէ՛ Դարբանդի բերդերն եւ թէ՛ երկարաձիգ պարիսպն պահակներով հանդերձ: Այդպէս է վկայում եւ Խորենացին «ուր ածեալ է զպարիսպն Դարբանդայ աշտարակ ահագին ի ծովուն կացեալ»: Իսկ Ղեւոնդ պատմագիրն (եր. 40-41) գրած է. «Զօրավարին Մսլիմայ... եկեալ եւ մարտ եդեալ ընդ զօրս հոնաց, որ ՝ի Դարբանդ քաղաքի, հարին զնոսա եւ հալածեցին, եւ քանդեալ աւերեցին զդղեակապարիսպ ամրոցին: Եւ մինչդեռ քանդէին զպարիսպ ամրոցին՝ դտին վէմ մի մեծ ՝ի հիմունս նորա, որ ունէր վերնագիր զրոշմեալ օրինակ զայս. «Մարկիանոս[4] ինքնակալ կայսր շինեաց զքաղաք եւ զաշտարակս զայս բաղում տապանդօք յիւրոց գանձուց. եւ ի յետին ժամանակս որդիքն Իսմայէլի քակեսցին զսա եւ յիւրեանց գանձուց վերստին շինեցին»: Եւ իբրեւ դտին զդրոշմ գրոյն... դադարեցին ՝ի քանդելոյ զպարիսպն եւ կացուցեալ գործավարս ՝ի վերայ՝ վերստին շինեցին զկործանեալ պարիսպն»[5]: Մի քանի տարի առաջ Օդեսայի «ընդհանուր պատմութեան եւ հնախուզութեան» անդամ Կարայիմ Ֆիրկովիչն փորել է տալիս Դարբանդի հարաւային կրկնապարսպի դրան ներսի կողմը եւ գտնում է մի մեծ քար յունարէն արձանագրութեամբ, որոց սկզբնատառերն եղած են Ա. Մ.: Ռուսաց ճանապարհորդ պ. Ի. Բերեզինան (Բ. հատ., եր. 22) գրում է. «Ես տեսայ աչքերովս Գ. Բուշկիեւի մօտ... վաղեմի հնութիւն Դարբանդի վերաբերեալ, մահից պաշտպանուելու գործիք (թուր), որ կարդացուեցաւ Ա. եւ Մ. (Աղէքսանդր Մակեդոնացի)»: Վերջապէս պ. Ի. Բերեզինան յենլով այդ երկու փաստերի վերայ (քարի եւ թրի արձանագրութեան) Ալէքսանդրեան դղեակ եւ Ալէքսանդրեան պարիսպ է անուանում փոքրիկ դղեակը եւ երկարաձիգ պարիսպը:

Իսկ ժամանակակից Եղիշէն (եր. 247) եւ ականատես Կաղանկատուացին (եր. 105) պարիսպներիս շինութիւնը յատկացնում են պարսից թագաւորներին: «Որպէս եւ յոյժ իսկ տրտմեալ էր թագաւորն (Զարն Յազկերտ), ո՛չ միայն ընդ աւեր աշխարհացն եւ ընդ անկանիլ զօրացն, եւ եւս առաւել ընդ աւերել պահակին, զոր ՝ի բազում ժամանակաց հազիւ ուրեմն կարացին շինել, որ եւ այնմ ժամանակի դիւրաւ առաւել քանդեցաւ (՝ի քաջն Վարդանէ Մամիկոնեան)»: «Բազում ծախիւք թագաւորանց պարսից մաշեալ էր զաշխարհս իւրեանց՝ գումարելով ճարտարապետս եւ հնարելով ազգի ազգի նիւթս ՝ի շինուածս մեծասքանչ գործոյն, որով փակեցին աղխեցին ընդ լեառն Կովկաս եւ ընդ մեծ ծովն արեւելից»: Սեբ. (եր. 28) գրում է. «Այս Խոսրով Նուշիրաւան ... կապեաց զպահակն Ճորայ եւ Աղուանից»:

Այդ հատուածները մէջ բերելով՝ բնաւ նպատակ չունինք ձեռնամուխ լինել այս կնճռոտ խնդրին, որ ցարդ անլուծանելի մնացած է ամէն ազգի հետազօտողներից, այլ միայն ներկայացնել ազնիւ բանասիրաց մի քանի հեղինակների դրածները, մինչեւ որ պարզէ ինքն ժամանակն այս մթութիւնները:

Բայց անտարակուսելի ճշմարտութիւն է, որ Հայոց Վաղարշ, Խոսրով եւ Տրդատ թագաւորների ժամանակ արդէն կային Դարբանդի բերդերն եւ պահակների երկարաձիգ պարիսպն: Ծըշմարիտ է նաեւ որ, ըստ Եղիշէի եւ ըստ Կաղանկատուացու, պարսից թագաւորներն հիմնաւոր նորոգութիւններ արած են Դարբանդի բերդերին եւ պարսպին: Ստոյգ է, որ արաբացիք եւս քանդած եւ վերստին շինած են: Այդ բոլոր նորոգութիւններն ակներեւ նշմարւում են պարիսպների եւ բերդերի վերայ, բացի դղեկից, որի գոյութիւնն խիստ հին է եւ մնացած է անփոփոխ: Իսկ մնացեալ բերդերի եւ պարիսպների վերայ որոշակի երեւում են տարբեր ժամանակների, տարբեր քարերի եւ տարբեր ճարտարապետութեան զանազանութիւններն: Ապացուցանում են այս ամէնը պարսկերէն եւ արաբերէն արձանագրութիւնները եւ առիւծի անդրին: Անյայտ է մնում, ուրեմն, միայն սկզբի հիմնադիրն քաղաքիս եւ բերդերիս:

Դարբանդի Բ. բերդի հիւսիսային պարսպի արտաքին որմի վերայ, Պ. Անդրէաս Զաքարեանի պարտիզում, գտանք մի քանի տառեր, որք սերտ նմանութիւն ունին Մեսրոպեան գրերի ձեւերին: Հաւանական է, որ լինին աղուանից լեզուի գրերից, զորս նոյնութեամբ ընդօրինակելով դնում ենք այստեղ.

Արտաքոյ քաղաքին՝ Քառասնից դրան հիւսիսային կողմում, կայ Ղրխլար կոչուած արաբական հանդստարանն, ուր ամփոփուած են 40 արաբներ, որպէս թէ պատերազմում մեռած: Տապանաքարերն, որոց երկարութիւնն է 10-12 թիզ, զարդարուած են արաբերէն արձանագրութիւններով: Սոցա անուամբ կոչուած է դուռն, որ ասւում է Ղրխլար-Ղարու (դուռն քառասնից):

Վերնաբերդի արեւելեան դրան հարաւակողմում կայ երեք գերեզման, նոյնպէս արաբական արձանագրութեամբ, յորոց մին է Սպանդիար-Նայիպին, միւսն՝ Մուհամմատ-Համզային, իսկ երրորդն՝ Շէյխ-Աբու-Իսախին:

Ինչպէս Դարբանդում ծնած էր Աղուանից թագաւորութիւնն Ա. Վաչականով, նոյնպէս Դարբանդում մեռնում է Աղուանից թագաւորութիւնն Գրիգոր թագաւորով ԺԱ. դարի վերջում կամ ԺԲ.-ի սկզբում:

1 Մով. Կաղ., եր. 110 եւ 148:
2 Մատ. Ուռ., եր. 278:
3 Առաք. վարդ., եր. 68:
4 Մակեդոնացի են գրում ոմանք, ինչպէս է Վարդան աշխարհագիրն:
5 Միեւնոյն խօսքերը կրկնում է եւ Կիրակոս (եր. 37), բայց գրում է «Մակւոն կայսր»: «Մակւոն» է գրում եւ Ասողիկն:

Դարբանդում կայ 150 ծուխ հայ, որի մէջ են 310 արական եւ 314 իգական: Տարեկան միջին հաշուով լինում է 39 ծնունդ (19 արական, 20 իգական) 5 պսակ եւ 15 ննջեցեալ: Հայերն գաղթած են մեծ մասամբ Արցախից, Շամախուց եւ Ղզլարից: Մանր է ամուսն Դարբանդի օդն եւ կլիման:

Հայք, որ բնակում են Բ. մասում, ունին նոյն մասում մի նորաշէն, խաչաձեւ, միջակ մեծութեամբ եւ սրբատաշ քարով շինուած եկեղեցի՝ Ամենափրկիչ անուամբ: Տաճարիս հիմքը ձգած է ծխական ժողովուրդն հին եկեղեցուն եղած գումարով եւ գեանից բարձրացրած մօտ 3 կանգուն: Իսկ մնացեալ մասերը ամբողջապէս աւարտած են իւրեանց սեպհական ծախքով՝ բարեպաշտ Սարգիս եւ Ստեփան եղբայրք Կաճկաճեանցներն: Իսկ ոսկեզօծ եւ գեղեցկագոյն խաչկալը եւ մեծ կաթուղիկէն շինել տուած է բարեպաշտուհի տիկին Կաճկաճեանցն: Զանգակատունը իւր վայելուչ կաթուղիկէովն շինել տուած են պատուարժան Առաքել Բարայեանց եւ Յովհաննէս Փանեանց: Արձանագրութիւններն տակաւին փորագրուած չեն, միայն եկեղեցու հարաւային կողմում՝ վերեւի քիւին մօտ, մի քարի վերայ գրուած է «Կառուցաւ 1869-ին»:

Եկեղեցին ունի միայն մի քահանայ՝ արժ. Տէր-Աբրահամ Սպանդարեանի, եւ 2250 բուբ. դրամագլուխ, որից 1800 բուբ. բանկային տոկոսարեր եւ ներքին փոխառութեանց արժէթղթեր են, իսկ մնացեալն՝ պատրաստի դրամ: Ունի նաեւ միդասեան ծխական վարժոց «Մարիամեան» անւամբ, ուր ուսանում են 5 աշակերտ եւ 19 աշակերտուհի, մի կրօնուսոյց, մի աւագ ուսուցիչ, մի վարժուհի, մի ընթերցարան մօտ 500 կտոր գրքերով եւ 2300 բուբ. դրամագլուխ: Ընթերցարանն ստանում է տարեկան 10 լրագիր, օրագիր եւ շաբաթաթերթ՝ հայերէն եւ ռուսերէն լեզուներով:

Պ. Կ. Մելիք-Շահնազարեանցի մօտ կայ մի հայրապետական կոնդակ զրկուած Կարնեցի Ղուկաս կաթուղիկոսից 1782-ին: Գեղեցիկ եւ գիւրաւ վերծանելի է նոտարագիրն եւ յղկուած՝ թուղթն: Սոյն կոնդակով հայրապետն յայտնում է Դարբանդցի Մահաեսի-Վարդանին, թէ աթոռապատկան գործերը կարգադրելու համար զրկում է Էջմիածնից «Յակոբ հանճարաշատ վարդապետը»:

Դանակերտցի պ. Սարգար Իսազուլեանցի մօտ տեսայ նաեւ մի ոսկեայ, բոլորշի, ճակատակալ կանացի զարդ, որի ծանրութիւնն է 7 մսխալ: Կանացի զարդիս վերայ փորագրուած են խորհրդաւոր նշաններ: Մի երեսին քանդակուած են ոմն երիտասարդ եւ ոմն օրիորդ նշանուղների երկու միացեալ աջ ձեռներն: Ձեռների վերայ վերեւից նայում է ամենահայեաց ակն աստուածային, որի շուրջն փորագրուած է «Նախախնամութիւն աստուածային»: Միացեալ ձեռներից ներքեւ կայ երկու կլորաձեւ եւ մի քառակուսի սեղան, որից մէյն վերայ գէմադէմ կանգնած եւ կտուց կցի տուած են երկու սիրատու աղաւնիներ: Միւս սեղանից ցոլանում է լուսաճաճանչ, բայց խորհրդաւոր հուր: Իսկ մէջտեղի քառակուսի սեղանի վերայ գրուած է մի պատարագի սկիհ, որից բարձրանում է վէտ 'ի վէտ աստուածային սուրբ կրակ:

Իսկ միւս երեսին փորագրուած են երկու պսակուողների պատկերներն, որք կանգնած են եկեղեցում ձեռք-ձեռքի տուած: Վերեւից ինքն Աստուածութիւնն օրհնում է պսակագրութիւնը սոյն խօսքերով. «Սուրբ ամուսնութիւն եւ եղիցին երկուքն 'ի մի»: Փեսայի ոտների տակ կան Գ. Ռ. Լ., իսկ հարսի ոտների տակ՝ միայն Հ. տառն: Երեւի թէ առաջին գրերն փեսայի անուան եւ ազգանուան սկզբնատառերն են, երկրորդն՝ միայն հարսի անուան: Երկոցունց մէջ կան ՌՄ տառերն, որ է Հայոց ՌՄԲ. եւ Փրկչական 1753* թուականն եւ մի սեղան, որ վառուած է սուրբ սիրոյ կրակով 'ի նշան հաւատարիմ ամուսնութեան: Ներքեւ գրուած է. «Լաւ են երկու քան զմի» «Մին մինին. իմ կատարեալ...»[1]:

Ոսկեայ զարդիս շրջապատն զարդարուած է եղել թանկագին քարերով, որք թէեւ չկան այժմ, բայց որոշ յայտնի են ջարդուած տեղերն: Պարոն Իսազուլեանցին ծախողն եղած է Գուրի խանութեան յետագաներից, այս է՝ Իւսուֆ-Խանի թոռներից ոմն: «Մին մինի» բառերն յաճախ գործ են ածում Արցախի եւ Մեծ-Սիւնեաց բնակիչներն եւ այս տեղերից այլ եւ այլ տեղեր գաղթող ժողովուրդն: Հետաքրքիր միտքն ենթադրում է, որ յատկապէս շինուած զարդս եղած է կա՛մ Արցախեցի եւ կա՛մ Մեծ-Սիւնեցի ոմն իշխանի հարսին ճակատակալն: Դեռ մինչեւ ցայսօր Արցախի եւ Մեծ-Սիւնեաց կանայք համանման ոսկի զարդեր կախում են շարած ոսկիների մէջ, որ կոչւում է տեղական բարբառով ճակատակալ կամ միջանոց ոսկի: Երեւի թէ պատերազմների ժամանակ կողոպտուած է զարդս կամ գողացուած եւ ծախուած է Գուրի խանին:

Կայթաղ Տապասարանի պ. գաւառապետ կնեազ Մակաեւի մօտ տեսայ հետեւեալ հնութիւնները.

Արծաթ դրամներ

8 հատ միատեսակ, մուրաքւոր, թագաւորի պատկերով խիստ հին, անգիր եւ անթուական դրամներ:

7 հատ միատեսակ, սիւնաւոր եւ անթուական դրամներ:

3 հատ Հայոց Լեւոն թագաւորին, որոց մի երեսին գրուած է «Ողորմութեամբն Աստուծոյ» եւ միւս երեսին՝ «Լեւոն թագաւոր Հայոց»:

3 հատ միատեսակ Փիւֆի դրամ:

1 հատ գեղեցիկ պատկերով եւ եւրոպական տառերով գրուած «Լէօբօլդ 1677»:

1 հատ Ա. Շահ-Աբասի օրով կտրուած:

2 հատ մեծ դրամ Շահ-Սուլթան-Հիւսէյինի օրից:

Պղինձ դրամներ

35 հատ պնձեայ դրամներ, որոց մեծ մասն անգիր եւ անթուական, բայց մին միայն կրում է ս. Գէորգի պատկերը:

Դարբանդի տեղական նշանաւոր բերքն եղած է տորոն ներկի արտահանութիւնն: Մինչդեռ մի քանի տարիներ առաջ տորոնի փութն ծախուած է 9-11 բուբլի, վասն որոյ եւ մշակուած եւ լայնածաւալ դեղիններ: Յանկարծ իջնում է 1 փութ տորոնի գինն 1-2 բուբլի, վասն որոյ սնանկանում են բազմաթիւ անձինք եւ տորոններն ցարդ մնում են հողերի տակ: Գների անկման պատճառ եղած է ալիզար կոչուած եւրոպական հանքային ներկն:

Այժմ տեղական գլխաւոր բերքն է գինի: Տորոնից զրկուած ժողովուրդը մի քանի տարի առաջ սկսած է զբաղուիլ այգեգործութեամբ, այնպէս որ այժմ 7 քառակուսի վերստ տեղ տարածութիւն ունին փառաւոր մշակուած այգիներն: Գինիներն, որ բաւական լաւ են եւ դուրալի, ծախւում են թէ՛ իւր իսկ տեղում եւ թէ՛ Ռուսիայում:

ԴԱՐԲԱՆԴԻ ԳԱՒԱՌՆԵՐՆ

Ա. գաւառն, որ ընկած է պարսպի հարաւային կողմը, Դարբանդի այգիների, Բուբաս եւ Փոքր-Սամուր գետախառնուրդների մէջ, կոչւում է Մուսկուր: Այս էր Մազքթաց[1] գաւառն:

Բ. գաւառն, որ ընկած է նոյն պարսպի շարունակութեան, Բուբաս եւ Փոքր-Սամուր գետի (հիւսիսային օժանդակի) մէջ, կոչւում է այժմ Տապասարան: Այս է Խորենացու, Եղիշէի եւ այլոց մատենիչ արած Թաւասպարանն:

Գ. գաւառն, որ ընկած է նոյն պահականոցի շարունակութեան, Փոքր-Սամուր գետի հիւսիսային օժանդակի, Ալակիւռ-Դաղի[2] եւ Մեծ-Սամուր գետի մէջ, այժմ կոչւում է Գուրի գաւառ: Թերեւս այս եղած լինի Եղիշէի Գաւն: Գաւառիս գաւառագլուխն է Ղասմ-Քենդն:

Դ. գաւառն, որ ընկած է նոյն պարսպի շարունակութեան, Ալակիւռ-Դաղի, Կովկասեան մեծ լեռնաշղթայի գագաթնագծի եւ Մեծ-Սամուրի հարաւարեւելեան օժանդակի մէջ, կոչւում է Սամուրի գաւառ: Գաւառագլուխն է Ախտի քաղաքն: Յայտնի է, որ գաւառս հին դարերում չէր կոչւում Սամուր, նոր անունս ստացած է Սամուր գետից: Բայց այժմ Ախտու հարաւային կող-

* Բնագրում՝ 1751 (ծան. հրատ.):

1 Բառն մնաց մեզ անընթեռնելի:

1 Մազքութներն Դ. դարից յետոյ բնակում էին պարսպի հիւսիսային կողմում, ինչպէս յայտնի է պատմութիւններից:

2 Սարիս արեւմտեան բազկի վերայ գտնւում է Աղուանից Բ. բերդն՝ պարսպի շարունակութիւնից ոչ այնքան հեռի:

մում կայ մի մեծ գիւղ Մաճակ անուն: Թերեւս այս է Հեճմատակ հին անուան կրճատեալն կամ փոփոխեալն:

Միւս գաւառների հետ համեմատելով՝ խիստ ընդարձակ է Դ. գաւառս, որից գատ արեւմտեան հիւսիսային կողմում, նոյնպէս պարսպի ներսում, դեռ մնում է մի անանուն գաւառ, որ ընկած է պարսպի, Կովկասեան մեծ սարի գագաթնագծի եւ Սամուր գաւառի մէջ: Մեծ-Սամուր գետն սկիզբ է առնում անանուն գաւառիս վերի կողմից եւ արրնթաց հոսում գաւառիս միջով դէպի Սամուր գաւառն: Գաւառս բաւական գեղեցիկ է լեռնագաշտակներով, հովիտներով եւ պատուական ջրերով, վասն որոյ չէր կարող մնալ անմարդաբնակ, ինչպէս այժմ չէ անմարդաբնակ: Սակայն դժուարանում ենք գտնել գաւառիս պատմական անունը: Գաւառիս արեւմտեան վերջացած տեղում, պարսպի արտաքին կողմում է կիրճն, որով հասնում է Կածանն մինչեւ Բալաքեան[1] (Բաղասական գաւառն), որի մասին յիշած ենք կանխաւ:

Նմանապէս կայ եւ մի անանուն գաւառ, որ ընկած է Սամուր գաւառի եւ Ղուբա քաղաքի սահմանների մէջ, այս է Մեծ-Սամուրի հարաւային օժանդակի եւ Ղուբա գետի, Կովկաս մեծ սարի գագաթնագծի եւ դաշտաբերանի մէջ ընկածն: Գաւառիս մէջ է Գուսար անուն գետն եւ Գուսար տեղանունն, որ այժմ զօրանոց է ռուսաց: Գուսար հնչիւնս հեռի չէ Գղուար հնչիւնի ձայնից: Շատ կարելի է, որ այս է Գղուար պատմական անունն:

Եթէ 'ի շարս գաւառաց հաշուենք եւ երկու անանուն գաւառներս եւս՝ լինում է վեց ընդարձակ գաւառ:

Է. Գաւառն, որ ընկած է Ղուբա գետի, Վատնեան դաշտաբերանի եւ ծովեզերքի մէջ, Զողայ քաղաքի անուամբ կոչուած է Զողայի գաւառ, ինչպէս սովորութիւն է: Միակ դաշտային գաւառս նշանաւոր եղած է մետաքսի, ցորենի, բրնձի, տորոնի, ձմերուկի, վարունկի, սխտորի, սոխի եւ այլ բերքերով:

Այժմ գաւառներումդ կան մօտ 80000 բնակիչք, որք մինչդեռ կանխաւ եղած են հայադաւան քրիստոնեայ, այժմ ամբողջապէս դարձած են Օմարի աղանդին: Այսու ամենայնիւ խպառ անհետացած չեն քրիստոնէութեան նշաններն. Պողոս-Բուլղարի ընդարձակ հանդստարանի նմանը կայ եւ Ղասմ-քեանդում, որոց սրբատաշ տապանաքարերն զարդարուած են հայերէն արձանագրութիւններով: Պակաս չեն աւերակ եկեղեցիներու դեռեւի հաւասարած հիմքեր, անարձանագիր հայաձեւ հանդստարաններ եւ յարդուած սրբավայրեր: Ընտանիքներն տակաւին շատ տեղերում խաչակնքում են աջ ձեռներով նոր հունձած խմորների, կրակից նոր վար դրած կերակուրների եւ նոր քնացրած մանկանց վերայ: Ղուբայի արեւմտեան-հարաւային կողմում, մի քանի վերստ հեռաւորութեան վերայ կայ Սպիք անուն մի գիւղ, որի բնակիչներն այժմ Օմարադաւան լեկզիներն են: Տակաւին մնում են գիւղիս աւերակ եկեղեցու հիմքերը եւ հանդստարանը: Ծերունիք պատմում են, թէ գիւղիս հայադաւան բնակիչներն, անխախտ մնալով իւրեանց հաւատքի վերայ եւ ձանձրանալով մահմեդականների երեսից կրած անվերջ եւ տաղտկալի կողոպուտներից եւ աւարառութիւններից, գաղթած են Զուբովի ժամանակ Ռուսաստան՝ Թալաբու, Զողայի, Ղուբայի եւ Ղասմ-քեանդի հայերի հետ:

Բացի Զողայ քաղաքից եւ գաւառից, պատուական են միւս բոլոր գաւառների օդն, կլիման եւ ջուրն: Իսկ տեղական բերքերն են ոչխար, կով, եզն, ցորեն, գարի, յեսանաքար եւ կապար: Ամենից երկար ապրողի կեանքն է 100 տարի: Դարբանդն իւր բոլոր գաւառներով ենթարկուած է Դաղստանի ընդհանուր կառավարչապետութեան:

1 Մի քանի հեղինակներ անուանում են Ճարօ-Բէլաքան:

ՃՂԲԱՑ ԳԱՒԱՌՆԵՐ

Ճղբաց գաւառներն ընկած են Ղուբա եւ Դաւաչի գետերի, Կասպից ծովի եւ Կովկասեան մեծ լեռնաշղթայի գագաթնագծի մէջ, որպէս յայտնած ենք կանխաւ: Գաւառներս խիստ հարուստ են առատ աղբիւրներով, վտակներով, գետերով, տորոնով, բրնձով, ցորենով, նաւթահանքերով, լաւ մշակուած տանձենի եւ խնձորենի պարտէզներով եւ միանգամայն նշանաւոր անտառներով, որոց մէջ լի են մեծամեծ ընկուզի ծառեր: Համարեա թէ գաւառներիս կէս մասն դաշտային է, որ է շարունակութիւն Վատնեան դաշտի, իսկ միւս կէս մասն՝ լեռնային, որ է Կովկաս մեծ եւ փոքր լեռնաշղթաների շարունակութիւնն:

Ճղբաց երկիրն բաժանուած է երկու մասի, դաշտային մասն կոչուած է ի հնուց Շապօրան[1], ինչպէս եւ այժմ. իսկ լեռնային մասն անուն չունի: Այժմ երկու գաւառներն եւս կոչւում են Ղուբայի գաւառ՝ Ղուբա քաղաքի անուամբ: Այժմ դեռ նշմարւում է դաշտաբերանում Շապօրան քաղաքի աւերակն: Կարծիք կայ որ քաղաքիս անուամբ Շապօրան անունը ստացած է ե՛ւ գաւառս ե՛ւ Շապօրան գետն: Այժմ գաւառագլուխ քաղաքն է Ղուբան:

ՂՈՒԲԱ

Փոքրիկ քաղաքս, որ շինուած է Ղուբա կոչուած գետի աջ ափի բարձրութեան վերայ, մի հարթակ տեղում, հոգեւորապէս ենթարկուած է Դարբանդի հետ Շամախու առաջնորդութեան, իսկ մարմնաւորապէս Բագուի նահանգապետութեան իրաւասութեան: Քաղաքատեղի հարթակս Վատնեան դաշտի շարունակութիւնից լեզուակաձեւ մտած է Ղուբայի հարաւային լեռների եւ գետի մէջ: Քաղաքիս արեւմտեան կողմում երեւում է հպարտօրէն արձանացած Շահ-Դաղն, հիւսիսային կողմում՝ մերկ ու տխրատեսիլ լեռնաշղթայ եւ հարաւային կողմում՝ հարթակի բերանից յանկարծ բարձրացած, անտառապատ լեռներ: Միայն բաց է արեւելեան կողմն: Ընթերցողն անշուշտ մակաբերեց, որ խոր ձորի մէջ է Ղուբան:

Գետի ձախ ափի վերայ միայն բնակում են հրէայք, իսկ աջ ափի բարձրութեան վերնամասում հայերն եւ ռուսներն եւ ստորին մասում՝ սիւննու եւ շիա մահմեդականներն:

Քաղաքիս հայերն, որ գաղթած են ամենամեծ մասամբ Արցախից եւ փոքր մասամբ Շամախուց, զբաղւում են վաճառականութեամբ, մանրավաճառութեամբ, այգեգործութեամբ, դերձակութեամբ, կօշկակարութեամբ, սափրչութեամբ, հիւսնութեամբ եւ մասնաւոր ընկուզի կոճղի վաճառութեամբ:

Քաղաքս ունի 200 ծուխ հայ[2], որոց մէջ կան 400 արականք եւ 350 իգականք. տարեկան միջին հաշուով լինում է 30 արական եւ 24 իգական ծնունդ, 20 պսակ եւ 14 ննջեցեալ: Ունի միայն մի քահանայ:

Հայք ունին մի փոքր, աղիւսաշէն եկեղեցի Ս. Աստուածածին անուամբ, որի շուրջն պարսպված է անեվ աղիւսով: Պարսպի ներսում կան մի քանի պարտի, կեռասի եւ աքացի ծառեր: Եկեղեցու հիւսիսային դրան մօտ՝ արտաքուստ, ամփոփուած է եկեղեցիս շինել տուողի մարմինն, որի խաչարձան տապանն կրում է հետեւեալ արձանագրութիւն.

«Յիշատակ մեռելոյն յաշխարհիս աղցաւոր
Չէ՛ կոթող, ո՛չ գոյք, կայք, եւ ո՛չ այլ ինչ անցաւոր.
Հայեսցուք յայս տաճար առընթեր արձանիս,
Կառուցեալ մեծ ծախիւք հանգուցեալ իշխանիս:
Սա բարեաց գործոց իւր յիշելիք գերակայ,

1 «Սա (Շաթ-Խազրն) շինեաց քաղաքս հինգ յանուն Շաթայ՝ զՇաթառ (այժմ Փատառ), զՇամքոռ, զՇաքի, զՇրուան, զՇամախի, զՇապօրան» (Կիրակ., եր. 113-114):

2 Սոյն հաշուի մէջ չեն այն մի քանի հայերն, որ առեւտրի պատճառով մնում են Գուսարում:

Յոր ննջեալ տէր գործոյն՝ հանապազ անմահ կայ,
Ստեփաննոս Լազարեանց, այր բազմօք պիտանի,
Կանգնեաց զայս տաճար տուն Տեառն՝ մինչ էրն կենդանի:
Տուեալ Սա զԱստուծոյն Աստուծոյ ըստ կարի,
Ետ իւրոց նմանեաց օրինակ մի բարի...
Փոխեցաւ առ Տէր 25 Օգոստի 1852 ամի,
Վաթսուն եւ երեք ամօք հասակի»:
Կից սմին մի այլ շիրմաքարի վերայ.
«Հանգիստ Գրիգոր քահանայի Հայրապետեան Մելիք Դադաեանց, որ էր հայրենեօք ի Չափնի գիւղէն (Մեծ) Սիւնեաց վիճակի, որ հանգեաւ ի տէր 13 դեկտեմբերի 1870 ամի, 85 ամեայ հասակի»:
Եկեղեցու հարաւային կողմում պարսպի ներսում.
«Ի տապանիս դնի Շուշուայ քաղաքացի Յակօբ Բալաեանց այր բարի եւ առաքինի, օգնող եկեղեցեաց, աղքատաց, ննջեաց 19 մարտի 1880 ամի, քառասնամեայ հասակի»:

Եկեղեցին ունի 7000 ռուբլի դրամագլուխ եւ մի ծխական միդասեան երկսեռ դպրոց, ուր ուսանում են 62 աշակերտք եւ 21 աշակերտուհիք: Դասաւանդողներն են մի աւագ ուսուցիչ, երկու վարժապետ եւ մի վարժուհի, որք ամէնքն ստանում են տարեկան 1900 ռուբլի: Ներկայ պատ. հոգաբարձուաց գործունէութիւնն արդիւնալի է եւ արժանի մեծ գովութեան, քանզի նախորդ հոգաբարձուք յանձնած են ներկայ հոգաբարձուաց 3500 ռուբլի, բայց այժմեան հոգաբարձուք ո՛չ միայն կանոնաւոր վճարած են ուսուցչաց ռոճիկները, այլ եւ աճեցրած են դրամագլուխը մինչեւ 7000 ռուբլի, շինել տուած են նոր եւ գեղեցկաձեւ նստարաններ, դրասեղաններ, գնած են ընտիր աթոռներ, կահ ու կարասիներ աշակերտաց, աշակերտուհեաց եւ ուսուցչական սենեակների համար: Բաց յայսցանէ հոգաբարձութիւնն յաջողած է սնուցանել եկեղեցուն ուսումնարանը, որ ունի բազմաթիւ սենեակներ[1]: Եւ ի վերայ այսր ամենայնի գովելի հոգաբարձուք պարսպել տուած են հանգստարանի շուրջը, մինչդեռ առաջ անպարիսպ եղած էր: Օրինակելի՜ են եռանդուն հոգաբարձուաց արդիւնալի ջանքերն:

Պատուական են Ղուբայի օդն, կլիման եւ ջուրն: Ամենաերկար ապրողի կեանքի թելն հասնում է մինչեւ 100 տարի: Ամենանշանաւոր բերքն եղած է տորոնն, որի անկմամբ սնանկացած են 100000 ռուբլու հարստութեան տէր շատ գերդաստաններ:

Թէ՛ Ղուբայի եւ թէ՛ իւր գաւառների գլխաւոր բերքերն են որիզ, մետաքսի լոժոժ, ցորեն, գարի, տանձ եւ խնձոր, (խաղող մասնաւոր): Բայց արտահանում են գլխաւորապէս տանձը, խնձորը եւ ընկուզի կոճղը: Ջիր են կտրում տանձը եւ խնձորը, չորացնում եւ վաճառում թէ՛ իւրեանց տեղերում եւ թէ՛ Ռուսաստանում:

ԽԱՉ-ՄԱՍ

Ղուբայից մինչեւ գիւղս 4 ժամ ճանապարհ է, 2 ժամ ուղղակի արեւելք ընթանալով ձիով եւ 2 ժամ՝ հիւսիս-արեւելք: Ճանապարհի երկու կողմերն Ղուբայի ստորոտից սկսեալ մինչեւ 20 վերստ տեղ դաշտի վերայ տորոնացանքներ են անդրդ մնացած, իսկ մինչեւ Խաչ-մաս գիւղն 15 վերստ տեղ, թանձր անտառներ եւ մացառուտ են: Խաչ-մասն ամբողջապէս շրջապատուած է վաղեմի անտառներով, հետեւապէս եւ՝ որջ արիւնարբու աւազակների: Գաւառապետի կարգադրութեամբ իւր օգնական մեծապատիւ Բահրամ-բէկ Գեօղչաեանցն մեզ հետ դրաւ 15 զինեալ ձիաւորներ ապահովութեան համար:

Խաչ-մաս գիւղն հիմնուած է Վատնեան դաշտի շարունակութեան վերայ, մի գեղեցիկ դաշտահովտում: Գետակի աջ ափում բնակում են հայերն, իսկ ձախ ափում՝ սուններ եւ շիա մահմեդականները: Ջրարբի են անդերը, գեղեցիկ մշակուած են որթայգիներ, տանձենեաց, խնձորենեաց, թթենեաց, նռենեաց եւ ընկուզենեաց պարտէզներն ու ցորենի, գարու եւ որիզի արտերայքն եւ ածուներն: Տեղական բերքերն են մետաքսի բոժոժ, բրինձ, խաղող, գինի, ընկոյզ, նուռն, դեղձ, սերկեւիլ, թուզ, ցորեն, գարի եւ բրինձ, որք են բնակչաց զբաղմանց առարկաները:

Հայք ունին մի նորաշէն եկեղեցի, որ տակաւին օծուած չէ: Եկեղեցին շինուած է ամբողջապէս թրծեալ աղիւսով եւ կրացեխով, որ գեղեցիկ է եւ բարձրաշէն, միայն կաթուղիկէն ցած է: Եկեղեցու արեւմտեան կողմում, ներքուստ շինուած են յատկապէս երկու փոքրիկ խորաններ՝ դրան աջ ու ձախ կողմերում: Հիւսիսային խորանումն ամփոփուած է Յովսէփ-բէկ Ջաւատ-Բէկեանի մարմինն: Մարմարիոն տապանաքարի վերայ հիանալի նմանութեամբ քանդակուած է Յովսէփ-բէկի պատկերն իւր չեչանեան հագուստներով, զէնքերով եւ վառօդշարաններով: Տապանաքարի միւս մասերի վերայ փորագրուած է հետեւեալ արձանագրութիւնն:

«Աստ հանգեաւ երեւելի եւ մեծանուն Նոր-Խաչ-մազու կալուածատէր Հայկազն տոհմին Ղազարեանց Յովսէփ-Բէկն Ջաւատ-Բէկեան, որ թշնամեաց գաղտնի դարանագործութեամբ փոխեցաւ իրա (իւր) ատրճանակով Ղէզի իջեւանում Ղուբայ նահագիս: Ծնունդն 5 մայիսի 1824 թիւ. մահ նորա 1 սեպ. 1862 թիւ»:

«Պարծիր տապան քաջազանց,
Կրում ես ծոցիդ ո՛չ զայլ ոք,
Զայր հուժկու բանիւք, զինովք
Առ թշնամիս անողոք,
Դիւցազն մի Քրիստոսեան,
Քաջ հայասէր Աղուանեան,
Որ թշնամեաց ածէր սարսուռ,
Ազգիս կացեալ պատնէշ կուռ,
Որ աղքատաց օրն ի բուն,
Պաշտպան լինէր անընկուն,
Որ դրօշմեց զանմահ անուն
Խոր սրտերում անջինջ, անբեկ,
ԶՋաւատ-Բէկեան Յովսէփ-Բէկ:
Դո՛ւ, ո՜վ, որ յամենայնի կացեր անյաղթ,
Միայն յաղթեալ քոյդ հրազինօք ի դարանի,
Թէ եւ ննջես քուն յաւիտենի,
Չեն քեզ պակաս սիրակէզ
Եւ ո՛չ մրմունջք աղեկէզ»:

Իսկ հարաւային խորանում ամփոփուած է եկեղեցիս իւր ծախքով կառուցանող Պետրոս-բէկի մարմինն, որ հարազատ եղբայր է նոյն Յովսէփ-բէկին: Բայց դեռ պատրաստ չէ Պետրոս-բէկի տապանաքարն:

Կարեւոր համարեցինք տալ մի տեղեկութիւն այս իշխանազն տոհմի մասին:

Շատ ժամանակ առաջ գիւղումս բնակած է բնիկ աղուանցի, իշխանազն, Ղազար անուն մի քաջ տղամարդ: Սա, ինչպէս իշխանազն եւ պապենական կալուածոց միակ ժառանգ, իշխում է Խաչ-մասի եւ ինն մահմեդական գիւղերի վերայ: Շրջաբնակ մահմեդականները բազմիցս յարձակումներ են անում սորա վերայ, սակայն միշտ ետ են մղւում յաղթուած եւ կորագլուխ, վասն որոյ դրօշմում են սորա վերայ Բալա-Ղազար մականունը, որ է Փորձանք-Ղազար: Բալա-Ղազար իշխանն, ցմահ անյաղթ մնալով եւ ամէն տարի գիւղերից իւր հարկերը եւ հողային տասանորդներն առնելով, թողնում է Ջաւատ-բէկի անուամբ միակ որդին, կտակում սմա իւր քաջութիւնը եւ փոխւում առ Աստուած:

1 Ուսումնարանի շինութիւնը նուիրած են Ղուբայի եկեղեցուն բնիկ Շուշեցի մեծ. Կրասիլնիկեան եղբայրք, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի:

Համանման հօրն քաջութեամբ եւ բարի համբաւով հեռանում է աշխարհից եւ Ջաւատբէկն՝ թողնելով երեք որդի Բալա-բէկ, Յովսէփ-բէկ եւ Պետրոս-բէկ: Սորա եւս վախճանուած են՝ թողնելով առաքինի եւ քաջ անուն: Թէեւ վախճանուած են սորա ամենեքեան, սակայն տակաւին կենդանի եւ խօսուն են սոցա անուններն, քաջութիւններն, առատաձեռնութիւններն եւ բարեպաշտութիւններն ամբողջ Դարբանդի եւ Ղուբայի գաւառական ժողովրդոց մէջ:

Բարեհամբաւ տոհմից միայն կենդանի են Պետրոս-բէկի ամուսին Կատինկայ տիկինն, որ Մելիք-Բէկլարեանների ցեղից է, եւ իւր միակ ժառանգ օրիորդ Հռիփսիմէն, որ նոր ամուսնացած է պ. բժիշկ Միքայէլ-Զալեանցի հետ:

Եկեղեցու մօտ դատարկ մնում է ուսումնարանն՝ առանց աշակերտի, իսկ գիւղն՝ առանց քահանայի, վասն զի անցեալ տարի քահանան սպանուած է անխիղճ աւազակներից: Շատ զարմանալի է, որ վիճակիս դեր. առաջնորդն անհովիւ թողած է գիւղիս ժողովուրդն, որ մաքառելով հազարաւոր տարիներ պարսից կրակների եւ արաբացւոց եւ լեկգիների սրերի եւ բռնութեանց դէմ, ճղբաց ամբողջ ցեղից միայն պահպանած է իւր հայ գաւանութիւնը եւ եկեղեցին: Այժմ տաճկերէն է խօսում ժողովուրդս, վասն որոյ ճարահատեալ մի քանի քարոզներ խօսեցի տաճկերէն լեզուով եւ մխիթարեցի: Ողորմելի ժողովուրդն շարունակ արտասո՛ւք էր թափում մինչեւ քարոզների վերջն. փառաբանում էր զԱստուած, որ արժանի արաւ գինքը քարոզ լսելո՞ւ...

Գիւղումս կայ 32 հայ ծուխ[1], 110 արական եւ 84 իգական: Տարեկան լինում է 12 ծնունդ, 4 պսակ, 8 ննջեցեալ:

Ամռան խիստ անտանելի է տեղիս հեղձուցիկ օդն եւ եղանակն:

Գիւղիս արեւելեան կողմում կայ երկու հանգստարան, փոքրն՝ կէս վերստ գիւղիս հեռի, իսկ մեծն՝ մի վերստ: Երկուսն եւս ծածկուած են անտառախիտ ծառերով եւ թանձրամած մացառներով: Մեծ հանգստարանի տարածութիւնն է մօտ մի վերստ, իսկ փոքրինն՝ պակաս: Տապանաքարերից մեծ մասն անյայտացած է հողերի մէջ, մի մասն՝ կիսով չափ, կէս մասն՝ մամռապատ եւ կէս մասն՝ թաքնուած շամբերում: Ամբողջ երկու օր հետապօտեցինք 16 բահաւոր, կացնաւոր եւ ցակատաւոր մարդիկներով, ուր ներկայ էր եւ գիւղապետն:

Արձանագրութիւններից երեւում է, որ վրկէական 573-1890 թիւն ամփոփուած են ննջեցեալներ: Հեռաւոր ժամանակաւ ամփոփելոց շիրմաքարերի վերայ չկան արձանագրութիւններ, այլ քանդակուած են նետ, աղեղն, վահան, թուր, երկսայրի, ձիաւոր հնձեալ, գուդան, պատերազմի պատկերներ եւն: Շատերի վերայ փորագրուած են հանգուցելոց արուեստների յայտարար նշաններն, որք են դերձակի, կօշկակարի, պայտառի, հիւսան, գուդանակապի, հացագործի, եւն եւն գործիներ եւ սազ, սանթուր, քեամանչայ, շեփոր, փող, տնկլբաղ եւն նուագարաններ:

«Այս է հանգիստ Սողոմոն քահանային թվ. ԻԲ.»: «Այս է հանգիստ Եսայիին, որ փոխեցաւ ի Քրիստոս թվ. ՀԲ.»: «Այս է հանգիստ Կարեստանտ Խոջա Աշատուրիին թվ. ՄԴ.»:

Հին անուններ	արական	իգական
	Թարխան,	Եթար
	Հասան,	Հաւիշ
	Ուլուխան	Եազկուս
	Սաւալան	Գլըստան

Մեծ հանգստարանումն է եւ «Բալա-Ղազարի» գերեզմանն:

Երեք օր ամէն ճիգ թափեցինք եւ ամէն ջանք ի գործ դրինք գտնել Սենեքերիմ թագաւորի տապանաքարը, որի մասին գրած է Ս. եպս. Ջալալեանցն. «Այս է տապան Սենեքերիմ արքայի», բայց անհնարին եղաւ գտնել: Ապա գիւղից բերել տուին պառաւ կանայք, որք աներկբայ գիտէն թագաւորի մահարձանի տեղը: Բայց որքա՜ն մեծ եղաւ պառաւների զարմանքը, երբ տեսան, որ անյայտացած էր թագաւորի մահարձանն: Իսկոյն զարմանքն փոխուեցաւ լացի, եւ լացն՝ արտասուաց: Խեղճ կանայքն լալով պատմեցին.

1 Ս. եպս. Ջալ. գրած է 50 տուն:

«Ամէն տարի մեռելոցի օրերում գալիս էինք գիւղովին, օրհնել տալիս Սենեքերիմ թագաւորի գերեզմանը. ապա եղերերգ երգելով, լալով արտասուք էր թափում կանանց դասն. եւ ապա բաց էինք անում սուփրաներ, տալիս թագաւորի անունը եւ խմում ողորմաթասը[1]: Բայց մի քանի տարի է, որ դաչաղների[2] երկիւղից չենք կարողանում գալ հանգստարանս, երեւում է որ տարել են թագաւորի քարը...»:

Արդարեւ տեղ-տեղ երեւում է մեծ եւ փոքր հանգստարաններում[3], որ գողացած եւ տարած են տաշած քարերից, որոց տեղերն մնացած են փոսեր միայն:

ԱՐՔՈՒՆԻ ՁՄԵՌԱՆՈՑ

Մեծ հանգստարանի արեւմտեան հանդէպ կայ մի տափարակ տեղ, որ բարձացած է իւր շրջապատի գետիններից: Տափարակիս, որի տարածութիւնն է կէս վերստ, շրջապատն փորուած է խիստ խոր եւ լայն խրամ, որից եկած հողերը թափած են տափարակի եզերքներում, որք ձեւացած են իրբ պատնէշ: Արդէն տափարակի հիւսիսային եւ հարաւային կողմերով վազում են երկու գետակներ, որոց ջրերը ժամանակաւ թողած են խրամների մէջ, որով տափարակն եղած է ինչպէս մի կատարեալ կղզի: Հարաւային խրամի վերայ եղած է շարժական կամուրջ՝ մուտքը բանալու եւ փակելու համար: Պատմում են աւանդութեամբ, թէ տափարակիս վերայ եղած է Սենեքերիմ եւ Գրիգոր թագաւորաց ձմեռանոց պալատն: Պալատումս վախճանուած եւ հանգստարանումս թաղուած է Սենեքերիմ թագաւորն, այս պատճառաւ իբրեւ նուիրական տեղի սուրբ են այս տեղերն:

Բոլորովին քանդուած եւ հիմնայատակ եղած է պալատն: Բայց տափարակի երեսն լի է թըրծեալ աղիւսի բեկորներով: Տափարակի հիւսիսային կողմում՝ երեք տեղ նշմարւում են պալատի հիմքի հետքերն:

Աղնիւ Բահրամ-բէկի շնորհիւ 12 զինեալ պահպաններով վերադարձանք Ղուբա բոլորովին անվնաս:

ԹԱԼԱԲԻ

Ղուբայի գաւառապետ բարձ. Անդրէյ Միխայէլովիչ Ստափչանսկին այցելեց մեզ Ղուբայում եւ հարցուց.

–Արդեսո՞ք հանգիստ եւ անվնաս գնացիք եւ վերադարձաք:

–Այո՛, Ձերդ բարձրապատուութեան զգուշաւոր հոգատարութեան շնորհիւ բոլորովին հանգիստ եւ անվնաս:

–Ուրեմն բարեհաճեցէք ընդունել ամենախորին երախտագիտութեանս հաւաստին:

Ի միջի այլ հարցերի յայտնեցինք հանգստարանների դրութիւնը եւ խնդրեցինք պատուիրել մահմեդականաց, որ գոնէ այսուհետեւ անխղճաբար չկողոպտէին ննջեցելոց քարերը (ինչպէս

1 Սովորութիւն կայ Աղուանից երկրում մեռելոցի օրերում գնալ հանգստարան կերակուրներով, գինով եւ օղիով: Տխուր եղանակով լալուց յետոյ օրհնել են տալիս հանգիստները, խումբ-խումբ նստոտում խոտերի, կամ գետնի վերայ, վայելում են կերակուրը եւ «Աստուած ողորմի՛ այս ինչ անուն ննջեցեալի հոգուն» ասելով խմում բաժակները, ահա այս է ողորմաթասը:

2 Մարդասպան աւազակներ, տէրութիւնից ապստամբ:

3 Հայկական արձանագրութիւններով եւ սրբատաշ մահարձաններով զարդարուած հանգստարաններ կան նաեւ Պարախում՝ թրքաբնակ գիւղի մօտ, որ 3 ժամ հեռի է Խաչ-մասից դէպի արեւելք ծովի մօտ, Վէլէմիւր գիւղի մօտ, որ շատ հեռի չէ Պարախումից, Բոստանչի գիւղի մօտ, որ նոյնպէս շատ հեռի չէ Վէլէմիւրից: Հանգստարաններիս թուականն սկսած է Փրկչ. 580-1796: Երեւի, թէ սոքա եւս գաղթած են Զուբովի ժամանակ:
Ցաւալի է տեսնել, որ աւերիչ մահմեդականներն տարած են եւ տանում են տապանաքարերից շատերը: Այս տեղերում չկան քրիստոնեայ բնակիչներ, այլ մահմեդական են ամբողջապէս: Զարմանալի՜ երեւոյթ, քրիստոնեայ ննջեցեալք անգամ կողոպտւում են իրեանց նուիրական քարերից...:

խնդրած էինք Գուրի գաւառապետի օգնական ագնիւ Օհանջան-բէկից: Խոստացաւ իսկոյն եւեթ կատարել մեր խնդիրը: Ապա յուսադրեց զմեզ, թէ Քիլվարի ճանապարհն երկիւ գալի չէ, այսու ամենայնիւ 'ի պատիւ Ձեր այժմ Ձեզ հետ կ'ղրկեմ երկու արբունի, գինեալ, բաջ ձիաւորներ: Վերստին յայտնեցինք մեր խորին յարգանքը: Փոխադարձ այցելութիւն տուած ժամանակ բարձր. գաւառապետն ցանկութիւն յայտնեց ներկայ գտնուիլ Քիլվարի եկեղեցու օծման հանդիսին: Մեծ սիրով ընդունեցինք այս առաջարկութիւնը եւ արտայայտեցինք խորին շնորհակալութիւն այն զգացմանց համար, զորս ունէր առ հայոց ժողովուրդն եւ եկեղեցին: Բայց խնդրեցինք, որ սպասէր եւ խոստացանք օծումից 3 օր առաջ հրաւիրել նամակաւ նորին բարձրապատուութիւնը:

Խօսելով հրաժարական քարոզը՝ հեռացանք Ղուբայից, որից մինչեւ Քիլվար, տասցին, 35 վերստ է վերի ճանապարհով: Համարեա թէ շարունակ անցանք տանձենեաց եւ խնձորենեաց պարտէզների միջով: Այս ճանապարհն անցնում է Փոքր-լեռնաշղթայի եւ կովկասեան Մեծ-լեռնաշղթայի միջեւ ընկած հովիտների միջով: Բնակիչք առհասարակ մահմեդական են: Ճանապարհի կիսումն է Թալաբի գիւղն: Իջանք գիւղիս հոգեւոր գլուխ Ահմատ-Ագա-Ախունդի տունն, որ մի յարգելի անձնաւորութիւն է եւ բաւականին զարգացած: Թալաբին կրկին է՝ Վերին եւ Վարին: Ախունդն առաջնորդեց մեզ անձամբ հանդստարանն, որ շատ հեռի չէ Վարի-Թալաբուց: Գտանք միայն հետեւեալ արձանագրութիւնները՝ եւ այն վերեւից փորելով եւ հանելով.

«Աստ փոխեցաւ 'ի Քրիստոս... թ. ՇԷ.»:

«Այս քար, Աստուած ողորմի... թ. ՈՂ.»:

Աստուած ողորմի Մխիթարիս... թ. ՋՀԸ[1] »:

Մի կիսատ քարի վերայ քանդակուած է նետ եւ աղեղն: Բարերը կրկին թաղել տուինք հողում: Աւելորդ է կրկնել, թէ տարած են հանդստարանիս քարերի ամենամեծ մասը, միայն մնում են այժմ հողով ծածկուածներն:

Վերին եւ Վարի-Թալաբներն մօտ են իրարու. բայց եկեղեցին շինուած է Վերի-Թալաբում: Կիսաւեր է եկեղեցին, որ ցանկապատուած է գմբեթի փուշերով, աւ երակը մաքուր պահելու համար: Պատմեց ինքն Ախունդն, թէ «ոմն մահմեդական մի քանի տարի առաջ կամենում է սեղանի տեւից քարեր քանդել եւ տանել, բայց իսկոյն ծուում է պարանոցն եւ սկսում է սաստիկ տագնապել: Այս պատճառաւ մորթում են մատաղներ եւ վառում մոմեր, ապա վերստին ուղղւում է պարանոցն, վասն որոյ նոյն մահմեդականն ամէն տարի ամրացնում է ցանկապատը եւ շատ հիւանդներ տանում, եւ վառում են հաւատով մոմեր եւ առողջանում»:

Եկեղեցուցս փոքր-ինչ հեռի կայ լայնատարած հայ հանդստարան, որոց մէջ կան նաեւ շատ քահանայից գերեզմաններ: Գրեթէ մահարձան քարերից կէս մասը տարած են...:

Վերադարձանք մեր հիւրընկալի բնակարանն, Ահմատ-Ագա Ախունդն, որ 'ի պատիւ մեր ոչխար մորթել տուած եւ կերակուր պատրաստել տուած էր, ճաշի վերայ, մեր խնդրանօք, սկսաւ պատմել. «Անցեալ տարիներում վախճանուեց 110 տարեկան ոմն ծերունի, որ յաճախ պատմում էր, թէ՝ «Գիւղումս 500 հայոց տուն կար եւ 5 քահանայ: Խեղճ հայերն, ձանձրանալով լեկզինների յաճախակի աւարառութիւններից եւ նեղութիւններից, մօտ 100 տարի առաջ (Զուբովի ժամանակ) փակեցին եկեղեցու դռները, մեծ, փոքր լալով համբուրեցին նորա սեմերը եւ գնացին Ռուսիա: Բայց ութը գերդաստանն յետ բերին՝ աղաչելով եւ խախանձելով: Այս 8 գերդաստանը յետոյ բռնի մահմեդական դարձրին, որք անկով բազմացան այսչափ: Եկեղեցին մնում էր միշտ կանգուն եւ մեզանից շատերն գաղտնի գնում էինք, մոմեր վառում եւ հայերէն աղօթքներ անում: Եթէ գիւղերումս գնա լսում ես հայերէն անուններ. «Արթին ուշագի, Բաղդասար ուշագի, Օհան օղլի» են, պատճառն այն է, որ դոցա հայրերն եւ պապերն, հայ եղած են»: Այժմ երկու գիւղերումս կայ 330 տուն, որ բազմացած է 8 տնից: Եկեղեցին շարժից փլած է: Ահա այս է գիւղիս հայոց մասին ճշմարիտ տեղեկութիւնն»:

1 Եղծուած էին կէտադրեալ տեղի բառերն:

ՔԻԼՎԱՐ

Շնորհակալութեամբ հրաժեշտ տուինք եւ հեռացանք Թալաբուց, որ Ճղբաց երկրումն է, բայց բնակիչք խօսում են որպէս թէ լինեաց բարբառով: Արդէն անցած էինք Աղ-չայ, Ղարա-չայ եւ Զաղաջուխ գետերով, անցանք նաեւ Վալվալա եւ Շապօրան գետերով եւ բարձրացանք Քիլվար գիւղն: Այս գիւղն հիմնուած է Կովկասեան Մեծ-լեռնաշղթայից Փոքր-լեռնաշղթայի վերայ կախուած է մի լեռնաբազկի վերայ՝ որի հիւսիսային կողմով հոսում է Շապօրան գետն:

Բարեխառն են գիւղիս օդն եւ կլիման, հաճոյական՝ դիրքն եւ տեսարանն, ցուրտ եւ բարեհամ՝ ջուրն, բերրի եւ արդիւնաւոր՝ հողն, միայն ծանր է լինում օգոստոս ամիսներում, տօթակէզ եւ տապտակալի օդն պատճառում է տենդաբեր հիւանդութիւն:

Գիւղիս շրջակայքն ծածկուած են տանձենեաց, խնձորենեաց եւ թթենեաց գեղեցիկ պարտէզներով: Տեղական բերքերն են ցորեն, գարի, բայց ոչ ծախելու: Իսկ նշանաւոր բերքն է տանձի եւ խնձորի չիրն, որ լաւ գնով ծախւում է:

Ահա ժողովրդեան զբաղմունքն:

Քիլվարում կայ մօտ 100 ծուխ միայն հայ բնակիչ, 220 արական եւ 200 իգական: Տարեկան լինում է 15 արական եւ 11 իգ. ծնունդ., 10 պսակ եւ 10 ննջեցեալ: Ունի մի քահանայ, որ պատրաստում է մի քանի փոխասաց:

Գիւղիս եկեղեցին երեք անգամ շինուած է 'ի հիմանէ՝ Ա. Աղուանից Գրիգորիս Ա. կաթուղիկոսի հիմնարկութեամբ, Բ. Հայոց ՌՁԶ.-ին՝ Աղուանից Թովմայ կաթուղիկոսի օրով, Գ. 1877-ին՝ ամբողջապէս թրծեալ աղիւսով եւ ընդարձակ, 4 սեան վերայ:

Ա. եւ Բ. անգամ շինուած են տեղական ժողովրդեան օրօք, իսկ Գ. անգամ կառուցեալ է հանգանակութեամբ պ. Միրզաջան Յովհաննիսեանի, որ իրաւունք ստանալով հանգանակած է Ղզլարի, Հաշտարխանի, Դարբանդի, Ղուբայի եւ Բագուի բարեպաշտ հայերից: Միրզաջանի մահից յետոյ հանգանակութիւնը շարունակում է Արցախի Խաչեն գաւառի Սէյդիշէն գիւղացի Ներսէս-բէկ Սարումեանցն եւ աւարտում եկեղեցու շինութեան թերին՝ կաթուղիկէն եւ տաննաց թիթեղամածը:

Օծուեցաւ 1890 թիւ մայիս 27-ին խորանն յանուն Ս. Գրիգորիսի Աղուանից Ա. կաթուղիկոսի, իսկ եկեղեցին՝ յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի: Օծման հանդիսին ներկայ էին գաւառապետ բարձ. Ստափչանսկին, Ղուբայի առաջաւոր հայերն եւ շրջաբնակ մահմեդականներն:

Քիլվարցիք եւս խօսում են, ըստ ասութեան իւրեանց, լինեաց բարբառով. երեւի թէ ճիղբք ունեցած չեն առանձին բարբառ կամ կորած է: Այժմ Ղուբա գետից մինչեւ Աւշարան խօսում են ընդհանրապէս նոյն բարբառով: Սակայն ամէնքն գիտեն եւ տաճկերէն: Տիրող աղանդն է շիա կրօնն:

Բայց առանց մի քանի խօսք ասելու կարելի չէ հեռանալ Քիլվարից: Գիւղիս ժողովուրդը հանդիստ խղճով կարելի է անուանել կենդանի նահատակ: Ճղբաց ցեղիցը միայն մնացած է հայադաւան Խաչ-մասն եւ Քիլվարն: Հարկ է 'ի նկատի ունենալ, որ Խաչ-մասի հայութիւնը պահպանած են Բալա-Ղազարն, իւր որդին եւ թոռներն: Բայց Քիլվարի ժողովուրդն ինքնին պաշտպանած է ցարդ իւր հայութիւնը: Քիլվարի շրջապատի բնակիչներն մահմեդական են ամբողջապէ՛ս, եւ գիւղս հեռի է Ղուբայի հայերից 35 վերստ տարածութեամբ: Քիլվարի հայն բազմիցս զոհ տուած է իւր նիւթական կարողութիւնը, իւր վարելահողերի մի մասը եւ որ մեծն է՝ իւր զաւակները, մահմեդականաց բռնութեանց եւ բռնաբարութեանց, այսու ամենայնիւ իւր քաջութեամբ անխախտ պահպանած է իւր դաւանութիւնը, հաւատը եւ եկեղեցին: Վերջապէս մեծ գովութեան արժանի է գիւղիս ժողովուրդն, բայց այժմ՝ կարօտ մխիթարութեան, խրախուսութեան, քարոզի եւ քաջալերութեան: Այս պարտականութիւնն վերաբերում է Շամախու թեմի առաջնորդութեան:

Բարձ. Անդրէյ Միխայէլովիչն[1] ահարկու հրամաններով սաստիկ պատուիրեց շրջաբնակ

1 Լեհացի է այս պատուական անձն:

մահմեդականների հոգեւոր եւ մարմնաւոր գլուխներին, որք ներկայ էին, երբէք չվնասել որեւէ անկարգութեամբ Քիլվարի հայոց եւ ապա, գոհութեամբ հրաժեշտ տալով, գնաց Ղուրա:

Քիլվարի խեղճ ժողովուրդն ամբողջ 15 տարի կարօտ մնացած էր պատարագի... եկեղեցու թերութեան պատճառաւ: Թէ որքա՜ն մխիթարուեց պատարագներ տեսնելով եւ հաղորդուելով եւ 10 օր շարունակ քարոզներ լսելով (ստիպուած էի տաճ. լեզուաւ խօսել, որպէս զի հասկանային):

ՔԻԼՎԱՐԻ ՇՈՒՐՋԸ

Քիլվարի արեւմտեան կողմում, 3 վերստ հեռի, կայ Զէյյուա անուն մի գիւղ, որի բնակիչներն հայադաւանութիւնից դարձած մահմեդական են: Գիւղիս գլխին, մի մեծ կաղնի ծառի տակ կայ մի սագաձեւ տաշուած մահարձան, որի երկարութիւնն է մօտ 10 թարշափ: Թէեւ հեռաւոր ժամանակի խարտոյն խարտած, լափած եւ եղծելով թափած է արձանագրութիւնը, սակայն քարի աջ կողմում մնացած են Տ եւ Յ գրեր:

Գերեզմանից վերեւ՝ ճանապարհի երկու կողմերով, ամփոփուած են շատ հին ժամանակից ննջեցեալներ: Այս մի ընդարձակ հանգստարան, է որի միջոցով հնուց եղած է փոքր կածան: Զառիվայր կածանովս հետզհետէ հոսած են անձրեւի հեղեղներ, այնպէս, որ այժմ կածանն ձեւացած է 2-3 սաժէն լայնութեամբ եւ սաժէնից աւելի խորութեամբ մի ահագին խրամ: Խրամիս երկու կողմերում երեւում են հարիւրաւոր կմախքներ, որք ամփոփուած են շերտաքարերից յատուկ շինուած արկղների մէջ: Օրինակ 1 շերտաքար գետնամած, 2 կողակալ, 1 գլխակալ, 1 ոտնակալ եւ մի կափարիչ: Հեղեղները տարած են շատերի գլխակալ եւ շատերի ոտնակալ քարերը, վասն որոյ ամբողջապէս երեւում են կմախքներն, մանաւանդ ահագին կմախքներ եւ չափազանց մեծ գլուխներ: Գոնէ մենք կարծում ենք, որ կռապաշտ դարերից մնացած է հանգստարանս, մահմեդականներն շատերի միջից հանած են հին դրամներ եւ առնացի եւ կանացի զարդեր, բայց որքան աշխատեցինք տեսնել, անկարելի եղաւ, զի ոչ միայն դաղտնապահ են, այլ եւ վախենում են կառավարութիւնից յայտնել:

ԽԱՇՆԻ ԱՒԵՐԱԿ ԳԻՒՂ

Քիլվարից մի ժամ հեռի հիւսիսային կողմում կայ Խաշնի անուն մի աւերակ գիւղատեղի, որի մէջ դեռ մնում է եկեղեցու աւերակն: Եկեղեցու ընդարձակութիւնից երեւում է, որ բազմամարդ եղած է գիւղս, որի մօտ է հանգստարանն. բայց տարած են տապանաքարերի ամենամեծ մասը, իսկ տաճարի քարերից բերած են Քիլվարի նոր եկեղեցու հիմքերը լցնելու համար:

ՈՒԼՎԱՐ

Քիլվարի հարաւ-արեւմտեան կողմում, 4 վերստ հեռի կայ Ուլվար անուամբ մի աւերակ փոքր գիւղատեղի, որի մօտ տակաւին երեւում են և՛ եկեղեցու աւերակն և՛ հանգստարանն: Տապանաքարերի վերայ կան արձանագրութիւններ: Զէյվացիք գրաւած են ուլվարցւոց գետինները եւ այգիները, այսու ամենայնիւ գետիններն եւ պարտէզներն ցարդ պահած են նախորդ տէրանց անունները, ինչպէս են՝ Ստեփան երի, Օհան երի, Աբթիւն երի, Ստեփան բաղի, եւ այլն:

ԴԻ-ԽԱՆ ԿԱՄ ՕՀԱՆ-ԽԱՆ

Քիլվարից դէպի արեւելք մօտ մի ժամ հեռաւորութեան վերայ կայ մի աւերակ գիւղատեղի Դի-խան անուն: Որոշակի երեւում են տնատեղերն եւ հանգստարանն: Բայց արձանագրութիւն կրող քարերից շատերը տարած են մահմեդականք եւ տանում և՛ն հետզհետէ...:

Քիլվարցի Գաբրիէլեան Օհանի հարիւրամեայ մայրն՝ Մարգարիտն, որ ակամատես եղած է (այժմ վախճանուած է), պատմած է բազմիցս, թէ՝ Դի-խանն եղած է Արցախեցի Օհան-խանն: Հայագգի Օհան-խանիս Դի մականունը տուած են չգիտեմ ի՞նչ յատկութեան պատճառաւ: Միայն հաստատ գիտեմ, որ Օհան-խանն Արցախից իւր հետ բերած էր մօտ 100 ծուխ եւ բնակութիւն հաստատած գիւղումն, որ իւր անուամբ կոչւում է Օհան-խան: Օհան-խանն տիրապետած էր շրջարկակ Թուրքերի (մահմեդականաց) գիւղերը իւրանց հողերով: Բայց Թալարի, Խաշնի, Ուլվար եւ ուրիշ գիւղացւոց հետ գնացին Ռուսաստան[1]:

ՇԻՀԱՐ-ԵՐԻ-ՑՈՒ ԲԵՐԴԱՔԱՂԱՔ ՃՈՂԱՑ

Կովկասեան մեծ լեռնաշղթայից դէպի արեւելք թեքուած մի բարձրագոյն սարահարթի վերայ կայ մի աւերակ քաղաքատեղի Շիհար-երի անուամբ, որ մօտ 4 ժամ հեռի է Քիլվարից: Պարիսպներն շինուած են եղել արտաքոյ սովորականի հաստ-հաստ, լայն-լայն եւ երկար-երկար թրծեալ աղիւսներով: Թէեւ այժմ կործանուած են պարիսպներն, սակայն մնում են հիմքերն, որից երեւում է, որ քաղաքս շատ մեծ եղած չէ: Պատերի թանձրութիւնն եղած է մօտ 1 սաժէն:

Քաղաքիս մէջ բուսած են ահագին հաստութեամբ եւ բարձրութեամբ կաղնի եւ հաճարկի ծառեր, որոց հաստարուն արմատներն, քանդելով տների հիմանց պատերը, դուրս թափած են բեկորները: Տներն եւս շինուած են եղել կրաշաղախ ցեխով եւ աղիւսներով: Պարսպիս մէջ անպակաս են արջ, ինձ եւ յոմագ գազաններ եւ կինճեր, եղջերու եւ քոշ, վասն որոյ առանց հրազէնի վտանգաւոր է մերձենալ: Շինութիւններից երեւում է, որ խիտ առ խիտ եղած են բնակարաններն, որոց մէջ նշմարւում է եկեղեցու աւերակն: Մի քանի տարի առաջ ուժգին հողմից արմատախիլ տապալուած են մի քանի հաստ ծառեր, որոց արմատներն գետնի տակից դուրս հանած են երկու մեծ, պղնձեայ կախոցներ, ինչպէս պատմում են ականատեսներն: Հիանալի՜ է տեղիս օդն, օքսանչելի՜ տեսարանն եւ գերազա՜նց ջուրն եւ ամուր՝ գիրքն:

Հաւանական է, որ այս է Ճղբաց Ցոի բերդաքաղաքն, վասնզի բացի սորանից Ճղբաց գաւառներում չգտանք ուրիշ աւերակ կամ շէն քաղաքատեղի, որ համաձայն լինէր Կաղանկատուացու գրածին: Այստեղ հիմնած էր Գրիգորիս Ա. կաթուղիկոսն Աղուանից եկեղեցի, ուր եւ ամփոփած էր Պանդալեան վկայի մասունքը, որն յետոյ գտնուեցաւ Վաչական բարեպաշտի օրով (Մով. Կաղ., Ա. հատ., ԺԹ. գլ.): Ահա այս է Աղուանից Գ. բերդը:

ԽԱԼԹԱՆԻ ԱՄԱՌԱՆՈՑ

Բերդաքաղաքիս արեւելահարաւ. կողմում է Խալթանի ամառանոցն, որ կոչւում է Նովուր-Ճլակ: Մինչեւնոյն լեռնաշղթայի շարունակութեան վերայ, արեւելահայեաց լանջի ստորոտում շինուած է մի փոքր գիւղ, որի բնակիչք են մահմեդականք: Գիւղիս տեղն մի կանաչազարդ, բարձրահայեաց սարահարթ է, որի արեւմտեան, հարաւային եւ արեւելեան կողմերն աղեղնապատ, գոգաւոր եւ ծաղկազարդ լեռներ են, իսկ հիւսիսային կողմն՝ բաց եւ խորանարդ ձոր: Գիւղիս մօտ են լճակներն, որոց մասին գրած ենք արդէն: Գիւղիս միջովն է ճանապարհն, որ տանում է Շամախի, իսկ Ճղբաց եւ Լփնաց սահմանագլուխն է Դաւաչի գետն, որ հոսում է գիւղիս արեւմտեան կողմից, աղեղնաձեւ շրջան անում հարաւից եւ հետզհետէ ընթացքը ուղղում դէպի հիւսիս: Գետիս եւ Խալթանի ամառանոցիս մէջ է այն երկար զառիվայրն, որ կոչւում Էշշակ-եօխուշի: Լանջովս մինչեւ գետն իջնելն տեւում է ամբողջ մի ժամ, իսկ գետիցս ամառանոց ելնելն՝ երկու ժամից աւելի: Ամառանոցիս սարահարթը Վարդէգրուակ է անուանում Կաղանկատուացին (Բ. հատ., ԼԹ. գլ.): Սարաւանդիս վերայ բուքի բռնուած են Իսրայէլ եպիսկոպոսն եւ իւր ընկերներն:

---

1 Մոդրաց երկրից Ռուսաստան գաղթողներն բնակութիւն հաստատած են Մոզդոկի կողմերում Ղուրա եւ Մաչար եւ Ղզլարի Սարաֆան գիւղերում: Գաղթականներն ցարդ պահպանած են իւրեանց հետ տարած լեզուն, հայերէնի հետ միասին:

ԼՓՆԱՑ ԵՐԿԻՐ

Ինչպէս գիտենք կանխաւ, լփնաց ցեղն բնակում էր եւ բնակում է այժմ Դաւաչի եւ Սուղայիդ գետերի, Կասպից ծովի եւ Կովկասեան Մեծ-լեռնաշղթայի գագաթնագծի հիւսիսահայեաց լանջերի միջավայրերում: Լփնաց ցեղն այժմ կոչւում է լահիճ եւ պահած է ցարդ իւր առանձին բարբառը, որի մասին յայտնած ենք առաջուց: Լփնաց երկիրն բաղկացած է լեռներից ու դաշտակներից: Լեռնամասերի արեւմտեան կողմերն գրեթէ կիսով չափ անպէտ ապառաժներ են, իսկ արեւելեան կողմերն շատ տեղերում կան պատուական վարելահողեր, խոտահարքեր, անտառներ, սքանչելի ամառանոցներ, նշանաւոր ջրեր եւ ամուր բերդեր եւ օգտակար հանքային ջերմուկ:

Համարեա թէ ջրարբի են դաշտային մասերն, որք են ծովի արեւմտեան ափերն: Բայց չորային եղած ամառներում պակասում են ջրերն, եւ ցամաքում շատ հեղեղատներ: Դաշտային բերքերն են մետաքսի բոժոժ, բամբակ, որիզ, ցորեն, գարի, կորեկ, տանձ, խնձոր, ձմերուկ, վարունկ, եւն: Իսկ ընդհանրապէս գործում են գորգ, կարպետ, խուրջ եւ շալ:

Ճղբաց եւ Լփնաց գաւառներում կան մօտ 80000 բնակիչք, որոց նախնիքն եղած են հայազաւան:

Աղուանից՝ Դ., իսկ Լփնաց Ա. բերդն գտնւում է Խալթան[1] մեծ գիւղի հարաւային կողմի ձորում, ջերմկի ձորն սկիզբ առած է լանջի վերայ: Բերդս շինուած է կրաշաղախ ցեխով եւ խոշոր քարերով: Տակաւին կանգուն են պարիսպների շատ մասերն: Ամրոցս, որ իւր թիկունքը տուած է Կովկասեան մեծ եւ վերջին լեռնաշղթային, թէպէտ չունի ընդարձակ մեծութիւն, սակայն ունի ամուր դիրք, պատուական օդ, ջուր եւ ախորժելի տեսարան: Շրջապատում երեւում են ապառաժ եւ քարեայ միապաղաղ լեռներ, մշտադալար դենի (գի) եւ ցրդնի ծառեր, սրածայր եւ ցիցցից լեռներ:

Անյայտ են մեզ եւ բերդիս անունն եւ անցեալն:

Աղուանից՝ Ե., իսկ Լփնաց Բ. բերդն գտնւում է Ալթի-Ագաճ անուն մալականի գիւղի արեւելահանդէպ եղած բարձր սարի գագաթի վերայ: Շամախուց Ալթի-Ագաճ 50 վերստ է: Փոքրութեան պատճառաւ կարելի է անուանել բերդակ կամ ղղեակ, որ այժմ անուանւում է Ղըզ-Ղալա (Աղջկաբերդ): Արդարեւ փոքր է բերդակս, որ հիմնուած է քարուկիր շինութեամբ, բայց խիստ ամուր է եւ անառիկ: Զուաձեւ բարձրացած եւ շրջապատից առանձնացած է բերդակակիր սարն, այնքան դժուարատար է բերդակի խիստ զառիվեր ուղին, որ հազիւ է կարողանում այցելուն բարձրանալ ոտով: Ունի հաստատուն պարիսպ, ապահով ամրութիւն: Հարաւային կողմերում տեսնւում են Սուղայիդ գետի լեռներն: Ալթի-Ագահի ալեծածան արտօրայքն եւ խոտահարքերն, արեւելեան կողմում Աւշարան, հիւսիսային կողմում Ճղբաց եւ Լփնաց ազխաղխեալ լեռներն եւ արեւմտեան կողմում Ալթի-Ագահի լեռներն եւ ամառանոցներն: Միայն հազար ափսո՜ս, որ չունի իւր մէջ խմելու ջուր: Զիմացուեցաւ՝ անձրեւաջրո՞վ կառավարուած է բերդակս, թէ՞ ունեցած է ստորերկրեայ ջրի ճանապարհ կամ գետնափոր յատուկ ջրամբար, որ այժմ անյայտացած է՝ ծածկուելով փլատակով:

Քանդուած են իւր միջի շինութիւններն, որք եղած են միայն զօրանոցներ: Անյայտ է մեզ նմանապէս եւ դղեակիս իսկական անունն ու անցեալն:

ԼՓՆԱՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Լփնաց մայրաքաղաքն, որի աւերակներն գտնւում են Շամախու հիւսիսային կողմում, խկապէս Կովկասեան Մեծ-լեռնաշղթայի գագաթնագծի խոնարհած շարունակութեան վերայ, այժմ կոչւում է Ղըզ-Մեյդան, ուր բնակում են աղանդաւոր մալականներ:

1 Այս 300 ծխից բաղկացած գիւղը, որ գտնւում է Դաւաչի գետի աջ կողմի բարձրութեան վերայ, շփոթելու չէ ամարանոց Խալթանի կամ Նովրի հետ:

Լփնիք, ապստամբելով Աղուանից եւ Հայոց թագաւորութիւններից, յարում են պարսից եւ ձեւք բերում մի խախուտ եւ միայն անուանական թագաւորութիւն, որ փութով աներեւութանում է ասուպ աստղի պէս: «Արշաւիր Արշարունի... հարկանէր եւ սատակէր զ Վուրկն քաջ զեղբայր թագաւորին Լփնաց եւ զբազում համհարզս նորին ընդ նմին սատակէր» (Եղիշէ, եր. 143):

Բայց հարկ է յայտնել, որ լփնաց ամբողջ ժողովուրդն հաստատ մնացած էր իւր հայադաւան քրիստոնէութեան վերայ մինչեւ Է. դարի Գ. քառորդն, ինչպէս գրած է Կաղանկատուացին (եր. 189) (Իսրայէլ եպիսկոպոս եւ ճանապարհորդակիցք իւր) «Հասանէին 'ի քաղաքն Լփնաց[1], ուր ընդ առաջ ելեալ նմա (եպիսկոպոսին) ամենայն քաղաքացիքն՝ ընդունէին զնա խնդութեամբ ըստ կարգի եպիսկոպոսաց, մանաւանդ զի մերձեալ էր տէրունական տօնն աստուածայայտնութեան. եւ մտանելով 'ի քաղաքն երեկօթս արարեալ՝ անդէն կատարէին (զտօնն)»: Անյայտ է նաեւ քաղաքիս անունն:

ԱՒՇԱՐԱՆ

Աւշարանն իբրեւ երկրալեզու՝ հրուանդանաձեւ մտած է Կասպից ծովի մէջ: Աղուանից երկրի այս մասն է միայն, որ ամբողջ մի աշխարհագրական աստիճան աւելի երկարած է դէպի արեւելք: Ծովն, մտած երկրալեզուի ծայրն, հասած է մինչեւ հիւսիսային 68°, եւ արեւելային 40 1/2 աստիճանին՝ Ֆէյրրոյ կղզուց հաշուելով:

Երկրալեզուիս վերայ են Փայտակարանի Ալեւան, Եօթնփորակեան Բագին եւ Բագաւան գաւառներն, որոց մէջ բնակում էր 'ի հնումն կասպից ցեղն: Ահա այս մի աշխարհագրական աստիճան տեղն է Աղուանից երկրի ամենանշանաւոր կտորն, Բագուի փառքն ու պարծանքն եւ տէրութեան գանձարանի յորդառատ աղբիւրն: Երկրալեզուիս վերայ են աղահանքի լճակներն[2], նաւթահանքի հորերն եւ շինութեանց համար ժամանակին կիր մատակարարող հրաբուղխներն: Տէրութիւնն նաւթային արդիւնաբերութիւնից ստանում է տարեկան 8,000,000 ռուբլի մաքս: Բաց յայդցանէ տեղական բերքերն են նարինջ, լիմօն, ցորեն, գարի, խաղող, թուզ, քրքում (զաֆրան), ձմերուկ, վարունկ: Ընտանիքներն գործում են գորգ, կարպետ, չուալ, մափռաշ, խուրջ եւ շալ (արականաց վերնազգեստի համար), որք ստոր են Արցախի ոստայնանկութեան գործերից:

Ալեւան գաւառն ընկած է երկրալեզուի ծովն մտած ծայրի վերայ, Եօթնփորակեան-Բագինն՝ միջնամասի վերայ, իսկ Բագաւանն՝ Եօթնփորակեան-Բագնի հարաւային եւ արեւմտեան կողմերի վերայ:

Ալեւան գաւառի ծովի մէջ մտած լեզուակի աջ ու ձախ կողմերում կան գեղեցիկ դաշտակներ, որք ընկած են ծովի եւ լեռների մէջ: Սոյն դաշտակներն թէեւ այժմ ծածկուած են պարտէզներով եւ ցանքսերով, այսու ամենայնիւ կորցրած չեն իւրեանց առանձնայատկութիւնը. բուսցնում են ինքնաբոյս գարի՝ ըստ ասելոյ Խորենացւոյն: Եւ ահա այս է պատճառն, որ դաշտակներս լի են վայրի սագերով, բադերով եւ այլ բազմատեսակ թռչուններով, զորս որսալով՝ տեղաբնակ մահմեդականներն վաճառում են առատօրէն:

Խիստ բարեբեր եւ արգաւանդ են դաշտակներս ամէն տեսակ պտուղներով եւ բերքերով: Բնակիչք մահմեդական են առհասարակ:

Ալեւանի լեզուակի ծայրն վերջացած տեղում հաստատուած է մի մեծ, ծովային լապտեր, որպէսզի գիշեր ժամանակ չվնասուին երթեւեկ նաւերն՝ զարնուելով լեզուակի սրածայր տեղին: Լապտերի մօտ կայ եւ առանձին հեռագրատուն, որ հաղորդակցութիւն ունի Բագուի եւ Դարբանդի հետ:

Եօթնփորակեան-Բագին գաւառի մէջ են հրաբուղխներն, նաւթահանքերն եւ աղահանքերն, որք կոչւում են Մասազի եւ Կուրգալան: Գաւառիս հարաւային կողմումն են Բզովնա հին գիւղատեղին, որը այժմ ամառանոց փոխած են բագուաբնակ մի քանի ունեւոր անձինք եւ տնկած

1 Որ է այժմեան աւերակ քաղաքատեղին:

2 Դործածութեան մէջ եղած աղալճերն կոչւում են Ֆիւրդախանի, Զըխ եւ Մասազուր:

գեղեցիկ այգիներ: Այստեղ կայ 2 հին մատուռ, քարեայ խաչարձաններ, բարիից փորուած ցորենի հորեր, հնձաններ եւ հին հանգստարաններ: Կան արձանագրութիւններ, որոց թուականներն հասնում են մինչեւ Հայոց Պ. [800] թիւն: Հայկական նշաններ երեւում են նաեւ գաւառիս մի քանի թրքաբնակ գիւղերում:

Սուղայիդ գետի ծովախառնրդից բաւական դէպի հիւսիս կայ Խարբ-Զնդան ապառաժ եւ հրաշակերտ լեռն՝ ցցուած ծովեզերքում: Խարբ-Զնդանի մի գագաթի վերայ եւս կայ մի հինօրեայ ամրոց: Այս է Աղուանից Զ. բերդն, որի անցեալն անծանօթ է մեզ:

Փայտակարանի Բագաւան գաւառի մէջ է Բագու քաղաքն:

ԲԱԳՈՒ

Բագաւան գաւառի ծովեզերեայ մասում շինուած է գաւառապետս Բագուն: Մօտ 30 տարի առաջ մի աննշան գաւառական քաղաք էր Բագուն: Բայց երբ սկսաւ գարգանալ նաւթահանութեան եւ սպիտակացնելու արուեստն, այնուհետեւ նահանգական քաղաք դարձաւ Բագուն: Այժմ Շամախին, Ղուբան եւ Սալեանն իւրեանց բոլոր գաւառներով ենթարկուած են քաղաքականապէս Բագուի նահանգապետութեան, իսկ հոգեւորապէս Շամախու առաջնորդութեան իշխանութեան: Նահանգագլուխ քաղաքի բարձրանալով Բագուն, շնորհիւ նաւթին, ընդարձակեց իւր հաղորդակցութեան ծաւալը ո՞չ միայն ամբողջ Ռուսաստանի հետ Կասպից եւ Սեւ ծովի միջոցաւ, այլ եւ Պարսկաստանի, Թուրքմանի, Բախմուտի եւ արտասահմանեան երկիրների հետ՝ երկաթուղիների եւ ծովերի միջոցաւ: Բագուն այսպէս բարձրանալուց յետոյ ընդարձակուեցաւ բազմամարդ բնակիչներով եւ ընդարձակւում է օրէ օր: Աղեղնաձեւ եւ գոգաւոր ձգուած սարն ու ծովն իւրեանց մէջ ներփակած են Բագու քաղաքը, որի այժմեան երկարութիւնն է մօտ 8 վերստ՝ սկսեալ ռուսաց վերի եկեղեցուց մինչեւ Սեւ քաղաքի ծայրն, եւ լայնութիւնն է 4 վերստից պակաս՝ ծովեզերքից մինչեւ լեռնալանջի վերջին բնակարանն: Բնակիչներն են հայ, ռուս, պարսիկ, թուրք եւն ու բազմաթիւ պանդուխտներ կովկասաբնակ ազգերից եւ մինչեւ անգամ արտասահմանեաններից:

Փայտակարանի Ա. եւ Աղուանից է. բերդն է քաղաքիս ամրոցն, որ ունի կրկնապարիսպ բաւական մեծութիւն եւ ծովահայեաց դիրք: Սարահարթի վերայ շինուած բերդս է միակ հնութիւնն Բագաւան գաւառում եւ նոյն իսկ քաղաքում: Պարիսպների բարձրութիւնն է 4-5 սաժէն եւ հաստութիւնն՝ աւելի սաժէնից: Թէ՛ բերդերի պարիսպներն եւ թէ՛ բուրգերն շինուած են ամբողջապէս տաշած, տորոնագոյն քարերով: Արտաքին պարսպի հիւսիսային աւագ դրան արտաքին ճակատի վերայ զետեղուած է մի ցլագլուխ արձան, ինչպէս պարիսպների, նոյնպէս եւ քարարձանի գոյութիւնն շատ հին է: Երեւի թէ մնացած են Հայոց Արշակունի առաջին թագաւորների ժամանակից:

Դարերի ընթացքում երբեմն-երբեմն նորոգութիւններ եղած են պարիսպների միւս մասերի վերայ, որպէս երեւում են հետքերից եւ նշաններից: Նշանաւոր հնութիւն է եւ բերդիս պալատն, որ բաղկացած է շատ սենեակներից, նոյնպէս եւ այն բարձրադոյն աշտարակն, որի գլխին եղած է, կայ եւ այժմ ծովային լապտեր, եւ որի վերայ կայ արաբերէն արձանագրութիւն:

Քաղաքիս տիրած են հայք, աղուանք, պարսիկներ, արաբացիք, թաթարք, կրկին պարսիկներն, հուսկ յետոյ՝ ռուսներն 1808-ին: Բայց 1806-ին ռուսաց Ցիցիանով զօրավարն, որ եկած է լինում բերդս գրաւելու, սպանուում է բերդումս նստող պարսից Հիւսէյին-Ղուլի-խանի դաւանագործութեամբ (Գաղտ. եր. 273):

Պարսիկներն, որք բնակում են բերդումս եւ քաղաքիս հարաւային կողմում, բոլորովին անկարգ եւ խառն ի խուռն շինած են իւրեանց բնակարանները եւ խանութները: Բարեկարգ եւ գեղեցիկ շինուած են հայոց տները, խանութները եւ իջեւանները:

Ծովեզերքն պարսպուած է, իբրեւ պատուար ընդդէմ ալեկոծութեան ծովի, ամենամեծ տաշած քարերով: Շինուած են նաեւ գեղեցիկ նաւակամուրջներ եւ ծովային բաղանիսներ:

Բաղաքումս կայ 3 գործարան, որք նորոգում են շոգենաւեր եւ առագաստաւոր նաւեր: Կայ նաեւ 10 գործարան, որք թէ՛ ձուլելով եւ թէ՛ կռելով շինում են զանազան գործիքներ, այն է շոգենաւերի, նաւթահորերի, նաւթամաքրութեան եւ զտուած նաւթերը Բաթում փոխադրելու համար հարկ եղած գործիքներ, եւն: Սեւ քաղաք կոչուած քաղաքամասում կայ նաեւս 180 գործարան՝ միայն նաւթ սպիտակացնելու: Վերջին գործարաններս նաւթի մնացորդներից պատրաստում են բացի վառելու սպիտակ նաւթից, վեց տեսակ նաւթաիւղեր, որք գործ են ածւում ամէն տեսակ մեքենաների, գործարանների գործիքների համար եւն:

Ծովի վերայ երթեւեկող նաւթակիր շոգենաւերն 60-են թուով, 11-ն պատկանում է առանձնապէս հայոց, իսկ 49՝ միւս ազգերին: Կայ 285 հատ նաւթակիր առագաստաւոր, որից 25-ն պատկանում է միայն հայոց, իսկ մնացեալն՝ ուրիշ ազգերին: Բաց յայսցանէ կայ եւ 23 ապրանքակիր առագաստաւոր, որք պատկանում են այլեւ այլ ազգաց: Իսկ 68 հատ ապրանքակիր եւ մարդատար շոգենաւերից միայն 13-ն պատկանում են հայոց: Վերջապէս Բագուն նշանաւոր է եւ յաջող առեւտրով, վասն որոյ կարելի է համարել Կովկասեան կուսակալութեան առաջին քաղաքը:

Ամռան ծանր են Բագուի օդն եւ կլիման եւ փոքր-ինչ աղահամ եւ անախորժ՝ ջուրն: Զորօրինակ հաղորդակցութիւն ունի Բագուն հեռագիրներով ամէն տէրութեանց երկիրների հետ, նոյնպէս ամէն նաւթահանք, ամէն գործարան, ամէն հիւրանոց եւ ամէն դրասենեակ հաղորդակցութիւն ունին միմեանց հետ թելերով:

Բագուի հայք ունին երկու քարաշէն եկեղեցի, մեծն՝ Ս. Լուսաւորիչ անուամբ, որ շինուած է հրապարակի վերայ եւ փոքրն Ս. Աստուածածին անուամբ, որ շինուած է բերդի ստորոտում: Վերջինս եղած է Բագուի հայոց միակ հին եկեղեցին, ինչպէս յայտնի է շինութեան ներքին եւ արտաքին ճարտարապետական ձեւից: Բայց յետոյ շինուած է Ս. Լուսաւորիչն տրօք ժողովրդեան:

Եկեղեցիներս ունին 2000 ծուխ, որոց մէջ կայ 3502 ար., 3835 իգ. եւ 5 քահանայ: Տարեկան լինում է 189 ար. ծնունդ, 206 իգ., 81 պսակ եւ 313 ննջեցեալ[1]: Կան նաեւ մօտ 3000 պանդուխտ հայեր, որք ծառայում են վարձքով նաւթահորերում, բոլոր գործարաններում, գրասենեակներում, հիւրանոցներում, խանութներում, տներում եւ բեռնակրութեան գործով:

Եկեղեցիներն ունին մի նորաշէն, եռայարկ եւ փառաւոր ուսումնարան:

Ա. յարկում կայ 8 սենեակ, որոց 5-ն դասարան է, 2-ն՝ ուսուցչանոց եւ 1-ն՝ գրադարան:

Բ. յարկն ունի 11 սենեակ, որոց 9-ն դասարան է, 1-ն՝ ուսուցչանոց եւ միւսն՝ գրադարան:

Գ. յարկն բաղկացած է 7 սենեկից, այն է՝ մի ընդարձակ դահլիճից եւ 6 տարբեր մեծութեամբ սենեակներից: Վերնայարկս ծառայում է իբրեւ թատրոն:

Ս. Մեսրոպեան երկդասեան ուսումնարանում ուսանում են 184 աշակերտ, թոշակատու են 106, իսկ ձրիավարժ՝ 78: 1 տեսուչ եւ 7 վարժապետ տարեկան ստանում են 4524 բուբ. ռոճիկ:

Ս. Հռիփսիմեան օրիորդաց երկդասեան ուսումնարանում ուսանում են 164 աշակերտուհի, թոշակատու 111 աշակերտուհի, իսկ ձրիավարժ՝ 53:

1 տեսուչ, 4 վարժապետ, 2 վարժուհի (մին՝ ձեռագործի) եւ մի վերակացուի ստանում են տարեկան 4080 բուբ. ռոճիկ:

Թէ՛ տղայոց եւ թէ՛ օրիորդաց վարժապետների եւ վարժուհիների ռոճիկներն վճարում են թոշակադրամներից, եկեղեցուց եւ ձեռագործների վիճակահանութիւնից:

Քաղաքում կայ եւ Մարդասիրական Ընկերութիւն, որ շինած է իւր ծախքով մի փառաւոր աղքատանոց, ուր պատսպարւում են շատ անտէր եւ անկար աղքատներ: Օրհնա՜լ լինի Մարդ. Ընկերութեան յիշատակին: Սոյն բարեխնամ Ընկերութիւնն իւր դրամական օժանդակութիւնը եւ խնամքը տարածում է նաեւ Աղուանից գաւառների աղքատ դպրոցների եւ այլ չքաւոր ուսանողների վերայ:

Մարդ. Ընկերութիւնն ունի եւ մի ճոխ մատենադարան, որի մէջ գտնւում են հայերէն, ռուսերէն եւ գաղղիերէն բազմաթիւ գրքեր:

---

1 Տեղական ննջեցելոց շարքում 'ի հաշիւ առնուած է եւ պանդուխտ հայոց ննջեցեալները:

ՈՍՏԱՆԻ ԳԱՒԱՌ

Գաւառս, որ Շամախի քաղաքի անուամբ կոչուած էր Ոստանի, Ոստան, Հաշտ, Շամախի, ընկած է Լփնաց եւ Բաղաւան գաւառների սահմանների, այս էլ Ագ-Սու գետակի եւ Սուղայիդ գետի եւ դաշտաբերանի մէջ: Բայց այժմ տիրող կառավարութիւնն երկու մասի բաժանած է գաւառս, այս ինքն է՝ Շամախու գաւառ անուանուած է Փիր-Սհաթ եւ Ագ-Սու գետակների եւ Կովկասեան Մեծ եւ Փոքր (Բոզ-դաղի ստորոտով) լեռնաշղթաների մէջ ընկած տարածութիւնը: Կապրիստանի գաւառ անուանուած է Փիր-Սհաթ գետակի եւ Ալի-Ազաճի միջի եղած տարածութիւնը. կէս մասը՝ Լփնաց եւ միւս կէս մասը Շամախու գաւառներից միացրած է. Սուղայիդ գետի վերնամասն հոսում է միացեալ գաւառիս միջով: Վերջին գաւառս մս Շամախի գաւառի հիւսիսային կողմում չկայ հայ բնակիչ, այլ բնակում են ազանդաւոր մալականներ[1] եւ մահմեդականներ: Մալականներս, որ զրեթէ աքսորուած են Ռուսաստանից, բնակում են Ալթի-Ագաճում, Ղոզլու-Զայ, Մարազա, Ղըզ-մէյատան, Ջաբանի, Զուխուր-Նուրդ եւ Մարեկա գիւղերում:

Ղոզլու-Զայ գիւղի մօտ կայ մի խոր, լայն եւ երկար գետնափոր ական, որ միացած է շատ հնուց: Այցելուն դժուարանում է հասնել ականիս վերջի ծայրն: Նախ, դի գետնի շունչն անցուցանում է լապտերները. երկրորդ՝ դի վտանգաւոր գազաններ կան որջացած ներսում, որք ցերեկներն միշտ ներկայ են լինում, ըստ ասուելոյն մալականներին, երրորդ՝ քայլափոխների արձագանքներն բարձրացնում են սոսկալի աղմուկներ: Դժուարին է պատկերացնել այն երկիւղը, որով պաշարուում են այցելուք լապտերներն անցնելուց յետոյ: Համանման ականներ կան եւ Անի քաղաքի տակ:

Մի քանի տարի առաջ մալական ոմն Մարազի գիւղից վերեւ քանդում է գետինը՝ շինութիւն շինելու: Փորածքից ելնում է մի ահագին խեցեղէն կարաս, որի մէջ լինում է մի հսկայ կմախք, իւր ահագին թուրն եւ մեծ աղեղն: Կմախքի բարձրութիւնն, գլխի արտաքոյ կարգի մեծութիւնն, բազուկների, ազդրների եւ սրունքների ոսկերաց անկանոն երկարութիւնն ապացոյց են խիստ հեռաւոր հնութեան: Երեւի թէ այսպէս կարասներում էին ամփոփում ննջեցեալները կռապաշտ դարերում: Բայց մենք չկարողացանք տեսնել թուրը, մեզ հաւատացրին, թէ յանձնած են ռուսաց տեղական կառավարութեան:

Այսպիսի մի հին թուր տեսանք մեր աչքք Ղասմ-Բեանդի գաւառապետի օգնական Օհանջան-բէկի մօտ, բայց հողն լափած էր թրի կէսը՝ ստորին մասը: Համանմանը տեսանք եւ Ճղբաց երկրի Խաչ-մասում՝ հանգուցեալ Պետրոս-բէկի տան մէջ:

1858-ին Խաչենի Խնածախ գիւղում՝ հեղինակիս ծննդավայրում, Ղարիբ Անդրիասեանցն նոր մարագ շինելիս գտաւ մի համանման կարասում կմախք եւ մի թուր եւ մի քանի խիստ հին դրամներ: Բայց որովհետեւ շատ բամբակների եւ զանազան բաղադրութեանց մէջ ամրացրած էր թուրը, վասն որոյ մնացած էր բոլորովին անվնաս: Ղարիբն, լինելով անհասկացող գիւղացի, ծախեց թուրը Շուշեցի Ռահիմ-բէկին՝ 100 բուբլու: Իսկ վերջինս ծախում է Պետերբուրգում 1000 բուբլու: Այժմ նոյն թուրը գտնուում է Պետերբուրգի կայսերական հնադարանում:

Կապրիստանի գաւառի տեղական գլխաւոր բերքերն են ցորեն, գարի, խոտ, կով, եղն, ձի, գոմէշ եւ ծծումբ:

ՇԱՄԱԽԻ ՔԱՂԱՔ

Խոր ձորեր են Շամախու արեւելեան եւ արեւմտեան կողմերն: Արեւմտեան ձորով հոսում է Մէյսարու վտակն եւ արեւելեան ձորով մի փոքրիկ առու: Երկու ջրերս միանում են պարսից թաղի ստորոտում եւ խառնուում Փիր-Սհաթ գետակին: Քաղաքիս վերնամասն հարթ է, միջամասն՝ լանջ, ստորին մասն՝ հովտահարթ:

1 Մալականներս գլխաւորապէս պատկանում են դուխովնի եւ բարիստ աղանդաւորների տեսակներին:

Քաղաքս, ըստ Կիրակոս պատմագրի, շինուած է Շաթ-խաղրից, իսկ ըստ Վարդան աշխարհագրի՝ պարսից Ատլ-Շրուանից, որի անուամբ կոչուեցաւ Շրուան եւ Շամախի: 1585-ին Օսմանցւոց Օսման փաշան պատերազմաւ գրաւում է Շամախին (Առ. պատ., եր. 491): 1607-ին Ա. Շահ-Աբաս Շամախին յետ է առնում օսմանցիներից (Առ. պատ., եր. 491): 1721-ին լեկզիներն գալիս են, գրաւում Շամախին, կոտորում պարսիկ ժողովուրդը (Ես. կաթ., եր. 31): 1723-ին կըրկին անգամ օսմանցիք տիրում են Շամախի քաղաքին:

Բայց 1734-ին Նադր-Շահն յաղթում է օսմանցւոց, պատերազմաւ յետ առնում Շամախին, Շաքին, Գանձակը եւ Թիֆլիզը, խոպան կործանում Շամախի քաղաքը եւ 700,000 գերի տանում Պարսկաստան Աղուանից երկրի հայերից եւ վրացիներից[1]: Սակաւաթիւ մնացեալ շամախեցի հայոց համար շինել է տալիս Շահն դաշտաբերանում Գարդման գետակի աջ ափի վերայ հողէ բերդ, որի մէջ բնակեցնում հայերը: 1735-ին Հայոց Աբրահամ կաթողիկոսի թախանձանաց զիջանելով՝ Շահն գրաւոր իրաւունք է տալիս մնացեալ շամախեցւոց ելնել հողէ բերդիցն եւ բնակիլ այժմեան Ագ-Սու կոչուած տեղում, վասն զի լեռնասուն օդին ընտելացած հայերն, չկարողանալով տանել դաշտային խորշակահար եւ տօթակէզ օդը, տալիս էին մահուան զոհեր[2]:

Նադր-շահի մահից յետոյ հայերն կրկին տեղափոխւում են Շամախի: Ներկայ դարիս Ա. քառորդում Մուստաֆա-խանն Շամախու բնակիչները փոխադրում է Փիթ-դաղի[3] գլուխն, որ 12 ժամաւ հեռի է Շամախուց դէպի քաղաքիս արեւմտեան հիւսիս եւ կցուած Գարդման բերդին: Բայց ռուսաց ահեղագոչ թնդանօթներն իջեցնում են ժողովուրդը վերստին Շամախի եւ խանը փախցնում Պարսկաստան:

ա. 1669-ին մեծ երկրաշարժ տեղի ունեցած է Շամախում, ուր փլատակներում սպանուած են մօտ 8000 մարդիկ:

բ. 1806-ին եղած երկրաշարժով կործանուած է Շամախու բերդն, որ է Աղուանից Ը. բերդն:

գ. 1828-ին յուլիս 9-ին եւ 28-ին եղած է մեծ երկրաշարժ, որով փլած են Շամախում 247 տուն եւ 30 խանութ, թող վնասուած շէնքերը: Իսկ շրջակայ գիւղօրայքում փլած են 300 տուն եւ մի եկեղեցի: Միեւնոյն ժամանակ Սաղիան գիւղի մօտ երկու եւ կէս վերստ երկարութեամբ եւ կէս սաժէն լայնութեամբ պատռուած է գետինն, որից ցոլացած է գիշերներն կրակ եւ բոց: Քանդուած է նաեւ Սաղիանի եկեղեցին:

դ. 1859 մայիս 30-ին, կէս օրից յետոյ ժամի 4-ին վերստին լինում է սաստիկ երկրաշարժ, որով պատռուում է Սաղիանի մօտ միեւնոյն տեղն եւ անյայտանում Շաղլանց կոչուած աղբիւրը, որն կրկին բղխում է 1883-ին:

ե. Երկրաշարժ եղած է եւ 1872 յունիս. 12-ին առաւօտեան ժամի 9-ին, քանդուած է Շամախու հայոց Նորակառոյց եկեղեցին, փլչում է լուտերականաց ժողովարանն եւ սպանում 25 մարդ[4], կործանուում են շատ տներ եւ խանութներ, փլատակների ներքեւ մեռնում են բազմաթիւ մարդիկ եւ երեխայք: Կործանուում է Սաղիանի վանքն: Մատրասայ աւանի մօտ 5 վերստ տարածութեամբ տեղ ճեղքուում է գետինն եւ մի քանի օրեր շարունակ բուրում ծծմբի գարշահոտութիւն:

զ. Թեթեւ եւ անվնաս շարժեր տեղի ունեցած են 1875 յուլիս 26-ին, 1886 յունիս 30-ին, 1888 մայիս 14-ին եւ յունիս 14-ին:

Մի քանի ռուս բնագէտներ կարծիք յայտնած են, թէ նաւթի ամենամեծ ամբարն գտնուում է իսկապէս Շամախու տակում, որից պատճառուում է յաճախակի երկրաշարժ:

Տեղական բերքերն են խաղող եւ պատուական գինի: Ժողովուրդն զբաղուած է վաճառականութեամբ եւ ամէն տեսակ արուեստներով: Ծաղկած է մանաւանդ մետաքսագործութեան

1 Պատ. Աբր. Կրետ., եր. 58:

2 Պատ. Աբր. Կրետ., եր. 65-66 եւ ԽԲ. գլ.:

3 Թէ՛ հողէ բերդի մօտ եւ թէ՛ Փիթ-դաղում դեռ մնում են հայոց հանգստարաններն:

4 Լուտերականաց քարոզիչ Սարգիս վարդապետ կոչուածն յորդորում է իւր ունկնդիրները, որք ո՛չ վախենան եւ ո՛չ շարժուեն տեղերիցն, այլ ուշադրութեամբ լսեն քարոզը, իսկ ինքն իսկոյն փախչում է լուսամտով, եւ մեռնում են բոլոր ունկնդիրներն...

արուեստն. ոստաններով գործում են մեսաքսեայ ընտիր կերպաս. վերմակների երեսներ. կանացի հագուստեղէն, զանազան գունով եւ մեծութեամբ թաշկինակներ. գարդեր եւն. եւն:

Շամախաբնակ ժողովրդեան գրեթէ կէս մասն գաղթած է Արցախի գաւառներից:

Ամռան ծանր են քաղաքիս հովտահարթի (մահմեդականաց թաղերի) օդն եւ կլիման. ջերմագին՝ լանջերինն (մահմեդականաբնակ), բարեխառն եւ ախորժելի՝ վերնամասի (հայոց թաղի) օդն եւ կլիման. վատ չէ եւ ջուրն:

Քաղաքումս կայ 375 հայոց[1] տուն, 1846 արական, 1727 իգական եւ 3 քահանայ: Տարեկան լինում է 85 ար., 69 իգ. ծնունդ., 25 պսակ (5 այրի ընդ այրւոյ). 31 ար. եւ 27 իգ. ննջեցեալ: Ամենաերկար ապրողի կեանքն չէ աւելանում 90 տարուց:

Ունին երկու եկեղեցի, որոց հինն քայքայուած է շարժից. հեռու ապէս՝ անդորձանելի. բայց ունի արձանագրութիւն:

Արեւմտեան դրան հիւսիսային կողմում.

«Հաւատարիմ տնտես բանին,
Տէր Գրիգոր հայր ծերունին.
Պատճառ եղեւ եւ շինութեան
Եւ յորդորիչ ժողովրդեան:
Կազմեալ տաճար մեծ արքային
Բազում աշխատանք եւ չարչարանք,
Հազիւ կարաց եւ կատարան,
Աստուած տացէ իւր եօթարփեան
Երանաւէտ ձայնին արժան:
Եւ յետ աստեացս ելանելոյն
Արժան առցէ արքայութեան
Հազարորդի հարիւրորդին
Եւ վեցտասան եօթներորդի:
ՌՃԿԷ»

Նոյն դրան ճակատին.

«Ի ՌՃՕ. թուին Հայոց ի ժամանակս Շահ-Սուլթան Հիւսէին ինքնակալ արքային Պարսից, որ եւ ըստ խնդրոյ Թիֆիզեցի Մատինի որդի Էլչի Թաղին հոքմ էր տուեալ վասն շինութեան սուրբ եկեղեցւոյս. Տէր Աստուած իւր թագաւորութիւնն հաստատուն պահեսցէ եւ Էլչի Թաղին հին եւ նոր ննջեցելոցն հանգիստ արքայութիւն պարգեւեսցէ: Եւ արդ՝ մեք Թիֆլիզեցիքս...»

Աւազանի նեբքեւ.

«Սուրբ աւազանս յիշատակ է հանգուցեալ Սանաթին. Բարեխօսեցէ՛ք վասն իմ անուան Տէր Յովհաննէս եւ իւր կողակցին 'ի Քրիստոս. Սուլթան Կուլեանց թվին ՌԼՋ.-ին»:

Նոր եկեղեցին, որ բաւական ընդարձակ է եւ վերնամասն փայտաշէն, անուանւում է Աստուածածին: Ունի երեք դուռն, հիւսիսային դրան վերայ է հետեւեալ արձանագրութիւնն:

«Ընդէ՞ր կոթողք, հի՞մ եւ արձանք՝ վէմք քարակոփ յարդարին,
Գիրք քանդակին՝ գովեստք տողին՝ բանք 'ի նոսին յերիւրին.
Զի՞ զմեռելոյն, զի՞ զանցելոյն միշտ առ յապայն կենաց ճառ,
Փոխան գործոց գիր խօսեսցի՝ գոգ վէպ անանց կայցէ քար:
Իսկ քեզ առ ի՞նչ արձան վիմարդ կամ ոսկեզօծ ներբողեան,
Եթէ դու ինքն քեզ կառուցեր զամրակառոյց մահարձան
Եկեղեցիս այս Տիրամօր քո պերճ անուան միշտ քարոզ,
Քեզ օրհնութիւն աւուր աւուր սա երգեսցէ յաւիտեան:
Ե՛րթ վաճառեա՛, ասաց Յիսո՛ւս, զինչս քո տո՛ւր աղքատաց,
Ահա՛ գանձք իմ, Տէ՛ր բարեխնամ, կարօտելոց ահա հաց,
Զայս ասացեր, տուն շինեցեր դու Աստուծոյ հոյակապ,
Եւ զկայսերն ետուր կայսեր, որ զքեզ խաչիւ պսակեաց:
Աղէ՛ քո գանձք անդ են յերկինս՝ անապական, կենդանի,
Հաւատք եւ գործք անդ ծեռն 'ի ծեռն քեզ զուգընթաց յատենի,
Ահա անուանդ ազնիւ տոհմիդ գործոց բարեաց յիշատակ,
Քոյինաստեղծ դարուց 'ի դար կացցէ տաճարս աստ յերկրի»:

Նոյն դրան արեւելեան հանդէպ ամփոփուած է եկեղեցիս իւր ծախքով շինել տուողի մարմինն: Գերեզմանի վերայ բարձրացած է թանկագին քարից առանձնապէս շինուած մի մահարձան, որ կրում է սոյն արձանագրութիւնը.

«Աղայ Պետրոս Յակովբեան Ներսիսեանց յազնուական տոհմէ Մելիքեանց Հայաստանի պատուանուն քաղաքացի եւ ասպէտ Սրբոյն Աննայի երրորդ աստիճանի. հանգեալ ի Տէր 'ի 20 ապրիլի 1856 ամի 'ի հասակի ծերութեան»:

Միւնոյն դրան արեւմտեան կողմում.

«Ընդ վիմաւս հանգչի մարմին Կարապետի Յովհաննիսեան Քալանթարեանց, ծնելոյ 'ի 29 փետրվարի 1833 ամի, վախճանելոյ 'ի Մոսկուա 'ի 15 նոյեմբերի 1879 ամի»:

Շամախին ունի երկդասեան երկսեռ եկեղեցական-ծխական ուսումնարան եւ մի աղքատ մատենադարան:

Տղայոց ուսումնարանում կայ 80 աշակերտ, որից թոշակառու են 47-ն, իսկ ձրիավարժ՝ 33-ն:

Ս. Սանդխտեան օրիորդաց երկդասեան ուսումնարանում կայ 49 աշակերտուհի, որից 46-ն թոշակառու, իսկ 3-ն ձրիավարժ:

Երկսեռ ուսումնարաններն միասին ունին 1 աւագ ուսուցիչ, 4 ուսուցիչ, 1 վարժուհի, որք տարեկան ստանում են 2350 ռուբ. ռոճիկ:

Ռոճիկներն վճարւում են թոշակադրամներից եւ եկեղեցու արդիւնքից եւ ձեռագործների վիճակահանութիւնից:

Աղուանից կաթուղիկոսութեան մահից յետոյ 3 թեմի բաժանուած է երկիրն: Բ. թեմն է Շամախու վիճակն, որի առաջնորդանիստն է Շամախին:

ՇԱՄԱԽՈՒ ԳԱՒԱՌ

Ինչպէս կանխաւ գրած ենք, գաւառս ընկած է Փիր-Սհաթ եւ Սպիտակ-գետ (Աղ-Սու) գետակների դաշտաբերանի եւ Կովկաս սարի մէջ: Գաւառումս կան հետեւեալ շէներն ու գիւղերն.

ա. ԱՐՓԱԻՈՒՏ շէն, որ գտնւում է Շամախու հարաւային կողմում 3 ժամ հեռի, շինուած դաշտաբերանի վերայ մի խոր ձորում: Բնակիչք ամբողջապէս հայ են, որ գաղթած են 1798-ին Արցախի Հատրութ, Թաղլար, Դահրազ, Խաչմաչ, Ծարտար, Թաղասեռ գիւղերից եւ պահպանած իւրեանց նախկին լեզուն:

Բէկական է Արփաւտի հողն, բայց բերրի եւ արդիւնաւոր, ժողովուրդն՝ ժիր եւ աշխատասէր եւ առողջանձն, օդն՝ բարեխառն, ջուրն՝ պատուական:

Տեղական բերքերն են ընտիր ցորեն, գարի, հաճար, ոսպ, դինի, խաղող եւն. եւ ժողովրդեան զբաղմունքն է երկրագործութիւն:

Գիւղումս կայ 46 ծուխ, 183 ար., 155 իգ.: Տարեկան լինում է 8 ար. ծնունդ, 6 իգ., 3 պսակ եւ 4 ննջեցեալ: Ամենաերկար կեանքն է 100-115 տարի:

Ունին մի նորաշէն եկեղեցի Ս. Մեսրոպ անուն, ձեղունն՝ փայտաշէն, որի մէջ 7 ամսից վեր պատարագ եղած չէ...:

բ. ԴԱՐԱ-ՔԱՐԲԱՆՋ շէն, որ հեռի է Արփաւտից 2 ժամ դէպի արեւմուտք եւ ունի միեւնոյն դիրքը եւ բերքերը եւ բէկական հողը, բայց ամռան տօթագին է օդն եւ վատ ջուրն, վասն որոյ երկար ապրողի կեանքն է 85-90 տարի:

1 Լուտերական եղբայրներն բաղկացած են 70 տնից:

Ամբողջ հայ են բնակիչներն եւ միեւնոյն թուին միեւնոյն պատճառաւ գաղթած Արցախի 3օր, Ծամձոր, Թաղլար եւ Ճարտար գիւղերից:

Շինուած կայ 38 ծուխ, 115 ար., 94 իգ.: Տարեկան լինում է 5 ար. ծնունդ, 4 իգ., 2 պսակ, 2 ար. եւ 2 իգ. ննջեցեալ:

Գ. ԽԱՆԻ ՇԷՆ, որ շինուած է Բոզ-դաղից դէպի Ագուանից դաշտն թեքուած մի լեռնաբազկի սեռի վերայ եւ խիստ մօտ Դարա-Քարքանջին: Խոր ձորեր են շինիս արեւելեան եւ արեւմտեան կողմերն, բայց զուարճալի է հարաւահայեաց դիրքն, քանզի մօտուստ երեւում են Ագուանից դաշտն եւ Կուր գետի անտառներն, իսկ հեռուստ՝ Արցախի եւ Փայտակարանի լեռներն եւ Երասխ գետն, մանաւանդ օդի պարզ եղած ժամանակ:

Թէեւ վատ չէ տեղիս ջուրն, բայց հողմուտ, խիստ եւ վնասակար է օդն եւ կլիման, վասն որոյ երկար ապրողն չէ անցնում 70 տարուց:

Արքունի են հողերն եւ նոյն բերքերն, միայն սակաւ է վարելահողն, որ է 180 դեսեատին (օրավար), այնպէս որ անձգլուխ չէ հասնում մի օրավար: 180 օրավար վարելահողով ապրում է 206 անձն, վասն որոյ աւելի աղքատ է շինիս ժողովուրդն, որ գաղթած է Արցախի Ծամձոր, Ասիլ եւ 3օր գիւղերից նոյն թուականաւ եւ պատճառաւ:

Ժողովուրդս բաղկացած է 40 ծխից, 110 ար. եւ 96 իգ. անհատից: Տարեկան լինում է 7 ար. եւ 6 իգ. մկրտութիւն, 3 պսակ., 4 ար. եւ 3 իգ. ննջեցեալ:

Ունին Ս. Յարութիւն անուամբ մի եկեղեցի, որ միեւնոյն ժամանակ Դարա-Քարքանջի եկեղեցին է եւ մի քահանայ՝ հովիւ երկու շէների համար:

Դ. ՔԱՐՔԱՆՋ ԳԻՒՂ, որ գտնւում է Խանի շինի արեւելեան կողմում, մի բարձրաւանդակ եւ օդաւէտ տեղում:

Քարքանջի բնակիչք ամբողջապէս հայ են եւ բնիկ տեղացի: Սքանչելի են տեսարանն, օդն, կլիման եւ ջուրն (Զարնջի աղբիւրինն):

Նոյն են տեղական բերքերն, միայն թէ այստեղի գլխաւոր բերքն է խաղող եւ գինի: Ամբողջ գիւղն ծածկուած է խնամքով մշակուած այգիներով:

Արքունի է հողն եւ բարեբեր: Գիւղումս կայ 231 ծուխ, 705 ար., 603 իգ.: Միամեայ շրջանում ծնւում են 41 ար., 31 իգ. մանուկներ, լինում է 20 պսակ, 13 ար. եւ 12 իգ. ննջեցեալ: Ամենաերկար կեանքն է 90-100 տարի:

Հոյակապ եւ գմբէթաւոր է եկեղեցին, որ կրում է Ս. Աստուածածին անունը, ունի միայն մի քահանայ: Մաքուր դիրքի մէջ գտայ խորանը, սեղանը, աւազանը եւ զգեստներն ու անօթները: Եկեղեցիս ունի սոյն արձանագրութիւնը. «Կառուցաւ սուրբ տաճարս յանուն Սրբուհւոյ Աստուածածնի, հիմնադրութեամբ 'ի սէր Ազգի Շամախաբնակ Յարութիւն Ղազարեանի եւ կատարեցաւ 'ի ձեռն ժառանգի նորին Մարգարէի Լազարովի 'ի նոյեմբերի 4 1848 ամի»:

Եկեղեցին ունի 253 բուրլի 58 կոպ.:

Եկեղեցուս հիմքը փորած ժամանակ (հին տաճարի տեղում) գտնում են հեաւեւեալ արոյրէ հնութիւնները. 6 հատ հասարակ աշտանակի պատուանդան, 2 քշոց, 1 հատ ժամարարի կոնք իւր ջրամանով, 1 հատ մեծ խնկաման եւ 2 փոքրիկ զանգակ: Պատուանդաններից միայն մին ունի այս արձանագիրը, քանդակուած հին եւ ոճեւ տառերով. «Կուլիհ 'ի յիշատակ ետուր սորա Հ. ին (Փրկչ. 621 թուին)»: «Այս է յիշատակս Բարիզու եւ ուր (իւր) կողակից ս.»: Յետոյ գեղեցկաձեւ տառերով «Գալուստի որդի Սահակին»: Քշոցներից միոյն մէջտեղում. «Յիշատակ է Սարտարին եւ Եաղուպին այս քշոցս», իսկ եզերքներով հրեշտակաց պատկերների շուրջն. «Ահեղ բանակք Տեառն շուրջ են զերկիւղածովք: Բարեկամք ազգի մարդկան, միջնորդ մահու եւ յարութեան Միքայէլ եւ Գաբրիէլ մեծք, որ կայք միշտ (առաջի) Ամենասուրբ Երրորդութեան, աղաչեմք զձեզ»:

Ջրափարչի փորի վերայ. «Յիշատակ է Թումանի որդի Օվասափին, ետուր Քարքանջու եկեղեցուն»: Խնկամանի վերայ. «Յիշատակ է Թուխիկին, ետու ՌԹ. Քարքանջի եկեղեցուն»: Զանգակներից միոյն վերայ. «Յիշատակ է Սիմէունի որդի Մկրին Քարքանջի եկեղեցուն թվ. ՌՃՁԳ.»:

Ուխտատեղի

Գիւղիս արեւելեան կողմում հանդստարանի մէջ կայ մի քարուկիր մատուռ, որ իւր ճակատին կրում է սոյն արձանագիրը.

«Այս նահատակս յայլազգաց է 'ի ծնէ բուն,
Յետոյ եկեալ 'ի հաւատս Լուսաւորչուն[1],
Ձեռնադրեցաւ սուրբ վարդապետ Սահակ անուն,
Որոյ վասն հուրբ փոխեցաւ այրեցեալ իսկոյն.
'Ի սէր սորա կառուցեալ է զայս փոքրիկ մատուր
Շամախեցի Եղիազարեան այրն Խաչատուր.
Հայցէ 'ի ձէնջ հանդիպողաց՝ սրտիւ տխուր՝
Մաղթել 'ի Տեառնէ վասն ինքեան կենդանի ջուր.
1817 թվին Մայիսի 1-ին»:

Ե. ՌԱՎԱԽԱՆԻ գիւղ. Քարքանջի արեւելեան կողմում. հողն՝ բէկական եւ բերրի. բնակիչք՝ հայ եւ բնիկ տեղացի, այգեպործ եւ երկրագործ: Ըստ ամենայնի նոյն են տեղական բերքերն:

Գիւղումս կայ 86 ծուխ. 215 ար., 186 իգ.: Տարեկան լինում է 13 ար., 10 իգ. ծնունդ., 4 պսակ, 6 ար. եւ 6 իգ. ննջեցեալ: Ամենաերկար կեանքն է 80 տարի. ամռան վնասակար է օդն, գի գիւղն շրջապատուած է լեռներով, օտարական է քահանան, անմաքուր՝ եկեղեցին, սեղանն, խորանն, աւազանն եւ անօթներն, քահանաս է հովւում եւ Արփաւուտը: Փայտաշէն է եկեղեցու վերնամասն, որ ունի 235 բուր. եւ կոչւում է Ս. Աստուածածին:

Զ. ՄԱՏՐԱՍԱ աւան, որ գտնւում է Քալախանու հիւսիս արեւմտակողմում 3 քառորդ ժամ հեռի եւ շինուած է մի տեսարանաւոր սարահարթի վերայ: Բարեխառն է օդն եւ կլիման, առողջարար՝ ջուրն եւ հռչակաւոր գինին. բէկական է հողն, բայց բէկից ժողովուրդն գնած է հողը, որ այժմ սեպհականութիւն է բնակչայ: 350 օրավար (դեսեատին) է այգիների տարածութիւնն:

Բնակիչներն, որ գաղթած են Ասպահանի կողմից, խօսում են պարսկերէն բարբառով, որ մերձաւորութիւն ունի լփնաց կամ լահճաց բարբառին: Սակայն ամէնքը գիտեն հայերէն:

Մատրասա աւանն բաղկացած է 483 ծխից, 1477 ար. եւ 1303 իգ. անհատներից: Տեղի են ունենում տարեկան 88 ար., 77 իգ. ծնունդ, 30 պսակ, 22 ար. եւ 20 իգ. ննջեցեալ: Երկար կեանքն հասնում է 100-115 տարի:

Ունին մի ընդարձակ եւ հոյակապ եկեղեցի Ս. Աստուածածին անուն, կանգնած 6 սեան վերայ. ունի 4 քահանայ եւ 1143 բուրլի եւ 71 կոպ.:

Սհա տաճարիս արձանագրութիւնն

«Հասարակութիւններիս (թիւնս) շինեցինք Աստուածածնայ եկեղեցիս Մատրասայ 1860 ամի 30-ին Մայիսի»: Եկեղեցուն կից է լարձրաշէն զանգակատունն:

Եկեղեցումս կայ մի գրչագիր աւետարան՝ գրուած բամբակեայ հաստ թղթի վերայ: Գեղեցիկ են գրերն, բայց այնքան գեղեցիկ չեն պատկերները, թռչնագրերը, ծաղիկներն ու նկարները: Սկզբում կան աւետման, պայծառակերպութեան, Ղազարոսի յարութեան, Յուդայի մատնութեան, Քրիստոսի խաչելութեան, թաղման, դժոխքի աւերման, Քրիստոսի յարութեան, համբարձման, հոգեգալստեան, անդուք մեծատան, որ տանջւում է դժոխքում, աղքատ Ղազարոսի, որ նստած է Աբրահամի գոգում, Քրիստոսի քարոզութեան, Աստուածածնայ եւ չորս աւետարանչաց պատկերներն: Կարեւոր համարեցինք յիշատակարանիցն ընդօրինակել հեաւեւեալը.

«Եւ արդ՝ գրեցաւ սուրբ աւետարանս 'ի գաւառս Մոկաց ձեռամբ Յովհաննէս քահանային եւ

1 Յայսմաւուրի ապրիլ 17-ի ճառում գրուած է, թէ նահատակս եղած է ազգաւ պարսիկ, ապա ընդունած Լուսաւորչական դաւանութիւն, ապա ուսումը ստանալուց յետոյ ձեռնադրուած վարդապետ Սահակ անուամբ եւ ապա հրով այրուելով նահատակուած Շամախու խանի անիրաւ հրամանով: Նահատակիս աճիւնը բերած եւ ամփոփած են մատրանս սեղանի տակ, վասն որոյ այն օրից եղած է մեծ ուխտատեղի: Սովորաբար Վարդավառի տօներին խռնւում է ուխտաւորաց մեծ բազմութիւն, ինչպէս տեսանք եւ մենք:

ծաղկեցաւ ի քաղաքս Խիզան ձեռամբ Խաչատուրի տգէտ քահանայիս: Շնորհիւ Տեառն սկսաք եւ ողորմութեամբ նորին կատարեցաք ի մեծ թուականիս Հայոց ՌԾԴ. (1605) ի հայրապետութեան Էջմիածնայ Տեառն Տէր Գրիգորիսի Ուրֆայեցւոյ եւ ի մերոյս Աղթամարայ Տեառն Տէր Գրիգորիսի, թագաւորութեան այլազգեաց Սուլթան Մահմատ Խոնդքարին... ի դառն եւ ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց եւ ի սղութենէ հացի. զի լիտր խոնդքարին ալիւրն եղեւ Ժ. շահի եւ չամիչն՝ ԺԲ. եւ բրինձն Լ. շահի. չափ ցորեն ԺԸ. շահի եւ կորեկն՝ ԺԳ. շահի: Վա՛յ ինձ, որ ի Սեւաստու երկիրն շատք գտղայք կերան: Եւ ի մեր երկրիս եւ ի ծովուս բոլորն Ժ. օր խոտով եւ բանջարով անցուցանէին եւ բազումք սովամահ եղեն եւ սաստկացեալ է պատուհասն ի վերայ ամենայն երկրիս մեր: Զի երեկ (եկն) Կարմիր գլուխն[1] բազում զաւրաւք եւ էառ զԹաւրէզ, զՋուղա, զՆախջըվան, զԷրեւան, եւ զամենայն թեմս նոցա եւ նստաւ յԷրեւան տարի մի: Մինչեւ եկեալ ի Ստամբոլայ ոմն սարտար Ջղալ անուն անթիւ զաւրաւք եւ արար փախըստական զազգն պարսից: Եւ գոռոզ պարսիկքն արարին մեծ վնաս. զի զամենայն ազգս հայոց, որ էին յԷրեւան, մինչ ի Թաւրէզ զամենեսեան գերի տարաւ զայր եւ զկին. ծերս եւ զտղայս: Եւ այնչափ քանդեաց եւ աւերեաց, որ զշուն եւ զկատուն այլ սատակեցոյց եւ զմարդն առաքեաց ի Խուժաստան աշխարհն իւրեանց եւ եղեն այն ամենայն քրիստոնեայքն ցիր եւ ցաւ մինչեւ ի Քաշան եւ յԱսպահան: Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց. բայց գոհանամք զԱստուծոյ՝ որ ի վիճակն Քրիստոսի եմք:

Եւ ինքն Կարմիր գլուխն նստաւ ձմեռն ի Թաւրէզ եւ զաւրքն թուրքաց դարձաւ բազում նեղութեամբ ի Վան: Եւ ի սոյն գարնան դարձեալ եկն Կարմիր գլուխն ի վերայ Վանայ մեծաւ քաջութեամբ, մինչ որ արար փախստական զՋղալն ի յԱրզրում եւ քուրդ Միրշաֆն եւ ամենայն ամիրայքն գնացին փախստեամբ ի Ջիզիրայն եւ Կարմիր գլուխն դարձաւ ի Սալմաստ: Բայց առաջիկայն Աստուծոյ է յայտնի»:

Նկարները ծաղկազարդող Խաչատուր քահանան մի բան միայն յիշած է յիշատակարանում աւետարանը գրել տուող Խոջա-Դալմանի եւ սորա բոլոր կենդանի եւ ննջեցեալ ազգականաց անունները: Ապա գրած է վերջում. «Եւ արդ՝ կացցէ սուրբ աւետարանս ի քաղաքս Շաւշ, որ է Ասպահան՝ ի դուռն սուրբ եկեղեցւոյս Ամենափրկչի, որ է վանքն Ջուղայու»:

Եկեղեցին ունի միդասեան ծխական ուսումնարան, ուր վարժւում են 80 երեխայք, 68 թոշակատու եւ 12 ձրիավարժ: Երկու ուսուցչաց վճարում են տարեկան 800 ռուբ. ռոճիկ, որ գոյանում է թոշակատուներից, եկեղեցուց եւ տեղական ընկերութիւնից:

Է. ՄԻՐԻ-ՇԷՆ, որ շատ հեռի չէ Մատրասից: Բնակիչք գաղթած են Արցախի Միրի-Շէնից, Կղարծի, Հատրութ եւ Շոշու գիւղերից: Գեղեցիկ է շինիս դիրքն, պատուական՝ ջուրն, բարեխառն՝ օդն, եւ արդաւանդ՝ երկիրն: Միւնոյն են տեղական բերքերն: Հայք ունին 13 տուն, 38 ար. 37 իգ.: Լինում է 2 ար. 2 իգ. ծնունդ. 1 պսակ եւ 1 ննջեցեալ: Հոգեւոր պէտքերն կատարւում են Մատրասու եկեղեցում:

Ը. ՄԷՅՍԱՐԻ[2] գիւղ, որ կէս ժամ հեռի է Միրի-Շէնից դէպի հիւսիս, ունի նշանաւոր օդ եւ կլիմա, տեսարան եւ ջուր: Բնակիչք հայ են ամբողջապէս:

Հողն՝ արքունի, 25 ծուխն՝ բնիկ տեղացի, իսկ ամենամեծ մասն գաղթած է Արցախի Շոշու, Աւետարանոց, Հատրութ, Յօր եւ Դոզ գիւղերից, նոյն են տեղական բերքերն եւ զբաղմունքներն:

Գիւղումս կայ 88 ծուխ, 266 ար. 232 իգ.: Լինում է տարեկան 15 մկրտութիւն ար. եւ 10 իգ., 10 պսակ, 5 ար. ննջեցեալ եւ 4 իգ., երկար կեանքն աւելի է 100 տարուց:

Եկեղեցին Ս. Աստուածածին, ձեղունն փայտաշէն, ունի միայն 3 ռուբ. 24 կոպ.: Երբ մտայ եկեղեցին, չկարողացայ զսպել արտասուքներս, զի ամբողջ խորանը, սեղանը, խորհրդանոցները, պատկերները, աւազանը, զգեստները, գրքերը եւ միանգամայն յատակը գտայ ապականեաց թշնոց ապականութեամբ: Լալով մաքրել տուի անձամբ ամէն տեղերը եւ դուրս թափել տուի չուանները: Ինչպէս տուգեցի. 15 տարուց աւելի է, որ պատարագ եղած չէ գիւղումս, որ մի ժամ միայն հեռի է Շամախուց... Ցաւալին այն է, որ մի ստարական քահանայի յանձնուած է Քալախանին, Արփաւուտը եւ Մէյսարին, որոց մէջ կայ 220 ծուխ եւ հեռի են իրարից 2 ժամ հեռաւորութեամբ: Իսկ ամենացաւալին այն է, որ տեղի են ունենում անհաղորդ վախճանուողներ. քանզի 3 գիւղի հովիւ քահանան երբեմն գրկւում է Բագու, երբեմն Սալեան եւ երբեմն՝ այլուր, վասն որոյ գէթ ժամերգութեան եւ աղօթքի կարօտ է մնում 3 գիւղի ժողովուրդն եւ փակուած՝ եկեղեցիների դռներն...:

ՍՈՒՐԲ ՆՇԱՆ

Գիւղիս հիւսիս-արեւմտեան կողմում մի բարձրաւանդակի վերայ, տաշած քարերով շինուած է մի մեծ մատուռ Ս. Նշան անուն: Բեմի ժողովրդահայեաց ճակատին գրուած է. «Ի թվին ՌՃ. եկի, վեցից տասանց եօթնեկի[1], ի ժամանակս հայրապետի Էջմիածնայ սուրբ Աթոռոյ Աստուածատուր կաթողիկոսի, Լուսաւորչի փոխանորդի, Գանձասարայ սուրբ Աթոռի տեառն Եսայեայ (կաթուղիկոսի), յայսմ երկրի առաջնորդ Պօղոս անուն վարդապետի, յորդորանօք բարերարի Անտօն անուն քահանայի, պատճառ եղեւ եկեղեցւոյն աստուածընկալ սուրբ Նշանի Դաւիթ որդի Կարապետի, իւր կողակից Գիւլինարի, իւրեանց որդի Աստուածատրի, նորաբողբոջ Պօղոսի, այլ յիշատակ Թադէոսին, իւրեանց Նուին, դստերն Աննմանին, ծաղկեալ որդւոցն Գօզջանին, Կարապետին եւ Սարգսին, զի այս է իղձ մերոց սրտին, եւ կատարումն հասուցինք»:

Արձանագրութիւն մատրանս.

«Թվին ՌՃԿԸ. շինեցաւ Սուրբ Նշան եկեղեցիս յիշատակ ամենայն քրիստոնէից ննջեցելոց եկաց եւ բնակաց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, մանաւանդ Ջուղայեցի Գէորգի որդի պարոն Պետրոսին եւ Շամախեցի Յակոբի որդի Թամուրին եւ Օհանին եւ ծնողացն Եղիսաբեթին եւ հանգուցեալ որդւոյն Մատթէոսին: Ո՛վ ընթերցողք յորժամ ընթեռնուք, յիշեցէ՛ք յաղօթս ձեր Անտօն անարժան քահանայն. յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ»:

Մատրանս մօտ շինուած են ուխտաւորաց համար գեղեցիկ սենեակներ: Երեւի թէ հին ժամանակներում բազմաթիւ ուխտաւոր ունեցած է մատուռս, որ շինուած են այսչափ սենեակներ:

Մէյսարու վանք

Ս. Նշանից փոքր-ինչ հեռի՝ դէպի հիւսիս-արեւմուտք, շինուած է Մէյսարու Ս. Աստուածածին վանքն՝ ամբողջապէս տաշած քարով: Խորանդունդ ձոր են վանուցս հիւսիսային եւ արեւմտեան կողմերն, բարձր լեռ՝ արեւելեան կողմն, իսկ արձակ եւ զառիվայր՝ հարաւային: Վանքս կառուցեալ է յանուն Ս. Աստուածածնայ, իսկ խորանն օծուած է յանուն Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրաց: Վանքս ունի ընդարձակ մեծութիւն, վեց սիւն եւ գեղեցիկ ու սրածայր կամարիկէ: Բայց նորոգուած է Անտօն եւ Վլաս վարդապետների ջանքով ՌՃԼԷ-ին: Բայց այժմ փլած է ձեղունի մի մասն, իսկ հաստատուն են ամբողջ սիւներն եւ ամբակուռ՝ կամարներն եւ միւս բոլոր մասերն:

Հիւսիսային եւ արեւմտեան կողմով շինուած են միաբանից համար երկյարկ եւ բազմաթիւ սենեակներ եւ վանահօր բնակարան, նմանապէս տաշած քարով, իսկ ամուր պարսպուած են մնացեալ կողմերն: Վանքի եւ սենեակների միջավայրում շինուած է մի գեղեցիկ շատրուան, որի ջուրն բերուած է վերեւի լեռնից: Զէ գալիս այժմ ջուրն եւ անմարդաբնակ է վանքս:

Որքան փառաւոր եղած է վանուցս անցեալն, այնքան տխուր եւ սրտաճմլիկ է այժմեան երեւոյթն: Որքան կենդանի եղած է Աղուանից կաթուղիկոսութիւնն, նոյնքան պայծառ եղած

1 Ղզըլ-պաշ, պարսիկ:

2 Պարսկերէն ՄԷՑ նշանակում է գինի եւ ՍԷԱՐ՝ գլուխ, իսկ ՄԷՑ-ՍԷԱՐԻ՝ գլխաւոր գինի: Բայց այժմ այնքան լաւ մշակուած չեն այգիներն:

1 ՌՃԿԷ. (1718-ին):

են եւ Աղուանից վանքերն: Բայց այս կաթողիկոսութեան մահից յետոյ՝ օրէցօր յափշտակուած են վանօրէից կալուածներն, ցրուած են միաբանութիւններն եւ քայքայուած վանքերն:

Այժմ բոլորովին քայքայման վիճակի մէջ է ե՛ւ վանքս ե՛ւ սենեակներն ե՛ւ պարիսպն: Վանքս ունի հողեր եւ այգի: Հողերի արդիւնքը Շամախու հոգաբարձութիւն է գործադրում է Շամախու երկսեռ ուսումնարանաց համար. իսկ այգու անունն մնացած է եւ գեաին...:

Հին հանգստարան

Վանուցս արեւելեան հանդէպ բարձր սարի վերայ կայ հին հանգստարան, որ ունի ընդարձակ ծաւալ: Գողացած եւ տարած են տապանաքարերից ամենամեծ մասը, փշրած եւ ջարդած՝ մի մասը: Թէեւ աներեւութացած են շիրմաքարերն, բայց շատ լաւ կարելի է հասկանալ մնացած քարերի արտաքին նշաններից: Տակաւին կան շատ տապանաքարեր, որոց երկարութիւնն աւելի է սաժէնից, իսկ հաստութիւնն՝ արշինից, որոց վերայ կան միայն խաչանիշ քանդակներ: Մենք կարծում ենք, որ տապանաքարերս հին են նախ քան հայոց գրերի ծնունդն:

Հանգստարանից վերեւ մի մեծ քարի ճակատին քանդակուած են շատ հին ձեւով խաչեր, որը «նահատակ» են անուանում տեղացիք: Բայց թէ ո՞վ է նահատակուածն, անյայտ է մեզ:

Թ. ՁԱՐԽՈՒ ՇԷՆ, որ հիմնուած է Սաղիան գիւղի հիւսիսային կողմում, ձորի հարաւահայեաց լանջի վերայ: Արքունի է հողն եւ բաբերեր եւ նոյն բերքերն. բնակիչք պապմած են 1830-ին Նոր-Ջուղայի Ղարուն, Ֆերեայ եւ Ղարաղան գիւղերից:

Շէնս բաղկացած է 22 ծխից, 73 արս. եւ 70 իգ. անհատներից: Տարեկան լինում է 4 արս. եւ 3 իգ. ծնունդ, 2 պսակ, 1 արս. եւ 1 իգ. ննջեցեալ: Հոգեւոր ծիսակատարութիւններն եւ աղօթքներն կատարւում են Սաղիանի վանքում, քանզի չունին եկեղեցի:

Շինումս կայ մի հնատիպ մեկնութիւն սաղմոսաց, որի պարապ երեսների վերայ եւ լուսանցքներում գրուած են գրչով: Մեկնութիւնս բերուած են Պարսկաստանից:

«Ցիշատակ Ուստա Խաչիկին, որ էր ուսեալ Ուստա Աւետէն, որ կոչի Փոքր Աւէտ. Աստուած իւր մեղացն թողութիւն շնորհէ, որ ստացաւ սուրբ մեկնիչս (մեկնութիւնս) հալալ վաստակոց իւրոց՝ յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, հօրն Տէր Կարապետին եւ մօրն Գնելի, կողակից Գուլին, թվին ՌՃՄԸ. ումն»:

«Ես սարգայվալք (սարկաւագ) Կարապետս ծառայ եմ այս գրիս կարթացողին եւ ուսուցանողին, ամէն թվին ՌՃԼ. ումն» (էջ. 745):

«Թվին ՌՃՁԶ. ես Խուդա Ղովիսացի: Այս է թվին (այս թուին) Տէր Մաղաքին, որ է որդի սա Խաչիկին, եւ քահանայ քառասուն ամին եւ է հասեալ ԺԸ. ամին եւ վաղճանեալ կին սորին եւ մնացեալ այրի այս եղկելին, մինչեւ եղեւ քառասուն ամին[1] : Սա վաղճանեալ հազար հարուր ութսուն եւ երեք ամին եւ օգոստոս ամսի տասն եւ վեցին... որ է քաղաք Նոր Ջուղային եւ Շահվելոց եկեղեցին: Եւ ով ոք կամեսցի... վարք սորին, էր եւ պարկեշտ, սաղմոսասաց, աղօթասէր եւ քարոզող, գիտակ բանին Աստուածային, հին եւ նոր կտակարանին. ձեռն վեր առեալ իւր հայրենեացն, դուստր եւ որդի իւր ընտանեացն... եւ հեռացեալ իւր սիրելեացն... մտեալ ծառայութիւն եկեղեցեացն մինչեւ օր մահուան իւրոյ: Բարիոք ծերութեամբն հանդիպեալ Քրիստոսի» (էջ. 291):

«Թվին ՌՄԼԶ. ումն, անցած է, չէ մտաց, դեկտեմբերի վերջի՞ն եւ (թէ) յունվարի աւալին (1-ին) կիրակի գիշերին, ա. ժամ գիշեր կար մինչ ի լոյս, անանց (այնպէս) սաստիկ շարժում (երկրաշարժ) եղեւ երկիր, շատ քաղաքներ քանդուեցաւ. Աստուած հեռի՛ անէ այնպէս բարկութենէն. ամէն.» (էջ. 264):

Ժ. ՍԱՂԻԱՆ գիւղ, շինուած է գիւղս այն խոր ձորի արեւելահայեաց լանջի վերայ, որ ընկած է Մատրասայի եւ գիւղիս մէջ. Սաղիան նշանաւոր է իւր այգիներով եւ գինու բերքով: Այգիներն գրաւած են 75 օրավար (դեսեատին) հողի տարածութիւն: Արքունի է հողն, պատուական՝ ջուրն, անվնաս՝ օդն եւ կլիման: Բնիկ տեղացի է ժողովրդեան կէս մասն, իսկ Հին-Նախիջեւանից, Պարսկաստանից եւ Արցախից գաղթած՝ միւս կէս մասն:

1 Իմաստն է՝ երբ 40 տարեկան եղաւ քահանաս, վախճանուեցաւ իւր երէցկինն եւ ինքն մնաց այրի, իւր քահանայութեան 18-րդ տարում:

Գիւղումս կայ 160 ծուխ, 481 արս., 455 իգ. անհատ: Միամեայ ժամանակում լինում է 20 արս. 18 իգ. ծնունդ, 12 պսակ, 6 արս. եւ 6 իգ. ննջեցեալ: Մի քահանայ է հոգեւոր հովիւն, որ նոր վախճանուած է: Երկար կեանքն 90 տարի:

Ս ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՎԱՆՔ

Հին արձանագրութիւնից երեւում է, որ վանքս սկզբում շինել տուած է Կիրակոս վարդապետն Հայոց ՌՃԶ. թուին Ադուանից Պետրոս կաթողիկոսի օրով: Բայց որովհետեւ 1872-ի մեծ շարժով փլած է հին շինութիւնն, վասն որոյ՝ ի հիմանէ նորոգ շինուած է 4 սեան վերայ համակ սրբատաշ քարով, որ վերջացած է 1886-ին, բայի կաթուղիկէից, որ շինուած չէ տակաւին: Նորոգ կառուցեալս շինուած է Հանգանակութեամբ, որին օժանդակած են մասնաւորապէս Սաղիան գիւղի հասարակութիւնն, պ. Գէորգ Բալանթարեանցն, Բուղաղեան եղբարք եւ Թադէոս քահանան:

Վանքումս են Ս. Ստեփաննոս Նախավկայի եւ Գօշ Մխիթարի արծաթեայ, բայց ոսկեզօծեալ աջերն: Ունի մի քանի միաբանական խարխլուած հին սենեակներ՝ շինուած Օհան եպիսկոպոսից: Հին կառաստն գլխին շինուած են մի քանի նոր սենեակներ: Բայց անյարմարութիւնն այն է, որ միայն մի տեղով է մուտքն, նեղ, երկար եւ ոչեւ են երկու սենեակներն եւ բոլորովին մութ՝ միւս երկուսն:

Վանուցս հիւսիսային կողմումն է Բուղաղեան երկդասեան տղայոց ուսումնարանն, ուր ուսանում են 36 աշակերտներ, 27-ն թոշակաւոր եւ 9-ն ձրիավարժ: 2 ուսուցիչներն ստանում են 800 ռուբլի, որից 600-ը վճարում են Բուղաղեան եղբարք, 157-ը թոշակաւորներն, իսկ 43-ը՝ վանքն:

Վանքումս չկայ միաբան, կայ միայն Հին-Նախիջեւանի Աստապատ գիւղացի մի այրի քահանայ Ստեփան անուն, որ վարում է վանահայրութեան պաշտօնն...

Վանուցս մուտքն

Իր սեպհական այգու խաղողից	1200 ռ.
3 բեռն գինի (չափ է)	90 ռ.
25 ման (չափ է տեղական) օղի	50 ռ.
5 թաղար ցորեն կապարաւ տուած հողերից	100 ռ.
Ուխտաւորներից (միջին հաշուով)	100 ռ.
Կիւրեղեան գիւղի մօտ եղած 18 օրավար հողից	14 ռ.
Ընդամենն մուտք[1]	1554 ռուբ.

Անյայտ է վանուցս ելքն, վասն զի 4 տարի է, որ հաշիւ տուած չէ վանքն...:

Վանքս է միեւնոյն ժամանակ Սաղիան գիւղի եւ Զարխու շինի միակ եկեղեցին:

Վանքումս կայ մի քանի գրչագիր մատեան:

1) Մի գեղեցկագիր աւետարան, որ գրուած է մագաղաթանման բամբակեայ հաստ թղթի վերայ եւ բաղկացած 612 երեսներից: Ցիշատակարանիցն ընդօրինակում ենք հետեւեալը.

«Արդ գրեցաւ եւ ծաղկեցաւ սուրբ աւետարանս յայլ եւ այլ գրչաց եւ ծաղկողաց յերկիրն Թֆլիսոյ ձեռամբ Տէր Բարսեղ քահանայիս: Եւ դարձեալ Յովհան գլուխ պակասն եւ ծաղկանց պակասն եւ զհամարներն եւ զցանկերն եւ զցրուացանկերն եւ զԺ. խորանաց կարմիր գրերն եւ զլաճվարտով գրերն եւ զոսկի վարաղով խորաններն եւ զյինանց աւետարանաց ընթերցմանց փոխերաց գրերն եւ զամենայն պակասութիւնս աւետարանիս՝ թերի եւ անթերի հանդերձ սրբագրելով եւ ստուգաբանելով եղեւ եւ կատարեցաւ այս ամենայն ձեռամբ ումեմն բանասիրի Սարգիս վարդապետի... ի թուականութեանս... ՌՃԺԵ. ամի՝ ի կաթողիկոսութեանս տանս Աղուանից սրբասնեալ Տեառն Պետրոսի եւ յառաջնորդութեան տէր Բարսեղ եպիսկոպոսի»:

1 Վանքս ունի նաեւ սեպհական անտառ, որից գոյանում է իւր տարեկան վառելափայտն:

2) Մի ատենի ժամագիրք. գրուած Հայոց ՌՃՄԷ.-ին. գրողն է Եփրեմ անուն ոմն՝ խնդրանօք Յոհան քահանային Ջուղայեցւոյ:

3) Մի աւետարան Ղուկասու. գրուած ՌՃԽԷ.-ին:

4) 4 հատ շարական:

5) 2 մեկնութիւն Պրոկղի, որոց միոյն թարգմանիչն է Միքայէլ վարդապետ ոմն ՌՃՀԵ. թուին, իսկ միւսինն՝ դանձակեցի Սիմէոն, որ գրած է ՌՄՄԲ.-ին:

Սաղիանցի պ. Նիկոլայ Քալաշեանցի մօտ կայ մի գրչագիր մաշտոց, որ բաղկացած է 344 երեսներից, եւ գրուած բամբակեայ հաստ եւ յղկուած թղթի վերայ: Թէպէտ գեղեցիկ չեն գրերն, սակայն կարդացւում են հեշտութեամբ: Յիշատակարանից մէջ ենք բերում հետեւեալ հատուածը. «Արդ գրեցաւ տառս, որ կոչի մաշտոց, ձեռամբ անարուեստ եւ փծուն գրչի Յովհաննէս աբեղայիս՝ անուամբս միայն եւ գործովս ո՛չ. ի դուռն սուրբ աթոռոյս Յակոբայ վանիցս եւ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին ի յերկիրս Խաչեն, ի գիւղս, որ կոչի Խանձք, ի հայրապետութեան (Աղուանից) Տեառն Գրիգորիսի եւ արհ(ի) եպիսկոպոսին Առըստակէսին, եւ իշխանաւոր տեղոյս Մեհրապ պէկին, եւ աշխարհակալ Շահ Դամանին... ի թվիս Հայոց ՌԹ.»:

Վանուցս հարաւային դրան առաջ ամփոփուած են Օհան եւ Դանիէլ եպիսկոպոսների մարմիններն, որք վարած են Շամախու թեմիս առաջնորդութեան պաշտօնը գովելի գործունէութեամբ եւ ընտիր վարուք՝ ըստ վկայութեան ծերունեաց եւ ըստ տապանաքարի արձանագրութեանց:

ժա. ՓԱԽՐԱՔԻՒՇ շէն, որ գտնւում է Աղ-սու գետակի ձախ կողմի բարձրաւանդակի վերայ: Բնակիչք գաղթած են Արցախի Դող եւ Ծամձոր գիւղերից: Նոյն են տեղական բերքերն, արքունի՝ հողն, վնասակար՝ օդն եւ ջուրն, եւ 65 տարի երկար կեանքն, գի շինիս տեղն գտնըւում է հակառակ հողմերի հոսանքի կենտրոնում:

17 ծուխ, 40 ար., 35 իգ. 3 ար. ծնունդ, 2 իգ., 1 պսակ. 2 ար. ննջեցեալ եւ 1 իգ.: Հոգեւոր պէտքերն կատարւում են Սաղիանի վանում:

ժբ. ՂԱՋԱՐ շէն, արքունի՝ հողն, Արցախի Վարանդայ գաւառից գաղթած՝ բնակիչներն. օդն՝ անվնաս, ջուրն՝ պատուական, շինի տեղն՝ լեռնալանջ եւ ապառաժուտ. եւ վարելահողն՝ պակաս: Ծուխ 37, ար. 126, իգ. 99, ար. ծնունդ 5, իգ. 4, պսակ 4, ննջեցեալ երկու սեռից 3:

ժգ. ԹԱԼԻՇ շէն, հողն՝ բէկական, բնակիչներն՝ գաղթած Դիզակ եւ Վարանդայ գաւառներից, օդն եւ ջուրն՝ լաւ, վարելահողն՝ պակաս, տեղն՝ լեռնային եւ մացառուտ, ծուխ 18, ար. 36, իգ. 29, տասն տարուան ընթացքում ար. ծնունդ 13, իգ. 10, պսակ 8, ար. ննջեցեալ 6, իգ. 4, երկար կեանքն՝ ութսուն տարի:

ժդ. ԴՈՒԱՐԻ շէն, որ գտնւում է դաշտաբերանի մօտ, հողն՝ բէկական, բնակիչք՝ գաղթեալ յիշեալ գաւառներից. օդն եւ ջուրն՝ աննդարար, ծուխ 17, ար. 56, իգ. 40, միամեայ ար. ծնունդ 3, իգ. 2, պսակ 2, ննջեցեալ 1, երկար կեանք 85-90:

Շէնքերումս չկայ եկեղեցի, վասն որոյ հոգեւոր պէտքերն կատարւում են Սաղիանի վանքում: Երկու ոտքերից վնասուած մի քահանայ կառավարում է Զարխուի, Փախրաքիւշի, Ղաջարի, Թալշի եւ Դուարի շինի ծուխերը, այս է 110 ծուխ:

Ահա այսքան է՛ միայն Ոստանի կամ Շամախի գաւառում այժմեան եղած գիւղօրէից. շինից, վանօրէից, եկեղեցեաց եւ հայ բնակչաց որքանութիւնն: Գաւառս նշանաւոր է իւր հանրահռչակ գինու բերքով, որ գովուած է Ռուսաստանում եւ մրցում է Կախեթի գինու հետ: Գինիներն ծախւում են թէ՛ գաւառումս եւ Բաքւում եւ թէ՛ Ռուսաստանում: Ընդհանրապէս անջրդի են թէ՛ այգիներն եւ թէ՛ ցանքսերն, բայց համեմատաբար աւելի են պիտանի հողերն, քան անպէտք տեղերն, մանաւանդ շատ տեղերում կան սեւ նաւթի հանքեր, որք կարող են աղագայում ունենալ մեծ արժէք:

Գաւառս ունեցած է միայն 2 բերդ: Արդէն յայտնեցինք, որ շարժից կործանուած է Շամախու բերդն: Իսկ միւսն, որ է Աղուանից Թ. բերդն, գտնւում է խնուս թրքաբնակ գիւղից վերեւ. Շամախուց ոչ այնքան հեռի եւ այժմ կոչւում է Ղզլալա՝ Աղջկա-բերդ: Բերդս շինուած է կոփ-կաս մեծ սարից անջատուած եւ նոյն դիրքով դէպի արեւելք երկարած մի բարձր սարի գլխին: Եռապարիսպ եւ բրգաշատ է բերդս, շինուած սարի ձեւով, այնպէս՝ ստորին, միջին եւ վերին բերդ: Երեք շրջապարիսպների դռներն եւս եղած են արեւմտեան կողմից:

Վերին պարսպում դեռ նշմարւում են եկեղեցու աւերակ եւ կոփածոյ քարով շինուած կիսաւեր ապարան՝ բերդի արեւելեան կողմում: Համարեա թէ մեծ մասամբ դեռ կանգուն է ապարանիս գետնայարկն, որ բաղկացած է շատ կամարակապ սենեակներից: Բերդերս ունին անմատչելի ամրութիւն, պատերազմական երկիւղներից ազատ ապահովութիւն, սքանչելի տեսարան, հիանալի օդ եւ ամէն յարմարութիւններ: Միայն թէ բերդս զուրկ է մի ամենագլխաւոր պէտքից՝ այս է ջուր չկայ բերդերիս մէջ: Այս պատճառաւ տեղ-տեղ շինուած են յատուկ ջրամբարներ եւ վերնաբերդից մինչեւ արեւելեան խորագոյն ձորի յատակն մի ականավոր ներքնուղի, որով ջուր փոխադրած են ձորի միջով հոսող առուից բերդերի ջրամբարներն: Յայտնի երեւում է, որ դարերի ընթացքում վերանորոգուած են պարիսպներս, բուրգերս եւ ապարաններս: Այժմ թունաւոր օձերով լի է ականն, հետեւապէս եւ վտանգաւոր ամռան եղանակում ել եւ էջ անելն ականիս մէջ: Արդէն առուն հետզհետէ փորած եւ ցածացրած է հեղեղների օժանդակութեամբ՝ յատակը, վասն որոյ այժմ ականի բերանն մօտ երկու սաժէն բարձր մնացած է ջրից: Անյայտ է մեզ եւ բերդիս անցեալն եւ իսկական անունն:

ԳԱՐԴՄԱՆ ԳԱՒԱՌ ՇԱՄԱԽՈՒ

Մտահան արած չէ ուշիմ ընթերցողն, որ գաւառս կոչուած է զանազան ժամանակներում Մարզպանեան, Մարձպանեան, Գարդման, Դասան, Գիրդիման եւ Լահիճ: Գաւառումս կան հայոց հետեւեալ գիւղերն, Աղուանից բերդերն եւ մի վանք:

ա. ՔԵՕՎԼՈՒՋ գիւղ, որ հիմնուած է Աղ-սու գետակի աջ կողմի բարձրութեան վերայ, Թալիշ շինի հանդէպ: Նշանաւոր է գիւղիս տեսարանն, օդն եւ կլիման, բայց սակաւ՝ ջուրն: Բնակիչք գաղթած են Վարանդա գաւառի Աւետարանոց, Ծովատեղ, Մսմնա, Ղավախան եւ Հարար գիւղերից եւ զբաղւում են երկրագործութեամբ եւ այգեգործութեամբ: Նշանաւոր բերքերն են գինի, ցորեն, գարի, գարնանի, սիսեռ, ոսպ եւ խաշխաշ: 18 օրավար է այգիների տեղն:

Հողն՝ արքունի, ծուխ 52, ար. 222, իգ. 189: Տարեկան լինում է 10 ար. ծնունդ[1], 8 իգ., 6 պսակ, 2 ար. եւ 2 իգ. ննջեցեալ. երկարագոյն կեանքն՝ 90-100 տարի: Եկեղեցին Ս. Աստուածածին, ձեղունն՝ փայտաշէն, որ ունի 500 բուբ. դրամ եւ 40 օրավար հող: Հոգեւոր հովիւն գալիս է Կուրջիվան գիւղից:

բ. ԿՈՒՐՋԻՎԱՆ գիւղ, որ կէս ժամ հեռի է Քեօվլջից: Բնակչաց մի մասն նախ Արցախի Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից գաղթած է Կախեթի կողմերն եւ ապա Կախեթից գիւղս, վասն որոյ անուանուած է Կուրջիվան: Եւ միւս մասն գաղթած է Դիզակ գաւառի Հատրութ եւ Դող գիւղերից եւ Վարանդայ գաւառի Յիրհեր, Ղուզի-Ճարտար եւ Կիւնի-Ճարտար գիւղերից: Իսկ ամենափոքր մասն եղած է բնիկ տեղացի: Ժողովուրդն զբաղւում է այգեգործութեամբ, երկրագործութեամբ եւ բրտութեամբ: Բրտութեան արուեստն այնքան ծաղկած է, որ կարասներ[2] եւ խնցեղէն անօթներ է մատակարարում ամբողջ Բագուայ նահանգին:

Բէկապատկան է հողն, գինեւէտ եւ բարեբեր. 175 օրավար (դես.) է այգիների ծաւալն:

Եկեղեցին Ս. Գրիգորիս անուն, հոյակապ, շինուած 4 կամարակապ սեանց վերայ, բայց վտանգուած վերջին մեծ շարժից: Հարաւային դրան ճակատին քանդակուած է.

«Ի թվին Հայոց ՌՄՁԵ. (1836) ամի շինեցաւ ի Կուրջվանու սուրբ Գրիգորիսի եկեղեցին՝ ի համագումար ժողովրդոց: Գրողս եմ Տէր Սարգիս Տէր Օհանեան»:

1 Դիւղումս կայ 1 կոյր, 1 խուլ եւ 2 զոյգ երկոքեակ:

2 Կարասներն պարունակում են 20-90 փութ գինի:

Եկեղեցուս հարաւային աւանդատան դրան ճակատին պահուած է հին եկեղեցու արձանագրութիւնն. «Շինեցաւ սուրբ եկեղեցիս ... հրամանաւ Թոմա Վարդապետի եւ Հայոց Մովսէս կաթուղիկոսին ի թվին ՌՁԲ. (1633)»: Տաճարս ունի 628 բուրգ. դրամ եւ 25 օրավար հող եւ մի քահանայ:

Նոյն են տեղական բերքերն, միայն գիւղիս անդում Դանդարա-չայ կոչուած տեղում բուսնում են թզաչափ բարձրութեամբ եւ կիտրոնաչափ մեծութեամբ սպիտակ եւ հոտաւէտ ծաղիկներ, զորս չորացնելով գործ են ածում իրր թէյ:

Գիւղումս կայ 240 ծուխ, 655 ար., 565 իգ.: Տարեկան լինում է 32 ար., 23 իգ. ծնունդ. 23 պսակ, 6 ար. եւ 7 իգ. ննջեցեալ:

գ. ՀՆՂԱՐ գիւղ, որ կէս ժամ հեռի է Կուրջվանից եւ բաժանուած է 3 թաղի՝ ստորին, միջին եւ վերին: Գերազանց է տեսարանն, օդն, կլիման եւ ջուրն, վասն որոյ ամենաերկար կեանքն տեւում է 115-125 տարի: Բնիկ են ստորին եւ միջին թաղերի բնակիչներն, իսկ Լէյնաց կողմից գաղթած է վերին թաղի ժողովուրդն, որ բացի հայերէնից պահած է ցարդ եւ իւր նախնի բարբառը: Բայց այժմեան 4 գերդաստանների նախահայր Աւշառեանցն գաղթած է Արցախի Վարանդայ գաւառից:

Բնակչաց զբաղմունքն է այգեգործութիւն եւ երկրագործութիւն: Արքունի է հողն եւ գիւղէւէտ, նշանաւոր բերքն է գինի, որ համբաւաւոր է Կովկասում:

Եկեղեցին շինուած է միջին թաղում, Ս. Աստուածածին անուամբ: Բայց ափսո՜ս, որ վտանգաւոր կերպիւ շարժից վնասուած է հոյակապ տաճարս, որ կրում է սոյն արձանագիրը. «Կիւրկին բէկ Աւշառեանց 1844 ամի յունիսի 7-ին»: «Կառուցաւ սուրբ տաճարս այս յանուն Սրբուհւոյ Աստուածածնայ ի յիշատակ սոյն Հնղար գեղջ հայոց հասարակութեան՝ աշխատութեամբ Նոցին. մանաւանդ մեծաւ ջանիւք եւ արդեամբք գլխաւորացն»: Եկեղեցիս ունի միայն մի քահանայ եւ 62 բուրգի..., որի մէջ կայ մի գրչագիր աւետարան, գրուած բամբակեայ թղթի վերայ: Աւետարանիս գրողն է Արիստակէս վարդապետ ոմն, որ գրած է Սանահնի վանքումն՝ Բարսեղ եպիսկոպոսի առաջնորդութեան օրով «ի թուականս Հայոց ՋԼԹ. (1490) ի դառն եւ ի չար ժամանակիս. որով նեղիմք յանօրինաց»: Իսկ ստացողն (գնողն) եղած է Ուսուս-Մնաբոյ Բարայեան: Բաւական թղթեր անյայտացած են թէ՛ աւետարանի սկիզբն եւ թէ՛ վերջից: Զուտի պատկերներ. բայց գեղեցիկ են գրերն:

Երեք թաղերում միասին կայ 131 ծուխ, 398 ար., 333 իգ., 2 կոյր, 2 կաղ, 1 խուլ եւ 1 անդամալոյծ: Տարեկան լինում է 20 ար., 18 իգ. ծնունդ, 12 պսակ, 7 ար. եւ 6 իգ. ննջեցեալ[1]:

դ. ԳԻՒՐԴԱ շէն. Հնղարի օդից եւ ջրից ստոր է տեղիս օդն եւ ջուրն: Հողն՝ բէկապատկան, ժողովուրդն՝ բնիկ, բերքերն՝ նոյն, ծուխ 30, ար. 75, իգ. 76, ար. ծնունդ 6, իգ. 6, պսակ 1, ար. ննջեցեալ 3, իգ. 3:

30 տարի առաջ սկսած են շինել եկեղեցի, որմերը բարձրացրած են գետնից մօտ 3 կանգուն եւ ցարդ թողած նոյն գրութեան մէջ: Գիւրդայի հասարակութեան թուլահաւատութեան եւ ծուլութեան ջերմաչափն է կիսատ եկեղեցիս եւ պատուոյ զգացման վերջին աստիճանն:

ե. ՆՈՐ-ՇԷՆ. դիրքն՝ հարաւահայեաց, օդն եւ ջուրն՝ անվնաս, հողն՝ բէկական, երկար կեանքն՝ 70-80, բնակիչք՝ գաղթած Վարանդայ գաւառից: Ծուխ 16, ար. 40, իգ. 36, կաղ 1, ար. ծնունդ 2, իգ. 2, պսակ 1, երկու սեռից ննջեցեալ 2: Գիւրդայի եւ շինիս հոգեւոր պէտքերն կատարւում է Հնղարի եկեղեցում:

զ. ՉԱՐԿԵԱՐԱՆ գիւղ, հիմնուած է Կովկաս մեծ լեռնաշղթայի հարաւահայեաց լանջի վերայ: Սքանչելի է օդն եւ ջուրն, կլիման եւ տեսարանն: Տեղական բերքերն են ցորեն, գարի, կորեկ, հաճար, բակլայ, լուբիա, խաշխաշ: Նշանաւոր բերքերն են տանձ եւ խնձոր, զորս չիր կտրելով վաճառում են չիրահաւաքների վերայ եւ երբեմն տանում են Բագու: Պաղի ժամանակ տանձենեաց եւ խնձորենեաց պարտէզներից անպակաս են ոհմակներով արջեր, մանաւանդ գիշերներն:

Թէպէտ, ըստ ասութեան ոմանց, բնիկ է ժողովուրդն, սակայն բարբառը բնիկ չէ երբէք. վասն զի խօսում են խակապէս Արցախի Խաչէն գաւառի բարբառով: Արքունի է հողն, բայց ոչ այնքան բարերեր:

Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, վերնամասն՝ փայտաշէն, որ ունի 84 բուրգի, մի ծերունազարդ քահանայ եւ այս համառօտ արձանագրութիւնը. «Ցիշատակ է այս եկեղեցիս սվաղն... որդի[1] ՌՄՂԷ. (1848)»:

Ծուխ 103, ար. 613, իգ.411, ար. ծնունդ 22, իգ. 16, պսակ 12, ար. ննջեցեալ 7, իգ. 4, երկար կեանքն 110:

է. ՔԵԻԱՆԴԻ գիւղ, գտնւում է Գարգման գետի ձախ ափի բարձրութեան վերայ: Բարեխառն են օդն ու կլիման, գուրալի՝ դիրքն եւ տեսարանն, լաւ չէ ջուրն: Բարեբեր է հողն եւ արդիւնաւէտ, որի 2 մասն բէկական է եւ մի մասն՝ արքունի: Տանձենեաց եւ խնձորենեաց պարտէզներով եւ այգիներով շրջապատուած է ամբողջ գիւղն, որի բնակիչք գաղթած են Արցախի Կիւլստան եւ Ջրաբերդ գաւառներից, բացի մի քանի ընտանիքներից:

Եկեղեցին Ս. Գէորգ, շինուած հասարակութեան ծախքով: Վերնամասն՝ փայտաշէն, դրամագլուխն 28 բուրգի, եւ քահանան մի արժանաւոր անձնաւորութիւն:

Ծուխ 84, ար. 308, իգ. 258, երկոքեակ 1 զոյգ, անդամալոյծ 1, ար. ծնունդ 22, իգ. 16, պսակ 11, ար. ննջեցեալ 7, իգ. 4, երկար կեանք 90-100:

ը. ԲԱՀԼԻԱՆ շէն, շինուած մի տափարակ հովտում, շրջապատուած՝ ոչ այնքան բարձր սարակներով. խեղդուած՝ տեսարանն, օդն եւ կլիման, վասն որոյ եւ տենդաբեր ամռան եւ աշնան եղանակներում: Բնակիչք ամբողջապէս գաղթած են Դիզակ եւ Վարանդայ գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Մինաս, շինուած հասարակութեան ծախքով 1850-ին, չունի դրամ:

Ծուխ 36, ար. 127, իգ. 105, ծնունդ ար. 7, իգ. 6, կոյր 1, պսակ 4, ար.ննջեցեալ 3, իգ. 2, երկար կեանք 60:

Շինիս հարաւային կողմում կայ մի լեռնակ, որ ծածկուած է վաղեմի հաստ ծառերով եւ զարդարուած հին մահարձաններով: Շատերի վերայ քանդակուած են միայն խիստ հին ձեւով խաչեր: Լեռնակիս գագաթի վերայ կայ մի վաղեմի խաչարձան քար առանց արձանագրութեան: Խաչի ձեւն նման է Է. դարի քանդակներին: Ժողովուրդն անուանում է նահատակ, որ յարգուած է շրջաբնակ հայերից եւ մահմեդականներից անգամ:

թ. ԲԻԼԻՍՏԱՆ շէն, բարձր եւ հիւսիսահայեաց է դիրքն, սննդարար՝ օդ եւ կլիման, եւ պատուական՝ տեսարանն եւ ջուրն: Բնակիչք ամբողջապէս գաղթած են Վարանդայ գաւառից: Հողն՝ բէկապատկան եւ արդիւնաւէտ, տեղական բերքերն՝ նոյն, ինչպէս բահլիանցիք, նոյնպէս եւ բիլստանցիք նոր սկսած են տնկել այգիներ:

Եկեղեցին՝ Ս. Աստուածածին. ձեղունն՝ փայտաշէն, երեք եկեղեցիներիս քահանան՝ միեւնոյն անձն:

Ծուխ 31, ար. 85, իգ. 70, կոյր 1, ար. ծնունդ 6, իգ. 5, պսակ 4, ար. ննջեցեալ 1, իգ. 1, երկար կեանք 80-90:

ԲԵՐԴԵՐ

Աղուանից Ժ. բերդն գտնւում է Զարկեարանի արեւելեան կողմում, Աղ-սու գետակի արեւմտեան օժանդակի աջ ափի վերայ, մի գեղեցիկ հովտի եզերքում: Ըստ տեղական հնչման՝ բերդս

1 Դիւղիս հանգստարանում, որ գտնւում է մի ձուաձեւ սարի վերայ եւ զարդարուած է կաղնի, հացի, տխկի եւ լայնատերեւ ծերունազարդ ծառերով, կան շատ մամռապատ, անարձանագիր, մեծամեծ տապանաքարեր, խիստ հին ժամանակից մնացեալ: Դագաթիս վերայ հին մահարձանների շարքում կայ մի գերեզման, որը անուանում է ժողովուրդն նահատակ եւ յարգում: Այսպէս է եւ Սաղիանի վանուց մօտ եղած նահատակուհին, որ նոյնպէս յարգուած է հասարակութիւնից: Միայն թէ չկան գրաւոր ապացոյցներ:

1 Անընթեռնելի են կէտադրեալ բառերն:

կոչւում է Կեավուր ղալա[1]: Բերդս չունի բուրգեր, այլ ունի հաստահիմն եւ ամուր պարիսպ, որի շրջապատն է 4 վերստ, բարձրութիւնն՝ 4-5 սաժէն եւ հաստութիւնն՝ 1 սաժէն: Կրաշաղախ ցեխն այնպէս ամրապնդուած է մեծ-մեծ քարերի հետ, մինչեւ անգամ ցարդ անվնաս դիմադրած է այնքան երկրակործան երկրաշարժերին: Պարսպիս կէս մասը քանդած եւ տարած են մերձաբնակ մահմեդականներն: Նշաններից երեւում է, որ բերդաքաղաք եղած է այս, վասն զի ներսն լի է խիտ առ խիտ բնակութիւններով, որոց վերնամասերը քանդուած եւ տարած են, իսկ դեռ մնում է գետնամասն, որ շատ տեղերում երեւում է կամարակապ: Յայտնի նշմարում են մացառուտներում եկեղեցու եւ խանութների աւերակներն:

Աւերած եւ տարած են նաեւ պարսպի դռների քարերը. արձանագրութիւն չկայ: Անյայտ է եւ բերդիս անցեալն: Բայց բարեխառն է օդն եւ կլիման եւ ախորժելի՝ տեսարանն: Բերդիս երկարութեան դիրքն ընկած է հիւսիսից հարաւ՝ օժանդակի դիրքով:

ԳԱՐԴՄԱՆ ԲԵՐԴ ՇԱՄԱԽՈՒ

ԺԱ. բերդն Աղուանից կոչւում է Գարդման, այժմ՝ Նեալ: Բերդս բարձրանալու համար կայ միայն երկու ճանապարհ-հիւսիսից եւ հարաւից: Մենք ընտրեցինք հիւսիսից ելնել եւ հարաւից իջնել: Բարձրացանք Գարդման գետակի անդնդախոր ձորովն եւ եկանք Լահիճ գիւղաքաղաքն[2], որ հիմնուած է Գարդման գետակի ձախ կողմում: Թողուանք մինչեւ Լահիճ 5 ժամ շարունակ բարձրանալը, գիւղաքաղաքիցս 2 ժամ բարձրացանք սաստիկ զառիվերով, բայց վերնամասն՝ ոտքով, քանզի դժուարին է եւ միանգամայն վտանգաւոր ձիու վերայ ելնելն, զի անհարթ ուղու մեծ մասն ապառաժ սալ քար է, վասն որոյ յաճախակի սահում են ձիոց ոտքերն եւ գլորւում՝ հեծեալներն: Վերջապէս հասանք բերդն, բայց սաստիկ քրտինքով թացոտուած հագուստով:

Մօտ 9000 ոտք է բերդիս բարձրութիւնն, որ անջրպետուած է Բաբա-դաղից Գարդման գետակի խորանդունդ ձորով եւ հսկայաձեւ երկարած դէպի արեւելք: Բերդս, որ շինուած է բարձրաբերձ սարիս գլխին, ունի մօտ 15 վերստ երկարութիւն եւ 6-7 լայնութիւն: Վիմահերձ եւ ամենաբարձր ժայռեր են սարիս ամբողջ արեւմտեան, հարաւային եւ հիւսիսային կողմերն: Բայց դէպի Լահիճ թեքուած են ձորակներ, որովք վազում են բերդիս ջրերն՝ կազմելով հիանալի ջրվէժներ: Այս պատճառաւ պարսպուած են ջրաձորերի մուտքերն, կասկածելի կիրճերն եւ տեղերն, բերդի արեւելեան եւ հարաւային կողմերում մի քանի տեղեր եւ հիւսիսային դրան մուտքն՝ մօտ 1 վերստ տեղ: Այս պարսպի բարձրութիւնն է 3-5 սաժէն եւ հաստութիւնն՝ սաժէնից աւելի, որ շինուած է ամբողջապէս անտաշ եւ լեռնային քարերով եւ կրաշաղախ ցեխով: Այժմ քանդուած է հիւսիսային դռունս եւ իւր արեւմտակողման պարիսպն, բայց ոչ հիմունքն:

Հարկ է յայտնել, որ այստեղ փայլում է ո՛չ եթէ մարդկային տկար հանճարի հնարագիտութեան արուեստն, այլ Բնութեան Ճարտարապետի գերմարդկային ստեղծագործութիւնն: Ամէն կողմերից անմատչելի է բերդս, որ իւր մէջ ունի ամէն կենսական պիտոյքներ՝ առատ վաղող առուներ եւ առուակներ, անմաան եւ գերազանց աղբերաջրեր, ծաղկազարդ եւ դալարագեղ սարահարթեր եւ լանջեր, պատուական եւ բերրի վարելահողեր եւ խոտահարքի տեղեր, գեղեցկատես անտառներ եւ մացառներ եւ միանգամայն անթերի զուարճութիւն մանաւանդ ամռան եղանակներում:

Արդէն գիտենք, որ բերդիս նախկին բնակիչներն էին Առանի յետագաներն եւ իշխողներն էին Առանշահիկ կամ Եռանշահիկ հայկազն իշխաններն: Գիտենք նաեւ, որ Սասանեան Միհրանն բնակութիւն հաստատած էր բերդումս: Գիտենք մանաւանդ, որ Քաջն-Վարդան 3 տարում շինեց Գարդման բերդս, նուաճեց Կովկասեան «վայրասուն ազգն» եւ ճաշի պատրուակաւ գլխատեց 60 մարդ Առանշահիկ ցեղից: Ուրեմն բերդս միեւնոյն ժամանակ եղած է եւ իշխանանիստ կամ մարզպանանիստ քաղաք, որի մէջ նստած են յաջորդաբար նախ Առանի յետագայ իշխողներն, ապա Սասանեան Միհրանի: Բայց կարեւոր է յիշել, որ Միհրանից մինչեւ Վարազ-Գրիգոր լինում են հեթանոս եւ իշխում են միայն գաւառիս վերայ, իսկ Վարազ-Գրիգորն եւ իւր բոլոր ցեղն (Սասանեան տոհմն) ընդունում են քրիստոնէութիւնը: Վարազ-Գրիգորիս որդի Ջուանշիր իշխանն իւր ծննդավայրում՝ Գարդման բերդումս, կառուցանել է տալիս մի «գեղեցկայարմար տաճար», օծել տալիս մեծ հանդիսով եւ տաճարումս հանգստացնում Քրիստոսի խաչափայտի այն մասը, որը ընծայ ընդունած էր յունաց Հերակլ կայսրից[1]: Դառնանք բերդիս այժմեան դրութեան:

Այժմ հիմնայատակ աւերուած է քաղաքն, որի տեղը հերկած են լահճեցիք: Բայց դեռ երեւում են խեցեղէն անօթների, աղիւսների եւ տաշուած քարերի խառն 'ի խուռն թափուած բեկորներ եւ տան տեղերի քարուկիր շատ հիմունքներ՝ չհերկուած տեղերում: Իսկ Ջուանշիր իշխանի կառուցանել տուած Ս. Նշան տաճարը քանդած եւ սորա քարերով շինած են լահճեցիք մի գմբէթ մահմեդական ննջեցեալի վերայ: Այժմ կանգուն է գմբէթն, սակայն քարերն պահած են իւրեանց հեռաւոր հնութեան դրոշմները:

Շատ հետախուզեցինք գտնել հանգստարանը, բայց անկարելի եղաւ: Լահճեցի առաջնորդներն, որ ցոյց էին տալիս մեզ ամէն տեղերը, վախում էին, որ մենք դնալու եւ մարմնաւոր կառավարութեան գանգատելու ենք իւրեանց արած այս անտեղի աւերմանց մասին եւ Լահիճն ընկնելու է մեծ տուգանքի տակ: Այս պատճառաւ չհայտնեցին, այլ առարկեցին, թէ տապանաքարերն վաղուց անյայտացած են, միայն թէ «ժամանակ-ժամանակ գտնում են այս տեղերքից շատ հին փողեր»:

Բերդիս մակերեւոյթի ամենաբարձր մասն է հարաւային կողմն: Հիանալի՛ տեսարան: Հարաւային կողմերում հեռուից երեւում են Փայտակարանի եւ Ատրպատական լեռներն, ալեծածան Երասխն, Արցախի, Գանձակի եւ Կայէնի լեռնագօտիները, Գարգարացւոց եւ Աղուանից դաշտերն ու Կուր գետը: Արեւմտեան կողմերում երեւում են Թիֆլիսի, Ճառի, Շաքուայ լեռներն ու գաւառներն: Մօտաւոր պատկերանում են Շամախու գաւառների ամենամեծ մասն. բերդի ստորոտում Կեավուր-ղալա (Քրիստոնէի բերդն) Բասխալ, Թրջան, Զառնավան մահմեդականաբնակ եւ Միւժի հրվարնակ գիւղերն, աւելի մօտ Ֆիթ-դաղին: Հիւսիսային կողմում, խիստ մօտ դիմացդ արձանացած է Բաբա-դաղն[2] իւր դագաթնագիծ շղթայով, իսկ արեւելեան կողմում՝ Գարդման գաւառի սահմանագիծն:

Հարաւային ելքն կամ դուռն կոչւում է տեղական արտասանութեամբ Կեարդանա: Մի խիստ զառիվայր, օձապտո՛ւտ, ամենանե՛ղ եւ ամենավտանգաւոր թելուղի է այս, որի տեսքն միայն սոսկո՛ւմ է ազդում նայողին, թող թէ իջնողին, նամանաւանդ անսովոր անձանց: Որովհետեւ թելուղու երկու կողմերն սարսափելի վիհե՛ր են, վասն որոյ եթէ ուղեւորն մազաչափ աջ ծռուեց կամ ձախ, այնուհետեւ կորած է: Մօտ մի վե՛րստ է այս վտանգաւոր տեղն: Յետ դառնալ անկարելի էր, վասն զի խիստ հեռի կը լինէր, եւ յառաջ գնալն խի՛ստ վիանգաւոր էր, զի կարելի էր գերեզման կը դառնար վիհն: Վերջապէս, յանձնելով զիս Աստուծոյ խնամոց, իջայ, բայց մի վերստ տեղ՝ առանց աչքերս հեռացնելու ոտքերիս առաջից:

---

1 Ըստ հասկացողութեան մահմեդականաց՝ Կեավուր նշանակում է հայհոյիչ, որպէս թէ հայհոյիչ են քրիստոնեայք՝ Աստուած դաւանելով զՅիսուս Քրիստոս: Հայհոյիչ էին անուանում հրէայք զՅիսուս Քրիստոս, որ զինքը դաւանեց Որդի Աստուծոյ. «Ահա լուաք ամենեքին զհայհոյութիւն ի բերանոյ դորա» (Մարկ. ԺԴ. 62-65): Հայհոյիչ անուանեցին զՄակեդոն, որ բարբանջում է Հոգւոյն Սրբոյ աստուածութեան դէմ: Ուրեմն Կեավուր-ղալա նշանակում է Քրիստոնէի բերդ:

2 Լահիճն բաժանուած է երկու թաղի, որոց բնակիչներն տեղափոխուած են այստեղ լփնաց ցեղից եւ երկրից, որ սահմանակից է գաւառիս վերնամասին: Բնակիչք, որք կանխաւ եղած են հայադաւան, այժմ կիսով չափ սուննու են եւ կիսով չափ շիա եւ ամենամեծ մասամբ զբաղւում են պղնձագործութեամբ: Այն լեռնային սեռն, որ բաժանած է երկու աղանդաւորների թաղերը իրարից, ծածկուած է հայ հանգստարանով, թէեւ տարած են շիրմաքարերից ամենամեծ մասը. սակայն դեռ մնում են շատ քարեր: Մերուսինք վկայում են, թէ կար եկեղեցի, բայց քանդած եւ անյայտացրած են: Բնակիչք խօսում են առ հասարակ որպէս թէ լփնաց բարբառով: Թէ՛ գիւղաքաղաքումս եւ թէ՛ իւր շրջակայ գիւղերում այժմ կայ 5808 ծուխ լահիճ բնակիչ:

1 Մով. Կաղ., Բ. ճ., ԻԴ. եւ ԻԵ. գլ.:

2 Սարիս հարաւահայեաց լանջի գագաթին մօտ կայ մի ուխտատեղի, որը լահիճներն անուանում են Փիր-Բաբա:

Գարդման գաւառս հարուստ է այգիներով, հանքային ջրերով, նաւթով, սենեակներ սպիտակացնելու բնական հողերով[1], լուացք անելու համար օճառի մարմրիչ յատկութիւն ունեցող ցեխով[2]: Միայն թէ ամռան եղանակներում պակասում են շատ գիւղերի խմելու ջրերն, մանաւանդ երաշտ տարիներում:

ԿՈԿԻՍՈՆ ԳԱՒԱՌ

Գարգման գետակի աջ, Կոկիսոն գետակի ձախ ափերի, դաշտաբերանի եւ Կովկաս մեծ լեռնաշղթայի մէջ ընկած գաւառն կոչուած է Բեխ, Բեթ, Կոկիսոն, իսկ այժմ՝ Գեոգ-չայ գաւառ:

Գաւառս ունի հետեւեալ գիւղերը, շէնները, բերդերը, վանքը եւ քարտաբը:

ա. ԴԱՅՄԱ-ԴԱՂԼԸ շէն, շինուած է Գարգման գետի աջ կողմում, Կովկաս սարի ստորոտում: Շէնս նախ շինուած է եղել նոյն գետի ափում, մի՝ օդն վնասակար տեղում, մահն շատ զոհ տանելու պատճառաւ 12 տարի առաջ փոխադրած են այժմեան տեղն, որ բարեխառն է եւ ունի լաւ տեսարան: Բնակիչք գաղթած են Արցախի Մշկապատ գիւղից, տեղական բերքերն են ցորեն, գարի, հաճար, ոսպ, սիսեռն, լուբիա, բակլայ, խաշխաշ, վարունկ եւ զինի (սակաւ, զի նոր տնկած են այգիներ):

Հողն՝ բէկապատկան եւ բերրի, ծուխ 15, ար. 33, իգ. 28, ար. ծն. 3, իգ. 2, պսակ 1, ար. ննջեց. 1, իգ. 1: Քահանան է Կարմախանու հոգեւոր հովիւն:

բ. ԿԱՐՄԱԽԱՆԻ գիւղ, օդն եւ կլիման՝ բարեխառն, ջուրն՝ ախորժելի եւ թեթեւ, հողն՝ արքունի եւ արդիւնաւէտ: Բնակիչք գաղթած են Թեհրան քաղաքի Լար գիւղից 1832-ին: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, ունի 50 ռուբլի, բայց մաքուր չէ իւր պարագայից. քահանայ՝ մի: Բացի նոյն տեղական բերքերից, ունի տանձ, խնձոր, դամոն, սալոր, թուզ, սերկեւիլ, ընկուզ եւ մեղրաքսի բոժոժ:

Ծուխ 48, ար. 122, իգ. 106, ար. ծն. 8, իգ. 7, պսակ 6, ար. ննջ. 2, իգ. 1, երկար կեանք 85-90:

Արժ. Աղէքսանդր քահանայի տանը կան հետեւեալ ձեռագրերը.

Ա. Մի գրչագիր աւետարան՝ գրուած ընտիր մագաղաթի վերայ: Առաջինն է ձեռագիրս մեր ականած բոլոր ձեռագրերի հետ համեմատելով: Աւետարանս իւր սկզբում ունի Քրիստոսի ծնընդեան, քառասնօրեայ գալստեան, մկրտութեան, այլակերպութեան, ծաղկազարդի, խաչելութեան, յարութեան, համբարձման, հոգեգալստեան, դատաստանի, Քրիստոսից բժշկուած կաղերի, կոյրերի, խուլերի, համերների եւն, եւն պատկերները եւ 4 աւետարանչաց ընտիր եւ սքանչելի նկարները. բաց յայսցանէ ընտրելագոյն գեղարուեստով նկարուած են թռչնագրերն, գլխագրերն, ծաղիկներն, նախշերն եւ ամենազան թռչնոց իսկական տիպերն: Վերջապէս աւետարանս ներկայացնում է անթերի ճաշակով գեղարուեստի ներդաշնակ նրբութիւնները թէ՛ ոսկեզօծի, թէ՛ անխարդախ ներկերի եւ թէ՛ տեղայարմար գոյների նկատմամբ: Արժան համարեցինք ընդօրինակել յիշատակարանից հետեւեալ հատուածը.

«Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Նուաստ եւ յետին գրչի Նիկողայոսի ունայնագործ մեղանաւորի ՝ի թուաբերութեանս Ասքանազեան եւ Աբեթեան տումարի ՌՃԴ. եւ ըստ Նորումս շրջանի ԼԹ. եւ գալստեան Կենարարին ՌՈԾԵ. (1655) ՝ի ստոյգ եւ յընտիր աւրինակէ եւս առաւել համաբայիցն, զի գաղափար սորին ՝ի դրանէ Սուրբ Սարգիս եկեղեցւոյ, յաշխարհիս Յունաց՝ յանեղաշէն եւ աստուածապահ քաղաքիս ՝ի Կաֆայ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Սարգսի զաւրեղ զաւրավարին եւ Որդւոյ Նորա Մարտիրոսին, ի հայրապետութեան Հայոց տեառն Փիլիպպոսի եւ յեպիսկոպոսութեան ամենայն հիւսիսական կողման Տէր Գրիգորի աւրհնեալ քահանայապետի, զոր Տէր Քրիստոս պահեսցէ ՝ի կամս ողորմութեան իւրոյ, ամէն:

Ի յայս ժամանակի գրեցաւ ամենագովելի եւ գերահռչակելի, գերակատար եւ գերապանծ, գերապաճոյճ եւ յոգնատես, լուսայեղծ եւ աստուածապատում սուրբ աւետարանս...:

Արդ, այժմ աստուածապատում եւ քրիստոսաւանդ տառիցս ցանկացող եղեալ՝ աստուածարեալ եւ պատուական այրն պարոն Ուլուխան եւ ետ գրել զսուրբ աւետարանս ՝ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ հոգւոյ իւրոյ»:

Բ. կայ մի գրչագիր քարոզգիրք, որ բովանդակում է իւր մէջ զանազան խրատական քարոզներ: Առաջի թերթին վերայ գրուած է. «Յիշատակ է այս քարոզ գիրքս Մեծ Շինացի Տէր Մելիքսեթի որդի Սողոմոն վարդապետին. գրեցաւ առ դրան Սրբոյն Յուրեկայ[1], աշակերտ Նորին տիրացու Յովհաննէս, որ է եղբօրորդի: Ո՛վ որ կարդայ, լիաբերան ողորմի ասէ... թվ. ՌՄԼԶ.-ին Մայիսի Դ. եր»:

Գիւղիս հանգստարանը, որ ծածկուած է ծերունազարդ կաղնի ծառերի փառաւոր հովանիներով, հետազօտած ժամանակ գտանք հետեւեալ հետաքրքիր տեղեկութիւնները.

5 թիզ երկարութիւն եւ մի կէս թիզ լայնութիւն ունեցող տապանաքարի աջ երեսին քանդակուած են 6 փոքր խաչեր եւ այս հակիրճ արձանագրութիւնն. «թվին ՀԲ. Սաթի միշ»: 3 խաչեր քարի գլխին, իսկ ձախ երեսի վերայ մի աղեղնաւոր տղամարդ, որ նետով նշան առած է մի եղջերու: Քանդակուած են նաեւ պալատանման ապարանի գաւթի ձեւերն: Սորանից փոքր-ինչ դէպի հարաւ, մի այլ մահարձանի վերայ քանդակուած է մի խաչեալ մարդ, մի մեծ խաչափայտ, մի մեծ թուր, նետ եւ աղեղն եւ մի ջրափարչ: Ուխտատեղի է գերեզմանս, բայց չունի արձանագրութիւն: Երեւի թէ Յիսուս Քրիստոսի նման խաչուելով նահատակուած է սոյն ամփոփեալն, ինչպէս փորագրուած է տապանաքարի վերայ:

Ուրիշ կոշտ քարի վերայ փորագրուած է շատ հին ձեւի տառերով. «Սուրբ Գէորգ փոխեցաւ ՝ի Գոտիշայս ՝ի Քրիստոս, ով որ կարդայ, Աստուած ողորմի»:

Մի խոյաձեւ շինուած քարի վերայ, որի գլուխն կտրուած է. «թվ. ՈԻ. (1171) Ամրին Փրխուլին»: Սորա վերայ քանդակուած են 2 մարդոց պատկերներ, մի թուր եւ մի ձեռնափայտ:

Մի այլ շիրմաքարի խաչի վերայ գրուած է միայն. «թվ. ՊԿԸ»:

գ. ԱՂ-ԲՈՒԼԱՂ շէն, հողն՝ բէկապատկան, օդն, կլիման եւ ջուրն՝ վատառողջ, երկար կեանքն՝60-65: Բնակիչք գաղթած են Արցախի Շօշու, Աւետարանոց, Սօս, Հատրութ, Մոշ-Խմհատ եւ Մեծ-Սիւնեաց Խնձորեսկ գիւղերից: Նոյն են տեղական բերքերն:

Փոքր եկեղեցին՝ Ս. Մեսրոպ, վերնամասն՝ փայտաշէն, ծուխ 23, ար. 66, իգ. 54, ար. ծնունդ 3, իգ. 2, պսակ 1, ար. ննջ. 2, իգ. 1: Քահանան գալիս է Կարմախանուց:

դ. ԱՎԱՆԱՇԷՆ[2] գիւղ, շինուած է մի գոգաւոր հովտի հարաւահայեաց լանջի վերայ: Հովիտն ունի լճակ-լճակ ճահիճներ եւ շրջապատուած է լեռներով, վասն որոյ վնասակար է օդն ամռան եւ լաւ չէ ջուրն: Այս պատճառաւ երկար կեանքն աւելի չէ 70 տարուց: Նոյն են տեղական բերքերն եւ զրաղմունքներն. բնակիչք գաղթած են Արցախի Դիզակ, Վարանդայ գաւառներից, Խաչենի Դաշ-բուլաղ գիւղից եւ Մեծ-Սիւնեաց Զանկազօր գաւառից: Եկեղեցին՝ հոյակապ, շինուած 4 սեանց վերայ, լուսամուտներն՝ նեղ, Ս. Աստուածածին անուն, որ ունի 650 ռուբլի: «Յիշատակ է Սուրբ Աստուածածնայ եկեղեցիս, շինեցաւ (շինեց) Աղա Քալի Լազրովենց 1752 թվին Փրկչին»: Վախճանուած են քահանայք, ձեռնադրուելու են նորերն:

Փառաւոր է եւ ուսումնարանի շէնքն, որ շինուած է եկեղեցու արեւմտեան կողմում, բայց տակաւին չէ բացուած:

Հողն՝ արքունի եւ բարեբեր, ծուխ 130, ար. 500, իգ. 470 ար. ծն. 30, իգ. 26, պսակ 13, ար. ննջ. 9, իգ. 8:

Գիւղիս հիւսիսային կողմում, ոչ այնքան հեռի կայ մի թեղի ծերունազարդ ծառ, որի բնի շրջապատն է 12 խանի գազ: Իսկ հարաւ-արեւելեան կողմում սարի գլխին կայ մի ուխտատեղի՝

1 Տեղական բարբառով կոչւում է շիրա կամ կիլասար:

2 Տեղական բարբառով կոչւում է Կիլաբի:

1 Վանքս գտնւում է Արցախի Կիլլստան կամ Թալիշ գաւառում, իսկ Մեծ-Շէնն՝ Ջրաբերդ գաւառում:

2 Ծերունիք ասում են, թէ գիւղս Ավանաշէն կոչուած է իւր հիմնադիր Ավան-Իւզբաշու անուամբ, որ եկած է Արցախի Շօշու գիւղից 1799-ին իւր ժողովրդով:

Թարչըխ անուն: Նահատա՞կ է, թէ՞ նահատակուհի: Ո՛չ իմացող կայ եւ ո՛չ գրաւոր տեղեկութիւն, բայց շրջապատուած է վաղեմի ծառերով, գերեզմաններով եւ հին ձեւով խաչարձաններով:

Ե. ԹՈՒԲԻ-ՇԷՆ[1] գիւղ, տեղն՝ բարձրաւանդակ, տեսարանն՝ ուշագրաւ, օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, հողն՝ արքունի եւ արդիւնաւէտ, տեղական բերքերն՝ միեւնոյն. եկեղեցին՝ Հոյակապ[2]. կանգնած միակտուր 4 սեանց վերայ, Ս. Աստուածածին անուն, կառուցեալ հասարակութեան ծախքով, որ ունի 25 ռուբլի: Բնակիչք գաղթած են Արցախի Դիզակ, Վարանդայ եւ Զրաբերդ գաւառներից:

Ծուխ 85, ար. 384, իգ. 291, ար. ծն. 16, իգ. 12, պսակ 10, ար. ննջեց. 2, իգ. 3, երկար կեանք 90, քահանան օտարական:

Զ. ԳԱՆՁԱԿ գիւղ, հիմնուած է մի դոգաւոր սարահարթի վերայ, գովելի է օդն եւ կլիման, բայց ոչ ջուրն. նոյն են բերքերն, սակայն նշանաւոր է ցորենն, հողն՝ արքունի եւ արդիւնաբեր: Բնակիչք գաղթած են Դիզակի եւ Վարանդայի Հատրութ, Թաղլար, Նինկի, Կիւնի եւ Ղուզի-Ճարտար, եւն. գիւղերից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, վնասուած շարժից, որը շինուած է հասարակութեան ծախքով 1842-ին եւ ունի 500 ռուբլի: Տակաւին բացուած չէ նորաշէն ուսումնարանն, որ կառուցեալ է Գանձակիս եւ Թուբի գիւղի հասարակութեան ծախքով, երկու գիւղերս կէս ժամ միայն հեռի են իրարից:

Ծուխ 144, ար. 563, իգ. 474, միամեայ ար. ծն. 25, իգ. 20, պսակ 15, ար. ննջեց. 9, իգակ. 5, երկար կեանք 90-100, մի քահանայ՝ տեղացի:

Ուսումնարանի մօտ եղած հին հանգստարանում կան շատ գլխակալ քարեայ խաչեր (մեծ մասն անյայտացած գետնի մէջ), որոց տեսքն ներկայացնում են հետախոյզներին Ը. դարի քարեխաչերի ձեւերը:

Սոցանից միոյն վերայ, որը հաննցինք գետնից, փորագրուած է. «Աստուած ողորմի Էխարիհ. ՄԹ. թվ.» (Փրկ. 760):

Գիւղիս հարաւային կողմում, մի ձուաձեւ բլրի դագաթի վերայ կայ մի ուխտատեղի Սուրբ Գանձակ անուն, ուր յաճախում են բազմաթիւ ուխտաւորներ: Ուխտատեղիս շուրջն ամփոփուած են շատ հին ննջեցեալներ, ինչպէս երեւում են հեռաւոր հնութիւն ներկայացնող տապանաքարերից, որոց մեծ մասն անյայտացած են հողերում, մի մասն յայտնի՝ միայն քարերի երեսներով եւ միւս մասն՝ քարերի ամենափոքր տեղերի երեւմամբ: Ուխտատեղի գերեզմանի վերայ շարուած են մի քանի հնադարեան խաչեր եւ ծածկուած են շատ ծառերով: Անյայտ է մեզ նահատակիս անցքն:

Է. ՔԷՇԽՈՒՐԴ գիւղ. շինուած է խոր ձորի մէջ, խեղդուած է տեսարանն, ամռան՝ ծանր եւ տենդաբեր օդն եւ կլիման, եւ անախորժ՝ ջուրն: Հողն՝ բէկական եւ սակաւ արդիւնաւէտ, տեղական բերքերն՝ միեւնոյն, բնակիչք գաղթած Դիզակ գաւառի Հատրութ, Դոզ, Թաղլար եւ Վարանդայի երկու Ճարտար, Նինկի, Աւետարանոց եւ Շոշու գիւղերից եւ Զանկազօրի գաւառներից: Եկեղեցին՝ նորաշէն, հոյակապ, Ս. Աստուածածին, որ ունի 127 ռուբլի եւ մի քահանայ եւ կրում է այս արձանագրութիւնը. «Յիշատակ է Ս. Աստուածածնայ եկեղեցիս, շինեցին Քեշխուրդ գիւղի հասարակութիւնն 1860 եւ վարձքն (ծախուած դրամի դումարն) է 8040 մանէթ»:

Ծուխ 170, ար. 478, իգ. 439, ար. ծն. 29, իգ. 25, պսակ 14, ար. ննջեց. 12, իգ. 9, երկար կեանք 80:

Ը. ՔԱԼԲԱՆԴ գիւղ. շինուած Բոզ-Դաղի հարաւահայեաց լանջի վերայ. օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, դիրքն եւ տեսարանն՝ զմայլելի. գիւղն՝ մաքուր անասնական աղբերից[3], հողն՝ արքունի եւ բազմարդիւն. բնակիչք՝ գաղթած Զրաբերդից եւ երկու Ճարտար, Աւետարանոց, Շոշու, Դրախտիկ, Ղավախան եւ Յիրհեր գիւղերից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, ձեղունն՝ փայտաշէն, ունի միայն 50 ռուբլի, քահանան՝ բնիկ:

Ծուխ 104, ար. 381, իգ. 341, ար. ծն. 24, իգ. 20, պսակ 15, ար. ննջեց. 4, իգ. 3, երկար կեանք 110:

Թ. ՓԱԹԱԿԼՈՒ շէն. շինուած խոր ձորում, ոչ այնքան ախորժելի՝ օդն, կլիման եւ ջուրն: Հողն՝ արքունի եւ անբաւական բնակչաց եւ միանդամայն ապարդիւն. միեւնոյն՝ տեղական բերքերն, բայց սակաւ՝ այգիներն եւ առատ՝ սումաղն[1]: Բնակիչք՝ գաղթած Խաչեն եւ Վարանդայ գաւառներից. եկեղեցին՝ Ս. Աստուածածին, շինուած հասարակութեան ծախքով, ունի 100 ռուբլի:

Ծուխ 46, ար. 172, իգ. 141, ար. ծն. 9, իգ. 6, պսակ 5, ար. ննջ. 5, իգ. 2:

Շինիս մօտ կան շատ հին հանգստարաններ եւ մի բաւականին խոր եւ մութ քարայր, որից հայ ոմն մի քանի տարի առաջ հանած է շատ հին պղնձեղէն անօթներ:

Ժ. ԳԻՐԿ գիւղ. շինուած է մի լայնադիրկ ձորի հարաւահայեաց լանջի վերայ, դիրքն՝ դաշտահայեաց, տեսարանն՝ հաճոյական, օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, հողն՝ արքունի եւ բազմարդիւն. տեղական բերքերն՝ նոյն, նշանաւոր են ցորենն եւ սումաղն: Բնակիչք գաղթած են Արցախի Քերթ, Դոզ, Կիշի, Թաղավարդ, Հացի, Հղորդի, Թաղլար, Նինկի գիւղերից եւ Զրաբերդից: Եկեղեցին Ս. Աստուածածին. ձեղունն փայտաշէն, որ ունի 700 ռուբ., 2 քահանայ եւ սոյն արձանագրութիւնը. «Կառուցաւ Սուրբ եկեղեցիս Ի յիշատակ գիրքեցի երից եղբարցն Պետրոսի, Պօղոսի եւ Բաղդասարի Գրիգորեան Յովսէփեանց եւ մօրն իւրեանց Ազիզին, թվ. 1831»:

Ունին տղայոց միդասեան ուսումնարան, թոշակաւոր աշակերտք 40, ձրիավարժ 6, ուսուցիչ մի, որի տարեկան ռոճիկն է 400 ռուբլի: Գիւղումս բնաւորած է մի ընտիր սովորութիւն, որի մասին չէ կարելի զանցառութեամբ անցանել: Ամէն կալի ժամանակ հասարակութիւնն կալերից ժողովում է ցորեն եւ լցնում հասարակութեան ամբարի մէջ. ապա ծախում է ժամանակին, որով ո՛չ միայն գոյանում է վարժապետի ռոճիկն, այլ եւ տարէցտարի աւելանում է դրամ, ուսումնարանը երկդասեան անելու նպատակաւ: Որքա՜ն նախանձելի օրինակ:

Ծուխ 227, ար. 689, իգ. 593, ար. ծն. 25, իգ. 17, պսակ 14, ար. ննջ. 9, իգ. 6, երկար կեանքն 100 տարի:

Գիւղիս արեւելեան կողմում կայ հին հանգստարան. անարձանագիր են տապանաքարերից շատերն, եղծուած՝ հին արձանագրութիւնները, որոց մէջ մեծ աշխատութեամբ հազիւ կարողացանք գտնել մի քանիսը, իսկ գրելու արժանաւոր՝ երկուսը. որք են, «Սողրաթմիշ որդին իւր Դայպայպուշ թվ. ՋԻԳ»: «Այս քար Մելիք Հասանին հարազատ Պարսամ Մուրատին... որ է որդին. անոնս (անունս) Արան Շահվարդի. Աստուած ողորմի հոգ. թվ. Ռ.»: Եղծուած են կէտադրեալ բառերն:

Ժա. ԿԻԻԶՌԱՆ շէն. հիմնուած է մի տեսարանն գեղեցիկ սարահարթի վերայ: Օդն եւ ջուրն՝ պատուական, հողն՝ արքունի եւ սակաւ, բնակիչք՝ գաղթած վերեւ յիշուած գիւղերից եւ Խաչենից, ո՛չ եկեղեցի ունին եւ ո՛չ այգի. քահանան գալիս է Գիրկ գիւղից: Բայց որովհետեւ շինացիքս ամռան եղանակներում հնձի պատճառաւ մնում են այն տօթահեղձոյց եւ ախտաբեր հովտի մէջ, որ սկիզբն է առնում Գարդման գետակից եւ վերջանում Ղալակեայ գիւղի ստորոտում եւ խմում Փիր-Դինար կոչուած մեծ աղբիւրի վնասակար ջրից, վասն որոյ բնակիչք գունատ, տենդոտ եւ վատառողջ են ընդհանրապէս:

Ծուխ 46, ար. 108, իգ. 94, ար. ծն. 8, իգ. 7, պսակ 4, ար. ննջ. 8, իգ. 7, երկար կեանք 50 տարի:

Շինիցս վերեւ կայ մի հին ուխտատեղի Նահատակ անուամբ, որ շուրջն պատած են ծերունի ծառեր եւ հին գերեզմաններ: Անծանօթ է մեզ եւ նահատակիս պատմութիւնն:

Ժբ. ՇԻԻՐԻԻՐՁԻ շէն. հիմնուած Բոզ-դաղի հարաւահայեաց լանջի վերայ. նշանաւոր՝ օդն, դիրքն եւ կլիման, բայց անախորժ՝ ջուրն: Հողն՝ արքունի եւ սակաւ արդիւնաբեր, տեղական

1 Թուբիս եղած է մելիքազուն օրիորդ՝ պսակուած ոմն մարդի հետ: Գիւղիս անունն կոչուած է Թուբի, ըստ աւանդութեան ծերունեաց, մելիքազուն տիկնոջ անուամբ:

2 Մօտ 80 տարի առաջ Թուբի շէնս հիմնուած է եղել Ավանաշինի հովտի արեւմտեան բերանում, օդի եւ ջրի վնասակարութեան պատճառաւ փոխադրուած են բնակիչներն այժմեան տեղս: Բայց կիսաւեր եկեղեցին դեռ մնում է հին գիւղատեղում:

3 Գոմերն գիւղիցս հեռի են քառորդ ժամաւ:

1 Պտուղս բուսնում է մարդահասակ բարձրութեամբ թփերի վերայ: Պատեաններն նման են հաստ եւ երկար ստեպղինի, որոց մէջ խտութեամբ լի են տորոնագոյն, բայց սորեկի մեծութեամբ հատիկներ, զորս երկանով աղալով գործ են ածում խորոված ձկան եւ մսի վերայ: Համարեա թէ ունի լիմօնի համ եւ մարսեցուցիչ յատկութիւն: Ահա այս է սումաղն:

բերքերն՝ նոյն. բնակիչք՝ գաղթած Արցախի Խաչեն գաւառի Պայլու ճա. Դաշ-Բուլաղ. Խանձք եւ Ղըշլաղ գիւղերից: Եկեղեցին՝ Ս. Յովհաննէս Մկրտիչ. վերնամասն՝ փայտաշէն. շինուած պ. Յովհաննէս Խալափեանից, ունի 100 բուբ., հոգեւոր հովիւն գալիս է մօտակայ Նորաշէն գիւղից:

Ծուխ 37, ար. 113, իգ. 102, ար. ծն. 9. իգ. 8. պսակ 4. ար. ննջ. 3. իգ. 2. երկար կեանք 80-90:

Ժգ. ՆՈՐԱՇԷՆ գիւղ կամ Աշուղ-Բայրամ. շինուած է նոյն լեռնաշղթայի արեւմտահայեաց լանջի վերայ: Տեսարանն՝ գովելի. լեռներով շրջափակուած. օդն՝ ծանր ամռան. ջուրն՝ անախորժ, այղիներն եւ պարտէզներն՝ լաւ մշակուած եւ առատօրէն մրգալի: Հողն՝ արքունի, սակաւ եւ ոչ հացաւէտ, այլ անտառաշատ: Բնակիչք գաղթած են Խաչեն գաւառի յիշեալ գիւղերից. Եկեղեցին՝ Ս. Աստուածածին. կիսով չափ փայտաշէն. որ ունի 200 բուբլի եւ մի քահանայ:

Ծուխ 132, ար. 456, իգ. 372, ար. ծն. 16. իգ. 12. պսակ 10. ար. ննջ. 7. իգ. 4. երկար կեանք 80:

Գիւղիս արեւմտեան կողմում. հաստաբուն կաղնի ծառերի տակ կայ մի ուխտատեղի Մլիփ անուն: Այստեղ երեւում է մի աւերակ մատուռ. որի երկարութիւնն է 15 քայլ եւ լայնութիւնն՝ 7: Գրեթէ 2 կանգնաչափ անքակ մնում են խորանի կողմի որմերն. բայց կործանուած են մնացեալ մասերն: Սեղանատեղի ուղղութեամբ դրուած է հնադարեան եւ անարձանագիր խաչքար: Այս է Ա. ուխտատեղին:

Մի քանի քայլ դէպի հարաւ կայ մի խոյակաձեւ մեծ քար. որ ունի 3 թիզ 4 մատ երկարութիւն եւ նոյնչափ լայնութիւն եւ բարձրութիւն՝ խորանարդ ձեւ: Քարիս արեւմտահայեաց երեսի վերայ քանդակուած է նրբագործ վարպետութեամբ մի մեծ խաչ. իսկ մնացեալ 3 երեսների վերայ՝ 12 Առաքելոց պատկերներն. մէն մի երեսի վերայ՝ 4 առաքեալի պատկեր: Թէեւ ժամանակի անողոք խարտոցն մաշած է տեղ-տեղ. սակայն գեղարուեստի ճաշակն դեռ մնում է անկորուստ: Խոյակիս մէջ ծակուած է հորիզոնական ուղղութեամբ. որի վերայ դրուած է եւ մի այլ քար: Ո՛չ գիր կայ սոցա վերայ եւ ոչ՝ թուական: Այս է Բ. ուխտատեղին: Անկարելի է. որ փոքր մատուռս ունեցած լինի այս մեծութեամբ խոյակ. այս է մի քանի գագիլ փոքր-ինչ պակաս. քառակուսի մեծութեամբ քար: Ուրեմն այս խոյակը կա՛մ ուրիշ տեղից բերած են եւ կա՛մ իբր մահարձան կանգնած են մի նշանաւոր նահատակի շիրմի վերայ:

Իսկ գիւղի հիւսիսային կողմում կայ մի ընդարձակ եւ վաղեմի հանդստարան. որից ընդօրինակած ենք միայն հետեւեալը.

«Աստուած ողորմի Սուլթան Խուլին թվ. ՂԷ.»:

«Աստուած ողորմի Նիկարին» (եղծուած է թուականն):

«Աստուած ողորմի Արութիւնիս թվ: ՋԳ.»:

«Աստուած ողորմի Զանուն թվ. ՋԿՋ.»:

Ժդ. ԸՌՈՒՇԱՆԱՅ շէն[1]. շինուած անտառների մէջ. Բօղ-դաղի հիւսիսային կողմի բարձրութեան վերայ. տեղն՝ տափարակ, տեսարանն՝ խեղդուած անտառներով, ամուռն՝ փոքր-ինչ ծանր օդն եւ կլիման, բայց առողջարար՝ ջուրն: Հողն՝ արքունի, բայց մացառաբեր, դժուարաւ հերկելի եւ միջակ պտղաւէտ, տեղական բերքերն՝ նոյն եւ բնակիչք՝ գաղթած Խաչենի Խանձք եւ Վարանդայի Կիշի եւ Նինկի գիւղերից: Եկեղեցին կիսով չափ փայտաշէն, Ս. Աստուածածին անուամբ, որ ունի մի աղնիւ քահանայ եւ 100 բուբլի: Ծուխ 62, ար. 224, իգ. 195, ար. ծն. 15, իգ. 10, պսակ 10, ար. ննջ. 3, իգ. 2, երկար կեանք 70-80:

Հին գիւղատեղեր եւ հանգստարաններ գիւղիս հիւսիսային կողմերում

ա. Մուրատ-խան կոչուած տեղում կայ աւերակ գիւղատեղի, եկեղեցի եւ հանդստարան: Եկեղեցուցս, որ շինուած է եղել անտաշ քարով, միայն մնում է կանգուն խորանի կէսն, իսկ մնացեալ մասերն թափուած եւ քարակոյտ եղած են: Աւերակիս մօտ եղած հանդստարանն բոլորովին անյայտացած է վաղեմի անտառի եւ մացառների տակ: Տապանաքարից մեծ մասը կլանած է գետինն եւ անյայտացրած, միայն նշմարւում են գլխակալ խաչքարերի գլուխներն. մի մասը թաքցրած են մացառներն. վասն որոյ եւ անմատչելի են մնում հետաքրքիր խուզարկուներին: Սղնի, գկոթ (գդկարի). լկրմնի. մասրի եւ մորենի մացառների եւ թփերի սուր-սուր փշերն ամէն կողմերից բռնում են եւ ծիւ-ծիւ անում. մանաւանդ կղերական հագուստները: Այս պատճառաւ հարկ եղաւ բերել տալ 15 ցակատաւոր. կացնաւոր եւ բահաւոր մարդիկ: Ահա այսպէս հարթելով. փորելով եւ հանելով հազիւ թէ կարողացանք հասնել մեր նպատակին: Բաւականին ընդարձակ է հանդստարանս. ուր ամփոփուած են Հայոց Շ. թուականից մինչեւ Ռ. թուականն: Բայց մենք մէջ ենք բերում միայն մի բանիսր. որպէս զի ձանձրացրած չլինինք և՛ զրաշարը. և՛ ընթերցողը: Բայց հարկ է յայտնել. որ բնդհանրապէս գլխակալ խաչքարերի վերայ գրուած են հակիրճ արձանագրութիւններն.

«Թվ. Շ. (1051)»: «Թվ. Ռ.»: «Թվ. ...»: «Թվ. ՊԱ»:

«Թվ. ՋԻԳ. Գալստեան»: «Աստուած ողորմի Դաւդին հոգին թվ. ՋԼ»:

բ. Բէշ-քեանդի հանդստարան.

Գիւղիս հիւսիսային կողմում. միմեանցից փոքր-ինչ հեռի կան հինգ անմարդաբնակ գիւղատեղեր. երկու գիւղին ամփոփուած են հանդստարանում. իսկ երեք գիւղին հետեւեալ հանդստարաններում: Ըստ ամենայնի նման է այս նախորդ հանդստարանին եւ ունի միեւնոյն ժամանակամիջոցի աւանդութիւնը. այսինքն է Շ.-Ռ. թուականը: Մի գլխակալ մեծ քարի վերայ. «Թվ. ՊՁԴ. Այս է հանգիստ Սարգիս քահանայիս»: Մի մեծ մահարձանի վերայ ներհակ գրուած. «Թվ. ՋԽԴ. Որշատի[1] բակն ախբերս կացնաւ երետ, սպան այան: Մե՛ղք որ ներհակ գրեցաւ»:

գ. Շոր-ադրիւրի հանդստարան.

Այստեղ ամփոփուած են միայն Գ. գիւղի ննջեցեալներն:

«Աստուած ողորմի Նուհզարիս թվ. ՊԺԸ»:

Այլ խաչքարի վերայ. «Սառայ թվ. ՋԱ»: «Աստուած ողորմի Շահումիս թվ. ՋՃԽԷ. (ՋԽԷ)»:

դ. Ճղպորի (ընկուզենեաց) հանդստարան.

Այստեղ ամփոփուած են երկու գիւղի ննջեցեալներ: Խիստ ընդարձակ է հանդստարանս եւ եղծուած շատերի արձանագրութիւններն: Բազմազարեան անձրեւի հեղեղներն քանդած եւ տարած են ո՛չ միայն շատ մահարձաններ. այլ շատ ննջեցելոց ոսկերքը. վասն զի հանդստարանիս տեղն զառիվայր լանջ է՝ թեքուած դէպի հիւսիս:

«Կանգնեաց սուրբ խաչս Ստեփանի կողակիցն Կուլոն թվ. ՇԽԴ»:

«Սուլթան... (ջնջուած մնացեալն)»:

«Նիւկանլայ թվ. ՋԽԱ»:

«Ումիտ ... ՋԽԸ»:

«Լուն քանդեց մեր գեղը» գրուած է մի քարի վերայ:

ժե. ՎԱՆՌԱՇԷՆ. շինուած է Կոկիսոն (Գեօղ-չայ) գետակի ձախ ափի բարձրութեան վերայ: Գետակս սահմանազլուխ է Արցախի եւ Շամախու թեմական առաջնորդութեան եւ Բագուի եւ Գանձակի նահանգապետութեան: Այլապէս գետակիս ձախ կողմն կոչւում է Շամախու երկիր. իսկ աջ կողմն՝ Շաքուայ երկիր: Պատուական են օդն. կլիման եւ ջուրն. հողի 2 մասն՝ բէկապատկան, 1 մասն՝ արքունի. բայց արդիւնաշատ եւ լիարար. բնակիչք գաղթած են Աշան, Նինկի, Ճարտար եւ Խաչենի Վանք գիւղից Ջալալեան բարեհամբաւ տոհմից եւ Ջրաբերդի գաւառներից: Տեղական բերքերն են ընտիր ցորեն. գարի. գարնանի. հաճար. որիզ. լուբիա. խաղող. եւն. եկեղեցին՝ Ս. Յովհաննէս Մկրտիչ. կամարակապ 4 սեանց վերայ. որ կրում է հետեւեալ արձանագրութիւնը. «Յիշատակ է Սուրբ Յովհաննէս եկեղեցիս Տէր Աբրահամին, որ է որդի Գրիգորին, թվ. ՌՄՀԵ. Ղաբալայ»:

Տաճարս ունի 900 բուբ. եւ մի բանիրուն քահանայ:

Ծուխ 182, ար. 541, իգ. 492, ար. ծն. 33, իգ. 26, պսակ 25, ար. ննջ. 9, իգ. 7, երկար կեանք 90:

---

1 Արցախի բարբառի յատկութիւնն է Ա-ով սկսեալ բառերի առաջի գիրը փոխել ը ձայնաւորի թէ՛ սեռական եւ թէ՛ սորանից կազմուած հոլովների մէջ. օր. Ադամ-Ըդամայ, Առուշան-Ըռուշանայ, Անտօն-Ընտօնի. եւն:

1 Որ նշանակում է հոր. իսկ այան՝ մայր. պարզաբանութիւնն է. Ծատ-հորեր կոչուած տեղի բակումն եղբայրս կացնով զարկաւ եւ սպանեց մայրս:

Աւերակ վանք

Գիւղիս արեւմտահիւսիս կողմում, գետակի ձախ ափի զառիվերի վերայ կայ մի աւերակ վանքատեղի, անունն՝ անյայտ: Բաւական նեղ եւ դժուարաստար է կածանն, որ շարունակ բարձրանում է դէպի սրբավայրն: Կալաչափ հարթակի վերայ շինուած է եղել վանք, որի անուամբ Վանքաշէն կոչուած է եւ գիւղս, բայց այժմ կործանուած է հիմնայատակ: Ո՞ր թուին հիմնուած եւ ո՞ր թուին կործանուած է եւ ի՞նչ պատճառաւ, անյայտ է: Միայն յայտնի է, որ մօտ 30 տարի առաջ տղայք խաղալու ժամանակ գտնում են աւերակիցս մի արծաթեայ ձեռայ խաչ եւ մի զոյգ շուրջառի աղխ, որք չունին արձանագրութիւն: Գիւղիս շրջապատն լի է հայ հանգստարաններով:

Ա. Վանքի հանգստարան ճանապարհի վերայ

Տապանաքարերն ամբողջապէս ունին խաչաքանդակ գլխաքարեր, որպէս տեսանք նախորդ հանգստարաններում: Անձրեւի հեղեղներն այստեղ եւս վնասած են հանդիսաններին, երեւում է, որ շիրմաքարերից գլորած են դէպի Կոկիսոն գետակն, որ շատ հեռի չէ: Սակայն մնացեալ արձանագրութիւններից երեւում է, որ Փրկչ. 601-1700 թուականն ամփոփուած են այստեղ ննջեցեալներ:

«Թվական Ծ. (Փրկչ. 601)»:

«Աստուած ողորմի ա՛յ Քամալ»:

«Թվ. Կ» (մի գլխակալ խաչքարի վերայ):

«Ըսպընդիա՛ր մլքդար (կալուածատէր), վաթանդ ար (էր) Կարմրագել, Մսքարայ որդի, Աստ ողորմի...»[1]:

«Ես Գիգր Ուլուբէկայ կանգնեցաք զխաչս Գիգերի, Աստուած ողորմի թվ. ՉՃԽԸ. էր»:

Այլ խաչքարի վերայ միայն. «թվ. ՊԾԲ»:

Բ. Ղզըլ-դայա (կարմիր քերծ) հանգստարան

Գտնւում է գիւղիս հարաւարեւմտեան կողմում, ծածկուած դժնիկ փշերով: Կացնաւոր, ցակատաւոր եւ բրչաւոր մարդկանց օգնութեամբ երեւան հանեցինք կոպիտ, անտաշ եւ անարձանագիր քարեր: Բացի գլխակալ խաչքարերից, որք ցցուած են մէն մի տապանաքարի գլխի կողմում, չգտանք արձանագրութիւն: Մեր համեստ կարծիքով հայ տաուերի գիւտից առաջ եղած լինելու են միայն խաչակիր տապանաքարերս: Գերեզմանատանս հարաւարեւելեան կողմում,ձորալանջի վերջացած տեղում կայ մի մահարձան, որի աջ ու ձախ երեսներին քանդակուած են 4 միատեսակ, հնգետասանօրեայ լուսնի նման բոլորակ, գեղեցիկ նախշեր, իսկ քարի երեսին մի պատուական խոնչայ: Թէ՛ այս նկարների եւ թէ՛ խաչերի ձեւերն ներկայացնում են խիստ հեռաւոր հնութեան արուեստի ճաշակը:

Գ. Շաքլուի հանգստարան

Հանգստարանս գտնւում է գիւղի հիւսիս-արեւելեան կողմում: Տարբերութիւնն այն է, որ արձանագրութիւններն փորագրուած են տապանաքարերի վերայ եւ ո՛չ թէ գլխակալ քարերի վերայ: Ժամանակի տեւողութիւնն է Պ.-ՋԽԲ. թուականն:

«Այս է հանգիստ Պըրընդուխին, փոխեցաւ 'ի Քս 'ի թվ. ՊՕԷ.»:

«Այս է հանգիստ Խոնդշային 'ի թվ. ՊՕԸ.»:

«Այս է հանգիստ Ալահդատին թվ. ՋԽԲ.»:

Դ. Քոռ-աղբիւրի գլխի հանգստարան

Այս եւս անյայտացած է փշոտ ծառերի եւ մացառների մէջ, այնպէս որ արիւնթաթախ են անում խուզարկուների ձեռները եւ երեսները: Դարձեալ ցակատաւորների եւ կացնաւորների օգնութեամբ հազիւ հազ կարողացանք մեծ նեղութեամբ աւարտել: Ոչինչ պակաս ընդարձակ ծաւալ ունի եւ այս գերեզմանատունը:

Այստեղ եւս ամփոփուած են ննջեցեալներ Փրկչ. 651-1751 թիւն:

1 Զգտնուեցաւ խաչարձանիս կոտրուած բեկորն, վասն որոյ ակամայ բաւականացանք կէտադրութեամբ:

«Թվ. Ճ. Խաչատուր»:

«Աստ ողորմի Մելիքին թվ. ՊՃԳ.»:

«Այս է հանգիստ Աղաճանին, Աստ ողորմի Նմա, թվիս ՊԻԳ.»:

«Այս է հանգիստ ողորմի Շահրմանին»: «Թվ. ՌՃ. Աստ ողորմի Նապաթին»:

Հանգստարանիս վերեւ է մնացատարած գիւղատեղի աւերակն:

Ե. Վանքաշինի այժմեան հանգստարանում.

«Թվին ՌՃԿԶ. էր: Այս է տապան Մէլիսին, որ է որդի Մելիքեան, եղբայր Օհանին, մօրն Նորա Մարեամին: Մահն, որ եկաւ վանքն, եսրանքս կապած, մեռայ, որ քահանայ, որ կարդայ, Հոգոց ասի»: Իսկ մահարձանի միւս երեսին փորագրուած է. «Լակզին, որ վեր կացաւ, քոռ էլաւ»: Հարկ համարեցինք բացատրել արձանագրութեանս միտքը, զի կարեւոր է պատմութեան:

ՌՃԿԶ. (1718) թուին Մելիքի որդի Մելիսին մեռաւ մահարաժամ հիւանդութեամբ: Բայց մեռնելուց առաջ յաղթեց երկրիս վերայ արշաւող լեկզիներին, կապոտեց գերիներ (եսրանքս) եւ թողնելով մեռաւ այս քաջն. «քոռ էլաւ» նշանակում է յաղթուեց լեկզին: Տե՛ս եւ Ես. Կաթ., Աղ., եր. 22-32:

Ժզ. ՈՒՇ-ՏԱԼ գիւղ. շինուած՝ դէպի արեւելահարաւ թեքուած լեռնալանջի վերայ, Դաւապաթան առուի աջ կողմի բարձրութեան վերայ, տեսարանն՝ սքանչելի, օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, հողն՝ արքունի եւ արդիւնաւէտ, տեղական բերքերն՝ ցորեն, գարի, գարնանի, հաճար, ոսպ, սիսեռն, բակլայ, խաշխաշ, կտաւհատ, սորեկ, խաղող, սումաղ, նարնջափայտ[1], ընտիր բեխի եւ կապար: Բնակչաց նախնիքն գաղթած են Արցախի Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից եւ մի քանի ընտանիք Զանկազորի կողմից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, հոյակապ, կառուցեալ 6 սեան վերայ՝ բնակչաց տրօք. որ ունի մի քահանայ եւ 300 ռուբ., իսկ կաթուղիկէն եւ տանեաց թիթեղամածը իւր ծախքով շինել տուած է պ. Յովհաննէս Պետրոսեան Մայիլեանցն: Եկեղեցումս կայ մի շատ հին երկաթեայ, մեծ խաչ, չունի արձանագրութիւն:

Ծուխ 139, ար. 576, իգ. 497, ար. ծն. 24, իգ. 19, պսակ 16, ար. ննջ. 8, իգ. 6, երկար կեանք 100:

ԺԷ. ԱԶԱՅԻ ՇԷՆ կամ ՆՈՐԱՇԷՆ. հիմնուած սարահարթի վերայ. օդն, կլիման եւ ջուրն պատուական, հողն՝ արքունի եւ բազմարդիւն, տեղական բերքերն՝ նոյն. բնակչաց նախնիքն գաղթած են Խաչեն գաւառի Դաշ-բուլաղ, Առաջաձոր, Խնձորստան եւ Վարանդայի Նախջուանիկ եւ Հղորդի գիւղերից եւ Ջրաբերդի գաւառից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, կիսով չափ փայտաշէն, որ ունի ս. Լուսաւորչի մասունք, զետեղուած մի արծաթեայ ականազարդ, միջակ խաչի մէջ, բերուած Արցախից, եւ մի քահանայ: Անխնամ պահուած է եկեղեցին բոլոր պարագայիւք:

Ծուխ 83, ար. 386, իգ. 307, ար. ծն. 19, իգ. 15, պսակ 14, ար. ննջ. 4, իգ. 2, երկար կեանք 105:

ԺԸ. ՂԱԼԱԿԵԱՅ գիւղ. շինուած՝ Բոզ-Դաղի հարաւային բարձրութեան վերայ, գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն. զմայլելի՝ դիրքն եւ տեսարանն, հողն՝ արքունի եւ բազմարդիւն եւ գինեւէտ, տեղական բերքերն՝ նոյն, բայց աւելի ընտիր՝ բեխին.[2] պահում են եւ ոչխար: Բնակչաց նախնիքն գաղթած են Խաչենի Դաշ-Բուլաղ, Ղշլաղ, Առաջաձոր, Խանձք եւ Խնձորստան գիւղերից եւ Ջրաբերդից եւ մի քանի ծուխ՝ Հղորդի եւ Նախջուանիկ գիւղերից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, ընդարձակ, ձեղունն՝ փայտաշէն, որ ունի երկու քահանայ, 1000 ռուբ. եւ սոյն արձանագրութիւնը. «Կառուցաւ տաճարս այս արդեամբք եւ ջանիւք հայոց հասարակութեան Ղալակա գեղջ, իսկ ծեփն ներքին եւ արտաքին աշխատութեամբ Միքայէլի Ծատուրեան 1867»:

Եկեղեցումս կայ կենաց փայտի մասն մի փոքր խաչի մէջ, որի վերայ գրուած է. «Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Օսոփ. թվ. ՌՂԱ. սուրբ Նշան է»: Կայ նաեւ 2 ձեռագիր աւետարան, գրուած բամբակեայ թղթի վերայ: Դիւրաւ են կարդացւում երկոցունց գրերն, միայն անճաշակ են պատկերներն ու նկարներն եւ անազնիւ՝ ներկերն: Առաջնոյն յիշատակարանից.

1 Ներկելու փայտ, որով ներկում են նարնջագոյն թել:

2 Հաւանական է, որ այս բոյսի անուամբ բեխ կոչուած լինի գաւառս: Ամբողջ Աղուանից երկրում բեխի են անուանում բոյսս, որ ամէն տեղ չէ բուսնում, ոմանք՝ բեքի, ուրիշ տեղերում՝ պողիկ, Երեւանեան նահանգում բոխ են յորջորջում:

«Արդ ես անարժանս եւ անպիտան անուամբ Խուճկ կոչեցեալ եւ ի վարս եւ ի հոտս եւ ի համս դառն... եւ անարգ ի գործս քահանայութեան... գրեցի... աւետարանս ի թվին Հայոց ՋԼԲ»: Յայտնի չէ, թէ ուր գրուած է: Երկրորդից.

«Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ փէծուն եւ բազմամեղ գրչի եւ սուտանուն վարդապետ Աբեթէի ի գեղս Անուզ Հաւայտուն Հենգուզակ ի դուռն սբ. եկեղեցուս մասն Պանդալիոն բժշկի եւ սրբոցն, որ աստ կան հաւաքեալ, ի ղանութեան Շահ Թամազին որդոյ Շահ Իսմայիլի, ի թուականութեան Հայ տումարիս ՌԺԳ. գրեցաւ...: Արդ ես Թանգսող տուի գրել սուրբ աւետարանս»: Յիշատակարանի վերջում բացատրած է գրողն, թէ գրած է Արցախի Խաչէն գաւառի Մեծիրանաց Ս. Յակոբ վանքում: Գ. աւետ. յիշատակարանից, որ արժ. Սարգիս քահ. տան:

«Արդ գրեցաւ սբ. աւետարանս ի գեաւղս, որ կոչի Փառակայ ի գաւառին Գողթան ընդ հովանեաւ սբ. Շոմա եկեղեցւոյ ի թուաբերութեան Ասքանազեան եւ Աբեթական տումարի ՌՃԺԴ. յամսեանն փետրվարի ձեռամբ անարժան Ղազար երիցու»:

Տղայոց միգասեան ծխական ուսումնարանում ուսանում են 55 տղայք. թոշակառու 40, ձրիավարժ 15, վարժապետի միամեայ ռոճիկ՝ 400 ռուբլի: Մարդ. Ընկերութիւնն վճարում է նպաստ տարեկան 100 ռուբլի:

Ծուխ 298, արական 864, իգական 729, արական ծն. 29, իգական 19, պսակ 18, արական ննջ. 5, իգական 3, երկար կեանք 100-110:

Գիւղիս հարաւային հանդէպ կայ հին եւ ընդարձակ հանդուստարան, ուր ամփոփուած են ննջեցեալներ Փրկչ. 585-1700 թուական, նոյնպէս գլխակալ խաչքարերով:

«Սուրբ Խաչս Տէր Յովհաննէսին թվ. ԼԴ»:

«Ած ողորմի Մաթոսին թվ. Լ»: եւն:

Կեօղ կոչուած հանդուստարանում եւս կան ամփոփուած, բայց շատ հին չեն, այս է Քրիստոսի 1421-1719 թուականն: «թվ. ՊԼ»: «Ած ողորմի Քարամին», եւ ն:

ԺԹ. ԲՕԶԱՒԱՆԴ գիւղ. հիմնուած Կոկիսոն գետի ձախ ափի բարձրութեան վերայ՝ Վանքաշինի ուղղութեամբ: Գիւղի տեղն բնական կերպով ձեւացած է ամուր բերդ. ունի միայն երկու մուտք՝ արեւելեան եւ արեւմտեան հարաւային կողմերից. իսկ շրջապատն սարսափելի բարձր եւ անմատչելի քերձեր են: Հողն՝ արքունի եւ արդիւնաբեր, նշանաւոր են ցորենն, այգիներ եւ բեխին. ամռան՝ ծանր օդն եւ վնասակար՝ գետի պղտոր ջուրն. բնակչաց նախնիքն գաղթած Դրոնավարդ, Հատրութ եւ Հղորդի գիւղերից. եկեղեցին[1] Ս. Աստուածածին, չորս պատերն՝ աղիւսաշէն եւ ծածկն՝ փայտաշէն:

Ծուխ[2] 50, արական 150, իգական 134, արական ծն. 11, իգական 7, պսակ 5, արական ննջ. 4, իգական 2, երկար կեանք 50-60:

Գեօգ-չայ նոր քաղաք

Գետակիս եւ գաւառիս այժմեան անուամբ հիմնուած է նոր քաղաքս Աղուանից դաշտի հիւսիսային դաշտաբերանում, Կոկիսոն գետակի աջ ափի վերայ 1873-ին: 1874-ին Շամախու լեռնային գաւառներն բաժանուում են 2 մասի, եւ այնուհետեւ Կոկիսոն գաւառիս գաւառագլուխն լինում է Նոր-քաղաքս: Ամռան ծանրագոյն է օդն եւ կլիման, եւ անախորժ՝ գետաջուրն, առատ են ամենատեսակ պտուղներ: Իսկ աշնան կանգնում են լճակ-լճակ անշարժ ջրեր, վասն որոյ անպակաս են դողի եւ ջերմի հիւանդութիւններն:

1876-ին Փոթի կոչուած տեղի շուկան փոխադրուում է այստեղ: Այժմ այստեղ կան արքունական պաշտօնով ծառայող հայ գերդաստան եւ 172 հայ անհատներ, որք զբաղուում են վաճառականութեամբ, գերձակութեամբ, կօշկակարութեամբ, գինագործութեամբ, գինեվաճառութեամբ, դարբնութեամբ եւ անուագործութեամբ: Տակաւին չկայ եկեղեցի: Հայ բնակիչք եկած են մեծամասնութեամբ Շամախուց եւ մնացեալն՝ Շարուից: Բաղաքումս կայ քաղաքական ուսումնարան, 40 աշակերտից հայ են միայն 18-ն: Բայց աւագ վարժապետն հայազգի ազնիւ ոմն է՝ պ. Նիկոլայ Բալաշեանց. ընիկ Սարիանցի:

1 Գիւղիս հարաւային կողմում, սարի լանջի վերայ կայ մի ուխտատեղի. բայց անյայտ է անունն եւ պատմութիւնն:

2 Ծխաթուիս մէջ հաշուած ենք եւ Խոշաւատ շինի 12 տունը՝ բոլոր պարագայիք. քանզի այժմ բնակում են գիւղումս:

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

ԺԲ. բերդն Աղուանից կոչւում է այժմ Ջուանշիրի[1] դալա, որ հիմնուած է Գարդման բերդի արեւմտեան հանդէպ. Գարդման գետակի աջ կողմում. Կովկաս սարից Շէյխ-Լալա թրքաբնակ գիւղի վերայ կախուած մի լեռնարագկի վերայ: Մահմեդականներս Միւրիւտ են անուանում բերդիս մօտ եղած վարելահողերը: Բերդս թէեւ մեծ չէ, բայց ունեցած է ամուր դիրք, շինուած է լեռնային, անտաշ քարով եւ կրաշաղախ ցեխով: Պատուական ջուր բերուած է մօտակայ աղբիւրներից, բայց այժմ չէ վազում: Կիսաւեր դրութեան մէջ է բերդս, զի քարերը քանդած եւ տարած են յիշեալ մահմեդականներն:

Բերդիս արեւելեան կողմում կայ գիւղատեղի, եկեղեցատեղի եւ անարձանագիր հանգըստարան:

ԺԳ. բերդն Աղուանից այժմ կոչւում է Ղարա-Բեշիշ Ղալա: Ամրոցս գտնւում է Մեծ Թալաստան մահմեդականաբնակ գիւղից վերեւ. եւ հիմնած է Կովկաս սարից մեծ ձորի վերայ թեքուած մի լեռնարագկի վերայ, որի երկու կողմի խոր ձորերով վազում են վտակներ եւ միանում բերդի ստորոտում: Ամրոցջապէս կանգուն մնում են ամրոցիս քարուկիր պարիսպներն, որի հարաւային կողմի բարձրութիւնն է 7 սաժէն, ունի միայն մի դուռն արեւելեան կողմից: Անաւեր մնալու պատճառն այն է, որ հեռի է աւերիչ մահմեդականաց բնակութիւնից եւ երկիւղալի՝ գիշատիչ վագրերի, ընձերի, արջերի, գայլերի եւ կինճերի ահից, զի անպակաս են այս ամայաբնակ եւ անտառապատ ձորերից եւ նոյնիսկ բերդիս միջից: Երեւի թէ եղած է բերդաքաղաք, վասն զի, դեռ երեւում են շատ քարուկիր բնակարանների պատերն, եւ ունի բերդս բաւական մեծութիւն: Պարիսպների արտաքին նշաններն եւ ճարտարապետութեան ոճն ներկայացնում են հեռաւոր հնութեան ձեռագործ:

Բերդիս մէջ բուսած են ահագին հաստութեամբ եւ հիանալի բարձրութեամբ կաղնի եւ հաճարկի, եւն. ծառեր, որոց գլուխների ճղերն ասես թէ դիպած են երկնքին: Ծառերս, փոքրութիւնից տեղ անելով արմատներին եւ դարերի ընթացքում հասնելով այս մեծութեան, իւրանց ահագին արմատներով տապալած են բնակարանների պատեր եւ բարձրացրած մեծամեծ վէմեր: Ամրոցս ունի հիանալի՛ տեսարան, գերազանց օդ, կլիմա եւ ջուր: Միայն թէ այժմ որջ եղած է մար

ՇԱՔՈՒԱՅ ԳԱՒԱՌՆԵՐ

ՀՈՂԻ ԳԱՒԱՌ

Գաւառն, որ ընկած է Բոզ-Դաղի հարաւային եւ հիւսիսային լեռնաշղթաների, Կոկիսոն եւ Արջկան գետակների մէջ, զանազան դարերում ստացած է Խոզմադ, Հոզմադ, Հոզի եւ Դաշտակ անունները եւ նշանաւոր է իւր առատ եւ ընտիր ցորենով ու գեղեցիկ դաշտակով: Գաւառիս հայաբնակ գիւղերն են.

ա. ԳԻՐԴԱԴԻԼ գիւղ, հիմնուած է Կոկիսոն գետակի աջ կողմի բարձրութեան վերայ Բոզաւանդ գիւղի դէմուդէմ: Տեսարանն՝ հաճելի, դիրքն՝ բերդանման, օդն եւ կլիման՝ անվնաս, եւ ջուրն՝ ոչ այնքան ախորժելի: Հողն՝ բէկապատկան եւ բազմարդիւն. տեղական բերքերն՝ ցորեն, գարի, կորեկ եւ խաղող, լուբիա եւ բակլայ. բնակիչաց նախնիքն՝ գաղթեալ ամբողջապէս Արցախի Խաչէն եւ Վարանդայ գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, վերնամասն՝ փայտաշէն, որ ունի 2 քահանայ[1], 60 ռուբլի դրամ եւ սոյն արձանագրութիւնը. «Շինեցաւ Ս. Աստուածածնայ եկեղեցիս ի հասարակութենէ Գիրդադիլեցւոց 1881»: Գիւղումս մի տան մէջ կայ սրբատփի նման մի արծաթեայ անօթ, որի մէջ է Թադէոս առաքեալի մասունքից մի մեծ կտոր: Անօթի վերայ փորագրուած է հեռաւոր հնութեան ձեւի տառերով այս հակիրճ արձանագրութիւնն. «Թադէոս առաքեալ, պաղատել անյիշաչար Յիսուս Քրիստոս»: Մասունքս գտած է տան տիրոջ երեխան 3 տարի առաջ գիւղի արեւելեան կողմի ձորով հոսող վտակից: Յորդառատ անձրեւի հեղեղներն քանդում են հողեայ այրերը եւ թափում հեղեղատի մէջ, որից գտած է երեխան մասունքս: Երեւի թէ ուրիշ եկեղեցական անօթներ եւս թաքցրած են եղել նախնիք հողայրումս, բայց անյայտացրած են հեղեղներն: Յորդորեցինք, որ մասունքը յանձնէ եկեղեցուն եւ չպահէ իւր տան մէջ:

Ծուխ 140, ար. 531, իգ. 454, ար. ծն, 25, իգ. 15, պսակ 10, ար. ննջ. 6, իգ. 4, երկար կեանք 90:

Գիւղիս հանդստարանում կան շատ հին ամփոփեալներ, գեղեղում ենք այստեղ արձանագրութիւններից մի քանիսը:

Մի մեծ տապանաքարի վերայ քանդակուած է մեծ հնաձեւ խաչ, նախշեր եւ միայն «Հ» տառս, որ գուցէ թուականն է:

«Աստուած ողորմի Սողոմոնին թվ. ՃԳ»: «Օվանէս թվ. ՌՃԽԸ»:

բ. ԶԱՆԱՂ-ԲՈՒԼԱՂ գիւղ, շինուած է Դուկան գետակի ձախ կողմի բարձրութեան վերայ, գիւղի տեղն ստացած է ամրոցի ձեւ, հիւսիսային, արեւելեան եւ արեւմտեան կողմերն խոր ձորեր են, եւ հարթ՝ հարաւային կողմն: Ամռան ծանր՝ օդն եւ կլիման, բայց բարեհամ՝ ջուրն: Հողն՝ արքունի եւ սակաւ արդիւնաւէտ, բայց խոտաւէտ եւ խնամածու սուրբ անասնոց. բնակիչք զբաղւում են երկրագործութեամբ եւ խաշնարածութեամբ, գովելի են ոչխարն, կովն, եզն եւ գոմէշն: Բնակչաց նախնիք գաղթած են Խաչէն եւ Ջրաբերդ գաւառներից, իսկ մի քանի տնուոր միայն Վարանդայից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, կիսով չափ փայտաշէն, որ ունի 100 ռուբ. եւ մաքուր չէ, հոգեւոր հովիւն գալիս է Գիրդադիլից:

Ծուխ 100, ար. 386, իգ. 310, ար. ծն. 25, իգ. 12, պսակ 8, ար. ննջ. 5, իգ. 3, երկար կեանք 70-75:

Գիւղիս մօտ կայ հին հանդստարան:

գ. ԱՄՈՒՐ-ԱԻԱՆ գիւղ, շինուած Կոկիսոն գետակի աջ ափի բարձրութեան վերայ՝ Վանքաշինի հանդէպ: Դիրքն՝ ամուր, տեսարանն՝ հիանալի, օդն, կլիման եւ ջուրն՝ նշանաւոր: Հողն՝ արքունի եւ լիարար, բնակչաց նախնիքն ամբողջապէս գաղթած Արցախի գաւառներից: Բացի վերոյիշեալ բերքերից՝ խաղող, որիզ եւ խանձիլ[2]: Եկեղեցին՝ Նորաշէն, Ամենափրկիչ, ձեղունն՝ փայտաշէն, որ ունի մի քահանայ:

1 Աւագ քահանան աշակերտած է Արցախեցի գիտնական Յովսէփ վարդապետին:

2 Բոյսս բուսնում է մեծ-պասին, որ ունի սխտորի հոտ եւ ուտւում է միայն եփուած:

Տղայոց միդասեան ուսումնարանն Գէորգեան, ուսանող աշակերտք 46, ամէնքն ձրիավարժ: Վարժապետի ռոճիկն է 300 ռուբլի, որից 200 ռուբլին վճարում է Մարդ. Ընկերութիւնն, իսկ մնացեալը՝ եկեղեցին:

Ծուխ 150, ար. 515, իգ. 426, ար. ծն. 20, իգ. 14, պսակ 14, ար. ննջ. 9, իգ. 6, երկար կեանք 90:

Հին հանգստարաններ

Ուզուխի հանդստարան, գտնւում է այս գիւղիս հիւսիսային կողմի ձմեռանոցի մօտ, դարձեալ ծածկուած անտառով եւ մացառներով: Ընդարձակ գերեզմանատանս ամփոփուած են ննջեցեալներ Հայոց ՃԻ. թուից մինչեւ ՋԿԱ. թուականն, որի մօտ է եւ աւերակ եկեղեցին ու գիւղատեղին:

«Թվ. ՃԻ. Սոտումաւկ»:

«Թվ. Մ. ԲԱՅՈՒՄ»:

«Թվ. ՇԻԲ. Ջոնտար»:

«Թվ. ՉԽ. Աստուած ողորմի Խոտբաշխի հոգուն»:

«Թվ. Ջ. Աստուած ողորմի Ասլանին»:

«Արտաշիր Ջուշերի որդի թվ. ՋԼԲ.»:

«Թվ. ՋԿԱ. Աստուած ողորմի Ճուանշիրի հոգուն»:

Հետաքրքիր անուններ.

«Էաղիլա, Խդիրշ, Միրասոն, Շխբանդա, Ովաքշա» եւն:

Պառաւի բաղի հանդստարանում.

«Հանգիստ Ուստա Մուրատին թվ. ՉԱ.»:

«Թվ. ՊԵ. Սութան Շահ»:

«Աստուած ողորմի Ղուբաթիս թվ. Հայոց Ջ.»:

«Թվ. ՋԺԵ. Աստուած ողորմի Տէր Ովանէսին. խիստ բարի մարդ էր»:

«Բափադար, Եարաջ, Խասխաթուն, Խպլա, Սուրվար, Ճաշ, Վասխոտ, Ոսաղա» եւն. անուններ:

դ. ԲԼԵՂ շէն. ունի միւնոյն դիրքն, տեսարանն, օդն եւ կլիման, բայց ամռան վնասակար է ջուրն, զի չունին աղբիւր, վասն որոյ խմում են Սեւ առուի ջրից: Հողն՝ բէկական եւ բերրի, տեղական բերքերն՝ նոյն. բնակչաց նախնիքն գաղթած են Վարանդայ եւ Խաչէն գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Մինաս, կիսով չափ փայտաշէն, որ ունի մի քահանայ եւ 800 ռուբլի:

Ծուխ 42, ար. 156, իգ. 145, ար. ծն. 8, իգ. 6, պսակ 6, ար. ննջ. 4, իգ. 3, երկար կեանք 70 տարի:

ե. ԲԷԿԼԱՐ-ՔԵԱՆԴ, շինուած միւնոյն շարունակութեան վերայ. միւնոյն են օդն, կլիման եւ ջուրն, հողն՝ բէկապատկան, բերքերից նշանաւորն են գինին, բնակչաց նախնիքն գաղթաց են Խաչէն, Ջրաբերդ եւ Վարանդայ գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Ստեփանոս, ծածկն՝ փայտաշէն, բայց վտանգաւոր կերպով վնասուած, եւ ունի 500 ռուբ.: Քահանան գալիս է Բլեղից: Ս. Մեսրոպեան միդասեան ուսումնարան, աշակերտք 42, տարեկան վարժապետին՝ 300 ռուբ., 150-ը վճարում է Մարդ. Ընկերութիւնն, մնացեալը՝ եկեղեցին:

Ծուխ 142, ար. 418, իգ. 335, ար. ծն. 26, իգ. 19, պսակ 18, ար. ննջ. 10, իգ. 8, երկար կեանք 75-80:

Գիւղիս հանդստարանում կան շատ հին տապանաքարեր, որոց վերայ կան միայն հնադարեան գլխակալ խաչքարեր: Այսպէս նաեւ Շուլղուրի ձոր կոչուած հանդստարանիններն եւ գիւղիս հիւսիսային կողմի ծմակում եղած հանդստարանիններն, որք չունին արձանագրութիւն:

զ. ՍԻՐԹԵՆ ԳԻՋԱ. շինուած միւնոյն լեռնաշղթայի շարունակութեան վերայ (լեռնաշղթայիս գագաթնագիծն է սահման Հոզի եւ Կապաղակ գաւառների): Տեսարանն՝ պատուական, օդն, կլիման եւ ջուրն՝ սննդարար, հողն՝ բէկապատկան եւ բարեբեր. այգիներն՝ ջրարբի, տեղական բերքերն՝ նոյն. բնակչաց նախնիքն գաղթեալ Խաչէն, Ջրաբերդ եւ Վարանդայ գաւառ-

ներից: Եկեղեցին՝ Ս. Գէորգ, որ ունի 500 բուբ., հողեւոր հովիւն գալիս է Սալիան-Նուխուց:

Ծուխ 50, արբ. 140, իգ. 105, արբ. ծն. 8, իգ. 5, պսակ 5, իգ. 2-3, երկար կեանք 80-85:

Գիւղիս հանգստարանում կան խիստ հին տապանաքարեր՝ գլխակալ խաչարձաններով միասին. ժամանակի երկար ժանիքներից քերուած են արձանագրութիւններից շատերը. գետնից հանուած մի քանի քարերի գրերը դժուարաւ կարդացանք կարդալ՝ Մի գլխակալ խաչքարի վերայ. «ՀԳ. թվ. Աստուած ողորմի Շողաքաթին»: «Սուրբ Սարգիս...», տառերն՝ հին եւ տձեւ. եղծուած՝ թուականն: Բայց թէ ի՞նչ սուրբ Սարգիս է՝ անյայտ:

Գիւղիս արեւելեան կողմի ձորում, ջրի աջ կողմում. այդիներից վերեւ. կայ մի անտաշ տապանաքար, որի երկարութիւնն է 2 1/2 խանի զգ: Երկար ժամանակ գետնի տակ անյայտ մնացած է քարս: Բայց երկու տարի առաջ յորդում է սաստկագին անձրեւ. քանդում եւ տանում է հող եւ խրամ բանալով՝ երեւան հանում քարս, որի վերայ քանդակուած է մի մեծ եւ հնաձեւ խաչ եւ սոյն գրերը. «ԹՈՄԱ ԺԲ. ԹՎՈՒՋ»: Մենք կարդացինք՝ Թոմաս ժբ թվուջ[1]:

Է. ԾԻՐԻԿ ՀԷՆ. շինուած է դաշտակի հիւսիսային կողմում. ամռան ծանր՝ օդն, եւ անախորժ՝ ջուրն, հողն՝ բէկական եւ բարեբեր, տեղական բերքերն են ցորեն, գարի, կորեկ, խաղող, դեղձ, սերկեւիլ, կեռաս, դամոն, ընկուզ, բնակչաց նախնիքն գաղթեալ Դիզակ եւ Վարանդայ գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին:

Ծուխ 25, արբ. 81, իգ. 64, արբ. ծն. 5, իգ. 4, պսակ 1, արբ. ննջ. 2, իգ. 1, երկար կեանք 60-70:

Գեօմ-Մուրատ ուխտատեղի

Գիւղիս հիւսիս-արեւմտեան կողմի բարձր սարի վերայ կայ մի ուխտատեղի. որը շրջակայ ժողովուրդն անուանում է Գեօմ Մուրատ: Մի մեծ կաղնի տակ գրուած է մի վագեմի խաչարձան, որ չունի ո՛չ թուական եւ ո՛չ գիր: Միայն աւանդութեամբ ասում են, թէ Եղիշ Առաքելի երեք աշակերտներից մին նահատակուած եւ ամփոփուած է Նիժ գիւղաքաղաքում. երկրորդն՝ այստեղ, եւ երրորդն՝ Վարդաշէնում[2]: Շրջակայ գիւղերից ոչ միայն հայք, այլեւ մահմեդականք մեծ բազմութեամբ յաճախում են ուխտ անելու:

Ը. ԹՈՍԻԿ ՀԷՆ. շինուած է Դուրկան գետակի ձախ կողմի բարձրութեան վերայ. օդն եւ կլիման՝ ճնշուած շրջապատող լեռներից, հողն՝ բէկական. բնակչաց նախնիքն՝ գաղթած Խաչեն եւ Վարանդայ գաւառներից: Եկեղեցին Ս. Աստուածածին. քահանան գալիս է Խոշկաշինից:

Ծուխ[3] 20, արբ. 71, իգ. 61, արբ. ծն. 3, իգ. 3, պսակ 1, արբ. ննջ. 2, իգ. 1, երկար կեանք 60:

Թ. ԽՈՇԿԱՇԷՆ գիւղ. հիմնուած Դուրկան գետակի աջ կողմի բարձրութեան վերայ եւ բաժանուած 2 թաղի: Պատուական՝ օդն եւ կլիման, բայց սառը է արեւելեան թաղի ջուրն՝ արեւմտեան թաղի ջրից: Հողն՝ բէկապատկան, դաշտային եւ լեռնային, նշանաւոր բերքն՝ ցորեն, բնակչաց նախնիքն գաղթեալ են 1721-ին Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից: Արեւելեան թաղի եկեղեցին՝ Ս. Եղիշէ, արեւմտեան թաղինն՝ Ս. Աստուածածին. երկուքն եւս քարաշէն, որք ունին մի քահանայ:

Ծուխ (երկու թաղում միասին) 77, արբ. 268, իգ. 222, արբ. ծն. 11, իգ. 6, պսակ 5, արբ. ննջ. 5, իգ. 4, երկար կեանք 90-100 տարի:

Արեւելեան թաղի արեւելեան կողմի ձորում վաղուց հիմնուած է մի վանք Եղիշ-Առաքեալ անուն: Փոքր տաճարս, որ կառուցեալ է 2 սեանց վերայ, շինուած է ամբողջապէս տաշուած չիչ քարով: Խորանի տակ կայ գաղտնի պահարան, մուտքն ձախակողմեան աւանդատնից: Ասուն են աւանդութեամբ, թէ գաղտնի պահարանումս ամփոփուած է յիշեալ Առաքելի գագաթն: Հարաւային դրան վերեւ գրուած է. «Ի Քրիստոս Յիսուս յիշեալ մաղթեմ զԿլաս վարդապետս ՌՃԱ.»: Հարկ է յայտնել, որ այս թուական ոչ թէ սկզբի հիմնարկութեան, այլ վերաբերում է նորոգութեան, քանզի շատ հին է խորանի տակի շինութիւնն: Իսկ արեւմտեան դրան առաջ նոյն քարով շինուած գաւթում. (որի գլուխն խոնարհած է) կան եպիսկոպոսների եւ վարդապետի գերեզմաններ. մի տապանաքարի վերայ. «ՀԱՆԳԻՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ վարդապետին Պաշճաղցի ՌՃԾԵ.»: Գաւթի հարաւային կողմին կից. շարքով շինուած է եղել միաբանից խուցեր. որք աւերակ են այժմ: Խուցերից ներքեւ կայ երկար եւ կիսաւեր շինութիւն, որի կէսն ծառայած է իբր տնտեսատուն եւ միւս կէսն՝ իբր ուսումնարան: Վանքս ունի պատուական, բայց խիստ բարակ ագրիւր: Այժմ ամենայն ինչ քայքայման վիճակի մէջ է:

Ժ. ՓՈՒՐ-ՍԵՕԳԻԻԹԼՈՒ գիւղ. միւնոյն՝ հողն, օդն, կլիման, տեսարանն եւ ջուրն: Նշանաւոր է ցորենն եւ բամբակն: Բնակչաց նախնիքն գաղթած են Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից վերոյիշեալ թուականում: Եկեղեցին՝ Ս. Լուսաւորիչ, որ ունի 50 բուբ. եւ մի քահանայ:

Ծուխ 70, արբ. 266, իգ. 218, արբ. ծն. 14, իգ. 10, պսակ 4, արբ. ննջ. 4, իգ. 3, երկար կեանք 85-90:

Ժա. ՄԵԾ-ՍԵՕԳԻԻԹԼՈՒ գիւղ. շինուած Կապաղակ գաւառի հարաւային սահմանագլուխ սարի հարաւահայեաց լանջի վերայ. տեսարանն սքանչելի. օդն եւ կլիման՝ պատուական, ջուրն՝ անվնաս. հողն՝ բէկապատկան, անջրդի. բայց բազմարդիւն եւ ըստ Ս. Աւետարանի՝ ընդունած մի հացահատիկը՝ հարիւրաւոր աճեցնող եւ վաստակաբեկ մշակը՝ վարձատրող: Ահա այս դաշտակն է. որի ցորենն ապնիւ հռչակուած է, պատուական է եւ բամբակն: Բնակչաց նախնիքն ամբողջապէս գաղթած են Խաչեն գաւառից 1721-ին, ինչպէս վկայում է ժամանակակից պատմիչն[1], բայց յետոյ 1798-ի նախածանոթ սովի եւ ժանտախտի պատճառաւ եկած եւ յարած են Ջրաբերդից մի քանի ընտանիքներ: Եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ձեղունն՝ փայտաշէն, որ ունի միայն 100 բուրլի. մի քահանայ եւ հետեւեալ արձանագրութիւնը. «Կառուցաւ Ս. Աստուածածնայ եկեղեցիս ի հայրապետութեան (Էջմիածնի) Տեառն Յակովբայ եւ ի կաթուղիկոսութեան Տեառն Սիմէօնի[2] եւ յառաջնորդութեան Կլաս վարդապետն Շամախեցւոյ թվ. ՌՃԻ.»: Եկեղեցուս արեւմտեան կողմում շինուած է մի գեղեցիկ զանգակատուն սոյն արձանագրութեամբ. «Այս յիշատակը Սիմօն Յովսէփեանի Դաւիթեանց, իւր կին է Նախշուն, որ (եւ) որդիքն է Ավանէս (եւն) 1890»:

Աւագ խորհրդանոցում մի խաչքարի վերայ «թվ. ՋԼԱ.»: Եկեղեցու արեւմտեան որմի վերայ. «թվ. ՋԼԱ.»:

Խորանի աջ կողմում. «Ես Տէր Յովսէփս, որ լուսաւորեցի (մաքրեցի) սուրբ Աստուածածնայ եկեղեցիս՝ է. (7) թիզ աղբ կար, որ է ժամանակ Հաճի (Չալաբու) թվ. ՌՄ.»:

Եկեղեցումս կայ երկու գրչագիր աւետարան, գրուած բամբակեայ թղթերի վերայ: Գեղեցիկ չեն չորս աւետարանչաց պատկերներն, ծաղիկներն եւ թռչնագրերն, բայց գեղեցիկ են մանր գրչագրերն:

Ա. ձեռագիրն գրած է Արցախի Ծար գիւղաքաղաքում Սարգիս անուն վարդապետ ոմն, թաթարաց հրոսակների[3] խուժած ժամանակ «թվ. ՊԼՋ.»: Գրիչն ասում է. «Նախ հալածուելով փախայ Վակունիս գաւառ. ապա Ղարաբաղ, Ծափանիս[4] գիւղաքաղաք, հուսկ ուրեմն վերստին եկի բնիկ երկիրս Ծար»:

Բ. անյայտ է աւետարանիս գրողն, թուականն, եւ կիսատ՝ յիշատակարանն: Կիսատ տեղին շարայարած է Վրդանէս անուն վարդապետ ոմն, թէ՝ գնեցի Ս. Աւետարանս հալալ արդեամբս Հայոց Ռեհ. թուին:

1 Բայց թէ այդ թուականում գործածակա՞ն էին այս ձեւ սղագրութիւնն եւ տառերն:

2 Աղուանից պատմիչն գրած է. «Անտի (Ի Զողայէ) եկեալ (Առաքելոյն Եղիշայ) յՈւտի գաւառ Ի Սահառն քաղաք երիւք անձամբք աշակերտելովք՝ որոց անօրէնք ոմանք զկնի եկեալ՝ մի յաշակերտացն ընկալաւ Ի նոցանէ զնահատակութեան վախճան, եւ երկուցն թողեալ զերանելին Եղիշա զնացին զկնի խողխողիչ արանցն» (Մով. Կաղ. եր. 8):

3 Առաջ շէնս շինուած է եղել այժմեանի հիւսիսային կողմում, ուր տակաւին կանգուն մնում է եկեղեցին, օդի վնասակարութեան պատճառաւ փոխադրած են այստեղ:

1 Նս. կաթ. Աղուանից, եր. 25:

2 Ըստ Գաղտնիքի՝ Մրո կաթուղիկոս:

3 Լանկ-Թամիւրի ժամանակ:

4 Անծանօթ տեղանուն: Արդեօք ա՞յս է Ս. Օրբելեանի Սոթ գաւառի Ծափաթաղ գիւղն (եր. 264):

Գ. գրչագիրն գտնուում է քահանայի տանն: Նոյնպէս անյայտ է գրողի անունն եւ թուականն. միայն յայտնի է. «Եւ արդ՝ ես Մատթէոս էրեցս, որ եմ ի Դաշտ երկրէն Բարտայու եւ ի գեղջէն Հասան Ղալայու, ստացայ եւ գնեցի հալալ արդեանց ընչից եւ ստացուածոց իմոց զայս սուրբ մատեանքս եւ գրեանքս, որ է սուրբ աւետարանս, մէկ ժամագիրք, մէկ քարոզգիրք[1] յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց»:

Անմաքուր է եկեղեցին ամենայն պարագայիւք:

Զարմանալի է, որ այս մեծ գիւղն չունի ուսումնարան: Այս սառնասրտութիւնն պատիւ չէ բերում գիւղացւոց...:

Ծուխ 350, ար. 1170, իգ. 937, ար. ծն. 53, իգ. 40, պսակ 20, ար. ննջ. 20, իգ. 18, երկար ապրող մարդն՝ Բաբա-քովխա՝ 100 ամաց, իսկ Թոխի անուն պառաւն՝ 115 ամաց. կենդանի են երկոքեան եւս:

Գիւղիս հանգստարանում գտանք գլխակալ խաչքարերի վերայ միայն այս հնութիւնները հողի տակից. «ԻՋ.»՝ քանդակուած խիստ հնադարեան տառերի ձեւով:

«Ես Սանասի թվ. ՈԵ.»:

Ձեռնաւոր ուխտատեղի

Գիւղիս արեւելեան կողմի բարձր սարի գագաթի վերայ կայ երկու քարեայ խաչարձան, որք ունին մարդաչափ բարձրութիւն: Իսկ մին ունի սոյն արձանագրութիւնը. «Ես Սարգիս շինեցի խաչս այս տակիս թվ. ՊՅԳ.» (այս է՝ շինեցի արձանագրութեանս տակի խաչը): Անծանօթ է մեզ նահատակիս պատմութիւնն:

Մի այլ ուխտատեղի եւս գտնուում է գիւղիս արեւմտեան-հիւսիսային կողմի սարի գլխին՝ Ար-դաղ անուն: Մի գետնափոր աւերակ է այս, որ նման է երդիկաւոր տան տեղի. մէջտեղում նշմարւում են կրակատեղի եղերքի չորս քարերն, ինչպէս շինուած են սովորաբար հին գետնափոր տներն: Ահա այս օճախն է ուխտատեղին. նմանապէս անյայտ է եղելութիւնն:

Կան հին գիւղատեղիներ եւ հանգստարաններ եւ Էօլմազ եւ Պապիկ կոչուած տեղերում: Վերջնոյս գերեզմանատան մէջ միայն գտանք հետեւեալը. «Այս է հանգիստ Մահեզարին թվ. ՌՃՇ.»:

Ժբ. Եաղուբլու գիւղ (Յակովբայ գիւղ). հիմնուած նոյն լեռնաշղթայի շարունակութեան հիւսիսահայեաց լանջի վերայ՝ մի լայնադոդ եւ դէպի Կապազակ գաւառն թեքուած հովտում: Վատ չէ վերին թաղի տեսարանն, օդն, կլիման եւ ջուրն, բայց ամռան փոքր-ինչ ծանր է ստորին թաղինն: Հողն՝ բէկապատկան եւ բազմարդիւն, եւ նոյն՝ նշանաւոր բերքերն, բնակչաց նախնիքն ամբողջապէս գաղթած են Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից (4 տուն Խաչենի Խանածախ եւ մի տուն Տաթեւ գիւղերից): Եկեղեցին՝ Ս. Մինաս, Վերնամասն՝ փայտաշէն, որը կառուցած են հնոյն հիման վերայ. բայց փորած է նորն, որ ունի 100 բուբ. եւ մի քահանայ:

Ծուխ 155, ար. 485, իգ. 440, ար. ծն. 45, իգ. 35, պսակ 20, ար. ննջ. 25, իգ. 18, երկար կեանք 85-95:

Կան հին հանգստարաններ թէ՛ գիւղիցս վերեւ եւ թէ՛ գիւղամիջում: Վերջնոյս ստորոտում, ճանապարհի միջում սաստիկ հեղեղն քանդելով ճանապարհը՝ երեւան է հանում մի հին գերեզման: Քանդակեալ խաչերով զարդարուած են գլխակալ, սրտակալ եւ ոտնակալ քարերն: Սրտակալ քարի վերայ փորագրուած է.

«Սուրբ խ...րէխաւսէ Ըրս... կաթուղիկոսին Է»: Ըստ երեւութին մենք կարդացինք. «Սուրբ խաչս բարեխօս է Ըրստակէս Աղուանից կաթուղիկոսին է»: Եղծուած են կէտադրեալ տառերն եւ բուն տարեթիւը ցոյց տուող դրերն, վասն որոյ կարդացւում է մեծ դժուարութեամբ: Աղուանից կաթուղիկոսաց շարքում եղած են երեք Արիստակէս:

1 Բացի աւետարանից չկան միւսներն:

Ա-ն վախճանուած է 1477-ին.

Բ-ն գահակալած է 1511-ին, բայց անյայտ է մահն:

Գ-ն վախճանուած է 1592-ին:

Երեքիցս որի՞ գերեզմանն է այս, դժուարին է որոշել:

Ժգ. ԹՕՓԵՐ՝ շէն. դիրքն՝ հիւսիսահայեաց. միջակ՝ օդն եւ կլիման, բայց անախորժ՝ ջուրն. հողն՝ բէկական եւ այգեւէտ. բնակչաց նախնիքն՝ գաղթած Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, ամբողջապէս քարաշէն, որ ունի 15 բուբ., քահանան գալիս է Զառափ գիւղից:

Ծուխ 40, ար. 110, իգ. 95, ար. ծն. 5, իգ. 4, պսակ 2, ար. ննջ. 4, իգ. 3, երկար կեանք 70-75:

Ժգ. ՁԱՌԱՓ գիւղ. այգիներն մօտաւորութեան պատճառաւ կցուած Թօփերի այգիներին. դիրքն՝ արեւելահայեաց. օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, հողն՝ բէկապատկան եւ այգեւէտ. գլխաւոր բերքն՝ ցորեն եւ գինի. բնակչաց նախնիքն՝ ամբողջապէս գաղթած Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Գէորգ, հոյակապ, որ ունի 25 բուբլի եւ մի քահանայ:

Ծուխ 140, ար. 427, իգ. 332, ար. ծն. 24, իգ. 18, պսակ 13, ար. ննջ. 10, իգ. 12, երկար կեանք 90-100:

Գիւղիս հարաւ-արեւմտեան կողմում կայ հին գերեզմանատուն, գիւղատեղի, հին եւ փոքր եկեղեցի՝ Ս. Յովհաննէս անուն, փայտաշէն ծածկով, որը նորոգելով արած են ուխտատեղի: Բեմի ժողովրդահայեաց երեսին դրած են 3 մեծ, հին եւ անարձանագիր խաչեր: Հանգստարանում փորագրուած է մի քարի վերայ. «Այս է տապան Իթափդուղի որդի Մովսէսին թվն. ՌՄԽԵ.»:

Ժե. ՁԱՅ-ԲԵԱՆԴ (Գետաշէն). շինուած Արջկան գետակի ձախ կողմի բարձրութեան վերայ. գեղեցիկ՝ օդն, կլիման եւ տեսարանն. անախորժ չէ գետաջուրն. միեւնոյն՝ հողն եւ տեղական բերքերն. բնակչաց նախնիքն՝ գաղթած Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից եւ մի քանիսն՝ Վարանդայից: Եկեղեցին՝ հին, հողաշէն, ծածկն՝ փայտաշէն, Ս. Աստուածածին անուն, որ ունի մի քահանայ:

Ծուխ՝ 100, ար. 308, իգ. 266, ար. ծն. 25, իգ. 17, պսակ 7, ար. ննջ. 13, իգ. 8, երկար կեանք 85:

Ժզ. ՂԱՅԱ-ԲԱՇԻ գիւղ. շինուած նոյն գետի ձախ ափի բարձրութեան վերայ. օդն ամռան փոքր-ինչ ծանր, բայց անվնաս, միեւնոյն՝ ջուրն, հողն, բերքերն եւ զբաղմունքներն. բնակչաց ծնողներն գաղթած Պարսկաստանի Խոյ քաղաքից եւ գաւառներից 1807-ին: Եկեղեցին՝ նորաշէն, Ս. Ստեփաննոս, համակ քարաշէն, 4 սիւնով եւ ընդարձակ, բայց դեռ անաւարտ, որ ունի 1000 բուբ. անձեւնմխելի դրամագլուխ եւ երկու հոգեւոր հովիւ: Հարկ է յայտնել, որ խոյեցիք այստեղ գալուց առաջ՝ արդէն եղած է գիւղումս հայ բնակիչ եւ եկեղեցի, որպէս ապացուցանում է նախկին տաճարի նորոգութեան արձանագիրն, որ պահուած է ցարդ, ահաւասիկ. «Նորոգեցաւ արդեամբք ժողովրդոց Ս. Ստեփաննոս եկեղեցիս Ղայաբաշի գեղջ յամի Տեառն 1830 10 ապրիլի»: Փորագրուած է մի այլ քարի վերայ. «Խոյեցիք որ եկին յերկիրն Շաքի, էր թուին Հայոց ՌՄՃՋ., եւ յամի Տեառն 1807, եւ այս Ղայաբաշի գիւղս գալն էր թուին Հայոց ՌՄՀԳ. եւ յամի Տեառն 1824»: Այժմեան եկեղեցիս, որ կառուցեալ է 'ի հիմանէ, կրում է նորոգութեան արձանագրութիւնը, միայն փոխուած է թուականն՝ «1890»: Ատենի ժամագրքին մի պարապ երեսին գրուած է. «Խոյեցի Ջափար Ղուլի խանն՝ որ եկաւ Շաքի խան նստեց, էր թվին ՌՄՃՋ. ՌՄԿԳ.-ին մեռաւ»: Կայ եւ մի գրչագիր աւետարան, գրուած բամբակեայ թղթի վերայ, որի յիշատակարանից ընդօրինակում ենք միայն հետեւեալը. «Արդ գրեցաւ սա յերկիրն Մոկաց 'ի գիւղաքաղաքն Նանենց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Սարգիս զաւրավարին եւ որդոյ նորա Մարտիրոսին, գրեցաւ սուրբ աւետարանս 'ի թուականութեան Հայոց ՌՃԽԴ. ձեռամբ սուտանուն Աբրահամու»:

Ունին միդասեան տղայոց ուսումնարան. Ս. Ներսիսեան անուն, ուր ուսանում են 62 աշակերտներ, որոց 60-ն թոշակատու եւ 2-ն ձրիավարժ. վարժապետի միամեայ ռոճիկն է 400 բուբլի:

Ծուխ[1] 226, ար. 789, իգ. 649, ար. ծն. 55, իգ. 45, պսակ 30, ար. ննջ. 15, իգ. 10, երկար կեանք 90:

1 Ժողովուրդն ցարդ պահպանած է իր հետ բերած բարքերը, սովորութիւնները, իր նախկին երկրի հագուստը, բացի եւ կերակուրների տեսակները, եւն. եւն.:

Գիւղիս հարաւային կողմի դաշտակի բերանում կայ հին գիւղի եւ եկեղեցու աւերակ եւ ընդարձակ հանդստարան, որի տապանաքարերն անտաշ, կոպիտ եւ անարձանագրիր են: Այս տեղն կոչւում է Շինատեղ:

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

ԺԶ. բերդն Աղուանից, որ կոչւում է Խոսրով, գտնւում է Բօղ-Դագի Հարաւ-Հայաստանեայց բարձրութեան վերայ, Խոսրով Թրքաբնակ գիւղից վերեւ: Անմատչելի եւ բարձրաբերձ քերձեր են բերդիս չորս կողմերն, միայն հիւսիսային կողմից մի թրաձեւ սեռով կցուած է Նահատակի սարին եւ նոյն կողմից ունի մի դժուարատար ելք՝ բերդս մտնելու: Ամրոցիս մէջ շեղջ-շեղջ դիզուած են թրծեալ աղիւսի բեկորներ: Այս երեւոյթն ենթադրել է տալիս, որ բերդաբաղաք եղած է այս. մանաւանդ շատ տեղերում նշմարւում են շինութեանց խիտ հիմունքներն: Ամրոցիս մակերեւոյթի տարածութիւնն, որ զգալի ձեւով թեքուած է դէպի հարաւ, հապիւ թէ լինի այժմ կէս քառակուսի վերստ: Բայց հարկ է յայտնել, որ գուցէ ունեցած է վերստաչափ մեծութիւն, սակայն ժամանակի մշտագործ մուրճն, հետզհետէ ամէն կողմերից քանդելով, փլցրած է հողեայ քերձերը եւ հասցրած այժմեան դրութեան: Քերձերի եզերքներով պարսպուած է եղել՝ մարդ ընկնելու վտանգից ազատ մնալու նախազգուշութեամբ, այժմ թափուած են ամրոցիս շրջապատի ստորոտներում նոյն պարսպի բեկորներն:

Ելքի երկու կողմերում կան հողափոր այրեր, որոց մէջ մտնողն կարծես թէ տեսնում է նպարավաճառների խանութներ՝ աչք-աչք շինուած պահարաններ՝ վաճառելի զանազան նիւթեր լցնելու համար, որպիսին շատ կայ եւ Անի քաղաքի շրջապատում:

Բերդի արեւելեան կողմից արտաքուստ կայ մի մութն եւ խոր ական՝ յատկապէս շինուած, որ տանում է դէպի բերդի տակն: Մեր հասկացողութեամբ ականս ծառայած է իբրեւ ջրուղի՝ մօտակայ վտակից ջուր փոխադրելու բերդն, որի մէջ չկայ ջուր: Հետաքրքիր եւ անզուսպ միտքն չէ բաւականանում միայն ականի մուտքը դննելով, այլ կամենում է անյապաղ ներս մտնել, տեսնել, հետախուզել, յագուրդ տալ բաղձանաց եւ ապա դուրս ելնել: Թէեւ բաւական լայն է ականն եւ կարողանում է դիւրաւ մտնել հետազօտողն, սակայն տեսքն անդամ սարսափ է ազդում, վասն զի դետնի բռնաշունչ շոգին ոչ միայն անցուցանում է մտքերը, այլ եւ լապտերները՝ փոքր-ինչ յառաջ գնալուց յետոյ: Պատճառն այն է, որ փակուած է ականիս վերի բերանն: Այդ ժամանակ մարդ զինքը գտնում է թանձրամած խաւարի եւ արտաքրոյ ահու դողի եւ անբացատրելի երկիւղի մէջ: Հետեւապէս ակամայից սարսռում է մարդ յետ դառնալ խարխափելով եւ պաշարուած տագնապով:

Կարեւոր է յայտնել նաեւ, որ արդէն նշանաւոր ամրութիւն է բերդիս արեւելեան, հիւսիսային եւ արեւմտեան կողմերի 4 վերստ տեղի տարածութիւնն: Հարաւային կողմից ունի միայն մի կիրճ, արեւմտեան կողմից՝ 2 կիրճ, իսկ հիւսիսային՝ մի սոսկալի կիրճ, որ յար եւ նման է Գարդման բերդի կեարդանային: Ընթերցողն դիւրաւ կարողացաւ պատկերացնել, որ արտաքին բերդս անդամ դժուարամատչելի է թշնամեաց, թող թէ ներքին բերդն:

Նահատակ

Զուաձեւ տնկուած եւ շրջապատի լեռներից աւելի բարձրացած եւ թրաձեւ սեռով ներքին բերդին կցուած մի սարի գագաթի վերայ կայ միայն կալաչափ տափարակ: Այստեղ յայտնի երեւում է հին մատրան հիմքն եւ սենեակների աւերակներ, յայտնի է նաեւ, որ մեծ ուխտատեղի է Զանազ-բուլաղցւոց համար, որոց պատկանում են բերդերս իւրեանց շրջանակներով եւ այստեղ են պահում աշնան եւ ձմռան եղանակներում իւրեանց անասունները: Երբեմն թէ այստեղ՝ մատրանս մէջ, ամփոփուած է եղել Նահատակի մարմինն, որի տեղն յայտնի չէ որոշակի: Միայն մի անկիւնում մի քանի հասարակ քարերի վերայ երեւում են մոմերի հետքեր եւ ծխուած խնկի մնացորդներ: Ուխտատեղիս բարձրանալու համար կայ միակ ճանապարհ, որ հիւսիսային կողմից մանուածոյ եւ նեղ հովիտներով տանում է դէպի արեւելք, ապա օձապտոյտ եւ խիստ զառիվեր կածանով հասնում ուխտատեղին: Ուխտատեղիս կոչւում է Խոսրովի նահատակ: Մարտիրոսուղի անուն Խոսրով եղա՞ծ է, թէ բերդիս անուամբ կոչուա՞ծ է Խոսրովի նահատակ, անյայտ է մեզ, անյայտ է եւ նահատակիս պատմութիւնն:

Նմանապէս բերդերս Հայոց Մեծն-Խոսրով Թագաւորից շինուած եւ սորա անուամբ Խոսրով անուանուա՞ծ է, թէ պարսից Խոսրով Թագաւորի՞ եւ թէ Աղուանից Ջուանշիր-իշխանի եղբօր՝ Յեզուա-Խոսրովի՞: Բերդերիս հարաւային ստորոտում եղած գիւղի Խոսրով անունն կարծել է տալիս, որ բերդերս վերաբերում են վերջին Խոսրովիս:

Բայց որքա՜ն ուշադրաւ է ուխտատեղուս տեսարանն: Արեւելեան, հիւսիսային եւ արեւմտեան կողմերում երեւում են մշտադալար գենի (գի) ծառերով զարդարուած լեռներ եւ լեռնակներ, ձորեր եւ ձորակներ, սրածայր բլրակներ եւ բազմախումբ բլուրներ, սոսկալի խոռոչներ եւ ահարկու ծերպեր, ալխալխեալ լեռնաշղթաներ եւ անդնդախոր ձորեր, անջրդի հեղեղատներ եւ թրաձեւ, լիսեռնաձեւ սեռեր, նեղ-նեղ եւ ոլոր-մոլոր կիրճեր եւ միանգամայն հողեայ քերձեր: Իսկ հարաւային կողմում պատկերանում են Աղուանից եւ Արցախի դաշտերն եւ լեռներն կուր գետով միասին:

Նահատակի սարիս հիւսիս-արեւմտեան կողմում կայ հանդստարան, գիւղատեղի եւ եկեղեցատեղի:

ԺԷ. բերդն Աղուանից, որ կոչւում է Ջրագող, գտնւում է Գիրդաղիւլ գիւղի անդում, Կոկիսոն գետակի աջ ափի բարձրութեան վերայ: Մի եւ կէս վերստ մեծութիւն ունեցած է բերդս, որի գետակի կողմն անմատչելի եւ բարձր քերձ է, հիւսիսային, արեւմտեան եւ հարաւային կողմերով քանդուած են եղել խրամներ, որք թէեւ հերկուելով լցուած են, այսու ամենայնիւ դեռ նըշմարւում են հետքերն: Այստեղ եւս ցան եւ ցիր երեւում են թրծեալ աղիւսի բեկորներ: Բայց որովհետեւ ջուր եղած չէ եւ այժմ եւս չկայ այստեղ, վասն որոյ բերդիս մինչեւ գետակի բերանն շինուած է կրացեխով եւ թրծեալ աղիւսով գեղեցիկ եւ լայն ական, որ սանդղաձեւ աստիճաններով իջնում է մինչեւ գետակն: Բայց հետզհետէ ցածացած է գետակն եւ այժմ մնացած ականի վարի բերանն:

ԺԸ. բերդն Աղուանից, որ գտնւում է Ջրագողի եւ Ամուր-աւանի մէջ, անուանւում է Ղալաբոյուն: Բերդիս տեղն, որ ընդարձակ է, ստացած է սուրանկիւն ձեւ, այս ընկած է Կոկիսոն գետակի եւ Սեւ-Ջուր վտակի խառնրդի բարձր քերձերի մէջ, իսկ հիւսիսային կողմն՝ վտակից մինչեւ գետակն, փորուած է խոր եւ լայն խրամ: Բերդիս ջուրն բերուած է Սեւ Ջրից, այժմ որոշակի յայտնի է Ջրանցի տեղն: Գեղեցիկ տափարակ են երկու բերդերիս տեղերն, բայց աւելի ապահով է վերջնոյս ամրութիւնն:

ԺԹ. բերդն Աղուանից, որ կոչւում է Ղըզլ-ղայա, գտնւում է Ղարա-Ղոյունլու Թրքաբնակ գիւղից ցած, Սրջկան գետակի ձախ կողմի բարձրութեան վերայ: Ամրոցիս պարիսպն ամրողջապէս շինուած է չիչ տաշուած քարով եւ կրացեխով, նոյնպէս եւ միջի բոլոր շինութիւններն: Պարսպի եւ շինութեանց վերնամասի քարերը քանդած եւ տարած են: Այս քարերով շինուած են Զոմախլու կոչուած կայարանի բոլոր շինութիւններն, Հաւարիկ գիւղի եկեղեցին եւ շատ տներ: Սակայն դեռ մնում են գետնամասի շինութիւններն՝ գեղեցիկ, կամարակապ, ամրաշէն սենեակներ, նկուղներ եւ պահարաններ մնում են ծածկուած հողերի տակ: Այս բերդն եւս իւր մէջ ունեցած չէ ջուր, վասն որոյ շինուած է մեծագործ ական բերդիս մինչեւ գետակի եզերքն: Ականս եղած է ջուր փոխադրելու միակ ճանապարհն: Բայց այժմ դժուարին է մտնել եւ հետազօտել ականս, վասն զի լի է թունաւոր լիժ եւ քարբ օձերով: Անյայտ են մեզ եւ բերդերիս անցեալն, շինութեանց տարեթիւն եւ կատարուած քաղաքական դէպքերն:

ԽԵՆԻ ԳԱՒԱՌ

Գաւառիս, որ ընկած է Բոզ-դաղի հիւսիսային լեռնաշղթայի վերայ, արեւելեան սահմանն է Արջկան, հիւսիսային՝ այն դաշտակի հարաւային բերանն, որ տարածուած է Ղասալայից մինչեւ Բաղասական դաշտն, արեւմտեանն՝ Ալազան, հարաւայինն՝ Արաշի գաւառն: Գաւառիս ամենամեծ մասն անպէտք հողեր են, վասն զի անջրդի, մերկ, մոխրագոյն, հողեայ լեռներ, անզարդ հովիտներ եւ անմարդաբնակ վայրեր են: Հետեւապէս միայն բնակարան են այծեամների, որք հօրաններով ճարակում են տարմաբար: Պիտանի հողն է միայն գաւառիս հիւսիսային մասն, որի վերայ շինուած են հայ բնակչաց գիւղօրայքն:

ա. ՂՈՋԼՈՒ գիւղ, որ շինուած է լեռնաշղթայի հարաւահայեաց լանջի վերայ. բարւօք է տեսարանն, օդն, կլիման եւ լաւ՝ ջուրն: Հողն՝ արքունի եւ բազմարդիւն. տեղական բերքերն՝ ցորեն, գարի, կտաւատ, կորեկ, ընկուզ, դամոն եւ սերկեւիլ. բնակչաց նախնիքն՝ գաղթած Խաչեն եւ Վարանդայ գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, ձեղունն՝ փայտաշէն, քահանան գալիս է Աղ-Փիլաքեան գիւղից:

Ծուխ 94 ար. 255, իգ. 210, ար. ծն. 20, իգ. 17, պսակ 10, ար. ննջ. 9, իգ. 6, երկար կեանք 85-90:

Գիւղիս արեւելեան կողմի սարի վերայ կայ մի ընդարձակ եւ շատ հին հանդուստարան, որի մահարձաններն առհասարակ անարձանագիր են, միայն ունին գլխակալ խաչարձան քարեր:

բ. ՍԱԼԻ-ԲԷԿ գիւղ. շինուած նոյն սարի հարաւահայեաց լանջի վերայ, պատուական՝ օդն, կլիման, տեսարանն եւ ջուրն: Հողն՝ բեղմնաւոր եւ լիարար. սեփականութիւն բնակչաց, զի փողով գնած են բէկից. տեղական բերքերն՝ նոյն. բնակչաց նախնիքն գաղթած են Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, փայտաշէն. քահանան՝ միեւնոյն անձն:

Ծուխ 50, ար. 203, իգ. 169, ար. ծն. 11, իգ. 7, պսակ 8, ար. ննջ. 5, իգ. 3, երկար կեանք 90-100:

գ. ՄԵԺԼԻՍ գիւղ. միեւնոյն՝ տեսարանն, օդն, կլիման, ջուրն եւ բերքերն. հողն՝ արքունի եւ արդիւնաւէտ. բնակչաց նախնիքն՝ գաղթած յիշեալ գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, որ ունի մի քահանայ:

Ծուխ 60, ար. 190, իգ. 150, ար. ծն. 8, իգ. 7, պսակ 6, ար. ննջ. 4, իգ. 2, երկար կեանք 85-90:

դ. ՋԻԻՋԱՄԻՇ գիւղ. շինուած նոյն լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջի վերայ. միջակ բարեխառն՝ օդն եւ կլիման, գեղեցիկ՝ տեսարանն, եւ անվնաս՝ ջուրն. հողն՝ արքունի եւ սակաւաբեր, բնակչաց նախնիքն՝ գաղթած Խաչեն, Ջրաբերդ եւ Վարանդայ գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, ձեղունն՝ փայտաշէն, ունի մի քահանայ:

Ծուխ 53, ար. 159, իգ. 134, ար. ծն. 10, իգ. 8, պսակ 5, ար. ննջ. 5, իգ. 4, երկար կեանք 65-75:

ե. ԱՂ-ՓԻԼԱՔԵԱՆ գիւղ. շինուած նոյն լեռնաշղթայի գլխին, տեսարանն, օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, հողն՝ արքունի եւ միջակ արդիւնաւէտ, բնակչաց նախնիքն՝ գաղթած Ջրաբերդի, Խաչենի եւ Խոյի գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Մինաս, վերնամասն՝ փայտաշէն, որ ունի 2 քահանայ:

Ծուխ 112, ար. 424, իգ. 354, ար. ծն. 26, իգ. 15, պսակ 11, ար. ննջ. 12, իգ. 8, Երկար կեանք 100:

Գիւղիս արեւմտեան կողմերում, նոյն լեռնաշղթայի վերայ կան հետեւեալ հնութիւններն, որք շատ հեռի չեն իրարից:

ՆԱՌԼԸՋԱ, որ գտնւում է մի հարաւահայեաց ձորի արեւելահայեաց լանջի վերայ: Բաւական ընդարձակ են աւերակ գիւղատեղին, հանդուստարանն եւ եկեղեցատեղին: Բայց ափսո՜ս, որ մահմեդականներն անյայտացրած են հանդուստարանիս արձանագրութիւն ունեցող քարերը. այժմ մնացած են միայն անարձանագիր եւ անտաշ քարերն: Նշանաւոր է աղբիւրի ջուրն:

ՍՈՐՈՒՋԱ, այստեղ եւս կայ աւերակ եկեղեցու եւ գիւղի տեղեր եւ հանդուստարան, որոց ծաւալն աւելի մեծ է, քան նախորդ աւերակներինն: Անտաշ, կոպիտ եւ կլորակ են տապանաքարերն: Թերեւս ունեցած են գլխակալ խաչարձաններ, բայց այժմ անյայտացած են, զի կան մահմեդական մօտաւոր բնակիչներ: Պատուական ջուր ունի տեղիս աղբիւրն:

ՇԻՐԻՆ-ԲՈՒԼԱՂ (Քաղցր աղբիւր), այստեղ եւս կայ աւերակ գիւղատեղի եւ հանդուստարան, դարձեալ անարձանագիր: Աւելորդ է գրել աղբիւրաջրի մասին, քանզի անունն արդէն յայտնում է, որ խիստ գովական է ջուրն: Կարմիր եկեղեցի է կոչւում գիւղատեղիս աւերակ աղօթարանն: Թափուած անտաշ քարակոյտերից երեւում է, որ քարաշէն եղած է եկեղեցիս. իսկ հիմքերն, որ դեռ մնում են, յայտարար նշան են եկեղեցու մեծութեան: Ցայսմ ողուեցաւ մեզ գտնել արձանագրութիւն: Աւերակս ունի սքանչելի՜ տեսարան:

ՎԱՆՔԱՏԵՂԻ, այսպէս են անուանում հայ գիւղացիք այն վանքի աւերակը, որ շատ հեռի չէ եկեղեցու աւերակից: Տակաւին մնում է խորանի կլորաձեւ մասն՝ երկու կանգուն բարձրութեամբ: Վանքս շինուած է եղել թրծեալ մեծ-մեծ եւ հաստ-հաստ աղիւսով եւ կրաշաղախ ցեխով: Անյայտ է մեզ վանուցս պատմութիւնն, անունն եւ անցեալն, զի չկայ արձանագրութիւն: Ունի հիանալի՜ տեսարան:

ՀԱԹԱՄ-ԲՈՒԼԱՂ եւ ԿԻԼԼՈՒ-ԴԱՂ կոչուած տեղերում եւս կան աւերակ գիւղատեղի, եկեղեցատեղի եւ հանդուստարաններ, որք ունին միեւնոյն գրութիւնը:

զ. ՋԱՓԱՐ-ԱԻԱՏ գիւղ. շինուած արքունի ճանապարհի արեւելեան կողմում, մի առուի ձախ ափի վերայ: Տեսարանն խնդուած է լեռներով, իսկ գիւղն՝ ծածկուած այգիներով եւ պարտէզներով. օդն եւ ջուրն՝ անվնաս, հողն՝ արքունի[1] եւ արդիւնաւէտ, բնակչաց նախնիքն գաղթած են Խոյի գիւղերից 1807-ին: Եկեղեցին՝ Պողոս-Պետրոս, հին եւ հողաշէն, որ ունի 100 բուբ. եւ մի քահանայ: Գիւղումս կան հետեւեալ մասունքներն, որք բերուած են գաղթած ժամանակ Յովսէփ եւ Վարդան հանդուցեալ քահանաներն: Մի արծաթեայ, միջակ մեծութեամբ խաչի վերայ գրուած է. «Յուդա Յակովբեան առաքելուն մասունքն այս է, ի թվ. ՌՄԻԳ.»: Մի այլ միջակ խաչի վերայ. «Տէր Մուշքարի որդի Տէր Օվսէփս. յիշատակ է ս. խաչս Ըստեփաննոսի, Հ.»: Մասունքն անյայտացած է: Ա՛յլ նոյնչափ խաչի վերայ. «Նիկողայոս ՌՃՕԵ»: Մասունքներս բերուած են Խոյի Սուլտուզ գիւղից: Զարմանում է այցելուն. թէ ի՞նչ պատճառաւ տների մէջ են պահւում մասունքներս եւ ոչ եկեղեցում...:

Ծուխ 55, ար. 219, իգ. 194, ար. ծն. 7, իգ. 6, պսակ 6, ար. ննջ. 4, իգ. 3, երկար կեանք 115 (Այս մի պառաւ, բայց զառամեալ կին է, որը տեսանք մեր աչքով: Սա հաւատացնում է, որ ինքն պսակուած եկած է Խոյից):

Գիւղիս մօտերքում կան այս հնութիւններն.

Գիւղիս արեւմտեան հանդէպ, առուի աջ կողմի սարալանջի վերայ, կայ գիւղատեղու եւ եկեղեցատեղու աւերակ եւ խիստ հին հանդուստարան, որի տապանաքարերն անտաշ են եւ անարձանագիր: Ունին մի քանիսն միայն գլխակալ խաչքարեր:

ՆԱՂԱՐԱ-ԹԱՓԱ կոչուած սարի գլխին, որ գտնւում է գիւղիս արեւմտեան կողմում, կայ մի հին բերդ: Դեռ երեւում են քարաշէն բերդիս պարսպի հետքերն եւ միջի շինութեանց գետնամասի մնացորդներն: Մի քանի տարի առաջ աւերակներիցս գտած են հին դրամներ եւ պղնձեղէններ: Այս է Ի. բերդն Աղուանից, որի պատմական եւ քաղաքական անցեալն անյայտ է մեզ:

ՎԱՆՔԱՏԵՂ, բերդատեղից ոչ այնքան հեռի գտնւում է մի վանքի աւերակ, որ շինուած է եղել սրբատաշ քարով: Այժմ մնում են խորանի 2 շարք տաշած քարերն եւ հիմունքներից տեղ-տեղ փլատակների ներքեւ ծածկուած մասերն: Ակներեւ է, որ տարած են տաշուած քարերը: Աւերակից երեւում է, որ վանքս ունեցած է չափաւոր մեծութիւն եւ միաբանից սենեակներ: Բայց չկայ բնաւ արձանագրութիւն: Հետեւապէս մնում է անյայտ վանքիս անցեալն:

Աւերակ վանքիս մօտերքում եւ Ինջիլլու կոչուած տեղում եւս կան հին եւ աւերակ գիւղատեղիներ, եկեղեցատեղիներ եւ հանդուստարաններ: Ջափար-աւատի եկեղեցու աւազանն բերուած է Ինջիլլուի եկեղեցուց:

է. ԳԵՕԳ-ԲՈՒԼԱՂ գիւղ. հիմնուած նոյն լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջի վերայ: Օդն եւ տեսարանն՝ պատուական, ջուրն՝ ոչ այնքան ազնիւ. հողն՝ արքունի եւ բազմարդիւն, բնակ-

---

1 Գիւղս հիմնել տուած է Խոյեցի Ջափար-Ղուլի-խանն 1807-ին, ինչպէս տեսանք Ղայա-Բաշու արձանագրութեան մէջ: Գիւղիս բնակչաց նախնիքն գաղթած են դայաբաշեցւոց հետ:

չաց նախնիքն գաղթած են Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից. գրաղմունքն երկրագործութիւն եւ այգեգործութիւն: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, անշուք եւ հին, որ ունի միայն 50 բուրվի եւ 2 քահանայ: Եկեղեցումս կայ Տեառնեղբօր Յակոբոս առաքեալի մասունքն, հաստատուած մի նրբագործ, արծաթեայ մեծ խաչի մէջ, որ կրում է այս արձանագրութիւնը. «Այս սուրբ նշանս (խաչս) յիշատակ է Տէր Իսրայէլ(ի) հայր Զաքարին, մայր Կուլին, կողակից Թելլուին թվ. ՌՄԾԷ.[1]»: Կայ նաեւ մի գրչագիր եւ մեծագիր աւետարան, որ գրուած է ամբողջապէս Մեսրոպեան գլխագրերով մագաղաթի վերայ: Գեղեցիկ են ծաղիկները, ծաղկագրերն եւ գլխագրերն, բայց այնքան գեղեցիկ չեն 4 աւետարանչաց պատկերները (մանաւանդ խնամքով պահուած չէ այս թանկագին ձեռագիրն): Պարտք համարեցինք ընդօրինակել յիշատակարանից հետեւեալը.

«Միամուխ խորոցն Աստուծոյ Պաւղոս առաքեալ յիւրում աշխարհալուր տումարի գրէ այսպէս. «Ոչ ոք ասէ Տէր Յիսուս Քրիստոս, եթէ ոչ Հոգւով Աստուծոյ»: Արդ, այս Հոգի յորդահեղ հնչմամբ 'ի գունդս Առաքելոցն սրբոց, որք երկուցն գերամբարձան... Սիոն շնորհի զառաքելականն եւ զաւետարանականն, որք ըստ քառակի գետոցն ոռոգողաց զդրախտն ծաւալեալ հոգիս հաւատացելոցն արբուցին զպասքումն քառանիւթեայ միացելոցս ըստ քառառաջ պահպանութեանն 'ի վեր եւ 'ի վայր, յաջ եւ յահեակ...:

«Ըստ կարի եւ յօժարութեան խնդրող եղեալ քրիստոսասէր եւ բարեպաշտ ոմն անուն Վանինի դուստր բարեպաշտ իշխանին Հայոց որդւոյն Խախրանայ՝ թոռն Բակ իշխանին: Իսկ յայնմ ժամանակի, յորժամ 'ի պարտութիւն մատնեցաւ սուրբն Վարդան զաւրավարն զաւրաւք իւրովք՝ վասն ծովացեալ մեղաց մերոց, այս Բակ գնաց փախստեայ 'ի յամրոց իմն եւ զաւրքն պարսից եւ ուրացեալն Վասակ զհետ մտեալ պատեցին շուրջ զամրոցաւն: Իսկ այս Բակ իշխան եղեալ 'ի պարիսպն նախատեաց զուրացեալն Վասակ եւ զամենայն չարիսն, զոր անցուցեալ էր նա ընդ աշխարհս Հայոց, յիշեցուցանէր առաջի զաւրավարին Պարսից, եւ ելեալ 'ի գիշերի եաթն հարիւր արամբ գնաց փախստեայ յերեսաց Շապհոյ արքային Պարսից՝ յամուրն Արցախայ եւ կեցեալ բարեպաշտութեամբ եւ քրիստոսասէր հաւատով մինչեւ յայս բարեպաշտ իշխանս Ջաջուռ եւ 'ի սմին որդի Այեսալ քրիստոսասէրս Վանինի, որ եւ ստացաւ զայս աստուածախաւս աւետարանս յիշատակ եւ փրկութիւն հոգւոյ հաւր իւրոյ բարեպաշտ իշխանին Ջաջռոյ եւ ետ 'ի սուրբ մենաստանն, որ կոչի Հաւապտուկ, որ է շինեալ յանուն սրբոյ Աստուածածնին եւ է բնական տուն եւ շիրիմ Ջաջռոյ իշխանին եւ նախնեացն իւրոց եւ է 'ի գաւառին Արցախայ՝ որ կոչի Խոխանաբերդ՝ 'ի տէրութեան երից հարազատացն եւ բարեպաշտ իշխանացն Ջալալին, Զաքարիային եւ Իւանէին: Իսկ վերադարձեալ սպասաւորք սուրբ ուխտիս սահմանեցին 'ի տարւոջ մի աւր պատարագ մատուցանել իշխանին Ջաջռոյ 'ի տաւնի գալստեան Սուրբ Հոգւոյն, եւ որ զայն յիշատակ կատարէ, աւրհ(ն)ի յԱստուծոյ, եւ որ զայս գիրս (աւետարանս) յայս ուխտէ զինչ եւ իցէ պատճառաւ հեռացուցանէ, դատի 'ի Տեառնէ...[2]»:

«Արդ գրեցաւ սա 'ի թվիս Հայոց ՌՁԱ. (1232) 'ի գաւառիս Կայէնոյ 'ի գերահռչակ սուրբ ուխտս Գետկայ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Լուսաւորչիս ձեռամբ մեղապարտ Ստեփաննոսի, յիշխանութեան իշխանաց իշխանի աթաբակ Իւանէի եւ որդւոյ Աւագին: Եւ վասն զի Վրաց թագաւոր ոչ գոյր, ունէր զաթոռակալութիւնն դուստր Թամարին, եւ 'ի հայրապետութեան Հայոց տէր Կոստանդնի եւ յԱղուանից հայրապետութեան Տէր Յովհաննիսի»:

Արդէն իմացանք, որ Ջաջուռեան Վանինին-Այեսալ գրել տուած էր աւետարանս, բայց չգիտենք, թէ ինչ պատճառաւ յետոյ գնած է նախ «Քեսբար» անուն ոմն, ապա «Քեսբարի որդի Այտինն», ապա «Յովհաննէս քահանայ ՊԻԲ. թվին», ապա «Այտնի կողակից Մարմարն ՌՃԾԱ.». եւ ապա բերուած է գիւղս Խաչենից 1798-ին:

Գիւղումս կայ ծուխ 184, արտ. 500, իգ. 375, արտ. ծն. 22, իգ. 15, պսակ 12, արտ. ննջ. 9. իգ. 5, երկար կանք 90-95:

1 Ուղղագրութիւնն լինելու էր՝ Ս. Խաչս յիշատակ է Իսրայէլ քահանային, որն իւրոյ Զաքարիային. մորն իւրոյ Վարդուհւոյն. եւն:

2 Դժուարընթեռնելի են կէտադրեալ բառերը:

Եղիշ-Առաքել. հասարակութիւնից այսպէս է անուանւում այն մասուռն, որ հիմնուած է գիւղիս արեւելեան կողմի ձորի արեւելեան կողմում, սարի լանջի ստորոտում: Մատուռս շինուած է չիչ կոփածոյ քարով. բայց այժմ խոնարհուած են ամբողջ գլուխն եւ արեւմտեան որմն: Ջունի արձանագրութիւն, միայն մի անտաշ որձաքարի վերայ, որ զետեղուած է խորանի ներսի կողմում, քանդակուած է. «Խաչս Ալթար Կազին է. Ի.»: Մատրանս շուրջն խռնուած են հին, անարձանագիր եւ անտաշ տապանաքարեր:

Ը. ԴԱՇ-ԲՈՒԼԱՂ գիւղ. շինուած է 3 ձորակների եւ սեռերի վերայ. քառաժայռ լեռներ բարձրացած են գիւղի արեւմտեան կողմում: Գիւղիս դիրքն արեւելահայեաց է, տեսարանն՝ դուրեկան, օդն կլիման եւ ջուրն՝ պատուական: Հողն՝ արքունի եւ արդիւնաւէտ. նշանաւոր բերքերն՝ ցորեն, գարնանի, հաճար, գարի եւ կտաւհատ[1]. բնակչաց նախնիքն գաղթած են Ջրաբերդ եւ Խաչեն գաւառներից: Եկեղեցին՝ հոյակապ, Ս. Գէորգ անուն, որ ունի 200 բուր., 2 քահանայ եւ կրում է սոյն արձանագիրը. «Յիշատակարան շինութեան սուրբ Գէորգայ եկեղեցւոյս 'ի հասարակ ժողովրդոց Դաշբուլաղու ՌՄՀԷ.»: Եկեղեցումս կայ մի հին ճաշոց գիրք, որ բերուած է Պաշընճաղ գիւղից եւ մի հին ծնծղայ, որ բերուած է Քունգիւտ գիւղի եկեղեցուց, սորա բնակիչներն մահմեդականութիւն ընդունելուց յետոյ: Ծնծղայիս վերայ, որի մի կողմից կտրուած է փոքրինչ տեղ, փորագրուած է. «Յիշատակ է ծնծղայս Քունգիւտի[2] սուրբ Աստուածածնայ (եկեղեցւոյն) թվ. ՌՃԽԴ. (1695)»: Գիւղումս շինած է պ. Աբրահամ Յովհաննիսեան Մեհրաբեանցն տղայոց համար մի ուսումնարան, որ անաւարտ է տակաւին եւ անպատրաստ:

Ծուխ[3] 200, արտ. 707, իգ. 648, արտ. ծն. 26, իգ. 19, պսակ 10, արտ. ննջ. 10, իգ. 6, երկար կանք 100:

Գիւղիս նախորդ բնակչաց ընդարձակ հանդստարանում կան շատ տապանաքարեր, բայց անարձանագիր: Ղարա-դարա, Բիւլբիւլու, Սօկիթլու, Մոլլա-դարա, Ինջիլլու, Թէրեքա եւ Օհան-սար կոչուած տեղերում եւս կան հին գիւղատեղեր, եկեղեցեաց աւերակներ եւ հանդըստարաններ: Իսկ գիւղիս նոր հանդստարանում մի տապանաքար կրում է այս արձանագրութիւնը.

«Այս է տապան Զարաբերդցի (Ջրաբերդ) Մելիք[4] Առստամին...»: Ջնջուած են կէտադրեալ բառերն:

Թ. ՁԱՐՂԱԹ գիւղ. շինուած նոյն լեռնաշղթայի վերայ, բարեխառն՝ օդն եւ կլիման եւ լաւ՝ ջուրն. հողն՝ արքունի եւ բերրի եւ նոյն՝ տեղական բերքերն: Արդի բնակիչք հաստատելով այստեղ փոխադրուած են նախորդ գիւղից՝ Դաշ-բուլաղից: Եկեղեցին՝ կիսով չափ փայտաշէն, Ս. Աստուածածին, որ ունի մի քահանայ:

Ծուխ 80, արտ. 296, իգ. 247, արտ. ծն. 15, իգ. 10, պսակ 4, արտ. ննջ. 6, իգ. 4, երկար կանք 85-90:

Գիւղիս վերեւ կայ մի քարուկիր շինուած մատուռ, որից տեղ-տեղ աւերուած է այժմ: Յարգուած ուխտատեղի է այս, ուր յաճախում են հայ գիւղացիք: Մատրանս մօտ կայ հին եւ աւերակ գիւղատեղի եւ հանդստարան:

Ժ. ՍԱՐԱԹԼՈՒ գիւղ. դիրքն հարաւ-արեւմտահայեաց, տեսարանն հաճելի, օդն, կլիման եւ ջուրն՝ նշանաւոր. հողն՝ արքունի եւ բազմարդիւն, տեղական բերքերն, բացի վերոյգրեալից, ոչխար, տաւար եւ գոմէշ, բնակչաց նախնիքն գաղթած են Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, կիսով չափ փայտաշէն, որ ունի մի քահանայ:

Ծուխ 120, արտ. 534, իգ. 446, արտ. ծն. 20, իգ. 12, պսակ 10, արտ. ննջ. 5, իգ. 3, երկար կանք 95-100:

Բաւական ընդարձակ է հին գիւղատեղին, որ գիւղիցս շատ հեռի չէ. եկեղեցատեղին, որ աւերակ է ամբողջապէս, եւ հանդստարանն, որ անարձանագիր է: Բաց յայսցանէ գիւղիս շրջականերում կան հետեւեալ աւերակներն.

Մեծ-Ղոզլու (Մեծ-ընկուզուտ), Սաբաթլուի արեւմտեան կողմում, նոյն լեռնաշղթայի վերայ, նոյնպէս աւերակ է գիւղի, ուր կան եւ հանդստարան եւ եկեղեցու տեղ: Այս դրութեան մէջ

1 Դիւղումս կայ ձիթահաճ գործարան եւ հողմաղորի:

2 Քունգիւտի մասին յետոյ:

3 Դիւղիս ծխաթիւերի հետ հաշուած են եւ Սօկիթլու եւ Թէրեքա շէնների ծուխերը եւ արտ. ու իգ. շունչերը:

4 Հարազատ մելիքներից եղած չէ:

են նաեւ Փոքր-Ղոզլուի, Հացոտի, Ջանկեալի, Բաղարջուղի, Շոր-Բուլաղի եւ Պաշնճաղի աւերակ գիւղերն, եկեղեցիներն եւ հանգստարաններն:

Վերջնոյս փլատակներում տակաւին ցցուած երեւում են բնակարանների գլնի սիւներն: Տներն շինուած են Արցախի գետնափոր տների նման: Խիստ մեծ եղած է եկեղեցին, դեռ մարդաչափ բարձրութեամբ կանգուն են չորս աղիւսաշէն պատերն եւ միջի 9 հատ գլնի անփութ սիւներն: Եկեղեցուս եւ աւերակների մեծութիւններից ենթադրում ենք, որ խիստ մեծ եղած է գիւղս եւ բազմամարդ:

ԴԱՊԱԼԱ ԳԱՒԱՌ

Գաւառս, որ ընկած է Կոկիսոն եւ Օրաբան գետակների եւ Կովկասեան մեծ լեռնաշղթայի դագաթնագծի եւ Բոզ-դաղի հիւսիսային լեռնաշղթայի հիւսիսային լանջերի մէջ, կոչուած է Գեղաւու, Գեղաւուէ, Կապաղակ, այժմ Ղապալա: Աղուանից ամբողջ երկրում ոչ մի գաւառ այնքան առատաջուր չէ՛, որքան է գաւառս: Համարեա թէ ամէն տուն ունի իւր բակով վազող ջուրը: Բաց յայսցանէ ջրաբեր են գաւառիս ամբողջ ցանքսերն, այգիներն եւ պարտէզներն: Գաւառս աշնան եղանակում ներկայացնում է այցելուաց մի զմայլելի՜ դրախտ: Զտես այցելուն կարծում է, թէ գտնւում է Ադամի դրախտում, կամ թէ գաւառս է Ադինա դրախտին կենդանի պատկե՜րն: Պարտիզաց ծառներն ծանրաբեռնուած են պատուաստուած տանձ, խնձոր, դեղձ, դամոն, սալոր, զղեաբ, ընկուզ եւ շագանակ մրգերով: Ասես թէ բնութիւնն առանձին խնամքով զօրութիւն տուած է գաւառիս հողին, ջրին եւ օդին՝ անհամեմատ բերքերով գերազանցելու միւս բոլոր գաւառներից[1]: Պարտէզներում շրջած ժամանակ այցելուն զմայլում եւ գոգցես արբենում է սխրախառնուրդ անուշահոտութիւններով: Հոտաւէտ խնձորների, տանձերի, սերկեւիլների հոտերն, խառնուելով միմեանց հետ եւ բաղադրուելով օդի հետ, 'ի մի ձուլուած յագուրդ են տալիս ընդգական զգայարանաց, պարարում սիրտը եւ առ Աստուած բարձրացնում շնորհակալու հոգին, միտքը եւ զգացումները եւ պատկերացնում երեւակայութեան առաջ նախահօր եւ նախամօր դրախտում վայելած կեանքը:

12 տեսակ են տանձերն, որոց 5 տեսակն՝ աշնան եւ 2 տեսակն՝ աշնան վերջին օրերում: Ամենանշանաւոր է վերջին տեսակս, որ կոչւում է նառարմուտի, որից մի ամենամեծ հատի քաշն է 2 ֆունտ, երբեմն մինչեւ մի օխա:

Բազմատեսակ են խնձորներն, որք տարբերւում են իրարից մեծութեամբ, գունով, տեսքով, համով եւ հոտով: Ամենանշանաւորն է անուշահոտ եւ մեծ ու ամբողջապէս կարմիր տեսակն:

Բազմատեսակ են եւ սերկեւիլներն, բայց նշանաւորն է մալաչի անուանեալ տեսակն, որ ունի պակաս մեծութիւն քան կիտրոնն, բայց գեղին գոյն, սքանչելի տեսք, հիանալի հոտ եւ քաղցր համ:

Բազմատեսակ են եւ արքայակաղիններն, սակայն նշանաւոր է տեսակն, որ ունի ընկուզաչափ մեծութիւն եւ բարակ կեղեւ:

Թութ, կեռաս, զղեաբ՝ տեսակ-տեսակ:

Խոռնիկն ունի սալորի չափ մեծութիւն, սեւ գոյն, ախորժելի համ եւ 3-4 մանր կուտ: Ուտւում է աշնան վերջում:

Խաղող՝ 6 տեսակ, որթերն առհասարակ հեծած են ծառերի վերայ:

Յորեան՝ 5 տեսակ, դարենի՝ 3 տեսակ, գարի՝ 3 տեսակ, կորեկ՝ 3 տեսակ՝ քառասնօրեայ, ամարնային եւ աշնանային, որից՝ բազմատեսակ, ընտիր է շարիւր կոչուածն. շերամ (բոժոժ) բազմատեսակ եւ բամբակ:

Դդում՝ զանազան տեսակ, նշանաւորն է Բալ զաբաղին, նշանաւոր են նաեւ սմբուկ (պատլիջան), բամեայ, տոմաթես, վարունկ, սխտոր, կաղամբ, ճակնդեղ եւ ամէն տեսակ կանաչեղէն:

1 Դուցէ այս առանձնայատկութեանց պատճառաւ ստացած է գաւառս Դեղաւու անունը:

Այս բոլոր բերքերն առանց բացառութեան գտնւում են Կապաղակ գաւառի բոլոր գիւղաքաղաքներում եւ գիւղերում: Այս պատճառաւ աւելորդ կը լինի գրել «տեղական բերքեր» գաւառիս նկատմամբ:

Այս առանձնայատկութեանց պատճառաւ գաւառս մասնաւորապէս պատկանում էր Աղուանից թագաւորներին:

Գաւառիս հիւսիսային կողմի օդերն բարեխառն են ընդհանրապէս, իսկ հարաւային կողմիններն՝ ամռան փոքր-ինչ տաք: Այս մասում՝ երկու գետակների մէջ, կայ մի թրքաբնակ գիւղ Ղապալա անուամբ, որի բնակչաց նախնիքն եղած են քրիստոնեայ, հաւանական է, որ գիւղիս նախկին անուամբ գաւառս կոչուած լինի Կապաղակ, իսկ վերջին անուամբ՝ Ղապալա: Իսկ գաւառիս մէջտեղի մօտ կայ մի թրքաբնակ գիւղ Զարղուն անուն, որի անուամբ դաշտակս (ամբողջ գաւառի տեղն) յորջորջուած է Զարղունի դաշտակ հին հեղինակներից:

Գաւառս զորօրինակ հարուստ է ապնիւ բերքերով եւ հանրահռչակ պտուղներով, նմանապէս հարուստ է գիւղաքաղաքներով, շուկաներով, բերդերով եւ ուխտատեղիներով:

ա. ՍՈԼԹԱՆ-ՆՈՒԽԻ[1] գիւղ. շինուած Զարղունի դաշտակի հիւսիսային եզերքում, հողն՝ արքունի. բնակիչք ընիկ՝ ուտեաց ցեղից, բայց խօսում են թուրքերէն: Գիւղն՝ բաժանուած 2 թաղի՝ արեւելեան եւ արեւմտեան: Արեւելեան թաղումն է շուկան, ուր ամէն երկուշաբթի լինում է օրավաճառ: Արեւմտեան թաղումն է նորաշէն եւ փառաւոր եկեղեցին՝ Ս. Աստուածածին անուն, որ ունի երկու քահանայ: Աւագ քահանայ արժ. Տէր-Աւետիս Տէր-Իսրայէլեանցի տնում կայ մի հին Յայսմաւուրք՝ գրուած բամբակի թղթի վերայ. բայց անյայտացած են սկզբից եւ վերջից շատ թղթեր, որոց հետ եւ յիշատակարանն: Խիստ գեղեցիկ են փոքր գրերն, սակայն գեղեցիկ չեն նկարներն, ծաղիկներն եւ թռչնագրերն:

Ունին միդասեան ուսումնարան տղայոց, ուր ուսանում են 36 տղայք, թոշակատու 30, ձրիավարժ 6, միամեայ ռոճիկ ուսուցչի՝ 350 ռուբ. որից 200-ը վճարում է Բագուի Մարդ. Ընկերութիւնն, իսկ մնացեալը՝ թոշակատուներն:

Ծուխ 152, արբ. 521, իգ. 498, արբ. ծն. 30, իգ. 25, պսակ 15, արբ. ննջ. 13, իգ. 9, երկար ապրողն՝ Կարապետ Մայիլեանց 120 տարեկան, որ իւր կեանքում հիւանդացած չէ. շատ ժիր է եւ դեռ ոտքով է երթեւեկում միւս գիւղերի շուկաներն:

Գիւղիս հին հանգստարանում, որ ծածկուած է ահագին ծառերով, կան շատ հին ամփոփեալներ: Տապանաքարերից ամենամեծ մասն չունին արձանագրութիւն, այլ միայն գլխակալ քարերն ունին հեռաւոր հնութեան ձեւով փորուած խաչեր: Մեծ դժուարութեամբ կարողացանք գտնել հետեւեալ անունները, զի անյայտացած են գետնի մէջ քարերն. «Սուքիաս, Գրիգոր, Իսիքնազ, Շահպուտաղ, Փիրմուրատ» եւն:

Արքայակաղնի ծառերի մի պարտիզում նոյն տեսակ մի ծառի տակ կայ մի տապանաքար, որի վերայ փորագրուած է մի թուր, նետ, աղեղն, ձեռնափայտ եւ մի դերձակի մեծ մկրատ, իսկ գլխակալ խաչարձանի վերայ. «Քրիստոս Աստուած ողորմեա՛ Իռստամին թվ. ՄԷ.»: Այս գերեզմանի տեղը, որ գտնւում է արեւելեան թաղում, իմանում է արժ. Յարութիւն քահանայ Տէր-Զաքարեանցն, որ անձամբ առաջնորդեց մեզ:

Հին եկեղեցու հարաւային կողմում, հանգստարանի մէջ աչքի է ընկնում մի ուշագրաւ մահարձան, որի ներքեւ ամփոփուած է Կուսապատցի բարեհամբաւ Մելիք-Վանու թոռն Ասլան-բէկի մարմինն: Մահարձանն կրում է սոյն արձանագրութիւնը. «Այս է տապան բարեպաշտօն Ասլան բէկի, որդւոյ Ղարաբաղայ Ջրաբերդցի Աթաբէկեանց Յակովբ-բէկի, որ... վախճանեցաւ 'ի 40 ամաց հասակի 1847 դեկ. 30-ին»: Հանգուցեալս վարած է այս կողմերում դատաւորի պաշտօն. թէեւ վախճանուած է ինքն, սակայն դեռ կենդանի է իւր արդարադատութեան հռչակն կենդանի ժողովրդեան յիշողութեան մէջ:

1 Ըստ ասութեան ծերունեաց՝ Նուխի եղած է գիւղիս նախկին անունն. բայց Օսմանցւոց Սուլթան-փաշայի անուամբ աւելանալով Սոլթան բառն, կոչուած է Սոլթան-Նուխի՝ պատերազմաւ գիւղիս տիրելուց յետոյ:

Վանքասար (Քիլիսա դաղի)

Վանքատեղիս գտնուում է գիւղիս հարաւային կողմում. Բագ-դաղի հիւսիսային լեռնաշղթայի վերայ, ուր առաջնորդեց մեզ նոյն 120-ամեայ ծերունին ժամից ուելի ոտքով բարձրանալով: Վանքս շինուած է եղել համակ տաշածոյ եւ չիչ քարով. այժմ մնում են միայն տաճարիս խաչաձեւ որմերից երկու շարք քարեր եւ խորանի կլորակ մասն. միարանից 10 սենեակների եւ շրջապարսպի հիմքերն: Իսկ մնացեալ մասերն քանդուած եւ թափուած են ցիր եւ ցան: Մի քանի բահաւոր, մուրճաւոր եւ թիաւոր մարդիկներով շատ աշխատեցինք գտնել գ ո ն ա գ լ խ ի քարը, որի վերայ գուցէ լինէր արձանագրութիւն, սակայն չ՝գտնուեցաւ: Անյայտ է մեզ վանքիս անունն եւ անցեալն. միայն երեւում է, որ շատ հին է: Կաղանկատուացին յիշում է շատ վանքերի անուններ, բայց թէ որն է այս, դժուարին է որոշել: Վանքումս ջուր չկայ. ջուրը բերած են հիւսիսային ձորից՝ 2 վերստ հեռաւորութիւնից: Բայց այստեղ կան եւ շատ հին, անտաշ, անարձանագիր եւ անգլխակալ շիրմաքարեր:

Վանքիս արեւելեան կողմում, սարիս վերայ եւս կայ հնագարեան հանդստարան, որոց քարերն ամբողջապէս ծածկուած են գետնի հողով: Խիստ դժուարութեամբ հանել տուինք շատ գեղխակալ քարեր, որոց մի քանիսի վերայ միայն կային փոքրիկ խաչեր, եղջերուների, եղնիկների, այծեամների, նետերի եւ աղեղների քանդակներ: Այս երեւոյթն կարծել է տալիս հետախոյզներին, որ ամփոփեալներս եղած են որսորդ:

բ. ՄԻՐԶԱԲԷԿԼՈՒ շէն. հողն՝ արքունի, բնակիչք՝ բնիկ եւ թրքախօս, եկեղեցին՝ Ս. Աստուածածին, որ ունի 350 ռուբ.: Ծուխ 35, ար. 150, իգ. 150, ար. ծն. 10, իգ. 10, պսակ 5, ար. ննջ. 5, իգ. 5, երկար կեանք 70:

գ. ՋՈՌԼՈՒ գիւղ, հողն՝ արքունի, ժողովուրդն՝ բնիկ եւ թրքախօս. եկեղեցին՝ Ս. Աստուածածին, որ ունի 300 ռուբ. (երկու եկեղեցիս հովւում է մի քահանայ): Ծուխ 45, ար. 185, իգ. 160, ար. ծն. 12, իգ. 10, պսակ 5, ար. ննջ. 5, իգ. 4, երկար կեանք 65-70:

դ. ՆԻԺ գիւղաքաղաք, հողն՝ արքունի, բնակիչք՝ բնիկ, ազգաւ՝ ուտի, եւ ուտիախօս, հայադաւան, հաստատահաւատ, ջերմեռանդ, հիւրասէր, ժիր, գործունեայ, աշխոյժ եւ որսորդ: Նիժեցւոց քաջութիւնն հռչակուած է ամբողջ Շաքուայ եւ Շամախու գաւառներում: Գիւղաքաղաքս բաղկացած է 4 թաղերից,որք են.

ա. Վերին թաղ կամ Մալբէլ, եկեղեցին Ս. Աստուածածին, որ ունի 2 քահանայ[1] :

բ. Միջին թաղ կամ Պիծիլու, եկեղեցին Ս. Եղիշէ, որ ունի մի քահանայ: Եկեղեցուս սեղանի տակ ամփոփուած է Եղիշ-Առաքելի Վլաս աշակերտի մարմինն:

գ. Ներքին թաղ կամ Դարա-բաղ, եկեղեցին Ս. Աստուածածին, որ ունի մի քահանայ:

դ. Վերջին թաղ կամ Ղոջաբէկլու, եկեղեցին Ս. Լուսաւորիչ, որ ունի մի քահանայ:

Գիւղաքաղաքս ունի վերին թաղում շուկայ, ուր ամէն չորեքշաբթի լինում է օրավաճառ:

Տղայոց միդասեան ուսումնարանն Ս. Մեսրոպեան, աշակերտք 46, թոշակառու 42, ձրիավարժ 4, վարժապետի տարեկան ռոճիկն՝ 400 ռուբլի:

Ծուխ 800, ար. 2600, իգ. 2408, ար. ծն. 156, իգ. 133, պսակ 100, ար. ննջ. 50, իգ. 40, երկար կեանք 100:

ե. ՓԱՏԱՌ[2] գիւղաքաղաք. բնակչաց ամենամեծ մասն մահմեդական: Հայոց եկեղեցին Ս. Աստուածածին, քահանան գալիս է Եաղուբլու գիւղից. ծուխ 15, ար. 40, իգ. 29, ար. ծն. 2, իգ. 1, պսակ 1, ար. ննջ. 1, իգ. 1, երկար կեանք 70:

Գիւղաքաղաքս ունի շուկայ, ուր ամէն հինգշաբթի լինում է օրավաճառ, ունի նաեւ հայադաւան ուտեաց խիստ ընդարձակ եւ հին հանգստարան:

1 Անկարող եղանք ստուգել եկեղեցեաց ունեցած դրամները:

2 Կիրակոս պատ. (եր. 114) Շաթ խազրի անուամբ շինած քաղաքների շարքում դրած է Փատառս, բայց Շաթաղ անուանելով:

զ. ՎԱՐԴԱՆԻ գիւղ. ամենամեծ մասամբ մահմեդական. հայոց եկեղեցին՝ Ս. Աստուածածին, որ ունի 25 ռուբլի. քահանան գալիս է Զառաւի գիւղից: Բնակիչք՝ թրքախօս, բնիկ տեղացի եւ ազգաւ. ուտի:

Ծուխ 10, ար. 36, իգ. 32, ար. ծն. 2, իգ. 2, պսակ 1, ար. ննջ. 1, իգ. 1, երկար կեանք 65-70:

Լսած էինք, թէ գիւղիս մահմեդականացեալ հայոց մէջ կան մի քանի գրչագիր հին մատեաններ, որքան ջանացինք ամբողջ երկու օր, անհնարին եղաւ ձեռք բերել եւ ականել:

Այստեղ եւս կան ընդարձակ եւ հին հանգստարաններ ծածկուած անմերձենալի մացառուտներով:

է. ՎԱՐԴԱՇԷՆ գիւղաքաղաք. հիմնուած է դաշտակի հիւսիսային կողմում, Կովկաս սարի հարաւահայեաց մի լայն ձորի լանջի վերայ: Հողն՝ արքունի, հայադաւան ուտիներն՝ բնիկ, որ գիտեն և՛ հայերէն և՛ ուտիերէն: Գիւղաքաղաքս բաղկացած է 640 տնից, որից հայադաւան՝ 300, հրէայ՝ 200, յունադաւան՝ 150 եւ սուննու 30 տուն:

Հայոց եկեղեցին՝ Ս. Աստուածածին, հոյակապ. փառաւոր եւ ընդարձակ, որ ունի 300 ռուբլի. 2 քահանայ եւ այս արձանագրութիւնը. «1830 ամի սկսեալ սուրբ Աստուածածնայ եկեղեցիս, մինչեւ աւարտեալ 1838 ամի. երախտիք ունէր Եթար Եաղուբեանցին, որ կին կոչի Առաքել Մուրատեանցին, ո՛վ հանդիպողք տո՛ւք ողորմի իւր որդի Մկրտչին, գրել տուաւ»:

Եկեղեցուս բակում ամփոփուած է բարերարի մարմինն, որի մահարձանի վերայ գրուած է. «Այս է տապան Վարդաշէնցի պարոն Առաքել Մուրատեանցին, յետ մահուան աշխատեաց ժառանգն այսմ տապանին, որ էր Յովհաննէս-բէկ որդի սորին, յիշեցէք, ով ընթերցողք, այս լուսահոգին բարեսէր, բարեջան, ազգասէր եւ բարեհոգին 1848 ամին»:

Եկեղեցին ունի Ս. Սահակեան աղջոյց միդասեան ուսումնարան, ուր ուսանում են 40 թոշակառու եւ 8 ձրիավարժ աշակերտներ: Բագուի Մարդ. Ընկերութիւնն ամէն տարի շնորհում է 100 ռուբ., որով ամբողջանում է վարժապետի տարեկանք 400 ռ. ռոճիկն: Ծխական ուսումնարանս իւր դրան ճակատին կրում է այս արձանագրութիւնը. «Կրթարանս կառուցեալ է ի յիշատակ հայրենեցաց ի... Յարութիւն բեկէ Սիլիկեանց եւ վերանորոգեալ յորդւոց նորա 1876»:

Եկեղեցումս կան հետեւեալ ձեռագիր մատեաններն.

ա) Գրչագիր աւետարան՝ գրուած բամբակեայ թղթի վերայ. «Աւարտեցաւ ս. աւետարանս տիեզերալոյս վարդապետին Քրիստոսի Աստուծոյ մերոյ... ի թվականութեանս Աբեթական տումարի ՉԿԴ. (1315), յամս առաքելաշնորհ արհի եպիսկոպոսի տեառն Յովհաննիսի մականւամբ Աւրբէլ (Օրբէլ) կոչեցելոյ՝ ձեռամբ նուաստ եւ ոսկեգիր գրչապետի մեծ բաբունապետի Խաչատուր Կեչառեցի գծագրեցաւ ի քաղաքիս Յեղեքիս ի տէրութեան արեաց վեհագունի եւ իշխանաց իշխեցողի մեծ կոմսի եւ կողմնակալ ի Բուրթելին եւ նորին հազարապետի Բուղտային, ի խնդրոյ սրբասնունդ քահանայի Սահակայ...»:

բ) «Արդ գրեցաւ ս. աւետարանս ձեռամբ անարժան Ստեփաննոսի, անիմաստ եւ տխմար գրչի... այլ ըստ կարի մերում աշխատութեամբ գրեցի զսուրբ աւետարանս... յընտիր եւ ի ստոյգ աւրինակէ ի թուականութեանս Հայոց ՊԿԴ. ի հայրապետութեան տեառն Դաւթի եւ յիշխանութեան գաւառիս մերոյ Բէլէք-բէկի... գրեցաւ ս. Աստուածաբնակ գիւղս, ուր հանգուցեալ է Աստուած ընդունակ նշխար սրբոյն Գրիգոր վարդապետի, որ կոչի Նարեկացի, ընդ հովանեաւ ս. տաճարացս Լուսոյ մօր Աստուածածնի եւ Միածնի իւրոյ»:

գ) «Տէր Առաքել կաթուղիկոս Աղուանից... ետ գրել զաւետարանս ի հալալ ընչից իւրոց յիշատակ հոգւոյ իւր եւ ծնողաց իւր... Արդ, գրեցաւ աւետարանս հպատակ հոգւոյ Ստեփաննոս եպիսկոպոսի ի յաթոռն Ճալէթոյ ի յաշխարհն Աղուանից... ի թվականիս Հայոց ՋԽԸ: Եւ բերաք ի գաւառս Արարատեան ի վանս Հառընջոյ Տիրամօր Ս. Աստուածածնիս: Եւ աստ ծաղկեցաւ ոսկով եւ բազմերամ գուներով ի բազում միջոցաւ զի ժամանակս երերաներ եւ ոչ գոյր խաղաղութիւն. ՋԾԳ. (1505) թվին վճարեցաւ նկար սորին»:

դ) Կայ նաեւ մի գրչագիր Յիսուս Որդի, որ գրուած է ոմն Մանուէլի ձեռնով Կոդոնիա քաղաքում Հայոց ՌՂ. թուին. մի մաշտոց, մի շարական եւ մի «Մեկնութիւն Ղուկասու յԻգնատիոս վարդապետէ»:

Գիւղաքաղաքումս կայ 4 շողեշարժ գործարան, որք բոժոժներից բաղում են մեռաքսեայ թել, մի քանի բրտական գործարաններ, որք պատրաստում են շինու թեանց տանիքները ծածկելու համար եւրոպական նոր ձեւով խեցեղէն կղմինդրներ եւ զանազան անօթներ: Կայ նաեւ օրավաճառ շուկայ, ուր համախմբւում են ամենայն երկուշաբթի վաճառող եւ գնող ժողովուրդներ:

Ծուխ 300, ար. 780, իգ. 683, ար. ծն. 45, իգ. 33 պսակ 20, ար. ննջ. 20, իգ. 16, երկար կեանք 95-100:

Գիւղաքաղաքիս արեւելեան կողմում, գետակի ձախ ափի բարձրութեան վերայ, գտնւում է հին եւ փոքր եկեղեցի, որ շինուած է տաշած չիչ քարով, որի վերնակամարն փլած է արդէն: Եկեղեցուս շրջապատն լի է հին գերեզմաններով:

Ուխտատեղի. գիւղաքաղաքիս ստորոտում, գետակի աջ ափի մօտ մի գեղեցիկ բլրակի վերայ, կայ մի ուխտատեղի Եղիշ-Առաքել անուն: Այս մի փոքր մատուռ է, շինուած տաշածոյ չիչ քարով: Խորանի երկու կողմերում ունի խորհրդանոցներ. իսկ ամբողջ վերնամասն կանգնած է երկու կամարների վերայ, որոց ոտքերն հաստատուած են հիւսիսային եւ հարաւային որմերի մէջ: Մատրանս դրան ճակատակալ քարի վերայ փորագրուած է հետեւեալ արձանագրութիւնն, որը հաղիւ կարողացանք կարդալ, զի եղծուելու վիճակի հասած է: «Նորոգողն սրբոյն Եղիշէի Առաքելոյս Ի ժամանակի... եղեւ Վարդաշէնցի Առաքել Մուրատեանց 1811»:

Ամբողջ բլուրն զարդարուած է վաղեմի, անպտուղ, հաստ ծառերով: Մատրանս արեւելեան աջ եւ ձախ կողմերում շինուած են նոյն տեսակ քարերով երկու ամենափոքր մատուռներ, որոց համար աւանդութեամբ ասում են, թէ Եղիշ-Առաքելի կենդանի մնացեալ երկու աշակերտների գերեզմաններն են, որք այստեղ գալով նահատակուած եւ թաղուած են այստեղ: Բայց պարսպած են մատրանս արեւելեան եւ հիւսիսային կողմերն, եւ մի գեղեցիկ սեննակ շինուած է հիւսիսային կողմումս՝ պարսպի ներսում: Ահա սեննակի արձանագրութիւնն. «Յիշատակ է սեռեակս Վարդաշէնցի Մաթոսի եւ իւր կողակից Աննայի Վարթանեանց 1890 ամի»:

Ուխտատեղիս յաճախում է մեծ բազմութիւն ուխտաւորաց:

Կայ եւ մի այլ ուխտատեղի, բայց անանուն, որ գտնւում է գետակի միւս ափի բարձր լանջի վերայ: Անյայտ է սորա անցեալն:

ը. ՃԱԼԷԹ աւան. շինուած Կովկաս սարի հարաւահայեաց լանջի վերայ, 3 ձորակներով բաժանուած է 4 թաղ., նշանաւոր է օդն, կլիման եւ ջուրն, եւ արքունի՝ հողն, ժողովրդեան մի մասն բնիկ է, մի մասն՝ փոխարդուած Պաշնճաղից, մի մասն՝ գաղթած Խաչէն գաւառից եւ մի փոքր մասն՝ Նիժից, որք այժմ հայախօս են առհասարակ: Ունին երկու եկեղեցիներ Ս. Աստուածածին անուն. արեւմտեան թաղինն՝ փոքր, բայց հոյակապ եւ խաչաձեւ: Երկուքն միասին ունին միայն 30 բուբ.[1] եւ մի քահանայ: Այստեղ եւս կան բրուտների գործարաններ:

Ծուխ 200, ար. 800, իգ. 525, ար. ծն. 37, իգ. 23, պսակ 18, ար. ննջ. 13, իգ. 10, երկար կեանք 120:

Ճալէթի վանք

Աւանիցս վերեւ, մի տափարակ տեղում, շինուած են հին եւ նոր վանքերն Ս. Աստուածածնի անուամբ: Հին տաճարն, որ փոքր է, շինուած է չորս պատերի վերայ, առանց սեան, կոփածոյ չիչ քարով: Այս շինութիւնն շատ հին է, ինչպէս երեւում է ճարտարապետութեան ձեւից եւ ներքին ու արտաքին տեսքից: Միայն թէ երբեմն-երբեմն նորոգուած են արտաքին որմերի ծեփն եւ տանիքն: Բարեբախտաբար պահուած է վերջին նորոգութեան արձանաքարն, միայն թէ ներհակ գրուած է արտաքուստ տաճարի հարաւային որմի վերայ՝ սալկախից ցած, որ կարդացւում է մեծ դժուարութեամբ:

«Արդ, ես՝ տէր Առաքեալ Թղկա, կանգնեցի սբ. խաչս եւ նորոգեցի եկեղեցւոյս գլուխն... ՋԻԴ. թվոյ տէր Թովմասայ կաթուղիկոսին Աղուանից, որ ուլոքն նստի պատրիարք շնորհօք զտան»:

1 Գումարս յայտարար նշան է ժողովրդեան սառնասրտութեանն դէպի եկեղեցին:

Իսկ վանուս բուն արձանագիրն է. «Յանուն Աստուծոյ ես Կարապետ կաթուղիկոս շինեցի զեկեղեցիս Ի թվին ՊԿ.-ին յիշատակ հոգւոյ իմոյ, յաղօթս յիշեցէք»:

Տաճարիս դրան առաջ ամփոփուած են երեք կաթուղիկոսների մարմիններն: Անկարելի եղաւ մեզ կարդալ երեք տապանաքարերի արձանագրութիւնները, որք կից են միմեանց, վասն զի լինելով դրան մուտքի առաջ՝ ել եւ մուտ անող ոտքերից եղծուած են տառերն: Հարկ համարեցինք ընդօրինակել բազմաշխատ Շահխաթունեանցի Բ. հատ. 370-380 երեսներից[1] հետեւեալը եւ զետեղել այստեղ. որով փոքր-ինչ պարզւում է եւ Տէր-Առաքեալի արձանագրութեան մթութիւնն:

«Ի թվ. ՋԻԴ. (1475) հանգիստ Թովմայ կաթուղիկոսին: Ի թվ. ՋԿ. (1551) ես՝ տէր Առաքեալ կաթուղիկոս, գնեցի վերստին պարոն Հասանբէկէն եկեղեցւոյս դրան Ճալէթ գիւղս: ԳՌ. թանկայ խարճ արի, եւ տվի վասն մեր հոգւոյս սուրբ Աստուածածնին ս.,[2] եւ ով հակառակի այս գիւղ Ճալէթիս, կամ խլէ...:

(Կից սմին ի նոյն տապանավէմն)

«Թիւ Կարապետ կաթուղիկոսին ՊԿ. (1411) ... Այս է տապան երիցս վեհից[3], որք օծեցեալք ի տունն Աղուանից, աստ թափառեցեալք յայնմ միջոցից, կան ամփոփեալք ի ներ տապանից, յար սպասեն հաստչին բնաւից, ակնկալեն յուսով պտղալից»:

Վանուս առաջին հիմնարկութիւնը ոմանք տալիս են Եղիշէ Առաքելին, բայց չկայ վաւերական ապացոյց:

Նոր վանք. շինուած է այս հնոյն հարաւային կողմում ամբողջապէս չիչ քարով, ընդարձակ, կամարակապ, չորս սեանց վերայ: Տակաւին չունի արձանագրութիւն. սակայն վկայում են ակնատեսներն, թէ հիմնարկուած է Սարգիս վարդապետի վանահայրութեան օրով եւ աւարտուած Գէորգ վարդապետ Արամեանի օրով, առատաձեռն օժանդակութեամբ բարեհամբաւ Առաքել Մուրատեանցի, որ արդէն ծանօթ է ընթերցողաց:

Տաճարումս կան բաւական ձեռագրեր, բայց ոչնչացա՜ծ են եւ ոչնչանո՜ւմ են անխնամ մնալուց եւ խոնաւութիւնից...: Շատերի սկզբից եւ շատերի վերջից փտած կամ թափուած են թերթեր եւ մեծ մասամբ բորբոսած:

ա) Մի մեծադիր աւետարան, որ գրուած է Թովմաս անուն ոմն վարդապետից «յանապատս Խորդեանց... Ի թուականութեան Հայոց ՉԿԴ... Ի հայրապետութեան Յովհաննէս Որպէլի»:

բ) Մի փոքրադիր աւետարան, մագաղաթի վերայ, որը գրած է տէր Հայրապետ ոմն գեղեցիկ տառերով ՌՀԳ. թուին (գրուած տեղն՝ անյայտ):

գ) Այլ աւետարան, որը գրած է Ղազար քահանայ Գանձակեցի Համտինայ գիւղի Պանդալիոն բժիշկ վանքում, Աղուանից Պետրոս կաթուղիկոսի օրով, ՌՃԻ.-ին:

դ) Եւս այլ աւետարան, որը գրած է Ջրաբերդցի Աթանաս վարդապետն Երից մանկանց վանքումն ՌԺԴ.-ին:

ե) Կոստղած անուն մի աւետարան, որ գրուած է Ղուկաս եպիսկոպոսից վանքումս ՌԾԱ. թուին: Գրչագրումս կան Ադամի, Եւայի, Հայր-Աբրահամի, Քրիստոսի աւետման, ծննդեան, հովիւների, քառասնօրեայ գալստեան, մկրտութեան, պայծառակերպութեան, Կանայի հարսանեաց, Քրիստոսի ոտով ծովի վերայ գնալուն, անդամալուծի եւ դիւահարի բժշկութեանց, սակաւ հացով եւ ձկնով հրաշագործութեան, Ղազարոսի յարութեան, ծաղկազարդի, ընթրեաց, ոտնալուայի, ըմբռնման, տանջանաց, խաչելութեան, համբարձման, հոգեգալստեան, դատաստանի եւ 4 աւետարանչաց նկարներն, բայց անճաշակ, անարուեստ եւ գունատ:

Վանքերիս բակում ամփոփուած են Պաշնճաղցի եպիսկոպոսների, Էջմիածնի Դանիէլ եպիսկոպոսի, Արցախեցի Մակար վարդապետի, Խալաթ վարժապետի եւ այլ միաբանից գերեզմաններ:

1 Տես եւ նոյն հատորի 343-344 երեսները:

2 Գուցէ Ս. Աստուածածնիս: Կամ բոլորովին աւելորդ է Ս տառս:

3 Կարապետ, Թովմայ եւ Առաքեալ կաթուղիկոսաց:

Հին վանուց հիւսիսային կողմում շինուած է վանահարց բնակարան, որ բաղկացած է 3 սենեակից:

Այժմ վանքիցս յափշտակուած են անշարժ կալուածներն եւ Ճալէթի գիւղն: Միայն մնացած է 18 օրավարի չափ հող (10 պիտանի եւ 8-ն անպէտք հող) եւ մի թթենեաց պարտէզ: Թէ՛ վանուցս ուխտաւորաց եւ թէ՛ պարտիզի արդիւնքը կապալաւ տուած են ոմն աշխարհական անձի՝ տարեկան 100 ռուբլի աճուրդով, որ գործ է դրուում Շաքի քաղաքի երկսեռ ուսումնարանաց համար:

Ահա այսպիսի ցաւալի դրութեան մէջ է Ճալէթի վանքն, որ 1406-1510 թուականն եղած է կաթուղիկոսարանն Աղուանից...:

Թ. ՆՈՐ-ՇԷՆ, Ճալէթի հարաւային կողմում դաշտակի վերայ. եկեղեցին՝ Ս. Աստուածածին: Տուխ 24, ար. 64, իգ. 68, ար. ծն. 5, իգ. 6, պսակ 4, ար. ննջ. 1, իգ. 1, երկար կեանք 60:

Ժ. ՕԹՄԱՆԼՈՒ շէն. եկեղեցին՝ Ս. Աստուածածին:

Տուխ 25, ար. 56, իգ. 56, ար. ծն. 4, իգ. 4, պսակ 4, ար. ննջ. 2, իգ. 2, երկար կեանք 60:

ժա. ՋՈՎԼԱՆ շէն. եկեղեցին Ս. Աստուածածին:

Տուխ 8, ար. 26, իգ. 26, ար. ծն. 2, իգ. 2, պսակ 1, ար. ննջ. 1, իգ. 1, երկար կեանք 60:

Հարկ է յայտնել, որ 3 շէններս մօտ են միմեանց, եկեղեցիքն շինուած են աննկի աղիւսով, քահանան գալիս է Ճալէթից, իսկ բարբառներն Արցախի են: Սոցա արդի բնակչաց համար վկայում են, թէ տեղափոխուած են Պաշնճաղից:

ժբ. ՕՐԱԲԱՆ շէն. շինուած Կովկաս սարի ստորոտում գետակի ձախ ափին, որ կոչւում է Քունգիւտի, Օրաբանի կամ Պտէզի գետ: Պատուական է օդն, ջուրն եւ կլիման, բնակիչք գաղթած են Խաչենից եւ Ջրաբերդից (մի ընտանիք Ագուլիսից) եւ պահպանած իւրեանց պապենական բարբառը: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին եւ հին: Բնակիչք վաւերական թղթերով բէկերից գնած են գիւղի, այգիների, պարտէզների եւ կալերի հողերը, բայց արքունի են վարելահողերն:

Տուխ 18, ար. 62, իգ. 61, ար. ծն. 7, իգ. 7, պսակ 2, ար. ննջ. 2, իգ. 2, երկար կեանք 100 (մի անձն Միքայէլ Բաղդասարեանց), քահանան գալիս է Ճալէթից:

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

ԻԱ. բերդն Աղուանից, որ այժմ կոչւում է Կեաւուր ղալա, (քրիստոնէի բերդ) գտնւում է Ջոռլու գիւղից ցած, երկու գետակների մէջ: Բերդիս արեւելեան կողմով սրընթաց հոսում է Ջոռլուի գետակն, եւ արեւմտեան կողմից միւս գետակն, որք, միանալով բերդիս ստորոտում, ապա խառնւում են Դուրկանին: Գետակների կողմերն կազմում են խճահերձ բարձրութիւններ, իսկ բերդիս հարաւային կողմն, կիրճերն, բուրքերն եւ դռներն, որք բացուած են եղել արեւելեան եւ արեւմտեան կողմերից, պարսպուած են կրաշաղախ ցեխով, գետաքարով եւ թրծեալ աղիւսով: Դեռ կանգուն են հարաւային բարձր եւ ամուր, աղիւսաշէն բուրգերն եւ տեղ-տեղ կիրճերի պարիսպներն, սակայն ամբողջապէս քանդուած են դռներն եւ ուրեք-ուրեք բուրգերի աղիւսներն: Հարթ է բերդիս մակերեւոյթն, որի երկարութիւնն է մի վերստ, իսկ լայնութիւնն՝ պակաս կէս վերստից: Ակներեւ երեւում է, որ արեւելեան գետակն անձրեւաց հեղեղների օժանդակութեամբ քանդած եւ տարած է բերդի լայնութիւնից բաւականին տեղ: Երեք մասի բաժանուած է բերդս լայնագոյն եւ խորագոյն խրամներով (ստորին քաղաք, միջին բերդ եւ վերջին բերդ: Երեւի թէ 'ի պահանջել պատերազմական հարկին՝ խրամներիս մէջ թողած են գետակները եւ բերդերը դարձրած ծովակողզիներ: Ստորին մասում տակաւին նշմարւում են եկեղեցու եւ խիտ առ խիտ բնակարանների շար ի շար հիմունքներն եւ խուռն խտութեամբ թափուած աղիւսների բեկորներն: Այս պատճառաւ ցարդ անհերկելի մնացած է այս մասն: Միայն հերկուած են երկրորդ եւ երրորդ բերդաբաժանումները:

Պատմութեան անծանօթ չէ բերդս կամ քաղաքս: «Անտի (ի Զողայ) եկեալ յՈւտի գաւառ ի Սրհառն քաղաք երիւք անձամբք աշակերտելովք, որոց անօրէնք ոմանք զկնի եկեալ՝ մի յաշակերտացն ընկալաւ ի նոցանէ զնահատակութեան վախճան» (Մով. Կաղ. եր. 8): Այս է Սրհառն քաղաքն, որ յետոյ կոչուած է Կապաղակ, որի անուամբ եւ գաւառս յորջորջուած է Ղապալա[1]: Աւանդութեամբ ասում են, թէ քաղաքումս[2] նահատակուած է Եղիշէ Առաքեալի աշակերտներից մին՝ Վլասն, որ ամփոփուած է Նիժում՝ Եղիշ-Առաքեալ անուն եկեղեցում, որպէս յայտնած ենք կանխաւ:

Վերին բերդում, մացառուտների մէջ, կայ մի արաբի հանգիստ, որ ունի արաբերէն գրուած գլխակալ քար, որը ուխտատեղի արած են մերձաբնակ մահմեդականները: Իսկ արեւելեան գետի արեւելեան կողմի բարձրութեան վերայ կայ ընդարձակ արաբ հանգստարան՝ զարդարուած շիրմաքարերով եւ արձանագրութիւններով:

ԻԲ. բերդն Աղուանից գտնւում է Կովկասն գետակի աջ կողմում, Ղալաջուխ կոչուած լեկզիարնակ գիւղից վերեւ: Կովկաս սարից դէպի հարաւ թեքուած մի լեռնաբազկի վերայ շինուած է բերդս կրաշաղախ ցեխով եւ քարով, որ ունի միջակ մեծութիւն, ամուր դիրք, հաստ եւ ամուր պարիսպ, բայց այժմ՝ կիսաւեր եւ անմարդաբնակ: Աւանդութեամբ ասում են, թէ սարսափելի պատերազմ տեղի ունեցած է բերդիս եւ արաբացւոց մէջ, վերջիններիցս ջարդուած են բազմաթիւ զօրքեր եւ մի զօրավար, որոց դիակներն թաղուած են Հազրա կոչուած տեղում: Այս արաբական հանգստարանն, որ ունի ընդարձակ ծաւալ, գմբէթաւոր մահարձաններ եւ արաբական արձանագրութիւններով զարդարուած շիրմաքարեր, գտնւում է անտառի մէջ, Վանդամի եւ Կովկասն գետակի մէջ, Կովկաս սարի ստորոտում:

ԻԳ. բերդն Աղուանից գտնւում է Բում կոչուած աւանում, որ Նիժից վերեւ է, շինուած նոյն մեծ սարի հարաւային ստորոտում: Բերդիս արեւելեան եւ արեւմտեան կողմերով սրընթաց խոխոջում են երկու գետակներ, որք են բուն Դուրկան գետակի ջրերն եւ որք հոսում էին Սրհառն քաղաքի աջ ու ձախ կողմերով: Արեւմտեան գետակը քանդած է բերդիս երկարութիւնից բաւական տեղ. կիսակործան մնացած է ցարդ արեւելեան եւ հարաւային կողմերի պարիսպն, որի բարձրութիւնն է կէսից երկու սաժէն եւ հաստութիւնն՝ սաժէնից աւելի: Պարիսպներն շինուած են կրաշաղախ ցեխով եւ գետաքարով, որի այժմեան մնացեալ երկարութիւնն է կէս վերստ, իսկ լայնութիւնն՝ 110 քայլ: Մով. Կաղանկատուացին Հոմէնք է անուանում Բում աւանս: Անյայտ է մեզ բերդիս անցեալն:

Արեւելեան գետակի արեւելեան ափում, բերդի հանդէպ կայ ընդարձակ եւ շատ հին հանգստարան, որի մէջ միայն գտանք մի երկար եւ քառակուսի գետաքար, որի վերայ փորագրուած է՝

որը կարդացինք մենք թուին ՄԱ:

Գետակիս նոյն ափում, Մուրթուզա-բէկի ջրաղացի հիւսիսային կողմում կայ մի չիչ տաշած քարով շինուած մատուռ, որը, կարծում ենք, թէ յատուկ շինուած դամբարան է: Մեր կարծիքն հիմնուած է սոյն պատճառների վերայ. նախ, հանգստարանի արեւմտեան ծայրումն է եւ երկրորդ՝ գետնի տակին է, այնպէս որ մատրան գլուխն հաւասար է գետնի մակերեւոյթին: Պատմեցին մահմեդականներն. «Երբ լինում են երկարատեւ երաշտներ, գետի ջրից թողնում ենք եկեղեցուս (քիլիսա) մէջ, իսկոյն գալիս է առատ անձրեւ. ապա կտրում ենք ջուրը»:

Աւանիս եկեղեցին եղած է մահմեդականաց մեծ աղօթատեղու մօտ:

ԵՂԻՇ-ԱՌԱՔԵԼ

Այս անուամբ է կոչւում հայ եւ թուրք հասարակութիւնից այն սրբավայրն, որ գտնւում է Կովկաս սարից Բումի վերայ կախուած մի լեռնաբազկի վերայ: Այստեղ եղած է մահապարտների այն հորն, որի մէջ ձգած են չարագործներն Եղիշէ-Առաքեալի ս. մարմինը նահատակելուց յետոյ: Աղուանից Վաչական-բարեպաշտ թագաւորն հանել է տալիս ս. Առաքելիս մասունքները, փոխադրել տալիս Արցախ, շինել տալիս Թարթառ գետակի ձորում Եղիշ-Առաքել անուն

1 Այժմ Ղապալա է կոչւում թրքաբնակ գիւղն, որ գտնւում է բերդիս արեւմտեան կողմում, գետակի աջ ափի մօտ:

2 Ջալ. Ս. եպս. սխալմամբ Հնարակերտ է անուանում քաղաքս:

մի վանք[1], որի մէջ հանգստացնել տալիս նոյն մասունքները: Բայց շինել է տալիս նաեւ խոր հորիս վերայ մի սիւն[2]: Այժմ անյայտացած է սիւնն եւ լցուած հորն, բայի մի կանգուն խորութիւնից: Այսու ամենայնիւ յաճախում է հայերից եւ մահմեդականներից ուխտաւորաց մեծ բազմութիւն:

ԻԴ. բերդն Աղուանից դտնւում է Բումից վերեւ, գետակի ձախ կողմի բարձրութեան վերայ, նոյնպէս քարուկիր եւ ամենամեծ մասամբ կանգուն: Դիրքն՝ ամուր եւ դժուարամատչելի, օդն եւ տեսարանն՝ հիանալի. բայց այժմ որջ գազանաց եւ երկիւղալի:

ԻԵ. բերդն Աղուանից դտնւում է միեւնոյն գետաձորում, Տաք ջրից վերեւ, Շահ-դաղ ձիւնապատ սարի հարաւային լանջի վերայ: Ամբողջապէս քարուկիր են թէ՛ շրջապարիսպն, թէ՛ շինութիւններն եւ թէ՛ եկեղեցին: Ամուր է պարսպի շինութիւնն, անմատչելի՝ դիրքն, հիանալի՝ տեսարանն, եւ վսեմ՝ երեւոյթն: Թէպէտ կիսաւեր դրութեան մէջ է ամենայն ինչ, այսու ամենայնիւ ներկայացնում է Աղուանից երկրի փառաց պատկերը եւ անցեալի պանծալի յիշատակը, բայց ներկայի տխուր տեսքը: Անյայտ է մեզ եւ սորա անցեալն:

ԻԶ. բերդն Աղուանից կոչւում է Փիլիպլու, որ գտնւում է Արջկան գետակի եւ Էրմանիդ գիւղի մէջ ընկած սարի վերայ, մի ձուաձեւ բարձրացած լեռան դագաթին: Իջնում էր մեր վերայ անձրեւի տարափն, խիստ զառիվեր, ոլոր-մոլոր եւ նեղ էր կածանն, մեր հագուստը եւ ձեռները շարունակ ջանկռտում էին բազմափուշ մացառներն, ամենայն զօրութեամբ աշխատում էինք բարձրանալ ոտքով, բայց յաճախ յետ էինք մղւում անընդհատ սահելով. թողում ասել դազանների երկիւղը, քանզի այժմ վագր, արջ եւ դայլ դազանների բնակարան եղած է սարս եւ նոյն իսկ բերդակս: Մի քանի վարդաշէնցի քաջ եւ զինեալ տղամարդիկ միշտ գնում էին իմ առաջից, որք երբեմն-երբեմն աղաղակում էին բարձր ձայնով, որպէսզի փախչէին դազանները: Երբ մոտեցանք դղեկին, տեսանք դազանների նոր հետքերը՝ ոտնատեղերը. տեսանք նաեւ, որ արջերն ջարդ ու փշուր արած էին ճրռ տանձի, խնձորի, հունի եւն. ծառոց պտղալի բարուենակները:

Դղեկի դրան մօտ զգուշութեամբ կանգնեցինք մի կողմում, նախ քանիցս բարձր գոչեցին քաջերն, որպէս զի եթէ գազաններ լինէին դղեկում, ելնէին եւ փախչէին եւ ապա մտնէինք մենք զննելու, վասն զի դղեակս միայն ունի մի դուռն արեւելահարաւ կողմից: Վերջապէս այսպիսի մեծ նեղութեամբ մտանք դղեակն:

Դղեակս թէեւ մեծ չէ, բայց խիստ ամուր է եւ թշնամեաց անմատչելի: Ունի քարուկիր պարիսպ եւ 9 հաստատուն բուրգեր, որք ամբողջապէս մնում են կանգուն: Ներսից չափելով ունի մօտ 90 քայլ երկարութիւն եւ 15-60 քայլ լայնութիւն: Պարսպի հաստութիւնն է մօտ մի սաժէն եւ բարձրութիւնն՝ 3-8 սաժէն: Մաղաչափ անգամ չունի ճաքած կամ վնասուած տեղ, այնքան ամուր շինուած է, ասես թէ թափծու լինի: Արեւելեան կողմում ներքուստ շինուած է մի ջրամբար, որ ունի մի սաժէն լայնութիւն, 3 սաժէն երկարութիւն եւ 2 սաժէն խորութիւն: Երեւի թէ նախատեսութեամբ շինուած ջրամբարս ծառայած է ի պաշար պատերազմի: Խնցեղէն խողովակներով ջուր բերուած է 2 վերստ հեռաւորութիւնից, զի ջուր չկայ դղեկումս:

Արեւմտեան կողմում ներքուստ շինուած է մի նեղ եւ ոլորուն նկուղ, կարծում ենք, որ բանտ եղած է: Թէեւ բերդակս լի է մեծ-մեծ ծառերով, բայց որոշակի երեւում են բնակարանների հիմքերը:

ԻԷ. բերդն Աղուանից դտնւում է Փիլիպլու լեկզիարնակ գիւղից վերեւ, 2 վերստ հեռի է դղեկիցս եւ շինուած է միեւնոյն լեռնաբազկի վերայ: Բերդիս արտաքին քարերը քանդած եւ գործ դրած են իւրեանց տների վերայ փիլիպլուեցիք, դեռ կանգուն մնում են պարիսպների ներքին մասերն: Գիւղացիք հերկում են բերդի մէջը, այսու ամենայնիւ բոլորովին անհետացած չեն քարուկիր շինութեանց հետքերը:

ԻԸ. բերդն Աղուանից դտնւում է նոյնչափ հեռի, մեծ սարի հարաւահայեաց լանջի վերայ: Տակաւին կանգուն են մեծ մասամբ քարուկիր շինուած պարսպի պատերն, եկեղեցու եւ բնակարանների աւերակներն եւ արքունի պալատի մնացորդներն: Հարկ է ասել, որ երկու բերդերս չունին ղղեկի ամուր դիրքը, բայց ունին ամենապատուական ջուր, օդ, կլիմա: Ոչինչ չենք գրում տեսարանի մասին, քանզի միգամած եւ անձրեւ լինելու պատճառաւ չկարողացանք տեսնել եւ ոչինչ:

Բերդերիս ցած, Արջկան գետակի աջ հովտում կայ մի աւերակ քաղաքատեղի, չափաւոր մեծութեամբ: Աւերակիս նշանաւոր մասն է այժմ ստորերկրեայ, քարուկիր, կամարակապ հնութիւնն: Թէեւ փլած են վերնայարկերի շինութիւններն, բայց գլխովին անքակ են այժմ գետնամասի հիմնարկութիւններն, որք ծածկուած են վերնամասի փլատակներով: Սակայն հարկ է խոստովանել, որ օդն տարաժամեալ էր եւ անձրեւն, ցեխն եւ թացոտուած դրութիւնն չներեցին մեզ ըստ օրինի ականել. վասն որոյ ակամայ բաւականանում ենք այսչափով: Բայց յայտնում ենք, որ երեք բերդերս եւ քաղաքս պատկանում են Աղուանից Փիլիպպոս թագաւորի ժամանակի շինութեան: Այս մասին վկայում են ցարդ մնացած աւանդութիւնն, Փիլիպլու անունն եւ պատմութիւնն. «Յայսմ ամի (Ն.Ժ.՝961-962)... ժողովեցան ամենայն իշխանք աշխարհաց տանն Հայոց առ սուրբ հայրապետն Անանիա, վասն զի տացեն զօծումն թագաւորութեանս Աշոտ (Ողորմած արքային)... Հարկաւորեալ կոչեցին զամենագովելին զտէր Յովհաննէս կաթուղիկոսն Աղուանից աշխարհին եւ քառասուն եպիսկոպոսք ընդ նմա, եւ մեծաշուք իշխանութեամբ կոչեցին զՓիլիպպոս թագաւորն Աղուանից. զայր աստուածային եւ զսուրբ» (Մատ. Ուռ., եր. 3-5 եւ 279):

ԻԹ. ամրոցն Աղուանից, որ կոչւում է Կալ-տակի բերդ, գտնւում է Օրաբանից 2 ժամի ճանապարհ վերեւ, Կովկաս մեծ սարի հարաւահայեաց լանջի վերայ:

Ամրոցիս հիւսիսային կողմն բարձրացած է վիմահերձ ապառաժ. նոյնանման բարձր ապառաժներ են արեւմտեան եւ արեւելեան կողմերն, որոց անդնդախոր ձորերով վիժում են Օրաբան գետակի 2 առատ վտակներն եւ միանում ամրոցիս ստորոտներում, ոչինչ պակաս բարձր քերձ է եւ բերդիս հարաւային կողմն: Իսկ կիրճերն եւ ցած տեղերն պարսպուած են որձաքարով եւ կլաշաղախ ցեխով: Ունի 2 դուռն վտակների կողմերից եւ 2 բուրգ: Քանդուած է արեւմտեան դրան կամարն եւ կիսաւեր՝ արեւելեան դրանն: Մամռապատ են պարիսպներն եւ դռների աջ ու ձախ կողմերն: Ամրոցիս մէջ կան շինութեան հետքեր, բայց որոշելն խիստ դժուարին է, վասն զի խիտ առ խիտ կանգնած են ծերունի եւ զառամեալ հաճարկի եւ կաղնի ծառեր եւ անմատչելի մացառուտներ[1], որոց մէջ վխտում են ամեհի վագրեր, արջեր, դայլեր եւ կինճեր: Առանց զէնքերով զինեալ մարդոց անկարելի է հետազօտել ամրոցս: Ամրոցումս կայ ջուր, բայց խեցեղէն խողովակներով բերուած է վերեւից: Բռնաշունչ հողմերից արմատախիլ եղած հաճարկի հաստաբուն ծառերի արմատներն երեւան հանած են տեղ-տեղ ջրախողովակների հետքերը: Անյայտ է բերդիս անցեալն եւ պատմութիւնն:

ՇԱՔԷ ԳԱՒԱՌ

Գաւառս, որ ընկած է Օրաբան, Արջկան եւ Կախաւան գետակների, Կովկասեան լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերի եւ Զարզուսի դաշտակի շարունակութեան հարաւային բերանի մէջ, ստացած է Շաքէ, Շաքէ-Ոստան, Շաքի, այժմ, ըստ ռուսական հնչման՝ Նուխի անունները: Բայց հարկ է յայտնել, որ Ուտի գաւառ էր կոչւում Շաքէ անունը ստանալուց շատ առաջ (Մով. Կաղ. եր. 171): Ըստ Կիր. Գանձակեցւոյ ի շարս յանուն Շաթայ հիմնուած քաղաքներից մին էր Շաքի քաղաքն (Կիր. եր. 114), որի անուամբ այնուհետեւ կոչւում է եւ իւր գաւառն:

Այժմ գաւառումս քրիստոնեայ բնակիչներով մնացած են միայն հետեւեալ շէնն եւ գիւղերն.

ա. ՄԱՀՂ շէն. շինուած դաշտակի մէջ, հողն՝ կիսով չափ արքունի եւ կիսով չափ՝ բէկական. միեւնոյն՝ տեղական բերքերն. բնակիչք նախ Արցախից գաղթած են Պաշնճաղ, ապա տեղա-

1 Այս է Զրվշտիկ կոչուած վանքն:

2 Մանրամասնութիւնքը տեսնել ցանկացողք թող ականեն Մով. Կաղ. Ա. հատ. Ի. գլուխը:

1 Ասեւելեան վտակի եզերքից սկսեալ մինչեւ ամրոցն զառ 'ի վեր է. թող այս հետի բարձրանալը. նեղ կածանի երկու կողմերն ծածկուած են փշալի թփերով, որոց սուր-սուր փուշերն ծիւ-ծիւ են անում այցելուաց հագուստները:

փոխուած շէնս: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, շինուած անեփ աղիւսով եւ փայտով. քահանան գալիս է Աղփլաքեան գիւղից:

Ծուխ 30, ար. 84, իգ. 64, ար. ծն. 6, իգ. 4, պսակ 2, ար. ննջ. 2, իգ. 1, երկար կեանք 70:

բ. ԱՅՏԻՆ-ԲՈՒԼԱՂ գիւղ. շինուած դաշտակի հիւսիսային կողմի հիւսիսահայեաց լանջի վերայ. բարեխառն՝ օդն եւ կլիման, եւ լաւ՝ ջուրն, հողն՝ արքունի եւ բարեբեր, տեղական բերքերն՝ միեւնոյն. բնակչաց նախնիքն գաղթած Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից: Եկեղեցին Ս. Աստուածածին, փայտաշէն եւ հին, քահանան միեւնոյն անձն:

Ծուխ 60, ար. 220, իգ. 172, ար. ծն. 20, իգ. 15, պսակ 8, ար. ննջ. 10, իգ. 6, երկար կեանք 100-110:

գ. ԱԼԵԱՐ գիւղ. շինուած դաշտակի հարաւային բերանի վերայ, օդն՝ բարեխառն, ջուրն՝ պատուական, տեղական բերքերն՝ նոյն. բնակիչք տեղափոխուած են Պաշնճաղից: Հողն՝ արքունի: Եկեղեցին՝ նորաշէն, ձեղունն՝ փայտաշէն, Ս. Աստուածածին անուն, որ շինուած է բնակչաց տրօքն եւ ունի 40 բուբ. եւ այս հակիրճ արձանագրութիւնը. «1885-ին». քահանան է միեւնոյն անձն:

Ծուխ 50, ար. 154, իգ. 145, ար. ծն. 8, իգ. 7, պսակ 6, ար. ննջ. 4, իգ. 3, երկար կեանք 95-100:

դ. ԳԵՕՅ-ԲԷԿԼՈՒ գիւղ. շինուած դաշտակի վերայ. ամռան փոքր-ինչ ծանր՝ օդն եւ կլիման, ջուրն՝ ոչ այնքան գովելի. բնակչաց նախնիքն նախ գաղթած Խաչենից եւ Ջրաբերդից Պաշնճաղ եւ ապա՝ այստեղ. հողն՝ բէկական եւ արդիւնաւէտ, միեւնոյն՝ տեղական բերքերն: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, որի հոգեւոր հովիւն գալիս է Գեօյ-բուլաղից:

Գիւղիս հիւսիսային կողմումն է Ղշլաղ-Քունդիւտ գիւղն, որի մէջ այժմ կան մօտ 300 տուն մահմեդականացեալ հայեր, եկեղեցու աւերակ եւ հանգստարան: Մի քանի տարի առաջ գիւղիցս մահմեդականացեալ հայ ոմն գնալով Գեօյ-բուլաղ գիւղն՝ յայտնում է Ղուկաս եւ Ղազարոս քահանաներին. «Մեր Ղշլաղ-Քունդիւտի եկեղեցու անօթներն պահուած են գետնի տակ, տեղը գիտեմ, եկէ՛ք եւ հանեցէ՛ք[1]»: Քահանայք գնում եւ հանում են մի արծաթեայ սաղաւարտ, մի արծաթեայ սկիհ, մի խաչ եւ մի շուրջառ: Չգիտենք ի՞նչ իրաւունքով հալել է տալիս Ղուկաս քահանան այդ թանկագին հնութիւնները՝ սաղաւարտը եւ սկիհը.... Չկարողացանք տեսնել գէթ ձեռաց խաչը: Միայն լսած էինք, թէ հանուած շուրջառի աղխն գտնւում է Գեօյ-բէկլու գիւղում եւ ունի արձանագրութիւն: Այս եւս չկարողացանք տեսնել:

Գեօյ-բէկլու գիւղում ծուխ 50, ար. 139, իգ. 129, ար. ծն. 6, իգ. 5, պսակ 3, ար. ննջ. 3, իգ. 2, երկար կեանք 70:

ՇԱՔԻ ՔԱՂԱՔ

Ինչպէս յայտնեցինք կանխաւ, Է. դարի Բ. քառորդում քաղաքս շինուած է Շաթ խաղրի անուամբ ըստ Գանձակեցուն: Պատուական է օդն, կլիման եւ ջուրն (բայց ոչ պղտորած ժամանակ) քաղաքիս, որ շինուած է Կովկասեան սարի լեռնաբազուկների մէջ մտած մի լեղուահովտի վերայ: Քաղաքի արեւմտեան կողմից, սրընթաց խոխոջում է Գիսի գետակն, որ կոչւում է Ղուրու-չայ, իսկ միջով՝ մի այլ գետակ, որ կոչւում է Գուլջանան: Միջին գետակս հայոց բնակարանները բաժանած է 2 թաղերի, որք կազմում են համարեա թէ քաղաքի ստորին մասը: Արեւելեան թաղումն է Շաքուայ գաւառների յաջորդարանն եւ մայր եկեղեցին. իսկ արեւմտեան թաղումն՝ պանդուխտ հայոց եկեղեցին, որ կոչւում է ղարիբականաց եկեղեցի: Մէն մի հայոց բնակարան շինուած է գեղեցիկ պարտիզում, որոց մէջ կան տանձի, խնձորի, սերկեւիլի, զղեարի ծառեր եւ որթեր:

1 Զափարաւատի արժ. Դանիէլ քահանայ Տէր-Ներսիսեանն պատմեց. «Զայգիտի մահմեդականացեալ հայերից ոմն մի օր գալով յայտնեց. «Պառաւ մայրս գիտէ Զայգիտի եկեղեցու անօթների թաղած տեղը. ինքը հիւանդ է, ինձ ղրկեց, որ գամ քեզ իմացնեմ, ե՛կ, որ հանես, բերես»: Աճապարելով գնացինք, բայց տեսանք, որ նոր մեռած էր մայրն, վերադարձանք դատարկ»:

Քաղաքումս բնակում են գլխաւորաբար 3 ազգեր՝ հայ, սուննու եւ շիա, ռուս քաղաքապահ զօրք եւ պաշտօնական անձինք: Մեծամասնութիւնն է մահմեդական տարրն:

Չկան բնիկ հայեր, այլ այժմեան բնակչաց նախնիքն գաղթած են Արցախից, Ագուլիսից եւ Խոյից: Հայք զբաղւում են վաճառականութեամբ, դերձակութեամբ, կօշկակարութեամբ, հիւսնութեամբ, մետաքսեայ ժապաւէն հիւսելու արուեստով, նպարավաճառութեամբ եւն.:

Քաղաքումս կայ 16 շոգեշարժ գործարան, որք պատրաստում են բոժոժներից մետաքսեայ թել: Գործարաններիցս պատկանում է հայոց միայն 6-ն:

Կայ նաեւ երկսեռ 2 երկդասեան ուսումնարան: Տղայոց ուսումնարանում ուսանում են 178 աշակերտ, թոշակատու 130, ձրիավարժ 48: Իսկ Ս. Մարիամեան օրիորդաց երկդասեան ուսումնարանում 112 օրիորդ, թոշակատու 75, ձրիավարժ 37: Երկսեռ ուսումնարանաց համար 2 աւագ ուսուցչաց, 5 վարժապետաց եւ 1 վարժուհու միամեայ ռոճիկ 4500 բուբլի: Մտից աղբիւրներն են.

Աշակերտաց եւ աշակերտուհեաց թոշակ.
Ուսումնարանապատկան անշարժ դրամագլխի տոկոս.
Մոմավաճառութեան արդիւնք.
Երկու եկեղեցիներից նպաստ.
Ուխտատեղեաց արդիւնք եւ
Սրբադրամ:

Արեւմտեան թաղի եկեղեցին՝ Ս. Աստուածածին, հոյակապ, պայծառ, մաքուր, մանաւանդ փառաւոր է կաթուղիկէն: Եկեղեցիս ունի 4961 բ. 87 կոպ. եւ կրում է սոյն արձանագրութիւնը. «Սկսեալ ՝ի 1808 թուէն մինչեւ ՝ի 1833 թիւն եւ աւարտեալ սուրբ Աստուածածնայ եկեղեցիս արդեամբ դարիբականաց»: Եկեղեցուս ընդարձակ բակում ամփոփուած են պանդուխտ հայոց ննջեցեալներն, որոց մէջ է հանրահռչակ (Լազրեւ) գեներալ Յովհաննիսի հօր մարմինն, որի մահարձանի վերայ քանդակուած է.

«Հանգչիմ աստանօր Դաւիթս Լազարեանց,
Ծնունդ Արցախու երկրին քաջազանց,
Սերունդ իշխանաց Քշտաղ գաւառի,
Մելիք-Հայկազին եւ Բհաթուր-բէկի.
Պանդուխտս տարաբաղդ մտի յայս տապան,
Կարօտ դեռահաս որդւոցս սիրական,
Հեղլով զարտօսր ՝ի ծանր մահճի,
Յանձնեցի զնոսա երկնային Տեսչի:
Երեսնամեայ կենօք վախճանեցաւ ՝ի սեպ. 1823 ամի»:

Եկեղեցուս աջ ու ձախ կողմերում են երկսեռ ուսումնարաններն, նորաշէն, միայարկ եւ գեղեցիկ է օրիորդաց Ս. Մարիամեան ուսումնարանն:

Իսկ արեւելեան թաղի եկեղեցին՝ Ս. Մինաս, նոյնպէս հոյակապ, կանգնած 4 հաստ սեանց վերայ, բայց աւելի ընդարձակ եւ բարձր, որ ունի 2106 բուբ. 97 կոպ.: Երկու եկեղեցիքս ունին 6 քահանայ:

Կարեւոր է յայտնել, որ քաղաքս խիստ վաճառաշահ եղած է 1860 թուականներից առաջ. մանաւանդ ամռան եւ աշնան եղանակներում: Այստեղ վաճառւում էին Շաքուայ ամբողջ գաւառների մետաքսեայ թելերն եւ Դաղստանի ամենատեսակ շալերն: Այս պատճառաւ յաճախում էին մետաքս գնողներ Եւրոպայի ամէն կողմերից եւ շալ գնողներ Արարատեան, Թիֆլիսեան, Արցախեան նահանգներից եւ Պարսկաստանից: Բայց այժմ ընկած է Շաքի գաւառական քաղաքիս առեւտուրն, եւ նսեմացած է իւր նախկին փառքից:

Քաղաքումս հայոց ծուխ՝ 906, ար. 2200, իգ. 1763, ար. ծն. 90, իգ. 75, պսակ 40, ար. ննջ. 45, իգ. 31, երկար կեանք (հայոց մէջ) 80-90:

ԳԵՏՆԻ ՏԱԿԻՑ ԵԼԱԾ ՃԱՇՈՑ

Արդէն Կապաղակ գաւառի Ղութղաշէն աւանում լսած էինք, որ մօտակայ Նովուր-Ղշլաղ գիւղում մահմեդական ոմն գտած է մի հին ճաշոց գիրք: Հետամուտ եղանք գտնել եւ տեսնել այդ հայկական թանկագին հնութիւնը: Պատմեցին, թէ գիւղացին գետինը փորելիս հանդիպեցաւ մի հին շինութեան, որի ձեղունի մօտ, մի պահարանում գտաւ մի մեծ կազմուած գիրք եւ վախելով, որ յետոյ կենթարկուի խիստ հարցափորձութեան, տարաւ. յանձնեց գաւառապետի օգնական Միքայէլ-բէկ Ղազար-Բէկեանցին, իսկ Ղազար-Բէկեանցն ղրկեց Շաքի՝ մարմնաւոր կառավարութեան քարտուղարին:

Շաքի քաղաքումս, շնորհիւ արժ. Ս. քահանայ Տէր-Պօղոսեանցին, յաջողեցանք ձեռք բերել ճաշոցը, որ տպագրուած է 'ի Ս. Էջմիածին 1686 թուին: Բոլորովին անվնաս մնացած է ճաշոցս գետնի տակ, միայն վնասուած են խոնաւութիւնից սկզբի մի քանի թերթերի լուսանցքներն երկու մատնաչափ տեղ: Թերթերն հաստ-հաստ, տառերն խոշոր եւ գլխագրերն թռչնագիր են: Վերջին թերթի վերջին երեսի վերայ գրուած է փետրագրչով.

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Եսայի Կաթուղիկոս Աղուանից սրբոյ Աթոռոյն Գանձասարայ ի ՌՃԿ. թուիս Հայոց յունվարի Ի Ե. քանզի կամէի նաւել յերկիրն Ռուսաց եւ ըստ խնդրոյ Ռոմանոս քեւխային զայս սուղ ինչ յիշատակարանս գծագրեցի ձեռամբ իմով 'ի փառս Աստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն»:

Այս ինքնագիր տողերից վերեւ կարմիր թանաքով կնքուած է հայրապետական կնքով: Կնքոյ անջինջ մնացեալ բառերից կարդացուեցան միայն. «Աղուանից կաթուղիկոս Եսայի Ջալալեանց...»:

Արդէն յայտնի է, որ ճաշոցս տպուած է 1686-ին. Եսայի կաթուղիկոսն գրած է 1711-ին: Մեծ-Սօկուելուի եկեղ. արձանագ. ապացուցանում է, որ սաստկացած էր Հաճի-Ջալալու[1] կրօնափոխական հալածանքը 1751-ին: Եթէ ընդունենք, որ ճաշոցս մնացած է գետնի տակ 1751-ին՝ Նովուր-Ղշլաղ գիւղի հայոց՝ մահմեդականութիւն ընդունելուց յետոյ, իսկ գտնուած է 1887-ին, ուրեմն 136 տարի ճաշոցն մնացած է գետնի տակ:

Շաքի քաղաքի հանգստարանում

Այստեղ կայ Ս. Հռիփսիմէ անուն, չէջ տաշուած քարով շինուած մի մատուռ, հիմնուած մի տեսարանաւոր բլրի վերայ: Հոյակապ մատուռս ունի գեղեցիկ կաթուղիկէ, սեղան եւ 2 խորհրդարան: Յայտնի չէ շինութեան տարեթիւն, այլ միայն նորոգութեան:

«Ղարաբաղցի Չարդէի Մուսիս Նորոգեցի սուրբ Հռիփսիմէ կուսի եկեղեցիս՝ Մուսուն եւ ծնողացն հոգուն ՌՄՁԲ. (1833-ին)»:

Հանգստարանիս մուտքի աջ կողմում կայ մի նահատակի դերեզման, որի մահարձանի վերայ փորագրուած է.

«Այս է տապան Նիժ գիւղացի
Պետրոս անուն նահատակի.
Սա էր որդի քահանայի,
Օ՛վ հանդիպողք տո՛ւք ողորմի.
1826 ամի 13 սեպտեմբերի»:

Գաւառիս վանքերն եւ բերդերը

Ս. ԳԷՈՐԳ վանք, որ գտնւում է Օրաբան գետի աջ կողմում, Պտէղ (Պարակէղ) գիւղի մօտ, որի բնակիչք մահմեդականացեալ հայեր են: Վանքս, որ կառուցեալ է մի սարի հարաւահայեաց ստորոտում. մի հարթակի վերայ, արտաքուստ շինուած է ամբողջապէս տաշուած չէջ քարով. իսկ ներքուստ՝ անտաշ որձաքարով: Ամբողջապէս կանգուն է բացի տանեաց սալկախից: Ունի աւազան եւ 2 խորհրդարան, խորանի վերեւակ սանտուղն շինուած է բեմի մէջտեղից: Բայց չունի արձանագրութիւն եւ ոչ շինութեան թուական: Ուխտի համար յաճախում է մեծ բազմութիւն ոչ միայն հայերից, այլ մահմեդականութիւն ընդունած հայերից: Վանքս ունեցած է եւ շրջապարիսպ եւ միաբանից սենեակներ, որոց հետքերն երեւում են որոշակի:

Տաճարիս հիւսիս-արեւելեան կողմից, մի քանի քայլ հեռի, ժայռից բղխում է մի անուշահամ եւ բազկաչափ հաստութեամբ պատուական աղբիւր: Իսկ հիւսիսային եւ արեւմտեան կողմերում ամփոփուած են միաբանից մարմիններ, սակայն անարձանագիր են տապանաքարերն:

Ս. ԳԵՂԱՐԴ վանք, որը մահմեդականացեալներն անուանում են Դամիւրով, շինուած է Ս. Գէորգ վանքի հիւսիս-արեւմտեան կողմի սարի մի սեռի վերայ, կոփածոյ չէջ քարով: Արտաքուստ չափելով՝ երկարութիւնն է 23 քայլ եւ լայնութիւնն՝ 13: Կանգուն մնում են միայն ամբողջ խորանն իւր վերնակամարով եւ խորհրդարաններով, հիւսիսային եւ հարաւային որմերն՝ կիսով չափ: Մնում է եւ աւազանն, բայց չունի արձանագրութիւն: Ուխտատեղի է եւ այս:

Օրաբանի հանդէպ, գետի աջ կողմում է Քունդիւտ գիւղն, որի հայադաւան բնակիչներն մօտ 130 տարի առաջ ընդունած են մահմեդականութիւն: Գիւղիս մօտ մի բլրի վերայ դեռ մնում է եկեղեցին, որ շինուած է տաշուած չէջ քարով: Բայց քանդուած են դուռն, ձեղունի կամարն արեւմտեան կողմից եւ աւազանի տեղն: Հիւսիսային կողմի խորհրդարանի միջից ունեցած է գաղտնի դուռն, որի նեռն է թաքուն պահարան:

Եկեղեցուս հիւսիսային կողմում կայ ընդարձակ հանգստարան, որի տապանաքարերից արձանագրութիւն ունեցողները տարած են թրքացած հայերն, եւ մնում են անարձանագիր անթիւ քարեր: Բայց բարեբախտաբար մնացած է միայն մի երկար, տաշուած, սպիտակ մահարձան, որ ունի այս արձանագրութիւնը. «Այս է հանգիստ Արզրումցի Մովսէսի որդի Իփակչի-Խօճա-Սաքարին, որ փոխեցաւ ՌՃԼԵ. թվին»:

Լ. բերդն Աղուանից գտնւում է հանգստարանիս կից, 20 քայլ դէպի արեւմուտք հեռի եկեղեցու աւերակից: Պարիսպներն շինուած են կրաշաղախ ցեխով եւ անտաշ որձաքարով: Պարըսպից այժմ մնում է կանգուն միայն մարդաչափ բարձրութեամբ հարաւային կողմից եւ մի կանգուն՝ արեւելեան կողմից: Երեւում են միայն հիմունքներն մնացեալ կողմերում, քանզի քանդած եւ քարերը տարած են թրքացեալ հայերն: Պարիսպներն, թէեւ չունին բուրգեր, բայց ունին սաժէնից աւելի հաստութիւն եւ խիստ ամրութիւն: Երկարութիւնն է մօտ կէս վերստ, իսկ լայնութիւնն՝ 110-180 քայլ: Բերդիս միջում երեւում են շատ շինութեանց հետքեր: Բայց յայտնի չէ բերդիս անցեալն, պատմութիւնն եւ շինութեան տարեթիւն:

Զայզիտ գիւղի եկեղեցին. համարեա թէ գիւղն գտնւում է Օրաբանի եւ Շաքի քաղաքի միջեւ: Գիւղս բաղկացած է մօտ 461 ծուխից, որոց նախնիքն եղած են հայ: Գիւղիս գլխին մի գեղեցիկ սարահարթի վերայ շինուած է սրբատաշ չէջ քարով մի խաչաձեւ եկեղեցի: Խոնարհուած է կաթուղիկէն, արեւմտեան խաչաձեւի գլուխն, դուռն եւ խորանի ետեւի 3 լուսամուտներից 2-ն: Անքակ մնում են 2 խորհրդարաններն: Ունեցած է եւ աւազան, բայց նորոգելու ժամանակ լցրած եւ ծեփած են երեսը: Երեւի թէ նորոգող վարպետն յոյն եղած է, զի դեռ երեւում են պատերի վերայ յունաձեւ նկարներ: Հիւսիսային որմի արտաքուստ կից են 2 սենեկանման խուցեր, շինուած նոյնպէս հոյակապ, որք աւելի նման են պատուաւոր անձանց հանգստարանի: Եկեղեցու շուրջն ամփոփուած են շատ ննջեցեալներ, բայց անարձանագիր են եւ անտաշ տապանաքարերն:

ԳԻՍ ՎԱՆՔ[1]

Ըստ վկայութեան Կաղանկատուացու (եր. 8-9) այս է Աղուանից Ա. եւ մայր եկեղեցին հիմնուած Եղիշէ Առաքեալից Քրիստոսի Ա. դարում: Վանքս, որ առաջ եղած է եկեղեցի, կառու-

1 Բացատրութիւնն յետոյ:

1 Տեղական արտասանութեամբ կոչւում է Քիշ:

ցեալ է Շաքի քաղաքից վերեւ, Կովկաս սարի ստորոտում, Գիս գետակի աջ ափի վերայ: Ե. դարում ս. Մեսրոպ իւր աշակերտներով գալիս է այստեղ, նորոգում է եկեղեցու հաւատը եւ դաւանութիւնը, ապա, ստիպեալ չարագործների երկիւղից, գետնի մէջ ամփոփում է այն արծաթեայ խաչը, որի մէջ կար կենաց փայտի մասն: Ամփոփուած տեղում նահատակւում է ս. Մեսրոպի աշակերտներից կէսն, որոց մարտիրոսութեան տեղի վերայ հաւատացեալ ոմն շինում է մի հողեայ, չորեքկուսի մատուռ, որի մէջ, մի փայտեայ արկղում, զետեղելով նահատակելոց մարմինները, ամփոփում է խնամքով: Ապա նոյն առաքելահիմն հին եկեղեցու տեղում հիմնարկում են եկեղեցի եւ Մեսրոպի խաչը զետեղում եկեղեցու աղիւսաշէն գմբէթի մէջ: Է. դարում Առանշահիկ ցեղից Վարազ-Պերոժ իշխան կամենալով նորոգել հին եկեղեցին՝ գտնում է Մեսրովպի խաչը (Մով. Կաղ. Ա. հատ. Իէ. գլ.): Աղուանից Եղիազար կաթուղիկոսն բոլոր եկեղեցական ուխտով աճապարում է Գիս, կատարում մեծահանդէս նաւակատիք եւ Մեսրովպեան խաչի կենաց փայտի մասնից փոքր-ինչ կտոր զետեղում իւր ձեռաց խաչի մէջ (Մով. Կաղ. Բ. հատ. ԼԳ. գլ.): Այն օրից ցարդ մեծ ուխտատեղի է ոչ միայն շրջակայ հայոց, այլ եւ մահմեդականաց համար, որք յաճախակի խոնւում են մեծ բազմութեամբ:

Մէջ բերուած պատմական հատուածներից երեւեցաւ, որ եկեղեցիս նախ Ա. դարում հիմնուած էր Եղիշ-Առաքելից, ապա Ե. դարում բարեպաշտ անձերից, եւ ապա նորոգուած է Է. դարում Վարազ-Պերոժ իշխանից: Այժմ յայտնում ենք, որ վանքիս ներքին եւ արտաքին ձեւն ու ոճն արդարացնում են պատմութեան ստուգութիւնը, վասն զի արտաքուստ կիսակլորակ է տաճարիս արեւելեան կողմն, քառանկիւնի՝ արեւմտեան կողմն, խաչաձեւ՝ վերի կողմն եւ հնադարեան ձեւով շինուած՝ կաթուղիկէն: Այնչափ միացած է կրաշաղախ ցեխն տաշուած չիչ քարի հետ, ասես թէ ձուլուած եւ եղած է միապաղաղ քար: Միայն թէ չունի արձանագրութիւն եւ ընդարձակ մեծութիւն:

Վանքս ունի մի քանի սենեակներ, մի թթենեաց պարտէզ, նշանաւոր օդ, կլիմա եւ ջուր եւ 2273 քառակուսի սաժէն հող, որ կապալով տուած են 100 ռուբլու:

Վանուցս կից է Գիս գիւղն, որի հայադաւան բնակիչք ընդունած են մահմեդական կրօնը գաւառիս միւս բնակչաց հետ, նմանապէս եւ շատ մերձակայ գիւղերի բնակիչներ:

ԼԱ. բերդն Աղուանից կոչւում է Անուշ բերդ, որ գտնւում է Գիս վանքից փոքր-ինչ վերեւ, գետակի աջ կողմում: Թէեւ մեծ չէ ամրոցս, բայց ունի քարուկիր եւ հաստատուն պարիսպ եւ ամուր դիրք: Տեղ-տեղ քանդուած են պարսպի պատերից: Բայց մեծ մասամբ մնում է հարաւային պարիսպն:

ԼԲ. բերդն Աղուանից գտնւում է Մալզ շինի մօտ, դաշտակի վերայ: Դղեակս, որի տարածութիւնն շատ մեծ չէ, ունի քարուկիր պարիսպ եւ միայն մի դուռն: Ամբողջութեամբ անքակ մնում է պարիսպներն շնորհիւ մալզցի հայոց:

Դղեկիս արեւմտեան կողմին կից կայ մի հիմնայատակ կործանուած աւերակ, որ երեւի թէ եղած է փոքր գիւղաքաղաք: Գիւղաքաղաքիս շուրջն փորուած է խոր եւ լայն խրամ, դուցէ պատերազմի ժամանակ ջրով լցնելու եւ թշնամեաց մուտքը արգելելու համար: Դղեկի դուռն բացուած է ուղղակի գիւղաքաղաքիս միջով: Այժմ հերկում են գիւղաքաղաքիս տեղը, այսու ամենայնիւ դեռ երեւում են թրծեալ աղիւսների եւ քարերի բեկորներ, եւ երբեմն-երբեմն գըտնում են հնադարեան դրամներ հերկուած տեղերից:

Դ. ԿԱԽԱՒԱՆ գիւղաքաղաք. 34 վերստ հեռի Շաքի քաղաքից, շինուած մի երկրալեզու հովտի վերայ, որ սահմանազլուխ է Շաքի գաւառի: Պատուական է օդն, կլիման եւ ջուրն, զարդարուած այգեստաններով եւ պարտէզներով. բնակիչք՝ հայ, վրացի եւ մահմեդական. տեղական բերքերն՝ ցորեն, գարի, որիզ, տանձ, խնձոր, արքայակաղին, ընկուզ եւ խաղող: Կան եւ խանութներ եւ վաճառանոցներ իբրեւ ամենօրեայ առեւտրավայր եւ հեռագրատուն եւ փոշտ:

Հայք, որ գաղթած են Ագուլիսից, Արցախից եւ Գանձակից, զբաղւում են վաճառականութեամբ եւ ունին մի եկեղեցի Ս. Աստուածածին եւ մի քահանայ: Կան եւ պանդուխտ հայեր:

Ծուխ 40, ար. 266, իգ. 116, ար. ծն. 12, իգ. 8, պսակ 4, ար. ննջ. 3, իգ. 2:

ՃԱՌԻ ԳԱՒԱՌ

Գաւառս, որ ընկած է Կախաւան եւ Զաքաթալի արեւմտեան գետակների, Դարբանդեան պարսպի շարունակութեան եւ Բաղասական հարաւային դաշտաբերանի շարունակութեան մէջ, ստացած է Կամբեխճան, Կամբէճան, Կապիճան, Ճար, այժմ Ճառ եւ Զաքաթալա անունները:

Յաւօք սրտի ստիպուած ենք ասել, որ բացի Ճառի հայերից գաւառումս չկան այժմ ուրիշ հայեր, զի շատ գիւղերի հայերն ընդունած են մահմեդական կրօնը:

Ա. Մարսան գիւղի բնակիչներն, որ Կախաւանից ներքեւ է, եղած են էջմիածնապատկան եւ ամէն տարի վճարած են գաւազանապտուղ Մայր Աթոռին, ինչպէս վկայում են ծերունիք:

Բ. Ղում գիւղի բնակիչներն, որք ընդունած են մահմեդականութիւն: Եկեղեցին, որ շինուած է մեծ-մեծ եւ հաստ-հաստ թրծեալ աղիւսով, մնում է կանգուն. միայն խոնարհուած է գմբէթն եւ ճաքած է գագաթնագծից՝ արեւելքից արեւմուտք:

Գ. Թալա[1] գիւղն, որ մօտ է Ճառին, եղած է հայ, բայց այժմ մահմեդական է:

Դ. Դիպան աւերակ գիւղատեղի, որ գտնւում է Ճառի արեւելեան կողմում: Գիւղիս հայ բնակիչներն, անճարացեալ լեկզիների անընդհատ աւերմունքներից, փոխադրւում են Սղնախի կողմն եւ հիմնում մի գիւղ Դիպան անուն՝ չուզենալով մոռանալ իւրեանց նախնի գիւղի ցանկալի անունը: Բայց թողած են մի եկեղեցի, որ շինուած է երկյարկ, մին՝ բոլորովին գետնափոր, եւ միւսն՝ շինուած նորա վերայ: Գետնափորն ունի միայն մի մուտք վերնայարկի արեւմտեան կողմից իբր դաղտնի դուռն: Երեւի թէ գետնայարկումս պահած են եկեղեցուս զարդերը եւ անօթները աւարառուներից զգուշանալու հեռատեսութեամբ: Վերնայարկն ըստ ամենայնի ունի Հայաստանեայց տաճարների բոլոր յատկութիւնները: Կամարներն շինուած են կոփածոյ չիչ քարով, իսկ մնացեալներն անտաշ որձաքարով: Բայց այժմ խոնարհած է եկեղեցուս գաւիթն: Տակաւին մնում են գիւղատեղումս ընկուզի եւ շագանակենի ծերունի ծառերն:

Ե. Ճառի հիւսիս-արեւելեան կողմում, լեռների մէջ կայ Բուխովլու անուն հայ գիւղատեղի, եկեղեցի եւ հանգստարան, որի բնակիչներն նոյն պատճառով տեղափոխուած եւ Սղնախի կողմերում հիմնած են Բուխով անուն գիւղը:

Բացի տեղափոխուած հայ գիւղերից, բազմաթիւ են մահմեդականութիւն ընդունած գիւղեր, հանգստարաններ, եկեղեցիներ եւ մինչեւ անգամ վանքեր, զորս ձանձրալի համարելով մէջ բերել մի առ մի՝ բաւականանում ենք այս չափով: Միայն յայտնում ենք, թէ մահմեդականութիւնն, որ ճգնած է ոչնչացնել քրիստոնէութեան ներքին եւ արտաքին նշանները եւ յիշատակները, ցարդ չէ կարողացած անհետացնել հայկական անունները եւ տիպերը իւր միջից, ինչպէս են Թունիլար, Եաղուբ օղլի, Կարապետ ուշաղի, Պետրոս բաղի, Մալքում երի, Ամիրջան ավի, Արզուման օղլը եւ այլ շատ ազգանուններ:

Ճառ քաղաք

Քաղաքս շինուած է Կովկաս լեռնաշղթայի լեռնաբազուկների ծոցն մտած մի երկրալեզու հովտի վերայ, որ փոքր-ինչ թեքուած է հիւսիսից հարաւ: Բնակիչք են հայ, վրացի, մահմեդական եւ լեկզի: Պատուական է օդն, կլիման եւ ջուրն: Քաղաքն գրեթէ ծածկուած է գեղեցիկ մշակուած պարտէզներով եւ այգիներով: Առատ է ջուրն տարուան բոլոր եղանակներում, վասն որոյ ջրարբի են բոլոր ցանքսերն, ծառատունկներն եւ բանջարանոցներն եւ առատ՝ ամէն բերքերն, ինչպէս էին Շաքի քաղաքում:

Ներկայ դարիս Ա. քառորդում թէեւ ռուսներից գրաւուած էր Ճառս, Կախաւանն եւ Շաքին, սակայն հիւսիսային սահմանակից դրացին՝ անգրաւ մնացեալ Դաղստանն, յաճախակի եւ

1 Ճառից վերեւ կայ մի լեկզինաբնակ գիւղ, որի գլխաւորի անունն եղած է Զաքարա: Ռուսներն տիրապետելուց վերջն Ճառը փոխած են Զաքաթալա՝ միացնելով Զաքա կրճատեալ անունը Թալա անուան հետ:

անակնկալ յարձակումներ գործելով Ճառիս եւ Կախաւանի վերայ. վրդովում էր երկրիս խաղաղութիւնը, գործում շատ վնասներ եւ գերի տանում աւազակօրէն բազմաթիւ պատուաւոր անձինք եւ ժողովրդականք: Շեյխ-Շամիլն, դեռ իւր յաղթուելուց մի քանի տարիներ առաջ, անձամբ արշաւեց Ճառիս վերայ այն լեռնային նեղ ճանապարհով, որ հանում է քաղաքիցս վերեւ եղած լեռն: Բայց երբ 1859-ին գրաւուեցաւ ամբողջ Դաղստանն, այնուհետեւ խաղաղութիւն դտաւ երկիրն:

Ռուսաց կառավարութիւնն շինած է այստեղ ամուր բերդ, ուր մնում է քաղաքապահ զօրքն:

Հայք, որ կազմում են բնակչաց մեծամասնութիւնը, գաղթած են Արցախից, Ագուլիսից, Գանձակից եւ Սղնախից եւ զբաղւում են վաճառականութեամբ եւ ամէն տեսակ արուեստներով: Ունին Ս. Գէորգ անուն մի հոյակապ, փառաւոր եւ մեծ եկեղեցի, որ իւր հարաւային դրան ճակատին կրում է սոյն արձանագրութիւնը. «Շինեցաւ եկեղեցիս Հայոց 1851 թվին՝ Զաքաթալու դարիպական Հայոց վաճառականաց տրօքն եւ արդեամբն՝ անուամբ սրբոյն Գէորգայ զօրավարին ի ժամանակս թագաւորութեան Նիկոլայ Պաւլովչին եւ ի հայրապետութեան Հայոց տեառն Ներսիսի Ե. կաթուղիկոսին. ի ժամանակս սոցա փոխարքայն էր գնեազ Վարանցովն եւ տեղւոյս զօրագլխապետ Ղեներալ Գրիգոր գնեազ Որբելեանովն եւ քահանայն էր Տէր Մարտիրոս Տէր Դանիէլովն եւ թուականն Հայոց ՌՅ.»:

Աւազանի ճակատին.

«Յիշատակ է Դաշտեցի Հօհանիսի որթոց Ստեփանօվներին 1851»:

Դասի աջակողմեան սեան վերայ.

«1852 կանգնեցաւ սիւնս տրօք Կանջեցի Սարգսի, Պօղոսի, Յարութիւնի Շահպարոնեանց ի յիշատակ իւրեանց»:

Դասի ձախակողմեան սեան վերայ.

«1852 կանգնեցաւ սիւնս ծախիւք Ղարաբաղցի Սարգսի, Դաւթի եւ Մարգարի Բարխուդարեանց ի յիշատակ իւրեանց»:

Մաքուր դիրքի մէջ է եկեղեցին, սեղանն, խորանն, աւազանն եւ անօթներն եւ ունի մի քահանայ, բայց չկարողացանք ստուգիւ իմանալ եկեղեցուս սեպհական դրամագլուխը, արականաց, իգականաց եւն ճիշտ թիւը, զի ճառս ստորագրեալ է Թիֆլիսի հոգեւոր կառավարութեան:

Եկեղեցուս մօտ է Ս. Վարդանեան տղայոց միդասեան ուսումնարան, որի մէջ ուսանում են 58 աշակերտք, որից թոշակաւոր՝ 48, իսկ ձրիավարժ՝ 10 աշակերտ, վարժապետաց միամեայ ռոճիկ՝ 964 բուբ.:

Ծուխ՝ 170, երկար կեանք՝ 100:

Քաղաքումս արժ. Սեդրակ քահանայ Տէր-Յովհաննիսեան Տէր Մարտիրոսեանցի տանը տեսանք Ներսէս Ե. կաթուղիկոսի մի ինքնագիր նամակը, որը գրած է Նորին սրբազնութիւնն իւր Թիֆլիսում առաջնորդ եղած ժամանակ, 1821-ին: Այս նամակով պատուիրում է Մարտիրոս քահանային (որ էր պապ ներկայ քահանային), որ աշխատէ ուսում եւ կրթութիւն տալ իւր որդի Յովհաննիսին, եթէ մտադիր է քահանայ ձեռնադրել տալ: Ապա գրում է վճռաբար. «այլ թէ ոչ՝ չէ յուսալի առանց ուսման նորա, ըստ առաջին հին սովորութեանց, արժանացուցանել զնա քահանայութեան հանդերձ տգիտութեամբն»:

Հիանալի են այստեղի պտուղներն եւ բերքերն: Արժ. Սեդրակ քահանայի պարտիզում տեսանք մի դդում, որի ծանրութիւնն էր 1 փուտ եւ 10 ֆունտ: Կեղեւն մոխրագոյն է, ձեւն կլորակ, մեծութիւնն զարմանալի եւ քաղցրութիւնն գովելի:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԴԱՐԲԱՆԴԵԱՆ ՊԱՐՍՊԻ

Գաւառս ոտք դրած բոպէից՝ մեր անդուսպ հետաքրքրութիւնն ձգտում էր անհամբեր հետախուզել եւ գտնել Դարբանդեան պարսպի շարունակութեան հետքը: Շշթայաձեւ պարսպի շարունակութիւնն համարեա թէ Կախաւանի եւ Ճառի միջով մի սարի գլխից անցած է Կովկաս սարի հարաւային կողմն, իջած Ղանլու-ղոբի կոչուած ձորն: Ապա նոյն մեծ սարի հարաւային լանջերով շարունակուած անցնում է Թալայի գլխով եւ Ճառի միջով եւ ձգւում նոյն դիրքով մինչեւ Բալաքեան: Պարիսպն ուրեք-ուրեք կանգուն է, ուրեք-ուրեք կիսաւեր եւ տեղ-տեղ քանդուած, սակայն բայի գետակների անցքերից գրեթէ ամէն տեղ պարզ երեւում են շարունակութեան հետքերն եւ հիմունքներն: Զկարողանալով գտնել Թալայում ամուր տեղը, որ նշանաւոր տեղ գրաւած է պատմութեանց մէջ, դիմեցինք հայ եւ մահմեդական հարիւրամեայ ծերունեաց: Միաձայն են սոցա պատմածներն առանց տարբերութեան. ահաւասիկ.

«Երկար մեծ, ամուր եւ ծանր դուռն կախուած էր Թալայի արեւելեան կողմի գետի մօտ եղած դարպասից[1], որ միշտ մնում էր փակ: Ռուսներն դալուց շատ տարիներ առաջ լազկիներն (լեկզիք) գալիս էին Դաղստանի կողմից հաւաքում հասարիցս (պարսպից) դուրս բնակող լազկիները, յարձակւում Նուխու եւ Շամախու գաւառների եւ քաղաքների վերայ, կոտորում, սպանում, թալանում եւ ասիրներ (գերիներ) տանում եւ երկիրը քանդում: Այդ ժամանակ քանդուեցան մի քանի գիւղեր, ինչպէս են Պաշինճաղ, Պապարաթմա, Քոթուկլու[2], ժողովուրդներից փախչողն փախաւ, ազատուեցաւ լեռներում, կուռողն սպանուեցաւ, ձեռք ընկնողն՝ ասիր տարան: Աստուած հեռու տանի այն տարիները, թշնամիս էլ, սատանան էլ տեսնան ոչ այն օրերը... Յետոյ, հա՛, յետոյ Շամախու եւ Նուխու խաներն միաբանելով գալիս են զօրքով եւ մեծ վնասներ տալիս հասարիցս դուրս եղած լազկիներին: Վերջից դարձեալ միաբանում են լազկիներն, բարկացած հանում երկամը. մեծ դուռն եւ տանում մինչեւ Շամախի եւ ձգում այնտեղ[3] եւ աւելի մեծամեծ վնասներ տալիս»:

Այժմ եւս կան պարսպի հիւսիսային կողմում լեկզու շատ գիւղեր:

ԲԱՂԱՍԱԿԱՆ ԳԱՒԱՌ

Նշանաւոր է գաւառս իբրեւ անասուն դարմանելու արօտատեղի եւ իբրեւ գեղեցիկ դաշտ, որի հիւսիսային կողմն առատաջուր է, հարաւայինն՝ անջրդի կամ սակաւաջուր: Գաւառումս չկայ հայ բնակիչ, այլ բնակում են մահմեդականներ եւ վրացիներ, բայց ամենամեծ մասամբ՝ դաշտի հիւսիսային կողմերում եւ ջրաբեր տեղերում: Դարբանդեան պարսպի շարունակութիւնն հասած է Բալաքեան, ուր ռուսներն շինած են նշանաւոր ամրութիւններ եւ ուր պահում են զօրքեր:

ՍՏՈՐԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ

ԱՐԱՇ ԳԱՒԱՌ

Գաւառս, որ ընկած է Կոկիսոն գետակի, Բօզ-դաղի հարաւահայեաց լանջերի եւ Կուր գետի մէջ, ստացած է Հարանդ, Հաբանք, Աղբերդ, Աղ-դաշ, այժմ՝ Արաշ անուանները:

Ամենամեծ մասամբ թրքաբնակ է գաւառս, որի մէջ կան միայն հայոց հետեւեալ գիւղերն.

ա. ԽԱՆԱՒԱՏ գիւղ. շինուած Արջկան գետակի աջ ափի մօտ, Աղուանից դաշտից Բօզ-դաղի ծոցն մտած մի լեզուահովտի վերայ: Ամռան ծանր է օդն եւ կլիման. բայց ոչ այնքան վնասակար, հողն՝ արքունի եւ արդիւնաւէտ, տեղական բերքերն՝ ցորեն, գարի, կորեկ, որիզ, բամբակ, մետաքս, խաղող, թուզ, նուռն, թութ, ծիրան, դամոն, սալոր, կեռաս եւն: Բնակիչք գաղթած են Խաչեն գաւառի Խանապատ գիւղից եւ Արաշի Խալդան գիւղից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, որ ունի մի քահանայ:

---

1 Տակաւին մատնացոյց են անում տեղը:

2 Այժմ աւերակ են գիւղերս, որ վերաբերում են Խենի եւ Ճաքի գաւառներին:

3 Այժմ երկաթ դուռն գտնւում է Շամախում մահմեդականաց թաղում:

Ծուխ 40, ար. 106, իգ.91, ար. ծն. 6, իգ. 5, պսակ 2, ար. ննջ. 3, իգ. 2, երկար կեանք 70-75:

բ. ՔԱՆԴԱԿ[1] գիւղ. հիմնուած Կուր գետի ձախ ափի վերայ, Աղուանից դաշտի սրածայր վերջացած տեղի մօտ, ամռան ծանր՝ օդն եւ կլիման, բայց պատուական՝ ջուրն, որ է Կուր գետն: Հողն՝ արքունի եւ բարեբեր, բայց ամռան սակաւ՝ ցանքսերի ջուրն, որ գալիս է Արջկան գետակից, տեղական բերքերն՝ միեւնոյն: Բնակիչք՝ բնիկ տեղացի, աշխատասէր եւ քաջ որսորդ: Եկեղեցին Ս. Աստուածածին, նոր կառուցեալ, ձեղունն փայտաշէն, որի քահանան գալիս է Հաւաբիկ գիւղից: Եկեղեցուս բակում կայ հին հանգստարան, որի մէջ է հետեւեալ արձանագրութիւնը կրող տապանաքարն. «Այս է տապան Մելիք-Մելքումին, որ էր որդի Չալապովին. Օվ ոք կարդա, դա ողորմի, 1840 Նմի»:

Հարկ է յայտնել, որ ո՛չ սորա նախնիքն մելիք եղած են եւ ո՛չ սորա յետագաներն, մելիքութիւնն սկսուած է իրանից եւ մեռած իւր հետ: Պատմում են թէ, սա մելիքութիւնը ստացած է Նուխու խանից իբր վարձատրութիւն իւր նշանաւոր քաջութեանց: Այսպէս է Մելիք-Մելքումի ծագումը. Չալապի, որից ծնուած է Առաքելն եւ Առաքելից՝ Մելիք-Մելքումն: Վերջինս 1826-ին ռուս-պարսկական պատերազմում մեծ ծառայութիւններ արած է ռուսաց, վասն որոյ այժմ սորա յետագաներն կոչւում են անհարկատու բէկեր եւ բէկզատաններ:

Գիւղումս մի տան մէջ գտնուած գրչագիր աւետարանի յիշատակարանից բարւօք համարեցի ընդօրինակել հետեւեալը.

«ՌՅԻԱ. (Փրկչական), յորում թուականս Հայոց էր ՉԿԸ. էր, գրեցաւ սայ (սա) 'ի մայրաքաղաքիս, որ կոչի Նախիջեւան մեծ նահապետին Նոյի շինեալ ձեռամբ տունս իւր, կատարեցաւ սայ ընդ հովանեաւ սուրբ Սարգսի զաւրավարին ձեռամբ Յովսէբայ անարժան ծառայի Նորայ»: Երկրորդ կազմող Տէր-Ոսկանն յայտնում է, թէ աւետարանս եղած է արծաթապատ կազմով եւ ոսկեզօծեալ: Իսկ Վլաս վարդապետն յայտնում է, թէ գողերն կոտրած եւ տարած են ոսկեզօծ արծաթապատը, իսկ ինքն (Վլաս վարդապետն երրորդ անգամ) կազմած է ՌՃԻԶ-ին Նախավկայի Ս. Ստեփաննոս վանքում (Երասխի աջ կողմում եղած Ս. Ստեփ. վանքում):

Ծուխ 120, ար. 433, իգ. 392, ար. ծն. 31, իգ. 28, պսակ 15, ար. ննջ. 8, իգ. 5, երկար կեանք 80 տարի:

գ. ՀԱԻԱՐԻԿ գիւղ. կէս ժամու ճանապարհ ցած է Քանդակից, նոյնպէս շինուած Կուր գետի ափի վերայ, միեւնոյն՝ օդն եւ ջուրն եւ տեղական բերքերն, եւ արքունի՝ հողն, բնակիչք՝ բնիկ, բացի 10 տնից, որ գաղթած են Արցախից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, նորաշէն, հոյակապ, շինուած հասարակութեան տրօքն, որ ունի մի քահանայ:

Ծուխ 112, ար. 391, իգ. 361, ար. ծն. 25, իգ. 16, պսակ 12, ար. ննջ. 8, իգ. 6, երկար կեանք 80 տարի:

դ. ՄԱԶՐՂՈՒ գիւղ. նոյն չափով ցած է Հաւաբիկից, ամենայն ինչ միեւնոյն, միայն գիւղն վերստաչափ հեռի է Կուր գետից, ժողովուրդն բնիկ, գործօն եւ քաջ որսորդ: Եկեղեցին՝ Ս. Եղիշէ, հողաշէն, քահանան գալիս է Խանաւատից:

Ծուխ 47, ար. 161, իգ. 143, ար. ծն. 13, իգ. 11, պսակ 8, ար. ննջ. 3, իգ. 2, երկար կեանք 75:

Ուխտատեղի Ս. Եղիշէ մատուռն

Կուր գետի ձախ ափում, մոշայ[2] ծառերի մէջ շինուած է ուխտատեղիս: Ի նախնեաց հետէ արդէն եղած է մատուռս, բայց մի քանի տասնեակ տարիներ առաջ 'ի հիմանց նորոգուած է, որ

1 Աղուանից Ես. կաթ. (եր. 23), գրած է, թէ Ճառի եւ Կախաւանի կողմի լեկզիների գլխաւորն՝ Ալի-սոլդան, որ Շահի հրամանաւն նստած էր, ապստամբեցաւ եւ գերեվարեց Շաքուայ Պաշնճաղ, Մումպարաք, Զարղաթլու եւ Քանդակ գիւղերի բնակիչները:

2 Տաճկերէն Իլղը աղաջի: Բայց այնքան հաստ-հաստ եւ բարձր են այս ծառերն, որոց նմանը տեսած չենք բնաւ ուրիշ տեղերում: Մինչդեռ թուփեր են Տաճկաստանում եւ Պարսկաստանում մեր տեսածներն, իսկ ծառեր են Կուր գետի եզերքում բուսածներն:

ունի այս արձանագրութիւնը. «1867 թուին սկսեալ 'ի Նոր շինութիւն փոքրագոյն մատուրի վերայ Սուրբ Աւագ Նշանի, որ է շինողն Մազրղուեցի Յովսէփի որդի Բաղրամ, Շիրին, Գասբար որդի Խուշուդ եւ Մազրղու ժողովուրդ Աստուած օրհնի, որ մեզ օգնեցին: Գրեցի Տէր Խաչատուր, ով կարդացող ողորմի ասա՛»: Երկու խնդրի մասին թէեւ շատ հարցափորձեցինք, սակայն չստացանք գոհացուցիչ պատասխան:

ա) Ինչ պատճառաւ հասարակութիւնն անուանում է մատուռը Ս. Եղիշէ, իսկ արձանագրութիւնն՝ ս. Աւագ Նշան:

բ) Քանի որ մազրղուեցւոց բարբառն խառնուրդ է Խոյի եւ զոկերի լեզուներից, ինչպէս բնիկ տեղացի են համարում զիրենք եւ նախնեաց նախնիքները:

Ե. ԱՐԱՇ կամ ԷՐՄԱՆԻ-բազար գիւղ, շինուած դաշտի հիւսիսային կողման մօտ, Արջկան գետակի ձախ ափի վերայ, արքունի ճանապարհի մօտ, կից Արաշ Թրքաբնակ գիւղին: Միեւնոյն են օդն եւ կլիման եւ տեղական բերքերն, միայն նշանաւոր են գիւղիս եւ շրջակայից սեխն, ձմերուկն, սոխն, սխտորն, վարունկն եւ պատլիջան, տանձն, խնձորն եւ ընկուզն: Հողն կիսով չափ արքունի եւ կիսով չափ բէկական եւ աւելի արդիւնաւէտ: Բնակչաց բարբառն խառնուրդ է Արցախի, զոկերի եւ Խոյի բարբառներից. բայց ծերունիք վկայում են, թէ փոխադրուած են այստեղ Խալդան գիւղից, որի աւերակն հեռի չէ գիւղից:

Գիւղիս եկեղեցին է այժմ այն նշանաւոր հնութիւնն, որի մասին ասում է աւանդութիւնն, թէ հիմնուած է Եղիշ-առաքելից: 1830 թուականներում լուսահոգի Բաղդասար մետրապոլիտ Ջալալեանն հոգ տանելով հաւաքագրել տուած էր Արցախի, Շամախու եւ Շաքուայ վանքերից արձանագրութիւնները, որք տպագրուած են բազմաշխատ Շահխաթունեանցի Բ. հատ., եր. 356-382: Հաւաքագրողն Ուրեկայ տաճար է անուանում եկեղեցիս, հետեւելով Կաղանկատուացուն (եր. 9-10), որ գրում է, թէ Եղիշէ Առաքեալի մասունքներն գտնելուց յետոյ՝ Ուռեկան գիւղացի Ստեփաննոս անուն քահանայ ոմն Առաքելի գլուխը յափշտակելով փախաւ եւ տարաւ ամփոփեց իւր գիւղում: Տաճարիս շինութեան արձանագրութիւնն.[1]

«'Ի քահանայապետութեան Տէր Ստեփաննոսին (Աղուանից), զշինող եկեղեցւոյս զտէր Յովհաննէս յիշեցեք 'ի Քրիստոս Նաեւ զծնողսն եւ զեղբարն իւր ՉԻԸ. (1279) թուին»:

Գաւթի արձանագրութիւն կրող քարն թէեւ ընկած է իւր տեղից, սակայն պահուած է բարեբախտաբար, բայց խիստ դժուարաւ է կարդացւում խառն փորուած լինելու պատճառաւ: Կասկածելով, որ սխալ կը լինի մեր ընդօրինակութիւնն, վասն որոյ թողինք ուղիղ ընդօրինակողներին, այստեղ մէջ բերելով տպագրեալի օրինակը.

«Յաշխարհակալ տէրութեան Ապաղայ խանին եւ 'ի հայրապետութեան տէր Ստեփաննոսին. եւ 'ի պարոնութեան Նորադինին եւ Սրաջադինին եւ Գուրզադինին ես տէր Յովհաննէս շինեցի զգաւիթս յիշատակ ինձ եւ եղբարց եւ ծնողաց իմոց ՉԼԳ. (1284) թվին»:

Աւազանի որմի վերայ, գաւթում մի խաչարձանի վերայ քանդակուած է. «Խաչս Պարխաս Խուպիճանին»:

Եկեղեցին եւ գաւիթն շինուած են տաշուած չիչ քարով, սալկախներն ամբողջապէս հնադարեան խաչքարեր են, շարուած արտաքուստ որմերի վերին եզերքներով: Ամենայն ուրբաթ գիւղումս լինում է օրավաճառ:

Ծուխ 35[2], ար. 103, իգ. 74, ար. ծն. 8, իգ. 6, պսակ 4, ար. ննջ. 3, իգ. 3, երկար կեանք 70:

զ. ՆԵՄԻԹԱՊԱՏ գիւղ. մօտ գիւղին, ամենայն ինչ՝ միեւնոյն. բնակչաց լեզուն՝ Էրմանի-բազարի եւ միւս յիշեալ գիւղերի բարբառների նման՝ խառնուրդ Խաչենի եւ Զոկերի լեզուից: Եկեղեցին՝ Ս. Աստուածածին, վերնամասն՝ փայտաշէն: Ծուխ 69, ար. 222, իգ. 202, ար. ծն. 18, իգ. 16, պսակ 8, ար. ննջ. 8, իգ. 7, երկար կեանք 65-70 տարի:

1 Տե՛ս նաեւ Շահխաթ., նոյն հատ., եր. 378:

2 15-ն բնիկ, իսկ մնացեալն եկած Խալթանից:

ԱՂ-ԴԱՇ ԳԻՒՂԱՔԱՂԱՔ

Ընդհանրապէս մահմեդական են գիւղաքաղաքիս բնակիչներն, որ շինուած է Դուրկան գետակի աջ կողմում, Աղուանից դաշտի վերի կողման մօտ: Գիւղաքաղաքս համարուած է գաւառիս գաւառագլուխն, ուր կան հեռագրատուն, փոշտ, արքունի դատարան, գաւառապետ, բժիշկ, հիւանդանոց եւ օրավաճառ շուկայ, որ տեղի է ունենում ամէն կիւրակէ օրեր: Այգիներով եւ պարտէզներով ամբողջապէս ծածկուած է գիւղաքաղաքս, բայց ամռան ծանր է օդն, եւ անախորժ՝ գետաջուրն, վասն որոյ եւ անպակաս դողի եւ ջերմի հիւանդութիւնն: Այս տեղի օրավաճառն աւելի բազմամարդ է լինում, քան ամէն տեղի օրավաճառներն, զի կնտրոն լինելով խռնւում են ամէն կողմերից, մինչեւ անգամ Արցախի ստորին գաւառներից բազմաթիւ յաճախորդներ:

Տարուան երեք եղանակի արտադրած պտուղները եւ բերքերը կարելի է տեսնել այստեղ կոյտ-կոյտ դիզուած խանութների առաջ, որք են թութ, կեռաս, դամոն, տանձ, խնձոր, թուզ, խաղող, դեղձ, ծիրան, սեւկեւիլ, անուշ եւ քաղցամախց[1]*, նուռն, վարունկ, ձմերուկ, սեխ, պաթլիջան, արքայակաղին, ընկուզ, շագանակ, զղեար, խոռնիկ եւն. ցորեն, գարի, որիզ, բրինձ, ոսպ, լուբիա, մաշ, սիսեռն, ոլոռն, բակլայ, խաշխաշ, գազար, սոխ, սխտոր, գետնախնձոր, ճակնդեղ, բողկ: Բաց յայսցանէ նախիրներով՝ կով, երինջ, արջառ, եզն, գոմէշ, գոմշակով, հօտերով արու ոչխար եւ այծ, վերջապէս ձի, ջորի, աւանակ, ուղտ, գորդ, կարպետ, մափռաշ, խուրջին, մետաքսաթել, բամբակ, բուրդ, ուղտերբուրդ, սամուր, աղուէսենի, արջենի, գայլենի, ընձենի եւն: Այստեղ վաճառւում են եւ մեծ քանակութեամբ մատուտակ, որ տեղական բարբառով կոչւում է բիան: Ահա Աղուանից երկրի բերքերն են այս ամէնն:*

Գիւղաքաղաքումս բնակում են եւ շատ պանդուխտ հայեր՝ եկած Արցախից, Գանձակից, Շաքուից եւ Շամախուց, որք զբաղում են վաճառականութեամբ, առեւտրով, դերձակութեամբ, հիւսնութեամբ, որմնահիւսնութեամբ, սեղանաւորութեամբ, կօշկակարութեամբ, մանրավաճառութեամբ եւ պաշտօնական (արքունի) ծառայութեամբ: Հարկ է յայտնել, որ գիւղաքաղաքիս շէնքերի ամենապատուական մասն պատկանում է հայոց, մանաւանդ Շուշեցի Գանջնցեանց եղբարց, որք այստեղ կառուցած են երկյարկ (կրաշաղախ ցեխով եւ թրծեալ աղիւսով) ընդարձակ իջեւան, որի գետնայարկն ծառայում է իբր վաճառանոց եւ վերնայարկն՝ պատուաւոր անձանց բնակարան:

Հայք չունին եկեղեցի: Դեռ 2 տարի առաջ պ. Կարապետ Գանջնցեանցն մտադիր էր իւր սեպհական հողերից մի յարմար տեղի վերայ կառուցանել իւր ծախքով միջակ մեծութեամբ եկեղեցի եւ քահանայի համար սենեակներ, որպէսզի ապահովէր հոգեւոր հովուի դոյութիւնը: Անբախտաբար վաղահաս մահն խափանում է մտադրութիւնը, բայց ազգասէր հանգուցեալն մահից առաջ կտակում է 10 000 ր. իւր բարի նպատակը 'ի կատար ածելու:

Գաւառիս վերայ հաշուելու է եւ Գեօգ-չայ նոր քաղաքը, որի մասին գրած ենք կանխաւ:

Ի վերջոյ կարեւոր է յայտնել, որ այստեղ կան անգլիացի եւ յոյն ընկերութեանց անդամներ, որք գնում են մատուտակի արմատներ, իսկ Գանձակի, Լաքի եւ Ուշանի երկաթուղու կայարանների մօտ գործարաններ, որոց մէջ պատրաստելով մատուտակի հեղուկները, ղրկում են արտասահման:

ԱՒԵՈԱԿ ԲԵՐԴԱՏԵՂԻ

Լ.Գ. բերդն Աղուանից գտնւում է Դուրկան գետակի աջ կողմի վերայ, Բազ-դաղ սարի ընդհատուած տեղի դաշտաբերանում: Բաւական ընդարձակ է բերդիս ծաւալն, որ շինուած է եղել կրաշաղախ ցեխով եւ թրծեալ աղիւսով, որի հաստութիւնն է չորս մատնաչափ, լայնութիւնն՝ քլաչափ եւ երկարութիւնն՝ թզաչափ: Մերձաբնակ մահմեդականներն քանդած եւ տարած են պարիսպների աղիւսներն, բայց ամբողջապէս նշմարւում են հիմքերի հետքերն երեք կողմերից, բայց գետակի կողմից, քանզի Դուրկանն եւս քանդած եւ տարած է յորդած ժամանակներում իւր բաժինը: Բերդատեղուս տարածութեան վերայ նշմարւում են շատ շինութեանց հետքեր, վասն որոյ կարծում ենք, որ բերդաքաղաք եղած է այս: Բերդիս լեռնակողմերում կան շատ սպիտակ հողեր, որք ունին աղի նման ադիական զօրութիւն: Սուրբ եւ անսուրբ կենդանիներն կանաչ խոտով յագենալուց յետոյ՝ ամէն օր սովորաբար գալիս են լիզում եւ ուտում աղի հողերը: Գաւառիս շատ տեղերում, մանաւանդ բերդիս մերձակայ լեռներում առատ են աղանման հողեր, կենդանեաց կերած եւ լիզած տեղերն այնքան խոր ընկած են, ասես թէ բնական հողայրեր են: Հաւանական է երեւում մեզ, որ այս յատկութիւնից առնուած լինի Աղ-բերդ գաւառ անունս: Բայց թէ Աղ-բերդ եղած է եւ բերդիս անունն, չգիտենք հաւաստեաւ:

Մի քանի տարիներ առաջ մի քանի լեկզիներ փորում են բերդաքաղաքիս մէջ խազնաթէափա կոչուած բլուրը, հանում բաւական հին արծաթ դրամներ, դատարկ թողնում 2 կարասները, որոց մէջ եղած են դրամներն, եւ անհետանում: Բայց յայսցանէ մօտ անցեալում, Ղարախանեան Սարգիս բէկի եւ Հանգուցեալ Շոլկովնիկեանցի առուն փորելու ժամանակ, որ անցնում է բերդիս միջով, մշակ լեկզիներն գտնում են մի ահագին կարաս, լիքն թանձրացեալ գինով: Բայց առա՜նց կանխաւ իմաց տալու Սարգիս-բէկին, թափում են լեկզիներն թանձրացեալ նիւթը, որի պատճառաւ սաստիկ զայրանում է նոյն բէկն՝ լսելուց յետոյ:

Բերդիս ստորոտում կայ մի ծերունազարդ կաղամախի ծառ, որից փոքր-ինչ ներքեւ եւ՝ հայոց հանդուստարան, որ ծածկուած է փշալի թուփերով: Իսկ բերդիս արեւմտեան կողմում՝ արաբական հանդուստարան:

Լ.Դ. բերդն Աղուանից գտնւում է Արաշ եւ Նեմիթապատ գիւղերի մէջ: Հողեայ ամրոցս չունի ընդարձակ մեծութիւն, բայց ունի ամրութիւն: Շրջապատում փորուած են խիստ լայն եւ խորագոյն խրամներ եւ եղած հողերն դիզուած են խրամների ներսի եզերքներով, որով ստացած է ծովում բարձրացած կղզեկի դիրք: Կասկածելի ժամանակներում ջրով լցրած են խրամները, երեւի թէ ունեցած է եւ շարժական կամուրջ: Ազգի հնութիւնները սիրող հայ ոմն գնած է բերդս ոմն մահմեդականից, ուր հերկում եւ ցանում է ցորեն: Պատմում են, թէ ակոսած ժամանակներում գտնւում են սովորականից շատ հաստ, կարծր եւ կոպիտ կարասներ եւ խեցեղէն անօթներ:

Լ.Ե. ամրոցն Աղուանից, որ կոչւում է այժմ Շիլեան, գտնւում է Արաշից վերեւ, Արջկան գետակի ձախ կողմում, Շիլեան անուն թրքաբնակ գիւղի մօտ: Ամրոցս ամէն մասամբ յար եւ նման է Լ.Դ. բերդին. տարբերութիւնն եւ եթ այն է, որ երկար ժամանակ ակոսուելով՝ լցուած են խրամներն եւ վերստին հաւասարւում է եզերքների հողերի հարթութեանց:

Ահաւասիկ այսչափ են գաւառիս հայ բնակիչներն: Բայց եթէ ամբողջ գաւառիս տարածութիւնը բաժանենք 10 մաս, հողի 1 մասի բնակիչք հայ են միայն, իսկ 9 մասինն՝ մահմեդական:

ՔԱՂԱՂԱՇՏ ԳԱՒԱՌ

Գաւառս, որ ընկած է Աղ-սու եւ Կոկիսոն գետակների, դաշտաբերանի եւ Կուր գետի մէջ, ստացած է Քաղա, Քաղադաշտ, Բաղանատ, այժմ՝ Բարկիւշատ անունը: Բացի երկաթուղու կայարաններում եղած պանդուխտ եւ մասնաւոր հայերից, ամենեւին չկան գաւառումս հայ բնակիչներ: Ընդարձակ գաւառս ծայրից ծայր լի է մահմեդական բնակիչներով:

Գաւառիս բերդերն

Լ.Զ. բերդն Աղուանից, որ գտնւում է երկաթուղու Ուշար կոչուած կայարանի մօտ, շինուած է տորոնագոյն տաշուած քարով եւ կրաշաղախ ցեխով: Ամրոցս շատ մեծ չէ, բայց ունի գեղեցիկ եւ ամուր շինուածք, ինչպէս յայտնի է արտաքին երեւոյթներից: Բայց հետզհետէ քանդում եւ տանում են քարերից:

1 Բառ գաւառական, որ նշանակում է բաղադրեալ քաղցրից եւ թթուից, տաճկերէն՝ մարխոշ:

Լէ. բերդն Աղուանից, կոչւում է Խազնա-դաղ[1] (Գանձասար), գտնւում է Աղ-սու աւանի արեւմտեան կողմում: Գարդման գետակն, ընդունելով իւր աջ ու ձախ կողմերից զանազան վտակներ, այստեղ բաժանուած է 2 ճիւղի, որք հոսում են բերդիս արեւելեան եւ արեւմտեան եզերքներով եւ կրկին միանում բերդիս ստորոտում: Կատարեալ կղզի ձեւացած է ամրոցս՝ Աղուանից դաշտի հիւսիսային վերջացած տեղում: Դարերի ընթացքում գետակս յորդած ժամանակ, փոխելով իւր գնացքը, արեւելեան կողմից բացած է ուրիշ խորագոյն խրամներ եւս, այնպէս որ երեւում են 4 կղզի ձեւացած բերդեր: Արեւելեան կողմից համարելով՝ 4-ն է Խազնա-Դաղն, որի երկու կողմերով այժմ հոսում է սրընթաց գետակն: Բերդիս երկարութիւնն ընկած է գետառաջների ընթացքի համեմատ, իսկ լայնութիւնն՝ գետաբաժնից գետաբաժին: Ջրերի դարաւոր հոսանքներն, հետզհետէ խորացնելով յատակները, բերդի շրջապատը ձեւացրած են բարձրագոյն վիհեր: Բերդի միջից տեղ-տեղ բացուած են դէպի ջրերն նեքնուղիներ. երեւի թէ ջուր առնելու, զի ջուր չկայ բերդու.[2]:

Բոլորովին հարթ է բերդիս մակերեւոյթն, որը այժմ հերկում են մահմեդականներն: Բայց տակաւին նշմարւում են բնակարանների ստորերկրեայ մասերն, որք շինուած են գետաքարով եւ եփած հաստ եւ մեծ-մեծ աղիւսով: Մի քանի տարիներ առաջ մի քանի մահմեդականներ բերդիցս գտած են շատ արծաթ հին դրամներ:

Բերդիցս շատ հեռի չէ այն հողաբերդն, որի մէջ Նադր-Շահն բնակեցրած էր հայերը Շամախին կործանելուց յետոյ, որի մասին գրած ենք արդէն Շամախի քաղաքի նկարագրութեան մէջ:

ՀԵՋԱՐ ԳԱՒԱՌ

Գաւառս, որ ընկած է Փիր-սհաթ եւ Աղ-սու գետակների, դաշտաբերանի եւ Կուր գետի մէջ, ստացած է Հեջար, Համբասի, Հեճարի, իսկ այժմ՝ Ղոշունի կամ Քիւռ-Դամիր անունները: Գաւառս, որ կազմում է Աղուանից դաշտի ստորին, բայց ընդարձակ մասը, ունի միայն մահմեդական բնակիչներ: Միւնոյն են Քարադաշտ եւ Հեջար գաւառներիս տեղական բերքերն, ինչ որ էին Արաշ գաւառինն: Բայց տարբեր են երեքի օդն եւ կլիման եւ ամռան եղանակներում, այս Հեջարի գաւառս աւելի տաք է Քարադաշտից եւ Քարադաշտն՝ Արաշից:

Զորքոտան ընտանի անասնոց նկատմամբ ամենահարուստ են ստորին գաւառներս: Բնակիչներն իւրեանց անասուններով միասին շարժական են, ամէն տարի շարունակ չւում են ձմեռանոցից ամառանոց եւ ամառանոցից ձմեռանոց: Ապրիլի կիսից չւում են Կովկասեան լեռներն, վայելում լեռնասուն օդերը եւ պատուական ջրերը՝ ազատ ամռան արեգակի հրակեզ ներգործութիւնից: Իսկ ամէն սեպտեմբեր ամսի իջնում են ձմեռանոցներն եւ ապրում հանգիստ, զի դաշտս դրեթէ ազատ է ձմռան խստութիւնից: Ամայի լեռներն պատրաստում են կոյս խոտեր անասնոց համար ամռան եղանակներում, իսկ դաշտերն, որ մնում են անմարդաբնակ, ուռճանում են խոտերով 'ի դարման անասնոց եւ փետրուար ամսից սկսեալ հասցնում նոր խոտ: Այս պատճառաւ անհամեմատ առաւելութեամբ աճում են գաւառներիս սուրբ եւ անսուրբ անասուններն քան միւս բոլոր գաւառներինն:

Ամռան դաշտումս լինում են շատ թունաւոր օձեր, կարիճներ, քառասնոտանիներ եւ մորմեր, մանաւանդ Հեջար գաւառումս: Շատ անգամ մեռնում են մարդիկ սոյն սողունների հարուածներից:

Դաշտիս ամենազուարճալի ժամանակն են փետրուար եւ մարտ ամիսներն: Ամէն կողմերում արածում, խայտում, ոստոստում, կուում են տաւարների եւ գոմէշների, որթերի եւ մոգիների նախիրներն, ոչխարների եւ այծերի, գառների եւ ուլերի հօտերն, ձիերի, աւանակների եւ քուռակների ջոկերն, ուղտերի եւ կոզակների երամակներն:

1 Ասում են աւանդաբար, թէ բերդումս պահուած են Աղուանից թագաւորների եւ իշխանների գանձն:

ՇԱՔՈՒԱՅ ԳԱՒԱՌՆԵՐԻ ՏԱՃԿԱՑԵԱԼ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

Աւանդաբար պատմում են Կապաղակ եւ Շաքի գաւառների բնակիչներն թէ՛ հայ եւ թէ՛ մահմեդական. «Ղութղաշէնում մի ժամանակ լինում է մի շատ հարուստ թուրք մելիք, որ յետոյ իւր եղբօր հետ սպանւում է Շամախու Հիւսէին-խանից՝ պարսից Շահի հրամանով: Սպանուած մելիքի որդին մելիքութիւնը ստանում է Շահից եւ նստում իւր հօր տեղն Ղութղաշէնում. բայց մի քանի տարուց վերջն այս մելիքն էլ է սպանւում Շամախու նոյն խանի ձեռքով: Որովհետեւ սուննու է լինում մելիքների ցեղն, այն պատճառաւ վերջին սպանուած մելիքի եղբայրներն փախչում են Դաղստան, բերում շատ լազկիներ (լեկզի), գրաւում Շամախին, բռնում եւ սպանում իւրեանց հայր եւ եղբայր մելիքները սպանող խանը, լուծում արեանց վրէժը, աւարում եւ կողոպտում Շամախին եւ ապա քաշւում, գնում Դաղստան[1]:

«Մի քանի ժամանակից յետոյ՝ Դաղստանից գալիս է Ղութղաշէն Հաճի-Զալապի[2] անուն ոմն, որ լինում է Դաղստան գնացած երկու մելիքազուն եղբարց մէկի որդին եւ բերած լազկիներով կրկին տէր լինում իւր պապենական եւ հայրական կալուածներին: Ապա մի քանի տարուց յետոյ սկսում է Հաճի-Զալապին գործ դնել բռնութիւններ լազկիների (լեկզի) ուժով, այս է՝ մարդասպանութիւն, աւարառութիւն, տանջանք, կախաղան եւ ամէն տեսակ չարութեան հնարքներ: Այս միջոցներով դարձնում է մահմեդական կրօնին հայադաւան Վանտամ, Ղութղաշէն, Զարղուն, Բում, Խաչմաս, Փատառ, Վարդանլու, Էրմանիտ, Մուխանց, Օրաբան, Քունգիւտ, Պտէզ, Զայգիտ, Քիշ (Գիս), Կոխմուխ, Մալղ[3] եւն. գիւղաքաղաքների, աւանների եւ գիւղերի հայ քրիստոնեայ բնակիչները[4]»:

Հետաքրքիր ընթերցողաց մի գաղափար մատակարարելու նպատակաւ զետեղում ենք այստեղ տաճկացեալ հայոց այժմեան ծխաթիւը, բայց ոչ յօժարութեամբ, այլ վշտալի սրտով եւ տրխրալի գրչով: Զետեղում ենք ոչ ամբողջը, այլ գլխաւորները:

Խաչ-մաս գիւղաքաղաքում		1004 ծուխ
Վանտամ	»	766 »
Փատառ	»	680 »
Ղութղաշէն	»	532 »
Բում աւանում	»	416 »
Թիքեանլու	»	231 »

1 Աւանդութեանս յար եւ նմանը պատմում է եւ Աղուանից Եսայի կաթողիկոսն (Ե. գլխում)՝ նշանակելով եղելութեանցս ժամանակակէտ ՌՃԿ.-ՌՃՀԱ. (1711-1722):

2 Ցայտնի չէ, թէ ո՞ր աղբիւրից առնելով Ս. եպս. Զալալեանցն գրած է. «Պատմի վասն բնակչաց գաւառիս (Կապաղակիս) թէ հայազգի ոմն Հաճի-Զալապի եւ հայր նորա Ղարա Քեշիշ ընկալեալ զօրէնս մահմետի եւն.: Վերի աւանդութեամբ եւ կաթուղիկոսի պատմութեամբ արդէն ուղղում է Զալալեանցի սխալն:

3 Բարեմիտ ընթերցողաց ուշադրութիւնը հրաւիրում ենք հետեւեալ հայկական տեղանունաց վերայ.
Վան-տամ– Վանտամ, իշեւան, բնակարան տալ.
Ղութղաշէն– Խութաշէն (հին Ղութղաշէնն շինուած է Խութի վերայ).
Խաչ-մաս– մասունք կրող խաչ.
Վարդանլու– Վարդանի գիւղ.
Էրմանիտ– Հայկաշէն կամ հայի գիւղ.
Մուխ-անց– մուխն անցած.
Օրաբան– Աւուր խօսք կամ օրուան գործ.
Պտէզ– Պարտէզ.
Քուն-գիւտ– Քունը գտնող.
Մալղ– Մալուխ.
Կոխ-մուխ– մուխը կոխել ոտքով.
Քուրմ-ուղխ– բազմութիւն քրմաց կամ սանտուխ քրմաց:
Այս ամէնն գտնւում են Կապաղակ եւ Շաքի գաւառներում:

4 Մեծ-Սոկոլոլուի եկեղեցու մի արձանագրութիւնն Հաճի-Զալապու բռնութեանց ժամանակի սկիզբը նշանակած է Հայոց ՌՄ. (1751) թիւը:

Զայզիտ	»		461 »
Զարաղան (Զարդուն) եւ շրջակայքում			262 »
Նովուր-Ղշլաղ գիւղում		եւ »	200 »
Էրմանիտ	»	եւ »	311 »
Վարդանլու	»	եւ »	260 »
Մուխանց	»	եւ »	261 »
Թուրք-Օրաբան	»		150 »
Բաշ-Բունգիւտ	»		203 »
Ղշլաղ-Բունգիւտ	»		171 »
Պտէղ	»		150 »
Գիս եւ շրջակայ	»		330 »
Կոխմուխ	»		200 »
Թալաստանում եւ շրջակ. (Գեօգ-չայ գաւառ)			5000 »
Խալխալում		եւ »	1000 »
Ղում գիւղում		եւ »	446 »
Մալզ գիւղում		եւ »	111 »
Թալա	»	եւ »	200 »
Բաշ-Կեօնուկ աւանում			652 »
Քիւքեալ եւ շրջակայ գիւղերում			200 »
Արաշ եւ	»	»	504 »
Ղասալա եւ	»	»	250 »
Մարսան, Ջուլու եւ Կեօրազլար			218 »
Աղջա-Ղալա եւ իւր շրջակայ գիւղերում			311 »
		Ընդամէնն ծուխ	15480 ծուխ

Թէպէտ մահմեդականութիւնն ճգնած է անհետացնել իւր միջից հայադաւան նշանների հետքերը, այսու ամենայնիւ դեռ ցայսօր կան այդ բոլոր գիւղաքաղաքներում, աւաններում եւ գիւղերում կամ մօտերքում եկեղեցիների աւերակներ, հանդուսարաններ, խաչարձաններ եւ արձանագրութիւն կրող տապանաքարեր կամ սոցա բեկորներ: Մինչեւ ցայսօր գիւղաքաղաքներից, աւաններից եւ գիւղերից շատերն պահպանած են իւրեանց հայկական անունները: Տակաւին մինչեւ ցայսօր հայ մահմեդականների մէջ լսւում են Կարապետ օղլը, Մարտիրոս օղլը, Գիւղի ուշաղը (Գրիգորեանց ընտանիքն), Թորոսն Թուռնը, Բաղդասար կիլ, Թիւնիլար (Յարութիւնեանք), Խաչատուր բաղը, Աւանէս Թոռընլարը, Զանը կիլ (Զանազանենց ընտանիքն, Ուսէփ[1] օղլը (Յովսէփ) եւն, եւն: Տակաւին պահպանած է հայ-մահմեդականն իւր հայկական ջերմեռանդութիւնը –որոշեալ ուխտագնացութեան օրերում հաւատով յաճախել ուխտատեղիներն, սիրով համբուրել խաչքարերը եւ յուսով վառել մոմեր եւ աղօթել սրտագին: Արդէն սովորական է կանանց խաչակնքել նոր քնացրած երեխայոց, նոր հունցած խմորների եւ կրակից նոր վար առնուած կերակուրների վերայ: Բաց յայսցանէ ամենուրեք նշմարում են թէ՛ արականաց եւ թէ՛ իգականաց վերայ հայկական տիպեր եւ հայկական պատկերներ, հայկական արտասանութիւններ եւ հայկական հնչիւններ, որք բնաւ չեն նշմարւում բուն մահմեդականաց վերայ:

Կարեւոր տեղեկութիւնք

ՀՈՂ. ընդհանրապէս գաճային են Աղուանից դաշտի եւ Վատնեան դաշտի հողերն, որք են մոխրագոյն, պլինդ, ջրարբի եւ բազմարդիւն: Ջրարբի են նաեւ Դարբանդի, Ճղբաց, Լփնաց, Բագուի, Շամախու, Շաքուայ, Կախաւանի, Ճառի եւ Բազասականի գաւառների հովիտներն: Սակայն Կապաղակ գաւառի դաշտակի հողն, որ ունի գլխովին տարբեր պտուղներ եւ տարբեր ազնիւ բերքեր, երկնագոյն է, կամ ունի կանաչ եւ բաց կապոյտ գոյներից բաղադրուած մի անբացատրելի գոյն: Իսկ մեծաւ մասամբ տորոնագոյն փխրուն եւ անջրդի են Դարբանդի, Շամախու, Գարդմանի եւ Կոկիսոնի լեռնային գաւառների հողերն, այսու ամենայնիւ՝ հացաւէտ եւ այդ եւէտ: Բոզ-Դաղի վերայ ընկած շատ գիւղերի ջրերն հազիւ թէ բաւականանում են մարդոց խմելու, մանաւանդ ամռան եղանակներում անասուններն կա՛մ բոլորովին մնում են ծարաւ եւ կա՛մ դնում են ջուր խմել հեռաւոր գետերից: Սակայն նշանաւոր են այս անջրդի գաւառների գինիներն աւելի, քան ջրարբի դաշտերինն: Բաց մոխրագոյն, փխրուն եւ անջրդի են Հողի եւ Խենի գաւառների դաշտային հողերն, իսկ երկաթագոյն՝ լեռնային հողերն եւ միանգամայն անջրդի երկու տեսակ հողերն եւս, բայց հացաւէտ: Անօգուտ ապառաժներ են Լփնաց երկրի լեռնավայրերի մեծ մասն եւ անպէտք հող՝ Բոզ-Դաղի հարաւային ամբողջ լեռնաշղթան:

ՈՐԹ. բացի Դարբանդի եւ Բագուի որթերից, դաշտային որթերն առհասարակ ծառերի վերայ են, իսկ լեռնային խաղողներն ընդհանրապէս առանց ծառի են, միայն թէ ամէն տարի մարտ ամսում յապաւում են որթերի ծայրերը եւ կապում մարդաչափ բարձրութեամբ յենարանների, որ կոչւում են սարի: Աւելի բարձր արժէք ունի Շամախու լեռնային գաւառների գինին, քան դաշտայիններն:

ՋՈՒՐ. բացի Կուր գետից, որ հոսում է ապարդիւն, մնացեալ բոլոր գետերն եւ գետակներն օգտակար են մանաւանդ դաշտարնակ հասարակութեան: Ամէն գետակներից եւ վտակներից վերցրած են առուներով ջուր, որով ջրւում են բոլոր ցանքսերն, այգիներն, պարտէզներն եւ բանջարանոցներն, բնակիչներն եւ անասուններն: Գետերն եւ գետակներն գրեթէ միայն յորդած ժամանակ են թափւում ծովի եւ Կուր գետի մէջ, իսկ միւս ժամանակներում անջրդի են գետերի եւ գետակների հեղեղատներն, զի հոսում են միայն առուներով: Երաշտ տարիներում տեղի են ունենում կռիւներ ջրաբաժանման համար:

ՑՈՐԵՆ. դաշտային հողերն համարեա թէ մի ցորենը աճեցնում են 45-60 ըստ տեղւոյն, մինչդեռ լեռնային հողերն՝ 15-30 ըստ տեղւոյն: Միայն Հողի գաւառի միջին մասն աճեցնում է 60-100 ըստ տարւոյն (երբ կանոնաւոր իջնում են անձրեւներն 'ի պահանջել հարկին): Հարկ է յայտնել, որ աւելի համով, աճեցնող եւ սննդարար են լեռնային ցորեններն, քան դաշտայիններն. իսկ դաշտերի՝ բրինձն, սեխն եւ ձմերուկն, քան լեռնայինն: Դարբանդի եւ Ղուբայի հողերն աւելի արդիւնաւորում են տորոն ներկը, որ ընկած է այժմ:

ՄՆԱՑՈՐԴ ՑԵՂԵՐ. իւրաքանչիւր Աղուանից երկիրն արշաւող օտար տէրութիւն թողած է այստեղ իւր ցեղից մնացորդ: Պարսիկներն թողած են պարսիկ ժողովուրդ, որք բնակում են թէ՛ բոլոր քաղաքներում եւ թէ՛ դաշտային գաւառներում:

Արաբների մնացորդներն բնակում են միայն Քաղադաշտ եւ ստորին գաւառներում եւ Լփնաց երկրի Դաւաչի գետաձորում:

Թաթարների մնացորդներն բնակում են Ճառի եւ Կախաւանի կողմերում:

Օսմանցւոց մնացորդներն բնակում են Բագու, Շամախի եւ Շաքի քաղաքներում եւ դաշտային գաւառներում:

Լեկզիների մնացորդներն բնակում են Կովկասեան մեծ լեռնաշղթայի հարաւային լանջերի վերայ՝ Ճառից սկսեալ մինչեւ Կոկիսոն գետակի ակունքներն:

Ռուսաց աղանդաւորներն, որք ընդհանուր անուամբ կոչւում են մալական, բնակում են միայն Դարբանդի եւ Շամախու գաւառներում, որոց մասին գրած ենք արդէն:

ԲԱՐԲԱՌՆԵՐ. իւրեանց բարբառները ցարդ պահպանած են լեկզիներն, թաթարներ եւ մալականներն: Արաբներն, պարսիկներն եւ օսմանցիներն իւրեանց լեզուները եւ հնչիւնները փոխած են կոշտահնչիւն թուրքերէնի:

Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Շաքուայ եւ Ճառի եւ սոցա բոլոր գաւառների (բացի Կապաղակից) հայերէն ընդհանուր տիրող բարբառն է Արցախի այժմեան գործածական

1 Ինչպէս վկայում են ականատեսներն եւ ականջալուրները. «Դեռ անցեալ տարի (1890) վախճանեցաւ Գիսի տաճկացեալ հայերից 115 ամեայ զառամեալ Յովսէփն, որ ականատես է եղել Հաճի-Զալապա հալածանքներին եւ նոյն ինքն տասնամեայ Յովսէփն, ստիպեալ մահուան երկիւղից իւր ծնողաց հետ ակամայ ընդունել է մահմեդականութիւնը»: Այս պատմութիւնից երեւում է, որ Հաճի-Զալապա հալածանքն տեւած է 1751-1783 թիւն:

լեզուն, քանզի, ինչպէս գիտենք կանխաւ, բնակչաց ամենամեծ մասն գաղթած եւ տեղափոխուած են Արցախից: Սպահանից, Խոյից եւ Թեհրանից երկիրս գաղթողներն եւս պահպանած են իւրեանց նախկին հայրենեաց գաւառական հայերէն բարբառը: Բնիկ շամախեցւոց բարբառն թէեւ տարբեր է Արցախի բարբառից, այսու ամենայնիւ հետզհետէ առաջինն տեղի է տալիս երկրորդին:

ՀԱԳՈՒՍՏ. արականաց հագուստն առհասարակ 2 տեսակ է՝ տեղական եւ Եւրոպական, որք արդէն ծանօթ են ամէն տեղ: 4 տեսակ է կանանց հագուստն:

Ա. Արցախի կանացի զգեստի ձեւն, որը նոյնութեամբ պահած են Դարբանդ, Ղուբա, Բագու, Ճառ քաղաքների մէջ եւ Հողի ու Խենի գաւառներում բնակող արցախեցի ընտանիքներն: Պահած են նաեւ գլուխների շինուածքի ձեւը:

Բ. Իւրեանց երկրից բերած զգեստների ձեւերը պահած են նաեւ խոյեցիք եւ սպահանցիք եւ թէհրանցիք, ինչպէս են Ղայա-բաշու, Ջափարաւատի, Կարմախանու, Մատրասայի բնակիչներն:

Գ. Թիֆլիսի կանացի զգեստի եւ գլխի զարդերի ձեւերն, զորս գործ են ածում միայն Շուշուց վերոյիշեալ քաղաքներն տեղափոխեալ ընտանիքներն:

Դ. Շամախու եւ իւր գաւառների ընտանիքներն բոլորովին հագնում են թրքական հագուստներ եւ գործածում թրքական զարդեր, այնպէս որ դժուարին է Շամախում եւ գաւառներում որոշել հայ ընտանիքը թուրք ընտանիքից: Երանի՜ թէ մեր մայրերն եւ քոյրերն զգային, որ պատիւ չէ բերում հայութեան այդ թրքական զգեստն եւ գէթ թողնէին այսուհետեւ այդ հեթանոսական հագուստները:

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ. միատեսակ են Ղուբայի, Շամախու եւ Շաքուայ բոլոր գաւառների հիւրասենեակներն: Վերի պատերում շինուած են մի-մի վառարան, որ բուխարի է կոչւում տեղացիներից: Միւս պատերի մէջ շինուած են ծալքատեղ, որոց մէջ դարսուած են հիւրերի համար առանձնապէս պատրաստուած անկողիններն, պահարաններ, որոց մէջ զետեղուած են պնակներ, գդալներ, աղամաններ եւն: Իսկ չորս պատերի վերի կողմանց մօտ, կէս կանգուն բարձրութեամբ եւ լայնութեամբ քիւեր, որոց վերայ շարուած են շիշեր, փարչեր, բաժակներ, նուռն, սեւկեւիլ, տանձ եւ խնձոր: Իսկ բնակչաց բնակարաններն շինուած են հետեւեալ ձեւերով. չորս պատերն կա՛մ քարուկիր են եւ կա՛մ հիմքերն չոր քարով եւ սոցա վերայ անեփ աղիւսով, գերաններով. իսկ տանիքներն ծածկուած հողով: Բայց վառարաններն աւելի մեծ-մեծ, որոց մէջ եփում են կերակուրները: Շատ գիւղերում հարուստներն շինած են քաղաքի նման տներ: Կապաղակ գաւառի գիւղաքաղաքների եւ գիւղերի տանց եւ սենեակաց տանիքներն ծածկուած են եղէգներով: Բայց հարկ է յայտնել, որ շատ անդամ պատահում են հրդեհներ: Արցախից գաղթած հայերն պահպանած են իւրեանց պապենական գետնափոր, քառասիւն եւ երդկաւոր տների ձեւերը: Բայց հիւրասենեակներն ունին վերեւի նկարագրած ձեւը:

ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ. Հայկական կերակուրներն պահուած են ամէն տեղ: Ուտիք օրերում եփում են ձու, ձուածեղ, հաւ, վառեկ, միս ճարուած միջոցներում խաշու, խճողակ, կլոլակ, սեւ եւ կարմիր պաթլջանով, պամիայով, սոխով, լուբիայով, բակլայով, մաշով, սերւկեւիլով, մսախառն կերակուրներ, կորկոտ (մսախառն ձաւար), բանջար, ոտ եւ գլուխ (խաշ), թոքերով եւ դդմով բորանի, տհալ (ղաւուրմայով), խորոված, ձուկն (եփած կամ խորոված), խաշիլ, շփոթ, խաւիծ, փլաւ, շիլա, կաթնաւ, թանաւ, չորթանաւ եւն: Պահոց օրերում կերակուրներն եփում են կանաչ կամ չոր ընդեղէնով, կանաչիներով, բրնձով, ձաւարով. օր. չոր կամ կանաչ լուբիայով. բակլայով, մաշով, դդմով, խաշխաշով, ճակնդեղով, բազկով եւն.: Ուտեաց օրերում սովորական են սեր, կաթն, մածուն, պանիր, կարագ, մեղր եւ կարագ խառն (շատ տեղերում):

ՀԱՑԵՐՆ. մի քանի տեսակ են:

Ա. Հասարակ թոնրահացն գործածական է առհասարակ գառառներով, նոյնպէս շրեշով կամ բանջարեղէններով հաց, որ ասւում է տեղացիներից կոտապ: Բարեկենդանի, հարսանեաց եւ մեռելոցի օրերում գաթայ, եղահունց, կաթնահունց, ձուերես, լաւաշ, թերթերուտ, բարակ (սաճով եուխա), ականջ, բլիթ եւն.:

Բ. Քաղաքներում պատրաստում են լաւաշ եւ պռող (կլոր հաց թոնրի) եւ զանազան ձեւերով եւ մեծութեամբ հացեր, որք պատրաստւում են փռան մէջ: Սակայն հարկ է յայտնել, որ քաղաքներում աւելի մաքուր եւ համով են պատրաստում գաթան, եղահունցը, կաթնահունցը եւն.:

Գ. Ամառանոց եւ ձմեռանոց երթեւեկողներն գրեթէ տարուան մեծ մասում ուտում են անխմոր, բարակ հաց, որը սաճով են եփում եւ անուանում են եուխա:

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ. արդէն յայտնի են քաղաքների հիւանդութեանց տեսակներն, վասն որոյ մենք խօսում ենք միայն գաւառների հիւանդութեանց մասին, որք են գլխաւորաբար.

Ա. Ծաղիկ կոչուած փոխադրական հիւանդութիւն, որ շատ զոհեր է տանում մանուկներից: Ծաղիկներն պատուաստուածներից հազիւ թէ 100-ից զոհ է գնում միայն 5-8-ն: Շատ աղքատ կամ ժլատ ծնողներ, խնայելով մի քանի կոպէկ տալ պատուաստի, պատճառ են լինում իւրեանց զաւակաց կորստեան: Հետեւապէս այս անհոգութեան վերադրելու է այն միակ եղած պատճառը, երբ տեսնում ենք օդն, կլիման եւ ջուրն պատուական եղած գիւղերում չափազանց է ննջեցնող թիւն:

Բ. Կարմրուկ կոչուած փոխադրական հիւանդութիւնն, որ նոյնպէս հնձում է մանկաց կեանքը: Կան հոգատար մայրեր, որ գիշեր-ցերեկ տաքից, ցրտից եւ վնասակար կերակուրներից պահպանելով. հիւանդ մանուկները ազատում են մահուան ճանկերից: Բայց կան անփորձ եւ անհոգատար մայրեր, որք չպահպանելով մատնում են մահուան, մանաւանդ աւելի շատերն անծանօթ են առողջապահական պայմաններին:

Գ. Պոկուռեցք հիւանդութիւն (պարանոցի հիւանդութիւն ներսի կամ դրսի կողմից), որը բժշկում են ծնողք կամ պառաւ կանայք կաթ խմացնելով եւ արտաքուստ եղալաւաշ դնելով: Բայց համարեա թէ 100-ից վախճանւում է 20 երեխայ գիւղական բժշկութեամբ:

Դ. Խռոկ (պոկուռեցքի սաստիկ տեսակն, որ պատճառում է շնչարգելութիւն, խզում է ձայնը), որ պատահում է ըստ մեծի մասին մանկանց, բժշկում են այսպէս. իսկոյն հրաւիրում են սափրիչը, որ արձիլում է գլխի առաջի կողմը, ճակատի ուղղութեամբ եւ ածելիով մի քանի տեղերից կոտորում ածիլած տեղի մորթը: Արիւնն վազելից յետոյ կանոնաւորում է շնչառութիւնն, եւ բացւում խզուած ձայնն, եւ վերջապէս ազատւում է հիւանդն:

Ե. Խեղդելահազ խեղդող հազ, որով տղայք այնքան անընդհատ եւ երկարատեւ հազում են, մինչեւ անդամ ընկնում են թուլացեալ: Հիւանդութեանս առաջը առնում են տեղացիք եփած սեւկեւիլ եւ խնձոր եւ փթրուկ ապուր[1] տալով մինչեւ լաւանալը:

Մեծերի եւ փոքրերի պատահող ցաւեր

Զ. Եաթալաղ տիֆ. գաւառացիք մաքառում են առնել հիւանդութեանս առաջը՝ հոնի թթուով ապուր խմցնելով եւ քրտնցնելով: Բայց չիմանալով հիւանդութեան փոխադրական զօրութիւնը՝ շատ անդամ վարակւում են տան ամբողջ անդամներն: Պատահած է այնպէս տուն, որ դատարկ մնացած է վախճանեալ ամբողջ գերդաստանից՝ փակուած դռնով:

Է. Սաթլջամ, որ առաջանում է սաստիկ մրսելուց: Այս տեսակ հիւանդներից գիւղացի սափրիչներն բժշկում են 100-ից 95-ը՝ հիւանդի աջ ձեռնի երակից չափաւոր արիւն առնելով եւ հոնի թթուով ապուր խմեցնելով եւ քրտնցնելով:

Ը. Փորահարինք (լուծողութիւն). երբ լինում է երկարատեւ, նստեցնում են հիւանդը տաքացրած աղիւսի վերայ կամ տաք ջրի վերայ եւ մի քանի օրեր խմեցնում կոճարանքով[2] չայ եւ տալիս պինդ խաշած ձու:

Թ. Փորացաւ. հալածում են ցաւը՝ օղի եւ կոճարանքի չայ տալով եւ ցաւելիս տեղին տաք-տաք մոխիր կապելով:

Ժ. Գլխացաւ. եթէ թեթեւ է, բժշկում են՝ յաճախակի բարկ քացախով շփելով կամ քացախաթաթախ թաշկինակ կապելով գլխին: Իսկ եթէ ծանր է, նստոյ տեղին 10-20 տզրուկ կպցնելով:

1 Ցուրտ ջրով շաղախում են ցորենի ալիւրը, մանրում սիսեռի մեծութեամբ, եփում ջրով եւ կերցնում հազողներին:
2 Նարին ծեծուած եւ միախառնուած հիլ, միխակ եւ կինամոն, զորս երկար եռացնելով տալիս են լուծողին:

ԺԱ. Աչքացաւ. բժշկում են՝ ոչխարի սպիտակ թոքի կտոր դնելով կամ աղջկամօր (աղջիկ ծնած մօր) կաթը բամբակով աչերի վերայ կապելով:

ԺԲ. Ականջացաւ[1]. դժուարաւ են առնում ցաւիս առաջը. այսու ամենայնիւ գործ են դնում բժշկութեան սոյն միջոցը: Նախ դնում են եղալաւաշ[2] եւ օրական փոխում 4 անգամ: Ապա երբ հասնում է ականջի ներսի ուռեցքն եւ պատռւում, այնուհետեւ դնում են ականջի մէջ ակնամոմ[3], որ հետզհետէ դուրս ծծելով մաքրում է թարախը կամ շարաւը եւ առողջացնում:

ԺԳ. Ատամնացաւ. շատ անգամ յաջողում են կտրել ցաւը այս դեղերով. կամ ածելիով կոտորել են տալիս լնդերքը եւ կամ կաղնի ծառի կեղեւ, շալեղ, ցամաքաղաղձ եւ ջուր միախառնելով եփում են. երբ մնում է եփուած ջրի կէս բաժինն, ապա քամում են, որի մէջ լցնում կէս թէյի բաժակ բարկ քացախ, որով եւ քանիցս ողողում բերանը եւ թափում: Վերջին դեղն է աքցանն:

ԺԴ. Մէջքացաւ. բժշկում են մէջկի վերայ պուլիկ փակցնելով: Պուլիկն, հաջամաթի նման որպէս թէ վնասակար արիւնները կենտրոնացնում է բլրակ ձեւացած տեղում, որը կոտորում են կա՛մ ածելիով, կա՛մ կտրիչ մեքենայով. ապա 2-3 անգամ նոյն փակցնելով պուլիկը՝ հանում են վատ արիւնները եւ բժշկում:

ԺԵ. Պալար (չիբան). սկզբում կապում են ուռեցքի վերայ մածնալաւաշ[4], երբ հասնում է ուռեցքն, ապա կապում են վերան կամ մոշատերեւ (մորենու տերեւ) եւ կամ տախտակոռնը կոչուած վայրի բոյսի տերեւ (տերեւներն կարճ, լայն եւ կոնաձեւ են եւ ունին ձեռնաթաթի երեսի ջիլերի նման ջիլեր: Տերեւների միջից բարձրանում է քլաչափից մինչեւ թզաչափ մի բարակ ձողուն) եւ փոփոխում յաճախակի նոր տերեւներ, որովք բացւում է ուռեցքի բերանն, եւ հետզհետէ մաքրուելով բժշկւում:

ԺԶ. Քամի (յոդացաւ). բժշկում են գաւառացիք՝ ջերմուկների ջրերում լողացնելով:

ԺԷ. Մայասլ. այս ցաւը դժուարաւ է կարողանում բժշկել գաւառացին, միայն թեթեւացնում է ամէն տարի 1-2 անգամ տզրուկ փակցնելով նստոտեղին:

ԺԸ. Մատնաշոշ (տաճկ. դոլամա). բժշկում են շարունակ դմակի ճարպ կապելով ցաւագար մատի վերայ:

Մենք դասաւորեցինք այստեղ միայն սովորական հիւանդութեանց գլխաւոր տեսակները: Բայց պատահական են խօլերա եւ սորա նման մահատու ցաւեր. սակաւ ուրեք գտնւում են բարակացաւ, իսկ կաթուածք՝ խիստ նուազ:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆ

Աղուանից երկիրն արտահանում է առատ ցորեն, գարի, բրինձ, լուբիա, բակլայ, սոխ, սըխտոր, գետնախնձոր, ստեպղին, բոզկ, ճակնդեղ, տանձ, խնձոր, չիր, դեղձ, թուզ, խաղող, գինի, օղի, սերկեւիլ, նուռն, զզեար, ընկոյզ, արքայակաղին, շագանակ, խոռնիկ, վարունկ, սեխ, ձմերուկ, մեղր, ձուկն, ձկնհաւկիթ, ձկնապուխտ եւ սումաղ: Արտահանում է նաեւ կով, եզն, գոմէշ, ոչխար, այծ, ձի, ջորի, ուղտ, բոժոժ, մետաքս (ապրշում), բամբակ, բուրդ, ընկուզի կոճղ, կովի, եզան, գոմէշի, ձիու, ուղտի կաշի, ոչխարենի, այծենի, ընձենի, արջենի, գայլենի, աղուէսենի եւն մորթեր եւ շատ նաւթ:

---

1 Տեղական բարբառով ասում են. ականջս ծնում է:

2 Ջրով շաղախում են անխմոր ալիւր, եփում սաջի վերայ, իւղամածում հացի երեսը եւ տաքտաք կապում ականջի վերայ:

3 Ընտիր բառ գաւառական. նշանակում է մեղուների շինած այն մոմն, որով ձմռան մօտ ամրացնում են փեթակի մուտքը ցրտից պաշտպանուելու: Հետեւապէս բարդուած է ակն եւ մոմ բառերից:

4 Նման եղալաւաշի, բայց իւղի տեղ լաւաշի երեսը օծում են մածնով:

ԱՐՑԱԽ

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Այնքան անհոգ եւ անտարբեր ենք, որ չգիտենք, թէ ինչ հնութիւններ կան մեր հայրենիքում՝ մեր նախնիքներից մեզ աւանդ մնացած. չգիտենք, թէ պատմական փշրանաց ինչ յիշատակարաններ կան թաքնուած մեզ շրջապատող լեռների, ձորերի եւ դաշտերի մէջ. չգիտենք, թէ ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ կան աւերակ վանքերի եւ անապատների, մատուռների եւ եկեղեցիների, խաչարձանների եւ տապանաքարերի վերայ եւ մագաղաթեայ գրչագիրների յիշատակարաններում: Մեր անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարներն:

Մէն մի հայրենի նահանգ հետազօտելն անկ է ընկերութեանց եւ հարուստ անձանց, որպէսզի կարողանան նիւթականի ուժով՝ մասնագէտ, հմուտ անձանց եւ ականաւոր լուսանկար[իչ]ների ձեռնով ի լոյս հանել նախնական ամէն մի հնութիւն եւ արձանագրութիւն իւրեանց իսկական ոճով եւ ձեւերով: Սակայն տեսնելով, որ ժամանակի անողոք ճիրաններն լափում եւ եղծում են մեր թանկագին հայրենիքի՝ Արցախի ամենապատուական հնութիւնները եւ արձանագրութիւնները, տեսնելով, որ տգէտ եւ թշնամի ձեռներ քանդում, աւերում եւ ոչնչացնում են հայրենի սրբազան աւանդները, տեսնելով, որ ցեցերն կրծում եւ անյայտացնում են անգին ձեռագիրների յիշատակարաններում եղած պատմական մարգարիտները, եւ խոնաւութիւնն ու անհոգութիւնը կլանում են պատմական ակունքները, վերջապէս տեսնելով, որ ընկերութիւններն եւ հարուստներն ցարդ չձեռնարկեցին Արցախի հետազօտութեան գործին, վասն որոյ պարտք համարեցի սիրով կրել ամէն նեղութիւն, աղքատօրէն հետազօտել, դէթ ազատել մնացեալ յիշատակարանները աւերիչ ձեռքերից, ցեցերից եւ խոնաւութիւնից եւ ժամանակի ճիրաններից եւ գոնէ կազմել մի ուղեցոյց՝ ապագայ հմուտ մասնագէտների համար: Զոր օրինակ մեղուն, ծաղկից ծաղիկ ոստոստելով, հաւաքում է ծաղկանց ընտիր հիւթերը եւ կազմում պատուական մեղր, նոյնպէս շրջելով գաւառից գաւառ, գիւղից գիւղ, աւերակից աւերակ եւ սարից դաշտ՝ կազմեցի «Արցախը»:

Գործիս մէջ յականէ յանուանէ նշանակեցի Արցախեան նահանգի նախկին եւ փոփոխեալ սահմանագլուխները եւ սոցա մէջ գտնուած լեռները եւ լեռնակները, դաշտերը եւ դաշտակները, գետերը եւ գետակները, մեծ աղբիւրները եւ լճակները, նաւթահանքը եւ հանքային ջուրերը, ոսկու եւ արծաթի, պղնձի եւ շիպի, երկաթի եւ պողպատի, երկանաքարի եւ շինութեանց քարերի հանքերը, քարայրերը եւ վիմափորները, անտառները եւ մացառները, պտղատու եւ անպտուղ ծառերի եւ թփերի տեսակների անունները: Երկասիրութեանս մէջ զետեղեցի ինքնաբոյս եւ ցանուած ծանօթ բանջարեղինաց եւ կանաչեղինաց, ծաղիկների եւ խոտերի, ընտանի անասնոց եւ գրաստուց, սուրբ եւ անսուրբ կենդանեաց եւ գազանաց, բնիկ եւ երթեւեկ հաւքերի, սողունների եւ զեռունների, օձերի եւ միջատների, ճանճերի եւ մժղուկների եւ միանգամայն տեղական բերքերի տեսակների անունները (տեղ-տեղ տեղական բարբառով):

Ըստ չափու ձեռնհասութեանս՝ որոշակի նշանակեցի Ուտիական եւ Արցախական բոլոր գաւառների սահմանները[1] բացի մի քանի գաւառների միջնասահման գծերից, զորս անհնարին եղաւ ճշտիւ որոշել, վասն զի չկային միջնադիծ սահմանները որոշող բնական նշաններ, ինչպէս են գետեր, ձորեր, լեռներ եւ այլն: Իսկ մնացեալ բոլոր գաւառների չորս սահմանագլուխները որոշելուց յետոյ կարգաւ նշանակեցի նոյն չորս սահմանների միջեւ գտնուած շէն, կիսաւեր եւ աւերակ քաղաքների եւ գիւղերի, վանքերի եւ անապատների, մատուռների եւ բեմերի, բերդերի եւ դղեակների տեղը, գիրքը, անունները, բնակչաց ծխաթիւը, արականաց եւ իգականաց որքանութիւնը, քահանայից եւ եկեղեցեաց քանակութիւնը, միամեայ ծնելոց, պսակելոց եւ ննջեցելոց թիւերը, վարելահողերի եւ պտղաբերութեանց աստիճանները, օդի, կլիմայի եւ ջրի յատկութիւնները եւ ամենից երկար ապրողի տարեթիւը:

Համառօտ ծանօթութիւնները գրեցի մէն մի երեսի ստորոտում, իսկ ընդարձակները՝ գրքիս վերջում, ուր առանձին-առանձին զետեղուած են նաեւ բոլոր յատուկ անուանց, շէն եւ աւերակ քաղաքների, գիւղաքաղաքների, գիւղերի, վանքերի եւ բերդերի ցանկերն եւս: Այս ամէնը յայտնելուց յետոյ յայտնում եմ նաեւ.

Ա. Հետազօտութեանց ժամանակ ո՛չ կռատանց հետք գտայ եւ ո՛չ մեհեանների, ո՛չ Արցախական եւ ո՛չ Ուտիական նահանգներում: Միայն գտայ, որ կռապաշտ դարերի ընթացքում ամփոփուած են ննջեցեալներն չորս ձեւով.

Նախ՝ ահագին, խեցեղէն կարասներում:

Երկրորդ՝ երեք ահագին քարերի տակ՝ կռնկի վերայ երկարցրած:

Երրորդ՝ մեծ-մեծ քարերի տակ նստեցրած դիրքով:

Չորրորդ՝ աւազանանման վիմափոր տապաններում, որք ունին եւ կափարիչ քարեր: Իւրաքանչիւր ամփոփեալ, թէ՛ արական եւ թէ՛ իգական, իւր հետ ունի գերեզմանում իւր զէնքերը եւ զարդերը: Բացի իգականաց զարդերից, լինում են խեցեղէն պուլիկներով լի ուլունքներ:

Բ. Մի մղոնը գործածած եմ 7 վերստի տեղ, այլապէս 7 վերստն հաւասար է մի մղոնի:

Գ. Չափելու համար գործածած եմ մետր չափը, որովհետեւ գրեթէ ընդհանրացած է չափս ամէնուրեք:

Դ. Անխտիր չափած չեմ բոլոր վանքերի, եկեղեցիների եւ բերդերի երկարութիւնները եւ լայնութիւնները, այլ միայն չափած եմ հարկ համարածներս:

Ե. Գործածեցի ժողովրդական սեռ բառը, որ կարճ, գեղեցիկ եւ իսկական իմաստը յայտնող է եւ որ նշանակում է լեռների եւ լեռնակների թրաձեւ երկարած գագաթնագիծը: Ըստ մեր կարծեաց՝ սեռ արմատիս հետ բարդուած է շարականի սեռակնաձեւ սեռ-ակն-ձեւ բառն, այսպէս է եւ ճախարակի իլկի լիսեռն, լի-սեռ բառն:

Զ. Առանց ձանձրանալու ընդօրինակեցի բոլոր գրչագիրների յիշատակարաններից (արժան համարուած) հատուածներ եւ պատմական հետաքրքիր կտորներ եւ վանքերի, եկեղեցիների, անապատների, մատուռների, ապարանների, խաչարձանների, մասունքների եւ մահարձանների արձանագրութիւնները, մանաւանդ՝ պատմականները:

Է. Արցախեան ջրերից դեռ անուանեցի միայն Թարթառը, Հակարին եւ Աղստեւը, իսկ գետակ եւ վտակ՝ մնացեալ ջուրերը, քանզի ամբողջ ամառ եղանակներում չեն հասնում Կուր գետին:

Ը. Համարեա թէ շատ լեռների, լեռնակների, բլուրների եւ բլրակների եւ սեռերի վերայ արձանացած են վաղեմի, քարեայ, անպաճուճ եւ անարձանագիր խաչեր: Այս անխօս խաչարձանների մասին աւանդութիւնն ասում է. «Մի մասն տնկուած է ս. Գրիգոր Լուսաւորչի հրամանաւ, մի մասն՝ ս. Գրիգորիսի եւ միւսն՝ ս. Մեսրովպի»:

Թ. Հնարաւոր եղածին չափ նշանակեցի ուսումնարանաց անունները, թիւը, աշակերտաց որքանութիւնը եւ դրամական մտից եւ ելից քանակութիւնը:

Ժ. Արցախեան մէն մի գաւառ ունեցած է իւր սեպհական վանքը եւ իւր առանձին գաւառակալ առաջնորդը՝ միաբաններով հանդերձ, որ, նստելով իւր իսկ վանքում, հովուած է նոյն գաւառի բանաւոր հօտը, օրինակ՝ Դիզակ գաւառն՝ իբրեւ եպիսկոպոսարան, նախ՝ ունեցած է Դիզափայտ վանքը, ապա՝ Կաւաք, ապա՝ Գտիչ եւ յետոյ՝ Սպիտակ-Խաչ վանքը. Վարանդան՝ Ամարասը եւ Հիրհերի տաճարը եւ երբեմն՝ Քոչիզի շինութիւնը. Խաչենն՝ Մեծ-արանց կամ Մեծ-

1 Գաւառների սահմանագծերը որոշելու համար հնարաւոր զգուշութեամբ հետեւած եմ պատմութեանց, վանքերի արձանագրութեանց, մի քանի ձեռագիր աւետարանների յիշատակարաններին, Աղուանից կաթուղիկոսներին տուած շահական հրովարտակներին, Էջմիածնի եւ Աղուանից կաթուղիկոսների՝ կոնդակներին մատնանիշ արած սահմանագծերին եւ բազմադարեան յարատեւած աւանդութեանց կանոնի զօրութիւն ստացած տրամադրութեանց:

իրանց վանքը եւ Մայրաքաղաք, Ըռստակ գաւառն՝ Դատի վանքը. Ջրաբերդն՝ Ջրվշտակի կամ Եղիշ-առաքեալի վանքը. Մեծ-Կողմանք կամ Կիւլստանն՝ նախ՝ Հոռեկայ, եւ ապա՝ Ամենափրկիչ վանքերը. Գարգմանն՝ նախ՝ Մլզնաբերդ եւ յետոյ՝ Թարգմանչաց վանքերը. Փառիսոսն՝ նախ՝ Փառիսոսի, ապա՝ Խորանաշատի եւ յետոյ՝ Զարեքայ վանքերը. Քուստի կամ Քաւս գաւառն՝ Շիմուրատայ եւ Վարագայ վանքերը եւ այլն, եւ այլն: Դեռ 1828-ին շէն եւ պայծառ եղած են վանքերս, ինչպէս վկայում են ականատեսներն: 1764 թուին հետեւեալ վանքերում գահակալում էին Աղուանից հետեւեալ եպիսկոպոսներն՝

Մելքիսեթ արքեպիսկոպոս	առաջնորդ	Եղիշ-առաքեալի.
Աղարիա եպիսկոպոս	,,	Հոռեկայ.
Զաքարիա եպիսկոպոս	,,	Գանձակի.
Իսրայէլ արքեպիսկոպոս	,,	Թարգմանչաց.
Օհաննէս արքեպիսկոպոս	,,	Փառիսոսի վանից:

Բայց յայտնի է. թէ Աղուանից կաթուղիկոսութեան մահից յետոյ, այս է՝ 1828 թուականից յետոյ վանքերն հեղձեալ սկսած են զրկուել եւ անպատկանալ միաբանական խմբերից եւ անխնամ մնալով՝ քայքայուել մեծ մասամբ: Լուսահոգի Բաղդասար մեսրոպեանի կենդանութեան ժամանակ շէն եւ պայծառ տեսած եմ Եղիշ-առաքեալը. Ինն մասը. Գանձասարը. Ս. Յակոբը. Պտկեսբերդը. Ամարասը, Գոլիշը եւ Սպիտակ-Խաչը եւ Ղեւոնդեանց անապատը՝ վանահայրերով, միաբաններով եւ ուսումնարաններով:

Զոր օրինակ քաղաքական բուռն հոսանքներից ստիպեալ տեղից տեղ փոխարդուած է յաճախակի Հայոց ընդհանրական վեհարանն. նոյնպէս ստէպ-ստէպ տեղից տեղ փոխադրուած է եւ Աղուանից կաթուղիկոսարանն, որ հաստատուած է.

ա. Դարբանդ կամ Ջուղա
բ. Գիս (ըստ աւանդութեան)
գ. Պարտաւ
դ. Կաթղիկոսարան (Դոնի շինի հանդէպ)
ե. Եղիշ-առաքեալ կամ Ջրվշտիկ
զ. Գանձակ
է. Բարահերձ
ը. Խամշի վանք
թ. Հաղբատ
ժ. Գանձասար
ժա. Ջալէթ

ժբ. Վերստին Գանձասար, ուր եւ վախճանուած է կաթուղիկոսութիւնն Աղուանից եւ թաղուած վերջին Սարգիս կաթուղիկոս Ջալալեանցի գերեզմանում: Աղուանից կաթուղիկոսների մասին գրելու եմ «Աղուանից պատմութեան» մէջ եւ ոչ այստեղ:

ԺԱ. Որովհետեւ արդէն գրած եմ «Աղ. Երկ. եւ Դրացիք» գրքում, վասն որոյ աւելորդ համարեցի գրել Արցախի կրօնական եւ քաղաքական կենաց մասին եւ զիւղական հիւանդութիւնների եւ բժշկութիւնների եւ կերակուրների մասին, որք գրեթէ նոյն են ամենայն մասամբ, միայն Արցախն չունի խնկալ կերակուրը:

ԺԲ. ՀՈՂ. գրեթէ առհասարակ ջրաբերի, բազմարդիւն (այժմ բացի Մուղանի դաշտից) եւ դաճային են ամբողջ դաշտային գաւառների հողերն, որովք վարձաւրւում են երկրագործներն եւ հովիւներն եւ անասնապահներն առատագոյն ցորենով, գարիով, բոժոժով, բամբակով եւ ամենատեսակ ազնիւ պտուղներով եւ ազնիւ ոչխարով, տաւարով, գոմէշով, ձիով եւ ուղտով: Միջակ արդիւնաւէտ եւ անջրդի են Դիզակի եւ Վարանդայի եւ Բերդաձորի հողերն, նուազ արդիւնաբեր՝ Խաչենի, Հարճլանքի, Վակունիսի, Ծարի, Ըռստակի, Ջրաբերդի, Կիւլստանի, Գարգմանի, Փառիսոսի, Քաւսի եւ Զաւէի վերնամասի հողերն:

ԺԳ. ՋՈՒՐ. համարեա թէ ընդհանրապէս առատ, ամենապատուական եւ վճիտ են Արցախի բոլոր գաւառների ջուրերն եւ միանգամայն ակնարուղխ, իսկ դաշտային (Ուտիական նահանգինն) առհասարակ գետերի, գետակների, առուների եւ առուակների եւ ուրեք-ուրեք ջրհորի ջուրեր են, որք լինում են յաճախակի պղտոր եւ անախորժ, սակայն ոչ վատառողջ:

ԺԴ. ՈՐԹ. բացի Գանձակի որթից, որ ջրաբրի է, սակայն հենած չէ ծառի վերայ, դաշտային բոլոր որթերն (այգիներն) ամբողջապէս ջրաբրի են եւ բարձրացած ծառերի վերայ: Արցախեան գաւառներինն ընդհանրապէս անջրդի են, որոց մատերը (ծայրերը) ամէն գարնան յապաւում են եւ կապոտում մարդաչափ բարձրութեամբ ցցած սարու (ձողերի) վերայ, ինչպէս եւ Գանձակինն:

ԺԵ. ՀԱԳՈՒՍՏ. թէ՛ արականաց եւ թէ՛ իգականաց զգեստներն ունին իւրեանց յատուկ ձեւը, զորս տեսած կը լինի ամէն ոք. քանզի համարեա թէ ամէնուրեք գտնւում են արցախեցիներ: Սակայն հարկ է յայտնել, թէ մի քանի տարիներից վեր մուտ գործած են յԱրցախ Թիֆլիսի եւ Եւրոպայի սեպհական՝ արականաց եւ իգականաց զգեստների ձեւերն:

ԺԶ. ԲՆԱԿԱՐԱՆ. գաւառներում տակաւին ամենամեծ, մասամբ գետնափոր են բնակարաններն եւ. անշուք, բայց նոր ի նորոյ սկսած են շինել երկյարկանի գեղեցիկ բնակարաններ: Ամենամեծ մասամբ գեղեցկաշէն են քաղաքների բնակարաններն:

ԺԷ. ՎԱՆՔԵՐ. ՄԱՏՈՒՌՆԵՐ ԵՎ ԲԵՄԵՐ. կարծում եմ. թէ ոչ մի նահանգ այնպէս հարուստ չէ այսպիսի սրբավայրերով եւ ուխտատեղիներով, ինչպէս Արցախեան նահանգն, բայց եւ այնպէս ոչ մի նահանգի վանքեր. անապատներ եւ ուխտատեղիներ այնպէս բոլորովին զրկուած չեն իւրեանց բարոյական եւ նիւթական փառքերից, ինչպէս Արցախեան վանքերն եւ սրբավայրերն:

ԺԸ. ՅՐՈՒԱԾ ԵՎ ԳԵՐՈՒԱԾ ՀԱՅԵՐ. բոլորովին զարմանում եւ սրտաճմլիկ դրութեան մէջ է ընկնում հետագօտող հայն. երբ տեսնում է միլիոնաւոր հայ բնակիչներով հարուստ Արցախն իսպառ դատարկուած: Այո՛, դատարկուած են իւրեանց հայ եւ հայազգաւան բնակիչներից Պիան, Մուղան, Վարդանակերտ, Արանոստ, Տրի, Ռոցպատեան, Աղուէ, Տուչքատակ, Ուտի-աւանձնակ, Շիկաշէն, Կողթ, Բերդաձոր, Հարճլանք, Վակունիս, Ծար եւ Ըռստակ գաւառներն, իսկ կիսով չափ կամ ամենամեծ մասամբ դատարկուած են Գարգման, Փառիսոս, Քաւս կամ Քուստի, Զաւէ, Ջրաբերդ, Խաչեն, Վարանդայ եւ Դիզակ գաւառներն: Ի՞նչ եղան սոցա հայ բնակիչներն: Մի մասն կերակուր եղաւ 1798-1799 թուի սովին եւ ժանտախտին, մի մասն գերի գնաց Պարսկաստան, մի մասն գաղթեց Տաճկահայաստան, մի մասն՝ Պարսկաստան, մի մասն՝ Շաքի եւ Շամախի, մի մասն՝ Կախեթ եւ Վրաստան, մի մասն՝ Բագու, Ղուբա, Դարբանդ եւ Ռուսիա: Տասնից մին հազիւ մնացած է այսօր, սիրելի ընթերցող, եթէ չես հաւատում ինձ, ականէ աւերակների ցանկը, որ կայ գրքիս վերջում:

ԺԹ. ՕՏԱՐ ՑԵՂԵՐ. դաշտային գաւառներում բնակում են այժմ արաբ, սուննու եւ շիա մահմեդականներ, որք առհասարակ երթեւեկում են ամառանոց եւ ձմեռանոց եւ տարուայ մեծ մասը անցուցանում են թաղիքեայ վրաններում: Թաթարաց ցեղից մնացորդներն բնակում են Զակամ կայարանից վերեւ՝ համանուն գետակի հովիտներում: Մարաց ցեղից քուրդեր բնակում են Ծար, Վակունիս, Հարճլանք եւ Բերդաձոր գաւառներում, իսկ Քոլանի կոչուած ցեղն՝ Ըռստակ գաւառում: Սոքա առհասարակ յետոյ մուտ գործած են:

Ի. ԱՐՏԱՀԱՆՈՒԹԻՒՆ. նահանգս արտահանում է ցորեն, գարի, բոժոժ, բամբակ, բուրդ, բրինձ, լուբիայ, բակլայ, սոխ, սխտոր, գետնախնձոր, ստեպղին, ճակնդեղ, ձմերուկ, սեխ, վարունգ, խաղող, դինի, օղի, ընկոյզ, իւղ, պանիր, մեղր, կով, եղն, գոմէշ, ոչխար, այծ, խոզ, ձի, ջորի, ուղտ, արջենի, աղուէսենի, ընձենի, գայլենի, սամուր (դէլէ), գոմէշենի, տաւարի, ոչխարի, ձիու, ջորու, խոզի կաշիներ եւ մորթիներ, պատուական գորգ, կարպետ, մափռաշ, խուրջին, ջրաղացաքար, տապանաքար, ձուկն, ձկնհաւկիթ եւ ձկնապուխտ:

ԻԱ. Շրջագայութեանս ժամանակ կրեցի մեծ նեղութիւն. երեք անգամ ազատուեցայ արիւնարբու աւազակաց ձեռքն ընկնելուց, երեք անգամ ձիու տակ մնացի վտանգաւոր տեղերում, այս է՝ սահեցաւ ձիու ոտքերն, ընկաւ ուժգնակի դետին, եւ ես մնացի ձիու ներքեւ. երեք օր մնացի անսուաղ Ծար գաւառում՝ հաց չգտնելու պատճառաւ:

ԻԲ. Այս ամէնը յայտնելուց յետոյ յայտնում եմ հրապարակաւ իմ երախտագիտութեան խորին յարգանքը եւ ջերմ շնորհակալութիւնը այն ամէն վարդապետ, քահանայ արժ. եղբարց, վարժապետ, երիտասարդ, պատանի սիրելեաց, ազնիւ տանուտեարց, որք անձնուիրաբար օժանդակեցին ինձ այս ծանրագոյն գործում, որոց վասն մնամ միշտ աղօթարար:

Մակար Եպս. Բարխուտարեանց

ԱՐՑԱԽԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ

Մեծ Հայոց 15 նահանգներից մինն է Արցախն, որի սահմաններն էին Հայոց Վաղարշակ թագաւորի ժամանակ Երասխ գետն, Արցախական ամենաբարձր սարերի գագաթնագիծն եւ Հնարակերտ ամրոցն[1]: Այս սահմանների եւ Կուր գետի եւ Կովկաս մեծ սարի մէջ ընկած տարածութեան վերայ կուսակալ կարգուած էր Սիսական Առանն՝ նոյն Վաղարշակ թագաւորից: Բայց երբ ծնում է եւ Աղուանից Արշակունի թագաւորութիւնն եւս, ծագում է սահմանի համար հակառակութիւն Հայոց եւ Աղուանից թագաւորութեանց մէջ. այն ժամանակ Արցախի եւ Աղուանից երկրի մէջ սահմանագիծ որոշւում է Կուր գետն[2]: Ե. դարում Աղուանից թագաւորութեանը ենթարկւում էր եւ ամբողջ Արցախեան նահանգն: Ծար, Վակունիք, Աղահէճ, Բերդաձոր գաւառներն, որք պատկանում էին Արցախին, Մեծ Սիւնեաց թագաւորներն ճգնած էին իւրացնել, վասն որոյ ծագում է երկարատեւ հակառակութիւն եւ խռովութիւն Մեծ Սիւնեաց եւ Աղուանից թագաւորութեանց եւ հոգեւոր իշխանութեանց մէջ եւ զբաղեցնում Հայոց շատ կաթուղիկոսները: Այս խռովութեանց ընդմիշտ վերջ տալու եւ սէր ու խաղաղութիւնը վերահաստատելու համար սոյն երկու դրացի թագաւորութեանց եւ հոգեւոր իշխանութեանց մէջ ամենայն Հայոց Սարգիս կաթուղիկոսն՝ Հայոց ՆԾԵ. թուին արձակում է մի շրջաբերական կոնդակ[3], որի սկզբում գրուած է. «Առ նախագահ եւ աստուածամեծար տունդ Սիւնեաց յաստուածապսակ թագաւորդ Վասակ եւ յաստուածապահ իշխանսդ Սեւադայ եւ Աշոտ եւ առ այլ ազատսդ եւ այլն»: Վերջաբանի մօտ. «Իսկ բոլորովին, որում բազում հակառակութիւնք լեալ էին[4] եւ մեծամեծ նզովիւք ամրացուցեալ էին կաթուղիկոսք Հայոց՝ հատանէ զսահմանն Աղուանից՝ Ըռմբի խոռն, Ծար գաւառ, Աղահէջ, ընդ որ Աղուանոյ գետն[5] հատանէ մինչ ի Քարավազի կամուրջն (Երասխ գետն)»: Ի վերջոյ շարայարում է. «Թէ ոք հակառակել կամի այդմ աթոռոյ եւ կամ խանգարման պատճառ լինի այդմ հայրապետադիր սահմանի եւ վիճակի եւ ժառանգութեանց եկեղեցւոյ, զանբաւ հրահոսան անէծսն ժառանգեսցէ, որ յառաջին սուրբ հայրապետացն կարգեալ է եւ կրկնապատիկ 'ի մէնջ իսկ, եւն.»: Ուրեմն Ե. դարում եւ ՆԾԵ. թուականից ցարդ Արցախի սահմանագիծն եղած է Երասխ, Կուր, Խրամ եւ Զորագետ (միացած) եւ Հակարի գետերի եւ Կայենի, Դիլիջանի, Գեղամեան ամենաբարձր լեռների գագաթնագծի մէջ եղած տարածութիւնն: Քանզի Խորենացին թէեւ գրած է, թէ 13 գաւառ ունի Արցախն[6], սակայն ԻԶ. նահանգի գաւառների շարքում գրած է. «Եւ այլ գաւառս (Արցախայ), զորս ի Հայոց հաննալ է (թագաւորն Աղուանից) Շիկաշէն, Գարդման, Կողթ եւ Զաւէ եւ այլ քսան գաւառ մինչեւ ցխառնումն Երասխայ ի Կուր գետ»[7]: Քսան եւ չորս գաւառը ամբողջացնում է այսպէս. 13 Արցախի, 6 Ուտի գաւառի[8], 4 վերեւի գաւառներն, որք են Շիկաշէն եւն.: Վարդանակերտ գաւառ, որ գտնւում է Կուր եւ Երասխ գետերի խառնուրդի մէջ, որով ամբողջանում են Արցախեան նահանգի 24 գաւառներն:

---

1 Խոր. Բ. գիրք, Ը. գլ. եւ Մով. Կաղ. Ա. հատ., Դ. գլ.:
2 Փաւս. Բուզ., Ե. դպր., ԺԳ. գլ.:
3 Շրջաբերականիս բնագրի օրինակը տե՛ս Ս. Օրբէլեան, ԾԷ. գլ.:
4 Աղուանից եւ Մեծ-Սիւնեաց մէջ:
5 Հակարի գետի վերնամասն:
6 «Արցախ երի կայ Սիւնեաց. գաւառք են՝ ի նմա երեքտասան, զորս Աղուանք ունին՝ Հաբանդ, Վակունիք, Բերդաձոր, Մեծկուանք, Մեծիրանք, Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պանծկանք, Սիսական ոստան, Քուստի, Փառնէս, Ռոստակ» (Մատ. Խոր., եր. 609 եւ այլ ձեռագիրք):
7 Մատ. Խոր., եր. 606 եւ այլ ձեռագիրք:
8 «Ուտի առ մտից կայ Երասխայ ընդ մէջ Արցախայ եւ Կուր գետոյ, ունի գաւառս եւթն, զորս Աղուանք ունին՝ Արաւնոտ, Տոի, Ռոցպատեան, Աղուէ, Տուչքատակ... Ուտի առանձնակ» (նոյն գիրք, եր. 610 եւ ձեռագիրք):

Այս նահանգն, զանազան դարերում փոփոխութիւններ կրելով, հայերից կոչուած է Գարգար[1], Արցախ[2], Փոքր-Սիւնիք[3], Խաչենք, Սեաւ Այգի[4], իսկ պարսիկներից եւ տաճիկներից՝ Դարաբաղ:

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԼԵՌՆԵՐ

Սարերից ամենամեծն է Արցախեան լեռնաշղթան, որ ընկած է Երասխի եւ Ջորագետի մէջ: Լեռնաշղթայիս ամենաբարձր գագաթներն են Արութիւնայ սարն[5] Արցախի Գարդման գաւառի վերի ծայրում, Մռաւ սարի արեւմտեան եւ արեւելեան գագաթներն՝ Հաթերքի հիւսիս-արեւմտեան կողմում եւ Կիւլստանի հարաւային հանգէպ, Քիթ եւ Քեթի սարերն՝ Ծար գաւառից վերեւ, Քիրսն՝ Վարանդայ գաւառի վերի ծայրում եւ Դիզափայտ՝ Դիզակ գաւառի վերի ծայրում: Ամրան կանաչազարդ են լեռնաշղթայիս վերնամասերն, իսկ անտառապատ՝ հիւսիսահայեաց լանջերն եւ միանգամայն առատաջուր: Բարձր եւ երկար լեռնաշղթաս, որ ընկած է Երասխի եւ Ջորագետի մէջ, տարածած է զէպի իւր հիւսիսահայեաց կողմերն հազարաւոր եւ բազմաճղի լեռնազօտիներ, սարաւանդներ եւ լեռնաբազուկներ, որք աղխաղխելով միմեանց կազմում են բազմաթիւ անդնդախոր ձորեր եւ ահարկու վիհեր, սարսափելի կիրճեր եւ սոսկալի նեղուցներ, օձապտոյտ ձորակներ եւ մերկ ապառամներ, բարձրագոյն քերծեր եւ զարհուրելի քարայրեր եւ միանգամայն սաղաւեւ, ձկնաձեւ, ձուաձեւ, լիսեռնաձեւ եւ թամբաձեւ լեռներ եւ լեռնակներ, բլուրներ եւ բլրակներ, թումբեր եւ խուվեր:

Փոքր լեռնաշղթաներ. երկարաձիգ լեռնաշղթան, որ սկսուած է Ջորագետի եւ Խրամի խառնուրդի աջ կողմից, հասած է մինչեւ Երասխի ձախ կողմն շարունակ Արցախեան դաշտաբերանով: Ամբողջապէս լեռնաշղթայիս վերայ են Ջաւէ, Քուստի կամ Քաւս, Փառիսոս, Գարդման, Մեծ-կողմանք, Մեծ-իրանք, Հարանդ կամ Վարանդայ, Դիզակ եւ Պանձկանք[6] գաւառներն: Այս լեռնաշղթան եւս, որ տարածուած է ամենաբարձր լեռնաշղթայի եւ դաշտաբերանի մէջ, նմանապէս արձակած է լեռնաբազուկներ, խոր-խոր ձորեր եւ ոլոր-մոլոր ձորակներ, նեղուցներ եւ կիրճեր, տեղ-տեղ ուռած եւ բարձրացրած սարեր եւ սարակներ, բլուրներ եւ բլրակներ, թումբեր եւ թուփակներ եւ ուրեք-ուրեք անձրեւատար հեղեղատներ, միայն թէ ամենամեծ մասամբ զարդարուած են թանձր անտառներով եւ մացառուտներով, այգիներով եւ պարտէզներով: Լեռնագօտուս ամենաբարձր գագաթներն են Կայենի լեռներն Ջաւէ կամ Կայենի գաւառում, Մրղուզ՝ Քուստի կամ Քաւս գաւառում, Սուրբ Գէորգի սարն՝ Խաչենում, Բողրխան եւ Քեաթուկ՝ Վարանդում, Դող-բերդ, Թաղլարի եւ Հադրութի սարերն՝ Դիզակում:

1 Մատ. Խոր., եր.78, 168, 248:
2 .. .. .. 607, Ասող., եր. 65 եւ այլն:
3 Խոր., Գ. գիրք, Գ. գլ.: Մով. Կաղ., եր. 272: Ասող., 107: Սամ. Անեց., եր. 192:
4 Սամ. Անեց., եր. 193:
5 Թուրքերէն՝ Ղոչ-Ղարադաղ:
6 Աւելի լաւ էր Բազկանք անուանել վերջին գաւառս, վասն զի գաւառս ամբողջապէս բաղկացած է լեռնաբազուկներից, որք թեքուած են դէպի Երասխի ձախ ափն: Կայ եւ մի այլ լեռնակ Կախա անուն, որ ընկած է Կուր գետի աջ եզերքով (Գանձակ գաւառում): Աւելի բարձր է Ղազարլու արեւմտեան գագաթն, որ է 1723 ոտք, իսկ Կախաբարեւմտեանն՝ 1284 ոտք:

ԴԱՇՏԵՐ

Ա. Ամենամեծ դաշտն է Գարգարացւոց կամ Արցախի եւ կամ Մուղանի դաշտն, որի մասին արդէն գրուած է «Աղուանից Երկիր եւ Դրացիք» գրքի մէջ:

Բ. Գագայ դաշտն, որ նոյն դաշտի շարունակութիւնից տարածուած է Ջաւէ, կամ ըստ այժմեան՝ Ղազախ գաւառի ստորին մասում, Գագայ սուրբ Սարգիս սարի աջ ու ձախ կողմերում, այսինքն՝ Ոսկեպար վտակի եւ Կուր գետի հովիտներում:

ԴԱՇՏԱԿՆԵՐ

Ա. Գտնւում է Մեծ-կողմանց կամ Կիւլստան գաւառի մէջ տարածուած Ղարաչինար եւ Ներքի շէն գիւղերի մէջ, որի միջով հոսում է Սեւ գետակն (Ղարաչայ):

Բ. Վարանդայ գաւառի ստորին մասում Ղըզղալա գիւղի կալերի մօտ:

Գ. Նոր-շէնի մօտ, որ ընկած է երկու լեռների մէջ:

Դ. Դաշտակն ընկած է Կիշի Պառաւամուտ, Սալիտակ շէն (Աղքանդ) գիւղերի մէջ:

Ե. Խունըշինակ գիւղի դաշտակն:

Զ. Ճարտարեցւոց կալատեղերի մօտ եղած դաշտակն:

Է. Դողայ դաշտակն, որ ընկած է Կաւաք սարի, Ազոխի, Ջրակուսի, եւն գիւղերի մէջ: Հարկ է յայտնել, որ բոլոր դաշտակներս գրեթէ Գարգարացւոց Մեծ դաշտի շարունակութիւնից իբր դաշտալեզու մտած են տեղ-տեղ փոքր լեռնաշղթայիս մէջ: Այսպէս են համարեա թէ Ամարասայ, Հադրութի եւ Ջաբրայէլի դաշտակներն:

Ը. Բելուկանայ դաշտակն, որ ընկած է Երասխ եւ Հակարի գետերի ձախ ափերի մէջ:

ՀՈՎԻՏՆԵՐ

Գեղեցիկ են Աղստեւի, Թարսա չայի, Ղուլալուի, Վերին-Ջակամի, Շամքորի, Գետաշէնի, Կիւլիստանի, Հաթերքի[1], Խաչենագետի, Պետրեցւոց (Խոջալու), Գարգար գետակների եւ Հակարի գետի հովիտներն, մանաւանդ բոլոր լեռնահովիտներն:

ԳԵՏԵՐ ԵՒ ԳԵՏԱԿՆԵՐ

Ամենամեծերն են Կուր եւ Երասխ, որոց մասին արդէն խօսած ենք «Աղուան. Երկ. եւ Դր.» գրքում: Այստեղ միայն ասում ենք. համարեա թէ Արցախեան նահանգն մի կատարեալ թերակղզի է, որ ընկած է Կուր եւ Երասխ, Ջորագետ եւ Հակարի գետերի մէջ:

Երասխ գետին ձախ կողմից միանում է Հակարին, վերջինս, որ սկիզբն է առնում Սիսական եւ Վակունիք գաւառների հարաւահայեաց լանջերից, ընդունում է իւր ձախ կողմից գետակներ եւ առուակներ. Հարճլանք գաւառից ընդունում է Հազարագետ եւ Վաղազին, (Շոր-Ջուր), Յարարի ջուր եւ Ղոզլու վտակները՝ Բերդաձոր գաւառից:

Երասխին նմանապէս ձախ կողմից, խառնւում է եւ Թաղլարի եւ Դողայ միախառնուող գետակն եւ առուն, որք միանալով կոչւում են Ղուրուչայ: Առաջինն սկիզբն է առնում Դիզափայտ լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերից, կազմում երեք գլխաւոր առուակ, որք միանում են Տումի գիւղից բաւական վար: Երկրորդն՝ հոսում է Մոխրենիս եւ Թաղոտ գիւղերի լեռներից, նոյն լեռնաշղթայի շարունակութիւնից՝ միանում Դողայ մօտ եւ խառնւում վերջի աւանիցս վար՝ Թաղլարի գետակին հետ:

1 «ՅԸոստակ գաւառն Մեծ կողմանց ի Ջղախեան հովիտն յԱպարիսական դաշտակն առ ափն Տրտուական գետոյն» (Մով. Կաղ., եր. 163, տպ. Մոսկ.)

Քեօնդալան գետակն, որ բաղկանում է գլխաւորաբար երկու վտակներից, որոց առաջինն իւր սկիզբը առնում է Քիրս լեռնաշղթայից եւ հոսում Աւենտարանոց աւանի հարաւային ստորոտով: Իսկ երկրորդն սկիզբն է առնում նոյն լեռնաշղթայից, հոսում Ղեւոնդեանց անապատի սարի հարաւային ստորոտով եւ միանում առաջին վտակին՝ նոյն անապատից բաւական վար եւ մանր ջրեր ընդունելով՝ հոսում արեւելահարաւ եւ խառնւում Երասխին (գարնան ժամանակ միայն): Արցախեան ամենաբարձր լեռնաշղթայից բղխում են գետակներ եւ հոսելով միանում Կուր գետին, որք են.

Գարգար գետակն, որ սահմանագիծ է Խաչեն եւ Վարանդայ գաւառների, կազմւում է հինգ գլխաւոր վտակներից, որք են՝ Ա. բուն Գարգար, որ բղխում է Քիրս լեռնաշղթայի Զառիստ սարերի հիւսիսային եւ հարաւային լանջերից եւ հոսում Շուշի քաղաքի հիւսիս-արեւմտեան անդնդախոր ձորով: Բ. բղխում է Քիրս լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերից եւ հոսում ահարկու ապառաժների միջով՝ յիշեալ քաղաքի հարաւարեւելեան կողմով: Երկու վտակներս միանում են Մաղի կամրջի ստորոտում: Բայց բուն Գարգարն՝ սկսեալ կամրջից մինչեւ վտակախառնուրդն՝ երկար դարերի ընթացքում ճեղքած է ապառաժ սալ քարը եւ բաւականին խորացնելով շինած ոլոր-մոլոր ճանապարհ իւր համար: Գ. վտակն բղխում է նոյն լեռնաշղթայի շարունակութիւնից՝ Խանածախ գիւղի սարից, եւ միանում Գարգարին փոշտի ճանապարհի տակով: Դ. վտակն սկիզբն է առնում նոյն լեռնաշղթայի շարունակութեան հիւսիսահայեաց կողմերից՝ Բալլուջայի սարից. առուակներ ընդունելով իւր աջ ու ձախ կողմերից՝ միանում Գարգարին նոյն ճանապարհի տակով: Ե. վտակն՝ բղխելով նոյն լեռնաշղթայից՝ Պետրեցւոց սարերից, առուակներ ընդունելով աջից ձախից՝ միանում է բուն Գարգարին, որ հոսելով դէպի արեւելահիւսիս եւ կտրելով Արցախի դաշտի կէսը, ապա անյայտանում աւազի տակ եւ յետոյ ելնում բաւականին վար եւ թափւում է Կուր գետի մէջ հեղեղների ժամանակ:

Խաչենագետ՝ գետակ, որ սկիզբն է առնում նոյն լեռնաշղթայից, նախ հոսում դէպի արեւելք, ընդունում իւր աջ ու ձախ կողմերից մանր վտակներ, ապա իւր աջ կողմից Աղուանք կոչուած պարսպի տակով ընդունում Քոլատակի վտակը, որ բղխում է Խոխանայ եւ Կաչաղակայ բերդերի սարերից: Խաչենագետս շատ տարիներ չէ հասնում Կուր գետին, այլ ցամաքում է:

Թարթառ գետ. Ամենից մեծն եւ ամենից արդիւնաւոր գետն է այս եւ Արցախի փառքն ու պարծանքը: Գետիս ակունքներն բղխում են Ղոմբի խոռ կամ այժմեան անուամբ Ռումբատեղ լեռնաշղթայի արցախահայեաց, Մռաւ սարի հարաւահայեաց եւ Ծար գաւառի արեւելահայեաց եւ հիւսիսահայեաց լանջերից:

Միջին վտակն հոսում է սրընթաց Ծար գիւղաքաղաքի հարաւային կողմով, որին խառնւում է Վերին Ջերմուկն կամ Տաք-ջրի վտակն:

Սորա առաջին օժանդակն, զմայլելի ջրվէժներ կազմելով, հոսում է Ծարի հարաւային ձորով նոյն իսկ պարսպի քերծի տակով եւ միանում միջին վտակին՝ վանքին մօտ: Գ. վտակն հոսում է Ծար գիւղաքաղաքի հիւսիսային քերծի տակով, միանում մի այլ վտակի, ապա միասին միախառնւում միջին գետակին Ծարի ստորոտում: Միջին գետակս, որ ընդունելով յիշեալ վտակները՝ եղաւ մեծ գետակ, հոսում է մի խոր եւ աւազակաց որջ եղած ձորով եւ ընդունում իւր աջ կողմից Ներքի-տաք-ջուրը եւ իւր երկու կողմերից ուրիշ շատ վտակներ՝ շարունակում իւր ճանապարհը: Դ. վտակն սկիզբն է առնում նոյն իսկ Ղոմբի խոռից եւ իւր աջ ու ձախ կողմերից ստանալով առուակներ եւ բարակ ջրեր՝ հոսում դէպի հիւսիս-արեւելք: Ե., Զ. եւ Է. վտակներն սկիզբն են առնում Մռաւի հարաւահայեաց լանջերից, անցնում Լեւա գիւղի աջ ու ձախ կողմերով. նախ միանում Դ. վտակին եւ ապա վերեւ յիշուած գետակին: Ե., Զ., Է. եւ Դ. վտակներին միանում է եւ Եանշաղ[1] վտակն, որ բղխում է Մռաւի հարաւահայեաց լանջերից եւ հոսում դէպի արեւմուտք, յետոյ խառնւում միւս վտակներին: Սոյն ջրերը իւր հետ միացնելուց յետոյ՝ Թարթառն իւր ձախ կողմերից ընդունում է մանր-մունր ջրեր իւր ծոցն, ապա Թրդին գետակը, որ բղխում է Մռաւ սարի վերնամասի հարաւահայեաց լանջերից, հոսում մութ-մութ ձորերով եւ Երեք-Մանկունք վանքի արեւմտեան եւ հարաւային կողմի ձորով եւ ապա միանում Թարթառին՝ Ջրաբերդ ամրոցի արեւմտեան վիմահերձը քերելով: Ձախ կողմից ընդունած Թարթառի վերջին ջուրը Ջրվշտիկ վտակն է եւ Դոնի-շէնի եւ Մատաղիս շէնի առուակները: Իսկ իւր աջ կողմից Թարթառն ստանում է մի քանի առուակներ, որոց գլխաւորն է Դութխու գետակն, Հաւքախաղացի, Խաթրա վանքի, Վաղահաս գիւղի եւ Ամենափրկիչ վանքի վտակները: Զոր օրինակ Ներոս գետն է Եղիսատոսի առատութեան եւ ժանութեան պատճառն, նոյնպէս Թարթառս է Արցախի առատութեան եւ ժանութեան պատճառն, քանզի բազմաթիւ առուներով ջրում է Ուտի առանձնակ եւ ուրիշ գաւառներ: Այս է հին պատմիչներից Տրտու կամ Դրտու, իսկ տաճկերէն՝ Թարթառ կոչուած գետն, որի բազմաթիւ առուներով ջուր բաշխելու մասին երգած է մի Հայ աշուղ թուրքերէն լեզուաւ:

«Բու Թարթա՛ռ նաշի Թարթա՛ռ,
Զայլարըն բաշը Թարթա՛ռ,
Արազինան մուսայիպ,
Քիուեն եօլտաշը Թարթա՛ռ:
Իւչ իւզ ալթմըշ ալթը
Արխըն անասը կենա կոչա Թարթա՛ռ»:

Սեւ գետակ կամ Ղարա-չայ. գետակիս օժանդակն հոսում է Կիւլստան գիւղի հարաւային կողմով եւ կոչւում է Բարակ (Ինջա): Մի ուրիշ օժանդակ եւս հոսում է վտակիս հարաւային կողմով՝ Ամենափրկիչ վանքի հարաւային կողքով եւ կոչւում Սռնաւոր (խիստ ցուրտ), որ միանում է Բարակին Կիւլստանից վերեւ: Սեւ գետակս իւր սկիզբը առնում է Մռաւի Գինալ գագաթի հիւսիսային լանջերից, հոսում է Բարակի հիւսիսային կողմով Վերի շէն, Ներքի շէն, Ղահթուլի, Նորաշէն, Նոր-Խրխաւիոր եւ Ղարա-չինար գիւղերի առջեւից: Երկու ջրերս, միանում են ու կոչւում Սեւ գետակ:

Կուրակ գետ, որ սահմանագլուխ է Արցախի եւ Թիֆլիզի առաջնորդութեանց հոգեւոր իշխանութեանց, առնում է իւր սկիզբը նոյն Մռաւ լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերից եւ ընդունում հեռագհեռ իւր աջ ու ձախ կողմերից օժանդակ առուներ, ապա հոսում դէպի Կուր գետն:

Ոսկանապատի կամ Գանձակ գետակ. առնում է իւր սկիզբն նոյն լեռնաշղթայից եւ Արութիւնայ հարաւային լանջերից, հեռագհեռ ընդունում վտակներ իւր աջ ու ձախ կողմերից, հոսում Ոսկանապատ գիւղի հարաւային ստորոտով, ապա Գանձակի միջով դէպի Կուր գետն (կոչւում է եւ Գանձակի գետ):

Բանանց գետակ (Ղոչ-դարա). առնում է իւր սկիզբը Արութիւնայ սարից, իւր աջ ու ձախ կողմերից ընդունում Քարհատ եւ Խաչակապ գիւղերի վտակները եւս եւ հոսում Բանանց գիւղի հարաւային ստորոտով:

Շամքոր գետակ. բուն միջին վտակն առնում է իւր սկիզբը Գեղամայ լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերից. ընդունելով ջրեր՝ հոսում Փառիսոս քաղաքի (Ղալաքենդ) աւերակի միջով, այնուհետեւ իւր աջ կողմից ընդունում Փառիս վտակը, որ բղխում է Արութիւնայ սարից, Գարդման վտակը, որ բղխում է նոյն սարի ստորոտներից, Փիփ գիւղի ջուրը եւ Ծների առուակը: Իսկ ձախ կողմից Սեւ աղբիւրի (Ղարա-բուլաղ), Գետաբակի, Գառնակեր եւ Բարսում գիւղերի, եւն. ջրերը եւ հոսում դէպի Կուր գետն:

Ջակամ գետակ, որ բաղկացած է 3 գլխաւոր վտակներից, միջի վտակն բղխում է նոյն լեռնաշղթայից, Բ-ն՝ հիւսիսայինն, նոյնպէս, որ հոսում է Նովի-Սարաթովկայ մալականի գիւղի հարաւային եզերքով եւ միանում միջի վտակին, փոքր-ինչ վար: Իսկ հարաւային օժանդակն, որ առած է իւր սկիզբը Փառիսոս բերդի հիւսիսային լանջերից եւ որ հոսում է Մեծ-Ղարամուրատի արեւելեան կողմով, միանում է առաջին 2 վտակներին: Միացեալ ջրերս հոսում են ապա դէպի Կուր գետն:

Տաւուշ կամ Թովուզ գետակ, որ բաղկացած է 2 գլխաւոր վտակից. Ա-ն վազում է Ղուլալի

1 Անընդհատ խօսող. իսկ այստեղ փոխաբերաբար՝ միշտ շըռ-շըռ ձայն հանող:

գիւղի հիւսիսային ստորոտով Ախնջի անուամբ, իսկ Բ-ն՝ Բերդ գիւղի հարաւային ստորոտով: Երկու վտակներս եւս բղխում են Մրզուզ լեռնաշղթայի հարաւային եւ արեւելեան ստորոտներից եւ լանջերից, միախառնւում Մովսէս գիւղից վար եւ թափւում Կուր գետի մէջ:

Հասան վտակ, որ իւր սկիզբը առնում է Մրզուզ լեռնաշղթայի հիւսիսահայեաց ստորոտներից եւ հետզհետէ ընդունելով բարակ ջրեր՝ հոսում դէպի վար:

Աղստեւ գետ, որ առնում է իւր սկիզբը Բամբակի լեռներից, իւր աջ կողմից գլխաւորապէս հետզհետէ ընդունում է Դիլիջանի կամ Պղնձահանք, Թարսա-չայ[1] եւ Կարավանսարա վտակները, իսկ ձախ կողմից՝ Զոխտակ-Վանքի, Պօղոս քիլիսի, Հաղարծնի, Մթնաձորի, Ներքին-Աղդանի, Հաչաջրի եւ Ոսկեպարի վտակներն եւ ջրերն:

Զորագետ, որ հոսում է Շինող գիւղի հիւսիսային կողմով, իւր աջ կողմից ընդունում Շինողի վտակը եւ հետզհետէ ընդունելով նոյն կողմից այլ ջրեր՝ միանում է բաւական վար Խրամի հետ եւ խառնւում Կուր գետին:

ՄԵԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Նախ՝ գտնւում է Փառիսոս գաւառում, Փառիսոս (Ղալաքեանդ աւերակ քաղաքի արեւելահիւսիս կողմում: Ղարաբուլաղ է կոչւում այժմ աղբիւրս, որ դարձնում է երկու ջրաղաց:

Երկրորդ մեծ աղբիւրն, որ դարձնում է 2 ջրաղաց եւ ունի պատուական ջուր, գտնւում է Զաւէ կամ Կայենի գաւառում՝ Հաղարծնի վանքի մօտ: Տես «Աղ. Երկիր եւ Դրացիք» եր. 52:

Երրորդ մեծ աղբիւրն գտնւում է Քուստի կամ Քաւս գաւառում՝ Կարաւանսարայից վերեւ, մեծ ճանապարհից ոչ այնքան հեռի, եւ կոչւում է Զրոչո:

Չորրորդ մեծ աղբիւրն գտնւում է Սիսական կամ Ծար գաւառում՝ Զբիլ գիւղի արեւմտեան կողմի ստորոտի ձորում:

Հինգերորդն՝ գտնւում է Տիգրանակերտ աւերակ աւանի մօտ:

Վեցերորդն՝ Վարանդայ գաւառում՝ Ղարաբուլաղ այս գիւղի մօտ, որ դարձնում է մի ջրաղաց:

Եօթներորդն՝ Ջաբրայէլ գիւղաքաղաքի մօտ, բայց այս ինքնաբուղխ չէ, այլ ականափոր է:

ՀԱՆՔԱՅԻՆ ՍԱՌՆ ՋՐԵՐ

Ա. Երկաթաջուր. գտնւում է Շուշուց վերեւ՝ Քիրս լեռնաշղթայի մի սարի հիւսիսահայեաց ձորի մէջ, մեծ ճանապարհի վարի կողմում: Ցուրտ է ջուրս, որ բղխում է ձորիս ձախ ափից:

Բ. Թթու ջուր կոչուածն (զելտերսկի), որ բղխում է նոյն ձորի նոյն ափից փոքր-ինչ վերեւ երկաթաջրից:

Գ. Ջրիս յար եւ նմանն գտնւում է Քուստի կամ Քաւս գաւառում՝ Ներքին-Ծամբարակ գիւղից ներքեւ, Թարսա-չայի ձախ ափին ճանապարհի վերայ: Ջուրս տաճկական բարբառով կոչւում է Ղոթուր-Բուլաղ:

ՀԱՆՔԱՅԻՆ ՏԱՔ ՋՐԵՐ

Ա. Ամենալաւն եւ օգտակարն գտնւում է Սիսական կամ Ծար գաւառում՝ Զբիլ գիւղի հարաւային կողմի խոր ձորում: Ջուրս, որ բաւական առատ է, բղխում է վտակի աջ կողմից, բայց չունի շինութիւններ եւ պատսպարուելու բնակարաններ: Ամրան ամիսներում խռնում է այս պրոբատիկէի մօտ շրջակայ նահանգներից եւ գաւառներից ցաւագար անձանց մեծ բազմութիւն եւ առողջանալով վերադառնում: Ափսոս, որ այս պատուական ջերմուկի հորիզոն խիստ նեղ է եւ տեղն՝ անյարմար:

Բ. Ջերմուկն, որի ջերմութեան աստիճանն ստոր է Ա-ից, բղխում է նոյնպէս նոյն վտակաձորի աջ կողմից, սակայն գտնւում է Ծարից բաւական վար:

Գ. Ջերմուկն եղած է Հաղարծին վանքի կողմերում, բայց այժմ յայտնի չէ տեղն, զի անյայտացրած են (տե՛ս նոյն վանքի նկարագրութեանց շարքում):

ԼՃԱԿՆԵՐ

Առաջին լճակն է Ալիարակ, որ մօտաւորապէս մի եւ կէս մղոն հեռի է Գետաշէնից դէպի Մռաւ լեռնաշղթան: Լճակս շրջապատուած է անտառախիտ լեռներով, որոց մէջ ամենաբարձրն է Կեփաս[1], ըստ տաճ. Քեաֆազ, ապառաժ քարեայ սարն, որ հպարտօրէն արձանացած է լճի արեւելեան հարաւային կողմում: Լճակս բաժանուած է երկու մասի. վերնամասն կոչւում է Ըստծու ծով (Աստուծոյ ծով): Երկու մասերի մակերեւոյթի տարածութիւնն է մօտ 54 օրավարաչափ: Լճակիցս, որի եզերքներով տեղ-տեղ դիզուած են ահագին քարեր, ելնում են ընդհանրապէս 3 տեսակ ձուկն:

Ա. տեսակն, որ ազնիւ է միւսներից, որոշւում է իւր սպիտակութեամբ եւ կարմիր ու սեւ բծերով:

Բ. տեսակն եւս ունի սպիտակ գոյն, սակայն ունի միայն սեւ բծեր:

Գ. տեսակն ունի միայն սեւ գոյն եւ մեծ-մեծ, սեւ-սեւ բծեր: Վերջապէս, բացի լճակիս հիւսիսային կողմից ելած ձկներից համեղ են միւս կողմերից հանուած բոլոր ձկներն:

Երկրորդ լճակն, որ գտնւում է Գօշայ վանքի հարաւային կողմում՝ կէս մղոնաչափ հեռի, կոչւում է Տզրկածով, որի մէջ չկայ ձուկն, այլ միայն տզրուկ, գորտ եւ մանր օձեր:

Երրորդ լճակն, որ փոքրիկ է, գտնւում է Ծար գաւառի Պղնձահանքի հարաւային կողմում եղած մեծ սարի ստորոտում:

Չորրորդն՝ Գեօլ-եայլաղը կոչուած տեղում, Լեւ գիւղի արեւմտեան կողմում:

Հինգերորդն գտնւում է Լեւ գիւղի հիւսիսային կողմում, որ կոչւում է Տզրկածով (Զալիգեօլ):

Վեցերորդ՝ 3 լճակներ, որք կոչւում են Բեադր-գեօլլարը:

Եօթներորդ՝ Մարդասպան (Դանլը-գեօլ), Իրիցի շէնի գլխին[2]:

Ութերորդ՝ Դամշոտ ծով, որ գտնւում է Խաչենի Արութիւնայ շինի անդում, 2 ամենափոքր լճակներ, որոց եզերքներն բուսնում են եղէգներ:

Իններորդ լճակն է Վարանդայ գաւառի Նինկի գիւղի անդում եղածն, որ կոչւում է Սիւլիւկնածով:

Տասներորդ՝ 2 ամենափոքր լճակներ Ծովատեղ գիւղի մօտ:

Տասն եւ մէկերորդ՝ 2 աղի լճակներ, որք գտնւում են Արանռոտ գաւառում: Զենք նշանակում Կուր գետի աջ ափերում տեղ-տեղ եղած լճացեալ անշարժ ջուրերը. քանզի բազմիցս լի են լճակներս, երբ յորդում է գետն եւ երբեմն ցամաքած, երբ երաշտ է: Սակայն եւ այնպէս կան, որ անցամաքելի են:

ԱՆՏԱՌՆԵՐ

Արցախական նահանգն ընդհանրապէս հարուստ է (բացի Մուղանի դաշտից) ոչ միայն անտառներով եւ մացառներով, այլեւ վայրի պտղատու ծառերով, տեսակ-տեսակ թփերով, տար-

1 Առած է իւր սկիզբը Դեղամեան մեծ լեռնաշղթայի Ծուռ (8727 ոտք բարձր Այրիջայ) սարի հիւսիսային լանջերից:

1 Սարիս գագաթի վերայ կայ գերեզման, որի տապանաքարի վերայ գրուած է. «Կեփաս ճգնաւորի գերեզմանն է»: Հաւանական է, թէ Ալիարակ անունն յետոյ տեղի տուած է Կեփաս անուանս ճգնաւորիս անուան պատճառաւ, որը մահմեդականք չկարողանալով ուղիղ հնչել, արտասանում են Քեաֆազ:

2 Ծար գաւառում եղած Գ., Դ., Ե., Զ. եւ Է. լճակներս ամենափոքր են ամբողջապէս եւ զուրկ լուղակներից, միայն տզրուկ ունի Տզրկածովն:

բեր-տարբեր բուսեղէններով, սուրբ կենդանիներով եւ գազաններով, սուրբ թռչուններով եւ անսուրբ հաւքերով, ոսկու եւ արծաթի, պղնձի եւ երկաթի հանքերով, ամառանոցներով եւ ձմեռանոցներով: Ջորագետից մինչեւ Երասխի մօտ տարածուած լեռնաշղթայի վերնամասերն գալարագեղ ամառանոցներն են, իսկ մնացեալ մասերն ծածկուած են խտացեալ անտառներով, իսկ փոքր լեռնագօտին՝ մացառներով եւ շամբերով: Բայց հարկ է յայտնել, որ նշանաւոր անտառներն գտնւում են Դիլիջանի, Հաղարծնի, Գետաշէնի, Երից-մանկանց, Եղիշէի, Թարխառի, Խաչենագետի, Քոչատակի եւ Պետրոսյոց գետակի ձորերում, Քոլ կոչուած անտառում եւ Կուր գետի աջ եզերքում:

ԱՆՊՏՈՒՂ ԾԱՌԵՐ

Համարեա թէ բոլոր անտառներում կան կաղնի, հաճարկի, լայնատերեւի, կուզենենի, տըխկի, թեղի, հացի, բեխի, կիչի, լորի, տոսախի, ջղանի, ճապկի եւ կոռելի ծառեր: Բայց սաղուզի ծառերն, սուտ ընկուզի եւ կարմրափայտ (ըստ տաճ. Եալան-դոզի եւ Ղզըլ-ագաջ) միայն գըտնւում են Կուր գետի անտառում եւ Քոլ կոչուած տեղում: Բռշնի եւ թիքենոնի ծառերն գտնւում են անդերում, գենի (գի) եւ բեւեկնի՝ Կիւլստանի անտառներում, Թարխառի ձորերում եւ Դիզակ գաւառի Դիզափայտի լեռնաշղթայի, մանաւանդ դէպի Երասխն խոնարհուած մասերում, մայրի եւ վայրենի ուռենի ծառեր միայն Դիլիջանի անտառներում, իսկ արջախնդեղնի՝ մեծ լեռների անտառներում, կաղամախի, սօսի, բարտի եւ փշատի (փշաշատի) ծառեր՝ միայն դաշտային մասերում եւ ուռենի՝ գետահովիտներում:

ՊՏՂԱՏՈՒ ՎԱՅՐԻ ԾԱՌԵՐ

Գրեթէ բոլոր անտառներում գտնւում են ճըռ տանձի, ծոմ տանձի, ճըռ խնձորի, զկռի (զղնարի), սզնի, սալորի, հունի, ակղնի (արքայակաղնի), ընկուզի, իսկ անդերում գտնւում են միայն մոխրատանձի եւ լկրթնի:

ԹՈՒՓԵՐ

Մացառներում եւ շամբերում լինում են ցախաւելի կամ հոըմառկի, գերմասրի, թրլզի, դըժնիկ, տատասկ, ծմակամոշ (մորենի-մալինա), սեւամոշ, մռամոշ, գետամոշ[1], մասուրի, կծիուրի, ցրդի, վարդենի:

ԻՆՔՆԱԲՈՅՍ ՈՒՏԵԼԻ ԿԱՆԱՉԵՂԵՆՆԵՐ

Ծմակներում լինում են խաղազ, կոմզուկ, սմնդուկ, ծմակթափան, սոկոն կամ սունկ:

Անդերում՝ ձնենեկ, փիփերտ (ամենքեսմաջի) խնջլոզ, շրիշ-խնջլոզ, կնձմնձուկ, տոպաշար, ուտումտիտեմ, սիբեղ, թարթանջուկ, պառաւապորտ, եղնաճակատ, գինազոս, շուշան, եղինջ, շրիշ, աւելուկ, շէպ եւ բոխի:

Ջրերի մէջ կամ մօտերքում՝ ջրիկուտեմ, գաղձ, ջրափափուկ ճռճռոկ:

Արցախի դաշտերում՝ շոմին (վայրի սպանախ), տոմբալան (նման է գետնախնձորի եւ կուտուի միայն խորոված), սամիթ եւ կապար:

Խոտ, առոյտ, խնձործաղիկ, կռոթնը, արջաթանթուլ, ախտըկոռնը, շնավարունկ, լոշտակ, սուտ եղինջ, կածուկ, բիլիբիտարի, ագռաւի սողան, նրկարար, ալակիզ, բէտանկի, պլանուկ:

1 Ինչպէս մորենիների թփերն, նոյնպէս եւ պտուղներն չորս տեսակ են, որք են. ծմակամոշ՝ մալինա, սեւամոշ՝ անդերում եղածն, մռամոշ, որոց ցողուններն 2-3 թիզ միայն կբարձրանան, իսկ գետամոշն լինում է սովորաբար գետերի եւ այլ ջրերի հովիտներում:

ՎԱՅՐԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Վարդ, ծմակավարդ (սպիտակ, դեղին, կարմիր եւ մանուշակի չափ բարձրացող), զրավարդ (մասուրի վարդ), մանուշակ, ձնծաղիկ, նովրուզ, խնձաղայ, նարկիզ, մշահամուկ (անթառամ ծաղիկ), նուռնուփար, կակաչ, հարսնածաղիկ, շուշան, միխակ, ձիւնածաղիկ, զամբաղ, լուսածաղիկ եւն, եւն:

ՎԱՅՐԻ ՍՈՒՐԲ ԿԵՆԴԱՆԻՔ

Մեծ եւ բարձր սարերում եւ անտառներում լինում են քօշ, այծ, եղջերու, եղն, կինճ եւ խոզ, իսկ ամայի դաշտերում՝ հօրաններով այծեամն, բայց անդերում՝ նապաստակ:

ԳԱՋԱՆ ԿԱՄ ԳԻՇԱԿԵՐ

Առիւծ՝ խիստ սակաւ, վագր՝ նոյնպէս, ինձ, բորենի, արջ, գայլ, աղուէս, չաղալ, գիշերի, սեւականջ (զարաղուլաղ) սամոյր, սկիւռ, առնէտ, խլուրդ, մուկն եւ ջրաշուն (Թարթառ գետում):

ՍՈՒՐԲ ԹՌՉՈՒՆ

Անտառներում եւ անդերում՝ փասեան, սալամն, կաքաւ, հաւփալ, աղաւնի, տատրակ, լորամարգի, չարտ, մոշահաւ կամ մշահաւ, որի (տուլաշ), արտուտ, սուրբ Յակոբի թռչուն, ճնճղուկ, չլածիտ: Մեծ դաշտերում՝ կատակ հաւ (թուրաջ): Կուր գետի վերայ՝ արոս, սագ, բադ:

ԳԻՇԱԿԵՐ ԿԱՄ ԱՆՍՈՒՐԲ ԹՌՉՈՒՆ

Արծիւ, անգղ, բազէ չորս տեսակ՝ ա. Թաւար ղուշ, բ. Թառլան ղուշ, գ. ղզըլ ղուշ, դ. ղիրղի, լեղակ, ցին, ուրուր, չորթանագող, բու, հողմահար, գայլագռաւ, ակռաւ, կաչաղակ, ներկարար, կացահար (ծառակուտկուտ), ճանճագող, կու, չղջիկ, ջրային՝ ձկնկուլ, ճայ, ղուշ:

ԵՐԳԵՑԻԿ ԹՌՉՈՒՆ

Կու, կուկու, յոպոպ, սոխակ, լծի, բաբաճըզտ, չլածեւ, դեղձանիկ, զոզռան, ջրըպլըզտպըզտ, չափարծակի, շիլոշիլոյ, մշահաւ եւ ուրիշ հարիւրաւոր մանր թռչուններ, որոց անունները ո՛չ ժողովուրդն գիտէ եւ ո՛չ մենք:

ՉՈՒՈՂ ԹՌՉՈՒՆՆԵՐ

Կռունկ, արագիլ, սասարք, սարեակ, ծիծեռնակ:

ՍՈՂՈՒՆ ԵՒ ՋԵՌՈՒՆ

Օձ՝ բազմատեսակ, որք են՝ շահմար, ելմար, իժ, քարբ, թեւաւոր[1], գիւրզայ եւ ջրի օձեր՝ զանազան մեծութեամբ եւ զանազան գոյներով[2]. լոկ, քարաթոթոշ, կանաչ մողէզ, մողէզ, կրիա, խեցգետին, ոզնի, գորտ, կարիճ, իշախառանջ, մորմ, (Մուղանի դաշտում), քառասնոտեայ, մըրջիւն, թեւաւոր մրջիւն, ձիաւոր մրջիւն:

1 Խիստ սակաւ է օձի այս տեսակն, որ ընդհանրապէս լինում է բարակ, կարճ, մուգ մոխրագոյն եւ արագաշարժ:

2 Աւելի մեծերն եւ թունաւորներն գտնւում են Մուղանի դաշտում:

Միջատներ. շանաճանճ, բոռ, ճախարակ, մլակ, փնտիռն, ճպուռն, մարախ, սեւաճանճ, մեծ ճանճ, կանաչ ճանճ, ձիաճանճ, պիծակ, լուսատատիկ, կնտ, Աստուծոյ կով, Աստուծոյ եղն, զատիկ, ականջմտուկ, ոթեւ, մոշաթսի, ոսկեպղոջ, սարդ, թիթեռնիկ, աղօմարար (ունի կանաչ գոյն եւ երկար ոտքեր):

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Արցախն հարուստ է եւ ընտանի կենդանիներով, որք են.
Սուրբ անասուններ. գոմէշ, եղն, կով, արջառ, երինջ, ոչխար, այծ եւ խոզ:

ԸՆՏԱՆԻ ԹՌՉՈՒՆՆԵՐ

Հնդկահաւ, սագ, բադ, հաւ, աղաւնի:

ԱՆՍՈՒՐԲ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

Ուղտ, ձի, ջորի եւ էշ:

ՆԱՀԱՆԳԻՍ ԲԵՐՔԵՐՆ

Ցորեն, գարի, կորեկ, որիզ, գարնանի, գարնագարի, հաճար, սորեկ, կտաւհատ, ոսպ, սիսեռն, ոլոռն, բակլայ, լուբիայ, մաշ, խաշխաշ, վարունկ, դդում, բազմատեսակ, սոխ, սխտոր, բողկ[1], ճակնդեղ, գազար, գետնախնձոր, սեխ՝ բազմատեսակ, ձմերուկ, սմբուկ (սեւ լամբլիջան), կարմիր տոմաթ, պղպեղ, տանձ, խնձոր, դեղձ, սերկեւիլ, թուզ, նուռն, ընկույզ, զղնար, արքայակաղին, խաղող, գինի, օղի, բոժոժ, մեղաքս, բամբակ, բուրդ:

Արդէն խօսած ենք Արցախեան ամառանոցների մասին «Աղուանից երկիր եւ դրացիք» գիրքի 56 երեսում, վասն որոյ աւելորդ է վերստին գրել:

ՈՍԿԻ

Ոսկի ելնում է (խառն պղնձի հետ) Գարդման գաւառի Քարհատ գիւղի մօտի հանքից եւ Փառիսոս գաւառի Գետաբակ գիւղի հանքերից:

ԱՐԾԱԹ

Վաղ ժամանակից առատօրէն հանած են Ջրաբերդ գաւառի Մէհմանայ աւերակ գիւղի մօտ, եղած արծաթահանքից, բայց այժմ մնում է անգործադրելի:

ՊՂՆՁԱՀԱՆՔ

Ա. Գտնւում է Ծար գաւառի Ռմբասարի արեւելեան լանջի վերայ, որ սեպհականութիւն է Խոթա վանքին. հնուց գործածուած է հանքս, իսկ այժմ անգործածելի:

Բ. Գարդման գաւառի Քարհատ գիւղի մօտ, որ սեպհականութիւն էր Գարդմանայ իշխաններին, իսկ այժմ բանեցնում է գանձակեցի Ներսէս-բէկ Տէր-Ներսիսեանցն:

Գ. Փառիսոս գաւառի Գետաբակ գիւղի մօտ, որ կանխաւ պատկանում է գաւառիս իշխաններին, ապա՝ Զաքարէ եւ Իւանէ սպասալար իշխաններին, ապա՝ Վահրամ իշխանին, եւ յետոյ՝ Կիւրիկեան թագաւորներին. այժմ գործ է ածում մի գերմանացի:

Դ. Գտնւում են շատ հանքեր Քուստի կամ Քաւս գաւառի Մրզուզ սարի հիւսիսահայեաց ստորոտների ձորերում. 1) զուտ եւ պատուական պղնձահանք կայ Թովուզ գետակի աջ կողմում՝ Արջաքար կոչուած օժանդակի աջ ափի վերայ, ջրախառնուրդի մօտ: 2) Բրտանոց կամ Բիւլոր-Բիւթի ձորում՝ փոքր-ինչ վերեւ առաջնից, Բ. օժանդակի աջ ափի վերայ՝ ջրախառնուրդի մօտ: 3) եւ 4) Հանքն՝ զուտ պղինձ, 2-ից (երկրորդից) փոքր-ինչ վերեւ՝ նոյն գետակի ձորում: 5) Պղնձահանքն[1] կայ նոյն գետակաձորի վերայ՝ Բուղդալու անուանեալ օժանդակի վերի կողման մօտ[2]: Կան պղնձահանքեր նաեւ նոյն գաւառի Նաւուրայ-ջուր ջրաձորում՝ Հասան վտակի վերնամասում, նախ աջ կողմից խառնուող առուակների վերայ, ապա՝ Զաթախ առուակի վերայ՝ Դանիէլ-գաշ կոչուածի տակ, եւ ապա՝ Արջի-կոխեր անուն ջրաձորում: Վերջինս գործ դրուած է երբեմն: Այժմ բոլորովին անգործածելի են գաւառիս բոլոր հանքերն:

Ներքին-Թանդիրլուի ջրաձորում կայ արծաթախառն արճճի հանք. Վերին-Թանդիրլուի ջրաձորում՝ արծաթ-պղինձ խառն արճիճ. Մեծ-Սագիր կոչուած առուակի վերայ կայ պղնձախառն արջասպի հանք: Ինէկ (կով) դաղի ձորում, վերի կողմում կայ պղինձ, իսկ վարի կողմում՝ ցինկ: Կայ նաեւ պատուական քարածուխ Մրզուզ սարի վերի կողմերում:

Ե. Պղնձահանք կայ նաեւ Դիլիջանից վերեւի ձորում:

ԵՐԿԱԹԱՀԱՆՔ

Գտնւում է Գարդման գաւառի Բանանց գիւղից վերեւ՝ Բանանց գետակի ձորի աջ ու ձախ կողմերում: Հանքերիս արտադրած քարերում կայ եւ պողպատաքար. նոյնպէս եւ Զաւէ գաւառի Կողբ գիւղի Բովեր կոչուած սարում[3]:

ԵՐԿԱՆԱՔԱՐԻ ՀԱՆՔ

Ա. կարգի եւ ամենալաւն է Խաչեն գաւառում Գանձասար վանքի սեպհական Ջրաղացքարի հանքից ելածն, որ կայ Վանք գիւղից վերեւ:

Բ. Նոյն գաւառում՝ Առաջաձոր գիւղի մօտ:

Գ. Փառիսոս գաւառում, Խամշի վանքի արեւելեան կողմում Ջոքէ քարահանքից ելածն:

ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՔԱՐԱՀԱՆՔԵՐ

Ա. կարգի եւ մարմարանման քարահանքն գտնւում է Գարդման գաւառի Քարհատ գիւղի մօտ: Հանքիս մօտ կան եւ շինութեան ուրիշ քարահանքեր եւս:

Բ. կարգի ազնիւ քարի հանք կայ Խաչեն եւ Տիգրանակերտ գաւառների սահմանագլուխ սարում, որի շարունակութիւնն հասած է մինչեւ Ջրաբերդ եւ Կողթ գաւառի վերջի սահմանն: Սպիտակ են երկու քարահանքերիցս ելած քարերն եւս: Համարեա թէ լեռնային բոլոր գաւառներում եւս կան սպիտակ, մոխրագոյն եւ տորոնագոյն քարահանքեր. օր.

Գ. Խազազի սպիտակ քարահանքն Վարանդում:

Դ. Տորոնագոյն քարահանքն Դող բերդի մօտ Դիզակում:

Ե. Մոխրագոյն քարահանքն Շուշում, Քառասնի, Դաշբուլաղ, Բալլուջա, Խանձք, եւ այլն

1 Բազմատեսակ՝ սեւ, սպիտակ, կարմիր, ամսական:

1 Հանքս գործածութեան մէջ եղած է երբեմն:
2 Այս տեղերքում կան նաեւ երկաթախառն պղինձ եւ ծծմբախառն այլ բաղադրութիւններ:
3 Այժմ գործածական է միայն Գետապակի, Քարհատի եւ Դիլիջանի հանքերն: Անգործածելի են արծաթահանքն եւ երկաթահանքերն:

գիւղերի մօտ եղած լեռներում. (Խաչենում): Տորոնագոյն ազնիւ քարահանք Մմակահող գիւղից վերեւ, որով շինուած է Գանձասար վանքն. այսպէս են Խոթայ, Խաթրայ եւ Մարայ, Վարագայ, Գօշայ եւ Հաղարծնի վանքերի քարահանքերն: Իսկ մոխրագոյն են կամ մուգ դորշագոյն միւս վանքերի շինութեանց քարերն:

ՆԱԻԹԱՀԱՆՔ[1]

Գտնւում է Ուտի-առանձնակ գաւառում Մարալեան գիւղի արեւմտեան կողմում: Հանքից ելնում է սեւ նաւթ, որ թանձր է քան Բագուի նաւթերն: Նաւթից գրեթէ չեն պատրաստում վառելու, զի թանձր է հեղուկն, այլ պատրաստում են մի քանի տեսակ իւղեր, որք գործածական են զանազան մեքենաների համար:

ԱՐՑԱԽԵԱՆ ԳԱՒԱՌՆԵՐ

Գարգարացւոց բնակութեան տեղին, որ սկզբում կոչուած էր Գարգար[2], հետզհետէ ընդունում է Արցախ[3], Փոքր-Սիւնիք[4], Խաչենք[5], Սեաւ այգի[6] եւ Ղարաբաղ[7] անունները:

Ահաւասիկ ասպիսի փոփոխութեանց ենթարկուած են նաեւ նահանգիս բոլոր գաւառաց անունները: Մեր յարգելի բանասէրները եւ ընթերցողները այսչափ փոփոխութեանց ծանօթացնելու համար հարկ համարեցինք կարգաւ դասաւորել այստեղ գաւառներիս նախկին, փոփոխեալ եւ այժմեան անունները ծանօթագրութեամբ հանդերձ:

Բնութեան ճարտարապետն երեք մասի բաժանած է Արցախի բոլոր գաւառները, որք են Դաշտային, Լեռնային եւ Յարաւային եւ կամ՝ Ստորին, Միջին եւ Վերին: Դաշտային կամ Ստորին գաւառներն ընկած են Երասխ եւ Կուր գետերի, Աղստեւ գետի եւ Փոքր-լեռնաշղթայի միջավայրի տարածութեան վերայ: Լեռնային կամ Միջին գաւառներն ընկած են Փոքր-լեռնաշղթայի եւ Մեծ-լեռնաշղթայի հիւսիսահայեաց լանջերի եւ Ջորագետի միջեւ տարածուած մասի վերայ: Հարաւային կամ Վերին գաւառներն ընկած են Հակարի գետի ձախ ափերի, Դիզափայտ եւ Քիրս լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերի մէջ՝ Երասխից մինչեւ Ծար գաւառի սահմանն:

ԴԱՇՏԱՅԻՆ ԿԱՄ ՍՏՈՐԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ

Ա. Գաւառն, որ ընկած է Երասխի եւ Ղուրու չայ գետակի ձախ ափերի, դաշտաբերանի եւ Մուխանք գաւառի սահմանի մէջ, կոչուած է Պիանք[8], այժմ՝ Ջաբրայէլի գաւառ:

Բ. Գաւառն, որ ընկած է Երասխի ձախ ափի, Վարդանակերտ գաւառի եւ դաշտաբերանի տարածութեան մէջ, ստացած է Մուխանք[9], Մուղան[10] այժմ՝ Միլին դաշտ, անունները:

Գ., Դ., Ե. եւ Զ. գաւառներն, որք ընկած են Կուր գետի եւ Գարգար գետակի աջ ափերի, դաշտաբերանի եւ Մուխանք գաւառի սահմանի մէջ. ստացած են Արանոտ, Տոի, Ռոցպատեան եւ Աղուէ[1], այժմ առաջին երկուքն միասին՝ Քեաբիրլու, իսկ վերջին երկուսն՝ Ջաւանշիր:

Է. Գաւառն, որ ընկած է Կուր գետի եւ Խաչենագետի աջ եւ Գարգարի ձախ ափերի եւ դաշտաբերանի մէջ, ստացած է Տուչքատակ[2], Տիգրանակերտ[3], Թառնագիւտ, այժմ՝ Շահ-բուլաղ, անունները:

Ը. Գաւառն, որ ընկած է Կուր գետի, Խաչենագետի, Կուրակ գետակի եւ դաշտաբերանի մէջ, ստացած է Ուտի-առանձնակ[4], Ուտի գաւառ, այժմ՝ Ջուանշիր:

Թ. Գաւառն, որ ընկած է Կուր գետի, Կուրակ եւ Շամքոր գետակների եւ դաշտաբերանի մէջ. ստացած է Շիկաշէն[5], Շակաշէն[6], Արշակաշէն[7], Գանձակ, Գեանջա, այժմ՝ Ելիսաւետապոլի գաւառ:

Ժ. Գաւառն, որ ընկած է Շամքոր գետակի ձախ, Կուր եւ Աղստեւ գետերի աջ ափերի եւ դաշտաբերանի մէջ. ստացած է Կողթ[8], Շամքոր[9] եւ Ջակամ[10], այժմ՝ Շամշադին եւ Ղազախ, անունները: Գ., Դ., Ե., Զ., Է., Ը., Թ. եւ Ժ. գաւառներն երբեմն պատկանում էին Ուտի նահանգին:

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ ԿԱՄ ՄԻՋՆ-ԱՐՑԱԽ

ԺԱ. Գաւառն, որ ընկած է Երասխ գետի ձախ եւ Ղուրուչայի աջ ափերի, Հադրութի եւ Դիզափայտի լեռնաշղթայի գագաթնագծի մէջ, ստացած է Պազկանք[11], Պանծկանք[12], Դիզակ[13], այժմ՝ Ջաբրայէլ, անունները:

ԺԲ. Գաւառն, որ ընկած է Ղուրու չայի ձախ եւ Գարգար գետակի աջ ափերի, Դիզափայտ եւ Քիրս լեռնաշղթայի գագաթնագծի եւ դաշտաբերանի մէջ, ստացած է Միւս-Յաբանդ[14] կամ Յաբանդ-Ամարաս[15], Վարանդայ[16], այժմ եւս՝ Վարանդայ, անունները:

ԺԳ. Գաւառն, որ ընկած է Գարգար գետակի ձախ եւ Թարթառ գետի աջ ափերի, դաշտաբերանի եւ Քիրս լեռնաշղթայի շարունակութեան գագաթնագծի մէջ, ստացած է Մեծ-իրանք[17], Մեծարանք[18], Ներքին-Խաչեն[19], այժմ՝ Խաչեն, անունները:

ԺԴ. Գաւառակն, որ ընկած է Թարթառի եւ Եանշաղի ձախ եւ Թրղու աջ ափերի մէջ. ստացած է Ըստիսական[20], Ըոստակ[21], Յաթերք, անունները:

---

1 Փորելու, հանելու եւ այլ գործիքները նոյն են, ինչպէս են Բագուի հորերինը:
2 Յարդ եւս Գարգար է կոչւում գետակն, որ իր սկիզբը առնում է Ջառիստ սարից, բաժանում իբրեւ սահման Խաչեն գաւառը Վարանդայից, հոսում Գարգարացւոց դաշտի միջով եւ թափւում Կուր գետի մէջ:
3 Խոր., Գ.գիրք, Գ. գլ., Ասող., եր. 65. եւն:
4 Խոր., Գ.գիրք, Գ. գլ., Ասող., եր. 65., տպ. Մոսկ. եւ Սամ. Ան., եր. 192:
5 Ասող., եր. 107 եւ 256:
6 Սամ. Ան., եր. 193:
7 Մատենագրութեանց մէջ առաջին անգամ պատահում ենք Ղարաբաղ անուան, որ գործ ածած է 1388 թիւ Փրկ. Թով. Մեծ., եր. 20:
8 Մատ. Խոր., եր. 609:
9 Մատ. Խոր., եր. 609:
10 Կիր. Վարդ. Բարձ. Եսայի Կաթ.:

1 Մատ. Խոր., եր. 610 եւ ձեռագիրներ: Հարկ է յայտնել, որ անհնարին է գտնել գաւառներիս մէջ ընկած միջնասահմանները, քանզի ամենեւին չկայ որոշող բնական մի նշան: Մով. Կաղանկատուացին յիշում է միայն Մուխանք, Տրի եւ Աղուէ (այժմ՝ Ալուանդ) գաւառները (եր. 264):
2 Մատ. Խոր., եր. 610:
3 Սեբ., եր. 92: Մով. Կաղ. եր. 241. Տկոանակերտ եւ այլն:
4 Մատ. Խոր., եր. 610:
5 Մատ. Խոր., եր. 610:
6 Բուզ., եր. 210: Մով. Կաղ., 251:
7 Մով. Կաղ., եր. 265:
8 Բուզ., եր. 176-177: Մատ. Խոր., 610: Մով. Կաղ., եր. 244:
9 Մով. Կաղ., եր 252: Կիր., եր. 114:
10 Ան. պատմ., եր. 9: Ես. Կաթ. 23: Հարկ է յայտնել, որ գաւառիս արեւելեան կողմն այժմ կոչւում է Շամքոր, արեւմտեանն՝ Ղազախ, իսկ միջավայրն՝ Ջակամ:
11 Մատ. Խոր., եր. 609:
12 Ձեռագրերում՝ Բազկանք, Պանծկանք:
13 Ես. Կաթ., եր. 36: Գաղտ., եր. 195:
14 Մատ. Խոր., եր. 609:
15 Մով. Կաղ., եր. 264. «Հաբանդ եւ Ամարաս», իսկ ուրիշ տեղերում՝ երբեմն Ամարաս:
16 Ես. Կաթ., եր. 37: Գաղտ., եր. 201:
17 Մատ. Խոր., եր. 609: Մով. Կաղ., եր. 263:
18 Տե՛ս ստորեւ Արձան. Վանուց Մեծիրանաց գրքիս:
19 Գաւառիս ներքին մասն կոչւում է Ներքին Խաչեն (Վարդ. Բարձր., եր.184):
20 Մատ. Խոր., եր. 606: Ձեռագիրք Ռաստակ:
21 Մով. Կաղ., եր. 163.

ԺԵ. Գաւառն, որ ընկած է Մռաւ բարձր լեռնաշղթայի, դաշտաբերանի, Թրղի եւ Թարթառ ջրերի ձախ եւ Կուրակ գետակի աջ ափերի մէջ, ստացած է Մեծ-կողմանք[1], Մեծկուանք[2], Չարաբերդ[3], Թալիշ, Կիւլիստան, Ջրաբերդ[4], այժմ՝ Ջուանշիր, անունները:

ԺԶ. Գաւառն, որ ընկած է Կուրակ եւ Շամքոր գետակների, դաշտաբերանի եւ Մռաւեան լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան մէջ, ստացած է Գարդման[5], Գարդմանաց ձոր[6], Գարթմանիկ[7], այժմ՝ Գանձակի գաւառ, անունները:

ԺԷ. Գաւառն, որ ընկած է Շամքոր գետակի միջին օժանդակի եւ Գեղամայ լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան եւ Տաւուշ գետակի հարաւ-արեւելեան օժանդակի (Ախնջի) ափերի եւ դաշտաբերանի մէջ, ստացած է Փառնէս[8], Փառիս[9], Փառիսոս[10], այժմ՝ Շամշատին, անունները:

ԺԸ. Գաւառն, որ ընկած է Տաւուշ կամ Թովուզ գետակի հարաւային (Ախնջի) օժանդակի, Աղբստեւ գետի եւ Գեղամեան լեռնաշղթայի եւ դաշտաբերանի մէջ, ստացած է Քուստի[11], Քաւս[12], այժմ՝ Ղազախ, անունները (մեծ մասն Շամշադին):

ԺԹ. Գաւառն, որ ընկած է Կուր գետի, Ջորագետի, Խրամի, Աղստեւ գետի, Պօղոս-քիլիսայի եւ Կայենի լեռների գագաթնագծերի մէջ, ստացած է Ջաւէ[13], Ջորագետ, Երկիր Սեւորդեաց[14], Երկիր Կայենոյ[15], այժմ՝ Ղազախի գաւառ, անունները:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿԱՄ ՎԵՐԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ

Ի. Գաւառն, որ ընկած է Պաղկանց գաւառի, Երասխ եւ Հակարի գետերի, Դիզափայտ եւ Քիրս լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերի մէջ, ստացած է Բերդաձոր[16], Բերդձոր[17], Բելուական[18], Ղալաղշլաղի ձոր, Ղալա-դարասի անունները, այժմ համարւում է Ջաբրայէլի գաւառ:

ԻԱ. Գաւառն, որ ընկած է նոյն լեռնաշղթայի գագաթնագծի շարունակութեան, Շուշուց Կօրիս տանող մեծ ճանապարհի եւ նոյն Հակարի գետի մէջ, ստացած է Յարճլանք[19], Ջառիստ[20], այժմ՝ Յաճի Սամլու կամ Յաճիլար:

1 Մով. Կաղ., եր. 94, 163.
2 Մատ. Խոր., եր. 609:
3 Մով. Կաղ., եր. 124: Կիր. Դանձ., եր. 216:
4 Գաղտ., եր. 205:
5 Մատ. Խոր., եր. 258, 606, 610:
6 Մատ. Խոր., եր. 258:
7 Վարդ. աշխարհ., «Գարդման գաւառ Գարթմանիկ է»:
8 Մատ. Խոր., եր. 609: Մով. Կաղ. եր. 273 եւ 279:
9 Մով. Կաղ., եր. 273:
10 Վարդ. Բարձր., եր. 134 եւ Ասող., եր. 154, 198, 256 եւ 283:
11 Մատ. Խոր., եր. 906. «Քստակ, Քուստի, ձեռագիրք՝ Քուստի:
12 Մով. Կաղ., եր. 273: «Սահակ, որ եւ Սեւադայ կոչեցաւ... առհասարակ տիրեաց Դարդմանայ, Քաւսայ եւ Փառնայ գաւառաց, այլ եւ Ջորագետոյն բովանդակ եղեւ իշխան»:
13 Մատ. Խոր., եր. 606:
14 Յով. Կաթ., եր. 234:
15 Վարդ. Բարձր., եր. 184 եւ Կիր., եր. 122 «յաշխարհն Կայենոյ» «ի գաւառին Կայենոյ». Հարկ է յայտնել, որ Ջորագետ էր կոչւում գաւառիս Ջորագետի կողմերն, իսկ Կայենոյ գաւառ՝ գաւառիս հարաւային վերնամասն:
16 Մատ., Խոր., եր. 609:
17 Մով. Կաղ., եր. 264:
18 «Վիճակեցաւ եւ սահմանով ի յԱղուանայ գետոյ մինչ 'ի Երասխն.. Վակունիս, Ջառիստ.. Հաքարի.. Դիզակ, Բելուական» (Արձան. Գտչայ Վանուց):
19 Մատ. Խոր., եր. 609:
20 Արձանագ. Գտչայ վանուց:

ԻԲ. Գաւառն, որ ընկած է Հարճլանք եւ Ծար գաւառի սահմանների մէջ, ստացած է Վակունիք[1], Վերին-Վայկունիք[2] անունները:

ԻԳ. Գաւառն, որ ընկած է Մռաւ սարի հարաւահայեաց լանջերի, Ռմբասարի գագաթնագծի, Վակունիք եւ Ռստակ գաւառների սահմանների մէջ, ստացած է Սիսական-Ոստան[3], Սիսական[4], Ծար[5], Ջար[6], այժմ՝ Ջար գաւառ:

Երեւի թէ Խորենացին գաւառներիս հետ հաշուած է եւ Վարդանակերտ գաւառը, որով լրանում են ուղիղ քսան եւ չորս գաւառներն Արցախեան նահանգի:

Ա. ՊԻԱՆ ԳԱՒԱՌ

Խիստ պակաս է գաւառիս ջուրն: Համարեա թէ ջուր գտնւում է միայն Երասխի, Ղուրու չայի եւ Քեօնդալանի եզերքներում, վասն որոյ սակաւ են եւ գաւառիս բնակիչներն, որք են միայն մահմեդականներ: Ինչպէս երեւում է հին առուի հետքից, Աղուանից թագաւորների ժամանակ ջուր բերուած է Երասխից, որով ջրուած է ոչ միայն Պիան, այլ եւ Մուխանք եւ այլ գաւառներն: Հայաբնակ էր գաւառս վաղուց, բայց հայկական հնութիւններն իսպառ անհետացած են մահմեդական բնակիչների ձեռնով:

Բ. ՄՈՒԽԱՆՔ ԿԱՄ ՄՈՒՂԱՆ ԳԱՒԱՌ(1)

Ընդարձակ է այս բոլոր գաւառներից, բայց այժմ ապարդիւն, անբնակ եւ անջուր է: Այժմ համարեա թէ ամայի է լայնածաւալ դաշտս: Բայց կայ մի հնութիւն-Աւերակ բերդ[7]. (Էօրան ղալա) անուն, որից մինչեւ Ամարաս մօտաւորապէս 8l/2 մղոն է: Բերդս պարսպուած է թրծնալ մեծ-մեծ եւ հաստ-հաստ աղիւսով, որից շատ մասը քանդած եւ տարած են աղջաբադեցիք եւ ազախանլու մահմեդականներն, որ Երասխից շատ հեռի չեն: Բերդումս կան հին շինութեանց շատ աւերակներ: Երեւում են բաւականին փորուածքներ, քանդուած տեղերիցս, ինչպէս վկայում են, գտած են ոսկեայ, արծաթեայ եւ պղնձեայ դրամներ եւ խեցեղէն անօթներ:

Բերդիցս քաւորդ մղոնաչափ վար կայ հայկական հանգստարան, որի մէջ կան խաչաձարդ տապանաքարեր: Պարսիկներն հանգստարանիս մօտ կառուցած են Փեյղամպեր անուն մի գըմբէթ, որի մէջ կայ մի զոյգ գերեզման՝ կից միմեանց, խաչանիշ տապանաքարերով: Մահմեդականաց համար մեծ ուխտատեղի է այս: Հարուստ շիաներն գմբէթիս շրջապատում են թաղում իւրեանց մեռելները: Գմբէթիս մօտ շինուած են մի քանի բնակարաններ թէ՛ կարդացող մոլլա պահապանների եւ թէ՛ ուխտաւորների համար: Անտանելի են այստեղ ամռան օդն եւ կլիման, քանզի այստեղ կան թունաւոր օձեր, կարիճներ, մորմ, մոծակ, բոռ եւ ուրիշ մժղուկներ: Բայց կան եւ հօրաններով այծեամներ գաւառիս դաշտումն, ուր չկան այժմ ո՛չ անտառ եւ ո՛չ ջուր:

Գ., Դ., Ե. եւ Զ.[8] գաւառներն, որք են Արանռոտ, Տռի, Ռոցպատեան եւ Աղուէ, (2) նմանա-

1 Մատ. Խոր., նոյն եր.:
2 Մով. Կաղ., «Կալեալ զգաւառսն... որք են այսոքիկ՝ Վերին Վայկոյնիք, Բերդձոր, Սիսական»:
3 Մատ. Խոր., եր 609:
4 Մով. Կաղ., եր. 264:
5 Ստ. Օրբ., ԾԷ. գլ.:
6 Պարսից Շահերն Աղուանից Կաթուղիկոսներին տուած հրովարտակների մէջ յականէ յանւանէ յիշում էին այսպէս. «Պետրոս Կաթուղիկոսին (Աղուանից) Դանձակայ, Ղարաբաղու, Ջաւ-Ջբիլու (ոսկին առատ Ծար գաւառ) եւ Շամախու եւն.» (Սար. Ջալ., Ճան., եր. 491):
7 Աւերակիցս տեղափոխուած են Դիզակ գաւառի Թաղասեռ եւ Որդնաշատ գիւղերի բնակիչներն: Աւերակս կոչւում է եւ Միլին քաղաք, եւ դաշտս՝ Միլին դիւզ:
8 Արցախի բուն գաւառներին են վերաբերում Պիանք եւ Մուխանք գաւառներն, բայց որովհետեւ գտնւում են դաշտային մասում, վասն որոյ դասուեցան 'ի շարս դաշտային գաւառաց Ուտի նահանգի: Սակայն յայտնի են արդէն Ուտի նահանգի գաւառներն:

պէս մահմեդականաբնակ են այժմ: Գաւառներիս բնակիչներն շարունակ երթևեկում են ամառանոց եւ ձմեռանոց: Գաւառներս հարուստ են ոչխարներով, տաւարներով, ձիերով եւ ուղտերով: Գաւառներս առ հասարակ ուտիքնակ եղած են: Մահմեդականք այնպէս անյայտացրած են եկեղեցեաց եւ հանգստարանների քարերը, որ նշաններն անդամ չեն գտնւում կամ հազիւ ուրեք:

Է. ԳԱՒԱՌ ՏՈՒՉՔԱՏԱԿ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ԵՒ ԱՅԼՆ

Գաւառս խիստ արդիւնաբեր է եւ հարուստ այգիներով, պարտէզներով, ցորենի, գարու, կորեկի, ձմերուկի, սեխի, վարնկի եւ այլ նշանաւոր մրգեղինաց բերքերով եւ չորքոտանի սուրբ եւ անսուրբ անասուններով, սակայն հարկ է ասել, որ պակաս է գաւառիս ստորին մասի ջուրն: Գաւառիս վերնամասումն է Տիգրանակերտ[1] աւանն, որ աւերակ է այժմ: Բայց հարկ է յայտնել, որ ընդարձակ գիւղաքաղաք եղած է այս եւ երբեմն առաջնորդանիստ եւ գաւառագլուխ. տակաւին մնում է ընդարձակ եկեղեցու աւերակն, շուկայի, տների եւ բաղանիսների կիսաւեր քարուկիր շինութիւններն եւ այլն: Աւերակիս ստորոտումն է Շահ-բուլաղ մեծ աղբիւրն, իսկ վերի ծայրումն՝ հանգստարանն: Իսկ աւերակիցս վերեւ է Վանքասարն եւ Հովուի սարն, որոց հետ կապուած է աւանդական պատմութիւն (տե՛ս ծանօթ. 3): Աւերակիս մօտ է եւ մի նոր բերդակ, որ շինուած է ամբողջապէս սրբատաշ քարով եւ կոչւում է Թառնագիւտի կամ Շահբուլաղի բերդ:

Գաւառիս ստորին մասումն են Սոլթան-պուտ հողնայ բերդն, որ բլուր ձեւացած է իւր բարձրութեամբ, եւ Բելուկան աւերակ քաղաքատեղին Գարգարի ձախ կողմում, որ այժմ կոչւում է Բայնաթ, եւ ուրիշ 7 հողաբլուրներ:

Ը. ՈՒՏԻ-ԱՌԱՆՁՆԱԿ ԳԱՒԱՌ(4)

Ոչ ինչ պակաս հարուստ է եւ գաւառս ցորենով, գարիով, որիզով եւ բամբակով: Ձմերուկ, նշանաւոր սեխ (չորս տեսակ), բրինձ, մաշ, սոխ, սխտոր, գազար, սերկեւիլ, խաղող եւ այլն կազմում են գաւառիս բերքերն: Գաւառիս ամէն կողմերով առատօրէն վազում են առուներ, որք հանուած են Թարթառ գետից, վասն որոյ եւ բաղմարդիւն է գաւառս, եւ արգաւանդ՝ հողս:

Գաւառումս է Աղուանից երկրորդ մայրաքաղաքն Պարտաւ, որ հիմնուած է Թարթառ գետի ձախ կողմում եւ որ հեռի է Եւլախի երկաթուղու կայարանից երեք մղոնից փոքր-ինչ աւելի ճանապարհաւ: Այժմ համարեա թէ մի գիւղ է Պարտաւն՝ զրկուած իւր մեծութեան եւ հարստութեան փառքից, սակայն հնութիւններն եւ աւերակներն այնքան շատ են, որք պահպանած են քաղաքի յատկութիւն: Քաղաքս ունեցած է համարեա թէ մի մղոն երկարութիւն եւ կէս մղոնից աւելի լայնութիւն, ինչպէս երեւում է աւերակի հետքերից եւ փորուածքների նշաններից: Հին շէնքերն ընդհանրապէս շինուած են եղել եփած աղիւսով եւ պարզ հողնայ ցեխով, զոր օրինակ երեւում են նոր ի նորոյ քանդած ստորերկրեայ հնութիւններից: Հողն ունի կաճային զօրութիւն, որ անքակ պահած է մօտ հազար տարի ստորերկրեայ բնակարանները: Մինչեւ 6 մետր փորուածքներից ելնում են ոսկի, արծաթ, պղինձ, հին դրամներ եւ անօթներ եւ երկաթեղէն ու խեցեղէն գործիքներ, կարասիներ եւ ամաններ:

Այժմ անհետացած են քաղաքիս շրջապարսպի պատերն, բայց տակաւին մնում են երեք միջնաբերդեր, որոց պարիսպներն շինուած են հողնայ ցեխով: Առաջին միջնաբերդն, որ գտնւում է փոշտի ճանապարհի տակին, այս է արեւելեան կողմում, ունի վեց բարձրագոյն բուրգեր եւ հաստ ու բարձր պարիսպ, որի արեւելեան կողմից խախտուած է փոքր-ինչ տեղ: Շրջապարսպիս մէջտեղում արձանացած է մի երկյարկ աշտարակ, որ շինուած է թրծեալ աղիւսով եւ կրաշաղախ ցեխով: Աշտարակս ունի կլորակ ձեւ, 31½ մետր հաստութիւն (արտաքուստ չափելով) եւ մօտ 11 մետր բարձրութիւն: Խաչաձեւ շինուած է գետնայարկն, որի առաստաղի թաղն փլած է այժմ:

Խաչաձեւի մէջն մի թեւ ից բացուած է մի-մի լուսամուտ, որոց վերի ծայրերն հասած են մինչեւ վերնայարկի ստորոտն: Երեւի թէ գերեզմաններ կան գետնայարկում, որք ծածկուած են փլուած թաղի տակ: Արտաքուստ զարդարուած է վերնայարկն կարմիր, կանաչ եւ սպիտակ մանր աղիւսներով: Վերնայարկիս վերի կողմին մօտ կան արաբական սպիտակ գրեր, իսկ ստորին կողմին մօտ՝ մանր աղիւսներ[1]: Տեղ-տեղ քանդուած են՝ վերի յարկից գլխի կողմն եւ վարի յարկից՝ 1 մետր եւ 80 սան. եւ միանգամայն երկու յարկերի դռներն: Բերդումս է արքունի ուսումնարանն եւ վարժապետի բնակարանն:

Երկրորդ բերդակն, որ նմանապէս շինուած է հողնայ ցեխով, առանց բուրգի է եւ կիսաւեր եւ գտնւում է մեծ ճանապարհի արեւմտեան եզրի մօտ եւ ունի 104 մետր երկարութիւն եւ 93 լայնութիւն: Բերդակիցս շատ հեռի չեն եւ միւս միջնաբերդերն:

ՈՒԽՏԱՏԵՂԻ

Միւնոյն ճանապարհի արեւելեան կողմում է Իմամզատէ կոչուած մահմեդականաց ուխտատեղին, որ ունի թրծեալ աղիւսով եւ կրաշաղախ ցեխով շինուած մի շինութիւն, որ ունի երեք դուռն. մի՝ հարաւային, մի՝ արեւմտեան եւ մի՝ հիւսիսային կողմից: Շինութիւնս գրեթէ իւր մէջտեղում ունի մի խաչաձեւ, միջակ, գմբէթաւոր եւ սենեականման յարկ, որի մէջտեղում ամփոփուած են երկու սուրբ անձանց մարմիններն: Գերեզմաններիս վերայ, որ թաղուած են կից, ծածկուած է մի մանրաչեայ փայտաշէն վանդակ, իսկ վերջնոյս վերայ՝ թանկագին եւ ոսկեթել ծածկոց: Վանդակիս տակ յայտնի երեւում են զոյգ տապանաքարերն, իսկ սորա աչքերից կապուած եւ կախուած են հազարաւոր գոյնզգոյն թելեր եւ մետաքսեայ ու բամբակեայ ծուէններ, որք կապուած են մահմեդական ուխտաւորներից մի-մի խնդրուածքի համար: Ուխտատեղի մըզկիթս ունի շրջապարիսպ, որի հիւսիսային ներսի կողմում շինուած են սենեակներ թէ՛ կարդացող մոլլաների համար եւ թէ՛ աղօթաւոր ուխտաւորների: Թէ՛ պարսպի ներսն եւ թէ՛ դուրսն լի է սրածայր եւ նախշուն տապանաքարերով եւ գերեզմաններով:

Ուխտատեղիցս մի քանի քայլ դէպի արեւելք կայ վեցաչեայ մի գմբէթ՝ ծածկուած բլրի տակ: Գմբէթիս աչքերն ներքուստ զարդարուած են սպիտակ, սեւ եւ դեղին յախճապակեայ աղիւսով: Այս եւս ուխտատեղի է մահմեդականաց եւ հանգստարան:

Շիա աղանդին են պատկանում Պարտաւիս այժմեան բնակիչներն: Այստեղ կայ շուկայ եւ օրավաճառ, որ լինում է ամենայն ուրբաթ օրեր, ուր համախմբւում են ամէն կողմերից բազմաթիւ առեւտրականներ:

ՀԻՆ ԿԱՄՈՒՐՋ

Հեղեղատներից երեւում է, որ Թարթառ գետն երեք անգամ փոխած է իւր ընթացքը Պարտաւի մօտերքում. նախ հոսած է Պարտաւի հարաւային կողմով կէս մղոնաչափ հեռի, որի անջրդի հեղեղատն այժմ կանաչազարդ հովիտ է. երկրորդ՝ հոսած է Պարտաւից մօտ քառորդ մղոն հեռաւորութեամբ, որի վերայ շինուած է վաղուց մի քարուկիր կամուրջ, բայց անջրդի է այժմ եւ այս հովիտ ձեւացած հեղեղատն, իսկ այժմ հոսում է Թարթառն ո՛չ այս եւ ո՛չ այն հովտով, այլ երկու հին ճանապարհների միջնավայրով բացած է իւր համար նոր ճանապարհ, որից հոսում է այժմ:

Կամուրջս ունի 170 մետր երկարութիւն, 5 մետր լայնութիւն եւ 16 աչք, որոց կամարներն

1 Եսայի Կաթուղիկոս (տպ. ի Շուշի), Սէբէոս եւ այլք Տիգրանակերտ են անուանում, իսկ տպ. յԵրուսաղ. սխալմամբ՝ Ականակերտ, այլք՝ Տգրանակերտ, Տգռանակերտ:

1 Ոմանք կարծած են եւ կարծում են, թէ արաբական գրեր են սոյն աղիւսներն:

արդէն քանդուած են, եւ մնում են միայն ոտներն եւ երկու կողմերի պատերն: Սրբատաշ եղած են բոլոր անկիւնաքարերն, իսկ անտաշ՝ մնացեալ քարերն: Ինչպէս վկայում են, ունեցած է հայերէն արձանագրութիւն, բայց անյայտացած է, չկայ այժմ: Աւանդաբար ասում են, թէ Աղուանից Վաչէ Բ. թագաւորն շինած է կամուրջս:

Ա. ՀԱՍԱՆ-ՂԱՅԱ

Հայաբնակ գիւղս, որ մօտ մղոնաչափ հեռի է Պարտաւից, հիմնուած է նոյն դաշտի վերայ՝ Թարթառի ձախ կողմում: Բնակիչք բնիկ, հողն բէկական, ջրարբի եւ բազմարդիւն, տեղական բերքերն նոյն, ամռան ծանր օդն եւ կլիման եւ տենդաբեր ջուրն (Թարթառի ջրիցն չէ, այլ սեւ ջուր) երկար կեանք 55-60 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, գետնափոր, հողաշէն, քահանան գալիս է Մարալեան-Սարովից, ծուխ 46, արական158, իգական 160:

Գիւղիս հայ ժողովուրդն, զզուելով իւր պարսիկ բէկի անկարգ արարմունքներից, 1880 թուին տեղափոխւում է Փիրումեանց Նիկալայ-բէկի կալուածն, որ գտնւում է Մարաղայ գիւղից վերեւ, եւ բնակութիւն հաստատում նոյն կալուածի մէջ: Սակայն 1883-ին, որպէս թէ անհամաձայնութեան պատճառաւ, վերստին վերադառնում են իւրեանց նախկին գիւղն Հասան-Ղայա ինչինչ հանգամանքներից ստիպեալ:

Հարկ է յայտնել, որ Թարթառ գետիս ձախ կողմի մարմնաւոր գործերն պատկանում են Գանձակի մարմնաւոր դատարաններին, իսկ հոգեւոր գործերն՝ Արցախի առաջնորդութեան:

Բ. ՂԱՀՐԻԼԱՐ ԿԱՄ ԽՈՐՈՋԼՈՒ

Շէնս հիմնարկուած է նոյնպէս Թարթառի ձախ կողմում, բնակիչք բնիկ, հողն բէկական, ջրարբի եւ բազմարդիւն, տեղական բերքերն նոյն, նոյն են նաեւ օդն, կլիման, ջուրն, եւ երկար կեանքն, եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանան գալիս է Մարալեան-Սարովից: Ծուխ 20, արական 60, իգական 53:

Գ. ՂԱՐԱՄԱՆԼՈՒ

Գտնւում է Ղահրիլարի հիւսիսային կողմում՝ փոշտի հին ճանապարհի վերայ: Ամբողջապէս հայ եղած են գիւղիս նախկին բնակիչներն[1], բայց այժմ մնացած է միայն եօթն գերդաստան հայ, իսկ մահմեդական են ամենամեծ մասամբ մնացեալներն: Հայոցս հոգեւոր պէտքերը կատարւում է Սարով գիւղի եկեղեցում Սարովի քահանայի ձեռնով: Ծուխ 7, արական 29, իգական 28:

Դ. ՍԱՐՈՎ

Գիւղս, որ գտնւում է Ղարամանլուի հիւսիս-արեւմտեան հանդէպ՝ խիստ մօտ, նոյն դաշտի վերայ, ծածկուած է այգիներով: Բնակիչք բնիկ, հողն բէկական, ջրարբի եւ բազմարդիւն, տեղական բերքերն նոյն (այստեղ լինում է առատ կապար, վայրի սամիթ, ղարաղան, որից շինում են օճառաքար եւ մատուտակ): Օդն եւ կլիման ծանր ամռան, ջուրն Թարթառից, երկար կեանք 70-75 տարի, եկեղեցին նորաշէն, հոյակապ, բոլոր անկիւնաքարերն եւ կամարներն շինուած սըրբատաշ քարով, որի երկարութիւնն է 22 մետր 28 սանթ, եւ լայնութիւնն 12 մետր 35 սանթ.[2]

1 Աւանդաբար պատմում են, թէ Բօզի եղած է գիւղիս նախկին անունն, իւր հիմնադիր Բօզու անուամբ, որ մի քաջ եւ ազդու մարդ եղած է: Ցետոյ պակասած են բնակիչներն. թրքաբնակ լինելուց վերջն փոխուած է Ղարամանլու:

2 Հին եկեղեցու աւազանի արձանագրութիւնն. «Ցիշատակ է սուրբ աւազանս Սարովեցւոց Սուրբ Աստուածածնայ եկեղեցուն թ. ՌՄՂԷ»:

քահանայ մի: Գիւղիս հանգստարանում ամփոփուած են ցարդ եւ ամփոփւում են Սարովիս, Ղահրիլարի, Բօզլուի եւ Մարալեան-Սարովի ննջեցեալներն, որոց մէջ մի տապանաքարի վերայ փորագրուած է. «Տապանս Մելիքին. ՌՃԻԲ. էր»: Ծուխ 141, արական 484, իգական 440:

Ե. ՄԱՐԱԼԵԱՆ-ՍԱՐՈՎ

Հիմնուած է Սարովի հիւսիսային կողմում, բնակիչք բնիկ, հողն բէկական, ջրարբի եւ բազմարդիւն. տեղական բերքերն, օդն, կլիման, ջուրն եւ երկար կեանքն նոյն, եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանայ մի, որ հովւում է եւ Ղահրիլարի հոգեւոր հօտը: Ծուխ 32, արական 126, իգական 124:

Զ. ԵԱՐՄՋԱՆ

Հիմնուած է Թարթառ գետի աջ կողմում, խիստ մօտ Սէյսուլան գիւղին, հողն բէկական, բազմարդիւն, տեղական բերքերն նոյն, օդն եւ կլիման՝ ծանր ամռան, եր. կեանք 65, եկեղեցին եւ քահանան Սէյսիւլանինն են: Ծուխ 11, արական 30, իգական 25:

Է. ՍԷՅՍԻՒԼԱՆ

Հիմնուած է Թարթառի աջ կողմում, Մարաղա գիւղից բաւական ներքեւ, բնակիչք բնիկ ուտիացի, թրքախօս, հողն բէկական, ջրարբի եւ բազմարդիւն, տեղական բերքերն նոյն, օդն եւ կլիման ծանր ամռան, երկար կեանք 65, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանայ մի: Ծուխ 35, արական 106, իգական 103:

Ը. ՄԱՐԱՂԱ[1]

Հիմնուած է Թարթառի աջ ափի վերայ՝ դաշտաբերանում, բնակիչք 1828-ին գաղթած են Պարսկաստանի Մարաղայից եւ նոյն իսկ անուամբ հիմնած գիւղս, հողն արքունի, ջրարբի, որիզաբեր, բամբակաբեր եւ բազմարդիւն, տեղական բերքերն նոյն, օդն եւ կլիման ոչ այնքան ծանր, երկար կեանք 75-80 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանայ մի: Ծուխ 104, արական 286, իգական 254:

ԲՕՐՈՄԻ ԱՒԵՐԱԿՆ

Գտնւում է Կուր գետի աջ կողմում՝ Մինկեաչեւիր անցքի (հուն) արեւմտեան կողմում: Այս մի ընդարձակ գիւղաքաղաքի աւերակ է, որի մէջ կայ Ս. Յովհաննէս անուն մի ուխտատեղի:

Թ. ՇԱԿԱՇԷՆ ԿԱՄ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌ

Ուտի-Առանձնակ գաւառի արեւմտեան կողմին կից է Շակաշէն կամ Գանձակի գաւառն: Հարկ է նախ խօսել Գանձակ քաղաքի մասին եւ ապա գաւառների գիւղօրէից մասին, որ ամենատեսակ բարեմասնութիւններով աւելի է Ուտի-Առանձնակ գաւառից:

1 Մարաղա գիւղիս շրջակայքում գտնւում են մի տեսակ բոյս, որ գործ է ածում իբրեւ թէյ: Հաւատացնում են, որ շատ տարբեր չէ Չինաստանի թէյից. ափսոս, որ այժմ անխնամ թողած են գիւղացիք այս հազուագիւտ բերքի մշակութիւնը:

ՆՈՐ-ԳԱՆՁԱԿ ՔԱՂԱՔ (5)

Հիմնուած է Գանձակ գետակի աջ ու ձախ ափերի վերայ՝ երկաթուղու գծի հարաւային կողմում: Մինչդեռ առաջ գաւառական մի աննշան քաղաք էր Գանձակս, մի քանի տարիներից ցարդ եղած է նահանգագլուխ քաղաք, որի այժմեան տարածութիւնն մի մղոն է այգիներով հանդերձ, որովք զարդարուած է քաղաքս եւ նոյն իսկ բնակարաններից շատերն: Հին շուկայի եւ քաղաքամիջի արդն ու զարդն են կաղամախի ծերունազարդ ծառերն, որք տայիս են քաղաքիս առանձին շքեղութիւն եւ վեհութիւն: Հին է քաղաքիս վերնամասի շինութիւնն, մանաւանդ Քիլիսաքեանդ կոչուած հայոց թաղն, որի մէջ է մայր եկեղեցին Սուրբ Յովհաննէս Մկրտիչ, իսկ ստորին մասում՝ պարսից թաղն, որի մասին ասում են, թէ հիմնուած է Ա. Շահ-Աբասից:

Հայք ունին քաղաքումս 1600 ծուխ, 4 եկեղեցի՝ Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եւ Սուրբ Լուսաւորիչ՝ Հայոց թաղումն, Սուրբ Գէորգ՝ Նոր-շուկայի մօտ եւ Սուրբ Աստուածածին՝ Նորաշէն կամ Երեւանցւոց թաղումն: Հայք զբաղւում են այգեգործութեամբ, վաճառականութեամբ եւ զանազան արհեստներով:

Սուրբ Յովհաննէս-Մկրտիչ մայր եկեղեցին շինուած է քարուկիր, վեց միապաղաղ եւ բոլորշի սիւների վերայ, միջակ բարձրութեամբ: Ունի կանանց վերնատուն, երկու դուռն արեւմտեան եւ հարաւային կողմերից, մի աւագ եւ չորս միմեանց վերայ շինուած փոքր խորաններ, վերին խորանների վերեւակ սանտուղներն բարձրանում են աւագ խորանի աջ ու ձախ կողմերից: Հարաւային վարի փոքր խորանում կայ երկու գերեզման, առաջնոյն տապանաքարի վերայ փորագրուած է.

«Տէր Յիսուս Քրիստոս, ՌՃՂԱ. թվին.
Այս է տապան Սուրբ Ներսէսի
Եւ Աղուանից Կաթուղիկոսի.
Եղեւ վախճան հանդիսի
Երկյոբելեան կեանս հասի. (հարիւրամեայ)
Ապա կոչումն Տեառն լսի
Փոխեալ աստէն յերկինս դասի.
Հազար երկու հարիւր ամի.
ԲԺ. (երկոտասան) թվի
Եւ Բարադասի
Ներ սորա անուշ յիշատակի»:

Երկրորդ տապանաքարի վերայ.
«Այս է հանգիստ Իսրայէլին,
Որ է ազնիւ եւ գովելին,
Նման արդարոյն Աբէլին,
Եւ որդի Մելիք Հաթամին.
Ութուտասան կեանք սկալի
Առնու անանց պարգեւս լի
Եւ մեզ եթող տրտմութեամբ լի
ՌՄԻԵ. թվի
Եւ ԺԵ. Մայիսի»:

Եկեղեցուս հիւսիսային կողմի երկրորդ սիւնի վերայ՝ խոյակին մօտ, գրուած է. «Խանի»[1]: Նոյն խոյակի արեւելեան կողմում. «Լզար էրեց»: Եկեղեցուս շինութեան բուն արձանագրութիւնն գտնւում է արտաքուստ հարաւային որմի վերայ՝ արեւի ժամացուցի տակ, որ է.

«Ի ժամանակն Ովանէս Կաթուղիկոսի թվին ՌՁԲ. ամի շինեցաւ սուրբ Ովանէս եկեղեցին (ս)»:

Ներքուստ հիւսիսային որմի Ա. լուսամտի գլխին.

«Յիշատակ է լուսամուտս Մայիլեանց Ղահրամանին ու ծնողաց նորին Աւագին եւ Եղիսաբէթին 1839 ամի»:

Բ. Լուսամտի գլխին. «Յիշատակ է սուրբ աւազանս եւ լուսամուտս Մահտեսի Աղաջան Խաչատուրեանի... եւ ծնողաց եւ եղբարց 1839 ամի»:

Գաւիթ. Յետոյ շինուած են քարուկիր գաւիթ, որ կից է եկեղեցուս արեւմտեան կողմին, եւ զանգակատունն եւ կամուղիկէն:

Եկեղեցուս արեւմտեան դրան գլխին արտաքուստ.

«Հիմնեցաւ ի հիմանէ գաւիթ սուրբ Յովհաննէս եկեղեցւոյս ի հայրապետութեան տեառն Եփրեմայ եւ առաջնորդութեան տեառն Ներսէսի Սրբազան արքեպիսկոպոսի արդեամբ եւ ծախիւք Մահտեսի Տէր Գէորգի Տէր Յովհաննիսեան. հայցեմ առ սիրելի եղբարցդ՝ որք հանդիպիք ընթեռնուլ՝ զմէկ բերան զողորմի խնդրեցէք առ Աստուած 1816 ամի»:

Գաւիթս ունի երեք դուռն հարաւային, հիւսիսային եւ արեւմտեան կողմերից եւ կանանց վերնատուն, որի դուռն իւր հիւսիս-արեւելեան կողմից է, ներքուստ ունի 32½ մետր երկարութիւն եւ 13 մետր 30 սանթ. լայնութիւն (միասին չափելով եկեղեցին եւ գաւիթը): Հարաւային դրան վերայ քանդակուած է. «Շինեցաւ դուռնս արդեամբ Յովսէփ Ջառափ Գրիգորեանի յիշատակ 1860 ամի»: Գաւթումս՝ բուն տաճարի արեւմտեան դրան հարաւային կողմում.

«Ի թվին Հայոց ՌՅԺԱ. շնորհիւն Աստուծոյ ես Մահտեսի Աղաջան Խաչատուրեան իմով սեպհական արդեամբ կառուցի նորաձեւ կաթուղիկէս Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյս ի յիշատակ հոգւոյ իմոյ եւ ամենայն ննջեցելոց եւ կենդանեաց իմոց: Աղաչեմ զհանդիպողսդ, յիշեսջիք զմեզ յարժանաւոր մաղթանս ձեր, զի միջնորդութեամբ Սուրբ Աստուածածնին եւ ամենայն սրբոց ջընջեսցէ Տէր զձեռագիր յանցանաց իմոց, յամի տեառն 1862-ին Գանձակ»:

Գաւթումս ամփոփուած են.

«Այս է տապան սուրբ Եղիշէի առաջնորդ Կա... վարդապետին թվ. ՌՄՋ.»:
«Այս է տապան Չարաբերդցի Աթանաս վարդապետի... ՌՄԺԳ.»:
«Այս է շիրիմ Սուրբ Երուսաղէմայ նուիրակ Թոխաթցի Ֆարաւոն վարդապետի ՌՄԼԵ.»:
«Այս է տապան Մռուտ անապատի առաջնորդ Յարութիւն վարդապետի ՌՄԽԹ. յունիս ԺԶ.-ին»:
«Այս է տապան Սուրբ Ստեփաննոս նախավկայի միաբան Ստեփաննոս վարդապետի ՌՄՁԳ.»:

Կան եւ քահանայից գերեզմաններ գաւթիս ներսումն: Արտաքուստ գաւթիս արեւմտեան դրան առաջ ամփոփուած է Գաղտնիք Ղարաբաղի հերոսներից Դալի-Մահրասայի մարմինն, որի տապանաքարի վերայ փորագրուած է մի ցուպ եւ սոյն արձանագրութիւնն. «Այս է տապան Աւագ վարդապետին, որ է Չարապերտու Մեծ-Կուէնից[1] ՌՄԽԵ.»: Երկրորդ հերոսն է Թիւլի-Արզուման, որի գերեզմանն գտնւում է գաւթիս հիւսիսային կողմում եղած պարտիզի հանգստարանում, որի շիրմաքարի վերայ քանդակուած է. «Այս է տապան չարաբերդցի Սարգսի որդի Արզուման ուզպաշուն ՌՄԽԵ. թվին»:

Արտաքուստ գաւթիս հիւսիսային դրան առաջ.

«Այս տապան Կորգի որդի Մելիք Մնացականին ՌՄԻ.»: Շարունակութիւն ունեցած չէ մելիքութիւնն, այսինքն յարատեւած չէ որդոց-որդի, այլ սկսուած է Մելիք-Մնացականովս եւ վերջացած սորա մահուամբ:

1 Պատմում են, թէ Ջաւատ-խանն ամէն կիւրակէ օրերում գալիս է եղել եւ ներկայ գտնուելիս պատարագին: Խանն սովորաբար կանգնելիս է եղել սիւնիս տակ, որն այժմ եւս կոչւում է խանի սիւն:

1 Գաւառի հին անունն է, որ այժմ կոչւում է Ջրաբերդ, իսկ Դալի-Մահրասայիս բուն ծննդավայրն է Նոր-Մեծ-շէն գիւղն:

Սուրբ Յովհաննէս եկեղեցիս ունի չորս քահանայ եւ հետեւեալ ձեռագրերը:

Ա. Աւետարան՝ միջակ դիրքով. մագաղաթեայ, որ ունի չորս աւետարանչաց պատկերներ եւ արծաթեայ կողակալներ: Սակայն գեղեցիկ չեն պատկերներն, թուղթերն եւ ծաղկանկարներն:

Կարեւոր համարուեցաւ ընդօրինակել յիշատակարանից հետեւեալը.

«Արդ՝ ով սուրբ հարք եւ առաքելագումար դասք քահանայից, յորժամ վայելէք ի քաղցրաճաշակ եդեմատունկ, աստուածառոյգ վտակաց քառառաջեայ հոսանաց կենդանական աստուածային աւետարանական բանիցս, մանաւանդ յորժամ բառնայք ի վերայ ուսոց ի ժամ սոսկալի պատարագին, յորժամ խաղան ի վերուստ յողջոյն ձեր զաւրք հրեշտակաց եւ սքողեալ ահիւ խառնին ընդ ձեզ, նովին սուրբ աւետարանաւդ եւ միջնորդական հրաշիւք կենդանարար սուրբ պատարագին, յիշեսջիք զստացաւղ սորին զբարեպաշտ թագուհին Կեռան հանդերձ սուրբ թագաւորաւն Լեւոնիւ եւ զծնողս իւրեանց եւ զդեռաբոյս ծիրանածին մանկունս նոցա: Զի կենդանիքն պարագայց ամաւք եւ երկայն խաղաղութեամբ անփորձ պահեսցին եւ հանգուցելոցն հանգիստ եւ ողորմութիւն շնորհեսցի յամենառատ բարերարէն Աստուծոյ:

Արդ գրեցաւ գիրս ձեռամբ ամենամեղ քահ(անայ) Ստեփաննոսի ի թուականիս Հայոց ՉԼԲ. (1283) ի հայրապետութեան տեառն Յակովբայ եւ ի թագաւորութեան Լեւոնի որդւոյ Հեթմոյ ի մեծանուն սուրբ ուխտս Սկեւռայ ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս եւ մաւր լուսոյ Աստուածածնիս եւ կենսակիր Սուրբ Նշանիս մերձ յանմատոյց դղեակս Լամբրուն, որ է ի գլուխ Տարսոնի եւ ի ստորոտ մեծի լերինս Տաւրոսի, յորում ամի բարենշան եւ բարեպաշտ անդրանիկ որդին արքայիս մերոյ պարոն Հեթում զձիաւորութեան աշտիճան ընկալաւ եւ այժմ տիրէ աստուածապահ դղեկիս եւ այլ շուրջակայ գաւառացս, զոր յուսամ եւ մաղթեմ ի Բարերարէն Աստուծոյ անփորձ մնալ սորա ի յարդիսս բազում ամաւք ընդ երկայն աւուրս անուանի եւ յաղթաւղ լինել ի վերայ երկրիս: Եւս առաւել աղաչեմ յիշել ի Քրիստոս զնախայիշատակեալ ստացաւղ տառիս եւ զբնաւ զարմն իւր զկենդանիս եւ զհանգուս...[1] »:

Բ. Աւետարան՝ մնծադիր, մագաղաթեայ, կաշեկազմ, որի սկզբից եւ վերջից[2] պակաս են շատ թերթեր, որոց հետ եւ յիշատակարանն: Ամբողջապէս գրուած է գլխատառերով. որոց ձեւերն ապացոյց են հնաւոր հնութեան: Մատթէոսի վերջում գրուած է մանր գրերով. առանց թուականի. «Ով սուրբ ընթերցողք, աղաչեմ զձեզ երկրամերձ դիմաւք ապիկար Թումէս յիշման արժանի արարէք ի մաքրափայլ աղաւթս ձեր: Թէպէտ եւ անարժան եմ այլ վասն աշխատութեան յիշեցէք զիս եւ զծնողսն իմ, աղաչեմ զձեզ: Զի մագաղաթս խոշոր էր եւ նորոգողս տգէտ, անմեղադիր լերուք: Զնորոգողս յիշեսջիք ի Քրիստոս»: Խնդրում է յիշել նաեւ Մարկոսի վերջում:

Յետին ժամանակներումս գրուած է.

«Պատճառ գրոյս այս է. ես Մէհրիզատս որդի Մկրտչին՝ իմ աղբէրորդի Հապուլի է.(7) թուման պարտք ունէր, որ կէսն կանէր Գ. թուման ու կէս: Ես Մէհրիզատս առի զսուրբ աւետարանս եւ շատ երկիր շրջեցի եւ իմ աղբէրորդի Հապուլի է. թուման պարտքը տուի: Ով որ յետոյ, առաջ պաղին հողին եւ կամ տանն խօսող լինի, է. թուման տայ: Ես Կոստանդս վկայ, Փանոս վկայ, Մռաւս վկայ, Ամիրս վկայ. ես Ատի շինեցի տէր Մեսրոպս վկայ»: Ապա գրուած է. «Ես ծառայ Աստուծոյ Սաւարշէս տանուտէր Քուշկայ գնեցի զսուրբ աւետարանս ի հալալ ընչից իմոց յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց հաւրն իմոյ Այտինին եւ մաւրն իմոյ Խութլու խաթունին եւ ամուսնոյն իմոյ Էմխաթունին եւ որդւոցն իմոց Այտինին, Գունդուզին, Ջալալին եւ եղբաւրորդոյն իմոյ Ահիին: .....Դարձեալ ծանիք (ծանիջիք) որ հետի (վասն) սուրբ աւետարանիս շատ տաւի եղաւ ի ներհակաց. շարիաթով եւ դատաստանաւ հաղ (իրաւունք) ինձ եղաւ: Յասմհետէ ով որ տաւի անէ յիմոց կամ յաւտարաց, նզովեալ եղիցի ի սուրբ աւետարանէս. ամէն»:

1 Ընկած է թերթն եւ կորած:

2 Պակաս են նաեւ Ղազարոսի աւետարանի սոյն խօսքերից մինչեւ վերջն. «Զեռ եւս էր եկեալ Յիսուս ի գեւաղն:»

Գ. Աւետարան՝ միջակ դիրքով. որ ունի աղնիւ մագաղաթ, ընտիր պատկերներ, նուրբ գրիչ եւ գեղարուեստի փայլուն ճաշակ: Ընտիր են նախշերն, ծաղիկներն եւ թռչնագրերն, առհասարակ գեղեցիկ են եւ դիւրաւ վերծանելի փոքր գրերն եւ վայելուչ ներկերով ներկւած չորս աւետարանչաց պատկերներն: Աւետարանիս սկզբում գրուած է ոսկետառ գրերով. «Դու ստացաւղ քոյոցս բանի եւ զարդարաւղ այսմ տառի եւ ծառայի քո Սարգսի գրեա՛ զանուն ի գիր քո կենդանի, որ փոխեցաւ ի թուականիս յեւթն հարիւր խ. երորդին եւ զՅուսէփայ փիլիսոփայի զհոգիս ընկալ Հովիւ բարի եւ ընդ նմին Զոհագի»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑՆ

«Բայց գրեցաւ լուսազարդեալ աւետարանս ի լուսալրական ժամանակի սկզբաց արարչութեանն մինչեւ առ մեզ ՅՈՋ. (6606), իսկ ի Կենարարին գալստենէն ՌՃՁԳ. (1183), իսկ Խոսրովայն Պարսից սկսեալ ի մերս թիւ ՉԽԴ. (744) եւ գրեցաւ յանապատիս Դրազարկ կոչեցեալ: Արդ եղեւ զրաւ կատարման սորա ի թուիս ՉԽԴ. յորում դեգերել կամք առ դրան սորա՝ ակն ունելով ամենաւրհնեալ մաւրն լուսոյ Աստուածածնին խնդրել ողորմութիւն մեզ եւ նեղեալ եղբայրութեանս եւ ամենայն աշխարհի, թագաւորաց քրիստոնէից եւս եւ բարեպաշտ թագաւորին Հեթմոյ, որ ի յարգասիս մանկութեան իւրոյ բարձեալ բերէ յինքեան զամենայն գործս առաքինութեան, նմանեալ թագաւորացն սրբոց, զոր աջն Աստուծոյ պահեսցէ զնա եւ զեղբարս սորա հանդերձ ամենայն մերձաւորաւք եւ հնազանդեցելովք իւրովք ի կամս Աստուծոյ ի խաղաղութեան. քահանայապետական աթոռոյ սուրբ եւ անբիծ հայրապետն մեր Քրիստոս պահեսցէ զսա...: Եւ արդ ես մեղաւք մեռեալ հոգիս անպիտան եւ հողս Յովսէփ փիլիսոփայ ետու գրել զսուրբ աւետարանս ի յողորմութենէն Աստուծոյ: ...Արդ գրեաց զերեք աւետարանն սուրբ եւ պատուական հայրն մեր եւ վարդապետն Թորոս փիլիսոփայն ... իսկ զմիւս եւս աւետարանն զգլուխն զսուրբ աստուածաբանն Յովհաննէս գրեաց Յովհան գրիչ եւ հոգեեղբայրն մեր եւ զարդարեաց պէսպէս երանգով եւ գունով»:

Դ. Աւետարանն գրուած է թղթի վերայ, որ ունի միջակ դիրք եւ դիւրաւ վերծանելի տառեր, բայց չունի ո՛չ թուական եւ ո՛չ պատկեր:

Ե. Աւետարանը գրած է Եսայի անուն ոմն. «Շնորհիւ Աստուծոյ յանկ ելեալ կատարեցի ի թուականութեանս ՌՃԺԲ... ի թագաւորութեան Պարսից Փոքր Շահ Աբասին եւ ի հայրապետութեան Աղուանից տեառն Պետրոսի Սրբազան կաթուղիկոսի ի յերկիրս Ծարայ ի գեւաղն...[1] »: Իսկ ստացողն եղած է Սիմէոն անուն ոմն:

Զ. Աւետարան՝ գրուած թղթի վերայ Ղուկաս անուն քահանայից. «Յիշել զգծող սորա Ղուկաս անուն քահանայ...ի թուին ՌՃԻԷ. զստացող սուրբ աւետարանիս զբարեմիտ պարոն Ամիրխան»:

Է. Աւետարան՝ նոյնպէս գրուած թղթի վերայ ոմն Մկրտիչ անուն անձից ՌԴ. Հայոց թուին:

Ը. Աւետարան՝ գրուած թղթի վերայ Տէր-Մարտիրոսից ՌՃԿ. թուին: Երկրորդ անգամ ծախւում է աւետարանս, որը գնում է Ելենու որդին, բայց չէ կամենում սա յայտնել իւր անունը՝ գրելով. «որ չեմ զանունս յիշելոյ ի սուրբ աւետարանս»: «Գնեցաւ աւետաբեր վտակս ի ՋԾԴ. թուականիս ի յերկիրս Վրաց ի անուանի աշխարհս Կախեթ ի թագաւորութեան (Վրաց) բարեպաշտ Ալէքսանդրին եւ որդւոյ իւր պարոն Կաւրկոյ... ի ժամանակս յորում զաւրացեալ էր Չարեւաներ (՞) առ ազգս Շիխ.. Իլպաշ կոչի, որ ելաւ ի արեւելայ եւ էառ զթախտն Թաւրիզոյ եւ կոտորեաց եւ կորոյս զազգն Թիւրքմանին եւ էառ զաշխարհս ամենայն եւ աւերեաց բազում գաւառ հայոց եւ տաճկաց եւ թողին զամենայն հայերնական բնակութիւնս եւ եկին ի Վրաստունս. վերջն Աստուծոյ է գիտելի թէ ինչ կու լինի»:

Թ. Աւետարան՝ գրուած թղթի վերայ, պատկերազարդ, միջակ դիրքով, որի սկզբում կայ սոյն ծանօթութիւնն. «....Արդ ես մեղապարտ եւ անարժան Պանազուրցի Ալլահվերտի քօխաս (գիւղապետս) տեսի աստուածաշունչ սուրբ աւետարանս ի ձեռս անօրինաց գերի անկեալ. ի արդեանց եւ

1 Պակաս է:

ի հալալ ընչից իմոց ազատեցի սուրբ աւետարանս եւ ընդ սմին մէկ թագ եւ մէկ շուրջառ եւ ետու վախմ սուրբ Երից մանկանց փառաւոր վանիցն յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ ամենայն արեան մերձաւոր որդոյ իմոյ եւ դստերաց իմոց... ՌՃՂԴ. թվին Նոյեմբեր ամսոյ ԺԲ. գրեցաւ»: Զունի յիշատակարան:

Ժ. Աւետարան՝ գրուած թղթի վերայ, Ղուկասի վերջում գրուած է. «Ի թուաբերութեան Հայոց ՌՃՀԳ. ապրիլի ԺԸ. առի (գնեցի) աստուածախօս աւետարանս ես մեղապարտ եւ անարժան Մելիք Եսայի յերկրէն Չարապերթու եւ ի գեղճէն բնակ Մոխրաթաղու: Արդ լուայ զձայն աստուածային, որ ասէ. Երանի այնորիկ, որ ունի որդի Սիօնի եւ ընտանի ի յԵրուսաղէմ եւ ի գութ շարժեալ որդւոյ իմոյ՝ առի զաստուածախօս սուրբ աւետարանս յիշատակ իմ եւ ծնողաց մարմնաւորաց իմոց եւ մօրն իմ եւս կողակցին իմոյ Հուրին եւ որդւոյն իմ Յովսէփին, Մէժլումին, Դանիէլին, Իսրայէլին եւ դստերացն իմոց եւ տուի յիշատակ եւ վախմ սուրբ Երից մանկանց... ի հայրապետութեան Աղուանից տեառն Ներսէսի հեզահոգի կաթուղիկոսին»:

ԺԱ. Աւետարան՝ միջակ դիրքով, գրուած թղթի վերայ: Յիշատակարանից. «Արդ՝ գրեցաւ սուրբ աստուածանկար աւետարանս ձեռամբ անարժան Յովհաննիսի ի յերկիրս Գանջայ ի գեղն Հարցհանկիստ ի դրան սուրբ Մալազնաբերթին ի հայրապետութեան երիցս երանելոյ հովուապետին տանս Աղուանից տեառն Պետրոսի Սրբազան կաթուղիկոսին, յեպիսկոպոսութեան սուրբ Ամենափրկչին քաջ եւ արի բապունապետի Խաչատուր վարդապետի եւ թագաւորութեան Պարսից փոքր Շահ Աբասին, խանութեան երկրիս Ուղուրլու խանին ի թուականութեանս Հայոց ՌՃԺԵ. ամի»:

ՄԱՍՈՒՆՔՆԵՐ

Ա. Մասն Տեառնեղբօր Յակովբոսի մի արծաթեայ, փոքրիկ խաչի մէջ, որ «Յիշատակ է սուրբ Նշխարս Տիրացու Գրիգորի թվ. ՌՄՀ.»:

Բ. Մասն Յովհաննէս Կարապետի մի արծաթաթել հիւսկէն (չիւթիշի) փոքր խաչի մէջ, որի վերայ գրուած է. «Այս է թիկն Յովհաննու Կարապետի»:

Գ. Մասն Պանդալիոն բժշկի մի արծաթեայ, ոսկեզօծ եւ փոքր խաչի մէջ, որ «Յիշատակ է սուրբ Պանդալիոնայ եկեղեցւոյն մասունքս պահպանութիւն հասարակ ուխտաւորաց եւ Տէր Սարգիս Տէր Ազարեանցին ծախիւքն 1859 ամի»:

Դ. Մասն սուրբ Մինասայ մի արծաթաթել հիւսկէն, փոքրիկ խաչում, որ կրում է. «Ի վայելումն ազնիւ Վահանին»:

Ե. Անյայտ մասն մի արծաթեայ, ականակուռ եւ մեծադիր խաչի մէջ, որի արձանագրութիւնն անկարելի եղաւ կարդալ:

Եկեղեցիս՝ իբրեւ անշարժ կալուած, ունի մի բաղանիս, որի արդիւնքն յատկացած է ծխական երկսեռ ուսումնարաններին:

Ծխական երկսեռ ուս. Ս. Յով. եկեղեցուս.

Երկդասեան երկսեռ ուսումնարանս կանգնած է եկեղեցուս արեւելեան հանդէպ:

Ուսանում են աշակերտ	140
աշակերտուհի	194

Վճարւում է բոլոր վարժապետաց եւ վարժուհեաց 3000 ռուբ., որք գումարւում են մոմավաճառութիւնից, թոշակագրամներից եւ կտակագրամներից:

Բ. ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ[1]

Եկեղեցիս, որ հիմնարկուած է քաղաքիս վերի թաղումն՝ բազմամարդ հայոց մէջ, շինուած է հոյակապ, ընդարձակ, բարձրաշէն, չորս սիւնների վերայ: Շքեղ եւ մեծադիր են լուսամուտներն ու դռներն: Բացի լուսամուտների մեծութիւնից, տաճարիս ձեւն եւ մեծութիւնն նման է Երուսաղէմի Հայոց Սրբոց Յակովբեանց վանքին: Եկեղեցիս ունի երեք դուռն՝ հարաւային, արեւմտեան եւ հիւսիսային կողմերից, մէն մի դուռն արտաքուստ ունի փոքր գաւիթ: Տաճարիս երկարութիւնն է 30½ մետր, լայնութիւնն՝ 19 մետր 70 սանթիմ:

Եկեղեցուս հարաւային սեան վերայ. «Շինեցաւ սիւնս արդեամբք Քերովբ Տէր Մարտիրոսեանցի ի յիշատակ ծնողաց իւրոց 1857 ամի»:

Արձանագր. տաճարիս արեւել. կող. արտաքուստ.

«Շնորհօք եւ ողորմութեամբ Աստուծոյ հիմնեցաւ սուրբ տաճարս ի 14-ն Սեպտեմբերի 1853 ամի եւ յետ աւարտելոյն տրովք բարեպաշտ ժողովրդոց Գանձակայ ի կայսրութեան ամենայն Ռուսաց Ալեքսանդր Բ. եւ ի հայրապետութեան տեառն Գէորգ Դ. Օձաւ յ9 Նոյեմբերի 1869 ամի ի Սրբազան Մակար արքեպիսկոպոսէ առաջնորդէ Վրաստանի եւ Իմերէթի եւ անուանեցաւ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցի յանուն սրբոյն Գրիգորի մեծի հայրապետին Ազգիս: Հիմնարկեցաւ սուրբ տաճարս յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի 1853 ամի եւ աւարտեցաւ 1869 ամի»:

Եկեղեցիս ունի հինգ քահանայ եւ միայն մի գրչագիր աւետարան, որի Յիշատակարանից. «Արդ գրեցաւ զսուրբ աւետարանս 'ի թուականութեանս Հայոց ՌՃԺԷ. 'ի հայրապետութեան երիցս երանելոյ հովուապետին տանս Աղուանից տեառն Պետրոսի Սրբազան Կաթուղիկոսին եւ առաջնորդութեան սուրբ աթոռոյս Ամենափրկչին պարոն տէր Յովհաննիսին, թագաւորութեան Պարսից Փոքր Շահ Աբասին.. խանութեան Ուղուրլու խանին եւ իշխանութեան երկրիս մեծաշուք եւ բարեպաշտ Սիմաւոն Մելիքին: Գրեցաւ ձեռամբ անարժան սուտանուն Յովհաննիսի 'ի յերկիրս Գանջայ 'ի գիւղս որ կոչի Հարցանկիս(տ) 'ի դրան սուրբ Մլզնաբերդին. ամէն»:

Եկեղեցիս ունի եւ շրջապարիսպ, որ շինուած է սրբատաշ քարով: Պարսպիս հարաւային դրան կամարի սեպ քարից շինած է վարպետն մի շղթայ եւ որի ստորին ծայրում՝ մի խաչ: Քարեայ շղթաս եւ խաչս արտայայտում են արուեստաւորի ճարտարութիւնը եւ գեղեցկագործութիւնը: Ոչինչ պակաս գեղարուեստ ճարտարութեամբ շինուած են երկու փողահար հրեշտակապետաց քարեայ արձաններն, որք դրուած են նոյն դրան վերայ. Շրջապարսպի վերայ շարուած են երկաթեայ գեղեցիկ վանդակներ: Թաղիս հայ ժողովրդեան ջերմեռանդ բարեպաշտութեան եւ կրօնասիրութեան ապացոյց են հոյակապ տաճարս, իւր շրջապարիսպն եւ ուսումնարանն:

ՄԻԱԴԱՍԵԱՆ ԵՐԿՍԵՌ ԾԽ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Աշակերտ	90
Աշակերտուհի	94
Վճարւում են բոլոր վարժապետաց եւ վարժուհեաց տարեկան	3650 ռ., որք գոյանում են մոմի արդիւնքից, թոշակագրամներից, նպաստներից եւ դրամագլխի տոկոսներից:

Գ. ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ

Շինուած է նոյն գետակի ձախ կողմում Մեծ-Շուկայի մօտ. հողաշէն եւ անշուք է: Եկեղեցումս կայ սուրբ Գէորգայ մասունք, վասն որոյ ուխտատեղի է այս ոչ միայն Հայոց համար, այլ եւ այլազգեաց: Մասունքս բերած է եկեղեցուս ծխական ժողովուրդն Երեւանից, որից գաղթած

1 Երկու եկեղեցիքս եւս հիմնուած են Գանձակ գետակի աջ կողմում:

է այստեղ 1814 թուին. Եկեղեցիս ունի իբր սեպհական կալուած մի քանի խանութներ եւ սենեակներ իւր բակում եւ մի քահանայ:

Դ. ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Հիմնարկուած է քաղաքիս հիւսիսային կողմում Նորաշէն կոչուած թաղում:

Եկեղեցուս ծխական ժողովուրդն գաղթած է Երեւանի կողմերից մօտ 1712-ին: Եկեղեցիս, որ շինուած է Հայոց ՌՃԿԲ. թուին, քարուկիր, հոյակապ, բարձրաշէն եւ ընդարձակ է՝ կառուցեալ վեց միապաղաղ սիւների վերայ: Բայց որովհետեւ արեւելքից արեւմուտք հաբած են եկեղեցուս հիւսիսային կողմի կամարներն, վասն որոյ արտաքուստ շինած են նոյն կողմից քարուկիր յենարաններ եւ մի գաւիթ՝ դրան վերայ: Եկեղեցուս երկարութիւնն է 26½ մետր, լայնութիւնն՝ 16:

Եկեղեցումս կայ մի մեծադիր եւ ձեռագիր աւետարան, գրուած թղթի վերայ: Յիշատակարանից. «Յամի թուականութեանս հայկազեան տոհմի ՉՀԱ. (1322) Ներսէս քահանայ ստացող աւետարանիս: Գրեցաւ սուրբ աւետարանս ի ժամանակիս վերջացեալ դարիս, ըստ այնմ՝ որ ասէ. Յոտից մինչեւ ցգլուխ չիք առողջութիւն. ա՜խ, ա՜ւախ եւ ո՜խ. առ սմա ելեալն ժպիհր ազգին որ քրիստոսադաւան ազգիս հասուցին մինչեւ ի դրունս մահու....: Ես անպիտանս ի կարգս կրօնաւորաց սուտանուն գրիչ Վդ... գրեցի զաստուածային տառս ի գեղջն, որ կոչի Պէշգենա Գոմեր առ դրան սուրբ Զաւրավարին Գէորգեայ»:

Կայ նաեւ Թադէոս սրբազան առաքելի մասունքն՝ հաստատուած մի արծաթեայ փոքր խաչի մէջ, որ կրում է սոյն արձանագրութիւնը. «Յիշատակ է սուրբ խաչս Մնացական Գրիգորեանց Վասակով, որ ետ Նորաշէն սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն, որ եւ այժմ Նորոգեաց որդի Նորին Գէորգ Վասակով 1868 ամի: Ի սմա է ամփոփեալ բոյթն Թադէոսի առաքելոյն Ա.Գ.Թ.»:

Եկեղեցիս ունի երկու քահանայ:

Քաղաքիս չորս եկեղեցիներն միասին ունին 12 քահանայ, ծուխ 1600, արբ. 4751, իգ. 4516, մի տարում պատահած է արբ. ծնունդ 273, իգ. 226, պսակ 103, արբ. ննջեցեալ 138, իգ. 104:

Քաղաքումս է նստում նահանգապետն, քաղաքումս կան բարձր ուսումնարան[1], արուեստաւորաց ուսումնարան[2], եւ քաղաքական ուսումնարան[3]:

Արժ. Գրիգոր աւագ-քահանայ Թումաննանցի մօտ տեսայ մի կոնդակ՝ Հայոց Փիլիպպոս կաթուղիկոսից գրուած, որ ուղղած է առ ժողովուրդն, որք բնակում էին մի քանի գիւղերում: Արժան համարեցինք զետեղել այստեղ ընդօրինակութիւնը: Կոնդակս իւր ճակատին վերայ կրում է կարմիր թանաքով կնքուած կաթուղիկոսական կնիքը, որի մէջ գրուած է.«Աստուած Յիսուս Քրիստոս. Տէր Փիլիպպոս Կաթուղիկոս ամենայն Հայոց եւ Պատրիարք Վաղարշապատու, Յիսուսի Քրիստոսի ծառայ Փիլիպպոս վարդապետ ի Վճկիդ. Գդմյ. (վիճակիդ Գեղամայ)»:

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթուղիկոս ամենայն Հայոց եւ պատրիարք Վաղարշապատու երկնահանգէտ եւ ադինասարաս քրիստոսահիմն եւ լուսանկատ սրբոյ աթոռոյ Էջմիածնի, յորմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան եւ նամակ պահպանութեան, շնորհք առաքելական եւ աստուածային աւրհնութիւնն. ի վերայ Սուրբ Եղիշէի առաքելոյ վանից աստուածախնամ... եւ վիճակի սեպհական ժողովրդեան իւրաքանչիւր գեղջ Հաթերքու, Ականու[4] Ջանկաթաղու, Կուլաթաղայ, Մոխրաթաղու, Կիսապատու, Մեծ շինու, Մահմնու, Մալատկանու, Զարտախին, Վերին Շնաթաղու, Ափիտուլա, Սահլապատայ, Թրթուտին, Ուղտակակայ, Կօկթափին, Եղակերու, Ծակառաշինու, Վանքին, Գետաշենու. Սլուքեցւոյ, Բաղշիքու, Մրցնու, Հաճիշինու, Քօշկայ, Հատիսու, Էիբլօղայ, Միրզիկուայ, Ոսկանապատի, .. Ցնծահալայ, Գետամիջու, Համասրապակուց եկեղեցեաց, քահանայից ..... Եւ ընդ աւրհնութեանս ծաներուք վերոյգրեալ Սուրբ Եղիշէի առաքելոյ վանից առհասարակ սեպհական քահանայք եւ ժողովուրդք, զի մեր ճշմարտապէս լուեալ եւ ականատես իսկ եղեալ վանից ձերոց խաւար եւ աւեր մնալոյն եւ մանաւանդ թէ զձեզ եւս տեսեալ այդպէս առանց հովուի եւ առաջնորդի, թէպէտ եւ կարծէք մինչ ցայսվայր եղեալ, քանզի ի վերայ ժողովրդեան, որոյ աստուածային խնամքն եւ ողորմութիւնն լինի, թոյլ ո՛չ տայ Աստուած, այլ այնպիսեացն բարի առաջնորդ ե՛ հովիւն...[1] որ եւ մեք ընտրութեամբն աստուածային այսօր առ ձեզ խոստացաք տալ ձեզ հովիւ .. առաջնորդ զհոգեւոր բազուկ իմ եւ նեցուկ սրտիս զտէր Կիրակոս վարդապետն հաւանութեամբ ձերով եւ խնդրուածովք... եւ տո՛ւք զհաս եւ զիրաւունս ձեր՝ աթոռոյ ձերում ի ձեռս դորին անթերի... զհոգեբաժինն, զաթոռահակն, զխաչահանէքն.. զկողոպուտս, զդիազարդս... տանց մելիքներաց, տանց ազատաց, տանց քահանայից, տանց երեսփոխանաց, տանց տանուտերաց.., յանկարծամահիցն զամենայն առաջնորդին է ..... յամսեան յուն...»:

Հայրապետական կոնդակիս պարզ երեւում է, որ յիշեալ բոլոր գիւղերն սեպհական թեմ եղած է Ջրվէշտիկ-Եղիշէ-առաքեալ վանքին. թէ՛ վանքս էր յատկապէս յաջորդանիստ աթոռն եւ թէ՛ քանի-քանի՝ զուտ հայաբնակ գիւղեր աւերակ են այժմ կամ թրքաբնակ:

Ահա եւ Ներսէս Ե. կաթուղիկոսի արձակած կոնդակի իսկական պատճէնն, որը մեծ սիրով յանձնեց ինձ իմ ազնիւ բարեկամ Գանձակեցի պ. Աղէքսանդր Իսահակեանցն՝ ընդօրինակելով բնագրից, որ ուղղուած է իւր հանդուցեալ հօր:

«Ներսէս ծառայ Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ[2] եպիսկոպոսապետ եւ կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար աթոռոյ Արարատեան մայր եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի: Ամենապատուելի հասարակութեան Հայոց Ելիսաւետապոլ քաղաքի ընկալաք զխնդրագիր ձեր գրեալ այսր ամսոյ 5. ստորագրութեամբ եօթանասուն եւ չորս անձանց յաղագս կարգելոյ ի տեղի գանձապետի Սրբոյ Երուսաղէմի տիրացու Պօղոսի Զառափեանց՝ զաղայ Առոստամն Ափանասեան երեք տարի ժամանակաւ այնու պայմանաւ, զի բոլոր գումարն գանձանակաց եւ կրպակաց պատկանելոց սրբոյ վանիցն առաքելոյն Յակովբայ՝ որ յԵրուսաղէմ՝ եղիցի ձեռս Ափանասեանցին տասնին մէկ շահով, ընդ նմին խնդրէք զթոյլատրութիւն մեր վասն գնելոյ եղեալ առ ձեռն գումարաւ զկրպակս յանուն նոյն Աթոռոյն, առ որ ծանուցանեմք ձեզ, եթէ ի սկզբանէ անտի լուսաւորութեան Հայաստանի քրիստոնէական սուրբ հաւատով, եկեղեցիք մեր եւ վանօրայք չունին զնշանաւոր ինչ գումար, եւ այժմ եւս գումարք բազում եկեղեցեաց մնալով ի ձեռս երեսփոխանաց եւ գանձապետաց՝ մատնեալ են ըստ ձախող դիպուածոց ժամանակին ի կորուստ, որոց աղագաւ շարունակի ցարդ գրագրութիւն ի հոգեւոր իշխանութեան: Մեք, ունելով ըստ մերում կոչմանց եւ պարտաւորութեանց, զառաւել իրաւունս քան զ Պատրիարքն Երուսաղէմի եւ այլոց վիճակաւոր առաջնորդաց յաղագս պաշտպանութեանց կառավարութեանց եւ շինութեանց վանեւրէից եւ եկեղեցեաց յանձնելոց մերում Ծայրագոյն տեսչութեանց՝ բարւոք համարեցաք վասն ապահովելոյ զվիճակն սրբոյ վանիցն առաքելոյն Յակովբայ՝ որ յԵրուսաղէմ, եդաք յարքունի բանկն զտասն եւ մէկ հազար ռուբլիս արծաթոյ զստացեալն մեօք ի բազմաշխատ գանձապետէն Սրբոյ Երուսաղէմի ի Թիֆլիզու քաղաքացի Աղա Յովհաննէսէ Մնացականեանց, եւ ստացաք ի բանկէն զբիլեթ յանուն նոյն աթոռոյ, զոր եւ առաքեցաք առ սրբազան Պատրիարգն Երուսաղէմի: Եւ այժմ եւս զբոլոր գումարն եղեալս առ գանձապետ Տիրացու Պօղոսն Զառափեանց մտաբերեմք նոյնպէս առաքել ի բանկն յանուն սրբոյ Երուսաղէմի եւ զբլէթն առաքել առ սրբազան Պատրիարգն, որոյ վասն գրեցաք յիշեալ Զառափեանցին առաքել առ մեզ՝ զեղեալ առ ինքն բոլոր գումարն գանձանակաց եւ վարձուց կրպակաց: Եւ յաղագս փոխե-

1 Գիմնազիա, որի մէջ (բացի այլ աշակերտներից) կայ 93 հայ:

2 Ուսանում են այգեգործութիւն, շերամապահութիւն, հիւսնութիւն, ատաղձագործութիւն, փականագործութիւն, տակառագործութիւն եւն. եւն.:

3 Այդ ուսումնարաններում եղած բոլոր հայ աշակերտաց թիւն է մօտ 130 հոգի:

4 Այժմ աւերակ են Ականայ, Մահմնլու, Մալատկան, Վերին Շնաթաղ, Ափիտուլա, Սահլապատ, Քթուտ, Ուղտակաւ, Հատիս, Էիբլօղա գիւղերն. թրքաբնակ՝ Ծակառաշէն, Քօշկայ, Ցնծահալայ, Համասրապակ եւ Մրցնա գիւղերն. Հաճիշէնն ամարանոց արած են Գանձակի համար:

1 Կէտադրեալ բառերից կային, որ անընթեռնելի էին, կային՝ որ անյայտացած էին թղթի պատառեալ մասի հետ եւ կային, զորս թողինք համառօտագրութեան համար:

2 Կնքոյ մէջ գրուած է. «Է. Ներսէս եպիսկոպոսապետ ե կաթուղիկոս ամենայն Հայոց ՌՄՂԲ. 1843»:

լոյ զնա՝ որպէս թէ 'ի պատճառս ծերութեան եւ անգիտութեան հաչւոց, մեք ո՛չ գտանեմք զօրեղ պատճառս, ըստ որում չիք ինչ դժուարութիւն յայնմ պաշտաման, զի զժողովեալ գանձանակս ունի պահել եւ զվարձս կրպակաց ստանալ եւ յաւարտ ամին առաքել առ մեզ. եւ որպէս ունիմք զգրաւոր տեղեկութիւնս, նա ընտրեալ է յամին անցելոյ համաձայնութեամբ երեւելեացն ի ժողովուրդս եւ է ինքն անձն բարեպաշտ եւ հարազատ առ սուրբ եկեղեցին:

Յաղագս գնելոյ զկրպակս՝ նախապէս պարտին յայտնի լինել մեզ եւ Սինօդին սրբոյ Էջմիածնի. մանրամասն հանգամանք շինութեանց, տեղեաց, տարեկան վարձուց եւ ծախուց նոցին, որք եթէ արժան համարեսցեն, յայնժամ տնօրինեսցեն վասն գնելոյ զայնս. իսկ յաղագս տալոյ մասնաւոր անձանց զգումարս որ եւ իցէ եկեղեցեաց կամ վանօրէից, ըստ զօրութեան Բարձրագոյն կարգադրութեան հաստատելոյ յամին 1836 ի Մարտի 11. պարտի լինել գրաւականօք հաստատեցելովք 'ի դատարանի, այնպէս զի գրաւականն երկպատիկ եւ աւելի արժիցէ քան զգլուխ դրամն. իսկ պատասխանատուութիւնն կորստեան եկեղեցական դրամոց եղեալ կայ ի վերայ հոգեւոր իշխանութեան. ուստի այսոցիկ հանգամանաց լաւ համարեմք դնել ի բանկն զառ ձեռն եղեալ դրամս առ Տիրացու Պողոսն Զառափեանց վասն ապահով եւ անկորուստ մնալոյ, յօգուտ սրբոյ վանիցն Յակովբայ Առաքելոյն:

Կաթուղիկոս ամենայն Հայոց Ներսէս.
թուահամար 124.
յամի ազգական 1302 եւ Փրկչական 1853.
ի մարտի ի Թիֆլիզ»:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՈՒԽՏԱՏԵՂԻ

Քաղաքիս հարաւային կողմում կայ մի քարուկիր մատուռ սուրբ Աստուածածին անուամբ, որ շրջապատուած է այգիներով եւ ունի այս արձանագրութիւնը.

«Կառուցաւ այս տաճար Միածնի,
Յանուն Սրբուհւոյ Աստուածածնի.
Արդեամբ Յովհաննէս Միւրումեանցի,
Յիշատակ հոգւոյ իւր կենդանի:
Ի 1 Օգոստոսի 1867 ամի»:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՄԱՏՈՒՌ

Քաղաքիս հիւսիսային կողմում Նորաշէն թաղի մօտ կայ մի հողաշէն մատուռ սուրբ Սարգիս անուն. որ ուխտատեղի է: Երկու ուխտատեղեացս արդիւնքները յատկացրած են ուսումնարաններին:

Ս.ԿԻՐԱԿՈՍ ԵՒ ՅՈՒՂԻՏԱ

Պարոն Նաբաթեան եղբարց այգում գտնուած է մի գերեզման, որի տապանաքարը, որ խաչազարդ է, վերցնելու ժամանակ ջարդւում է եւ լինում չորս կտոր: Մի կտորի վերայ փորագրուած է. «Սուրբ Կիրակոս», երկրորդին վերայ. «Սուրբ Յուղիտա» եւ «Թուա», երրորդին վերայ. «Նոիթճ...»: Թէ՛ խաչերն եւ թէ՛ գրերն հին են եւ ունին ԺԱ. դարի ձեւերը եւ տիպերը:

Արդէն գիտենք, որ Հայոց Եկեղեցին յիշատակում է ի շարս տօնուած սրբոց «Կիրակոս եւ մայր սորա Յուղիդայ». գիտենք նաեւ, որ սոքա՝ Կիրակոս եւ իւր մայրն Յուղիտա, Փոքր Ասիոյ Իկոնիոն քաղաքից էին եւ թագաւորական ցեղից եւ նահատակուեցան Կիլիկեցւոց Տարսոն քաղաքում (յայսմաւուրք յուլիս 15): Սակայն չգիտենք, թէ ո՞վ են ուրեմն Գանձակի Կիրակոսն եւ իւր մայրն, բոլորովին տարբեր անձեր են սոքա, դուցէ նահատակուած եւ ամփոփուած են այս-

տեղ եւ անյայտ մնացած են գրականութեան սոցա անուններն եւ նահատակութեան դէպքն, եւ թէ յիշատակուած սրբոց անուամբ շինուած սեղանաքար է կամ գերեզման:

ԳԱՆՁԱԿԻՍ ԽԱՂՈՂՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ

1) Լկենի[1] գինու խաղող (սեւ).
2) Թաւրիզենի[2] գինու խաղող (սպիտակ).
3) Տեղացի գինու խաղող (սեւ).
4) Իծապտուկ կարմիր ուտելի խաղող.
5) „ սեւ „ „
6) Կանաչկենի կարմիր „ „
7) Մարանդենի[3] „ „

Շակաշէն գաւառիս մէջ այժմ կայ միայն երեք հայաբնակ եւ դաշտային գիւղեր, որք են.

Ա. Ջարկեալար կամ Խոյլբլար. որ շինուած է Կուրակ գետակի ձախ կողմում, փոշտի հին ճանապարհի գլխին. բնակիչք գաղթած են Խոյից, հողն՝ արքունի, ջրարբի եւ բեղմնաւոր, տեղական բերքերն՝ ցորեն, գարի, կորեկ, բոժոժ, բամբակ, խաղող, գինի, դեղձ, սերկեւիլ, արքայակաղին եւ այլն. օդն եւ կլիման ծանր ամռան եւ տենդարեր եւ ջուրն՝ անախորժ. երկար կեանք՝ 60-65 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, հողաշէն եւ անշուք, քահանան գալիս է Ղարադաղլու գիւղից: Ծուխ 38, արբ. 61, իգ. 60, միամեայ արբ. ծնունդ 2, իգ. 2, պսակ 1, արբ. ննջ. 1, իգ. 1:

Բ. Ղարադաղլու կամ Խանքեանդ. գիւղս, որ հիմնուած է նոյն գետակի ձախ ափում, շատ հեռի չէ Ջարկեալար գիւղից. բնակիչք գաղթած են Ղարադաղից եւ Խոյից. հողն՝ արքունի, ամենայն ինչ՝ նոյն. եկեղեցին՝ Սուրբ Գէորգ, աղիւսաշէն եւ գեղեցիկ, որ ունի սոյն արձանագրութիւնը. «1855 ամի 20 մարտի ի սէր սիրելի իմոց հայրենեաց որդոց Սիօնի փոքունց եւ մեծաց այս տաճար փոքրիկ ի հիմանց անտի բարեպաշտ կամօք աստ կառուցանի սեպհական արդեամբ մեծ իշխանի Աղա-Ռուստամի որդոյ Դանիէլի յանուն սրբոյ Գէորգայ մեծի, շքեղ հանդիսիւ աստէն օծանի»: Քահանայ մի, ծուխ 75, արբ. 174, իգ. 166, արբ. ծն. 8, իգ. 7, պսակ 4, արբ. ննջ. 6, իգ. 6:

Գ. Սարով. գիւղս հիմնուած է նոյն գետակի ձախ կողմում. բնակիչք տեղափոխուած են տեղս Ուտի-առանձնակ գաւառի Սարովից եւ իւրեանց նախկին գիւղի անուամբ Սարով անուանած. գիւղիս հողն ըէկական, ջրարբի եւ բազմարդիւն, նոյն են բերքերն, օդն եւ կլիման, երկար կեանքն եւ նոյն քահանան, եկեղեցին Սուրբ Աստուածածին, հողաշէն եւ անշուք: Ծուխ 31, արբ. 86, իգ. 77, արբ. ծն. 4, իգ. ծն. 3, պսակ 1, արբ. ննջ. 1, իգ. 1:

ՂԱՓԱՆԼՈՒ ԱՒԵՐԱԿ

Գաւառիս ստորին մասում, այս է Կուր գետի, Կուրակ եւ Շամքոր գետակների եւ երկաթուղու գծի միջեւ եղած տարածութեան վերայ պակաս չեն հայկական աւերակներ, այժմ մեծ մասամբ մահմեդականաբնակ գիւղեր են, հանգստարաններ եւ եկեղեցեաց բեկորներ: Մասնաւորապէս Ղափանլու աւերակն, որ ընկած է երկաթուղու, Շամքոր գետակի աջ ափերի եւ Կուր գետի մէջ: Աւերակիս երկարութիւնն մօտ մի մղոն է, ընդարձակութիւնս կարծել է տալիս, թէ գիւղաքաղաք եղած է Ղափանլուս, որ ծածկուած է ընկուզենի, կաղամախի եւ այլ զառամեալ ծառերով: Հնագոյն բնակարաններն շինուած են հաստ-հաստ եւ մեծ-մեծ աղիւսներով, որոց եր-

1 Արցախեան բարբառով լակ նշանակում է առատաջուր, միջի հիւթն շատ՝ լակենի:
2 Նշանակում է, թէ խաղողի այս տեսակի որթն բերուած է Թաւրիզից:
3 Որթն՝ բերուած Մարանդ գաւառից: Մինչդեռ Արցախի դաշտային գաւառների որթերն ընդհանրապէս բարձրացրած են ծառերի վերայ, Դանձակումս ընդհակառակն բարձրացնում են սարու վերայ: Սարիներն առհասարակ եղէգնեայ են. մէն մի որթի յենարանն՝ երեք եղէգն է:

կարութիւնն է 40 սանթիմետր եւ հաստութիւնն՝ 9: Փորուածներից ելնում են վաղեմի կարասներ, կճուճներ եւ այլ խեցեղէն անօթներ, արծաթեայ եւ պղնձեայ դրամներ եւ հին աղիւսներ: Այժմ թրքաբնակ է աւերակս. թէ ի՞նչ եղած են գիւղաքաղաքիս հայ բնակիչներն, չգիտենք, միայն գիտենք, որ մի քանի գերդաստան այստեղից փոխադրուած են Գանձակ մօտ հարիւր տարի առաջ: Մահմեդականներն անյայտացրած են եկեղեցեաց եւ գերեզմանների քարերը...:

ԵԼԵՆՈՕՖ

Գիւղաքաղաք է այս գերմանական գաղթականութեան, որ 1819 թուին հիմնարկուած է դաշտաբերանում Գանձակիցս վերեւ նոյն գետակի աջ կողմի բարձրութեան վերայ: Ուղղագիծ, լայն եւ շար ի շար են փողոցներն, որոց աջ ու ձախ եզերքներով շինուած են ընակարաններն եւ շարակարգ տնկուած են կաղամախի, սօսի եւ բարտի ծառեր, որոց գեղեցկութիւնն առանձին փայլ է տալիս գիւղաքաղաքիս: Իւրաքանչիւր ծուխ ունի աղիւսաշէն (կայ եւ քարով շինուած) եւ մի քանի սենեակներից բաղկացած կանոնաւոր տուն, առանձին խնամքով մշակուած այգի, կարգ ու սարքով ցանուած բանջարանոց, կով, եզն, ձի, հնդկահաւ, սագ, բադ, հաւ եւ աղաւնի: Այս պատճառաւ Գանձակն համարեա թէ տարուան ամէն եղանակներում ունենում է թարմ կանաչի, կաթ եւ կարագ, սեր եւ իւղ: Վերջապէս սոցա մէջ կայ եւրոպական ամէն տեսակ կարգ եւ կանոն թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին կենցաղավարութեան եւ յարաբերութեանց մէջ:

Այստեղ կան Գանձակեցի եւ Ոսկանապատ, Գետաշէն, Սուլուկ, Միրզիկ, Հաբցհանդիստ (Զաւդառ), Բանանց եւ Բրաջուր գիւղերից թէ՛ ընտանեօք եւ թէ՛ սոսկական հայեր, որք զբաղւում են վաճառականութեամբ եւ տեսակ-տեսակ արուեստներով: Ընտանեօք հայերն բաղկացած են 30 գերդաստանից, իսկ սոսկական՝ 30 անձից: Գիւղաքաղաքիս արեւմտեան կողմում, Գանձակ գետակի հովտում գոյանում են ինքնաբոյս տորոն եւ ընկուզի շատ ծառեր:

Ժ. ԿՈՂԹ ԳԱՒԱՌ (6)

Գաւառս կից է Շիկաշէն գաւառին արեւմտեան կողմին եւ անջատւում է միայն Շամքոր գետակով: Թէեւ միեւնոյն Շիկաշէնի հողը ունի եւ գաւառս, սակայն չունի նոյնի հարուստ բարեմասնութիւնները, քանզի ամբողջապէս թրքաբնակ է գաւառս: Մահմեդականք գրեթէ ոչընչացրած են հայկական բոլոր հնութիւնները, վասն որոյ հազուագիւտ են գաւառումս եկեղեցեաց, մատուռների, հանդստարանների եւ խաչարձանների քարեր:

ՇԱՄՔՈՐ ԱՒԵՐԱԿ ՔԱՂԱՔ (7)

Շամքոր քաղաքի աւերակն երեւում է Շամքոր գետակի ձախ ափում՝ երկաթուղու դծի վերի եւ վարի կողմերում: Մեծ եղած է քաղաքիս ծաւալն, ինչպէս երեւում է աւերակիս մնծութիւնից, մօտ մի մղոն երկարութիւն ունեցած է քաղաքս իւր արուարձանով միասին եւ կէս մղոնից պակաս՝ լայնութիւն: Տակաւին գտնում են աւերակներից ոսկի, արծաթ, եւ պղինձ դրամներ եւ պղնձեղէն, երկաթեղէն եւ խեցեղէն գործիքներ, կարասիներ եւ անօթներ: Այժմ ամենայն ինչ կործանեալ դրութեան մէջ է. միայն կիսաւէր է բերդն:

Ամրոցս հիւսիսային, հարաւային եւ արեւմտեան կողմերից շրջապատուած է քաղաքիս աւերակներովն, իսկ արեւելեան կողմից (պարսպի տակով) հոսում է Շամքոր գետակն: Բերդս ունի շատ բուրգեր, հաստ պարիսպ եւ հաստատուն ամրութիւն: Պարսպի եւ բուրգերի վերայ համարեա թէ մի-մի շար թրծեալ աղիւս շարած է եւ մի-մի շար անտաշ գետաքար կրաշաղախ ցեխի հետ միասին: Ահա այսպէս շինուած է բերդս, որ ունի 130 մետր երկարութիւնն, 70 մետր եւ 50 սանթիմ լայնութիւն, 2 մետր եւ 45 սանթիմ պատի հաստութիւն եւ 2 դուռն՝ մին հարաւային եւ միւսն հիւսիսային կողմից: Բացի բերդիս պարսպից կայ եւ մի ընդարձակ պարիսպ, որ

սկսուած է բուն բերդի հարաւային պարսպի շարունակութիւնից եւ պատելով արեւմտեան կողմով՝ կցուած ապա բուն բերդի հիւսիսային կողմի պարսպին: Բայց այս պարիսպն հիւսուած է տեղ-տեղ՝ քարուկիր եւ տեղ-տեղ՝ անեի աղիւսով: Երկաթուղին տակաւին չսկսած այստեղ էր փոշտի մի կայարանն, որ կոչւում էր Շամքորի կայարան:

Այժմ քաղաքիս աւերակներում բնակում են մի քանի մահմեդական գերդաստան:

ԴԻՏԱՐԱՆՆԵՐ

Առաջին բարձրագոյն դիտարանն, որ եղած է Բ. բերդի հիւսիսային կողմում, փլած է 1844-ին:

Երկրորդ դիտարանն՝ Շամքոր գետակի ձախ կողմում՝ դաշտաբերանումն է:

Երրորդ եւ չորրորդն՝ որ կանգուն են, արձանացած են Աղդան սարի ստորոտին մօտ: Ամբողջապէս քարուկիր են բոլոր դիտարան բուրգերն:

ՋԱԿԱՄ

Կողթ գաւառիս միջի մասն են կազմում Զակամ գետակի դաշտերն եւ արեւմտեան մասն՝ Աղստեւ գետակի աջ ափերի մեջ ընկած տարածութիւնն: Երկու Զակամ կայ՝ Վերին-Զակամ եւ Ներքին-Զակամ. առաջնոյն մասին՝ յետոյ, իսկ վերջնոյս մասին՝ այժմ: Ներքին Զակամիս մէջ այժմ չէ գտնւում հնտաքրքրաշարժ հնութիւններ. բայց գիտենք, թէ այս մասի մէջ էր Խաղխաղ քաղաքն:

ԽԱԼԽԱԼ (8)

Զակամ գետակի հովիտն իբրեւ երկրալեզու դաշտի շարունակութիւնից մտած է լեռների մէջ: Հովտալեզուս՝ սեղմուելով արեւելեան եւ արեւմտեան լեռներից՝ գետակի ընթացքով մտած է նոյն լեռների մէջ, ապա փոքր-ինչ վերեւում ստացած լայնագոգ ձեւ, մանաւանդ ջրաձորի ձախ ափերում: Արեւելեան կողմից Ընկուզուտ (Ղոզլու), հարաւային կողմից Մամռուտ (Մամրթլու) սարերն պատած են լայնագոգ հովիտս իբր բնական շրջապարիսպ, գետակի աջ ու ձախ կողմերով: Հովիտս ներկայացնում է հեռաւոր հնութեան բեկորներ եւ հետքեր՝ աւերակների թափուած քարեր, հին եւ կոպիտ խեցեղէն անօթների բեկորներ, իսկ ստորերկրեայ փորուածներից ելնում են կրով եւ աղիւսով շինուած պատեր եւ ահագին տաքարներ: Սովորականից չափազանց հաստ, երկար եւ լայն են աղիւսներն, այս է 31 քառակուսի սանթիմետր:

Խեցեղէն խողովակներով աղբիւրներ բերուած են աւերակ քաղաքատեղիս խիստ հնուց, որոց հետքերն ակներեւ է Զուլկատարով Համիտ-բէկի քանդած երկարաշար կոպիտ խողովակներից, որ գտնւում են աւերակիս արեւմտեան կողմերում: Ափսո՜ս, որ իսպառ անհետացել են եկեղեցեաց աւերակներն:

Այժմ մի գիւղ է աւերակիս տեղն, որն ծածկուած է պարտէզներով եւ այգիներով, սակայն հասակաւոր բնակիչք խոստովանում են, որ քաղաք եղած է այստեղ:

Աւերակիս արեւելեան եւ արեւմտեան կողմերում կան աւերակ գիւղատեղիներ եւ հանգըստարաններ, բայց անարձանագիր են տապանաքարերն: Այժմ տիրապետում են աւերակիս Զուլկատարեան եղբարք, որք են. Ալլահեար-բէկ, Մեհրալի-բէկ, Համիտ-բէկ եւ Ագիլ-բէկ: Զմեզ յարգանօք հիւրասիրողն էր Համիտ-բէկն, որ յայտնեց, թէ իւր նախնիքն Քրիստոսի 653 թուականին նախ՝ Բակտրիայից եկած են Շիրազ քաղաք, որից ապա Տիգրանակերտ եւ ապա, շատ յետոյ՝ այստեղ:

Խաղխաղ աւերակիս շրջապատում կան հետեւեալ սրբավայրերն եւ աւերակ դղեակներն.

1) Սուրբ Ղազար, որ է երեք գերեզման Խաղխաղիս արեւելեան կողմում եղած սարի գլխին:

2) Սորա արեւմտեան կողմում, ոչ այնքան հեռի, կայ մի աւերակ մատուռ:

3) Մի աւերակ դղեակ, որ շատ հեռի չէ աւերակ մատուռից եւ կոչւում է Շահ-Փեքար կամ

Աղաճ-դալա: Բարձր քերծեր են դղեկիս հարաւային, արեւելեան եւ արեւմտեան կողմերն, իսկ քարուկիր պարսպուած (այժմ կիսաւեր) հիւսիսային կողմն: Համարեա թէ հարթ է դղեկիս մակերեւոյթն: Բայց թէ ի՞նչ եղած է վաղեմի դղեկիս իսկական անունն, ոչ ոք չգիտէ:

4) Դղեկիս արեւելեան կողմում կայ մի փոքրիկ վանք, որ ամբողջապէս կանգուն է, որի հարաւային հանդէպ կայ մի փոքր եկեղեցի, գիւղատեղի եւ հանդստարան:

5) Ընդարձակ եւ աւերակ գիւղատեղի եւ հանդստարան կայ նաեւ նոյն դղեկին հարաւարեւելեան կողմում, որ կոչւում է Քեշիշ-քեանդ:

6) Ղազանչի աւերակ եւ կիսաւեր եկեղեցին եւ հանդստարան, որք գտնւում են Քեշիշ-Քեանդի արեւելեան կողմում. ոչ այնքան հեռի:

7) Երկու անանուն դղեակներ եւս. յորոց մին գտնւում է Ղազանչի աւերակի կողմում, ոչ այնքան հեռի եւ միւսն՝ հիւսիսային կողմում: Անյայտ եւ անծանօթ են բերդակներիս իսկական անուններն եւ անցեալն:

8) Զակամ գետակիս ջրաձորի աջ ու ձախ կողմերում կան նաեւ եկեղեցու վեց աւերակներ եւ հանդստարաններ:

ԿՈՋԷՆ ԳԻՒՂ

Հիմնուած է Կուր գետի աջ ափում՝ մօտ 21/2 մղոն հեռի Թովուզ երկաթուղու կայարանից: Սուլթանի կամրջից ներքեւ միանում են բուն Տաւուշ (Թովուզ) եւ իւր օժանդակ Ախնջին, ապա խառնւում Կուր գետին Կոզէնի արեւելեան կողմով: Բուն ուտեայ մնացորդներից են գիւղիս բնակիչներն, որք ունին եւ առանձին բարբառ (ուտիերէն), բայց գիտեն եւ հայերէն: Մօտ 700 տուն եղած է գիւղումս, բայց այսօր մնացած է միայն 30 ծուխ. պատճառն այն է, որ օդն եւ կլիման խիստ ծանր են ամռան: Այս պատճառաւ համեմատելով ամէն տարուայ ծնածները մեռելոց հետ՝ միշտ աւելի եղած է վախճանուածների թիւն: Չհաշուելով Կուր գետի քանդած տարածը՝ քառորդ մղոնից պակաս չէ հանդստարանի ծաւալն: Հողն արքունի, ջրարբի եւ բազմարդիւն, տեղական բերքերն նոյն, օդն եւ կլիման տենդաբեր ամռան եւ մահատու. երկար կեանք՝ 50, Եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս. քահանան գալիս է Մովսէս գիւղից:

Գիւղիս մօտ կայ եւ հին գիւղատեղի եւ հին հանդստարան եւ քարուկիր եկեղեցի, որից այժմ մնացած է միայն խորանի կլոր շինութիւնն: Հանդստարանումս կայ մինչեւ 600 տարուան գրուած տապանաքար: Արձանագրութիւններից երեւում է, որ ամփոփուած են այստեղ թաւրիզեցի, հալաւցի, կարնեցի եւ այլ քաղաքներից փաճառականներ: Նշանաւոր է գիւղիս բոժոժն կամ մետաքսաթելն, վասն որոյ հաւանական է, որ գիւղս բազմամարդ եղած ժամանակներում արտադրած է մեծ քանակութեամբ մետաքսաթել, որը գնելու համար եկած լինին հանդուցեալ վաճառականներն: Կան նաեւ գիւղիս իշխող Մելիք-Ջհանկիրի տապանաքարն եւ Աւետարան անուն մի ուխտատեղի մատուռ: Ծուխ 30, ար. 90, իդ. 80:

ՀՈՂԱԲԵՐԴ (ԹՈՓՐԱՂ ՂԱԼԱ)

Կոզէնից կէս մղոնաչափ վերեւ՝ նոյնպէս Կուր գետի աջ կողմում, կայ մի հողեայ բլուր, որը անուանում են Հողաբերդ: Գեղեցիկ հարթակ է բլրի գագաթն, որից ելնում են կարասներ, հին հրացաններ եւ պղնձեղէն ու խեցեղէն անօթներ: Մօտ քառասուն տարի առաջ գտած են այս տեղից վեց սափոր լի արաբական եւ պարսկական դրամներ:

ՂԱՋԱԽ -ՓՈՔՐԻԿ ՔԱՂԱՔ

Նոր քաղաքս հիմնուած է Աղստեւ գետակի աջ ափի բարձրութեան վերայ 1881 փետր. 13-ին: Բնակիչներն են հայ, պարսիկ եւ ռուս: Հայերն մեծաւ մասամբ եկած են Գանձակից, Շուշուց, Արցախի եւ Ղազախի գիւղերից. բայց Բանանց գիւղից եկածներն ունին տներ եւ խանութներ: Հայերն կազմում են բոլոր բնակչաց երեք մասից երկուսն: Նոր քաղաքումս կայ հիւանդանոց, դեղատուն, բժիշկ, գաւառապետ. գաւառապետի օգնական, հաշտարար դատաւոր, զօրանոց, փոշտ, հեռագրատուն, գանձարան եւ երկդասեան քաղաքական ուսումնարան հանդերձ ամենայն պարագայիւք: Կայ նաեւ շուկայ, վաճառականի եւ արուեստաւորի խանութներ, որք ըստ մեծի մասին հայեր են: Օդն եւ կլիման տենդաբեր ամռան, եկեղեցին նորաշէն եւ կիսատ տակաւին, որը շինել է տալիս պ. Մկրտիչ Ջաղէթեանցն թրծեալ աղիւսով եւ կրացեխով: Ծուխ 50, 10 տուն եւս վակղալում. ար. 120, իդ. 110:

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ

ԺԱ. ՊԱՋԿԱՆՔ ԿԱՄ ԴԻՋԱԿ ԳԱՒԱՌ

Գաւառիս հարաւային սահմաններն են Երասխ գետն, արեւելեանն՝ Պիան, հիւսիսայինն՝ Վարանդայ եւ արեւմտեանն՝ Բերդաձոր գաւառների սահմաններն:

ՋԱԲՐԱՅԷԼ (9)

Այժմ գաւառագլուխ է նոր եւ փոքրիկ քաղաքս, որ հիմնուած է մի սեռի վերայ, որի երկու կողմերն ձորակներ են: Դիրքն նայում է Երասխ գետին, որի հեռաւորութիւնն գուցէ փոքր-ինչ աւելի լինի մի մղոնից: Բնակիչք հայ, ռուս եւ Թուրք-հաւաքածոյ են: Ինչ քաղաքական հաստատութիւն որ ունի Ղազախ քաղաքն՝ դատարաններ, փոշտ, հեռագիր եւն, նոյնը ունի եւ Ջաբրայէլս. եւ ի վերայ այսր ամենայնի ունի եւ մաքսատուն, ուր առնում են Պարսկաստանից բերուած ապրանքների մաքսը. կան նաեւ սահմանապահ ռուս զօրք եւ կոզակներ, շուկայ եւ բազմաթիւ ծառայողներ: Օդն եւ կլիման անախորժ եւ ծանր ամռան, ջուրն ականի է եւ ոչ աղբիւրի: Դեռ եկեղեցի չունին հայերն, քահանան գալիս է Նոր-Առաքել գիւղից: Հայք ունին 20 ծուխ:

ՋԱԲՐԱՅԷԼԻ ՋՈՒՐՆ

Որովհետեւ վազող ջուր չունի Ջաբրայէլս, վասն որոյ շատ հին ժամանակից նախ փորած են արեւմտեան ձորակի միջով մի ստորերկրեայ ական, ապա փորած են շատ ականներ, որոց ստորին ծայրերն սկսուած են մայր ականից եւ վերի ծայրերն տարածուած դէպի ձորակի աջ ու ձախ կողմերն: Ահա այս բոլոր ականների ջրերն հաւաքուելով մայր ական մէջ՝ արտավիժում են մի լաւ ջրաղացի ջուր, որից թէ՛ խմում են եւ թէ՛ ջրում են այգիները, որք խնամուած են առանձին հոգատարութեամբ:

ԱՒԵՐԱԿՆԵՐ

Ջաբրայէլից բաւական ներքեւ Երասխի ձախ եզերքներում կան հայկական աւերակ գիւղատեղիներ, հանդստարաններ եւ եկեղեցիների հետքեր: Հայոց եւ Աղուանից թագաւորութեանց կենդանութեան ժամանակ շէն եղած են եւ խիտառխիտ հայկական բազմամարդ գիւղերով լի գաւառիս բոլոր կողմերն. իսկ այժմ գիւղերից շատերն աւերակ են եւ շատերն՝ մահմեդականաբնակ:

ԽՈՒՏԱՓԻՐԻՆ ԿԱՄՈՒՐՋ

Ամբողջ հինգ մղոն է Ջաբրայէլից մինչեւ կամուրջս, որ շինուած է Երասխ գետի վերայ: Գետս, որ ընկած է Դիռի երկու սարերի մէջ, հետզհետէ դարերի ընթացքում կտրած է ապառաժ սալ քարերը եւ խորացրած ու սեղմած իւր յատակը: Երկու կամուրջ կայ այստեղ՝ Վերին եւ Ներքին: Խիստ հնաշէն եւ համակ սրբատաշ քարով շինուած է վերին կամուրջն, որ ունի ինն աչք, որոց ոտքերն հաստատուած են բնութենաստեղծ վէմ քարերի վերայ: Աչքերի կամարներից կանգուն են չորսն եւ քանդուած՝ հինգն: Իսկ վարի կամուրջն հիմնարկուած է նոյնպէս բնական վէմ քարերի վերայ, որ ունի տասնհինգ աչք, որոց ոտքերն շինուած են քարով եւ թաղերն՝ թրծեալ աղիւսով եւ կրաշաղախ ցեխով: Վերջին կամրջիս ձախ կողմի դրան կանգնած են Ռուսաց սահմանապահ զինուորականներ, իսկ աջ կողմում՝ Պարսից սահմանապահներն, քանզի գետս է երկու տէրութեանցս այժմեան սահմանագլուխն:

ՄԱՋԱՆ-ՆԱՆԷ

Խուդափերին կամրջի հիւսիսային հանդէպ է Դիռի սարն, որի վերայ կայ աւերակ գիւղատեղի, հանգստարան եւ եկեղեցի, որ այժմ ուխտատեղի արած են մահմեդականք եւ կոչում են Մաղան-Նանէ: Շրջապարիսպ ունեցած է եկեղեցիս, բայց այժմ աւերուած է: Ասում են, թէ Հին-Թաղլարի ժողովուրդն տեղափոխուած է աւերակ գիւղիցս:

ՉԱԼԱՊԼԱՐ-ՀԱՃԻ-ԿԱՐԱՄ

Աւերակ գիւղատեղիս գտնւում է Հակարի գետի արեւելեան կողմում: Այստեղ եւս կայ հայկական հանգստարան եւ եկեղեցի, որը նոյնպէս ուխտատեղի փոխած են մահմեդականք, որք անուանում են Զալապլար-Հաճի Կարամ:

Ա. ՆՈՐ-ԱՌԱՔԵԼ. գիւղս գտնւում է Ջաբրայէլի արեւմտեան կողմում, ականաձորակից վերեւ, հիմնուած է մի ձորակի եւ երկու սեռի վերայ, բնակիչք գաղթած են Ղարադաղից եւ Ղափանի Սեւաքար գիւղից 1840 թուին, հողն լեռնային, անջրդի, սակաւ եւ մեծ մասամբ բէկական, տեղական գլխաւոր բերքերն ցորենն, գարի, խաղող, գինի եւ բոժոժ, օդն եւ կլիման սննդարար, ջուրն ականափոր, երկար կեանք 90 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն, քահանայ մի: Ծուխ 90, ար. 340, իգ. 312:

ՀԻՆ-ԱՌԱՔԵԼ ԱԻԵՐԱԿ ԳԻՒՂ. Նորի արեւմտեան կողմում՝ գիւղից վերեւ, ուր մնում է եկեղեցու աւերակն, որը բարեպաշտ ոմն՝ Մասան անուն, նորոգելով շինել տուած է մատուռ: Հին գիւղատեղի, հանգստարան եւ աւերակ եկեղեցի կայ նաեւ սորա հարաւ-արեւմտեան հանդէպ՝ Անապատ անուն:

Բ. ՋԻԼԱՆ ԳԻՒՂ. Շինուած է Առաքել գիւղի հարաւ արեւմտեան հանդէպ սարի վերայ, բնակիչք գաղթած են նոյնպէս Ղարադաղից եւ Ղափանից (Բաղք, Բաղաց գիւղերից) 1840 թուին, հողն կիսով չափ արքունի եւ կիսով չափ բէկական, ամենայն ինչ նոյն, ունին եւ ոչխար, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քահանան գալիս է Նոր-Առաքելից: Ծուխ 28, ար. 105, իգ. 95:

Գ. ԲԻՆԵԱԹԼՈՒ ՇԷՆ. Հիմնարկուած է Ջիլանի սարի շարունակութեան վերայ, բնակիչք՝ գաղթած Ղարադաղից նոյն թուականին, հողն արքունի եւ ապարդիւն կամ խիստ նուազ արդիւնաւէտ, օդն, կլիման եւ ջուրն սննդարար, երկար կեանք 90 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, նորաշէն, ծածքն փայտաշէն, քահանան գալիս է, Նոր-Առաքելից. Ծուխ 26, ար. 80, իգ. 75:

Դ. ԾԱՄ-ՁՈՐ. Հիմնուած է Բիւնեաթլու շէնից վերեւ մի ձորի երկու լանջերին վերայ, բնակիչք բնիկ. հողն բէկական, սակաւ, աւազուտ եւ նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, պատուական օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք 100 տ., եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, շինուած Ռ.Ճխե. թուին, երկարութիւնն 18 մետր, լայնութիւնն 12 մետր 33 սանթիմ, քահանայ՝ երեք, ծուխ 100, ար. 350, իգ. 270:

ՀԱՆԴԻՆ ՁԵՌ.Բ. Քարուկիր եւ փոքր մատուռ է շինուած Ծամ-ձորի արեւմտեան հիւսիսային կողմում: Աւանդաբար ասում են. «Սուրբ Շաղախն նահատակուելու ժամանակ փախչում է, բայց փախչելիս՝ անօրէններն կտրում են մի ձեռն, որ մնում է այս տեղ, յետոյ կտրուած ձեռնին վերայ շինում են մատուռ: Բայց որովհետեւ արնաշաղախ է լինում նահատակուելիս, այս պատճառաւ կոչւում է Շաղախ՝ շաղախուած արիւնով»:

Ե. ՇԱՂԱԽ-ԳԻՒՂ. Սարի շէն. Հիմնուած է Քարագլուխ գիւղի սարի վերայ. բնակիչք գաղթած Ղարադաղից. հողն արքունի. տեղական բերքերն նոյն (ոչխար, հաճար, գարնանի, կտաւհատ, կորեկ) գերազանց օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք 115 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քահանան գալիս է Ծամ-ձորից: Ծուխ 70, ար. 275, իգ. 230:

Զ. ՔԱՐԱԳԼՈՒԽ շէնս հիմնուած է Ծամ-ձորի հիւսիսային կողմում մի քերծի գլխին, բնակիչք մեծ մասամբ բնիկ, փոքր մասն՝ գաղթած Ղարադաղից, հողն արքունի եւ սակաւ արդիւնաւոր, տեղական բերքերն նոյն, օդն, կլիման եւ ջուրն գերազանց, երկար կեանք 115 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր. քահանան գալիս է Ծամ-ձորից:

Ծուխ 25, ար. 108, իգ. 95:

Է. ԲԱՆԱԶՈՒՐ գիւղս հիմնուած է մի ապառաժուտ ձորի աջ լանջի վերայ Յոր գիւղի հարաւային կողմում, բնակիչք բնիկ, հողն բէկական, ոչ այնքան բարեբեր, բայց նշանաւոր գինին, տեղական բերքերն նոյն, օդն, կլիման եւ ջուրն վատառողջ, երկար կեանք 70-80 տարի, եկեղեցին Սուրբ Աստուածածին, կառուցեալ չորս սիւների վերայ, որի երկարութիւնն է 18 մետր 40 սանթիմ, լայնութիւնն 11 մետր, քահանայ մի: Ծուխ 150, ար. 575, իգ. 430:

ՍՊԻՏԱԿ ՏՂԱՅ (ԱՂ-ՕՂԼԱՆ) ՈՒԽՏԱՏԵՂԻ

Շինուած է գիւղիս արեւելահարաւ կողմում սպիտակ շերտաքարով: Մատուռս ունի միջակ մեծութիւն, հիանալի տեսարան եւ պատուական օդ:

Ը. ՅՈՐ.[1] Հիմնուած է մի խոր ձորում, որ գտնւում է Վէլիջանի բերդի հարաւային ստորոտում, բնակիչք բնիկ, հողն արքունի, սակաւ եւ խիստ նուազ արդիւնաբեր, զի աւազուտ եւ խնճուտ է հողն, բայց պատուական է խաղողն, պատուական օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք 90-95 տ., եկեղեցին Ամենափրկիչ, կառուցեալ չորս սիւների վերայ, բարձրաշէն եւ գեղեցիկ, բնմի ժողովրդահայեաց ճակատն նրբաքանդակ նախշած, երկարութիւնն է 22 մ, լայնութիւնն 12 մ 35 սանթ., դրան ճակատակալ քարի վերայ արտաքուստ. «Յիշատակ է Ն. թվ.»:

Քահանայ մի. ծուխ 75, ար. 290, իգ. 270:

ԱՆԱՊԱՏ ԿԱՄ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Գիւղիս հարաւային կողմի ձորի ձախ եզերքի բարձրութեան վերայ կայ մի փոքր հարթակ, որի վերայ շինուած է վաղուց հին եւ անտաշ քարով եկեղեցի: Փոքր տաճարիս շուրջն հանգստարան է, բայց երեւում են խուցեր. թուի թէ փոքրիկ միաբանութիւն եղած է այստեղ:

Ստորերկրեայ Դամբարան. Անապատիս մօտ կայ մի ստորերկրեայ, քարուկիր դամբարան, որի մէջ կայ մի գերեզման, որ ունի շիրմաքար եւ մեծ ուխտատեղ է:

Թ. ՂՈՒՇՁԻԼԱՐ. Հիմնուած է գիւղս Վէլիջան-իշխանի բերդասարից դէպի արեւելք խոնարհուած լանջի վերայ. բնակիչք գաղթած են Ղարադաղից. հողն՝ բէկական եւ միջակ արդիւնաբեր. պատուական՝ օդն, կլիման, ջուրն եւ տեսարանն. երկար կեանք՝ 110 տ., եկեղեցին՝ Բերդավանք, քարուկիր. քահանան գալիս է Նորաշէնից: Ծուխ 12., ար. 36, իգ. 27:

Ժ. ՆՈՐԱՇԷՆ. Հիմնուած է նոյն սարի հիւսիսահայեաց լանջի վերայ, բնակչաց մի մասն բնիկ եւ միւս մասն գաղթած Ղարադաղից, հողն՝ բէկական, խիստ սակաւ եւ նուազ արդիւնաբեր,

1 Համարեա՛ թէ բոլոր գիւղերիս գոմերն փորուած են գետնի տակ, որը անուանում են կօհօլ (առանց փայտի):

պատուական՝ օդն, կլիման, ջուրն եւ տեսարանն, երկար կեանք՝ 113 տ., եկեղեցին՝ նորաշէն եւ տակաւին առանց օծելու: Քահանայ մի. ծուխ 20, ար. 120, իդ. 105:

ԺԱ. ՏԱԳ ԳԻՒՂ. Հիմնուած միեւնոյն սարի հիւսիսահայեաց լանջի վերայ, բնակչաց կէս մասն՝ բնիկ եւ միւս կէսն՝ գաղթած Ղարադաղից, հողն բէկական, սակաւ եւ նուազ արդիւնաբեր, պատուական օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք 100 տ. եկեղեցին նորակառոյց, քարուկիր, Սուրբ Մեսրոպ, քահանան գալիս է Վանք գիւղից, ծուխ 35, ար. 175, իդ. 135:

ԺԲ. ՎԱՆՔ ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն սարի հիւսիսահայեաց լանջի վերայ՝ Հադրութի գիւղի հարաւային հանդէպ, բնակիչք՝ բնիկ, հողն բէկական, սակաւ եւ կարի նուազ արդիւնաբեր, ամենայն ինչ նոյն, եկեղեցին Սղիտակ-Խաչ-Վանք, քահանայ մի: Ծուխ 35, ար. 155, իդ. 114:

ՍՊԻՏԱԿ-ԽԱՉ-ՎԱՆՔ

Հիմնուած է Վանք գիւղից ներքեւ մի տեսարանաւոր հարթակի վերայ, շինուած է անտաշ քարով եւ կրացեխով: Վանքս ունի փոքր կաթուղիկէ եւ դաւիթ: Տաճար եւ դաւիթ ի միասին չափելով երկարութիւնն է 15 մ. 75 սանթ., լայնութիւնն՝ 7 մ. 10 սանթ.: Վանքս, որ եկեղեցի համարուած է Վանք գիւղացւոցն, բայց միեւնոյն ժամանակ մեծ ուխտատեղի է գաւառիս հայ բնակչաց: Տաճարիս ներսում հիւսիսային խաչարձանի վերայ, որ հաստատուած է կամարի տակ.

«Ես Սիրաւք կանգնեցի զխաչս հաւր իմոյ Խութլափի թվ. ՉՁԲ. (1333)»: Դրան հարաւային կամարի վերայ. «Շինեցաւ ՌՃՁԴ. այն տարին էր Թահմազ խան»:

Զանգակատան յիշատակարանն. «Յիշատակ է զանկատունս Սուրապի որդոյ Ավանէս եպիսկոպոսին»[1]: Արեւմտեան լուսամտի տակ, արտաքուստ.

«Տէր Աստուած Յիսուս Քրիստոս... Վրդանէս Թ. ՌՃԽԳ»:

ԲԵՄ

Տաճարիս արեւմտեան կողմում, դրան մօտ հանդստարանում կայ մի բեմ, որ շինուած է սրբատաշ քարով: Բեմիս արեւմտահայեաց ներսին մէջ զետեղուած է մի դեղնցկաքանդակ խաչարձան, որի գլխին փորագրուած է. «Ես աջամի որդի իշխանայ կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ որդոյ իմոյ Ասուդարայ, որք կարդէք, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր, աղաչեմ. ի թվիս ՉՂԷ.»:

Բեմիս առաջ՝ մի մէջքն կլոր քարի վերայ. «Այս է հանգիստ բարեայպաշտին Ասուդարայ, որ կէսաւրեայ ժամանակաւ ի Քրիստոս փոխեցաւ, ով կարդայ...»:

Սորա մօտ. «Այս է հանգիստ բարեպաշտ Վալիճանայ, որ կէսաւրէ ժամանակաւ ի Քրիստոս փոխեցաւ, ով ...»: Վալիճան-բէկիս հայրն գրել տուած է տապանի միւս երեսին. «Ես Ախիջան որդի Ջալալայ կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ որդոյ իմոյ Վէլիճանին, որք երկրպագէք, յաղաւթս յիշեցէք թուին ՋԻԷ.»:

Տապանիս մօտ. «Այս է հանգիստ Խոնտբեկուն դուստր Ախիճանին, կողակից Կոստանտելին եւ քոր Վէլիճանին. յիշեցէք ի Քրիստոս յԱստուծոյ թվ. ՋԿԱ.»:

Ուխտաւորաց համար վանուցս հիւսիսային կողմին մօտ կայ մի մեծ սենեակ, որի դրան ճակատակալ քարին վերայ փորագրուած է. «Ես Մակրտիչս... յիշատակ է թանապէս (մեծ սենեակ) Սուրապի որդի Ավանէս եպիսկոպոսի. շինեցաւ ՌՃՁԴ. թուին. այն տարին էր Թահմազ խան, Օսմանլուն երկրէս դուրս արաւ»:

1 Վանուցս հարաւային կողմում ամփոփուած են Յովհաննէս, Մկրտիչ եւ Պետրոս եպիսկոպոսների մարմինները: Աւանդաբար պատմում են. «Յովհաննէս եպիսկոպոսը եկած է Միյին քաղաքից (Փէյղամբարից) իւր ժողովրդով միասին. ինքն նստած է վանքումս. իւր հետ բերած ժողովուրդը՝ բնակեցնում է Որդնաշատ, Թղասեռ եւ Հատրութ գիւղերում:

Վիմափոր խուցեր. Մեծ սենեկիս հիւսիսային կողմին մօտ կայ երկու վիմափոր խուցեր, որոց մուտքն մի է: Կարծես խուցերիցս մին եղած է ճգնարան եւ միւսն՝ ննջարան:

Վանքումս եղած է մի սպիտակ խաչ, որ ունեցած է չափազանց ուխտաւոր, սակայն գողացած են սոյն թանկագին հնութիւնը. որի հետ եւ մի քանի կոնդակներ, որք գրուած են եղել Աղուանից Եսայի, Ներսէս եւ Յովհաննէս կաթուղիկոսներից:

ԺԳ. ՀԱՏՐՈՒԹ ԱԻԱՆ. Հիմնուած է մի խոր ձորում, որի հարաւային, արեւմտեան եւ հիւսիսային կողմերը պատած են բարձր սարեր, միայն բաց է արեւելեան կողմն: Բնակչաց մի մասն՝ բնիկ, մի մասն՝ գաղթած Ղազանչուց (Գողթան գաւառից), մի մասն՝ տեղափոխուած Միլին քաղաքից, եւ փոքր մասն՝ Բարկիւշատից, Ղարադաղից, Ցորից եւ Թիփլիզից. հողն բէկական, չափազանց սակաւ[1], ամենափոքր մասն՝ ջրարբի եւ այգեւէտ, տեղական բերքերն՝ նոյն, միայն չկայ ոչխար, գովելի օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 110 տարի. եկեղեցին՝ Սուրբ Յարութիւն. քարուկիր, կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւնն 18 մետր 35 սանթիմ, լայնութիւնն՝ 9 մետր 4 սանթիմ: Հիւսիսային երկրորդ կամարի խոյակից ներքեւ. «թվ. ՌՃՀ.» որ է շինութեան թուականն. քահանայ երկու: Ծուխ 260, ար. 1060, իդ. 850:

Աւանումս կան շուկայ, վաճառանոց եւ արուեստաւորներն՝ դերձակ, հիւսն, սափրիչ, կօշկակար, որմահիւս, դարբին, ոսկերիչ, մսագործ եւն, եւն.:

Կայ նաեւ միդասեան ծխական երկսեռ ուսումնարան, ուր ուսանում են 130 աշակերտ եւ աշակերտուհի: Ուսումնարանիս մուտքն գոյանում է

Թոշակագրամներից	400	ռուբ.
Ննջեցելոց նուէրներից	200	,,
Կշռից (Ղափանից)	200	,,
Մարդասիր. Ընկեր. նուէր.	120	ռուբ.
Մասնաւոր նուէրներից	150	,,
Բարեկր. Մեսրոպ քահանայ Տէր-Ոսկանեանի նուիրած	1000	
ռուբլւոյ տոկոս	40	,,
Ժամհարեան եղբայրներից նուէր	25	,,
Ընդամէնն	1135	ռ.

Ելք. տարեկան ռոճիկ վարժապետի	450	ռուբ.
,, ,, վարժուհւոյ	440	,,
ընակարանի վարձ	180	,,
Ընդամէնն	1080	ռ.

Աւանումս կայ նաեւ մետաքս քաշելու գործարան, հեռագրատուն, արքունի զօրանոց, որի մէջ սովորաբար նստում է 1500 զինուորական հեծելազօր կազակ:

ԺԴ. ՈՐԴՆԱՇԱՏ. Գիւղս հիմնուած է Հադրութի արեւմտեան կողմում եղած սարի ստորոտում, բնակիչք՝ տեղափոխուած Միլին քաղաքից, հողն բէկական եւ նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն նոյն, գովելի օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք 110 տարի. եկեղեցին Սուրբ Հռիփսիմէ, քարուկիր, քահանայ մի: Ծուխ 50, ար. 195, իդ. 190:

ԺԵ. ԹՂԱՍԵՌ. Գիւղս խիստ մօտ է Որդնաշատին, բնակիչք տեղափոխուած են Միլին քաղաքից, հողն՝ արքունի, ամենայն ինչ նոյն՝ ըստ Որդնաշատի, եկեղեցին՝ Ամենափրկիչ[2], փայտաշէն, քահանայ մի: Ձեռագիր աւետարան եկեղեցումս, պահուած անխնամ, չունի յիշատակարան, քանզի գողացած են եւ անյայտացրած: Ծուխ 110, ար. 770, իդ. 390:

1 Մօտ 300 ծուխ Հատրութն ունի միայն վեց հարիւր օրավար հող:

2 Գիւղիս նախկին բնակչաց եկեղեցին, որ շինուած մի բլրակի վերայ եւ գտնւում է գիւղիս եւ Կարմագուճի մէջ, քարուկիր է եւ կոչւում է Հին-Թղասեռի եկեղեցի, որի մօտ է աւերակ գիւղատեղին եւ հանգստարանն:

Անապատ. Գիւղիս արեւմտեան կողմում կայ մի փոքր եկեղեցի՝ կառուցեալ մի բլրակի վերայ սոյն անուամբ, որ կանգուն է:

ԺԶ. ԿԱՐՄՐԱԳՈՒՃ. Գիւղս հիմնուած է Հադրութի հիւսիսային կողմի սարի ստորոտում մի խոր ձորի մէջ. բնակիչք՝ կիսով չափ բնիկ եւ կիսով չափ՝ տեղափոխուած Ղափանից. հողն՝ արքունի, սակաւ եւ նուազ արդիւնաւէտ, օդն, կլիման եւ ջուրն անվնաս, երկար կեանք՝ 80 տ. եկեղեցին՝ Ամենափրկիչ, քարուկիր, երկարութիւնն՝ 12 մետր 80 սանթիմ, լայնութիւնն՝ 7 մետր 38 սանթիմ, քահանայ մի: Տուխ 50, ար. 240, իգ. 228:

ԺԷ. ՔՈՉԲԷԿ. Շէնս հիմնուած է նոյն սարի արեւելեան կողմում, հարաւահայեաց լանջի վերայ, բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, մասամբ ջրարբի եւ հացատու, տեղական բերքերն՝ նոյն, օդն, կլիման եւ ջուրն՝ սննդարար, երկար կեանք՝ 80-90 տարի, եկեղեցին՝ Սուրբ Յարութիւն, քարուկիր. քահանան գալիս է Հադրութից: Տուխ 25, ար. 75, իգ. 60:

ԺԸ. ՄԵԼԻՔՋԱՆԼՈՒ. Հիմնուած է նոյն սարի հարաւահայեաց մի բլրի վերայ, բնակիչք՝ գաղթած Ղարադաղից, հողն՝ արքունի, տեղական բերքերն՝ նոյն (չիք այգի, թթենի, բոժոժ եւ ոչխար), պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 85-90 տ. եկեղեցին՝ նորաշէն, քարուկիր, քահանան գալիս է Հադրութից: Տուխ 32, ար. 155, իգ. 132:

ԺԹ. ՊԼԵԹԱՆՑ (Պլբեթան). Հիմնուած է նոյն սարին մի ձորի արեւմտահայեաց լանջին վերայ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, ունի նաեւ այգի, բոժոժ եւ պարտէզ. անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն. եկեղեցին՝ Սուրբ Ստեփաննոս, քարուկիր, քահանան գալիս է Հադրութից: Տուխ 20, ար. 90, իգ. 70:

Ի. ԽԱՐՄԱՆՋՈՒՂ. Հիմնուած է նոյն սարի արեւելահայեաց լանջի վերայ. բնակիչք գաղթած են Ղարադաղից. հողն՝ արքունի, ամենայն ինչ՝ նոյն (միայն չունի այգի, թթենի եւ բոժոժ). եկեղեցին՝ Ծաղկավանք, քարուկիր, նորաշէն, քահանայ մի: Տուխ 40, ար. 160, իգ. 150:

ԻԱ. ԱՂ-ԲՈՒԼԱՂ. Հիմնուած է միեւնոյն սարի արեւելեան կողմում, բնակիչք գաղթած են Ղարադաղից. հողն՝ արքունի, անջրդի, սակաւ, բայց հացատու, ամենայն ինչ՝ նոյն, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ձեղունն՝ փայտաշէն, քահանան գալիս է Խարմանջուղից: Տուխ 32, ար. 122, իգ. 110:

ԻԲ. ԸԽԵՑԻՔ. Հիմնուած է միեւնոյն սարի արեւելեան ստորոտում. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, անջրդի, սակայն հացատու, ամենայն ինչ միեւնոյն են՝ օդն, կլիման, ջուրն, երկար կեանքն, եկեղեցին եւ քահանան: Տուխ 20, ար. 65, իգ. 50:

ԻԳ. ԻՏԵԼԵՑԻՔ. Հիմնուած է նոյն սարի արեւելեան ստորոտում. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, մասամբ ջրարբի, տեղական բերքերն՝ նոյն (ունին այգի, թթենի, մեսաքսաթել), սննդարար՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 80. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, փոքր, քահանան գալիս է Հադրութից: Տուխ 60, ար. 265, իգ. 235:

ԿԱՒԱՔ

Ուխտատեղիս գտնուում է այն սարի վերայ, որ ընկած է Ղուրու-չայի աջ կողմում գրեթէ, արեւելքից արեւմուտք՝ առանձնացած ամէն կողմերից: Այս մի հին միջակ վանք է՝ շինուած չորս սիւների վերայ կոփածոյ քարով եւ կրացեխով. բայց արեւելքից արեւմուտք ճաքած է վանքիս դագաթն: Հնուց ունեցած է եւ ամուր շրջապարիսպ, միաբանից խուցեր եւ ուխտաւորաց սենեակներ. սակայն աւերակ են այժմ: Սուրբ Յակովբայ մարմինն ամփոփուած է հարաւային փոքր խորանի մէջ: Մեծ ուխտատեղի է, սպիտակ տապանաքարն սեւացած է շատ մոմեր փակցնելուց: «Յակովկայ եւ Իրաւափառայ» է վանքս ըստ պատմչին Աղուանից:

ԻԴ. ՀԻԻՔԻԻՐԱԹԱՂ. Հիմնուած է միեւնոյն սարի հիւսիսային կողմում, բնակչաց մեծ մասն՝ գաղթած Ղարադաղից, հողն՝ բէկական, անջրդի, բայց այգեւէտ. տեղական բերքերն՝ նոյն. օդն եւ կլիման՝ փոքր-ինչ ծանր ամռան, երկար կեանք՝ 75 տ. եկեղեցին սուրբ Աստուածածին, քարուկիր, քահանան գալիս է Հադրութից: Տուխ 26, ար. 112, իգ. 114:

ԻԵ. ՈՂԵՐ. Հիմնուած միեւնոյն սարի հիւսիսային կողմում, բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, ջրարբի եւ բազմարդիւն, տեղական բերքերն՝ նոյն (միայն չունի այգի եւ բոժոժ), եկեղեցին՝ կիսատ, քահանան՝ նոյն: Տուխ 15, ար. 75, իգ. 55:

ԻԶ. ՋՐԱԿՈՅՍ. Հիմնուած միեւնոյն սարի հիւսիսահայեաց կողմում մի ձորի ձախ լանջի վերայ, բնակիչներից եօթն ծուխ բնիկ եւ մնացեալներն գաղթած Ղարադաղից. հողն՝ բէկական, անջրդի եւ նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն՝ օդն եւ կլիման, պատուական՝ ջուրն, երկար կեանք՝ 90 տ. եկեղեցին՝ Սուրբ Ստեփաննոս, կառուցեալ չորս սիւների վերայ. երկարութիւնն՝ 17 մ. 55 սանթ., լայնութիւնն՝ 11 մետր 24 սանթիմ. «Յիշատակ է Սուրբ Իստեփանոյս (Ստեփաննոս) եկեղեցիս Ճարակոյսա ռամիկ ժողովրդեան թվ. ՌՃՄԷ.»: Քահանան գալիս է Ծակուռուց: Տուխ 37, ար. 156, իգ. 153:

ԻԷ. ՄԱՄԱՏԱՁՈՐ. Հիմնուած նոյն սարի հիւսիսային կողմում երկու ձորերի մէջ կախուած մի սեռի վերայ. բնակչաց կէս մասն՝ բնիկ. իսկ մնացեալ կէսն՝ գաղթած Ղարադաղից եւ եկած Դողից. հողն՝ արքունի եւ անջրդի, տեղական բերքերն նոյն. օդն, կլիման եւ ջուրն՝ գովելի. երկար կեանք՝ 110 տ. եկեղեցին՝ Սուրբ Մինաս, հնաշէն, կառուցեալ երկու կամարների վերայ. երկարութիւնն՝ 14 մետր 70 սանթիմ, լայնութիւնն՝ 7 մետր 95 սանթիմ. քահանան գալիս է Ծակուռուց: Եկեղեցուս հիւսիսային կամարի վերայ. «Ես Ազարիա աբեղայ Դաւիթ Էրեց, որ շինող եկեղեցոյ շինեցի տէր»: Նոյն կամարի միւս կողմում. «Խաչս Բաղդասարին է, իւր կողակցին ... (եղծուած)»: Դրան գլխին. «թվ. ՌԾ.»: Տուխ 33, ար. 110, իգ. 117:

ԻԸ. ԾԱԿՈՒՌԻ[1] գիւղ. Հիմնուած է նոյն սարի հիւսիսային կողմում, Վանէսայ սարի ստորոտում, մի ձորի երկու լանջերի վերայ. բնակչաց մի մասն՝ բնիկ եւ միւս մասն՝ գաղթած Ղարադաղից. հողն՝ բէկական, սակաւ եւ անջրդի, վասն որոյ սակաւ՝ այգիներն. տեղական բերքերն՝ նոյն. նշանաւոր են տանձն եւ խնձորն. պատուական օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 100 տ. եկեղեցին՝ Ծաղկավանք, հոյակապ, կառուցեալ երկու սիւների վերայ, քահանայ մի: Դասից վերեւ ունեցած է կաթուղիկէ. բայց խոնարհած է: Երեւի թէ վանք եղած է այս, յետոյ փոխած են եկեղեցու, որի երկարութիւնն է 15 մետր 25 սանթիմ, լայնութիւնն՝ 12 մետր: Մի խաչարձան քարի վերայ, որ կարծեմ հանգստարանից բերած են, փորագրուած է. «Թիւ ՈՒԷ.»:

Արձանագրութիւն դրան գլխին ճակատակալ քարի վերայ. «Ես Յակովբ վարդապետ՝ աշակերտ մեծին Եսաեա վարդապետին Կրճեւանցոյ՝ի գիւղաքաղաք գեղջէն Թաղլարցի. յազգէն Թանկոց առաջնորդ կարգեալ ի հայրապետէն Աղուանից տեառն Երեմիայ մի քանի գիւղօրէից Ղուզաց[2], ոչ թողին բնակիլ ի հայրենի աթոռն մեր: Այլ որն ելա եւ շրջեցա, եւ ոչ գտի առաւել քան զայս եւ հաճեցայ բնակիլ աստ եւ հրդել (հարթեալ) զՅնդուսար ի տեղի բնակութեան եւ սկիզբն արարեալ շինեցի եկեղեցիս ի կաթուղիկէն յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնողաց իմոց հօրն իմոյ Դալվաթի սորան եւ մօրն Մարիամին եւ դահեակ սնուցիչ երկու քոռն իմոյ Սառին, Յաշաքին՝ ողորմութեան աղաչեմ կենաց. շինեցաւ սուրբ եկեղեցիս ծեռամբ Յակովբ վարդապետին ի թուին ՌՃԼԱ.»:

Տուխ 40, ար. 140, իգ. 128:

ԻԹ. ՀԿԱԿՈՒ ՇԷՆ (Հակակ). Հիմնուած է նոյն սարի հիւսիսային կողմի մի ձորում, բնակիչք բնիկ, հողն արքունի. տեղական բերքերն՝ նոյն, օդն, կլիման եւ ջուրն սննդարար, երկար կեանք 80-85. եկեղեցին Սուրբ Աստուածածին, քարուկիր, փոքր, քահանայ մի: Տուխ 25, ար. 79, իգ. 72:

Լ. ԹԱՂՈՏ գիւղ. Հիմնուած է Դող աւանի հարաւային կողմում, Մոխրենիսի ձորից հոսող առուի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք տեղափոխուած են Մեծ-Սիւնեաց Դարաբաս գիւղից, հողն՝ արքունի, տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն՝ օդն եւ կլիման, պատուական ջուրն, երկար կեանք 85, եկեղեցին Սուրբ Յովհաննէս, քարուկիր. քահանայ երեք: Տուխ 70, ար. 256, իգ. 219:

---

1 Մի քանի հայ գերդաստան կայ Պտկաթաղում:

2 Ղուզի նշանակում է՝ արեգդէմ չէ. իսկ այստեղ նշանակում է սարիս հիւսիսահայեաց լանջերի վերայ եղած գիւղօրէից:

ԼԱ. ԴՈՂ ԱԻԱՆ. Հիմնուած է համանուն բերդաստարի արեւելահայեաց լանջին վերայ՝ ստորոտին մօտ. տեսարանն՝ գեղեցիկ. բնակիչք՝ ընիկ. բայց մասամբ եկած Ղազանչուց. հողն՝ մելիքական, պտղատու եւ արդիւնաւոր. տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն. կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 100, եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս. հոյակապ. կառուցեալ չորս սիւնելի վերայ. երկարութիւնն՝ 21 մետր 70 սանթիմ, լայնութիւնն՝ 12 մետր 92 սանթիմ:

Եկեղեցիս ունի եւ կաթուղիկէ եւ երկու քահանայ: Դրան ճակատակալ քարին վերայ փորագրուած է. «Թվին ՌՃՁԵ. այս սուրբ Ոհանէս եկեղեցուս գլուխն Նորոգեց Ղուկազ վարդապետի որդի Մելիք-Եկանն. յիշատակ է հոգոյն իւրոյ, ով որ կարդայ մէկ բերան Աստուած ողորմի ասէ»:

Եկեղեցիս ունի քարեայ խաչկալ, որի հիւսիսային դրան վերայ փորագրուած է. «Որ ողորմի Քրիստոս Աստուած. յիշատակ է խաչկալս պարոն Մելիք Եկանիս եւ ծնողաց իմոց Մօսէս, Ղուկաս վարդապետին, մօրն իւր Շհօին եւ ծնողին իմ Մարիամին եւ եղբարն իմ Արամին եւ քոյրն իմ Խանում, կողակիցն Խանում աղին, որդի Արամին, Ըսայուն (Եսայուն) Պաղտամին, Օսէփին, Պաղրին, Առաքելին, Սափարին, Պաղումին, Վերտին, կողակիցն Գոգալին, դուստր Թավարին, Խանպաճին, Խաթուն Խաթայուն, եւ այլն եղելոց ողորմի ասէք, ամէն. թվին ՌՃԷ.»:

Ծուխ 280, ար. 765, լդ. 695:

ԵԿԵՂԵՑՈՒՄՍ ԿԱՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՄԱՍՈՒՆՔՆԵՐՆ

1) Կենաց փայտ արծաթեայ խաչի մէջ:

2) Մի արծաթեայ խաչում, որի վերայ քանդակուած է. «Այս է մասունք եւ նշխարք սրբոյ Առաքելոյն Խումայի եւ Յակովբայ զմահատ (՞) նահատակին. ես Շռութեցի Մարգարիտ ապաշխարողս ետու զայս նշխարքս քեզ ծերունի Սարգիս վարդապետիդ յիշատակ հոգոյ իմոյ ի վայելումն յաւիտենական քո, թվ. Ճ.»:

3) Այլ արծաթեայ խաչում. «Յիշատակ է Մելիք Եսայի (՞) որդի Սափարի բէկին, որ ետ Դողա կուսանաց Անապատին. սա է Յակովբ հայրապետին եւ Թէոդորոսի մասունք...»:

4) Մասն սրբոյն Յակովբայ՝ նոյն տեսակ խաչում. «Ես Գրիգոր շինել տվի սուրբ խաչս յիշատակ ինձ առաջ անմահական է 'ի Քրիստոս Աստուած հաւատաց է Սուրբ Ակովիկ, որ է Դիզակ 1: Հաթերքեցի ոսկերիչ Մուրատս շինեցի. թվ. ՌՂ. էր»:

5) Մասն Բաբեղի Կեսարացւոյն, մի արծաթեայ ոսկեզօծ աջում. «Այս է աջն սրբոյն Բարսեղի հայրապետին Կեսարու, որ ես Սարգիս վարդապետս վերստին նորոգել տրվի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց Օհանին եւ եղիսապետին ի դուռն Սուրբ Աստուածածին թվ. ՌՃԵ.-ին. այժմոյս (Փրկչական) ՌՃԾԲ. ի գիւղն Կողպ»:

ԴՈՂ ԱԻԱՆԻՍ ՄԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՄԲԱՐԱՆՆ

Եկեղեցուս հարաւային կողմին պատկից շինուած է մի նեղ եւ երկար մատուռ իբրեւ դամբարան, որի մէջ ամփոփուած են բոլոր մելիքներն եւ մելիքազուններն:

«Այս է տապան Մելիք Եկանի հայր Ղուկաս վարդապետի, ով կարդայ ողորմի ասէ. թվ. ՌՃԿԴ.»:

«Այս է տապան քաջ իշխանին
Եկան անուն մեծ Մելիքին,
Որ է որդի բարեպաշտին
Ղուկաս անուն վարդապետին.
Եղեւ սիրեցեալ ամենայնին
Նատիր անուն թագաւորին:
Տիրապետեաց սայ ի երկրին
Ի Աղուանից ի նահանգին
Յոյժ պատուեցաւ Պարսից ազգէն

Քան զիշխանս Հայոց երկրին... ՌՃԴԳ.»:

«Այս է տապան քաջ իշխանին
Մելիք Եկանի որդի պարոն Մելիք Արամին,
Որ շատ սիրական էր Նատիր Շահին,
Որ յառաջ վախճանեցաւ հայր սորին,
Որ շափաղաթ ունէր Նատիր Շահին,
Որ է Բ. հաքիմ էլաւ Ե. մուհալին.
Շահն ոգեց (ուղեց) Արամ տարաւ,
ՋՌ. (6000) թուման ջարմայ առաւ,
Ուրախ սրտով յղի (ուղի) արաւ
Մէկ ամ կացաւ, վախճանեցաւ.
Ողորմի թվ. ՌՃԴԴ.
Որ փոխեցաւ առ Աստուած,
Որ ընթեռնուք, մէկ բերան Աստուած ողորմի ասացէք».

«Այս է տապան մեծին Մելիք Եկանի որդի Մելիք Եսայուն եւ էր սա իշխան կարգեալ Նատիր Շահէն. ԼԳ. ամ տիրեաց երկրիս Դիզակու եւ արար բազում քաջութիւն եւ յաղթութիւն ընդ անօրէնսն, եւ էր ինքն պարթեւ եւ յոյժ զօրաւոր քան զառաջինսն իւր եւ թել կենաց սորա եւ կամաւ Աստուծոյ վաղճանեցաւ թվ. ՌՄԼ. հոգտեմբերին Բ.-ին գշ. որ ընթեռնուք, մէկ Հայր մեղայ ասացէք. ամէն»:

«Այս տապան լուսահոգի Մելիք Արամի որդի Բաղր բէկին. թվ. ՌՄԼԸ. էր»:

Մելիք-Եկանի ապարանն գտնւում է աւանիս մէջ, որ բաղկացած է երկյարկ շինութիւնից, որ կառուցեալ է համակ սրբատաշ քարով: Հետեւեալն քանդակուած է գետնայարկի դրան գլխի ճակատակալ քարին եւ սեմերին վերայ.

«Թիւն ՌՃԺՋ. յիշատակ է Թանապաս. այս է, որ ես Ղուկազ վարդապետի որդի, որ իմ անուն Մելիք Եկան, առաջ խելխն (խալխն-ժողովուրդն) ջամ դեռին[1] , ինձ կարգեցին, յետ նորա որ օլքան[2] սալամաթ եղաւ: Դեռ Աւշառ Սուլթան Հիւսէնիյ (ինի) տղայ Ղահթմիշ երեքն որ 'ի յէն չափաղուլ[3] ողարկէ. որ պիրաւ ինձ. տու չե՞ս[4] Մելիքութիւն տվաւ: Այլ Օսմանլուն եկաւ առաւ 'ի ձեռն որ Աւյնից (Աղուանի՞ց) որ ան էլ սա չափաղուլ ուղարկէ որ պերէն: Ես թողեցի ոչ[5] Հայաստանամ[6] եսիր տալու... ի՞նչ տվաւ սօվ Լղար աղին[7] : Շահ Նայդիր զօրէղ թագաւոր եկաւ, զօրով առաւ օլքաս, ի ձեռէս Օսմանլուէնանայ (Օսմանցիներից), նոր աէս (այս) չափաղուլ կողարկէ, որ բերաւ ինձ այս եզմոհիլիս. ազկ քրիստից (ազգ քրիստոնէից) որ մէկն Թալիշ, մէկն Զմյպթ (Զաբաբերդ), մէկն Խաչէն, մէկն Կարանդայ, մէկն Քոչէզ՛ մէկն Տուզաղ. այսդունց[8] (սոցա) խանը պակլար պէկայ տեղ ար ինձ շափաղաթ արաւ: Ով որ յեդով կարդէ այս գիր, էս իմանայ որ մեր որպիսութիւն այսպէս իլաւ. մին ողորմեայ այսէ (ասէ), եղեւ. ամէն»:

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ

Աւանիս հարաւային կողմի հանգստարանում կայ մի քարուկիր եկեղեցի, որ շինուած է մեծ-մեծ քարերով: Դրան ճակատակալ քարի վերայ.

«Թվ. ՌՃՂԶ. յիշատակ է սուրբ Ըստեփանոս եկեղեցուս գլուխն, որ նորոգեց Մելիք Եկան եւ որդին Մելիք Եսային, յիշատակ է հոգոյ»:

---

1 Գումարուեցան:
2 Երկիրն խաղաղացաւ:
3 Որ Ղահթմիշն երեք գունդ զօրք ասպատակ սփռէ:
4 Պիրաւ-բերաւ. եւ ասաց-Դու չե՞ս Եկանն: Երբ իմացաւ որ ես եմ, մելիքութիւն տուաւ:
5 Թողեցի ոչ- չ'թողի:
6 Հայաստանէս: Աղուանից երկրի հայերիցն:
7 Սովն վտիտ աղային հարուած տուա՛ւ:
8 Դիզակ գաւառս հաւաքուողների վերայ զիս իշխան կարգեց Շահն:

Դրան սեմերի վերայ. «Ովանէս եպիսկոպոս, Մանուէլ եպիսկոպոս»: Եկեղեցիս խիստ հին է, այն է առնուազն վեց հարիւր տարուան շէնք է:

ԱՆԱՊԱՏ

Հանգստարանիս վերեւի ծայրում կայ մի այլ քարուկիր եկեղեցի եւս, կառուցեալ մի կամարի վերայ, որի ճակատի խաչի վերայ փորագրուած է. «Խաչս Վարդան»: Եկեղեցուս մէջ է Մելիք-Բախտամի գերեզմանն, որ ծածկուած է հողով: Եկեղեցուս մօտ նշմարւում են խուցերի եւ կացարանների բակեր եւ բեկորներ, որոց մասին պատմում են, թէ կուսանոց եղած է անապատ:

Դող աւանս ունեցած է ամուր շրջապարիսպ, բայց այժմ այնպէս քանդած եւ քարերը տարած են, որ հազիւ է նշմարւում շրջապարսպի հետքերն ուրեք-ուրեք: Սակայն տակաւին ապրում են մարդիկ, որք յաճախ կանգուն տեսած են պարիսպը:

Գրչագիր Աստուածաշունչ. Աւանումս կայ մի ընտիր ձեռագիր Աստուածաշունչ, որի մէջ նախագրութիւններ կայ բոլոր գրոց համար առանձին-առանձին հատուածներով: Միայն ափսո՜ս, որ անխնամ պահուած է, վասն որոյ շատ տեղերում իրարու փակած են թերթերն եւ բորբոսնած: Ընկած եւ անյայտացած են մի քանի թերթեր, որոց հետ եւ յիշատակարանն: Երկար թերթելուց վերջն հազիւ կարողացայ գտնել միայն. «Ջստացող սուրբ գրոցս զՍիմէօն բաբունի զաշակերտ մեծին Գրիգորի եւ զանիմաստ ծրող սորին զՅովհաննէս եպիսկոպոս Անւոյ, աղաչեմ զձեզ դասք լուսերամից, յիշման առնել զմեզ արժանի, զի եւ դուք յիշեալ լիջիք 'ի բարիս բարերարին Աստուծոյ աւրհնելոյն յամենայն յաւիտեանս. ամէն»: Աստուածաշունչս, որ գտնւում է սկ. Տէր-Սարգսեանցի մօտ, չունի թուական:

ԼԲ. ՄՈԽՐԵՆԻՍ գիւղ. Հիմնուած է Թաղոտ գիւղի արեւելեան կողմում, ջրաձորի ձախ կողմի լանջի վերայ, դիրքն՝ արեւելահայեաց. բնակիչք՝ բնիկ, հողն՝ մելիքական, տեղական բերքերն՝ նոյն, օդն, կլիման եւ ջուրն՝ գերազանց, երկար կեանք՝ 100. եկեղեցին Սուրբ Սարգիս, քարուկիր, քահանայ՝ մի: Ծուխ 40, ար. 180, իդ. 170:

Օխտը դռնէ (եօթն դուռ ունեցող).

Ուխտատեղիս գտնւում է գիւղիցս վերեւ մի լեռնաբլրակի վերայ: Շինուած է եղել տորոնագոյն տաշած քարով, որ այժմ կիսաւեր դրութեան մէջ է:

ԼԳ. ՏՈՒՄԻ. Հիմնուած է գիւղս Մոխրենիսի արեւմտեան կողմում Շնաքարի գետ կոչուած վտակի ձախ ափի բարձրութեան վերայ, դիրքն՝ հարաւ-արեւելահայեաց. բնակիչք՝ բնիկ. հողն՝ բէկական, լեռնային, անջրդի, բայց հացատու. տեղական բերքերն՝ նոյն (կայ նաեւ խող)[1], օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, երկար կեանք՝ 85-95. եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, քարուկիր, կամարակապ, առանց սիւնի, քահանայ՝ երկու: Ծուխ 120, ար. 563, իդ. 470:

ԿԱՐՄԻՐ ԵԿԵՂԵՑԻ

Գիւղիս հարաւային կողմում, ձորակի աջ կողմի սեռի վերայ, շինուած է հասարակ քարով: Ամբողջապէս փլած է եկեղեցուս հարաւային պատն եւ թաղն՝ կամարներով միասին: Ունեցած է երկու դուռն հարաւային եւ արեւմտեան կողմերից: Երկարութիւնն՝ 11 մետր, լայնութիւնն՝ 6 մետր 45 սանթիմ: Արտաքուստ արեւմտեան լուսամտի գլխին փորագրուած է.

«'Ի ՆԽԹ. թվ. եւ ի թագաւորութեանս տեառն Գագիկայ (Աղուանից) Որդոյ Մուսէի ես Ոսկի դուստր Մուսէի շինեցի տուն Աստուծոյ 'ի փրկութիւն հոգո իմո եւ ծնողաց իմոց»: Եկեղեցիս հանգստարանի մէջ է. վաղմի հանդստարանիս մէջ կան խիստ հին ամփոփեալներ. որոց տապանաքարերն անարձանագիր են ամենամեծ մասամբ:

1 Գիւղս իւր անդերով եւ անտառներով պատկանում է մեծ. Մովսէս-բէկ Աթաբէկեանցին:

ԹԱԳԱՒՈՐԻ ՊԱԼԱՏ

Հանգստարանիցս փոքր-ինչ վերեւ՝ մի առանձնացած սարահարթի վերայ, կայ քարուկիր շինութեանց բեկորներ: Հետքերից յայտնի երեւում է, որ շրջապարսպով ամրափակուած է եղել սարահարթս: Խնցեղէն խողովակների շարքերից նշմարուած է, որ ջուր բերուած է ժամանակաւ սարահարթս: Ժողովուրդն աւանդաբար Թագաւորի պալատ անունը յատկացրած է աւերակ հնութիւն կրող սարահարթիս:

ԹԱԳԱՒՈՐԻ ԳԵՐԵԶՄԱՆ[1]

Պալատատեղուցս դէպի հարաւ՝ փոքր-ինչ հեռի՝ մի կոնաձեւ բարձրացած բլրի մօտ կայ մի հին եւ առանձին այլ հանգստարան, որի մէջ երեւում է մի մատրան աւերակ: Աւերակիս հարաւային կողմին մօտ կայ մի տապանաքար, որ ունի 2 մետր 3 սանթիմ երկարութիւն եւ 73 սանթիմ լայնութիւն եւ 5 գծով նախշեր, սակայն չունի արձանագրութիւն: Ահա այս է որդւոց որդի աւանդաբար մատնանիշ արած Թագաւորի գերեզմանն:

ԹԱԳԱՒՈՐԻ ԱՂԲԻՒՐ

Պալատատեղու հիւսիսային ձորակում, որ կայ գիւղի եւ Կարմիր եկեղեցու միջեւ, կայ մի պատուական աղբիւր, որի վերայ վաղուց շինուած է եղել սրբատաշ քարով կառուցեալ գեղեցիկ շէնք: Ահաւասիկ այս է Թագաւորի աղբիւրն: Ցաւալի է, այո՛, խիստ ցաւալի, որ գիւղացիքս յիմարաբար քանդած եւ տարած են թէ՛ Կարմիր եկեղեցու, թէ՛ Պալատի եւ պարսպի եւ մատրանն եւ թէ՛ աղբիւրիս քարերը:

ԳԱՒԱՌԻՍ ՎԱՆՔԵՐՆ

ԳՏՉԱՅ ՎԱՆՔ

Արդէն ծանօթացանք Հագրութի մօտի վանքին. այժմ ծանօթանանք Գտչայ վանուց, որ հիմնարկուած է մի գեղեցկատես եւ հիւսիսահայեաց սարահարթակի վերայ, Թաղլար աւանի հանդէպ, Ղուրու-չայ գետակի աջ կողմի բարձրութեան վերայ: Շինուած է համակ սրբատաշ տորոնագոյն քարով (որի հանքն շատ հեռի չէ վանքիցս), խաչաձեւ, քառակուսի, չորս կամարներով, որոց վերայ բարձրացած է գեղեցկաձեւ կաթուղիկէն, որի վերայ բուսած է մի ճապկի եւ մի խնձորի ծառ: Վանքս ունի մի աւագ, չորս փոքր խորան, տասներեք լուսամուտ, մի դուռն, 10 մետր երկարութիւն եւ 7 մետր 50 սանթիմ լայնութիւն: 1868-ի մեծ շարժով արտաքուստ թափուած է տաճարիս արեւելեան հարաւային անկիւնի քարերն:

Վանքիս հիւսիսային որմի վերայ փորագրուած է.

«Յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, ես Սարգիս եւ Վրդանէս եպիսկոպոսք հիմնարկեցաք զեկեղեցիս ի ՈՂ. (1241) թվիս. շատ աշխատութեամբ աւագ խորանն խփեցաւ եւ եղբայրս իմ Տէր Սարգիս ի Քրիստոս փոխեցաւ: Ես տէր Վրդանէս կատարեցի բազում աշխատութեամբ եւ հալալ արդեամբք իմովք ՈՂԷ. թվիս ի դառն եւ ի նեղ ժամանակիս՝ որ ազգն նետողաց զբազում գաւառս աւերեաց եւ մնաց այլասեռից աթոռ եւ վիճակ սրբոյն Գրիգորիսի, որ է հաստատեալ աջով եւ սուրբ նշանաւն եւ գաւազանաւն սրբով. վիճակեցաւ եւ սահմանով ի յԱղուանոյ գետոյ

1 Ըստ մեր կարծեաց՝ այս է գերեզման Աղուանից Ներսէհ իշխանի որդի Գագիկ իշխանին, որ էր հայր Աբու-Մուսէի, որի մասին տե՛ս ծանօթ. 12:

մինչ ի Երասխն, մինչ ի Աւազն Գատուհատի Վակունիս Վաղազնագետով, ի Քարատնիս եւ Խոզանագետովն, Ջառիստ իւր գետովն. Հաքարի Հազարագետովն, Քրտագետ իւր գետովն, իւր սահմանովն, Դիզակ, Բէլուկան իւր գետովն եւ հայրենիքն եկեղեցւոյս տուինք, Փարախն եւ Գոտանոցն, Եկեղեցաձորն իւր սահմանովն. Ա. լուծ հող ի Տայիս. Ա. լուծ ի Դող ի Գագս (Հկակու), Ա. ի Մոխրենիս. ով որ այս սահմանէս յետ առնէ կաթուղիկոս կամ իշխան կամ հայրապետ, երեք սուրբ ժողովոյն նզոված եղիցի, յԱստուծոյ եւ յամենայն սրբոց անիծեալ, մասն եւ բաժին ընդ Յուդայի առցէ»:

Ներքուստ հարաւային փոքր խորանի ճակատին.

«Ի թվին ՈՂԷ. ես Տէր Վրդանէս շինեցի զեկեղեցիս եւ զցրուեալ վիճակս, հաստատեցի եւ զհայրենիքս եւ արձանի գրեցի հանապազ ուրբաթն անյիշատակաց ժամն, եւ տարւոջն Ժ. ժամ ինձ եւ Ժ. ժամ Տէր Սարգսի: Յինանցն Ա. ժամ Ուխտանէս եղբարն իմ, Ա. ժամ Մովսիսի իմ քվեր որդու, որ խափանէ մեր մեղացն տէր է առ Աստուած»:

Հիւսիսային փոքր խորանի ճակատին. «Ես Ջերգամ եւ որդի իմ Ղարաք միաբանեցաք սուրբ ուխտիս տէր Վրդանէս իւր կամաւ զժամատունն ինձ երետ եւ ես իմ հալալ արդիւնն ընծա բերի Սուրբ ատոռոյս (աթոռոյս)»:

Վանքս ունի եւ հնաշէն գաւիթ, որի գոյութիւնն խիստ հին է, քան վանքինն: Գաւթումս, որ կառուցեալ է մի կամարի վերայ, կայ երկու խաչարձան՝ կանգնեցրած տաճարի դրան աջ ու ձախ կողմերում:

Հարաւային կողմի գեղեցկաքանդակ խաչի վերայ.

«Թվին ՈՂԵ. Ես տէր Վրդանէս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ»:

Հիւսիսային կողմի խաչարձանի վերայ.

«Յիշատակ է Սուրբ տաճարիս կաթուղիկէն Դողեցի Սարգսի որդի Սայուն եւ իւր կողակից Հերիքնազին թվին ՌՃԿԶ.»:

Գաւթումս ամփոփուած են մի քանի եպիսկոպոսների եւ վարդապետների մարմիններ, որոց վերայ կան տապանաքարեր: Գաւթիս արեւելեան հիւսիսային կողմին կից է մի աւելի հին եկեղեցի, որի դրան առաջ մի տապանաքարի վերայ փորագրուած է.

«Այս է տապան տէր Սիմէօնի որդի Մեսրոբ վարդապետին թվին ՌՃՀԲ.: Լուսահոգի Մելիք Եկանն ձեռնադրել տվաւ եպիսկոպոս, կարգեց Կտիչոյ վանքին առաջնորդ: Որ եկի հաստատեցի սուրբ աթոռս թվին ՌՃՂԶ. ով որ կարդայ, մէկ բերան ողորմի ասէ»:

Վանքս ունի մի քանի հնոտի սենեակներ եւ մի աշխարհական պահապան: Հետզհետէ քայքայւում է պատուական վանքս. գրեթէ ամբողջապէս յափշտակուած են վանքիս հողերն...:

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

ՋԱԼԱԼԵԱՆ ՎԵԼԻՋԱՆ-ԻՇԽԱՆԻ ԲԵՐԴՆ կամ ՑՕՐԱԲԵՐԴ (10)

Մի բարձրագոյն սար է բերդատեղին (5019 ոտք), որ առանձնացած է ամէն կողմերից, երկարած արեւմուտքից դէպի արեւելք եւ արձանացած Վանք, Տագ, Ցոր եւ այլ գիւղօրէից մէջ: Բարձր քերծեր են բերդիս հարաւային կողմերն, իսկ ամուր պատերով պարսպուած՝ մնացեալ կողմերն: Մակերեւոյթի մեծ մասն հարթ է, տեսարանն՝ զմայլելի, օդն՝ գերազանց: Երկու դռներ ունեցած է. մին արեւելեան եւ միւսն արեւմտեան կողմից: Բայց այժմ տեղ-տեղ քանդուած եւ թափուած են պարսպի պատերն եւ դռներից անդամ: Պարսպի հաստութեան չափն է մօտ 2 մետր, որ հիւսուած է անտաշ քարով եւ կրացեխով: Ջուր չկայ բերդումս, բայց ուրեք-ուրեք երեւում են անձրեւի քանդած տեղերում մեծ-մեծ եւ հաստ-հաստ խեցեղէն խողովակներ. այս երեւոյթն նշան է, որ ջուր բերուած է բերդս Շաղախ գիւղի եւ ուխտատեղու մօտից: Հետզհետէ գտնում են բերդիցս մեծ-մեծ կարասներ, անօթներ եւ ուրիշ գործիքներ եւ քարուկիր շինուած հորեր:

ՎԵՐԷՍԱՅ ԴԱԼԱ (ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ԲԵՐԴ) (11)

Հիմնուած է Հիւբիւրաթաղից վերեւ եղած մի բոլորշի բարձրացած սարի գագաթին վերայ[1] (500 ոտք): Անդնդախոր ձորեր են ամրոցիս արեւմտեան, հիւսիսային, արեւելեան եւ հարաւային կողմերն. միայն մի սեռով կցուած է հոմանուն Վանէսայ սարին: Ամրոցս ունի քարուկիր շրջապարիսպ, որ բոլորուած է գագաթի դիրքի ձեւով, երկու բարձր եւ ամուր բուրգ եւ մի դուռն: Բայց տեղ-տեղ քանդուած են պատերն եւ դուռնն, կանգուն մնում են միայն բուրգերն: Պարսպի ամենաբարձր մասն երկու աշտարակների կողմն է: Հարթ եւ հաւասար է ամրոցիս մակերեւոյթն, որ համարեա թէ հարիւր քառակուսի մետր է եւ ունի ուշագրաւ տեսարան եւ վեհ դիրք: Ամրոցիս յատակն լի է բնակարանների քարուկիր բակերով. իսկ վերնամասում շինուած է իբրեւ միջնաբերդ մի փոքրիկ դղեակ, որի մէջ է քարուկիր շինուած մի ընդարձակ ջրաւազան, որի մէջ տակաւին կայ ջուր, բայց անմաքուր: Աւանդաբար ասում են, որ սորա ջուրն խողովակներով բերուած է եղել բերդիս հարաւային կողմում եղած աղբիւրների ջրերից, որք կան ճանապարհի վերայ:

ԴՈՂ ԲԵՐԴ (4892 ոտք) (12)

Բերդասարս, որ բոլորովին առանձնացած է իւր շրջապատից, հսկայաբար արձանացած է Թաղլար, Դող, Մոխրենիս եւ Տումի գիւղօրէից մէջ: Վիմահերձ, ապառաժ եւ բարձր քերծեր են բերդիս հիւսիսային, արեւմտեան եւ հարաւային կողմերն, իսկ անտառապատ եւ քարակոյտ՝ արեւելեան կողմն: Գագաթի բաց տեղն պարսպուած է վերեւից վիմահերձից վիմահերձ, իսկ վարից փորուած է ահագին խրամ. վերջապէս ունի խիստ նշանաւոր, բայց անբացատրելի ամրութիւն: Գագաթի վերայ եղած է հարիւրքառասնի չափ բնակարան, որոց պատերն այժմ դեռ մնում են կիսաւեր:

Բնակարաններիս վերի կողմում արեւմտեան վիմահերձի գլխին է անտաշ քարով շինուած եկեղեցին, որ քարուկիր է եւ ամբողջապէս կանգուն, սակայն բաւականին հնաշէն: Եկեղեցիս ունի երկու դուռն՝ արեւմտեան եւ հարաւային կողմերից, երկու լուսամուտ՝ արեւմտեան եւ արեւելեան կողմերից եւ 9 մետր 3 սանթիմ երկարութիւն եւ 6 մետր լայնութիւն: Մի փոքր տեղ վնասուած է հիւսիսային կողմից: Տաճարումս կան սպիտակ շերտաքարից շինուած հինգ քարեայ փոքր խաչեր, որոց վերայ քանդակուած է. «Խաչս Նաղաղին». «Խաչս Մրհապետին». «Խաչս Շահումին». «Խաչս Ղազարայ». «Խաչս Եղուայ»:

Արտաքուստ հարաւային դրան արեւելեան սեմի վերայ քանդակուած է Սուրբ Աստուածածնայ պատկերն, որ գրկած է մանկացեալ Յիսուս Քրիստոսը եւ մի աղերսարկու վեղարաւոր վարդապետի պատկերն, իսկ արեւմտեան սեմի վերայ՝ երկու աղօթաւոր վարդապետի պատկերներն եւ մի խաչ: Ափսոս, որ թուական չունի եկեղեցիս. սակայն բաւական հին են թէ՛ տաճարիս շինութիւնն եւ թէ՛ խաչերի ձեւերն եւ տառերն:

Եկեղեցուս[2] արեւելեան կողմում մի քանի քայլ հեռի կայ մի վարդապետի գերեզման, որի տապանաքարի վերայ փորուած է երկգլխի օձաձեւ գաւազան եւ մի ձեռաց թաթ, որ բռնած է գաւազանը, եւ այս արձանագրութիւնն, «թվին ՉԶ. (1257) այս է տապան Մովսէս վարդապետին...»: Օրն տարաժամեայ լինելու պատճառաւ հազիւ կարողացանք կարդալ այսչափ, մնացեալը չ'ժամանեցինք ընթեռնուլ:

Կեօղեր. Եկեղեցուս հարաւային կողմում կայ չորս կալաչափ մեծութեամբ մի լճակ, որ միշտ լի է անձրեւաջրով եւ ձիւնաջրով: Թուի, թէ պատերազմների ժամանակ պաշարեալներն կառավարուած են ջրով:

---

1 Բերդասարս ճիւղաւորուած է Դիզափայտ լեռնաշղթայից եւ ձգուած հարաւային արեւմուտքից դէպի հիւսիս-արեւելք եւ վերջացած դաշտաբերանում: Բերդս կոչւում է եւ Աւան-Իւզբաշու բերդ:

2 Սպիտակ են եկեղեցուս քարերն եւ բոլորովին նման Ցակովկայ տաճարի քարին, երեւի թէ քարերս բերուած են Կւաքայ սարի հանքից:

ԴԻԶԱՓԱՅՏԻ ԲԵՐԴ (5994 ոտք)

Բերդասարս իբրեւ լեռնաբազուկ Դիզափայտի արեւմտեան կողմից կախուած է Տումի գիւղի վերայ եւ առանձնացած ամէն կողմերից: Պարսպուած է սարիս հարաւային եւ արեւելեան կողմերն եւ կասկածաւոր նեղուցներն ու կիրճերն, ուր եղած են: Մուտքն արեւմտեան կողմիցն է, եւ պարիսպն չունի բուրգեր: Պարսպիս ներսում կան բնակութեանց բակեր, թէ եւ հարթ չէ բերդիս անտառապատ մակերեւոյթն: Ջուր չկայ եւ այս ամրոցում, վասն որոյ շինուած են յատկապէս հարաւային կողմում հորեր եւ ամաններով ջուր բերած բերդիս արեւմտեան ստորոտում եղած Թաղալ անուն պատուական աղբիւրից: Հարկ է յայտնել, որ բերդս չունի Դողայ բերդի բոլորովին ապահով ամրութիւնը: Ամրոցիս շատ հեռի չէ Դիզափայտի հին վանքի տեղն, ուր շինած են այժմ մի մատուռ (13): Ամրոցիս հիւսիսային կողմում՝ քերծի գլխին՝ ծառերի տակ, կայ մի աւերակ մատուռ Օխտը-դռնէ-խութ անուն, որ տարբեր է եւ այլ նախորդ յիշուածից:

ԺԲ. ՎԱՐԱՆԴԱՅ ԳԱՒԱՌ

Գաւառիս սահմաններն են Ղուրու-չայ եւ Գարգար գետակներն, դաշտաբերանն, Քիրս եւ Դիզափայտ լեռնաշղթաների դագաթնագիծն: Ինչպէս Դիզակ, նոյնպէս եւ Վարանդայ գաւառիս ջուրն պակաս է. սակայն հարուստ է հացով եւ հայ բնակիչներով:

Ա. ԹԱՂԼԱՐ ԱԻԱՆ. Հիմնուած է այն սարի հարաւահայեաց լանջի վերայ, որ իբր լեռնաբազուկ սկսուած է Փոքր-Քիրս սարից եւ երկարած մինչեւ Դրախտիկ: Բնակիչք տեղափոխուած են այստեղ Հին-Թաղլարից, հողն՝ արքունի, լեռնային, ամենամեծ մասամբ աւազուտ, խիստ սակաւ եւ նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ ցորեն, գարի, կորեկ, գարնանի, հաճար, գարնագարի, սոբեկ, կտաւհատ, բողկ, գազար, սոխ, սխտոր, լուբիայ, բակլա, խաշխաշ, թութ, տանձ, խնձոր, դինձ (համեմ), կուտեմ, անանուխ, թարխուն, սուսամբար եւ այլն: Օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, տեսարանն՝ գեղեցիկ, երկար կեանք 100. եկեղեցին՝ Ամենափրկիչ, քարուկիր, թաղակապ երկու կամարների վերայ առանց միջնասիւների. երկարութիւնն 19 մետր 45 սանթիմ: Եկեղեցիս շինուած է աւանիս հասարակութեան ծախքով. երկու նոր լուսամուտներ բացուած են հարաւային կողմից: «Այս է լուսամուտներս յիշատակ է որդոց Շահնազար Պապալեանցին 1892»: Քահանայ չորս: Ծուխ 450, արակ. 1400, իգ. 1070:

Եկեղեցումս կայ մի ձեռագիր աւետարան միջակ գիրքով, գրուած մագաղաթի վերայ, պատկերազարդ, բայց անճաշակ եւ անարուեստ, Յիշատակարանից.

«Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի յերկիրս Որոտեան ի գիւղս, որ կոչի Լոր. ընդ հովանեաւ սուրբ Գէորգեայ զորավարի ի հայրապետութեան սուրբ Էջմիածնի եւ փոխանորդ սուրբ լուսաւորչին Հայոց տեառն Յակոբ սրբազան Կաթուղիկոսի, եւ մերոյ Ստեփէի սուրբ աթոռոյս Յովհաննէս քաջ բարեբնակեալի եւ նեստողայ Տաճկաց Շահ Սէլիմանի ի թուականութեանս Հայոց ՌՃԻԲ. ամի: Գրեցաւ Աստուածախօս սուրբ տառս սուտանուն Արիստակէս սարկաւագի... Արդ ստացող սուրբ աւետարանիս... բարեմիտ քահանայն տէր Վրդանէս, որ է սա երկրէն Կաքաւաբերդու ի գեղջէն Մահրաւու...»: Յետոյ գրուած է. «Յիշեսջիք վերստին ստացող... աւետարանս Թաղլարեցի Պաղունց Պողոսի որդի... պարոն Աբրահամն. տեսեալ այլազգայ ձեռն, հալալ արդեանց իւրոց եւ էառ եւ եւ ի դուռն Տեղու (մեծ-գիւղ Մեծ-Սիւնիքում) սուրբ Գէորգ եկեղեցուն իւր եւ ծնողաց ...»: Հուսկ յետոյ գրած է վերջին ստացող եւ եկեղեցուս նուիրող. «Յիշատակ է զսուրբ աւետարանս եւ եւեւ սրբոյն Ամենափրկչի եկեղեցւոյն՝ ծնողացն իմոց Պողոսին Բաղդասարեան Թաղլարեցի, եւ մօրն իմոյ Խաթունին, Աբրահամ Պողոսեան»:

Սուրբ Սահակեան տղայոց միդասեան ուսումնարան, ուր կայ 50 աշակերտ, թոշակաւոր 38, ձրիավարժ՝ 15, տարեկան ռոճիկ վարժապետաց՝ 315 բուբլի:

Մար-Խաթուն (Մայր-Խաթուն) 4199 ոտք բարձ:

Հին գիւղատեղի, հանդստարան եւ մատուռ, որք գտնւում են Շեխեր գիւղի հարաւային կողմի բարձրութեան վերայ: Մատրանս շինութեան թուականն է. «ԹՎ. ՌԾԲ.»:

Ծծախաչ (Ծմանէք)

Երկու ահագին քարայրներ են, որք կան Թաղլարից վար, Ղուրու-չայի ձախ եզերքին մօտ՝ Ծծախաչ անուն: Վարի քարայրից կաթկաթում է ջուր:

Իշխանի գիւղատեղի (Ըշխնեցէք)

Գտնւում է Թաղլարի հարաւային հանդէպ, նոյն Ղուրու-չայ գետակի աջ կողմի լանջի վերայ, ուր կայ նաեւ հանդստարան:

Իգակուց կամ Հայկազն գիւղատեղի

Այս անուն աւերակ գիւղ, հանդստարան եւ մատուռ կայ բուն Ղուրու չայ գետակի (միջի վտակի) ձախ կողմի լանջի վերայ, Տումի գիւղի արեւմտեան կողմում: Սակայն այժմ այս տեղն պատկանում է Տումու հողերին:

Հանգած-եղցէ (Եկեղեցի)

Թաղլարի արեւմտեան կողմում ոչ այնքան հեռի կայ գիւղատեղի, հանդստարան եւ աւերակ եկեղեցի:

Բ. ԱԶՈՒ գիւղ. Հիմնուած է նոյն սարի հարաւարեւելեան ստորոտում, մի ձորի հովտում. բնակիչք՝ ամենամեծ մասամբ գաղթած են Ղարադաղից, իսկ մնացեալք՝ բնիկ, հողն՝ բէկական, սակաւ, բայց միջակ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ նոյն, օդն եւ կլիման ամռան՝ տոթագին, ջուրն՝ պատուական, երկար կեանք՝ 75-80. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւնն՝ 14 մետր 70 սանթիմ. լայնութիւնն՝ 8 մետր 17 սանթիմ, քահանայ մի: Եկեղեցումս կայ մի ձեռագիր աւետարան միջակ գիրքով, առանց պատկերի, գրուած մանր գրերով թղթի վերայ, ոչ այնքան գեղեցիկ. չունի յիշատակարան, միայն յայտնի է, որ գրած է Սարգիս անուն ծերացեալ ոմն քահանայ: Ծուխ 140, արբ. 427, իգ. 380:

ՈՐՎԱՆ ՔԱՐԱՅՐ

Գիւղիս արեւելեան կողմում, ձորակի ձախ կողմի բարձրութեան վերայ կայ մի խիստ խոր, խաւարամած եւ միանգամայն ահարկու քարայր, որի մէջ կայ մի կնոջ արձան, որ գրկած է մի մանուկ: Արձանս կոփուած է քարից, կնոջ զգեստի տարազն եւ գլխի շինութեան ձեւն ներկայացնում են Արցախի կանանց հագուստների եւ փաթաթոցներով շինած գլուխների տիպը: Երկիւղալի է առանց զէնքի եւ լուսի միայնակ ներս մտնելն. հարկ է զգուշանալ:

Գ. ՆՈՐ-ԴՐԱԽՏԻԿ գիւղ[1]. Հիմնուած է նոյն սարի ծայրում. մի արեւելահայեաց լանջի վերայ, դիրքն՝ վնհապանծ, տեսարանն՝ զմայլելի. բնակիչք՝ բնիկ. տեղական բերքերն՝ նոյն, հողն՝ բէկական, անջրդի եւ կարի սակաւ արդիւնաւէտ. դերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 60-65 տարի[2]. եկեղեցին Սուրբ Գրիգոր Նարեկացի. քարուկիր. շինուած ՌՂԴ. թուին Հայոց մի

1 Հին-Դրախտիկն իւր քարուկիր եկեղեցիով մնում է Նորից վար՝ կալերի մէջ:

2 Զարմանալու է ընթերցողն օդի, կլիմայի եւ ջրի գերազանց լինելը համեմատելով բնակչաց կեանքի կարճութեան հետ, պատճառն այն է, որ սոցա հունձն եւ կալերն ընկած են Պիան գաւառի դաշտի վերայ. ամրան տոթակէզ միջոցին գործում են դաշտումս:

բարձրահայեաց բլրի վերայ, որի հարթակն լի է ծերունի ծառերով եւ հանդիստներով:

Քահանայ՝ մի: Ծուխ 47, ար. 136, իգ. 116:

Կախան. Հին-Դրախտիկից հիւսիս մի բարձր բլրի դագաթին վերայ կայ մի ուխտատեղի Կախան անուն: Երեւում է, որ աւերակ է այս մի հին, փոքր վանուց, որ զարդարուած է զառամեալ ծառոց փառաւոր հովանիներով, որոց՝ ոչ ոք չէ համարձակում կացին զարկել:

Դ. ՇԵԼՍԵՐ շէն. Հիմնուած է նոյն սարի հիւսիսային կողմում, դիրքն՝ հիւսիսահայեաց. բնակիչք տեղափոխուած են Թաղլարից եւ Աւետարանոց աւանից. հողն՝ բէկական եւ արդիւնաւոր, տեղական բերքերն՝ նոյն, սննդարար՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար՝ կեանք 80, եկեղեցին՝ Սուրբ Վարդան, քարուկիր եւ փոքր. քահանան գալիս է Նոր-Դրախտիկից:

Ծուխ 65 (բէկեր են 42 ծուխն, ար. 240, իգ. 114):

Ե. ՆԵՐՔԻՆ-ԹԱՂԱՎԱՐԴ. Հիմնուած է նոյն սարի հիւսիսային կողմում, Քեօնդալան գետակի աջ կողմի բարձրութեան վերայ, գիւղի դիրքն՝ արեւելահայեաց լանջ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ բէկական, անջրդի, բարեբեր. տեղական բերքերն՝ նոյն (կայ այդի եւ թթենի), օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, երկար կեանք՝ 100. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին. կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւնն՝ 17 մետր 70 սանթիմ, լայնութիւնն՝ 9 մետր:

Դրան ճակատակալ քարի վերայ.

«Շինեցաւ եկեղեցիս յանուն Սրբոյ Աստուածածնին արդեամբ եւ ծախիւք ազնիւ Բէրամ աղայի որդւոյ պօլկովնիկ Մելիք Ջիւմշիտեան Շահնազարեանց ի յիշատակ կենդանեաց եւ համայն ննջեցելոց իւրեանց ի Քրիստոս 1840 թվ. ՌՄԺԷ.»:

Քահանայ երեք: Ծուխ 170, ար. 590, իգ. 550:

Այստեղ կայ Սուրբ Մեսրոպեան տղայոց միդասեան ուսումնարան. աշակերտ 40, թոշակառու 33, ձրիավարժ 7. ուսուցչաց միամեայ ռոճիկ՝ 300 ռուբ.:

Հին-Ներքին-Թաղավարդ, որ նորից 1/7 մղոն ներքեւ է:

Վնասուած եկեղեցին, որ կառուցեալ է երեք կամարների վերայ:

Դրան գլխին մի քարի վերայ.

«Ես անարժան Գրիգորս շինեցի Թաղավարդու եկեղեցին առաջնորդութիւն Տաւութին որդին. Նոր Պապասին Ամիրպեկին. այնպէս սէրուն էր, որ գիշերն քուն չկէ»:

Բրդահոնջին (Բերդաունչին) եղցին

Քեօնդալանի աջ կողմում, Շեխեր տանող ճանապարհի գլխին բարձր սարահարթի վերայ կայ մի հին եկեղեցի, որի դուռն աւերուած է եւ շինութիւնն՝ տեղ-տեղ խախտուած: Հիւսիսային որմի մէջ խաչքարի վերայ. «Խաչս Շահումին»: Եկեղեցուս արեւմտեան կողմում, քարընկէց հեռաւորութեան վերայ կայ քարուկիր հին շինութիւն, որ նման է սենեակների: Մեզ թւում է, թէ վանք եղած է այս, քանզի եթէ եկեղեցի եղած լինէր, անշուշտ կուսենեաց գիւղատեղու աւերակ եւ հանդստարան. բայց չունի ո՛չ այս, ո՛չ այն:

Զ. ՎԵՐԻՆ-ԹԱՂԱՎԱՐԴ. Հիմնուած է միեւնոյն սարի հիւսիսային կողմում, նոյն ուղղութեամբ փոքր-ինչ հեռի դէպի արեւմուտք. գիւղի դիրքն արեւելահայեաց. բնակիչք տեղափոխուած են Մեծ-Սիւնեաց Խնձորեսկ, Տեղ եւ Տաթեւ գիւղերից. հողն բէկական, անջրդի, պակաս, սակայն հացատու, նշանաւոր է ցորենն եւ գարին, պատուական օդն, կլիման եւ ջուրն եւ դուրալի տեսարանն. երկար կեանք 105. եկեղեցին նորաշէն ժողովրդական ծախքով, քարուկիր եւ տակաւին առանց օծուելու, երկարութիւնն 18 մետր 35 սանթիմ, լայնութիւնն 9 մետր 65 սանթիմ, քահանայ մի:

Ծուխ 137, ար. 497, իգ. 398:

ՋՈԽՏ-ՊՈՌԻԱԾԱՌ (Ջոյգ պառաւածառ)

Գիւղիս հարաւային կողմում, միեւնոյն լեռնաբազկի վերայ (որ ձգուած է Փոքր-Քիրս[1] սարից մինչեւ Դրախտիկ) բարձրացած է ձուաձեւ մի բլրակ, որի վերայ վաղ ժամանակից շինուած է մի վանք անտաշ քարով: Շինութիւնս ունի նեղ եւ երկար ձեւ, որ կիսաւեր է արդէն, քանզի բաղկացած է վանքից եւ գաւթից: Փոքր վանքիս խորանի մէջ մի խաչքարի վերայ. Սուրբ Յովհաննէս. «Սուրբ Ովհաննէս...»: Այլ քարի վերայ. «Յիսուս Քրիստոս Աստուած. Ուսէփ էրեց»: Այլ քարի վերայ եւս. «Հոգեւոր հարք եւ եղբարք. զՍողոմոն երայց (երէց). կանգնող խաչիս յաղաւթս յիշեսջիք, աղաչեմ ամէն»: Կրկին այլ խաչքարի վերայ. «Յիսուս Քրիստոս, Հայոց թվ. ՈՀԷ. ես Ալի որդի Ջենովբին եկի ՝ի Պարսից, շինեցի զսուրբ եկեղեցիս Աստուծոյ, փրկութիւն հոգոյ իմոյ, որք երկրպագէք, զիս յաղաւթս յիշեսջիք եւ Աստուած զձեզ յիշեսցէ»: Այլ ջարդուած քարի վերայ խոնչայի մի երեսին. «Սուրբ Պաւղոս. յամս աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Յովհաննիսի Ամարասա եպիսկոպոսին եւ պետութեան տեառն Գագիկա[2] Աղուանից իշխանաց իշխանի ես հայր Կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս, եղբաւրորդի Կոկոնա»: Խոնչայի միւս կէս երեսին վերայ. «Սուրբ Պետրոս. կանգնեցի զխաչս ՝ի փրկութիւն հոգո իմո եւ ծնողաց իմոց: Արդ, որք երկրպագէք սուրբ Նշանիս, զիս յաղաւթս յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշեսցէ. ՆԽՋ. էր»: Բայց թէ ինչ եղած վանքիս անունն՝ Ս. Յովհաննէ՞ս, Պօղոս, Պետրոս՝ չգիտենք:

Հարկ է յայտնել, որ բարեպաշտ գիւղական ոմն դուրս թափած է աւերակիս փլուածքը եւ մաքրած գաւիթը եւ փոքր տաճարի յատակը, որպէս զի նորոգէ ի հիմանէ: Ուխտատեղի է աւերակս, որն ժամանակաւ ունեցած է եւ շրջապարիսպ, որի հետքերն երեւում են ակներեւ: Այժմ գրեթէ բլուրս ծածկուած է մեծ-մեծ ծառերով: Բլրիս բարձր. մօտ 3600 ոտք:

Ջոխտակ եղցի

Միմեանց կից շինուած են երկու եկեղեցիներ, որք նոյնպէս կիսաւեր են: Հազիւ թէ քարընկէց հեռի են երկու աւերակ եկեղեցիներս վանքի աւերակիցն: Մենք կարծում ենք, թէ այս երկու կիսաւեր շինութիւններն եւս վանք եղած լինին. քանզի ոչ մօտ գիւղատեղի կայ եւ ոչ հանգըստարան:

Գեօգ ուխտատեղի

Մի մատրան աւերակ է, որ գտնւում է Վերին եւ Ներքին Թաղավարդների միջեւ: Մատրանս շուրջն հանգստարան է: Ուխտի օրն է ամէն Համբարձման տօնն:

Է. ՄՈՇ-ԽՄՀԱՏ գիւղ. Հիմնուած է Վերին-Թաղավարդի արեւմտեան կողմում մի խոր ձորի աջ լանջի վերայ, որի հիւսիսային կողմի ձորով հոսում է Քեօնդալանի օժանդակն: Բնակիչք՝ բնիկ. հողն՝ բէկական եւ միջակ արդիւնաւէտ. տեղական բերքերն՝ նոյն (չկայ այդի եւ թթենի) պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 85. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր. քահանան գալիս է Ղեւոնդեանց անապատից: Ծուխ 50, ար. 155, իգ. 120:

ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԱՆԱՊԱՏ (3220 ոտք)

Հիմնուած է մի բարձր սարի գագաթի վերայ, որ ձուաձեւ արձանացած է Աւետարանոց աւանի, Սարգսաշէնի, Վերին-Թաղավարդի եւ Մոշ-Խմհատի կեդրոնում: Փոքր մատուռ է անա-

1 Մեծ-Քիրսն ունի 7340 ոտ. Փոքր-Քիրսն՝ 4009:

2 Գաղիկ իշխանաց իշխանս է. երեւի թէ, որ թագաւոր է անուանում սորա թոռն Ոսկին դուստրն Աբու-Մուսէի, որպէս տեսանք Կարմիր-եկեղեցու արձանագրութեանց մէջ:

պատս՝ կառուցեալ անտաշ քարով յանուն Ղեւոնդեանց, առանց կամարի: Արեւմտեան կողմին կից է մի գաւիթ, նոյնպէս նեղ դիրքով, որպիսին էր Ջոխտ-Պռըւածառի աւերակ անապատն: Գաւիթ եւ անապատ միասին չափելով՝ երկարութիւն՝ 13 մետր 40 սանթիմ, լայնութիւն՝ 5 մետր 10 սանթիմ: Անապատիս դրան հիւսիսային սեմին վերայ. «թվ. ՌԷՃ.» (թիւ Փրկչ.): Գաւթի դրան նոյն կողմի սեմի վերայ.

«ՌՄԻԷ.-ին, յիշատակ է գաւիթս. Զաքարիա, Յովսէփ եւ Մելքոն վարդապետացն»:

Անապատումս կան հետեւեալ մասունքները.

1) Մասն Թադէոսի առաքելոյն մի արծաթեայ փոքրիկ եւ տափակ խաչում, որ ունի սոյն արձանագրութիւնը. «Յիշատակ է. մասունքս է Թադէոս առաքել, որ եդ Մուսաէլ»:

2) Մասն Յովհաննու Մկրտչի զետեղուած մի արծաթեայ փոքր խաչում, որի վերայ քանդակուած է. «Յիշատակ է սուրբ խաչս, մասունք Յովհաննու Կարայբետին, Չախմախսազ Պետրոսի որդի Արզըմանին եւ իւր կողակից Անուն ՌՄԿԶ.»:

3) Մի արծաթեայ մեծ խաչում. «Սուրբ Յովհաննէս Մկրտչի մասունքն է այս»:

4) Մի արծաթեայ միջակ խաչ. «Սուրբ նշանս յիշատակ է սուրբ Ղեւոնդիա անապատին Յարութիւն հապեղին (աբեղային) թվ. ՌՄԼԹ.»:

5) Մասունք Ղեւոնդեանց մի արծաթ միջակ խաչում. «ընծայեցաւ սուրբ խաչս Ղեւոնդեայ հայրապետին Մարքարիտ Մելիք Ջիմշիտեանց 1876 ամի»:

Արտաքուստ վանուցս հարաւային կողմում ամփոփուած են մի քանի վարդապետաց մարմիններն, որոց մէջ է եւ հետեւեալն.

«Աստանօր հանգչի մարմին Յակովբայ սուրբ վարդապետի որդւոյ Թովմասայ Աւան Լալաեան յազգէն Իւղբազեանց յԱւետարանոց գեղջէն Վարանդայ սրբակրօն ճգնաւորական արար իւր կենաց զբարւոք վախճան 33 ամաց 1845 Նոյեմ. 25-ին»:

Պարսպուած է Անապատիս շուրջն, արեւմտեան եւ հարաւային կողմում, պարսպի ներսում շինուած են մի քանի սենեակներ, որք կիսաւեր են այժմ մեծ մասամբ: Անապատս ունի վարելահող, անտառ, պարտէզ, ընկուզ, տանձ, խնձոր, շագանակ, զկեռ եւ սալոր: Ապաստան է մի քահանայի:

Ը. ՍԱՐԳՍԱՇԷՆ ԳԻԻՂ. Հիմնարկուած է Քեօնդալան գետակի աջ կողմում. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, անջրդի, բայց բազմարդիւն. տեղական բերքերն՝ նոյն, օդն, կլիման եւ ջուրն՝ անվնաս, երկար կեանք՝ 80, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, սակայն անշուք. քահանայ մի: Ծուխ 90, ար. 325, իգ. 254:

Թ. ՂԱՐԱ-ԲՈՒԼԱՂ ԳԻԻՂ. Հիմնուած է Քեօնդալան գետակի ձորի ձախ կողմում, Սեւ աղբիւր (Ղարա-բուլաղ) յորդառատ աղբիւրի մօտ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, տեղական բերքերն՝ նոյն (գոյ թթենի), օդն, կլիման՝ ծանր ամռան, ջուրն ո՛չ գովելի. երկար կեանք՝ 85-80. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին. քարուկիր, բայց վտանգուած. քահանայ՝ երկու: Ծուխ 35, ար. 162, իգ. 135:

ՂԱՐԱԼԻ ԱՒԵՐԱԿ

Այստեղ կայ գիւղատեղի, հանդստարան եւ եկեղեցու աւերակ:

Ժ. ԱԼԱՄԱՆՑ ԳՈՄԵՐ. Շինուած է նոյն ջրաձորի վերայ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական եւ բարեբեր. նոյն՝ տեղական բերքերն, օդն, կլիման եւ այլն. եկեղեցին է Ղեւոնդեանց անապատն եւ քահանան՝ նորա վանահայր քահանան: Գիւղումս ծնուած է բանաստեղծ Պետրոս Մատաթեանցն, վասն որոյ կոչւում է եւ Մատաթքեանդ: Ծուխ 35, ար. 115, իգ. 92:

ԺԱ. ՋԱՂԱՑՆԵՐ ԳԻԻՂ. Հիմնուած է Աւետարանոցից փոքր-ինչ վար. բնակիչք՝ հատուած Աւետարանոց աւանից. հողն՝ արքունի, տեղական բերքերն՝ նոյն (կայ եւ այգի) սննդարար՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 85, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, նորաշէն. քարուկիր. քահանան գալիս է Աւետարանոցից: Ծուխ 65, ար. 248, իգ. 181:

ԺԲ. ԱԻԵՏԱՐԱՆՈՑ ԱՒԱՆ. Հիմնուած է միեւնոյն Քեօնդալան ջրաձորի ձախ ափի բարձրութեան վերայ. դիրքն՝ արեւելահայեաց. բնակիչք՝ բնիկ, հողն մելիքական[1], բայց այժմ՝ արքունի, տեղական բերքերն՝ նոյն. պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, հոյակապ կառուցեալ չորս սիւների վերայ. ունի մի փոքր կաթուղիկէ. երկարութիւն՝ 27 մետր 35 սանթիմ, լայնութիւն՝ 15 մետր 30 սանթիմ: Դրան ճակատակալ քարի վերայ. «Թվ. ՌՃ.»: Քահանայ՝ երկու: Ծուխ 257, ար. 936, իգ. 804:

Եկեղեցումս կան հետեւեալ դրչագիրներն եւ մասունքներն:

Ա. Աւետարան մագաղաթեայ, փոքրագիր, պատկերազարդ, որ գրուած է Աւետարանոց աւանումս ՌՃԻ. թուին, բայց անյայտ է գրողի անունն:

Բ. Աւետարան մագաղաթեայ, փոքրագիր, գեղեցիկ. նրբաճաշակ են չորս աւետարանչաց պատկերներն, նախշերն, ծաղիկներն եւ թռչնագրերն: Յիշատակարանից. «աւարտեցաւ .. աւետարանս ձեռամբ բազմամեղ Գրիգոր անուամբ երիցու ի թուականութեանս Հայոց ՌԺ. եւ Ը. երրորդի ի մարտ ամսոյ ի... եւ ծաղկեցի երբն-երբն գունովք եւ ոսկեզօծ որակոք... եղեւ աւարտ սուրբ աւետարանիս ի յերկիրս Գանջայ ի գիւղս, որ կոչի Քարահատ ընդ հովանեաւ սուրբ աստուածածնիս ի ժամանակս Շահ Աբասին փոքոյ եւ ի կաթուղիկոսութեան հայոցս Աղուանից տեառն տէր Պետրոսի մաքրասուն եւ սուրբ հայրապետի եւ կրկին լուսաւորչի, որ ի խնամօքն Աստուծոյ... լուսաւորեաց զլսաւարեալ տունս Աղուանից եւ պայծառացոյց զեկեղեցիս կարգօք.... եւ մերում եպիսկոպոսութեան բազմահանճար, պատուական քաւչապետի տեառն տէր Անտոնի վերադիտողի սուրբ աթոռոյն կաթուղիկէի վանիցն...»:

Յետոյ գրուած է այլ գրիչից աւետարանիս սկզբումն. «Սուրբ աւետարան սրբագիր եւ ոսկեզօծ վասմ եւ յիշատակ է Աբրահամ պարոն-տէրին, որ տվան Մելիք Պաղուն կուսակրօն դըստերացն Հռուբսիմին եւ Դաւլաթին եւ Շահանդուխտին ձեռքն ի վայելումն... գրեցաւ մատամբ տէր Եղիազարին մայիսի ԻԵ. օրն թվ. ՌՃՁԶ. էր...»:

1) Մասն կենաց փայտիցն զետեղուած մի քառաթեւ, արծաթ խաչում:

2) Մասն առաջին լուսաւորչացն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:

3) Մասն Պանդալիոնի բժշկին: Մելիք-Շահնազարեանների ապարանի դրան ճակատին.

«Այս ամարաթս Մելիք-Շահնազարի (Գ.-ի) որդի Սէյին բէկին, որ է այս շինութիւնս, որ շինել տուած շէնքն է թ. ՌՄԼԵ.»:

ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏ

Հիմնուած է հիւսիսից դէպի հարաւ թեքուած մի բարձրաւանդակի վերայ, որ կից է աւանիս հարաւային կողմին: Բարձրաւանդակին վերի ծայրն հասած է մինչեւ բերդի վերի ծայրն: Անապատս շինուած է անտաշ քարով երկու կամարի վերայ, որի երկարութիւնն է 11 մետր եւ լայնութիւնն՝ 9 (խիստ անմաքուր է): Վէմ քարի վերայ քանդակուած է. «Թվ. ՌԿԵ. ես Աթաս Հխմոզչի (՞) կանգնեցի խաչս ի հայր իմ (հայրենի) վիճակին»:

Դրան ճակատակալ քարին վերայ. «Եկեղեցիս թվ. ՌԿԵ. (շինեցաւ)»:

«Թվական ՌՃԻԵ. Շահնազարին եւ վարդապետին Գրիգորի, յիշատակ է դուռս կոյս Խոսրովին եւ ծնողացն»:

Անապատս ունի եւ գաւիթ, որ շինուած է նոյն ոճով, երկարութիւնն՝ 5 մետր 75 սանթիմ, լայնութիւն՝ 8 մետր 90 սանթիմ (հարաւից հիւսիս): Ինչպէս անապատս եղած է յատուկ կուսանոց, նոյնպէս գաւիթս եղած է յատկապէս դամբարան Մելիք Շահնազարեանի իշխանական ցեղին: Գաւթումս ամփոփուած են Մանուել վարդապետի, Մելիք-Միրզայի, Մելիք-Յիւսէյինի, Մելիք-Յովսէփի եւ սոցա տիկնանց մարմիններն:

---

1 25 ծուխ մելիքազուն բէկեր կան, որոց հողերն սեփականութիւն է պապենական: Իսկ բնակչաց մեծ մասն տեղափոխուած է Սոթից եւ Մազրայից:

Ամուր պատերով պարսպուած է եղել անապատիս շուրջն՝ համեմատ տեղի դիրքին. քանզի հարաւային կողմն քերծ է: Պարսպի ներսում եղել են շատ սենեակներ՝ միաբան կուսանաց համար: Բայց այժմ տեղ-տեղ աւերուած են պարսպի պատերն եւ սենեակների ամենամեծ մասն:

Աւետարանոցս իբրեւ մելիքանիստ աւան եւ գաւառագլուխ, ունեցած է ամուր պարիսպ, որով շրջապատուած է եղել ամբողջ աւանս: Պարսպիցն այժմ կանգուն մնում է միայն լեռնակողմինն, որ բրգաշատ է եւ ձգուած է Կուսանաց անապատիցն մինչեւ սարի գլուխ, պատած հիւսիսային եւ արեւելեան կողմերով եւ միացած անապատի հարաւային ժայռին: Սակայն այժմ հիւսիսային եւ արեւելեան կողմերի պարիսպներն քանդուած են տեղ-տեղ: Պարիսպս շինող որմահիւս վարպետի գերեզմանն գտնւում է աւանիս միջում պարոն Առստամի (մականուանեալ Ումախան) պարտիզումն: Տապանաքարի հարաւային երեսին. «Անուան Մելիք Շահնազարին (Գ.-ին), որ է որդի Մելիք Սէյինի. այն ժամանակն որ Կուրջին եկաւ (վրացի զօրք) թվին ՌՃՂԹ. էր, որ ղալաս (Աւետարանոցի բերդը) շինեցի, ով որ կարդա, մէկ բերան աստուած ողորմի ասի. ամէն»: Միւս երեսին. «Այս է տապան Գաբրիէլի որդի Դաւթին թ. ՌՄԽԸ.»:

ՄԵԼԻՔԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՆԵՐ

Մելիք-Բաղու ապարանն, որ մօտ է Կուսանաց անապատին, բաղկացած է երկու յարկից. գետնայարկում կայ երեք արցախական քարուկիր տուն, որք մնում են ցարդ նոյնութեամբ: Իսկ վերնայարկը քանդել տուած է ռազմագէտ գեներալ Առուստամ[1] Գիւգիեան Մատաթեանցն եւ շինած իւր համար բնակարան, որ աւերակ է այժմ:

Մելիք-Յիւսէյին Ա.-ի ապարանն գտնւում է բերդի պարսպի լեռնային մասում արեւմըտեան կողմում, որ աւերակ է այժմ:

Մելիք-Շահնազար Բ.-ի ապարանն գտնւում է աւանիս հիւսիսային կողմում պարսպի ներսում: Այժմ նստում են բնակարանումս սոյն մելիքի յետագաներն:

Մելիք-ժառանգների հանգստարան

Աւանիս հին հանգստարանից մի քանի քայլ ներքեւ է մնացեալ Մելիք Շահնազարեանների հանգստարանն:

«Այս է տապան Մելիք Շահնազարին (Գ.-ին)
Որ է որդի Մելիք Յիւսէյինին,
Արցախ գաւառաց իշխանին
Վարանդու տիրապետողին,
Սա էր հայր Մելիք Ջիւմշիտին,
Ըստ Ռուսաց պլկովնիկին,
Ազնիւ ոմն Հայոց ազգին,
Արի եւ քաջ զօրավարին
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան հայր մեղային
ՌՄԽ. թվին (1792):
«Այս է տապան Մելիք Ջիւմշիտին... (եղծուած են կէտադրեալ բառերն) Սա էր
Թոռն Մեծասեռին
Ազնիւ Մելիք Յիւսէյինին (Բ.-ին)
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան Հայր մեղային

1 Առուստա՛մ եղած է կնեազ Մատաթովի անուն, իսկ իւր հօր անունն՝ Գիւգի (Գրիգոր):

Թվ. ՌՄԿԱ. աբրիլի ԻԵ. (1712):
«Այս է տապան Մելիք Ջհանբախշին
Իշխող Վարանդայ գաւառին
Ազնիւ որդոյ Մելիք Շահնազարին
Վախճանեցաւ 1822»:
«Մելիք Խուդաթ իշխող Վարանդայ
Թոռն ըստ մարմնոյ Մելիք Ջիւմշիտայ
Այս նորա տապան յորում մարմնով կայ,
Կենդանի հոգւով միշտ եւ յարակայ,
Ամաց քառասնից ել սա յաշխարհէ,
Ջերծ արդ գտանի յամէն չարէ.
Ջայս վէմ ետ շինել առն իւրում ի ծօն,
Ի պատիւ սորա կին սորին զգօն,
Թվ. ՌՄՁԲ. էր»: 1833):
«Այս է տապան Մելիք Յիւսէյինի որդի.. Աւաքճանին թ. ՌՄՀԲ.»:
«Այս է տապան Մելիք Յիւսէյինի որդի Մանասան բէկին թ. ՌՄԾԶ.»:
«Այս է տապան Մելիք Շահնազարի որդի Մելիք Յուսէյինին (Բ.-ի) թ. ՌՄԾ. էր (1802):

Հանդստարանիս հիւսիսային կողման մօտ, ընկուզի ծառի տակ մի հին եւ խաչազարդ քարի վերայ. «Այս խաչս Թորոս այղայ թվ. ՈԶ. ար (էր)»: Տապանաքարիս վերայ շինուած է Թորոս աղայի պատկերն, որ լարած է աղեղը եւ թռցնում է նետը մի եղջերուի վերայ:

Տապանաքարիցս փոքր վերեւ կայ մի այլ տապանաքար, որի մէջքն կլոր է եւ իւր աջ կողմում ունի մի թագաւորի պատկեր, խաչը ձեռին, որ հեծած է ձին եւ բարձրացրած խաչը, գնում է առաջ: Բայց մի ահագին վիշապ օձ, լայն բացած իւր կզակը եւ ընկած է թագաւորիս ետեւից: Խաչազարդ է տապանաքարիս միւս երեսն եւ քանդակուած մէջքի վերայ, որ կարդացւում է խիստ դժուարութեամբ. «Ի ՈՂ. ՆՆՇեց Հա... թգաորի Աղվց... ես տէր Մասուն գրեցիք. այս ով որ կարդէ. Աստուած ողորմի ասէ: Այս է հանգիստ Մուրադի Ղաթիոնա գաջի (քաջի) Իարանդայ գաւառ հմուտոյն ասպարաբետի» (սպարապետի): Տապանաքարիս մօտ կայ նաեւ մի այլ ձիու վերայ մի թագուհու պատկեր, բայց տապանաքարիս վրայ չկայ արձանագրութիւն:

ԺԳ. ՍՂՆԱՂ ԳԻԻՂ. Հիմնուած է գրեթէ Աւետարանոցի արեւմտեան կողմում. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի. միջակ արդիւնաւէտ. տեղական բերքերն՝ նոյն (չիք այգի), անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 85, եկեղեցին՝ Ս. Աստուածածին, քահանայ՝ մի: Ծուխ 55, ար. 236, իգ. 188:

ԺԴ. ՎԵՐԻՆ-ՍԶՆԷՔ ԳԻԻՂ. (Այն լեռնաբազուկն, որ սկսուած է Քիրս մեծ սարի արեւելեան կողմից, անցած Շօշու գիւղի հարաւարեւելեան կողմից եւ հասած Պողորխանայ սարն: Ապա սարիցս ճիւղաւորուած է երեք լեռնագօտի, Ա.-ն ուղղակի ձգուած է մինչեւ Վարազաբուն գիւղն, Բ-ն՝ դէպի Կղարծի, Ղզղալա, Աշան եւ այլ գիւղերն. Գ.-ն՝ դէպի Սարուշէն, Մաւաս, Սխտորաշէն եւ Խազազի սարն). Հիմնուած է վերջին լեռնաշղթայիս հարաւային կողմում. բնակիչք գաղթած են Պարսկաստանից (Ղարադաղից). հողն՝ բէկական եւ խիստ սակաւ, տեղական բերքերն՝ նոյն (ոչ այգի ունին եւ ոչ պարտէզ). օդն, կլիման եւ ջուրն՝ անվնաս, երկար կեանք՝ 85, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, քահանան գալիս է Ներքին-Սզնէքից: Ծուխ 46, ար. 175, իգ. 148:

ԺԵ. ՆԵՐՔԻՆ-ՍԶՆԷՔ ԳԻԻՂ. Հիմնուած է մօտ Վերին-Սզնէքին, հողն, բերքերն եւ այլն՝ նոյն. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, քահանայ՝ երեք: Ծուխ 92, ար. 377, իգ. 350:

ԺԶ. ԽԱԶՄԱԶ ԳԻԻՂ (խաչերի մէջ եղած գիւղ. զի գիւղիս չորս կողմերում կան քարեայ խաչարձաններ). Հիմնուած նոյն լեռնաշղթայի հարաւահայեաց լանջի վերայ. բնակչաց կէս մասն՝ բնիկ եւ միւս կէս մասն գաղթած Բարկիւշադից եւ տեղափոխուած Հին-Քեսթուկ գիւղից (այժմ աւերակ), հողն՝ բէկական, անջրդի, բայց հացաւէտ, տեղական բերքերն՝ նոյն, օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական. երկար կեանք՝ 90. եկեղեցին՝ Սուրբ Ստեփաննոս, կառուցեալ մի կամարի վերայ՝ առանց սիւների, որ ունի մի փոքր կաթուղիկէ, երկարութիւնն՝ 13 մետր 90 սան-

թիմ, լայնութիւնն՝ 9 մետր 32 սանթիմ: Դրան արեւելեան սեմին վերայ. «Ես ուստա Յուսէփ եւ Գէիքուրգ (Գէորգ) Ըսմանայ եկեղեցիս շինեցի յիշատակ, ով որ տեսնոյ, Աստուած ողորմի ասէ»: Իսկ դրան ճակատակալ քարի վերայ. «թվին ՌՃ.»: Քահանայ՝ մի: Ծուխ 62, ար. 290, իգ. 220:

Գիւղիս քահանային մօտ կայ երկու գրչագիր սաղմոս.

Ա. Սաղմոս մագաղաթեայ, գեղեցկագիր, որ ունի իւր սկզբում. «Յառաջաբանութիւն Դաւթի Մարգարէին Մեկնութեան՝ Աթանասի եպիսկոպոսի արարեալ»:

Բ. Սաղմոս, գրուած թղթի վերայ, պակասաւոր, այս է՝ վերջից թափուած են թերթեր:

Գիւղիցս փոքր-ինչ ներքեւ կայ մի հին գիւղատեղի եւ ընդարձակ հանգստարան:

ՇՕՇԿԱՅ ՎԱՆՔ (4669 ոտք)

Հիմնուած է նոյն լեռնագօտու գագաթնագծի վերայ, խաչմաչ եւ Մսմնայ գիւղերի մէջ. շինուած է մի կամարի վերայ եկեղեցու ձեւով: Երեւում է հիմքերից, որ խիստ հին եղած է վանքս. բայց ժամանակ առ ժամանակ նորոգուած է սպիտակ անտաշ քարով: Ունի միայն մի խորան, երկք լուսամուտ եւ մի դուռն արեւմտեան կողմից եւ խաչազարդ բեմ, որոց մէն մին յիշատակ եղած է առանձին-առանձին մարդից: Երկարութիւնն՝ 9 մետր 18 սանթիմ, լայնութիւնն՝ 6 մետր 25 սանթիմ:

ԺԷ. ՍԱՐՈՒՇԷՆ. Հիմնուած է նոյն սարի հարաւարեւմտահայեաց լանջի վերայ, բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի, անջրդի, հացաւէտ, տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք 100. տեսարանն գեղեցիկ, եկեղեցին Ամէնափրկիչ, քարուկիր, կառուցեալ մի կամարի վերայ, հնաշէն եւ նորոգուած քանիցս, երկարութիւնն՝ 13 մետր 50 սանթիմ, լայնութիւն՝ 8 մետր 45 սանթիմ: Գաւառիս բոլոր եկեղեցեաց մէջ առաջնակարգ տեղ բռնած է եկեղեցուս ներքին եւ արտաքին պայծառութիւնն, զարդն ու զարդարանքն: Այս պայծառութիւնը պարտական ենք գերազնիւ Գրիգոր աղա Այվազեանցին հոգատար խնամոցն: Քահանայ՝ մի: Ծուխ 70, ար. 331, իգ. 253:

Եկեղեցումս է Սարուշէնի հռչակուած ձեռագիր աւետարանն, որի մօտ ուխտի են գալիս ոչ միայն Արցախի շատ կողմերից, այլ Բագուից, Թիֆլիզից. այլ եւ մահմէտականք: Աւետարանս մագաղաթեայ եւ մեծադիր է, որ ունի Ռստակէս, Վրդանէս եւ Ստեփաննոս վարդապետների պատկերները, բայց անճաշակ նկարուած:

Առաջնոյն մօտ գրուած է. «ԶՌստակէս գրիչ յիշեսջիք, սիրելի եղբարք»: Ապա վախճանելոց յետոյ գրուած է այլ գրողից. «որ փոխեցաւ առ Քրիստոս, որ գրեց զՄատթէս եւ զՄարկոս» (աւետարանները): Երկրորդին մօտ գրուած է. «ԶՎրդանէս գրիչ որ գրեցի զՂուկաս եւ զՅովհաննէս զվիրաւոր մեղաւք յիշեսջիք ո՛վ պատուական եղբարք, զի չիք մարդ մեղաւոր քան զիս յերկրի...»: Երրորդին մօտ գրուած է միայն իւր անունն: Անճաշակ են պատկերներն. նախշերն եւ ծաղիկները, սակայն գեղեցիկ է մագաղաթն եւ ամբողջապէս գրուած է գլխագրերով: Սկզբում ունի յիշատակարանի նման մի գրութիւն, որն կարդացուում է խիստ դժուարութեամբ, ուր ի միջի այլոց գրուած է.

«Բայց գրեցաւ սուրբ աւետարանս.... յաբեթեանս թուականին ՌԼԱ.»: Իսկ Մատթէոսի պատկերի տեղում գրուած է փակագրի ձեւով.

«Տէր Աստուած ողորմեա՛ Յակովբայ նկարչի»: Նոյնպէս գրուած է սկզբում. «Յամի Տեառն 1827 եւ ի թուականիս (Հայոց) ՌՄԼՁ. սուրբ աւետարանս, որ գերի էր ընկել Պարսից տէրութիւնը, ես՝ Ղարաբաղու Շուշի Ղալի բնակիչ Միրզայ Օհանէսեան Զարկարեանցովս, տեսի զսուրբ աւետարանս ի ձեռս անօրէն այլազգեաց ի քաղաք Թաւրէզ, վասն որոյ դրամս ետու եւ գնեցի ի արդար վաստակոց իմոց եւ բերեալ 'ի աւմուրս Շուշի եւ յածնեցինք այն տեղն, ուր կայր եւ այժմ 1833 ամի եւ յամսեան մայիսի 12-ին. բերաք տեղս վասն մեր ուխտադրութեանն նորոգելութեամբ աւետարանս. ահա նորոգեցինք եւ պայծառացուցինք ի յիշատակ մեր համայն կենդանեաց եւ ննջեցելոց... Միրզայ Օհանեան»:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Գիւղումս կայ եւ երկսեռ միդասեան ուսումնարան, որի երկյարկ շէնքը կառուցանել տուած է վերոյիշեալ բագուաբնակ գերազնիւ Գրիգոր աղա Թովմասեան Այվազեանցն: Գետնայարկն ծառայում է իրրեւ փայտատուն, իսկ վերնայարկն՝ ուսումնարան, որի մէջ կայ չորս սենեակ, մի մեծ դահլիճ եւ մի գեղեցիկ սրահ, որի մէջ է հետեւեալ արձանագրութիւնն.

«Շինեցաւ ուսումնարանս արդեամբ եւ յիշատակ Բագուաբնակ Գրիգոր Թովմասեան Այվազեանցին 1890 թվ. դեկտեմբեր»:

Վերնայարկն ունի գեղեցիկ պատշգամբներ, նոր ձեւի շինուած, պատուական նստարաններ եւ գրատախտակներ աշակերտաց եւ աշակերտուհեաց համար: Մեկական ուսումնարանիս երկարութիւնն 29 մետր է, լայնութիւնն՝ 11 մետր 48 սանթիմ: Ուսանում են մօտ 60 աշակերտ եւ աշակերտուհի:

Տարեկան ռոճիկ վարժապետի	500 ռուբլի.
,, ,, վարժուհու	400 ,,
Լրագիր, գիրք եւ զանազան նիւթեր	300 ,,
Միամեայ ընդհանուր ծախք	1200 ռուբ.

Այս բոլոր ծախքերը ամէն տարի անում է միեւնոյն բարերար Գրիգոր աղա Այվազեանցն: Բացի ծախքերիցս նորին Գերազնւութիւնն անում է հագուստ մի քանի որբ աշակերտաց եւ աշակերտուհեաց համար: Երջանիկ է Սարուշէնն, որ ունի այսպիսի բարերար:

ԺԸ. ՄԱԻԱՍՇԷՆ. Հիմնուած է նոյն լեռնագօտու գագաթնագիծ սարահարթի վերայ. բնակիչք տեղափոխուած են Ջրաբերդից. Հողն՝ բէկական, աւազուտ եւ սակաւ արդիւնաւէտ, տեղական բերքերն՝ նոյն, ձմռան՝ խիստ, ամռան՝ գերազանց օդն, կլիման, տեսարանն եւ ջուրն. երկար կեանք՝ 90-100. եկեղեցին՝ Երեք մանկունք. քարաշէն, որ կրում է սոյն արձանագրութիւնը. «Շնորհօքն Աստուծոյ ես տիկին Քալոյ Յովսէփ-բէկ Մելիք Շահնազարեանց կառուցի զայս Երից մանկանց եկեղեցիս յարդար վաստակոց իմոց 1854 թուին»: Քահանայ մի: Ծուխ 34, ար. 114, իգ. 87:

ՄԱՄԱՍԷԻ ՎԱՆՔ

Այսպէս է անուանում Արցախի հասարակութիւնն այն վանքը, որ շատ վաղուց շինուած է շէնիս մօտ բարձր բլրի վերայ, որի արեւելեան եւ հիւսիսային կողմերն վիմահերձ բարձրութիւններ են: Վանքս, որ կառուցեալ է երկու սիւների վերայ, ունի եկեղեցու ձեւ: Խորանի տակ կայ չորս գերեզմանաձեւ շիրիմ, որ նորոգուած է երբեմն-երբեմն տաճարիս հետ միասին: Մեծ ուխտատեղի է վանքս եւ շիրիմներս: Վանքիս մօտ եղած են խուցեր միաբանից համար, որք աւերակ են այժմ բոլորովին: Երեւում են նաեւ պարսպի հետքերն, որով պատած են վիմահերձից վիմահերձ:

ԺԹ. ԲԼԲԼԱԿ ՇԷՆ. Հիմնուած նոյն լեռնագօտու հարաւահայեաց լանջի վերայ: Բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, տեղական բերքերն՝ նոյն. չունին եկեղեցի. հոգեւոր պէտքերն կատարւում են Սխտորաշինում: Ծուխ 15, ար. 65, իգ. 65:

Ի. ՍԽՏՈՐԱՇԷՆ. Հիմնուած է նոյն լեռնագօտու հարաւահայեաց լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական. տեղական բերքերն՝ նոյն (ունին այգի, պարտէզ եւ թթենի), օդն, կլիման, ջուրն՝ անվնաս. երկար կեանք՝ 75-80. եկեղեցին՝ նորաշէն եւ կիսատ տակաւին, քահանան գալիս է Ծովատեղ գիւղից: Ծուխ 65, ար. 281, իգ. 203: Շինիս այգիների աղբիւրի մօտ կայ մի թեղի բազմադարեան ծառ, որի հաստութիւնն է 22 մետր, 75 սանթիմ:

ԻԱ. ՀԻՐՀԵՐ ԳԻԻՂ. Հիմնարկուած է նոյն լեռնագօտու հիւսիսային կողմում, գիւղի դիրքն՝ արեւելահայեաց . բնակիչք՝ բնիկ, հողն կիսով չափ արքունի եւ կիսով չափ բէկական, բայց բարեբեր եւ պտղատու, տեղական բերքերն նոյն, առատ է տանձն եւ խնձորն, պատուական օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 100. քահանայ՝ մի, ծուխ 80, ար. 325, իգ. 255: Եկեղեցին՝ Սուրբ

Գրիգորիս. հոյակապ. համակ սրբատաշ քարով շինուած, կառուցեալ չորս սիւնների վերայ, արտաքուստ խաչաձեւ, ներքուստ՝ ժողովրդեան կանգնած տեղից վերեւ. գմբէթ. երկարութիւնն՝ 19 մետր 24 սանթիմ, լայնութիւնն՝ 13 մետր 63 սանթիմ: Բեմի ժողովրդահայեաց երեսին փորագրուած է.

«Կամաւն Աստուծոյ ես՝ Պետրոս Կաթուղիկոս Աղուանից սուրբ աթոռոյ Գանձասարայ, Նորոգեալ սուրբ աթոռս Ամարասայ արհի եպիսկոպոսութեան բոլոր Նահանգի Վարանդու եւ Քոչիզու, քանզի փեռեկտեալ եւ պատառեալ էին զվիճակ սորին արարեալ ըստ իւրաքանչիւր կամաց. իսկ մեք զցանկ հայրենի Նորոգեալ ժողովեցաք, Նորոգեցաք զսիրելի աշակերտս մեր զտէր Բարսեղ արհի եպիսկոպոսն, որ եւ հրամայեցաք սմա շինել զեկեղեցի իմ Հովարան Ամարասայ, զոր եւ շինեալ կատարեաց ըստ մերում հրամանի յաւուր տաւնի այլակերպութեանն Քրիստոսի. եւ աւրհնեցաք զսուրբ տաճարս անուանելով զսա սուրբ Գրիգորիս՝ բերելով ի Նշխարաց սրբոյն Գրիգորիսի ամփոփեցաք երկրիս Վարանդու եւ Քոչիզու, զի եղիցի այս երկու աթոռս մի: Ով ոք զայս վիճակս բաժանել եւ զոք նստուցանել այլ տեղի, եթէ կաթուղիկոս իցէ կամ եպիսկոպոս, Տէր զայնպիսին նզովեալ եղիցի ՅԺԸ. հայրապետացն, ընդ խաչահանուացն դասեսցի. Յուդայի մասնակից եղիցի: Այս կտակ եւ արձանագիր յաւիտեան մնայ հաստատ»:

Հարաւային փոքր խորանի հիւսիսային սեմի վերայ.

«Մեք Հիրհերայ ճամիաթս տանուտէր Ղասումս, մեծ եւ փոքր ճանապարհի գլխի տափն ի սկզբանէ վախմ էր սուրբ Աստուածածնին. մեք ես վախմ արարաք Սուրբ Գրիգորիսիս. ով քակէ, նզովեալ եղիցի յԱստուծոյ»:

Հիւսիսային փոքր խորանի հարաւային սեմի վերայ.

«Աստուած ողորմի տնտես Մարիամին, որ Է. (7) տարի եկեղեցուս հացն եւ ճաշն արաւ»:

Աւագ խորանի հիւսիսային կամարակալ սեան վերայ.

«Կամաւն Աստուծոյ... եկի սուրբ Աս... թվին Հայոց ՌՃԵ. ին հանդերձ Յո.. Ալէքսան, Եղիայ. եւ Մարտիրոս եպիսկոպոսօքս, որ առ Աստուած փոխեցան, որ թվին էր ՌՃԺԶ. ի ա. յուլ. հիմնարկեցաւ սուրբ տաճարիս... արնա սուրբ Գրիգորիսի ձեռնտուութեամբ..... ի թիե... աշխատանս արարի... Մահդասի Գէսուն... ցէ ըստ աշխար... անց...յիշեցէք...ցս ոս....[1] »:

Արեւմտեան դրան ճակատակալ քարին վերայ.

«Ես Պետրոս կաթուղիկոս աշակերտ Ղուկաս վարդապետին ետու շինել կաթուղիկէս յիշատակ ինձ եւ աշակերտին իմոյ Բարսեղ եպիսկոպոսին. յիշեցէք ի Քրիստոս»: «Աստուած աւրհնէ Քոչիզու ժողովուրդն այն աւրհնութեամբն, որ ոչ աՁցանէ, ձեռնտու եղեն կրին եւ քարին»: «Ջաւրութեամբն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ի դառն եւ ի նեղ ժամանակիս, վասն ծովացեալ մեղաց մերոց եկն մարախ եկեր զերկիրս Աղուանից եւ աւերեաց բազում տեղիս ի թագաւորութեան Շահ Սուլէմանին, պարոնութեան Միրզա Ղուլի բէկին եւ իշխանութեան երկրիս Վարանդու Մելիք Բաղու որդի Մելիք Շահնազարին եւ օժանդակութեան (թեամբ) Ովանիսին եւ քահանայից եւ տանուտեարց, մեծամեծաց եւ փոքունց ամէն. թվին ՌՃԻԲ.»:

Հարաւային դրան ճակատակալ քարի վերայ.

«Շնորհօքն Քրիստոսի ես՝Բարսեղ եպիսկոպոս, աշակերտ Պետրոս կաթուղիկոսին, եւ ծնողսն իմ Աղայն եւ Գիւլաղայն ի գաւառէն Վարանդու, ի գեղջէ Գիշուն՝ Նորոգեալ պայծառացուցի զսուրբ աթոռս Ամարասայ, պարսպօք շրջապատեցաք հանդերձ յոգնաթիւ սենեկօք, զեկեղեցիս շքեղացուցաք զարդուք, տուաք շինել զեկեղեցիս անուամբ Սրբոյն Գրիգորիսի Հովարան սուրբ աթոռոյն Ամարասայ, որ եւ մասն բերեալ ի նմանէ ամփոփեցաք աստ, իսկ հիմնարկեցաւ ՌՃԺԶ. թվին կատարեցաւ ՌՃԻԵ.-ին»:

Գիւղիս հին հանգստարանում կայ մի հնաշէն մատուռ Սուրբ Աստուածածին անուամբ, որ խարխուլ է արդէն եւ քայքայւում է:

ԻԵ. ԾՈՎԱՏԵՂ ԳԻՒՂ. Շինուած է նոյն սարի հիւսիսային կողմում ոչ այնքան հեռի Հիր-

1 Եղծուած են կէտադրեալ բառերն եւ գրերն:

հերից. բնակիչք ընիկ. հողն՝ արքունի. անջրդի. միջակ արդիւնաբեր, բայց պտղատու. տեղական բերքերն՝ նոյն (նշանաւոր են տանձն ու խնձորն), պատուական՝ օդն, կլիման, տեսարանն եւ ջուրն. երկար կեանք՝ 90. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ երկու կամարների վերայ. քահանայ՝ մի: Ծուխ 86, ար. 306, իդ. 276:

ԿԱՐՄԻՐ ԵԿԵՂԵՑԻ

Այս անուամբ է կոչւում Մելիք Փաշանանցների դամբարանն, որ կայ գիւղիս արեւելեան կողմում՝ ոչ այնքան հեռի մի բլրակի վերայ: Դամբարանիս շուրջն հանգիստներ են հնուց խիտ առ խիտ ամփոփուած, որի մէջ կան եւ խաչաձարդ տապանաքարեր: Դամբարանս ստորերկրեայ է եւ բաղկացած չորս պատկից մատուռներից, որոց Ա-ն՝ մեծ. Բ-ն միջակ մատուռներ են: Գ-ն եկեղեցի է, Դ-ն փոքր մատուռ է: Լայնութիւնից լայնութիւն պատկից մատուռներս հաղորդակցութիւն ունին միմեանց միջնապռներով: Ա-ն՝ մեծ մատուռն վնասուած է գագաթնագիծ ճեղքուածով, որի հարաւային պատն եւ դուռն են միայն երեւում. քանզի ստորերկրեայ են բոլոր մատուռներս:

Ա. Մատրան ճակատակալ քարի վերայ.

«Թվ. ՌՀ. Դաւիթ եպիսկոպոս. յիշատակ է եկեղեցի վանքս, որ լինի սա դամբարան եւ շիրիմ մերոց նախնեաց»:

Մատրանս խորանի հարաւային կողմի խաչին վերայ.

«Թվ. ՌԼԵ. ի հայրապետութեան Դաւիթ, առաջնորդի Մելիք Փաշիկ[1] , Պետրոս եպիսկոպոս»:

Վէմ քարի ժողովրդահայեաց երեսին.

«Դաւիթ եպիսկոպոս»:

Բեմի խաչի վերայ.

«Դաւիթ աբեղա կանգնեցի զխաչս Առան վարդապետի Տարսոնե... եւ զիս իշա (յիշա)»:

Խորանի հիւսիսային կողմի խաչքարի վերայ.

«Թվ. ՌԻԵ. ի հայրապետութիւն տէր Յովհանիսի. առաջնորդութիւն Մելիք Փաշին, յանուն Աստուծոյ ես Սահակ եպիսկոպոս կանգնեցի զխաչս ի փրկութիւն եղբաւր մերոյ Ղազարին, աղաւթս յիշեցէք» (14):

Բ. Մատրան մէջ հարաւային պատում մի կիսատ խաչի վերայ. «Անուն տեառն Աստուծոյ ես Մեկ Հացգերգ (?) կանգնեցի զխաչս որդոյ իմոյ Սադիկայ եւ որ Եւայ ու Արղուն ձորոյ խոց. Աստուած ողորմի....»:

Մի մեծ խաչի կէս երեսին վերայ.

«Այս է Սահակ եպիսկոպոսն, որ փոխեցաւ...»: *Միւս կողմի վերայ:* «Անուամբն Աստուծոյ ես Պետրոս եպիսկոպոս, Դաւիթ խան այանս կանգնեցինք զխաչս ի փրկութիւն Սահակ եպիսկոպոսին, աղաւթեցէք»:

Դ. Մատրան մէջ մի գեղեցկաքանդակ խաչքարի վերայ.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ, ես Մելիք Աւան կանգնեցի զխաչս 'ի փրկութիւն իմոյ Մելիք Պապին, մաւրն իմոյ Խոնդի խաթունին, ով որ յիշէք ի Տէր, յիշեսջիք առ Աստուած թվ. ՌԺԵ. ին»:

Ուրիշ խաչի վերայ.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Մելիք Ադամ որդի Մելիք Պապին որդոյ Հախիջանայ թոռանց որդոյն Թոմասին որդոյ մեծի իշխանին Աւանայ կանգնեցի զխաչս ի փրկութիւն նախնեաց մերոց...»:

Այլ խաչարձանի վերայ.

«Ի շխանութեան Թահմազին, հայրապետութեան տեառն Գրիգորիսի եւ առաջնորդութեան ուխտիս Սահակայ եպիսկոպոսի...»:

1 Այսինքն՝ ի մելիքութեան կամ ի պարոնութեան:

Սարսափելի մութ, խոնաւ եւ անմաքուր են մատուռներս եւ լի չղջիկներով, մաշուած, տեղ-տեղ եղծուած եւ դժուարաւ ընթեռնելի են արձանագրութիւններն, վասն որոյ հազիւ թէ երկու օրում կարողացանք ընդօրինակել մեծ զգուշութեամբ այդ արձանագրութիւններդ: Թողում ասել, որ յաճախակի յարձակուելով չղջիկներն մեր վառ մոմերի վերայ՝ անցուցանում էին զայն եւ զմեզ թողնում դժոխային մթութեան մէջ»:

Արդէն խօսած ենք լճակների շարքում երկու փոքր լճակների մասին, որք կան Ծովատեղ գիւղի եւ Խերխան շինի միջեւ: Ոմանք ասում են, թէ Ծովատեղ գիւղն լճերից ստացած է իւր Ծովատեղ անունը:

ԻԳ. ԽԵՐԽԱՆ ՇԷՆ. Հիմնուած է նոյն լեռնագօտու հիւսիսային լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ[1], հողն՝ բէկական. ամէնայն ինչ՝ նոյն, եկեղեցին՝ Սուրբ Գրիգոր. քարուկիր. քահանան գալիս է Ծովատեղից: Ծուխ 31, ար. 150, իգ. 120:

ԻԴ. ՄԱՇԱԴԻ ՇԷՆ. Հիմնուած է մի ձորի երկու լանջերին, որ գանւում է Մամնայ գիւղի արեւելեան կողմում, բնակիչք՝բնիկ, հողն՝բէկական եւ բաղմարդիւն, տեղական բերքերն՝նոյն, օդն, կլիման եւ ջուրն՝անվնաս. երկար կեանք՝75-80. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր. քահանայ՝մի: Ծուխ 120, ար. 510, իգ. 433:

ԻԵ. ՄՍՄՆԱՅ. Հիմնուած է նոյն լեռնագօտու հիւսիսային կողմում. Շօշկայ վանքի արեւելեան ձորի լանջի վերայ, բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, անջրդի, հացաւէտ. տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման, տեսարանն եւ ջուրն, երկար կեանք՝ 89-90, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քահանան գալիս է Ղաւախան գիւղից: Ծուխ 70, ար. 260, իգ. 230:

ԻԶ. ՀՂՈՐԴԻ ԳԻՒՂ. Հիմնուած է մի բարձր սարի արեւելահայեաց լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ. հողն՝բէկական, տեղական բերքերն՝նոյն, գերազանց՝օդն. կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90-100, եկեղեցին՝Սուրբ Աստուածածին, քարուկիր. քահանայ՝մի: Ծուխ 136, ար. 624, իգ. 508:

Միդասեան ուսումնարան տղայոց. աշակերտք 35. թոշակատու 25, ձրիավարժ 10, տարեկան ռոճիկ վարժապետի՝220 ռուբլի:

ԲՈՂՐԽԱՆԻ ՎԱՆՔ (սարիս բարձ. 5326 ոտք)

Հիմնուած է համանուն սարի հարաւ արեւելեան կողմում մի փոքր ձորակի ձախ լանջում մի հարթակի վերայ: Ըստ ամենայնի ունի եկեղեցու ձեւ կառուցեալ անտաշ կաթնագոյն քարով մի կամարի վերայ: Ունի մի մեծ եւ միայն մի փոքր խորան, մի դուռն, երեք լուսամուտ, երկու խորհրդարան. 9 մետր 65 սանթիմ երկարութիւն, 5 մետր 50 սանթիմ լայնութիւն:

Մի կոտրած եւ փոքր խաչքարի վերայ. «Խաչս տանցն Արխի»:

Այլ փոքր խաչքարի վերայ. «Խաչս Կ. ես Բ. Հ.»:

Ունի շրջապարիսպ քառակուսի ձեւով պատուած, որ ունի միայն մի դուռն: Պարսպի հարաւային եւ արեւմտեան կողմում ներքուստ շինուած են թաղակապ խուցեր, անվնաս մնում է միայն վանահօր սեննակն, ամբողջապէս խոնարհուած են միաբանից սեննակների գլուխներն: Պարսպի երկարութիւնն է 40 մետր, լայնութիւնն՝ 18 մետր 50 սանթիմ: Անտառապատ է վանքիս շուրջն, որ ունի պատուական ջուր եւ մաքուր օդ:

ԻԷ. ՀԱՐԱԻ ԳԻՒՂ. Հիմնուած է Ա. լեռնագօտու[2] հիւսիսային կողմում մի ձորակի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք բնիկ, հողն բէկական եւ սակաւաբեր, բարեխառն՝ օդն եւ կլիման, պատուական՝ ջուրն, երկար կեանք՝ 85 տարի, եկեղեցին՝ Սուրբ Մեսրոպ, քարուկիր. քահանայ՝ մի: Ծուխ 65, ար. 245, իգ. 200:

ԻԸ. ՆԻՆԿԻ ԳԻՒՂ. Հիմնուած է Բ. կամ միջին լեռնագօտու հարաւահայեաց լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի. անջրդի, բայց բազմարդիւն, տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 100, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ չորս սիւների վերայ. քահանայ՝ երկու: Ծուխ 230, ար. 1041, իգ. 818:

ԾԱՌԵԽ ՈՒԽՏԱՏԵՂԻ

Գիւղիս հիւսիսային կողմում մի բարձր սեռի վերայ կայ հնուց մնացեալ մի մատրան աւերակ, որի մէջ դրուած է մի խիստ հին քարեայ խաչ: Ահա խաչս է ուխտատեղին, որի շուրջն բուսած են ձերունի ծառեր, որք անձեռնմխելի մնացած են իբր նուիրական ծառեր գիւղացու կացնի հարուածներից:

ԻԹ. ՂԱՒԱԽԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է մի ձորի մէջ, խեղդուած է տեսարանն եւ սեղմուած հորիզոնն շրջապատող լեռներով[1] բնակիչք կիսով՝չափ բնիկ, կիսով չափ տեղափոխուած Ղափանից, Խանձաձորից եւ չորս գերդաստան Խնձորստանից, հողն՝բէկական, բարեբեր. ամռան ծանր՝ օդն եւ կլիման, երկար կեանք՝ 65-75, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, երկարութիւնն՝17 մետր 40 սանթիմ. լայնութիւնն՝8 մետր 65 սանթիմ. «Շինեցաւ այս եկեղեցիս Ղաւախանու հասարակութեան աշխատանօք 1871 ամի»: Քահանայ՝ մի: Ծուխ 34, ար. 149, իգ. 131:

Գիւղիս հիւսիսային կողմում կայ հին հանգստարան եւ քարուկիր մատուռ, որի մէջ կան խաչարձաններ, որից միոյն վերայ. «Թվ. ՋՂԷ. ես Շահաւոր կանգնեցի խաչս հայր Պախա, մայր իմ Շահմար...»:

Լ. ԵՆԿԻՋԱՆ գիւղ. Հիմնուած է Նինկի գիւղից բաւական ներքեւ նոյն գիւղի ջրաձորի ձախ կողմում մի սեռի վերայ. բնակիչք հատուած եւ եկած Նինկի գիւղից. ամենայն ինչ նոյն, եկեղեցին նոր շինել է տալիս պ. Գալուստ Գարրիէլեան իւր սեպհական ծախքով, քահանան գալիս է Նինկի գիւղից: Ծուխ 20, ար. 115, իգ. 95:

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Ծառեխի սարի շարունակութեան վերջի ծայրին մօտ՝ բարձր սեռի վերայ շինուած է կաթնագոյն անտաշ քարով մի փոքր եւ հին եկեղեցի, որ ուխտատեղի է: Աւանդաբար ասում են, թէ Սուրբ Գրիգորիս Աղուանից Ա. կաթուղիկոսն հիմնարկել տուած է յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին: Դարերի ընթացքում քանիցս նորոգուած է:

ԼԱ. ՊԱՌԱԻԱԹՈՒՄԲ. Հիմնուած է սուրբ Լուսաւորչի եկեղեցու սարի վերջացած տեղի հիւսիսային ստորոտում, ջրաձորի աջ կողմում, բնակիչք տեղափոխուած են Մեծ-Սիւնեաց Պղնձահանքի մօտից, հողն՝ արքունի եւ բարեբեր, տեղական բերքերն՝նոյն (մանաւանդ տանձ, խընձոր, բոժոժ), սննդարար՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝85, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն, քահանան վալիս է Կղարծուց: Ծուխը հաշուած է Կղարծի գիւղի վերայ:

ԼԲ. ԿՂԱՐԾԻ ԳԻՒՂ. Հիմնուած է Ա. լեռնագօտու հարաւային կողմում, Պառաւաթմբի հիւսիսային հանդէպ, նոյն ջրաձորի ձախ ափի բարձրութեան վերայ, դիրքն՝արեւելահայեաց, բնակիչք՝բնիկ, հողն՝բէկական, արդիւնաւէտ. տեղական բերքերն՝նոյն. պատուական՝օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝100. եկեղեցին՝յանուն Սրբոց Թարգմանչաց, քարուկիր, հոյակապ չորս սիւների վերայ, շինուած բնակչաց ծախքով, երկարութիւնն՝18 մետր 75 սանթիմ, լայնութիւնն՝ 12 մետր 60 սանթ. քահանայ՝ մի: Ծուխ 165, ար. 604, իգ. 585:

Եկեղեցումս կայ.

Ա. Մասն կենաց փայտից՝ զետեղուած մի արծաթեայ խաչում:

---

1 Սոքա կանխաւ բնակած են հին գիւղում, որ կայ այժմեան շինից ներքեւ, որի մէջ դեռ երեւում է Բեալ (երեալ, երեւի) անուն եկեղեցին եւ որի մօտ՝ հին հանգստարանն:

2 Բարձր գագաթն Խաչախուր՝ 5028 ոտք:

1 Արեւելեան սարի բարձ. 3780 ոտք:

Բ. Աւետարան գրչագիր՝ գրուած հասարակ թղթի վերայ, մեծագիր, պատկերազարդ:

Յիշատակարանից. «Զաւրութեամբն Աստուծոյ կատարեցի զսուրբ աւետարանս զայս յաստուածախնամ կղզիս Աղթամար, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի եւ ի թուականութեան Հայկազեանս տումարի ՋԻԶ. ի դառն եւ ի նեղ ժամանակիս:

Արդ ես Յովհանէս ետու գծագրել զսուրբ աւետարանս...»:

Շատ յետոյ գրուած է. «Ի վերջին դառն եւ ի նեղ ժամանակ խուժադուժ ազգ նետողաց՝ տաճկաց ազգաց չարամահ եղեն. Համզաբէկ անուն պարոն եւ այլ անթիւ զաւրք հրամանաւ ինքնակալին՝ որ կոչի Շահ Իսմայիլ՝ գնացին ի վերայ աշխարհին Քուրդստանայ, աւերումն բազմապատիկ ածին ի վերայ Հայոց, զորն սպանելով եւ զոր գերելով, գիւղ եւ քաղաք, վանք եւ անապատ միահաղով (ոյն) յափշտակեցին զՀայք եւ բերին զսուրբ աւետարանս զերմամբ ի յերկիրն, որ կոչի Արցախ, եւ հանդիպեալ այսմ աստուածաշունչ բուրաստանիս քահանայ մի եւ տեսեալ զսա... եւ գնեաց զանգին մարգարիտս ի հալալ ընչից իւրոց, եւ դին սորա ՁՌ. դահեկան եւ ետ յառաջնորդ Գանձասարու աթոռոյն եւ ծախեաց զսա ի Թաւրոս էրեց....»:

Մատթէ ուխտատեղի

Գիւղիս հիւսիսային հանդէպ մի տեսարանաւոր բլրի վերայ կայ մի հին մատուռ, որ շրջապատուած է ծերունի ծառերով: Ասում են աւանդաբար. «Խաչարձանիս տակ ամփոփուած է Մատթէ անուն քահանան, որ նահատակուած է անհաւատ բռնաւորներից հին ժամանակներում»:

ԼԳ. ՄԶԿԱՊԱՏ[1] գիւղ. Հիմնուած է այն բարձր լեռնաշղթայի վերայ, որ ճիւղաւորուած է Ա. լեռնագօտուց եւ հասած մինչեւ Ամարաս վանքի հիւսիսային կողմն. բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի եւ բէկական եւ արդիւնաւոր. տեղական բերքերն՝ նոյն. օդն եւ կլիման՝ գերազանց. ջուրն՝ պատուական, երկար կեանք՝ 100 տարի, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին[2], քարուկիր. քահանայ՝ մի: Ծուխ 83, ար. 465, իգ. 362:

ԼԴ. ՔԱՐԱՀՈՒՆՋ (ունչ) ԳԻՒՂ. Հիմնուած նոյն լեռնաշղթայի հարաւային կողմում. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, միջակ արդիւնաւոր, տեղական բերքերն՝ նոյն, օդն եւ կլիման՝ ոչ այնքան լաւ. երկար կեանք՝ 65-70. եկեղեցի չկայ, քահանան գալիս է Քերթից, որ խիստ մօտ է: Ծուխ 36, ար. 125, իգ. 95:

ԼԵ. ՔԵՐԹ ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն սարի հարաւ-արեւելահայեաց ստորոտում, բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, անջրդի եւ բազմարդիւն, տեղական բերքերն՝ նոյն, ջուրն՝ պատուական. օդն եւ կլիման փոքր-ինչ բարեխառն, երկար կեանք՝ 75-80. եկեղեցին՝ Սուրբ Գէորգ. քարուկիր. քահանայ՝ մի: Ծուխ 56, ար. 194, իգ. 150:

ԱՄԱՐԱՍ ՎԱՆՔ (15)

Հիմնուած է այն երկրալեզուի վերայ, որ Մուղան դաշտից կամ գաւառից մտած է Խազազի եւ Լուսաւորչի սարերի մէջ եւ կազմած դուրալի հովիտ, որի միջից հոսում է Ամարաս վտակն[3]: Վանքս ի հիմանէ նորոգ կառուցեալ է 1858-ին չորս հաստատուն սիւնների վերայ ամբողջապէս սրբատաշ կաթնագոյն քարով: Ունի մի աւագ եւ երկու փոքր խորաններ, տասն մեծ-մեծ լուսամուտ, մի դուռն արեւմտեան կողմից, երկու խորհրդարան, մի աւազան եւ մի փոքր կաթուղիկէ: Աւագ խորանի տակ է շատ վաղուց շինուած հնութիւնն, որի մուտքն բացուած է դասի հարաւային կողմի բեմի մօտից. տասնեւութ սանդուղներով իջնում է մինչեւ յատակի մատուռն: Ստոր-

1 Մէջքն (ետեւի կողմն) պատուած, քանզի բերդն շատ հեռի չէ գիւղից:

2 Եկեղեցուս մօտ է Վարդան անուն նահատակի մատուռն:

3 Վտակս առնում է իւր սկիզբը Սօս, Քերթ, Քարահունջ, Հիրեր, Խերխան գիւղերի աղբիւրներից եւ մօտերքից եւ ջրում Ամարասի արտերը, այգիները եւ պարտէզները:

երկրեայ շինութեանս երկարութիւնն (ներսից չափելով) 3 մետր 70 սանթիմ, լայնութիւնն 1 մետր 90 սանթիմ: Փոքրիկ մատուռս, որ ամբողջապէս շինուած է խազազի հանքի սրբատաշ քարով, բացի հարաւային մուտքից ունեցած է եւ միւս մուտք արեւելեան կողմից, որ փակ է այժմ:

Հիւսիսային դասում առաջին լուսամտին պատկից շինուած է մի գեղեցիկ տապանաքար, որի տակ է ամփոփուած Սուրբ Լուսաւորչի Թոռին՝ Աղուանից Ա. կաթուղիկոս Գրիգորիսի մարմինն: Ահա այս է գլխաւոր ուխտատեղին: Վանքիս երկարութիւնն է 23 մետր, լայնութիւնն՝ 13 մետր 33 սանթիմ:

Տաճարումս է մասն սրբոյն Գրիգորիսի գետեղուած մի արծաթեայ, ոսկեզօծ, ականակուռ եւ մատանիներով զարդարուած աջի մէջ, որ կրում է.

«Աջ սրբոյն Գրիգորիսի Աղուանից հայրապետին. շինեցաւ յամին 1870 ի Շուշի քաղաքի անվարձ աշխատութեամբ շուշեցի ոսկերիչ Միրզաջանայ Խոջաբաղրեանց, Գրիգորի Բատամեանց եւ Առաքելի Յարութիւնեանց»:

Տաճարս ունի քարաշէն, ամրակազմ, քառակուսի եւ բարձրագոյն շրջապարիսպ, չորս անկիւններում չորս աշտարակներ եւ պատերի վերնամասից հրացան արձակելու ծակեր, որք շինուած են ռուսներից. երբ այստեղ էր մաքսատունն: Պարսպիս երկարութիւնն արեւելքից արեւմուտք 94 մետր է. լայնութիւնն՝ 56 մետր 40 սանթիմ: Պարսպիս ներսում արեւելեան կողմում կայ 5 մեծ սենեակ (այժմ՝ դոմ), հարաւային կողմում կայ 6 սենեակ, արեւմտեան՝ 5 (այժմ 4-ն անկարգ), հիւսիսային՝ 8 (այժմ 5-ն անկարգ): Հարաւային մասում միայն կայ վերնայարկ երկու աւերուած սենեակ: Շինութեան մէջ ամենաշքեղ մասն եղած է միայն սենեակներս, որք շինուած են տաշուած կաթնագոյն քարով եւ ունին չորս կողմերից զոյգ-զոյգ լուսամուտներ եւ մէն մի լուսամուտ ունի մի-մի բաժանարար քարեայ սիւն[1]: Ահա այս եղած է երբեմն կաթուղիկոսարան Աղուանից: Ընդհանրապէս անմաքուր, անկարգ եւ անխնամ է այս պատուական վանքն ամենայն մասամբ, որ այժմ ընկած է բարոյապէս եւ նիւթապէս:

Վանուցս անշարժ կալուածներն են.

Ա. Վարելահողեր.

Բ. Այգի եւ թթենեաց պարտէզ.

Գ. Մի ջրաղաց: Վանահայրն է մի տիրացո՞ւ....:

Ամարաս աւերակ գիւղաքաղաք

Վանքիս հարաւային կողմում, ջրի աջ կողմի բարձր լանջի վերայ կայ ընդարձակ աւերակ: Տնաբակերից երեւում է, որ տներից ամենամեծ մասն շինուած է եղել Արցախի յատուկ եւ հին ձեւով՝ գետնափոր: Ոչինչ պակաս ընդարձակ է եւ գիւղաքաղաքիս հանգստարանն, որ մօտ է աւերակիս:

ԼԶ. ՍՕՍ ԳԻՒՂ. Հիմնուած է Լուսաւորչի սարի արեւմտահայեաց ստորոտին մօտ լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ կիսով չափ արքունի եւ կիսով չափ՝ բէկական, անջրդի, բայց բարեբեր եւ հացաւէտ. տեղական բերքերն՝ նոյն, օդն եւ կլիման՝ սենդարար, ջուրն՝ գովելի, երկար կեանք՝ 85-90. եկեղեցին Սուրբ Գէորգ, քարուկիր, առանց կամարի եւ սեան. երկարութիւնն է 12 մետր 60 սանթիմ, լայնութիւնն 7 մետր 90 սանթիմ:

Դրան ճակատակալ քարի վերայ. «Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս»: Քահանայ՝ երկու: Ծուխ 107, ար. 385, իգ. 302:

Լուսաւորչի սար. Բարձրացած է գիւղիս գլխին վերեւ՝ արեւելեան հանդէպ: Սարիս կատարին վերայ կան շատ թափուած քարեր, տնաբակեր եւ եկեղեցու աւերակ:

Աւանդութիւն. Աւանդաբար պատմում են. «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կողմերումս քա-

1 Ցաւալի է տեսնել, որ քանդուած է այս հնադարեան պատուական հնութիւնն: Ասում են, թէ՝ «Մի տիրացու քանդած է առանց հրամանի...»:

բոզելու եւ եկեղեցիներ հիմնարկելու ժամանակ գիշերն բարձրացած է սարիս գլուխն եւ աղօթքով լուսացրած գիշերները: Սուրբ Գրիգորիս Աղուանից կաթուղիկոսի մարմինը երբ փախցրած բերում են նորա աշակերտներն Դարբանտից այստեղ, նահատակել տուող Թագաւորի զօրականներն, փախցնողների ետեւից ընկած, գալիս են մինչեւ այստեղ: Սակայն աշակերտներն ապաւինելով յԱստուած եւ դիմելով Սուրբ Լուսաւորչի աղօթած տեղն, ազատ են մնում հալածողներից եւ ապա նահատակուած Սուրբ Գրիգորիսի մարմինը տանում Թաղում Ամարասի վանքում եւ իրանք փախչում դէպի Հայաստան»:

ԵՂԻՇԱՅ ԿՈՒՍԻ ԱՆԱՊԱՏ

Հիմնարկուած է այն բարձրադոյն գագաթի վերայ, որ արձանացած է Սօսի, Լուսաւորչի սարի, Քերթի եւ Ղուզի-Ճարտարի մէջ: Հանգստարան է անապատիս շուրջն. գագաթս զարդարուած է թեղի եւ տխկի ծառերով եւ հին ու նոր տապանաքարերով: Մենաստանս շինուած է անտաշ որձաքարով, իսկ կամարներն եւ բոլոր անկիւնաքարերն՝ սրբատաշ քարով: Մենաստանս, որ կանգնած է երկու սիւների վերայ, ունի երկու փոքր եւ մի աւագ խորան, երկու խորհրդարան, աւազան, վեց լուսամուտ, քարեայ խաչկալ, մի դուռն՝ արեւմտեան կողմից, մի փոքր կաթուղիկէ իբրեւ զանգակատուն եւ մի փոքրիկ խորանաձեւ գերեզման՝ աւագ խորանի բեմի տակ, որի դուռն բաց է դէպի դասի մէջ տեղն: Ահա այս է Եղիշա Կուսի գերեզմանն, որ մեծ ուխտատեղի է: Անապատիս երկարութիւնն է 15 մետր 95 սանթիմ, լայնութիւնն 9 մետր 70 սանթիմ: Քարեայ խաչկալի հարաւային դրան հիւսիսային սեմի վերայ. «Յիշատակ է Համասուտանց Միրզախանի որդի Մանուէլ վարդապետիս այս խաչկալս. եղբարքն իմ Պապան եւ Կանլալան, քորար (քորք) իմ Գուլասմար, Ինթաղիհ, ծնողքն իմ Մումխանում, կողակից իմ Նազլու, որդի իմ Հախնազար, Շահպատ, Սիրուն, Վռամին, Մազրվանին եւ դստերն իմ Բաջուն, Դօսդաշին թվ. ՌՃԴ.»:

Խաչկալի հիւսիսային կողմում մի խաչքարի վերայ.

«Ղազար, կողակից ուր (իւր) Նազլու թվ. ՌՃԴ.»:

Հիւսիսային խորանի ճակատակալ քարի վերայ.

«Ես Աղէս կանգնեցի զխաչս փրկութիւն ինձ եւ կենակցին իմոյ, որդւոյ եւ դստերաց իմոց ՋԼ.»:

Կարծում ենք, որ խաչքարս գերեզմանից վեր առած եւ դրուած է այստեղ:

Դրան ճակատակալ քարի վերայ[1].

«Կարողութեամբ ամենազօրին Աստուծոյ ես նուաստ տէր Յոհան անձամբ տկար աբեղայս եւ որդէգիր Փոքր տէր Յոհանս շինեցաք սոյն զեկեղեցիս ըստ անուան Սրբուհոյ Կուսին Եղիշէի ի կաթուղիկոսութեան տեառն Երեմիայի եւ տանս Աղուանից որ 'ի մայր աթոռոյն Գանձասարայ վասնորոյ յիշել աղաչեմք հանդերձ ծնողովք մերովք ՌՃԻԴ.»:

Անապատիս որմին արեւմտեան արտաքին երեսն խաչաքարդուած է խաչքարերով:

Սոյն երեսի լուսամտի գլխին.

Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ես անարժան ուստայ Կաբրրելս շինեցի այս եկեղեցիս ի ձեռամբ իմով, ով կարդա, մէկ բերան ողորմի ասէ. խաչս յիշատակ է Գաբրելիս եւ ծնողաց իմոց եւ դստերաց եւ որդոց իմոց»:

ԼԷ. ՂՈՒԶԻ-ՃԱՐՏԱՐ (Հիւսիսահայեաց Ճարտար). Շինուած է նոյն սարի հիւսիսային կողմում, բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, առատաբեր, տեղական բերքերն՝ նոյն, նշանաւոր է ցորենն եւ գարին, գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 110 տարի, եկեղեցին՝ Սուրբ Գէորգ, կառուցեալ մի կամարի վերայ, երկարութիւնն՝ 15 մետր 50 սանթիմ, լայնութիւնն՝ 8 մետր 60 սանթիմ, քահանայ՝ երկու: Ծուխ 145, ար. 580, իգ. 465:

1 Դրանս հիւսիսային սեմի վերայ. «Տէր Եղիազարս, որ ձեռնադրեցաւ յաբեղայ ՌՃՀԳ.»:

Եկեղեցումս կայ մի փոքրագիր թղթեայ ձեռագիր աւետարան, պատկերազարդ. անյայտ է գրողի անունն, միայն յայտնի է, որ ստացած է Յովհաննէս անուն ոմն:

Մասունք Երից մանկանց մի արծաթեայ փոքր խաչի մէջ:

ԼԸ. ԿԻԻՆԻ-ՃԱՐՏԱՐ (Արեգդէմ Ճարտար). Հիմնուած է բերդասարի հարաւային կողմում, գիրքն հարաւ-արեւելահայեաց, միայն մի ձորակով բաժանուած Ղուզի-Ճարտարից. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, անջրդի, սակայն բազմարդիւն, տեղական բերքերն՝ նոյն (այգի, թթենի գովելի, հռչակուած է գիւղիս ցորենն), գերազանց՝ օդն, կլիման, ջուրն եւ տեսարանն. երկար կեանք՝ 111 տարի, եկեղեցին՝ Ամենափրկիչ, քարուկիր, կառուցեալ մի կամարի վերայ, ունի միայն աւագ խորան. երկարութիւնն է 11 մետր 95 սանթիմ, լայնութիւնն՝ 7 մետր 55 սանթիմ: Դրան ճակատակալ քարին վերայ. «ՌՄԼՋ. թվին. այս է Ամենափրկչին սուրբ եկեղեցիս, սա եղեւ ոքեւոր յիշատակ տէր... Իյ. Խանումէն»: Իսկ վերեւ.«Ուստայ Թիւնի» (Յարութիւն շինող վարպետի անունն է): Քահանայ՝ մի: Ծուխ 260, ար. 1095, իգ. 855:

Գիւղումս կայ Ս. Գրիգորեան միդեսեան ուսումնարան տղայոց, աշակերտք մօտ 50, թոշակաւոր 38, ձրիավարժ 10, միամեայ ռոճիկ վարժապետի՝ 220 ք.:

ԿՈՀԱԿ ՈՒԽՏԱՏԵՂԻ

Մի աւերակ մատուռ է Կոհակ անուամբ, որ հիմնուած է գիւղիս անդում մի խութի վերայ: Աւերակս ծածկուած է ճապկի ծառերով: Խութիս գագաթն ունի մօտ երկու կալաչափ մեծութիւն: Ուխտի օրն է ամէն Համբարձման տօնն:

Դավէ-չիչէք

Այս անունը կրող աղբիւրն բղխում է գիւղիս արեւմտեան հանդէպ եղած քերթիցն եւ թափւում է իւր տակի փոսին մէջ: Կարմրուկ (տեղական բարբառով խաւարթնը) ախտով հիւանդացեալները բերում եւ լողացնում են փոսի միջի ջրովն, որով բժշկւում է հիւանդն:

Բերդի նահատակ

Աղբիւրիցս վերեւ մի բարձր ապառաժի վերայ կայ մի կիսաւեր մատուռ, որ իւր մէջ կրում է իւր արեամբ ներկուած մի նահատակի մարմինը, որի անունն անյայտ է: Միայն յայտնի է, որ ուխտատեղի է խիստ հին դարերից աւանդաբար մնացեալ:

ԼԹ. ԽՈՒՆԸՇԻՆԱԿ (Խուն-շինակ). Հիմնուած է բերդասարի արեւելահայեաց լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, անջրդի, բայց բազմարդիւն, տեղական բերքերն՝ նոյն, օդն եւ կլիման փոքր-ինչ ծանր ամռան, տեսարանն՝ պատուական, ջուրն՝ սննդարար, երկար կեանք՝ 80-85. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, կամարակապ, կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւնն՝ 17 մետր 45 սանթիմ, լայնութիւնն՝ 8 մետր 80 սանթիմ, քահանայ՝ երկու:

Արձանագրութիւն դրան ճակատակալ քարի վերայ:

«Ի ՌՅԹ. (1860) Կամաւն Աստուծոյ կառուցաւ եկեղեցիս Խնշինագ գեղջ անուն սուրբ Աստուածածնի սեպհական արդեամբք եւ ծախիւք Շուշի քաղքցի բարեպաշտօն, ազնուազգի աղա Հայրապետ բէկի Դօլուխանեանց ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ազնուհւոյ ամուսնոյն իւրոյ Բակումայ Մելիք Բէկլարեանց եւ ծնողաց իւրոց հօրն Բաղդասար բէկի, մօրն Նազլու Խանին»:

Ձեռագիր աւետարան փոքր գիրքով, գրուած թղթի վերայ, պատկերազարդ, ընկած է Ղուկաս աւետարանչի պատկերն: Գեղեցիկ եւ հարտարարուեստ են պատկերներն, նախշերն, ծաղիկներն եւ թռչնագրերն, ընտիր ոսկեզօծն եւ ներկերն:

Յիշատակարանից. «Որ (Ամեն. երրորդութիւն) ետ կարողութիւն տկար եւ մեղապարտ, անարժան Գրիգոր երիցու, որ ծաղկեցի զիա (զայս) եւ հասայ 'ի յաւարտ սուրբ աւետարանիս. ծրա-

գրեաց սա 'ի յաւնդանց[1] ձեռամբ Վարդան երիցու... Մահտեսի Թադիաջի խոջա Գազպարն եւ որդի նորա խոջա Յակովբջանն յայսմ տարւոջ եկին ի Վան, որ էր թուականիս Հայոց ՌՃ. եւ ԻԱ. եւ ստացան զսա ի հալալ վաստակոց իւրեանց ի յիշատակ իւրեանց եւ իւրեանց ծնողացն»:

Զգիտենք ի՞նչ պատճառաւ յետոյ աւետարանս ընկած է Աւետարանոց տանն. «Գրեցաւ ի 1845 ամի փետ. 18-ին. այս յիշատակ հայերէն աւետարանս տուեալ եղեւ ի գիւղն Խունիշինակ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն որ է ընծայողն Չանաղչու (Աւետարանոց) գիւղին բնակիչ Մելիք Ջահանբաղշի որդի դուստր Նանակուլ Մելիք Շահնազարեանց եւ այլ մին սուրջառ (շուրջառ) իւր արծաթի չափոաստովն...»:

Գրչագիր մաշտոց. գրուած է թղթի վերայ. «Արդ, աղաչեմ զՁեզ... յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զԱստուածատուրն եւ զեղբայրն իւր զՄարգարէն եւ զծնողսն նորա եւ զՅակովբ քահանայ եւ զՍիմէոն քահանայ, որ աշխատեցաւ ի գրելն...»: Մաշտոցս եկեղեցուս նուիրած է շուշեցի տիրացու Անաստաս Տէր-Մկրտչեանց 1855-ին դեկ. 1-ին: Ծուխ 96, ար. 485, իգ. 325:

Խ. ԿԻՇԻ ԳԻՒՂ. Հիմնուած է բերդասարին հիւսիսային կողմում մի հարաւահայեաց լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ բէկական, ամենամեծ մասամբ անջրդի. բայց արդիւնաւէտ. տեղական բերքերն՝ նոյն (բոժոժ, թութ, խաղող առատ են), օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական. տեսարանն՝ զմայլելի, երկար կեանք՝ 60. եկեղեցի՝ Սուրբ Մինաս, թաղակապ. երկարութիւնն՝ 16 մետր 65 սանթիմ, լայնութիւնն՝ 7 մետր 85 սանթիմ. քահանայ՝ մի: Գիւղումս կայ Եսթանասուն այրի կին: Պատճառն այն է, որ մարդիկ ամռան ջերմ ամիսներում աշխատում են Մուղանի դաշտաբերանում եւ վախճանւում անժամանակ: Ծուխ 127, ար. 584, իգ. 481:

ՈՍԿԵԱՆՑ ԽԱՉ

Այս անուամբ կոչւում է այն վաղնմի սրբավայրն, որ կայ գիւղիս աղբիւրի մօտ. ջրաձորի աջ ափում եւ որ ունի այժմ քառակուսի ձեւ, քարուկիր շինուած: Այժմ բաց է շինութեանս դլուխն եւ մի ծերունի թթենոնի ծառ բուսած է սրբավայրիս մէջ, ուր կայ եւ մի քարեայ խաչ, որի վերայ վառում են մոմեր: Դրան սեմի վերայ. «ԹՎ. ՌՅ. յիշատակս յօրինեցաք Սայեամ կամ (եւ) Բաղդասար Յարութիւնեան Բաղրեանց»: Սրբավայրիս մօտ եղած հին հանդուստարանում. «Այս է տապան Պակնայզարի որդի Աղաբէկ քոխային (գիւղապետին) ՌՃԼԲ.»:

ԽԱ. ՍՊԻՏԱԿ ՇԷՆ. Հիմնուած է Կիշի գիւղի հիւսիսային կողմում, մի հարաւ-արեւելահայեաց սարալանջի վերայ: Այն դեղեցիկ հովիտն, որ վտակաձորով[2] ներս մտած է Մուղանից խբրեւ երկրալեղու, բաժանած է Սպիտակ գիւղի սարս Կիշու սարից: Բնակիչք գաղթած են Խոյից. հողն՝ բէկական եւ արդիւնաւոր, տեսարանն՝ հիանալի եւ նախանձելի, տեղական բերքերն՝ նոյն, դերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն, երկարութիւնն է 15 մետր 33 սանթիմ. լայնութիւնն՝ 7 մետր, քահանայ՝ մի:

Ծուխ 70, ար. 220, իգ. 180:

Ամենափրկիչ (Զարկեա մարագ) ուխտատեղի

Սպիտակ շէն եւ Եմիշջան գիւղերի միջեւ, մի բարձրավանդակի վերայ (3192 ոտք), խիստ հնուց շինուած է մի մատուռ, որ այժմ կիսաւեր է: Բայց կանդուն մնում է տակաւին վէմ քարն եւ մի խաչարձան:

Ուխտատեղիս ծածկուած է մեծ-մեծ ծառերի փառաւոր հովանու ներքեւ, իսկ իւր շրջապատն լի է հին եւ նոր խիտաուխիտ ամփոփեալներով: Կանխաւ ուխտատեղուս մօտ եղած է շարքով շինուած մարագներ, վասն որոյ կոչուած է եւ Զարկեայ մարագ:

1 Թերեւս գծագրեցաւ այս ընտիր աւրինակաց:
2 Վտակս առնում է իւր սկիզբը Նինկի, Կղարծի եւ Պառաւաթումբ գիւղերի եւ անդերի աղբիւրներից:

ԽԲ. ԵՄԻՇՋԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Ամենափրկչիս հիւսիսային ստորոտում մի սարահարթի վերայ. բնակիչք՝ մեծ մասամբ տեղացի, իսկ փոքր մասամբ՝ գաղթած Պարսկաստանից. հողն՝ կիսով չափ արքունի եւ կիսով չափ՝ բէկական, տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90. եկեղեցին՝ Սուրբ Ստեփաննոս, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի: Ծուխ 62, ար. 222, իգ. 180:

ԽԳ. ԱՇԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է գրեթէ Եմիշջան գիւղի արեւմտեան կողմում, մի ձորի հարաւահայեաց լանջի վերայ. բնակչաց կէս մասն բնիկ, իսկ մնացեալ մասն տեղափոխուած է Զրաբերդից. հողն՝ արքունի եւ մասամբ բէկական, տեղական բերքերն՝ նոյն. պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 95 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, շինուած հասարակութեան ծախքով երեք կամարների վերայ. երկարութիւնն՝ 17 մետր 95 սանթիմ. լայնութիւնն՝ 8 մետր 85 սանթիմ: Աւազանի վերայ. «Յիշատակ Դաստանց Թա.»:«Յիշատակ Սահակ Աբրահամեան»: Քահանայ՝ մի: Ծուխ 104, ար. 415, իգ. 270:

Կարմիր աւետարան

Գիւղիս մէջ, մի մատուռում, որ հիմնուած է ձորի ձախ կողմում, կայ մի ձեռագիր աւետարան՝ մեծադիր. գրուած թղթի վերայ, պակասաւոր (թափուած են թերթերից) անյայտացած է եւ յիշատակարանն:

Յիշատակարան

Գիւղումս պ. Յակովբ Իշխաննանցի մօտ կայ մի հնատիպ ճաշոց, որի մէջ համբարձման պատկերի նեսւ գրուած է. «Ի Հայրապետութիւն Աղուանից տէր Ներսէս Կաթուղիկոսն էր ամաց ՃԻ. էր փիթեալ (փթեալ, զառամեալ) իբրեւ ծերունի»... «Յիշատակ է ճաշոց գիրքս Իշխանի որդի Բալու քոխին (գիւղապետին) եւ իւրեան թոռն Իշխանին, իւր կողակից Մարեանին, եւ իւր մայր Խանփերին եւ Իշխանին եւ իւր կողակից Քամիլին եւ որդի Սարգիսին եւ դուստր Ազիզգուլին, Բալուի որդի Աւթանդիլին, Գրիգորին, իւրեան դուստր Անային, իմ քոյր Խանումին, Ակուլին իւրոյ... որ է ի գաւառէն Վարանդու ի գեղջէն Աշանու ի ծեռն գերընդիր... Մարտիրոս վարդապետին... թուական մեր Հայոց ՌՃՂԸ. էր... Մարասու (Ամարասայ) առաջնորդն էր Գասպար վարթապետն, իշխանն էր Ալլահդուլի Սոլթանն, որ է Զարայպերթու, այսինքն ազգաւ հայ եւ քաջամարդ, հախթող ընդ թշնամին իւր, Աստուած ինքն երկար կենօք պահեսցէ ամենայն պատայհարաց, ամէն»:

ԽԴ. ՂԶՂԱԼԱ ԳԻՒՂ. Հիմնուած է Աշանի արեւելեան կողմում, սարերի մէջ մի գոգաւոր ձորի արեւելահայեաց լանջին վերայ. բնակչաց ամենամեծ մասն բնիկ, մի քանիսն փոխադրուած Զրաբերդի Եղակեր գիւղից, հողն՝ բէկական, գինեէտ եւ բարեբեր, տեղական բերքերն՝ նոյն, նշանաւոր է գինին, թութն, նուռն, դեղձն, թուզն եւ տոմբալանն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, գովելի՝ տեսարանն. երկար կեանք՝ 85, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, կամարակապ. երկարութիւնն է 14 մետր 30 սանթիմ, լայնութիւնն՝ 8 մետր 12 սանթիմ:

Եկեղեցուս դրան ներսում, արեւելեան Բ. կամարի վերայ. «Ես Ոհանէս շինեցի եկեղեցիս ի հալալ ինչից իմոց, հայրն իմ Թուման եւ մայրն իմ Իւսսան, կողակիցն իմ Խանում, հանգուցեալ որդին իմ Ա...»: Միեւնոյն կամարի հիւսիսային կողմի վերայ. «Ես Յովհաննէս եպիսկոպոս վերակացու շինեցի եկեղեցիս... հայրն իմ Տաղտան, մայրն իմ Խոնտի: Ես եղիա քահանայն, տէր Պողոս, տանուտէրն Վէլիճան, եկեղեցուս վարպետ Կէսբեր Յակոբ»:

Քահանայ մի: Ծուխ 103, ար. 471, իգ. 337:

Եկեղեցումս կայ մի փոքրադիր ձեռագիր աւետարան, առանց պատկերի եւ միանգամայն պակասաւոր: Յիշատակարանից. «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՌՀԲ. ձեռամբ մեղսամած եւ փծուն գրչի Աւետիքի ի քաղաքն Հալապ ի դուռն սուրբ Քառասնիցն ի դառն եւ ի նեղ ժամանակիս: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զստացող սուրբ աւետարանիս Դիպխիսցի

խոճա Մահտեսի Հովադեղն եւ զկողակիցն Խասխաթունն... Հովադեղն որ գնաց ի Երուսաղէմ եւ հանդիպեցաւ ի Հալապ, էառ զսուրբ աւետարանս յիշատակ ի դուռն Կաթուղիկէ Սուրբ Աստուածածնին»:

Ձեռագիր մաշտոց

Գիւղիս հոգեւոր հովիւ բարեկրօն Թովմաս քահանայ Տէր-Գրիգորեանցի մօտ կայ մի ձեռագիր մաշտոց, որի յիշատակարանից կարողացանք քաղել միայն հետեւեալը. «Գրեցաւ գիրքս, որ կոչի մաշտոց, ձեռամբ... թվին Հայոց ՌՃԻ.»: Մաշտոցիս առաջին թերթի առաջին երեսին. «Յիսուսի Քրիստոսի ծառայ Աստուծոյ տէր Գրիգորէս գրեցի. ես առէ (գնեցի) մաշտէց (մաշտոցս) ա. թուման Եղագրցի Մեծ տէր Սարգսի որդի Ապրհամի որդի տէր Գրիգորէս առ էս մաշտէս, որ Փաթալի խանն[1] եկաւ Շուշի դալին երայ (վերայ) կուի թվին ՌՄԺ.»:

Փոքր նահատակ

Կոչւում է այն նորաշէն եւ կիսատ մատուռն, որ կայ գիւղիս արեւելեան հանդէպ մի բարձրագոյն բլրի գագաթին վերայ: Նահատակն վաղուց ամփոփուած է, իսկ մատրանս շէնքն քանիցս նորոգուած է ի հիմանէ:

Մեծ նահատակ

Մի քարուկիր մատուռ է, շինուած այն բարձր սարի գագաթին վերայ (2492 ոտք), որ սահման է Աշան, Նոր-շէն եւ Ղզղալա գիւղերի եւ որ առանձնացած նայում է Աղուէ գաւառի դաշտի վերայ: Նահատակի գերեզմանն գտնւում է մատրանս մէջ, որի շրջապատում կան խուցեր: Երեւի թէ փոքր միաբանութիւն եղած է այստեղ. մինչեւ ցայսօր վարդապետի տափ (գետին) են անուանում արտաքսը, որ կայ մատրանս ստորոտում փոքր ներքեւ սարալանջին վերայ, որի մէջ կայ մի շուքարան ծառ: Մատրանս մօտ եւս կայ հանգստարան:

Խե. ՆՈՐ-ՇԷՆ. Հիմնուած է Հացի գիւղի արեւելեան կողմում, մի բարձր սարի ստորոտի մօտ. դիրքն՝ արեւելահայեաց. բնակիչք՝ գաղթած Ղարադաղից, Կիւլստանից, Կուսապատից, Բանանց գիւղից եւ Ծամ-ձորից. հողն՝ բէկական, խիստ սակաւ, անջրդի, բայց այգեւէտ, բարեխառն՝ օդն եւ կլիման, սննդարար՝ ջուրն, երկար կեանք՝ 95-105. եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, խիստ վտանգուած, քահանայ՝ մի: Ծուխ 70, ար. 272, իդ. 205:

ԽԶ. ՀԱՑԻ ԳԻՒՂ. Հիմնուած է Կղարծի գիւղի հիւսիսային եւ Նոր-շէնի արեւմտեան կողմում մի խոր ձորի հարաւ-արեւելահայեաց լանջի վերայ (լանջիս նեւեն-արեւմտեան կողմն քարեայ բարձր սար է[2]. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, բարեբեր, տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն՝ օդն եւ կլիման եւ գովելի՝ ջուրն, բայց խեղդուած տեսարանն լեռներով, երկար կեանք՝ 85, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, կամարակապ, շինուած հասարակութեան ծախքով, քահանայ՝ երկու՝ հայր եւ որդի: Ծուխ 143, ար. 545, իդ. 450:

ԲՌԻ ԵՂՑԷ (եկեղեցի)

Այսպէս է անուանում ժողովուրդն այն ընդարձակ հին հանգստարանը եւ եկեղեցիները, որք կան գիւղիցս ներքեւ ջրաձորի ձախ ափի ճանապարհի գլխին: Հանգստարանիս մէջ կայ երկու մատուռ, երեք բեմ եւ երկու եկեղեցի: Մատուռների եւ եկեղեցեաց մէջ նստած են յատկապէս վանահայրեր: Կարծում ենք, որ Աղուանից թագաւորաղների եւ իշխանազների մարմինները ամփոփուած լինին այս առանձնապէս պատրաստուած շինութեանց մէջ եւ աղօթաւոր վարդապետներ կարգուած պաշտօնապէս: Այսպէս էին Խոթայ, Խաթրայ, Գանձասարայ, Եղիշառաքելի, Հոռնկայ եւ այլն վանքերն եւս:

Ա. մատուռն փոքր է եւ լանջի ստորոտում: Խաչազարդ է մատրանս արեւմտեան արտաքին ճակատն եւ խոնարհուած ամբողջ գլխի ծածքն, որի դրան հիւսիսային սեմին վերայ.

«Զ. Շահէն վարդապետ եկեղեցոյս յիշեցէք ի Տէր»: Արտաքուստ դռնից վերեւ. «...քահանայ եւ եղբայր իմ Վարհամ եւ Վարհայք.... ունափա շինեցաք զեկեղեցիս բազում աշխատանաւք յեպիսկոպոսութեան տէր Յովհաննիսի եւ տէր Ներսիսի յիշատակ հոգոց ազգաց եւ ծնողաց մերոց, որք կարդայք, յաղաւթս յիշեցէք աշխատողք եկեղեցոյս»:

Բ. մատուռն, որ ողջամբ կանգուն է, ունի 6 մետր 50 սանթիմ երկարութիւն, 4 մետր 12 սանթիմ լայնութիւն եւ սիրամարգի պատկերներ եւ սոյն արձանագրութիւնը. «ԶԽաչենիկ վարդապետ սուրբ եկեղեցոյս յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս»:

Ա. բեմն շինուած է Ա. մատուռից փոքր-ինչ վերեւ: Բեմիս բարձրութիւնն 3 մետր 58 սանթիմ է, լայնութիւնն՝ 3 մետր 22 սանթիմ, հաստութիւնն՝ 1 մետր 85 սանթիմ, որի արեւմտեան ճակատում զետեղուած են չորս գեղեցկաքանդակ խաչարձաններ: Հազար ափսոս, որ ժամանակի մշտագործ մուրճն հարուածելով եղծած եւ թափած է խաչարձանիս ընդարձակ արձանագրութիւնը, այնուամենայնիւ արտագրում եմ՝ պակասները լցուցանելով կէտագրութեամբ:

«ՆԱ. թվիս... տէր Վարթ... ի տարին Ի. ժամ... աղտատե... անէաքս... մեր սու... աղաչեմ»:

Հիւսիսային կողմի վերայ. «Ես Խաչենե.. կանգնեցի վարդապետ սուրբ նշանաւս որդի Վարհամ, որք կարդէք (կարդայք) յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս»:

Բ. բեմն շինուած է առաջնոյն հարաւային կողմին մօտ, որ ամէն ինչով նման է Ա-ին:

«..... իւրո մա..... Մխիթարս ո՞վ այրեցայ.... բենա... ասվաքչին զիսն պատյի.. տէր.... Սնպատա ոչ յիսա զգերլելոց..... ի թաբա է մին պետ.... ի մինսն պատ..... սուրբ աղաւթս ծեր....»:

Գ. Բեմն, որ փոքր-ինչ հեռի է Բ.-ից, յար եւ նման է միւսներին. թափուած են իւր միջի երկու խաչերի նամշերն եւ տեղ-տեղ արձանագրութեան բառերից գրեր.

«Թվ. ՉԺ. Թ... ի կաթուղիկոսութեան տէր ըՍտեփաննոսի եւ յեպիսկոպոսութեան հայր տէր Ներսէսի Աստուծով մեր եղբարցս... ուց այդ եղայ Վարդս... այար կաթ.... րամիկս... յորդեացս..... եւ ծնողաց մերոց... ազգականաց... բար....»:

Ա. եկեղեցին հիմնուած է հանգստարանիս հիւսիսային կողմում, բարձր հարթակի վերայ շինուած սպիտակ անտաշ քարով: Ունի եւ գաւիթ իւր արեւմտեան կողմին կից, երկուսն միասին չափելով երկարութիւնն՝ 14 մետր 75 սանթիմ, լայնութիւնն՝ 8 մետր 20 սանթիմ: Ունի եւ սոյն արձանագրութիւնը.

«Թվ. ՉԺԹ... ի տէրութեան.... տր Ստեփանոսի յե..... սիսի (յեպիսկոպոսութեան Ներսիսի) Ես Մխիթար որդի... կանգնեցի զխաչս»:

Բ. Եկեղեցին՝ առաջնոյն արեւմտեան կողմում մի քանի քայլ միայն հեռի, փոքր է եւ ամրաշէն: Շատ կարելի է, որ պատուաւոր ամփոփեալներ լինին եկեղեցեաց եւ մատուռներիս մէջ եւ մանաւանդ գաւթումս, բայց ծածկուած լինին թափուածքների ներքեւ, քանզի խիստ անմաքուր են յատակներն: Արձանագրութեանց մեծ մասն եղծուած են թէ տապանաքարերի եւ թէ խաչարձանների վերայից: Թողում ասել ջարդած, կոտրած եւ փշրած շիրմաքարերը, որոց թիւն խիստ մեծ է, եւ որոց վերայ կան արձանագրութիւններ, բայց անվերծանելի, զի անյայտացած են կոտորներն: Վերջին եկեղեցուս մոտերքում՝ մի ջարդուած քարի վերայ.

«Այս է տապան Խմիշի որդուն Սարքիսին. էն ժամանակն որ Պապա Ուշաղին թվ. ՌՃՀԴ. որ եկն. ես թապուդի առաջք տուսդ իլի (դուրս եկայ). այանին ճդովն (պարանոց) սպանեցէն, հերքերանցս Աթային, Հերիքս[1] »:

1 Ուրմեցի Փաթալի-Խանն: Տե՛ս Դաղտնիք, եր. 40:

2 Որ ունի 3829 ոտք, կոչւում է Պտկեսբերք Վարանդի:

1 Հարկ է բացատրել արձանագրութեանս մթութիւնը, որ է այսպէս ըստ մեր կարծեաց. 1725-ին Սարգսի վախճանուած ժամանակ Արցախիս վերայ զօրքով եկաւ Պապա-Ուշաղին, ես դիմաւորեցի, բայց սպանեցին մայրս, հօրաքոյրերս-Աթայ եւ Հերիք:

ԽԷ. ԱՎՏՈՒՌ ԳԻՒՂ. Հիմնուած է Հացի գիւղի արեւմտեան կողմում մի ձորի երկու լանջերի վերայ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ բէկական, անջրդի, բազմարդիւն եւ պտղաւէտ, պատուական օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 90, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, կամարակապ, որը իւրեանց ծախքով շինել տուած են մեծ. Սարգիս-բէկ եւ Յարութիւն-բէկ Ղազեանց. քահանայ՝ մի: Ծուխ 125, ար. 477, իգ. 370:

ԽԸ. ՄԻՒՐԻՇԷՆ. Հիմնուած է Ավտուռի արեւմտեան կողմում. դիրքն՝ արեւելահայեաց լանջ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, տեղական բերքերն՝ նոյն. նմանապէս՝ օդն. կլիման. եւ ջուրն եւ երկար կեանքն, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, թաղակապ. քահանան գալիս է Ավտուռից: Ծուխ 31, ար. 150, իգ. 130:

ԽԹ. ՄԻՒՐԻՇԱՎԼՈՒ ԳԻՒՂ. Հիմնուած է Աղուէ գաւառի դաշտաբերանում. բնակիչք տեղափոխուած Բէյլուկան քաղաքից շատ վաղուց. հողն՝ բէկական, բեղմնաւոր. տեղական բերքերն՝ նոյն, օդն եւ կլիման ծանր ամռան, երկար կեանք՝ 65-70, եկեղեցին՝ Սուրբ Գէորգ. խախտեալ. քահանան գալիս է Դահրաղից: Ծուխ 55, ար. 194, իգ. 175:

Ծ. ՎԱՐԱԶԱԲՈՒՆ[1] ԳԻՒՂ. (Արանզամի). Հիմնուած է Ա. լեռնագագաթ Աղուէ գաւառի դաշտաբերանի վերայ, կախուած արեւելահայեաց վերջին լանջի վերայ. բնակիչք՝ գաղթած Պարսկաստանի Ղարադաղ նահանգից. հողն՝ բէկական, տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն. կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 85-90. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին. քահանան նոր վախճանեալ: Ծուխ 155. ար. 540. իգ. 415:

Տղայոց միդասեան Ս. Գրիգորեան ուսումնարան. աշակերտ 40, թոշակաւոր 38, տարեկան ռոճիկ վարժապետին՝ 360 ռուբլի.:

ԾԱ. ՓԻՐ-ՃԱՄԱԼ[2] ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն սարի արեւելահայեաց լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ, ոմանք տեղափոխուած Զրաբերդից. սակաւք Հին-Քեաթուկից եւ Բէյլուկանից. հողն՝ բէկական, անջրդի, այգեւէտ, բայց հացաւոր, օդն, կլիման եւ ջուրն՝ նշանաւոր. երկար կեանք՝ 100, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, որը կառուցանել տուած են իւրեանց ծախքով Շուշեցի բարեպաշտ Մահտեսի Շահկուլդին եւ Փիր-Ճամալեցի հանգուցեալ Բաղդասար Շամխալեանն. քահանայ՝ մի: Ծուխ 146, ար. 475, իգ. 357:

Ղոբա ուխտատեղի

Գիւղիս անդումն է այս անուն ուխտատեղին, այս է երկու փոքրիկ մատուռներ. որոց մէջ. ասում են աւանդաբար, թէ ամփոփուած են նահատակուած Փիրու եւ Ճամալի մարմինները. վասն որոյ ուխտատեղի է յարգուած ո՛չ միայն հայերից, այլեւ մահմեդականներից:

ԾԲ. ՆԱԽԻՋԵՒԱՆԻԿ ԳԻՒՂ. Հիմնուած նոյն սարի արեւելահայեաց լանջի վերայ, բնակիչք գաղթած են Հին-Նախիջեւանի կողմից, հողն՝ բէկական, կիսով չափ ջրաբերի, տեղական բերքերն՝ միեւնոյն, բարեխառն՝ օդն եւ կլիման, եւ սննդարար՝ ջուրն, երկար կեանք՝ 80 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, բայց խախտուած, քահանայ՝ երկու:

Ծուխ 193, ար. 618, իգ. 521:

Նահատակուհի

Գիւղիս եւ Ասկեարան բերդի միջեւ կայ մի ուխտատեղի. որի մասին, ինչպէս ասացինք. Փիրու եւ Ճամալի քոյրն է, որպէս վկայում է աւանդութիւնն:

1 Ոմանք կարծում են, թէ այս եղած է Առանի ամարանոցն. նոյնպէս եւ Վարազ-Տրդատ եւ Վարազ-Գրիգոր իշխանների, վասն որոյ կոչուած է Վարազաբուն-բուն՝ Վարազ-Տրդատ իշխանի բնակութեան տեղին:

2 Աւանդութիւն. Ասում են. «Հարազատ եղբարք են Փիր եւ Ճամալ. երկուքն եւս հաստատ մնալով իւրեանց լոյս հաւատքի վերայ՝ նահատակւում են անօրէններից: Յետոյ երկու եղբարցս անուամբ կոչւում է գիւղս Փիր-Ճամալ: Իսկ սոցա քոյրն նահատակուած է Նախջուանիկ գիւղի հիւսիսային կողմում»:

ԾԳ. ՆՈՐ-ՔԵԱԹՈՒԿ. Հիմնուած է միեւնոյն սարի հիւսիսահայեաց լանջի վերայ, Ասկեարանից բարձր մի ձորի գլխին. բնակիչք ամենամեծ մասամբ տեղափոխուած Հին-Քեաթուկից, հողն՝ արքունի, կիսով չափ լեռնային եւ անջրդի եւ կիսով չափ հովտային եւ ջրաբեր (Գարգար գետակից). տեղական բերքերն՝ նոյն (չիք այգի. առատ են թթենեաց պարտէզներ). օդն, կլիման եւ ջուրն՝ վնասակար. տենդաբեր եւ մահատու. երկար կեանք՝ արականաց նկատմամբ 50, այրի կանայք բազմաթիւ. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին. քարուկիր, կամարակապ, քահանայ՝ մի: Ծուխ 25, ար. 60, իգ. 64:

Հին-Քեաթուկ. Մօտ կէս մղոնաչափ վերեւ է աւերակս, որ ունի ընդարձակ ծաւալ: Աւանդութիւնն ասում է, թէ 400-500 ծուխ եղած է Հին-Քեաթուկս, բայց ներկայ դարուս սկզբում՝ ստիպեալ սովի եւ ժանտախտի անողորմ երեսից՝ գաղթում եւ տեղափոխւում են զանազան տեղեր, որպէս տեսանք: Այժմ մնում է աւերակ եկեղեցին եւ մեծ հանգստարանն:

Սպիտակ-Հէօլ (ուլ այծի) այսպէս է անուանւում այն աւերակ եկեղեցին, հանգստարանն, որ գտնւում է Հին-Քեաթուկի մօտ: Ուխտատեղի են նոյնպէս թէ՛ աւերակ եկեղեցիս եւ թէ՛ Զինաւոր կոչուածն, որ փոքր-ինչ վերեւ է իւր հանգստարանով Սպիտակ-Հէօլիցս:

ԾԴ. ԴԱՀՐԱԶ-ԳԻՒՂ. Հիմնուած է Միրիշալլուից բաւական վերեւ, դիրքն՝ արեւելահայեաց, բնակիչք՝ բնիկ. հողն՝ բէկական, տեղական բերքերն՝ նոյն (այգի չունին), պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 95-100, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, որ շինուած է հանգուցեալ Դաւիթ Ադամեանի եւ Բաղդասար Սողոմոնեանի ծախքով, կամարակապ եւ գեղեցիկ, քահանայ՝ մի: Ծուխ 65, ար. 249, իգ. 214:

ԾԵ. ՔՌԱՍՆԻ ԳԻՒՂ. Հիմնուած նոյն իսկ Պողրխան սարի հիւսիսային ստորոտում, բնակիչք՝ բնիկ. հողն՝ բէկական, տեղական բերքերն՝ նոյն (բացի այգուց եւ բոժոժից), բարեխառն՝ օդն եւ կլիման եւ սննդարար՝ ջուրն, երկար կեանք՝ 80, եկեղեցին՝ Սուրբ Հռիփսիմէ, քարուկիր. քահանայ՝ մի: Ծուխ 50, ար. 207, իգ. 168:

ԾԶ. ԴԱՇՈՒ ՇԷՆ. Հիմնուած է Քռասնու արեւմտեան կողմում, դիրքն արեւմտահայեաց, բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի, աւազուտ, անօգուտ. տեղական բերքերն՝ ցորեն, գարի եւ կորեկ, բարեխառն՝ օդն եւ կլիման եւ անվնաս՝ ջուրն. երկար կեանք՝ 70-75, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քահանայ՝ մի: Ծուխ 40, ար. 245, իգ. 125:

Սուրբ Սրաբեկ. Ուխտատեղի նահատակ գիւղիս հիւսիսային կողմում: Թափուած քարերից երեւում է, որ հնուց մատուռ եղած է Նահատակիս վերայ, բայց կործանուած է հիմնայատակ: Այժմ ծերունի ծառերի փառաւոր հովանու տակ շարուած են չոր քարեր իբր պատ, որի մէջ դրուած է մի հնաշէն քարեայ խաչ միջակ մեծութեամբ՝ յենած մի մեծ ծառի: Ահա խաչս է ուխտատեղի, որի ուխտաւորն ամառ, ձմեռ անպակաս է, մանաւանդ Շուշուց, որ շատ հեռի չէ: Նշանաւոր է արդարեւ Սրաբեկիս աղբիւրի ջուրն, որի մօտ կայ մի քանի սենեակ:

Ներքի-շէն եւ Սողոմոնի շէն աւերակներն, որոց բնակիչք փոխադրուած են Շուշի 1860-ին, կան Գարգար գետակի աջ ափի բարձրութեան վերայ: Սակայն տակաւին մնում են Ներքի-շէնի կիսաւեր եկեղեցին, հանգստարանն եւ թթենի ծառերն:

ԾԷ. ԴՌՆԱՎԱՐԶ ԳԻՒՂ. Հիմնուած է Պողրխանայ սարի հարաւ-արեւմտահայեաց լանջի վերայ, բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, աւազուտ, անջրդի եւ սակաւ արդիւնաւէտ, տեսարանն գովելի, տեղական բերքերն՝ նոյն, բացի այգուց, պարտիզից եւ բոժոժից, ամռան ջերմ՝ օդն եւ կլիման, պատուական՝ ջուրն, երկար կեանք՝ 90-100, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւնն՝ 17 մետր 60 սանթիմ, լայնութիւնն՝ 8 մետր 90 սանթիմ, հիմնարկուած Հայոց ՌՄՂ. թուականին:

Քահանայ՝ երեք: Ծուխ 128, ար. 466, իգ. 362:

Տղայոց միդասեան ուսումնարան, աշակերտ 65, թոշակաւոր 60, տարեկան վարժապետին 250 ռուբլի:

Աղին Նահատակ

Գիւղիս հիւսիսային կողմում, մի բլրակի վերայ, անտաշ քարով շինուած է շատ հնուց մի փոքրիկ եկեղեցի, որ կոչւում է այս անուամբ: Երկարութիւն՝ 7 մետր 94 սանթիմ, լայնութիւն՝ 5 մետր 12 սանթիմ: Խաչաղարդ է բեմի ժողովրդահայեաց երեսն եւ հանդստարան եկեղեցուս շուրջն, ուր կայ եւ մի սենեակ, իսկ բլրի վարի կողմում՝ գիւղատեղի: Խաչարձանին վերայ, որ թեքուած է տաճարիս արեւելեան կողմում. «Ես Սահակ կանգնեցի զխաչս»: Սենեկի վերայ. «Ես Ադամս Աստուծով սուրբ խաչս կանգնեցի»:

Բեմ

Եկեղեցուս փոքր-ինչ վերեւ է սրբատաշ չիչ քարով շինուած բեմն, որ ունի երեք մետր լայնութիւն, 2 հաստութիւն եւ 5 մետր բարձրութիւն: Բեմիս արեւմտահայեաց ճակատում դնտեղուած է երեք գեղեցկաքանդակ եւ նրբագործ խաչարձան, որոց վերեւ գրուած է.

«Թվ. ՇԻ. կամաւ ամենակալին Աստուծոյ ես... Գրիգոր... Աստուծոյ միաբան եղբարքս լա... զխաչս իշխանութեան... եւ հայրապետութեան... Օհանէսի տէր Ներսէսի ո... աղաւթեցէք»:

ԾԸ. ՇՕՇՈՒ ԳԻՒՂ. Հիմնուած է մի հիւսիսահայեաց ձորի աջ ու ձախ լանջերին վերայ, որ կայ Շուշի քաղաքի արեւելեան եւ Դռնավարդի արեւմտեան կողմում, Գարգար գետակի հարաւային օժանդակ վտակի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակչաց փոքր մասն բնիկ, մեծ մասն՝ տեղափոխուած Մելիք-Բաղու հետ Սոթից, մի քանի ծուխ Ջրաբերդից եւ մի ծուխ Պարսկաստանից, հողն՝ արքունի, ամենասակաւ, անջրդի եւ նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն, կայ եւ թթենի, օդն, կլիման եւ ջուրն պատուական. երկար կեանք՝ 100. եկեղեցին Սուրբ Ստեփաննոս, կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւնն՝ 17 մետր 50 սանթիմ, լայնութիւնն՝ 10 մետր 60 սանթիմ, քահանայ՝ երեք. հիւսիսային կամարի վերայ ներքուստ «ՌՃԻԸ.»:

Դրան ճակատակալ քարին վերայ.

«Փոքր ծոթով ուր դա... հասայ քեւ Տէր. ոտարք շինեցաք զՍուրբ Ամենափրկիչ եկեղեցիս յիշատակ հոգոց մերոց եւ ննջեցելոց ի հայրապետութեան Աղուանից տեառն Երեմիայի... եւ ի մերոցս նահանգի աթոռն, որ Ղուլ (?) տէր Գրիգոր եւ տէր Դաւիթ եպիսկոպոսաց. ես մեղաւորս տէր Դաւիթ էրեցս եղէ պատճառ յիշ (ատակի) ի Տէր հանդերձ ժԵ. քահանայիւ, զտէր Առաքել քահանայն յիշեցէք ի Տէր, թվ. ՌՃԴ. էր, յաղաւթս յիշեցէք: Տէր Յիսուս Քրիստոս Աստուած ողորմեա ննջեցելոցն»:

Երեւի թէ Սոթից եւ Մաղրայից եկած ոտարք՝ օտարք. հայերն շինած են եկեղեցիս Ամենափրկիչ անուամբ, բայց օծողն անուանած է Սուրբ Ստեփաննոս: Ծուխ 367, ար. 1248, իգ. 1100:

Հին-եկեղեցի. գիւղիս հիւսիսային հանդէպ, ձորի միւս կողմում, կայ մի հնաշէն եւ խարխըլուած եկեղեցի, որի արեւմտեան լուսամտի մէջ մի խաչքարի վերայ. «Թվ. ՋԷ. (1458) ես Ղոչ սարկաւագ գոյարեցի (կանգնեցի՞) խաչս Ազիզա մայր իմ»՝ վասնեմ. եւ բնդարձակ հանդստարան է եկեղեցուս շուրջն:

Պըլը-Պուղու գերեզմանն

Գիւղիս արեւմտեան կողմում, մի փոքր բարձրի մէջ, որ գրեթէ սահման է Շօշու գիւղի եւ Արկաթալու շէնի հողերին, ամփոփուած է Պըլը-Պուղու մարմինն, որ զուարճաբան էր Մելիք-Շահնազար Գ.-ի մօտ:

ԾԹ. ԱՐԿԱԹԱԼՈՒ ՇԷՆ. Հիմնուած է Պըլը-Պուղու գերեզմանի հարաւ-արեւմտեան կողմում մի հովտանման ձորակում, որ շատ հեռի չէ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի. տեղական բերքերն՝ նոյն, սննդարար օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 80-90. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քահանայ՝ մի: Ծուխ 26, ար. 120, իգ. 108:

Կ. ՀԻԻՆՈՏ ՇԷՆ (Հուն պտղի անուամբ). Հիմնուած է Գարգար գետակի հարաւային օժանդակի ձախ ափի վերայ, մի սարսափելի խոր ձորում, որի գլխին է Շուշի քաղաքն եւ խիստ նեղ է հորիզոնն, բացի ջրատացներից չունին ուրիշ եւ ոչինչ:

Ծուխ 19, ար. 70, իգ. 60:

ՀՈՒՆՈՏԻ ԿԱՐԱՆ (քարայր)

Երկար դարերի ընթացքում օժանդակս միջից ճեղքած է այն ապառաժ քարեայ սարը, որ միացած է եղել Շուշու սարի հետ: Հետզհետէ խորացնելով այս ջրատար ճեղքը՝ շինած է մի կատարեալ անդունդ: Նեղ, խոր եւ ահարկու ճեղքուածքիս երկու կողմերն ձեւացած են անձեռագործ, բայց յաւիտենական պարիսպներ: Օժանդակ վտակիս ձորին երկու կողմերում եւս կան շատ քարայրներ, որոց առաջինն գտնւում է Հունոտի մօտ, օժանդակիս աջ ափի բարձրութեան վերայ: Մի նեղ, զառիվեր եւ միանգամայն վտանգաւոր քարեայ կածան առաջնորդում է դէպի քարայրն: Սոսկալի է կածանիս վտակի կողմն. Տէրն մի՛ արասցէ, եթէ սահեց կամ մի փոքր ծռուեց ոտքդ. թաւալգլոր կորած ես մութ անդունդում: Քարայրիս առաջին մուտքն, որ քարուկիր է, ներկայացնում է պահապանի կամ դռնապանի բնակարան, երկրորդ տեղն՝ ծառաների, իսկ երրորդն ընդարձակ եւ գեղեցիկ քարայր է, որ է իշխողի բնակարանն: Քարայրիս մէջ կայ եւ աղբիւր ջուր:

ԿԱ. ՔԱՐԻՆ-ՏԱԿ ԳԻՒՂ. Հիմնուած է Շուշի քաղաքի հարաւային ստորոտում, նոյն օժանդակի ձախ ափի վերայ, մի խոր ձորում. բնակիչք՝ տեղափոխուած Բերդաձոր գաւառի Խցաբերդ գիւղից. հողն՝ արքունի. բայց կարի սակաւ եւ նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ ցորեն, գարի, կորեկ, գարնանի, սորեկ, հաճար, թթենի, ունին եւ ջրաղացներ, բարեխառն՝ օդն եւ կլիման, պատուական՝ ջուրն, բայց խեղդուած՝ տեսարանն եւ նեղ՝ հորիզոն. երկար կեանք՝ 80-85. Եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր եւ հոյակապ, քահանայ՝ երկու:

Ծուխ 174, ար. 625, իգ. 443:

Բ. Աւանայ-կարան՝ քարայր, որ կայ գիւղիս հիւսիսային հանդէպ Աւանայ քերծում: Մուտքն կլորակ է, բայց դժուարաւ բարձրանալի. խիստ խոր, սոսկալի մութ եւ բաւական երկար է քարայրս, որի ծայրն հասնում է համարեա թէ մինչեւ Շուշու տակն, այս է՝ Կոհար-աղայի տան տակն: Առանց լապտերի անհնարին է մտնել եւ յառաջ դնալ, քարայրիս բռնաշունչ հողմն անցուցանում է մոմը: Քարայրիս խորքումն եւս կայ ջուր (16):

Գ. Ալէքսանայ դուզուն կարան.

Դ. Եուղունիկի կարան (աղաւնու քարայր). որք կան նոյն օժանդակի աջ կողմի բարձր լանջերի վերայ:

ԱՍԱՐԱԹՆԵՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆ[1]

Դարձեալ դժուարամատչելի եւ հին քարայրներ են, որոց առաջքն պատուած են տեղ-տեղ եւ գտնուում են նոյնոգէս նոյն վտակին աջ կողմի բարձրութեան վերայ: 1886 թուին մի կատաղի վարար գալիս և մանում է քարայրների ՀՏՔ. անցայտ մնում է մի քանի օր, ապա յայտնւում եւ Սարսափ տարածում առհասարակ գիւղականաց եւ քաղաքացիների վերայ. ապա անսպասելի կերպով յանկարծ մի գիշեր յայտնւում է Դանձակում եւ վերջապէս մի օր սպանվում քաղաքայիներում.

Պակաս չեն սակայն գիւղեր. եկեղեցիներ եւ հանդստարան Զառիստում եւ սորա շրջականերում:

1 Նշանակում է ապարանների շինութիւն:

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա. ԲՐԴԱՀՈՆՋԻՆ (Բերդաունչ) ՂԱԼԱ (3300)

Չորս կողմերից առանձնացած եւ ձուաձեւ բարձրացած մի սար է բերդատեղիս, որ կայ Ներքին-Թաղավարդի արեւելեան հանդէպ, որի արեւմտեան, հարաւային եւ արեւելեան կողմերն սնպացեալ վիմահերձեր են դագաթին մօտ, իսկ հիւսիսային կողմն՝ սարսափելի զառիվայրն: Զառիվայր կողմովս վիմահերձից ձգուած է կրկնապարիսպ, արտաքին պարիսպն ունի եւ բուրգեր: Ամրոցս ունի միայն մի դուռն արեւելեան կողմից, որից մտնելով ուղին պատուում է հիւսիսից, ապա մտնում միջնաբերդն: Այժմ գրեթէ անվնաս մնում են պարիսպներն ամուր շինութեան պատճառաւ: Բերդիս մակերեւոյթն չունի հարթութիւն, այլ անհարթ է սարի ձեւովն: Միջնաբերդում նշմարւում են բնակարանների շատ բակեր: Արժանի է բերդս անառիկ տիտղոսին. միայն ափսոս, որ չունի ջուր իւր մէջ: Բայց բերդիս արեւելեան ստորոտում կայ մի աղբիւր, որի ջուրն աննման է: Ահա ջրից բերած եւ լցրած են այն աւազանների մէջ, որ կան բերդումս: Այժմ անտառապատ է թէ՛ բերդիս ներսի եւ թէ՛ դրսի կողմերն:

Բ. Բերդն է Աւետարանոցն, որի մասին արդէն խօսած ենք:

Գ. Բերդն է Ղալին-Խութ (բերդասար) կոչուածն (17), որ ընկած է Կիշու. Մշկապատի եւ Կիւնի-Ճարտարի միջեւ: Բաւական բարձր է բերդասարս (3735), որի հարաւային եւ արեւմտեան կողմերն անմերձենալի քերծեր են, իսկ արեւելեան եւ հիւսիսային կողմերն պարսպուած են ամուր պատով առանց բուրգերի: Այժմ տեղ-տեղ աւերուած են պարիսպներն: Ամրոցիս մակերեւոյթն, որ այժմ հերկւում է, տանում է մօտ 14 չուալ[1] սերմացորեն: Հարթ է ամրոցիս մակերեւոյթի հարաւային մասն, իսկ փոքր-ինչ լանջ՝ դէպի Կիշի թեքուած հիւսիսային մասն: Այս մասի մէջ պարսպի ստորոտումն է աղբիւրն, որ ունի գերազանց ջուր, որից տարած եւ լցրած են ջրաւազաններ՝ ի պաշար պատերազմի: Քերծերիս մէջ պակաս չեն քարայրներ:

Դ. Աղջկայ բերդ (Ղզղալա):

Աղուէ գաւառում, դաշտաբերանի վերայ արձանացած է մի բարձր սար, որ առանձնացած է բոլորովին ամէն կողմերից: Սարիս հարաւային հանդէպ է Ղզղալա գիւղն եւ իւր ստորոտում նոյն գիւղացոց կալերն: Սարիս արեւելեան, հարաւային եւ արեւմտեան կողմերն վիմահերձ եւ սարսափելի բարձր ժայռեր են, իսկ հիւսիսային կողմն՝ սաստիկ զառիվայր, որի ստորոտով փորուած է հնուց խիստ խոր եւ լայն խրամ եւ տեղ-տեղ պարսպուած, ինչպէս երեւում է հետքերից: Սարիս կատարի հարթակին վերայ շինուած են ստորերկրեայ շատ շինութիւններ, որք կարծես թէ հաղորդակցութիւն ունին միմեանց հետ: Բերդիս գիւղահայեաց լանջի վերայ, շինութիւններից ոչ այնքան հեռի, երեք տեղ մօտ առ մօտ շինուած են երեք վիմափոր ջրաւազաններ, որք ունին բաւական մեծութիւն եւ խորութիւն:

Խեցեղէն խողովակների շարունակութեան հետքն Ղզղալա գիւղից եղած է մինչեւ բերդիս ստորոտն՝ կալերի մօտ. աւանդութիւնն ասում է, որ. «Եմիշջան գիւղի արեւելեան կողմից խողովակներովն ջուր բերուած է բերդս»:

Հիանալի տեսարան ունի բերդս. հիւսիսային եւ արեւելեան կողմերում տարածուած է Արցախեան-Գարգարացւոց լայնատարած դաշտն, արեւմտեան եւ հարաւային կողմերում՝ Ղզղալի, Աշանի, Մեծ-նահատակի եւ Խաչեն գաւառի ստորին լեռներն եւ Տիգրանակերտ գաւառն:

1 Մի չուալն հաւասար է 7 փութի:

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔ (5000 ոտք)

Հիմնուած է մի բարձրագոյն սարահարթի վերայ, որ գրեթէ առանձնացած է իւր չորս կողմերից: Լայն հորիզոն եւ անդնդախոր ձոր է հիւսիսային եւ արեւմտեան կողմերն, որից հոսում է բուն Գարգար գետակը. հորիզոնն՝ նեղ, վիմահերձ սարսափելի խոր ձոր է քաղաքիս արեւելեան եւ հարաւային կողմն, որից հոսում է Գարգար գետակի օժանդակն, լայնատարած վիմահերձ եւ խոր երեւոյթ ունի արեւմտեան եւ հարաւային կողմերի միջավայրն քաղաքի արտաքին կողմն, իսկ սաստիկ զառիվայր է արեւելեան եւ հիւսիսային կողմերի միջավայրի տարածութիւնն՝ պարսպից դուրս: Այլապէս զրելով երեք կողմերն բարձր քերծեր են, իսկ չորրորդ կողմն՝ պարսպուած զառիվայրի բերանով: Աւելորդ է գրել, թէ քաղաքս կոչուած է եւ բերդ, բերդաքաղաք եւ ամրոց, որի մակերեւոյթն զգալի կերպով թեքուած է հարաւային արեւմուտքից դէպի հիւսիսային արեւելք, եւ որի տարածութիւնն պակաս է քառորդ քառակուսի մղոնից: Համարուած է այս գաւառագլուխ քաղաք, որի մէջ նստած է գաւառապետ, հաշտարար դատաւոր իւրանց պարագաներով հանդերձ:

Քաղաքիս գլխաւոր բնակիչներն են հայ եւ շիա-մահմեդական. վերջիններս բնակում են քաղաքի ստորին մասումն: Մեծամասնութիւնն կազմում են առաջիններն հայերն, որք բնակում են քաղաքի վերնամասում եւ ունին չորս եկեղեցի: Բայց որովհետեւ հայ տարրն հաւաքուած է քաղաքս չորս տեղերից, որք են Ղազանչի, Ագուլիս, Մեղրի եւ Արցախի գիւղերն, վասն որոյ եկեղեցիք բացի իւրանց օծման անուններից, սովորաբար ունին եւ երկրորդական անուններ, որք նախապատիւ տեղ բռնած են՝ Ղազանչեցւոց եկեղեցի, Ագուլեցւոց եկեղեցի, Մեղրեցւոց եկեղեցի եւ Նոր եկեղեցի եւ Անապատ կուսանաց:

Ա. Ամենափրկիչ մայր եկեղեցի Ղազանչեցւոց՝ շինուած է ամբողջապէս սրբատաշ կրաքարով՝ կառուցեալ խաչաձեւ չորս հաստատուն սիւների վերայ, հոյակապ եւ բարձրաշէն, լուսաւոր եւ փառահեղ եւ միանգամայն զարդարուն ներքուստ եւ արտաքուստ: Երկու փոքր խորանների վերայ ունի այլ եւս երկու խորաններ: Նշանաւոր է փայտեայ եւ ոսկեզօծ խաչկալն՝ որ յիշատակ է բարեհամբաւ Ժամհարեան եղբարց: Ունի երեք դուռն՝ հարաւային, արեւմտեան եւ հիւսիսային կողմերից, որոց վերայ արտաքուստ շինուած է երեք նոյնպէս հոյակապ եւ գեղեցկաշէն սրահ: Երկարութիւնն է 34 մետր 75 սանթիմ, լայնութիւն՝ 22 մետր 70 սանթիմ:

Հարաւային դրան գլխին արտաքուստ

«Շնորհիւ եւ ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ կառուցաւ հրաշակերտ սուրբ տաճարս արդեամբ եւ տրօք բարեպաշտօն ժողովրդականաց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյն Ղազանչեցւոց Շուշի քաղաքիս, որոյ շինութիւնն սկսեալ ի 1868 ամի յաւուրս թագաւորութեան աստուածազօր ինքնակալ մեծ կայսեր ամենայն Ռուսաց Աղէքսանդրի Բ-ի եւ ի հայրապետութեան Գէորգայ Դ-ի, աւարտեցաւ ի 1887 ամի ի թագաւորութեան որդւոյ Նորին օրհնաբանեալ կայսեր Աղէքսանդր Գ-ի եւ ի կաթուղիկոսութեան Մակարայ Ա-նոյ՝ ի 20 սեպտեմբերի 1888 ամի»:

Տաճարումս կան հետեւեալ գրչագրերն

Ա. Աւետարան մագաղաթեայ, փոքրադիր, գրուած նրբարուեստ ճաշակով եւ ընտիր ոսկեզօծ պատկերներով, որի լուսանցքներում նկարուած են Քրիստոսի բոլոր բժշկութեանց եւ հրաշագործութեանց պատկերները: Յիշատակարանից. «Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Նուաստ եւ յետին Նիկողայոսի մեղապարտի ի թուաբերութեան Ասքանազեան եւ Աբեթական տումարի ՌՃԴ. եւ ըստ Նորում շրջանի ԼԴ. եւ ի գալստենէ Կենարարին ՌՈԾԸ. (1658) ի ստոյգ եւ ընտիր աւրինակէ եւս առաւել համաբայիցն (զի գաղափար սորին էր ի դրանէ Սուրբ Յովհաննէս աւետարանչին) ի յաշխարհիս Յունաց... ի քաղաքս Կաֆայ (Թէոդոսիա) ընդ հովանեաւ Սուրբ

Աստուածածին... ի հայրապետութեան Հայոց տեառն Յակոբայ եւ յեպիսկոպոսութեան ամենայն հիւսիսական կողմանց տէր Խաչատուր աւրհնեալ քահանայապետի»:

Բ. Աւետարան մագաղաթեայ, փոքրադիր տասնեւմի նրբագործ եւ ընտիր պատկերներով, համանման ըստ ամենայնի Ա-ին: Յիշատակարանից. «Աստուածաւանդ սուրբ աւետարանս գրեցաւ ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս ձեռամբ ոգնամեղ եւ անարհնտ Ղազար գրչի ի թուականիս մերոյ ՌՃԵ. աւգստոս ամսոյ է»: «Ես անարժան Ղուկաս ստացայ զսուրբ աւետարանս ի դուռն սուրբ Ամենափրկչին»: Հուսկ յետոյ աւետարանս գնած է Ղազանչեցի Նարինն, որի բարեպաշտ ժառանգներն ընծայած են եկեղեցուս ՌՄԺԴ. թուականին Հայոց:

Գ. Աւետարան մագաղաթեայ, փոքրադիր, որ ունի միայն չորս աւետարանչաց պատկերները. Յիշատակարանից. «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՋԻԲ. ի նահանգիս Վայո ձորոյ ի վանս Հերմոնի ընդ հովանեաւ ամբարձուղէս(շ) եւ գերաշնորհ սուրբ Լուսաւորչիս եւ սքանչելագործ սուրբ նշանիս առ ոտն շնորհաղարդ հրաբուխոյս մերոյ Սարգիս վարդապետիս, ձեռամբ Եսայի նկարողի սորին... Նաեւ ստացող սուրբ աւետարանս Յետկար աղէն եւ կողակից Խաթուն...»: «Վերջին ստացող աւետարանիս ՌՄԱ. թվ. Հայոց Խաշլաբեկցի Միրզանց Սահակի որդի Գեորգին...»:

Դ. Աւետարան միջակ դիրքով, գրուած թղթի վերայ, պատկերազարդ. Յիշատակարանից. «Արդ այսմ աստուածային... մարգարտիս ցանկացան աստուածասէր եւ բարեպաշտ կանայք Աղութ Խաթուն եւ Շահդիշէն..... Արդ յանկ ելեալ կատարեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ յոգնամեղ... երիցու Վարդանայ... ի քաղաքս՝ որ կոչի Վան... ի թուականութեանս Հայոց ՋԹ....»:

Ե. Աւետարան միջակ դիրքով, գրուած թղթի վերայ, պատկերազարդ. Յիշատակարանից. «Արդ՝ այսմ աստուածեղէն եւ երկնապարգեւ գանձիս եւ լուսափայլ մարգարտիս ցանկացող ցանկացաւ աստուածասէր կինն Մուղալ խաթուն եւ քոյրն իւր Շամշիղամարն եւ ետուն գրել զսա յիշատակ բարի հոգւոց իւրեանց եւ ծնողաց իւրեանց հօր՝ Բաղդասարին, եւ մօրն՝ Սուլտան Մելիքին....: Եւ արդ, ես... սուտանուն քահանայ Վարդան... յանձն առի զաւետարանս եւ ողորմութեամբն Աստուծոյ կատարեցի ի քաղաքս՝ որ կոչի Վան ընդ հովանեաւ սուրբ Աստուածածին եւ սուրբ Վարդան քաջ զօրավարին ի թուականութեանս Հայոց ՋԺ. ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, որ մին ամ է, որ նստաւ յաթոռ սուրբ Լուսաւորչին ի յէջմիածին»: Աւետարանիս սկզբում. «...կամաւն Աստուծոյ ես Մաղաքիա քահանայս գնեցի զսուրբ աւետարանս ի հալալ ընչից իմոց.... եւ ես Բէկիջանս դուստր Համբուլին եւ կողակից Ումիտին իմ կամաւորութեամբ... ծախեցի զաւետարանս Մաղաքիայ քահանային»... թուական Հայոց ՋՂԴ. էր եւ տանուտէր տարւոյն Առիւծն»: Ապա աւետարանս գնում է Մալիջանն... «ՌԽԹ.-ին»:

Զ. Աւետարան մեծադիր, գրուած թղթի վերայ, որ ունի չորս աւետարանչաց անճաշակ պատկեր. Յիշատակարանից.

«Արդ, գրեցաւ ի թվ. ՉԿԹ. զբազմամեղ գրիչ, կազմիչ եւ նորոգիչ»: Սկզբում. «Կամաւն Աստուծոյ ես Եղիայ էրեցս, որդի իմ տէր Մելիքսեթ նորոգել տուինք զսուրբ աւետարանս ի յերկիրս Մաղայոզ ի գեւղն Արտաշիպի, թագաւորութիւն Շահ Ապազին, հայրապետութիւն տեառն մերոյ Յովհաննէս կաթուղիկոսին թվ. Հայոց ՌԿԴ.»:

Է. Աւետարան միջակ դիրքով, թղթի վերայ, գրուած է Արցախի Վարանդայ գաւառի Խաչմաչ գիւղում Աղէքսանդր եպիսկոպոսի ձեռնով ՌԺԸ. թուին Հայոց. իսկ ստացած է Թադէոս քահանան: Բոլորովին անճաշակ են պատկերներն:

Ը. Աւետարան միջակ դիրքով, գրուած թղթի վերայ, անյայտ թուականաւ եւ առանց պատկերի, միայն յայտնի է. «ի հայրապետութեան տեառն Նահապետ կաթուղիկոսի ի առաջնորդ Մարտիրոս պարոն տէր Հազարափրկչին. արդ, նորոգեցաւ յիշատակարան սուրբ աւետարանիս ՌՃԽ. եւ Ե. թվին... սուրբ Գրիքոր եկեղեցին ի գիւղն Գոմէր ի գաւառն Շահբունեաց ի յերկիրն Նախչուան»:

Թ. Աւետարան միջակ դիրքով, գրուած թղթի վերայ առանց յիշատակարանի, ունի միայն չորս աւետարանչաց հասարակ պատկերներ:

Ժ. Աւետարան փոքրադիր, թղթեայ, անյայտ գրողի անունն, թուականն եւ տեղն:

ԺԱ. Աւետարան փոքրադիր, թղթեայ, ընկած է բուն յիշատակարանի մի մասն, բայց գրուած է յետոյ: Յիշատակարանից. «...գրեցաւ ի դառն եւ վերջացեալ ժամանակի, որոյ (յորում) Լեկգին եկաւ Գանջոյ, Պարտոյ, Խաչենոյ, Կարանդոյ, Շաքոյ, Շամախոյ, Կարաստանոյ, Ջակամայ չորեքանկիւն երկիրն, ամէն ասպատակեալ աւերեցին: Բազում արիւն անմեղաց եղաւ (հեղաւ) երկրի, անթիւ գիրք եւ անմեղ գերիք անկան ի ձեռն անօրինաց: Եկեղեցիք խախթեալ եւ խաւարեալ ամայի մնացին: Երկրորդ Օսմանլուն եկաւ կրկին, բազում արիւնհեղութիւն եղեւ. գերիսն անթիւ եղեւ ի ձեռս Օսմանցոց վասն մեր ծովացեալ մեղաց՝ սուք մեծ եղեւ քրիստոնէից ազգիս... ՌՃՀԱ. թվին մայիսի ԺԴ.-ին ի գիւղն Արգաւոն էր ի դուռն սուրբ իշխանաց...»:

ԺԲ. Աւետարան փոքր. թղթեայ, առանց յիշատակարանի: Այսպէս եւ մի գրչագիր սաղմոս (գողացած են յիշատակարանները):

Մասունքներ

1) Մի քառաթեւ արծաթեայ խաչում զետեղուած են.
«Սուրբ Կենաց Փայտն է.
Սուրբ Գէորգայ մասունքն է.
Սուրբ Թէոդորոսի ,,
Սուրբ Մեռկեռիոսի ,,
Սուրբ Մինասայ ,,
Թվ. ՌՃԹ.»:

2) Մասն Սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի՝ մի արծաթեայ ոսկեզօծեալ աջում. որ ունի այս արձանագրութիւնն. «Այս է աջ սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսին թոռին սրբոյ Լուսաւորչին. նորոգող սորա տէր Յովհաննէս որդի Տաւութին թոռն Պաղդասարին, որ է որդի Մէհրապ պէկին տեառն Խաչենոյ թվ. ՌՀ.»: «Արուեսի Գալուստ»:

Հուսկ յետոյ գրուած է. « Նորոգեաց վերստին սուրբ աջս Գրիգորիսի Բէյրամ բէկ Մելիք Ջիմշիտեան Մելիք Շահնազարովն. ՌՄԿԱ. էր»:

Արտաքուստ. եկեղեցուս արեւմտեան գաւթի ճակատին դրուած է քարից շինուած Փրկչի գեղեցիկ պատկերն, որ աղօթում է: Իսկ տաճաց խաչաձեւ շինութեան չորս կողմերի բարձրութեան վերայ դրուած են արձաններ՝ շինուած նոյնպէս քարից:

Արեւմտեան գագաթին վերայ Փրկիչն գրկած է խաչափայտը:

Հիւսիսային գագաթի վերայ կանգնած է սուրբ Յովհաննէս Մկրտիչն:

Արեւելեան գագաթի վերայ պայծառափայլ արձանացած է խաչափայտն:

Հարաւային գագաթին վերայ իջնում է Հոգին Սուրբ Աստուած:

Արտաքուստ արեւմտեան գաւթի հիւսիսային կողմում ամփոփուած է Անդրէաս եպիսկոպոսի մարմինն, որի տապանաքարի վերայ քանդակուած է թագ, գաւազան եւ իւր տիտղոսների ձեւերն եւ արձանագրութիւնն. «Վիճակաւոր առաջնորդ Թեմին Հայոց Արցախայ Անդրէաս արքեպիսկոպոս Պոլսեցի վախճանեալ է 8 Սեպ. 1882 ամի ի հասակի 48 ամաց»:

Եկեղեցիս ունի իւր արեւմտեան կողմում մի եռայարկ զանգատուն. գետնայարկի չորս անկիւններում դրուած են չորս հրեշտակապետաց քարաշէն, բայց ճարտարարուեստ, մարդահասակ բարձրութեամբ արձաններն, որք ահարկու տեսլեամբ փչում են փողերը: Այս զանգակատունն յիշատակ շինուած է հանգուցեալ բարեպաշտ Աբրահամ Խանդամիրեանցն:

Եկեղեցիս ունի չորս քահանայ:

Ունի եւ ամուր շրջապարիսպ:

Բ. Ագուլեցւոց Սուրբ Աստուածածին եկեղեցին, հոյակապ, կառուցեալ չորս վայելչակերպ սիւների վերայ անտաշ քարով քաղաքի կենտրոնում, ունի երեք դուռն՝ հարաւային, արեւմտեան եւ հիւսիսային կողմերից. երկու գաւիթ՝ հարաւային եւ հիւսիսային դռների վերայ. երկու փոքր, բայց գեղեցիկ կաթուղիկէներ տաճաց արեւելեան եւ արեւմտեան գագաթնագծի վերայ եւ մի

փայտեայ մեծ կաթուղիկէ երկոցունցս միջավայրում. մի աւագ խորան եւ չորս փոքր խորան միմեանց վերայ, վերնատուն՝ կանանց. 28 մետր 90 սանթիմ երկարութիւն եւ 17 մետր 50 սանթիմ լայնութիւն: Բայց որովհետեւ ճաքած է գագաթնագծի երկարութեան համեմատ, վասն որոյ արտաքուստ յենարան պատեր հիւսած են նորից հարաւային եւ հիւսիսային կողմերից:

Հարաւային դրան ճակատակալ քարին վերայ արտաքուստ.

«Կամաւն Աստուծոյ Սուրբ Աստուածածնայ աւագ[1] եկեղեցիս կառուցին արդեամբք եւ ծախիւք իւրեանց իշխանք ազնուազգի հարազատ աղայք Զօհրապ, Յովհաննէս, Մարկոս եւ Բաբատէր Մատթէոսեան Թառումեանց ընդ որս եւ որդիք նոցա Յովհաննէս աղայն եւ Աւետիս աղայ ի յիշատակ եւ ի փրկութիւն հոգւոց իւրեանց եւ սոցա ծնողաց, ամուսնոց, որդւոց, դստերաց իւրեանց ամենից եւ առհասարակ ննջեցելոցն ի Տէր ի կայանս երկնից, ի 1882 ամի Տեառն»:

Եկեղեցումս կան հետեւեալ գրչագրերն.

Ա. Աւետարան միջակ մեծութեամբ, թղթեայ գրողն է ոմն Եսայի. գրեցաւ «ի թուին Հայոց ՌՂԴ. ի հայրապետութեան տեառն Գրիգորի, ընդ հովանեաւ Սուրբ Նահատակիս ի յերկիրս Տայուշ ի գեաւղս, որ կոչի Թաւուզ, յորում ամի եւ ըստ մեղաց մերոց բռնացաւ անօրէնութեան չարիք ի վերայ մեր ի հին Պարսից լուծ ծառայութեան նոցա հարկանելով եւ տանջելով ստիպեն դարձուցանել ի մոլար յաւրէնս իւրեանց»:

Բ. Աւետարան փոքրագիր, թղթեայ, չորս աւետարանչաց պատկերներով. «Գրեցաւ սուրբ աւետարանս ի թուիս ՉԾԷ. յանապատիս Ասպիսնկայ (?) ընդ հովանեաւ Սուրբ Յարութեանն ե. Սուրբ մօրս լուսոյ Աստուածածնիս յառաջնորդութեան Ստեփաննոս վարդապետի, գրեցաւ ձեռամբ Ղազարի սուտանուն կրաւնաւորի ի վայելումն Հայրապետի»:

Գ. Աւետարանս փոքրագիր, թղթեայ եւ անթուական. «Գրեցաւ սուրբ աւետարանս ի յերկրիս Աղուանից ի գաւառիս Դիզակայ, ի գեաւղս, որ կոչի Թեղասեռ ի դուռն սուրբ Սարգսիս ի Շահ Սեփու երրորդ ամին ձեռամբ փծուն եւ անարհեստ գրչի՝ սուտանուն Մելքիսեդ երիցու ե. միաշունչ եղբաւրս իմոյ սրբամիտ եւ հեզահոգի տէր Կիրակոս քահանայի, որ ի միասին սկսաք ե. աւարտեցաք»: Աւետարանս գերի ընկած է Պարսից Թաւրէզ քաղաքն. ապա Հայոց ՌՄԾԵ. թվին գնած եւ յետ բերած է Արզրումցի պ. Մկրտիչ եւ յանձնած է Շուշեցի մահտեսի Սրապիոն Շեխանցին...

Դ. Աւետարան փոքրագիր, թղթեայ, անյայտ թուականաւ միայն յայտնի է. «Ի թվիս Հայոց ՌՂ. եւ ի հայրապետութիւն Սուրբ Էջմիածնայ տեառն Փիլիպպոսի նորոգեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Սարգիս կրօնաւորի՝ աշակերտ (ի) սուրբ աւետարանիս ի Սուրբ անապատս Չարեքայ ե. առաջնորդութեամբ սուրբ ուխտիս Դաւիթ եպիսկոպոսի».

Ե. Աւետարան փոքրագիր, թղթեայ եւ պատկերազարդ. Յիշատակարանից. «Արդ գրեցաւ վարդափթիթ եւ ոսկեզօծ սուրբ եւ աստուածաշունչ աւետարանս ձեռամբ մեղսաներկ եւ տառապեալ Բարսեղ լոկ անուամբ քահանայի ի թուականիս Հայոց ՌՃԻԹ. ամին ամսեանն սեպտեմբերի, որոյ էին աւուրք Ժ. ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլէմանին եւ ի հայրապետութեան տանս Աղուանից տեառն Երեմիայի Սրբազան եւ Նորընծայ Կաթուղիկոսի ի յերկիրս Գեանջա ի գեօղս Քարահատ[2] հովանեաւ Սուրբ Աստուածածնիս»:

Մասունքներ

1) Մի արծաթեայ միջակ մեծութեամբ խաչի ակումն զետեղուած է մասն կենաց փայտի. իսկ թեւերում՝ մասն Ղուկաս եւ Փիլիպպոս առաքեալների:

2) Մի լուսամտաձեւ արծաթեայ զարդի մէջ.

«Ա. Պանդալիոնի մասն.

Բ. Օսեփ Արիմաթացւոյն մասն.

Գ. Բարթուղիմէոսի ,,

Դ. Կենաց փայտն ,,

Ե. Անդրէասի մասն

Զ. Լուսաւորչի ,,

Է. Յովհաննու. Մկրտչի մասն. «Յիշատակ է Չարեքու Մկրտիչ վարդապետին եւ իւր ծնողացն թվն. ՌՃՁԸ. փետրվարի»:

3) Մի արծաթեայ միջակ մեծութեամբ խաչի մէջ զետեղուած է Թադէոս, Բարդուղիմէոս, Թովմաս առաքեալների եւ ուրիշ սրբոց մասունքներ: Ճաճարս ունի չորս քահանայ:

Եկեղեցիս իւր արեւմտեան կողմում ունի մի նորաշէն եւ շքեղ զանգատուն, որի երկու յարկերն արդէն պատրաստ են եւ մնում է պատրաստել երրորդ յարկն: Ունի նաեւ սեփական կալւած. իւր հարաւային կողմում՝ տասներկու խանութ եւ հիւսիսային կողմում՝ տասնեւհինգ:

Գ. Մեղրեցւոց եկեղեցի Սուրբ Աստուածածին, հիմնուած քաղաքի վերի կողմին մօտ, նոյնանուն թաղում, կառուցեալ անտաշ քարով չորս սիւների վերայ, բայց ո՛չ բարձրաշէն: Ունի երկու դուռն հարաւային եւ արեւմտեան կողմերից, որոց վերայ երկու գաւիթ, կանանց վերնատուն եւ տասն լուսամուտ. 24 մետր 75 սանթիմ երկարութիւն եւ 12 մետր 77 սմ. լայնութիւն:

Հարաւային դրան ճակատակալ քարի վերայ.

«1838 Մահտեսի Պապայ Հախումեանց տոհմին չունէր զգաւակ մարմնաւոր ինքեան՝ նախ քան զօրհասին պատրաստեաց կտակ՝ շինել զտաճար սուրբ եկեղեցւոյ մի երկնահանգոյն, որ տայ վերճեմել մարդկային սեռից ի բարին անհուն՝ յանուն Տիրամայր սուրբ Աստուածածնին կենաց պատճառի յիշատակ հոգւոյն ընդ անցաւորին յայսմ աշխարհի նախ քան կատարել նոր նպատակի հողացաւ մարմին, որ աստ կայ եդեալ ի մէջ տաճարիս պերճ գերեզմանիս»:

Եկեղեցումս կան հետեւեալ գրչագիրներն.

Ա. Աւետարան փոքրագիր, գրուած թղթի վերայ, որ ունի չորս աւետարանչաց պատկերներ, բայց անճաշակ գրողն է ոմն Յովսէփ քահանայ.

Յիշատակարանից. «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թվին Հայոց ՊԿԳ. ի դրան սուրբ Խաչին եւ սուրբ Կարապետին եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչին... որ կոչի Կտուց... ի հայրապետութեան տեառն Հայոց կաթողիկոսի տէր Դաւթի, Սուրբ Խաչի Ախամարա (Աղթամարայ) առաջնորդի եւ առաջնորդութեան սուրբ ուխտին Սուրբ Կարապետին... արհիեպիսկոպոսին Մխարա... արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի դառն եւ ի նեղ ժամանակիս որ հարկապահան... զի կարի ծանծրացեալ եմք յանաւրինաց բռնութենէ, ի քրթէ, ի թաթարէ եւ յայլ ամենայն... ես Մարտիրոս Նոր շինախիւհս գաւետարան գնեցի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց»:

Բ. Աւետարան միջակ դիրքով, գրուած թղթի վերայ, պատկերազարդ, սակայն անճաշակ. Յիշատակարանից. «Արդ՝ գրեցաւ սուրբ աւետարանս ի յերկիրս Մոգաց ի գիւղս Փասավանք ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Գրիգորիս եւ սուրբ Կարապետիս ի թուականիս Հայոց ՋԻԲ. ամին ի Դանութիւն Ամթեցի Յասան բէկին եւ Խոնդքար Ըռոմցին իրար առին»:

Աւետարանիս գրողն է Իսրայէլ անուն ոմն, իսկ ստացողներն են եղբարք Մարգարայ, Կիրակոս, Յովհաննէս եւ Դաւիթ:

Գ. Աւետարան միջակ դիրքով, անճաշակ պատկերներով, գրուած թղթի վերայ.

«Թվին ՌՄԺԷ, տէր Մեսրոպս գրեցի»:

Զունի յիշատակարան, գրուած է վերջում այլ գրողից.

«Արդ եղեւ նորոգութիւն կազմի սորա ձեռամբ Յակոբի ի հայրապետութեան Հայոց տեառն տէր Մովսէսի ի գեաւղն Շռութ...»:

Դ. Աւետարան փոքրագիր, գրուած թղթի վերայ, որի գրողն է Յովհաննէս աբեղայ ոմն, իսկ գնողն է Մարիամ անուն տիկին ոմն.

«Ես Մարիամս սուրբ աւետարանս առի տուի տէր Մովսէս քահանային»:

1 Մինչեւ Ղազանչեցւոցն շինելն՝ այս էր աւագ եկեղեցին, այժմ Ղազանչեցւոցն է աւագ եկեղեցին:

2 Գարդման գաւառի Քարհատ գիւղն:

Մասունքներ

Մասն Յովհաննու Մկրտչի՝ զետեղուած մի արծաթեայ խաչի մէջ, որի վերայ գրուած է. «Յիշատակ է սուրբ մասունքս Ներքին շենացունց[1] եկեղեցուն Յովհաննու Մկրտչին, որ այժմս պատկանի սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն Մեղրեցւոց 1856»:

Եկեղեցումս՝ քահանայ երեք:

Դ. Եկեղեցի Նոր-Թաղի[2] Սուրբ Յովհաննէս Մկրտիչ, խաչաձեւ, առանց սիւների, թաղակապ. սրբատաշ քարով, որ ունի երկու դուռն հիւսիսային եւ արեւմտեան կողմերից. մի զանգատուն եւ մի գմբէթ խաչաձեւի վերայ. երկարութիւն (զանգատան հետ միասին)՝ 27 մետր 70 սանթիմ, լայնութիւն՝ 10 մետր 90 սանթիմ:

Տաճարումս կայ մի փոքրիկ գրչագիր աւետարան, գրուած մագաղաթի վերայ, որ չունի պատկերներ, բայց ունի գեղեցիկ գիր, մանր եւ անճաշակ նկարներ, նախաշեր եւ ծաղիկներ.

Յիշատակարանից. «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի յերկրիս մերում Կեղուայծոյ ի գեղոն, որ կոչի Կից. ի դրանէ Սուրբ Ստեփաննոսի 'ի հայրապետութեան Սուրբ Էջմիածնայ տէր Եղիազարու ի հովուապետութեան Ըստաթէի տէր Յովհաննէս արքեպիսկոպոսի եւ սորին սպասաւոր տէր Զաքարիա վարդապետի, ամէն: Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս թվ. ՌՃԼԳ. յունվ. Ժ. աւարտ. սորա ի թագաւորութիւնն Պարսից Շահ Սուլմանի (Սուլէյմանի) եւ դիտող յերկրիս մերում զԲաքդար Սուլդանն, որում չարչարանք կորուսուց յերկիրս, որ (որում) ետ Աստուած զերեք պատուհասն Հաճի Ալի խան սարդար (փոխարքայ) եղեւ, եկեալ ԽԲ. Ռ. հեծելով բնակեցաւ ի քաղաքն Կանջայ եւ բազում աւերութիւն արար ի Հայոց աշխարհիս եւ յետ նորա զմարախն եւ զերաշտութիւնն եւ բազումք կորեան վասն անհնչութեան իւրեանց.... դարձեալ յիշեցէք զՇնաթաղու քահանայ զտէր Առաքելն եւ զտէր Գրիգորն, որ եղեւ պատճառ սորին եւ տանուտէր Շապանն...»:

Շատ յետոյ գրած է ուրիշ ոմն.

«Կրկին յիշատակ է սուրբ աւետարանս Անդամէջցի Ծատուրի որդի Սիրականին, որ գերի էր անկեալ (աւետարանս) 'ի ձեռս այլազգեաց, վերոյ (գրեալ) Սիրականն ազատեաց եւ յետ (Լետ) յիշատակ Անդամիջոյ Սուրբ Աստուածածնայ եկեղեցոյն, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի... գրեցաւ ի թվն. ՌՄԽԵ. (1796) սեպ. Ժե.»:

Հուսկ յետոյ գրուած է. «Յիշատակ ետու սուրբ աւետարանս Շուշա քաղաքացի Աւագ Դանիէլեան Ղազարեանցս Սրբոյն Յովհաննու Մկրտչի եկեղեցւոյն յիշատակ հոգւոց մերոց, որոյ յիշեցէք զպատճառն սորա, զի այլոց կալայ (գնեցի յայլմէ)... թուական Քրիստոսի հազար ութ հարիւր ութսուն երեք ամի Ժ. մարտի»:

Եկեղեցիս ունի չորս քահանայ:

ԱՆԱՊԱՏ ԿՈՒՍԱՆԱՑ

Հիմնուած է մի սեռի վերայ (որ գրեթէ միջավայր է Մեղրեցւոց եւ Նոր-Թաղի եկեղեցիների) կամարակապ՝ առանց սիւների, որ ունի երկու դուռն՝ հարաւային եւ արեւմտեան կողմերից. ինն լուսամուտ եւ մի եռայարկ զանգատուն՝ որ պատկից է հարաւային կողմին: Երկարութիւն տաճարիս 20 մետր է, լայնութիւն՝ 9 մետր 45 սանթիմ:

Հարաւային դրան ճակատակալ քարին վերայ. «Շինեցաւ սուրբ եկեղեցիս յանուն Սուրբ Աստուածածնայ արդեամբ ձեռագործ աշխատանաց Կոյս Հռիփսիմեայ օժանդակութեամբ երից եղբարց իւրոց հարազատաց Իսրայէլի, Աստուածատրոյ եւ Պետրոսի Գրիգորեանք Բահադուրեանց ի թվն. 1816 ամի»: Միւնոյն բազմաշխատ Կոյս Հռիփսիմէն շինել տուած է զանգատունը առանց օժանդակութեան այլոց:

Անապատումս կայ մի գրչագիր աւետարան միջակ դիրքով, գրուած թղթի վերայ, պատկեր-

1 Միեւնոյն Ներքին-Շէնն է, որի բնակչաց մասին ասացինք, թէ փոխարդուած են Շուշի:

2 Հիմնուած է քաղաքի հիւսիսային կողմում, որ կոչւում է եւ Վերին թաղի եկեղեցի:

բազարդ: Յիշատակարանից. «Հաւատարիմ տանուտէրն Յակովբ եւ հայր իւր պարոն Գրիգորն, որ ստացաւ զսա (աւետարանս) ի հալալ վաստակոց իւրոց..... Եւ արդ, ես՝ յետինս ի գրչաց եւ անարժանս ի կարգաւորաց.... Մկրտիչ աբեղայ, հրաման առեալ ի պատուիրանադիր առաքելական բանէն... գրեցաւ սուրբ աւետարանս ի յաստուածաբնակ եւ հրեշտակաճեմ սուրբ ուխտս, որ Սալն Անապատ կոչիւր, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Կարապետիս... ի հայրապետութեան տեառն Սարգսի կաթուղիկոսի եւ ի թուականիս Հայոց ՋԼԴ. ձեռամբ... հաբեղայի...»:

Աւետարանիս կողքին գրուած է. «Յիշատակ է սուրբ աւետարանս Մայրապետ մենաստանի Կուսանաց Շուշու Վառվառեայ Բահաթրեանցին 1888 ամի 8 (ութներորդ ամսի) 31 ի Շուշի»:

Անապատս ունի մի ագնիւ, աշխատասէր տնտեսադէտ եւ խնամածու աբբասուհի, երեք սարկաւագուհի եւ մի նորեկ միաբանուհի:

Շուշումս է թեմական առաջնորդարանն. գրեթէ Աղուանից կաթուղիկոսութեան մահից վերջն քաղաքումս նստած են Արցախի թեմական առաջնորդներն՝ սկսեալ Բաղդասար մետրապոլիտից մինչեւ ցայսօր:

Շուշում կայ հայոց ծուխ 3016, ար. 7859, իգ. 5792, ար. ծն. 325, իգ. ծն. 281, երկրնակ 4, պսակ կոյս ընդ կուսի 138, այրի ընդ կուսի 17, այրի ընդ այրւոյ 15, միամեայ վախճանեալ ար. 179, իգ. 178:

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑ Ջ.ԴԱՍԵԱՆ

Թիւ համօրէն աշակերտաց	*330*
Թոշակատու	*260*
Զրիավարժ	*70*

Արդեանց աղբիւրներն են.

1) Թոշակադրամ աշակերտներից[1],
2) Մոմավաճառութիւնից,
3) Սրբադրամից,
4) Ծննդեան վկայականներից,
5) Պսակադրամներից,
6) Տպարանից .

Ընդամէնն մօտ	*11000 ռուբլի*

Ելք.

Տասնեւչորս վարժապետաց եւ մի տեսչի տարեկան ռոճիկ	*11000 ռուբլի*
Ս. Մարիամեան օրիորդ. երկդասեան ուսումնարան.	
Թիւ համօրէն աշակերտուհեաց մօտ	*200*
Թոշակատու	*165*
Զրիավարժ	*35*
Նոյն են արդեանց աղբիւրներն.	
Վեց վարժապետաց եւ երկու վարժուհեաց տարեկան ռոճիկ	*3250 ր.*
Փայտի, տան վարձուց, ծառայի եւ սպասուհու	*300 ր.*
Ընդամէն	*3550 ր.*

1 Երեք աստիճանի բաժանուած է թոշակների քանակութիւնն, հարուստներն տարեկան վճարում են 12 ր., միջակներն՝ 8, իսկ երրորդ դասակարգն՝ 4 ռուբլի:

Քաղաքումս կայ նաեւ Ռէալական գիմնազիա. քաղաքական ուսումնարան եւ Օրիորդաց վարժարան:

Քամու խաչ

Քաղաքիս ստորին մասում, Թրքաց թաղում կայ մի հին քարեայ խաչ, որ կոչւում է Քամու խաչ, այս է յօդացաւ հիւանդութիւնը բժշկող խաչ: Ուխտագնացութեան օրն է աւագ չորեքշաբթի: Այս օր առաւօտեանից մինչեւ երեկոյ անպակաս է ուխտաւորն եւ այն խուռն բազմութեամբ:

Նահատակ

Քաղաքում եղած Հին Հանգստարանի վարի կողմին մօտ կայ մի գերեզման, որ կոչւում է Նահատակ: Սորա տապանաքարի վերայ գրուած է. «Այս Է տապան Թիֆլիսեցի Նահատակ ԱՍտօՍԻՆ ՌՄԽԴ. ԻՆ: Ես Թիֆլիսեցի Սիմոնի որդի Սարկիս այս քարս հոկացի սէրս Նահատակին»:

Հանգստարանիս հարաւային կողմում.

«Յարձանիս շիրմի ամփոփեալ դնի
Մարմին իշխանին Խաչեն գաւառի,
Վեհ իշխանազնեայ Դանիէլ Բէկի
Որդւոյ Մելիք Բէկ իշխանապետի,
Ի տանէ հայկազն մեծ Ջալալ Դօլի
Տեառն Արցախայ Հայոց աշխարհի,
Որ Ղարապաղայ կամ Շուշւոյ նահանգ
Նա սովորաբար արդ վերածայնի,
Առ սուրբ հաւատոյ սա լուսահոգի
Նահատակի աստ յամրոցիս Շուշի
Դառն տանջանօք Իմրահիմ խանի
Որ թշնամի էր Խաչին Քրիստոսի.
Ի ՌՄԽ. կանգնեաց զայս արձան
Վշտալի որդին նահատակի
Բաղդասար արհին տէր Մետրապօլիտն
Հասան Ջալալեանց արթուն հովուապետն
Աղուանից երկրին, որք հանդիպիք այսմ տապանի
Տուք հօրն եւ որդւոյն Աստուած ողորմին ի 1851»:

Ժ.Գ. ԽԱՉԵՆ ԳԱՒԱՌ. Սահմաններն են Գարգար գետակն, Քիրս լեռնաշղթայի շարունակութեան գագաթնագիծն, Թարթառ գետն, որից մինչեւ Խաչեն գետակն ձգուած Արծաթահանքի սարի գագաթնագիծն, որ անցնում է Ղազանչի գիւղի արեւմտեան կողմից. եւ դաշտաբերանն, Խաչեն գետակից մինչեւ Գարգար գետակն:

Ա. ՂԱՅԻԲԱԼԻ ԳԻՒՂ. Հիմնուած է Շուշու արեւմտահիւսիսային հանդէպ, Գարգար գետակի ձախ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, լեռնային, անջրդի եւ սակաւ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ ցորեն, գարի, գարնանի, հաճար, կորեկ, խաշխաշ, (հաղիւ է բաւականանում իւրեանց ուտելոյ) պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90 տարի, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին. քարուկիր, քահանայ՝ երկու: Ծուխ 78, ար. 320, իգ. 260:

Բ. ԿԱՐԿԱԺԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Ղայիբալու եւ Խանքեանդու միջեւ մի բարձրահայեցիկ սեռի վերայ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ բէկական, անջրդի, խճային եւ նուազ արդիւնաւէտ, տեղական բերքերն՝ նոյն (պատուական վարունկն, սակաւ թթենի) երկար կեանք՝ 90-100. եկեղեցին՝ Ամենափրկիչ, քարուկիր, քահանան գալիս է Ղայիբալուց: Ծուխ 61, ար. 215, իգ. 190:

Դ. ԽԱՆ-ՔԵԱՆԴԻ ԱԻԱՆ. Հիմնուած է տափարակի[1] վերայ 1847 թուին ռուսներից՝ իբրեւ զօրանոց: Հետզհետէ հեռանում է զօրքն այստեղից եւ մնում են միայն ամուսնացեալ ռուս գերդաստաններ եւ սակաւ զինուորականներ եւ զաղախներ: Շուշուց, Կարկաժան, Խանածախ, Պալլուճայ, Փահլուլ գիւղերից վաթսուն հայ գերդաստաններ գալով բնակում են այժմ Խան-քեանդում. ուր կայ փոշտ եւ զաւառական դատարան: Բարեխառն է օդն եւ կլիման, բայց ոչ պատուական՝ ջուրն, երկար կեանք 70-75. հայոց եկեղեցին՝ քարուկիր, անկնունք եւ անարձանագիր. քահանայ՝ մի: Ծուխ 60, ար. 160, իգ. 140:

Սուրբ Գէորգեան միդասեան ուսումնարան տղայոց. աշակերտ 35, թոշակատու 28, ձրիավարժ 7, տարեկան ռոճիկ ուսուցչի՝ 200 ռուբլի:

Դ. ՓԱՀԼՈՒԼ ՇԻՆ. Շինուած է Խան-քեանդու եւ Ջամիլլու շինի միջեւ, մի ձորում, որի հիւսիսային, արեւմտեան եւ հարաւային կողմերն սարեր են. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, տեղական բերքերն՝ նոյն, անվնաս՝ օդն եւ կլիման, պատուական՝ ջուրն, երկար կեանք՝ 85, եկեղեցին փոքրիկ, քարուկիր, քահանան գալիս է Խանածախ գիւղից: 18 ծուխ, 66 ար. 42 իգ.:

Ե. ՋԱՄԻԼԼՈՒ ՇԻՆ. Հիմնուած է Փահլուլի հիւսիս-արեւմտեան կողմում, Խանածախի վտակի ձախ կողմում մի հովտի վերայ. բնակիչք տեղափոխուած են Մեծ-Սիւնիքից. հողն՝ բէկական, տեղական բերքերն՝ նոյն. բարեխառն՝ օդն եւ կլիման, գերազանց՝ ջուրն. երկար կեանք՝ 90. հոգեւոր պէտքերն կատարւում են Խանածախի եկեղեցում: Ծուխ 13. ար. 40, իգ. 31:

Զ. ԽԱՆԱԾԱԽ ԳԻՒՂ. Հիմնուած է Ջամիլլուի հիւսիս արեւելեան կողմում մի բարակ ջրաձորի երկու ափերին վերայ, բնակիչք նախ Մեծ-Սիւնեաց Խանածախ գիւղից 1686-ին[2] տեղափոխւում են Ջրաբերդ եւ յետոյ բնակութիւն հաստատում գիւղումս. հողն՝ բէկական, սակաւ եւ նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ նոյն (առատ է թթենի), օդն եւ կլիման՝ բարեխառն, ջուրն՝ պատուական, երկար կեանք՝ 100, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, հոյակապ, կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւն՝ 18 մետր. 82 սանթիմ, լայնութիւն՝ 10 մետր 60 սանթիմ. քահանայ՝ մի[3] : Ծուխ 85. ար. 289, իգ. 274:

Եկեղեցումս կան հետեւեալ գրչագրերն.

Մի գրչագիր ճաշոց՝ գրուած ընտիր եւ հաստ թղթի վերայ, գերազանց են պատկերներն, նախշերն, ծաղիկներն, թռչնագրերն, ազնիւ՝ ներկերն եւ ոսկեզօծներն: Ունի Յիսուսի Քրիստոսի աւետման, ծննդեան, քառասնօրեայ գալստեան, մկրտութեան, համբարձման, հոգեգալստեան (երկու պատկեր), Աստուածածնայ վերափոխման, սուրբ Խաչի եւ բոլոր տօնեցեալ նահապետաց, սուրբ մարգարէից, առաքելոց, մարտիրոսաց, հայրապետաց, թագաւորաց, կուսանաց, ճգնաւորաց, Քրիստոսից բոլոր բժշկուածների պատկերները՝ զետեղուած լուսանցքներում:

«Գիրքս, որ կոչի ճաշոց, յիշատակ է Առաքելին, հաւրն Ղուլուն, մաւրն Մարիամին, եղբայր Մարգարին եւ մեղապարտ գրչի Փիլիպոսին եւ գիւղն Գոմորանց, ի դուռն սուրբ Հռիփսիմէին, որ է (Առաքելն) բարեպաշտ եւ սրբասէր, բարեբարոյ եւ առաքինասէր, հաւատարիմ եւ Աստուածասէր եւ ամենայն որբոց եւ այրեաց եւ կարօտելոց տէր եւ տիրական»: Անյայտ է բուն յիշատակարանի թուականն, բայց յետոյ նորոգել տուած են ճաշոցս գիւղիս ժողովուրդն եւ քահանան:

---

1 Տափարակս պատկանում է Վարար-ակն գիւղի բնակչաց, որք փոխադրուած են Շուշի, բայց գիւղի աւերակն, քարուկիր եկեղեցին եւ հանգստարանն մնում են Խան-քեանդու հիւսիսային ձորակի ձախ լանջի վերայ՝ Վարարակն աղբիւրի մօտ:

2 «Դաղտ. Ղար.» եր. 119-121: Գիւղիցս վերեւ Բեւեռաթափ (Մխթէօքեան) սարի բարձ. 6944 ոտք:

3 Գիւղումս ծնուած է եւ գրքիս հեղինակն. գիւղիս հանգստարանում հանգչում են իմ պապ Ռեանդխուտա-Խաչատուր Բարխուտարեանցն իւր շատ քաջերով, իմ հայր Գրիգոր, իմ մայր Եղիսաբեթ, իմ տատ Մարիամ, իմ հօրեղբարք Մկրտիչ, Սարգիս, Թէոս, իմ վաղաթառամ եղբայր Ստեփան. բայց կենդանի են Աստուծոյ ամենակարող զօրութեամբ իմ մեծ եղբայր Կարապետն, փոքր եղբայր Յակովբն եւ իմ մեծ քոյրերս Անթառամն, Շահգատն եւ Հերիքնազն (վաղաթառամ վախճանուած է Պալլուճայում իմ միջակ քոյր Վառվառան): Հանգիստ ոսկերաց Ձերոց, սիրելիք իմ:

Մի գրչագիր աւետարան, որ գրուած է թղթի վերայ եւ պահուած անխնամ, որի ստացողն է. «յիշեցէք յաղաւթս ձեր զստացող սուրբ աւետարանիս զՄանուէլ փիլիսոփայն եւ զսրբազան քահանայն»: «Արդ գրեցաւ կենսաբեր սուրբ աւետարանս ձեռա... անիսի... թեանս[1] Հայոց, ի տէրութեան Կիլիկեցւոց Նահանգին երկրորդ Հեթմոյ բարեպաշտի 'ի դառն եւ յանբարի ժամանակիս. յորում զհայրապետական աթոռն ամենայն սրբութեամբն եւ զհայրապետն ժողովրդեամբն կորուսաք... Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի մեծահռչակ սուրբ ուխտս Դրազարկ կոչեցեալ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածին»:

Գիւղիս անդերում կան հետեւեալ հնութիւններն.

1) Շհրատեղ (Շհարատեղ-քաղաքատեղ) գիւղիս հիւսիսային կողմում, երեք կողմերից առանձնացած, միջակ մեծութեամբ տեղ, որ այժմ հերկւում է: Ելնում են խեցեղէն բեկորներ. իսկ կանխաւ գտնուած է եւ արծաթ ու պղինձ դրամներ:

2) Վաղեմի հանգստարան անարձանագիր քարերով գիւղիս վերի գլխին: Հանգստարանից վերեւ մի բարձր բլրակի վերայ Եուղուրլուի խաչարձանն: Մակ քար:

3) Գիւղատեղի, հանգստարան եւ եկեղեցու աւերակ կան Բանուոր-նան[2] կոչուած տեղում, որ գտնւում է գիւղից կէս ժամ տեղ վերեւ մի գեղեցիկ սարահարթի վերայ. գիւղատեղի, խաչարդարդ հանգստարան եւ եկեղեցու աւերակ Դրագտի[3] ակունքներում, երկու առուակների խառնուրդում. Ջալալ-Հասանի[4] գիւղատեղի. հանգստարան, որ սեփական գոմանոց եղած է Խանածախ գիւղացւոց 1790 թուականից վեր. նոյնպէս գիւղատեղի եւ հանգստարան Մլըկիւնց շինատեղ կամ Գիւմրատեղ կոչուած վայրում, որ գտնւում է Պալլուճայ գետակի աջ կողմում Խանածախ եւ Պալլուճայ գիւղերի սահմանի վերայ:

Է. ՊԱԼԼՈՒՃԱՅ ԳԻՒՂ. Հիմնուած է համանուն գետակի ձախ ափի բարձրութեան վերայ. բնակիչք՝ նախ Մեծ-Սիւնիքից տեղափոխուած Ջրաբերդ գաւառն, որից ապա եւ այստեղ Խանածախ գիւղացւոց հետ, հողն՝ բէկական, անջրդի եւ միջակ արդիւնաբեր. անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 86-90. եկեղեցին՝ Նորաշէն, Սուրբ Աստուածածին, համակ սրբատաշ կրաքարով շինուած հասարակութեան ծախքով կառուցեալ չորս սիւների վերայ, որ ունի մի կլոր գմբէթ ժողովրդեան աղօթած տեղից վերեւ, մի քարացեալ օձ՝ ներքուստ հարաւային որմի վերայ երկու լուսամուտների մօտ, 20 մետր 10 սանթիմ երկարութիւն, 11 մետր 45 սանթիմ լայնութիւն. քահանայ՝ մի: Մուխ 160. ար. 550, իդ. 432:

Գիւղիս անդերում կան հետեւեալ հնութիւններն.

1) Գիւղիս հիւսիսային կողմում հին գիւղատեղի, հանգստարան եւ քարուկիր եկեղեցի Սուրբ Վանէս անուն, որ մեծ ուխտատեղի է եւ հանգստարան, որի մէջ հանգստանում են եւ Պալլուճեցի քաջերի ոսկերքներն:

2) Աւերակ գիւղատեղի եւ հանգստարան գիւղիս արեւմտեան կողմում՝ Ալուխանայ շէն անուն:

3) Թամցի եղցի (եկեղեցի) աւերակ գիւղատեղի, հանգստարան եւ եկեղեցի այս անուամբ Ցոցագետ կոչուած վտակին աջ կողմում:

Ը. ՄԷՅՏԻ-ՇԷՆ. Հիմնուած է Պալլուճայի հիւսիսային կողմում լեռների մէջ մի ձորում. բնակիչք գաղթած են Խոյից 1828-ին, հողն բէկական, տեղական բերքերն՝ նոյն. անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 90. եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, քարուկիր, քահանան գալիս է Պալլուճայից: Մուխ 54, ար. 186, իդ. 155:

1 Անյայտացած են կէտադրեալ բառերն եւ տառերն:
2 Այժմ ուխտատեղի է:
3 Խանածախ գիւղիս վտակի անունն է:
4 Այժմ Ջան-Հասան՝ ըստ կրճատման օրինաց Արցախի:

Թ. ԴԱՀՐԱԻ[1] ԳԻՒՂ. Հիմնուած է Մէյտի-շէնի արեւմտեան կողմում մի բարձր, սեպացեալ քերծի տակ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ բէկական, տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 85-90. եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս կառուցեալ երեք կամարների վերայ. երկարութիւն՝ 17 մետր 40, լայնութիւն՝ 8 մետր 60:

Դրան ճակատակալ քարի վերայ. «Սրբոյն Հոյաննու Կարապետիս եկեղեցույն շինութիւնս այս է 1885 ամի»: Մուխ 110, ար. 430, իդ. 351:

Գիւղիս հիւսիս-արեւմտեան կողմում կայ երեք բեմ. Ա. Հարաւային բեմի զոյգ խաչերի դլլխակալ քարի վերայ. «Ի թվ. ՉԻԵ. ես Հասան որդի Վասակայ կանգնեցի զխաչս եղբաւր իմոյ Ջուրճին Ուքանայ ի փրկութիւն հոգւոյ. ով կարդէք, յիշեցէք ի Տէր»:

Բ. Բեմի վերայ, որ քարընկէց հեռի է առաջինից, փորագրուած է.

«Թվ. ՇԻ. ես Ոհան կանգնեցի զխաչս ինձ եւ ամուսին իմ Թիթեղնիկայ, աղաւթս յիշեցէք»:

Գ. Բեմն կիսակործան է. որ նոյնպէս քարընկեց հեռի է երկրորդից:

Բոշնին-նահատակ[2]

Ա. Բեմից փոքր-ինչ վերեւ քերծի տակ մի բոշնի ծառի մօտ կայ մի գերեզման, որի վերայ շինուած է մի փոքրիկ սեղան: Գերեզմանիս շուրջն պարսպուած է պատով, որի դրան գլխի քարի վերայ գրուած է. «Սուրբ Նահատակին Փոշնին չորս կողմաւն հասար քաշեցինք Անդրի, Ստեփան, Արզման Իսրայէլեանք»:

Ժ. ՊՏՐԵՑԻՔ[3] Գիւղս հիմնուած է համանուն գետակի ձախ կողմում, մի ջրաձորի արեւելեան ափում. դիրքն՝ հարաւահայեաց, բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական. անջրդի եւ նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն (առատ է ընկուզն եւ խոզ), պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 100. եկեղեցին՝ Սուրբ Ստեփաննոս, քարուկիր, թաղակապ երեք կամարների վերայ, երկարութիւն՝ 16 մետր 75 սանթիմ, լայնութիւն՝ 9 մետր 35 սանթիմ. քահանայ՝ մի: Դրան մօտ մի տապանի վերայ.

«Ազնիւ տապան Գաբրիէլ վարդապետին.
Որ է որդի Գրիգոր Այտինովին
Եւ էր հայր Սրգավաք Մովսէսին եւ տէր Յարութիւնին,
Սա էր միաբան Յակոբա սրբո վանքին
Վախճանեցաւ 1860 ամի»:
Մուխ 121. ար. 540, իդ. 442:

Բերդ գիւղի հարաւային հանդէպ գետակի աջ կողմում մի լեռնակի գլխին փոքրիկ եւ հին բերդակ, որից գետնափոր ական կայ մինչեւ գետակն:

Ամենափրկիչ եկեղեցի

Գիւղի արեւմտեան կողմում երկու ձորակի մէջ մի փոքր հարթակի վերայ, շինուած է անտաշ քարով երկու կամարների վերայ: Ունի երկու փոքր եւ մի աւագ խորան. երկու խորհրդարան, երկու դուռն եւ չորս լուսամուտ. 11 մետր 3 սանթիմ երկարութիւն եւ 9 մետր 70 սանթիմ լայնութիւն եւ մի երկար գրութիւն բեմի ժողովրդահայեաց երեսին վերայ. սակայն ափսո՜ս որ եղծուած է մեծ մասամբ. ընդօրինակում ենք մնացեալը.

«Յանուն... զեկեղեցիս զԴարապաս նկարաք.... Ուխանին Մեծունիքն. յիս տվին արդ ծննդեան Ը. աւր էր եւ աղուհացից տաւներն եւ ի զատկէն ինձ ու նոր կիրակին զպատարագն մեզ առնեն Դարապաս վաճառն Հուռահոա տներն եկեղեցւոյս»:

1 Գիւղիս գլխի սարի բարձ. 4606:
2 Բոշնի ծառին մօտ եղած նահատակ:
3 Պտրեցւոց սարի (Ղրխզըզ) բարձր. 9324, գիւղից վերեւ, գետի ձախ կողմի սարի՝ 5227:

Արեւմտեան դրան դլխին արտաքուստ մի սպիտակ խաչարձանի վերայ.
«Աթանաս Է. Նա կաթուղիկոս է Արբահի[1] »:
Մեծ հանդստարան պատած է տաճարիս շուրջն, որից փոքր-ինչ հեռի կայ եւ գիւղատեղի:
Մեծ գիւղատեղի, հանդստարան եւ փոքր եկեղեցի կայ Պարեցիք գիւղի հարաւային հանդէպ, ջրաձորի աջ հովտում:

Օծկայ վանք

Ամենափրկչից դէպի արեւմուտք՝ հիմնուած մի սարահարթի վերայ, որի շրջապատն զառիվայր է: Ունի փոքր դիրք եւ եկեղեցու ձեւ: Վանքիս մօտ նաւ կայ եւ հանդստարան եւ գիւղատեղի:

Ծերայ Նհատակ

Գիւղատեղի, հանդստարան եւ եկեղեցի կայ գիւղիս բաւական ներքեւ գետի ձախ կողմում (գետիս վերի կողմն կոչւում է Պարեցւոյ գետ, իսկ վարինն՝ Խոջալլուի գետ), որք միասին կոչւում են Ծերայ Նհատակ: Եկեղեցումս ամփոփուած է Ծեր Նահատակի մարմինն:

Սուրբ Յովհաննէս Մկրտիչ

Ծերայ Նհատակից փոքր-ինչ բարձր, նոյնպէս գետակի ձախ կողմում կայ գիւղատեղի, հանդստարան եւ քարուկիր փոքր եկեղեցի, որի գլուխն արդէն խոնարհած է: Այս ամէնն կոչւում է նաեւ Խրաւանդ:

Դարապասի եկեղեցիներն

Սուրբ Յովհաննէսից վերեւ կայ չորս քարուկիր մատուռ, որք շինուած են մօտ առ մօտ, կայ եւ գիւղատեղի եւ հանդստարան:

Օխտը (եօթն) եղցի

Նոյն գետակի աջ կողմում մի սարահարթի վերայ մօտ առ մօտ շինուած են եօթն եկեղեցիներ, որոց մօտ կայ գիւղատեղի եւ հանդստարան:
ԺԱ. ԽԱՆՁՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Պարեցիք գիւղի հիւսիսային կողմում մի հարաւահայեաց լանջի վերայ, բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական եւ նուազ արդիւնաւէտ, տեղական բերքերն՝ նոյն, սննդարար՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 85. քահանան գալիս է Դաշ-Բուլաղից. եկեղեցին՝ Սուրբ Ստեփաննոս, քարուկիր, կամարակապ, երկարութիւն՝ 19 մետր 52 սանթիմ. լայնութիւն՝ 8 մետր 95 սանթիմ:
Դրան ճակատակալ քարի վերայ. «Ի ՌՃԻԲ. թվին ես Պետրոս կաթուղիկոս Աղուանից ի գեղջէս Խանցկայ, հայրն իմ Մանկասար, մայրն Ադխանն եւ աւաք եղբայրն իմ Իշխանն եւ իւր որդիքն Ովանէսն, Պապաջանն եւ իւր թոռ Մանկասարն եւ տատ Խաթունն շինեցաք զեկեղեցիս յիշատակ մեզ եւ ննջեցելոց մերոց»:
Եկեղեցուս հիւսիսային կողմում. «Թիվն ՈՀԹ. (1230) ես Հայրապետ, Պետրոս, Վարդան, Յոհան կանգնեցաք զխաչս մարն մեր, որ բարեպաշտ, աղքատասէր էր. յաղաւթս յիշեցէք»:
Ծուխ 60, ար. 233, իդ. 191:

1 Բառ արաբերէն, որ նշանակում է 4-չորս երկիրների վերայ կաթուղիկոս է:

Ջոխտակ խաչ

Գիւղիս հարաւային կողմում. ճանապարհի վերայ, մեծ ծառերի տակ կայ երկու մեծ քարեայ խաչարձան, որից միոյն վերայ.
«Յանուն Սուրբ Երրորդութեան ես Սոստանէս ու Բարսեղ կանգնեցաք զխաչս հաւր մերոյ Հայրապետայ եւ մարն մերոյ Հոռամսիմին, որք երկրպագէք, յաղաւթս ՁԲ. (1253)»:

Սուրբ Յովհաննէս

Ջոխտակ-խաչերից ներքեւ. առուակի ձախ կողմում, քարուկիր շինուած մատուռ, որի մօտ կայ եւ հանդստարան: Կայ հանդստարան նաեւ վարդապետի խուցում:

Անապատ

Գիւղիս արեւմտեան կողմում Շոշռան խութի ստորոտում կայ մի քարուկիր մատուռ Անապատ անուն, երկու մեծ հանդստարան եւ երկու գիւղատեղի:
ԺԲ. ԴԱՇ-ԲՈՒԼԱՂ ԳԻՒՂ. Շինուած է Խանձքի արեւելեան-հիւսիսային կողմում մի ձորակի աջ կողմում, հիւսիսահայեաց լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, անջրդի, հացաւէտ, տեղական բերքերն նոյն (կան եւ ձիթահանքեր) ամռան՝ ճնշիչ օդն եւ կլիման, ջուրն՝ անվնաս, երկար կեանք՝ 80-85. եկեղեցին՝ Սուրբ Գէորգ, քարուկիր, կառուցեալ երեք կամարների վերայ. երկարութիւն՝ 17 մետր 34 սանթիմ, լայնութիւն՝ 8 մետր 45 սանթիմ. քահանայ՝ մի: Ծուխ 136, ար. 577, իդ. 547:
Սուրբ Մեսրովբեան միդասեան տղայոց ուսումնարան, աշակերտ 26, թոշակատու 16, ձրիավարժ 10. միամեայ ռոճիկ վարժապետի՝ 300 ռուբլի:
ԺԳ. ՀԻԼԻՍ ԳԻՒՂ. Շինուած է Դաշ-Բուլաղի արեւմտահիւսիս կողմում երկու առուակների ջրախառնուրդում. բնակիչք՝ գաղթած Ղարադաղ նահանգից. հողն՝ բէկական, միջակ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն, օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, երկար կեանք՝ 85-90. եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, քարուկիր, քահանայ՝ երկու: Ծուխ 50, ար. 165, իդ. 130:
ԺԴ. ԽՆՁԻՐՍՏԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Հիլիսի արեւմտահիւսիս կողմում (ոչ այնքան հեռի. Հիլիսի հիւսիսային վտակի վերայ) դիրքն հարաւահայեաց լանջ. հողն՝ արքունի, անջրդի եւ նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ միեւնոյն, օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, երկար կեանք՝ 100. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ երկու կամարների վերայ: Ունի 16 մետր 62 սանթիմ երկարութիւն եւ 10 մետր լայնութիւն, մի փոքր կաթուղիկէ, 2 քահանայ եւ դրան ճակատակալ քարին վերայ սոյն արձանագրութիւնը.
«ՌՄԳ. յիշատակ է Սուրբ Աստուածածին եկեղեցիս Խոնծրուստանցի Մելիք Միրզախանին եւ ծնողացն Այտինին եւ Մարիանին եւ կողակցուն պարուն Նանին եւ Հերիքին եւ որդուն Ալայվերտին»:
«Յիշատակ է Սրանոցս (Ձիթահանքս) շինեցաւ Մելիք Ալահվերտին, որ էր որդի Մելիք Միրզայխանին, թվ. ՌՄԼԱ.»:
Ձիթահանքս, որ գրեթէ կից է եկեղեցուս արեւմտեան կողմին, աւերակ է այժմ:
Եկեղեցուս հարաւային պատի տակին արտաքուստ.
«Կամաւն Աստուծոյ ամենազօրին, այս է տապան Մելիք Միրզախանին, որ է որդի Այտինին, հայր էր Մելիք Ալավերտին, իշխանութիւն անէր Խաչենու երկրին, որ մասկան նստաւ Խնծրստանայ գեղին, շինեց յիշատակ Աստուածածնայ սուրբ եկեղեցին ամի վախճանեցաւ ՌՄԻԶ. թուականին»:
Այստեղ են Մելիք-Ալլահվերտու եւ Մելիք-Ղահրամանի գերեզմաններն եւս: Բայց ըստ «Գաղտնիք Ղարաբաղու», սոքա չեն ի շարս հարազատ մելիքների, այլ ճըռ մելիքներ են:
Ծուխ 90, ար. 227, իդ. 255:

Հանգած եղցի

Այսպէս է կոչւում այն եկեղեցու աւերակն, որ կայ գիւղիս ստորոտում: Աւերակիս շուրջն ընդարձակ հանդստարան է՝ լի հին ամփոփեալներով:

Մի քարեայ խաչարձանից.

«Ես Դաւիթ կանգնեցի զխաչս իմ ծնողաց թվ. ՇԵ.»:

Աւերակ եկեղեցու հիւսիսային կողմում.

«Այս է տապան Մեծ շինայցի Տէր Սարգիսի դուստր Մարեանին, որ էր կողայկից Բալի որդի Իսամին, որ է եխբար ուզպաշի Պողոսին, որ էր առաջ Չալաղան ուզպաշին հարսն էր. սորայ համար շատ մուվայտի[1] վեր իկաց, յետով մենք բերինք. թվ. ՌՃՁԶ. օվ որ կարդայ. Աստուած ողորմի ասէ»:

ՊՊԷՆ ՇԷՆ (Պապուն շէն)

Աւերակ գիւղատեղի է այս, որը այժմ խնձիրստանցիք փոխած են Գոմեր, որոց մօտ կայ եւ հանգստարան:

Սուլուլ քար

Գիւղից վերեւ մի բլրի վերայ կայ մի մարդաձեւ քար, որ ունի իւր գլխին վերայ կաթսայի ձեւով մի այլ քար:

Աւանդութիւնն այս քարի մասին տալիս է հետեւեալ տեղեկութիւնը.

«Թաթարների տիրապետութեան ժամանակ հայ կին ոմն եփում է կերակուր, պատրաստում հաց, դնում գլխին կերակրով լի կաթսան, որ տանէ եւ կերակրէ գութանաւորները[2] : Հազիւ թէ հասնում է կէս ճանապարհ, մի քանի թաթարներ ընկնում են խեղճ կնոջ ետեւից եւ հետապնդում, որ հասնեն եւ բռնեն: Որքան կարողութիւնն հասնում է (որքան կարողանում է), վազում է խեղճ կինն, յետոյ ճարահատեալ դիմում է դէպի սարին գագաթն, բայց որովհետեւ իւր գլխին վերայ է լինում կերակրով լի ծանր կաթսան եւ չէ կամենում թափել կերակուրը եւ միւս կողմից հասուահատ[3] էին անիրաւ թաթարներն, վասն որոյ ի բոլոր սրտէ խնդրում է Աստուածածնից քարանալ, միայն թէ չընկնիլ պիղծ թաթարների ձեռքն. իսկոյն քարանում է կաթսայով միասին եւ մնում մինչեւ ցայսօր»:

ԺԵ. ՍԼՅՏԻ ՇԷՆ. Հիմնուած է խնձիրստան գիւղի արեւմտահիւսիս կողմում այն ճանապարհի վերայ, որ բանում է Շուշուց Գանձասար. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, անջրդի եւ նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք 90, եկեղեցին Սուրբ Յովհաննէս, քարուկիր, յիշատակ Շուշեցի Մահտեսի Բալայ Զաքարեանցին, բայց վտանգաւոր կերպով վնասուած, քահանան գալիս է խնձիրստանից: Ծուխ 45, ար. 195, իգ. 175:

ԺԶ. ՈՒԼՈՒ-ՊԱՊ ՇԷՆ. Հիմնուած է 1855 թուին Սէյտի-շինի հիւսիսային կողմում մի սարի հարթակի վերայ. բնակիչք, որ հաւաքուած են մերձակայ գիւղերից, նախ բնակած են Խաչեն գետակի աջ ափի մօտ, ապա օդի ծանրութեան պատճառաւ բարձրացած են սարահարթս, հողն՝ վանքապատկան եւ հացաւէտ, տեղական բերքերն՝ նոյն (չունին թթենի եւ պարտէզ), գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն, եկեղեցին է Պողոսբերք (Պտկի սուրբ Գէորգ) վանքն, որ է շինիս արեւելեան հանդէպ բարձրագոյն սարի գագաթի վերայ: Ծուխ 20, ար. 60, իգ. 58:

1 Նշանակում է՝ շատերն հետամուտ էին կին ածել այս հարսը:

2 Այժմ եւս կայ այս սովորութիւնն:

3 Բառ տեղական, որ նշանակում է հասնելու վերայ էին, չորս կամ հինգ քայլ մնացած էր, որ հասնէին կնոջ ետեւից:

ՊՏԳԵՍԲԵՐՔ ՎԱՆՔ (մօտ 4900 ոտք) (18)

Արդէն իմացանք, որ Պտկի Գէորգ էր վանքիս անունն, որի սարի գագաթն բարձր է Խաչեն գաւառի բոլոր գիւղաբնակ սարերից: Վանքս ունի միւնոյն ձեւը եւ գրեթէ նոյն իսկ մեծութիւնը, ինչ որ ունի Գաչայ վանքն. միչեւ քարերի գոյնն, կարծրութեան աստիճանն, ճարտարապետութեան ոճն նոյն եւ նման են միմեանց: Տարբերութիւնն այն է միայն, որ բարձր եւ սրածայր է Գաչայ կաթուղիկէն եւ ունի հին գաւիթ, իսկ ցածր է Ս. Գէորգիս կաթուղիկէն եւ չունի գաւիթ: Վանքիս դասումն կայ մի փոքր գերեզման, որի մասին աւանդութիւնն ասում է, թէ սոյն ամփոփեալն մահմեդականի որդի է լինում. քանիցս սա իւր ծնողաց հետ գալիս է ուխտի՝ վանք: Բայց որովհետեւ չ՝բերք են լինում ծնողներն եւ ուխտով խնդրած այս զաւակն, վասն որոյ որդին թողնում է իւր ծնողները եւ յաճախ դիմում վանքս եւ շաբաթներով աղօթում վանքումս: Քանիցս գալիս է հայրն եւ իւր տուն տանում իւր որդին, սակայն կրկին եւ կրկին փախչում է որդին եւ մտնում վանքս: Վերջապէս հայրն, ձանձրանալով որդու արարմունքից եւ չկամենալով քրիստոնեայ տեսնել իւր որդին, գալիս է վանքս, համոզում որդին՝ տուն տանելու: Իսկ որդին, չկամենալով բնաւ տուն գնալ, մնում է տաճարումս եւ չէ դուրս գալիս, հանում է զայրացած հայրն եւ նահատակում այժմեան գերեզմանի տեղում, որի մարմինը, ամփոփելով այս իսկ տեղում, մնում է մինչեւ ցայսօր: Ուխտատեղի է գերեզմանս:

Ամենամեծ ուխտատեղի է վանքս, մանաւանդ ամուլ մարդոց եւ կանանց համար, ոչ միայն քրիստոնէից, այլ եւ մահմեդականաց համար:

Արտաքուստ վանքիս արեւելեան կողմում կայ մի անտաշ եւ կոպիտ մեծ քար, որի մասին աւանդութիւնն պատմում է, թէ Արջի գերեզման է այս: Վանքիս շինութեան ժամանակ մի որձ արջ, ի բաց թողլով իւր գազանային բնաւորութիւնը, հեզաբար մօտենում է բանուորներին եւ վարժուելով՝ կրում ծանր քարերը հանքից վանքիս մօտ մինչեւ շինութեան աւարտս. եւ միշտ կերակրւում այստեղ մինչեւ իւր վերջին շունչն: Ապա թաղում են այստեղ: Որքան ուշագրաւ եւ դուրալի է սարիս տեսարանն:

ԺԷ. ՌԵԻ ԳԻԻՂ. Հիմնուած է սուրբ Գէորգ վանքի սարի արեւելեան ստորոտում. բնակիչք՝ բնիկ, հողն բէկական, անջրդի եւ նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն, պատուական օդն, կլիման եւ ջուրն եւ տեսարանն, երկար կեանք՝ 100 տարի, եկեղեցին վնասուած է եւ անդործածելի, քահանայ մի: Ծուխ 40, ար. 180, իգ. 150:

ԺԸ. ՍԱՐԴԱՐԱՇԷՆ. Հիմնուած է Ռեւ գիւղի հիւսիս-արեւելեան կողմում մի ձորակի մէջ. բնակչաց մեծ մասն՝ բնիկ, փոքր մասն՝ գաղթած Խոյից, հողն արքունի, ամենայն ինչ՝ միւնոյն, երկար կեանք՝85-90. եկեղեցին՝ Սուրբ Գէորգ, ծածքն փայտաշէն, քահանան գալիս է Նորագեղից:

Մի վաղեմի մատուռ կայ գիւղիս հին հանդստարանում, որի գոյութիւնն հին է եւ չէ վերաբերում այժմեան բնակչաց: Ծուխ 40, ար. 174, իգ. 175:

Խաչեն գետակի աջ կողմում, գետակահայեաց լանջի վերայ գիւղատեղի եւ հանդստարան, որ կոչւում է Վաքա:

ԺԹ. ՂՇԼԱՂ-ԳԻԻՂ. Հիմնուած է Սարդարաշէնի հարաւային կողմում մի ջրաձորի ձախ կողմի վերայ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, մասամբ ջրարբի եւ միջակ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն, (կայ եւ այգի, թթենի, գործարան մետաքս քաշելու), օդն, կլիման՝ փոքրինչ տաք ամուսն, ջուրն՝ անվնաս, երկար կեանք՝ 80-85. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, կամարակապ, քահանայ՝ երկու: Ծուխ 159, ար. 613, իգ. 483:

Ի. ՆՈՐԱԳԵՂ. Հիմնուած այն սարի արեւմտահայեաց լանջին վերայ, որ սկսած է Թարթառ գետի աջ կողմից, անցած Արծաթի հանքով եւ Ղազանչի գիւղի արեւմտեան կողմով, ընդհատուած Խաչեն գետակի հեղեղատներով, վերստին շարունակած մինչեւ Գարգար Ասկերանի մօտ՝ հանդէպ Բեսթուկայ սարին: Իսկ միւս լեռնագօտին սկսեալ Նորագեղիս հիւսիս-արեւելեան կողմից ձգուած է Խաչեն գետակի եզերքով մինչեւ դաշտաբերանն: Բնակչաց մեծ մասն բնիկ. փոքր մասն՝ գաղթած Խոյի գաւառից. հողն՝ բէկական, կարի սակաւ, անջրդի եւ նուազ արդիւնաբեր,

տեղական բերքերն՝ նոյն (այգի չունին), պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն եւ միանգամայն՝ տեսարանն, երկար կեանք՝ 90. եկեղեցին՝ Սուրբ Գէորգ. թաղակապ եւ գեղեցիկ. երկարութիւն 16 մետր 79 սանթիմ, լայնութիւն՝ 9 մետր 60 սանթիմ. քահանայ՝ մի: Տուխ 81, ար. 600, իգ. 475:

Հիւնի-խաչ (հունի ծառի մօտի խաչ), որ կայ միւնոյն սարի արեւմտահայեաց լանջի վերայ, գիւղից դէպի Ասկեարանի կողմն: Երբ չորքոտանի ընտանի կենդանեաց պատահում է դաբաղ[1] կոչուած հիւանդութիւնն, գիւղացիք մեծ ջերմեռանդութեամբ բերում են այս խաչի ոտքն եւ բժշկւում են անասուններն:

ԻԱ. ՂԼԻՋԲԱՂ ԳԻՒՂ. Հիմնուած է Նորագեղի արեւելեան կողմում. միւնոյն սարի արեւելահայեաց լանջի վերայ, բնակիչք բնիկ, հողն բէկական, նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն (ունին այգի), պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 85, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն եւ հնացեալ. քահանան գալիս է Խանաբատից: Տուխ 56, ար, 242, իգ. 252:

ԻԲ. ԽԱՆԱԲԱՏ ԳԻՒՂ. Հիմնուած է Ղլիջբաղի մօտ նոյն լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ. հողն բէկական, տեղական բերքերն՝ նոյն, օդն եւ կլիման՝ անախորժ եւ ճնշիչ ամռան, երկար կեանք՝ 70-75. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն. քահանայ՝ մի: Գիւղիս հանգստարանում կայ մի հին քարուկիր մատուռ: Տուխ 95, ար. 430, իգ. 370:

ԻԳ. ԽՐԱՄՈՐԹ ԳԻՒՂ. Հիմնուած է Խանաբատի հիւսիսային կողմում, մի բարձրաւանդակի վերայ, դիրքն՝ արեւելահայեաց, բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, տեղական բերքերն՝ նոյն, երկար կեանք՝ 70. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քահանան գալիս է Քարագլխից: Տուխ 55, ար. 213, իդ. 215:

ԻԴ. ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳԻՒՂ. Հիմնուած է Շիկաքար կոչուած քերծի գլխին: Վիմահերձ, սեպացեալ եւ բարձր ապառաժներ են գիւղիս շրջապատն, ունի միայն երկու մուտք՝ արեւելեան եւ արեւմտեան կողմերից, մէկ խօսքով՝ գիւղատեղիս հին ժամանակներում նշանաւոր բերդ եղած է: Բնակչաց կէս մասն՝ բնիկ, իսկ միւս կէսն՝ տեղափոխուած Մեծ-Սիւնեաց Արաւիս եւ Դարապաս գիւղերից եւ Բարկիւշատից, հողն՝ վանքապատկան (Գանձասարին), տեղական բերքերն՝ նոյն, (չունին այգի եւ պարտէզ), գերազանց օդն եւ կլիման եւ ջուրն (վերջինս խիստ պակաս է) երկար կեանք՝ 120, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի: Տուխ 79, ար. 358, իդ. 280:

Եկեղեցուս հարաւային կողմում մի խաչարձանի վերայ. «Ես Սումպատ կանգնեցի զխաչս Համ..մ.. կողակից իմ Հաւասայ եւ Հեղան»:

Հին հանգստարան

Գտնւում է գիւղիս հարաւարեւմտեան կողմում, որի մէջ կան նշանաւոր մահարձաններ խաչազարդեալ: Մի խաչքարի վերայ.

«Մեք հետեւիք Աստուծոյ որդիքս Պապա, Սնպատ, Սարգիս.....» (անընթեռնելի):

Մի այլ կիսատ քարի վերայ. «Խաչս Մխիթարայ, Քրիստոս ողորմի նմայ»:

Այլ նշանաւոր խաչարձանի վերայ.

«Թվ. ՉԲ. Իշխանութիւն Հասանայ ես Սնպատ եւ եղբարք իմ կանգնեցաք զխաչս բարեխաւս առ Քրիստոս ինձ եւ ամուսին (նոյն) իմոյ Կատային, զոր ետ Պարոն մեզ հայրենիք եւ գերեզմանատեղ. Քրիստոս աւգնէ իւր որդեացն. ամէն»:

Գիւղիս հիւսիսային կողմում կայ աւերակ գիւղատեղի եւ հանգստարան, իսկ հարաւային կողմում՝ աւերակ եկեղեցի եւ հանգստարան:

Գիւղիս շրջապատում կան ականաւոր քարայրեր. արեւելեան կողմում կայ երեք քարայր.

1 Սաստիկ ցաւում են կճղակներն եւ սկսում են կաղալ անասուններն ու տանջուիլ:

մէկի առաջքն փակուած է քարուկիր պատով. մի քարայր՝ հիւսիսային եւ մի նշանաւորն՝ արեւմտեան կողմում:

ԻԵ. ՓԱՌՈՒԽ ՇԷՆ. Հիմնուած է Խաչեն գետակի աջ կողմում, Շիկաքարի հիւսիսահայեաց լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ վանքապատկան, բարերեր եւ այգեւէտ, տեղական բերքերն՝ նոյն (խաղող եւ թթենի առատ), վատառողջ՝ օդն եւ կլիման եւ ոչ սննդարար՝ ջուրն, երկար[1] կեանք՝ 45-50. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին: Տուխ 8, ար. 12, իդ. 12:

Շիկաքար. Այժմ եւս այս անուամբ է կոչւում Քարագլխի ամբողջ բնակավայրն: Բերդաւարն, որի արեւմտեան-հիւսիսային կողմումն է Փառուխ շէնս, որի արեւելեան հանդէպ քերծի մէջ է այն նշանաւոր քարայրն, որի մէջ հաւաքուելով մօտակայ ժողովուրդն պատերազմների ժամանակ, ազատ մնացած է վնասուելուց: Այժմ խիստ բարձր մնացած է քարայրիս մուտքն՝ բերանն, հետեւաբար եւ վտանգաւոր՝ բարձրանալն, քանզի շատ իջած է քերծի շարունակութիւնն:

ԻԶ. ԿԻԶԱՆ ՇԷՆ. Հիմնուած է Փառուխի արեւմտեան կողմում, Խաչեն գետակի ձախ ափից բաւական դէպի հիւսիս, Պոգոսբերքի հանդէպ. դիրքն՝ հարաւահայեաց, գեղեցիկ, բնակիչք՝ բնիկ, երկու տուն եկած Առաջաձորից. հողն՝ վանքապատկան, ամենամեծ մասամբ անջրդի, բայց հացատու, տեղական բերքերն՝ նոյն (չունին այգի) օդն եւ կլիման եւ ջուրն՝ անվնաս. երկար կեանք՝ 70. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, նորաշէն, գեղեցիկ, կառուցեալ երկու կամարների վերայ. երկարութիւն՝ 14 մետր 20 սանթիմ, լայնութիւն՝ 8 մետր 16 սանթիմ, քահանան գալիս է Առաջաձորից: Տուխ 15, ար. 58, իդ. 49:

ԱՆԱՊԱՏ ԿԻՉԱՆԻ

Շինիս արեւմտեան կողմում, բերդաձեւ սարին վերայ, շինուած է անտաշ քարով մի եկեղեցի երկու կամարների վերայ: Բոլորովին անվնաս է եւ կանգուն: Ունի եւ միաբանից համար մի քանի խուցեր. հանդստարան՝ զարդարուած խաչարձաններով, ուր կան եւ վարդապետաց գերեզմանները:

ԻԷ. ԹԲԼՂՈՒ ՇԷՆ. Հիմնուած է Խաչեն գետակի եւ Բոլատակ վտակի մէջ մի առուակի ձախ եզերքին, բնակիչք՝ գաղթած Մեծ-Սիւնեաց Մաղաւուզ գիւղից, հողն՝ վանքապատկան (զարմանալի՛ է. այժմ՝ բէկական), տեղական բերքերն նոյն. տեսարանն խեղդուած, օդն եւ կլիման՝ ծանր ամռան, երկար կեանք՝ 70, եկեղեցին՝ Բոլատակ գիւղինն է. քահանան գալիս է Ծմակահողից: Տուխ 22, ար. 100, իդ. 102:

ԻԸ. ՔՈԼԱՏԱԿ ԳԻՒՂ. Հիմնուած է Բոլատակ վտակի ձախ ափի մօտ, բնակիչք՝ բնիկ (մի քանի տուն գաղթած նոյն Մաղաւուզից). հողն վանքապատկան (այժմ՝ բէկական). տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 85-90. եկեղեցին՝ քարուկիր, կամարակապ. քահանան գալիս է Ծմակահող գիւղից: Տուխ 41, ար. 157, իդ. 140:

Գիւղիս հանգստարանում մի մահարձանի վերայ.

«Ի ՈՂԲ. թվին ողորմութեամբն Աստուծոյ եւ տէրանց Խաչենոյ ես տէր Վարդան Վարդապետ Հոռասարեցի, պարոնայքն հողն ինձ տուին, ես գնեցի զԲոռին հանդն, զՇեղջատափն, Երկրի տնատեղն, տուի վասն հոգոյ իմ վախմի Սուրբ Գանձասար. սոքա տուին Բ. ժամի տաւնի Վարդանանց: Ով զհայրենիքս հանէ ի սուրբ ուխտէս, ՅԺԸ. հայրապետաց նզոված լիցի եւ իմ մեղաց պարտական»:

1 Հաստատում են, որ 100 տուն եղած է գիւղս, հետզհետէ պակասելով՝ մնացած է այժմ 8 տուն:

Եղցուն խութ

Գիւղիս արեւելեան հանդէպ, վտակի աջ կողմի բարձր սեռի վերայ, վաղուց շինուած է մի քարուկիր փոքր եկեղեցի, որի մօտ կայ եւ գիւղատեղի եւ հանգստարան:

Կոշիկ անապատ

Հիմնարկուած է Քոլատակ գիւղից վերեւ համանուն վտակի ձախ կողմում: Շարքով շինուած են երեք եկեղեցաձեւ տաճարներ, որոց հարաւային, արեւմտեան եւ հիւսիսային կողմերն վիմահերձ եւ սեպացեալ ապառաժներ են, իսկ արեւելեան կողմն ձոր է: Անտաշ քարով շինուած են երեք տաճարներս եւս, միջին տաճարի բեմի ժողովրդահայեաց երեսին քանդակուած է.

«...Հասանայ եւ Մամա խաթունին թոռն Գ. հետ (անդամ) ի Ղանն գնացի յամի... իմ ազգէն թափեցի դ..... ատաստանաւ զհարկանին մեր... Խերխան, Մարծպան, Մամիկոն կամեցաք նորոգել զմեր գերեզմանատունս, ես Էրիվան ..եցի զՍուրբ Ստեփաննոս[1] եւ նորոգեցի զայլ եկեղեցիքս եւ զարդարեցի Մխիթար եղբաւր իմոյ... Թ ես Մարտիրոս. ես Սեւադա տվի զԳրիգորանանց, զՄոընդանանց, զԳելմարդանց ի սուրբ եկեղեցիս.... մն. Ժ. աւր ժամ Բ. Հասանա զատկին. Բ. Մամա Խաթունին՝ Վարդավառին. Ա. Ռուզու... Բ. Խերխանին յայտնութեան... կատարին, որ հակառակի կամ զրկել ջանա զայս տեղիս ի Սուրբ Գէորգա, ոտխն նորա Աստուած եղիցի... գրեցաւ ի թվ. Հայոց ՉԺԴ.»:

Անապատս ունի եւ գաւիթ, որի մէջ կան իշխանազգի ամփոփեալներ:

Գաւթիս որմին վերայ.

«ՈՂԳ. յանուն Աստուծոյ ես Պռոշ որդի իշխանին Վակա (Վասակայ) յուսով միաբանեցայ Կոշիկ անապատոյ, տվի խաչ, աւետարան.. նապատ, ճառ, միաբանքս տվին Սուրբ Խաչին Ջ. աւր ժամ, որչափ կենդանի եմ, իմ մաւրն, յետ ելից իմոց ինձ. կատարիչքն աւրհնին, խափանիչքն դատին յԱստուծոյ»:

«...ես Շղել որդի.. այ իմ ընչից գնեցի հող... բնակեցայ սուրբ Նշանիս կամակցութեամբ եղբարց Կոշիկ անապատոյ, եւ տվին ինձ ի տարին Բ. ժամ Սուրբ Գրիգորին աղուհացն, Ա. իմ որդի Խուչախին, Ա. իւր մաւրն յետ ելից իմոց ինձ[2] »:

Որ անապատիս գաւիթն գերեզմանատուն եղած է Ջալալեան տոհմի մի ճիւղին. որ միջի տաճարն կոչուած է Սուրբ Ստեփաննոս, իսկ աջ ու ձախ կողմերինն՝ Սուրբ Նշան եւ Սուրբ Գէորգ:

Անապատիս մօտ կայ միաբանական աւերակ խուցեր եւ հանգստարան:

Ս. ՅԱԿՈՎԲ ՎԱՆՔ.

Կոչւում է նաեւ Մեծ-Իրանաց կամ Մեծ-Արանց Սուրբ Յակովբ, որ շինուած է յանուն Մծբնայ Յակովբ հայրապետին մի բարձր լեռնաբազկի սեռի հարթակին վերայ, որին մօտ է եւ Քոլատակ գիւղն եւ Թբլղուն: Լեռնաբազուկս իւր սկիզբը առած է Նատարի բերդասարիցն եւ հետզհետէ խոնարհուելով հասած մինչեւ Թբլղու շէնի ստորոտն: Վանքս ունի նեղ, երկար եւ բարձր ձեւ, որպիսին էր Ղեւոնդեանց անապատն եւ շինուած է անտաշ քարով առանց սիւների: Ջունի փոքր խորաններ, այլ ունի միայն մի խորան: Ջափազանց բարձր է բեմն, որ ունի միայն մի վերելակ սանդուխ հարաւային կողմից: Տաճարս ունի մի դուռն հարաւային եւ միւս արեւմտեան կողմից, մի նեղ լուսամուտ արեւելեան եւ միւս խաչաղարդ արեւմտեան կողմից եւ մի գաւթանման շինութիւն կից իւր արեւմտեան կողմին, նոյնպէս շինուած անտաշ քարով, որի յատակն քլաչափ բարձր է վանքի յատակիցն: Գաւթիս ներսի դրան երկու կողմերում եւս կան երկու քարեայ խաչարձան:

1 Երեւի թէ միջի տաճարիս անունն է:

2 Նախ՝ անընթեռնելի են կէտադրեալ բառերն: Երկրորդ՝ սոյն բոլոր արձանագրութիւններից ակներեւ երեւում է, որ Կոշիկ եղած է անապատիս անունն:

Հիւսիսային խաչարձանի վերայ. «Թվ. ՈՀԲ. (1223) ես տէր Սարգիս կանգնեցի զխաչս ի տապանի եղբաւր իմո տէր Յակովբոսի արհի եպիսկոպոսի եւ Մեծարանաց հայրապետին[1] յաղաւթս յիշեցէք»:

Հարաւային խաչարձանի վերայ. «Թվ. ՈՀԴ. ես տէր Սարգիս եղբաւր որդի տեառն Գրիգորա, եղբայր տէր Յակովբոսի առաջնորդ տանս Մեծարեանց կանգնեցի զխաչս բարեխաւս մեզ առ Աստուած»:

Գաւթումս կան շատ ամփոփեալներ, սակայն մեծ մասամբ անտաշ եւ անարձանագիր են տապանաքարերն: Մի մոխրագոյն տապանաքարի վերայ փորագրուած է խիստ խոշոր տառերով. «Տէր Վարդան է տապանս արհի եպիսկոպոսին»:

Տաճարիս հարաւային դրան սեմի վերայ.

«Յիշխանութեան Ջալալին ես Խութլու բէկ որդի Խոյդանայ միաբանեցայ սուրբ ուխտիս ընծայիւք, տվին ի տարումն Բ. աւր ժամ ի տաւնի զատկի, ով խափանէ, դատի յԱստուծոյ թվ. ՉԽԲ.»:

Երկրորդ վանք, որ պատկեց է առաջի վանքին արեւելեան կողմին ունի միւնոյն հին ոճը, իւր հիւսիսային կողմում ունի նաեւ չորս փոքրիկ խուցեր, որք նման են ճգնարաններին, որոց մուտքն բացուած է տաճարիս միջիցն եւ որք ունին լուսամուտներ հիւսիսային որմից: Երկու վանքերս եւս հին եւ խարխուլ են եւ ուռեւ ու անճաշակ շինուած. բայց ունին հարաւային կողմում երեք կամարակապ աչքերով մի սրահ:

Սրահումս կան ամփոփեալ կաթուղիկոսներ.

«Այս է հանգիստ տէր Ոհանէս կաթուղիկոսին»:

«Առըստակէս կաթուղիկոս»:

«Սիմէոն եպիսկոպոս»: «Այս է հանգիստ Սիմէոն կաթուղիկոսին թվ. ՌԿ.»:

Երկրորդ տաճարիս դրնից վերեւ արտաքուստ.

«ՈԿԱ. թիվ ես Խորեշահ ամուսին Վախտանգա, տէր Խաչենոյ, դուստր մեծին Սարգսի, քոյր Ջաքարի եւ Իւանոյ, վերստին շինեցի զեկեղեցիս Մեծարանից ի փրկութիւն հոգոյ իմոյ Ա. Խ. (Ա. քառասուն) ժամ ինձ. յիշատակ իմ ծնողացն. զՎախտանգ եւ զիս յաղաւթս յիշեցէք»:

«Ես Մուշեղ որդի Հեջբին միաբանեցայ սուրբ ուխտիս գնեցի զսուրբ... թվ. ՉԽԲ.»:

Վանքս ունի երեք թաղակապ հին խուց, երեք կիսաւեր խուց, շրջապարիսպ, մի թթենեաց պարտէզ, չորս հարիւր օրաւոր (դեսեատին) անտառ եւ հող[2], Մծբնայ Յակովբ հայրապետի աջը, մի պատուական աղբիւր, որի մօտ կայ մի բազմադարեան կաղամախի ծառ, որի շրջապատի հաստութիւնն է 7 մետր 35 սանթիմ: Վանահայրն է մի սարկաւագ:

ԻԹ. ԳԵԱՌՆԱՔԱՐ ՇԷՆ. Հիմնուած է Հաւապտուկ աւերակ վանքի արեւելեան ստորոտի ձորում. բնակիչք հատուածեալ եկած են Առաջաձոր եւ Վանք գիւղերից. հողն՝ վանքապատկան, բարեբեր, տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն՝ օդն եւ կլիման, գովելի՝ ջուրն, տակաւին չունին եկեղեցի եւ քահանայ, վերջինս գալիս է Առաջաձորից: Ծուխ 12, ար. 59, իգ. 53:

Լ. ՎԱՆՔ, ՎԱՆՔ ԳԵՂ, ՎԱՆՔԻ ՇԷՆ:

Այսպէս է կոչւում գիւղն, որ հիմնուած է Գանձասարի արեւելեան հանդէպ, խաչեն գետակի ձախ կողմում: Աւելորդ է յայտնել, թէ իւր անունը ստացած է վանք անունից: Սակայն հարկ է յայտնել, թէ գիւղս բաժանուած է երկու թաղի, որք շատ հեռի չեն միմեանցից եւ որք ընդհանուր առմամբ կոչւում են Վանք, իսկ մասնաւորապէս ստորինն կոչւում է Հիւնայ-հող, իսկ վերինն՝ Գոմայ-կալ: Գիւղիս բնակիչներն նախ բնակած են եղել Գանձասար վանքի մօտ, ուր մինչեւ ցայսօր մնում են տնաբակերն, ապա փոխադրուած են այստեղ: Ուրեմն բնակիչք բնիկ, հողն՝ վանքապատկան, տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն՝ օդն եւ կլիման եւ անվնաս՝ ջուրն, երկար կեանք՝ 85-90, երկու թաղի եկեղեցին է Գանձասար վանքն, քահանայ՝ երկու:

Ծուխ (երկու թաղերում) 167, որոց հետ եւ Շահմասուրն. Ծուխ 180, ար. 849, իգ. 687:

1 Դաւառիս առաջնորդին:

2 Խլուած են հողերն, կոտորած անտառներն եւ թողած մացառուտներն:

Հղեգեան (5768 ոտք)

Սարումս[1]*, որ գիւղիս հիւսիսային կողմումն է. կայ մի խաչարձան՝ Նահատակ անուն կամ Հղեգեանայ նհատակ: Ուխտատեղի է. բայց ո՛չ ոք չգիտէ նահատակիս անունը:*

Եղցուն խութ

Այսպէս է կոչւում այն քարուկիր եկեղեցին, գիւղատեղին եւ հանգստարանն, որ գտնւում է Գոմայ-կալից բաւական վերեւ: Այստեղից շատ հեռի չէ Ջրաղացքարի հանքն, որ սեփական կալուած է Գանձասարայ վանքին:

ԳԱՆՁԱՍԱՐ ՎԱՆՔ (4168 ոտք) (19)

Հիմնուած է մի գեղեցիկ, բարձր եւ տեսարանաւոր սարահարթի վերայ, որ կողոլահող սարից իբրեւ լեռնաբազուկ անջատուած եւ կախուելով Խաչեն գետակի վերայ վերջացած է: Տաճարս, որ շինուած է ամբողջապէս սրբատաշ, տորոնագոյն ազնիւ քարով, հիմնարկել տուած է Ջալալ-Դօլայ իշխանն յանուն սուրբ Յովհաննէս Մկրտչի չորս հրաշակերտ կամարների վերայ: Ունի մի աւագ եւ ութ փոքր խորաններ (որոց չորսն՝ արեւմտեան կողմում դրան աջ ու ձախ անկիւններում շինուած իրարու վերայ՝ հիանալի վերելակ սանդուխներով) երկու խորհրդարան, մի դուռն՝ արեւմտեան կողմից, մի հրաշազան կաթուղիկէ, ութ փոքր, երեք միջակ, չորս բոլորակ եւ չորս մեծ լուսամուտներ եւ մի աւազան: Երկարութիւնն՝ 16 մետր 95 սանթիմ, լայնութիւնն՝ 12 մետր 25 սանթիմ:

Վանքիս ներսում աւազանից վերեւ.

«Յանուն սուրբ Երրորդութեան Հաւր եւ որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն այս գիր արձանի է, զոր ես նուաստ ծառայ Աստուածոյ Ջալալ Դալա Հասան որդի Վախտանգայ՝ թոռն մեծին Հասանայ՝ բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի, թագաւոր եւ ի յոգնասահման նահանգի. զի հայրն իմ ի վախճան կենաց ելից իւր աստեացս անդարձ կտակի հաստատեաց ինձ եւ մաւր իմոյ Խորիշահի՝ որ էր դուստր մեծ իշխանաց իշխանին Սարգսի, զի շինեսցուք զեկեղեցիս ի գերեզմանատուն հարց մերոց ի Գանձասար, զոր սկսեալ մեր ի ՈԿԵ. թվին Հայոց աւգնականութեամբ բարերարին Աստուծոյ. եւ ի խփել լուսամտին արեւելից մայրն իմ կրոնաւորեալ չոգաւ յերուսաղէմ երկրորդ անգամ, անդէն ի դրան Յարութեան խարազնազգեաց ճգնութեամբ, բաձմամեայ ժուժկալութեամբ հանգեաւ ի Քրիստոս լուսոյ վկայութեամբ եւ անդէն պահեցաւ: Իսկ մեր զբազմածուփ կենցաղոյս ի մտի եդեալ փոյթ գործոյ արարեալ աւարտումն եղեւ շնորհաւք ողորմութեան ամենագութ Տեառն ՈՁԷ. թվին գաւտէորեալ ամենազան ձեաւք, պատկերազան յաւրինակերտ գմբէթազարդ յաւրինուածովք յաւժարութեամբ կամաց մերոց, որպէս տեսանէ Աստուած. հոգացաք զպէտս միաբանիցս գիւղաւրայս Մաչեղ, Հարշանտուս բոլորքոջն. մէկ լուծ Խաչենաձոր, Նորաշէնկան գետն, Այգեստան, սեղնկնի, զոր իմ հայրն էր տուեալ Սահակայն, Փուրկատոստիցին, Արծաթենիսն, որ ես տուի խաչաւք, գրաւք, մասամբք, նշխարաւք, պատուական ձուլածոյ ամենայն սպասուք եւ հանդերձ երեւելի զարդուք ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. եւ Աստուծով ի մեր իշխանութեան եկեղեցիքս ազատ են կամաւ տէր Վարդանայ առաջնորդի սուրբ ուխտիս եւ միաբանիցս գրեցաք ժամ զաւագ խորանն բոլոր տարին մեզ, եւ այլ ամէն եկեղեցիքս զատիկն իւր ճրագալուցովն իմ հայրն է Վախտանգայ, Աստուածածնին Դ. աւրն իմ մաւրն Խորիշահին, եւ յայտնութիւնն իւր ճրագալուցովն իմ եղբաւր Ջաքարէի, զաւագ սեղանն, որ իմ է, յԱստուածածնէն մինչ ի խաչն իմ պապուն Հասանայ. յիսնակամտէն մինչ ի յայտնութիւն Մամքանայ

1 Լեռնաշղթաս սկսուած է Դանձասար վանքի սարից, ձգուած Շահմասուր, Ծմակահող, Առաջաձոր, Կիչան գիւղերի արեւմտահիւսիսային գլուխներից, անցած Արծաթահանքի մօտով եւ ճիւղաւորուելով հասած մինչեւ դաշտաբերանն:

իմ կենակցին, Ութորէից ելիցն մինչ ի առաջաւորն հասարակաց անյիշատակաց, բարեկենդանին Ա. շաբաթն իմ եղբաւր Դալին, Բ. (երկրորդ) շաբաթն իմ քուերն Մարինայ, աղուհացից շաբաթ կիւրակէքն իմ եղբաւրն Իւանէին, զատկէն մինչ ի Աստուածածինն եւ ի խաչէն մինչ ի յիսնակամուտն ինձ Հասանայ: Աւրհնեցաւ եկեղեցիս ի ՈՁԹ. թվին ի հայրապետութեան տեառն Ներսիսի Աղուանից կաթուղիկոսի: Հաստատ է գիրս կամաւն Աստուածոյ, որ հակառակի, ոսոխն Աստուած է եւ իւր սուրբքն: Անտաւնի տաւնին մի աւր ժամ Յովասափ միայնակեցին կատարի կամաւ մեծին Հասանայ»:

Վանքս ունի իւր արեւմտեան կողմին կից եւ հրաշազան գաւիթ, նոյնպէս շինուած սրբատաշ քարով, որ կառուցեալ է երկու միապաղաղ միջնասիւների եւ վեց պատկից կիսասիւների վերայ: Միմեանց միջից անցած են չորս խաչաձեւ կամարներ, որոց վերայ բազմած է զանգակատան գեղեցկաքանդակ գմբէթն: Գաւիթս ունի երկու դուռն հիւսիսային եւ արեւմտեան կողմից, մի փոքր կամուղիկէ զանգերի համար, գմբէթի գլխին, 15 մետր 52 սանթիմ (արեւելքից արեւմուտք) երկարութիւն եւ 14 մետր 65 սանթիմ լայնութիւն (հիւսիսից հարաւ չափելով):

Արձանագրութիւն գաւթիս.

«Թվին ՉԺԵ. կամաւն ամենակալին Աստուծոյ ես Ջալալ Դալաս որդի Վախտանգայ կողմանցն Արցախայ եւ ամուսին իմ Մամքան թոռն Բաղուց թագաւորին, եւ հարազատ որդին իմ Աթաբակն յետ կատարման եկեղեցոյս հիմնարկեցաք ժամատունս եւ բազում աշխատութեամբ աւարտեցաւ, զոր եւ հայցեմ անմոռաց յիշել յաղաւթս ձեր. փոքր ընծայ տուի զՄառգեղն իւր չարեքտարրովն, զճռանց իւր սահմանովն: Դարձեալ ես Աթաբակս ընծայեցի յաւժարութեամբ ոսկետուփ աւետարան եւ պատուական սուրբ նշան, զՔրիստափորն եւ զմեր հայրենի հարաւակուռն զԲլրին իւր սահմանովն. եւ սահմանեցին զխաչի ութաւրէքն պատարագել զՔրիստոս: Եւ եթէ քրիստոսադաւան ոք հանել ջանայ, ի փառացն Աստուծոյ մահով եւ կենաւք նզոված է, եւ յիշատակ նորա մի յիշեսցի առաջի Աստուծոյ. եւ թէ մահմեդական ոք զհողն հանէ այս եկեղեցոյս, առ հասարակ նզոված յԱստուծոյ եւ ի մարգարէից»:

Վանքումս կան հետեւեալ գրչագրերն.

1) Գրչագիր յայսմաւուրք գրուած թղթի վերայ, սկզբից եւ վերջից թափուած են թերթեր. անխնամ պահուելուց բորբոսնած եւ ոչնչացած է:

2) Մի Սարգիս Շնորհալի, գրուած թղթի վերայ, մեծագիր, պակասաւոր սկզբից եւ վերջից:

3) Մի հատ Մեկնութիւն Նարեկի գրուած թղթի վերայ, պակասաւոր սկզբից եւ վերջից:

Աջեր մասունքներով.

1) Արծաթեայ, ոսկեզօծեալ աջ, որի մէջ է մասն Ս. Յովհաննէս Մկրտչի, շինել տուած է Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսն 1779-ին եւ նորոգել տուած է Բաղդասար մետրապոլիտն 1848-ին:

2) Արծաթեայ ոսկեզօծեալ աջ, որի մէջ է Տեառնեղբայր Յակովբ առաքելին, ՌՃՀԴ. թուին շինել տուած է Աղուանից Եսայի կաթուղիկոսն:

3) Արծաթեայ ոսկեզօծեալ աջ, որի մէջ է մասն Աղուանից Գրիգորիս Ա. կաթուղիկոսին ՌՄՂ. թուին նորոգել տուած է Բաղդասար մետրապոլիտն:

4) Արծաթեայ աջ, որի մէջ է մասն Յակովբայ գլխադիր առաքելին, ՌՃՀԶ. թուին յիշատակ է Թարխանու:

Սրբոց մասունքներ խաչերում.

5) Արիւն Զաքարիա մարգարէի՝ մի բիւրեղեայ խաչում:

6) Մասն Յակովբայ Տեառնեղբօր եւ Պանդալիոն բժշկի՝ զետեղուած մի արծաթեայ խաչում:

7) Մասն Ս. Գէորգի՝ զետեղուած արծաթեայ անճաշակ շինուած խաչում:

8) Մասն Պանդալիոնի՝ մի արծաթեայ խաչի մէջ.

9) Մի արծաթեայ, տափակ եւ տասանաձեւ զարդի վերայ գրուած է.

«Շնորհիւ ամենազօրին կամեցաւ մասնատուփս նշխարաց սրբոց Բանտալիոնի եւ Ուհանու Գբնեցոյն ձեռամբ Առաքել վարդապետի թվ. ՌՃԾԵ.»:

Գաւթումս ամփոփուած են.

«Այս է հանգիստ մեծին Ջալալի. յաղաւթս յիշեցէք. թվ. ՊԶ.»:

«Յովհաննէս կաթուղիկոս»:

«Այս է... Գրիգոր... ողիկոսին.. նից (Գրիգոր կաթուղիկոսին Աղուանից) ի ՌՃԲ. թվին»:

«Այս տապան Երեմիա կաթուղիկոսին Աղուանից, որ է յազգէն Ջալալ Դօլին ՌՃԽԹ.»:

«Այս է տապան Եսայի կաթուղիկոսին Աղուանից, որ է յազգէն Ջալալ Դօլին ՌՃԼԷ. թվին»:

«Այս է հանգիստ Դաւիթ կաթուղիկոսի. (որ է) որդի Բաղտասար պէկին»:

«Այս է տապան Յոհաննէս Աղուանից կաթուղիկոսին, որ է յազգէն Ջալալ Դօլին թվին ՌՄԼԵ. ին»:

«Այս է տապան Սարգիս Աղուանից կաթուղիկոսին թվին ՌՄՀԷ. ին»:

«Այս է տապան Մետրապօլտին Բաղդասարայ մեծի արհին
Կայսեր պսակ հովուապետին
Տանս Աղուանից Հայոց ազգին,
Յազգէ Ջալալ մեծ իշխանին
Տեառն Արցախական աշխարհին,
Թվին ՌՅԳ. 1854 Գ. յուլիսի»:

Գաւթի հիւսիսային դրան ճակատակալ քարի վերայ.

«Թվին ՉԻ. կամաւն Աստուծոյ ես Յովհաննէս որդի Իւանէի առաջնորդ սուրբ ուխտիս Գանձասարայ հրամանաւ տեառն Խաչենն Աթաբակին յիմ հալալ արդեանց գնեցի զԿարդանայ թաղս մին չորից եւ զնա այլ ընծէք տվի սուրբ կաթուղիկէս. միաբանքս տվին զՕհանու, զԱկոբա տանին զամէն եկեղեցիքս ինձ պատարագ...»:

Վանքիս եւ գաւթիս որմերի վերայ արտաքուստ փորագրուած են բոլոր շարժական եւ անշարժ կալուած, ինչք նուիրողաց անուններն: Ընդօրինակում ենք այստեղ ամէնը, նպատակ ունենալով ի լոյս ածել ժամանակակից անունները, նուէրները, կալուածները, հաւատքը, յոյսը, սէրը եւ ջերմեռանդութիւնը:

Հիւսիսային կողմում արտաքուստ.

«Ես Այտինս, Խիմշէս որդիք Աթաբակին տվաք Ալմաճայտաբ հողն ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսիսի թվ. ՋԽԴ.»:

«Ես Սմբատ որդի Փիրհամզին տվի Բեմին հողն իմ պապեց հոգուն սուրբ ուխտիս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսէսի թվ. ՋԻ.»:

«Թվ. ՋՂԵ. ես Սարգիս կաթուղիկոս որդի Հատիր Մելիքին, թոռն մեծին Սայտունին եւ գնեցի զհայրենիքն ի Կասրայ զ. ըստակն, մինակ տան դ. ըստակն ու կէսն, Առատունոյ բ. ըստակն, Կոռալանայ դ. ըստակն տվի սուրբ ուխտս Գանձասարայ. ով զայս հայրենիքս հանէ ի սուրբ եկեղեցոյս, ԳՃԺԸ. հայրապետացն նզոված է, սուրբ Ովանիսիս (Յովհ. Մկրտ.) կապած»:

«Կամաւն Աստուծոյ ես Սայտունս որդի պարոն Աղբաստի տվի իմ հայրենեացնն զՏանձաձոր ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Եղիային. սոքա ետուն տարուան Գ. ժամ. ով զատ հայրենիքս հանցէ, յեկեղեցւոյս, ԳՃԺԸ. հայրապետացն նզոված է թվիս ԹՃԾՋ. (1507 Փրկչ. թվին)»:

«Թիվ ՊԺ. Իշխանութեամբ մեծի Իւանէի ես տէր Կոստանդ մեծ փափագանաւք գնեցի սուրբ զզանկականիս, սուրբ ուխտս բերի»:

«Ես Տուրսուն թոռն մեծի Ջալալին տվի Մսերշին հողն ի սուրբ ուխտս Գանձասար առաջնորդութեամբ տէր Ներսիսի թվ. ՋԽԲ.»:

«Ես Պաստամ որդի մեծին Ջալալին տվի Կունճի հողին կալէն վեր ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսիսին թվ. ՋԻ.»:

«Ի թվս. ՋԻ. ես Պուտաղս ու Վախտանգս եւ այլ եղբարքս միաբանեցաք ու տուաք Փտուռանց, Կակաչանց, Ծաղկավանաց Գ. ըստակն տուաք ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսիսի»:

«Յանուն Աստուծոյ ես Սասնայս Հանդաբերդցի եկի մեծ յուսով ի սուրբ ուխտս Գանձասարա իշխանութեամբ Աթաբակի, զիմ հոգոյ արդիւնքն կաթուղիկէս տվի, միաբանքս տուին զծառազարդն զամէն եկեղեցիքս ինձ պատարագ. Բ. ժամ իմ կողակից Մարհանին, ով խափանէ, իմ մեղացս պարտական է ՉԻ. թվ.»:

«Յուսովն Աստուծոյ ես Էսուգնաս դուստր մեծ ամիր Հասանայ, յետ մահուան մեծին իմոյ սահմանեցի զնա (?) սուրբ ուխտիս եւ տվի ընծայ տէր Յոհաննէսին. եւ միաբանքս տվին Բ. պատարագ ի տաւնի քառասնից... թվ. ՉԾ.»:

«Ի ՌՄԼԹ. թվիս կամաւն Աստուծոյ ձեռամբ տեառն Յովհաննու կաթուղիկոսին ես Ապաւ (Մելիք-Աբով) ուզբաշի որդի Մելիք Յովսեփա Թալիշու եւ իմ կենակից Հերիքնազ եւ որդիք Մելիք Պէկլար եւ Մելիք Ապաւ մեր հալալ արդեանց շինեցաք սրբոյ աթոռոյ Աղուանից Գանձասարու երկու եկեղեցեաց (տաճարի եւ գաւթի) տանիսն եւ խախտեալ որմունս բազում աշխատութեամբ յիշատակ մեզ եւ ննջեցելոց մերոց...»:

Գաւթիս արեւմտեան կողմում արտաքուստ.

«Կամաւն Աստուծոյ ես տէր Ներսես Ամարասայ եպիսկոպոս եկի մեծաւ յուսով ի սուրբ ուխտս իշխանութեամբ Աթաբակին, միաբանեցայ, տվի զիմ հոգոյ արդիւնս, սոքա ետուն Ե. աւր ժամ... ՉԼԱ.»:

«Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Բարսեղ որդի Ապաջուր երիցու, ամուսին իմ Մամաք... գնեցի զՏնկին երկիրն, տուի ի կաթուղիկէս... թվին ՉԻԵ.»:

Գաւթիս եւ տաճարիս հարաւային կողմում արտաքուստ.

«Կամաւն Աստուծոյ ես Վէլիջան եւ եղբարքս իմ որդիք Սայտունին թոռն մեծին Աղպաստու տեարք Խաչենու տուաք Աշմանայ իւր Դ. սահմանաւն 'ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Ներսէսի թվ. ՋԻԹ.»:

«Կամաւն Աստուծոյ ես Մելիքս որդի Սայտունին թոռն մեծին Աղպաստու շուրջառ, սկի եւ այլ ընծայ Կակաչանց, Փտուռանց, Ծաղկավանց.. տվի ի սուրբ ուխտս Գանձասարայ...»:

Տաճարիս հիւսիսային կողմում ամփոփուած են.

«Յովսէփ՝ գիտնական վարժապետ-վարդապետ[1] էր Աւագեանց Արցախայոյ պերճ, տապան որպէս կարես, հանդուրժես, մեծն վարժապետն ի քեզ կրեալ զետեղես, զհինաւուրց երախտաւորն ամփոփես, զանխօս մանկունս ի սուրբ հօրէն որբ թողես, եկա՛յք ընկերք, ո՛դուք մուզայք սիրասունք զհօրս զմահ յորդ արտասուօք ողբասցուք, եթէ Յիսուս զիւր Ղազարոս արտասուեաց. 1847»:

«Այս է տապան Արիստակէս եպիսկոպոսին, որ էր եղբայր Երեմիա կաթուղիկոսին ՌՃԼԳ. թվին»: «Մովսէս խաչակիր վարդապետ վախճանեալ 1849-ին»: «ՈՂԴ. ես Ամադ կանգնեցի զխաչս ի փրկութիւն....»: «Թվին ՈԾԱ. ես Վախտանգ որդի Հասանայ կանգնեցի զխաչս ի տապանի.... (կոտրած է)»: «Այս է տապան Գրիգոր վարդապետին, որ է ազգէն Ջալալ Դօլին թվ. ՌՃՂԷ.»: «Յովսէփ վարդապետ Իսրայէլբէկեան Ջալալեանց թվ. ՌՅԺԲ.»:

Վանքս ունի մի քանի թաղակապ հին սենեակներ եւ շրջապարիսպ, որ ունի երեք դուռն՝ արեւելեան, հարաւային եւ արեւմտեան կողմերից: Վանքս ունէր ընդարձակ հողեր, կալուածներ եւ անտառներ, ինչպէս տեսանք արձանագրութիւններից, որք այն աստիճան յափշտակուած են, մինչեւ անգամ մնացած է միայն 9000 արտավար հող ու անտառ, վասն որոյ բարոյապէս եւ նիւթապէս քայքայւում է աննման վանքս. հետզհետէ թափւում են քարերն եւ ոչնչանում, կաթում է շարունակ, զի խախտուած է տանեաց սալարկն, քանդուած է պարիսպն տեղ-տեղ եւ չունի օրինաւոր դռներ. գողացուած են այնքան ընտիր ձեռագրերն, խոնաւութեան եւ անխնա-

1 Այս է գիտնական Յովսէփ վարդապետի գերեզմանն, որ շատ տարիներ վարժապետութիւն արած է Արցախիս վանքերումն:

մութեան կերակուր եղած են մնացեալ ձեռագրերն, որպէս տեսանք. ամիսներով ժամ չէ ասւում վանքումս, քանզի ո՛չ կարդացող կայ, ո՛չ դպրոց, ո՛չ միաբան եւ ո՛չ գոնէ փոխասաց: Մի վանահայր վարդապետ կայ այստեղ, որ ունի մի ծառայ:

ՊԱՌԱՒԱԶՈՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս տեղն, որ կոչւում է եւ Քեարխանի հարթ, գտնւում է վանքից վերեւ, խաչեն գետակի ձախ կողմի բարձրութեան վերայ: Այստեղ կայ մեծ գիւղատեղի, հանգստարան եւ երկու փոքր եկեղեցիներ, որք շինուած են պատկից: Տակաւին կանգուն են եկեղեցիներս, բայց փլած է գաւիթն, որ շինուած է եղել տաճարներիս արեւմտեան կողմին պատկից. դեռ մնում են չորս պատերն:

Հարաւային եկեղեցու որմի վերայ.

«ՈԼ. թվին եւ իշխանութեան Սմպատա ես Բարսեղ երէց ու Սարգիս եւ այլ եղբայրքս եւ Սանասի իրիցո որդիք մեր ժողովրդովս շինեցաք զեկեղեցիս եւ բերաք զջուրս, որք երկրպագէք զտեղիս, յաղաւթս յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշեսցէ»:

Գաւթում հիւսիսային որմի մէջ հաստատուած մի խաչարձանի վերայ. «ԹԻՎՆ ՈԼԲ.»:

Սորա մօտ՝ մի այլ խաչարձանի վերայ. «ԹԻՎՆ ՈՀԷ. ես Սարգիս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ յիշատակ Բ. ժամի ի տարւոջն...»:

Հանգստարանում, որ կայ տաճարներիս արեւելեան հանդէպ, մի խաչարձանի վերայ.

«ԹԻՎՆ ՈԻԹ. ես Գրիգոր կանգնեցի զսուրբ Նշանս Վասակ...»:

ԴԱՐՊԱՍՆԵՐ

Ջալալեան մեծահամբաւ իշխանաղն տոհմի ապարանն է այս, որ գտնւում է Վանքաշէն գիւղի հարաւային հանդէպ խաչեն գետակի աջ կողմի բարձրութեան վերայ եւ Հաւապատուկ վանքի արեւմտեան կողմում: Մի ընդարձակ շինութիւն է այս, որ իւր մէջ ունի շատ սենեակներ մի քարուկիր պարսպի մէջ: Ջալալ-Դօլայի ապարանիս մէջ աւելի ուշադրաւ է ընդունարանն եւ մի այլ սենեակ, որք ներկայացնում են ժամանակին ճարտարապետութեան եւ ճաշակի սեռը: Բարձրաշէն, ամրապատ, թաղակապ եւ գեղեցկատես են սենեակներս: Թաղերի տակ շարուած են վայելուչ եւ բարակ խոյակներ, որոց վերայ դարձրած ապա թաղերն կամարների վերայ, որք չէչ քարի աղնիւ տեսակից են՝ համակ սրբատաշ: Առհասարակ սակաւ են լուսամուտներն եւ փոքր: Զկարողացանք իմանալ սենեկաց թիւը, քանզի ծածկուած են խտացեալ մացառով, ծառերով եւ մորենիներով: Անհնար է հետազօտել առանց մացառուտը հարթելու:

Ապարանիս մի քանի քայլ վար, մի շարքի վերայ շինուած է անտաշ քարով երկու միջակ մեծութեամբ եկեղեցի, որոց հիւսիսային ունի մի աւագ եւ մի փոքր խորան իւր հիւսիսային կողմում, իսկ հարաւային կողմի պատկից տաճարն փոքր է, բայց ունի առանձին դուռն, երկու փոքր եւ մի աւագ խորան: Երկու տաճարներիս արեւմտեան կողմում եղած է քարուկիր եւ թաղակապ սրահ, որպիսին էր Պառաւաձորինն, բայց խոնարհուած է այժմ ամբողջ թաղն: Անյայտացած են ապարանի եւ տաճարներիս արձանագիր քարերն:

ՀԱՒԱՊՏՈՒԿ ՎԱՆՔ (մօտ 5000 ոտք) (20)

Աւերակ վանքս, որ Ջաջուռ իշխանի ցեղի յատուկ դամբարանն է, շինուած է Դարպասների արեւելեան կողմում, մի ձուաձեւ բարձրացած սարի դագաթին վերայ: Վանքիս արեւելեան ստորոտումն է Գեառնաքար շէնն, հարաւային հանդէպ՝ Խոխանաբերդն, արեւմտեան հանդէպ՝ Դարպասներն, իսկ հիւսիսային ստորոտով հոսում է Խաչեն գետակն, որ կոչւում է Խաչենագետ: Վանքս փոքր է եւ թաղակապ, որ ունի մի փոքր գաւիթ իւր արեւմտեան կողմում: Այժմ

խոնարհուած են գաւթի, սրահի եւ փոքր խորանի թաղերն ամբողջապէս, բայց մնում են տակաւին որմերն: Փոքր խորանի դրան ճակատակալ քարի վերայ.

«ԹԻՎՆ ՈԺԲ. էր յիշխանութեան Հասանա որդո Վախտանգա եւ ամուսնո նորա Մամքանա ես տէր Յոհան քվերորդի տէր Գրիգորո եւ Գեորգ եղբաւրորդի եւ այլ միաբանքս շինեցաք զեկեղեցիքս ՝ի փրկութիւն հոգոց մերոց եւ յիշատակ ծնողաց մերոց....»:

Այլ քարի վերայ.

«Յանուն Աստուծոյ ես Աթանաս, որ զԳոգին երկիրն գնեցի ՝ի Հաւուց պտուկ տվի. հայր Գեորգ եւ այլ միաբանքս տվին ի տարումն Դ. աւր պատարագ Նոր կիրակէին. որ զհողն յեկեղեցւոյս հանէ, ՅԺԸ. հայրապետացն նզոված է.....»:

Հանգստարանում, որ խիստ մօտ է, մի խաչի վերայ.

«Թուականն ՈՀԳ. էր ես Ջաջուռ որդի Խաղբակայ կանգնեցի զխաչս ՝ի տապանի որդոյ իմոյ Սմպատա, ոյք երկրպագէք....»:

Մօտ սորին. «Ես Վասակ կանգնեցի զխաչս ի տապանի եղբաւր իմոյ Աբու[1] Սեդայ».

Ջաջուռ իշխանն եւս իւր Հասան որդու գերեզմանի վերայ, որ հեռի չէ Աբու-Սեդի տապանից, կանգնած է մի գեղեցկաքանդակ խաչարձան:

Վանքիս արեւմտեան կողմում ոչ այնքան հեռի մի կիսատ եւ ընկած խաչարձանի վերայ.

«Թիվ ՈՂԵ. յանուն Աստուծոյ յիշխանութեան Հասանայ ես Գէիորգ (Գեորգ) կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ իմոյ...»:

ՀԱՄԱՄԻ ՁՈՐ

Ձորումս, որ գտնւում է Գեառնաքարից վերեւ, կան բաղանիքներ, ջրաձորի ձախ ափում՝ գիւղատեղի, հանգստարան եւ Անապատ անուն մի հնաշէն եկեղեցի: Այս ամէնի համար աւանդաբար ասում են, որ պատկանում են Ջաջուռ իշխանին եւ սորա յետագաներին: Դեռ մինչեւ ցայսօր ժողովուրդն յարգանք է վերաբերում այս իշխանական հին շինութեանց:

ԼԱ. ՇԱՀՄԱՍՈՒՐ ՇԷՆ. Հիմնուած է դէպի Արծաթասարն երկարած լեռնաշղթայի հարաւային ստորոտում Վանքաշէնի եւ Ծմակահողի միջեւ, բնակիչք տեղափոխուած են Դիզակ գաւառի Առաքել գիւղից. հողն՝ վանքապատկան եւ միջակ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ նոյն. անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 80. եկեղեցին՝ նորաշէն, ծածքն՝ փայտաշէն, քահանան գալիս է Վանք գիւղից:

Գիւղիս ծխաթիւերը եւ մարդաթիւերը մտցրած են Վանքաշէնի հաշւոյն մէջ:

ԼԲ. ԾՄԱԿԱՀՈՂ ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն լեռնաշղթայի հարաւային ստորոտում Առաջաձոր գիւղի եւ Շահմասուր շինի միջեւ, բնակիչք բնիկ. հողն բէկական, տեղական բերքերն՝ նոյն. սննդարար՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 80-85. եկեղեցին՝ Ս. Ստեփաննոս. քահանայ՝ մի: Ծուխ 40, աբ. 226, իդ. 197:

Անկնունք եղցի

Գիւղիս մօտ կայ մի հին եկեղեցի, որը հասարակութիւնն անուանում է Անկնունք, այս է՝ ոչ օծուած է եւ ոչ անուն դրուած:

---

1 Արաբերէն աբու նշանակում է հայր. իսկ Աբու-Սեդայ՝ Սեդի հայր. օրինակ Աբու Բեքր, Աբու Եուսուփ, նշանակում է Բեքրի հայր, Եուսուփի հայր: Բայց այստեղ Աբու Սեդ նշանակում է հայր Սեդ: Ինչպէս կարծում եմ Արցախեան նահանգում գործածուած ապեր բառն մնացորդ է արաբացւոց աբու բառին: Այժմ եւս գործ են ածում Գեաբի-ապեր, Թիւնի-ապեր, եւն.:

Վաճառ աւերակ գիւղաքաղաք

Գիւղիս արեւելեան հանդէպ. Վաճառ առուի ձախ ափի լանջի վերայ երեւում են ընդարձակ աւերակի հետքեր-տնատեղեր, խանութների եւ այլ շինութեանց քարուկիր մնացորդներ: Այս է Ջալալեան իշխանների գիւղաքաղաքն, որպէս ցոյց է տալիս եւ անունն եւ աւերակ:

Ոչինչ պակաս ընդարձակ ծաւալ ունի եւ Վաճառ գիւղաքաղաքիս հանդստարանն, որի մէջ սրբատաշ չէջ քարով կառուցեալ է մի եկեղեցի, որի երկարութիւնն է 9 մետր 8 սանթիմ, լայնութիւնն՝ 6 մետր 15 սանթիմ: Հիւսիսային խորհրդարանի նեւեւ կայ մի դաղտնի մուտք, որի նեւեւ՝ մի անյայտ պահարան: Տաճարիս հարաւային կողմում, գրեթէ պատկից շինուած է մի երկ յարկանի փոքր մատուռ նոյնպէս սրբատաշ քարով: Գետնայարկի մէջ կայ մի գերեզմանի նման շէնք, որ ուխտատեղի է: Վերնայարկ մատուռն ունի սեղան եւ լուսամուտ եւ դուռն արեւմտեան կողմից: Փլած է մատրանս հարաւ արեւելահայեաց կողմն:

Տաճարի արձանագրութիւնն.

«Ես Մամքան թագուհի ամուսին Ջալալ Դաւլին եւ թոռն Բաղուց թագաւորին, այսինքն՝ Սիւնեաց, շինեցի զեկեղեցիքս եւ տուի ընծայ Ալնճայ հողն զիմ հոգւոյ. սպասաւորքս Ե. պատարագ առնեն ինձ, եւ ծննդեան ութ աւուրքն իմ ծնողաց առնեն, մինչ մեռանիմ՝ ինձ: Ով ոք որ զտուածս հանէ կամ զժամս խափանէ, դատի յԱստուծոյ եւ 'ի սրբոց թվին Ջ. (1251)»:

Դրան արեւմտեան սեմին վերայ.

«Հրամանաւ աստուածասէր իշխանին Հասանա տեառն Խաչենո ես Գրիգոր որդի քաջ զաւրականին Ջաջուռա ետու զԱւանախոռին երկիրն ի Սուրբ Նահատակս. տէրս եւ միաբանքս տուին ինձ Սուրբ Գրիգորի տաւնն Բ. պատարագ.....»:

Տաճարիս արեւմտեան կողմում.

«Յանուն Աստուծոյ ես Սարգիս Կարնու քաղաքացի սալեցի եկեղեցիս եւ կանգնեցի զխաչերս ինձ եւ աշակերտի իմո Յովհաննիսի, յաղաւթ...»:

Արդէն-ընկած են խաչերն:

Փոքր մատրան արեւմտահայեաց ճակատին.

«Ես Պապաքո եւ Խութլաս տուաք զԳոխիներերն ի սուրբ Նահատակս, տէրս եւ միաբանքս տուին Ա. ժամ, Դաւթի տաւնին աղբայրական, կատարիչքն...»:

Մի ընկած քարի վերայ.

«..ՉԺԸ. ես Գելանչահզեցի... Ալանջաի կամ Եղերն եւ տուաք Սուրբ Ստեփաննոս. միաբանքս տուին Ա. աւր ժամ 'ի տարւոջն Ադնաանց (գուցէ Ատոմանց) տաւնին կատարիչքն աւրհնին յԱստուծոյ»:

«Շնորհիւն Աստուծոյ ես Հասան որդի Կախտանկայ եւ Խորիշահի տէր Խաչենու շինեցի զսուրբ եկեղեցիս՝ յորժամ յայտնեցաւ մասունք սուրբ Ստեփաննոսի 'ի սոյն տեղւոջս ի թուին ՈՀԸ. (1229). սահմանեցի 'ի սպասաւորացն զժամ զատկին վասն ինձ եւ վասն հօրն իմոյ[1] »: Մինչեւնոյն Ջալալ-Դօլա-Հասանն է արձանագրութիւնս գրել տուողն, որ շինել տուած է Գանձասարայ հռչակաւոր վանքը, ինչպէս տեսանք:

Եկեղեցուս հիւսիսային կողմում արտաքուստ կայ մի նշանաւոր մահարձան, որի վերայ կան երկու գեղեցկաքանդակ քարեայ խաչեր: Երկար արձանագրութիւն կայ խաչերիս պատուանդանին վերայ, թէեւ եղծուած են գրերից շատերն, այսու ամենայնիւ ընդօրինակում ենք եղածը նոյնութեամբ՝ կէտեր դնելով պակասած տեղերում.

«...ԻՉԱ....որդի կանգ.... աչս յիշատակ Ջալալ Դաւլին.... բարեխաւս ծ... 'ի Քրիստոս թ. ՈՂԹ.»:

1 Այժմ պարզուեցաւ մթութիւնն: Արձանագրութիւնս հաստատում է, որ յայտնուած է այստեղ Ս.Ստեփաննոս նախավկայի եւ նահատակի մասունքն. հաստատւում է, որ երկյարկ մատուռներս շինուած են Փրկչական 1229 թուին եւ կոչուած Ս. Ստեփաննոս, իսկ եկեղեցին շինուած է 22 տարի յետոյ, Ջ. (1251) թուին դարձեալ յանուն Ս.Նահատակի (սուրբ Ստեփաննոս նահատակ):

ԼԳ. ԱՌԱՋԱՁՈՐ ԳԻՒՂ.[1] Հիմնուած է նոյն լեռնաշղթայի հարաւային ստորոտում, բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, անջրդի եւ միջակ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ նոյն, առատ է լուբիան, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 100, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, թաղակապ երկու կամարների վերայ, երկարութիւնն՝ 16 մետր 13 սանթիմ, լայնութիւնն՝ 9 մետր 15 սանթիմ եւ մի քահանայ: Եկեղեցւոյս հարաւային կողմում. «Թվին ՌՃԺ. եւ Է հայրապետութիւն Պետրոս կաթուղիկոսին, գիւղիս տանուտէրութիւն Եաղուբ (Յակովբ) պէկին, աղսախկալութիւն Պհարին ես անարժան Դաւիթ էրեցս շինեցի զեկեղեցիս 'ի յիշատակ հոգոց մերոց, ով կարդաք, ողորմի ասէք մեղաւորիս»: Ծուխ 197. ար. 814. իդ. 687:

Եկեղեցումս կայ մի ձեռագիր աւետարան գրուած թղթի վերայ, միջակ դիրքով, առանց պատկերի.

Յիշատակարանիցն. «Արդ շնորհիւն Աստուծոյ սկսեալ եւ ողորմութեամբն կատարեալ 'ի ձեռաց մեզ. եւ բիծուն գրչիս Վարանէ (Վարդանէ) եպիսկոպոսիս 'ի խնդրոյ Շմաւոն քահանայիս: Արդ գինեցի (գնեցի) զսուրբ աւետարանս 'ի հալալ եւ արդեանց ինչից իմոց յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց»: Մատթէոսի վերջում գրուած է. «Ջստացող սուրբ գրոյս եւ զծրաւղ սորա զՅորդան եպիսկոպոս յաղաւթս յիշեցէք»:

Աստուածաշունչ. կայ եւ մի ձեռագիր սուրբ գիրք, որը գրած է խոսրով անուն ոմն, իսկ ստացողներն են Մելքիսեդեկ. Յովհաննէս եւ Մելիտէն քահանայք, բայց յայտնի չէ գրութեան թուականն: Երկրորդ անգամ սուրբ գիրքս գնած է Վաճառ գիւղաքաղաքացի պարոն Ըռուզբէկն եւ իւր կողակից Հաւրին (Հուրին): Վերջին անգամ նորոգել տուած են գիւղաքաղաքին բնակիչներն. «Զվերջին աւր նորոգել տուող սուրբ Աստուածաշունչս ես Մկրտիչ, ես Մեհրապս, ես Շահպանդս, Վաճառի մեծն եւ փոքրն նորոգել տվինք սուրբ Աստուածաշունչս... թվ. ՌԿԶ.»:

Աստուածաշունչս գրուած է թղթի վերայ, չունի պատկերներ, նախշեր եւ ծաղիկներ, բայց գեղեցիկ են գրերն եւ գիւրաւ վերծանելի: Հռութի գրքի վերջում գրուած է.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ, փաթիշահութեան Ջայան (Ջհան) Շահիս Ուլու պէկս որդի Մէջլիսին՝ թոռն մեծին Ճալալին, ես Շահանշէս որդի Մեհրապին՝ թոռն Արղութինի մեր հայրենեացս մէջն խաւսք իլաւ (եղաւ), պարոն Ուլու պէկին թալեղ[2] մէկ մարդ մեռաւ. Արապայ հողին վեր[3], գինացինք[4] պարոն Աղայպաստին մուտ (մօտ). երեք սահրատին[5] վեր արիւն կապեց, Արապայ հողն երետ Ուլու պէկին, սահրատն շինեց Առաջաձորայ ջուրն[6] ու վեր գայ Ցամաք ձորն, ջուրն վեր գայ Ցեց դրած քարերն. Պզտիկ Փոսն, վեր գնայ Կապն, գեայ գինայ Արապայ ջոթերն, գինայ Արապայ հողն, գինայ սարն, վեր գինայ Արխէ աղբիւրի հողն, վեր գինայ Աթոռ, վեր գեայ Հաւազայ խոռն[7], վեր գեայ Խառն, վեր գինայ Քարհատն, վեր գինայ Քարի ջաղացն, գինայ գետն[8]: Այսչանք[9] հանդ տեղ ա Շահանշին, իւր հայրենիք է, այլուն պուն բան չկայ (այլում ոչինչ չկայ), որ այլայլում անի, այն (նա) նահլաթ իլնի[10]. այս պայմանիս կապած եղիա եպիսկոպոս առաջնորդ Գանձասարայ վկ[11]. ես Յովհաննէս կաթուղիկոս որդի Ջալալին, թոռն մեծին Աթապէկին վկ. ես Աղապաստի որդի Ճալալին վկ. ես Աղէկս որդի Ճալալին վկ. ես Միրզալիս որդի Տուրսունին վկ. Պաստամս վկ. ես Ամիր Հասանս որդի Ճալալին վկ. թ. ՋԵ. (1456)»:

1 Զիլէթ սար՝ 5132 ոտք Առաջաձորից վերեւ:
2 Մի մարդ մեռաւ Ուլու պէկի կողմի մարդիկներից:
3 Վեր գնացինք Արապայ հողից:
4 Գնացինք:
5 Երեք սահմանների վերայ:
6 Դատաւորն սահման որոշեց Առաջաձորի ջուրը:
7 Իջնէ Աւազի մօտն (քանդուած տեղն):
8 Խաչեն գետակն (Խաչենագետն):
9 Այսչափ անդ տեղ է:
10 Նզովեալ լինի:
11 Այս կապած պայմանիս վկայ եմ Եղիա եւ այլն:

Երկու քարեայ խաչարձան կայ գիւղիս Ծմակահող տանող ճանապարհի վերայ. բերդի հիւսիսային հանդէպ, խիստ մօտ: Մարդաչափ բարձր եւ մեծ խաչարձաններս կանգնել տուած է իւր ծնողաց գերեզմանների վերայ Սէր անուն ոմն. «Ի թվ. ՈՁԶ. ես Սէրս կանգնեցի զխաչ. ծնողիս Մայր Տիկին (Մայր Տիկնոջ), որք երկիրպագէք Աստուծոյ Քրիստոսի, յաղաւթս յիշեցէք»:

Ճգնաւորի հանգիստ.

Ա. Ճգնաւորի բնակարանն եւ գերեզմանն գտնւում է գիւղիս եկեղեցուց վերեւ քարայրի մէջ, որի առաջի երեսն պատած, մի լուսամուտ եւ մի դուռն թողուած է: Այժմ քանդուած է պատի վերնամասն: Ո՞վ է եւ ինչ անուն ճգնաւոր. ոչ ոք չգիտէ:

Բ. Համանման քարայր եւ Ճգնաւորի գերեզման կայ նաեւ Ճգնաւորի ձոր կոչուած տեղում գիւղիս արեւելեան կողմում:

Գ. Յար եւ նման ճգնաւորի քարայր եւ գերեզման կայ եւ գիւղիս արեւելեան կողմում՝ Անապատի մօտ:

Անապատ. Գիւղիս արեւելեան կողմում, մի բարձր քերծի տակ, բարակ ջրաձորի, բարձրից թափուած ջրվէժի աջ կողմում, Շապարանց Յարութիւնի պարտիզում կայ երկու փոքր եկեղեցի. որք համարեա թէ կից են միմեանց: Եկեղեցիներս գրեթէ մեծ մասամբ գոյացած են քարայրից. որի առաջի կողը քարուկիր պատով պատելով ձեւացրած են եկեղեցիներ:

Արեւելեան եկեղեցին ունի երկու խորան. մինի վերայ գրուած է. «Սուրբ Ովաննէս Մկըրտիչ»: Իսկ մուտքի արեւելեան կողմում մի քարի վերայ. «Խորանք սաւրիս (սորին) է, որ դրախտի նման են, երկնաւորի Հոգուն սուրբ են՝ զաւրաւարի՝ քրիստոնէից փրկանաւորեցաւ[1] 'ի փրկութիւն Կարապետս եւ ի լուսաւորութիւն հոգոյ նորա շինեցաւ խորանս յիշատակ սմայ»:

Իսկ արեւմտեան եկեղեցին չունի գրութիւն:

Եկեղեցիներիս դռների առաջ, (հարաւային հանդէպ) մի մեծ եւ անտաշ քարի վերայ.

«Յորժամ նկարեցան հզաւր հանքս, թիվն ՈՂԸ. էր, ես տէր Խաչի Նոյ ջալա, գրեցան, նկարեցան. կատարեցաք, առաք. եւ էջս յանող սորա մեր որդի սուրբ տնաւրէնութեամբն Քրիստոսի բարեխաւս հոգոց եւ մարմնոց եւ ի պարծանս... Տէր Եղիա շինեց զՍուրբ Անապատս եւ ի սմա յեծէ, ի սմայ թշնամին կործանեսցէ սորա. այլք բարեկամ են սմայ. սա բարեխաւս է նոցա, որք միաբան են. սոցա բարին քո Տէր առատ խաղաղութեամբ... ցէ, մնասցէ նմա այժմս ահա եւ հանդերձելն, ոչ միայն 'ի մի աջեալ, այլ աւրհնեալ եղիցին միաբան: Մայր Տեառն... միամաւր իմ, յուսացեալ ի Միածինդ քոյ, լուսաւորեա ընդ սուրբս քո»:

Քարիս արեւելեան երեսին. «Որ Աստուծոյ արքայ Ջալալ Դաւլայ եւ Աթաբակ որդին, որ Աստուծոյ[2] իշխան Խաչենոյ եւ Ըռանայ[3], Ուքան մանուկն Հասանայ սաղաբ գոլ Աստուած ու մեծ փաթշայան պարոն շահ տէր Միքան Աստուծոյ սիրով մեաբան նայ 'ի սմա ՅԼ: (330) մեծամեծ իշխանք եւ զաւրքն ՌՅ. (1300) աց միահամուռ, համակից միմեանց աւրհնեալ եւ զաւրացեալ եղիցին 'ի կամս Աստուծոյ Հաւր եւ նմա փառք յաւիտեանս ամէն: Տունկս բարի, ծառս ամենի, պտուղն իբր հազար բարի, ով փափագի՝ աստ վայելէ, կենաց յուսոյն նա հասանի, ողորմի Աստուած միաբանելոցս 'ի սմա սիրով եւ արդեամբք յամենայն բարեպաշտ իշխանաց մերոց, տացէ Աստուած զբարեմտութիւն հոգոց, մարմնոց մերոց. ամէն»:

Կարմիր եղցի. Գտնւում է Առաջաձորիս հիւսիսային կողմում. գիւղիս ձմեռանոց գոմերի մօտ: Բոլորովին կանգուն է տաճարս, որի մօտ կայ եւ գիւղատեղի եւ հանդստարան:

Նահատակ. Նոյն կողմերում քարուկիր փոքր եկեղեցի, որի մօտ նոյնպէս կայ ընդարձակ հանդստարան եւ մեծ գիւղատեղի:

ԼԴ. ԿՈՃՈՂՈՒՏ ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն լեռնաշղթայից (Եկեղանայ սարից) դէպի հիւսիս

1 Մինչեւ 1 թուանշանս փորագրուած է մուտքի մի քարին վերայ, որպէս գրեցի, իսկ թուանշանիցս վերջն՝ մի ընկած քարի վերայ է:

2 Կամ Որ ըստ Աստուծոյ եւ կամ Աստուծով եւ կամ յԱստուծոյ:

3 Առանի երկրին իշխող:

թեքուած մի սարահարթի վերայ. բնակիչք տեղափոխուած են Վանքաշէնից, հողն՝ վանքապատկան, տեղական բերքերն՝ նոյն (չունին ոչխար), ամենապատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, սքանչելի՝ տեսարանն, երկար կեանք՝ 100 տարի, եկեղեցին՝ Ս. Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն, քահանան գալիս է Վանք գիւղից:

Վաղուց արդէն բնակիչ եղած է գիւղումս. հին է եւ եկեղեցիս եւ հանգստարանս, որ եկեղեցուս շրջապատումն է: Տաճարիս դրան մի խաչքարի վերայ. «ՈՂԸ. ես Սարգիս որդի Ասլանայ եկի աւտար աշխարհ. կալայ հագս մայր իմ (շալակեցի մայրս) Շահհնար, յաղաւթս յիշեցէք»:

Գիւղիս եւ Արութիւնաշէնի ծուխերը ձգած են Վանքաշէնի վերան:

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ

Հիմնուած է Կոճողուտի արեւելեան հանդէպ եղած մացառուտ ձորում, այն առուակի հեղեղատի աջ կողմի բարձրութեան վերայ, որ խառնւում է Թարթառին: Վանքս ունի բոլորակաձեւ եւ բարձր շինութիւն եւ կաթուղիկէ եւ մի դուռն արեւմտեան կողմից: Քանդուած են այժմ խորանն, կաթուղիկէի սալկախն եւ դռնագլխի քարերն: Հանգստարան է վանքիս շուրջն, որոց մէջ կան գեղեցիկ ու մեծ-մեծ խաչարձաններ: Վանքս ունեցած է միաբանից սենեակներ, որք կործանուած են այժմ: Ամայի է վանքս:

Խորաստանայ մատուռ. Շինուած է վանքիցս վերեւ երկու բարակ ջրերի մէջ: Աւերակ է այժմ մատուռս, որի մօտ է գիւղատեղի եւ հանգստարան:

Թխախոռ. Գիւղիս արեւմտեան կողմում կայ այս անուամբ գիւղատեղի, հանգստարան եւ աւերակ եկեղեցի...

Գիւղիցս վերեւ կայ կիսաւեր մատուռ եւ ընդարձակ հին հանդստարան. որի մէջ մի խաչարձանից. «Թ. ՈՀԷ. ես Սարգիս որդի Բագար (ատայ) կանգնեցի զխաչս մաւր իմոյ Ազ (իզին)»:

ԼԵ. ԱՐՈՒԹԻՒՆԱՅ ՇԷՆ կամ ԿԱՐՄԻՐ-ՔԱՐ. Շինուած է մի ձորակի երկու լանջերի վերայ, նոյն լեռնաշղթայի հիւսիսային կողմում. բնակիչք տեղափոխուած են Վանք գիւղից. հողն՝ բէկական, տեղական բերքերն՝ նոյն, սննդարար՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 85-90 տ. եկեղեցին. քահանան եւ հանգստարանն Վաղահաս գիւղինն է:

Գիւղիս արեւելեան հանդէպ Երի-Հոռաթաղ[1] կոչուած տեղում կայ գիւղատեղի. հանգըստարան եւ կանգուն եկեղեցի, նոյնպէս հարաւային կողմում եղած անտառում կայ աւերակ եկեղեցի, հանդստարան եւ գիւղի տեղ: Նոյնպէս Վարի եւ Վերի Ղամշուտ-ծով (Եղեգնուտ-լիճ) անուն տեղում կան գիւղատեղեր, հանդստարաններ եւ աւերակ եկեղեցիներ:

ԼԶ. ՎԱՂԱՀԱՍ կամ ՎՂԱՀԱՍ ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն լեռնաշղթայի հիւսիսարեւմտեան կողմում, Թարթառ գետի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ վանքապատկան, անջրդի եւ բարեբեր, տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 100 տ. եկեղեցին՝ Մայրաքաղաք կամ Տիրամայր, քարուկիր եւ խիստ հին, քահանան գալիս է Վանքից: Ծուխ 40, տր. 160, իգ. 166:

Գիւղիս եկեղեցին սովորաբար կոչւում է Մայրաքաղաք, որի շրջապատում կայ մեծատարած հանդստարան: Եկեղեցու մեծութիւնից եւ գերեզմանատան ծաւալից երեւում է, որ ժամանակաւ հուչակաւոր վանք եղած է Մայրաքաղաքս եւ բազմաբնակիչ գիւղս, որ փոքր է այժմ: Վանքս կամ եկեղեցիս, որ ամբողջապէս շինուած է տորոնագոյն սրբատաշ քարով, ունի մի մեծ դաւիթ, հարաւային եկեղեցի եւ գրադարան: Ամբողջ շինութեանս երկարութիւնն (արեւելքից արեւմուտք)՝ 14 մետր 45 սանթիմ, լայնութիւնն՝ 12 մետր 97 սանթիմ: Տարօրինակ ձեւ ունի դաւիթս, որի արեւելեան հիւսիսային անկիւնն գրադարան է, իսկ արեւելեան միջին եւ արեւելեան հարաւային մասն երկու խորաններ եւ արեւմտեան մասն՝ դաւիթ, որի ամբողջ կամարներն խո-

1 Երին նշանակում է Վերի, Վարի-Հոռաթաղն արդէն գոմանոց է, բայց կան դեռ մի քանի գերդաստան: Հոռաթաղ նշանակում է Ուռի ծառի թաղ:

նարհուած են եւ մնում են միայն չորս պատերն: Սակայն կանգուն են դրսադարանն, միջի միջակ եւ հարաւային փոքրիկ խորաններն: Գաւթիս հարաւային կողմին պատկից է մի նեղ, ցածր եւ բարձրաշէն եկեղեցի, որ ունի միմիայն փոքր խորան հարաւային կողմում եւ մի մեծ խորան:

Գաւթի միջի խորանի ճակատին.

«Աստուծոյ շնորհիւն ես Կոստանդին Ա. կաթուղիկոս ամենայն Հայոց միաբանեցայ եպիսկոպոսարանիս 'ի ձեռն հոգեւոր որդւոյ իմոյ տէր Մարգարէին, յիշխանութեան մեծի Զալալ Դաւլին եւ առաջնորդութեան սորայ տեառն Ներսիսի Աղուանից Կաթուղիկոսի, եւ այլ սպասաւորք սուրբ ուխտիս հաստատեցին Գ. պատարագ ի տաւնի տեառնընդառաջին Բ. ինձ, Ա. տէր Մարգարին կատարիչքն օրհնին յԱստուծոյ: Ով հանէ զաւետարանս յեպիսկոպոսարանէս, ինքն եղիցի որոշեալ եւ հանեալ 'ի փառացն Աստուծոյ. 'ի թվիս ՈՂԵ. էր»:

Խորանի աջ կողմում.

«ՈԼԲ. թուականութիւն Հայոց 'ի հայրապետութիւն տեառն Գրիգորոյ ես Հասան որդի Վասակայ շինեցի զեկեղեցիս.....»:

Գրադարանի հարաւային պատի ստորոտում.

«Յառաջնորդութիւն Գրիգորոյ ես Սիմէոն եւ եղբարք իմ ետու շինել զփոնախուցս եւ կազմել զգրատունս եւ եղբարք ետուն Բ. աւր պատարագ. կատարիչքն աւրհնին...»:

Քանդակագրուած է գաւթիս դրան արտաքին ճակատին.

«ՁԳրիգորէս եւ զմայր եւ զամուսին իւր յաղաւթս յիշեցէք թիվ ՉԺԷ.»:

Գաւթիս արեւմտեան եւ հիւսիսային կողմերում արտաքուստ եղած են ընդարձակ արձանագրութիւններ, որոց մէջ յականէ յանուանէ նշանակուած է եղել վանքիս նուիրած անշարժ կալուածների քանակութիւններն, տեղերն եւ նուիրողաց անուններն: Գրուած քարերս քանդած եւ անյայտացած են... այժմ բաց մնացած են քարերի տեղերն:

Վանքիս հիւսիսային կողմում մի խաչարձանի վերայ.

«Յանուն Աստուծոյ ես Յոհան գրասէր եւ Վախտանգս կանգնեցաք զխաչս 'ի տապանի որդոյ իմոյ Գրիգորի... թիվն ՈԿԲ. էր»:

Վաղահաս գիւղիս շրջակայքում. Հին Վաղահաս գիւղն գտնւում է Նորիս հարաւային կողմում, որ ունի ընդարձակ գիւղատեղի, կիսաւեր մեծ եկեղեցի եւ ճոխ հանգստարան եւ մի քարեայ բարձր խաչ, որի երկարութիւնն աւելի է 3 մետրից:

Կարմիր-Վանք, որ բարձր է փոքր-ինչ աւերակիցս, եւ որ փոքր եկեղեցի է առանց կաթուղիկէի, բայց իւր մօտ կայ հանգստարան:

Վահին անուամբ երկու մատուռ, որք գտնւում են Հին-Գայլ[1] (Ղոջա-Ղուրդ) սարի վերայ: Մատուռներիցս, որ ուխտատեղի են, մէկի վերայ երբ լցնում են ջուր, անձրեւ է գալիս, իսկ միւսին վերայ երբ վառում են կրակ, արեւ է անում: Վաղահասցիք կատարում են այս գործողութիւնները երաշտային եւ անձրեւային տարիներում:

Վաղահաս գիւղիս արեւելեան կողմում կայ Մատաղիս անուն գիւղատեղի, որ շատ հնութ չէ եւ ունեցած է՝ ըստ աւանդութեան՝ 800 տուն: Աւերակիս հիւսիսարեւմտեան կողմում, Թարթառ գետի աջ ափի մօտ կայ մի քարուկիր կիսաւեր մատուռ, քարուկիր կամրջի աւերակ եւ մեծամեծ քարեայ խաչարձաններ:

Խունկըթալա կոչուած տեղում եւս կայ աւերակ գիւղ, եկեղեցի եւ հանգստարան:

Վաղահաս գիւղիս արեւմտեան հանդէպ, խիստ մօտ է մի հին մատուռ, որի դուռն եւ արեւելեան լուսամուտի արտաքին կողմն քանդուած են:

1 Բարձրութիւն Գայլասարիս 7875 է:

ԽԱԹՐԱՅ ՎԱՆՔ ԿԱՄ ԽԹՐԱՎԱՆՔ

(Գերեզմանատուն Դոփեանց ցեղին)

Հիմնուած է Դոփեանց Գրիգոր իշխանի դանձով Թարթառ գետի աջ կողմի բարձրութեան վերայ մի սարահարթում, որ հեռի է Վաղահասից դէպի արեւմուտք 31/2 մղոնաչափ: Կառուցեալ է չորս սիւնների վերայ, որոց երկուսն միապաղաղ են եւ միւս երկուսն երկերկոտոր չորս կամարների գլխին բաղմած է գմբէթն: Վանքս ունի երկու փոքր եւ մի աւագ խորան, մի առանձին խորան եւս հիւսիս-արեւմտեան կողմում տաճարիս արեւմտեան անկիւնում, մի գաղտնի պահարան հիւսիսային դասի ձեղունի մէջ[1], երեք դուռն հարաւային, արեւմտեան եւ հիւսիսային կողմերից, 17 մետր 10 սանթիմ երկարութիւն, 14 մետր լայնութիւն:

Արտաքուստ տաճարիս արեւելեան ճակատին.

«'Ի ՈԾԳ. (1204) թուիս ես տէր Յովհաննէս շինեցի զեկեղեցիս (արդեամբ նոյն իշխանի) եւ ժողովեցի զխաչս եւ զգիրս, որ ի սմա եւ արկի զՋոթացն այգին եւ զՄատաղիսն[2] բազում աշխատութեամբ, եւ ետու զվանքս իւր ամէն սահմանաւն իմ եղբարս (եղբօրս) Հասանայ եւ իւր որդեանցն Հաթերքու տեառն միջնորդութեամբ. ով խափանէ, խափանեսցի ի կենացն Աստուծոյ»: «Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Հասանայ, որ երբ իմ աղբերս զեկեղեցիս շինեաց ու զվանքս ինձ երետ, ես զԽնձորայ Բակս իւր սահմանով ի յեկեղեցիս տուի, ով հակառակ կայ, Աստուծոյ հակառակ կայ, ով զայս գիր խափանէ, չունի թողութիւն յԱստուծոյ»:

Մի ջարդուած կիսատ քարի վերայ.

«Կամաւն Աստուծոյ ես Հասան եւ մայր իմ Շուշիկ շինեցաք զսուրբ կամար, Պետրոս հաւր իմոյ... թվ. ՈԿԴ.»:

Վանքիս ներսում բեմի երեսին.

«Շնորհիւ Քրիստոսի ես Ասփէ[3] դուստր արքայաշուք իշխանին Տարսայիճի, թագազարմ մաւրն իմոյ Մինա Խաթունին, նպաստ եղեալ քրիստոսապսակ գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի 'ի շինութեան լուսանուէր սուրբ եկեղեցւոյս, կամեցայ ի ձեռն քահանայապետին մեծի տեառն Յովհաննիսի՝ զիմ յարդար ընչից կանգնեցի Բեմի սեղան 'ի զենմանն Քրիստոսի, զի յամենայն կիրակէ եւ շաբաթ տաւն ծննդեան եւ տեառնընդառաջին, զատկին, զվարդավառին, աստուածածնին եւ սուրբ խաչի ինձ կատարի պատարագ զամէն եկեղեցիքս. որ եւ տուի զմեր խաս հողն Բլրի հանդի զսեմենկպան ա. բահի ջուր. թէ ոք 'ի մերոց կամ յաւտարաց զայս յայս եկեղեցւոյս հանէ կամ զպատարագն խափանէ, 'ի փառաց որդւոյն Աստուծոյ, որոշեալ եղիցի»:

Ձախակողմեան փոքր խորանի վերայ. «Այս ձախակողմ խորանի սուրբ Պռոկոպիոս է, զմեծ տէր Յովհաննէս շինող եկեղեցոյս որդի Դաւիթին, եղբայր մեծ իշխանին Հասանայ յաղաւթս յիշեցէք»: «Աջակողմանն սուրբ Մինաս, զՄինա խաթուն դուստր մեծ իշխանին Զալալին եւ ամուսին Տարսայիճին յաղաւթս յիշեցէք»:

Վէմ քարի վերայ.

«Աստուած ողորմեա՛ Սմպատիս եղբաւր...»:

Հիւսիսային վերջի սիւնի վերայ.

«Աստուծով ես Ազարիա միաբանեցայ սուրբ ուխտիս, տէր Յովհաննէս եւ միաբանքս տուին Ա. աւր ժամ համբարձմանն...»:

«Կամաւքն Աստուծոյ եւ Հասանայ եւ տէր Յովհաննիսի ես Յակոբ ստացայ զսոյնս (սիւնս) հալալ արդեամբք իմովք, եւ միաբանքս ետուն 'ի տարւոջն Դ. պատարագ.....»: Վանքս նորոգուած է Ռ.Ձ.Խ. թուին Հայոց Յոհան, Բարսեղ, Աթանաս եւ Ղազար վարդապետների ձեռնով:

Վանքումս, մէջտեղին մօտ, կայ մի գերեզման, որի տապանաքարի արձանագրութիւնը ան-

1 Գաղտնի պահարան կայ եւ աւագ խորանի գլխին:
2 Միեւնոյն Մատաղիսն աւերակ գիւղ է, որ էր Վաղահասի արեւելեան կողմում:
3 Տե՛ս սորա մասին Դարդման գաւառի Թարգմանչաց վանքի աւետարանի յիշատակարանը:

հնարին եղաւ կարդալ, քանզի պատեց միգամածն, մթնեց տաճարիս ներսն, չկար մոմ վառելու մօտենում էր երեկոն, 31/2 մղոնաչափ (մօտ 25 վերստ) ճանապարհ ունէինք գնալու եւ այն՝ գազանների միջով. վասն որոյ մնաց առանց կարդալու: Սակայն գիտենք հաստատապէս, որ բարեպաշտուհի Ասփայի, գուցէ եւ Գրիգոր իշխանին մարմինն ամփոփուած է տաճարումս: Օրհնեալ տիկինս Մեծ-Սիւնեաց Տարսայիճ իշխանին դուստրն էր եւ Դոփեանց քաջ Հասան իշխանի որդի Գրիգոր իշխանին ամուսինն: Ասփայ տիկինս վախճանուած է Հայոց ՉԿ. (1311) եւ ամփոփուած վանքումս (տե՛ս նոյնը Թարգմանչաց վանքի աւետ. Ա. յիշատակարանը):

Զանգատուն. Շինուած է[1] վանքիս արեւմտա-հիւսիսային անկիւնում արտաքուստ, երկայրկ եւ սրբատաշ տորոնագոյն քարով: Վանքս ունի եւ շրջապարիսպ. քարուկիր սենեակներ եւ խուցեր իւր հիւսիսային կողմում: Այժմ աւեր է պարսպի հարաւային կողմն եւ մի քանի խուցեր: Պարսպի մեծ դուռն, որ հիւսիսարեւմտեան կողմից է, դեռ կանգուն է իւր պատերովն: Վանքս շրջապատուած է անտառախիտ վաղեմի ծառերով:

Վանքիս կալն. Շինուած է տաճարիս արեւելեան հանդէպ, ձորի աջ կողմի սեռի վերայ: Կալիցս փոքր-ինչ վերեւ նոյն սեռի վերայ կայ մի քարուկիր մատուռ, որի մօտ նաեւ այլ կալեր:

Խաչարձան եւ կամուրջ. Վանքից ներքեւ Թարթառի վերայ կայ մի հին կամուրջ եւ կամրջիս մօտ՝ մի խաչարձան, որի վերայ քանդակուած է. «Կամաւն Աստուծոյ ես Ասփայ դուստր Մեծ իշխանին Տարսայիճին եւ Մինայ խաթունին եւ ամուսին հսկայազաւր իշխանին Գրիգորի որդւոյ Մեծ իշխանին Հասանայ քաջի տեառն Աղուանից կապեցի զխաչս, շինեցի զկամուրջս յիշատակ հոգւոց անցելոց, ներկայից եւ ապագայից»:

Այլ խաչարձանի վերայ. «Յորժամ թուականն էր ՈԾ. (1201) բարեպաշտ պատրոնիկն Վասակ թոռն Կիւրիկայ թագաւորին, որդի Հասանայ որդւոյ Սակռայ տեառն Հաթերքոյ, Հանդաբերդոյ, Հաւքախաղացին, եղբայր Վախտանկայ Նորին աթոռակալի եբեր զխաչս եւ ոչ կարաց կանգնել վասն անպարապութեան. քանզի երթեալ եղեւ ի Գոլաշտեան եւ առ զնա յանաւրինաց աւգնութեամբն Աստուծոյ եւ բնակեցոյց անդ զորդին իւր եւ ինքն նահատակեցաւ ի վերայ քրիստոնէից եւ իջեալ լոյս ի վերայ ի տեսութիւն բազմաց. եւ յետոյ ՈԾ. թուին կանգնեցին որդիք նորա Խոյդան եւ Խաւչախն յիշատակ հոգւոյ նորա՝եւ յերկարութիւն կենաց իւրեանց...»:

Պէտք չէ մոռանալ իմ առաջնորդը, որ վաղահասցի մի քաջ, սրատես եւ զուարթ երիտասարդ էր Գրիգոր Օհանեանց անուամբ եւ որ օգնեց ինձ ամէն կերպով:

Խոթայ վանքից ներքեւ, Թարթառի աջ ափերի վերայ, հետեւեալ աւերակ գիւղերում կան աւեր եկեղեցիներ, մատուռներ եւ հանդստարաններ՝ Զոխտակ-եղցի, Վարդանայ գիւղ, Մըրման շինատեղ (ընդարձակ աւերակ):

ԽԱՉԵՆ ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա. Շիկաքար (21), որի տեղն այժմ կոչւում է Քարագլուխ, իսկ սորա հիւսիսային բարձր քերծն՝ Շիկաքար (մօտ 3100): Բերդս ունի երկու մուտք՝ արեւելեան եւ արեւմտեան կողմերից. դռների կողքերն ամրապնդուած է եղել քարուկիր պատերով, ինչպէս նշմարւում է հետքերից:

Բ. Բերդն է Ուլու-պապի ամրոցն, որ կայ Պոգեսբերքի մօտ: Բայց ամրոցիս մէջ եւս չկայ ջուր: Այս բերդն Շիկաքարի չափ հին չէ, այլ պատկանում է Զալալեան իշխանների ժամանակներին:

Գ. Կաչաղակաբերդ (5642 ոտ.), որ գտնւում է Պտրեցիք գիւղի արեւմտեան կողմում: Զիով մի ժամի ճանապարհ է Պտրեցիք գիւղից մինչեւ ամրոցս, որ արձանացած է Մեծ-Իրանաց վանքի հարաւային կողմում: Բերդակալ (22) սարն ժայռ է միապաղաղ, առանձնացած բոլորովին իւր չորս կողմերից եւ սեպաձեւ ցցուած հիւսիսից հարաւ դիրքով, որի մակերեւոյթն փոքր-ինչ թեքուած է դէպի հարաւ: Բերդաքարիս արեւմտեան, հիւսիսային եւ արեւելեան կողմերն գագաթներից մինչեւ գետինն բնութեան քարտաշն այնպէս ուղի՛ղ կտրած է, կարծես թէ յատկապէս կանխաւ մրաթելով նշան արած լինէր: Հարաւային կողմով վիմահերձից վիմահերձ պատուած է քարուկիր պատով, նոյնպէս միւս կողմերով քերծերի եզերքներովն: Միայն հարաւային կողմից է մուտքն, որ բաւական դժուարատար է: Բաւական տարածութիւն ունի բերդիս մակերեւոյթն, ուր կան շատ բնակարանների բակեր: Ափսոս որ ջուր չկայ բերդումս, որ արժանի է անառիկ տիտղոսին. բայց դրսթէ կեղրոնի մէջ ունի մի վիմափոր քառանկիւնի հոր: Պատերազմների ժամանակ ջուր բերած եւ լցած են հորս այն պատուական աղբիւրից, որ գտնւում է մուտքի ուղղութեամբ դէպի հարաւ փոքր-ինչ հեռի: Քանի՛ դեղեցիկ տեսարան ունի ամրոցս, հարաւային կողմում երեւում են Քիրս լեռնաշղթան, Շուշին, Բողբխան, Խաչենի հարաւակողմի գիւղերն, արեւելեան կողմում մօտուստ՝ Սուրբ Գէորգ. հեռուստ՝ Կովկասեան լեռնաշղթան, հիւսիսային կողմում՝ Ջրաբերդի լեռներն, Առաջաձորի լեռնաշղթան, Մռաւ սարն, իւր ստորոտում Աղուան[1] պատն, իսկ իւր արեւմտեան կողմում՝ Խոխանաբերդն եւ Նատարի-Ղալան:

Դ. Խոխանաբերդ (23) կամ Թարխանայ Ղալա (6237).

Զորս կողմերից առանձնացած եւ ձուաձեւ արձանացած մի բարձր ժայռ է մի բարձրագոյն սարի վերայ, որ կայ Գանձասարի հարաւային հանդէպ, Խաչեն գետակի աջ կողմում: Սաստիկ զառիվեր, խիստ վտանգաւոր եւ միշտ ահարկու կածան ժեռքարի վրայով արեւելեան կողմից դէպի հարաւ-արեւմուտք բարձրանում է մանուածոյ ձեւով: Ահա այսպիսի դժուարատար եւ միանգամայն սոսկալի է նեղ կածանն, քանզի, Տէրն մի՛ արասցէ, եթէ սահեցաւ բարձրացողի ոտքն կամ փոքր-ինչ ծռուեցաւ նորա մարմնոյ հաւասարակշռութեան դիրքն, իսպառ կորսուած է. վասն զի ընկնելուց յետոյ սեպացեալ ժայռերին զարկուելով պիտի գլորուի անդունդն: Բերդակիս մակերեւոյթի տարածութիւնն աւելի չէ երեք կալաչափ մեծութիւնից. այսու ամենայնիւ պակաս չեն քարուկիր հին շինութեանց հետքեր: Քարուկիր պատով պատուած են տեղ-տեղ ժայռիս կատարն, ոչ թէ խսպառ խզելու համար թշնամեաց մուտքը ամրոցիցս, այլ որպէս զի մարդ չընկնի վերեւից վար պաշարուածներից: Արդարեւ անառիկ է ամրոցս եւ միանգամայն անմերձենալի եւ շրջապատուած վաղեմի անտառներով: Բայց որովհետեւ այստեղ եւս չկայ ջուր, վասն որոյ պատրաստած են վիմափոր հորեր եւ ի պահանջել հարկին ջուր բերած մօտակայ աղբիւրից, որ գտնւում է բաւական տեղ ներքեւ: Թէ որքա՞ն դժուարութեամբ իջանք, թողնում ենք բարեմիտ ընթերցողաց երեւակայութեանց:

Ե. Նատարին (24) Ղալա (6493 ոտք). Համարեա թէ յար եւ նման ամրոց է այս Խոխանաբերդին: Առաջինն գտնւում է վերջնոյս հարաւային կողմում քառորդ մղոն հեռաւորութեան վերայ: Միայն թէ Նատարն բարձրանալու ուղին այնքան վտանգաւոր չէ:

Զ. Անանուն բերդակ. Գտնւում է գրեթէ Առաջաձորի եւ Ծմակահողի միջեւ երկու քարեայ խաչերի մօտ: Բերդաբլուրն բոլորովին առանձնացած եւ ձգուած է հիւսիսից հարաւ դիրքով եւ միանգամայն թրաձեւ տեսքով. վասն որոյ նեղ եւ երկար է բերդակիս մակերեւոյթն բլրի գագաթի ձեւով: Պարսպուած է բլրիս գագաթն ամուր պարսպով, միայն հիւսիսային ու հարաւային անկիւններում շինուած են երկու բուրգեր, որք միեւնոյն ժամանակ ծառայած են իբրեւ ջրամբար, որոց ջուրն բերուած է մօտակայ աղբիւրներից: Անպակաս են եւ սորա միջից քարուկիր հին տնաբակեր:

Է. Խաթրայ բերդ (25). Գտնւում է Խաթրայ վանքի արեւմտեան հանդէպ, ձորի ձախ լանջի գլխի քերծի մէջ: Այս ընդարձակ քարայրի նման մի տեղ է, որի առաջն պարսպուած է եւ որ ունի մի դժուարատար եւ վերելակ կածան: Այս եւս պատկանում է Զալալեան իշխաններին: Շատ

1 Շինել տուած է Վահրամ իշխանի որդի Սարգիս եպիսկոպոսն (տե՛ս Դատի վանուց արձանագր. շարքում):

1 Այս վաղեմի պարիսպն, որ ընկած է Խաչեն գետակի եւ Քոլատակ վտակի մէջ՝ խառնուրդի մօտ, չկարողացանք իմանալ, թէ ինչ պատճառաւ կոչւում է Աղուանք, թէ եւ ջանքն անպակաս եղաւ մեր կողմից: Արդեօք պարսպի խիստ հեռաւոր հնութեա՞ն պատճառաւ., թէ՞ Աղուանից թագաւորների ժամանակից շինուած լինելու պատճառաւ: Միայն յայտնի է, որ պարիսպս շինուած է ռազմագիտական դիրքով, որով արգելուած է թշնամին ջրաձորս մտնելուց: Նորա մասին տե՛ս ծանոթութիւն 26:

անգամ եղնորթներն գալիս եւ պատսպարւում են ինչպէս բերդումս, նոյնպէս եւ Խաթրայ վանքում:

ԺԴ. ԳԱԻԱՌՆ, որ ընկած է Թարթառ գետի եւ Եանշաղ վտակի ձախ եւ Թրղի գետակի ալ ափերի, Մթնաձորի[1] եւ այս ձորի սարի լեռնաշղթային մէջ, որի ստորին ծայրն հասած է նոյն Թարթառ գետի ձախ եզերին, ստացած է Ըստիսական, Ըռստակ եւ Հաթերք անուանները: Գաւառս հարուստ է ջրերով, անտառներով եւ ամառանոց պատուական լեռներով, բայց փոքր գաւառակ է: Ըստ կարգի այժմեան դասաւորութեան մարմնաւոր կառավարութիւնն միացրած է գաւառակս Ջրաբերդի հետ:

Ա. ՀԱԹԵՐՔ ԳԻՒՂ (27). Հիմնուած է Թարթառ գետի ձախ կողմում, մի բերդասարի արեւելեան ստորոտում, բնակչաց փոքր մասն՝ բնիկ, իսկ մեծ մասն՝ տեղափոխուած Փառուխ, Կղարծի, Ճարտար, եւ Խաչեն գաւառի Խանածախ գիւղերից եւ Վանից, հողն՝ արքունի, մեծ մասամբ անջրդի եւ բարերեր, տեղական բերքերն՝ ցորեն, գարի, գարնանի, գարնագարի, հաճար, կորեկ, կտաւհատ, սոբեկ, լուբիա, բակլայ, խաշխաշ, սիսեռն, ոլոռն, տանձ, խնձոր, թութ, կեռաս, ոչխար, տաւար, գոմէշ, ձի, խոզ. օդն եւ կլիման՝ բարեխառն, պատուական՝ ջուրն, երկար կեանք՝ 80-90. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ չորս կամարների վերայ առանց միջնասիւնների, խիստ հին եւ բոլորովին անշուք, երկարութիւնն՝ 22 մետր 75 սանթիմ, լայնութիւնն՝ 9 մետր 85 սանթիմ, քահանան գալիս է Մեծ-Շէնից: Տուխ 70. ար. 369, իգ. 325:

Եկեղեցուս դրան արտաքին կողմում մի քարի վերայ կայ կանացի պատկեր, որի շուրջն քանդակուած է կարակնաձեւ.

«Կամաւն Աստուծոյ ես տէր Թաթէոս, Մարկոս եղբարքս ամէն կանկնեցինք Սուրբ Աստուածածնայ եկեղեցիս, Ըստակէս աւագ քահանայ. Տէր Աստուած ողորմեա՛»:

Մուղդուսին գերեզմանոտ. Ընդարձակածաւալ, վաղնմի հանգստարան, որ կայ գիւղի արեւելեան հանդէպ, ձորի միւս կողմում:

Մացառուտների մէջ խաչարձանների վերայ.

1) «Սուրբ խաչս բարեխաւս պարոն Ղալաբէկին թվ. ՌԿ.»:

2) «Սուրբ խաչս է բարեխաւս Խանխաթունին հոգուն, Մանկասարին»:

3) «Սուրբ խաչս բարեխաւս Խաթունին հոգուն»:

4) «Կամաւն Աստուծոյ պարոն տէր Ոհանէս կանգնեցի սուրբ խաչերս. թագաւոր Շահ Աբազն. երկրիս պարոն տէր Ոհանէս»:

5) «Կամաւն Աստուծոյ ես Ղալաբէկի Ո... հաւր եղբայր իմ պարոն տէր Ոհանէս Ղա....[2] »:

6) «Սուրբ խաչս բարեխաւս Ջիլփիխանին»:

Մի այլ խաչաղարդ քարի վերայ. «Աստուած ողորմի Դէլոյիխանին, որ է որդի Սարումին»: Սորա վերայ կայ մի գայիսոնի քանդակ:

Հաթերքիս շրջակայքում կան հետեւեալ հնութիւններն.

Աստղաբլուր. Մի բլուր է, որ գտնւում է գիւղիս արեւելեան հանդէպ Թարխառի ձախ կողմում: Բլրիս վերայ կայ մի հնաշէն մատուռ, որի մէջ է մի գերեզման, որ մեծ ուխտատեղի է: Բայց այժմ խոնարհուած է թաղն: (28)

Քարահունջ. Խիստ մօտ Հաթերքին հարաւ-արեւմտեան կողմին, կանգուն քարուկիր եկեղեցի, հանգստարան եւ գիւղատեղի, որի ահագին ընկուզի ծառերն ապրում են տակաւին:

Մասիս կամ Մսիս անուն ուխտատեղի աւերակ մատուռ, որ շինուած է Մռաւ սարից անջատուած մի լեռնաբազկի սեւին վերայ, Հաթերքի հիւսիսային կողմում:

1 Ղարանլուսխդէրէ:

2 Հետեւելով բոլոր արձանագրութեանց, տեսնում ենք, որ պարոն տիտղոսը կամ պատուանունը յատկացրած են միայն այն եպիսկոպոսներին եւ քահանաներին, որոց ծագումն իշխանական է. նոյնը տեսաւ նաեւ ընթերցողը: Աւանդաբար ասում են, որ սոքա են Առաք. պատ. (Գ. գլ. 9 եր.) գրուած. «Օղլան քեշիշն եւ իւր եղբայր Ղալաբէկին ի Հաթերք գեղջէ»: Սոքա, որք գնացած են լինում Պարսկաստան, վերադառնում են վերստին իւրեանց հայրենիքն:

Շուքավանք, որ շինուած է մի թանձր անտառի մէջ, այժմ աւերակ է վանքս, մնում են միայն չորս պատերն:

Մթնաձոր. (Ղարանլուխ դէրէ) աւերակ եկեղեցի, հանգստարան, գիւղատեղի, կալեր, մարգագետներ: Աւերակի մօտ կայ մի ամենապատուական եւ մեծ աղբիւր:

Սուին շինատեղ. հանգստարան եւ գիւղատեղի, որի երկու կողմերով հոսում են ջրեր եւ թափւում Թրղին գետակի մէջ, որ օժանդակն է Թարթառին:

Ծոս գիւղատեղի. կալեր, ընկուզի ծառեր, կալատեղեր եւ այլն:

Խոտորաշէն. քարուկիր տնաբակեր, ջրաղացներ, հանգստարան: Գիւղիցս տեղափոխուած են Գանձակի գետաշէնցիք:

Սրաշէն (Սարին շէն). քարուկիր մատուռ, հանգստարան:

Սուտին շինատեղ. նոյնպէս գիւղատեղի. հանգստարան եւ հիմնայատակ մատուռ:

Երկու լճակներ կան Հաթերքի հիւսիսային եւ 2՝ արեւմտեան կողմումն:

Ականայ աւերակ. Մեծ գիւղատեղի է Ականայ անուն վտակի աջ կողմում շինուած, որի մէջ կանգուն է տակաւին եկեղեցին, որ կառուցեալ է հոյակապ վեց սիւների վերայ, բայց անմարդաբնակ: Տակաւին մնում են ընկուզի, թթենի եւ դամոնի ծերունազարդ ծառեր եւ ընդարձակ հանգստարան աւերակիս մօտ:

Բ. ՋԱՓԱՐ[1] ՇԷՆ. Հիմնուած է Հաթերքի արեւմտահարաւ կողմում, Թարթառ գետի ձախ ափին մօտ. եկեղեցին, հանգստարանն խիստ հին են. այժմեան բնակիչք մօտ ութ տարի առաջ տեղափոխուած են 20 ծուխ Ղալաղշլաղ, Ծամձոր եւ Տաթեւ գիւղերից՝ բնակութիւն հաստատած այնտեղ. ամենայն ինչ՝ նոյն: Տուխ 12. ար. 35, իգ. 30[2]:

Կայ պղնձահանք Նոր-շէն աւերակ գիւղի մօտ, որ Ջափար-շինի հարաւային կողմումն է, եւ Դադի վանքին հարաւային կողմում՝ Թարթառի ձորում:

Սկսեալ Ջափար շինից մինչեւ Խոթայ վանք, մինչեւ Եանշաղ կան շատ աւերակներ, որոց մէջ կան աւերակ եկեղեցիներ եւ մօտերքում հանգստարաններ: Գաւառումս այժմ մնացած են միայն երկու հայաբնակ գիւղ. երեսուն գիւղից աւելի է մնացեալ հայ գիւղերի աւերակներն, որոց շատերին մէջ այժմ տեղակալած են աւազակաբարոյ Քեօլանի անուն մահմեդականներ: Այսպէս են Խոթ գիւղն եւ Եանշաղ վտակի մօտ եղած Եանշաղ գիւղն, որոց մէջ բնակում են մահմեդականք, բայց եկեղեցիներն մնում են դեռ կանգուն: (Եանշաղ գիւղիս մասին տե՛ս եւ Ջրաբերդ գաւառի Մաղավուզ գիւղի մաշտոցն): Ահա այսպէս թափուր մնացած է խեղճ Ըռստակ գաւառս հայ բնակիչներից: Մի առ մի գրելով աւերակները՝ ձանձրացնում եմ իմ յարգելի ընթերցողներին: Ես չձանձրացայ մի առ մի շրջելուց, դուք էլ մի՛ ձանձրանաք կարդալուց, ձեր հոգուն մատաղ, սիրելի՛ ընթերցողք: Այցելուն համարեա ամէն քայլափոխում տեսնում է խաչարձաններ, աւեր կամ կիսաւեր մատուռներ, եկեղեցիներ եւ վանքեր, գիւղերի եւ շէնների աւերակներ եւն, եւն...

ԴԱԴԻ ՎԱՆՔ[3]

Վանքս գտնւում է Թարթառ գետի ձախ կողմում Խաթրայ վանքի ուղղութիւնից բաւական վերեւ եւ ունի վաղեմի շրջապարիսպ: Առաջին անգամ վանքս հիմնարկուած է, ինչպէս վկայում է աւանդութիւնն, Թադէոս առաքեալի Դադի անուն աշակերտի անուամբ: Բայց անյայտ է այս շինութեան թուականն, զի հետզհետէ նորոգուած է հնութիւնս այլ եւ այլ ժամա-

1 Ջափար գիւղ անուն յիշուած է Դադի վանուց արձանագրութեանց մէջ:

2 Վերադարձած են իւրեանց գիւղերն 8 ծուխերն:

3 Կոչւում է եւ Խութայ կամ Լոթաց վանք. քանզի շինուած է մի խութի վերայ: Խոթ գիւղն ունեցած է մօտ 300 տուն բնակիչ. որք նախ գաղթում են Երեւանի կողմերն եւ հիմնում Ենիջա գիւղը եւ յետոյ տեղափոխւում են Շուլաւերի կողմերն:

նակներում. վասն որոյ եւ գլխովին անյայտացած է հնութիւնն. միայն մնացած են նորոգութիւններն: Ահա այս վանքիս վանահայրն էր Վախտանգ թագաւորազնի որդի Գրիգոր եպիսկոպոսն, որի մօտ գալով կրօնաւորեցան իւր եղբայր Հասան եւ իւր եղբայրակին Մամայ.

«Կամաւն Աստուծոյ ես Հասան որդի Վախտանգայ, տէր Հաթերքու եւ Հանդաբերդու, Խաչենաբերդու եւ Հաւքախաղացին կացի յաւագութեանս ամս Խ. շատ պատերազմաւ յաղթեցի թշնամեաց իմոց աւգնութեամբն Աստուծոյ եւ եղեն ինձ Ջ. (վեց) որդի, զբերդերս եւ գաւառս ետու նոցա եւ ես եկի 'ի վանս մօտ իմ եղբայր պարոն տէր Գրիգորէս եւ եղէ կրաւնաւոր եւ բերի զխաչքարսի յԱղուայ, շատ աշխատութեամբ եւ բազում հնարիւք կանգնեցի սուրբ նշան հոգւոյ իմոյ: Արդ՝ վասն ձեր հոգւոցդ, որք ընթեռնուք՝ զիս յաղաւթս յիշեցէք ՈԼԱ. թվիս»:

«Ես Մամա թագուհի ամուսին Հասանայ՝ դուստր Կուրիկայ թագաւորին, կացաք յաւագութեան ամս Խ. ես եւ այր իմ, եւ թողեալ զհայրենիքս որդւոց մերոց եկաք 'ի վանքս մօտ տէր Գրիգորիս եւ որդի մեր հոմանուն նորին եւ զգեցաք զձեւ միանձանց եւ կանգնեցի զխաչս յիշատակ հոգւոյ իմոյ, որք երկիրպագէք, յաղաւթս յիշեցէք ՈԼԱ. թվիս (1182)»:

Ապա 1214 (ՈԿԳ.) թուին թագաւորազն Վախտանգի բարեպաշտ տիկինն չորս սիւների վերայ կառուցանել է տալիս սրբատաշ քարով առաջնոյն՝ նոյն վանքի կից հրաշալի շինութիւնը. որի հարաւային որմի վերայ արտաքուստ գրուած է.

«Շնորհիւ ամենակարողին Աստուծոյ եւ Միածնի որդոյ Յիսուսի Քրիստոսի եւ պարգեւաբաշխ ամենասուրբ Հոգւոյն ես Արզու խաթուն նուաստ աղախին Քրիստոսի՝ դուստր մեծի իշխանաց իշխանի Քրդին եւ ամուսին Վախթանկայ թագաւորազնոյ տեառն Հաթերքոյ եւ ամենայն Վերին-Խաչենոյ, յուսով մեծաւ շինեցի զսուրբ կաթուղիկէս ի տեղւոջ հանգստարանի առն իմոյ եւ զաւակաց իմոց Հասանայ անդրանկին իմոյ եւ Գրիգորի՝ որ ի Տէր կէսաւրեայ վաղճանելոյ. զի վասն մեղաց իմոց խրատեաց զիս Աստուած եւ եբարձ ի գլխոյ իմոյ զերկոսեան պսակսն վայելուչս, զի անդրանիկն իմ Հասան սպանաւ ի թուրքաց պատերազմին վասն քրիստոնէական հաւատոյս եւ զկնի երից ամաց զկրտսեր որդին իմ զԳրիգորն ի Տէր կոչեցեալ զպարտ բնութեանս հատուցանելով վճարեաց 'ի կենցաղոյս եւ փոխեցաւ առ Քրիստոս՝ առ 'ի անմխիթար թողլոյ թշուառացելոյ մաւրս իւրեանց: Այլ զի ի կենդանութեան իւրեանց յոյս 'ի մտի եդեալ նոցա շինել եկեղեցի յայսմ տեղւոջ եւ ոչ ժամանեցին վասն արագահաս լինելոյ 'ի վերայ նոցա մահուն. եւ ինձ աւանդեցին անդարձիւ կատարել զփափագ սրտից նոցա. եւ իմ յանձն առեալ մեծ յուսով եւ շատ աշխատութեամբ շինեցի զբաւարանս ի փրկութիւն հոգւոց նոցա եւ իմ դստերաց եւ ամենայն զարմից: Արդ աղերսիւ հայցեմ, որք երկրպագէք սրբոյ խորանիս, յիշել յաղաւթս ձեր զվերոյգրեալս 'ի սմա: Կատարեցաւ ի թուականութեանս Հայոց ՈԿԳ. 'ի փառս Աստուծոյ»:

Տաճարիս խորանումն սեղանի հետեւ.

«Աւգնականութեամբն Աստուծոյ ես Մամա ամուսին արիականին Հասանայ եւ որդիս մեր Գրիգոր տեարք գոլով տեղոյս հայրենեաւք, որ եւ մեր պարոնէքն հաստատեալ էին եւ մեք տուաք ի սուրբ ուխտս զԾովատեղն, զՃաճառանց, զՉալբէկանց: Ես Գրիգոր տվի զԾագունանց հողերն զմեր բաժինն իւր չորեցվն[1] որդին իմ Տէր Սարգիսն եւ միաբանք սահմանեցին սուրբ Ստեփանոսի տաւնի ժամն, որ լինի իմ մաւրն եւ ամուսնոյ իմոյ Ասփայինն, թէ ոք զժամն խափանէ կամ զընծայն յետ ունէ, դատի յԱստուծոյ. Մոխրաբակս մեր բաժին եւս տվաք 'ի սուրբ ուխտս թվ. ՉԿԱ.»:

Աւագ խորանի ճակատին.

«Շնորհիւն Աստուծոյ ես Աշոտ որդի Ամիր Հասանայ... ած իշխանէն Պռաւշա եւ մայրն իմ Աճիբնի միաբանեցաք սուրբ ուխտիս եւ տվաք... հողն ի Խաչենագետի գլ... սուրբ կաթուղիկէս տէր Աթանաս... տվին ինձ պատարագ զամէն եկեղեցիս.... (թվ. ՋԻ.)»:

1 Արցախում արօրով հերկած ժամանակ լծում են երկու գոմէշ եւ երկու եզն, որ կոչւում է չորեց, չուրուց, չարկով՝ ծագած չորս բառից: Այժմ եւս գործածական են բառերս: Այստեղ նշանակում է «հողերն» չորս անասուններով միասին:

«Կամաւն Աստուծոյ ես Սմպատ իշխան որդի մեծի Լիպարտի միաբանեցայ սուրբ ուխտիս Դատու վանաց առաջնորդութեամբ տէր Աթանասի եւ գնեցի զԽռանտաշանց այգին եւ յեղեգիս իմ գնած Ձիթահանքն եւ այլ արդիւնք ըստ կարի եւ զկանանչաւոր գեղն եւ այլ, որ հաստատեցի ամէն խարճովն անչար եւ ետու 'ի սուրբ Կաթուղիկէս: Տէր Աթանաս եւ այլ միաբանքս սահմանեցին մեզ զատկի կիրակի յարութեան աւրն զամէն եկեղեցիքս մեզ ժամ: Արդ, ով խլէ զմեր տուածն կամ զժամն խափանէ, ՅԺԸ. հայրապետացն նզոված եղիցի, թվին ՉԺԴ.»:

Որովհետեւ տաճարս եւ գաւիթն շինել տուած էր բարեպաշտուհի Արզու խաթունն իբր հանգստարան Վախթանկեան ցեղին, վասն որոյ ամփոփուած են գաւթումս.

Վախթանկ թագաւորազնի, իւր կնոջ
Արզու խաթունի եւ սորա որդւոց
Հասանայ անդրանկի եւ կրտսերոյն
Գրիգորի, որ վաղաթառամ վախճանեցաւ.
Մամքանայ[1] *, որ քոյր էր Արզու խաթունիս, կին միւս քաջ Հասանին եւ մայր Գրիգոր իշխանին.*
Զաքարիա կաթուղիկոսին.
Աթանաս
Յովհաննէս[2]
Սարգիս[3] *եպիսկոպոսին.*
Գրիգոր Կաթուղիկոսին մարմիններն:

ԴՈՓԻ ՈՐԴԻՔՆ ԵՒ ԹՈՌՆԵՐՆ[4]

«Դոփ, բարեպաշտուհի դուստր Սարգսի իշխանաց իշխանին. սա (Դոփ) ունէր ամուսին իւր զբարեպաշտ իշխանն զՂարա Գրիգորն եւ որդի սոցա քաջ եւ յաղթող զաւրավարն եւ մեծ իշխանն Հասան տէր Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շաղվաքու եւ այլ բազում գաւառաց, որ եւ քան զամենայն առաւել սիրէր զգեաւղն Ծար, հայրենիք եւ պարգեւք քաջութեան, որ են գինք արեան տուեալ յաշխարհակալացն Հայոց: Սա ունէր զկին Մամքան դուստր Քրտին, եւ որդի սոցա զբարի Գրիգորն եւ ամուսինն իւր Ասփայ դուստր Կոմսի Տարսայիճին՝ իշխողի կողմանն Սիւնեաց, եւ սա բազում ընչիւք եւ ծախիւք փարթամացոյց զսուրբ ուխտն Դատի վանս եւ զԽաթրի վանս, զի շինեաց զտաճարսն, որ է Դարպասներն եւ այլ բազում արդիւնս արար, եւ միւս որդին տէր Յովհաննէսն՝ որ շինեաց զսուրբ ուխտն Գէտամէջ, եւ որդի Գրիգորի Վահրամն, որդի սորա Սարգիսն, որ զբազում արդիւնս արարեալ՝ եւ մի ի բազմացն այս է զգեղեցիկ զանգականին ի Դատի վանս, ի Խաթրի վանս, ի Գետամէջ, ի գեաւղաքաղաքն Ծար, եւ է մինչեւ ցայսօր: Որդի սորա (*Սարգսի*) Հասան եւ այս Հասանէս բաժանին Դոփայ ցեղն որք են այսոքիկ.

Շահանշէն՝ Ուլուբէկանց պապ.
Աղբուղէն՝ Այտինցւոց պապ.
Ջհանշէն՝ Ջհաշեցւոց պապ:

Եւ որդի Հասանայ Աղբուղէն եւ որդի սորա Տուրսունն, եւ որդի սորա Այտինն եւ ի ժամանակի սորա 'ի զաւրանալ Իսմայէլացւոցն եւ ի նուազիլ տանս Հայոց, ցիր եւ ցան լինելն իշխանացն Հայոց, յարեան այլազգիքն եւ զմուլքն մեծ իշխանին Հասանայ պէթալմալ արարին. գնաց պարոն

1 «Այս է հանգիստ Մամքանայ ամուսնոյ Հասանայ դստեր Քրտին եւ Խորիշահի մայր Գրիգորոյ, աղաչեմ. յիշէք 'ի բարի թվ. ՉԽԷ.»: Տե՛ս եւ արձան. Ծարայ:

2 «... Ի հայր... եւ 'ի երանեալն Հաղբատայ եւ Դատէի եւ Խաթրայի աթոռակալն զտէր Յովհաննէս, եղբայր քաջ զաւրականին Հասանայ, եւ արքայաշնորհ իշխանին հաւրն զինուորին Գրիգորոյ, աղաչեմ, յիշէք, 'ի բարին թվ. ՉՁԴ.»: Միեւնոյն ցեղից է:

3 «Զտէր Սարգիս... յիշեցէք ի բարի թվ. ՉՁԲ.»:

4 Հատուածս ընդօրինակեցինք իշխանական շղթայի շարունակութիւնը պարզելու համար:

Այտինն 'ի դիւան եւ երեք ամ աշխատեաց, եւ բազում ինչ տուեալ՝ ազատեաց ի ձեռաց այլազգեացն զվանորայքս եւ զշինարէքն, զոր Տէրն ամենայնի տացէ զվարձս վաստակոց իւրոց»:

Վանքիս հարաւային որմի վերայ.

«Եւ 'ի Նորոգութիւն սուրբ ուխտիս գեաւղս եւ ագարակս իւրեանց սահմանաւքն զԱպահէն, զԵզնարածանց, զԲչանց, զԿանաչաւորն, որ 'ի Վայոց ձոր, Բ. տունս յԱրփա հաստատեցաք կամակցութեամբ եղբարցս զաւագ խորանի պատարագն յանուն վերագրելոցս կատարի անխափան. եթէ ոք այսմ վճռի հաստատնոյ խափանումն առնէ յիշխանաց կամ յառաջնորդաց տեղւոյս կամ ով ոք իցէ խափանեսցի յոյս Նորա՝ որ առ Քրիստոս եւ դատեսցի յԱստուծոյ»:

Զանգակատուն[1].

Ինչպէս տեսաւ ընթերցողս, զանգակատունս շինուած է Դուփեանց Վահրամ իշխանի որդի Սարգիս եպիսկոպոսի ձեռնով այն խիստ հնաձեւ, նեղ եւ երկար վանքի վերայ. որ հիմնարկուած էր յանուն Դատի առաքելոյն եւ յետոյ նորոգուած քանիցս:

«Կամաւ ամենակալին Աստուծոյ եւ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի այս մեր գիր է իշխանական հրամանի: Ես Տուրսունս, Սէյտիս, Պռաւշս, Գրիգորս, Հասանս եւ եղբարքս եւ որդիքս մեր զայս հաստատ Սիկիլս տուաք տէր Աւագ եպիսկոպոսին եւ իւր եղբայր Մանուէլ աբեղային, որ մեր հայրենի աթոռն զԴատի վանս, զԽաթրի վանս, զԳետամէջն, որ մեր գերեզմանատուն է 'ի մեր պապանցն մեզ մնացած, վասն սոցա լաւ միամտութեան համար, զի 'ի վանօրայքս մարդ չ'կար. որ յառաջն կար եւ շէն պահէր եւ եկեղեցիքս լուսաւորէր. յայս պատճառէս երես դրաք եւ զայս սուրբ աթոռնին 'ի Նոքա ապսպարեցաք, եւ զերկու իշխանութիւնն էլ հէնց ի (նոսա) յանձնեցաք. որպէս առաջին մեծ կաթուղիկոսն մեծ տէր Զաքարիային, տէր Աթանասին եւ տէր Սարգսին էր տուեալ զԴատի վանս, զԽաթրի վանս, զՀաղբատ իւր վիճակաւն, նոյնպէս եւ այս տէր Գրիգոր կաթուղիկոսն զայս երեք աթոռս հաստատեաց վիճակաւ եւ շրջաբերական թղթիւ»:

«Կամաւ ամենակալին Աստուծոյ ես Սէյտիս, որդի պարոն Շանշին, թոռն պարոն Հասանայ. ես Գրիգորս, Հասանս, Պէկիս, Ալթունս որդիք պարոն Վահրամայ, թոռունք պարոն Հասանայ, ես՝ Այտինս, որդի պարոն Տուրսունին, թոռն պարոն Աղբուղին. ես՝ Շահանշէս, որդի Հասանայ, թոռն պարոն Ճհանշին. մեք չորս եղբարք տուաք մեր վանորէիցս զԱպահէն, զԽութ, զԽոզենակս իւր չորս սահմանովն ի Չափարին հանդէն Զագունանց ագարակ տեղովն, Բռնչի աղբիւրովն, Թաղանանց գետովն. Պետրոսաբակ, որ մեր պապերն տուեալ են զՍոխանանց, զԾովատեղն, Ջաջոռանց, Չալբէկանց, զՅրտնոտն, զՇիռմանանց, զԳրիգորաթաղս, զԴատի վանս[2] իւր քաւլատակերովն (մացառուտնոլրով) զՀերանանց Հակառակաբերդովն, Նաւի աղբիւրովն, բերդաքարովն, Կռապաշտուցովն, Ողնովն, Խուզենակուց մեծ այգին, Մանանածովն, Ծաղիկանց, Եզնարածանց տուաք Աւագ եպիսկոպոսին, որ մեր ճոճաւոր էր, քանի որ իւր պէտքն է՝ վարէ[3] Աստուծով ազատ է: Իսկ եթէ այլ մարդ վարէ, տասանորդն առնու եւ տայ վանքին անպատճառ: Այս եղեւ մեր ուխտ առաջի Աստուծոյ եւ սուրբ Դատի առաքելոյս: Արդ՝ ով ոք զկնի այս վախմիաթներս այլայլէ կամ խլէ թէ յորդոց եւ թոռանց մերոց եւ յազգայնոց իցէ, առաջի Աստուծոյ պարտական եւ սեւերես լինի. ՅԺԸ. հայրապետաց նզոված է....»:

1 Զանգակատանս մօտ, արեւելեան կողմում կայ երկու մատուռ, որոց մէջ կայ մի-մի քարեայ, սխրագործ եւ հիանալի քանդակուած խաչեր՝ մէկի վերայ. «*Զաւրութեամբ աստուծոյ ես տէր Աթանաս որդի Հասանայ կանգնեցի զսուրբ Նշանս ի յիշատակ հոգւոյ իմոյ.*», իսկ միւսին վերայ. «*զՏէր Գրիգոր սնուցանող Աթանասայ յիշեցէք ի Քրիստոս*»:

2 Խոթայ վանքի գիւղն:

3 Նշանակում է հերկել:

Վասակ նահատակի որդի Գրիգոր Եպիսկոպոսն շինած է մի ուրիշ գաւիթ անտաշ քարերով:

Հասանի որդի Գրիգոր Եպիսկոպոսն[1] շինած է մի եկեղեցի չորս սիւնների վերայ, որ շատ հնի չէ վանքերիցս, որ գտնւում է խղճալի անմաքուր դրութեան մէջ: Վանքիս վանահայրն է այժմ տաթեւացի ոմն քահանայ, որ մեր եկած ժամանակ նա գնացած էր իւր հայրենիք: Ափսո՜ս, որ քայքայւում եւ աւերւում են պատուական վանքերս, խլուեցան, ինչպէս տեսանք զանազան ժամանակներում, զանազան իշխաններից վանքերիս նուիրած ահագին կալուածներն, անտառներն եւ հողերն:

Վիմափոր քարայր.

Դատի կամ Խոթայ վանքից վար Թարթառի ձախ կողմում կայ մի վիմափոր քարայր, որի մուտքն գետնի երեսից է: Լուսահոգի Բաղդասար մետրապոլտի կենդանութեան ժամանակ Բեօլանի մահմեդական ոմն որսորդ կրակում է մի քոշ, որ անյայտանում է թաւալգլոր: Հասնում է ետեւից որսորդն եւ տեսնում, որ քոշն ընկած միջոցին ջարդուած են այրի բերանի փտած փայտերն, այրի մէջ ընկած է որսն, ուր եւ դարսուած են շատ գրքեր: Որսորդն վեր է առնում գրքերից մին, աճապարում Շուշի, յայտնում Բաղդասար մետրապոլտին, որ պարգեւատրում է որսորդը եւ Շուշի փոխադրել տալիս ձեռագրերը: Գրչագիրներումս նկած է մի ձեռագիր ընտիր մաշտոց՝ գրուած սուրբ Մեսրոպի աշակերտ Ստեփաննոս վարդապետի ձեռնով, որ այժմ գտնւում է Ս. Էջմիածնի հնադարանում[2]:

ՎԻՄԱՓՈՐ ԴԻՏԱՐԱՆ

Մի քերծի մէջ, որ կայ Խաթրայ բերդի հիւսիսային հանդէպ Թարթառի ձախ ափի բարձրութեան վերայ, կայ մի բնակարան, որի առաջն պատած եւ լուսամուտ թողուած է: Բայց այս բնակարանն մուտ գործելու համար՝ քերծի դրսից չունի վերելակ սանդուղ. իսկ ներսից անյայտ է բոլորովին մուտքի տեղն: Արտաքուստ ակներեւ երեւում են քարուկիր պատն եւ լուսամուտն, որի ստորոտով՝ գետահովտով, ճանապարհ է: Այս դիտարանն, մեր կարծիքով հաղորդակցական կապ ունեցած է Խաթրայ եւ Հաւբախաղայ բերդերի հետ եւ թշնամու արշաւանքը արգելելու քաղաքական նշանակութիւն: Դիտարանիցս ներքեւ կայ մի քարուկիր մատուռ:

Մշահանի վանք

Հիմնուած է յանուն սուրբ Աստուածածնի մի բլրի վերայ, որ գտնւում է նոյն գետաձորում եւ որի գլուխն մեծ հարթ է: Փոքր է վանքս եւ պատկից ունի մի փոքր եկեղեցի, որ ունի մի գաւիթ, որք ամբողջապէս շինուած են անտաշ քարով: Գաւթի որմի մէջ կայ մի ամենափոքր մատուռ: Բոլոր շինութիւններս քայքայման վիճակի մէջ են:

Եկեղեցու պատի վերայ. «Աստուծով ես Մլեհ տուի զիմ գնած հողն 'ի Չափարին 'ի սուրբ ուխտս. միաբանք տուին Սուրբ Յակովբի երկու ժամն Ա. ինձ. Ա.Փ....»:

Վանքի վերայ. «Ես Մամա խաթուն միաբանեցայ սուրբ ուխտիս, առաջնորդ Յովհաննէս եւ եղբարքս տուին Բ. ժամ»:

1 Այլ Գրիգոր եպիսկոպոս ոմն ԺԶ. դարում ասում է. «*Յանուն Աստուծոյ ես տէր Գրիգորէս տղայութեամբ եկի ի դուռն եկեղեցոյս շատ աշխատանք արարի. իշխանութիւն Շահ Թահմազին էր զվանքս տուին տրճուլ, ես Ղաբուլ չարարի, գնացի Նոր շէնն, շինեցի երեք ջաղաց, երեք բաղնայն եւ եկի 'ի դուռն սուրբ Առաքելոյն, շինեցի զխութ (խոթայ վանք), որ եկեղեցոյս մալն քաշէ. զբաղուբաղճէս եւ զջրաղացներս այլ ամենայն աշխատանս եկեղեցոյս վախմ տուի: Արդ՝ ով որ այս գեղարանքերս եւ զիմ վախմերս հանել ջանայ 'ի սուրբ Առաքելոյս (Դատի վանուցս) ՅԺԸ. հայրապետացն նզոված է... թվին ՌԷ. (1558)*»:

2 Շուշու առաջնորդարանում եղած ձեռագրերի ամենամեծ եւ ընտիր մասը, որը փոյթ խնամքով ժողոված էր Բաղդասար մետրապոլիտն, վաճառած է Շուշու առաջնորդներից ոմն եպիսկոպոս մի Թիֆլիզեցու վերայ մի քանի հազար ռուբլու:

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա. ՀԱՒՔԱԽԱՂԱՑ (ԼԱՉԻՆ ՂԱՅԱ) (29)

Մի անտառապատ, վիմահերձ, խոր ձորերով անջատուած, բարձր սար է, որ սեպաձեւ աբ ձանացած է Թարթառի աջ կողմի բարձրութեան վերայ: Սարիս արեւելահայեաց վիմահերձի մէջ կայ մի ահագին քարայր, որի առաջն պատուած է ժամանակաւ քարուկիր պատով, որով ձեւացած է քարարյրս անառիկ բերդ: Արդէն աւերուած է քարայրս տանող կածանն, հետեւապէս այժմ անկարելի է մուտ գործել ամրոցս: Սարիս գագաթն գեղեցիկ եւ սքանչելի սարահարթ է եւ բնական ամրոց ձեւացած, որ նոյնպէս ունի դժուարատար մուտք, բայց չունի ջուր իւր մէջ: Մի քանի տասնեակ տարիներ առաջ՝ բարեհամբաւ Ասլան-բէկ Աթաբէկեանցն շարժուած հետաքրքրութիւնից՝ չուանով վերեւից կախել է տալիս քարայրս հաթերքեցի Գալուստ անուն սրտոտ տղամարդը: Վերեւ քաշելուց յետոյ վերջինս յայտնում է, թէ քարայրում կան հնուց մնացած շատ հին, ահագին եւ խեցեղէն ու դատարկ կարասներ: Պատերազմի պաշարի համար պահուած են կարասներն:

Բ. ՀԱԿԱՌԱԿԱԲԵՐԴ[1]. Գտնւում է Դատի վանքիս վերեւ մի թրաձեւ եւ անտառապատ սարի վերայ: Բերդս ունի ամուր դիրք, հիանալի տեսարան եւ նշանաւոր ջուր: Մի քարուկիր եւ մեծ ջրամբար է լի կենդանի ջրով, որ ո՛չ աւելանում է եւ ո՛չ պակասում, ո՛չ ընդունում եւ ո՛չ արտահանում: Բոլորովին անջրպետուած է բերդասարս իւր չորս կողմերից խորանդունդ եւ լայնդոգ ձորերով. միայն ունի մի թեկուզի, որ մի սեռի գլխով բարձրանում է դէպի բերդն: Ամրոցիս մէջ տեղ-տեղ երեւում են հին շինութեանց հետքեր:

Գ. ԲԵՐԴԱՔԱՐ[2], որ կայ Հաթերք գիւղին կից՝ իւր արեւմտեան կողմից, որի արեւելեան, հարաւային եւ արեւմտեան կողմերն բարձր քերծեր են. իսկ հիւսիսային կողմն պարսպուած է եղել, բայց այժմ իսպառ անհետացած է պարիսպն եւ հազիւ հազ է նշմարւում ուրեք-ուրեք: Բերդս, որի մակերեւոյթն հերկւում է այժմ, չունի ամրութիւն, բայց ունի մօտակայ տեղից բերուած ջուր եւ ուշադրաւ տեսարան:

Դ. ԱԿԱՆԱՅ ԲԵՐԴ. Հիմնուած է անառիկ ամրոցս Հաթերքի հիւսիս-արեւելեան կողմում, Բալի սարի ստորոտում: Խոր-խոր ձորեր են բերդիս հիւսիս-արեւմտեան եւ հարաւ-արեւելեան կողմերն. պարսպուած են եղել բերդիս մնացեալ՝ վերի եւ վարի կողմերն: Ամրոցիս մակերեւոյթն թեքուած է ձորերի դիրքով արեւելեան հարաւ. բայց սորա մեծութեան ծաւալն, համեմատելով միւս բերդերի հետ, անհամեմատ մեծ է: Բերդիս մակերեւոյթն լի է շինութեանց աւերակներով[3], հանգիստներով, կայ եւ եկեղեցու աւերակ եւ ականակիտ աղբիւրի պատուական ջուր: Այժմ տեղ-տեղ աւերուած են պարսպի պատերիցն: Բալի սարի հիւսիսահայեաց լանջի վերայ կայ մի աւերակ մատուռ:

Բերդիս հիւսիսային կողմում, ձորի միւս ափում կայ երեք տարօրինակ շինուածք, որ հեռի են փոքր-ինչ իրարից եւ ունին իւրեանց վարի եւ վերի կողմերին մօտ կարակնաձեւ կլորակ լուսամուտներ: Թէ ի՞նչ եղած են շինութիւններս, չգիտենք, գի անծանօթ է մեզ շինութեանցս անցեալն:

ԺԵ. ՋՐԱԲԵՐԴ ԳԱՒԱՌ (30)

Առ հասարակ հարուստ է գաւառս խոր-խոր ձորերով, դալարագեղ, անտառապատ, ամենաբարձր, միջակ եւ փոքր լեռներով, վանքերով եւ ամրութիւններով եւ բաւարար հացով եւ արծաթահանքով:

1 Անունս կայ եւ Դատի վանուց արձանագրութեանց մէջ, այժմ կոչում են Զափարի բերդ:
2 Հաթերք-Դղեակ է անուանում այս Գօշ-Մխիթարն (եր. 72-73):
3 Կայ իշխանական բնակարանների աւերակ ապարանքներ, սենեակներ եւ գոմեր:

Ա. ՂԱԶԱՆՁԻ ՇԻՆ, որ կայ Կիչանի արեւելեան հիւսիսային կողմում Խաչեն եւ Ջրաբերդ գաւառների սահմանագլուխ սարի հիւսիսային կողմում: Շինիս հարաւային, արեւմտեան եւ հիւսիսային կողմերն՝ սկսեալ շինի ստորոտներից, բարձրապատ սարեր են, միայն բաց է արեւելեան կողմն. վերջապէս խոր փոսի մէջ ընկած է շէնս: Բնակիչք՝ ընիկ, հողն՝ բէկական, բարելի, տեղական բերքերն՝ ցորեն, գարի, դարնանի, կորեկ, կտաւհատ, սորեկ, որիզ, ընկուզ, տանձ, խնձոր, տաւար, գոմէշ, խոզ, օդն եւ կլիման՝ ճնշիչ ամռան եղանակներում, ջուրն՝ պատուական, երկար կեանք՝ 75-80 տարի, եկեղեցին՝ Սուրբ Գէորգ, քարուկիր, թաղակապ, երկարութիւնն՝ 16 մ 15 սանթիմ, լայնութիւնն՝ 9 մ 30 սանթիմ. քահանան գալիս է Ջանեաթաղից (Ճանկաթաղ):

Դրան ճակատակալ քարի վերայ. «Սուրբ Գէորգ այ (է) եկեղեցիս թվ. ՌՃԻ.»:

Ծուխ 35. ար. 175, իգ. 150: Տաճարիս արեւմտեան որմին մօտ մի տապանաքարի վերայ քանդակուած է մի քաջ ձիաւոր, որ հանած է իւր թուրը եւ բարձրացրած մի այլ ձիաւորի վերայ, որ իջած է իւր ձիուց. բռնած նորա կապը. հանած իւր թուրը, կարծես յանձնում է զայն յաղթողին: Յաղթուածն ֆէս ունի իւր գլխին վերայ եւ կանգնած է խղճալի դիրքով:

Քարիս վերայ. «Այս է տապան Ղապատ որդի Յովան... չբէ եղբարսն զայն ստայօն, թվ. ՌՁ. եկաւ երկրիս, շադ դեղ.. ցայք, վերջին Ղալա մէ տեսար ասգար եկաւ մեզ վերայ: ԷՃ. (700), Թօպկոլայ եկաւ, իմ քարէն չի կարաց օճել (յինքն ունել, գրաւել), յեդոյ մասիհադարն դան սպանեցին»:

Յաղթող ձիաւորի գլխից վերեւ գրուած է.

«Քարս բերաւ որ է Եղբարասաց պարոն»:

Գիւլ-Մալիք[1] եւ Կարմիր Եղցուն խութ տեղերում, որք գտնւում են շինիս արեւմտեան կողմում, կան գիւղատեղեր, հանգստարաններ եւ եկեղեցու աւերակներ:

Բ. ՃԱՆԿԱԹԱՂ կամ ըստ օտարահնչիւն ձայնին Ջանեաթաղ գիւղ. հիմնուած է մի ձորի աջ ու ձախ լանջերի վերայ (նոյն լեռնաշղթայի արեւելեան կողմում), Ղազանչու հիւսիսային կողմում. բնակիչք գաղթած են Պարսկաստանի Ղարադաղ նահանգից[2] Պասգեւչի ժամանակ. հողն՝ արքունի, սակաւ եւ նուազ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն (ունին եւ մասնաւոր այգի), անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 75-85. եկեղեցին՝ Սուրբ Գէորգ, հնաշէն, կառուցեալ երեք կամարների վերայ, երկարութիւն՝ 17 մետր 17 սանթիմ, լայնութիւն՝ 8 մետր 82 սանթիմ: Դրան ճակատակալ քարի վերայ.

«Թ. ՌԾԸ. յիշատակ Ղուկասի որդի Գրիգորի»:

Քահանայ՝ մի: Տաճարիս դրան ամփոփուած են տասնեւմի քահանաներ, որք են նախկին բնակչաց հոգեւոր հովիւներն: Ծուխ 85. ար. 390, իգ. 338:

Մեղրակեր (Ղաբաբթու) կոչուած տեղում կայ հանգստարան, գիւղատեղի եւ եկեղեցու աւերակ:

Գ. ԳԻԻԼԵԱԹԱՂ, որ մի սեռով միայն բաժանուած է Ճանկաթաղից, հիմնուած է վերջին գիւղիս հիւսիսային կողմում մի ձորի ձախ լանջի վերայ, որի երեք կողմերն լեռնապատ են, բաց է միայն արեւելեան կողմն. բնակիչք՝ ընիկ, հողն՝ արքունի, անջրդի, բայց հացաւէտ, տեղական բերքերն՝ նոյն. պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90 տարի, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր կառուցեալ երեք կամարների վերայ, երկարութիւնն՝ 17 մետր 5 սանթիմ, լայնութիւնն՝ 8 մետր 40 սանթիմ. քահանայ՝ մի:

Գիւղիս վերի կողմերումն է ճըռ-մելիք-Ալլահվերտու բնակարանն, որ բաղկացած է հինգ սենեկից, որից կանդուն է երկուսն եւ կիսաւէր՝ երեքն: Շինութեանս երկարութիւնն ձգուած է հիւսիսից հարաւ, որ ունի իւր չորս անկիւններում չորս աշտարակներ:

Դրան հիւսիսային սեմի վերայ.

«Այս է Մելիք Առուշան թվ. ՌՄԽԸ.»:

Ծուխ 74. ար. 327, իգ. 284:

1 Նշանակում է Գայլ-Մելիք:
2 Ամրագիլ եւ Ռիւնի գիւղերից:

Պղնձահանք. Գիւղիցս կէս մղոնաչափ հեռի դէպի արեւմուտք կայ պղնձահանք, որ ան-գործածելի է այժմ:

Յովսէփի եղցի. փոքր-ինչ վերեւ պղնձահանքիցն, ուր կայ այս անուն եկեղեցի ջրաձորի մէջ կողմում, իսկ ձախ ափին՝ գիւղատեղի եւ հանգստարան:

Մեհմանաց գիւղատեղի, ուր կայ աւերակ եկեղեցի, գիւղատեղի եւ հանգստարան:

Արծաթահանք. Գտնւում է Մեհմանաց գիւղատեղիցն կէս մղոնաչափ վերեւ նոյն սահմանագլուխ լեռնաշղթայի հիւսիսային կողմում: Որպէս երեւում է փորուածներից, գործածութեան մէջ եղած է հանքս շատ վաղուց: 1870 թուին գալիս են յոյներ, կապալաւ վեր առնում հանքս, բնակութիւն հաստատում հանքիս մօտ եւ սկսում հալել նիւթը: Որպէս թէ կապարախառն է արծաթն եւ դժուարաւ է ծածկում ծախքը, վասն որոյ անգործածելի է այժմ հանքն...

Դ. ԿՈՒՍԱՊԱՏ ԳԻՒՂ. հիմնուած է Գիւլեաթաղի հիւսիսային կողմում մի բարակ ջրաձորի ձախ լանջին վերայ, բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի[1], անջրդի եւ միջակ արդիւնաբեր եւ միանգամայն սակաւաջուր, բայց այգեւէտ. տեղական բերքերն՝ նոյն (նաեւ ոչխար, ձի, այգի, բամբակ, սումաղ, սեխ, վարունկ, ձմերուկ), պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 100 տարի, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ չորս սիւների վերայ, վնասուած է գագաթնագծից, քահանայ՝ երեք:

Եկեղեցուս դռնատակին մի քարի վերայ.

«Թվ. ՉԺԸ. այս է հանգիստ...»:

Դռնագլխին.

«Թիվն ՈՂ. ես Ապրել որդի Ուղտիկակա գնեցի զխաչս ինձ ու ամուսին իմոյ, աղաւթեցէք[2]»:

Եկեղեցուս թէ՛ ներսում եւ թէ՛ դրսում ամփոփուած են շատ քահանաների մարմիններ:

Ե. ՀՈՌԱԹԱՌ, որ կից է Կուսապատի այգիներին, թէպէտ կազմում է առանձին գիւղ. սակայն ծխաթիւն անբաժան է. այսպէս եւ՝

Զ. ՄԱՐԴԱԿԵՐՏՆ, որ ունի առանձին եկեղեցի եւ մօտ կէս մղոն հեռի է Հոռաթաղից, հիմնուած միեւնոյն Կուսապատի ձորի շարունակութեան վերայ, Ուտի Առանձնակ գաւառի դաշտաբերանի մօտ, բնակիչք՝ անջատուած Կուսապատից[3], հողն՝ արքունի, բազմարդիւն օդն եւ կլիման՝ ջերմագին ամռան, ջուրն՝ ոչ այնքան լաւ, երկար կեանք՝ ո՛չ աւելի 70-ից. եկեղեցին՝ Սուրբ Կարապետ, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի: Երեք գիւղերումն միասին ծուխ 355, ար. 1850, իգ. 1199, քահանայ 4:

Նահատակ անուն ուխտատեղի, որ գտնւում է Հոռաթաղի արեւմտեան հանդէպ մի բլրի գագաթին վերայ, իսկ Կոտրած եղցին՝ սոյն գիւղի արեւելեան հանդէպ սարին վերայ:

Երի-Գիւլեաթաղում (Վերի-Գայլաթաղ), որ գտնւում է միեւնոյն ջրաձորի մէջ Կուսապատից վերեւ, կայ հանգստարան, գիւղատեղի եւ քարուկիր փոքր եկեղեցի:

Ինն-Մաս անապատ Հին-Մոխրաթաղ. հիմնուած է Կուսապատի հիւսիսային կողմում մի սեռի վերայ, որի երկու կողմերն ձորեր են: Կառուցեալ է սրբատաշ քարով մի կամարի վերայ, որ ունի եկեղեցու եւ ո՛չ վանքի ձեւ, երկարութիւն՝ 14 մետր 37 սանթիմ, լայնութիւն՝ 8 մետր 20 սանթիմ: Ունի միայն աւագ խորան. որի միջից հիւսիսային եւ հարաւային կողմերից բացուած է դռնաչափ մուտքեր իբր փոքր խորաններ:

Հիւսիսային որմի վերայ. «Ի 1881 ամի շինեցաւ սուրբ ուխտս ԻՆՆ Մասանց տրօք ժողովրդոց 'ի ժամանակս Յովսէփ վարդապետի Փինաչեանց»:

Խորանի հիւսիսային կողմում.

«Շինեցաւ Սուրբ ԻՆՆ Մասանց սեղանն դստուիս (?) Սհար խանումին վասն հանգուցեալ Յարութիւն բէկ Աթաբէկեանի Կուսապատ գեղջ 1884 ամի»:

1 Նախ եղած է մելիքապատկան. չգիտենք ինչ պատճառաւ յետոյ փոխուած է արքունի:
2 Անկասկած քարերս բերուած են հանգստարանիցն:
3 Արքունի երկդասեան ուսումնարան կայ Կուսապատումն:

Տաճարիս հարաւ-արեւելեան կողմում կայ եւ մի հին եկեղեցու աւերակ: Հարկ է յայտնել, թէ այստեղ եղած է Մոխրաթաղ գիւղն, որի բնակիչք մի քանի տասնեակ տարիներ տեղափոխուած են Նոր-Մոխրաթաղ եւ մնացած է այստեղ հին եկեղեցին, գիւղատեղին եւ հանգստարանն:

Նոր-տաճարիս հիւսիսային որմի մօտով ամփոփուած են Մելիք Իսրայէլեանների ննջեցեալները-Սայիբէկի, Սհար-խանումի, Մելիք-Ադամի կին Թումար-խանումի եւ այլ մելիքազուն դերդաստանների մարմիններն:

Անապատս ունի երեք սեննակ եւ մի աշխարհական վանահայր:

ՄԵԼԻՔ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆՆԵՐԻ Ա. ԱՊԱՐԱՆՆ.

Շինուած է Անապատիս արեւմտեան կողմում մի քանի տասնեակ քայլ հեռի: Շինութիւնն ունի արտաքուստ բերդի ձեւ՝ քարուկիր բարձր պարիսպ եւ մի դարբաս արեւելեան կողմից: Արտաքուստ չափելով՝ ունի 49 մետր երկարութիւն 29 մետր 25 սանթիմ լայնութիւն: Ամբողջ ապարանն բաղկացած է տասներկու սեննկից, որք ունին զանազան ձեւ եւ տարբեր մեծութիւն: Սեննակներն եղած են ընտաննկան սեննակ, ննջարան, ընդունարան, դատարան, թոնրատուն, խոհանոց, սպասաւորանոց, գոմանոց: Այս ամէնի լուսամուտներն բացուած են բերդի ներսի կողմից: Արեւելեան կողմից հաշուելով չորրորդ սեննակն ունի քառակուսի ձեւ եւ երդիկ, ամբողջապէս քարուկիր շինուած եւ սոյն արձանագրութիւնը. «Ողորմութեամբն ամենազօրին Աստուծոյ բազում ժամանակ է յոյժ տաքնապի շինեալ զտունս, իսկ բարերարին Աստուծոյ տուաւ ինձ կարողութիւն եւ զօրութիւն Սուրբ Հոգոյն՝ հանգուցեալ Մելիք Իսրայէլի որդի ես Մելիք Յադամս շինեցի զգեղեցիկ կամարօք եւ գեղեցկանկար տունս եւ սարայիս բազմահանճար զորդեակն իմ Մէժլումին...ծ. Աստուծոյ, աստուածայնով բարեաւ վայելեսցէ հանդերձ մեօք ՌՄԻ.»[1]:

Հինգերորդ սեննկի վերայ.

«Տեսէ՛ք մեր հաւատոյ հայրն Աբրահամ, կեանք նորա է.. ամ, նայ ոչ շինեաց տուն եւ տեղի եւ բակ.. վրանօք շրջէր յերկրին ի Խառան.. այլ սոյն կեանք մեր կարճացեալ թիւ Ծ. (50) ամ, համայն բոլոր երթալոց եմք մեք միւս անգամ, տեսէք 'ի մեր յիմարութիւնս որ այժմուս գայ, չենք.. ազմանման ամօք Աբրահամայ թվ. Ռ....»:

Խաչ-խոռհատ անուն տեղում, որ կայ Հին եւ Նոր-Մոխրաթաղի միջեւ, կայ աւերակ գիւղատեղի, հանգստարան եւ մի քարուկիր եւ միջակ եկեղեցի, որ կանգուն է բոլորովին, որի երկարութիւնն է 12 մետր 23 սանթիմ, լայնութիւնն՝ 7 մետր:

Է. ՆՈՐ-ՄՈԽՐԱԹԱՂ. Հիմնուած է Կուսապատի հիւսիսային կողմում, տեսարանն՝ զմայլելի (դաշտահայեաց) սեռի վերայ, հողն՝ արքունի, անջրդի, բայց բազմարդիւն. տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90-100. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր, կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւնն՝ 17 մետր 95 սանթիմ, լայնութիւնն՝ 11 մետր: Քահանայ՝ մի:

Դրան ճակատակալ քարի վերայ. «Ես Շուշուայ քաղաքի բնակիչ Մեսրոպ Թառումեանս կառուցի ծախիւք իմօք[2] յանուն Աստուածամօր վասն անյիշատակ հանգուցեալ եղբարցն իմոց Աբրահամայ, Գրիգորի եւ որդւոյն իմոց Աստուածատրի Մ. Թառումեանց ի 1883 ամի»:

Ծուխ 85, ար. 394, իգ. 349:

Ը. ՄԵԾ-ՇԷՆ. Շինուած է համարեա թէ Նոր-Մոխրաթաղի արեւմտեան կողմում, մի արեւելահայեաց լանջի վերայ, բնակիչք՝ բնիկ (ամենամեծ մասն տեղափոխուած են Գանձակի Գետաշէնի կողմերն), հողն՝ կիսով չափ արքունի, անջրդի, բայց հացաւէտ, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90, եկեղեցին՝ Սուրբ Գէորգ, քարուկիր, կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւնն՝ 18 մետր 25 սանթիմ, լայնութիւնն՝ 8 մետր 67 սանթիմ:

1 Անձեռնմխելի թողինք սխալները:
2 Հաստատապէս տեղեկացայ, որ գիւղի հասարակութիւնն շինած է եկեղեցու պատերը մինչեւ թաղն:

Աւազանին վերայ. «ԹԻՎ ՌԿԹ.- ԲՆԱՍ.. յիշեցէք 'ի Քրիստոս»:

Խորանի հիւսիսային կողմում. «Սուրբ խաչս բարեխաւս Կարապետ եպիսկոպոսին, սայ է լեալ պատճառ սուրբ եկեղեցոյս (շինութեան) թվ. ՌՂԹ.»: «Սուրբ խաչս բարեխաւս Հայրապետին եղբայր պարոն տէր (իշխանազն քահանայ)»:

Քահանայ՝ երկու: Ծուխ 70, ար. 309, իգ. 268:

Կարմիր աւետարան

Եկեղեցումս կայ մի գրչագիր մեծագիր աւետարան, մագաղաթեայ, ամբողջապէս գրուած գլխատառերով: Բոլորովին անճաշակ են նախշերն եւ չունի պատկերներ: Գրուած է Մատթէոսի սկզբում խաչի տակ. «Սուրբ նշանաւ գնեաց (Յիսուս) մեղաւորիս Իգնատոսի»: Տեղ-տեղ գրուած է նաեւ «ՁԽաւշեն եւ ֆիւր ծնողսն յիշեցէք ի Քրիստոս»: Գրուած է նաեւս Մարկոսի վերջում. «Յամի չորրորդի առաջնորդի (՞) ի հայրապետութեան տեառն Բարսղի[1] Հայոց կաթուղիկոսի, ես Հայրապետ աբեղայս գնեցի զսուրբ աւետարանս ի Յոստան քաղաքի յայլազգեաց 'ի ԻԵ. դեկ. կարմիր եւ ետու ի սուրբ Խաչի վանքն յիւր սեպհական տեղն, որ առնեն յամէն յամի.. Բ. պատարագ, զտեառնընդառաջին եւ զԿիւրղին անխափան եւ որ հեռացուցանել ջանայ 'ի սուրբ Խաչէն զինչ եւ իցէ պատճառաւ, ինքն հեռացեալ լիցի 'ի փառաց Որդոյն Աստուծոյ. ամէն»:

Իսկ ցանկից յետոյ.

«Արդ՝ ես յամենայնի նուաստ տէր Սարգիս ստացայ սուրբ աւետարանս անջինջ յիշատակ ինձ եւ իմ ծնողացն, որք ընթեռնոյք, յիշեցէք 'ի Քրիստոս»:

Յիշատակարանը գողացած է մի սարկաւագ, ինչպէս վկայեցին: Երանի թէ այս միայն լինէր գողացած.... Ասում են, որ 900 ծուխ եղած է Մեծ-շէնս, որպես ապացուցանում է, քանզի այս եղած է մեծ Մելիք Ադամի մելիքանիստն: Երեք եկեղեցի եղած է գիւղումս, մէկն բոլորովին անհետացած է, միւսին աւերակն արդէն մնում է, երրորդն կանգուն է:

Գիւղումս ծնուած է Դալի-Մահրասա Աւագ վարդապետն, որ ազգական էր այժմեան Մկրտիչ քահանայի եւ Անդրէաս-բէկի:

Եղցաթումբք. մի թումբ է գիւղից վերեւ, որի վերայ կայ ընդարձակ գիւղատեղի. մեծ հանգըստարան եւ կանգուն եկեղեցի:

Հարթապտուկ. Մեծ-շէնիս հյուսիսային հանդէպ շրջապատից առանձնացած եւ ձուաձեւ բարձրացած մի սար է, որի գագաթն պատուական հարթակ է: Հարթակի եզերքներով պարըսպուած է եղել հնուց, ինչպէս ակներեւ է հետքերից: Այժմ կայ կատարիս վերայ մի ջրաւազան, հանգստարան եւ ուխտատեղի: Ի նկատի առնելով շատ բերդասարեր՝ թուի թէ բերդ եղած է եւ սարիս գագաթն-Հարթապտուկն:

Թ. ՄԱՂԱՎՈՒԶ կամ Զարտախլու. Հիմնուած է Թարթառ գետի աջ կողմի բարձրութեան վերայ. Մեծ-շէնի հիւսիսային կողմում, մի լեռնահովտում. բնակիչք շատ վաղ նախ տեղափոխուած են Մեծ-Սիւնեաց Մաղավուզ գիւղից այստեղ, ապա այս տեղից՝ Շուլաւէրի կողմերն, ապա վերադարձած Գետաշէն, հուսկ յետոյ վերստին՝ այստեղ: Հողն՝ արքունի, անջրդի, բայց բեղմնաւոր, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն,երկար կեանք՝ 90, եկեղեցին՝ Սուրբ Գէորգ. փայտաշէն, քահանայ՝ մի: Ծուխ 66, ար. 254, իգ. 299:

Գիւղիս բարեկրօն Յովհաննէս քահանայի մօտ կայ մի գրչագիր մաշտոց. գրուած թղթի վերայ, դիրքն փոքր. յիշատակարանից. «Արդ գրեցաւ գիրքս այս ի թուականութեան հայկազեան տումարիս ՌԻԴ.»:

Ստացողն է Գրիգոր անուն ոմն կրօնաւոր, իսկ գրողն է ոմն Յովհաննէս Աբեղայ: Վերջին ստացողն է. «Արդ զվերջին ստացաւղ սուրբ տառիս, որ կոչի մաշտոց.. Ովանէս էրեց... ՌՃԺԱ.»:

1 Նայելով գլխագրերի ձեւերին՝ կարծում ենք, որ Բարսեղ Ա. հայրապետի օրով եղած է գնելն եւ ոչ թէ Բարսեղ Բ.-ի, որ գահակալած է 1557-1562: [Բարսեղ Ա. Անեցին գահակալել է 1105-1113 թթ., -ծ.հ.]

«Յիշատակ է բարեմիտ Յուրին, որ կողակից էի Ավազակին ի երկրէն Ծարայ ի գեղջէն Եանշաղէն. յիշատակ է այս սուրբ.. մաշտոցս հոգոյ իմոյ, տվի իմ ձեռովս Դաւիթ քահանային, օվ որ կարդայ, Աստուած ողորմի ասէ. ամէն»: «Ես Մըրչմանցի տէր Մելիքսեթի որդի Մարկոսըս... թվն ՌՃՀԸ. էր»: (Այժմ աւերակ են Եանշաղ եւ Մրջման գիւղերն, ինչպէս գիտէ եւ ընթերցողն):

Աւետարան՝ փոքրադիր, գրուած թղթի վերայ, առանց պատկերի: Անյայտ է գրողն, տեղն եւ ժամանակն, միայն յայտնի է երկրորդ ստացողն, որ է Շաղուպատ անուն ոմն:

Նոյն բարեկրօն քահանայ Տէր-Գրիգորեանի մօտ կայ եւ Ա. Մելիք-Ադամից մի թուղթ, որով յայտնում է. «Մելիք Հաթամէս մալում լինի ձեզ Մաղավուզեցուց, մեծ եւ փոքր որ իմանաք Մէլքումն ձեզ քօվխայ (տանուտէր) շինեցի. պիտի որ յեսապի (իրաւացի) խօսկան դուս չի կեաք: Դարձեալ ջամիյեաթ, թէ եդ[1] Նորայ եկիք թէ Մէլքումը մեզ հաջաթ (հարկաւոր կամ պէտք) չի, դապուլ չի, դուք էք հաւանել, շինել թուին ՌՄԻԸ. փետրվարի ամսուն ԺԷ.»

Տեղի կնքոյ որի մէջ գրուած է. «Քրիստոսի ծառայ Մելիք Ադամ»:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ

Այսպէս է անուանում ժողովուրդն այն հանգստարանը, որ կայ Մաղավուզի արեւմտեան կողմում, Թարթառ գետի աջ լանջի բարձրութեան վերայ, երից մանկաց վանքի դէմուդէմ: Ընդարձակ ծաւալ ունի հանգստարանս, բայց ծածկուած է դժնիկ փուշերով եւ մացառուտներով: Հանգստարանումս կայ մի հնաշէն մատուռ, որ ուխտատեղի է եւ փոքր եւ շինուած անտաշ քարերով, որի գլուխն արդէն խոնարհուած է. դրան ճակատակալ քարի վերայ քանդակուած է.

«Թիվ ՉԹ. էր Կամաւն Աստուծոյ ես Խուռում (Հռիփսիմէ) շինեցի զեկեղեցիս, եղբայր իմ Վահրամ Շահ ի յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց 'ի յիշխանութեան Ուքանին եւ յամիրութեան Փախրայդինին եւ 'ի յառաջնորդութեան Տէր Սուքիասին. յաղաւթս..»:

Մատրանս մէջ մի խաչքարի վերայ. «ԹԻՎ ՈՂԹ.»:

Սորա մօտ. «Ես Գր..րս սնուցած տէր Նարսի[2] կանգնեցի զ(խ) աչերս ծնողաց իմոց եւ ննջեցելոց»:

Հանգստարանիս տապանաքարերի մէջ գտանք միայն հետեւեալը.

Ա. «Այս տապան Քաչալ... է որդի Ապրէսին մեծի... պապին եխպօրորդի իմոյ պարոն Անին թվ. Ռ.»:

Բ. «Թիվ. Ռ... որ փոխեցաւ առ Աստուած. Այս է տապան Շահփարին... Նոյեմզարին...»:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ կամ ՔՈՐՔԱՏԵՂ (31)

Սեւկեւլասեռ կոչուած սարի ստորոտով ընկած է մի խոր ձոր գրեթէ արեւելքից արեւմուտք: Մատրան կամ հանգստարանին ստորոտիցն սկսեալ դէպի նոյն խոր ձորն կախուած են չորս ձորակներ, որոց վերայ վաղուց շինուած է քաղաքի նման մի շինութիւն: Բերդավայրն ունի միայն երկու մուտք, արեւմտեանն՝ խոր ձորին ստորոտովն, որ համարեա թէ հպած է Թարթառ գետի աջ եզերքին, իսկ արեւելեան կողմի մուտքն՝նոյն ձորի վերի ծայրովն: Երկու մուտքերն ամրապընդուած է եղել քարուկիր պատով, որք քանդուած են այժմ: Իսկ մնացեալ կողմերն բնութենաստեղծ եւ անմատչելի ամրութիւններ են, այս է՝ բարձր վիմահերձ եւ քարաժայռ քերծեր են եւ ահարկու ձորեր: Վաղուց շինուած են երկու երկյարկ քարուկիր եւ բոլորշի դիտարան, որոց մին՝ քաղաքի հարաւային կողմի բարձրութեան վերայ բերդից դուրս, իսկ միւսն՝ արեւմտեան կողմում քաղաքի ծայրում, բայց ամրոցի ներսումն: Թափուած են միայն վերջնոյս որմի արտաքին մասերն տեղ-տեղ:

Այժմ աւերակ եւ անմարդաբնակ քաղաքատեղումս մնացած են տակաւին հնութեան շատ նշաններ, ինչպէս են քարուկիր բնակարանների եւ այլ շինութեանց աւերակներ: Հիւսիսային դիտարանի մօտ կայ մի մեծ շինութիւն, որ իւր արտաքին կողմում ունի երեք բուրգ, մէջտեղում

1 Իմաստն է, (եդ Նորայ) եթէ այնուհետեւ եկիք իմ մօտ եւ ասացիք թէ Մէլքումն պէտք չէ մեզ ենն:

2 Գուցէ «*Ես Գրիգոր սնուցած տէր Ներսիսի*»:

տասն մետրաչափ բարձր քարուկիր սիւն եւ երկու մեծ սենեակներից բաղկացած շինութիւն: Այս է ամէնից աւելի հնութիւնն, որ կարծես թէ իւր ամրագին կազմուածքովն ներկայացնում է տեղիս հին իշխողի բնակարանը, որ ունի եւ բնութեան հրաշալի տեսարան:

Բնակարանիս հարաւային կողմերում կան կիսաւեր քարուկիր շատ բնակարաններ, բաղանիսներ, ձիթահանք, որի բոլորաձեւ մեծ քարերն մնում են անվնաս եւ կանգուն, կամուրջներ, երեք կաղամախի ծերունազարդ եւ հաստ ծառեր, պառաւ ընկուզենիք եւն: Նշանաւոր է Շըռշըռան աղբիւրի աղնիւ ջուրն, որ քաղաքի կենտրոնում շուշռալով թափւում է ժայռից:

Բ. Ապարան. Մելիք-Ադամ մեծի. երկրորդ ապարանս շինուած է արեւելեան մուտքի կողմում, որի երկարութիւնն հիւսիս-արեւմուտքից ձգուած է արեւելեան հարաւ: Շինութեանս գետնայարկն ծառայած է միայն տեղի զառիվայր դիրքը հարթելու. վերնայարկում կայ տասնեւհինգ սենեակ, ընդարձակ դահլիճ, խոհանոց[1], երկու պատշգամ: Գեղեցկաձեւ տաշուած եւ նախշած ճակատակալ քարեր ունին վառարաններն (բուխարի): Ամբողջ շէնքն ունի 37 մետր երկարութիւն, 34 մետր 40 սանթիմ լայնութիւն, որի ծածքն ողջ փլուած է, իսկ պատերն բովանդակ մնում են կանգուն: Հարկ է յայտնել, թէ ապարանիս կողքին է եկեղեցու աւերակն: Բացի տասնեւհինգ սենեկից, որք շինուած են մի միջնապատով, բայց երկու շարքով, կայ այլ եւս չորս պատուական, բայց կիսաւեր սենեակ եւ մի երկար գոմ, որի մէջ կայ տասնեւվեց ձիու ախոռ, եւ որի երկար ախոռափայտն մնում է դեռ անփուտ: Շատ սենեակներում արդէն բուսած են ծառեր:

Հարկ է յայտնել նաեւ, որ Մելիք-Ադամն[2] նորոգած է ապարանս, որ եղած է կանխաւ, ինչպէս երեւում է հին եւ նոր որմերի տարբերութիւնից:

Ապարանիցս փոքր-ինչ վերեւ, արեւելեան մուտքի մօտ կան վիմափոր քարայրներ, որք եղած են դռնապանների բնակարաններ:

Քաղաքատեղիս հարաւային կողմումն է Հին-Մեծ-շէնի աւերակն, որի մէջ է մի աւերակ եկեղեցի եւ մօտերքում հանդստարան: Մելիք-Ադամ Բ-ի ժամանակ աւերակիս բնակիչներն տեղափոխւում են Գանձակի եւ Թիֆլիսի կողմերն: Յետոյ տեղափոխուածների փոքր մասն վերադառնում է, բայց փոխանակ այստեղ բնակելու, հիմնում Մեծ-Շէնը եւ բնակում այնտեղ. քանզի երկիւղալի է լինում այստեղ բնակելն:

Ժ. ՔՄՔԱՁՈՐ ՇԷՆ. Հիմնուած է Մաղավուզի արեւելեան սարի ստորոտի հարթում: Բնակիչներն, մօտ քսան տարի առաջ բաժանուելով Մաղավուզից բնակութիւն հաստատած են այստեղ. միւնոյն են հողն, բերքերն, միայն աւելի լաւ է տեղիս օդն եւ կլիման. քահանան եւ եկեղեցին Մաղավուզինն է, եւ ծուխն հաշուած նորա վերայ:

ԺԱ. ՕՌԱԾ[3] ԹԱՓԻ ՇԷՆ. Հիմնուած է փոքր-ինչ վար Քմքաձորից, բնակիչք անջատուած են Մաղաւուզից. ամենայն ինչ՝ նոյն. Ծուխ՝ Քմքաձորում, Օռած-Թափում եւ Վարնկաթաղում 30, ար. 114, իգ. 103:

ԺԲ. ՎԱՐՆԿԱԹԱՂ կամ ԼԻԻԼԱՍԱՁ. Շինուած Թարթառի աջ ափի բարձրութեան վերայ. բնակիչք՝ ընիկ, միեւնոյն հողն եւ բերքերն. օդն եւ կլիման ծանր եւ անախորժ ամռան. երկար կեանք՝ 60. եկեղեցին՝ Սուրբ Մինաս. քահանայ՝ մի: Ծուխ 20, ար. 70, իգ. 60:

Ջոխտակ շինատեղ. աւերակ գիւղեր են, որք գտնւում են Մաղավուզի հիւսիսային կողմում, Թարթառ գետի աջ կողմի լանջի վերայ, ուր կայ եւ հանդստարան:

Կթղուկոսարան (32) (Կաթուղիկոսարան), որ գտնւում է Թարթառ գետի աջ կողմի նոյն լանջի վերայ, Դոնի շէնի դիմացն: Քարայրի նման մի բան է, որի առաջն պատելով ձեւացրած են բնակարան, որի մէջ մի ժամանակ մնացած է Աղուանից Վիրոյ եւ այլ կաթուղիկոսներ: Այժմ ուխտատեղի է հին աւերակս:

1 Գետնայարկով դուրս հանուած է արտաքնոցի եւ խոհանոցի մնացեալ ոտքը:

2 Աւանդաբար ասում են, թէ եղած է Մելիք Իսրայէլեանների ձմեռանոց ապարանն, իսկ Ինն-Մաս անապատի մօտինն՝ ամառանոց:

3 Արցախեան բարբառի գլխաւոր յատկութիւններից մին եւս այն է, որ ինչ պարագայում ու տառերով սկսուած անունների առաջի Ու գիրը հնչում է իբր Օ. օրինակ ուռած-օռած, ուղտ-օղտ, ուրախ-օրախ, եւն: Ուռած բլուր-Օռած թափէ:

ՊԱՌԱՒԻ ԿԱՄՈՒՐՋ (Ղառը քեօրփի)

Արդէն գիտենք Թարթառ գետի վերայ շինուած կամուրջներից առաջինն էր Պարտաւի մօտ եղած բաղմաչեայ կամուրջն: Բ-ն է Պառաւի կամուրջս, որ ունի միայն մի աչք եւ որ շինուած է Վարնկաթաղի առաջ: Կամրջիս երկու կողմերի հիմքերն եւս հաստատուած են վիմահերձ ապառամների վերայ: Շինել տուողն եղած է հայ բարեպաշտուհի ոմն տիկին: Գ. կամուրջն (փայտեայ) Դոնի շինի մօտ է: Դ. կամուրջն (փայտեայ) Ջրաբերդի մօտով է: Թարթառիս Ե. կամուրջն է Սարսանքի (քարուկիր) կամուրջն: Զ-ն շինել տուած էր տիկին Ասփան Խաթրայ վանքից վար Թարթառիս վերայ:

ԺԳ. ՆԵՐՔԻՆ-ՁԱՅԼՈՒ. Հիմնուած է Թարթառ գետի ձախ ափի վերայ դաշտաբերանի մօտ. բնակիչք 1828-ին գաղթած են Պարսկաստանի Բագրեւով գիւղից. հող՝ արքունի, բարեբեր. ջրարբի, տեղական բերքերն՝ ցորեն, գարի, կորեկ, խաղող, դեղձ, թութ, կեռաս, բամբակ, բոժոժ եւ որիզ, օդն եւ կլիման՝ տենդաբեր ամռան, երկար կեանք՝ 70. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն. քահանան գալիս է Վերին-Ջայլուից: Ծուխ 45, ար. 142, իգ. 115:

ԺԴ. ՎԵՐԻՆ-ՁԱՅԼՈՒ. Հիմնուած նոյն գետի ձախ ափում փոքր-ինչ վերեւ Ներքին-Ջայլուից, բնակիչք՝ գաղթած 1828-ին Ուրմիոյ Բոհաւա գիւղից, հող, տեղ. բերքեր, օդ եւ կլիմայ երկար կեանք՝ նոյն են. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի: (Գիւղիս մօտ կայ ընտիր գահ): Ծուխ 55, ար. 255, իգ. 234:

ԺԵ. ԹԱԼԻՇ ԳԻՒՂ. Հիմնուած է Վերին-Ջայլուի հիւսիսային կողմում լեռների մէջ մի սարալանջի վերայ. բնակիչք՝ ընիկ, հող՝ ըէկական (մելիքական), անջրդի (մասամբ ջրարբի) հացաւէտ. ջուրն՝ սակաւ, տեղական բերքերն՝ միայն ցորեն եւ գարի, բարեխառն՝ օդն եւ կլիման, քաղցրահամ՝ ջուրն. երկար կեանք՝ 85-90. եկեղեցին՝ նորաշէն, կառուցեալ հասարակութեան ծախքով չորս միապաղաղ սիւների վերայ, որ ունի 21 մետր 85 սանթիմ երկարութիւն, 13 մետր լայնութիւն. երկու դուռն հարաւային եւ հիւսիսային կողմից. քահանայ՝ մի: Ծուխ 130, ար. 568, իգ. 455:

Մաղաղաթեայ մեծագիր աւետարան[1] գրուած ամբողջապէս գլխագրերով. գողացած են յիշատակարանը, վասն որոյ գրում ենք յետոյ գրուածները. «Յանուն Աստուծոյ մեք Ներքի տանուտէրքս... յիշէ Զաւելի դի Մոսին[2]. ես Դաւիթ իմ վանական եղբարքս (եղբարքս) վկայ եմ այս գրոյս 'ի թուականութեանս ՇԺԶ. հաստատուն, եթէ Աստուած կամի»:

Ապա գրուած է վերջին երեսի վերայ. «զՄաթէոս զՅակոբ երիցու քեռին, որ յարդեանց իւրոց ծախք արար յեկեղեցիս եւ յեղբարքս, որք զգիրս կարդայք, զնա յաղաթս յիշեցէք եւ մեղաց թողութիւն խնդրեցէք... հաւր Պետրոսի հրամանաւ գրեցի»:

Յետոյ գրուած է. «Զաստուածափառ եւ զաշխարհալոյս սուրբ աւետարանս որ ձեռաւք Հասանայ Ուզին որդոյ բերաւ ի Կեսարիոյ եւ նոյն Հասնայն եւ ամուսին Ելթի եւ պարծանաց. որդիք իւր Հասըմբեր եւ Սասնայ ետուն զսա յիւրեանց տապանատունս որ էին տեղւոյս իշխանք զտուն Շիրանշահանց Դաւթի ձեռաւք 'ի վանս Եղիշէի եւ հաստատի սմա բանիւն Աստուծոյ եւ յանուն Հասնային եւ Ելթոյն յետ մահու պատարագ ի Քրիստոս յամէն եկեղեցիս 'ի զատկին յարութեան աւրն, որ յարոյց ընդ իւր բազում մեռեալք եւ յարուստցէ Քրիստոս փառաւք զՀասնայն եւ զԵլթի հանդերձ իւր ծնելաւք միւս անգամ գալստեանն: Արդ, որք խափանեն զպատարագն եւ կամ հանէ զաւետարանս եւ զՇիրանշահեանց տունն ի Տապանատնէս[1], հանեսցի նա յարքայութենէն Աստուծոյ: Առանց աշխարհաւերի թիւն Հայոց էր ՉԺԵ.: ՉԻԱ. շինեցաւ ժամատունս (Եղիշէի)»:

Նորոգութեան մասին. «Ի թուաբերութեան Հայկական տումարի հազարերորդի հարիւերորդի ինսուներորդի մէկումն (ՌՃՂԱ.) թուին գրեցաւ ամսեանն դեկտեմբերի Գ. հանուրց դիտապետի տեառն Ներսիսի Աղուանից Կաթուղիկոսին եւ իշխանութեանս երկրիս Մելիք Թամրազին»:

1 Մեզ անյայտ պատճառաւ գտնւում է մի աշխարհականի տան:

2 Ոճ լատինական, որ նշանակում է Զաւելի Մովսէսեան:

Ապա գրուած է. «Ես Մելիքս եւ եղբայր իմ Նուկզար որդիք Մուրատայ ստացաք զսուրբ աւետարանս 'ի հալալ արդեանց մերոց ի յիշատակ մեզ եւ մեր նախնեաց հաւր Մուրատայ եւ մաւր Մարգարտին եւ որդոց մերոց Եղիշէին եւ այլ ամենայն արեան մերձաւորաց եւ ետուք զսայ ի ձեռն Ստեփաննոս արհեպիսկոպոսին առաջնորդ սուրբ ուխտին Գանձասարայ, որ կենայ ի դրան սուրբ Յովհաննիսին յիշատակ մեզ եւ մերոց ամենայնի կենդանեաց եւ մեռելոց»:

Հուսկ յետոյ գրուած է. «Ով մանկունք Սիովնի... ի թուականիս Հայոց ՌՂԹ. Գանձասարայ կաթուղիկոսն Գանջայո խանն տութսազ էր արել (բանտարկեալ էր), մինչեւ հատոյց զպարտսն դահճացն, ազատեցաւ, ելեալ գնաց թէ շրջեսցէ վասն պարտուցն. մինչեւ Խաչեն գնացի ես ընդ նմա... Գանձասարայ կաթուղիկոսն անուն Գրիգոր կոչի»:

Գիւղումս Ասրի-բէկ Մելիք-Թամրազեանցի մօտ կան հետեւեալ հին թղթերն. «ՌՃԾ. թուին սեպտեմբերի ԻԹ. ես Թիւրաչեցի Ատին տղայ Հախնազարս. Հաճի Փահրատս» ծախում են սոքա իւրեանց բաղը Մելիք-Իսախանի[2] տղայ Յոհաննին եւ սորա եղբօր Բէկլարին: Առուծախի թուղթս նախ վաւերացրած է Յովհաննէս, ապա Եսայի կաթուղիկոսն.

«Եսայի կաթուղիկոս այս գրեալ մարդկանց իղրարովն, զապուլութիւնովն վկայեմ». կնքած է եւ իւր կնքով:

Երկրորդ. «ՌՃԿԵ. յունվարի ԺԸ. Ն. ես Ներքին շէնացի (Կիւլստանի գաւառումն է) Ետկարին տղայ Ուհանս իմ կամով ծախեցի իմ բաժին բաղն Գրիգոր վարդապետին ախբօր Սարգսին վերայ ԺԸ. Ռ[3] : Մելիք Թամրազ վկայ.. Եղիա վկայ... Յարութիւն քոխա վկա.»:

Իւրաքանչիւր ստորագրող կնքած է իւր կնիքը:

Երրորդ թուղթն մխիթարական կոնդակ է գրուած Աղուանից վերջին Ներսէս կաթուղիկոսից առ Մելիք-Թամրազ, որ սգաւոր եղած է իւր որդու մահուան պատճառաւ, բայց չ'ունի թուական:

Ռախտարխանա

Այս անուամբ ճանաչւում է միայն աւերակն, որ կայ Խանակեահ գաշտակի վերի բերանումն Թալիշ գիւղն տանող ճանապարհի աջ եզերքի վերայ: Հին շինութիւնս, որ ունի դղեկի ձեւ, ասում են, եղած է մաքսատուն Կիւլստանի մելիքներին. որք մաքս առած են դաւառս բերուած ապրանքներից: Ռուսաց տիրապետութիւնից յետոյ մի ժամանակ եղած է փոստի կայարան շինութիւնս, որ այժմ բոլորովին աւերակ է:

ՀՈՌԵԿԱՅ ԿԱՄ ՀԻՒՐԵԿԱՅ ՎԱՆՔ (33)

Հիմնարկուած է Թալիշ գիւղի արեւմտեան կողմում լեռների մէջ մի հիւսիսահայեաց լանջի վերայ: Վանուցս շինութիւնն ունի շատ հին ձեւ, քանզի խորանն, ըստ սովորութեան, կլոր չէ ներքուստ, այլ քառակուսի, եւ շինուած է անտաշ քարով: Բաց յայսցանէ բոլորովին մութն է, նեղ, փոքր եւ բարձրաշէն, որ ունի 7 մետր 60 սանթիմ երկարութիւն եւ 4 մետր 32 սանթիմ լայնութիւն:

Դրան վերայ. «Ի քահանայապետութեան Ստեփաննոսի զշինող եկեղեցւոյս զտէր Յովհաննէս յիշեցէք 'ի Քրիստոս Նաեւ զծնողս եւ զեղբարսն իւր թիւ ՉԻԸ.»:

Վանքս ունի եւ դաւիթ, որ նոյնպէս շինուած է անտաշ քարով, որի երկարութիւնն է 7 մետր 75 սանթիմ, լայնութիւնն՝ 7 մետր:

Գաւթիս վերայ. «Յաշխարհակալ տէրութեան Ապաղա խանին եւ 'ի հայրապետութեան տէր Ստեփաննոսին եւ ի պարոնութեան Նորադինին եւ Սրադինին եւ Գուրզադինին ես տէր Յովհաննէս շինեցի զգաւիթս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց ՉԼԳ.»:

Գաւթումս ամփոփուած են շատ եպիսկոպոսաց, վարդապետաց եւ սարկաւագաց մարմիններ, այնպէս որ ամբողջ յատակն սալարկուած է տապանաքարերով:

Վանուցս արեւմտեան կողմում դեռ կանգուն են միաբանից սենեակներ, որ շինուած են բոլորովին քարուկիր եւ թաղակապ: Բայց այժմ վանքումս չկայ ո՛չ վանահայր, ո՛չ միաբան եւ ո՛չ իսկ պահապան, վասն որոյ հետզհետէ քայքայւում է ամենայն ինչ:

Գեղեցկաքանդակ տապանաքարերով եւ խաչարձաններով զարդարուած են վանուցս շըրջապատն: Այստեղ ամփոփուած են ո՛չ միայն միաբանից, այլ եւ Մելիք-Բէկլարեանց տոհմի եւ նոյն իսկ Թալիշ գիւղի ննջեցեալներն. այժմ եւս թաղում են Թալիշեցիք: Հետեւապէս խիստ ընդարձակ է հանդուստարանս, որի մէջ փայլուն տեղ գրաւած են Մելիք-Բէկլարեանց բարեհամբաւ տոհմի շիրիմներն իւրեանց գեղեցիկ արձաններով եւ երկար արձանագրութիւններով, եւ նախշած տապանաքարերով:

ՄԵԼԻՔ-ԲԷԿԼԱՐԵԱՆՆԵՐԻ ԱՊԱՐԱՆՆ

Վանքասարիս լանջի ստորոտում կառուցեալ է Կիւլստանի իշխող մելիքների ապարանն, որ արտաքուստ չափելով ունի 42 մետր երկարութիւն, 36½ լայնութիւն: Ըստ երկարութեան ներսի կողմում արեւելքից արեւմուտք երկու շար սենեակներ շինուած են, որոց մէջն բաց է իբրեւ հրապարակ: Հարաւային շարքում կայ վեց սենեակ, որք ունին ութաչեայ կամարակապ սրահ: Միջի երկու սենեակներն ընդարձակ են եւ գմբէթաւոր: Հիւսիսային կողմն բաղկացած է երեք մեծ սենեակներից, որոց թաղակապ կամարներն թափուած են: Ապարանս ունեցած է երկու դուռն՝ արեւելեան եւ արեւմտեան կողմերից. առաջինն արդէն քանդուած է իւր կողմի ամբողջ պատով եւ երկու բուրգով միասին. իսկ արեւմտեան դուռն իւր սմբերով քանդած եւ տարած են Թալիշեցիք եկեղեցուն համար: Ցաւալի է տեսնել, որ Թալիշի հայերն չգիտեն սրբութեամբ պահպանել իւրեանց նախնեաց թանկագին հնութիւնները:

Քառաբուրգ բերդակ.

Ապարանիս հիւսիսային կողմում, մի քանի քայլ հեռի ձորակի ձախ լանջին վերայ շինուած է քարուկիր մի դղեակ՝ չորս ամրաշէն բուրգերով, որք արձանացած են չորս անկիւններում: Կանգուն են հարաւային, հիւսիսային եւ արեւմտեան պարիսպներն իւրեանց երկու բուրգերով. իսկ կործանուած է արեւելեան կողմի պատն իւր երկու աշտարակներով: Դղեկիս մէջտեղումն կայ մի նուիրական ուխտատեղի, բայց յայտնի չէ իւր անունն: Հիւսիսային պարսպի ներսի կողմում կան մի քանի թաղակապ սենեակներ:

Դիւտական գիւղատեղի (34).

Այժմ եւս Դիւտական է կոչւում աւերակ գիւղատեղիս, որ կայ Թալիշ եւ Մատաղիս գիւղերի գրեթէ միջեւ: Աւերակիս մօտ կայ մի կիսաւեր եկեղեցի, որ ունի 13 մետր երկարութիւն եւ 7 մետր լայնութիւն. եւ որ շինուած է բաւական ճաշակով: Եկեղեցուս արեւմտեան եւ հիւսիսային կողմերն լի են գերեզմաններով. սակայն ամենամեծ մասամբ ծածկուած անտառի ծառերով: Հիանալի՜ աղբիւր, ուշագրա՜ւ դիրք. դուրալի՜ տեսարան ունի աւերակս:

Հարկ է յայտնել բարեմիտ ընթերցողաց, թէ Թալիշ գիւղն, Հոռնկայ վանքն, Ներքին եւ Վերին-Զայլուններն եւ Դիւտական աւերակս կանխաւ պատկանում է եղել Ջրաբերդի գաւառիս՝ ըստ որոշման սարերի բնական սահմանին: Ահա այս է պատճառն, որ Ջրաբերդ գաւառի շարքում գրեցինք շէն եւ աւերակ տեղերս: Բայց մելիքութիւնն ծնունդ առնելուց յետոյ՝ այս մասը յատկացրած են Կիւլստանի մելիքութեան:

ԺԶ. ՄԱՏԱՂԻՍ[1] ՇԷՆ. Հիմնարկուած է Թարթառ գետի ձախ ափի վերայ Պառաւի կամրջից փոքր-ինչ վերեւ. խոր ձոր է գիւղիս տեղն եւ բարձր լեռներ շրջապատած են գրեթէ չորս կողմերն. իսկ Թարթառն վշվշալով եւ մռմռալով հոսում է շինիս ստորին կողմով: Բնակիչք՝ բնիկ.

1 Եղիշ-առաքելի վանքից (Զրեշտիկ).
2 Երեսի թէ Մելիք-Բէկլարեանների ցեղիցն է Մելիք-Իսախանն:
3 Հազարն արժէ մի ռուբլի, ուրեմն տասնեւութ ռուբլի ամէնն:

հողն՝ արքունի, սակաւ եւ նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ նոյն. եկեղեցին՝ նորաշէն, կիսատ եւ դեռ անկնունք, 15 մետր 50 ս. երկարութիւն 8 մետր 50 սանթիմ լայնութիւն. քահանան գալիս է Վարնկաթաղից: Ծուխ 35, ար. 90, իգ. 75:

ԺԷ. ԴՈՆԻ-ՇԷՆ (Դանիէլի շէն). Հիմնուած է նոյն գետի ձախ կողմում Մատաղիսից բաւական վերեւ. բնակիչք տեղափոխուած են Մաղավուզից. հողն՝ արքունի, լեռնային. գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն, եկեղեցին՝ խիստ հին, փոքրիկ, Սուրբ Դէորգ. քահանայ մի: Հարկ է յայտնել, որ գիւղս, եկեղեցիս եւ հանդստարանս հին են, իսկ այժմեան բնակիչք շատ յետոյ եկած են: Եկեղեցիս շինուած է անտաշ քարով, որի երկարութիւնն է 6 մետր, լայնութիւնն 4 մետր 40 սանթ.:

Դռնագլխի վերայ. «Ծառայ Աստուծոյ ես Մէլքիսեթս Նորոգեցի ժամատունս յիշատակ»:

Վաղեմի դերեզմաններով լի են եկեղեցուս չորս կողմերն: Ծուխ 35, ար. 134, իգ. 113:

Հին գիւղատեղի. այսպէս է կոչւում այն աւերակ գիւղատեղին, որ կայ Դոնի շինից վերեւ եւ որ ունի պատուական եւ առատ ջուր, ընկուզի զառամեալ ծառեր, եւ որ պատուած է անտառով:

Զոխտակ մատուռ. Զոյգ շինուած քարուկիր մատուռներ են, որք կան Ուղտը-կերանք կոչուած տեղում, նմանապէս գիւղից վերեւ: Այստեղ եւս կան գիւղի աւերակ. քարուկիր շինութեանց հետքեր եւ կաղամախի ծառեր:

ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ

Վանքս շինուած է Մռաւ սարից դէպի արեւելք խոնարհուած մի լեռնաբազկի հարաւահայեաց լանջի հարթակին վերայ, որի ստորոտով սրընթաց խոխոջում է Թրղին[2] գետակն, որ է օժանդակ Թարթառի: Կառուցեալ է չորս սիւնների վերայ փոքր դիրքով, անճաշակ ոճով, բայց հպարտ արձանագրութեամբ:

Դրան ճակատակալ քարի վերայ. «Ի թվին ՌՃԽ. ին ի ժամանակս Շահ Սուլէյմանին մեծի արքային Պարսից ես Սիմէոն շնորհիւն Աստուծոյ կաթուղիկոս[3] Աղուանից շինեցի զեկեղեցիս ընդ հարազատ եղբաւր իմոյ Իգնատիոս վարդապետին, որ եմք որդիք Սարգիս քահանային Մեծ Շինացւոյ, յաղաւթս յիշեցէք որդիք Սիաւնի...»:

Խորանի ճակատին. «Կերտեցաւ այս յարկ Նուիրանաց տանն Աստուծոյ եւ տաճար փառաց Նորոյ ուխտի պատարագաց, զոր Տէր Յիսուս մեզ աւանդեաց, շինեցաւ յերկուց հարազատաց Սիմէոնի կաթուղիկոսի եւ Իգնատիոսի բաբունոյ եւ այլ յոգունց աշխատողաց գրելոց 'ի դպրութեան կենաց, ի թուականիս ՌՃԺԳ. ին աւարտեցաւ սոյն եկեղեցի 'ի փառս անճառ Տեառն Յիսուսի...»:

Վանքս ունի երկու քարուկիր եւ թաղակալ խուցեր. մին՝ մեծ, եւ միւսն՝ փոքր:

ԺԸ. ԴԱՍՏԱԿԻԻԼ (Դաստակերտ) (35) Աւերակ գիւղատեղի, հանդստարան եւ կիսաւեր եկեղեցի, որք գտնւում են Դոնի շէնի հիւսիսային կողմում մի բարձր, տեսարանաւոր, անտառապատ, բայց ուշադրաւ սարահարթի վերայ: Բաւական փառաւոր շինուած է եղել քարուկիր եկեղեցիս, որի գլուխն այժմ խոնարհուած է, բայց տակաւին մնում են կանգուն աւագ եւ երկու փոքր խորանների թաղերն: Թէեւ աւերակ, սակայն վսե՛մ տպաւորութիւն է թողում այցելուաց վերայ եկեղեցիս, որի երկարութիւնն է 13 մետր, լայնութիւնն՝ 10:

Աջակողմեան փոքր խորանի ճակատին. «Թվ. ՉԻԵ. 'ի փաթշահութեան Ապաղէին, յամի տէրութեան Իւանէի, 'ի հայրապետութեան տէր Ստեփաննոսի ես, տէր Սուքիասեանց ցեղէն տէր Ներսէս հիմնադրի, տկար ոգով շինեցի զեկեղեցիս յիշատակ մեզ եւ մերոց, յիշեցէ՛ք 'ի Քրիստոս, աղաչեմ»:

1 Բնաւ շփոթելու չէ այս Մատաղիսը Խաչեն գաւառի Մատաղիս աւերակ գիւղի հետ:

2 Թրղին կամ Թորաղա գետակս առած է իւր սկիզբը Մռաւի ամենաբարձր գագաթի Դոմէշ (Կեամուշ-Սարի, որի բարձ. 12269) հարաւահայեաց լանջերից:

3 Այս է ըստ Գաղտնիքի Ա. ճրո եւ ինքնակոչ կաթուղիկոսն, որ շինած է տաճարս ոչ ի փառս Աստուծոյ, այլ ի յաղուրդ իւր անարգ փառասիրութեան, ի դաւաճանութիւն Աղուանից հարազատ կաթուղիկոսութեան, հակաթոռ Գանձասարի...:

Աջակողմեան խորհրդարանում. «Ես Մուսէս (կանգնեցի) զխաչս Խաթունա եւ Մամխաչունայ»:

Եկեղեցուս դրան ճակատակալ քարի վերայ.

«Կամաւն Աստուծոյ, ի դատաւորութեան Արղուսին, ի հայրապետութեան տէր Ստեփաննոսի, ի տէրութեան Իւանէին եւ Սադրադինին որդոյ Փախրադինին, ես տէր Սարգիս շինեցի զժամատունս, զուգեցի զգաւազանս, զաւետարանս զըստ ողոգին...»: (Անընթեռնելի): Այժմ չկայ ժամատունն, այլ աւերակ է: Եկեղեցուս չորս կողմերն լի են խիտաւխիտ ամփոփեալներով:

Այժմ մի փոքրիկ շէն կայ այստեղ, որի բնակիչք տեղափոխուած են Շուշուց՝ երեք գերդաստան, Մեծ-Միւնեաց մի գիւղից՝ երեք գերդաստան, Զէյուայից՝ չորս գերդաստան, որք զբաղւում են անասնապահութեամբ, գերազանց է օդն, կլիման եւ ջուրն, քահանան գալիս է Դոնի շէնից: Ծուխ 10, ար. 50, իգ. 40:

Միայնակ խաչարձան. Դաստակերտիցս Եղիշ առաքեալի վանքն տանող ուղու աջ կողմում, ոչ այնքան հեռի ուղուց, անտառում կայ մի հին խաչարձան, բայց անարձանագիր:

ԵՂԻԾ-ԱՌԱՔԵԱԼ ԿԱՄ ՋՐՎՇՏԻԿ ՎԱՆՔ (36)

Մռաւ սարի քղանցքներից մի լեռնաբազուկ յանկարծ խոնարհուած է բարձրից երկու ձորերի մէջ, ուր եւ կազմած է իւր ծայրից մի բլրակ, որի վերայ հիմնարկուած է վանքս: Սրբավայրս շրջապատուած է աղխաղխալ եւ բարձրագոյն լեռներով եւ անդնդախոր ձորերով եւ սոսկալի կիրճերով, վասն որոյ նեղ է եւ սեղմուած իւր հորիզոնն: Վանքաբլրիս հիւսիսային ծայրում բարձրացած եւ ցցուած է լեռնաբազուկն, արեւմտեան եւ հարաւային կողմերում Դաստակերտի սարի շարունակութիւնն եւ արեւելեան կողմում՝ երկու սարերիս գրկախառնուած գիրքն: Մի վտակ արեւմտեան կողմից շուշռալով վիժում է շատ բարձրից[1], պատում վանքիս հարաւային ստորոտի խորագոյն ձորով, դառնում դէպի արեւելք եւ սրընթաց վազում դէպի Թարթառ: Վանքաբլրի հարաւային կողմն սոսկալի վիմահերձ է, իսկ միւս երեք կողմերն՝ պարըսպուած քարուկիր պատով, որ ունի երեք դուռն՝ արեւմտեան, հիւսիսային եւ արեւելեան կողմերից:

Բլրիս գագաթում հիմնարկուած է վանքն՝ անտաշ քարերով, որի շինութիւնն շատ հին է, ճարտարապետութիւնն՝ հասարակ, բարձրութիւնն՝ չափազանց, եւ ոճն՝ անճաշակ: Այսու ամենայնիւ ազդում է այցելուաց պատկառանք եւ սրբութիւն: Ունի երկու դուռն՝ հարաւային եւ արեւմտեան կողմերից. 10 մետր երկարութիւն, 5 մետր 80 սանթիմ լայնութիւն: Որմերի վերայ տեղ-տեղ գործ գրուած է եւ ազիւս, որի երկարութիւնն եւ լայնութիւնն 30 սանթիմ է եւ հաստութիւնն՝ 11 ս.: Այժմ խոնարհուած է վանքիս ամբողջ ձեղունն եւ խորանի արեւելեան պատն:

Մենաստանս ունի եւ գաւիթ՝ շինուած միւնոյն ճաշակով եւ ոճով՝ չորս սիւնների վերայ, նոյնպէս անտաշ քարով, գաւիթս ունի մի դուռն՝ արեւմտեան կողմից, 9 մետր 5 սանթիմ երկարութիւն, 8 մետր 45 սանթիմ լայնութիւն, եւ սոյն արձանագրութիւնը.

«Թվ. ՉԺԳ. կամաւն Աստուծոյ ես Խաչատուր շինեցի ժամատունս յառաջնորդութիւն տէր Սիմէօնի, աղաչեմ զձեզ, յիշեցէք 'ի Քրիստոս»:

Ինչպէս տաճարիս շուրջն, նմանապէս գաւթիս յատակն ծածկուած է հանգուցեալ եպիսկոպոսաց, վարդապետաց եւ միաբանից տապանաքարերով:

Ահա շատերից մի քանիսի արձանագրութիւններն.

«Այս է հանգիստ տէր Սիմէոնի ՉԽԷ.»:

«,, ,, տէր Ովանէսի 'ի թվ. ՊՁ.»:

«,, ,, տէր Վարդանի Շ. Քս. ՋԽ.»:

«,, ,, Մատէոս եպիսկոպոսին թվ. ՋՁ.»:

«,, ,, Մելքիսէթ եպիսկոպոսին, որ է առաջնորդ սուրբ ուխտիս, որ անմեղ սպանեցին Օսմանցիք ՌՃ.»:

1 Ջրվշտիկ անունը հաւանական է, որ վանքս ստացած լինի ջրիս այս զմայլելի ջրվէժից: Վանքս կոչուած է եւ Ներս-Միհրի վանք:

Մենաստանիս երկու կողմերում կան մատուռներ:

Հիւսիսային կողմում (սկսեալ այս կողմից դէպի հարաւ):

Ա. մատուռն ունի երկու խորան եւ երկու սեղան, որ շինուած է անտաշ քարով:

Բ. մատուռն, որ նոյնպէս շինուած է անտաշ քարով, ունի միայն մի խորան եւ մի սեղան:

Գ. մատրան մէջ, որ շինուած է միաւնոյն ձեւով, կայ Աղուանից Գ. Վաչական Թագաւորի գերեզմանն, որի վերայ ձգուած է մի եռանկիւնի տապանաքար, որ պատրաստուած է առանձին խնամքով եւ յղկուած մաքուր տեսքով, որի երկարութիւնն է 1 մետր եւ 60 սանթիմ. բայց չունի արձանագրութիւն: Տապանաքարիս մօտ կայ մի քարեայ խաչարձան, որ նշանաւոր է ոչ միայն իւր խիստ հնաւոր հնութեամբ, այլ եւ իւր վաղեմի քանդակագործութեան գեղարուեստի ճարտարապետութեան ձեւով, այսպէս է եւ խորանի աջ կողմում եղածն: Մատրանս, որ ունի մի խորան, դրան ճակատակալ քարին վերայ քանդակուած է.

«Այս է հանգիստ Վաչական թագաւորին (37). Աստուած ողորմի Հայրապետայ եւ որ (իւր) ծնողացն, որ շինեց զեկեղեցիս առաջնորդութիւն տէր Սիմիոնի թիւ ՉԼԵ. էր»: Մատրանս դրան դիմացն է Ջրաբերդ գաւառի իշխող բարձրահռչակ Մելիք Ադամ Մեծի գերեզմանն: Ցաւալի է տեսնել, որ անկիրթ մահմեդականներն ջարդած են արձանագրութիւն կրող մարմարիոնը, որ զետեղուած է եղել մելիքիս տապանաքարի մէջ: Այսու ամենայնիւ գաւառիս մեծ եւ փոքր ամենքն աւանդութեամբ գիտեն իւրեանց սիրելի իշխան մելիքիս գերեզմանը:

Դ. մատուռն, որ կանգնած է վանքին հարաւային կողմում, երկխորան է եւ ունի հնաւոր հնութիւն, որի մէջ է մի գերեզման, որի վերայ փորագրուած է. «Այս է հանգիստ տէր Մեսրոպին որդի (որդւոյն) որ է աւագ եղբայր Մելքիսէթ եպիսկոպոսին թվ. ՌՃԿԲ.»:

Ե. մատուռն, որ Դ-ից հարաւ կայ, ունի մի խորան:

Զ. մատուռս աւելի հնաշէն է, որ ունի մի սեղան եւ գրութիւնս. «Յանուն Աստուծոյ ես Առաքել վարդապետ, տէր Մատթէոս շինեցինք զեկեղեցիս, հաջ բերինք...»:

Է. մատուռն ունի միայն մի սեղան:

Վանքումս կայ մի հնուց մնացած եւ կոտրած զանդակ, որի վերայ փորագրուած է. «Յիշատակ է զանգակս Ղազարին, որ է որդի Քիրիգորին, է թոռն Եաւրին. Յուսէփի որդի Պապէն, որ է Պողոս թուլգէր (հիւսն). ես Շահնա կարմրեցի (ձուլեցի). գինն է Գ. թուման»:

Բացի զանդակիցս կայ եւ մի այլ՝ կոպիտ եւ երկարաձեւ զանդակ, որ աւելի հին է:

Վանքս ցարդ սրբութեամբ պահած է Գաղտնիք Ղարաբաղի հերոսներից երկու քաջերի յիշատակը, որք են Դալի-Մահրասան եւ Տեօնմազ: Վանքիս արեւելեան պարսպի մօտ է աւագ վարդապետ Դալի-Մահրասայի բնակած սենեակն, որ ունի նեղ եւ փոքր լուսամուտներ եւ ամուր դիրք: Սենեկիս մէջ տիրում է խորհրդաւոր մթութիւն[1]:

Վանքիս հիւսիսային պարսպի փակուած դրան մօտ ներքուստ փորագրուած է գլխագրերով. «ՐՇՅՃ ես Տոնմազս բեկեցի թվ. ՌՃՀԷ.»:

Գրերիս մօտ շինուած է մի փակագիր՝ մեծ ձեւով, որը կարդացի միաւնոյն Տոնմազ անունը:

Մենաստանս ունի եւ մի քանի հին սենեակներ եւ գոմ պարսպի ներսում: Վանքիս դրութիւնն խիստ խղճալի է: Անդիմադրելի ժամանակն քանդում եւ աւերում է ամենայն ինչ: Վիճի տակ ընկած են վանքիս սեփական եւ անբռնաբարելի իրաւունք կալուածներն եւ բոլոր հողերն, սպառուել են արդեանց աղբիւրներն, վանքս կարօտ է նորոգութեան, բայց չկայ փող, զի խցուած են արդիւնք հոսող ակունքներն: Այժմ վանքումս մնում է իբրեւ պահապան մի տիրացու, որ շինած է վանքի ճանապարհը եւ նորոգած Զ. մատուռը:

Ողտի մատուռ. Այսպէս է կոչւում կիսաւեր մատուռն, որ կայ վանքի մօտակայ սարի ուսին վերայ: Այստեղ կայ եւ գիւղատեղի եւ հանգստարան:

Մատուռ. Այս անուամբ է ճանաչւում այն կիսաւեր, փոքրիկ եւ հին շինութիւնն, որ գտնւում է Եղիշ-առաքեալ վանքի եւ Եղակեր շինի միջեւ՝ մի տեսարանաւոր բլրի վերայ:

1 Ժամանակի հանգամանքներից ստիպեալ ամրոցի ձեւ ստացած է Դալի-Մահրասայի սենեակս. լուսամուտներն ոչ եթէ իսկապէս լուսամուտներ են, այլ հրացան արձակելու տեղեր՝ նեղ ծակեր:

Մատրան դռնագլուխ քարի վերայ. «..Ես Գրիգոր կանգնեցի եկեղեցիս բարեխաւս ինձ եւ ծնողաց իմոց»: Եկեղեցուս մօտ կայ եւ հանգստարան, քարերն ծածկուած են մացառուտներով եւ չունին արձանագրութիւն: Այսպիսի կիսաւեր եկեղեցի, հանգստարան եւ գիւղատեղի կայ նաեւ Թթոտ կոչուած տեղում, որ գտնւում է աւերակիս հարաւային հանդէպ վարի լայնագոգ լեռնահովտի մէջ:

ԺԹ. ԵՂԱԿԵՐ ՇԻՆ. Հիմնուած է այն սարի հարաւային լանջի խոր ձորում, որ իբրեւ սահմանագլուխ՝ ձգուած է Մռաւից մինչեւ Դաշտաբերան: Բնակիչք քսան տարի առաջ փոխադրուած են Մեծ-Միւնեաց Տեղ աւանից այստեղ: Հողն՝ արքունի, լեռնոտ եւ յարմար անասնապահութեան, տեղական բերքերն՝ նոյն, (առատ է ոչխար, տաւար, չկայ այգի, պարտէզ եւ մետաքս), գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին քարուկիր, կառուցեալ մի կամարի վերայ եւ հին, երկարութիւնն՝ 12 մետր 5 սանթիմ, լայնութիւնն 7 մետր 50 սանթիմ. քահանան գալիս է Կիւլստանից:

Տաճարիս մօտ կայ հնուց մնացեալ մեծ հանգստարան, որի մէջ գիր ունեցող գտանք միայն. «Այս է տապան Մխիթարի որդի Մեժլում քոխային թվ. ՌՃՂԹ.»:

Ինչպէս երեւում է հին աւերակներից, աւելի շատ եղած է Եղակերիս նախկին բնակչաց ծխաթիւն: Այժմ ծուխ 35, արբ. 100, իգ. 85:

Մռաւի սուրբ

Արցախեան նահանգի ամենաբարձր լեռներից մին է Մռաւ սարն, որ ընկած է Ծար, Ըռըստակ, Ջրաբերդ, Կիւլստան եւ Գարդման գաւառների մէջ: Արդէն գիտենք, որ սարիս հարաւային կողմն ընկած են Ծար եւ Ըռստակ գաւառն, արեւելեան կողմն՝ Ջրաբերդ, իսկ հիւսիսային կողմն ընկած են Կիւլստան եւ Գարդման գաւառներն: Մռաւիս այս ամենաբարձր գագաթն, որ սահմանագլուխ է Ջրաբերդ եւ Կիւլստան գաւառների, բաղմած է սարիս վերայ իբրեւ քարաժայռ եւ ցից բլուր: Երկու դժուարատար, երկիւղալի եւ վտանգաւոր կածան կայ քարաբլրիս կատարն բարձրանալու համար, մին արեւելքից՝ որ է Կիւլստանի մուտքն, եւ միւսն արեւմտեան կողմից՝ որ է Ջրաբերդի մուտքն: Բարաբլրիս գագաթի մակերեւոյթն մի մեծ կլաչափ հարթակ է, որի եզերքներովն շարուած են ահագին վէմ քարեր[1] ինչպէս պարիսպ, որպէս զի մարդ չընկնի գագաթից, նոյնպէս եւ տեղ-տեղ՝ մուտքերի երկու կողմերում: Ահա գագաթիս վերայ կայ մի սպիտակ, փոքր խաչքար, որի տակ աւանդաբար ասում են, թէ կայ նահատակի գերեզման, որ է ուխտատեղի: Արեւելեան մուտքի մօտ կայ մի թոնրաչափ սառցատուն, որի միջից անպակաս է ամռան եղանակներում ջուր եւ սառն: Սրբավայր գագաթիս բարձ. է 11219 ոտք:

Քանի՜ սքանչելի է տեղիս տեսարանն, քանի՜ ուշադրաւ է բնութեան գեղեցկութիւնն, մանաւանդ, երբ բոլորովին պարզ է երկինքն: Հարաւային կողմերում երեւում են ի բացուստ Արցախեան բարձր լեռնաշղթան, որոց վերայ արձանացած են Ծար, Խաչեն, Վարանդայ եւ Դիզակ գաւառների բարձր գագաթներն. Պարսկաստանի Սաւալան սարն եւ Երասխն: Արեւելեան կողմերում երեւում են ամբողջ Արցախի եւ Աղուանից դաշտերն, Կասպից ծովի հարաւային մասն, հիւսիսային կողմում Կովկասեան լեռնաշղթան, Շահ-դաղն իւր ընկերներով եւ Կազբէկն՝ իւր, արեւմտեան կողմում՝ Կայենի լեռներն: Բայց մօտուստ պատկերացած են բոլոր դաշտային եւ լեռնային գաւառներն, տեղ-տեղ բազմաճղի աղխաղխեալ լեռնագօտիներ, միայնակ կամ ճիւղաւորուած լեռնաբազուկներ, սարաւանդներ, օձաձեւ գալարուած, նաւաձեւ, նաւակաձեւ ձգձգուած ձորեր եւ ձորակներ, վիմահերձ լեռնաճակատներ, խոտաղէզերի նման լեռնագլուխներ, բլուրներ եւ բլրակներ եւ միանդամայն լերկ, դալարագեղ, անտառապատ եւ մացառուտ սարալանջեր, սեւեր եւ սրածայր բլուրներ:

1 Զարմանում է մարդ, թէ ինչպէ՜ս բարձրացած են այս լեռնային մեծ-մեծ քարերը այստեղ:

ՋՐԱԲԵՐԴ ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Երկու են գաւառիս գլխաւոր բերդերն Բաղաքատեղի կամ Մայրաքաղաք եւ Ջրաբերդ: Արդէն խօսած ենք ինչպէս առաջնոյն մասին, նոյնպէս եւ Ինն-Մասի բերդանման ապարանի մասին, ուրեմն խօսինք վերջնոյս՝ Ջրաբերդիս[1] մասին:

Ամրոցս գտնուում է Մայրաքաղաքի ուղղութեամբ Թարթառի խոր ձորումն՝ գետի ձախ ափի վերայ: Համարեա թէ ջրով շրջապատուած է բերդավայրս, որի արեւմտեան ստորոտով սրընթաց խոխոջում է Թրղին կամ Թորաղա գետակն եւ միանում Թարթառին, ապա միացեալ ջրերս պատելով բերդին հարաւից եւ արեւելքից՝ դառնում են դէպի հիւսիս եւ ապա հեռանում վշվշալով: Ահա այսպէս թերակղզի ձեւացած է բերդատեղիս: Սակայն Թրղին եւ Թարթառն բազմադարեան ժամանակամիջոցում քանդած տարած եւ խոր-խոր ձորեր ձեւացրած են իրենց յատակը, այնպէս որ այժմ անմատչելի, ահարկու եւ բարձր վիմահերձ ժայռեր են բերդիս երեք կողմերն, իսկ լեռնակողմն վիմահերձից վիմահերձ պարսպուած է ամուր պատով: Ունի միայն մի մուտք՝ պարսպի պատով: Բաւական տարածութիւն ունի բերդիս մակերեւոյթն, որի վերայ կան բաւական քարուկիր շինութիւններ, կան, որ բոլորովին անվնաս մնացած են: Սակայն բուսած են բերդումս ծառեր, որոց հաստաբուն արմատներն հնազհետ փորձ են փորձում քանդել շինութեանց հիմքերը: Բայց որովհետեւ բերդումս չկայ ջուր, վասն որոյ բերդիս միջից դէպի Թարթառ գետն կտրած են վիմափոր ականներ, որոց միջի սանդղաձեւ աստիճաններով երթեւեկելով՝ ջուր մատակարարած են բերդիս պաշարման ժամանակ: Թարթառն, գործ ղնելով իւր մշտագործ գործիները, վերստին փորած եւ իջեցրած է բաւականին իւր յատակը, այս պատճառաւ ականների արտաքին բերաններն բարձր մնացած են գետի երեսից[2]:

Ինչպէս տեսանք գաւառների սահմանների բաժանմանց շարքում, հնուց մի եւ անբաժան եղած են Ջրաբերդ եւ Կիւլստան գաւառներս: Բայց որովհետեւ մելիքութեան ժամանակ բաժանուած են իրարից գաւառս, որպէս գծուեցաւ սահմանն, վասն որոյ առանձին ենք դասաւորում գաւառիս գիւղերը, ծխաթուերը եւ հնութիւնները: Նշանաւոր են Կիւլստանիս տանձն, խնձորն եւ ցորենն:

Ա. ԿԻՒԼՍՏԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Մռաւ սարի հիւսիսային կողմում՝ Ինջա գետակի ձախ ափի վերայ: Լեռներով շրջապատուած է գիւղս, վասն որոյ գտնուում է այն մի փոսանման ձորի մէջ: Բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, բարեբեր, մեծ մասամբ անջրդի, անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 80-85, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, հոյակապ չորս սիւների վերայ (երկու փոքր խորանների վերայ կան երկու խորաններ եւս), երկարութիւն՝ 22 մետր 80 սանթիմ, լայնութիւն՝ 15 մետր 67 սանթիմ, քահանայ՝ մի: Ծուխ 56, ար. 200, իգ. 175:

Ծեր-Աւետարան. Երկէջ, մեծադիր, թղթեայ, որ կայ եկեղեցումս եւ ունի չորս աւետարանչաց անճաշակ պատկերները: Աւետարանիս գրողն է. «ԶԳրիգոր մեղապարտ գրիչ յիշեա ի Քրիստոս»: Գողացած են յիշատակարանը մի քանի թերթերով միասին, վասն որոյ անյայտ է աւետարանիս գրութեան թուականն եւ գրուած տեղն: Տաճարիս դուրան, արեւմտեան որմի մօտ՝ մի քարի վերայ. «Այս է տապան Օհանէսին, որ է որդի Օսէփ բէկին եւ թոռն Մելիք Ստեփանին[3] ՌՄԶԴ.»:

Գիւղիս հիւսիսային ծայրում կայ մի հնաշէն եկեղեցու աւերակ, որ շինուած է եղել ամբողջ սրբատաշ քարով եւ կոչւում է այժմ սուրբ Մինաս, որի հիւսիսային որմի վերայ. «Կամաւն Աստուծոյ շինեցինք խորանս տանուտէրն Ուլուխան, աշխատողք երկու տէր Դաւիթն, Սպարապետն, պտղն (պտղաբերողքն) առ հասարակ ժողովուրդքն թվ. ՌՃԸ.»:

1 Կոչուած է նաեւ Զարաբերդ, Զրաբերդ, Ջերմուկի բերդ, դալա: Բերդս խիստ հին է. տե՛ս Մով. Կաղ., եր. 124. «հանդիպեցան յամրոցին Զարաբերդոյ»:

2 Բերդիս հանդէպ Թարթառ եւ Թրղի գետախառնուրդի մէջ է Անապատն, որ ունի եւ մի քանի խուցեր:

3 Մելիք-Բէկլարեանների ցեղիցն չէ մելիքս: Որպէս հաստատւում են, մելիքութիւնն սկսուած է իւրով Մելիք-Ստեփանով եւ մեռած իւր հետ: Բայց ինչպէս կարծում եմ, ամփոփեալս լինելու է Մեծ-Սիւնեաց Մելիք-Ստեփանեանների ցեղիցն:

Գիւղումս կայ մի քարուկիր եւ կամարակապ ապարան, որ ունի սոյն արձանագրութիւնը. «Շնորհիւն Աստուծոյ շինեցաւ ապարանս ի թվ. ՌՄԱ. ես Յակոբոս ծառայ Աստուծոյ իշխող գեղոյս որդի Աբրահամ Ըսպարապետին[1]»: Բնակարանիս տէրն, որ այն սոյն սպարապետիս յետագայ ժառանգն է, ունի մի ապահովագիր, որով «Տանուտէրանց Ջանի որդի Յարութիւնն» վաճառում է Ամենափրկիչ վանքի մօտ եղած իւր գետինը Աբրահամ-իւզբաշու որդի Յակովբջան իւզբաշուն 10,000 թումանի: Առուծախի վկայ գրուած են. «Հիւրեկայ առաջնորդ տէր Պետրոս. Ներսէս ճգնազգեաց վարդապետ, Ջաջամարդիկ Մելիք-Յոսէփ, Ջաչալ Հրապետ, Կոսունց Եաւրի. Զովղուն[2] Յարութիւն, Ուստա Բալաս» եւն. հուսկ ուրեմն գրած է գրագիրն. «ՌՄԻԳ. մայիսի Զ. գրեցաւ Գիւլստանին գլխին կալին Քարագլխին»:

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ ԿԻՒԼՍՏԱՆԻ

Վանքս գտնուում է Սունաւորայ (սառնագին) վտակի ձախ ափի մօտ: Ինջա գետակի օժանդակն է Սունաւոր վտակն, որ իւր սկիզբը առած է Մռաւի սրբասարի արեւելեան կողմից: Մենաստանս, որ զիւղիցն մօտ կէս մղոն հեռի է դէպի հարաւ, կառուցեալ է անտաշ քարով, չորս միապաղաղ սիւների վերայ, ունի մի դուռն հարաւային կողմից, մի մեծ, երկու փոքր խորաններ, երկու խորհրդարան եւ երկու նեղ լուսամուտ: Վանքս, որ ունի 23 մետր 50 սանթիմ երկարութիւն, 10 մետր 10 սանթիմ լայնութիւն, տակաւին կանգուն է, միայն ճաքուած է արեւելեան պատն գագաթից մինչեւ գետինն եւ ծածկուած է աւազանի նեւուից, որի մօտ քանդակուած է. «ՌՂ. թվ.»: Զուտնի ուրիշ արձանագրութիւն: Հարաւային կողմում կան ամփոփեալներ:

Մենաստանս իւր արեւմտեան կողմում (խիստ մօտ) ունի երկու թաղակապ սեննակ, մէկի մուտքի սեմին վերայ. «Թիվ ՌՃԿԴ. յիշատակ է այս օթաղս Եղիա վարդապետին»: Միաբանութեան սեննեակներն, որ գտնուում են հիւսիս-արեւելեան կողմում (մի քանի քայլ հեռի), արդէն կիսաւեր են:

Ամենափրկիչ մատուռ, որ մօտ է վանքիս եւ շինուած քարուկիր. աւազանի արեւելեան խաչի վերայ. «Խաչս Հիւրիա ապաշխարողին»: Սորա դրան առաջ. «Այս է հանգիստ Հիւրեղ տատին, աղաչեցէք. թվ. ՌԿԲ.»:

Կարմիր եղցի. գտնուում է գիւղից վերեւ՝ Ինջայի ձախ կողմի լանջի վերայ. աւերակ եկեղեցի, որ շինուած է եղել երկյարկ, այժմ մնում է միայն գետնայարկն, որ ծառայած է լանջը հարթելու: Աւերակիս մօտ կայ գիւղատեղի եւ հանգստարան, որի մէջ՝ մի մամռապատ քարի վերայ. «Այս է տապան Առուսի որդի ՌԱ. (թվին)»:

ԴԱՏԻ-ԲԷԿԱՆՑ ՎԱՆՔ

Կիսաւեր վանքս գտնուում է Կիւլստան գիւղից ներքեւ՝ Ինջա գետի աջ կողմում: Մենաստանիս մօտ կայ միաբանից սեննեակներ եւ հանգստարան:

Զաքին նահատակ. Աւերակ վանքիս հիւսիսային կողմում, Պարանպատ անուն անտառում, Ինջայի ձախ կողմում կայ գիւղատեղի, հանգստարան եւ կիսակործան մի փոքր եկեղեցի Զաքին նահատակ անուն:

Հին-Խրխափոր գիւղ. Հիմնուած է Կիւլստան եւ Նոր-Խրխափոր գիւղերի միջեւ մի հովտում. ուր այժմ երեւում են գիւղի աւերակն, թթենի, ծիրանի, տանձի եւ խնձորի ծառերն եւ պարտէզներն, իսկ ձորի արեւելեան կողմում՝ փոքր եկեղեցին եւ հանգստարանն:

Բ. ՆՈՐ-ԽՐԽԱՓՈՐ. Հիմնուած է Սեւ-գետ (Ղարաչայ) գետակի աջ կողմում, Գեօրգին սարի

1 Երեւի թէ Սպարապետս եղած է Մելիք-Բէկլարեանների զօրապետն, բայց չկայ գրաւոր եւ ոչինչ:

2 Փոխաբերական մականուն, որ նշանակում է՝ բանականները եւ անասունները կոտորող կարկտաբեր կամ բքաբեր ամենասաստիկ քամի. իսկ իմաստն է քաջամարտիկ, այսպիսի մականուններ շատ կայ Դաղտնիք Ղարաբաղի մէջ:

ստորոտում. մի գեղեցիկ դաշտակի հարաւային ծայրում. բնակիչք մի քանի տարի առաջ տեղափոխուած են Հին-Խորխափորից. հողն՝ բէկական, (մելիքապատկան) ջրարբի եւ բազմարդիւն, բացի սովորական բերքերից՝ ընտիր տանձ, խնձոր, մետաքս եւ բամբակ. օդն եւ կլիման՝ փոքր-ինչ տաք ամռան, ջուրն՝ պատուական. եկեղեցին՝ նորաշէն, կիսատ, կառուցեալ չորս սիւնների վերայ, որ ունի երկու դուռն՝ հարաւային եւ արեւմտեան, վեց լուսամուտ, 16 մետր 56 սանթիմ երկարութիւն եւ 11 մետր լայնութիւն: Շինւում է Մելիք-Բէկլարեանց Թալիշ-բէկի ծախքով եւ բնակչաց աշխատութեամբ. քահանայ՝ մի:

Եկեղեցիս ունի մի պատկերազարդ գրչագիր, փոքրագիր աւետարան՝ գրուած թղթի վերայ, գողացած են յիշատակարանը վասն որոյ անյայտ է գրողն, թուականն եւ տեղն. միայն գրուած է Մատթէոսի վերջումն. «Ստացող սուրբ աւետարանիս Շիրվանայ Հինզարցի Մելքումն եւ եղբարք Ապրիսն, Փիրպուտաղն»: Իսկ Մարկոսի վերջում յիշուած են նոյն Մելքումի բոլոր ազգակիցների անուններն յականէ յանուանէ: Տուխ 21, եր. 88, իգ. 88:

Աղբիւր. Որովհետեւ եղած չէ գիւղումս աղբիւր կամ պատուական ջուր, այս պատճառաւ աւագ սարկաւագուհին՝ համեստափայլ Փեփրոնէ կոյս Խուբեանց Մելիք-Բէկլարեանցն, իւր սեփական ծախքով վերի սարից խեցեղէն խողովակներով շէնս բերել տուած է պատուական ջուր, որը եւ երկու բաժին անելով՝ մի մասը հանած է եկեղեցուս մօտ հասարակութեան համար եւ միւս մասը՝ մեծ. Թալիշ-բէկ Մելիք-Բէկլարեանցի բակն: Եկեղեցու մասին աղբիւրի շինութեան վերայ փորագրուած է. «Ես կոյս աւագ սարկաւագուհի Փեփրոնեայ Խուբեանցս Մելիք Բէկլարեանց Խարխափութ (Խրխափոր) գեղջ աղբիւրն կառուցի իմով արդեամբ ի յիշատակ իմ եւ հանգուցեալ ծնողացս եւ քերց եւ եղբարց իմոց 1-ն մարտի 1893 թ.»:

Երկու արձաններ. Կիւլստանից մինչեւ Նոր-Խրխափոր բարեպաշտ ոմն հարթելով՝ պատրաստած է կառքի ճանապարհ: Մի արձան կանգնած է Խաչ-կեադուկի[1] մօտ եւ միւսն՝ Հին եւ Նոր-Խրխափորի միջեւ: Վերջին արձանագրութիւնը. «1890 ամի ի 1-ն մայիսի ճանապարհս շինեց Գրիգոր Մելիք-Բէկլարեան իւր հօր Բէկլար Ֆրիդոնեան Մելիք-Բէկլարեանցի յիշատակին: Այս յիշատակի յարգողը թող ապագայում նորոգի գիրս»:

Աւերակ վանք. Կողեր անուանեալ տեղում կայ մի աւերակ վանք, որից մնացած են միայն արեւմտեան պատն եւ հիմքերն, այստեղ կայ եւ հին հանդուստարան:

Գ. ՂԱՐԱ-ՁԻՆԱՐ կամ Աղջա-Ղալա. հիմնուած է Սեւ գետակի աջ կողմում. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, ամենայն ինչ՝ նոյն, երկար կեանք՝ 65-70. եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, նորաշէն, կառուցեալ չորս սիւնների վերայ. քահանայ՝ մի, կայ արքունի ուսումնարան: Տուխ 120, եր. 405, իգ. 400:

Դ. ՆՈՐԱՇԷՆ ԳԻՒՂ. Հիմնեալ նոյն գետակի աջ կողմում, բնակիչք՝ բնիկ. հողն՝ բէկական, ամենայն ինչ՝ նոյն, եկեղեցին՝ Սուրբ Մինաս, ձեղունն փայտաշէն, քահանայ՝ մի: Տուխ 38, եր. 223, իգ. 200:

Ե. ՂԱՀՏՈՒԹ կամ ՁԷՅՈՒԱ ԳԻՒՂ. հիմնուած նոյն գետակի ձախ կողմում. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, ամենայն ինչ՝ նոյն, չունին եկեղեցի, զի խիստ մօտ է Ղարա-Ձինարին. քահանան գալիս է Նորաշէնից: Տուխ 11, եր. 45, իգ. 42:

Զ. ՆԵՐՔԻՆ-ՇԷՆ. Հիմնուած է նոյն դաշտակի վերի ծայրումն եւ նոյն գետակի ափի վերայ՝ մի սարի ստորոտում. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական[2], կիսով չափ ջրարբի, ամենայն ինչ՝ նոյն, օդն, կլիման եւ ջուրն՝ անվնաս, երկար կեանք՝ 80, եկեղեցին Սուրբ Աստուածածին՝ հոյակապ, կառուցեալ վեց սիւնների վերայ, բայց սագաշէն եւ ցած, խորանի հիւսիսային կամարի վերայ. «Եկեղեցիս անուանեցաւ Սուրբ Աստուածածին թվ. ՌՃԽԶ.»:

Երկարութիւնն՝ 20 մետր, լայնութիւնն՝ 9 մետր 5 սանթիմ, ճաքած է արեւելեան պատն:

1 Խաչ-կեադուկումս, կայ երկու քարեայ հին խաչարձան ճանապարհի աջ ու ձախ եզերքներում, բայց գիր չունին:

2 Թալիշից սկսեալ մինչեւ այստեղ բոլոր հողերն պատկանում է Մելիք-Բէկլարեանց ժառանգներին, իսկ գիւղինն՝ թուրք բէկի:

Եկեղեցուս դրան ճակատակալ քարի վերայ. «Աստուած ողորմի Գօրեցի Գօրգինի որդի Տաւթին, որ պատճառ եղեւ»: «Կամաւն Աստուծոյ սուրբ եկեղեցիս ձեռամբ տէր Եղիայինն յիշատակ իւր եւ ծնողացն հօրն Աթին եւ մօրն Հոռոմին եւ կողակցին եւ որդոցն տէր Դաւթին, Կոստանտին, Եսկարին... տացութեամբ Շիրմազանի որդի Մելքումին...»: Քահանայ՝ երեք:

Եկեղեցումս կայ երկու գրչագիր աւետարան:

Ա. աւետարան փոքրագիր՝ անճաշակ նախշերով, գրուած թղթի վերայ. գողացած են յիշատակարանը, վասն որոյ անյայտ է գրողն, թուականն եւ տեղն: Մարկոսի վերջում միայն յայտնի է նախ՝ որ Յովհաննէս անուն միայնակեաց ստացած է աւետարանս իւր Յովասափ հարազատ եղբօր հետ: Երկրորդ անգամ ստացած են նոյն աւետարանը այլ հարազատ եղբարք Յունան եւ Դաւիթ թիւ. ՌՁԷ.-ին:

Բ. աւետարան. «Գրեցաւ սուրբ աւետարանս ի յերկիրս Որոտան, ի գիւղն՝ որ կոչի Լոր ձեռամբ անիմաստ եւ անարժան Աբրահամ գրչի ՌՃԻԷ. ամի»:

Աւետարանս չունի ոչ պատկեր եւ ոչ յիշատակարան: Տուխ 105, եր. 481, իգ. 372:

Իրեք Մանկունք. Աւերակ վանքս, որի միայն կանգուն են արեւմտեան եւ հիւսիսային պատերն, գտնւում է գիւղիս հարաւային կողմում, նոյն գետակի աջ կողմում՝ շինուած մի սեռի վերայ, որի երկու կողմերն ձորեր են: Ջունի արձանագրութիւն, միայն աւանդութեամբ են ասում Իրեք (երեք) մանկունք: Վանքիցս վար, ձորի մօտ կայ Լիտր անուն հին գիւղատեղի, հանգստարան եւ երեք քարեայ խաչեր:

Անջուր կամուրջ. Ներքի եւ Վերի շէնների միջեւ կայ մի հնաշէն եւ քարուկիր կամուրջ Սեւ գետակի վերայ: Գետակն փոխած է իւր ընթացքը դէպի հիւսիս եւ անջուր մնացած է կամուրջն:

Է. ՎԵՐԻ-ՇԷՆ. Հիմնուած է նոյն հովտի վերայ միեւնոյն գետակի ձախ ափումն. բնակիչք՝ ընիկ, հողն՝ բէկական, լեռնային, անջրդի, հացաբեր. տեղական բերքերն՝ նոյն. գիւղն՝ շրջապատուած լեռներով, անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 80, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին՝ քարուկիր, կառուցեալ երեք կամարների վերայ. երկարութիւնն՝ 19 մետր 50 սանթիմ, լայնութիւնն՝ 10 մետր 80 սանթիմ: Հիւսիսային խորանի գլխին կայ գաղտնի պահարան: Քահանան գալիս է Ներքին-շէնից:

Եկեղեցումս կայ մի գրչագիր, մագաղաթեայ աւետարան, որ ունի միայն չորս աւետարանչաց պատկերներ եւ փոքր դիրք: Գեղեցիկ են փոքր գրերն, բայց անճաշակ եւ անոճ բոլոր գլխագրերն, նախշերն, ծաղիկներն եւ նոյն իսկ պատկերներն. գրողն է Սարգիս անուն ոմն:

Յիշատակարանից. «Ի ժամանակիս յայսմիկ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ի վտանգի կայր ազգն քրիստոնէից ի ազգէն անորինաց եւ էր թուականն Հայոց ՋԽԲ. եւ ողիմբիաթն, որ է նահանջ՝ ՄԼ. եւ դանութիւն Հասան բէկին, որ գնաց յաշխարհն Հոռոմոց եւ ազգի-ազգի չարութիւն հասոյց ի հետ ազգին տաճկաց եւ ի կաթուղիկոսութեան Հայոց տէր Ռաստակէսի Գ-ի եւ հայրապետութեան սուրբ ուխտին Գետամիջոյ տէր Սարգսի եւ փակակալութեան տեղւոյն Յովհաննէս կոյսակրաւն աբեղայի: Բայց արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի գաւառիս Խաչենաձորոյ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսի, սուրբ սքանչելագործ Նշանիս[1] Սուրբ Սարգսի եւ ի տէրութեան տեղւոյս պարոն Վէլիջանին, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ: Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս յաւրինակէ տեառն Եփրեմի Խուրին Ասորոյ համարաւ եւ կիտիւ եւ բանիւ եւ նշանագրով... ի խնդրոյ արքեպիսկոպոսի, որ վառեալ ջահ է եկեղեցւոյ... Պարոն Տէր: Թողութիւն արարէք եղանակիս, որ գրուեցաւ. անձրեւ խիստ եւ տեղիքս գէճ եւ հողս ջրքաշ եւ ես մենակ»:

Շարայարուած է յետոյ. «Կազմեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Քարթմանկեցի (Գարգմանցի) Արիստակէս երիցու որդի Վարդան քահանային ՌՃՂԸ.»: Ապա գրուած է ի միջի այլոց. «Ես Վերին Շէնի տանուտէր Յարութիւնս առի (գնեցի) զայս Քրիստոսի սուրբ աւետարանս ի անորինաց ձեռքէն, իբր թէ գերի անկեալ թափեցի»:

Տուխ 91, եր. 524, իգ. 454:

1 Խաչենաձորիս վանքն է Կոշիկ անապատն, որի մէջ գրուած է աւետարանս:

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գիւղումս բնակում է Բէկլար-բէկ Մելիք-Շահնազարեանց Շահփուրեանցն, որի նախնիքն եւս Մեծ-Մազրա գիւղից փոխադրուած են Արցախ, նախ՝ բնակութիւն հաստատած Աւետարանոց աւանում, ապա՝ Շուշում, ապա՝ Թիֆլիզում եւ հուսկ յետոյ՝ գիւղումս: Մելիք-Շահնազարեանների այս ճիւղի պատմութիւնն անյայտ մնացած է գրականութեան. վասն որոյ զետեղում եմ այստեղ հետեւեալ վաւերաթղթերը իբրեւ նիւթ ապագայ պատմութեան:

Ա. «Վկայական. 1860 ամի մայիսի 3-ին Առուստամ բէկ Բապայբէկեան Մելիք Շահնազարեանց Շահփուրեանց, որոյ նախնիքն եղեալ են բնակիչք Գեղարքունւոյ (այլ ազգ. Գեօղչայու) բնակելով ի Ղարաբաղ ի ժամանակի նախկին տիրապետող կողմանս խանաց[1] շահեալ է ամէնայն արտօնութեամբք եւ իրաւամբ յարգելի եւ մեծապատիւ բէկացն Ղարաբաղու՝ լինելով ի շարս մեծարգոյ Հայոց իշխանաց, ունեցեալ է ընդ տիրապետութեամբ իւրով զստրուկս բնակեալս ի գեղջն Մազրայ Գեօգչայ գաւառի Ջարգբիլ[2] մերձ Նախիջեւանայ, ընծայեալ ծնողաց նորա ի պարսից Շահացն, առ որ յիշեալ Առըստամ բէկն ունի զհրովարտակս ի Շահ Ապասէն յանուն հաւու հօրն իւրոյ Մելիք Եաւրուն Մելիք Շահնազար Շահփուրեանին Գեղարքունւոյ (Գեօղչայու): Ազգն Առուստամբէկին եւ ի ներկայ ժամանակիս նոյն շահի յարգելի բէկական իրաւամբք եւ արտօնութեամբք. Առուստամ բէկն այժմ եւս գտանի ընդ որդւոց իւրոց ի շարս Ղարաբաղու բէկաց եւ ունի հրովարտակս ի Շահ Ապասէն շնորհեալ նախնեաց նորա եւ զվկայականս ի տիրապետող խանացն Ղարաբաղու եւ յարգելի աղալարաց վասն մեծապատիւ բէկական իրաւանց իւրոց եւ վասն ծագման նորա յազգէն Մելիք Շահնազարայ Շափուրեանց Գեղարքունւոյ (Գեօգչայու): Ի ճշմարտութիւն վերագրելոցն տուեալ եղեւ այժմ եւս մեօք այս վկայութիւն որդւոց նորա մեծապատիւ Ասլան բէկին եւ Բէկլար բէկին Մելիք Շահնազար Շահփուրեանց ի հետեւումն պահանջման նոցա»:

Ստորագրուած են.

Մուսայէլ Դօլուխանեանց, Սարգիս-բէկ Մուսայէլբէկեան Մելիք-Շահնազարեանց, Սարգիս Բաղրբէկեան Մելիք-Շահնազարեանց, Օվանէս-բէկ Իսրայէլբէկեան Մելիք-Շահնազարեանց

Բ. «Վկայական. Ըստ հրամանի Նորին Կայսերական մեծութեան ինքնակալին ամենայն Ռուսաց տուաւ այս ի Լուսաւորչական Հայոց կանսիստորիէս Ղարաբաղու համաձայն օրագրական սահմանադրութեան Նորին կայացելոյ յ3-դ աւուր փետրվարի 1861 ամի հիմնեցելոյ ի վերայ խընդրագործութեան բնակչի Շուշուայ գաւառի Ջրաբերդ գաւառակի Վերին Շէն գեղջ Ասլան բէկի Ռուստամբէկեան Մելիք-Շահնազար-Շահֆուրեանց վասն այն, թէ արդէն երեւի՝ ի հաւաքեալ օրինաւոր եղանակաւ հաւաստութեանց՝ ազգապետ սերնդոց նորա է Մելիք Շահնազար Շահֆուրն, յորմէ ծնեալ են Մելիք Եավրին եւ Եաւրի աղայն, ի Մելիք Եավրիէն ծնեալ է Մելիք Աստուածատուր, յորմէ ծնեալ են Միր-Դաւիթ-խան եւ Բապայ բէկն, ի Եավրի աղայէն ծնեալ է Նաղտի բէկն, յորմէ եւ ծնեալ է Միանսար բէկն, ի Բապայ բէկէն ծնեալ են Ռուստամ բէկն եւ Առուշան բէկն, ի Ռուստամ բէկէն ծնեալ են Ասլան-բէկն եւ Բէկլար բէկն, յԱսլան բէկէն ծնեալ են Միրզաջան բէկը եւ Բալայ բէկն եւ ի Բէկլար[3] բէկէն ծնեալ են Բալասան բէկն եւ Սերկէյ բէկն: Ստուգութեան որոյ վկայէ Լուսաւորչական Հայոց վիճակային Կոնսիստորիայն Ղարաբաղու ստորագրութեամբ եւ դրոշմամբ արքունի կնքոյ, ի 19 Ապրիլի 1861 ամի՝ ի ք. Շուշի:

Անդամ Կանսիստորիայի Տէր Իսրայէլով. N 871 Քարտուղար Մելիք Շահնազարեանց»:

Մի հաստ եւ հին թղթի վերայ վիմագրուած է Միր-Դաւիթ-խանի պատկերն՝ պարսից շահից շնորհուած տիտղոսի ժապաւէնով եւ պարսկական աստղանիշ շքանշանով. պատկերի տակ վիմագրուած է. «Միր Դաւիթ խան Ծատուրեան ի տանէ Մելիք Շահնազարեանց Մազրայի. աստ-

1 Մրդ. խաներն:
2 Գտնւում է Սոթի հարաւ-արեւելեան կողմում, որ եւ տարբեր է Ծար գաւառի Ջարից եւ Ջբիլից:
3 Բէկլար-բէկիցս ծնուած են (բացի Բալասան եւ Սերկէյ բէկերից) Ջաւատ-բէկ, Նազար-բէկ եւ Առուստամ-բէկ: Իսկ Ասլան-բէկից ծնուած են Պալի-բէկ եւ Ջիմշիտ-բէկ:

պէտ առաջին աստիճանի կարգացն Արեգական առիւծոյ պարսից Արքային, եւն. երբեմն դեսպան ի կողմանէ նոյն արքայէ առ թագաւոր Փռանցիու 1816 թուին»: Տպուած է նաեւ նոյնի գաղղիերէն թարգմանածն:

Քարահունջ աւերակ կամ Բալլու ղայա կոչուած տեղում, որ գիւղիցս վերեւ է, կայ գիւղատեղի, հանգստարան եւ մի փոքր եկեղեցու աւերակ, որից մնում են տակաւին չորս պատերն եւ խորանի թաղն:

Հին-Պարիս աւերակ գիւղատեղի, հանգստարան եւ եկեղեցի, որ գտնւում են այս սարի գըլխին, որ արձանացած է Ներքին եւ Վերին շէնների եւ Նոր-Պարիս գիւղի մէջ եւ կոչւում է Շամփրապտուկ: Այժմ աւերակ գիւղումս բնակում են մալականներ:

Գիւղիս մօտ կայ մի ուխտատեղի, որը անուանում են Նահատակ:

Ը. ՆՈՐ-ՊԱՐԻՍ գիւղն շատ հեռի չէ մալականներից, բնակիչք տեղափոխուած են Հին-Պարիսից, հողն՝ բէկական, ջրարբի եւ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն, գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն, տակաւին չունին եկեղեցի. քահանայ մի: Ծուխ 38, արբ. 191, իգ. 165:

Թ. ԷՐԲԱՋ ԳԻՒՂ. Հիմնուած է մի խոր եւ հորիզոնն նեղ ձորի մէջ, որի արեւելեան, հարաւային եւ հիւսիսային կողմերն բարձր լեռներ են, բնակիչք՝ բնիկ, որք մելիքների հետ գնացած են բնակելու Բօլնիս եւ յետոյ վերադարձած այս տեղ. հողն՝ բէկական, կիսով չափ ջրարբի, տեղական բերքերն՝ նոյն, օդն, կլիման եւ ջուրն՝ գերազանց, երկար կեանք՝ 115 տարի. եկեղեցին՝ Սուրբ Սարգիս՝ հոյակապ, բարձրաշէն՝ կառուցեալ վեց սիւների վերայ (երկուսն միապաղաղ) երկարութիւնն՝ 21 մետր 70 սանթիմ, լայնութիւնն՝ 14 մետր 60 սանթիմ. դրան ճակատակալ քարի վերայ. «...մէ յիշատակ թվն ՌՃԿԵ.»: Աւազանին կողմին մօտ՝ փոքր խորանի ճակատին մի նրբագործ խաչքարի վերայ. «Թվ. ՉԹ ես Ակոբ կանգնեցի գխաչս Սարգիսա եւ կամ ամէն ծնողաց մերոց, Աստուած ողորմի»: Եկեղեցուս արեւմտեան պատին մօտ՝ արտաքուստ. մի տապանաքարի վերայ. «Թվ. ՌՄԿԶ. որ է Պօլնուսու գալն (վերադարձն) մայիսի Ի (20). Քրիստոսի ծառայ տէր Դանիէլ»: Քահանայ՝ երկու:

Գիւղիս արեւմտեան ստորոտի խոր ձորով հոսում է Փոքր-Կուրակ անուն վտակ, որ է օժանդակ[1] Կուրակ գետակին: Գիւղիս բարեկ. Սարգիս քահանայ Տէր-Սարգսեանցի մօտ կայ.

Ա. Մի օրինակ գրչագիր, փոքրագիր, ընդհանրական՝ գրուած թղթի վերայ, որի մէջ է Յակոբոսի, Յովհաննու եւ Յուդայի առաքելոց թղթերն. (անյայտացած է յիշատակարանն):

Բ. Բացատրութիւն հայոց ամիսների, որպէս են նաւասարդ, հոռի եւն:

Գ. Մարմնախաղութիւն եւ երազահան:

Դ. Բացատրութիւն յատուկ եւ հասարակ անուանց:

Ե. «Թարգմանութիւն ի պարսիկ բառից» եւ ընդօրինակութիւն «ի գրոցն Վարդանայ աշխարհագրի»:

Զ. Խրատ Պլուտարքոսի, անյայտ է գրողների անուններն:

Հարկ է յայտնել, որ «Պաղդասար» անուն ոմն հեղինակից գովասանական ոտանաւորներ են պարունակում ս. Լուսաւորչի, Հռիփսիմեանց եւ Տրդատ թագաւորի մասին Բ. ձեռագրումն: Ծուխ 78, արբ. 384, իգ. 364:

Ժ. ԲՕԶԼՈՒ ՇԷՆ. Հիմնուած է Էրքաջից վերեւ Կուրակի նոյն օժանդակի ձախ ափի բարձրութեան վերայ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական եւ անջրդի, բայց հացատու, տեղական բերքերն՝ նոյն (չունին պարտէզ եւ այգի), եկեղեցին՝ Սուրբ Մինաս, ծածքն՝ փայտաշէն, քահանան գալիս է Նոր-Պարիսից: Ծուխ 15, արբ. 80, իգ. 70:

Սուրբ Մինաս. Ուխտատեղի. գիւղիցս վերեւ նոյն, օժանդակի աջ կողմում, մի հին, քարուկիր փոքր եկեղեցի է Սուրբ Մինաս անուն, որի մօտ կան աւերակ գիւղ եւ հանգստարան:

ԺԱ. ՄԱՆԱՇԻԹ կամ Մանուշ շէն. Հիմնուած է Բօզլուխից ներքեւ նոյն օժանդակի ձախ կողմի բարձրութեան վերայ, բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, անջրդի, սակայն արդիւնաւէտ.

1 Իւր սկիզբը առած է Գոմէշ (նոյն Մռաւ սարի) հիւսիսային կողմից:

տեսարանն՝ գովելի, օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական. երկար կեանք՝ 110. եկեղեցին նորեն սկսում շինել. քահանան՝ նոյն: Ծուխ 35, ար. 218, իդ. 141:

Նահատակ. Գիւղիս արեւելեան կողմում՝ ընկուզի ծառերի տակ. մի մատուռ է՝ Նահատակ անուն, որի մէջ կայ մի գերեզման, բայց տապանաքարի վերայ չկայ արձանագրութիւն:

Թեոդան աւերակ. Գիւղատեղի է, որ գտնւում է Ղարա-Բուլաղ գիւղն տանող ճանապարհի վերայ, մի ձորակի հիւսիսահայեաց լանջի վերայ: Քարուկիր եւ սրբատաշ քարով շինուած է եկեղեցին, որի գլուխն խոնարհուած է:

Հարաւային կողմի փոքր խորանի վերայ. «Ժամանակս Շահ Սեփհն, խանութիւն Մուրթուզա Ղուլի խանին Թահուլդ, կաթուղիկոս Գանձասարայ տէր Գրիգորին թվ. Ռ.»:

Այլ քարի վերայ. «Կամաւն Աստուծոյ ես տէր Եղիշէս շինեցի սուրբ եկեղեցիս յիշատակ հոգւոյ իմոյ, կողակցին, Եկաղին, որդիքն Ատի բէկին, Նկեղ»:

Թեոդանի մատուռ. Աւերակեցս փոքր-ինչ վերեւ կայ մի քարուկիր հին մատուռ, որ ունի 5 մետր 18 սանթիմ երկարութիւն եւ 4 մետր 5 սանթիմ լայնութիւն, սակայն չունի արձանագրութիւն: Արտաքուստ դրան հիւսիսային կողմում՝ պատին յենած է քարեայ մի հին խաչ, որի երկարութիւնն է 2 մետր 35 սանթիմ, եւ լայնութիւնն՝ 1 մետր 5 սանթիմ. եւ որի ստորոտում քանդակուած է. «Ի թուին ՉԾԷ. (1308) ես Գրիգոր ու Պապաք կանգնեցաք զխաչս ի բարեխաւսութիւն ծնողաց մերոց ԷՂ որ...»: Մատուռս նորոգած են մանաւշէցիք. «Սուրբ եկեղեցիս Մանուշեցի շինողք են Ղեւոնդ, Աւետիս, Սահակ, Գրիգոր, Դանիէլ, Սարգիս Ալիքսանեանց 1890 ամի»: Ուխտատեղի է մատուռս, որի շրջապատն մեծ հանդստարան է, սակայն անարձանագիր են քարերն:

ԺԲ. ՀԻՆ-ՂԱՐԱ-ԲՈՒԼԱՂ ԳԻՒՂ. Հիմնուած է մի հիւսիսահայեաց լանջի վերայ, որի ստորոտով հոսում է Կուրակ գետակի աջ կողմի երկրորդ օժանդակն եւ փոքր-ինչ յետոյ միանում նոյն գետակի հետ: Բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, անջրդի, հացաւէտ, տեղական բերքերն՝ նոյն. պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 100, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին՝ հոյակապ, կառուցեալ վեց սիւնների վերայ, երկարութիւն՝ 22 մետր 25 սանթիմ. լայնութիւն՝ 12 մետր 36 սանթիմ. քահանայ՝ մի:

Արեւմտեան դրան ճակատակալ քարի վերայ.

«Շնորհօք ամենակալին մեք Ղարաբուլաղի ժողովուրդս մեծ եւ փոքր շինեցինք սուրբ եկեղեցիս յիշատակ հոգոց մերոց եւ ամենայն ննջեցելոց ի հայրապետութեան տեառն Պետրոսի (Աղուանից), ի թագաւորութեան Պարսից Շահ Սիւլէմանի խանութեան Երկրիս Ուղուրլու խանին եւ պարոնութեան գեղիս Ֆարզալի բէկին, տարուղէն (հարկահան) Մուրթուզա Ղուլին, տանուտէր տէր Սիմէօն, տէր Յակովբ, տէր Ազարիէն, տէր Դաւիթ, Գրիգոր, Ազարիա, Շահնազար, Սարուի Աւան, որ ջերմեռանդ սիրով աշխատեցին. ես Մեղիդիւթ էրեցս[1] գրեցի թուին ՌՃԻԵ. որ կարդաք, մէկ բերան ողորմի ասէք. ամէն»:

Արձանագրութեանս աջ ու ձախ կողմերում.

«Սուրբ խաչս բարեխօս Շահնազարին»: «Ես Խօճա Անտոնս սակաւ օգնական եղէ սուրբ եկեղեցուս վարձուն յիշատակ ինձ եւ կողակցին Մարիանին եւ որդոցն Գասպարին, Մելքումին»: «Ես Սիմէօն անարժան էրեցս կանգնեցի զսուրբ խաչս եւ սակաւ աշխատեցի ի վերայ սուրբ եկեղեցոյս...»: Ծուխ 36, ար. 149, իդ. 147:

Կրակի դիմացող քարահանք (огнеупорная глина). գտնւում է գիւղիս արեւելեան կողմում՝ խիստ մօտիկ: Հանքիցս հանուած եւ Բագու տարուած քարերն գործադրւում են կրակով գործող մեքենաների վառարանների համար:

Հին եկեղեցի՝ քարուկիր, միջակ մեծութեամբ, որ գտնւում է գիւղիս վերի ծայրում ընկուզենի ծառոց հարթակի վերայ, ունի միայն մի փոքր խորան հիւսիսային կողմում եւ մի աւագ խորան:

Անապատ. այսպէս է անուանում ժողովուրդն այն քարուկիր մատուռը, որ կայ հին եկեղեցու հիւսիսային կողմում խիստ մօտ: Մատուռս մէջ կայ մի հանդիստ, որի տապանաքարն չունի արձանագրութիւն. հետեւապէս անյայտ է մեզ ամփոփեալս: Մատուռս եւ հին եկեղեցու միջավայրն ամրողջապէս հին ամփոփեալներ են:

Բրտի շինի եղցին. Գիւղիս արեւմտեան հանդէպ՝ վտակի ձախ ափի բարձրութեան վերայ, կայ աւերակ գիւղատեղի եւ մի միջակ եկեղեցի: Այժմ ոչ ոք չէ բնակւում այստեղ. բայց կանգուն մնացած է եկեղեցին:

Միջի վանք

Այսպէս է կոչւում այն եկեղեցին, որ շինուած է հին Ղարաբուլաղից վերեւ՝ նոյն օժանդակի աջ կողմում: Եկեղեցիս շինուած է միայն մի կամարի վերայ, որի վերնամասն քանդուած եւ եկեղեցին ճաքած է արեւելքից արեւմուտք ուղղութեամբ. խախտուած է եւ բեմն: Շատ ջանացինք գտնել արձանագրութիւն, սակայն չգտանք, միայն գտանք մի խաչքարի վերայ. «Այս խաչս է Կոսին» եւ այլ կիսատ խաչքարի վերայ. «Այս սուրբ խաչս է տէր Առաքելին Աստուծոյ»: Եկեղեցուս մօտ կայ ընդարձակ գիւղատեղի եւ սրբատաշ տապանաքարերով եւ նրբագործ խաչարձաններով նշանաւոր հանգստարան, որի մէջ ամփոփուած են եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ եւ ժողովուրդ: Զմայլում է մարդ՝ գեղեցկաքանդակ շիրմաքարերը տեսնելով:

Երի վանք (վերին վանք)

Միջի վանքից բաւական վերեւ՝ վտակի ձախ ափում, կառուցեալ է երկու կամարների վերայ մի քարուկիր տաճար, որ ունի մեծ եւ փոքր խորաններ, աւազան, լուսամուտներ եւ մի դուռն՝ հարաւային կողմից: Երկարութիւն՝ 17 մետր 35 սանթիմ, լայնութիւն՝ 8 մետր: Հիւսիսային որմի վերջին կամարի տակ. «թվ. ՉԻ. Ես Տաւտար որդի Ջանասի կանգնեցի զխաչս ինձ եւ եղբաւր իմոյ»: Տաճարիս մէջտեղում ամփոփուած է մի պատուաւոր ննջեցեալ, որի տապանաքարի վերայ փորագրուած է. «Այս է հանգիստ Սուրբ Գրիգորոյ Գանձակայ եպիսկոպոսին»: Անվնաս մնում է տաճարս, միայն թէ գլխին բուսած են ծառեր, որք կարող են վնասել հետզհետէ մեծանալով: Այստեղ կայ եւս գիւղատեղի՝ վտակի ձախ հովտի վերայ, եւ փոքր-ինչ վերեւ՝ հանգստարան:

ԱԼՀԱՐԱԿ ԼՃԱԿ (38)

Մղոնաչափ է Երի-վանքից մինչեւ լճակս, որ տաճկերէն կոչւում է Գեօգ-գեօլ եւ որ շրջապատուած է անտառախիտ լեռներով: Լերանց մէջ ամենաբարձրն է Կեփաս[1] (ըստ տաճկ. Քեափազ) անուանած ապառաժ սարն, որ հպարտօրէն արձանացած է լճակի արեւելեան հարաւային կողմում: Սարիս լանջերի դժուարատար տեղերում հօրաններով ճարակում են քօշեր: Լճակս բաժանուած է երկու մասի, վերնամասն կոչւում է «Ըստծու ծով» (Աստուծոյ ծով): Լճակիս մակերեւոյթի խորանարդ տարածութիւնն է 54 օրավարաչափ (դեսեատին):

Լճակիցս, որի շրջապատում տեղ-տեղ դիզուած են ահագին քարեր, ելնում են ընդհանրապէս երեք տեսակ ձկներ.

Ա. տեսակն, որ ազնիւ է միւսներից, որոշւում է իւր սպիտակութեամբ եւ կարմիր ու սեւ բծերով:

Բ. տեսակն եւս ունի սպիտակ գոյն, բայց ունի միայն սեւ բծեր:

Գ. տեսակն ունի սեւ գոյն եւ միայն սեւ ու մեծ-մեծ բծեր: Բացի հիւսիսային կողմից ելած ձկներից, ազնիւ եւ համեղ են միւս բոլոր կողմերից հանուած ձկներն:

---

1 Եկեղեցուս մեծութիւնն, ութ քահանայից քանակութիւնն եւ գիւղիս շատ աւերակ տնաբակերն ապացուցանում են, թէ գիւղս մօտաւորապէս 700 ծուխ եղած լինելու է, մինչդեռ այժմ 36 ծուխ եւ մի քահանայ մնացած է:

1 Սարիս գլխին կայ մի գերեզման, որի տապանաքարի վերայ գրուած է, թէ Կեփաս ճգնաւորի գերեզմանն է: Հաւանական է թւում մեզ, որ Ալիարակ լեռանուն տեղի տուած է Կեփաս անուան, որը մահմեդականներն չկարողանալով ուղիղ ճնչել՝ Գեափազ են ճնչում:

Կոսի կալ

Միջի վանքի արեւմտեան հանդէպ՝ վտակի ձախ կողմի բարձրուվնան վերայ, մի դեղեցիկ սարահարթում կայ գիւղատեղի, հանգստարան եւ փոքր եկեղեցի: Խորանի հարաւային կողմի կամարի վերայ՝ մի խաչքարի ստորոտում. «ԹՎԿ. ՈՀԹ. Է....[1] Աստուած ողորմի Սարգսին»: Եկեղեցուս հարաւային կողմում՝ հանգստարանի մէջ. «Ամփերին Մելիցքու Բուրխտ թվին Ո»: Բոլոր հին եկեղեցիներս խոզանոց արած են Գետաշէնի խոզարածներն: Պատիւ է բերում գետաշէնցւոց...

ԺԳ. ՆՈՐ-ՂԱՐԱ-ԲՈՒԼԱՂ ՇԷՆ.

Հիմնուած է շէնս Հին-Ղարա-Բուլաղից փոքր-ինչ ներքեւ՝ նոյն օժանդակի աջ կողմում. բնակիչք տեղափոխուած են Խաչակապ, Բանանց եւ Փիր գիւղերից, որք նախ՝ դնած են Պաւլիխան հայ բէկիցն շինատեղի եւ անդի հողերը շինած բնակարաններ եւ ապա՝ բնակած այստեղ: Տակաւին չունին եկեղեցի: Ծուխ 25, ար. 60, իգ. 55:

Նորաշէն կամ Ենիջայ. Աւերակ գիւղատեղի, եկեղեցի եւ հանգստարան, որ գտնուում է շինիցս ներքեւ:

ԲԵՐԴ ՄԵԼԻՔ-ԲԷԿԼԱՐԵԱՆՆԵՐԻ

Զորս կողմերից առանձնացած, վիմահերձ, սեպաձեւ բարձրացած եւ դէպի արեւելք երկարած մի բարձրագոյն սար է, որ գտնուում է Կիւլստան գիւղից վերեւ: Ինչա գետակն նախ՝ հոսում էր բերդիս արեւմտեան կողմով, ապա հիւսիսային ստորոտով եւ ապա՝ դառնում դէպի արեւելք. վասն որոյ գրեթէ թերակղզի ձեւացած է բերդասարս, որի գլուխն բարձրանալու համար կայ մի դժուարատար եւ ոլոր-մոլոր կածան, որ խիստ զառիվեր է: Բերդս ունի կրկնապարիսպ, արտաքինն սարի կիսով՝ արեւելքից արեւմուտք, իսկ երկրորդն՝ սարի գագաթի եզերքներով, որ աւելի բրգաշատ է եւ անմատչելի, կարող ենք ասել՝ եւ անառիկ: Բերդիս երկարութիւնն է 230 մետր. լայնութիւնն՝ 20 մ, պարսպի հաստութիւնն՝ 80 սանթիմետրից մինչեւ 1 1/2 մետր: Բերդիս հիւսիսային կողմում կայ աւերակ եկեղեցի եւ շատ աւերակ տնատեղեր: Բայց տակաւին կանգուն մնում են Մելիք-Յովսէփի ապարանն, որ հիմնուած է բերդի հարաւային կողմում՝ մուտքի աջ ու ձախ անկիւններում: Բերդս ունի երկու դուռն, որից մեծն՝ հարաւային կողմից, իսկ փոքրն՝ հիւսիսային կողմից, որ անգործածելի է: Ապարանն բաղկացած է երկու մասից՝ արեւելեան եւ արեւմտեան, խոնարհուած են երկոցունց ծածքերն եւս, բայց տակաւին մնում են պաշտելի հնութիւններն:

Բայց որովհետեւ խմելու ջուր չկայ բերդումս, վասն որոյ բերդի վերի կողմին մօտ՝ արեւմտեան հիւսիսային կողմից մինչեւ գետակն, շինուած է մի նշանաւոր, թաղակապ, քարուկիր եւ ստորերկրեայ ական՝ իբրեւ ջրի ճանապարհ, որով ջուր փոխադրուած են բերդիս ջրամբարներն, որք գտնուում են ամրոցի վերի կողմին մօտ՝ հիւսիսային պարսպի մէջ: Այժմ գետակն քանդելով՝ խորացրած է իւր յատակը եւ բարձր մնացած է ականի բերանն:

ՂԱԼԱՉԱ

Բերդիս հարաւային հանդէպ հարթակի վերայ կայ մի դղեակ, որը տեղական անուամբ կոչուում է Ղալաչա: Դղեակս ամուր է եւ քառակուսի. չորս անկիւններում ունի չորս հաստատուն աշտարակ. իսկ հիւսիսային կողմից մի դուռ եւ ամէն կողմերից հրացան արձակելու ծակեր, 71/2 մետր երկարութիւն, 7 մետր լայնութիւն, 41/2 մ բարձրութիւն եւ 1 մ 28 սմ պարսպի հաստութիւն: Այս եւս պատկանում է Մելիք-Բէկլարեաններին.

Դղեկիս շուրջն ընդարձակ, բայց աւերակ գիւղատեղի է, որն կարծես թէ քաղաք եղած լինի, տակաւին պարզ երեւում են քարուկիր եւ խիտ առ խիտ շինուած շատ տնաբակեր, փոքր-ինչ հեռուն՝ ընդարձակ հանգստարան, բայց անարձանագիր: Դղեկիս հարթակի ստորոտում շինուած են եղել նշանաւոր բաղանիսներ. որք կիսաւեր դրութեան մէջ են:

1 Անընթեռնելի են կէտադրեալ բառերն:

ՉԱՓԱՐԻ ՂԱԼԱ

Մռաւ սարից դէպի արեւելք կախուած մի դալարագեղ լանջի վերայ կայ հողաբերդ, որի արեւելեան կողմից հոսում է Ինջա գետակի աջ օժանդակն, որ եւ միանում է Ամենափրկիչ վանքից ներքեւ՝ Ինջային: Բերդիս, որի շրջապատն պատած է թանձրախիտ անտառներով, ասում են, բազմիցս ապաւինած է ի հնումն Կիւլստանի հայ ժողովուրդն, մանաւանդ պատերազմների ժամանակ եւ ազատ մնացած թշնամուց:

ԺԶ. ԳԱՐԴՄԱՆ ԳԱԻԱՌ, որ ընկած է Կուրակ եւ Շամքոր գետակների, դաշտաբերանի եւ Մռաւեան լեռնաշղթայի գագաթնագծի մէջ: Ամենամեծ մասամբ անհարթ է գաւառիս մակերեւոյթն: Սարսափելի խոր-խոր ձորեր, մութ-մութ կիրճեր, օձապտոյտ խոխոմներ, բարձրագագաթ սարեր եւ բլուրներ եւ թանձրախիտ անտառներ գրաւած են գաւառիս մակերեւոյթը: Իսկ վերնամասն խիստ զուարճալի է՝ լեռնահարթեր, ծաղկալի հովիտներ, մարգալի արօտներ, դալարագեղ լեռնալանջեր են գաւառիս Մռաւ եւ Արութիւն սարի կողմերն:

Ա. ԳԵՏԱՇԷՆ ԱԻԱՆ. Հիմնուած է Կուրակ[1] գետակի ձախ ափի վերայ, խոր է գիւղատեղի ձորն եւ նեղ՝ հորիզոնն. բնակիչք ամենամեծ մասամբ տեղափոխուած են Ըռստակ եւ Ջրաբերդ գաւառից. բնիկ է միայն ամենափոքր մասն. հողն՝ արքունի, մեծ մասամբ անջրդի եւ միջակ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ ցորեն, գարի, կորեկ, կտաւհատ, գետնախնձոր, տանձ, խընձոր, դամոն, դեղձ, խաղող, ընկոյզ, կեռաս, թութ, օդն, կլիման եւ ջուրն՝ գովելի, երկար կեանք՝ 100. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին՝ հոյակապ կառուցեալ վեց սիւների վերայ, համակ սրբատաշ, տորոնագոյն քարով, երկու փոքր խորանների վերայ կայ այլ եւս երկու խորան. երկարութիւն՝ 23 մետր 40 սանթիմ, լայնութիւն՝ 14 մետր 30 սանթիմ: Եկեղեցիս, որի միջից բղխում է բարեհամ ջուր, չունի արձանագրութիւն, բայց երեւում է, որ նորոգուած է. քահանայ՝ 2: Աւանումս ծաղկած է հիւսնութեան, դարբնութեան, ոսկերչութեան, դերձակութեան, թամբագործութեան, սայլագործութեան, քարտաշութեան, ոստայնագործութեան եւ ատաղձագործութեան եւ այլն արուեստներն:

Ծուխ 434, արական 920, իգական 782, արական ծնունդ 51, իգական ծնունդ 32, պսակ 31. ար. ննջեցեալ 18, իգ. 11:

ԱՒԱԳ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ

Աւանիս վարի ծայրին մօտ շինուած է մի քարուկիր մատուռ, որ ունի միջակ մեծութիւն, ցած դուռն, 7 մետր 90 սանթիմ երկարութիւն, 5 մետր 45 սանթիմ լայնութիւն՝ Նահատակ անուն: Դասամիջի ուղղութեամբ, խորանի տակ կայ մի փոս, որի մուտքն բացուած է բեմի ժողովրդահայեաց երեսից, որի մասին ասում են նահատակի գերեզման. բայց անծանօթ է անունն:

Ներքուստ՝ հիւսիսային որմում՝ մի քարեայ խաչի վերայ.

«Սուրբ խաչս բարեխաւս Թանգրդուլին»:

Իսկ մատրանս դռնագլուխ քարի վերայ. «ԹՎ. ՌՃԻԶ. կամաւ ամենակալին Աստուծոյ շինեցաւ սուրբ Նահատակս ծեռամբ Սի. Է. Ճի (գուցէ Սիմէոնի) եւ որդուն Քամալ բէկին, օգնականութեան (թեամբ) գիւղիս, թագաւորութեան Պարսից Շահ Սուլէման....»:

1 Գետակս է սահմանագլուխ Արցախի եւ Թիֆլիսի հոգեւոր կառավարութեանց թեմերին կամ Ղարաբաղի եւ Գանձակի: Գետաշէնցիքս տեղափոխուած են Ըռստակ գաւառի Խոտորաշէն գիւղիցն, որ այժմ աւերակ է: Գետակս իւր սկիզբը առած է Մռաւի միջնագագաթի՝ Բազրկեանի հիւսիսային լանջերից:

Մատրանս մէջ, որ եւ ուխտատեղի է, կան հետեւեալ գրչագրերն եւ մասունքներն.

Ա. Աւետարան մագաղաթեայ՝ միջակ մեծութեամբ, արծաթապատ, ոսկեզօծեալ կողակալներով, որի մէջ կայ չորս աւետարանչաց եւ Յիսուսի Քրիստոսի բոլոր հրաշագործութեանց եւ բժշկութեանց պատկերներն: Ընտիր է մագաղաթն, գեղեցիկ՝ թռչնագրերն, սքանչելի՝ ծաղիկներն, հիանալի՝ նախշերն, ուշագրաւ՝ նկարներն, թանկագին՝ ներկերն, ազնիւ՝ ոսկեզօծն, եւ զմայլելի գեղարուեստի նրբագործութիւնն:

Մարկոսի եւ Ղուկասի վերջում գրուած է.

«Յիշատակ է աւետարանս Մահտեսի Ջանղուլուն[1] եւ ծնողացն Վէլիջանին, Համանին եւ կողակցուն իւրոյ Փարուն եւ եղբարց Պապին եւ Ետկարին եւ հանգուցեալ եղբարցն Միրաքին, Շահիջանին եւ ամենայն ազգականաց. ամէն: Ծրեցաւ սակաւ յիշատակարանս ձեռամբ Ալեքսան գրչի թվին ՌՃԺ., եւ եօթի եւ ըստ իմում չափու, ասէք ողորմի»:

Յիշատակարանից. «Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Նուաստ եւ յետին գրչի Նկղս (Նիկողայոսի) մեղապարտի, ունայնագործ մելանաւորի ի թուաբերութեանս Ասքանազեան եւ Աբեթական տումարի ՌՃԺԶ. եւ ըստ Նորում շրջանի՝ ՂԴ. եւ գալստենէն Կենարարին ՌՈՀԲ. ի յստոյգ եւ ընտիր աւրինակէ եւս առաւել համաբայիցն, զի գաղափար սորին էր ի դրանէ Սուրբ Սարգիս եկեղեցւոյ ի աշխարս Հոնաց.. աստուածապահ քաղաքն ի Կաֆայ առ ոտս Սրբոյն Սարգսի զառաւարին ի հայրապետութեան Հայոց տեառն Յակովբայ եւ առաջնորդութեան ամենայն հիւսիսական կողմանց տէր Մարտիրոս քաջ բաբունապետի եւ ի տեղապահութեան Յակովբ վարդապետի... ի թագաւորութեան Պարսից Շահ Սափին, եւ Նախիջեւանայ խանին Ալուղուլի..... Արդ, այժմ աստուածապատում եւ քրիստոսաւանդ տառիս ցանկացող եղեալ աստուածարեալ եւ պատուական այրս մահտեսի Ճանղուին ետ գրել զսուրբ աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ.... զՄելիք Նարսպէկն... դարձեալ յիշեսջիք զՄահտեսի տէր Վարդանն, որ զաւետարանիս զմագաղաթն շնորհեաց... Դարձեալ յիշեսջիք զՂրիմեցի զլուսպարոնն եւ զորդեակն իւր զԴաւիթն, որ մեզ տեղ շնորհեցին. որ աւարտեցաք զսուրբ գիրքս, զի դառն մահտարաժամ եղեւ ի քաղաքն Կափայ եւ մեր տեսեալ զդառնութիւն եւ զաղէտ մարցն, կամաւորութեամբն Աստուծոյ եւ հրամանաւ Նորին բնակեցաք ի Ղրիմ ժամանակ ինչ եւ աւարտն հասուցաք ըստ մեր տկար բնութեան եւ ծաղկազարդեցաք ոսկով եւ բազում գունզգուն որակօք.... Յիշատակ է սա ի յեկեղեցին Ամենափրկչին ի յերկիրն Նախիջեւան ի գաւառն Երնջակ ի դէմս Սուրբ Կարապետին ի գեւաղն Շահկերտ, որ այժմ կոչեն Ղազանչիլար ի յառաջնորդութեան յայսմ նահագիս յՅեսայեայ եւ Առաքել քաջ բաբունապետաց...»:

Մեղաց գերութիւնից ազատարար Յիսուսի Քրիստոսի սոյն աւետարանն զկրի է ընկնում այլազգեաց ձեռքն, որը գնում է Ջրաբերդի Մելիք-Ադամ Ա. «որ գնեաց զսա ի հալալ ընչիւք իւրովք ի ձեռաց այլազգեաց... նաեւ մաքուր արծաթօք պատեալ զարդարեաց եւ ընդելուզեաց ոսկով պատուականօք եւ յետ (եդ) զսա յիշատակ ի սուրբ աթոռն Եղիշէի առաքելոյն (Զրվշտիկ) եւ սուրբ լուսաւորչին Աղուանից ձեռամբ գերիմաստ եւ յոգնահանճար Աւագ քաջաքան վարդապետին[2] ... Յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զՄելիք Հաթամն եւ հայր իւր Մելիք Իսրայէլն եւ զպապն իւր Մելիք Եսային եւ սորա որդոցն Ովսէփին, Մէժլումին, Իսրայէլին եւս առաւել որդւոյ սոցին Սէյրարին, Ալլահղուլին, Ալլահվերտին եւ մօրն Հերքինազին եւ որդոցն ծաղկելոց Նորափբթիցն Իսրայէլին եւ Մէժլումին եւ ամենայն արեանառու ննջեցելոց... գրեցաւ թվին ՌՄ. երկուսին, որ ըստ փրկչականին 1753»:

Բ. Աւետարան՝ մեծադիր, հաստ, գրուած թղթի վերայ, որի սկզբում կայ ոտնլուայի, Յուդայի մատնութեան, Ղազարոսի յարութեան, Ծաղկազարդի, Քրիստոսի խաչելութեան, պատանքուելուն, քառասնօրեայ գալստեան, մկրտութեան, աւետման, ծննդեան եւ չորս աւետարանչաց պատկերներն, բայց բոլորովին անճաշակ եւ զուրկ գեղարուեստի շնորհքից եւ ընտիր ներկերից: Գողացած են եւ սորա յիշատակարանը, վասն որոյ մնում է անյայտ գրողի անունն.

1 Յետոյ աւելացրած է ուրիշ գրող. «որ եղեւ քահանայ եւ եդին զանուն նորա տէր Գրիգոր»:

2 Սա ինքն է՝ Դալի Մահրասան:

տեղն եւ թուականն: Միայն գրուած է Մատթէոսի վերջում. «Յանուն Աստուծոյ ես Յովհաննէս երէց Պետանց աբեղայս ու Բրտանց Սարգիս մեր սրտի հաւժարութեամբ աւետարանս ծախեցաք Վարդանայ եւ առաք ի Նրանէ ա. կով. բ. կապիճ հաց, աւետարանին... Ծարեցի Զարմանին որդին Խատապայ վկայ... Նաճպատինայ որդին Վահրավայ վկայութեամբ, իմ Յոյսիկ Իրիցոյ վկայութեամբ, որ զգիրս գրեցի թվ. ՊԵ. քաղոց Գ. գրեցաւ»: Իսկ միւս թերթի առաջին երեսում գրող Կարապետ արեղան յայտնում է, թէ կազմել տուած է աւետարանս թուին «ՊԻԱ.»: «Զաւետարանս թագւորնայ բերուց (բերաւ), գինն առաւ ու տարաւ»:

Գ. Աւետարան՝ մեծադիր, մագաղաթեայ, ամբողջապէս գրուած գլխագրերով, որ ունի միայն ծաղկազարդի եւ չորս աւետարանչաց պատկերներ, Քրիստոսի պատկերը, որ ձախ ձեռնով բռնած է աւետարանը եւ աջ ձեռնով օրհնում է մի վեղարաւոր եւ մի գլխաբաց մարդ: Վեղարաւորի գլխից վերեւ գրուած է. «Քրիստոս որդի Աստուծոյ, ընկալ զբանաւոր զաւետարանս մեղապարտիս Սահակայ իբրեւ զՏէր եւ ողորմեա՛»: Իսկ գլխաբաց մարդից վերեւ. «Առաքել ծառայ Աստուծոյ»: Աւետարանիս սկզբի նախշերի գլուխներին եւ տակերին գրուած են սպիտակ ներկով. «Տէր Աստուած, ողորմեա Առաքելին... Տէր Աստուած գթայ ի հոգի Ռեմանոսի ծառային քո. ամէն. Աստուած իմ Յիսուս ողորմեա մեղուցեալ ոգոյս, ամէն[1] »:

Հարկ է յայտնել, թէ միջակ գեղեցկութիւն ունին պատկերներն, նկարներն, ծաղիկներն եւ ոսկեզօծն: Համարեա թէ երեք յիշատակարան ունի աւետարանս, առաջին յիշատակարանի վերջում գրուած է. «Տէր Աստուած ամենակալ, Նորոգեա ի կեանս անծերանալիս զՍահակ ստացող սուրբ աւետարանիս ЛИСН ամէն»: Նոյն իսկ աւետարանս գրողի գրչով գրուած է եւ յիշատակարանս եւ յունարէն տառերս: Երկրորդ Յիշատակարանովս յայտնում է գրողն, թէ աւետարանս ստացած է Սահակ կրօնաւորն, որ եղած էր Անեցի եւ աշակերտ Հաղբատայ. յիշում է նաեւ, թէ Սարգիս կրօնաւորն միաբան Հաղպատի, «իբրեւ զիմաստուն վաճառական խնդրող եղեալ պատուական մարգարտին եւ գտեալ զսա (զաւետարանս) ի գաւառի անդ Անւոյ, մեծածախ, ոսկեգիր եւ ոսկեճաճանչ ծաղկաւք զարդարեալ, ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց... եւ ընծայեաց զսա Մեծ կողմանց եպիսկոպոսարանիս, որ է իւր տեղի սննդեան եւ ի տարւոջն Բ. աւր ժամ.... ընծայեցաւ կենաց աւետարանս Սուրբ Գրիգորիս ի թուականութեանս ՈՀԲ. (1223) ի յիշխանութիւնս հզաւրին Հասանայ որդւոյ Վախթանգայ եւ ի հայրապետութեանս (Աղուանից) տեառն Յովհաննիսի: Եւ արդ գրեցաւ սա եւ ծաղկեալ կազմեցաւ յամի, յորում էր թիւ համարոյ թուականութեանս Հայոց հարիւրոց վեցից եւ նոյնքանեաց տասանց, իսկ նորոյս շրջանի միոյ հարիւրոյ քսան եւ ութեակ թուոյ ի սուրբ ուխտս Հաղբատայ գծագրեցաւ ձեռամբ Յակոբայ, յառաջնորդութեան տեառն Յովհաննիսի սրբասիրի, ի թագաւորութեանն Հայոց արեւմտայինն կողման Լեւոնի քրիստոսասէր եւ յաղթող թագաւորի եւ մերոյ կողմանցս եւ Վրաց Գէորգեայ թագաւորի եւ ի սպարապետութեան Զաքարիա Շահանշահի.... զբովանդակ գոյք ծնողաց մերոց եւ եղբարց ծախեցաք եւ շինեցաք զաստուածաբնակ սուրբ եկեղեցիքս եւ անդ եդաք զսուրբ աւետարանս Աստուծոյ, որ շինեցաւ ի մէջն ի Վանս Արջուառճի՞....»:

Յետոյ կազմուած է աւետարանս նախ Հոռոմոսի վանքում (Օձուն գիւղի կողմերում) «հրամանաւ հաւրն Մխիթարայ»: Սորանից ներքեւ գրուած է. «Ի թվ. ՉԼԴ. կամաւ ամենակալին Աստուծոյ ես տէր Վանական գտի հնացեալ եւ աւերեալ զսուրբ աւետարանս եւ ետու վերստին նորոգել...»: Շարայարած է երրորդ անգամ կազմողն. «ՊԼԲ. էր, մեհեկի ամսի ԻԶ. էր, որ կազմեցաւ, որ է սուրբ աւետարանս Մեծ Կողմանց Խաչենոյ եպիսկոպոսարանէն Մայրաքաղաքէնս[2] , իշխանութեան պարոն Զալալին, եպիսկոպոսութեան տէր Գրիգորին Գեռաքարեցին (ւոյն)...»: Կցած է չորրորդ անգամ կազմել տուողն՝ գրելով Մարկոսի վերջում 'ի միջի այլոց. «Ուլախաթուն... զի յոյժ հնացեալ էր սուրբ աւետարանս, ետ նորոգել զսա ի ժամանակիս, որ է Մատխան եկն Թաւրէզ թվ. ՋԽԶ.»:

1 Գրուած է Մատթէոսի վերջում՝ նոյն իսկ աւետարանս գրողի գրչով. «Տէր Աստուած ողորմեա՛ Սարգսի կուսակրաւն քահանայի...»:

2 Հաւանական է, որ այդ ժամանակներում եպիսկոպոսանիստ աթոռն եղած լինի մեզ ծանօթ Մայրաքաղաքին մէջ:

Դ. Աւետարան՝ միջակ դիրքով, գրուած թղթի վերայ, որ ունի միայն չորս աւետարանչաց պատկերներ, բայց անճաշակ են նոյնպէս պատկերներն, ծաղիկներն եւ թուչնագրերն, միայն գեղեցիկ են փոքր տառերն: Յիշատակարանից. «Արդ գրեցաւ աւետարանս այս 'ի գիւղս, որ կոչի Դաստիգիւր (Դաստակիւլ) ձեռամբ Սարգիս երիցու ի թուականիս ՌՃԻԲ.»: Երեք աւետարանների (բացի Յովհաննէսից) վերջերում գրուած է. «Յիշատակ է Սուրբ աւետարանս Եարամիշին եւ իւր որդի Ամիրխոճին, Թումանին... թվ. ՌՃԻԶ.»:

Մասունքներ

Ա. Մասն կենաց փայտէն զետեղուած մի արծաթեայ փոքր խաչում:

Բ. Մասն բազկին Եղիշ առաքելի; որ կայ մի արծաթեայ, ոսկեզօծեալ աջում, որի վերայ գրուած է. «Այս է աջ սրբոյն Եղիշէի առաքելոյն, աշխատողաց՝ որ այ (է) Իգնատիոս եպիսկոպոս, որ եբեր սուրբ նշխարս ի Կաֆայու (է) յիշատակ սորա, տէր Ոսկան եպիսկոպոս»: «Կամաւ Աստուծոյ Կարապետ եպիսկոպոս ետոյ նորոգեցի, Աստուած ողորմի ասացէք»: Աջիս բազկի տակի կողմի վերայ. «Կամաւն Աստուծոյ Մուրատս որդի Նիազի շինեցի սուրբ աջս, Աստուած ողորմի ասացէք. առաջնորդութեան Ոսկան եպիսկոպոսին, թվն. ՌԿԸ. էր»:

Գ. Մասն անյայտ սրբի՝ զետեղուած մի ականազարդ խաչում:

Աւելորդ է յայտնել, թէ աւետարաններս եւ մասունքներս բերած են իւրեանց հետ Ջրաբերդից՝ ժողովրդեան հետ տեղափոխուող քահանայք:

Անապատ

Մի փոքր եկեղեցի է՝ շինուած աւանիս վերի ծայրում՝ գետակի ձախ ափում, քարուկիր կառուցեալ մի կամարի վերայ, որ ունի միայն մի դուռն՝ արեւմտեան կողմից, երկու նեղ լուսամուտ, մի մեծ եւ մի փոքր խորան՝ հիւսիսային կողմում. 12 մետր 14 սանթիմ երկարութիւն, 7 մետր 15 սանթիմ լայնութիւն: Դռնագլխի քարի վերայ. «Այս է Մելիք Թամրազին (Կիւլ Մելիք) որդի Սարուխանին եխպար Եաւրին. Քապաճին Ապովի որդի, որ 1-ի Մելիք Օսեփին Վէլուխոյ Պէհէզ Սարգսին, Պէհէզ»: Անհասկանալի է արձանագրութեանս վերջին բառի իմաստն: Գուցէ «Որ 1-ի» Ա. Մելիք-Յովսէփին:

Ներսում՝ միջնակամարի հարաւային կողմի կիսապատուանդանի քարին վերայ. «Ես Աքուլեցի Գրիգորի որդի Պօղոսին մար (մայր), Եփրեմին քոր (քոյր) Թագուհին[1]»:

Շինութեան թուականն է սորանից վերեւ խոյակի վերայ. «Թվ. ՌՃՂԸ.»:

Անապատիս արեւելեան եւ արեւմտեան կողմերում եղած են խուցեր. դեռ մի քանիսն կանգուն են այժմ: Հաստատում են, թէ կուսանոց եղած է այս, երկար ժամանակ նստած են այստեղ կուսանք, որոց մէջ եղած է եւ մի կոյս Մելիք-Բէկլարեանների տոհմից, որի պատճառաւ Մելիք-Թամրազին որդին նորոգել տուած է անապատս: Անապատիս արեւմտեան կողմին խիստ մօտ է Հայոց Ուսումնարանի շէնքն, որ դեռ կիսատ է եւ ունի 34 մետր 45 սանթիմ երկարութիւն եւ (պատշգամով միասին) 11 մետր լայնութիւն:

ԵՂՆԱՍԱՐ ՎԱՆՔ

Հիմնուած է Գետաշէնիս հարաւային հանդէպ եղած լեռնաբազկի սարահարթի վերայ՝ յանուն Եղիշէի առաքելոյն: Վանքս կառուցեալ է երկու սիւների վերայ համակ սրբատաշ քարով, որի երկարութիւնն է 12 մետր 43 սանթիմ, լայնութիւնն՝ 10 մետր 33 սանթիմ:

Դրան հարաւային սեմի վերայ. «Թ. ՌՃԼԵ. ես Նա..ո..ա Մովսէս Երից»:

1 Իմաստն է. Ես եմ Աքուլեցի Գրիգորի որդի Պօղոսին մայրն եւ Եփրեմի քոյր Թագուհին:

Հիւսիսային սեմի վերայ. «Ի հոպելիանէ Ազատարարէ Գ. թուահամարէ մետասան տարեկ վեր տար (1311). ես անարժան տէր Ղազարս գրեցի»: Երեւում է, որ վանքս նորոգուած է երբեմն-երբեմն: Վանքս ունեցած է շրջապարիսպ եւ թաղակապ, գեղեցիկ սենեակներ, յորոց այժմ եօթն կանգուն եւ եօթն կիսակործան են: Նմանապէս կործանուած են շրջապարսպի արեւելեան եւ արեւմտեան պատերն եւ վանքիս հիւսիսային որմի արտաքին երեսն:

Հին հանգստարան. Գետաշէն աւանիս հանգստարանի հին մասումն կան շատ հին գերեզմաններ, որոց գլխակալ խաչարձաններն զարդարուած են հիանալի նախշերով եւ քանդակներով: Այնքա՜ն գեղեցիկ են փորուածքներն, մինչեւ անգամ այցելուն զմայլում է ժամանակին քանդակագործութեան գեղարուեստի նուրբ ճաշակին եւ ընտիր ոճին վերայ: Խաչարձաններից մէկի վերայ փորագրուած է. «Խաչս յիշատակ հաւրն իմոյ Խունին եւ մաւրն իմոյ Գուլին թվ. ՃՂԱ.»: Կից սրան. «Ես Ետկար աղէս կանգնեցուցի. ես մեղաւորս Ազարիա»:

Այլ խաչարձանի վերայ քանդակագործուած է մի ձիաւոր մարդ, որ վահանը կապած իւր ձախ բազկի վերայ գեղարդը խրած է մի այլ՝ փախչող ձիաւորի սնակուշտն, որ ուժասպառ եղած է: Առաջնոյն թիկնապահն, վեր առած վահան եւ նետեր, վազում է իւր տիրոջ ետեւից: Փորագրուած է քաջի ստորոտում. «Թվ. ՋՂԹ. Տէն Ազաբի էջ (էջ) իւր Բ. թաւրովն (Թորով, Թրով), ողորմի ասացէք»: Հանգստարանումս կան եւ մելիքազունների գերեզման, որք են Մելիք-Մնացականեանների ցեղից:

Մրցունիս

Գիւղատեղի, հանգստարան եւ եկեղեցի, որք կան աւանիս արեւմտեան կողմում՝ գետակին ձախ կողմի բարձր լանջի վերայ: Արդէն գոմանոց փոխած են գիւղիս աւերակը գետաշէնցիք, բայց քարուկիր եկեղեցին կանգուն մնում է փոքր-ինչ վերեւ՝ աղբիւրի մօտ, որ շինուած է մի կամարի վերայ, ունի միայն աւագ խորան, մի դուռն՝ արեւմտեան կողմից. երկու նեղ լուսամուտ, 12 մետր երկարութիւն, 6 մետր 95 սանթիմ լայնութիւն: Խորանի վէմ քարն ունի հիանալի նախշուն քանդակներ, բայց չունի գիր:

Դրան մօտ՝ մի խաչքարի վերայ. «Յովհաննէսի մորն Նուրացիանին»:

Նոյն արեւմտեան արտաքին ճակատում. «Թիւ ՉԷ. Ես Եղահ անշահ կանգնեցի զսուրբ Սարգիսս ինձ եւ եղբաւր իմոյ Վարդանայ»: Մի կարակնաձեւ տաշուած քարի վերայ, որ դռնագլուխ եղած է, այժմ ընկած է դրան հիւսիսային կողմում արտաքուստ. «Թվ. ՉԼԴ. կամաւն Աստուծոյ եւ հրամանաւ սուրբ հայրապետին Ըստեփանոսի, եպիսկոպոսութեան տէր Գրիգորի.. Սոմաճին, ես Յովակիմս... ի բարեխաւսութիւն հոգոյ իմոյ»: Այստեղ, դրանս առաջ՝ մի գեղեցկաքանդակ խաչարձանի վերայ փորագրուած է. «Վասն Մկրտիչ եպիսկոպոսի հոգւոյն փրկութեան»:

Բ. ԱԲԼԱՀ ԳԻԻՂ. Հիմնուած է Գետաշէնի հիւսիսային կողմում՝ մի ձորի մէջ. բնակչաց մեծ մասն՝ բնիկ, փոքր մասն՝ տեղափոխուած Հաթերքից եւ այլ տեղերից, հողն՝ արքունի, մեծ մասամբ ջրարբի եւ արդիւնաւէտ. տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն՝ օդն, կլիման եւ քաղցրահամ՝ ջուրն, երկար կեանք՝ 80, եկեղեցին՝ Սուրբ Մինաս, հոյակապ, կառուցեալ վեց սիւների վերայ, երկարութիւն՝ 18 մետր 85 սանթիմ, լայնութիւն՝ 10 մետր 30 սանթիմ: Արձանագրութիւն. «Թվ. ՌՃՁԱ. յիշատակ է Պետրոսին, Յակոբին, Մրգին տրոպ (տրուպ) տէր Պօղոսին, որ էինք որդիք Աւետիսի՝ ազգէն Հասանայ, որ էր ժամանակն Վալի Նամատին (Նատր շահին), որ կոչի Թահմազ, որ թագաւորեցաւ, ի երկրին Բարսից բազում գաւառս աւերեաց»:

Քահանան գալիս է Սուլուկ գիւղից: Ծուխ 34, ար. 91, իգ. 66, ար. ծնունդ 8, իգ 5, պսակ 3, ար. ննջ. 3, իգ. 2: Տաճարումս կայ Գ. գրչագիր.

Ա. Աւետարան՝ պատկերազարդ, գրուած թղթի վերայ, միջակ դիրքով, միջակ գեղեցկութիւն ունին պատկերներն, նախշերն, թուչնագրերն եւ ծաղիկներն: Յիշատակարանից. «Եւ արդ ես մեղապարտ գծողս Նիկոլայոս.. գրեցի զաւետարանս ի քաղաքս, որ կոչի Վան ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ սուրբ Վարդան զաւրավարիս ի թուականութեանս Հայոց ՋԺԲ. ի հայ-

ռապետութեան տեառն Զաքարիայի Հայոց կաթուղիկոսի եւ մերոյ աթոռակալի սուրբ ուխտիս Վարակայ տէր Յովհաննիսի եւ 'ի թագաւորութեան Ջհան Շահի Միրզին»: Յետոյ գրուած է. «ես Փիլիպպոս կաթուղիկոս զայս աւետարանս ետու Սոթեցի Յակոբին, որ իւրն յիշատակ դնէ»: Մաքոսի վերջում եւ յիշատակարանի նոտեւ. «Ես Մարտիրոս եպիսկոպոս Էջմիածնայ Պազուխէն գնեցի զաւետարանս ու Գ. շարականոց եւ դրի ի դուռն սուրբ Էջմիածնայ»:

Դժուարին է իմանալ, թէ ինչ առթիւ ընկած է այստեղ աւետարանս:

Բ. Աւետարան՝ մեծադիր, գրուած հաստ թղթի վերայ, առանց պատկերի, անյայտ է գրողի անունն եւ տեղն, գրուած է միայն յիշատակարանի տեղ. «թվկս. ԲՃՁԳ-ին». իսկ Մարկոսի վերջում. «Ի թվականիս ԲՃՂԱ. ին ես Ամիր Վահապ եւ Սուդի Վասիլ իշխանս շինեցի եկեղեցիս, եւ գաւառանս, առուն հանեցի Կինեվանուց ձորերէն ու սարերէն. բնակիչք գիւղիս խոստացան տարէնը Գ. ժամ կատարողն Աստուծոյ աւրհնի: Դարձեալ կամուրջն շինեցի, ու կապն կապեցի. թՃ. (900) անձեն յերինք (չծնած երինջ) մորդեցի, ոչխարաց, ղոչից, գառնից սաւա[1] այս եղաւ դարձեալ Բուսխանի (սառնատան) մուլքն իմն էր, ջուր չունէր, շապտէնն ա. աւր ծակ քարով ջուր տվի իմ մլքի խաթրին համար»:

Աւետարանիս սկզբումն. «Շահ Ապազն վար (որ) երեկ, Ղարապաղս կալաւ, պարոն տէր Ոհանն Գանճոյ քաղաքէն շատ գերի ազատեց, շատ գիրանք Ա շարականոց երետ Սուրբ Եղիշեայ առաքեալին վանքն. դ. մաշտոց, ա. աւետարան, ա. սաղմոսարան, ա. աղթարք, ա. խրատագիրք տուի տէր Մէլքիսեթն... Տէր Ոհանէսս Ղալապէկի[2] ես այս գիրանքս ազատեցինք անաւրինաց ձեռքէն, տվինք մեր հոգիս ա. աւետարան տվի Ոսկեան, ա. շարականաց տվի Աւանէս էրէցն Շաշվացի. թիւն ՌԾՋ. էր»:

Գ. Աւետարան՝ միջակ գիրքով, գրուած թղթի վերայ, առանց յիշատակարանի, միայն Ղուկասի վերջում գրուած է. «Յանուն Աստուծոյ ես Մուրադշէս ծախեցի զիմ հայրենի աւետարանս քեզ Խաչատուր Իրիցիդ.. ի գօառէն (գաւառէն) եղիշէի առաքելոյ 'ի յաթոռոյն Ջրվշտկայ[3] ... եւ սպասաւորին սուրբ ուխտին Հախբատայ.. 'ի թվ. ՊՂԷ. 'ի տրէ ամսոյ 'ի ԻԵ. Աստուած շնորհաւոր անէ. ամէն»:

Ս. Յովհաննէս ուխտատեղի. Գիւղիս հիւսիսային կողմում՝ բարձր սարի գլխին մի փոքր խաչարձան է, որի մօտ կան մեծ-մեծ հացի եւ կաղնի ծառեր: Խաչիս վերայ եղած է մատուռ, որ վաղուց արդէն փլած է:

Գ. ԲԱԽՇԻ կամ ՀԱՃԻ ԳԻՒՂ. Շինուած է Արլահի հարաւ-արեւմտեան կողմում, մի ձորակի ձախ լանջի վերայ. բնակիչք 1870 թուին տեղափոխուած են այստեղ Հաճի-քեանդ ամառանոցից մարմնաւոր կառավարութեան հրամանաւ, հողն՝ արքունի, լեռնային, անջրդի. միջակ արդիւնաւէտ, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, եկեղեցին՝ Ամենափրկիչ. քարուկիր կառուցեալ երկու կամարների վերայ, երկարութիւն՝ 17 մետր 29 սանթիմ, լայնութիւն՝ 8 մետր 29 սանթիմ: Եկեղեցուս դրան մէջ, ներքուստ՝ արեւմտեան որմի վերայ. «Սուրբ խաչս Էտգար (յիշատակ) Էղիսաբէթ թվ. ՌՀԹ.»:

Յայտնի է, որ եկեղեցիս հնաշէն է, գիւղս արդէն աւերակ եղած է, նոր բնակիչաց եկած ժամանակ. խիստ մեծ է հին հանգստարանի ծաւալն: Մուխ 36, ար. 127, իգ. 93, ար. ծն. 5, իգ. 3, պսակ 2, ար. ննջ. 1, իգ. 1:

Դ. ՍՈՒԼՈՒԿ ԳԻՒՂ. Շատ հեռի չէ Բախշի գիւղից Սուլուկ կամ Ազատ գիւղն, որ հիմնուած է Պանդ անուն սարի արեւելահայաց լանջին վերայ. բնակիչներից բնիկ՝ 15 զերդաստան, Խոյից գաղթած՝ 20, Բոզլուխից եկած՝ 7, իսկ Բախշի գիւղից տեղափոխուած՝ 8 ծուխ: Հողն՝ արքունի, լեռնային, անջրդի եւ սակաւ արդիւնաւէտ, գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն եւ տեսարանն, երկար կեանք՝ 100 տարի. եկեղեցին՝ Ս. Յովհաննէս Մկրտիչ.[1] քարուկիր, կառուցեալ չորս սիւների վերայ. երկարութիւն՝ 16 մետր 80 սանթիմ լայնութիւն՝ 10 մետր 40 սանթիմ:

Արձանագրութիւն. «Շնորհօք Ամենակալին ես Մէլքէմ գամաւս շինեցի եկեղեցիս յիշատակ ինձ եւ նախնեացս իմոց պարոն Աղային, Մելիք Ետկեարին, Մելիք Աղապէկին, Ղամար-Սուլթանին եւ իւր ծնողին Մելիք Պաղուն, Աւար խաթունին, կողակցին Սավոյինային եւ եղբօրն. Պատօ պէկին, Աղասի պէկին. թվ. Ռ...»:

Քահանայ մի: Մուխ 50, ար. 192, իգ. 181, ար. ծն. 7, իգ. 6, պսակ 2, ար. ննջ. 1, իգ. 1:

Վանք (աւանդութեամբ Երմողեայ քահանային).

Գտնուում է Սուլուկից քառորդ մղոնաչափ վերեւ՝ մի սեռի բլրակի վերայ, որ կախուած է երկու առուակների մէջ: Մատրանս, որ շինուած է հնուց անտաշ քարերով, խոնարհուած է գլուխն, մնում են այժմ միայն չորս պատերն:

Դռնագլուխ քարի վերայ. «Թիւն ՉԻԸ. ես Մխիթար ու Տիրածէր շինեցաք զեկեղեցիս ի հայրապետութեան տէր Ըստեփաննոսի Աղուանից կաթուղիկոսի»: Փոքր-ինչ վերեւ դռնագլխից. «Ապաղայ Ելչ խանին ու Խարայնախին Աւառս լեղով շինեցի եկեղեցիս»:

Մատրանս մէջ կայ մի հանգիստ. որի շիրմաքարն կոտրուած է միջից, կտորները միմեանց մօտ բերելով՝ կարդացինք հետեւեալը. «Այս է հանգիստ Սայի որդի Հասանայ փեսայիս»: Դարձեալ ներսում՝ մի կոտրած խաչարձանի վերայ. «Թվ. ՈԻԳ է...»:

Այլ տապանաքարի վերայ դրսում. «Այս է հանգիստ Միսայէլայ Սասնի որդի, որք կարդէք, յաղաւթս յիշեցէք թվ. Զ.»:

Մեծ հանգստարան՝ տարածուած է մատրանս շուրջն, յորոց շատերն ունին նշանաւոր տապանաքարեր եւ գեղեցկաքանդակ խաչարձաններ: Մի մեծ խաչարձանի վերայ. «Կամաւն Աստուծոյ կանգնեցաւ սուրբ նշանս ի բարեխաւսութիւն Մալսուկին եւ ծնողաց իւրոց Արթուշին, Խաւջին Շահմելիք խաթունին թվ. ՊՂԶ.»:

Մատրանս հիւսիսային կողմում. «Այս է հանգիստ Ջեանայ որդի Հասանայ 'ի թվ. ՉԿԴ.»:

Մատրանս արեւմտեան կողմում կայ գիւղատեղի: Հետքերից երեւում է, որ նշանաւոր գիւղ եղած է այս:

ՊԱՆԴԱԼԻՈՆ ՎԱՆՔ (39)

Վանքս հիմնուած է նոյնանուն սարի բարձր գագաթին վերայ: Մատուռիցն մինչեւ սարիս գլուխն շարունակ զառիվեր է, բարձրանում է մարդ երկու ժամում եւ իջնում երեք քառորդ ժամում: Ջուաձեւ բարձրացած է վանքաբարձ սարն[2] եւ բոլորովին առանձնացած իւր շրջապատի բոլոր լեռներից: Երկու մեծ կալատեղի չափ տափարակ է վանքասարիս կատարն, որի վերայ վաղուց եղած է մեծ վանք, շատ սենեակներն եւ միաբանութիւն: Բայց այժմ մի մատուռ է շինուած հին վանքի տեղում, որն վաղուց փլած է արդէն: Բարեպաշտ ոմն գանձակեցի բարեկ. Սարգիս քահանայ Ազարեանց ի հիմանէ նորոգած է մատուռս ի յիշատակ վախճանեալ իւր Յովհաննէս որդուն: Իսկ մատրանս երկաթեայ դուռն յիշատակ է նոյնպէս գանձակեցի Պ. Մկրտիչ Յովհաննիսեանին: Մեծ ուխտատեղի է մատուռս, որի ուխտի օրն է Ս. Աստուածածնայ տօնն:

---

1 Բացի ոչխարից-խոյից եւ գառներից:

2 Թերեւս մտահան արած չէ ընթերցողն Հաթերքեցի Տէր-Յովհաննէս Ղալաբէկը: Երեւում է, որ աւետարանս բերուած է Հաթերքից:

3 Կարծում ենք, որ Ողտի-Մատուռ աւերակ գիւղացի է (գտնւում է Ջրվշտիկ վանքի մօտ) աւետարանիս ծախողն:

1 Տաճարիս հիւսիսային կողմում, դրան վերայ բարեպաշտ ոմն շինած է երկյարկ զանգատուն. «*Սուրբ Աստուածածին* (սխալմամբ գրուած է) *եկեղեցոյ զանգակատունս շինեցի արեամբ Մակի Պետրոսեան Աւալեանցի ի յիշատակ հանգուցեալ որդոյ իւրոյ Խաչատուրի 1890 յամի մայիսի 10 օրն*»:

2 Վանքիս անուամբ ամբողջ սարս կոչւում է Պանդալիոնի սար, որը, կրճատելով ըստ տեղական սովորութեան, Պանդայ վանք, Պանդայ սար են անուանում: «Ադուան. Եր. եւ Դր.» գրքում գրուած է. «Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ... Աբեթէի 'ի գեղս Անուզ Հաւատուն Հինգուզակ 'ի դուռն.. Պանդալիոնի բժշկի, եւն.»: Կարծում ենք, որ վերեւի մատրան գիւղատեղին է Անուզ-Հաւատուն-Հինգուզակ գիւղն:

ՀԱՃԻ ՔԵԱՆԴ

Գտնուում է Սուլուկի հիւսիսային կողմում, մի անտառապատ եւ բարձր սարահարթի վերայ: Ինչպէս կանխաւ իմացանք, բնակում էին այստեղ Բախշի կամ Հաճի քեանդի բնակիչներն: Բայց 1870 թուին կառավարութեան հրամանաւ այս տեղն փոխուեցաւ ամառանոց Գանձակ քաղաքի միեւնոյն Հաճի քեանդ անուամբ: Այժմ շինուած են գեղեցիկ բնակարաններ, որք ներկայացնում են իբր մի կատարեալ փոքրիկ քաղաք, որի մէջ ամռան ամիսներում լինում են՝ հեռագրատուն, փոշտ եւ դատարան: Հայոց եկեղեցին այժմ փոխուած է Ռուսաց եկեղեցու:

Գիւղատեղիներ եւ հանգստարաններ.

Հայոց գիւղատեղի եւ հանգստարան կայ.

Ա. Հաճի քեանդումս:

Բ. Սորանից ներքեւ արեւելեան ձորի մօտ:

Գ. Նշանաւոր խաչարձան Հաճի քեանդից վերեւ անտառի մէջ:

Դ. Դեղին սար կամ Սարու եալ կոչուած լանջի վերայ:

Ե. Հաճի քեանդի եւ Մռութ գիւղի միջեւ անտառախիտ ճանապարհի վերայ, ծմակի մէջ, կայ մի աւերակ մատուռ Քեօշք անուն, որի արձանագրութեան քարն կոտորուած է. կէս մասին վերայ. «Ի թիւ Հայոց ՋՁ. կամաւն Աստուծոյ եւ ողորմութեամբ Քրիստոսի Ամենակալին Շինեցի զեկեղեցիս...»: Մատուռիցս փոքր-ինչ հեռի կայ եւ գիւղի աւերակ:

Ե. ՄՌՈՒԹ ԳԻՒՂ. Հիմնուած է Պանդալիոն սարի հիւսիսահայեաց լանջի վերայ, անտառի մէջ, բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, լեռնային եւ սակաւ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն (չունին պարտէզ եւ այգի), պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90-95 տարի, եկեղեցի՝ Սուրբ Աստուածածին, փոքր եւ նորոգեալ ի հիմանէ, որ ունի մի քահանայ եւ սոյն արձանագրութիւնը.

«Ես Գանձակ քաղաքացի մահտեսի Քերովբէ Տէր-Մարտիրոսեան կառուցի իմով արդեամբք եկեղեցիս Մռուտ գեղջ ի յիշատակ պապին իմոյ Տէր-Մարտիրոս աւագ քահանայի եւ ծնողաց իմոց Մկրտումի եւ Հռիփսիմի եւ կանանց իմոց Խանումի (վախճանեալ) եւ Սեհարի ամի տեառն 1881»: Փորագրուած է արձանագրութեանս տակ. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք եւ ծանրաբեռնեալք եւ ես հանգուցից զձեզ».

Ծուխ 30, ար. 135, իդ. 131, ար. ծն. 15, իդ. 14, պսակ 6, ար. ննջ. 2, իդ. 2:

Զ. ՈՍԿԱՆԱՊԱՏ (40) ԳԻՒՂ. Հիմնուած է Մհակ սարի ստորոտում, Գանձակ գետակի[1] ձախ ափի բարձրութեան վերայ, խոր ձորի մէջ, բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, լեռնային անջրդի եւ սակաւ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն օդն եւ կլիման, գովելի՝ ջուրն, 90 տարի երկար կեանքն, Սուրբ Յակոբ եկեղեցին, հոյակապ կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւն՝ 25 մետր 55 սանթիմ, լայնութիւն՝ 11 մետր: Տաճարս ունի նաեւ հարաւային եւ հիւսիսային պատերում առանձնապէս կամարներ եւ ոտներ, ինն լուսամուտ, երկու փոքր եւ մի աւագ խորան եւ մի դուռն: Աւազանի մօտ հիւսիսային խոյակի վերայ. «Ես Ովանէս, Գրիքոր կամարս բերի Գուդկան, դվիմ իմ մեր (մօր) Ուռումի (Հռիփսիմէի) հոգին համար»: Արտաքուստ արեւմտեան ճակատին. «Սուրբ խաչս աւգնական Տէր Ովանէսին թվ. ՈԴ.»:

Քահանայ՝ մի: Ծուխ 89, ար. 321, իդ. 275, ար. ծն. 7, իդ. 6, պսակ 4, ար. ննջ. 2, իդ. 2:

Տաճարումս կայ երկու գրչագիր.

Ա. Աւետարան մագաղաթեայ, միջակ դիրքով, որ ունի միայն չորս աւետարանչաց պատկերներ: Ընտիր են պատկերներն, նախշերն, ծաղիկներն, թռչնագրերն, ոսկեզօծն եւ գոյներն:

Յիշատակարանից. «Ի ձեռն ուրումն եբեր յաշխարհէն Հայոց գրեալ ոսկեզաւծ որակաւք ի Դրազարկն ձեռամբ Թորոսի փիլիսոփային, զոր տեսեալ տեառն Ստեփանոսի Տարսայիճ հզաւր եւ իմաստուն գիտնականի վարժեալ ի վարժարանի վարժապետին Եսայոյ տիեզերաքարոզ լուսաւորչին, որդի իշխանաց իշխանին քաջ սպառազէն մենամարտիկ զինաւորի Ջալալին, թոռն մեծ Աթաբակին Հայոց եւ Վրաց Վեհ Տարսայիճին, Տէր եւ Վերատեսուչ գահերէց եւ գլուխ արհի երից աթոռոցս Սիւնեաց Տաթեւոյ եւ Նորավանից եւ Ցախաց քարոյ, պետ երկոտասան գաւառաց, ուրախ եղեւ իբրեւ ընծայ ի վերուստ առաքեալ: Եւ յաղագս եղբաւր իւրոյ պարոն Շահնշահի, որ կիսաւրեայ մահուամբ, տղա տիաւք, ցանկալի տեսողաց, գեղեցիկ հասակաւ, եւ քաղցր բարուք, աներկեւան հաւատով եւ հաստատուն յուսով՝ ի բազմավրդով կենցաղոյս խրախոյս տուեալ առաջնորդեաց խաղաղական եւ բարի հրեշտակաւք առ յոյսն ամենայնի եւ յԱստուած բոլորից, որ հանգուցանողն է ամենայն հոգւոց բարեաց, հանգուսցէ ի գոգն Աբրահամեան նովին հաւատով լցեալ: Ստացաւ հանդերձ հոգեւոր հարբ իւրով Կիրակոս վարդապետովն ի հալալ արդեանց իւրոց եւ ընդելուզել ոսկւով եւ արծաթով եւ ակամբք պատուականաւք յիշատակ վերասացեալ եղբաւր իւրոյ: Եւ արդ, ես նուաստ, եղկելի, թշուառացեալս Ստեփաննոս խոց լերթոց եւ թախիծ կսկծալի սրտիւ, հողամած դիմաւք զդասդ սրբազանից զպատահեալսդ տիեզերաքարոզ աւետարանիս սրրտի մտաւք յիշել զգեղաղէշ եւ զարեգակնափայլ եղբայրն իմ զպարոն Շահանշահ առաջի զենման Քրիստոսի... յիշել զծնողսն իմ զհայր իմ զՋալալն եւ զմայր իմ զամենաւրհնեալ Գոնցա եւ յերկար կենդանութիւն խնդրել երկուց եղբարց իմոց պարոն Էլիկիւմի եւ Աղբուղային: Եղեւ մեզ այս բաւթ տրտմագին ի տաւնի զատկին ի ՉԶ. թուականի Հայոց ի տրէ Գ.»:

Մատթէոսի սկզբում գրուած է ի միջի այլոց. «Ես Յովհաննէս Ոսկանապատոյ ձեռնաւորս գնեցի զաւետարանս իմ հալալ արդեամբս յիշատակ ինձ եւ իմ ծնողաց»:

Բ. Աւետարան, թղթեայ, միջակ դիրքով, պատկերազարդ, բայց ոչ այնքան ճաշակով գրծուած: Յիշատակարանից. «Շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի, զմեղուցեալ գրիչս Իսրայէլ յիշեցէ՛ք... Արդ գրեցաւ սա յարքունական երկիրն Մոկաց ի տեղիս Անապատ, որ Փասավանք կոչի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս.. ձեռամբ յոգնամեղ եւ անարուեստ գրչի Իսրայէլ... ի թուականիս Հայոց ՋԺԲ. ամէն. ի խնդրոյ.. Մահդասոյն Պաւղոսի յիշատակ հոգւոյն իւրոյ»: Յետոյ գրուած է. «Նորոգեցաւ սուրբ աւետարանս ընդ հովանեաւ աստուածընկալ սուրբ Նշանիս Վարագայ ձեռամբ Սահակ անարժան աբեղայի ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Կիրակոս վարդապետի, որ բազում ջանիւ զվանքս կրկին անգամ նորոգեաց զեկեղեցիք, զդարպաս, զտներ, զոր ի շարժմանէ ապականեալ էր, ի թուականիս ՌՂԸ. ի խնդրոյ Յոհան անուն անկեալ երիցին, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց եւ ետ նորոգել»:

Դժուարին է իմանալ, թե ի՞նչ դիպուածով ընկած է Ոսկանապատ գիւղիս մէջ:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԱՆՔ

Հիմնուած է գիւղիս վերի ծայրում, գետակին ձախ ափի վերայ, կառուցեալ երկու կամարների վերայ, որ ունի մի դուռն հարաւային կողմից եւ երկու նեղ լուսամուտ արեւելեան եւ արեւմտեան կողմերից եւ միւս եւս՝ հարաւից: Երկարութիւն՝ 12 մետր 75 սանթիմ, լայնութիւն՝ 6 մետր 75 սանթիմ: Ունի եկեղեցու ձեւ եւ ոչ վանքի, սակայն ունեցած է միաբանից խուցեր տաճարս իւր արեւմտեան կողմում, որպէս վկայում են տեսողք, բայց յորդ անձրեւի յեղեղներն քանդած եւ տարած են սոյն սենեակները եւ կոյտ-կոյտ խիճեր դիզած խուցերի տեղերում:

Տաճարիս հարաւային որմի մօտ արտաքուստ. «Այս է տապան Յարութիւն պապին, որ վերըստին նորոգեաց սուրբ եկեղեցիս թվ. ՌՄՀ.»:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՎԱՆՔ

Ս. Աստուածածնայ վանքիս հանդէպ, գետակի աջ ափի վերայ, շինուած երկու կամարների վերայ, վնասուած գագաթնագծի ուղղութեամբ մինչեւ գետինն:

Վէմ խաչքարի ստորոտում. «Սուրբ խաչս աւգնական...»:

Աւերակ դրութեան մէջ են միաբանից խուցերն ու շրջապարիսպն:

1 Կոչւում է եւ Ոսկանապատի (Զուռնաբադի) գետ:

Գիւղիցս բաւական վերեւ, գետակիս ձախ կողմում կան հետեւեալ հնութիւններն, որք շինուած են իրարից զանազան հեռաւորութեան վերայ:

Ա. Դաստափոր աւերակ գիւղ հայոց, այժմ Թրքաբնակ, բայց մնում են հանգստարանն եւ վեց սիւների վերայ շինուած հոյակապ եկեղեցին:

Բ. Ցնծահալ, որ նոյնպէս Թրքաբնակ է, որ ունի ընդարձակ հանգստարան եւ մեծ քարուկիր եկեղեցի, որի գլուխն խոնարհուած է:

Գ. Գեատամիշ, (Գետամէջ) գիւղն, որ ունի հանգստարան եւ մի անսիւն միջակ, մեծութեամբ եկեղեցի: Թրքաբնակ է եւ աւերակս:

Դ. Պալլուջա աւերակ գիւղ:

Է. ՄԻՐԶԻԿ ԳԻՒՂ. Հիմնուած է Ոսկանապատի հիւսիս-արեւմտեան կողմում մի տեսարանաւոր եւ արեւելահայեաց լանջի վերայ, բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի, անջրդի եւ լեռնային, տեղական բերքերն՝ նոյն (առատ տանձ, խնձոր, ոչխար) գովելի՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90, եկեղեցին՝ Սուրբ Գաբրիէլ, քարուկիր, կառուցեալ չորս սիւների վերայ խաչազարդեալ վաղեմի խաչքարերով. երկարութիւն՝ 16 մետր 95 սանթիմ, լայնութիւն՝ 12 մետր 10 սանթիմ: Դռնագլուխ քարի վերայ. «Արդեամբ Միրզիկայ Սուրբ Գաբրիէլ եկեղեցիս շինեցաւ 1674 ամի»: Հարաւային փոքր խորանի սեմին վերայ. «Կանգնեցի Սարուխանս սուրբ խաչս (բերուած է հանգստարանից) բարեխաւս Ոսկի հոգուն թվ. ՌՀՋ.»: Եկեղեցիս ունի եւ փոքր զանգակատուն եւ մի քահանայ: Ծուխ 60, ար. 320, իգ. 277, ար. ծն. 17, իգ. 12, պսակ 7, ար. ննջ. 2, իգ. 2:

Ովասափ մատուռ. գտնւում է գիւղիս հարաւային կողմում, մի բարձր սեռի վերայ ուղղուտակին: Այժմ կիսաւեր է, շինուած է եղել անտաշ քարով, բուսած է խորանում մի մեծ կաղնի ծառ:

ՔԵԱՐԽԱՆԱՅ ՎԱՆՔ

Հիմնուած է մատուռիցն վերեւ, մի գեղեցիկ լեռնահովտի հարաւային ծայրում: Բարձր սարեր պատած են վանքիս հիւսիսային, արեւմտեան եւ հարաւային կողմերը (վանքիս այս կողմն ձոր է, խորանդունդ ձոր, որից հոսում է մի առուակ եւ միանում ստորեւ Գանձակ գետակին): Վանքս շինուած է մի կամարի վերայ տորոնագոյն տաշուած քարով եւ ունի երկու փոքր եւ մի աւագ խորան, վեց նեղ լուսամուտ եւ մի դուռն արեւմտեան կողմից, 12 մետր երկարութիւն, 7 մետր 70 սանթիմ լայնութիւն: Բեմի ճակատին մի խաչքարի վերայ. «թվ. ՌԿԴ.»:

Վանքս ունի եւ գաւիթ, որ շինուած է հասարակ քարով 7 մետր 30 սանթիմ երկարութեամբ եւ 7 մետր լայնութեամբ, որի մէջ ամփոփուած են.

«Հանգիստ հողապատեան տեառն Եղիազարու յաւէտ հանգիստ է անվշտակիր նշխար սորին, որ աստ կան, հոգին գոլով միջնորդ առ Տէր ժտական վասն իւր որդեկացս, որ եմք տատանման փորձանաց գաղտնի, որ օգտել փութան զմիաբանութիւն հոգեւորական, փրկել ի փորձանաց այժմ եւ յապագայ, հանգեաւ սուրբ հայրն մեր թուին Հայկազնւոյ ՌՃԿԲ.»:

«Այս է հանգիստ Չարեքու անապատի Մկրտիչ վարդապետին թվ. ՌՂԵ.»:

«Այս է տապան տանս սպասաւոր Մահտեսի վերածայնի, Նաւասարդ աղա անուանի, եղբայր Թամրազ Քալանթարու Զակամ Մեծ Սահակ 'ի Ղարամուրատ գեղջէ, կոչի Արամի, մահն դիպէ վաթսուն Բ. ամի ՌՃՂ. թուի եւ շամդրեա[1] մարմին է ՂԳ. ամի»:

Վանքս ունի եւ կիսաւեր շրջապարիսպ եւ մի քանի խուցեր միաբանից համար, որք արդէն քայքայւում են հետզհետէ եւ մի քանի օրավար պատուական հողեր: Վանքիս արեւելեան կողմում է Քեանդակիրմազ մականուանեալ Սարգիս վարդապետի գերեզմանն:

«Այս է տապան Սարգիս վարդապետի Ազարեանց Տփխիսեցւոյ Քեանդակիրմազ մականուանեալ, որ յայտնապէս անբաստութեամբ (անբասիր) վարեաց զկարգ կրօնաւորութեան ի զանազան վանորայս Գանձակայ գաւառի աւելի քան 70 տարի եւ վախճանեցաւ ի հասակի 96 ամաց ի Միրզիկ գեղջ 1877 ամի»:

Վանքիս մօտ կայ վանքապատկան պարտէզ, թթենի եւ տանձի ծառեր, եւ հանգստարան ու գիւղատեղի:

Աստուածածին աւերակ մատուռ, որ գտնւում է Միրզիկ գիւղիցս վերեւ, այն սեռի վերայ, որ կախուած է գիւղիս վերայ, իսկ երեք քարեայ խաչարձաններ մատուռիցս վերեւ:

Ը. ԲՐԱՋՈՒՐ (Աղբրաջուր) ԳԻՒՂ. Հիմնուած է Միրզիկի հիւսիսային կողմում, բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, տեղական բերքերն եւ ամենայն ինչ՝ նոյն, եկեղեցին՝ Գաբրիէլ, քարուկիր. քահանան գալիս է Միրզիկից: Ծուխ 33, ար. 191, իգ. 171, ար. ծն. 8, իգ. 6, պսակ 2, ար. ննջ. 2, իգ. 1:

Գիւղիս հարաւային կողմում կայ կայծաքարի եւ սպիտակ քարի հանք: Վերջինս նման է Հին-Ղարաբուլաղի քարահանքի քարերին, որը տանում են ծախում Բագու քաղաքում:

Թ. ՄԵԾ-ԲԱՆԱՆՑ ԳԻՒՂ. Հիմնուած է Արութիւն (Ղոչ-Ղարա) վտակի ձախ կողմի վերայ, մի խոր եւ հորիզոնն նեղ ձորում (Բրաջրի արեւմտեան կողմում)՝ բնակիչք՝ բնիկ, ամենամեծ մասամբ արուեստաւոր-արծաթագործ, ոսկերիչ. դերձակ, քարտաշ. որմահիւս, սայլագործ, վաճառական, եւն., հողն՝ արքունի, չափազանց սակաւ, ապառաժ եւ անպէտք երկրագործութեան, տեղական բերքերն՝ ցորեն, գարի, ոչխար, տաւար, անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 85, եկեղեցին՝ Սուրբ Լուսաւորիչ, ընդարձակ, կառուցեալ վեց սիւների վերայ եւ ապառաժ սալ քարի վերայ 1863 թուին, երկարութիւն՝ 28 մետր, լայնութիւն՝ 13 մետր 35 սանթիմ: Քահանայ՝ երկու: Ծուխ 263, ար. 1144, իգ. 1116, ար. ծն. 50, իգ. 44, պսակ 14, ար. ննջ. 10, իգ. 9:

Տաճարումս կան հետեւեալ գրչագրերն.

Ա. Աւետարան՝ մագաղաթեայ, մեծադիր, ամբողջապէս գրուած գլխագրերով եւ առանց պատկերի, որի սկզբից եւ վերջից թափուած են թերթեր, կամ գողացած են, վասն որոյ չունի յիշատակարան. միայն գրուած է բուն ընդօրինակողի գրով. «Շնորհիւն Աստուծոյ եւ ողորմութեամբ ամենասուրբ Հոգւոյն, պահպանութեամբ սրբոյ Խաչին եւ աղաւթիւք ամենայն սրբոց... ժառանգեսցէ (ջնջուած)»: Աւետարանս նախ նորոգած է Թադէոս անուն ոմն միայնակեաց, ապա Ալեքսանոս արեղան «ՋԲ. թվ.» ապա նորոգած է ՋԿ. թուին, ուր եւ գրուած է. «Կամաւ Ամենակալին Աստուծոյ ես Կոչ որդի Սեթիկին, թոռն Թադէոսին, աւետարանս իմ պապեց գնուած էր. եկի, դաւի արարի, էլ բարիշեցաք եւ սազեցաք. Բ. եզն ինձ ծառայութիւն, ես էլ գիր տուի եւ զաւետարանիս դաւէն (կռուելէն) անցայ: Էլ ո՛չ ես եւ ո՛չ իմ որդին էլ դաւի չանէ. ՅԺԸ. հայրապետաց անիծած է... Մուրատ փաշէն վկայ, Ջանդարն վկայ, Մուրատ բէկն վկայ»: Հուսկ յետոյ գրուած է. «Զվերջին նորոգիլ տուող սուրբ զաստուածաշունչ ծեր աւետարանիս Պանանցայ.... ճամահաթն թվին ՌՀԴ. էր. նորոգեցաւ ձեռամբ Շատախեցի Յովհաննէս երիցու... Ով հանդիպողք, խիստ դառն, նեղ ժամանակ այսմ տարոյս, Շահ Ապազն բազում խան ու իշխանք ուղարկեց Վրացտուն ի քաղաքն Տպղիս՝ ընդ ձեռամբ իշխանին անուն Մովրով, սպանեց հնարաւք Ղարչղա խանն, որ իշխանութեամբ ստրատելատ էր եւ այլ սիրելի խանն Յուսուբ սպանաւ ընդ նմա. մեծ դառնութիւն ելաւ ի մէջ պարսիկ ազգին. վերջն Աստուած գիտի, թէ ինչ կուլի»:

Բ. Աւետարան մագաղաթեայ, փոքրադիր, որ ունի իւր սկզբում աւետման եւ չորս աւետարանչաց պատկերները, որք այնքան գեղեցիկ չեն: Մատթէոսի վերջում. «Զստացող սուրբ աւետարանիս զՆերսէս սրբասէր քահանայ զծնողսն... եւ զամուսին իւր Մսրմելիք»:

Յիշատակարանից. «Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ մեղապարտ եւ փծուն գրչի Խաչատուր անպիտան քահանայի ի թուականութեանս հայկազեան տումարի Ջ. եւ Ժ. ի հայրապետութեան տեառն Գրիգորի եւ յաշխարհակալութեանն Ջահան շահի, որ տիրեաց բազում աշխարհի եւ գաւառի բռնութեամբ... (գրեցաւ) ի գիւղաքաղաքն, որ կոչի Ուրծ. ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Ստեփաննոս Նախավկային»: Վերստին կազմուած է Հայոց ՌԻԹ. թուին:

Գ. Աւետարան՝ մագաղաթեայ, փոքրադիր, որ ունի միայն չորս աւետարանչաց պատկերներ: Հասարակ են պատկերներն, թռչնագրերն, ծաղիկներն եւ նախշերն. սակայն գեղեցիկ են փոքր դրերն:

---

1 Գուցէ շատամեայ:

Անյայտ է գրողի անունն. միայն յայտնի է ստացողն, որ է Պապկան անուն ոմն, որ գրած է. «Արդ.. նախ եւ առաջ եկն ի վերայ մեզ խաշանց մահ, որ անասունքն կոտորեց վասն մեր ծովացեալ մեղացէս... եկաւ ի վերայ մեզ մեծ նեղութիւն, մուրեախն եւ թրթուռն Դիզակ եւ Վարանդ, Խաչեն, Զորաբերդ, որ շատ ժամանակ շրջեց ի վերայ երկրիս... վա՛յ մեզ, եկեալ ի վերայ աշխարհիս սով սաստիկ ի վերայ երկրիս վասն մեր մեղացէս, վա՛յ մեզ, չիմացանք զի՛նչ գործենք կամ զի՛նչ աշխատեմք, մարմնով չարչարեցանք, հոգով հիւանդացանք, մտօք հեռացանք. վա՛յ մեզ, մենք ասէինք թէ պրծանք. այլ զի՛նչ կը տեսնունք. եկեալ ի վերայ մեզ մահտարաժամ, մեծ եւ սաստիկ եւ անո՛ւն. որ պովանդակ աշխարհն պատեալ էր, օր մի վաթսուն եւ եօթանասուն մեռանէին: Վա՛յ մեղաւորաց, որ չմնաց քահանայ պատարագին, կամ աշխարհական իւր պսակին, հայր լաց իլաւ (լացաւ) իւր ա՛յ իմ որդին, մայր լալով կոծէր դստան (դուստր) ի վերայ գերեզմանին: Վա՛յ ինձ, զի՞նչ էինք եւ զի՞նչ տեսաք. Տեր Աստուած Յիսուս Քրիստոս ի գեօղն, որ կոչի Պալլուջա[1] ի հայրապետութիւն տեառն Եսայի.. կաթուղիկոսի ամենայն Աղուանից, գրեցաւ ՌՃԿՋ. թվ.»: Յետոյ շարայարած է այլ գրիչ. «Արդ, ի ժամանակս պռնակալութեան Գանճայու քաղաքիս Ուղուրլու խան, որ է Քալպալի խանին եւ իշխանութեան ի Ոսկանապատու Ծորոյս տէր Մելիք Յովսէփին, որ է որդի Մելիք Եաւրին ի Ոսկանապատ գեղջէն...»: Աւետարանս յետոյ ստացած է բանանցեցի Եսայի քահանան ՌՄԾԲ. թվին :

Դ. Աւետարան՝ մագաղաթեայ, առանց պատկերի, անճաշակ նախշերով, ծաղիկներով եւ գլխագրերով, որի գրողն. «Փծուն գրիչ սուտանուն Յովսէփ ի թվին Ջ.»:

Ե. Աւետարան՝ թղթեայ, փոքրագիր, որ ունի միայն չորս աւետարանչաց պատկերներ, բոլորովին անճաշակ, գրուած է Մեծ-Սիւնեաց Տաթեւի վանքում ՌԼ Դ. թուին Յովհաննէս եպիսկոպոսի ձեռնով:

Զ. Աւետարան՝ թղթեայ, նմանապէս ամենայն ինչ անճաշակ: Յիշատակարանից. «Գրեցաւ թվ. ՌՄԺԱ. ի բառնալ թագաւորութեան արեւելեան երկրիս Ելիմացւոցն այլազգեաց... զի բազում քաղաքս եւ գեօղս քայքայեցին եւ աւար արարին յԱղուանս հայս. զի զօրք ելեալ յԱլանաց եւ յելիմաց ի Շօշ քաղաքէ մինչ ի քաղաքն Գանձակ, որ է շահաստան, եւ ընդ այնմ մնացեալ հեծելազօրքն, զի իշխանքն Պարսից անօրինաց ո՛չ ուրեք հնազանդեալ եւ ո՛չ միաբանեալ կամաց իրարաց՝ սուր հասեալ ընդ ամենայն տեղիս ի տեառնէ»:

Է. Աւետարան թղթեայ՝ փոքրագիր, ամենայն ինչ հասարակ: Յիշատակարանից. «Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ.. անարուեստ գրչի Գրիգորի աբեղայի ի սուրբ եւ ի հռչակաւոր ուխտս ի Հաղբատ ի թուականութեան Հայոց ՋԴ. ի կաթուղիկոսութեան տեառն Գրիգորի եւ յառաջնորդութեան տեղւոյս տէր Աստուածատրոյ արքեպիսկոպոսի ի Ղանութեան Տաճկաց (Պարսից) Ջիհան Շահի, ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ ի խստութենէ այլադաւան սեռի որ յահէ եւ յերկիւղէ նոցա մաշեալք եւ հալածական լինէաք, փախստեայք եւ մոլորեալք, գերեալք եւ տատանեալք: Ի յառաւել խստութենէ հարկապահանջութեան եւ ի հոլովութենէ գերելոցն եւ ի չքաւորութենէ ընչից ո՛չ կարէր օգնել եղբայր եղբօր եւ ո՛չ ողորմէր ազգս ազգիս... Եւ ես անարժան եւ տառապեալ ծերունիս Գրիգոր՝ երերուն տատանեալ շրջեցայ... ուխտիս Հաղբատայ եւ Տէր Աստուածատուր եպիսկոպոս սիրով ընկալաւ զմեզ»: Բայց թէ ի՞նչ դիպուածով ընկած է աւետարանս եկեղեցուս մէջ, անյայտ է մնում:

Ը. Աւետարան թղթեայ՝ փոքրագիր, ըստ ամենայնի՝ հասարակ: Յիշատակարանից. «Արդ, գրեցաւ Սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՋՀԳ. ձեռամբ.. Ալեքսանոս աբեղայի ի սուրբ ուխտս Մաքենացւոց[2] ի դուռն սուրբ տաճարիս Աստուածածնիս»:

Թ. Աւետարան՝ թղթեայ, փոքրագիր եւ առանց պատկերի: Յիշատակարանից. «Շնորհօք եւ օժանդակութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աւարտեցաւ նոր կտակարանս.. ձեռամբ.. Մխիթարի ի թուականութեան հայկական տումարի ամի հազարերորդի, քսաներորդի... ի յայս ամի

1 Ոսկանապատից վերեւ Դաստափոր գիւղի մօտ, գետակի ձախ կողմում, այժմ թրքաբնակ գիւղ:
2 Գտնւում է Սեւանայ լճակի հարաւային ափից մղոնաչափ հեռի՝ Բասար-Կեչարից ոչ այնքան հեռի:

սաստիկ մահ յերկիրս Վերին Զակամայ, որ օր մի ի տան միում եօթն հոգի վախճանեցաւ... ի հայրապետութեան տեառն Պետրոսի Սրբազան Կաթուղիկոսին Սրբոյ Գանձասարայ, ի առաջնորդութեան Նահանգիս Մինաս վարդապետի եւ ի տէրութեան պարսից Շահ Սուլէիմանին ի յերկիրս Վերին Զակամայ ի գեօղս որ կոչի Սուլտանեցիք ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս ի խնդրոյ բարեմիտ Եւային եւ այրն (առն) իւրոյ Ոսկանին... Արդ, ես Եւայս ստացայ զայս աւետարանս եւ ետու վախմ ի դուռն Ղարամուրատ Կուսանաց անապատի Սուրբ Աստուածածնի»: Հուսկ յետոյ գրուած է այլ գրչէից. «Զվերջին ստացող զսուրբ աւետարանս... Մելիք Սարգիս եւ ծնողացն հայրն իմոյ Ովանէսն... թվին ՌՃՀԸ.»:

Ժ. Աւետարան՝ թղթեայ՝ միջակ դիրքով, առանց պատկերի, ամենայն ինչ հասարակ: Յիշատակարանից. «Ի ՌՃԱ. թուականիս Հայոց եւ ի յամսեանն մարտի ԻԱ. աղուհացից պահոց առաջին շաբաթին երկուշաբաթ օրն եղեւ սկիզբն գրութեան սուրբ աւետարանիս եւ կատարեցաւ ապրիլ ամսոյ ԺԵ. յաւուր մեծի հինգշաբթին[1] .. արդ, գրեցաւ սա ի յերկիրս Զակամ ի գիւղս Մելիքզատայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Թովմայ եւ այլ սուրբ նահատակի. որ աստ է, ձեռամբ անարուեստ եւ փծուն գրչի Յակովբայ յետնեալ քահանայի»: Աւետարանս ստացած է Կիրակոս երէցն, ապա Մելիք Ովանէս, «Արդ, ես Մելիք Ովանէսս ստացայ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իմոց յիշատակ ինձ եւ ծնողացն.. հայրն Միրզախան, եւ որդիքն իմ Մելիք Մատթէոսն»: Եւ ապա գրած են Մելիք-Մատթէոսի թոռներն. «Արդ ես Մելիք Մատթէոսի թոռն Աղաջանս եւ Սարգիսն ի թուին Հայոց ՌՄԽԴ.-ն էր, որ Չէզոք (Ներքինի Աղա-Մամատ) շահն Պարսից եկն ի քաղաքն Թիֆլիզ սուրբ Խաչի պահոց երեքշաբաթի օրն, առաւ, աւերեց եւ ցիրուցան արար զամենայն, կոտորեաց ավելի քան ԺԲՌ. (12000) մարդ եւ զայր ու զկին ամէն կերի արարին եւ բազում նշխարս սրբոց եւ զսպաս եկեղեցեաց աւար առին, դարձան յետս նոյն ամի:

Երկրորդ թուին (ՌՄԽԵ.-1796) մեծի պահոց միջոցն Թիֆլիզու Էրէկլայ (Հերակլ) արքայն վրաց եկն ի վերայ Կանձակու հանդերձ Շամշադինու զօրօք եւ Շուշու Իբրահիմ խանն հանդերձ Լազկիւն. տեղոյս իշխող Ջաւատ խանն էր. մազապուրծ եղեալ ի Ղալայն բազում պատերազմ արարին, ոչ կարացին յաղթել նմա. հրաման արարեալ եկն ի սար գիւղօրայս Սուլթան Շամշադին զօրօք իւրովք եւ սուտ երդմամբ հանեալ զմեզ կերի վարեցին եւ սրախողխող արարին եւ մնացելոցն այսր եւ անդր ընթանալով ոչ գտաք հանգիստ ոտից մերոց: Յետոյ զօրքն վրաց հանդերձ լազկիւն եկն եւ զմնացեալսն կերի արարին եւ Բանանց գիւղս ամէն այրեցին հրով: ԽՋ. (ՌՄԽՋ.-1796) թվին սով եւ մահն եկն ի վերայ մեր. Կորեկ ալիւրի լիտրն (18 ֆունտ) Թ. ապասի դժուար գտանելով, վասն որոյ ուրացեալ այր զկին եւ կին զայր իւր, հայր ի որդոյ եւ որդի ի հօրէ, մայր ի դստերէ եւ դուստր ի մօրէ իւրմէ բաժանեալ. ոչ գտանէինք հանգիստ ոտից մերոց. զի կերակուր մեր էր կաղինն եւ կաղնի քլէպ (կեղեւն) եւ մեր առեալ զայս սուրբ աւետարանս մեծաւ զգուշութեամբ եւ բազում տառապանօք, շնորհօք սուրբ Հոգոյն հասուցաք մինչեւ ցայսօր: Իսկ ի թվին մերոյ ՌՄԿ. էր, եկն ի վերայ մեր ժանտամահն. առաջ Ռուսի մէջն անկաւ, շատ կոտորեց, յետոյ թուրք ազգի մէջն անկաւ, յետոյ Քիլիսա-Քեանդ[2] եւ Նորաշէնն[3] անկաւ, յետոյ սար կեղօրայք եւ Բանանց կիւղս անողորմ կոտորեց. շատ մարդ առանց կին մնաց, եւ շատ կին՝ առանց այր, շատ՝ առանց որդի եւ շատն՝ առանց դուստր:

Բազումք առանց քահանայի թաղեցին, բազում տունք աւեր մնացին: Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց: Սոյն ժամանակ Դաւիթ վարդապետն սաղն (կենդանի մնացածները) վեր առաւ գնաց Քիճիք Բանանց[4] , որ է Դամպլաձոր, որ կնաց կումերն. որն կնաց պաղերն, փոքր-ինչ հանդարտեաց ցաւն. վա՛յ մեզ, իմացանք, թէ պրծանք ցաւէն. աստուածասաստ բար-

1 Սխալ է երեւում «*մարտի ԻԱ.*» ամսաթիւս, քանզի երբ աւագ հինգշաբթի օրն լինի ապրիլ. 15, Բշ (Մեծի պահոց) Ա. օրն եղած կը լինի մարտի Ա. վասն որոյ գրած է գուցէ մարտի ՝ի Ա:
2 Մինչեւ ցայսօր Քիլիսա-Քեանդ է կոչւում Գանձակի Հայոց Ս. Յովհաննէս եկեղեցու թաղն:
3 Նոյն քաղաքի հայոց հիւսիսային թաղն:
4 Փոքր-Բանանց այժմ աւերակ գիւղն կայ՝ Բանանց գիւղից վերեւ Արութիւնի վտակի եւ Քարհատի առուի խառնուրդի հարաւային լանջի վերայ:

կութիւնն հասեալ, գազան մի աւերեալ եւ բազում վնաս արար եւ քանի մի անձինք չարաչար մեռան... սոյն ժամանակիս նորոգել տուին սուրբ աւետարանս յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց, մեր պապ Մելիք-Մատթէոսին... գրեալ 'ի մատեանս ՌՄԿԳ. 'ի տիրապահ գիւղս Բանանց ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եկեղեցոյն: ՌՄԾԲ.ին ռուսն եկաւ Կանջու վերայ, մէկ ամիս նստաւ. մէկ սհաթումն առաւ. սհաթուկէս ԳՌ. (3000) մարդ կոտորեց»:

ԺԱ. Աւետարան՝ թղթեայ, փոքրադիր, անյիշատակարան, անյայտ գրողի անունն եւ ամենաստոր չորս աւետարանչաց պատկերներն եւ ամենայն ինչ:

ԺԲ. Աւետարան՝ թղթեայ, փոքրադիր, ամենայն մասամբ ստոր: Յիշատակարանից. «Գրեցաւ սուրբ աւետարանս ի դառն ժամանակիս 'ի լաւ ընտիր օրինակէ 'ի յերկիր Վերին Ջակամ 'ի Ղարամուրատի Հարանց անապատիս ձեռամբ մեղօք զառածեալ Աւետիս աբեղայի, որ եմ յերկրէն Տաւուշու 'ի գեղջէն Քամալու հ. ի թուականիս Հայոց ՌՃԻԸ.»:

ԺԳ. Աւետարան՝ փոքրադիր, գրուած գեղեցիկ թղթի վերայ, որ ունի չորս աւետարանչաց պատկերներ: Յիշատակարանից. «Աւրհնեալ է Աստուած. թվին ՌՃԺԹ. յուլիսի Ե. աւարտ եղաւ»: «Արդ, ես Կարմիր Ծատուրենց Ջուղայեցի մեղապարտ Աւետիքս եկի ի քաղաքն Տփխիս... զսուրբ աւետարանս ետու յիշատակ ի դուռն Բեդղահեմու Սուրբ Աստուածածնին թվին ՌՃԻՋ.»: Ապա գրուած է այլ դրչից. «Գրեցաւ թուականիս ՌՄԽԹ. յունվարի Ե. որ ես Սարգիսս Կանջայու ի գիւղն որ կոչի Գետաշէն, ի ժամանակին Ջաւատ խանն էր»: Աւետարանիս սկզբում յայտնուած է, որ նոյն գետաշէնցին յիշատակ տուած է աւետարանս Բանանց եկեղեցուն:

Գիւղումս կայ տղայոց միդասեան ուսումնարան, ուր ուսանում են 55 աշակերտ. թոշակատու 48, ձրիավարժ 7, միամեայ ռոճիկ ուսուցչի՝ 350 ռուբլի:

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԱՆԱՊԱՏ

Շինուած է Բանանց գիւղին հարաւային հանդէպ, Արութիւն վտակի աջ կողմում եւ կոլոբած առուակի աջ ափի բարձրութեան վերայ: Անապատս, որի տեղն գեղեցիկ հարթակ է, կառուցեալ է մի կամարի վերայ անտաշ քարով, որ ունի միայն մի փոքր խորան հիւսիսային կողմում եւ մի աւագ, չորս նեղ լուսամուտ, երկու դուռն հարաւից եւ արեւմուտքից. 15 մետր 55 սանթիմ երկարութիւն, 9 մետր 25 սանթիմ լայնութիւն բացի դաւթից: Հարկ է յայտնել, որ ճաքած է գագաթնագծի ուղղութեամբ երկար:

Արեւմտեան դրան վերայ. «Շինեց սուրբ եկեղեցիս Միլխաւճայ Ազիզն թվ. ՌՀԹ.»: «Սուրբ խաչս Ովանէսին»: Նոյն դրան հիւսիսային սեմի վերայ . «Սուրբ խաչս Փարին, Շահումին», «Սուրբ խաչս բարեխաւս Հռոմսիմին ՌՀԸ.»:

Ունի եւ մի փոքր դաւիթ եւ զանգատուն հարաւային դրան վերայ, որի մօտ՝ մի տապանաքարի վերայ. «Այս է տապան Տէրունց Յարութիւնի որդի Գաբրիէլ՝ եպիսկոպոսին, 60 ամ վանահայր էր սա անապատիս, 96 ամեայ էր, որ փոխեցաւ առ Քրիստոս 13.02.1831 ՌՄՁ.»: Զանգատան գետնայարկի հիւսիսային ոտքի հարաւահայեաց ճակատին. «Ես Պաղտասարի որդի Մահտեսի Ներսէսս եւ Օսէփս տվինք սուրբ անապատիս ա. թուման վախմ. սոքա տվին մեզ տարեն դ. ժամ. եթէ ոք խափանի, պարտական լինի առաջի ատենին Քրիստոսի. թվ. ՌՃԽԴ.»: Զանգակին վերայ. «Յիշատակ է Ապովի որդի Խոճայ Ղազարին ի դուռն Բանանցայ սուրբ Անապատին թվ. ՌՃԺՋ.»: Անապատիս գլխին, արեւելեան կողմի գագաթնագծի վերայ դրուած է մի քառակուսի քար, որի չորս երեսին քանդակուած է չորս խաչ եւ մէն մի խաչի տակ մի-մի անուն, որք երեւի թէ չորս անձինք կամ չորս եղբարք եղած են նուիրաբերողներն. ահա «Սուրբ խաչս բարեխօս տէր Եղիշէին, Անտունին, Գրիգորին եւ Եղիսէին»: Իսկ արեւմտեան գագաթնագծի վերայ եղածին դրուած է միայն «Տէր Եղիա»:

Անապատիս արեւելեան կողմում, շրջապարսպի ներսում կան ինն թաղակապ խուցեր, որք ցարդ մնում են անվնաս, եւ անապատիս կալն: Իսկ արեւմտեան հանդէպ՝ ջրաձորի ձախ ափի բարձրութեան վերայ, կայ մի աւերակ մատուռ, որի մէջ դրուած են ութ հնաձեւ քարեայ խաչեր:

Անապատս ունի ընկուզի շատ ծառ իւր հարաւային ձորում: Ամայի է անապատս եւ անմարդաբնակ:

Երկու կամուրջ. յորոց մին շինուած է քարուկիր եւ գեղեցիկ Արութիւն վտակի վերայ եւ միւսն՝ նորա օժանդակին, որ հոսում է Անապատին արեւմտեան ձորով:

Փոքր Բանանց կամ Դամբլաձոր. Գտնւում է Մեծ-Բանանց գիւղից մղոնաչափ վերեւ՝ նոյն վտակի աջ կողմի բարձրութեան վերայ, ուր կայ աւերակ գիւղատեղի եւ կիսաւեր եկեղեցի, որի աւազանին վերայ. «Մեհրի Ճա՛ն, տարան ա՛....»: Մի կիսատ խաչարձանի վերայ. «Ես Դաւթիս կանգնեցի..»:

Նահատակ. Աւերակներից ներքեւ՝ ձորի մէջ, կայ մի մեծ քար, որի տակից բղխում է յորդ աղբիւր: Քարիս արեւմտահայեաց երեսին շինուած է հնուց մի խաչ, որ է ուխտատեղի: Ամէն տարի շրջակայ գիւղերից խունւում է այստեղ մեծ բազմութիւն աւագ չորեքշաբթի օրում, մանաւանդ բորոտութեամբ վարակուածներ, որք, լողանալով աղբիւրումս, բժշկւում են:

Ճգնաւորի տեղ. Նահատակիս հանդէպ՝ ձորի ձախ ափումն է մի քարայր, որի մէջ, ասում են, երկար ժամանակ ճգնած է ոմն ճգնազգեաց ճգնաւոր:

Թագաւորաշէն կամուրջ. Ջրաձորիս ստորոտում, Արութիւն վտակի վերայ կայ մի քարուկիր եւ հնաշէն կամուրջ, որի մասին ասում են, թէ շինած է Կիւրիկէ թագաւորն: Մի քանի քայլ վերեւ խաչակապ գիւղացիք շինած են այլ՝ նոր եւ գեղեցիկ կամուրջ, որի երկարութիւնն է 12 մետր, լայնութիւնն՝ 4 մետր 50 սանթիմ:

Ժ. ՔԱՐՀԱՏ ԳԻՒՂ. (Դաշքեասան). Հիմնուած է մի խոր ձորում, որի արեւելեան, հարաւային եւ արեւմտեան կողմերն պատած են բարձրագոյն սարեր. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, ապառաժուտ եւ խիստ սակաւ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն ըստ Մեծ-Բանանց, անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 85, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, փայտաշէն, քահանայ՝ մի: Ծուխ 76, ար. 486, իգ. 393, ար. ծն. 20, իգ. 14 պսակ 9, ար. ննջ. 7, իգ. 5:

Երկաթահանք, պղնձահանք եւ քարահանք (41)

Արդէն խօսած ենք հանքերիս մասին իւր տեղումն, իսկ այստեղ միայն ասում ենք ջրաձորիս աջ ու ձախ կողմերն լի են երկաթի, պողպատի, պղնձի եւ զանազան պատուական քարի հանքեր: Մեծ-Բանանց բնակիչներն շարունակ գործ ածած են երկաթահանքերս. մինչեւ անտառների վերայ տուրք կապելն, քանզի անմաքս եղած են անտառների փայտերն: Հալած եւ շինած են գուլթանի խոփ, ձեւիչ, ճամբարակ, արօրի խոփ, եռոտանի եւ առատ երկաթ: Բայց անտառների վերայ տուրք դնելուց յետոյ այլեւս խափանած են գործածութիւնը. սակայն մեծ վնասներով:

Խաչ-աղբիւր (Խաչ-Բուլաղ): Աւերակ գիւղ հայոց, որ գտնւում է Քարհատի հարաւային կողմում: Աւերակիս մէջ կայ մի նշանաւոր եկեղեցի[1] շինուած սրբատաշ քարով. 4 սիւների վերայ, որ ունի «ՌՃԾԹ.» թուականը: Իսկ փոքր-ինչ հեռի է հանգստարան: Այժմ մահմեդականք են բնակում գիւղումս, ուր կայ շուկայ եւ առուծախ է լինում՝ մահմեդականներն ձմեռանոցից ամառանոց չուելուց յետոյ: Խաչաղբիւրիցս շատ հեռի չեն պատուական ամառանոցներն:

ԺԱ. ԿԻՐԱՆՑ ԳԻՒՂ. Հիմնուած է Քարհատի հիւսիսարեւմտեան կողմում, Արութիւն վտակի հիւսիսային կողմի վերայ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ սեփական. ամենայն ինչ՝ նոյն, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, փայտաշէն. քահանան գալիս է Խաչակապ գիւղից: Ծուխ 44, ար. 224, իգ. 223. ար. ծն. 11, իգ. 11, պսակ 4, ար. ննջ. 3, իգ. 3:

Կանգնեալ խաչ. Գիւղիս մօտ կայ այս անուամբ մի փոքր մատուռ, որի խորանի տակ ամփոփուած է ոմն պատուական անձի սուրբ մարմինն, որի մասին աւանդաբար ասում են, թէ. «Գարդման գաւառիս իշխող Խուրս իշխանի գերեզմանն է, որին պատկանում էին ամբողջ հան-

1 Եկեղեցուցս փոքր-ինչ ներքեւից բղխում է մի յորդառատ աղբիւր, ունի մի խաչաձեւ աւազան, որից առած է Խաչաղբիւր անունը:

քերս»: Մեծ ուխտատեղի է այս: Մատրանս մօտ կայ եւ մի փոքր վանք՝ մնացեալ խիստ հնուց. բայց այժմ՝ վերնամասն փայտաշէն:

ԺԲ. ԽԱՉԱԿԱՊ ԳԻՒՂ. Հիմնուած է Կիրանցի հիւսիսային կողմում, մի առուակի ձախ կողմի վերայ: Գիւղս եւս շրջապատուած է լեռներով. բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի. ապառաժոտ եւ նուազ արդիւնաբեր, ամենայն ինչ՝ նոյն, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին. կամարակապ չորս սիւների վերայ, որ ունի մի փոքր զանգատուն, 18 մետր 90 սանթիմ երկարութիւն, 12 մետր 28 սանթիմ լայնութիւն:

Արձանագրութիւն. «Արդեամբ Խաչակապայ ժողովրդոց շինեցաւ 1650 ամի, Նորոգեցաւ 1864 ամի»: Դրան շուրջն. «Եկայք առ իս ամենայն...»:

Արձանագրութիւն զանգատան. «Արդեամբ շինեցաւ զանգակատունս 1864 ամի Վերտի Յարութիւնեան Տռուզեանց»: Քահանայ՝ մի:

Գիւղիս ստորոտում կայ մի անտաշ քարով շինուած մատուռ, որի մէջ ամփոփուած է ոմն սուրբ անձի մարմինն: Մատուռս կոչւում է Խաչ-Քցի. գերեզմանիս վերայ վիճակ են ձգում երիտասարդներն եւ օրիորդներն: Ահա վիճակարկութիւնս է Խաչ-Քցի կոչունելու պատճառն:

Համանման մատուռ, միջումն՝ ճգնաւորի գերեզման, Միրանաւոր անուանեալ. կայ գիւղիս միջում: Երկու մատուռներս եւս ուխտատեղի են, երկոցունց ծածքն՝ փայտեայ եւ երկու ամփոփելների անուններն եւ անձնաւորութիւններն՝ անյայտ: Ծուխ 104, ար. 699, իգ. 631, ար. ծն. 30, իգ. 27, պսակ 20, ար. ննջ. 7, իգ. 5:

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՆՔ (41)

Հիմնուած է գիւղիս հիւսիսային կողմում, ոչ այնքան հեռի, մի գեղեցիկ. տեսարանաւոր եւ հարաւահայեաց սարահարթի վերայ: Ունի խաչաձեւ շինութիւն, երկու փոքր եւ մի աւագ խորան, մի կաթուղիկէ, տասն լուսամուտ, երկու խորհրդարան, մի դուռն, չափաւոր բարձրութիւն, 11 մետր երկարութիւն, 10 մետր 25 սանթիմ լայնութիւն եւ հիմնարկութեան սոյն թուականը ՆԼԸ. (989): Վանքս ունի եւ գաւիթ՝ կառուցեալ երկու խաչաձեւ կամարների վերայ, երկարութեամբ 7 մետր 75 սանթիմ, լայնութեամբ 6 մետր 60 սանթիմ: «Գաւիթս այս կառուցաւ ի Վանահայրութեան Սամուէլ եպիսկոպոսի 1800 ամի»: Ունի եւ զանգատուն «Զանգակատունս կառոյց Գանձակեցի Պօղոս Ամիրխանեանց ի 1856 ամի»: Գաւթումս ամփոփուած են սուրբ տաճարիս ծառայող եպիսկոպոսների եւ վարդապետների մարմիններն. ինչպէս են Սամուէլ եպիս. Դատեանց, միւս Սամուէլ եպս., Եփրեմ եւ Խաչատուր վարդապետների եւն.: Վանքումս կայ մեծադիր, մագաղաթեայ եւ ընտիր ձեռագիր մի աւետարան, ամբողջապէս գրուած գլխագրերով: Ունի Յիսուս Քրիստոսի ծննդեան, մկրտութեան, յարութեան, ընթրեաց, աւետեաց, դժոխքի աւերման, Աստուածածնայ ննջման եւ չորս աւետարանչաց ընտիր պատկերներն: Ընտրելագոյն են պատկերներն, նկարներն, նախշերն, ծաղիկներն եւ թռչնագրերն. հիանալի են առհասարակ բոլոր գծագրութիւններն, անկեղծ՝ ներկեր. վայելուչ՝ գոյներն եւ ամենաընտիր՝ ոսկեզօծն: Վերջապէս մի մագնիսական զօրութիւն, որ իրեն է քաշում այցելուաց ուշադրութիւնը, գեղարուեստի այն նրբագործութիւնն է, որի նմանն հազուագիւտ է հին ձեռագրաց մէջ: Սակայն հարկ է յայտնել, որ պահպանուած չէ խնամքով: Սկզբում մանր գրերով բացատրուած է համեմատութեանց գործածութեան կերպի եղանակն եւ տուած գեղեցիկ տեղեկութիւններ չորս աւետարանչաց մասին:

Գրուած է Մատթէոսի վերջում. «Յանուն առատապարգեւին Աստուծոյ, որի միշտ ներգործէ յարարածս բարիս քաղցրութեան կամաց իւրոց: Արդ, որպէս յամենայն դարու, նոյնպէս եւ ի մերս նուազեալ ժամանակիս յարոյց զքրիստոսասէր եւ զփառաւոր պարոնն զաւրհնեալն ի կանայս Ասփայ դուստր Տարսայիճին տեառն Սիւնեաց յազգէ Ուրպէլեանց, որ էր ամուսին Մեծ եւ փառաւոր իշխանաց իշխանին պարոն Գրիգորին: Սա ամենայն բարեպաշտութեամբ զարդարեալ, զարդարեաց զանազան սպասուք եւ շինուածիւք զեկեղեցիս Հայաստանեայց, ստացաւ եւ սուրբ աւետարանս յարդար ընչից իւրոց եւ ընծայեաց սուրբ ուխտն Խադարի (Խաթրաց) որ է գերեզմանատուն մեծ իշխանացն ազգին Դոփեանց եւ ինքն կարճաւրեայ կենաւք փոխի մահուամբ յաշխարհէս առ Քրիստոս եւ դնի ի Դամբանի ի նոյն ի վերասացեալ սուրբ ուխտն. իսկ ըստ մարմնոյ գլուխ նորին եւ այր մեծ իշխան Գրիգոր զարդարեալ պճնէ զսա ոսկւով եւ արծաթով ի յիշատակ հոգւոյ սուրբ ամուսնոյն իւրոյ Ասփային եւ յերկարութիւն կենաց իւր եւ քրիստոսընծայ զաւակաց իւրոց, որոց յիշատակն նոցա եղիցի աւրհնութեամբ»:

Մարկոսի վերջում. «Զմեղապարտ գծիչս զՏիրացու յիշեցէք ի Տէր»:

Ղուկասի վերջում. «Զմեծ եւ զամենաւրհնեալ պարոնաց պարոն զԳրիգոր որդի Դոփին եւ զամենագովելի զբարեպաշտ ամուսին իւր զպարոն Ասփայն զստացողք եւ զարդարիչք սուրբ աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս»:

Յիշատակարանից. «Ի ժամանակս եւ ի դարս աւուրց տիեզերակալութեան եւ արքայութեան բոլոր աշխարհաց ազգին Նետողաց, որ տիրէ ի ծովէն Պոնտոսի մինչեւ ցծովն Կազբից եւ յԵփրատ գետոյ մինչեւ յանկոյս լերանցն Կովկասու՝ որոց գլուխ եւ ինքնակալ Խանն աշխարհակալ Խարպանդայ կոչեցեալ ի թվ. Հայոց ՉԿԱ.: Յայսմ ժամանակի ծագեցաւ ոմն մեծ եւ երեւելի տոհմային պայազատութեամբ ի ցեղէ վեհից, ի զարմէ դիւցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ գովելեաց Գրիգոր մեծ իշխան Հայոց, տէր եւ պարոն Փոքր Սիւնեաց, Հանդարբերդոյ եւ Ականայ եւ Բարձր (Մռաւ եւ Գնդամեան մեծ լեռնաշղթան) ծովակին Գեղամայ, Սոթից մինչեւ ի Շաղաւագայ, ամուսնացեալ ընդ դստեր Տարսայիճ իշխանին ընդ ամենաւրհնեալ պարկեշտ տիկնոջն Ասփայի: Ծնանի՝ ի նմանէ ուստերս եւ դստերս. իսկ զմինն, որում անուն էր Սարգիս, նուիրէ Քրիստոսի ի ստնդեայ հասակին, որ արժանաւորութեամբ ի կոչմանէ Հոգւոյն էանց ընդ ամենայն աստիճանս քահանայութեան՝ հասեալ ի պատիւ եպիսկոպոսութեան Խաչենոյ, ընդ մարմնական տէրութեան. զոր ունէր ի հարանց ստացեալ, ընգալաւ եւ զհոգեւոր պետութիւն: Արդ յայսմ ամի, որ էր թիւս ՉԿ. փոխեցաւ յաշխարհէս Ասփայն առ Քրիստոս եւ եդաւ ի շիրմի ի սուրբ ուխտն Խադարի վանս վասն որոյ եւ մեծ Պարոն Գրիգոր նուիրէ գերեզմանի նորա ընծայս յոլով, գեղորայս, այգիս, եւ անդաստանս եւ զարդարէ զսուրբ ուխտն զանազան սպասուք եւ հանդերձիք, ընդ որս պճնեալ շքեղացոյց եւ զսուրբ աւետարանս[1] ոսկենկար կազմածով եւ շնորհեաց գերեզմանի նորա եւ իւր նախնեացն յիշատակ, որում բարձաւղք եւ ընթերցողք սուրբ աւետարանիս յիշեցէք զԱսփայն ի Քրիստոս եւ դուք յիշեալ լիջիք ի Տեառնէ»:

Ապա յականէ յանուանէ յիշուած են այն գաւառների եւ բերդերի անուններն, որք սեփական ժառանգութիւն են Գրիգոր իշխանիս Դոփեանց:

«Եւ գաւառք մեր յանուանէ այս է Սոթ, Գլուխ, եւ Բերդաձոր եւ Ճոխանց, Հոսաբակս, Ատրենիս, Կալեր, Ուռեաց Փոր եւ Խորուագետ, Դվալանց, Էրքն Մափռելանց եւ այլ իւրեանց միջոց մազրովն ի մեր նախնեաց մնացեալ հայրենիքս է իւրեանց չորս սահմաններովն ստոյգ եւ ճշմարիտ գրեալ ի յաւետարանիս»:

Վանքս ունի ամուր շրջապարիսպ, ութ խուց, պարտէզ, մեղուանոց, կամուրջներ եւ պատուական աղբիւր: Իմ շրջած եւ տեսած բոլոր վանքերից պայծառ է վանքս: Նորոգուած է վանքս, գաւիթն, շրջապարիսպն, խուցերն, եւ նորինորոյ շինուած կամուրջներն: Այս բոլոր նորոգութիւնները, պայծառութիւնը եւ վերակենդանութիւնը պարտական ենք Գանձակեցի մեծ. Ներսէս-բէկ Աբրահամեան Տէր-Ներսիսեանցին[2]:

ԺԳ. ՀԱՐՑՀԱՆԳԻՍՏ ԳԻՒՂ. (Զովդառ) Հիմնուած Մլզնաբերդ կոչուած սարի հիւսիսարեւմտեան կողմում, որ Թարգմանչաց անապատի հիւսիսային կողմումն է, մի բարձր եւ տեսարանաւոր սարահարթի վերայ, որի ետեւ կայ մի լեռ[3], բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի, անջըր-

1 Այժմ զարդարանք չկայ աւետարանիս վերայ:
2 Զկարողացանք իմանալ՝ քանի՞ օրավար է վանքիս հողն:
3 Սարիս վերայ կան կուապաշտ եւ քրիստոնեայ դարերից մնացած շատ հանգիստներ. գուցէ այս պատճառաւ կոչուած է Հարց-հանգիստ:

դի, լեռնային, բայց հացաւէտ. տեղական բերքերն՝ նոյն, գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն. սքանչելի՝ տեսարանն, եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, կառուցեալ չորս սիւների վերայ, որ ունի իւր հարաւային կողմում գաւիթ եւ զանգատուն. քահանան գալիս է Խաչակապ գիւղից:

Ծուխ 94, ար. 246, իգ. 226, ար. ծն. 22, իգ. 27, պսակ 15, ար. ննջ. 12, իգ. 15:

Եկեղեցումս կայ մի սպիտակ, փոքր եւ հին խաչարձան, որ բերուած է Մլզնաբերդից, որ զարմացնում է այցելուները իւր գեղարուեստի նրբագործ քանդակներով. որ ունի. «Թվ. ՈԴ. Անուամբն Աստուծոյ ես Մարգարիտ դուստր Ուխտիկայ կանգնեցի զսուրբ նշանս ի փրկութիւն հոգւոյն Զարդմբերին եւ Զարդագունին, Մխիթարայ եւ Կանանին. որք յաղաւթս յիշէք եւ զԱտոմ, որ գործող էր խաչիս»:

Կայ եւ մի ձեռագիր աւետարան՝ մագաղաթեայ, միջակ գիրքով. որ ունի չորս աւետարանչաց պատկերներ: Ընտիր է մագաղաթն, գեղեցիկ՝ պատկերներն, ծաղիկներն. նախշերն եւ թըռչնագրերն: Յիշատակարանից. «Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեանս Հայոց ՅՈՀ. ի մայրաքաղաքս Տարսոն, յորում ամենայն ոք տատանէր... յետ մահուն աստուածասէր թագաւորին մերոյ Լեւոնի. վշտատես ազգս հայոց վշտանայր. չարն տեղի տայր, որոշեցան ոմանք ի սուրբ ուխտէն եւ ի միմեանց միաբանութենէ, եւ որպէս է սովորութիւն ազգիս՝ ամենայն ոք զինքն յառաջ կոչէր եւ չհաւանեալ միմեանց՝ լինէր արեան ճապաղիս ի բազում տեղիս. եւ գաւառք եւ գեղք քանդէին եւ եկեղեցիք աւերէին: Ի յայսմ դառն եւ ի շփոթման ժամանակիս աւարտեցի զգիրս սուրբ: Աղաչեմ զամենեսեան, որք կարդայք եւ լուսաւորիք յաստուածային բանիցս. յիշեսջիք... զնախասացեալ տիկին Առիւծ եւ զբարի ծնողն իւր զՇուշան Թագուհի Լեւոն թագաւորին... եւ զմեղապարտ գրիչս զԳրիգոր սարկաւագ»: Ունի նաեւ այլ յիշատակարաններ, որք գըրուած են հետզհետէ:

Ա. Վերջին երեսում ՁԽԹ. թվին.

Բ. ,, ,, երկրորդ անգամ ստացած է Շաքեցի Զալապի խոջէն ՊԶԴ. թվին.

Գ. Սկզբում ՌԽԸ. թվին.

Դ. ,, ՌԾԵ. ,, :

ՄԼԶՆԱԲԵՐԴ ՎԱՆՔ (Մածնաբերդ վանք)

Հարցհանգիստ գիւղիս հարաւ-արեւելեան հանդէպ, ոչ այնքան հեռի, արձանացած է մի սար, որ բոլորովին առանձնացած է իւր չորս կողմերից եւ բարձրացած՝ ձուաձեւ: Սարիս կատարն 12 կալաչափ հարթակ է, որի գրեթէ մէջտեղում, նախկին վանքի տեղում, շինուած է երկու երկաթակապ կամարների վերայ մի փոքր եկեղեցի, որ ունի մի դուռն, երկու լուսամուտ, մի զանգատուն, 12 մետր 12 սանթիմ երկարութիւն, 6 մետր 72 սանթիմ լայնութիւն: Դռնագլխին. «Հնադարեան ուխտատեղիս յանուն Սուրբ Սարգսի, որ է Մլզնաբերդ, հիմնովին նորոգեց Գանձակեցի Սողոմօն Յար. Նալչագաիեանցն ծախիւք իւրովք ի յիշատակ իւր կնոջն Բալախանումի, որդւոյն Լեւոնի եւ համայն ննջեցելոց իւրոց ՝ի 1891 ՌՅԽ. ամի»: Վանքաբարձ սարիս գագաթի եզերքներով պարսպուած է եղել վաղուց ամրագին պատերով իբրեւ անմերձենալի ամրոց, որ այժմ կիսաւեր է: Պարսպիս ներսում կան շատ դերեզմաններ եւ միաբանութեան խուցերի մեծ աւերակներ (միայն կանգուն է երկու սենեակ): Հանգստարանս ծածկուած է կաղնի, տխկի, ճըռ տանձի եւ այլ ծառերով:

Վսկաթել (Ոսկեթել) մատուռ. Գտնւում է գիւղիս հիւսիսային անդնդախոր ձորում, որի միջով հոսում է Հարցհանգիստ առուակն: Փոքրիկ մատուռ է, ձեղունն՝ փայտաշէն, որի մասին ոչինչ չկայ գրաւոր. միայն աւանդութեամբ ասում են, թէ. «Մի Վսկաթել կոյս աղջիկ նահատակուած է այստեղ»:

Մատրանս ստորոտից բղխում է մի նշանաւոր աղբիւր:

Բախշիկ աւերակ. Ընդարձակ աւերակ գիւղ, մեծ եւ հին հանգստարան եւ եկեղեցի, որ շինուած է վեց սիւների վերայ, որի երկարութիւնն է 20 մետր 2 սանթ., եւ որի գլուխն խոնարհուած է այժմ: Աւերակս գտնւում է Հարցհանգիստի հիւսիսային հանդէպ, խորանդունդ ձորի ձախ կողմի բարձրութեան վերայ:

Պոկեսբերք (Պոկի սուրբ Գէորգ). Կայ աւերակիս արեւելեան հանդէպ կանգնած մի սրածայր սարի գլխին մի խաչարձան, որ ուխտատեղի է: Վաղուց եղած է այստեղ անապատի նման մի մատուռ, որ աւերուած է յետոյ: Ահա այս է Պոկի սուրբ Գէորգն:

ԺԴ. ՆԻԻԿՁԱՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Սուրբ Գէորգ սարիս հիւսիսային եւ Շամքոր գետակի հարաւային կողմի սարահարթի արեւելահայեաց լանջի վերայ. բնակիչք Ցիցիանովի ժամանակ գաղթած են Երեւաննան նահանգի Ճաթղռան, Ճոբվիզ եւ Քանաքեռ գիւղերից. հողն՝ արքունի, անջրդի, սակայն հացաւէտ, տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90-100. եկեղեցին՝ Սուրբ Գէորգ, հիմնուած մի կամարի վերայ, որ ունի միայն մի փոքր խորան հիւսիսային կողմում եւ մի աւագ, 18 մետր 20 սանթիմ երկարութիւն, 9 մետր 5 սանթիմ լայնութիւն: Շինուած է գիւղիս նախկին բնակիչներից: Քահանայ՝ մի: Ծուխ 70, ար. 360, իգ. 323, ար. ծն. 17, իգ. 13, պսակ 9, ար. ննջ. 2, իգ. 2:

Գիւղիս հին հանգստարանում, որ մի քանի քայլ հեռի է եկեղեցուց, կայ մի հին մատուռ՝ շինուած անտաշ քարով, ծածքն՝ փայտաշէն, քարեայ հին խաչերով զարդարեալ բեմի ժողովրդահայեաց երեսն: Մատրանս մօտ՝ մի շիրմաքարի վերայ. «Այս է հանգիստ Գրիգորոյ թվիս ՁԽԷ.»:

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ ՆԻԿՁԱՐԻ ՄՕՏ

Հիմնուած է գիւղիս հարաւ-արեւմտեան կողմում՝ մի լանջի վերայ, որ նայում է Շամքոր գետակի ձորին, այժմ աւերակ է եւ մնում է միայն խորանի կամարն, վէմ եւ սեղան քարերն: Ունի միայն մի փոքր խորան՝ աւագ խորանի աջ կողմում, մի փոքր գաւիթ, որի ծեփի վերայ գրուած է. «Ես Դաւիթ եպիսկոպոս Նորոգեցի զեկեղեցիս այս թվ. ՌՃԻԸ.»: Եպիսկոպոսիս մարմինն ամփոփուած է խորանի տակ:

Աւերակ դրութեան մէջ են եւ վանուցս շրջապարիսպն եւ միաբանից խուցերն, բայց մնում է հանգստարանն՝ վանուցս հիւսիսային կողմում՝ մի բլրակի վերայ:

ԾԾԵՐ

Ամենափրկչիցս փոքր-ինչ ներքեւ՝ ձորի մէջ կայ մի ապառաժ քերծ, որի ստորոտով վազում է մի առուակ: Քերծիս ստորին մասն ձեւացած է ինչպէս քարայր, որի առաստաղից կախուած են (բնական գոյացած են) ամենատեսակ ծծեր-մարդոյ, ոչխարի, խոզի եւն.: Ծծերի ծայրերից կաթկըթում են ջրեր եւ թափւում աւազանին մէջ, որ տակին է: Ջրիցս խմում են կաթն պակաս մայրեր եւ աւելանում է կաթն. հաւատքով լողանում են աւազանիս մէջ եւ բժշկւում տեսակ-տեսակ ախտաժէտներ:

Կարմիր եկեղեցի (կամ Հոռոմաշէն) (42)

Շամքոր գետակի աջ ափի մօտ ճանապարհի վերայ հիմնուած է տաճարս, որ փոքր, խաչաձեւ, բարձրաշէն եւ ամբողջապէս սրբատաշ կարմիր քարով շինուած է, վասն որոյ կոչւում է Կարմիր եկեղեցի: Տաճարս[1] ունի գեղեցիկ եւ սրածայր կաթուղիկէ, միայն աւագ խորան, որի հարաւային անկիւնում՝ մի փոքր եւ մութ խորան: Աւելի վանքի ձեւ ունի տաճարս, քան թէ եկեղեցու, ունի եւ գաւիթ, որի մէջ ամփոփուած են շատ ննջեցեալներ, որոց քարերն չունին արձանագրութիւն. ունի եւ բաւական խուցեր միաբանից համար եւ հանգստարան եւ քարուկիր շրջապարիսպ, որք կիսաւեր են եւ ենթարկուած քայքայման վիճակի: Վանքս իւր հիւսիսային

1 Կոչւում է եւ Դասան:

արտաքին կողմում, սալկախից ներքեւ ունեցած է հայերէն երկար արձանագրութիւն, որի մէջ յականէ յանուանէ նշանակուած է եղել վանուցս անշարժ կալուածներն: Մի քանի տարիներ առաջ Գանձակեցի ոմն անազնիւ հայ ջարդում է արձանագրութիւն կրող քարերը եւ ննդեսութեամբ իւրացնում կալուածները:

ԺԵ. ԿԻԻԼԱՄԲԻՒՐ ՇԷՆ. Մի քանի գերդաստան հատուածեալ Նիւկզար գիւղից եկած եւ բնակութիւն հաստատած են շինումս, որ կայ Կարմիր եկեղեցուց վերեւ, Շամքոր գետակի աջ ափի մօտ: Ծուխերն եւ ամէն ինչ հաշուած է Նիւկզարի վերայ. ունին գեղեցիկ այգիներ:

Գետակիս աջ ու ձախ հովտում կան աւերակ գիւղեր եւ հանգստարաններ:

ԺԶ. ՆՈՐ-ՓԻՓ ԱԻԱՆ. Հիմնուած է Շամքոր գետակի աջ կողմում, մի լայնագոգ սարի արեւմտահայեաց լանջի վերայ: Գիւղն շինուած է երկու սեռի եւ երկու ձորակի վերայ Կիւլամբիւրից շատ վերեւ, բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, լեռնային, անջրդի եւ միջակ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն-աւելի ոչխար, տաւար, գոմէշ, խոզ, հիանալի՝ տեսարանն, օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 100. եկեղեցին՝ Սուրբ Ստեփաննոս, քարուկիր, կամարակապ վեց սիւների վերայ, ունի մի կաթուղիկէ դասի վերայ եւ մի փոքր զանգատուն եկեղեցուս արեւմտեան ծայրում տանեաց վերայ. 22 մետր երկարութիւն, 12 լայնութիւն, քարեայ խաչկալ եւ սոյն արձանագրութիւնը. «1849 ՌՄՂԸ. թվին»:

Քահանայ՝ 2: Ծուխ 301, ար. 1641, իգ. 1407, ար. ծն 72, իգ. 58, պսակ 35, ար. ննջ. 15, իգ. 13:

Եկեղեցումս կան հետեւեալ ձեռագիրներն.

Ա. Աւետարան՝ մագաղաթեայ, միջակ գիրքով, առանց պատկերի, նկարի, նախշի եւ ծաղկի:

Յիշատակարանից. «Եւ արդ ես անարժան գրիչս Աթանաս զծոյլս 'ի բարեաց, որ անարժան ձեռաւքս գրեցի զՍուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՋԼԷ. 'ի սուրբ ուխտս Աւծոպոյ[1] 'ի դուռն Սուրբ Աստուածածնին. յիշատակ Գասպարին եւ ծնողաց իւրոց»:

Բ. Աւետարան՝ թղթեայ, պատկերազարդ, բայց բոլորովին անճաշակ, անարուեստ եւ անախորժ գոյներով: Յիշատակարանից. «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս 'ի գեաւղս, որ կոչի Արտամէտ ձեռամբ... Կարապետ երիցու ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Ստեփաննոս Նախավկային եւ Ամենափրկչին 'ի դառն եւ 'ի նեղ ժամանակիս, որ կամք գերի 'ի ձեռս այլազգեաց, որ պիղծ, ժանդ եւ արեանարբուն Կարապետ Նեռին եւ որդին կորստեան Սարտար Ջղալ աւղլին 'ի Ըստամբուլայ երեգ 'ի Վան եւ արար ժողով իւր հեծելին եւ երկու դարբայ (անգամ) հարիւր հազար մարդ ժողովեաց եւ գնաց 'ի վերայ Շահ Աբասին եւ Աստուած զնորա բանն ո՛չ յաջողեաց, այլ փախեաւ եւ եկաւ աւերելով 'ի Վան եւ աւերեաց զՎանայ աշխարհն զամէն, որ սովն կալաւ զարարածս, որ եղ(եւ) քիլայ ցորեն 'ի ութ ափասի, ապա գնող կեր եւ ծախող չկեր: Որ 'ի սովու կերան զշուն եւ կատու, էշ եւ ձի եւ կաշի եւ աղքատն ժողովէին զերեք եւ չորս տարու չոր ոսկրներն եւ սղկէին[2] եւ ուտէին եւ կուտուց կուտուց[3] մեռանէին:

Որ կերաւ մայրն զորդին եւ հայրն ծախեց զորդին բ կորեք հացի, որ մեռան 'ի սովու հազարք հազարաց եւ բիրւք բիւրոց: Եւ այն որ մնաց, փախեան 'ի Ջզիրէն, 'ի Բաղդատ եւ յԱրաբստան, 'ի Թաւրեզ, 'ի Ղազուին եւ 'ի Խորասան եւ Գուրջստան եւ ամենեքեան մեռան 'ի դարիպութիւն, որ 'ի խազարէն մէկ չի դարձ (աւ) 'ի յետ: Որ 'ի Ջազիրէն 'ի քաղաքն միայն երիցներն (երիցունք) խսապ (հաշիւ) արարին ամենքն զիւրեանց թաղածն, խռ: (40000) մարդ էր մեռէր, թող զայն, որ ի բուքն խեղդեցան եւ կամ ի գետն անգան եւ թող զայլ քաղքունէքն, որ 'ի Սալամաստայ մինչեւ Գուրջստան եւ մինչեւ յԸստամբուլ եւ հիւսիսակողմով մինչեւ յԱմիթ-յԱլապ եղեւ անմարդաբնակ, որ առջք եւ խոզք եւ մարդակեր գայլքն եւ շունք ի շուռ գայլին եւ այն անաւրէն եւ պիղծ գազանաբարոյ ազգն Հոռոմեցիքն բռնէին զմարդիկն եւ չարչարէին. զնոցա ամաւթն ծամէին եւ ասէին, թէ մեզ հաց եւ զահրայ տուէք եւ նոքա ոչ ունէին զատ (իր ինչ), որ տային նոցա եւ չարաչար մահ-

1 Ծոպ էր կոչւում 'ի հնումն այժմեան Դիլիջանի ձորն, իսկ Աստուածածնայ վանքն այժմ անմարդաբնակ է, որ կոչւում է Ջոխտակ վանք:

2 Մանրել, ջարդել, փոշիացնել:

3 Կերակուր ի բերան մեռնիլ:

ւամբ սպանանէին... յառաջն եբեր (Աստուած) զխաշանց մահ, որ երեկ յարեւելից եւ գնաց մինչեւ 'ի մուտս արեւու, 'ի հիւսիսոյ 'ի հարաւ....: Եւ յետոյ եբեր զմարդկային պատուհասն, որ 'ի սովու կերան զմիմեանս, որ եթող հայրն զորդին եւ մայրն զդուստրն, եղբայրն զեղբայրն եւ ուտէին կենդանիք զմեռեալն եւ ամենեքեան յայլ աշխարհ գնային, եւ որն որ մեռան եւ որն թուրքացան եւ այլ ոչ դարձան 'ի յիւրեանց տեղն վասն ծովացեալ մեղա՛ց մերոց: Եւ մին 'ի բազմաց եղկելի գործողս էր, որ առի զընտանիքն իմ եւ գնացի 'ի Ջզիրէն եւ մեռան անդ զընտանիքն իմ, կին իմ եւ դստերքն իմ եւ մէկ որդին իմ Մկրտիչն եւ հարսներն իմ եւ եղբայրն 'ի Տէր Աստումն, որ զայս աւետարանս ծաղկեց եւ ամենեքեան մեռան ի դարիպութիւն.... գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՌԾԴ. ամի յիշատակ Գուլիարին եւ Սաղդաթեարին եւ Սպադիարին....»:

Գ. Աւետարան՝ թղթեայ, անթուական եւ անյայտ գրողի անունն եւ տեղն:

Դ. Աւետարան՝ թղթեայ, որի մէջ կան Քրիստոսի բոլոր բժշկութեանց եւ չորս աւետարանչաց պատկերներն. վերջից ընկած են յիշատակարանն եւ շատ թերթեր:

Գիւղիս հին եկեղեցու, որի ծածքն փայտաշէն է, փայտեայ սիւնի վերայ. «Յիշխանութեան Մելիք Հախնազարի, պապեր 'ի Քրիստոս յիշեցէք, Հրապետն, որդիք Պալին, Սարգիս, հանգուցեալ որդին Տէր Ղազար, մայրն իւր Նարկիզն թվ. ՌՃԼՋ.»: Արձանագրութիւն. «Սուրբ Աստուածածին բարեխօս տէր Ըստեփաննոսին թվ. ՌՃԺԹ.»:

Սուրբ Գէորգեան միդասեան ուսումնարան, աշակերտք 40, թոշակառու 36. տարեկան ռոճիկ վարժապետին՝ 350 ռուբլի:

Շիպլի հանք. Ամբողջապէս շիպահանք է գիւղիս հարաւային կողմի ահագին լեռն, որից եկած շիպաքարերը փոխադրում էին գործարաններն, որ գիւղիս հարաւ–արեւմտեան ծայրումն են: Ապա քարերը վառարաններում այրում էին կրաքարի պէս, յետոյ ջարդում այրուած քարերը եւ լցնում էին աւազանների մէջ, ջրով լցնում աւազանները, թողնում ամսաչափ, յետոյ հանում աւազաններից, մեծ կաթսաներում եփում զանգուածը. թափում հորերի մէջ, որոց մէջ մնալով լինում էր շիպ: Բայց մի քանի տարի է, որ այլ եւս չեն շինում փիփնցիք շիպ, այլ դադարեցրած են կառավարութեան հրամանաւ:

Քարահատի խաչ. Նոյն Շիպասարի վերայ մի մատուռ է, որի ծածքն փայտաշէն է եւ որի մէջ ամփոփուած է ոմն յարգելի անձի մարմինն, բայց անյայտ է Սուրբ ամփոփեալի անունն: Ուխտատեղի է:

Ովրեցիք. Աւերակ գիւղատեղի Փիփիս արեւելեան հիւսիսային կողմում, որ գտնւում է մի դալարագեղ եւ բարձր սարահարթի վերայ: Շամքոր գետակի աջ կողմի բարձրութեան վերայ: Տակաւին կայ ընդարձակ եկեղեցու աւերակն, որից մնում է կանգուն միայն խորանի թաղն եւ երկու փոքր խորաններն: Խորանի լուսամտի հարաւային կողմում. «Թվ. ՋԻԲ. ես Համզա կանգնեցի զխաչս որդոյ իմոյ Պապի»: «Ես Համզա կանգ. զխաչս որդոյ իմոյ Էվատին»:

Աւերակիցս ներքեւ՝ ձորի ձախ կողմում կայ հանգստարան, ուր մի գեղեցկաքանդակ խաչարձանի վերայ. «Սուրբ խաչս Թումանին Պէկաջին թվ. Պ.»: Աւելի ուշագրաւ է սորա մօտ եղած մի խաչարձան, որ ունի գեղեցկաքանդակ պատուանդան[1], որի վերայ քանդակուած է մի գուբթան իւր մահկալով, մահկալեղբայրով եւ հօտաղներով, եզներով եւ գոմէշներով, եւ մի ճաշարեր հարսն, որ կերակրով լի կաթսան իւր գլխին դրած, գուբթանաւորների համար կէսօրուան ճաշ է բերում: Սորա խաչարձանի վերայ.

«Սուրբ խաչս բարեխաւս Գիշնին. կանկնե....» (43): Ափսոս, որ եղծուած են կէտադրեալ բառերն: Այլ քարի վերայ. «Սուրբ խաչս Հուռիփսիմի Մարտիրոսին»:

Մաղթում զատէ. Հանգստարանից ներքեւ նոյն ձորի աջ կողմում, գետակահայեաց լանջի վերայ, մի տեսարանաւոր սարահարթում՝ հանգստարան եւ աւերակ մատուռ: Մատրանս մէջ, ուր բուսած է մի տխկի ծառ, կայ երկու խաչարձան. մէկի վերայ.

«Սուրբ խաչս բարեխաւս Խամբկի ՆՀԳ.»:

1 Երկարութիւնն 1 մետր 10 սանթիմ. լայն. 95 սմ:

Խորհրդաւոր մահարձան. Հանգստարանումս մի գերեզմանաքարի վերայ շինուած է գութան իւր պարագայիւք, սաղ ածող, թմբուկ զարկող. սեղան պատրաստող կին, պարող մարդիկ. գինու կուլան ձեռնին, իսկ իշխան ոմն իւր աջ ձեռնով բռնած բազէն եւ ձախովն՝ գինու թասը: Սորա մօտ կոնդ, գինման եւ կենդանի խոյ: Քարիս արեւելեան երեսին կայ մի ահագին արծիւ. որ բարձրացնում է մի գառն: Ափսո՜ս միայն, որ չունի արձանագրութիւն: Սորա մօտ այլ քարի վերայ. «Ես Եղոմ կանգնեցի խաչս Նատարին»:

Ռուսկան (գուցէ Ոսկան) նահատակ. Փայտաշէն մատուռ Փիփի հիւսիսային կողմում, գետակահայեաց լանջի վերայ: Մատրանս մէջ կայ տապան, որի վերայ կանգնած է մի մեծ քարեայ խաչարձան, որ ուխտատեղի է:

Հին-Փիփ գիւղ

Շամքոր գետակի աջ կողմում, աւերակ է այժմ: Այս տեղից փոխադրուած են Փիփի բնակիչներն Նոր-Փիփ. բայց անարատ մնում է եկեղեցին, որ շինուած է երկու կամարների վերայ: Աւագ խորանի աջ ու ձախ կողմերում կան երկու ծակեր, որք գաղտնի պահարաններ են: Հոյակապ տաճարիս[1] երկարութիւնն է 26 մետր 35 սանթիմ, լայնութիւնն՝ 12 մետր 70 սանթիմ, պատի հաստութիւնն՝ 2 մետր 40 սանթիմ: Աւազանի վերայ. «Յիշեցէք ի Քրիստոս Ծատուրն եւ կողակիցն իւր Մարեան թվ. ՌՃԺԹ.»: Հիւսիսային փոքր խորանի դռնագլխին. «Յիշեցէք ի Քրիստոս Գաւրկին եւ Ծատուրն... Առաքեալն եւ որդին իւր Յովհան»:

Դրան վերայ. «Կամաւն Աստուծոյ մեք Փիփեցոց ժողովուրդս միաբան շինեցաք զեկեղեցիս ի հայրապետութեան տեառն Պետրոսի (Աղուանից) ձեռամբ Սարգիս վարդապետին, յիշխանութեան Մուրթուզա-Ղուլի խանին. յիշեցէք ի Քրիստոս տանուտէր Կարդանէսն եւ կողակից Մարեան»:

Բարսամ ճգնաւոր. Այսպէս են անուանում մատուռը, որ կայ եկեղեցուն հարաւային կողմում: Մատրանս մէջ կայ երեք գերեզման, երկու տապանաքարերի վերայ չկայ արձանագրութիւն, միայն երրորդի վերայ. «Ես Մաղագայ եպիսկոպոս կանգնեցի զխաչս հաւր.. եղբաւրն իմոյ տէր Պար.. մարհ եպիսկոպոսին թվ. ՋՁ.»:

Օխտը եղցի կամ Քարահերձ (44)

Շիպասարիցն դէպի Շամքոր գետակն երկարած է մի լեռնաբազուկ, որի հիւսիսահայեաց ծայրի քերծի ճակատում փորուած են եօթը քարայրներ եւ քարուկիր պատով պատուած են բաց տեղերն: Քերծս եւ քարայրներս շրջապատուած են թանձր անտառներով: Քարայրներս բոլորն եւս եկեղեցի չեն, այլ միայն երկուսն, որոց մէջ մնում են վէմ եւ սեղան քարերն ցարդ: Վիմահերձի ճակատով շինուած է ուղի, որ տանում է այրերն: Ուղիղ Զարէք բերդի հարաւային հանդէպ են քարայրներս, որոց արեւելեան կողմում կայ պատուական աղբիւր, որից խմած եւ գործածած են այրերումս նստող կաթուղիկոսներն:

Աղիւսաշէն. Մի գիւղատեղի, հանգստարան եւ կիսաւեր եկեղեցի է այս անուամբ, որ գտնըւում է Քարահերձից վերեւ նոյն լեռնաբազկի վերայ:

ԳԱՐԴՄԱՆ ԱՒԱՆ (45)

Գտնւում է Աղիւսաշէն աւերակի արեւմտեան հանդէպ Գարդման վտակի[2] ձախ կողմում: Այս էր ահա Գարդման գաւառիս գաւառագլուխն, որի անուամբ ամբողջ գաւառս կոչուած է Գարդման, եւ գաւառիս իշխանաց աթոռանիստ աւանն: Այժմ աւերակ է աւանս եւ թրքաբնակ

1 Սուրբ տանս հիւսիսային կողմումն է հանգստարանն:

2 Այս է Շամքոր գետակի արեւելեան մեծ օժանդակն, որ խառնւում է Զարէք բերդի ստորին կողմում:

եւ կոչւում է Գրթմանիկ: Կիսաւեր եկեղեցու արեւելեան որմի արտաքին երեսին վերայ քանդակուած է մի խաչքար: Իսկ հարաւային կողմում՝ մի քանի քայլ հեռաւորութեամբ՝ գտնւում են 7 հատ ցից. ահագին եւ նշանաւոր մահարձաններ, որք միատեսակ են եւ մօտ առ մօտ, յորոց միոյն վերայ փորագրուած է. «Կանգնեցաւ խաչս Քրիստոսի թ. ՌՄՂԱ.»: Եղծուած են դրեթէ եւ անընթեռնելի միւս 6 մահարձանների գրութիւններն:

Սրբլթոն. Գարդման աւանիս հարաւային կողմում փոքր-ինչ հեռի կայ մի ուխտատեղի Սրբլթոն անուն, որ մի փոքրիկ մատուռ է եւ որն բնաւ չունի արձանագրութիւն: Բայց մատրանս մօտ կայ մի մահարձան, 3 1/2 մետր բարձր, որի վերայ փորագրուած է. «Այս է տապան Սուրբ Սրապիոնի թոռն Մեծին Սամորին Մեծին Սատին[1] թ. ՉՁ.»: Լայնածաւալ հանգստարան կայ մատրանս մօտ, որի մէջ են գեղեցիկ մահարձաններով զարդարուած շատ գերեզմաններ:

Դղում-բլուր. (Ղարաղ թափէ) ընդարձակ գիւղատեղի, հանգստարան եւ եկեղեցի, որք կան Գարդման աւանից բաւական վերեւ: Դեռ կանգուն է ընդարձակ եկեղեցին, որ կառուցեալ է 4 սիւնների վերայ: Տաճարիս, որի գուռն հարաւային կողմից է, մի սիւնի վերայ գրուած է. «Ես Խոսրովս թվ. ՌՃԽԱ.»: Միւս սիւնի վերայ գրուած է. «Ի թ. ՌՃՕԵ.»: Տաճարս հոյակապ է, որ ունի 21 մ երկ., 13 մ լայն.: Այժմ մահմեդականներ են բնակում գիւղումս:

ԱՐՈՒԹԻՒՆԱՅ (46) ՍԱՐ (տճկ. Ղոչ-ղարա) 11085 ոտք.

Մի հսկայ, բոլորակաձեւ եւ գեղեցիկ սար, որ գրեթէ Մռաւեան եւ Գեղամեան բարձր լեռնաշղթայի խառնուրդի շարքից դէպի հիւսիս դուրս ելած, առանձնացած է, բայց մի հսկայ լեռնասեռով կցուած է նոյն լեռնագօտու խառնուրդին եւ վեհանձնաբար արձանացած Գարդման գաւառիս լեռնամասում: Համարեա թէ իւր շրջապատի բոլոր բարձր լեռներից ամենասիրունն է: Հինգ ժամ է տեւում մինչեւ սարիս գագաթն բարձրանալն եւ երեք ժամ իջնելն: Զորս կալաչափ տեղի մեծութեամբ տափարակ է սարիս կատարն, որի վերայ կայ մի գերեզման, որի շուրջն շարուած են շատ քարեր: Այս երեւոյթն ենթադրել է տալիս, թէ մատուռ եղած լինելու է վաղուց այստեղ: Գերեզմանիս մօտ կայ մի լճացեալ ջուր, որ անկասկած գոյացած է ձիւնից եւ անձրեւից. սակայն անպակաս է ամառ-ձմեռ ջուրն լճակիցն: Քանի՜ ուշագրաւ է գագաթիս տեսարանն, քանի՜ գեղեցիկ եւ անբացատրելի է դիրքն. անթերի՜ զուարճութիւնն եւ բարձրաթռի՜չ այցելուի սլացող միտքն...: Սարիս լանջերից եւ ստորոտներից բղխում են հետեւեալ գետակների բուն սկզբնական ակունքներն.

Ա. Գանձակ գետակի մի մասն:

Բ. Արութիւնայ վտակն, որ հոսում է Բանանց գիւղի մօտով:

Գ. Գարդման վտակն:

Դ. Փառիս վտակն, որ հոսում է Փառիսոսի վանքի արեւելեան կողմով, բաժանում Գարդման եւ Փառիսոս գաւառներն իբրեւ սահմանագլուխ եւ ապա միանում Շամքոր գետակին Զոխտակ կամրջի (Ղօշա քեսրփի) մօտ:

Ադի շէն. Այժմ աւերակ է, բայց եկեղեցին կանգուն է: Աւերակ գիւղս, եկեղեցիս եւ հանգըստարանս գտնւում է Փառիսոսի վանքի արեւելեան հանդէպ, Փառիսոս վտակի աջ կողմի բարձրութեան վերայ:

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա. Ղալա անուն բերդակ, որ կայ Ոսկանապատից մօտ մի մղոն վերեւ՝ նոյն գետակի ձախ ափին: Քարուկիր եւ գրեթէ քառակուսի է բերդակս, որ ունի չորս աշտարակ եւ մի դուռն: Փոքր է, բայց ունի գեղեցիկ դիրք. հաստատուն պարիսպ եւ յարմար տեղ: Երեւի թէ գետակի կողմում ունեցած է կրկնապարիսպ, որ փոքր-ինչ ցած է բուն պարսպից եւ ունի քարուկիր շինութիւն եւ բնակարան իբր տուն:

1 Գուցէ Սադունին:

Բ. Մլզնաբերդ կամ Մածնաբերդ (47). Գտնուում է համանուն վանքի հիւսիսային հանդէպ, ձորի միւս կողմում: Իւր շրջապատից առանձնացած է նաեւ բերդասարս, որի հարաւային եւ արեւելեան կողմերն վիմահերձ եւ բարձրագոյն ապառաժներ են, հիւսիսային կողմն՝ անմերձենալի սարալանջ, իսկ արեւմտեան կողմն ունի հաստատուն պարիսպ երեք ամուր աշտարակներով: Ունի միայն մի դուռն արեւմտեան կողմից եւ բաւական մեծութիւն, որի մակերեւոյթն թեքուած է հարաւից հիւսիս: Բերդիս վերնամասում[1] կայ հանգստարան եւ բնակարանների շատ աւերակ: Ստորին մասում կայ յատկապէս միջնաբերդ, որը տեղացիք անուանում են Նարին-Ղալա, որ ունի առանձին պարիսպ եւ մուտք: Մեծ ուշադրութեամբ ամրակուռած են քարուկիր պատերով կասկածաւոր տեղի կիրճերն. վերջապէս նշանաւոր ամրոցներից մին է բերդս եւ շատ հին: Բերդիս հիւսիսային մասում կայ մի բարակ ջուր, սակայն երեւի թէ բնակիչք չեն բաւականացած ջրով, այլ խեցեղէն խողովակներով ջուր բերած են արեւմտեան կողմից: Կարծես թէ եղած է եւ քաղաք: Այժմ հերկում են Հարցհանդիստ գիւղի բնակիչներն բերդիս մէջը, եւ հետզհետէ քայքայւում են պատերն:

Գ. Ղըզ-Ղալա բերդակ, որ կայ Նիւկզար գիւղի արեւելեան կողմում, մի սարի վերայ, որ բաւական հնաշէն է:

Դ. Կեռստավանք բերդ. Հիմնուած է Շամքոր գետակի աջ կողմի բարձրութեան վերայ Ռուսկան նահատակից փոքր-ինչ ներքեւ: Բերդիս տեղն թեքուած է դէպի գետակն, իսկ երկու կողմերն ձորեր են, ունի շրջապարիսպ, որից այժմ տեղ-տեղ քանդուած է, կամ լաւ եւս է ասել, մնում են պարսպի ստորին մասն եւ քարուկիր շինութեանց բեկորներ: Ոմանք կարծում են, թէ վանք եղած է այս, իսկ այլ ոմանք թէ՝ բերդ է: Մենք հաւանական ենք համարում վերջին կարծիքս. քանզի ժամանակաւ մեծ ճանապարհ եղած է գետակիս ձորովն Գեղամայ լճի արեւելեան ափի վերայ, վասն որոյ Զարէք բերդն շինուած է գետակիս ձախ եւ բերդս աջ ափերի վերայ՝ թշնամեաց մուտքը արգիլելու համար:

ԺԷ. ՓԱՌԻՍՈՍ ԳԱՒԱՌ

Գաւառիս սահմաններն են արեւելքից Շամքոր գետակն եւ Փառիս օժանդակն, հարաւից՝ Գեղամեան լեռնաշղթայի դագաթնագիծն, արեւմուտքից՝ Տաւուշ գետակի արեւելեան օժանդակն եւ հիւսիսից՝ դաշտաբերանն:

Այցելու Սուրբ (Փիրնազար). Երկու աւերակ եկեղեցիներ, որք կան Տանձուտից բաւական վերեւ: Մերձաբնակ պարսիկ բնակիչներն մեծ յարգանքով են վերաբերւում ուխտ անելով եւ մոմեր վառելով աւերակներիս քարերին եւ յարգանքով արտասանում Փիր-Նազար:

Տանձուտ աւերակ. Գտնուում է Փառիս վտակի ձախ ափի վերայ, Ատի շէն աւերակի հանդէպ: Խիստ ընդարձակ է գիւղիս աւերակն եւ հանգստարան. եւս առաւել եկեղեցին, որ հիացնում է, այցելուները իւր հոյակապ շինութեամբ եւ մեծութեամբ: Կառուցեալ է վեց սիւների վերայ, ունի երկու փոքր եւ մի աւագ խորան, երկու գեղեցիկ խորհրդարան, երկու դուռն հարաւից եւ հիւսիսից. 27 մետր երկարութիւն, 15 մետր 60 սանթիմ լայնութիւն: Այժմ խոնարհուած է աւագ խորանն, ձախակողմեան դասի կամարով միասին եւ փոքր-ինչ տեղ՝ տաճարիս արեւմտեան հիւսիսային անկիւնից (ձեղունից). չունի արձանագրութիւն:

1 Բարձր են վերնամասիս հարաւային եւ հիւսիսային ծայրերն, իսկ փոս՝ միջավայրն:

ՓԱՌԻՍՈՍԻ ՎԱՆՔ

Հիմնուած է Տանձուտիցս փոքր-ինչ վերեւ մի պատուական եւ անտառապատ սարահարթի[1] վերայ: Արեւմտեան կողմում բարձրացած է Հովուի սարն (Զօպան-դաղի) սարահարթիցս վերեւ, որի եզերքներով շրջապատուած է ամուր պարիսպ, որ այժմ կիսաւեր է, որի մէջ կայ երեք եկեղեցի.

Ա. Շինուած է արեւելեան կողմում. Բ-ն՝ մէջտեղում. Գ-ն՝ արեւմտեան կողմում, համարեա թէ մի շարքի վերայ: Բ. եւ Գ. տաճարներն ունին երեք սիւնով կամարակապ գաւիթ՝ իւրեանց հարաւային կողմում, իսկ Գ. տաճարն իւր դռնապլուխ քարի վերայ ունի. «Մուսիէս երէց». Միջի եկեղեցին աւելի մեծ է միւսներից: Երեքն եւս հին շինուածք են, որոց դռներն բացուած են հարաւային կողմից: Արեւելեան տաճարս եւս ունի փոքրիկ գաւիթ, որի մօտ է զանգատունն, որ շինուած է սրբատաշ չիչ քարով. չիչ քարով շինուած են բոլոր տաճարների եւ սրահների անկիւնաքարերն ու կամարներն, իսկ մնացեալ մասերն՝ անտաշ քարով: Բ. եւ Գ. տաճարներն ունին 25 մետր երկարութիւն եւ 11 մետր 70 սանթիմ լայնութիւն: Ամբողջապէս կանգուն են տաճարներս. բայց աւերակ են միւսներից բոլոր խուցերն: Շատ գերեզմաններ կան թէ՛ պարսպիս ներսումն եւ թէ՛ դրսումն, սակայն չգտանք գրութիւն: Վանքիս մօտ երեւում են ջրաւազան եւ խեցեղէն խողովակների հետքեր, արեւմտեան կողմի աղբիւրի ջուրն բերուած է վանքս:

Ջոխտակ-կամուրջ. Գետաբակի երկաթուղու վերջին կայարանն է այս, որ կայ Փառիսոս եւ Շամքոր վտակների խառնուրդի մէջ: Կայարանումս դիզուած են խարոյկներով փայտ եւ ահագին ամբարներով ածուխ, որք հետզհետէ փոխադրւում են Գետաբակի եւ Փառիսոսի գործարաններն՝ պղնձաքարերը հալելու:

Երկաթուղու գիծն վերջացած տեղի արեւելեան հանդէպ, վտակի աջ կողմի բարձրութեան վերայ կայ մի եկեղեցի, որի գլուխն խոնարհուած է:

ՓԱՌԻՍՈՍ ՔԱՂԱՔ (Ղալաքեանդ) (48)

Շինուած է Շամքոր գետակի աջ եւ ձախ ափերի լանջերի վերայ Ջոխտակ-կամրջից մօտ երեք մղոն վերեւ: Բաւական ընդարձակ է աւերակիս ծաւալն. բնակչաց որքանութիւնը մօտաւորապէս գիտենալու համար բաւական է յայտնել, թէ աւերակ քաղաքումս կայ տասնեւմի եկեղեցի, երեքն՝ գետակի աջ ափի վերայ, յորոց մին կանգուն է եւ երկուսն՝ կիսաւեր. իսկ ութն շինուած է գետակի ձախ կողմումն, որից կանգուն են երկուսն եւ աւերակ՝ վեցն: Աւերակների հիմքերն պարզապէս երեւում են եւ շատ տարի չէ, որ քանդած են, ինչպէս վկայում են ականատեսներն: Մայր եկեղեցին հիմնուած է գետակի ձախ ափի վերայ, որը մի քանի տարի առաջ քանդած[2] եւ սորա քարերով շինած են խանութներ: Աւերակ տաճարիս երկարութիւնն է 15 մետր, լայնութիւնն՝ 11 մետր 50 սանթ. եւ գտնուում է այժմեան խանութների մօտ: Դեռ պարզապէս նշմարւում են խիտ առ խիտ տնաբակեր եւ քարուկիր շինութեանց շատ հետքեր: Աւագ եկեղեցուս արեւմտեան կողմում, ոչ այնքան հեռի, երկաթուղու գծի տակ կայ երկու քարեայ խաչարձաններ, արեւելեան խաչարձանի վերայ. «Թվին ՉԻ. յանուն Աստուծոյ ես Հայրապետ..ւա...եղբայր Փա կանգնեցաք զխաչս յիշատակ հաւր մերոյ Խորենայ, մաւր մերոյ Շաղակկոյ ու եղբաւր մերոյ Խայոմթենչայ, ով զայս գիրս կարդայ...[3]»:

Արեւմտեան խաչարձանի վերայ.[4] «Թվ. ՋԼ. յանուն Աստուծոյ ես Սասնայս կանգնեցի զխաչս 'ի տէրութեան ժամանակի իմոյ՝ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ ամուսնոյն իմոյ Սիրունիկայ եւ

1 Սարահարթս ունի բոլորակ ձեւ, միջակ մեծութիւն:
2 Տակաւին մնում են հիմքն եւ խորանի կլորակն:
3 Անընթեռնլի են կէտադրեալ բառերն:
4 Ունի 2 մետր 75 սանթ. երկար, 1 մետր 22 սանթ. լայնութ.:

որդւոյ իմ Սարգիսայ եւ դստերն իմոյ Մամա Խաթունայ, Նփաղհաճայ եղբաւրն Սիրունիկայ. կանգնեցաւ խաչս բարեխաւսութեան հոգոց մերոց: Ով կարդայ այս. Դաւիթս յիշեսցէ առ Աստուածջրհեց.... (շինող վարպետի անունն է Դաւիթն)»:

Այժմ անմարդաբնակ է քաղաքս, բայց ամռան երեք ամիսներում հաւաքւում են այստեղ մի քանի վաճառականներ՝ դարբին, պայտառ, դերձակ եւ այլ արհեստաւորներ՝ ամառանոց բարձրացողների պէտքերը հոգալու եւ շահուելու համար:

Սուրբ Յովհաննէս. Քարուկիր փոքր եկեղեցի, որ կայ Փառիսոս քաղաքի աւերակի արեւելեան հանդէպ գետակի աջ կողմի բարձրութեան վերայ, մի դեղեցիկ հարթակի վերայ: Տաճարիս երկարութիւնն է 8 մետր 27 սանթիմ, լայնութիւնն՝ 5 մետր 5 սանթիմ: Փոքր-ինչ ծակուած է հարաւային դասի առաստաղից: Արտաքուստ արեւմտեան մի կանաչագոյն խաչքարի վերայ. «Թվ. ՇՃԵ. (1106) ես Կա... (անընթեռնլի)»: Դրան մօտ այլ խաչքարի վերայ. «Թվ. ՋԻ.»: Ունեցած է եւ շրջապարիսպ եւ միաբանից խուցեր, բայց կործանուած են, մնում են միայն գերեզմաններ:

Եկեղեցուս արեւմտեան կողմում, փոքր-ինչ վար՝ լանջի վերայ կայ մի փոքրիկ մատուռ շինուած անտաշ քարով, որի մէջ կայ մի գերեզման, բայց անարձանագիր է քարն, որ կոչւում է Ճգնաւորի գերեզման:

Աւերակ գիւղատեղիներ, եկեղեցիներ եւ հանգստարաններ կան Ղարա-Բուլաղ, Սաբէթ-Կէչմազ եւ Ջալ-դաղ կոչուած տեղերում, որք գտնւում են Փառիսոս քաղաքիս հիւսիսային կողմում:

Գարգար աւերակ գիւղ Փառիսոս քաղաքի հիւսիս-արեւմտեան կողմում, ջրաձորի աջ լանջի վերայ, ուր կայ կիսաւեր եկեղեցի եւ հանգստարան: Այժմ մահմեդականներ են բնակում այստեղ եւ կոչում են գիւղս Գեառգեառ:

Փոքր-Ղարա-Մուրատ[1]. Գարգար գիւղիս արեւմտեան հանդէպ, վտակի ձախ կողմի բարձրութեան վերայ հայոց գիւղ, այժմ թրքաբնակ, բայց կայ կիսաւեր եկեղեցի եւ հանգստարան:

Մեծ-Ղարա-Մուրատ, որ կայ նոյն վտակի ձախ կողմի լանջին վերայ: Այստեղ կայ երկու եկեղեցի, մինն՝ խիստ ընդարձակ, հոյակապ, կանգուն եւ միւսն՝ փոքր եւ կիսաւեր՝ մօտ առ մօտ: Վեց սիւների վերայ շինուած է մեծ եկեղեցին, որի մէջ մնում են վէմ եւ սեղան քարերն: Խորանի ճակատին. «Շինեցաւ Սուրբ տաճարս ձեռամբ անարժան Ջուղայեցի ուստա Մուսէսին որդի ետկարին զաւակ Սողոմոնին՝ հրամանաւ Փիլիպոս կաթուղիկոսին եկի շինեցի Սուրբ եկեղեցիս Ղարամուրատին Հայոց թվին ՌՁԳ. ով կարդաք, ողորմի Մոսէի յիշեցէք 'ի Տէր, Աստուած ձեզ յիշէ, ամէն»: Ձախ փոքր խորանի ճակատին. «.... թվին ՌՁԴ. էր... եւ եկեղեցի... Սառիկն եւ հայրն Վելիճանն եւ որդին Ղարա մուրատն, Ղուկասն եւ դուստրն իւր Գուլաղէն, Ջաքարի հայրն Վելիճան, կողակիցն իւր Գուլդանէն, որդին իւր Աջամն, Հախնազարն, Ովանէսն յիշեցէք եւ Աստուած ողորմի ասէք»: Փոքր-ինչ սորանից ներքեւ. «Սուրբ սեղանի քարն յիշատակ է Ըռըստիմին, իւր եղբայր Էվազին, Պարոնին, իրենց մայր Խաթունին թվ. ՌՁԴ.»: Գիւղիս, եկեղեցուս եւ հանգստարանիս ծաւալից այցելուն եզրակացնում է, թէ Մեծ-Ղարա-Մուրատս գիւղաքաղաք եղած է: Այժմ թրքաբնակ է եւ այս: Խոնարհուած է փոքր եկեղեցու առաստաղն: Դրան վերայ. «Շնորհիւ Աստուծոյ ես Ովանէս վարդապետս, որդի ապաշխարողի շինեցի զեկեղեցիս (անապատ կուսանոց) արդեամբ գուիք (գոյիւք) ամենայն քրիստոնէից՝ յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց եւ ամենայն աշխատողաց 'ի մայրապետութեան անապատիս Թագուհւոյն եւ Կայինայիս 'ի ՌՃԾ. թվ.»:

Կիսաւեր Անապատ Մեծ-Ղարա-Մուրատիս արեւելեան հանդէպ վտակի աջ կողմի հարթի վերայ, որի մօտ կայ հանգստարան եւ խուցերի աւերակ եւ մի երկար քարեայ սիւն, որ ընկած է գետնի վերայ, բայց կրում է խաչ նշան եւ հակիրճ արձանագրութիւնս. «Սուրբ Սարգիս»:

1 Գիւղերիս բնակիչներն վրաց վերջին Հերակլ թագաւորի օրով գաղթած եւ բնակութիւն հաստատած են Շուլաւերում:

Հիմնարկուած է աւերակիս կամ սիւնիս արեւելահիւսիս կողմում մի ձորահովտում: Կառուցեալ է սրբատաշ քարով երկու սիւների վերայ սագաշէն, որ կանգուն է բոլորովին եւ որի երկարութիւնն է 15 մետր 5 սանթիմ, լայնութիւնն՝ 9 մետր 60 սանթիմ է: Դրան վերայ արտաքուստ. «Սուրբ խաչս Մար..... (եղծուած է)»: Սորա հիւսիսային կողմում. «Սուրբ խաչս Ամիրխանին»: Վանքս իւր հիւսիս-արեւելեան անկիւնում ունի երկյարկ զանգատուն շինուած համակ սրբատաշ քարով: Թափուած են ինչպէս վանքիս տանիսց, նոյնպէս եւ զանգատանս սալախներն: Վերջնոյս գետնայարկում ատիճանաւոր պատուանդանի վերայ հաստատուած է մարդաչափ բարձրութեամբ մի քարեայ խաչ՝ յար եւ նման Յիսուս Քրիստոսի խաչափայտին, որի հարաւային եւ հիւսիսային թեւերի վերայ. «Յիսուս Քրիստոս» եւ գագաթնահայեաց ստորոտում. «Թվ. ՌՁԸ.»: Անյայտ նայում է այցելուն, գմայլում եւ միանգամայն զարմանում խաչիս նուրբ քանդակագործութեան գեղարուեստի ճարտարութեան վերայ: Խաչիս մօտ մի այլ քարի վերայ կայ երկար արձանագրութիւն, բայց մահմեդականք ջարդած են քարս եւ արած միջից երկու բաժին: Անկարող եղանք գտնել կէսը, որ միմեանց մօտ բերէինք եւ ընդօրինակէինք:

Վանքս ունեցած է եւ շրջապարիսպ, միաբանից սենեակներ, որ աւերուած են այժմ, միայն մնում են հանգստարանի տապանաքարերն:

Փնտռելու կամ Նոր-Սարաթովկա. Գիւղս մինչդեռ կանխաւ եղած է հայաբնակ, այժմ մալականաբնակ է եւ հիմնուած Զակամ գետակի արեւմտեան օժանդակի ձախ ափին: Սակայն մնում է հանգստարանն, որ ունի խիստ երկար (մի քար 3 մ. երկար է) տապանաքարեր եւ կիսաւեր եկեղեցին, որի երկարութիւնն՝ 18 մետր, լայնութիւնն 11 մետր է:

Գիւղիցս Բաշ-գեղ տանող ճանապարհի վերայ կան հետեւեալ հնութիւնները.

Ա. Մի փոքր եկեղեցի, հանգստարան եւ գիւղատեղի կայ ճանապարհի արեւելեան եզրի մօտ: (Գուցէ այս է Սուլթանէ գիւղն, որի մասին տե՛ս Բանանց գիւղի Թ. աւետարանի յիշատակարանը):

Բ. Սորանից գրեթէ նոյնչափ վերեւ ճանապարհի արեւմտեան եզրում է Մելիք-Զատա գիւղի աւերակն է, մի մեծ եւ մի փոքր կիսաւեր եկեղեցի եւ խիստ լայնածաւալ հանգստարան (50):

Գ. Այլ անանուն գիւղատեղի, հանգստարան եւ աւերակ եկեղեցի, որ կայ Բաշ-գիւղից ներքեւ:

Ա. Բաշ-գեղ. Հիմնուած է մի սարի[1] հարաւահայեաց լանջի վերայ. բնակիչք տեղափոխուած են այստեղ Զորաթան գիւղից, հողն՝ արքունի, սակաւ, լեռնային, անջրդի, բայց հացատու եւ յարմար անասնապահութեան, տեղական բերքերն՝ ցորեն, գարի, գարնանի, հաճար, ոչխար առատ, կով, եզն, գոմէշ. գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 112 տարի:

Եկեղեցին նորաշէն՝ Սուրբ Մինաս, ծածքն՝ փայտաշէն, «Անուն Սրբոյն Մինասայ շինեցաւ եկեղեցիս արդեամբ ժողովրդոց Բաշքեանդի 1872 ամի մայիս 5-ին»:

Քահանայ՝ երկու, ծուխ 115, ար. 804, իգ. 639:

Գիւղիս նախկին բնակչաց եկեղեցին Սուրբ Յովհաննէս անունն, ծածքն՝ փայտաշէն, որի մէջ փոքր խորանում. «Թվ. ՌԾՁ.». Այս է եկեղեցուս շինութեան թուականն: Մի կիսատ խաչքարի վերայ. «Սիմոն, Տէր Մխիթար, Զանէ հանգուցեալ ի Տէր»: «Սուրբ խաչս բարեխոս Սահակի կին Եղիսաբէթին»:

Նախկին բնակչաց հանգստարանում կայ մինչեւ 700 տարուան, այս է Հայոց ՈՒԳ. թուականից արձանագրութիւն:

Գիւղիս շրջականերում կան հետեւեալ աւերակներն.

Ա. Փարա-գիւղ, որի մէջ կայ եւ եկեղեցի եւ մօտն հանգստարան՝ Բաշ-գիւղիս արեւելեան կողմում:

Բ. Աղքիլիսա (սպիտակ եկեղեցի), ուր կայ գիւղատեղի, հանգստարան եւ մեծ եկեղեցի:

1 Սարս գրեթէ գտնւում է Զակամ գետակի եւ Տաուշ գետակի արեւելեան օժանդակի (Ախնջի) միջեւ:

Աւերակներում, որ գտնւում են գիւղիս հարաւային կողմում, բնակում են մալականներ:

Գ. Փոքր եւ աւերակ եկեղեցի, որ գտնւում է Աղքիլիսայից փոքր-ինչ հեռի:

Դ. Կարմիր վանք (Ղզել-քիլիսա), որ շինուած է կարմիր քարով Աղքիլիսի հարաւային կողմում. Բաբաջան անուն վտակի ձախ ափում. մի բարձրագոյն ժայռի վերայ:

Ե. Այլ գիւղատեղի, հանգստարան եւ եկեղեցի Կարմիր վանքի արեւմտեան կողմում:

Զ. Բաբաջան գիւղատեղի, եկեղեցի եւ հանգստարան, Կարմիր վանքից ներքեւ նոյն վտակի ձախ կողմում:

Է. Շմեղ գիւղատեղի, հանգստարան եւ եկեղեցի, Բաշ-գեղի արեւմտեան կողմում Շմղ կոչուած տեղում:

ՀԻՆ-ԳԵՏԱԲԱԿ

Հիմնուած է Շամքոր գետակի ձախ կողմում մի ձորի հարաւահայեաց լանջի վերայ, որի նախկին բնակիչներն առհասարակ եղած են հայ: Այժմ եւս այստեղ է հայոց Սուրբ Գէորգ եկեղեցին, մեծ հանգստարանն, շուկան, խանութներն եւ շատ կանգուն տուներ: Այստեղ եղած է եւ ուրիշ մի եկեղեցի հայոց, որը քանդել տուած է պղնձահանքի կապալառու պ. Քելլ գերմանացին եւ քարերը գործ դրած այլ շինութեան համար: Նոյն պ. գերմանացին շինել տուած է ինչպէս այստեղ, նոյնպէս եւ Փառիսոս քաղաքի ստորոտում շատ գործարաններ, բնակարաններ եւ զանազան շինութիւններ (բոլոր գործարանների եւ երկաթուղու գործիքներ շինելու համար), այս տեղից մինչեւ Ջոխտակ կամուրջ երկաթուղի եւ հեռագիր: Վերջապէս այստեղ են պղնձահանքերն, (որոց արտադրած պղինձներն աւելի ընտիր են), տեսակ-տեսակ շոգեշարժ մեքենաներ, վառարաններ, պղնձաբովեր, ձուլարաններ, զտարաններ եւն., եւն.: Մօտ 800 մարդ է բանում օրական թէ՛ այստեղ եւ թէ՛ Փառիսոսի գործարանում: Պղնձաքարերը հանում են հանքերից, լեռների տակերից, նախ զատում վատերը լաւերից, վատերը դիզում լեռնաձեւ, այրում ածխով կամ փայտով, ապա ջարդում եւ լցնում բովերի մէջ, վերստին հալում, զտում եւ հուսկ յետոյ կոտոր-կոտոր ձուլում կաղապարներում: Ընտիր պղնձի հետ ելնում է եւ ոսկի: Բայց անտանելի է սաստիկ մուխն ու ծծմբահոտն, որք գիշեր եւ ցերեկ Եգիպտոսի խաւարի նման թանձրակոյտ եւ մառախլապատ տարածուած են ոչ միայն Գետաբակիս վերայ, այլ եւ ծածկում են մերձաւոր շրջականները: Այժմ այստեղ բնակում են վաճառականներ, արուեստաւորներ, ծառայողներ, հայ, ռուս, գերմանացի գործավարներ եւ մշակներ, որոց մէջ կան նաեւ մահմեդականներ: Երեւի թէ շրջապարիսպ ունեցած է Հին-Գետաբակս իբր ամրոց, բայց անհետացած է այժմ:

Բ. ՆՈՐ-ԳԵՏԱԲԱԿ գիւղ. Հիմնուած է Հին-Գետաբակի արեւելեան կողմում՝ սեռի ետեւի արեւելահայեաց լանջի վերայ. բնակիչք 1863 թուին տեղափոխուած են Ղազախի Կոթ, Ղալաչա եւ Ոսկեպար գիւղերից այստեղ, նախ բնակութիւն հաստատած Հին-Գետաբակում, ապա տէրութեան հրամանաւ փոխադրուած Նոր-Գետաբակս: Տեղական բերքերը՝ նոյն, հողն՝ արքունի, բայց խիստ սակաւ եւ միանգամայն ապարդիւն. անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն, եկեղեցին նոյն է՝ Սուրբ Գէորգ: Քահանայ՝ մի:

Ծուխ 33, ար. 215, իգ. 202, ար. ծն. 25, իգ. 22, պսակ 6, ար. ննջ. 7, իգ. 5:

Սուրբ Սարգիս. Ուխտատեղի է եւ փոքրիկ մատուռ Հին-Գետաբակի արեւելեան հանդէպ ջրաձորի աջ կողմի բարձր եւ գեղեցիկ սարահարթում. ունի եւ փայտաշէն սրահ եւ անտառապատ շուրջ: (Այստեղ բնակած է Յովհան-Մայրագոմեցի գիտնական-վարդապետն):

Չարէքայ անապատ

Հիմնուած է Շամքոր գետի ձախ ափի վերայ: Գրեթէ սագաշէն եւ փոքր եկեղեցի է, կառուցեալ չորս սիւների վերայ, ունի եւ գաւիթ, որ շինուած է տաշուած քարով: Արտաքուստ հարաւային դրան վերայ. «Ի Թվին ՌՃԼԳ. շնորհաւք ամենակալին Աստուծոյ կառուցաւ յանուն փրկչին Վերնատուն տեղի Հոգւոյն ճշմարտի եկեղեցիս սուրբ եւ գաւիթ գովելի. շինեցաւ ծեռամբ տեառն Ներսիսի հանդերձ եօթանասուն եղբարց ամենի փրկութեան.»...»:

Արտաքուստ արեւմտեան դրան սեմի վերայ.

«Սուրբ խաչս բարեխաւս տէր Մովսէսին Ներսէսեանց վասն փրկութեան հոգւոյ Բարխուտարին, որք բազում սիրով ետուն շինել զգաւիթ սուրբ եկեղեցւոյն»:

Անապատս ունի եւ փոքր գանգատուն, որի վերայ.

«Ի Թուին ՌՃԸ. կամաւք Աստուծոյ շինեցաւ զանգակատունս յանուն Հրեշտակապետացն Միքայէլի եւ Գաբրիէլի ի հայրապետութեան Պետրոսի սրբազան կաթուղիկոսին տանն Աղուանից եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս եւ անապատիս Չարէքայ Սարգիս վարդապետի ծեռնտուութեամբ եւ աղաւթիւք եօթանասուն միաբանից կատարումն եղեւ խորանիս ի փառս Աստուծոյ, արդ ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետ եւ աղաւթաւոր եղբարքս շինեցաք զսուրբ կաթուղիկէս ի փրկութիւն հոգւոց մերոց եւ ամենայն հետեւողաց, որք ընթեռնուք, յիշեցէք զմեզ ի Քրիստոս»:

Փոքր-ինչ դէպի արեւելք Հարանց մատուռ. որի վերայ. «Ի Թուին Հայոց ՌՃԺԶ. ի հայրապետութեան տեառն Պետրոսի կաթողիկոսին, ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետս կանգնեցի զխաչս ի լուսաւորութիւն հոգւոյ իմոյ եւ ծնողաց իմոց տէր Յաւանէսին, եղիսաբեթին եւ միաբանիցս, որք աստ կան հանգուցեալ եւ ամենայն ողորմածաց մերոց.....»: Անապատս ունի եւ միաբանից խուցեր եւ ամուր շրջապարիսպ. որի դրան ճակատին. «Ի թուին ՌՃԿԳ. ես Մկրտիչ վարդապետս շինեցի պարիսպս, որ եղեւ խարջ ԻԸ, թուման. Ովանէս վարդապետն տուաւ Ժ. թուման. շինեցաւ...»: Մատրանս մէջ ամփոփուած են Դաւիթ եպիսկոպոսի եւ Կիրակոս, Սահակ եւ Սարգիս վարդապետների մարմիններն: Վանքս ունի վանահայր եւ մի քանի ծառաներ:

Խունիսայ վանք

Հիմնուած է Նոր-Գետաբակի արեւելեան հանդէպ՝ Գետաբակ անուն վտակի ձախ կողմում, մի հարթակի վերայ, որին մօտ է Մօլլալու թրքաբնակ գիւղն: Փոքր վանքս ունի կաթուղիկէ եւ գեղեցիկ շինութիւն. բայց այժմ՝ անմարդաբնակ:

Ջոխտակ եկեղեցի. Մօտ առ մօտ կանգնած են երկու եկեղեցիքս Նոր-Գետաբակի արեւելեան հիւսիսային հանդէպ մի դալարագեղ լանջի վերայ, որոց մօտ կայ գիւղատեղի եւ հանգըստարան: Բայց անարձանագիր են տաճարներն եւ հանգստաքարերն:

Սուրբ Ստեփաննոս. Ջոխտակ եկեղեցու արեւելեան կողմում, նոյն սարի արեւելահայեաց լանջի վերայ. Տանձուտ կոչուած տեղում (այլ է Տանձուտս նախորդիցն) կայ մի աւերակ եկեղեցի, որի քարերը քանդած եւ տարած են մերձաւոր Սաւանկա գիւղի բնակիչներն[1]: Այժմ մնացած է միայն աւագ խորանի կլորակ մասն: Հարաւային փոքր եւ աւագ խորանի մէջ եղած պատում մի խաչքարի վերայ. «Եկեղեցիս Սուրբ Ստեփան. ես Մովսէս....»:

Այստեղ կայ մեծ գիւղատեղի եւ հանգստարան:

Գ. ԳԱՌՆԱԿԵՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Շամքոր գետակի ձախ ափին. խորագոյն ձոր է գիւղիս տեղն, վասն որոյ եւ խեղդուած՝ տեսարանն. բնակիչք՝ ընիկ, հողն՝ արքունի եւ նուազ արդիւնաբեր եւ սակաւ, տեղական բերքերն՝ նոյն եւ այգի-գինի, օղի, սեւկեւիլ, դեղձ, տանձ, խնձոր, ոչխար, փոփոխական՝ օդն, տենդաբեր՝ կլիման, 65-70 տարի երկար կեանքն. Եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին. կառուցեալ երեք կամարների վերայ 1838-ին. ունի մի աւագ եւ մի փոքր խորան (հիւս. կողմում). երկարութիւն՝ 12 մետր 35 սանթիմ. լայնութիւն՝ 8 մետր 20 սանթիմ. քահանայ՝ մի: Ծուխ 80, ար. 618, իգ. 533, ար. ծն. 29, իգ. 23, պսակ 12, ար. ննջ. 4, իգ. 3:

Քարոզ գրքեր. Ա-ն գտնւում է Փիփեցի պ. Յովհաննէսի մօտ, որ նօտարագիր է եւ պարունակում է առաքինութեանց եւ մոլութեանց ճառեր: Բայց թափուած են ձեռագրիս սկզբից եւ վեր-

1 Աղանդաւորներիս բնակութեան տեղին եւս աւերակ գիւղ եղած է հայոց. որի մէջ եղած է եկեղեցի եւ հանգըստարան:

ջից թերթեր: Բ-ն՝ բարեկրօն Յովսէփ քահանայ Բալեանցի մօտ, որ պարունակում է զանազան խրատական բաներ, որը գրած է. «ամենախոնարհ ծառայ Աստուծոյ Եսայեայ գալիր տէր Խաչատրեանց 1848»:

Ծաղկոց վանք. Հիմնարկուած է Շամքոր գետակի ձախ ափի վերայ մի ժայռի գլխին, որ փոքր-ինչ վերեւ է գիւղից: Մենաստանս ո՛չ սիւներ ունի եւ ո՛չ կամարակիկ, այլ ունի սովորականից շատ մեծ դուռն, բարձրագոյն շինուած եւ նեղ-նեղ լուսամուտներ. 9 մետր 25 սանթիմ երկարութիւն եւ 6 մետր 40 սանթիմ լայնութիւն: Անյայտ է վանուցս շինութեան թուականն:

Դրան ներսում հիւսիսային կողմում. «Սուրբ խաչ տէր Ուհան պարոն Գաբրիէլին քաւարան թվ. ՌՃԼԸ.»: Մենաստանս ունեցած է եւ փայտաշէն գաւիթ, որը, հնութեան պատճառաւ քանդած են դառնակերցիք յորդորմամբ նոյն Յովսէփ քահանային, այժմ շինում են նորը, որի պատերն քարուկիր են, իսկ ծածքն՝ փայտաշէն (գի փայտով): Գաւթումս կայ երկու գերեզման, տեղացիք աւանդաբար Ճգնաւորների գերեզման են անուանում. տապանաքարերն անտաշ են եւ անարձանագիր:

Հրեշտակապետաց վանք. Մենաստանիցս փոքր-ինչ վերեւ է Գաբրիէլ եւ Միքայէլ Հրեշտակապետաց անուամբ շինուած վանքն, որ նոյնպէս գետակին ձախ ափին է եւ սագաձեւ կառուցեալ ինչպէս պարզ եկեղեցի: Ունի երկու փոքր եւ մի աւագ խորան (աւագ խորանի միջից բացուած է հարաւային փոքր խորանի դուռն եւ շինութեան կարգից բոլորովին դուրս հանուած է հիւսիսային փոքր խորանն), 10 մետր 65 սանթիմ երկարութիւն, 8 մետր լայնութիւն, եւ այս արձանագրութիւնը. «Շնորհիւն Աստուծոյ շինեցաւ Սուրբ Միքայէլ եւ Գաբրիէլս ձեռամբ Յովհաննէս վարդապետի եւ Մահտէսի Յովհաննեսի հանդերձ միաբան եղբարբք թվ. ՌՄԿԵ.»: Վանքս ունի նաեւ քարուկիր գաւիթ, որի մէջ ամփոփուած են ննջեցեալներ: Մի շիրմաքարի վերայ. «Այս է հանգիստ ճգնաւոր Յոհաննէս վարդապետի շինող վանիս Մաղաքի որդի թվ. ՌՄՀԷ.»:

Վանքումս կայ մի ձեռագիր աւետարան, որ գրուած է հասարակ թղթի վերայ, չունի յիշատակարան, անճաշակ է ամէն ինչ:

Մի տպ. ձայնքաղ շարականի սկզբի թերթի վերայ.

«Տեառդի աղօթք. Սուրբքն Սուքիր ինքն եւ Սուքիասանք. իժ մի ժանի եւ էր իբրեւ վարազին. կամին սպանանել զնա եւ ասէ. «Մի՛ք սպանանել զիս, երդնում զնոյն Կենդանին, որ տարածեցաւ ի վերայ խաչին, որ տեղ որ յիշէին, այլ ոչ մերձենան ի տե[ղ]դին, ջերմին եւ սարսափելոյն, զի հեռասցէ ծառայս Աստուծոյ այս ինչ անուն»:

Մենաստանս ունի ինն հին խուցեր, որք ունին նեղ լուսամուտներ եւ ցած դռներ եւ մի այգի, որի մէջ կան բաւականին պատուաստեալ թթենիք, որթ, կեռասի, ընկուզի եւ բանջարանոց:

Հարանց. վանուցս արեւմտեան հանդէպ մի քանի քայլ հեռի կայ մի հին հանգստարան, որի մէջ կան ճգնաւորաց, վարդապետաց եւ միաբանից շատ հանգիստներ: Ահա այս է Հարանցն:

Ճգնարան. Վանքիս արեւելեան հանդէպ գետակի աջ ափի քերծում մի քարայր է, որի մէջ կայ երեք պատուական խաչքար եւ որի մէջ, աւանդաբար ասում են, ճգնած են ճգնազգեաց անձինք:

Կաղնի խաչ. Գիւղիս արեւմտեան հիւսիսային կողմում, ձուաձեւ բարձրացած երկու սարերի մէջ ընկած մի սեռի վերայ կայ երեք հնադարեան խաչարձան, որ իբր ուխտատեղի յարգուած է հասարակութիւնից:

Ծիրանաւոր. Կաղնի խաչից բաւական վերեւ, նոյն ճանապարհի աջ կողմում կայ աւերակ եկեղեցի, գիւղատեղի եւ հանգստարան:

Նահատակ. Գառնակերի հիւսիս-արեւելեան կողմում, նոյն Շամքոր գետակի աջ ափի վերայ կայ մատուռ, ձեղունն՝ փայտաշէն, որի մէջ կայ մի գերեզման, որ է անունն անյայտ նահատակի գերեզմանն:

Դ. ԲԱՐՍՈՒՄ ԳԻՒՂ. Հիմնուած է Շամքոր գետակի ձախ ափի վերայ Գառնակերից մօտ մի մղոն վար. բնակիչք գաղթած են Անի քաղաքից, հողն՝ արքունի, անջրդի, շիկահող եւ նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ նոյն, խոր ձոր է գիւղի տեղն, նեղ՝ հորիզոնն, խեղդուած՝ տեսարանն, երկար կեանք՝ 80 տարի, եկեղեցին՝ նորաշէն, կիսատ, չորս սիւների վերայ. երկարութիւնն՝ 22 մետր, լայնութիւնն՝ 11 մետր, 40 սանթիմ. քահանայ՝ մի: Ծուխ 154, ար. 614, իգ. 472, ար. ծ. 28, իգ. 21, պս. 10, ար. նն. 10, իգ. 8:

Գրչագիր աւետարան՝ թղթեայ, անարուեստ են չորս աւետարանչաց պատկերներն, նկարներն եւ կեղծ՝ գոյներն: Յիշատակարանից. «Եւ արդ գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՌԻԸ. ձեռամբ մեղացեալ եւ անարժան Յովհաննէս եպիսկոպոսի ի գերահռչակ ուխտիս Եւստաթէոսի Սուրբ առաքելոյն ԹՌԸԾ. (9800) սուրբ նշխարացս, որ աստ կան հաւաքեալ ի մէջ տաճարիս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին ի հայրապետութեան տեառն Յովհաննիսի Աղուանից կաթուղիկոսի....»: Ստացողն է «Յակովբ էրեց»:

Գիւղիս մօտերքում կայ երեք եկեղեցի եւ երկու վանք:

Ա. Բարուկիր եւ փոքր եկեղեցի. որ կայ գիւղիս հարաւային հանգստարանի տակ՝ փայտաշէն ծածքով. դռնագլուխ փայտի վերայ. «Թիվ. ՌՃԵ. էր»:

Բ. Գիւղիս հին եկեղեցին. որ կայ հիւսիսային հանգստարանի մօտ, նոյնպէս փայտաշէն ծածքով:

Գ. Թռան (բարձր տեղ թառած) եղցի. վերջին հանգստարանիս մէջ մի սեռի վերայ: Կանգուն մնում են միայն չորս պատերն, միջումն բուսած է մի բռշնի ծառ:

Ա. Վանքն կայ գիւղիս արեւելեան կողմում այգիների մէջ, որի չորս պատերն քարուկիր, ծածքն՝ փայտաշէն, անունն՝ անյայտ, մեծութիւնն՝ միջակ:

Բ. Վանքն Սուրբ Հռիփսիմէ, որ կայ այգիներում Ակուբանց բաղում: Ամբողջապէս քարուկիր եղած է վանքս, խոնարհած է առաստաղն, որ փայտաշէն է այժմ: Այս է Գօշ-Մխիթարի ակնարկած Հռիփսիմէի մենաստանն: Համարեա թե ընդարձակ հանգստարաններով շրջապատուած է գիւղս: Տեղացի ծերունիք այս երեւոյթը բացատրում են հետեւեալ կերպով. «Լազկին (լեկզի) քանի հետ (անգամ) եկած, սարսափելի պատերազմներ արած, թալանած, կոտորած եւ գերիներ տարած է, մանաւանդ այստեղ մեր ձորն հաւաքուած հայոց հետ: Քանի հետ զարապատղ արած են Շամքոր գետիս աջի ձորում[1]: Չորս կողմի հայերն հաւաքուած են ձորս պատերազմների ժամանակ. կուիւներում նահատակուած բոլոր հայերն թաղուած են այս հանգստարաններում, սրան համար էլ շտացալ ա մեր գերեզմանուտը»:

Ներքին-Ղօթիւլ. Գիւղատեղի հանգստարան եւ եկեղեցի, որք են Շամքոր գետակի աջ ափի վերայ, ուր կայ եւ հնուց մնացեալ այգիներ:

Մելիք-Առստամի ծագումն.

(Պատմական աւանդութիւն) «Բարսում գիւղացի Մելիք-Առստամի նախնիքն ծագած են Բագրատունի թագաւորազն սերնդից, այս է Կիւրիկեան թագաւորների յետագաներից»: Կիւրիկեան Բագրատ Բագրատունի իշխանն զինուորական ծառայութեան է մտնում վրաց մի թագաւորի մօտ, բայց անբաւականութեան պատճառաւ մի ժամանակից յետոյ ելնում է նոյն ծառայութիւնից եւ դիմում Պարսից Շահ-Աբաս Առաջնոյն: Նախ ներկայանում է Պարսից նախարարական ժողովին, ծանօթացնում իւր Բագրատունի լինելը եւ փափագ յայտնում զինուորական ծառայութեան մէջ մտնելու: Շահ-Աբաս, իւր նախարարներից իմանալով Բագրատի նպատակը, ընդունում է զինքը զինուորական ծառայութեան մէջ, այնուհետեւ հետզհետէ փորձով տեսնելով Բագրատի հաւատարմութիւնը եւ կամենալով վարձատրել նորա ծառայութիւնը՝ Շահ-Աբաս խանութիւն է տալիս նրան: Բագրատ խանից ծնւում է Առստամ-բէկն, Առստամ-բէկից՝ Այտին-բէկն, Այտին-բէկից՝ Առստամ-բէկ Բ., որ ստանալով մելիքութեան հրովարտակ՝ գալիս է նախ՝ Կուսապատ աւանն, ամուսնանում Ապրէս-աղայի Վարդխաթուն դստեր հետ, ապա՝ գալիս Գանձակ Շահվերտի խանին մօտ ներկայացնում շահական հրովարտակը եւ այնուհետեւ բնակութիւն հաստատում իւր նախնիքներից ժառանգութիւն մնացած, Բարսում գիւղումս եւ տիրում Մլզնաբերդից մինչեւ Եօթն-աղբիւր (Եոտի-բուլաղ):

1 Չորս ծածկուած է մշտադալար գի ծառերով, բաւական խոր, աճարկու, դժուարամատչելի եւ ապահով է պատըսպարուելու համար: Այստեղ կայ հարկ եղած անհրաժեշտ պիտոյք՝ պատուական ջուր, վառելափայտ, ջրաղաց: Մուտքն գետակի աջ կողմիցն է:

Կիւլստանի Մելիք-Աբով Գ. ամուսնանում է Մելիք-Առստամիս դստեր հետ եւ հաստատում սերտ բարեկամութիւն: Մելիք Առստամիցս ծնւում է Ստեփան-աղան. իսկ սորանից ծնւում են Գրիգոր, Աւագ, Աւետիս, Յարութիւն, Ստեփան, Առստամ, Յովսէփ եւ Մկրտիչ աղաներն: Մելիք-Առստամն մինչեւ իւր մահն ապրում է քաջութեամբ, տիրում իւր սեփական ժողովրդեան, որ գաղթած է Անի քաղաքից եւ բնակութիւն հաստատած Բարսում գիւղումս եւ իշխում Մլզնաբերդին եւ ի թիւս այլ գիւղօրէից Քարատակ[1] Համշափոր[2], Վերին-Ղօթիլ[3] եւ Ներքին-Ղօթիլ[4] գիւղերին: (Աւերակներս ընկած են Գարդման գաւառի արեւմտահայեաց ծայրում:

Մելիք-Առստամիս գերեզմանն գտնւում է Գանձակի Ս. Յովհաննէս եկեղեցու գաւթի հարաւային կողմում, որի տապանաքարի վերայ քանդակուած է.

«Անմոռաց յայս տապան քաջ անուանի
Հանգչի մարմինն Մելիք-Առստամի[5],
Յազգէն Բագրատունի Հայկազանց տոհմի,
Տիրող Բարսում, Գանձակ նահանգի,
Ծնեալ 1722, վախճանեալ 1794 ամի»:

Ե. ՋԱԿԻՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Բարսումի հիւսիսային կողմում, մի տեսարանաւոր տեղում. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, տեղական բերքերն՝ նոյն, սննդարար՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 80-90. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին. քահանայ՝ մի: Ծուխ 110, արբ. 459, իգ. 349, արբ. ծն. 22, իգ. 18, պսակ 10, արբ. ննջ. 9, իգ. 5:

Զ. ՁԱՐՏԱԽԼՈՒ ԳԻՒՂ. Հիմնուած է Ջակիրի արեւմտեան կողմում մի հարթավայր տեղում, որի բարձր. 5181, բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, անջրդի, հացաւէտ, տեղական բերքերն՝ նոյն, սննդարար՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 80-90 տ., եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, հոյակապ, քահանայ՝ մի:

Ծուխ 200, արբ. 770, իգ. 550, արբ. ծն. 40, իգ. 31, պսակ 20, արբ.ննջ. 15, իգ. 10:

Տղայոց միդասեան ուսումնարան. աշակերտք 35, միամեայ ռոճիկ վարժապետին՝ 300 ռուբլի:

Գիւղիս մօտ է Ոսկան նահատակ անուամբ ուխտատեղին, որ Բուլանլուղ եւս է կոչւում:

Է. ՊԱՏԻ ԳԵՂ. Հիմնուած է մի բարձրահայեաց (4973 ոտք) տեղում. բնակիչք եկած են Ջրաբերդից, Փամբակից եւ Ղարա-Մուրատ գիւղերից. հողն՝ արքունի, անջրդի, բայց բարեբեր. տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 100 տ., եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի: Ծուխ 245, արբ. 735, իգ. 713, արակ. ծն. 50, իգ. 48, պսակ 28, արբ. ննջ. 15, իգ. 14.

Ը. ՂՈՒԼԱԼԻ ԳԻՒՂ. Հիմնուած է մի խոր ձորում Տաւուշ գետակի օժանդակի (Ախնջի) վտակի աջ ափի վերայ, որ սահմանագլուխ է Փառիսոս եւ Քաւս դաւառների. (նախկին բնակիչք գերի տարուած են Պարսկաստան. այժմեան բնակիչք նախ՝ Փառիսոս քաղաքից տեղափոխուած են Մեծ-Ղարամուրատ գիւղն, ապա՝ այստեղ. հողն՝ արքունի, սակաւ, միջակ արդիւնաբեր. օդն, կլիման եւ ջուրն՝ անվնաս, երկար կեանքն՝ 80-90 տ., եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի, որ եկած է Բաշ գեղից: Ծուխ 114, արբ. 742, իգ. 601, արբ. ծն. 31, իգ. ծ. 26, պս. 15, արբ. ննջ. 8, իգ. 6:

Եկեղեցումս կայ չորս գրչագիր.

Ա. Աւետարան՝ թղթեայ, փոքրագիր. անճաշակ են չորս աւետարանչաց պատկերներն եւ նկարներն, բայց գեղեցիկ են փոքր տառերն: Յիշատակարանից. «Արդ գրեցաւ սայ ի թուաբերութեան Հայոց ՉԾԴ. յԱրարատեան գաւառիս ի տեղիս, որ կոչի Նորագեղ»: Անյայտ է գրողի անունն, նախկին ստացողն է Սիմէոն անուն ոմն քահանայ. երկրորդ ստացողն է Թանում Հայոց ՋՂԹ.-ին:

Բ. Աւետարան՝ թղթեայ. փոքրագիր. բազմապատկեր. սակայն անարուեստ, անճաշակ եւ առանց յիշատակարանի:

Գ. Աւետարան՝ թղթեայ. փոքրագիր. գրուած Հերմինի վանքում, չունի թուական, անյայտ է գրողն:

Դ. Աւետարան՝ փոքրագիր. թղթեայ: Յիշատակարանից. «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՌՃԺԸ. ի հայրապետութեան երիցս երանելոյ հովուապետին տանս Աղուանից տեառն Պետրոսի կաթուղիկոսին, թագաւորութիւն Պարսից շահ Սիլէմանին գրեցաւ ձեռամբ.. Յովհաննիսի ի յերկիրս Գանձակու ի գեաւղս. որ կոչի Հարցհակիս (տ) ի դրան Սուրբ Մլոնաբերդին. ի դառն ժամանակիս աւարտեցաք. որ հարկապահանջութիւն բազմացեալ էր եւ անօրէնքն յամենայն ժամ խրոխտային ի վերայ քրիստոնէից ազգին»:

Խորանաշատ վանք (51)

Հիմնուած է նոյն օժանդակ վտակի աջ կողմում. Ղուլալի գիւղի արեւելեան կողմում, մի գեղեցիկ հովտի մէջ: Արեւմտահայեաց ձորակիս աջ կողմում կառուցեալ է վանքս համակ տորոնագոյն սրբատաշ, պատուական քարով չորս կամարների վերայ, որոց գլխին կանգնած է մի գեղեցկաձեւ կաթուղիկէ: Տաճարս հրաշալի է Գանձասարից յետոյ. ունի մի աւագ եւ չորս փոքր խորան (իրարու վերայ) երկու խորհրդանոց, երկու դուռն, 13 մետր երկարութիւն, 10 մետր 55 սանթիմ լայնութիւն: Աւագ խորանի ստորոտով, դասահայեաց կլոր երեսին վերայ շինուած են տասն փոքրիկ, գեղեցիկ եւ խորանաձեւ կերտուածներ: Փորագրուած է խորանի մօտ.

«ՈԿԹ. ես Աւելդատ Սրտժեցի միաբանեցայ Խորանաշատ Սուրբ Աստուածածնին (ս) եւ ետու զծախս այսմ խորանիս յիշատակ ծնողաց եւ եղբաւրց իմոց Շաւուրին եւ Ապիրատին եւ վարդապետն հաստատեաց Բ. ժամ յայսմ խորանիս, Ա. ի տաւնի Վարդավառին եւ Ա. Վարագայ խաչին անխափան. հաստատ է կամաւն Աստուծոյ»:

Աւագ սեղանի ետեւ փոքրիկ խորանների գլխին. «ԱՆՈՐԷԱՍ ՈԿԷ.» «ՅՈՎՍԷՓ քահանայ ՈՀԱ»:

Հիւսիսային փոքր խորանի վերայ.

«ՈԿԵ. ես Աբրահամ Կանաչհողեցի[1] եւ ամուսին իմ միաբանեցաք Խորանաշատու Աստուածածին (նին), ետու զծախս խորանիս եւ վարդապետն հաստատեաց ինձ Բ. ժամ ի տաւնի Սուրբ Գրիգորի անխափան»:

Վանքս իւր արեւմտեան կողմին կից ունի հրաշազան գաւիթ՝ կառուցեալ չորս միապաղաղ եւ կլոր սիւների վերայ՝ նոյնպէս շինուած սրբատաշ քարով: Գաւիթս ունի 16 մետր 6 սանթիմ երկարութիւն, 15 մետր 90 սանթիմ լայնութիւն եւ չորս փոքր խորան, որոց երկուսն իրարու վերայ՝ դրան հարաւային կողմում եւ միւս երկուսն՝ հիւսիսային: Տաճարիս արեւելեան որմի վերայ արտաքուստ. «ՅԱՆՈՒՆ Աստուծոյ ես Գրիգոր որդի Վասակայ Միջկա շինեցի զԿաւշկակերանց[2] եւ տուի ի Սուրբ Աստուածածինս Խորանաշատու. վարդապետն հաստատեց մեզ Բ. պատարակ ի տաւնի Հոգեգալստեան Ա. ինձ եւ Ա. ամուսնո իմո, կատարիչքն...»:

Գաւթի հարաւային որմի վերայ կայ արեւի ժամացոյց: Այժմ տեղ-տեղ քայքայուած են վանքիս եւ գաւթիս սալկախներն եւ շրջասլարսպի պատերն. մի վանք, որ զարմացնում է այցելուները իւր երկնանման շինութեամբ եւ լացացնում իւր անցեալի փառքով եւ ներկայիս աւեր եւ ամայի դրութեամբ:

---

1 Այժմ աւերակ գիւղ. եկեղեցի եւ հանգստարան, որ կան Նիւկղարից Նոր-Փիփ տանող ճանապարհի վերայ:
2 Նոյն այժմ աւերակ, որի մէջ կայ եւ եկեղեցի եւ հանգստարան, որ կան նոյն ճանապարհի արեւելեան կողմում, Քարատակից մոտ ինչ ափի վերեւ:
3 Նոյն ճանապարհի արեւմտեան կողմում՝ եկեղեցի եւ հանգստարան:
4 Բարսում գիւղիս հարաւային հանդէպ, գետակի աջ ափի վերայ. մնում է եկեղեցին. որի շուրջն հանգստարան է:
5 Մելիքիս ծագման եւ իրաւանց եւ գործունէութեան մասին գրած է Գերազնիւ պօլկովնիկ Ց. Դաւթեան Լազարեանց տպ. ի Թիֆլիս 1877 Կովկաս. գլխաւոր Կառ. տպարանում ռուսերէն լեզուաւ:

---

1 Կանաչ-հողեցի:
2 Կոշկակերանց:

Մենաստանս ունի եւ շրջապարիսպ, որի ներսում, տաճարի հարաւային կողմում կայ մի փոքր մատուռ՝ շինուած սրբատաշ քարով, որը տեղացիք անուանում են Սուրբ Կիրակի: Այստեղ կայ մի կիսաւեր մատուռ եւս՝ շինուած հասարակ քարով, որի մէջ կան ամփոփեալներ:

Երրորդ մատուռն, որ շինուած է սրբատաշ քարով, պարսպից դուրս արեւելեան կողմումն է, միաբանից հանգստարանում: Խոնարհուած է մատրանս գլուխն, որի մէջ, ասում են, է Վանական վարդապետի գերեզմանն, որպէս վկայում է եւ Կիրակոս, բայց տապանաքարն չունի արձանագրութիւն:

Վանքս ունեցած է մեծ կալուածներ եւ հողեր, որովք ապահոված է եղել վանիս ապագան. այժմ միայն մնացած է 15 օրավար անվիճելի հող, մի աւերակ ձիթհանք, ծերունազարդ ծիրանի եւ ընկուզի ծառերով լի խոպանացեալ պարտէզ եւ պատուական քարահանք:

Աւերակ գիւղեր, եկեղեցիներ եւ հանգստարաններ կան վանքիս հեռաւոր եւ մերձաւոր շրջապատում Բլովիկ, Զիլքինլու, Ղօշաջի, Աղ-Բուլաղ, Իրիցի շէն, Սղնախ եւ Զինարի[1] կոչուած տեղերում:

Ղուլալի գիւղից վերեւ, գետակի աջ կողմի լանջի վերայ կայ մի քարուկիր մատուռ, որի մէջ, ասում են, Վանական վարդապետն բնակած է մի ժամանակ ստիպեալ թաթարների երկիւղից: Մատրիցս փոքր-ինչ վերեւ կայ գիւղատեղի, աւերակ եկեղեցի եւ հանգստարան:

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա. ՓԱՌԻՍՈՍ ԲԵՐԴ[2]. Համանուն աւերակ քաղաքին հիւսիսային լանջին կից՝ բարձրացած է մի քարաժայռ սար, որ բաղկացած է կրաքարից եւ բոլորովին առանձնացած իւր երեք կողմերից: Սարիս, որ համարեա թէ ձգուած է արեւելքից արեւմուտ դիրքով, արեւելեան եւ հարաւային կողմերն վիմահերձ ապառաժներ են եւ լայնադոդ ու խոր-խոր ձորեր. հիւսիսային կողմն ամենասաստիկ զառիվայր լանջ եւ լայնադոդ ձոր. իսկ արեւմտեան կողմից բերդասարս հաղորդակցութիւն ունի մի երկարաձիգ եւ թրաձեւ սեռով Ղանղալ սարի հետ: Բարուկիր, բրգաշատ եւ ամուր պարսպով պարսպուած են ոչ միայն հիւսիսային եւ արեւմտեան կողմերն, այլ եւ բարձր քերծերի գլուխներն: Ամրոցիս երկարութիւնն է 100 մետր, լայնութիւնն՝ մօտ 80 մետր. ունի մի դուռն արեւելեան կողմից, տասներկու աշտարակ, 3 մետր 75 սանթիմ պատի հաստութիւն: Բերդիս մէջ լի է աւերակների հոծ բեկորներով, որոց մէջ կայ երկու քարուկիր մատուռ, որոց գլուխներն խոնարհած են եւ չունին արձանագրութիւն: Բերդս ունեցած է անառիկ բառի բուն նշանակութիւնը, սակայն այժմ տեղ-տեղ քայքայուած են պարսպի պատերն:

Նշանաւոր է ամրոցիս ամենապատուական եւ յորդառատ ջուրն, որ զարմացնում է այցելուները իւր աղնութեամբ եւ սառնութեամբ եւ հնարագէտ շինուածով:

Հիւսիսային պարսպին կից ներքուստ շինուած են երկու պատկից քարուկիր եւ թաղակապ ստորերկրեայ սենեակներ, որք իրարու հետ հաղորդակցութիւն ունին մի մեծ դռնով, որ բացուած է միջնապատից: Ա. սենեակն գրեթէ կիսով չափ լցուած է հողով, իսկ Բ-ն՝ լի է ջրով: Ասում են, որ ջուրը ստորերկրեայ ականով բերած են Ղանղալ սարից՝ հաղորդակից սեռովն: Պատմում են, թէ հետաքրքիր անձինք ջրաւազանիս մէջ լցրած են յարդ, որ ելած է Ղարա-Բուլաղ անուն մեծ աղբիւրից, որ բերդիս հիւսիսային ստորոտի ձորումն է եւ դարձնում է երկու ջրաղաց: Փորձով, որպէս թէ իմացած են, որ մեծ աղբիւրն կապ ունի ջրաւազանիս հետ:

1 Մի քանի գերդաստան հատուածելով Ղուլալի գիւղից բնակութիւն հաստատած են գիւղումն, որ կայ Խորան. վանքից ներքեւ: Իւրեանց մայր գիւղի հաշուի մէջ է եւ սոցա ծխաթիւն եւ ամէն ինչ:

2 Արութիւնայ սարի հարաւային կողմում է Դինալ սարն 11057 ոտք. ապա Դեղամայ լճի եւ գաւառիս մէջ ընկած են իբր սահման Օկրուչա 11986, Սեւ խաչ (Ղարախաչ) 10081 սարերն:

Բերդիս հարաւային թերծում կան վիմափոր այրեր, որոց մէջ կայ վիմափոր ննջարան: Մուտքն ոչ եթէ բերդիս միջովն է, այլ արտաքուստ՝ քերծի տակովն (52):

Բ. ՄԱՄՐՈՒՏ ԲԵՐԴ (53). Հիմնուած է Զարէք անապատից վար Շամքոր գետակի եւ Գետաբակ վտակի ջրախառնուրդում: Բերդավայրն թեքուած է դէպի Շամքոր գետակի ձախ ափն: Բերդս ունի ամուր բուրգերով շրջապարիսպ, իսկ արեւելեան կողմից՝ կրկնապարիսպ. ունի չափաւոր մեծութիւն, ամուր դիրք, իւր միջում մի կոնաձեւ բլուր, զանազան մեծութեամբ քարայրներ եւ քարուկիր շինութեանց շատ փլատակներ: Այժմ համարեա թէ անտառապատ եւ մացառուտ է ամրոցս եւ որջ եղած աւազակների. ահարկու են քարայրներն եւ սոսկալի՝ անտառիս մէջ մտնելն:

Ջուր չկայ բերդումս, վասն որոյ ունի ստորերկրեայ ական, որով ջուր փոխադրած են բերդս Շամքոր գետակից: Հետզհետէ քայքայուելու վերայ են տեղ-տեղ ամրոցիս պարիսպներն:

Գ. Վահրամ իշխանի բերդաքաղաք ամրոցն (այժմ կոչւում է Ղալա-Բոյուն), որ հիմնուած է մի ձկնաձեւ սարի վերայ: Սարս գտնւում է Զակամ գետակի ձախ կողմում, որի դիրքն ձգուած է հիւսիսային արեւմուտքից հարաւային արեւելք: Ահա սարիս վերայ է բերդն, որ միեւնոյն ժամանակ եղած է, եւ քաղաք, ինչպէս ակներեւ երեւում է խանութների, տների եւ եկեղեցիների աւերակներից: Արդէն յայտնի է երեք եկեղեցու աւերակն, իսկ եթէ եղած է եւ այլ եկեղեցի, ոչինչ յայտնի չէ: Շրջապարիսպն, որ տեղ-տեղ կիսաւեր է, տեղ-տեղ քայքայուելու վերայ, ձգուած է սարի դիրքի ձեւով: Բերդիս մօտ կայ եւ հանգստարան (54):

Դ. Դղեակ, որ կոչւում է Ղըզ-ղալա, որ գտնւում է Ղուլալի գիւղից բաւական վերեւ, նոյն օժանդակի (Ախնջի) աջ ափի վերայ: Զրեկերքումս ցցուած է մի բարձր եւ սրածայր ժայռ, որ իւր արեւելեան կողմից ունի մի դժուարատար եւ ոլոր-մոլոր կածան: Հաղիւ թէ կալաչափ մեծութիւն ունի ժայռիս գագաթն, որի շուրջն տեղ-տեղ նշմարւում են տակաւին քարուկիր պատերին հետքերն եւ ջրաւազանի վիմափոր փոսերը: Դղեկաբարձ ժայռիս արեւելեան ստորոտի հարթակում կայ մի եկեղեցի եւ հանգստարան (55):

ԺԸ. ՔՈՒՍՏԻ կամ ՔԱԻՍ ԳԱՒԱՌ

Ա. Ղրղի (Ղարա-ղայա) գիւղ. Հիմնուած է նոյն (Ախնջի) օժանդակի ձախ կողմի բարձր սարի արեւելահայեաց լանջին վերայ. բնակչաց մի մասն՝ բնիկ եւ միւս մասն՝ տեղափոխուած Ղարա-ղայա գիւղից (գտնւում է Թարսայ գետակի վերայ): Հողն՝ արքունի, լեռնային եւ միջակ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ ցորեն, գարի, կորեկ, գարնանի, ոչխար, տաւար, գոմէշ, խոզ, տանձ, խնձոր, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, ուշագրաւ՝ տեսարանն, երկար կեանք՝ 90 տարի. Սուրբ Յովհաննէս եկեղեցին, որ նոր կառուցեալ է վեց սիւների վերայ, քահանան գալիս է Նորաշէնից:

Ծուխ 84, ար. 541, իգ. 449:

Կիսատ խաչարձան. Ղըզ-ղալա դղեկի հիւսիսային հանդէպ, նոյն օժանդակի ձախ ափում ճանապարհի վերայ ընկած մի կիսատ խաչարձան, որի արձանագրութիւնը, թէեւ եղծուած է տեղ-տեղ, այնուամենայնիւ արժան համարեցինք նոյնութեամբ ընդօրինակել. «... ութեամբ ողորմեալ ես... Կիւրիկէի, զԱբասայ աւազան է... որդեկիր եւ զտէր Յովհաննէս ե... սի արձան շին... իյո տափին աւետարան... ի ձորի բերաք աշխատութեամբ խաչս կանգնեցաք հանդիսիւ բարեխաւս առ Քրիստոս Յիսուս յահեղ աւուրն դատաստանի»:

Զօրաւոր. Ղրղի գիւղիս արեւմտահարաւ կողմում հարաւահայեաց մի խոր ձորի հարաւահայեաց լանջի վերայ կայ գիւղատեղի, հանգստարան եւ փոքր եկեղեցի, որի մօտ՝ մի կոտորուած խաչքարի վերայ.

«Ես Յոհան հայր եւ եղբայր իմ Տիրած էր կանգնեցաք զխաչերս, Քրիստոս Աստուած ող...»: Հանգստարանում մի խաչքար տապանաքարի վերայ. «խաչս ՈԵ. թիւ տէր Աթանասի...»:

Եկեղեցուցս փոքր-ինչ հեռի կայ մի հանքային թթու ջուր, որ յար եւ նման է Շուշուց վեր եղած թթու ջրին:

Վանական վարդապետի քարայրն (56). Զօրաւորի հիւսիս-արեւմտեան կողմում մի բարձր քերձի գլխին կայ մի քարայր, որի մէջ է մի վիմափոր փոքրիկ եկեղեցի, եւ որի մէջ կայ մի գերեզման: Քարայրիցս հեռի չէ աւերակն, որի մէջ կայ եկեղեցի եւ հանգստարան: Աւերակս այժմ կոչւում է Շլորուտ (սալոր-սալորուտ):

Ահա այս է Կիրակոսի «Ոլորուտ» անուանած գիւղի աւերակն:

Բ. ԶՈՐԱԹԱՆ ՇԷՆ. Հիմնուած է Ղրղի գիւղի հիւսիսային կողմում, մի տեսարանաւոր տեղում. բնակիչք՝ բնիկ, հողն՝ բէկական, անջրդի, բայց հացաւէտ. տեղական բերքերն՝ նոյն. պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 90-100 տարի:

Եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, ծածքն՝ փայտաշէն եւ առանց փոքր խորանի. երկարութիւնն՝ 18 մետր, լայնութիւնն՝ 9 մետր 65 սանթիմ:

Արտաքուստ դրան արեւմտեան կողմում. «ԹՎ. ՌՃԼԲ. յանուն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ մեղապարտ Ովանէս եպիսկոպոսին Խորանաշատու»:

Խորանի հիւսիսային կողմում. «Սուրբ խաչս բարեխօս Ովանէս եպիսկոպոսի աշակերտ տէր Դաւթի»:

Քահանան գալիս է Մովսէս գիւղից:

Գրչագիր աւետարան թղթեայ, անճաշակ պատկերներով եւ անագնիւ գոյներով, գրուած է ոմն Սարգիս անուն անձի ձեռնով. «Արդ գրեցաւ սայ ի յերկիրս Աղուանից ի գաւառս Մաղաւուզայ ի գիւղս, որ կոչի Վաղազուն ի դուռն սուրբ ուխտիս թվիս ՌՂԱ.»: Ստացողն է Մանկասար անուն ոմն:

Իսկ գիւղիս հանգստարանում, որ արեւմտեան կողմումն է, կայ մի մատուռ Բարձրեալ անուն, որ ուխտատեղի է:

Ծուխ 28, ար. 198, իգ. 170:

Գ. ՄՈՎՍԷՍ ԳԻՒՂ. Հիմնուած է Տաւուշ գետակի աջ կողմում մի ձորի մէջ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի եւ բաղմարդիւն. տեղական բերքերն՝ նոյն, օդն, կլիման եւ ջուրն՝ անվնաս, տեսարանն՝ խեղդուած, երկար կեանք՝ 80 տ., եկեղեցին՝ Սուրբ Գէորգ, քարուկիր, կիսատ. քահանայ՝ երկու:

Ծուխ 74, ար. 507, իգ. 488:

Դ. ՆՈՐԱՇԷՆ ԳԻՒՂ. Հիմնուած Զորաթանի արեւմտեան կողմում մի փոքր ձորակի ձախ լանջին վերայ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի, անջրդի, հացաւէտ. տեղական բերքերն՝ նոյն. անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 80 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, հոյակապ, կառուցեալ չորս սիւնների վերայ, երկարութիւնն՝ 19 մետր 75 սանթիմ, լայնութիւնն՝ 10 մետր 45 սանթիմ. քահանայ՝ մի:

Ծուխ 38. ար. 351, իգ. 262:

Միդասեան ծխական ուսումնարան, աշակերտք 40, թոշակաւոր 35, տարեկան ռոճիկ վարժապետի 300 ռուբլի:

Ե. ԿԱՐՄԻՐ-ԱՂԲԻՒՐ (Ղզըլ-Բուլաղ). Գիւղս շինուած է մի սարահարթի վերայ՝ Նորաշէնի արեւմտեան կողմում. բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի եւ միջակ բարեբեր. տեղական բերքերն՝ նոյն. պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 88-95 տարի, եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, ծածքն՝ փայտաշէն.

«Ես տէր Վարդանս շինեցի զեկեղեցիս ձեռամբ Մուրադխանի թվ. ՌՃԾ.»:

«Սուրբ խաչս Խանաղին»:

«Ովանէս եպիսկոպոս շինեցի զեկեղեցիս ձեռամբ տէր Գրիգորին»:

Քահանայ՝ մի: Ծուխ 105, ար. 602, իգ. 494:

Զ. ԲԵՐԴ-ԳԻՒՂ (Թովուզ-ղալա). Շինուած է Տաւուշ գետակի ձախ ափի վերայ. բնակիչք՝ բնիկ. (մասամբ եկամուտ), հողն՝ արքունի, անջրդի եւ միջակ բարեբեր, տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն՝ օդն, կլիման եւ աղնիւ՝ ջուրն, երկար կեանք՝ 85 տարի. եկեղեցին՝ Սուրբ Գրիգոր (կանխաւ շինուած է եղել չորս սիւնների վերայ, բայց խոնարհած է գլուխն), ծածքն՝ փայտաշէն.

երկարութիւնն՝ 21 մետր 70 սանթիմ. լայնութիւնն 10 մետր 62 սանթիմ: Ներքուստ արեւմտեան որմի վերայ.

«Անուն Աստուծոյ ես թիփլիզեցի Չիթախէնց մղտեսի խոճա Սուլիս շինեցի եկեղեցիս, խորանս Շացոռոյոիհն (՞) սրբազան եպիսկոպոսին Թաւուզա երկրիս Մելիք-Ղորխմազին[1] կամակցութեամբ յիշատակ հոգւոյ իմոյ եւ ծնողաց իմոյ Թաղի եւ Բէկխալթանի եւ կողակցին իմոյ Դարիճանին եւ որդոյ իմոյ Ստեփանին եւ կողակցին Ասլիզատին, Յարութիւնին եւ կողակցին Բէկիխաթունին եւ Պողոս Սարկաւագին եւ դստերացն իմոյ Ապաշխարող Աննային եւ Հռիփսիմէին, Շահրուպանին եւ իւր դուստր Քեւոժվանին, փեսայ Մելքոնին եւ իւր դուստր Բէկիսուլթանին»:

Քահանայ՝ մի: Ծուխ. 101, ար. 598, իգ. 458:

Գիւղիս արեւմտեան կողմում կայ Սուրբ Սարգիս ուխտատեղի քարուկիր մատուռ, որի մօտ կայ ընդարձակ հանգստարան:

Սուրբ Սարգսից վերեւ Աւագ-Սուրբ-Նշան քարուկիր մատուռ, որի մօտ կայ մանր խուցեր եւ որ ուխտատեղի է:

Գիւղիս հարաւային կողմում, գետակի աջ ափի վերայ մի ծառի տակ կայ մի վարդապետի գերեզման:

Է. ՆԱԻՈՒՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Բերդի արեւմտեան կողմում. բնակիչք՝ հաւաքածոյ, հողն՝ արքունի, տեղական բերքերն՝ նոյն, օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, երկար կեանք՝ 100 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին. քահանայ՝ մի: Գիւղիս մօտերքում կան մանր լճակներ եւ գեղեցիկ խաչարձաններ:

Ծուխ 34, ար. 253, իգ. 205:

Ը. ՏԱՒՈՒՇ ԳԻՒՂ (57) Թովուզ. Հիմնուած է Բերդ գիւղի հիւսիսային կողմում, մի ձորի հարաւահայեաց լանջի վերայ. բնակիչք՝ հաւաքուած[2] զանազան տեղերից. հողն՝ արքունի եւ սակաւ արդիւնաւէտ, տեղական բերքերն՝ նոյն (կայ եւ այգի), անվնաս՝ օդն, կլիման, պատուական՝ ջուրն, նեղ՝ հորիզոնն, խեղդուած՝ տեսարանն. երկար կեանք՝ 80 տարի, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն, բեմն եւ ժողովրդահայեաց երեսներն խաչազարդ, որք բերուած են հին հանգստարանից, մի քանիսին վերայ կայ արձանագրութիւն.

«Սուրբ խաչս է Վանէսին եւ Հռիասմոնոյ եւ Գոհարին եւ 'ի վեր Քրիստոս Աստուած, վաշ վաշ... Վարդան կազմող (խաչիս) ՌԿԷ.»:

«Սուրբ խաչս բարեխաւս Փարուն»:

«,, ,, ,, Մխիթար... Քիրամ կազմող թվ.. ՌՀԹ.»:

Եկեղեցուս հիւսիսային կողմում կայ մի առանձին փոքր խորան (բացի փոքր խորանից), որ ուխտատեղի է. ոչ ոք չգիտէ գիւղացիներից, թէ ի՞նչ ուխտատեղի է:

Քահանան գալիս է Բերդից:

Ծուխ 95, ար. 663, իգ. 502:

Գիւղիս անդերում կան հետեւեալ աւերակներն.

1) ԽԱՉԱՂԲԻՒՐ գիւղիս հիւսիսային կողմում, որի մօտ կան խաչարձաններ:

2) ՔԱՐՈՒԿԻՐ ՄԱՏՈՒՌ Դոբնկեանայ բերդի հարաւային ստորոտում, որ ուխտատեղի եղած է կանխաւ (գիւղիս արեւելեան կողմում):

3) ՍՈՒՐԲ ԿԻՒՐԱԿԻ մատուռ (գիւղիս հարաւային հանդէպ Կածարէթի լանջի վերայ), որի մէջ կայ քարեայ խաչարձան՝ մնացեալ է հնուց՝ եւ որ ուխտատեղի է:

4) ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ՄԱՏՈՒՌ (Կածարէթի մօտ հարթակի վերայ հին հանգստարանում, գիւղիս հարաւային հանդէպ), որի ծածքն փայտաշէն է եւ ունի խորանումն մի խաչարձան:

5) ՁԻՆՁԻՆ. Գեղեցիկ ցանքսերով զարդարուած բարձր սարահարթ (գիւղիս արեւմտեան

1 Անկարելի եղաւ իմանալ, թէ սա ինքն միայն իշխա՞ծ է Տաւուշի ձորիս, թէ՞ եղած են եւ այլ իշխողներ. մելիքութիւնը իւր նախնիքներից ժառանգած է, թէ՞ իրանից սկսուած է, յետագայ իշխող մելիք ժառանգ ունեցա՞ծ է, թէ՞ ոչ: Միայն յայտնի է, որ հայ եղած է եւ մականուն է ՂՈՐԽՄԱԶՆ եւ ոչ մկրտութեան:

2 Աւանդաբար ասում են «ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԳԵՐԻ ՏԱՐԱԾ ԵՆ ԳԻՒՂԻՍ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ»:

կողմում), ուր կայ գիւղատեղի, հանգստարան եւ եկեղեցի, որի ծածքն փայտաշէն է:

6) ՂՈՋԱՆԱՅ ՇԻՆԱՏԵՂ. Զինչինի արեւմտահիւսիս կողմում, ուր կայ հանգստարան եւ մի աւերակ եկեղեցի, որից մնացած է միայն սեղանի կլորակ թաղն:

7) ԿԱՊՏԱՎԱՆՔ, որ գտնւում է Ղոզանայ շինատեղի արեւմտեան կողմում մի անտառապատ սարահարթի վերայ, որի հիւսիսային խորանդունդ ձորով հոսում է Հասան վտակն: Վանքս շինուած է կապտագոյն[1] մեծ-մեծ եւ անտաշ քարերով: Վանքս կառուցեալ է չորս կամարների վերայ, որոց ոտքերն զետեղուած են պատերում: Մենաստանս ունի խաչաձեւ շինուածք, մի աւագ խորան, չորս փոքր խորաններ, երկու դուռն հարաւային եւ արեւմտեան կողմերից, մի գեղեցկաձեւ կաթուղիկէ, 11 մետր 50 սանթիմ երկարութիւն, 9 մետր լայնութիւն եւ երկու խորհրդանոց:

Արեւմտեան դրան վերայ. «Ա. աւր պասխային Նոր կիւրակին եւս ՀԱՆԷս արդեամբ կառուցի եկեղեցիս հոգոյ իմոյ... թվ. Ո.»:

Հարաւային դրան վերայ. «Անուամբ Աստուծոյ ես Աջիշէր որդի Գորգորոյ ըմբերիս միաբանեցայ այս եկեղեցիս. բնակիչք եկեղեցուս գրեցին Բ. պատարագ յայտնութեան ճրագալուցին ինձ, միւսն ամուսնոյն իմոյ, կատարողք աւրհնեալ եղիցին»: Սորա մօտ. «ՈՁԳ. ես Աբլհասան միաբանեցայ այս եկեղեցիս եւ հայրս եւ միաբանքս գրեցին մին աւր պատարագ սուրբ խաչին...»:

Մենաստանս ունեցած է մի քանի խուցեր եւ շրջապարիսպ. բայց այժմ տեղ-տեղ թափուած են կաթուղիկէի եւ տաճաց սալկախներն, միջից ջարդուած է սեղան քարն, քայքայուած են խաչաձեւի հարաւային եւ արեւմտեան վերնամասերն, շրջապարսպի եւ խուցերի ամենամեծ բաժիններն: Բայց կան ամփոփեալ միաբաններ վանքիս մօտերքում:

Մենաստանս իւր հարաւային կողմում ունի մի նշանաւոր աղբիւր, որի ջուրն իւր հազուագիւտ ազնուութեամբ, ասես թէ, անմահական է:

Թ. ԹԱԹԼՈՒ ԳԻՒՂ. Հիմնուած է Տաւուշ գիւղի հիւսիսային կողմում Հասան վտակի աջ ափում. բնակիչք՝ բնիկ (նախ բնակած են եղել Պառաւաքար կոչուած տեղում, որ գտնւում է մեւնոյն անդում, ապա փոխուած են այստեղ) հողն՝ արքունի, սակաւ եւ նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ նոյն, օդն եւ կլիման՝ ծանր ամռան եւ տենդաբեր. երկար կեանք՝ 70 տարի, եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, ծածքն՝ փայտաշէն. քահանայ՝ մի: Ծուխ 96, ար. 519, իգ. 415.

Ժ. ՀԱԽՈՒՄ ԳԻՒՂ. Հիմնուած է Թաթլուից վերեւ նոյն վտակի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք հաւաքուած են զանազան տեղերից. հողն՝ արքունի եւ միջակ արդիւնաբեր. ջրաբեր են վտակահովիտներն. տեղական բերքերն՝ նոյն. համարեա թէ նոյն են օդն եւ կլիման, ջուրն՝ պատուական, երկար կեանք՝ 75 տ., եկեղեցին՝ Սուրբ Նշան, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի: Ծուխ 82, ար. 448, իգ. 379:

Տաճարումս կան հետեւեալ աւետարաններն.

Ա. Աւետարան՝ մագաղաթեայ, փոքրադիր, անյայտ գրողի անունն, ժամանակն եւ տեղն:

Բ. Աւետարան՝ թղթեայ, մեծադիր: Յիշատակարանից. «Գրեցաւ սուրբ աւետարանս եւ ի դառն եւ ի նեղ ժամանակիս ի լաւ, ընտիր աւրինակէ ի յերկիրս Վերին Զակամ 'ի գիւղս՝ որ կոչի Շաքար բէկ ձեռամբ մեղաւք զառածեալ Յովհաննէս իրիցու, որ եմ ի յերկրէն Գանջայոյ 'ի գեղէն Շատախոյ, որդի մահտեսի Դաւիթ քահանայի 'ի հայրապետութեան սուրբ Աթոռոյն Էջմիածնայ տեառն տէր Մովսէսին, որ կրկին լուսաւորեաց զՀայաստան աշխարհս եւ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, հայրապետութիւն Աղուանից տէր Յովհաննիսին, որ մատնեցաւ ի ձեռն պարսիկ ազգին, տարան ի դուռն Շահին, վերջն Աստուած գիտէ եւ եպիսկոպոսութեան պարոն տէր Բարսեղին ի թուականիս Հայոց ՌՁԲ. ի ժամանակս Շահ Աբասին...»: Յետոյ գրուած է կարմիր թանաքով. «Աստուածաշունչ աւետարանս վախմ 'ի արէ 'ի դուռն սուրբ Աստուածածնի տաճարիս, որ է հրանց անապատ Ղարամուրատու... առաջնորդ սուրբ ուխտիս Յովհաննէս եպիսկոպոս հրանց անապատիս Ղարամուրատու թիւին ՌՃԻԳ.-ին գրեցաւ ձեռամբ անարժան Եղիա աբեղային...»:

1 Գուցէ այս յատկութիւնից ստացած լինի ԿԱՊՏԱՎԱՆՔ անունը կամ ԿԱՊՏԵԼ, բայից՝ կապտուած:

Հուսկ յետոյ շարայարուած է. «Ողորմութեամբն Աստուծոյ Նորոգեցաւ սուրբ աւետարանս 'ի դուռն եղնասարա անապատն... Պետրոս սարկաւագին ՌՁՂ. ապրիլ ա.»:

Գ. Աւետարան՝ թղթեայ, միջակ դիրքով. որ ունի չորս աւետարանչաց պատկերներ, բայց չունի ո՛չ յիշատակարան եւ ո՛չ թուական:

Դ. Աւետարան՝ թղթեայ, փոքրադիր: Յիշատակարանից. «Արդ գրեցաւ սայ յամի թուաբերութեանս Հայոց ՋԾԴ.: Ի վանս Գլակայ ի դուռն սուրբ Կարապետի ծեռամբ... Մարտիրոսի, որ մականուն աբեղայի, ի հայրապետութեան տէր Սարգսի Հայոց Կաթուղիկոսի...»:

Ե. Աւետարան թղթեայ, պատկերազարդ. (խիստ անճաշակ եւ անարուեստ). «Արդ գրեցաւ աւետարանս յընտիր աւրինակէ ի թուիս Հայոց ՌԼԵ. ի գեաւղն՝ որ կոչի Դվնիկ ի դուռն սուրբ Սարգսին ծեռամբ Ներսէս գրչի» (գրուած է Ղուկասի վերջում): Տաճարումս ամփոփուած է Գրիգոր եպիսկոպոս Մանուչարեանի մարմինն:

Պառաւաքար. Այս անուն ուխտատեղի կայ Հախումի հիւսիսային հանդէպ համանուն վտակի ձախ կողմում, մի բերդաձեւ սարի գլխին: Զորս քարով պատուած է ուխտատեղուս շուրջն, որի մէջ կայ չորս խաչաքար տապանաքարով գերեզման. եւ այլ համանման գերեզմաններ:

ՇԽՄՈՒՐԱՏԱՅ ՎԱՆՔ

Հիմնուած է Հախում գիւղից բաւական վերեւ, Հասան վտակի ձախ ափին, մի բարձր եւ ցից ժայռի ներքեւ, ճանապարհի տակ: Վանքս կառուցեալ է խաչաձեւ, տաշուած մոխրագոյն չիչ քարով. ունի մի աւագ եւ չորս միմեանց վերայ շինուած փոքր խորան, երկու դուռն արեւմտեան եւ հարաւային կողմերից, երկու խորհրդարան, մի գեղեցիկ կաթուղիկէ. 9 մետր երկարութիւն, 7 մետր 40 սանթիմ լայնութիւն: Հարաւային դրան վերայ եղած է գաւիթ, որ փլած է այժմ:

Գաւթիս արեւելեան կողմում կայ խորան, որի ճակատակալ քարին վերայ.

«Յամի Կ. երորդի, Ե. երորդի Նորո շրջակայիս ես տէր Գրիգոր շինեցի խորանիկս աստուածաբնակ հրամանաւ Սադորնո մեծի իշխանի վասն յիշատակի ննջեցելոց իւրոց եւ յաւետենականութիւն անձին իւրոյ, որք սպասաւորէք ի սմա, զիս զտէր Գրիգոր եւ զծնողս իմ յաղաւթս յիշեսջիք ընդ նմին եւ այլ զազգատոհմն»:

Տաճարիս հիւսիսային փոքր խորանի ճակատին.

«Յանուն Աստուծոյ ես Դանիէլ եւ Այլարայ միաբանեցաք վանքս եւ տուաք յայտնութեամբ ժամերայ տոհին...»: Ուշագրաւ է այն երեւելի խաչարձանն, որ կանգուն է տաճարիս հարաւարեւմտեան կամարակալ ոտի ճակատին. այո՛, ասում եմ, որ իւր գեղարուեստի նրբաքանդակ ճարտարութեամբ զարմացնում է այցելուները: Վանքիս բուն արձանագրութիւնն կայ արեւմտեան դռնագլուխ քարի ճակատին, որը անկարելի եղաւ կարդալ:

Վանքս ունի եւ երկրորդ գաւիթ իւր արեւմտեան կողմում, որի վերնամասն՝ թաղն, շինուած է սրբատաշ չիչ քարով՝ երկու սիւների վերայ, եւ որի երկարութիւնն հիւսիսից հարաւ 10 մետր, արեւմտից արեւելք 8 մետր 40 սանթիմ է: Այժմ խոնարհուած է գաւթիս գլուխն, որ իւր մէջ ամփոփուած ունի շատ ննջեցեալներ, բայց անարձանագիր են տապանաքարերն: Տաճարս ունեցած է շրջապարիսպ եւ միաբանից խուցեր, սակայն քանդուած են այժմ: Վանքիս տանեաց վերայ բուսած են ծառեր: Վանքիս արեւելեան կողմում, ոչ այնքան հեռի, կայ գիւղատեղի եւ հանգստարան Շխմուրատ անուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԱՒԵՐԱԿՆԵՐ. Վանքիցս բաւական վերեւ վտակաձորիս ձախ կողմում կայ Քարագեղ, Աղսու եւ Խաչբուլաղ անուն գիւղատեղի, հանգստարան եւ կիսաւեր ու աւերակ եկեղեցիներ:

ԶԻՆԱՐԻ կոչուած տեղում, որ կայ Հախումեցւոց գոմերի մօտ, կայ գիւղատեղի եւ Սուրբ Գէորգ անուն մի մատուռ, որի մէջ կան խաչարձաններ եւ որի ծածքն փայտաշէն է:

ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՎԱՆՔ (58)

Հասան վտակի ձախ կողմում մի տեսարանաւոր սարահարթի վերայ հիմնարկուած է հրաշալի վանքս, որ շրջապատուած է թանձր անտառով: Շինուած է յար եւ նման Գանձասարի ձեւով, բայց երկնագոյն սրբատաշ քարով, որ ունի մի աւագ եւ ութ փոքր խորան (չորսն արեւմտեան կողմում) մի գեղեցկաձեւ կաթուղիկէ, երկու դուռն՝ հարաւային եւ արեւմտեան կողմերից. 15 մետր 60 սանթիմ երկարութիւն, 10 մետր 70 սանթիմ լայնութիւն: Հարաւային դրան ճակատակալ քարի վերայ. «Շինեցաւ եկեղեցիս ձեռամբ Յովհաննէս վարդապետի հրամանաւ եւ իշխանութեամբ իշխանաց իշխանի Վասակայ որդւոյ... պոռնկի բարսաւ (?) եւ սատակեցար չարաչար» (թերիմաստ է բանս):

Տաճարիս հիւսիսային որմի վերայ ներքուստ.

«Ի թվ. ՈԶ. (1231) ընդ այլ աշխարհս հոլովս հարաւ գաւազան եւ ցասումն Աստուծոյ գաւառն Խլաթա ի ձեռն Խորազմին եւ Թամթարին, ընդորս եւ մեծահռչակ սուրբ ուխտս Վարագային շինեցեալ վասն մեղաց մերոց յայսմ ամի. ես Ղուկաս հայր Վարագայ առեալ զտիեզերահամբաւ սուրբ նշանն զշնորհեալն յԱստուծոյ ի փառս մարդկան ի ձեռն Պատրոնիկեայ եւ Սուրբ Հռիփսիմեանց եւ Թոդկաւս վեց ամ շրջեցայ թափառեալ ի տեղւոյ ի տեղ. ապա ի կամսն Աստուծոյ ամենատես խնամոց տեառն հասի ի նոր բերդն առ Քրիստոսասէր իշխանն Վասակ յաստուածաբնակ անապատ կոչեցեալ վանքս եւ ազդումն հնչեալ առիս հաճոյանալ սուրբ Նշանիս ի տեղւոջս. նկարեցի եւ զգեղաղէշ եկեղեցիս արժանի հանգստեան սորա եւ մեծարեալ ի քրիստոնէիցս՝ առի զվանքս եւ ետու զխաչս եկեղեցիս այս միջնորդութեամբ եւ վկայութեամբ տեառն Յովհաննու շինողի եկեղեցոյս՝ առաջի հրեշտակաց եւ մարդկան եւ հաստատեցաւ ինձ ի տաւնի սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի, Յակովբայ եւ Յովհաննու յամէնայն եկեղեցիս պատարագ: Արդ եթէ ոք հանել ջանայ աստի, կապանս եւ անէծս ժառանգեսցէ ի հոգի եւ ի մարմին անբժշկելի ի սուրբ Նշանէս եւ յամենայն սրբոց Աստուծոյ: Որչափ այս եկեղեցիս շէն է, մի՝ ոք իշխեսցէ զխաչս[1] հանել եւ զիմ յիշատակս խափանել, ապա թէ ոչ, նախ զինքն ջնջեսցէ ի կենաց գրոցն եւ ի յիշմանէ Աստուծոյ. ասասցեն հրեշտակք եւ մարդիկ, եղեցի, եղեցի»:

Արեւմտեան դրան ճակատակալին վերայ.

«Ի թվին ՈՁԶ. (1237) ես Վասակ որդի Դաւթի, որդւոյ Վասակայ, ի տանէ Բագրատունի ի տոհմէ Դաւթայ մարգարէին ի փառս Աստուծոյ կառուցի զեկեղեցիս, զոր շինեցի ի ձեռն Յովհաննու եւ ընծայեցի զԾաղկագուզի իւր կոպարովն ի վանս ի Քրիստոս եւ հաւանութեամբ եղբարցս հաստատեցաւ ինձ պատարագ յայտնութիւն եւ զատիկն յիմ շինեալ մեծ եկեղեցիս, որպէս իմ հարն յիւր շինեալ փոքր եկեղեցին գրեցաւ եւ կնքեցաւ, անուամբ Աստուծոյ յաւուր՝ յորում Վարագայ հայրն Ղուկաս զսուրբ Նշանն եդ յեկեղեցիս: Արդ, թէ ոք զմեր տուեալ գիւղերս ի մեր եկեղեցոյս հանել ջանայ եւ զմեր յիշատակն խափանել, թէ քրիստոնեայ է ի Քրիստոսէ եւ յիւր ընտրելոցն է նզոված, եւ թէ յայլազգեաց՝ յԱստուծոյ եւ ի դենէ եւ յառաջնորդաց իրեանց եւ մեր մեղացն պարտական է յաւուրն դատաստանի եւ ասասցէն ամէն, եղիցի, եղիցի»:

Վանքս ունեցած է եւ հրաշալի գաւիթ, որի գլուխն փլած է այժմ, եւ որի երկարութիւնն է 14 մետր 50 սանթիմ, եւ լայնութիւնն՝ 13 մետր 20 սանթիմ. եւ ունի սոյն արձանագրութիւնը. «Թվ. ՉԺ. կամաւ Աստուծոյ ես Հայրուտս վայելեալ զձիավարժ իշխանութեան եւ հասեալ յայս տեղի՝ զարհուրեցայ ի սպառնալեաց եւ դիմեցի յեղբարանոց անապատիս առ ոտս տեր Յովհաննէս շինողի սուրբ ուխտիս եւ ստացայ զտնակս տակս յիշատակ ինձ եւ իմոցն...»:

Մենաստանիս հարաւային կողմին կից է մի այլ վանք իւր գաւթով միասին: Այս է Վասակի հայր Բագրատունի Դաւիթ իշխանի շինեալ տուածն, ինչպէս իւր արձանագրութեանց մէջ յիշեց արդէն Վասակ իշխանն: Այժմ խոնարհած է եւ գաւթիս գլուխն:

Իսկ իւր հիւսիսային կողմին կից՝ մեծ վանքս ունի մի առանձին խորան, որ քայքայուելու վերայ է: Ունեցած են վանքերս եւ շրջապարիսպ եւ միաբանից խուցեր, որք բոլորովին քանդուած են այժմ: Վանքերիս վերայ գործ դրուած են տորոնագոյն, երկնագոյն եւ կանաչագոյն քարեր, որոց հանքերն գտնուում են վանքիս հարաւ-արեւմտեան կողմում ոչ այնքան հեռի:

Երեւում է, թէ վանքս բերուած է խողովակներով այն ջուրն, որ հոսում է հարաւային ձորով. այժմ յայտնի է ջրաւազանն եւ ուրեք-ուրեք աւերուած խողովակներն. ջուրն ընդհատուած է եւ վանքս՝ անմարդաբնակ:

Կայ այլ եւս երկու մատուռ. մին վանքի հարաւային եւ միւսն հիւսիսային կողմում: Այս կողմումն է եւ միաբանից հանգստարանն:

ԺԱ. ԱՇՈՒՂԻ կամ ԼԱԼԻ գեղ. Հիմնուած է Աղստեւ գետակի աջ կողմում. Վարագեան լեռնաբազկի հիւսիսահայեաց լանջի մի սեռի վերայ. բնակիչք տեղափոխուած են Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից. հողն՝ արքունի եւ կիսով չափ ջրարբի, տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ տեսարանն, բարեխառն՝ օդն եւ կլիման եւ բարեհամ՝ ջուրն, երկար կեանք՝ 85 տարի. եկեղեցին՝ նոր սկսեալ. քահանան գալիս է Ուզուն-Թալայից:

Ծուխ 30, արբ. 140, իգ. 113:

Ա. ԴԻՏԱՐԱՆ կամ ԴԻՏԻԻԱՆ. Հիմնուած է Ղազախ քաղաքից վերեւ, նոյն գետակի եւ արքունի ճանապարհի աջ կողմում մի բլրակի վերայ, որ ունի բոլորշի ձեւ եւ քարուկիր շինութիւն, որի գոյութիւնն շատ հին չէ:

Բ. ԴԻՏԱՐԱՆ շինուած է թրծեալ աղիւսով եւ կրացեխով եռայարկ, նոյնպէս բոլորշի, որ կայ Ուզուն-Թալա կայարանի հանդէպ գետակի աջ կողմի ափի վերայ: Շատ հին չէ եւ այս, որ ունի վերնայարկում հրացան արձակելու ծակեր եւ որն ճեղքուած է վերից վար:

ԺԲ. ՈՒԶՈՒՆ-ԹԱԼԱ գիւղ. Հիմնուած է Վարագեան լեռնաբազկի հիւսիսահայեաց լանջերի եւ սեռերի վերայ. բնակիչք՝ կիսով չափ բնիկ եւ կիսով չափ տեղափոխուած Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից. հողն՝ արքունի, արդիւնաւոր եւ կիսով չափ ջրարբի, տեղական բերքերն՝ նոյն (ունի այգի եւ պարտէզ). օդն, կլիման եւ ջուրն՝ սննդարար, երկար կեանք՝ 90 տարի. եկեղեցի՝ երկու, արեւելեանն՝ Ամենափրկիչ՝ քարուկիր, կառուցեալ չորս բոլորշի սիւների վերայ, որ ունի 17 մետր երկարութիւն, 11 մետր լայնութիւն. մի քահանայ: Իսկ արեւմտեանն՝ Ս. Աստուածածին, նոյնպէս կամարակապ չորս սիւների վերայ, որ ունի 15 մետր 15 սանթիմ երկարութիւն, 9 մետր 15 սանթիմ լայնութիւն եւ մի քահանայ: Երկու թաղերում միասին՝ քահանայ՝ 2:

Ծուխ 133, արբ. 650, իգ. 500:

Միդասեան ծխական ուսումնարան. աշակերտք՝ 50, տարեկան ռոճիկ վարժապետին՝ 300 ռուբ.:

ՍՐՎԵՂ ՎԱՆՔ[1]

Հիմնուած է Համզա սարից դէպի Ուզուն-Թալա խոնարհուած լեռնաբազկի հարթակին վերայ, որ անտառապատ է եւ ուշագրաւ: Մենաստանս շինուած է թրծեալ աղիւսով եւ կրացեխով բացի հիմունքներից, որք քարաշէն են: Վանքս ունի չորս փոքր եւ մի աւագ խորան, երկու լուսամուտով մի վեղարաձեւ կաթուղիկէ, երկու դուռն՝ հիւսիսային եւ արեւմտեան կողմերից, բարձրագոյն շինուածք, 15 մետր 60 սանթիմ երկարութիւն, 10 մետր 22 սանթիմ լայնութիւն: Վէմ քարի վերայ.

«Կանգնեցաւ Սուրբ Նշանս ի բարեխաւսութիւն Ո. ամի»: Հիւսիսային որմի վերայ աւազանից արեւմուտք. «Թիւ ՈԱ. ես Արտաւազ եւ Սարգիս շինեցաք զեկեղեցիս ձեռամբ Յովհաննիսի...»: Վանուցս արեւելեան-հիւսիսային կողմում արտաքուստ. «ՈԾ. թուին ես Անանիաս որդի Սուրբ ուխտիս բարեխաւսութեամբ աւրն աղաւթ... երկրպագէք»:

Վանքս նորոգուած է զանազան ժամանակներում. զորօրինակ երեւում է շինութեան նշաններից եւ ծեփի հետքերից:

1 Վանքումս չէ կենաց փայտի մասն, զի այժմ անմարդաբնակ է մենաստանս:

1 Բացատրում են երկու տեսակ իմաստով. Ա. վեղարի նման սրածայր կաթուղիկէ ունեցող վանք: Բ. Սարու հողշիկաձող-վանքատեղ:

Արեւմտեան դրան վերայ. «Ես Ասդոհի տղայ Մխիթարս սուրբ Սրվեղի Բ. դուռս շինեցի (նորոգեցի), ով կարտայ, ողորմի ասի թվ. ՌՃԽԱ.»:

Բոլորովին աւերակ են մենաստանիս խուցերն եւ շրջապարիսպն եւ ձիթահանքն եւ բուսած են վանքի տանեաց վերայ մի քանի հացի եւ բռշնի ծառեր եւ. վնասուած են հիւսիսային կողմի ձեղունն եւ արեւմտեան հիւսիսային անկիւնն:

Մենաստանիս հիւսիսային կողմում, պարսպի ներսում կայ Սուրբ Աստուածածին անուն մի եկեղեցի, որի ծածքն փայտաշէն է եւ ուխտատեղի:

Խեցեղէն խողովակներով վանքս բերուած է վաղուց ԿԵՈՒՌ (Յորդ) աղբիւրն, այժմ չէ հոսում ջուրն, բայց կայ ջրաւազանն եւ խողովակների հետքերն:

Վանքիս շրջապատում կան երեք գիւղատեղիներ եւ հանգստարաններ, որք ծածկուած են թանձրախիտ անտառներով:

Վանքիս հիւսիսային կողմում, ճանապարհի վերայ կան կարմիր, կանաչ եւ դեղին գոյնով հեղեր, որովք գիւղացիք ներկում են կարմիր, կանաչ եւ դեղին գունով թելեր:

Սուրբ Նշան մատուռ, որ գտնւում է Ուզուն-Թալա եւ Աշուղի գիւղերի միջեւ: Քարուկիր է, հնաշէն եւ անարձանագիր. որի մօտ կայ գիւղատեղի, հանդստարան եւ դեղեցիկ ծառեր:

ԺԳ. ՌԵԻԱԶԼՈՒ շէն. Հիմնուած է Ուզուն-Թալայի արեւմտեան կողմում նոյն սարի (Համզայի) հիւսիսային ստորոտում, նոյն գետակի աջ ափի բարձրութեան վերայ. բնակչաց կէս մասն՝ բնիկ, միւս կէսն՝ փոխադրուած Սոլի գիւղից. հողն՝ արքունի եւ միջակ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն. եկեղեցին՝ Սուրբ Գրիգոր, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի:

Ծուխ 22, ար. 107, իգ. 98:

Ռեւազլու եւ Խաչթառակ գիւղերի միջեւ կայ մի ընդարձակ գիւղատեղի, երկու հանգստարան՝ զարդարուած խաչարձաններով, ձիթահանքի քարեր եւ խաղողի որթեր:

ԺԴ. ԽԱՉԹԱՌԱԿ (Սարհատլու). Գիւղս շինուած է նոյն սարի ստորոտում, բնակչաց մի մասն՝ բնիկ եւ միւսն՝ տեղափոխուած Ջրաբերդի եւ Կիւլստանի գիւղերից. հողն՝ արքունի եւ սակաւ արդիւնաբեր, տեղական բերքերն, օդն եւ կլիման՝ նոյն, երկար կեանք՝ 85-90 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն. քահանան գալիս է Հաչա-ջուր գիւղից:

Ծուխ 60, ար. 410, իգ. 342:

Ղամիշ-կեօլում, որ կայ գիւղիս արեւմտեան կողմում, կան գիւղատեղի, հանդստարան եւ եկեղեցի, որից մնացած է այժմ խորանի գլխի թաղն:

ՄՈՐՈՅ ՁՈՐՈՅ կամ ԾՌՎՋԻ ՎԱՆՔ

Հիմնուած է գիւղիս գրեթէ հարաւային կողմում, Ծուվիզ կոչուած գոմերի մօտ, ձորի աջ կողմում: Կառուցեալ է խաչաձեւ սրբատաշ չիչ քարով: Վանքիս երկարութիւնն է 7 մետր 20 սանթիմ, լայնութիւնն՝ նոյնչափ: Այժմ քանդուած են արեւմտեան կողմի կամարն, արեւելեան կամարի կէսն եւ կաթուղիկէի սալկանն: Խորանի հիւսիսային կողմում.

«Թ. ՈԿՋ. ես Մխիթար եւ ամուսին եմ միաբանեցաք եկեղեցւոյս եւ ետուն մեզ ժամ Աստուածածնին Բ. մին ինձ, Ա. (միւսն) Հարկեւորին, ով խափանէ, մեր մեղաց պարտական է, գրած աղին արծաթագին»:

«Յանուն Աստուծոյ ես Սասնայս միաբանեցայ իմ որդաւքս Մորոյ-ձորոյ Աստուածածնիս եւ հայրս Գրիգոր եւ այլ միաբանքս ետուն ինձ տարին Բ. ժամ զՎարդավառին շաբաթ աւրն եւ զկիւրակէն Ա. աւրն ինձ, Ա. Շուշանկան...»:

Հիւսիսային կողմում. «Անուամբ ամենակալին Աստուծոյ ես Գեաւրկի (Գեօրկի) թագաւորաց[1] թագաւոր ետու զՄորոյ Ձորոյ վանս ի հայր Յովհաննէս եւ արարի ազատ յամենայն հարկէ. ամիր Քրտին հոգացողութիւն (թեամբ) որ ինձ աղաւթս անեն. որ մեր հրամանացս հակառակ լինի, Աստուծոյ հրամանին է հակառակ, հաստատ է գիրս անուամբ Աստուծոյ»:

Կաթուղիկէի արեւմտեան կողմի վերայ արտաքուստ. «Ես հայր Գրիգոր... վանքս շինեցի Աստուածածնին...(անընթեռնելի)»: Արդէն հերկուած են միաբանից խուցերի եւ շրջապարսպի տեղերն, որոց արեւելեան կողմում կայ գիւղատեղի եւ հանգստարան:

ԺԵ. ԿԱՐՎԱՆՍԱՐԱ (կարաւանի իջեւանելու տեղ). Գիւղս շինուած է Աղստեւ գետի աջ ափի վերայ, Աղատան վտակի աջ ու ձախ կողմերի վերայ. գիւղիս նախկին բնակիչներն գերի տարուած են Պարսկաստան եւ ցրուած են մնացեալներն: Այժմեան բնակիչք տեղափոխուած են Երեւանի Ղրխ-Բուլաղ, Արգն եւ Կեամրիս գիւղերից (անյայտ է տեղափոխուելու ստոյգ թուականն), հողն՝ արքունի, մեծ մասամբ անջրդի. նուազ արդիւնաւէտ, բայց այգեւէտ. տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 90-100 տարի. եկեղեցին՝ Ամենափրկիչ, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ երեք:

Ծուխ 115, ար. 751, իգ. 613:

Տղայոց միդասեան ուսումնարան, ուր ուսանում են 77 տղայք, թոշակատու՝68, ձրիավարժ՝ 9, տարեկան ռոճիկ վարժապետին՝ 310 ռուբլի:

Եկեղեցումս կան հետեւեալ գրչագրերն.

Ա. Աւետարան՝ մեծադիր, թղթեայ, պատկերազարդ. միջակ գեղեցկութիւն ունին պատկերներն, ծաղիկներն, թուչնագրերն եւ նկարներն: Փտած եւ թափուած են յիշատակարանի կէսն, միայն մնացած է. «... Գրեցաւ Հայկական թուականիս ՉՀԱ. յանապատս Աղուանաձոր (Վանայ կողմերում) ընդ հովանեաւ սրբուհւոյ մաւրս լուսոյ Աստուածածնիս եւ Վասիլ թագաւորի սուրբ Նշանիս եւ այլ եւ այլ հաւաքեալ սրբութեանցս ի դանութեան Բյուստիտին (?) եւ ի քահանայապետութեան տեառն Զաքարիայի ձեռամբ ամենամեղ եւ անարհեստ գրչի Յակոբայ մեղապարտ... հանդէպ սրբարար ծովուն, ուր մանր ձկունք ելանեն... ստացող սորա Մոսէս կրաւնաւոր հանդերձ ծնողիւք եւ եղբայրք կենդանեաւք...»:

Վերջին յիշատակարանից. «Գրեցաւ ի թուին Հայոց ՊԵ. են ի դուռն սուրբ Նախավկային ձեռամբ սրբոյ Էջմիածնի նուիրակ Սիմէոն վարդապետի յառաջնորդութեան սուրբ սքանչելագործայ տեառն Ներսիսի եպիսկոպոսի, վկայութեամբ բազմաց ժողովրդոց...»:

Բ. Աւետարան՝ փոքրադիր, թղթեայ, ամբողջապէս գլխագրով գրուած, որի սկզբից պակաս են թերթեր, վասն որոյ չունի յիշատակարան: Սակայն նայելով գլխագրերի ձեւերին՝ 800 տարուայ գրուած լինելու է աւետարանս:

Գ. Աւետարան՝ միջակ դիրքով, թղթեայ, որ ունի միայն չորս աւետարանչաց անճաշակ պատկերներ. Յիշատակարանից. «Եւ ես յետինս ի կրաւնաւորաց... Գրիգոր եպիսկոպոս... գծեցի զսա մեղսամած մատամբ իմով ի Բջնի ընդ հովանեաւ երկնանման աթոռոյ սուրբ Աստուածածնիս ի հայրապետութեան տեառն Սարգսի (Բ-ի) Հայոց վերադիտողի ի թուաբերութեանս Հայոց ՋԻԷ... եւ արդ ես պատրոնս եւ ամուսին իմ Մելիքխաթուն ստացաք զսուրբ աւետարանս ի յարդար վաստակոց մերոց եւ տուաք ընծայ ի դուռն սուրբ Ամենափրկիչ Աշտարակու եւ սուրբ Մարիամին եւ սուրբ Կամբրաւորին ի վայելումն մանկանց սոցա»:

«... եւ ես տէր Գրիգոր եպիսկոպոս Աշտարակեցի նստելով եպիսկոպոս իմ ի սուրբ աթոռս ժԷ. ամ եւ Ջ. ամիս գրեցի զսուրբ աւետարանս...»:

Դ. Աւետարան՝ փոքրադիր, թղթեայ, պատկերազարդ, որք նկարուած են ճաշակով, արուեստով եւ ընտիր գոյներով, ընկած է յիշատակարանի կէսն, վասն որոյ մնում է անյայտ գրողի անունն, տեղն եւ թուականն: Միայն գրուած է Մատթէոսի վերջում. «Ջստացող սուրբ աւետարանիս զբարեմիտ եւ հաւատարիմ տանուտէր Յովհաննէսն եւ զեղբայրն իւր զՄարտիրոսն, որ ստացաւ զսուրբ աւետարանս... թվ. ՌՃԻԱ.»:

Ե. Աւետարան՝ միջակ դիրքով, թղթեայ, պատկերազարդ (անճաշակ են). Յիշատակարա-

1 Վրաց Գէորգի թագաւորն եւ Թամար թագուհու հայրն, որ թագաւորեց 1156-1184 թուականն Փրկչին:

նից. «Արդ գրեցաւ եւ աւարտեցաւ սուրբ աւետարանս ի գաւառս Միջագետաց յԱմիթ մայրաքաղաքի ընդ հովանեաւ Թէոդորոսի զինուորին եւ ամենասրբուհի կուսին Մարիամու Աստուածածնի եւ սուրբ Կարապետին Յովհաննու եւ Գէորգայ զաւրավարին ի հայրապետութեան տեառն Կոստանդնի Վահկեցոյ եւ ի վերադիտողութեան Ամիթ Շահաստանի տեառն Մկրտչի աստուածաբան վարդապետի եւ արքեպիսկոպոսի ամենայն միջագետաց եւ երիցփոխանի Կաթուղիկոսի ամենայն Հայաստանեայց եւ մինչ ի ծայրս արեւելեան իշխեցողի, եւ ի թագաւորութեան ամենայն միջագետացս պարունայց պարոնի, որ կոչի Շահ Աւթման պահաթուր ի թվ. Հայկականս տումարի ՊՅ. երորդի, յորում ամի մերկացաւ սուրն վաղակաւոր յազդերէ իւրմէ եւ վասն ծովացեալ մեղաց սուր պատուհասի Աստուծոյ տարածեցաւ տարաժամ մահ ընդ ամենայն երկիր եւ առաւել եւս բարկութիւնն Աստուծոյ տեղեաց յԱմիթ մայրաքաղաքի եւ իսպառ կոտորեաց զամենայն առհասարակ առաւել քան զանդրանկածախն Եգիպտոսի, որպէս յանապատի զԻսրայէլ եւ յաւուրս Դաւթի Հէ. հազարացն. զի անկաւ ի ժողովրդենէն ՁՌ. (6000) արանց միայն, զորս ի թիւ արկին, թող զանհամարսն եւ զայն, որ արտաքոյ քաղաքին ի Գաւառսն եւ ի գեաւղսն, որ եւ բազում աւանս անմարդաբնակ արար, մինչ զի չորքոտանիքն յամայի շրջէին եւ ամենայն հայրենիք կողոպուտ եղեն յարքունեան: Եւ արդ ոչ ոք կարէ ընդ գրով արկանել կամ լեզուաւ ճառել զաղէտս կսկծանաց եւ զողբս տարակուսանաց եւ զհառաչանս սրտից եւ զգործս տարակուսանաց, որ գործեցան ի միջի մերում, զի բարկութիւն Աստուածային էր եւ սաստիկ էր հրաման... յամենայն ուրեք ողբ հառաչանաց եւ յամենայն տուն գործս տարակուսանաց լալումն որբոց եւ աղաղակ այրեաց, կըսկիծ ծերոց եւ մաղկատումն մանկամեռ մարց, յամենայն լեզուէ վա՛յ եւ յամենայն բերանոց ապաշաւանք... Մայտեսի Ազիզն... որ ստացաւ զսուրբ աւետարանս... եւ ընծայեաց սուրբ աւետարանս նուիրէք սուրբ Թորոս զաւրավարին... եւ կայցէ սուրբ աւետարանս յիշատակ անջնջելի... յիշեցէք ի Քրիստոս... զԳրիգոր գրագիր, որ գրեաց զսա յընտիր աւրինակէ, այլեւ զԱբրահամ վարդապետ, որ զարդարեաց զսա ծաղկով»:

«Նորոգեցաւ սուրբ աւետարանս ի թվ. ՌԽԴ.ի քաղաքն յԱմիթ ի դուռն սուրբ Կիրակոսի, ի յառաջնորդութիւն Ամթայ Ղուկաս քաջ ռաբունապետին... ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ քրիստոնեայքն խիստ նեղութեան կային. հարկապահանջութիւն շատացեր էր ի վերայ քրիստոնէիցն. մէկ խարաջ մի Գ. Դ. ղուրիշ կառնին, հա՜նց (այնպէ՛ս) թանգութիւն, որ չարէք ցորեն ԺԳ. շահի կու առնեն. այս տարի մեռաւ Խոնթքար Մուրատն եւ թագաւորեց որդի Մահմուտ փաշան...»:

Սուրբ Գրիգոր մատուռ, շինուած անտաշ քարով, խոնարհուած է ծածքն, որ գիւղիս արեւելեան կողմումն է: Գեղեցկաքանդակ խաչարձաններով զարդարուած է մատրանս ներսն եւ ուխտի օրն է Աստուածածնայ վերափոխումն:

Խոզ-մարագ կոչուած տեղում կայ գիւղատեղի եւ հանդստարան:

ԺԶ. ՎԵՐԻՆ–ԱՂԴԱՆ. Շինուած է Կարվանսարայի հարաւային կողմում, Աղդան վտակի աջ ու ձախ ափերի վերայ: Գիւղս բաժանուած է երեք թաղի՝ Ներքին, Միջին եւ Վերին. բնակիչք տեղափոխուած են Ներքին-Աղդանից, հողն՝ արքունի, լեռնային եւ միջակ արդիւնաբեր, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 100 տարի, եկեղեցին՝ երկու, Ներքին թաղինն՝ Աստուածածին[1], վերի թաղինն՝ Նորաշէն (դեռ չունի անուն), քահանայ՝ մի: Ծուխ 90, արբ. 686, իգ. 638:

Գիւղիս արեւելեան կողմում, սարի ստորոտում կայ ընդարձակ հանդստարան, որի մէջ կան խիստ հին ամփոփեալներ: Տապանաքարերից շատերն ունեն խաչարձաններ: Մի անտաշ քարի վերայ, որի խաչարձանն չկայ. «Խաչս բարեխաւս Սուլթանի Նաւին»: Այլ քարի վերայ. «Խաչս բարեխաւս Ասպըտէրին ամենայն ՆՆջեցելոց» (բազմախաչ է տապանաքարս):

«Սուրբ խաչս Ավաքին ամուսին»: Սորանից փոքր-ինչ վերեւ է գիւղատեղին եւ եկեղեցու աւերակն, որ շինուած է եղել մի սեռահարթի վերայ, որի շուրջն պարսպուած է եղել ահագին քարերով: Այժմ մնացած են միայն եկեղեցու եւ պարսպի աւերակներ:

1 Եկեղեցումս կայ մի մասունք արծաթեայ աջի մէջ, որը հերկելու ժամանակ գութանն հանած է հողի տակից, յայտնի չէ, թէ որ սրբի մասունքիցն է:

ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿԻ ՄԱՏՈՒՌ

Մի միապաղաղ քարի վերայ շինուած է մատուռս, որ կայ եկեղեցու աւերակի հարաւային հանդէպ, ձորի ձախ կողմի սեռի վերայ: Մատուռս, որի չորս պատերն շինուած է անտաշ եւ թաղն՝ տաշուած քարով, ունի մի խորան, երկու խորհրդարան, չորս լուսամուտ, մի դուռն արեւմըտեան կողմից եւ մի կախու զիկէ եւ 14 մետր շրջապատ, արտաքուստ չափելով: Դրան ճակատակալ քարին վերայ.

«Կամաւն Աստուծոյ, դանութիւն Արղունին, թագաւորութիւն Դեմետրի ես Մկրտիչս շինեցի զեկեղեցիս ծնողաց իմոց եւ վասն թողութեան մեղաց իմոց. ամէն. թիվ. ՉԼԵ.»: Հիւսիսային սեմ խաչարձանի ստորոտում. «Աստուծով ես Ալափես ետու զմարանս Մարկոս. ՄԽ. (խթար) քահանա ետ ա. պատարագ զգաւիթս ի սուրբ խաչին» (տօնին): Մատրանս շուրջն հանգստարան է, ինկ հիւսիսային կողմում խիստ մօտ կան խուցերի աւերակներ:

Անանուն մատուռ. Շինուած միւնոյն սեմի վերայ, փոքր-ինչ վերեւ մացառուտների մէջ, որ աւերակ դրութեան մէջ է այժմ:

Քոսի աղբիւր. Երկու պատուական ջրով աղբիւրներ են, որք ըղխում են աւերակ մատրան ստորոտի ձորից եւ հոսում Սուրբ Կիրակի մատրան հարաւային ձորով: Աղբիւրներիս ակների մօտ կայ մի տորոնագոյն խաչարձան, որի մօտ լուացուելով սրբւում են բորոտութիւնից:

ԼԱՉԻՆ-ՂԱՅԱԻ-ՁՈՐ

Գտնւում է Վերին-Աղդանի հարաւային սարի մէջ մի ջրաձորի վերի մասումն: Այս մի խորագոյն, հորիզոնն նեղ, անտառապատ, ահարկու եւ մթնագին ձոր է, որ ունի միայն մի մուտք ջրաձորով-հիւսիսից հարաւ: Վերնամասն գոգաւոր է եւ ամէն կողմերից անմատչելի: Սոյն մասում կան քարայրներ, բայց մին անմատչելի է այժմ, քանզի աւերուած է վերևակ կածանն եւ ոտից կռուաններն: Ահա այս ձորում եւ այրերում պատսպարուած են շրջաբնակ հայերն եւ ազատ մնացած լեկզիների աւերիչ արշաւանքներից եւ գերեվարութիւնից: Երեք տարի առաջ ձորիցս գտած են տասներկու պղնձայայ ափսէ եւ երկու արոյրէ աշտանակ:

Անապատ. Մրղուզ սարի արեւմտեան ստորոտում, Սալա գիւղի մօտ (այժմ թրքաբնակ է, որ կանխաւ եղած է հայաբնակ) կայ մի փոքր վանք՝ անապատ անուն, շինուած սրբատաշ քարով: Բացի անապատից գիւղումս կայ քարուկիր մեծ եկեղեցի եւ ընդարձակ հանդստարան:

Գետաշէնում (Զայքեանդ), Թարսա-չայի աջ կողմում, կայ մեծ եկեղեցի եւ հանդստարան: Մինչդեռ կանխաւ հայաբնակ եղած է, այժմ թրքաբնակ է:

Հանքային ջուր, որ գտնւում է մօտ կէս մղոնից աւելի վերեւ նոյն ջրի ձախ ափումն եւ կոչւում է տաճկ. Ղոթուր-բուլաղ: Յար եւ նման է ըստ ամենայնի ջուրս Շուշուց վերեւ եղած թթու ջրին:

ԺԷ. ՆԵՐՔԻՆ–ՃԱՄԲԱՐԱԿ. Շինուած է նոյն վտակի (Թարսայ-չայի) աջ ափում, հանքային ջրից վերեւ, բնակիչք՝ ընիկ, հողն՝ արքունի եւ խիստ սակաւ արդիւնաբեր, քանզի մօտ 8000 ոտք բարձր է սոցա բնակութեան եւ ցանքսերի տեղերն. տեղական բերքերն՝ ցորեն, գարի, ոչխար, տաւար եւ գոմէշ. գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն ամռան. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քահանան գալիս է Վերին-Ճամբարակից:

ԺԸ. ՎԵՐԻՆ–ՃԱՄԲԱՐԱԿ. Շինուած նոյն վտակի աջ կողմում մի առուակի աջ ափի վերայ. ամենայն ինչ նոյն. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, քարուկիր եւ հին, քահանայ՝ մի:

Ծուխ (երկու գիւղերում միասին) 67, արբ. 550, իգ. 440:

Գիւղիս արեւմտեան հանդէպ վտակի ձախ կողմի բարձրութեան վերայ կայ գիւղատեղի, հանդստարան եւ եկեղեցու աւերակ:

Վիմափոր խաչարձաններ. Գօշ առուի ձախ ափում, Թարսա-չային խառնուրդին մօտ, ճանապարհի գլխին, ապառաժ քերծի ճակատին փորուած է երեք խաչ, երկուսն՝ մեծ եւ մին՝ փոքր:

Մեծերի գլխին. «Գրիգորոյ է». իսկ տակին. «ՈՁԳ. թուին Հայոց»:

ԺԹ. ՂՕՇԱՅ-ՎԱՆՔ-ՇԷՆ. Շինուած է Թարսա-չայի ձախ կողմում՝ Հովուի սարի (Զոբանդաղի 8435 ոտք) ստորոտում, մի արեւելահայեաց լանջի վերայ. բնակիչք 1855-ին տեղափոխուած են այստեղ Զաւէ գաւառի Կոթ, Դոստլու, Գվեղ եւ Սոի գիւղերից. հողն՝ վանքապատկան, տեղական բերքերն՝ նոյն, օդն, կլիման եւ ջուրն՝ պատուական, քահանայ՝ մի, հոգեւոր պէտքերն կատարւում են վանքումն: Ծուխ 25, ար. 140, իգ. 130:

ԳՕՇ-ՄԽԻԹԱՐԱՅ ՎԱՆՔ (59)

Հիմնարկուած է շինիս մէջ մի գեղեցիկ հարթակի վերայ. բարձր եւ անտառապատ լեռներ պատած են վանքիս եւ շինիս հարաւային, արեւմտեան եւ հիւսիսային կողմերը. բաց է միայն արեւելեան կողմն եւ լոգաւոր խոր փոս վանքիս եւ շինիս տեղն: Մենաստանս շինուած է յանուն Սուրբ Աստուածածնայ. ամբողջապէս տորոնագոյն տաշուած քարով եւ հոյակապ կառուցեալ չորս բարձրաշէն կամարների վերայ՝ Գանձասար վանքի իսկական ձեւով: Վանքս ունի չորս փոքր եւ մի աւագ խորան, երկու խորհրդարան, տասներեք լուսամուտ, մի վեղարաձեւ կաթուղիկէ, երկու դուռն՝ արեւմտեան եւ հիւսիսային կողմերից. 15 մետր 75 սանթիմ երկարութիւն, 11 մետր 50 սանթիմ լայնութիւն: Շարժից վնասուած են արտաքուստ արեւելեան որմն, կաթուղիկէն եւ տեղ-տեղ սալկախն, իսկ ներքուստ՝ արեւմտեան եւ հարաւային կողմերն:

Աջակողմեան դասի Բ. խորանի ճակատին.

«Ի ՈԽ. թուին զկնի չորս ամաց առնլոյ զԵրուսաղէմ Սալահադինին՝ սկսեալ եկեղեցիս սուրբ ի նորս Գետիկ եւ կատարի ամս է, ի խանգար զատկին յունաց ձեռամբ վարդապետին Մխիթարայ ի հայրութեան Վարդանայ, ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանին Վախտանկայ եւ նորին զուգակցին Արզու խաթունին, եւ նորին եղբարցն Սմբատայ, Վասակայ եւ խորթն[1] Գրիգորոյ եւ նոցին զաւակացն: Լիցի նոցա պատարագ յեկեղեցիս ի տաւնի սուրբ Աստուածածնին Գ. աւուրն. բայց զԱ. Հասանայ հաւրն Վախտանկայ. Ա. մաւրն նոցին Մամի՛ն եւ Ա. հաւրն Արզու խաթունին Քրդին բարեպաշտի անխափան»:

Աւագ խորանի վերայ.

«Յուսով ողորմութեան Աստուծոյ ես Ճարս որդի պարոն Ումիկին, թոռն Ճարին, աշխարհաւ Մանածկերտացի յաշխարհակալութեան Ղարա նուին ՝ի թագաւորութեան վրաց Դեմետրի Բագրատունոյ իմ հայրն Ումիկ գնեալ էր զԳետիկ ՝ի ԽՌ. կարմիր տուգատի. ես Ճարս դրեցի զՀովս (գեղս) իւր ամէն սահմանաւք ի դառն ժամանակի, որ հայրենիքն աժան էր եւ ոսկին թանկ. ԴՌ. կարմիր տուգատ տուի Գետկայ Աստուածածնին իմ հոգոյ տանս յիշատակ անջնջելի իմ ծնողացն Ումիկին եւ Թագուհւոյ, ինձ եւ իմ որդեացն Արղութին եւ իւր եղբարցն, առաջնորդութեամբ Դասապ վարդապետին. եւ միաբանքս սահմանեցին զաւագ Ե. շաբաթ աւրն, եւ զատկի աւրն զամէն եկեղեցիքս պատարագ որչափ մեք կենդանի եմք՝ մեր ծնողացն լինի, եւ յետ ելից մերոց յաշխարհէս՝ մեզ լինի: Արդ՝ ով այս գեղս հանել ջանայ յայս եկեղեցւոյս, կամ զիմ յիշատակն խափանէ ով ոք եւ իցէ, որ լինիցի ի ծննդոցն Ադամայ, եղիցի նզովեալ ՀԼԲ.»:

Վանքս ունի եւ գաւիթ, որ կառուցեալ է չորս միապաղաղ եւ բոլորակ սիւների եւ ութ կիսասիւների վերայ տաճարի արեւմտեան կողմին կից՝ նոյնպէս սրբատաշ քարով: Գաւթի կնդրոնի ուղղութեամբ շինուած է մի ութանկիւնի դմբէթ իբր երդիկ: Գաւիթս ունի չորս խորան. տասնեւմի լուսամուտ, մի երդիկ, երկու դուռն, 15 մետր 79 սանթիմ երկարութիւն (հիւսիսից հարաւ), 13 մետր 40 սանթիմ լայնութիւն: Արեւմտեան դրան վերայ. «... Եցի ես որդի Գայլաձագին միաբանեցայ սուրբ Աստուածածնիս. հաստատեցին մեզ Դ. պատարագ ի տաւնի Յովհաննու Կարապետին զկնի յայտնութեան զԱ. իմ հաւրն Գայլաձագին, զԱ. իմ մաւրն Մամաքին. զԲ. իմ եղբարցն Բուսլանին եւ Աղբերկանն. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ ի թվ. ՉԽԲ.»:

Երկրորդ վանք, որ կոչւում է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, պատկից է գրեթէ Սուրբ Աստուածածին վանքին հարաւային կողմին: Շինուած է յար եւ նման մեծ տաճարի ձեւով, բայց առանց գաւթի: Սուրբ Գրիգորս ունի 11 մետր 90 սանթիմ երկարութիւն, 9 մետր 12 սանթիմ լայնութիւն, բայց քանդուած է ամբողջ կաթուղիկէն, խորանի կամարի վերի քարերից մի քանիսն, հարաւային կողմի երկրորդ կամարի քարերից մի քանիսն եւ սալկախներ:

Աւագ խորանի վերայ.

«Շնորհիւն Աստուծոյ եւ կամակցութեամբ եղբարցս եւ միջնորդութեամբ տէր Գրիգորիսի գրեցաւ յիշատակ եղբաւրս մերոյ Պետրոն Արտաւազայ. միաբանք Սուրբ ուխտիս սահմանեցաք ՝ի տաւնի Դաւթի եւ Յակոբայ մատուցանել պատարագ ամենայն եկեղեցիքս զկէսն Արդաւազայ եւ զկէսն ամուսնոյն իւրոյ Աւթային, որ խափանէ, դատի ՝ի տեառնէ»:

Հիւսիսային փոքր խորանի դրան վերայ.

«Ի տաւնի սուրբ խաչին Ա. աւրն պատարագ Խաչատուր վարդապետին եւ եղբարց իւրոց եւ ծնողացն, զի նոցա ընչիւք շինեցաւ խորանս»:

Հարաւային փոքր խորանի դրան վերայ.

«Ծառայն Աստուծոյ Գերգ (Գէո՞րգ) եւ ամուսին իւր Կատայ եւ զաւակունք նոցին շինեցին իւրանց ընչիւք զխորանս. Բ. աւր պատարագն նոցա է ՝ի տաւնի սրբոցն Գէորգայ. խափանողքն դատին ի Տեառնէ»:

Տաճարիս դրան ճակատակալ քարին վերայ.

«Յուսովն Աստուծոյ Բ. եղբարքս Մարտիրոս եւ Գրիգոր, եւ ամուսին Թամար միաբանեալ Եփրեմաւ շինեցաք զեկեղեցիս, վասն որոյ տնկեցաք եւ զայգիսն. տէր Յովհաննէս եւ միաբանքս ետուն նոցա պատարագ զեկեղեցիս Բ. տաւնն սրբոյն Գրիգորի զԵ. խորանս Մարտիրոսի, Գրիգորի, Փիրաժի, Թամարին, Նազխաթունին եւ Մատթէոսի անխափան. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ ՈՁ»: (Արեւի ժամացոյց տաճարիս հարաւային արտաքուստ որմի վերայ):

Երրորդ տաճար. Սուրբ Կարապետ, որ համարեա թէ կից է մեծ տաճարի գաւթին հարաւային որմին: Այս եւս շինուած է համակ սրբատաշ քարով մի կամարի վերայ: Քանդակազարդ են բեմն եւ խորհրդարաններն եւ զոյգ լուսամուտներ ունի մեծ խորանն: Տաճարս ունի երկու փոքր եւ մի մեծ խորան, հինգ լուսամուտ, մի դուռն, 6 մետր 90 սանթիմ երկարութիւն, 5 մետր 38 սանթիմ լայնութիւն:

Տաճարիս հարաւային որմի վերայ արտաքուստ.

«Ի ՈՁԶ. ես Գրիգոր որդի Ս... միաբանքս ետուն զաւագ խորան եկեղեցւոյս ինձ պատարագ...»: Խախտուած են Սուրբ Կարապետիս հարաւային որմի արտաքին երեսի քարերն եւ թափուած մի քանիսն սալկախի հետ:

Սուրբ Կարապետիս դրան աջ ու ձախ կողմերում արտաքուստ դրուած են երկու քարեայ ականաւոր խաչարձաններ, որք դրաւում են այցելուների ուշադրութիւնը իւրեանց սխրալի քանդակագործութեամբ: Հարաւային կողմինն կոտորուած է ստորոտի մօտից. անվնաս է հիւսիսայինն, որի ստորոտում քանդակուած է . «Պաւղոս», որ է շինող վարդապետի անունն:

ՋԱՆԳԱՏՈՒՆ

Եռայարկ եւ բարձր շինութիւն է, որ գրեթէ պատկից մեծ տաճարի գաւթի հիւսիսային կողմին: Մարանատուն է գետնայարկն, որ պատերի արտաքին երեսներն շինուած են ահագին անտաշ քարերով: Միմեանց միջով անցած են չորս կամարներ, որոց ոտքերն հաստատուած են չորս պատերի մէջ զետեղուած ութ կիսասիւների վերայ հիանալի ճարտարապետութեամբ: Գետնայարկս, որի յատակն լի է ահագին քարուկիր հորերով-տաքարներով, ունի վեց լուսամուտ եւ մի դուռն: Միջնայարկն գաղտնի պահարան է: Խաչաձեւ շինուած է վերնայարկն, որ ունի մի դուռն հարաւային կողմից, երկու փոքր սեղաններ Գաբրիէլ եւ Միքայէլ հրեշտակապետաց անուամբ,

1 «Վախթանկայ Խաչենոյ տեառն Հաթերքոյ, եւ եղբարց իւրոց՝ Գրիգորոյ եւ Գրիգորիսի եւ Խոյդանայ եւ Վասակայ» (Կիր. եր. 125, տպ. ՝ի Մոսկ. 1858):

արեւելեան կողմում մի լուսամուտ (միջնասիւնով զոյգ լուսամուտ) հիւսիսային եւ մի՝ արեւմտեան կողմից: Մուտքի առաջ կայ մի ծակ, որից ներս մտնելով՝ մարդ գտնում է զինքը թանձրամած խաւարի մէջ: Ահա այս է միջնայարկ գաղտնի պահարանի դուռն: Այժմ խոնարհուած է զանգատանս կաթուղիկէն:

Արձանագրութիւն. «Կամաւն Ամենակալին Աստուծոյ ի թվիս ՉԽ. մենք երկու եղբարքս Դասապետ վարդապետ եւ Կարապետ եղաք հիմն եւ ի վերայ եղաք զանգակատուն եւ եկեղեցի յանուն հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի սակաւ ընչիւք մերովք եւ քեռոյն մերոյ Իգնատիոսի. արդեամբք բազմաւք եղաք եւ պարիսպ շուրջ եկեղեցեաւքս եւ այլ աշխատութիւնս ըստ մերում կարի: Սարգիս վարդապետն հայր վանիցս եւ միաբանքս հաստատեցին զատկին եւ ճրագալուցին պատարագ, յոր եկեղեցին Դասապետ վարդապետին եւ Կարապետին սահմանեսցին: Արդ աղաչեմ զամէնայն ժառանգաւորսդ յիշման արժանի արարէք զամէնայն աշխատեալսն ի սմա, եւս առաւել Զաքէոսն եւ Գրիգորն»:

Սեղանատունն, որ ընդարձակ շէնք է եւ որի գլուխն ամբողջապէս խոնարհուած է այժմ, պատկից է զանգատան գետնայարկի արեւմտեան եւ գաւթին՝ հիւսիսային կողմերին: Չորս պատերն շինուած են անտաշ մեծ-մեծ քարերով. երկարութիւնն է 17 մետր եւ լայնութիւնն՝ 12: Ուսանողաց եւ միաբանից թիւն թէ որքա՞ն մեծ եղած է, դիւրաւ կարելի է մակաբերել սեղանատանս մեծութիւնից: Այժմ քայքայուած են միաբանից բոլոր սենեակներն եւ շրջապարիսպն՝ թողլով միայն իւրեանց տխուր հետքերն եւ աւեր հիմքերն:

Շատ տապանաքարեր կան բոլոր տաճարների արեւմտեան կողմերում եւ սակաւ՝ արեւելեան: Իսկ մեծ տաճարի արեւելեան կողմում կայ մի փոքր մատուռ՝ շինուած սրբատաշ քարով, որի մասին ոմանք կարծում են, թէ դրադարան եղած է:

Սուրբ Հռիփսիմէ մատուռ

Այսպէս են անուանում մատուռը, որը շինուած է համակ սրբատաշ քարով նախորդ տաճարների ձեւով, որ գտնւում է շինամիջում եւ որ ունի 5 մետր 70 սանթիմ երկարութիւն եւ նոյնչափ լայնութիւն:

Ներքուստ հարաւային որմի վերայ. «Ի տաւնի սուրբ Գէորգայ Ա. պատարագ Շերանշահին է անխափան»: Կաթուղիկէի վերայ. «Զ. Տէր Աստուած ողորմեա՛ Խաչատուր վարդապետին եւ Բարսղին շինողաց եկեղեցւոյս եւ ամենայն աշխատողացն ի սմա»:

Մատրանս մօտ եւս կան ամփոփեալներ:

Հոգին Սուրբ մատուռ

Սուրբ Հռիփսիմէ մատուռից վերեւ է շինի գլխին, որ ունի եւ գաւիթ: Մատուռը եւ գաւիթը նորոգած է պ. Սմբատ Փարսատանեանն: Գաւթումս կայ երկու տապանաքար. հիւսիսային շիրմաքարի վերայ փորագրուած է. «Մխիթար»: Ահա այս է Գօշ-Մխիթարի գերեզմանն, որի գլխատակի հողը բժշկութեան համար հաւատով այնքան տարած են, որ մեծ փոս ձեւացած է: Իսկ հարաւային տապանաքարին վերայ. «Գրիգոր քահանայ»: Մատրանս եւ գաւթիս շուրջն լի է խիտաւխիտ գերեզմաններով: Մատրանս հարաւային կողմում կայ պատուական խաչարձանով մի տապանաքար, որի վերայ քանդակուած է. «Ոգոյն հարազատ եղբարք Պաւղոս եւ Յովհաննէս երկորեակ նշանքս աւծելոյն Յիսուսի, ծնողաց մերոց, որք երկրպագէք...մի թուի...» (եղծուած է եւ անընթեռնելի):

Հազար ափսո՜ս, հետզհետէ բոլորովին ոչնչանում են այս պատուական տաճարներն. կարօտ են նորոգութեան, բայց նորոգող չկայ. խղճալի դրութեան մէջ են, բայց նայող չկայ. բոլոր տաճարներս յանձնուած է մի անհասկացող քահանայի, որ իսպառ անհոգ է:

Յափշտակուած են[1] վանուս բոլոր կալուածները, որովք 700 տարի շէն, պայծառ կեանք եւ կենդանութիւն ունեցած են վանքերս, այժմ զոհ են գնում անհոգութեան:

Վանքիս փոքր-ինչ ներքեւ է Ուռկանջ գիւղն, որ այժմ աւերակ է, բայց կայ իւր հանգըստարանն եւ կիսաւեր եկեղեցին: Իսկ վանքիս հարաւային կողմումն է Տզրկածով անուն գիւղն, որ այժմ թրքաբնակ է: Բայց յայսոյանէ լճակի հարաւային կողմում է Աղքիլիսա անուն գիւղն, որի մէջ կայ եւ փոքր եկեղեցի եւ հանգստարան. այլ այժմ թրքաբնակ:

Հին-Շար-Խաչ

Վանուս հիւսիս-արեւմտեան կողմում, սարի հիւսիսահայեաց լանջի վերայ կայ մի աւերակ գիւղ եւ հանգստարան: Երկոսս նոս մէջտեղում, այս է աւերակի եւ հանգստարանի միջեւ, կայ մի բարձր ժայռ, որի հարաւային եւ արեւմտեան երեսների վերայ շարքով շինուած են քսանեւվեց հատ մեծ եւ փոքր խաչեր: Հաստատում են, թէ սոյն հանգամանքից ստացած է Շարխաչ անունը հին գիւղս, որ անցած է եւ նորի վերայ:

Աշուղի գիւղատեղ. Գտնւում է նոյն սարի ստորոտում, մի առուակի ձախ կողմին, ուր կայ եւ հանգստարան: Սորանից փոքր-ինչ վերեւ է Եղցու-Թալա կոչուած տեղն, ուր է գիւղատեղի, հանգստարան եւ եկեղեցի: Այստեղից շատ հեռի չէ Գէորգ Ճգնաւորի քարայրն եւ գերեզմանն: Իսկ սոցանից փոքր-ինչ ներքեւ Աղստեւ գետակի աջ ափի վերայ կայ մի կիսաւեր եկեղեցի, որ է Հին-գետակի վանքի ավերակն. մեր համեստ կարծիքով:

Ի. ԴԻԼԻՋԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է նոյն սարի (Եղջերուասար[2] Մարալ-դաղի) արեւմտահայեաց լանջի վերայ, նոյնպէս Աղստեւ գետակի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք տեղափոխուած են Սեւ-քար, Հաչա-ջուր գիւղերից եւ Ջրաբերդի գիւղերից. հողն՝ արքունի, անջրդի, սակաւ եւ նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ նոյն. գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 100 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, հնաշէն (պատրաստուում են շինել նորը). քահանայ՝ մի:

Ծուխ 100, արբ. 537, իգ. 474:

Միդասեան երկսեռ ուսումնարան (գեղեցիկ է մանաւանդ օրիորդաց ուսումնարանի շէնքն), ուր ուսանում են 60 աշակերտ եւ 25 օրիորդ. թոշակաւոր՝ 70 (երկսեռ միասին). տարեկան ուսուցչաց՝ 1015 բուբլի:

ԱՒԵՐԱԿՆԵՐ

Գիւղիս արեւելեան կողմում, ճանապարհի վերայ է Դիլի անուանեալ աւերակ գիւղն, եկեղեցին եւ հանգստարանն: Դիլիջան գիւղիս մէջ է մի հին եկեղեցի (Բանանց գիւղացի Զղեթանց Ալեքսանի խանութի դիմացն), որի երկարութիւնն է 14 մետր, լայնութիւնն 6 մետր 80 սանթիմ, եւ ընդարձակ հին հանգստարան:

Բախտիարի գիւղատեղի եւ հանգստարան՝ Աղստեւի աջ ափի հովտում: Կիսաւեր եկեղեցի, որ գտնւում է Աղստեւ գետակի եւ Դիլիջան վտակի խառնուրդի մէջ, որի մօտ բնակում են այժմ մալականներ:

1 Ինչպէս երեւում է արձանագրութիւններից, վանքերս ունեցած են սեպհական շատ անշարժ կալուածներ-այգիներ, ջրաղացներ, գիւղեր, վարելահողեր, անտառներ եւ ամառանոցներ: Սակայն այժմ յափշտակուած են անտիրութեան պատճառաւ:

2 Կոչւում է եւ Մայմեխ սար, որ ունի 8435 բարձր.:

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա. ԵՐԳԵՎԱՆՔ ԲԵՐԴ (60)

Գտնուում է Ղուլալի գիւղի արեւմտեան հանդէպ Տաւուշի օժանդակ (Ախնջի) վտակի ձախ կողմի բարձր սարի վերայ: Տակաւին երեւում են պարսպի պատերն եւ տեղ-տեղ աւերուածների հետքերն: Թէեւ ցից-ցից ժայռեր, նեղ-նեղ կիրճեր եւ մացառուտ ձորեր են բերդիս շուրջն, այսուամենայնիւ այնքան ապահով չէ: Ջուրը ամաններով բերած են իւր արեւմտեան ձորում եղած աղբիւրից, որի մօտ կայ ընկուզի մեծ-մեծ ծառեր, գիւղատեղի եւ հանգստարան:

Բ. ՏԱՒՈՒՇ կամ ԹՈՎՈՒԶ բերդ, որ կայ նոյնանուն գետակի աջ ափի բարձր սարի վերայ, Բերդ գիւղի արեւելեան հանդէպ: Բերդավայր սարս բոլորովին առանձնացած է իւր շրջապատից՝ արեւելեան եւ հիւսիսային կողմերից, եւ անջրպետուած է լայնագոգ ձորերով: Հարաւային եւ արեւմտեան կողմերն ահագին վիմահերձ եւ բարձր ապառաժներն են, որոց ստորոտը քերելով խոխոջում է Տաւուշ գետակն: Բերդս ունի կրկնապարիսպ, որոնց մին սարիս ստորոտով, որ սկսուած է սաստիկ զառիվայր հարաւային կողմից եւ հասած մինչեւ արեւմտեան վիմահերձն, իսկ միւսն բրգաշատ, որ ձգուած է վերնաբերդի արեւելեան եւ հիւսիսային կողմերով: Ստորին բերդում երեւում են տնաբակեր եւ քարուկիր կիսաւեր եկեղեցի, իսկ վերնաբերդում, որ գրեթէ անառիկ է, երեւում են քարուկիր շինութեանց հիմունքներն միայն եւ ջրաւազաններ: Բերդումս չկայ ջուր, վասն որոյ խորագոյն ականով եւ խցեղէն խողովակներով ջուր են բերած ի հնումն Կիլիկուան կոչուած առուակից մինչեւ ստորին բերդն, որից ամաններով փոխադրուած են վերնաբերդիս ջրաւազաններն:

Գ. ԿԱԾԱՐԵԹ ԴՂԵԱԿ. որ կայ Տաւուշ գիւղի հարաւային հանդէպ եղած սարի վերայ: Սարիս բերդաբարձ մասն միապաղաղ եւ ապառաժ քար է, որի հարաւային եւ արեւմտեան կողմերն վիմահերձ են, իսկ արեւելեան եւ հիւսիսային կողմերն՝ խիստ զառիվայր լանջեր: Միապաղաղ քարաժայռիս գագաթի շուրջն պարսպուած է քարուկիր պատով եւ ձեւացրած փոքրիկ դղեակ, որի երկարութիւնն է 50 մետր եւ լայնութիւնն՝ 20: Դղեկիս արեւելեան մասում պատի ներսում կայ վիմափոր մի ջրաւազան, որի ջուրն բերուած է ի պահանջել հարկին արեւմտեան կողմից՝ Ճգնաւորի աղբիւրից, խեցեղէն խողովակներով մինչեւ դղեկիս ստորոտն, որից եւ ջրաւազանս: Երբեմն-երբեմն ելնում են խողովակներից գերեզման փորելու ժամանակ, քանզի մօտ է Սուրբ Գէորգ մատուռն եւ հանգստարանն. (տե՛ս Տաւուշ գիւղի շարքում): Վիմափոր քարայր է դղեկիս տակն, որ մի մուտք միայն ունի հիւսիս-արեւելեան կողմից: Այցելուն, ներս մտնելով, նախ տեսնում է մի փոքր քարայր, որից մի այլ մուտք տանում է վիմափոր քարայրն: Այժմ հող լցուած է թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ մուտքն, վասն որոյ դժուարութեամբ է մուտ գործւում ներս:

Դ. ԴՌԸԿԵԱՆԱՑ ԲԵՐԴ. Գտնուում է Տաւուշ գիւղից վար համանուն գետակի ձախ կողմում. Օքսուզլու թրքաբնակ գիւղի մօտ մի բարձր բլրի գլխին: Պարսպուած է սարիս վտանգաւոր կարծուած տեղերն եւ կիրճերն: Ունի նշանաւոր ամրութիւն, բարձր դիրք, զուարճալի տեսարան եւ ջրամբարներ: Ջուրն բերուած է ամաններով մօտակայ ջրից:

Ե. ՅԻՑ ՔԱՐ կամ ՆՈՐ-ԲԵՐԴ (61). Զուաձեւ բարձրացած եւ միապաղաղ արձանացած ժայռ է, որի կատարը դղեակ ձեւացրած են հնուց՝ պատելով հարկ եղած տեղերը: Ջուր չկայ դղեակիս մէջ, երեւի թէ բերած են մերձակայ աղբիւրից: Դղեակս գտնուում է Վարագայ վանքի եւ Աշուղի գիւղի միջեւ եղած սեռի վերայ. ըստ նոր բաժանման սեռիս գագաթնագիծն է սահման Շամշադին եւ Ղազախ գաւառների:

Զ. ՃՇԱՔԱՐ. Ռեւազլու շինի արեւելահարաւ կողմի բարձր քերձի մէջ կայ մի քարայրանման տեղ, որի մակերեւոյթի տարածութիւնն մօտ երեք կալաչափ է: Քարայրիս առաջքն պատուած է քարուկիր պատով եւ ձեւացած անմատչելի բերդ, որ ունի մի դժուարատար, սանդղաձեւ եւ երկիւղալի կածան: Այստեղ եւս չկայ ջուր, բայց երեւի թէ սափորներով ջուր բերած եւ կարասների մէջ լցրած են: Դղեակս կոչւում է եւ Ճգնաւորի քար. զի այստեղ կայ եւ երկու գերեզման (62):

Է. ՂԸԶ-ՂԱԼԱ. Գտնուում է մզոնից փոքր աւելի վերեւ Կարվանսարայից Աղստեւ գետի աջ կողմի բարձրութեան վերայ մի ժայռի գլխին, որ առանձնացած է իւր շրջապատից: Կամենալով յարգել հանգուցեալ Մարտիրոս Սիմոնեանցի յիշատակը, զետեղում ենք այստեղ նորա իսկ հետազօտութիւնը, որ տպուած է Ղրդ-Ղալայիս մասին «Մեղու Հայ...» մէջ 1874 ամի 31 թուահամարում. «Մենք հասանք բերդի պատերին եւ նորա միակ մուտքով, որ քարից ու կրից շինած կիսաւեր կամար էր եւ երկու կողմից մարտկոցներ եւ բուրջեր, ներս մտանք բերդը, բարձրացանք նորա ամենաբարձր կէտը..., ժայռի գագաթին գտանուում է մի քառակուսի հրապարակ, որի երկարութիւնը եւ լայնութիւնն մօտ 15 սաժէն... մի ընդհանուր պարսպով շրջապատուած է այդ հրապարակը... Պարսպի անկիւններում գտանուում են բոլորակ բուրջեր... Ներսը գտանուում են մեծ եւ փոքր սենեակների աւերակներ, ոմանք՝ երկյարկ: Դէպի հիւսիս գտանուող բուրջը չունէ ոչինչ արհեստական մուտք... մի աւերակ... ընդարձակ սենեակ, որի չորս պատերը կանգնած էին առանց առաստաղի եւ երկյարկ էր եղած... ամէնից մեծ սենեակի ներսը (մէջ) դուրս էին եկած մեծամեծ ծառեր: Հարաւային կողմում գտանուում էին... երկու.. նեղ եւ ձիգ սենեակների աւերակ... երդիկի տակ գտանուում էր... մեծ ծառ, որ գլուխը դուրս էր հանել երդից... Այդ սենեակից մի դուռը տանում էր դէպի ներսի կամարակապ սենեակը, որ բացի այդ դռնից ոչինչ մուտք եւ երդիկ չունէր... ժայռի մէջ փորած գտանուում էր... մի երկայն սենեակ, որ ունէր մի մուտք... ժայռից կտրած սանդուխտ: Դա պահպանուում էր ամբողջութեամբ, կային եւ մի քանի այլ շինութիւններ.. կան եւ բաց դեղանգոյն սրբատաշ քարեր, որոնք գործ են դրուած դռների, երդիկների եւ կամարների համար: ...Ամբողջ մնացած շինութիւնների ոմանց ներսը գտանուում էր կարմիր ներկ քսած. իսկ մէկի պատի վերայ մի տող գրուածքի տեղ էր, որ աւերուել էր, եւ միայն կարողացանք պարզ որոշել տողի սկզբի հայերէն տառերը «ԱԾ» (Աստուած)»:

Ը. ՇՆՔԱՐ կամ ՍՂՆԱԽԻ ՁՈՐ. Գտնուում է Թարսա չայի արեւելեան եւ Աղստեւ գետակի աջ կողմում: Ձորիս դիրքն ընկած է դէպի արեւելք, որի միջով հոսում է մի առուակ եւ թափուում Աղստեւի մէջ: Ձորիս աջ կողմում շինուած են վաղուց չոր քարով մեծ-մեծ սենեակներ. կան եւ քարայրեր, որոց առաջի կողմերը ամրացրած են հնուց պատերով եւ ձեւացրած մի-մի ամրադին դղեակ: Այս տեղերքումս եւս ամրանալով՝ բազմաթիւ հայեր ազատ մնացած են լեկզիների գերեվարութիւններից: Աւելորդ է գովել ձորիս յարմարութիւնները՝ ամուր դիրք, ապահով պատըսպարան, առատ փայտ, պատուական ջուր, ահարկու մուտք եւ սոսկալի նեղուց:

ԺԹ. ՁԱՒԷ ԳԱՒԱՌ (Ղազախ)

Ա. ՊՕՂՈՍ-ՔԻԼԻՍԱ գիւղ. Հիմնուած է Դիլիջանի հիւսիս-արեւմտեան կողմում, Աղստեւ գետակի ձախ կողմում մի լեռնալանջի վերայ. բնակիչք գաղթած են Երեւանի Արզնի եւ Կամրիս գիւղերից Հասան խանի ժամանակ. հողն՝ արքունի, լեռնային եւ միջակ արդիւնաբեր. տեղական բերքերն նոյն՝ ցորեն, գարի, գարնանի, ոչխար, տաւար. պատուական՝ օդն, ջուրն ու կլիման, երկար կեանք՝ 115 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, հնաշէն, կամարակապ. քահանայ՝ մի:

Ծուխ 74, ար. 501, իդ. 408:

Գիւղումս կայ մի միդասեան ուսումնարան, աշակերտ՝ 25, վարժապետին տարեկան՝ 300 բուբլի:

ՂՈՒԾ-ԴՈՂԱՆ կոչուած տեղում, գիւղիս հիւսիսային կողմում կայ աւերակ եկեղեցի, գիւղ եւ հանգստարան:

ՋՈԽՏԱԿ ՎԱՆՔ

Գտնուում է Պոլսոյ-քիլիսայի արեւմտեան կողմում երկու առուակների մէջ ընկած մի անտառապատ հովտում: Երկու վանքեր են՝ մօտ առ մօտ շինուած:

Արեւելեան վանքն[1] կառուցեալ չորս կամարների վերայ, որոց գլխին բաղմած է կաթուղիկէն, ունի չորս փոքր եւ մի աւագ խորան. ութ լուսամուտ, երկու խորհրդարան, մի դուռն արեւմտեան կողմից եւ երկու ճգնարան. 9 մետր 78 սանթիմ երկարութիւն, 7 մետր 57 սանթիմ լայնութիւն: Գեղեցկաքանդակ խաչերով զարդարուած են երկու վերին եւ փոքր խորաններ եւ սոցա ժողովրդահայեաց երեսներն: Այժմ խոնարհուած է ամբողջ կաթուղիկէն, հարաւային լուսամտի շրջանակ անկիւնաքարերն, դրան սեմերն եւ գլխի քարն եւ բուսած են տաննեաց վերայ ծառեր:

Վանքիս հարաւային կողմում արտաքուստ. «Կամաւն Աստուծոյ ես Տալիթայս միաբանեցայ սուրբ Գրիգորիս. միաբանքս ետուն Ա. պատարագ ի տաւնի ծառազարդին. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ»:

Աւագ խորանի հիւսիսային կողմում ներքուստ.

«Այս իմ գիր է Բէկիս եւ Բարինիս, որ գնեցաք զաջոյ խորանս հանապազ մեզ պատարագ. կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ»:

Արեւմտեան վանք. Շինուած է այս եկեղեցու ձեւով մի կամարի վերայ, որ ունի երկու փոքր եւ մի աւագ խորան, չորս լուսամուտ եւ մի դուռն արեւմտեան կողմից. 8 մետր 62 սանթիմ երկարութիւն, 6 մետր 40 սանթիմ լայնութիւն: Ամբողջապէս կանգուն է վանքս եւ անվնաս. միայն բուսած են տաննեաց վերայ ծառեր:

Դրան ճակատակալ քարի վերայ.

«ՈԾ. Հայոց ... ամիրութեան Լաշայի, ի տէրութեան... խանին ես Հայրապետ առաջնորդ ուխտիս որ կոչի Պետրոսի վանս, շինեցի զսուրբ Աստուածածինս եւ յուսով կարգեցի զծրագալոյցն Բ. խորանն ինձ պատարագ առնել եւ Ա. իմ եղբաւրն Շմաւոնին եւ... զամէն եկեղեցիս իմ ծնողացն... մակաց. կատարիչք գրոյս աւրհնեալ... խափանիչք դատապարտին... մեղացս տէր է առաջի Աստուծոյ» (կէտադրեալ բառերն եղծուած են):

Հիւսիսային փոքր խորանի դրան վերայ.

«Ի թվ. ՈԾԶ. ես Մայրացեալս շինեցի զխորանս ի հալալ արդեանց իմոց եւ առաջնորդք սորա ետուն ի տարումն... ժամ տեառնընդառաջին. խափանողքն դատին ի Տեառնէ»:

Հարաւային փոքր խորանի դրնագլխին.

«Յայսմ խորանի Ա. ժամ ի տաւնի սուրբ Սարգսին՝ Սարգսին արասցեն, զի նորա արդեամբք շինեցաւ խորանս, ով զժամս խափանէ, դատի ի Տեառնէ»: Կային արձանագրութիւններ եւ վանքիս արեւելեան արտաքին կողմում, բայց մեծ մասամբ եղծուած, վասն որոյ թողինք:

Վանքերիս շուրջն լի է գերեզմաններով: Միաբանից սենեակներն շինուած են եղել գետնափոր, վիմափոր եւ փայտեայ: Իսկ շրջապարսպի հետքերն անգամ անկարելի եղաւ գտնել:

ՄԱԹՈՍԻ ԳԻՒՂԱՏԵՂ

Ջոխտակ վանքին հարաւային հանդէպ, մի առուի աջ կողմի բարձրութեան վերայ, մի կանաչազարդ սարահարթում, որի հարաւ-արեւելեան ծայրումն է հանգստարանն եւ եկեղեցին, որ փոքր է եւ կառուցեալ մի կամարի վերայ: Վերից մինչեւ վար քանդուած է խորանի լուսամուտն իւր կողերի պատերով միասին եւ բուսած տաննեաց վերայ ծառեր: Եկեղեցիս ունի եւ գաւիթ, որի երկարութիւնն ձգուած է հիւսիսից հարաւ մի միջնակամարով: Գաւթումս ամփոփուած են շատ ննջեցեալներ:

1 Արձանագրութիւնից երեւում է, որ Սուրբ Գրիգոր է անունը:

Եկեղեցւոյ դրնագլխին վերայ. «Կամաւն Աստուծոյ (Ես) տէր Յորդանան շինեցի զեկեղեցիս ի թվին ՈՂԶ. իշխանութեան Աւագին ողորմութեամբ եւ տրաւք Պղնձահանացն Աստուածածնի եւ առաջնորդութեամբ Պետրէի եւ Համազասպա, որք երկրպագէք, յիշեցէք ի Քրիստոս զԾնողք մեր զենոք եւ զՄարթա իւր եւ զՄխիթար, զՄենաւոս, զոր (դին) Նաթանաէլն Յորդանանա Հոռիմսիմի...»: «Աստուած ողորմի Խաչատուրին», «Տէր Աստուած ողորմի Աղբադին եւ Անդաւին»:

Հարաւային սեմի վերայ.

«Ես Պետրէ եւ Համազասպ համարեցաք զԾովքն. եդաք սահման ժողովուրդ Աստուածածնիս, ով որ խափանէ, դատի ի տեառնէ, ամէն»:

Եկեղեցուս հիւսիսային որմի մօտ արտաքուստ կայ խաչարձան, որի երկարութիւնն առանց պատուանդանի է 2 մետր 50 սանթիմ եւ լայնութիւնն՝ 1 մետր 20 սանթիմ, որի վերայ քանդակուած է:

«Շնորհիւ Աստուծոյ ես Մխիթար եւ Արուեր (կանգնեցաք) Սուրբ խաչս բարեխաւս մեզ թվ. Ջ.»:

Սուրբ Սարգիս մատուռ. Պոլսոյ-քիլիսայի արեւմտեան կողմում մի տեսարանաւոր բլրի վերայ:

ՀԱՂԱՐԾԻՆ ՎԱՆՔ (63)

Հիմնարկուած է Պոլսոյ-Քիլիսայի հիւսիսային կողմում, մի խոր ձորի ձախ լանջի հարթակի վերայ: Վանքիս հարաւային ձորով հոսում է Հաղարծին վտակն եւ արեւելեան ձորով մեծ աղբիւրի ջուրն, որ դարձնում է երկու ջրաղաց: Երկու ջրերս միանալով վանքից փոքր-ինչ վար, խառնւում են Աղստեւին:

Ա. ՎԱՆՔՍ, որ անուանուած է Սուրբ Աստուածածին, շինուած է խաչաձեւ չորս կամարների վերայ սրբատաշ մոխրագոյն քարով. որոց վերայ բաղմած է գեղեցկաձեւ կաթուղիկէն. ունի մի աւագ, երկու փոքր խորաններ, երկու դուռն հարաւային եւ արեւմտեան կողմերից, հինգ լուսամուտ, (եւ մի զոյգ լուսամուտ մեծ խորանի նեռւ.), երկու խորհրդարան, 14 մետր 50 սանթիմ երկարութիւնն, 11 մետր լայնութիւն. (երկու փոքր խորանների դռներն բացուած են աւագ խորանի միջով):

Վանքիս հարաւային դրնագլխի վերայ՝ խոշոր գրերով. «Թվ. ՇԻ.»:

Միւս կողմում «ՁԼ.»:

Դրանս արեւելեան կողմում կայ մի գեղեցկաքանդակ խաչարձան պատուանդանով հանդերձ, որի մօտ մի քարի վերայ քանդակուած է երկու վեղարաւոր վարդապետների պատկերներ, որք փիլոն ծածկած եւ բարձրացած են Հաղարծին վանքիս կաղապարը: Խաչարձանիս կից է մի մեծ եւ լայն տապանաքար, որն բաժանուած է միջից մի գծով. այս քարիս տակ ամփոփուած են երկու հոգեւոր եղբարք, որք միացած են եղել հոգւով, սրտով, համամիտ եւ համակամ գործով: Զոր օրինակ մի հոգւով բնակած են երկու մարմնոց մէջ կենդանութեամբ. նոյնպէս մի քարի տակ բնակաց են մահուամբ երկու մարմնով:

Ներքուստ տաճարիս հարաւային որմի վերայ.

«Շնորհիւն Աստուծոյ ես Բէկս որդի Աշոտոյ յազգէ Հարբանց եւ ամուսին իմ Բոբոնա եւ եղբայր իմ Սմբատ միաբանեցաք ի սուրբ ուխտս, որպէս եւ հայրս իմ եւ տվաք գինս շինութեան»:

Վանքս նորոգած են Թիփլիսեցի Զիթախեաններն.

«Ես Թիֆլիզեցի Զիթաղի որդի Թաղայ, որդի Մահտեսի Սուլխանս եւ եղբայրն իմ Զալն եւ մեր որդիքն Ստեփանոսն եւ Թաղին եւ Փահրապատցի Խոճա Գուլին եւ իւր որդի Յարութիւն մեծաւ յուսով՝ որ առ Քրիստոս վերստին նորոգեցաք զՀաղարծինոյ զեկեղեցիսն զսուրբ Աստուածածինն եւ սրբոյն Գրիգորին՝ յիշատակ մեզ եւ համօրէն ննջեցելոց մերոց ի թվ. ՌՃԼ. Հայոց»:

Վանքիս ունի եւ մեծ գաւիթ, որ շինուած է կաթնագոյն չիչ քարով եւ ունի 15 մետր 30 սանթիմ երկարութիւն, 13 մետր 82 սանթիմ լայնութիւն: Ամբողջապէս խոնարհուած է գաւթիս գլուխն:

Բ. ՎԱՆՔ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ, որ շինուած է մեծ վանքի հարաւային կողմում միւնոյն ձեւով, բայց կաթնագոյն չիչ քարով եւ որ ունի չորս փոքր եւ մի աւագ խորան[1], մի դուռն, ինն լուսամուտ, երկու խորհրդարան, մի կաթուղիկէ՝ 9 մետր երկարութիւն, 7 մետր 90 սանթիմ լայնութիւն: Վանքս ունի հրաշալի գաւիթ, որ կառուցեալ է չորս միապաղաղ սիւների եւ տասներկու կիսասիւների վերայ: Առաստաղի մէջտեղում բազմած է կամարների վերայ մի ութանկիւնի գմբէթ, որ ունի նոյն ձեւով երդիկ: Երկարութիւն հիւսիսից հարաւ՝ 14 մետր 30 սանթիմ, լայնութիւն արեւելից արեւմուտք՝ 11 մետր 50 սանթիմ:

Դրան վերայ.

«Կամաւ ամենակալին Աստուծոյ այս մեր գիր յիշատակի է եւ արձան մշտնջենաւոր որդոց մերին Սարգսին յազգէ Բագրատունեան Իւանէի եւ Զաքարէի. յորժամ Նախախնամութիւնն Աստուծոյ եհաս յարարածս եւ ետ տիրել սեփհական ժառանգութեան Նախնեաց մերոց, ետ ի ձեռս մեր յառաջ զանառիկ դղեակն զԱնբերդ եւ զթագաւորանիստ քաղաքն Անի եւ ապա զամուրն Բըջնի. զՄարանդ մինչեւ Գաւազան[2] ի Թավրէզ, ի Կարնոյ քաղաքէն մինչեւ ի Խլաթ, զՇաքի եւ զՇրուան, զԲարտա մինչեւ ի Պէլուական եւ այլ բազումս իւրեանց սահմանաւքն, զոր աւելորդ համարեցաք յիշատակել: Այլեւ անբարկանալին Աստուած սիրեաց զթագ պարծանաց գլխոյ իմոյ Զաքարիայն եւ կոչեաց առ ինքն, որոյ ձեռն եղեւ արիութիւն: Եւ ես շինեցի ի մեր վանքս Հաղարծին ժամատուն վիմարդեան, կամարակապ ի դրան սուրբ Գրիգորիս եւ այգի յԵրեւան ետու վասն յիշատակի եղբաւրն իմոյ. եւ պարտին սպասաւորք սորա զաւագ խորանի պատարագն Զաքարէի մատուցանել անխափան: Կատարիչք գրոյս աւրհնեալ լինին յԱստուծոյ. ամէն»:

Գաւթումս.

«Ի թվին ՈԾԵ. յաշխարհակալ տէրութեան Զաքարէի եւ Իւանէի, յառաջնորդութեան Ստեփաննոսի ես Խալաթ որդի Սմբատս իմ գեղն Քանաքեռ Սկանդարեանց զհողն գնեցի եւ ի Հաղարծինս ետու վասն իմ հոգոյս եւ վասն յերկարութեան Շահանշի եւ Աւագին: Եւ միաբանքս զծառզարդարին զերկրորդ գալստեան ժամն ինձ ետուն զամենայն եկեղեցեացս, ով զայգին աստից հանցէ կամ զիմ ժամն խափանէ, իմ մեղաց տէր է եւ Յուդայի մասնակից եղիցի»:

Գաւթիս հիւսիս-արեւելեան կողմում երկու քարերի վերայ քանդակուած է մի թագաւորի եւ մի վարդապետի պատկերներ, որոց շրջապատում կայ գրութիւն, բայց գրեթէ անվերծանելի:

Տաճարիս նորոգութեան մասին.

«Ի թուին ՈԴ. ի Թագաւորութեան Ափխազաց Գաւրգեայ, ի հայրապետութեան Հայոց տեառն Գրիգորիսի ես Խաչատուր վարդապետ եւ Սուքեաս Նորոգեցաք զսուրբ Գրիգորիս հրամանաւ թագաւորին եւ իւր մեծ իշխանին Սարգսի ամիր սպասալարին՝ զհին եւ զնոր կազմութիւնս գրով ետ ի սուրբ Գրիգորս զայգին Միջնաշինին ջրին, զՏեառն խաչ Կոպավանից ի միջին զՔուրդ գեղանն, զԱբասածորն, զՏանձուտն. եւ հրամայեաց թագաւորն զսուրբ Խաչն տաւնն յիւր յիշատակ կատարել: Արդ՝ որք հակառակ կան եւ հանել ջանան, քակեսցին տամբք եւ որդւովք եւ ազգայնովք. նզովեսցին ի վարձէ Աստուածածնէն եւ ՅԺԸ. հայրապետաց եւ ջնջեսցին յայսմ կենաց. ամէն»:

Գաւթիս մէջ կան շատ ամփոփեալներ:

Սուրբ Գրիգոր վանքիս հարաւային կողմին կից շինուած է համակ սրբատաշ քարով թագաւորաց Դամբարան մատուռն, որ ունի երկու խորան: Հիւսիսային խորանի առաջ եղած տապանաքարի վերայ քանդակուած է. «ՍՄԲԱՏ ԹԱԳԱՒՈՐ»: Իսկ հարաւային. «Հանգիստ.. ա. թագաւորին Գագկայ»: Խոնարհած է մատուռներիս գլուխներն եւ սոցա գաւթի թաղն:

Գ. ՎԱՆՔ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ. Շինուած է Սուրբ Գրիգոր վանքի արեւելեան կողմում, խիստ մօտ. միւնոյն ձեւով, ոճով եւ ճաշակով: Փոքրիկ, գեղեցկագոյն եւ ուշագրաւ վանքս ունի չորս փոքր եւ մի աւագ խորան, երկու խորհրդարան, ինն լուսամուտ, մի կաթուղիկէ, մի դուռն արեւմտեան կողմից. 6 մետր 38 սանթիմ երկարութիւն, 5 մետր 80 սանթիմ լայնութիւն: Կաթուղիկէին վերայ. «Ի թվ. ՈՂԳ. իշխանութեան Իւանէի եւ առաջնորդութեան Խաչատուր վարդապետի ես Խալթ որդի Հարբայ շինեցի զեկեղեցիս վասն իմ հոգւոյս փրկութեան. եւ ամէնայն միաբանքս զյայտնութեան ճրագալուցին ժամն ինձ հրամայեցին եւ զզատիկն որ անխափան առնեն. կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ»:

Հարաւային որմի վերայ արտաքուստ. «Ի թուին Հայոց ՌՃ..... աց Շահ Սուլէմանին որդոյ փոքր Շահ Ապասին եւ տէ... Ս. իշխանին եւ մելիքութեան պարոն Շահնազարին եւ ի հայրապետ.. Ջուղայեցւոյ եւ առաջնորդութեամբ սուրբ ուխտիս Յակովբայ եպիսկոպ... տէր Պետրոս աշակերտի նորին. ողորմութեամբ Աստուծոյ մեք յետինքս ի կրօնից Թիփլիզեցի հոգեջան որդիքս Պարոս, Մխիթարս, Սափարս եւ Զալիս եւ որդիքն տէր Գասպարն, Հոգեջանն, Բաղդասարն եւ Մելքոնն զմեր հոգոյ արդեամբքն նորոգեցաք զՍուրբ Ստեփաննոս, որ յոյժ խախտեալ էր՝ վասն փրկութեան հոգւոց մերոց եւ երկարութեան կենաց որդոց մերոց. եւ միաբանք սորա հաստատեցին յայտնութեան եւ յարութեան պատարագն զմեզ յիշատակել եւ մեք խոստացաք, որ զկանթեղ սորին միշտ ի վառ պահել որդէց որդի, կատարողքն օրհնին յԱստուծոյ. ամէն»:

Սեղանատուն

Շինուած է Մեծ Վանքի փլած գաւթի հիւսիս-արեւմտեան կողմում տաշուած չիչ քարով երկու սիւնների եւ տասներկու կիսասիւների վերայ, այնպէս որ առաստաղն ունի չորս-չորս խաչաձեւ կապուած կամարներ, երկու երդիկ, երկու լուսամուտ, մի դուռն, 23 մետր երկարութիւն, 10 մետր լայնութիւն.

Հարաւային դրան վերայ .

«Ի թվ. ՈՂԷ. յառաջնորդութեան Յովհաննէսի վարդապետի շինեալ.....[1] »:

Հարկ է յայտնել, որ քանդուած խախտուած են վանքերիս սալկախներն եւ տեղ-տեղ որմերից՝ քարեր: Բոլոր վանքերի շրջապատում կան գերեզմաններ: Վանքս ունեցած է եւ շրջապարիսպ, որ այժմ իսպառ աւերուած է, եւ միաբանից սենեակներ, որք հասած են եղել քայքայեալ դրութեան: Մօտ տասն տարի է, որ արժանապատիւ Պօղոս վարդապետ Մարգարեանցն արիւնքրտինք թափելով ճգնում է պայծառացնել վանքս: Նորոգել տուած է մի քանի խուցեր, որոց առջեւ տեսլեամբ գտած է մի պղնձեայ ահագին կաթսայ, ապա փորելով գետինը հանած է նոյն կաթսայն եւ ղրկած Մայր աթոռի Սուրբ Էջմիածնի տաճարի պահարան, որ ունի ձուլածոյ շինուածք 21 փութ եւ 26 ֆունտ ծանրութիւն, երեք հնաձեւ ոտք, չորս ամուր կանթեր եւ այս արձանագրութիւնը. «Ի թ. ՈՁԱ. ես Զոսիմա քահանայ մեղապարտ անձամբ ստացա զքոքս յարդեանց իմոց. միաբանքս էտուն ինձ ի տարին Ա. ժամ Գորգա (Գէորգայ) զաւրավարի տաւնին»:

Կաթսայի հետ գտած է նաեւ մի զանգակ, որ ունի 2 փութ 2 ֆունտ ծանրութիւն: Արժանապատիւ հայր սուրբն, մաքառելով ամէն տեսակ նեղութեանց, աղքատութեանց եւ թշուառութեանց հետ, պահպանում է վանքերս եւ ցարդ հազիւ կարողացած է վանքապատկան անել 5000 օրավար հողերից միայն 1105 օրավար (դեսեատին) հող, եւ այս եւս տակաւին վճռուած չէ վերջնականապէս:

Վանքերս իւրեանց արեւմտեան կողմում ունին կալ, քարուկիր մարագ, կալապան եւ ահագին ցորենահոր. ունին նաեւ վարելահող, անտառ, խոտահարք, թոնրատուն, ջրաղաց, գոմ եւ անասուն: Այս ամէնի վերակենդանութիւնը պարտական ենք Պօղոս հայր սրբին:

Վանքիս արեւելեան կողմում կայ երեք քարուկիր մատուռ:

Կիսաւեր է Ա. մատուռն, որ շինուած է մի միապաղաղ քարի վերայ:

Բ. Մատուռն փոքրիկ է եւ ունի գաւիթ:

Գ. Մատրան, որ նոյնպէս ունի գաւիթ, փլած է թաղն: Երեւի թէ յատուկ դամբարաններ

---

1 Բեմի մէջտեղից է խորանս բարձրանալու սանդուղն:

2 Գովզան՝գետ Պարսից, որ այժմ կոչւում է Կզլ-Օզան եւ որ հոսում է Պարսկաստանի հիւսիսային կողմից եւ թափւում Կասպից ծովի մէջ (Դ. Թագ. ԺԷ. 6. եւ Ա. Մնաց. Ե. 26):

1 Եղծուած են բոլոր կէտադրեալ բառերն:

եղած են մատուռներս, որոց գաւիթներում եւ շրջապատում կան գերեզմաններ: Շատ հեռի չեն վանքերիս քարահանքերն:

Վանքերիս շրջապատներում.

ԽԱԶԻՆԱ ՔԱՐ. Վիմահերձ ապառաժ քարայր, որ գտնւում է վանուցս հիւսիս-արեւմտեան կողմում: Վիմահերձս իւր հիւսիսային կողմով ունեցած է միայն մի դժուարաւար մուտք, որ աւերուելով ժամանակի մաշիչ բռնութիւնից, այժմ եղած է անմատչելի: Աւանդաբար ասում են, թէ վանքիս դանձն պահուած է քարայրումս: Մի քանի տարի առաջ Լօռիցի ոմն երիտասարդ Դալլաք-Յովսէփ անուն կտրում է երկար եւ բազմաճղի ծառեր, շարում քերձի ճակատին, բարձրանալով վերեկակ ճղներով մտնում ներս եւ տեսնում, որ Խազինաքար ասուածն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի քարայր, որի առաջի բաց կողմը քարուկիր պատով պատած են ժամանակաւ եւ ձեւացրած մի փոքրիկ բերդակ: Նոյն դալլաքն (սափրիչ) հանած է այրիս միջից գորգի, կարպետի եւ այլ բրդեղէն կարասեաց փտած մանրուքներ: Քարայրիս վերեւում քերձի գլխին կայ մի խորագոյն հոր, որի բերանի լայնութիւնն մօտ մի մետր է: Շատերն կարծում են, թէ հորս հաղորդակցութիւն ունի քարայրին հետ եւ գուցէ մի ժամանակ հորովս էլ եւ էջ արած լինին մարդիկ:

ՄԵԾ-ԱՂԲԻՒՐ. Քարայրիս ստորոտից բղխում է յորդառատ ակն, որ բաղնեցնում է երկու ջրաղաց:

ԱՆՅԱՅՏԱՅԱԾ ՋԵՐՄՈՒԿ. Պատմում են, թէ տաք ջուր եղած է վանուցս արեւմտեան կողմում. բայց վանքերս անմարդաբնակ մնալուց յետոյ՝ բնակում են սրբավայրերումս մահմեդականներ, որք անյայտացնում են տաք ջուրս՝ կասկածելով թէ ջրին պատճառաւ քրիստոնեայք շինութիւններ կը շինեն ջրին մօտ եւ իւրեանց ձեռքերից կը խլուին շատ բարիքներ: Մի քանի տարի առաջ մի խոզարած տեսնում է, որ իւր խոզերից մին ընկաւ մի փոքրիկ լճակի մէջ, իսկոյն աղիողորմ խանչեց խոզն եւ առժամայն թափուեցան խոզին մաղերն: Խոզարածն փորձելու համար ձեռնը մօտեցնում է ջրին եւ իսկոյն զգում, որ սարսափելի տաք է այն: Խոզարածս խոստանում է ցոյց տալ լճակը արժ. Պողոս վարդապետին, բայց անսպասելի մահուամբ վախճանւում է եւ վերստին անյայտ մնում ջերմկի տեղն:

ԱՒԵՐԱԿ ՀԱՂԱՐԾԻՆ ԳԻՒՂ. Վանքերիցս քառորդ մղոնաչափ վար, ճանապարհի վերայ, Հաղարծին վտակի ձախ ափին է գիւղի աւերակն, ուր կայ եւ հանգստարան եւ կործանեալ եկեղեցի:

Բ. ՆՈՐ-ՇԱՐ-ԽԱՉ ԳԻՒՂ. Հիմնուած է Հաղարծին աւերակից մղոնաչափ վար՝ Աղստեւ գետակի ձախ ափի լանջի վերայ. բնակիչք նախ Ջրաբերդի գիւղերից տեղափոխուած են Հաչաջուր, ապա Նոր-Շար–Խաչ գիւղս. հողն՝ արքունի եւ սակաւ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ նոյն. բարեխառն՝ օդն, կլիման, եւ անվնաս՝ ջուրն. երկար կեանք՝ 80-90 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի:

Ծուխ 55, ար. 504, իգ. 483:

Հախկախլու կոչուած տեղում, որ բաւական վար է Նոր-Շար–Խաչից, կայ աւերակ գիւղատեղի, կանգուն մատուռ եւ հանգստարան. այժմ մահմեդականաբնակ է:

Գ. ՔՐԴԵԻԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Կայենի[1] լեռնաբաղուկների մէկի հարաւահայեաց լանջի վերայ, բնակիչք նախ Արցախի գաւառներից տեղափոխուած են Սեւ-քար գիւղն. ապա՝ այստեղ. հողն՝ արքունի, հացատու, բայց բազմիցս կարկտահար. տեղական բերքերն՝ նոյն. գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 110 տարի, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին:

Ծուխ 32, ար. 255, իգ. 233:

Դ. ԹԱԼԱ ԳԻՒՂ. Շինուած է Աղստեւ գետակի ձախ կողմում, մի սարի ստորոտում. բնակիչք տեղափոխուած են Խաչեն եւ Ջրաբերդ գաւառներից. հողն՝ արքունի. տեղական բերքերն՝ նոյն, օդն, կլիման եւ ջուրն՝ անվնաս. երկար կեանք՝ 80 տարի, եկեղեցին՝ Սուրբ Նշան, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի:

Ծուխ 40, ար. 268, իգ. 230:

Ե. ԽԱԻԱՐԱՁՈՐ ՇԷՆ (Ղարանլուղ գերէ). Հիմնուած է նոյն սարի հիւսիսային կողմի խոր ձորի բերանի հովտում, բնակիչք՝ տեղափոխուած Արցախի նոյն գաւառներից. հողն՝ արքունի, տեղական բերքերն՝ խաղող, թութ, ոչխար, տաւար, խոզ. վատառողջ՝ օդն եւ կլիման, երկար կեանք՝ 55-60 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն, քահանան գալիս է Հաչա-ջրից: Ծուխ 15, ար. 82, իգ. 67:

Զ. ՆԵՐՔԻՆ-ԱՂԴԱՆ ՇԷՆ. Հիմնուած է Աղստեւ գետի ձախ կողմում՝ խճուղու գլխին, բնակիչք՝ փոքր մասամբ բնիկ. հողն՝ արքունի եւ նուազ բարեբեր, տեղական բերքերն՝ նոյն, վնասակար՝ ամռան օդն եւ կլիման. երկար կեանք՝ 54 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին. քահանան գալիս է Թալայից:

Ծուխ 20, ար. 127, իգ. 100:

Է. ՆՈՐ-ՀԱՉԱ-ՋՈՒՐ ԳԻՒՂ (Աչա-սու). Հիմնարկուած է նոյն գետի ձախ կողմում՝ երկու առուակների մէջ. բնակչաց մեծ մասն՝ բնիկ, իսկ փոքր մասն՝ տեղափոխուած Արցախի յիշեալ գաւառներից. հողն՝ արքունի եւ բարեբեր, գինեւէտ եւ ուրեք ջրաբեր. տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն՝ օդն եւ կլիման, պատուական՝ ջուրն. երկար կեանք՝ 80-85 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, նորաշէն, կառուցեալ չորս սիւների վերայ, երկարութիւնն՝ 21 մետր 40 սանթիմ, լայնութիւնն՝ 13 մետր 25 սանթիմ. քահանայ՝ երկու: Եկեղեցումս կայ մի ձեռագիր յայսմաւուրք, բայց թափուած են թերթեր. պակասաւոր է եւ անյայտ գրողի անունն նեն:

Ծուխ 151, ար. 1007, իգ. 890:

Նահատակ. Անունն անյայտ ուխտատեղիս գտնւում է գիւղիս հիւսիսային կողմում մի բարձրակատար սարի վերայ. անտաշ քարով շինուած քարուկիր մատուռ է, որ ունի սքանչելի տեսարան:

Սուրբ Յովհաննէս. Քարուկիր մատուռ, ուխտատեղի գիւղիս արեւմտեան կողմում, որի մօտ կայ հանգստարան:

Հին-Հաչա-ջուր. Գիւղիցս վերեւ, ջրաձորի ձախ կողմում, Մակարայ վանքի հիւսիսային հանդէպ, ուր կայ գիւղատեղին եւ հանգստարանն:

ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔ (64)

Հիմնուած է Հին-Հաչա-ջրի հարաւային հանդէպ, մի գեղեցիկ եւ բարձրահայեաց սարահարթի վերայ:

Ա. ՀԻՆ-ՎԱՆՔ. Սուրբ Աստուածածին ամէնից առաջ շինուած կիսատաշ քարերով, խաչաձեւ, որ ունի չորս փոքր, մի աւագ խորան, վեց լուսամուտ, մի դուռն, 11 մետր երկարութիւն, 8 մետր 10 սանթիմ լայնութիւն եւ մի գաւիթ իւր արեւմտեան կողմին կից, որ կառուցեալ է չորս սիւների եւ տասն կիսասիւների վերայ: Մէջտեղում չորս կամարների վերայ եղած է մի հրաշալի գաւիթ, որ խոնարհած է այժմ: Միապաղաղ են եւ բոլորշի տաշուած սիւներն[1] եւ կիսասիւներն, որք ունին եւ գեղեցիկ պատուանդաններ եւ խոյակներ: Գաւիթս իւր հարաւային կողմում ունի երկու փոքր խորան իրարու վերայ. հիանալի է քանդակագործ սանդուղն, որ տանում է վերին խորանն. իսկ իւր հիւսիսային կողմում ունի մի մեծ սենեակ, որ եղած է մասնատուն (նշխար գործելու տեղ). որի մէջ կայ վառարան (բուխարի): Գաւիթս ունի նաեւ երկու դուռն հարաւային եւ արեւմտեան կողմերից, վեց լուսամուտ. 14 մետր 10 սանթիմ երկարութիւն եւ նոյնչափ լայնութիւն:

Գաւթիս դրան սեմի վերայ. «ՈՂ. թիւ. Թամելս մեծ յուսով միաբանեցայ Աստուածածնիս եւ ետու (զարդիւնս) յուսովն աստուծոյ»:

1 Հայերէն Կայենի սար (տաճ. Դալի դաղ) է կոչւում լեռս, որ կայ Նոր-Շար-Խաչի հիւսիսային կողմում եւ ունի 8741 ոտք բարձրութիւն: Տէրն մի արասցէ, եթէ շրջակայ գաւառներումս կարկուտ իջնելու լինի, փորձով հաստատուած է, որ կարկուտն նախ գոյանում է սարիս վերայ դիզուած ամպերի բովի մէջ, թերեւս այս վատ յատկութեանց համար անուանած են ԿԱՅԵՆԻ ՍԱՐ:

1 2 մետր 71 սանթիմ է սիւների հաստութիւնն:

Սորանից ներքև. «Ես Սերոբ եւ Թոմա քահանայք եւ եղբարք զմեր հոգոյ արդիւնս տուաք ի սուրբ Աստուածածինս. հայրս Յովհաննէս եւ միաբանքս ետուն մեզ Բ. պատարագ Թոմայինն ի տաւնի Անտոնի. որ խափանէ, մեր մեղացն պարտական է եւ դատի յԱստուծոյ թվ. ՉԲ.»:

Բ. ՆՈՐ-ՎԱՆՔ. Շինուած է ամբողջապէս սրբատաշ պղնձագոյն քարով՝ կից հին վանքին եւ գաւթին խաչաձեւ, չորս բարձրակառոյց կամարների վերայ. բայց խոնարհուած է այժմ սորա կաթուղիկէն: Վանքս, որ շինուած է Գանձասարի ճաշակով. ոճով եւ ճարտարապետութեամբ, ունի եօթն փոքր եւ մի աւագ խորան, տասն եւ մի լուսամուտ (երեքն կլորակ է), երկու խորհրդարան, երկու դուռն՝ հիւսիսից եւ արեւմուտքից. 15 մետր 30 սանթիմ երկարութիւն եւ 11 մետր 10 սանթիմ լայնութիւն: Աւագ խորանի կլորակի վերայ շինուած է տասներեք հատ ամենափոքր, բայց ամենագեղեցիկ խորաններ, որպիսին տեսանք միայն Խորանաշատ վանքի աւագ խորանում: Վերին փոքր խորանների մուտքն բացուած է աւագ խորանի միջով: Հրաշալի եւ ուշագրաւ է բեմի ժողովրդահայեաց ճակատն, որ շինուած է գոյնզգոյն քարերով եւ զարմանազան նրբաքանդակ նախշերով:

Հարաւային փոքր խորանի դրան վերայ.

«Կամաւն Աստուծոյ ես Դաւիթ առաջնորդ սուրբ ուխտիս կամակցութեամբ եղբարցս գրեցաք զՏեառն ընդառաջ աւրն զամէն եկեղեցիքս, որ Վահրամա լինի պատարագ, որչափ ի շինութեան է սուրբ ուխտս, ով խափանէ...»:

Հարաւային որմի վերայ, ներքուստ, նոյն խորանի մօտ.

«Անուամբն Աստուծոյ այս մեր գիր է Դաւթի եւ այլ միաբանացս որ գրեցաք վասն Յովսէփայ, որ ետ ոսկի 'ի գին եկեղեցւոյս եւ մեք տուաք Ա. պատարագ ի տաւնի քառասնիցն»:

Արեւմտեան լուսամտից վերեւ, արտաքուստ.

«Տէր Յիսուս Քրիստոս ողորմեա՛ Իւան Շահին եւ ամուսնոյն ՈՂԲ.»:

Արտաքուստ հարաւ. որմի վերայ, արեւի ժամացոյցի տակ.

«Յուսով Աստուծոյ ես Յովանէս քահանայ էտու զիմ հոգոյ արդիւնս եւ գնեցի յԱրտաւազայ իւր ամէն որդեանցն զայգին եւ ընծայեցի Աստուածածնիս. Յովանէս առաջնորդ եւ միաբանքս էտուն Բ. ժամ 'ի տաւնի աշխարհամատրան. Ա. ժամ ինձ եւ Ա. ժամ իմ մաւրն Զուզին. ով զայգին խափանէ, ՅԺԸ. հարապետացն անիծած է թվ. ՉԹ.»:

Գ. ՓՈՔՐ ՄԱՏՈՒՌ. Շինուած է վանքերիս արեւելեան կողմում եւ ունի սոյն արձանագրութիւնը.

«Ի թուին ՈՒԷ. Հայ (ոց) ես յամենայնի մեղապարտս Յովհաննէս՝ ամէն միաբան եղբարցս կամակցութեամբ եւ ձեռնտուութեամբ՝ զեկեղեցիս՝ յիմ ծնողացն եւ եղբարցն, որ այժմ ննջեցեալ են, յանուն շինեցի Վասակայ, Շուշկանն, Հասանա եւ Վաչէի, եւ խնդրեմ մեծ յուսով եւ հաւատով եւ զԱստուածածին եւ զՔրիստոսի չարչարանսն բարեխաւս ունիմ, որ յետ իմ սպասաւորին տեղոյս, զի զատկի աւրն նոցա արասցեն ժամ, որ խափանէ, նզով առցէ. կատարիչքն աւրհնին յԱստուծոյ»:

Այժմ աւերուած են վանուցս շրջապարիսպն եւ միաբանից սենեակներն եւ խուցերն եւ տեղտեղ թափուած վանքերի սալկախներից եւ որմերից քարեր: Գերեզմաններ կան գաւիթներում, վանքերիս արեւմտեան կողմերում եւ դռների առաջ:

Հարկ է յայտնել, որ Բ. վանքի արեւելեան արտաքին որմի վերայ կայ մի երկար արձանագրութիւն, որի մէջ յիշուած է միայն Մակարայ վանք անունն: Անմարդաբնակ են վանքերս:

ՀԻՆ-ՊԻՊԻՍ ԳԻՒՂ. Այժմ աւերակ գիւղ, Սուրբ Աստուածածին անուամբ կանգուն մատուռ եւ հանգստարան վանքերիս հարաւային կողմում:

ՔՈՂԱՄԻՋԻ ԽԱՋ. Մակարայ վանքից վար, ճանապարհի հարաւային կողմում (եւ Հաչաջրից վերեւ) գիւղատեղի, հանգստարան եւ փոքր եկեղեցի Սուրբ Աստուածածին անուն:

Ը. ՍԵԻ ՔԱՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Հաչա-ջրի հիւսիս-արեւմտեան կողմում, մի հովտի մէջ. բնակիչք տեղափոխուած են Կիւլստան եւ Ջրաբերդ դաւառներից, հողն՝ արքունի, ջուրն՝ սակաւ, տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90-95 տարի.

եկեղեցին՝ Սուրբ Պետրոս, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ երկու: Եկեղեցումս կայ երկու ձեռագիր աւետարան, որք պակասաւորք են եւ չունին յիշատակարան:

Ծուխ 175, ար. 1306, իգ. 1116:

Թ. ՆՈՐԱԳԵՂ. Սեի գեղ կամ Ղլիջ-քեանդ. Հիմնուած է մի սեռի վերայ Սեւ-քարի հիւսիսային կողմում, բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի, անջրդի եւ միջակ արդիւնաբեր, տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն՝ օդն եւ. կլիման, պակաս՝ ջուրն, երկար կեանք՝ 80-85 տարի, եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, ծածքն՝ փայտաշէն. քահանայ՝ մի:

Ծուխ 77, ար. 411, իգ. 342:

Ժ. ՄԵԼԻՔ-ԳԻՒՂ. Հիմնուած է մի տեսարանաւոր հարթի վերայ. Սեի գիւղի արեւմտահիւսիս կողմում. բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի, անջրդի. միջակ արդիւնաւէտ. տեղական բերքերն՝ նոյն, պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 90-100 տարի. եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս, ծածքն՝ փայտաշէն. քահանայ՝ մի:

Ծուխ 38, ար. 262, իգ. 175:

ԺԱ. ՆՈՐ-ՊԻՊԻՍ կամ Ջողազ. Հիմնուած է Ոսկեպար[1] (ըստ տաճկ. Ասկի փարա) վտակի աջ կողմի բարձրութեան վերայ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ կիսով չափ արքունի, տեղական բերքերն՝ նոյն. անախորժ՝ ամռան օդն, կլիման եւ ջուրն, եւ տենդաբեր, երկար կեանք՝ 50 տարի, եկեղեցին՝ Սուրբ Գէորգ, ծածքն՝ փայտաշէն. քահանան գալիս է Մելիք գիւղից:

Ծուխ 35, ար. 177, իգ. 174:

ԺԲ. ՆՈՐ-ԿՈՒՆԷՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Նոր-Պիպիսի արեւմտեան կողմում այն սեռի վերայ, որ ընկած է Ոսկեպար վտակի եւ Կունէն առուակի մէջ. բնակիչք՝ գաղթած Երեւանի Նորք եւ Կողթ կամ Շամշատին գաւառի Կուզէն գիւղերից. հողն՝ կիսով չափ արքունի. տեղական բերքերն՝ նոյն, օդն կլիման եւ ջուրն՝ ոչ այնքան գովելի, երկար կեանք՝ 60-70 տարի, եկեղեցին՝ Սուրբ Երրորդութիւն, քահանան գալիս է Ոսկեպար գիւղից:

Ծուխ 34, ար.185, իգ. 156:

Սուրբ Աստուածածին մատուռ. Գիւղից վերեւ Կունէն[2] առուակի աջ ափի բարձրութեան վերայ. շինուած անտաշ քարով մի կամարի վերայ: Դրան գլխի քարին վերայ. «Թվին ՌՃԽԴ. ես Մելիք-Շահնազարս... ամուսին Խանզատէն շինեցինք Սուրբ Աստուածածին ձեռամբ Յակոբին»: Մեծ հանգստարան շրջապատած է մատրանս շուրջն:

Հին Կունէն աւերակ, որ կայ մատրանս հիւսիս-արեւմտեան հանդէպ, առուի ձախ ափին:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ[3]

Հին-Կունէնից փոքր-ինչ վերեւ, նոյն առուակի ձախ կողմում մի լեռնաբազկի վերայ: Հիմնուած է չորս կամարների վերայ, որ ունի մի աւագ խորան (առանց փոքր խորանի), չորս լուսամուտ, երկու խորհրդարան, մի կաթուղիկէ, մի դուռն արեւմտեան կողմից, 10 մետր 25 սանթիմ երկարութիւն, 7 մետր 45 սանթիմ լայնութիւն: Որմերի ներսի երեսներն շինուած են անտաշ, իսկ դրսի երեսներն՝ սրբատաշ քարով: Մենաստանս ունի եւ գաւիթ, որ կից է իւր արեւմտեան կողմին, կառուցեալ ութ կիսասիւների վերայ, երկարութիւն (հիւսիսից հարաւ) 10 մետր 40 սանթիմ, լայնութիւն 9 մետր 50 սանթիմ: Գաւթիս դրնագլուխ քարի վերայ. «Ի թվին ՈՂԴ. կամաւ բարերարին Աստուծոյ եւ ողորմութեամբ՝ Աթաբագ ամիր սպասալար Խութլու փուղին (Խութէ եւ Բուղին) ես Գրիգոր թոռն Խաչենիսենց ապաւինեցայ սուրբ առաքելոյս իմ հալալ արդեամբ եւ բնակիչքս սուրբ ուխտիս ետուն Բ. պատարագ 'ի տաւնի սուրբ Գրիգորի գիւտի նշխարացն. կատարիչքն աւրհնին Աստուծոյ եւ խափանողքն դատին 'ի Տէր»:

1 Վտակիս ջուրն միանում է Աղստեւին Ղազախ քաղաքի հանդէպ: Գիւղիս մօտ կայ մի ուխտատեղի՝ Պիպիս կամ Ջողազ անուն, ուխտի օրն է զատիկ օրերն:

2 Խառնւում է Ոսկեպարին:

3 Հիւսիսային պատում կայ մի գաղտնի պահարան, որի ճանապարհն գաւթի տանեաց վերայովն է:

Արտաքուստ տաճարիս հարաւային որմի տակ կայ մի նշանաւոր խաչարձան, որի երկարութիւնն 2 մետր 50 սանթիմ է (առանց պատուանդանում գետեղուած մասին), լայնութիւնն՝ 1 մետր 10 սանթիմ: Խաչարձանիս վերին մասումն քանդակուած է Յիսուս Քրիստոսի պատկերն[1], որը բռնած են երկու հրեշտակներ: Իսկ Յիսուս Քրիստոս բռնած է իւր ձեռքում մի թուղթ, որի վերայ քանդակուած է.

«Ես եմ լոյս աշխարհի....»:

Իսկ ստորին մասում.

«Ով քառաթեւ սուրբ պանծալի,
Փրկագործող մարդկան ազգի,
Տեսիլ փառաց անճառելի,
Գերապայծառ եւ սխրալի,
Յորժամ փայլես ընդ ամպս երկնի,
Լե՛ր բարեխաւս Տեառն Յիսուսի,
Կարապետին քո աւգնողի,
Ալմկանին իւր կենակցի,
Եւ զաւակացն գովելի,
Համայն ազգացն, որ ի կամս Հաւր ննջեցին»:

Խաչարձանիս վերայ փորագրուած են նաեւ ուրիշ խօսքեր աւելի խոշոր գրերով, սակայն անընթեռնելի են, քանզի եղծուած են:

Մենաստանս ունի ամրոցի նման ամուր պարիսպ՝ շինուած լեռնաբազկի դիրքով, որ ձգուած է գրեթէ հիւսիսից հարաւ եւ ունի հաստատուն եւ բարձր բուրգեր: Պարսպի ներսում կան միաբանից խուցեր, պալատանման բնակարաններ, սենեակներ եւ գոմեր: Վանքիս արեւելեան կողմում, հովտի մէջ կայ գիւղատեղի, ձիթահանքեր եւ հին շինութիւններ: Իսկ հարաւ-արեւմտեան կողմում, ձորի միւս լանջի վերայ, հանգստարան եւ մի քառաթեւ եւ բարձր խաչ, որպիսին տեսանք Խամշի վանքի մօտ:

Կերանց վանք

Հիմնուած է Առաքելոց վանքից բաւական վերեւ՝ նոյն վտակի ձախ ափի մօտ: Տաշուած մոխրագոյն քարով շինուած են դռներն եւ հիմքից բարձր երկու շար քարերով շրջապատն. իսկ մնացեալ բոլոր մասերն շինուած են թրծեալ աղիւսով: Մենաստանս կառուցեալ է երկու սիւնների եւ երկու կիսասիւնների վերայ, խաչաձեւ է ներքուստ, բայց եկեղեցու ձեւ ունի արտաքուստ: Ունի երկու փոքր եւ մի աւագ խորան, երկու խորհրդարան, երկու դուռն՝ հարաւից, արեւմուտքից՝ ութ նեղ եւ երկար լուսամուտ, մի բարձրագոյն եւ գեղեցիկ կաթուղիկէ[2]. 17 մետր 60 սանթիմ երկարութիւն, 12 մետր 15 սանթիմ լայնութիւն: Բարձրում նկարուած են սրբոց պատկերներ, բայց ոչ հայկական ճաշակով եւ ոճով, այլ՝ յունական. սակայն պատկերների ստորոտում կան հայերէն գրեր, զորս անհնարին եղաւ մեզ կարդալ խիստ հեռաւորութեան պատճառաւ: Հիւսիսային փոքր խորանի միջից կայ մի վերելակ, նեղ եւ մութ սանդուղ, որ տանում է մի գաղտնի պահարան: Բեմի դասահայեաց ճակատն չէ շինուած աղիւսով, այլ՝ քարերով, որոց վերայ կան նրբագործ քանդակներ, ծաղիկներ եւ նախշեր. գեղեցկաքանդակ են եւ դռների սեմերն:

Մենաստանս ունի երկու դաւիթ. արեւմտեան դրան վերայ եղած դաւիթն շինուած է տաճարիս լայնութեան չափով. իսկ հարաւային դրան վերայ եղածն՝ ըստ երկարութեան: Տաճարիս հիւսիսային կողման կից կայ մի մատուռ, որի ստորին մասն շինուած է քարով, իսկ վերնամասն՝ աղիւսով: Տաճարիս արեւմտեան դաւթից մի քանի քայլ դէպի արեւմուտք, երեք կամարի վերայ շինուած է մի ընդարձակ շինութիւն, որ ունի երկու դուռն արեւելքից եւ արեւմուտքից: Կարծում ենք, թէ սեղանատուն է այս կամ ուսումնարան:

Տաճարս ունեցած է քառակուսի ձեւով շրջապարիսպ, որ սկսուած է սեղանատուն կարծուած շինութեան հիւսիսային ժայռից, պատած հարաւային եւ արեւելքից հասցրած նոյն ապառաժ ժայռի ծայրին, որ քանդուած է արդէն: Ունեցած է եւ սենեակներ եւ խուցեր, որք աւերուած են այժմ: Տաճարիս հարաւային եւ արեւելեան արտաքին որմերի տակերն լի են գերեզմաններով:

Պարսպի շուրջն լի է անտառով բակերով. իսկ գիւղիս հանգստարանն գտնւում է հիւսիսային հանդէպ եղած մօտ բլրակի վերայ:

Դեղձնուտի վանք

Հիմնուած է Կերանց վանքի հարաւ-արեւելեան կողմի անտառապատ լեռների մէջ: Հարաւային կողմից միանում է Կունէն վտակի մի այլ առուակ, որի ջրաձորի արեւմտեան կողմում բաւական վերեւ շինուած է Դեղձնուտ անուն վանքն՝ Դեղձնուտ կոչուած տեղում: Վանքս ամբողջապէս շինուած է սրբատաշ քարով, որ գրեթէ ունի Մակարայ վանքի մեծութիւնը եւ մի գաւիթ, որ շինուած է շատ յետոյ: Տաճարս ունի երկու փոքր եւ մի աւագ խորան, երկու խորհրդարան, մի դուռն՝ արեւմտեան կողմից: Գաւթումս ամփոփուած են մի քանի ննջեցեալներ, սակայն աւելի ուշագրաւ են երկու գեղեցկաքանդակ խաչարձաններն, որոց գեղարուեստի նրբագործութիւնն ներկայացնում է ժամանակին ճարտարապետութեան արտափայլումը: Հարկ է յայտնել, թէ խախտուած է վանքիս գաւիթն, որի մօտերքում կան գերեզմաններ:

Սամսոնի վանք. Կառուցեալ է Խնձորկուտի ջրաձորում, մի տափարակ տեղում, անտաշ քարով: Փոքր վանքս, որ ներսից խաչաձեւ է, ունի կամարակապ, աւերակ խուցեր եւ հանգստարան:

ԺԳ. ՆՈՐ-ՈՍԿԵՊԱՐ (Աքսիպար). Հիմնուած է Կունէն գիւղի հիւսիս-արեւմտեան կողմում Ոսկեպար վտակի աջ կողմի բարձրութեան վերայ, բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, տեղական բերքերն՝ նոյն, ոչ այնքան գովելի՝ օդն եւ կլիման ամուռն, երկար կեանք՝ 75 տարի, եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի:

Ծուխ 35, արբ. 172, իգ. 121:

ՀԻՆ-ՈՍԿԵՊԱՐ. Ընդարձակ աւերակ. Նոր-ին հանդէպ. վտակի ձախ կողմումն, որի մէջ կայ կիսաւեր մեծ եկեղեցի եւ հանգստարան, բաղանիս եւ փլատակների տակ ծածկուած շէնքեր: Փորուածքներից գտնում են ոսկեղէն, արծաթեղէն եւ պղնձեղէն զարդեր եւ անօթներ եւ երկաթեայ խոփ, ձեւիչ, ճամբարակ: Այստեղից փոխադրուած են Նոր-Ոսկեպարի բնակիչներն. բայց այժմ թրքաբնակ է աւերակս:

ԱՇՏԱՐԱԿ. Աւերակ Ոսկեպարից վերեւ կայ մի քարուկիր բարձր աշտարակ նոյն վտակի ձախ կողմում, որը անուանում են Ղըզ-Ղալա: Մի գիտարան է այս:

ՋՈՒՏԱԿ ԵԿԵՂԵՑԻ. Մօտ մղոնաչափ վերեւ կայ աւերակ հայկական գիւղ. հանգստարան եւ երկու մօտ առ մօտ կիսաւեր եկեղեցիներ: Ահա այս է նոյն անունը կրող աւերակն, որ այժմ թրքաբնակ է:

Աւերակ գիւղատեղի, հանգստարան եւ եկեղեցի կայ Նոր-Ոսկեպարի հիւսիսային հանդէպ՝ վտակի ձախ կողմում:

ԺԴ. ԲԱՂԱՆԻՍ ԳԻՒՂ. Հիմնուած է այն լեռնաշղթայի հարաւահայեաց լանջի վերայ, որ սկսուած է արեւմտեան լեռներից, անցած Ճչեվանք, Բաղանիս եւ Ղոշղոթան գիւղերի հիւսիսային կողմով դէպի Գաւարգին: Բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի, տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն՝ օդն եւ կլիման, երկար կեանք՝ 85 տարի. եկեղեցին՝ փայտաշէն եւ վնասուած, քահանան գալիս է Ղոշղոթան գիւղից, որ խիստ մօտ է:

Ծուխ 47, արբ. 239, իգ. 183:

ԺԵ. ՂՈՇՂՈԹԱՆ ԳԻՒՂ. Հիմնուած է Բաղանիսի հիւսիս-արեւելեան կողմում. բնակիչք՝

1 Փորագրուած է պատկերիս կողքերով. «Բանն Հաւր Բարձրեալ անսկզբնական Կարապետին լեր աւգնական»:
2 Կաթուղիկէիս արտաքին երեսն շինուած է մանր եւ գոյնզգոյն եփած աղիւսներով:

բնիկ. հողն՝ արքունի. տեղական բերքերն՝ նոյն. պատուական՝ օդն. կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 100 տարի. եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս. ծածքն՝ փայտաշէն. քահանայ՝ երկու:

Ծուխ 89, ար. 575, իգ. 450:

ԺԶ. ՃՁԵՎԱՆՔ ՇԷՆ. Բաղանիսից վերեւ մի անտառապատ ձորի ձախ լանջի վերայ. բնակիչք տեղափոխուած են այստեղ Ջալու եւ Հաղբատ գիւղերից. հողն՝ արքունի. տեղական բերքերն՝ նոյն. պատուական՝ օդն. կլիման եւ ջուրն. եկեղեցին՝ նորաշէն Սուրբ Աստուածածին, քահանան գալիս է Պարանայ գիւղից:

Ծուխ 17, (արականք եւ իգականք հաշուած են Ղազրպէթանի վերայ):

Դվեղայ Սուրբ Սարգիս վանք

Հիմնարկուած է մի անտառապատ եւ խոր ձորի աջ լանջի հարթակի վերայ. որի հիւսիսային կողմն վիմահերձ ապառաժ է: Մենաստանս շինուած է ամբողջապէս սրբատաշ քարով. բայց եկեղեցու ձեւով եւ ունի երկու փոքր. մի աւագ խորան. մի առանձին խորան եւս հիւսիսային որմի մէջ. մի դուռն հարաւային կողմից. մի քանի լուսամուտ. մի գանգատուն. որ բաղմած է աւագ խորանի գլխին, 11 մետր 80 սանթիմ երկարութիւն, 7 մետր 80 սանթիմ լայնութիւն: Հնաշէն են աւագ խորանն եւ հիւսիսային երկու խորաններն. իսկ նորոգուած են մնացեալ բոլոր մասերն:

Հարաւային կամարի վերայ. «Շինեցաւ յատակս սուրբ սեղանոյս արդեամբ Խաչատուր եւ Դարչօ Հախվերտեանցի»:

Դրան ճակատին. «Ողորմութեամբն Աստուծոյ շինեցաւ եկեղեցիս յանուն սրբոյն Սարգսի տրովք բարեպաշտից, ջանիւք եւ վերակացութեամբ տփխիսեցի Եսայեան Նուրենց, զոր յիշատակէ Տէր յաւուրն վերջին: Հիմնարկեցաւ ի 1845 եւ աւարտեցաւ 1849 ամի Տեառն»:

Վանքիս հիւսիսային կողմում կայ մի մատուռ Սուրբ Կիւրակէ անուն: Մատրանս հիւսիսային խոր ձորում ժայռից բղխում է մի պատուական ջուր. որը անուանում են Օրհնած աղբիւր: Ոմանք Թիֆլիզեցիք շինած են վանքիս մօտ մի քանի սենեակներ. ուխտի օրերն են ամէն զատկին. մեծ բազմութիւն է լինում այստեղ ուխտաւորաց:

ԺԷ. ՆՈՐ-ՊԱՐԱՆ կամ ԱՊԱՐԱՆ գիւղ. Շինուած է Սուրբ Սարգսի արեւմտեան հիւսիսային կողմում մի ջրաձորի արեւելահայեաց լանջի վերայ. ամբողջ ձորն զարդարուած է այգիներով. բնակիչք տեղափոխուած են այստեղ Ապարանից. վասն որոյ եւ պահած իւրեանց նախկին բնակավայրի անունը՝ Ապարան. որը կրճատելով կոչած են Պարան: Հողն՝ արքունի. լեռնային. սակաւ. բայց արդիւնաւէտ. տեղական բերքերն՝ նոյն. օդն. կլիման եւ ջուրն՝ գովելի. երկար կեանք՝ 100 տարի. եկեղեցին՝ Սուրբ Սարգիս. ծածքն՝ փայտաշէն. քահանայ՝ երեք:

Ծուխ. 95, ար. 573, իգ. 441:

Աւերակ գիւղ, հանգստարան եւ եկեղեցի կայ Հին-Պարանում. որ գիւղիցս վերեւ է եւ Մըկնաձորում: Իսկ Պղնձահանք, որ կայ Միսխանա կոչուած տեղում, աւելի վերեւ է Հին-Պարանայ աւերակից:

ԺԸ. ՆՈՐ-ԿՈՂԲ ԳԻԻՂ. Շինուած է Պարանայի արեւմտեան կողմում (խիստ մօտ) մի ջրաձորի արեւմտահայեաց լանջի վերայ, բնակիչք տեղափոխուած են Աբարատեան նահանգի Կողբ գիւղից, վասն որոյ պահած են միեւնոյն գիւղանունը, բարբառը եւ սովորութիւնները. հողն՝ արքունի, տեղական բերքերն՝ նոյն, գովելի՝ օդն եւ կլիման, բայց ոչ՝ ջուրն. երկար կեանք՝ 100 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, հոյակապ, կառուցեալ վեց միապաղաղ սիւների վերայ. երկարութիւն՝ 22 մետր 35 սանթիմ, լայնութիւն՝ 13 մետր 5 սանթիմ. քահանայ՝ երկու: Եկեղեցումս կայ մի գրչագիր աւետարան, որ պակասաւոր, անպատկեր եւ թղթեայ է, որը գրած է Սարկաւագ Նասիպն Դիզակ գաւառին Տաղ գիւղումն Հայոց ՌԺԲ. թուին:

Ծուխ 160, ար. 979, իգ. 814:

Միղասեան ուսումնարան, որ ունի գեղեցիկ շինութիւն, յարմար դասարաններ եւ սոյն արձանագրութիւնը. «Կանգնեցաւ ուսումնարանական շինութիւնս ի սեպհական տեղոջն սեպհական արդեամբ կամ ծախիւք Կողպա բնակիչք պ. Բէկլարի եւ որդոց նորա Սարգսի եւ Մարտիրոսի Տէր-Բարսեղեանց ի յիշատակ նոցա եւ որդոց նոցա ի թուականին Փրկչին 1892-ին եւ Հայոց ՌՅԽԱ.»:

Աշակերաք 30. համարեայ թէ ամէնքն եւս ձրիավարժ են. տարեկան վարժապետին՝ 250 ռուբ.:

Սուրբ Աստուածածին մատուռ. Գիւղիս հին հանգստարանում սրբատաշ մոխրագոյն քարով շինուած է կիսաւեր մատուռս. որի վերայ. «Ես Ասլան եւ Սար... զերկն խաչին զ... յեկեղեցիս եւ տվաք Ե.. Սուրբ Աստուածածին Բ. աւր ժամ.. տարումն կարգեցաք լոյս.. Ադիղին եւ Արեւտեղին. ով այլ հակառակեսցէ, Կայենին եւ Յուդային մասն ժառանգեսցէ»:

Մատրանս մօտ (արեւելեան կողմում) մի խաչարձանի վերայ.

«Ի թիս ՈՂԳ. ես Սարգիս քահանայ կանգնեցի զխաչս ի յիշատակ ինձ եւ որդոց իմոց Եպիփանայ. Եփրեմի եւ եղբարց Ունձ Ալէքսիոսի. Իգնատիոսի եւ հաւրեղբաւր իմոյ Ոհանին, արդ որք երկրպագէք, յիշեսջիք զմեզ առ Քրիստոս»: Շարայարուած է. «ՋԱբէլ եւ տէր Աւագ կազմող խաչիս յիշեցէք ի Տէր»:

Սուրբ Նշան ուխտատեղի. Գանուում է գիւղիս հարաւային կողմի բարձրագոյն սարի արեւմտահայեաց սեռի վերայ. փայտաշէն է. որի մէջ մի կիսատ խաչքարի վերայ. «Ես Բենիամին վարդապետ Հայոց արարի յիշատակ ինձ սուրբ զբեմս, որ է հիմն հաւատոյ եւ պատուանդան սուրբ Նշանիս տեղի աղաւթից երթեւեկաց եւ յոյս, որ գնան արդարութեամբ յերկրի»:

Այլ քարի վերայ. «Յանուն սրբոյն Գիսայ (գուցէ Սարգիսայ) ես հայր Գրիգոր կանգնեցի նշանս Քրիստոսի աւգնական մեր ի Տէր եւ որք Տեառն են»:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԱՆՔ (65)

Սուրբ Նշանից փոքր-ինչ վերեւ մի գմայլելի սարահարթի վերայ կառուցեալ է վանքս համակ սրբատաշ, սպիտակ, տորոնագոյն եւ երկնագոյն քարերով մի կամարի վերայ, որ ունի չորս փոքր եւ մի աւագ խորան, երկու խորհրդարան, չորս լուսամուտ, մի դուռն, 12 մետր երկարութիւն եւ 8 մետր լայնութիւն: Հիանալի քանդակներով զարդարուած են բեմի եւ խորհրդարանների քարերն:

Դրան գլխի քարի վերայ.

«Ես Ռըստակէս եւ այլ միաբանքս հաստատեցաք ի տարին Բ. ժամ. Ա. Աբեսալայ, Ա. Ազըզին ի տաւնի քառասնից, որ խափանէ մեր մեղացս տէր է առաջի Աստուծոյ»:

Տաճարիս արեւմտեան կողմին կից է քառակամար եւ գեղեցիկ դաւիթ, որ կանգնած է երկու միապաղաղ սիւների եւ վեց կիսասիւների վերայ: Գաւիթս ունի երկու փոքր խորան, երկու գեղեցկաքանդակ խաչարձան, երեք լուսամուտ, մի դուռն, 14 մետր 85 սանթիմ երկարութիւն, 13 մետր լայնութիւն:

Հարաւային խորանի վերայ. «Տէր Աստուած ողորմեա՛յ Ազատին եւ իւր ծնողացն ամէն Ողջ.» Հար. խաչարձանի վերայ. «Տէր Աստուած ողորմի Աւմ Տողմիշին, Դաւիթին, Խոյտանին»:

Հիւսիսային խաչարձանի վերայ. «Տէր ողորմեայ Թաշտին եւ իւր ծնողաց, որ զխաչս կանգնեաց ի թվիս Հայոց ՉԽ.»: Գաւթիս յատակն լի է տապանաքարերով, որք են գերեզման եպիսկոպոսաց եւ վարդապետաց:

Տաճարիս հարաւային որմի վերայ արտաքուստ արեւի ժամացոյց. «Ի թուակ ԷՃԲ. (ՋԲ.) ես Վասակ, Սիսխաթունս Էգի ետու Աստուածածնիս. Ռըստակէս եւ միաբանքս տվաք Գ. ժամ աւետեացն տաւնին. ով զիրուր տայ (խառնէ). յԱստուծոյ անիծած եղեցի»:

Վանքիս արեւելեան կողմում (արտաքուստ) ընկած է մի կոտրած տափակ քար. որի վերայ գծուած է տասն եւ ինն կարակնաձեւ գծեր. որոց մէջ գրուած են հայոց թուեր՝ ա. բ. գ. դ. ե. զ. եւն. թուերն նման են տարեգրի. վերագրի. եօթնեկեակի. երեւի թէ դաս տալու համար շինուած է: Գարիս ստորոտում քանդակուած է.

«Շարադրութիւն Գրիգորոյ»: Շատ ջանացի ընդօրինակել նոյնութեամբ. բայց որովհետեւ

եղծուած են շատ գրեր, վասն որոյ թողի ակամայից եւ հեռացայ: Վանքիս շուրջն լի է գերեզմաններով, այստեղ կայ եւ գիւղատեղի, որ կոչւում է Վանք: Անյայտ են միաբանից խուցերի տեղերն:

Վանքիս արեւմտահիւսիս կողմում քարընկէց հեռի կայ մի մատուռ, որ շինուած է սրբատաշ քարով, իսկ հարաւ-արեւելեան կողմում՝ փայտաշէն ծածքով, Բարձրեալ անուն, այլ մատուռ:

Անշարժ խաչարձան. Վանքիս աղբիւրից վերեւ, քարահանքում վանքաշէն վարպետներն տաշած են քարահանքի ճակատը, նախ՝ շինած մի մեծ խոնչայ, եւ ապա՝ խոնչայիս մէջ մի հիանալի խաչարձան:

Հին-Կողբ. Աւերակ գիւղատեղի, կիսաւեր եկեղեցի եւ հին հանդուստարան, որք կան Նոր-Կողբից վերեւ համանուն վտակի աջ կողմում:

Տւարայ եղցի. Աւերակ գիւղատեղի, հանդուստարան եւ կիսաւեր ընդարձակ եկեղեցի, Հին-Կողբից մօտ քառորդ մղոն վերեւ նոյն ջրաձորի ձախ ափի վերայ:

Մխիթար վարդապետի մատուռ. Նոր-Կողբի այգիների գլխին, ջրի ձախ ափին, ծածքն՝ փայտաշէն մատուռ, որի մէջ ամփոփուած են երկու վարդապետի եւ երկու քահանայի մարմիններ:

Սուրբ Առաքել. Գիւղիս արեւմտա-հիւսիս հանդէպ սարի վերայ քարուկիր մատուռ, որից մնում են միայն չորս պատերն, որի մօտ կայ գիւղատեղի եւ հանդուստարան:

Ամուրիներ (Ազափլար). Մատրանս հարաւային կողմի բարձրութեան վերայ՝ խաչարձաններով գերեզմաններ, որոց մասին աւանդաբար ասում են, թէ երեսուն հայ ամուրի երիտասարդներ քաջութեամբ պատերազմում են լեկզիների հետ եւ յաղթում նոցա հրոսակներին, բայց յետոյ նահատակւում են օժանդակ եկած լեկզիներից եւ ամփոփւում են իւրեանց ընկած տեղերում եւ խաչեր կանգնում գերեզմանների վերայ եւ անուանում Ամուրիներ:

Վարդի գիւղ. Գիւղիս արեւմտեան կողմում աւերակ գիւղատեղի, հանդուստարան եւ եկեղեցի, որից մնում են չորս պատերն եւ վէմ քարն: Հանդուստարանումս կայ Սուրբ Գէորգ անուն մի մատուռ:

Բարսում գիւղատեղի, հանդուստարան եւ մի մատուռ, որի միջի գերեզմանը անուանում են Բարսում Ճգնաւոր:

ԺԹ. ՇԷՆ կամ ՇԻՆՈՂ գիւղ. Հիմնուած է Զորագետի աջ կողմի բարձրութեան վերայ եւ բաժանուած երկու թաղի:

Հիւսիսային թաղն արդէն եղած է բերդաթաղում, որի շրջապատն անմատչելի վիմահերձներ են. այս բերդիս հիւսիսային կողմով հոսում է Զորագետն, արեւմտեան՝ Շինող գետակն, հարաւային՝ աղբիւրաջրեր, արեւելեան կողմն պարսպուած է վաղուց, որ ունի եւ ամուր բուրգեր, այնպէս որ բերդավայրն բարձրացած է իւր չորս կողմի ձորերից: Ամրոցս ունի երկու մուտք՝ արեւելեան եւ հարաւային, առաջի մուտքով ել եւ մուտք են անում սայլեր եւ անասուններ, իսկ երկրորդով ընդանիք ջուր են բերում աղբիւրներից, քանզի նեղ, զառիվայր եւ դժուարատար է: Բոլորովին հարթ է բերդիս մակերեւոյթն, որ ունի բաւական մեծութիւն եւ գեղեցիկ տեսարան: Եկեղեցին՝ Սուրբ Գէորգ[1]. Նորաշէն, հոյակապ, որ ունի 16 մետր 30 սանթիմ երկարութիւն, 9 մետր 82 սանթիմ լայնութիւն, քահանայ՝ մի: Բարեկրօն Ալեքսան քահանայի մօտ կայ մի ձեռագիր շարական՝ գրուած թղթի վերայ, փոքրադիր: Յիշատակարանից.

«Արդ եղեւ աւարտ գրչութեան.. ի շրջակայութեան Հայկազեան տումարի հազար հարիւր եւ չորս ամի ի դառն եւ ամբարի, վշտաշատ ժամանակի, որ երերուր եւ տատանեալ ազգս Հայոց ի ծեռն այլազգեաց եւ անօրինաց եւ յանիրաւ պահանջողաց, ի հայրապետութեան տեառն Պետրոսի նորընծայ եւ սրբազան կաթուղիկոսի եւ առաքելական աթոռ սորին Գանձասար կոչի եւ ի խանութեան երկրիս մերում Մուրթուզա խանին ի սուրբ եւ ի գերահռչակ ուխտիս որ կոչի... Զարեքայ անապատ... բայց եղեւ սկսանել շարականոցիս ի երկրին մերում վերին Զակամ ի հայրենական գեօղն իմ անուն Պապաջան եւ այժմ օտարացեալ եւ փախուցեալ կամ ի երկիրս. զոր ի վերոյ գրեցաք, ի գիւղս որ կոչի Խաւունիս. որ եղեւ աւարտ շարականոցիս, զի ի շէնս այս կայ պատուական Ջուխտակ եկեղեցիս[1]...Գերեցաւ ձեռամբ ամենամեղ., գրչի Աւետիս անպիտանի քահանայ կոչի»:

Հարաւային թաղն կոչւում է Նորաշէն, որի բնակիչներն մօտ քառասուն տարի առաջ հատւածելով Շնողից հիմնարկուած են բերդի հարաւային հանդէպ: Թաղս ունի իւր յատուկ եկեղեցին՝ Սուրբ Սարգիս. հոյակապ կանգնեալ չորս սիւնների վերայ, քահանայ՝ երկու: Երկու թաղերիս բնակիչներն եւս գաղթած են Արցախի մելիքների գաւառներից, հողն՝ արքունի եւ նուազ արդիւնաբեր. տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն՝ օդն եւ կլիման, պատուական՝ ջուրն. 85-90 տարի երկար կեանք:

Երկու թաղերում միասին. Մուխ 197, ար. 961, իգ. 826:

Ղարախանի հանդուստարան. Նորաշէնի արեւմտեան կողմում, որի մէջ կայ մինչեւ 900 տարեայ խաչարձան եւ իւր մօտ գիւղատեղի եւ աւերակ եկեղեցի:

Բուրայ եղծի. որ կայ Ղարախանի հանդուստարանի հարաւային կողմում, որի մէջ տարին մի անգամ պատարագ են մատուցանում Բուրայ քահանայի տօնին, որի մարմինն ըստ աւանդութեան ամփոփուած է եկեղեցումս, որ նորոգուած է:

Շինու Սարկաւագ. Մի աւերակ մատուռ, որ կայ Բուրայ եկեղեցու արեւմտեան կողմում: Աւանդաբար ասում են. «Մատրանս մէջ ամփոփուած է Շինու սարկաւագի մարմինն»:

Ուխտատեղի են երկոցուն գերեզմաններն եւս՝ քահանային եւ սարկաւագիս:

Ակեղցու զաշ. Ղարաբեհիկ. Թեղուտ եւ Զորագեղ կոչուած տեղերում եւս կան աւերակ գիւղեր, եկեղեցիներ եւ հանդուստարաններ:

Մանստեւի վանք. Զորագեղից հարաւ, Շինող վտակի վերայ սրբատաշ քարով շինուած վանք, որի տաճարայ վերայ գրուած է մի խոյ (քարեայ արձան), որի գլուխն երեւում է արեւելեան կողմում. իսկ դմակն՝ արեւմտեան կողմում: Մենաստանս ունի միաբանից խուցեր եւ հանդուստարան:

Ի. ԱՐՃԷՇ ԳԻՒՂ. Հիմնուած է Շինողի կամ Շինու արեւելեան կողմում, մի գեղեցիկ տեսարան ունեցող լանջի վերայ. բնակիչք տեղափոխուած են Շինող գիւղից. հողն՝ արքունի. տեղական բերքերն՝ նոյն, գովելի՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 100 տարի. եկեղեցին՝ Սուրբ Յակոբ. ծածքն՝ փայտաշէն. քահանայ՝ մի. որի մօտ կայ մի ձեռագիր Նարեկ. բայց սկզբից եւ վերջից թափուած են թերթեր:

Մուխ 61, ար. 234, իգ. 202:

Սուրբ Յակոբ մատուռ. Այս է նախկին բնակչաց փոքր եկեղեցին, գիւղիս վերին կողմին մօտ:

Ուղտըքամակ կոչուած ձորում. որ կայ գիւղիս արեւելեան կողմում. կայ գիւղատեղի, հանդուստարան եւ աւերակ մատուռ:

Ճգնաւորի գերեզման. Գիւղիս հարաւային կողմում կայ մի հին եկեղեցի, որի շուրջն լի է հին ամփոփեալներով. որոց մէջ կայ Ճգնաւորի գերեզման անուն մի հանգիստ, որը այնքան յարգում է ժողովուրդն, մինչեւ անգամ զգուշանում է երդուել նոյն գերեզմանով:

ԻԱ. ԼՃԿԱՁՈՐ ՇԷՆ. Հիմնուած է Արճէշի արեւելեան եւ Զորագետի աջ կողմում մի հիւսիսահայեաց խոր ձորի մէջ. բնակիչք նախ Խոյից գաղթած են Ուլաշլու, որ մօտ է Բօրչալու կոչուած բերդին, ապա տեղափոխուած Թարգեւին[2], ապա՝ Ճալու եւ հուսկ յետոյ՝ Լճկաձոր, հողն՝ արքունի, անվնաս՝ օդն, կլիման եւ ջուրն. եկեղեցին՝ նորաշէն եւ կիսատ, քահանան գալիս է Արճէշից:

1 Բերդիս մէջ արեւմտեան կողմում կայ մի հին եկեղեցի, որ կանգուն է ամբողջութեամբ: Արեւելեան կողմում, արտաքոյ բերդին մի քարուկիր մատուռ՝ Սուրբ Աստուածածին անուն, որի մօտ կայ եւ հանգստարան եւ քարայրներ, որք փոխուած են գոմերի: Իսկ բերդիս հիւսիսային քերծի քարայրներից ելնում է բորակ:

1 Թերեւս ընթերցողն մտահան արած չէ Նոր-Գետաբակի արեւելեան հանդէպ եղած Ջուխտակ եկեղեցին, որի մօտ եղած աւերակն է Խավունիս գիւղն:

2 Զորագետի աջ կողմում են Ուլաշլու կամ Ղուշչինար, Թարգեւին, Ճալու աւերակ գիւղերն եւ հանգստարաններն: Թարգեւին գիւղում մնում է կանգուն Սուրբ Նշան եկեղեցին:

Շինուած կայ 12 ծուխ, որք արականով եւ իգականով հաշուած են Արճէշի ծխաթուոյն հետ:

ԻԲ. ԲԵՐԴԱ-ԳԻՒՂ (Ղալաչայ). Շինուած է Կողբ գիւղից փոքր-ինչ վար նոյնանուն վտակի աջ ափում: Բաժանուած է երկու թաղի՝ Արեւելեան եւ Արեւմտեան թաղ. բնակիչք՝ բնիկ, հողն՝ արքունի եւ բարեբեր (առատ են այգիներն), տեղական բերքերն՝ նոյն. ամռան՝ ճնշիչ ձորի օդն ու կլիման, երկար կեանք՝ 60 տարի: Արեւելեան թաղի եկեղեցին՝ Սուրբ Գէորգ. քարուկիր: Արեւմտեան՝ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն. քահանայ՝ մի:

Ծուխ 160, ար. 614, իգ. 461:

Օդարկու (Քեաքլիկ). Գիւղիս հիւսիսային կողմում մի ձուաձեւ, բարձր եւ գեղեցիկ բլուր, որի գագաթի վերայ կայ մի աւերակ մատուռ Սուրբ Աստուածածին անուն, որի մօտ կայ մի մոխրատանձի:

Զուլոյի գերեզման (Խաղնադաշ). Օդարկուի արեւմտեան կողմում, մի ձորի արեւելեան լանջին վերայ է աւերակ գիւղն, իսկ նոյն ձորի արեւմտեան կողմում, ճանապարհի տակին է խաչարձաններով զարդարուած հանգստարան, որի մէջ եւ Զլոյի գերեզմանն: Մերձաբնակ մահմեդականներն ջարդած են գեղեցկաքանդակ խաչարձաններից շատերն:

Ղեսոի գիւղատեղի. Զլոյի գերեզմանի արեւմտեան կողմում, խոր ձորի ձախ լանջի վերայ է այս գիւղատեղին, հանգստարանն, աւերակ եկեղեցին եւ նշանաւոր ջուր ունեցող աղբիւրն:

ԻԳ. ԴՎԵՂ կամ ԴՈՎԵՂ գիւղ. Շինուած է Դվեղայ Սուրբ Սարգիս վանքից վար. նոյն ձորի ձախ լանջի վերայ. բնակիչք տեղափոխուած են Բերդագիւղից. հողն՝ արքունի. տեղական բերքերն՝ նոյն, բարեխառն՝ օդն, կլիման, երկար կեանք՝ 85 տարի. եկեղեցին՝ Սուրբ Սարգիս, նորաշէն, ծածքն՝ փայտաշէն, քահանան գալիս է Պարանից:

Ծուխ 30. Բերդագեղի վերայ հաշիւ արուած է ծխաթիւ եւ գլխաթիւերն:

ԻԴ. ԴՈՍԵԼՈՒ ԳԵՂ. Շինուած է Դվեղի արեւելեան կողմում, նոյն սարի հիւսիսահայեաց լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի, լեռնային, անվնաս՝ օդն եւ կլիման. երկար կեանք՝ 75-80 տարի. եկեղեցին՝ Սուրբ Գէորգ. ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի:

Ծուխ 72, ար. 322, իգ. 301:

Ամենափրկիչ կամ Բարձրեալ. Մին հին, խարխուլ, քարուկիր մատուռ, որ կայ գիւղիս արեւմտեան կողմում:

ԻԵ. ԿՈԹԻ ԳԻՒՂ. Շինուած է մի խոր եւ լայնագոգ ձորում Գաղայ Սուրբ Սարգսի արեւմտեան կողմում. բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի, տեղական բերքերն՝ նոյն. պատուական՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 100 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն փայտաշէն. քահանայ՝ երկու:

«Այս Աստուածածին եկեղեցին յիշատակ է Կոթի գիւղայ հասարակութեան 1850 ամի»:

Ծուխ 200, ար. 961, իգ. 826:

Գիւղումս պ. Տէր-Սահակեանցի տան կայ երկու կոնդակ՝ ուղարկուած Եփրեմ կաթուղիկոսից[1], որ արտայայտում է իւր շնորհակալութիւնը Սուրբ Էջմիածնի համար ղրկուած դորգերի մասին եւ օրհնում է ղրկողները:

Գիւղիս արեւմտեան կողմում, գիւղից Սուրբ Սարգիս վանքն տանող ճանապարհի վերայ կայ մարդաչափ բարձրութեամբ մի արձան, որ խիստ հին է: Մարդարձանս, որ ներկայացնում է մի երիտասարդի հայկական տիպը, կերպարանքը, զգեստը, դուցէ դարերով ծածկուած է լինում բարձրակոյտ հողերի տակ: Ոմն երիտասարդ քանիցս երազում տեսնելով, որ ոմն անծանօթ անձն հրամայում է քանդել եւ փորելով երեւան հանել մարդարձանը: Ահա այսպէս գտնուած է: Չեմ կարող վճռաբար ասել, թէ որ դարու գործ է այս, բայց կարող եմ վստահութեամբ ասել, թէ խիստ հին է ըստ երեւոյթին:

1 Սոյն երջանկայիշատակ կաթուղիկոսիս օծման հանդիսի առթիւ Կարբեցի Յովսէփ վարդապետ Մարուքեանցն 1824 նոեմբեր 9-ին խօսած է մի ՃԱՌ, որով յայտնում է Հայաստանեայց Եկեղեցու ուրախութիւնը: Բնագիր ճառը յանձնեցի Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնիս Մատենադարանին:

ԳԱՎԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա. ՇԱՐ-ԽԱՉ. Գիւղի հիւսիս-արեւմտեան կողմում, մեծ քերծից վար կայ մի հին եւ փոքր բերդ, որի արեւելեան եւ հարաւային կողմերն վիմահեղձ ժայռեր են, իսկ մնացեալ կողմերն պարսպուած են քարուկիր պատով: Այժմ շատ տեղեր քայքայուած են պարսպից:

Բ. ՄԱՆԹԱՇ ՂԱԼԱ. «Ղրղղալայի հանդէպ ճանապարհի Աղստեւ գետի միւս (ձախ) կողմի լերանց շղթայումը գտանվում է Մանթաշ Ղալան. մի սուր-սուր ժայռի գագաթին: Թէպէտ նրան շատ մօտենալը հեշտ է եւ չէ ներկայացնում առանձին դժուարութիւն, բայց նոյնիսկ գագաթին մօտ նոյնպէս դժուար է բարձրանալ: Մանթաշ Ղալայի շինութիւնների թիւն աւելի փոքր է եւ աւելի աւերակ, այնպէս որ այնտեղ ոչինչ շինութիւն չկայ ամբողջ մնացած, ինչպէս Ղըզ-Ղալայում: Աւերակների միւս մանրամասնութիւնները ներկայացնում են միւնոյն դրութիւնը՝ ինչ որ Ղըզ-Ղալայինը: Այդ երկու ղալաների Աղստափայ գետի ափին.. գտնւում է մի փոքրիկ աւերակ քարուկրից շինած, որ, ինչպէս պատմում են տեղացիք, բաղնիք է եղել: Այն կղզին... այժմ եւս կոչվում է «Համամի ճայա» այսինքն՝ բաղնիքի կղզի[1] »:

Ղըզ-Ղալայի, Մանթաշղալայի եւ աւերակ բաղնիքի մասին ժողովրդեան մէջ մնացել է նոցա մէջ ընդհանրացած աւանդութիւն: Ասում են.. Եղել է մի հերոսուհի գեղեցիկ աղջիկ, որ ունեցել է իր զօրքը: Շատ իշխաններով գրաւուելով նորա գեղեցկութիւնից՝ ցանկացել են ամուսնանալ նորա վերայ, բայց նա մերժել է բոլորի առաջարկութիւնը, կամենալով կոյս մնալ: Երբ ոչինչ միջոցով հնար չէ եղել համոզել նորան, այն ժամանակ այդ բախտախնդիր իշխանները կամեցել են ուժով տիրանալ նորան: Իշխանուհի հերոսը իւր կուսութիւնը պահպանելու համար ժողովում է իւր ձեռքի տակի եղած մարդկանց եւ զօրք կազմելով.. շինելով Ղըզ-Ղալա ամրոցը. ապահովութիւն գտանում այդտեղ: Նորա վերայ սիրահարուած իշխաններից աւելի զօրեղը եւ համարձակը. չէ կամենում ձեռնթող անել իւր սիրոյ առարկան: Աղջկայ քաջագործութիւններն աւելի եւ աւելի վառում են Մանթաշի սրտումը սիրոյ կայծը եւ նա Ղըզ-Ղալի հանդէպ շինում է Մանթաշ Ղալէն եւ այնտեղից երբեմն-երբեմն յարձակմունքներ է անում Ղըզ-Ղալի վերայ. 'ի զուր է անցնում նորա ջանքը. միշտ յաղթող է հանդիսանում աղջիկը:

Վերջապէս մի անգամ աղջիկը իւր զօրքը տալիս է իւր զօրավարի ձեռքը եւ ուղարկում է Մանթաշ ղալի վերայ: Այդ կռուում, որ ինքն աղջիկը անձամբ չէ զօրավարում, յաղթւում է նորա զօրքը, եւ Մանթաշը զորանից յետոյ հեշտութեամբ կարողանում է ձեռք ձգել աղջկան: Դորանից յետոյ կայանում է նոցա մէջ հետեւեալ դաշը. որ նոցանից ամէն մինը կենայ առանձին իւր ղալայում, միայն 'ի նշան բարեկամութեան շինում են գետի ափին վերոյիշեալ բաղնիքը. որ այդ լինի նոցա միմեանց այցելութեան տեղը: Դոցանից յետոյ, ասում են, նոքա երկու ժայռերի գագաթից նշաններով խօսում էին միմեանց հետ եւ արտայայտում իրանց մտքերը եւ սէրը[2]:

Գ. ՄԹՆԱՁՈՐ (Ղարանլուի ղէրէ). Խորագոյն անտառապատ, հորիզոնն՝ նեղ. սոսկալի ձոր. որի մէջ կան քարայրներ եւ պատսպարուելու տեղեր եւ պատուական ջուր: Այստեղ պատըսպարուած են լեկզիների արշաւանաց ժամանակ շրջակայ գիւղերի բնակիչներն, ինչպէս պատմում են ծերունիք:

Դ. ԿԱՅԵՆԻ ԲԵՐԴ. Գտնւում է Մակարայ վանքից բաւական վերեւ Պայտաթափ (Նալթեօքան) սարի հարաւային կողմում: Առանձնացած է իւր չորս կողմերից բերդակիր սարս եւ անջըրպետուած ձորերով: Ահագին քարերով պարսպուած է սարիս գլուխն գագաթի դիրքով. բայց անպարիսպ են տեղ-տեղ վիմահեղձերի գլուխներն: Բերդիս մակերեւոյթն թեքուած է դէպի արեւելահարաւ, որի մէջ երեւում են բնակարանների աւերակներն եւ կուտակ-կուտակ քարեր եւ տեղ-տեղ ջրաւազաններ, որն բերուած է արտաքուստ մօտակայ աղբիւրից:

1 ՃԱԼԱ նշանակում է հովիտ եւ ոչ թէ՝ կղզի:

2 Ղըզ-Ղալա եւ Մանթաշ ամրոցներիս մասին հանգուցեալ Մարտիրոսի գրածները ստացած եմ շնորհիւ իմ ազնիւ բարեկամ գիւտ քահանայ Աղանեանցի նեղսակիր ջանից:

Աւերակ մատուռ. բերդիս հիւսիսային կողմում արտաքուստ, որի մէջ կայ չորս կտոր եղած խաչարձան:

Ե. ԲԵՐԴԱՔԱՐ. Գտնւում է Դեղձնուտի եւ Սամսոնի վանքերի մօտերքում. Խնձորկուտ անուանեալ ջրի աջ կողմում: Իւր շրջապատից առանձնացած եւ բարձրացած է Բերդաքարս, որի կատարի մեծութեան ծաւալն հազիւ լինի հինգ կալաչափ տեղի տարածութեան: Քարուկիր պատով պարսպուած է քարագլխի եղերքին: Ունի միայն մի դժուարատար, խիստ զառիվեր եւ միանգամայն վտանգաւոր կածան, որ առաջնորդում է գղեակն: Կայ յատուկ շինուած ջրաւազան, բայց ջուրն բերուած է ի պահանջել հարկին գղեկիս հարաւային եւ հիւսիսային ստորոտներում եղած աղբիւրներից:

Զ. ԳԱԻԱՐԶԻՆ ԱՄՐՈՑ. Ոսկեպար կամ Զողազ վտակի ձախ կողմում արձանացած է մի բարձր, միապաղաղ, գորշագոյն, զարմանալի եւ միանգամայն ահարկու ժայռ, որի արեւելեան ստորոտով շինած են հնուց պարիսպ, որի ներսի կողմում կան սենեակներ եւ խուցեր, որոնցից միոյն մէջ կայ ջրհոր եւ ջուր: Ժայռիս գագաթն բարձրանալու համար կայ միայն մի դժուարատար, սոսկալի, նեղ, չափազանց զառիվեր եւ միանգամայն վտանգաւոր կածան հիւսիսային կողմից: Գագաթն համարեա թէ հարթակ է մօտ երկու կալաչափ, որի վերայ բուսած են թբղի, հմառկի թուփեր եւ բոշնի, ջաղանի եւ վայրի դեղձի ծառեր: Ահա այս է Գաւարզին բերդ հռչակուածն, որի վերայ երկու տեղ շինուած է վիմափոր ջրաւազան, ջուրն բերուած է յիշեալ ջրհորից:

Ժայռիս արեւմտեան կողմում, բաւական բարձր երեւում է մի մեծ ծակ, որի ետեւ, ասում են կայ մի մեծագոյն քարայր, որի ճանապարհն անյայտացած է այժմ: Երբեմն-երբեմն արծիւներն այրից հանում են գորգի եւ կարպետի փտած կտորներ եւ ձգում վար: Գաւարզնի հարաւ-արեւելեան կողմում, Ոսկեպար վտակի ափի վերայ՝ Դամիրչիլար գիւղն, որի մօտ է մեծ հանդստարան եւ եկեղեցու աւերակն, բայց այժմ մահմեդականաբնակ է գիւղս եւ այլ մի քանի գիւղեր, որք կանխաւ եղած են հայաբնակ եւ որք կան Դամիրչիլարիս շրջակայքում:

Է. ԳԱԳԱՅ ԲԵՐԴ (66). Կոթի գիւղի արեւելեան եւ Գաւարզնի հիւսիս-արեւելեան կողմում առանձնացած է Գագ անուն մի սար, որի հարաւային, արեւելեան եւ հիւսիսային կողմերն դաշտալեզուներ են[1]: Գագ սարիս գագաթի եղերներով պարիսպ ձգուած է վաղուց եւ ձեւացրած մի անմատչելի բերդ, զի առանձնացած է սարս: Բաւական ամուր է բերդս, ափսոս, որ ջուր չունի իւր մէջ, վասն որոյ փորուած են մի քանի վիմափոր աւազաններ, որք բազմիցս լի են լինում անձրեւաջրով: Համարեա թէ 20-ից աւելի վիմափոր այրեր կան յատակապէս պատրաստուած, որք ի հնումն գուցէ ծառայած են իբրեւ զօրանոց, յորոց մի քանիսն ունին երդիկներ:

Գագայ վանք Սուրբ Սարգիս. Բերդիս մէջ, սարիս ամենարարձր գագաթին վերայ, շատ վաղուց շինուած է սրբատաշ կաթնագոյն քարով մի փոքր վանք: Ժամանակի երկարութիւնն մաշած լինելով վանքիս շինութիւնը՝ վասն որոյ քանիցս նորոգուած է: Սակայն վերջին անգամ վերանորոգած է վանքս Կոթի գիւղացի պ. Արզուման Խաչատրեան Տէր-Սարգսեանցն միւնոյն գունով տաշուած քարով: Վանքիս ուխտագնացութեան ժամանակներն են Սուրբ Սարգսի եւ զատկի օրերն:

Վանքիս մօտ՝ նոյնպէս շինուած սրբատաշ քարով. կայ մի մատուռ՝ Սուրբ Կիւրակէ անուն:

Ը. ԲԵՐԴԱՏԵՂ. Պարանայ եւ Կողբ գիւղերի միջեւ կայ այս անուն մի սար, որի կատարի վերայ նշմարւում է բերդի նշաններ: Վաղուց պարսպուած է եղել սարիս գլխի հարթակի շրջապատն, այժմ թէեւ աւերուած է պարիսպն, բայց ոչ հիմունքներն, որք դեռ մնում են հողի տակ: Փոքր է գղեկիս ծաւալն, այսուամենայնիւ պարսպին ներսից փորուած, գտած եւ հանած են մեծ-մեծ կարասներ, որք պահուած են եղել այստեղ իբրեւ պաշար ջրի, քանզի ջուր չկայ այստեղ:

1 Դարգարացուց մեծ դաշտի շարունակութիւնից երկու դաշտալեզուներն եւս, յորոց մեծն ընկած է Գագ լեռնաշղթայիս եւ Կուր գետի աջ ափերի մէջ եւ հետզհետէ նեղանալով վերջացած Կոտրած-Կամրջի մօտ, իսկ փոքրն ընկած է նոյն Գագ սարի արեւմտաձիգ լեռնաշղթայի եւ Ոսկեպար վտակի մէջ եւ գամ քան զգամ սեղմուելով վերջանում Նոր-Պիպիս գիւղի մօտ:

Բացի կարասներից գղեկիս արեւելեան կողմում կայ մի հոր, որ բաւական խոր է. կարծում ենք, որ այս եւս ջրի համար է:

Թ. Բերդաղիւղի մօտ եղած ԴՂԵԱԿՆ, որ շինուած է գիւղիս արեւելեան թաղի հիւսիսային ծայրում մի բլրի վերայ: Դղեակս ունի քառակուսի ձեւ, աշտարակներով պարիսպ եւ մի փոքր դուռն, որ այժմ եւս կանգուն է եւ անվնաս:

Ժ. ՂԵԱՍԻ ԲԵՐԴ, որ Ղրզ-Ղալա եւս է կոչւում. Ղեաս աւերակ գիւղի արեւմտեան եզրից բարձրացած է մի սար, որի երկարութիւնն ձգուած է արեւելքից արեւմուտք եւ բոլորովին առանձնացած: Ամրոցիս մուտքն արեւմտեան կողմից է, որ բարձրանում է սարի գլուխն, ուր կայ մի խաչարձան: Սարիս գլխի վերայ կայ երկու սարաբլուր, որք բարձրացած են ուղտի մէջքից բարձրացած աւելամսերի նման, բայց փոս մնացած է երկու սարաբլուրների մէջտեղն: Ահա երկու բարձրութեանցս վերայ հիմնուած են երկու ամրագին գղեակներ: Առանց աշտարակների են պարիսպներն, որ տեղ-տեղ բոլորովին կանգուն են եւ տեղ-տեղ՝ կիսաւեր: Արեւմտեան գղեակն մեծ է, քան արեւելեանն: Երկոցունց մէջ եւս չկայ ջուր, որը բերած են Ղեաս աւերակին մօտի պատուական աղբիւրից եւ ամրարած կարասներում:

Արեւելեան գղեկիս տակի արեւելեան բարձր քերծի մէջ կայ մի մեծագոյն քարայր, որ ունի նեղ, բայց երկար եւ բարձրագոյն դիրք: Քարայրիս առաջը պատած են ժամանակաւ եւ ձեւացրած բերդակ, որի մուտքն բարձրանում է սանդղաձեւ աստիճաններով եւ մտնում քարայրս յատուկ շինուած դռնով: Քանի՜ ահարկու է այրիս արձագանքն, մանաւանդ խորքերում: Այստեղ եւս չկայ ջուր, բայց կան հացի տաշտերի նման աւազաններ: Այս եւս պատկանում է Ղեասին (Ղուկասին):

ԺԱ. Բերդն է Շինողն, որի մասին խօսած ենք:

ԺԱ. ԲՈՐՁԱԼՈՒ ԲԵՐԴ. Գտնւում է Խրամ եւ Զորագետ ջրերի միախառնուած տեղից վերեւ, Զորագետի աջ կողմում մի բլրի վերայ: Բերդիս հիմունքներն շինուած են քարուկիր, իսկ գետնից վերեւ՝ թրծեալ աղիւսով եւ կրաշաղախ ցեխով: Բերդս փոքր է, իւր ներսում ունի թաղակապ սենեակներ, բայց չունի ջուր: Սակայն բերդիս մօտ կայ մի փոքր լճակ, որից արտահոսում են երկու ջրաղաց դարձնելու չափ (վնասակար Ղարասու) ջուր: Երեւի թէ ջրիցս գործածած են բերդումս, որ կիսաւեր է այժմ:

Հնարակերտ ամրոց. Կուր եւ Խրամ գետերի մէջ ընկած է մի շատ հին ամրոց, որի երկարութիւնն ձգուած է գրեթէ արեւմուտքից արեւելք: Բերդավայրի մեծ մասի մակերեւոյթն թեքուած է Կուր գետի կողմից դէպի Խրամն. իսկ ստորին մասինն՝ խոնարհուած է դէպի գետախառնուրդն: Բերդավայրիս երկու ջրերի մէջ մտած մասն ստացած է սուրանկիւն ձեւ, միջի մասն՝ լայն ձեւ եւ վերին մասն՝ նեղ ձեւ. քանզի Խրամն արմունկ տալով նեղացրած է այս մասը: Մակերեւոյթի երկարութիւնն այժմ քառորդ մղոնաչափ է եւ լայնութիւնն՝ մի տասն եւ չորսերորդ մղոնաչափ: Հարկ է յայտնել, որ թէ՛ երկարութիւնից եւ թէ՛ լայնութիւնից շատ պակասեցրած են գետերն, մանաւանդ Խրամն, ինչպէս ակներեւ է: Գետից գետ փորուած լայն եւ խոր խրամով բաժանուած է երեք մասի. Ստորին, Միջին եւ Վերին ամրոց: Միջավայրի բարձրութեան վերայ կրացեխով եւ թրծեալ աղիւսով շինուած է մի ամրոց, որ ունի չորս աշտարակ իւր չորս անկիւններում եւ 120 մետր շրջապատ (արտաքուստ չափերով): Կործանուած է այժմ ամրոցս, բայց դեռ մնում են աշտարակների մնացորդներն եւ պարսպի հետքերն: Ամրոցիս Կուրի գետահայեաց կողմերն յատուկ պատրաստուած այնպիսի լանջեր են, որից անհնար է թշնամւոյն բարձրանալ. երեւի թէ այսպէս պատրաստուած է եղել եւ Խրամահայեաց լանջերն, սակայն յորդած ժամանակ գետն երկար դարերի ընթացքում քանդած եւ տարած է:

Բոլոր բերդամասերի երեսներն լի են վաղեմի աղիւսների, յախճապակեայ անօթների, խեցեղէն կոպիտ եւ հաստ կարասների, սափորների եւ ամանների բեկորներով եւ շինութեանց հետքերով: Թուի, թէ ներկայ դարուս առաջին եւ երկրորդ քառորդում հերկած են ամրոցներիս մակերեւոյթը, մանաւանդ՝ վերնամասերն:

Երկու տեղ երեւում են հանդստարաններ. մին՝ ամրոցիս արեւմտեան կողմում, փոշտի հին

հանդարձքի տակին. եւ մի-ն՝ Խրամի ձախ ափերի վերայ: Մեր կարծիքով երկու հանդասարաններս միացած են եղել, այս է՝ Կոտրած-կամրջի մոտից մինչեւ Կուրի հանդէպն ամփոփեալ են ննջեցեալներ, բայց տապանաքարերը տարած են եւ գործ դրած ուրիշ շինութիւնց համար: Ի նկատի ունենալով այդ բոլոր յատկութիւնները, կարծում ենք, որ այս է Հնարակերտ ամրոցն (67):

Կոտրած-կամուրջ. Շինուած է Խրամի վերայ Նոր-կամրջից փոքր-ինչ վար: Տակաւին երեւում են Խրամի աջ ու ձախ ափերի վերայ ոտքերի անբակ մնացեալ մասերն:

Նոր-Կամուրջ. Հիմնուած է Կոտրածից փոքր-ինչ վերեւ, որ կառուցեալ է կրաքեսով եւ թրծեալ աղիւսով եւ ունի չորս աչք. ամենամեծն է հիւսիսային աչքն: Երկու եզերքների ոտքերի մէջ շինուած են երկու մեծ սենեակներ, իսկ մէջտեղի մօտ, կամրջի երեսի արեւելեան կողմից կայ մի մուտք, որ սանդղներով իջնում է մի այլ սենեակ, որ շինուած է մի ոտքի մէջ: Երեւի թէ պահապանի տեղերն են սենեակներս: Կամրջիս երկարութիւնն է 160 մետր եւ լայնութիւնն՝ 7, որի երկու եզերքներով հաստատուած են երկաթեայ վանդակներ: Կամրջիս շինութիւնն թերեւս հին է, բայց նորոգութիւններ եղած են Ռուսաց երկրիս տիրելուց յետոյ:

Հարաւային կամ վերին գաւառներ

Ի. Բերձոր կամ Բերդաձոր գաւառ, որի բնակչաց ամենամեծ մասն այժմ մահմեդականներ են: Հետեւեալ գիւղերն, որ կանխաւ հայաբնակ եղած են, այժմ մահմեդակարնակ են, որոց մէջ կան եկեղեցիներ եւ հանդստարաններ: Սկսեալ Երասխի ձախ ափից մինչեւ Ղարաղշլաղ գիւղն.

1) Դիրի՝ Երասխի ձախ ափում կամրջի մօտ Դիրի սարի տակ.
2) Թոմաս գիւղում եկեղեցին — աւերակ
3) Բայաթ, այժմ՝ Բաշարաթ — ,,
4) Հին-Փոքր Թաղլարում — ,,
5) Հորնաւոտում — ,,
6) Հատք գիւղում — կիսաւեր
7) Դաշտահատ գիւղում — աւերակ
8) Ջէք — ,,
9) Փարաջան — ,,
10) Հին-Մեծ Թաղլարում[1] — ,,
11) Եաւրին-խուլթ (մերձ կողառ) — ,,
12) Երկաթաւոր (Դամիրլու) — ,,
13) Սափիան գիւղում — ,,
14) Թումասլու — կիսաւեր
15) Ամուտուկա — ,,
16) Խոջիկ — ,,
17) Պատար — ,,
18) Սարգիս — ,,
19) Ջղջիկ, այժմ՝ Ջաղջիկ — ,,
20) Սպիտակ շէն — ,,
21) Ջամին գիւմ (գոմ) — ,,
22) Գառնակաշ — ,,
23) Ծակարի — ,,

Հայաբնակ են այժմ միայն հետեւեալ գիւղերն.

Ա. ԴՈԼԱՆԼԱՐ. Շինուած է Հին-Մեծ-Թաղլարի հարաւային կողմում մի սարի վերայ. բնակիչք գաղթած են Ղարաղաղից. հողն՝ արքունի. լեռնային եւ նուազ հացատու. տեղական բերքերն՝ ցորեն. գարի. գարնանի. հաճար. կորեկ. ոչխար. տաւար. այծ. խոզ. գոմէշ. գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 100 տարի. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին. ծածքն՝ փայտաշէն քահանայ՝ մի: Մուխ 29, արբ. 123, իգ. 117:

Բ. ԽԱՆՁԱՁՈՐ ԳԻՒՂ. Հիմնուած է Ծամ-ձոր գիւղին արեւմտեան կողմում. բնակիչք գաղթած են Ղարաղաղից. հողն՝ բէկական. տեղական բերքերն՝ միեւնոյն. գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 100 տարի. եկեղեցին՝ Սուրբ Յովհաննէս:

Մուխ 57, արբ. 287, իգ. 222:

Գ. ՅԱՐԱՐ ԳԻՒՂ. Շինուած է Խցաբերդի արեւմտեան կողմում. բնակիչք գաղթած են Ղարաղաղից, հողն՝ բէկական. տեղական բերքերն՝ միեւնոյն, գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն, երկար կեանք՝ 100 տ. եկեղեցի չունին. քահանայ՝ մի:

Մուխ 134, արբ. 532, իգ. 482:

Դ. ԽՑԱԲԵՐԴ ԳԻՒՂ. Շինուած է Դիզափայտի արեւմտահայեաց լանջին վերայ. բնակիչք գաղթած են Ղարաղաղից. հողն՝ արքունի. լեռնային, (6000 ոտքից աւելի բարձր է) գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 100 տ., եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն, քահանայ՝ մի:

Մուխ 50, արբ. 166, իգ. 158:

Ե. ՂԱԼԱ-ՂԵԼԱՂ. Հիմնուած է (Սաղսաղան 7083 ոտք) բարձր սարի հարաւային լանջի վերայ. բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի. տեղական բերքերն՝ նոյն. գերազանց՝ օդն, կլիման եւ ջուրն. երկար կեանք՝ 110 տ. եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին, ծածքն՝ փայտաշէն. քահանայ՝ երկու: Մուխ 337, արբ. 1436, իգ. 1175:

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա. ԱՄՈՒ ՏԵՂ. ԱՄՐՈՑ. Շինուած է Հակարի գետի ձախ կողմում՝ համանուն սարի վերայ, (որի բարձր. 4131 ոտք): Բարուկիր պատով պարսպուած է վաղ ժամանակից սարիս գլուխն, որ ունի բաւական մեծութիւն, ամուր դիրք, պատուական տեսարան եւ բարեխառն կլիմայ: Ամրոցիս մակերեւոյթն լի է շինութեանց բեկորներով, որոց մէջ տակաւին կանգուն է մի քարուկիր մատուռ, որ ուխտատեղի է եւ. որի շուրջն ամփոփուած են հնուց ննջեցեալներ: Մատրանս հիւսիսային կողմում կայ երկու այլ գերեզման, իսկ արեւմտեան կողմում կայ մի վիմափոր աւազան, որ միշտ լի է ջրով. գալիս են կաշուի հիւանդութիւն ունեցողներ (ինչպէս է բորոտութիւն եւն.) լողանում ջրումս եւ ազօթում մատրանս մէջ եւ վերադառնում առողջացած:

Բ. ԹՈՄԱՍ ԲԵՐԴ. Հիմնուած է համանուն սարի վերայ (որի բարձր. 5230 ոտք), որ կայ Ամու տեղի հարաւ-արեւելեան կողմում: Թոմաս սարս առանձնացած է իւր ամէն կողմերից եւ բարձրացած ձուաձեւ, որի վերայ է ամրոցն: Այս եւս ունի քարուկիր պարիսպ, նշանաւոր ամրութիւն, սքանչելի տեսարան եւ մի աւերակ փոքր եկեղեցի:

Գ. ՂԱԼԱԼՈՒ ԲԵՐԴ. որի սարն արձանացած է Բաշարաթ սարի արեւմտեան հանդէպ եւ Բազմին (Բեզմին) սարի հարաւային հանդէպ: Առանձնացած է իւր շրջապատից եւ բերդասարս, որ ունի մօտ 3600 ոտք բարձրութիւն եւ որի շուրջն ահագին քերծեր են: Հնուց պարսպուած են մուտքի կողմերն եւ հարկ եղած տեղերն: Ամրոցիս մէջ եւս կան հին շինութեանց շատ բեկորներ եւ աւերակ մատուռ:

Դ. ԽՑԱԲԵՐԴ. որի մէջ արդէն բնակում են հայեր, ուր կայ եւ եկեղեցի, ինչպէս գիտենք: Ամրոցս, որի բարձրութիւնը պակաս չէ 6000-ից, ունի ամուր պարիսպ, բերդակալ սար. ազնիւ ջուր, զմայլելի տեսարան եւ ամէն ընտիր յատկութիւն: Հարկ է յայտնել, որ հետզհետէ քայքայւում են բոլոր բերդերիս պարիսպներն:

---

[1] Նոր-Թաղլարեցիք նախ Պարսկաստանից գաղթած են այստեղ եւ մի ժամանակից յետոյ տեղափոխուած են Նոր-Թաղլար աւանն:

ԻԱ. եւ ԻԲ. Գաւառներն են Հարճլանք եւ Վակունիք: Առհասարակ լեռնուտ են երկու գաւառներս եւս, որոց մէջ են Արտաշաւի սարն 4456 ոտք. Տղիկ կամ Տղայ՝ 5180. Լաչին՝ 6328. Սարի պապ (Սարի պապա)՝ 7574, Կարմիր քար (Ղըզլ-դաշ)՝ 6552. Բաբադէմ՝ 6006. Փինկան՝ 7903, Յուշարձան (Վանքասար)՝ 1861. Տէրտէրի սար (Քէշիշ-դաղի)՝ 7560. Ներքին-Բեւեռաթափ (Մըխթեօքան)՝ 6944, Աղջկայ բերդ (Ղըզ-Ղալա)՝ 9324. Դիւրին (Դիւրու դաղ)՝ 6914. Սպիտակ քերծ (Ալա կայա)՝ 7672, Ջիլ-կեազ (Ջիլկեազ)՝ 7777. Սահմանասար՝ 8687. Վանքայ սար (Քիլիսա-դաղի)՝ 7553. Երկաթաղբիւր (Դամիւր-բուլաղ)՝ 7639. Կովսար (Ինաք-դաղի)՝ 8583. Հին-գայլ (Ղոջա-ղուրդ)՝ 7675, Սարի աղբիւր (Սարի բուլաղ)՝ 9898. Պէլ-սար (Դալի-դաղ)՝ 11907. Վերին-Բեւեռաթափ (Մխթեօքան)՝ 11851. Աղխասար (Ախիա-դաղ)՝ 8364: Սքանչելի ամառանոցներ են լեռներս:

Երկու գաւառներումս կան մօտ վաթսուն գիւղ. որ կանխաւ եղած է հայաբնակ. բայց այժմ մահմեդականաբնակ են, որոց մէջ սակայն անպակաս են հայկական հնութեանց հետքեր՝ կա՛մ կիսակործան, կա՛մ հիմնայատակ կործանուած եւ կա՛մ կանգուն տաճարներ. եկեղեցիներ. մատուռներ եւ հանգստարաններ:

Ահա՛ այն գիւղերից մի քանիսն.

Զերդի (Զարդ) Տիկ, Բաբադէմ, Նիլջան, Ենկիջա, Ղարաչամ. Արտաշաւի. Վաղաղին, Հաճի, Հոչազ, Հաճի Սամլու, Խալիխալլու (Առաջնորդապատկան). Սուաթ, Մարջանլու (Մունջուխլու), Հաթամլար, Հաճիլար (Հարճլանք), Զուրման, Շամքեանդի, Կարաբայնի (Կարաբաց), Կարաչանի, Լիլօ-Բաղը (Լիլաբակ), Ալակէի (Մաղադոց), Թուրքիշվան (Թրքաշվան՝ թուր քաշող եւ հալածող գիւղ), Շուքարան, Աղան, Ասրիկ (Իսրայէլի գիւղ). Աղջաբանդ (Ղղջկաքանդ-Աղջկայ քանդած), Ալուխան, Սեւանդ (Սեւ հանդ) եւն.:

Միայն մի հայաբնակ գիւղ մնացած է այժմ Հարճլանք գաւառում. որ է.

Ալղուլի. Հիմնուած է Արտաշի սարի հարաւային կողմում. բնակիչք՝ բնիկ. հողն՝ արքունի. օդն. կլիման եւ ջուրն՝ պատուական, երկար կեանք՝ 95-105 տ., եկեղեցին՝ Սուրբ Աստուածածին. քահանայ՝ մի:

Ծուխ 74, ար. 372, իգ. 286:

Մի բերդ կայ միայն երկու գաւառներումս Աղջկայ-բերդ (Ղըզ-դալա) անուն, որ գտնւում է Ղըրխ-ղըզ (40 օրիորդ) սարի հիւսիսային կողմում եւ ունի 9324 ոտք բարձրութիւն: Հարկ է յայտնել, թէ այնքան ամուր տեղեր կան գաւառներումս, մինչեւ. անդամ կարօտութիւն չկայ բերդերի:

ԻԳ. Սիսական-Ոստան, Սիսական, Ծար, Վերին-Խաչէն, այժմ Զառ կամ Զար գաւառ:

Գաւառս եւս, որ կանխաւ եղած է հայաբնակ, այժմ թրքաբնակ է ամբողջապէս, այսուամենայնիւ կան կանգուն, կիսաւեր կամ հիմնայատակ կործանեալ եկեղեցիներ. վանքեր եւ հանգստարաններ հետեւեալ գիւղերում.

Լեւ (Լեւոնի գիւղ), Ջամիլ, Եղջերուագոմ (Մարալ դամի), Դամիրչիլար (Դարբնոց), Աղալար, Քիլիսաքեանդ (Եկեղեցաձոր), Ղամիշլու (Եղէգնուտ), Ջիլքին, Ալլահվերտի (Աստուածատրի գիւղ), Շահքեանդ (Շահնշէի գիւղ), Լեւ դալա, Ջափնի, Քիլիսալու, Ալիասալու, Ջայքեանդ (Գնտաշէն), Քալուաջար, Բաշքեանդ (Գլխաւոր գիւղ), Միլլի, Ջոմարդ, Շահդամ, Հաճի-Բաբա, Շոռթկան, Խաչպարալի (Խաչ-պարան), Ուլուխան, Փիրխանայի (Սրբատուն), Թարխանլու, Խայիւցոկ (Հայոց ձոր), Ջակլիկ, Ջախմախ, Ջբիլ, Ղարախաչ, Ջիրախ, Մամատ-Սափի, Իստի-սու (Ջերմուկ), Բաղասաղ եւն.:

Գաւառիս իշխանանիստ գիւղաքաղաքն եղած է Ծարն, որ կայ մի լեռնահովտում: Գիւղաքաղաքիս չորս կողմերն ի բացուստ շրջապատած են բարձրագոյն, ձիւնապատ, կարակնաձեւ եւ շղթայաշար լեռներ՝ սկսեալ արեւելքից մինչեւ հիւսիս, որք են. Սարի աղբիւր (Սարի-բուլաղ) 9900 ոտք, Տաք ջրին սար՝ 7240, Սեւ Խաչ՝ 9000, Քիթ (Քեթի)՝ 11284, Կութ սար՝ 9000 ոտք: Վիմահերձ եւ բարձր քերծեր են գիւղաքաղաքիս հիւսիսային, արեւելեան եւ հարաւային կողմերն, որոց միջից հոսում են սրընթաց Թարթառ գետի վտակներն եւ միանում գիւղաքաղաքիս

ստորոտում. իսկ արեւմտեան կողմով՝ վիմահերձից վիմահերձ ձգուած է պարիսպ. այնպէս որ միանգամայն նշանաւոր ամրոց դարձած է Ծարս: Գիւղաքաղաքիս մակերեւոյթն հարթ է (ստորին կողմն փոքր-ինչ թեքուած է դէպի արեւելք) եւ ունի մեծ տարածութիւն, որ լի է աւերակ շինութեանց կոյտ-կոյտ բեկորներով. մատուռներով եւ խաչարձաններով:

Ա. ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ մատուռ. քարուկիր. կանգուն եւ շինուած Ծարիս հարաւային եզրում, որ ունի 7 մետր 15 սանթիմ երկարութիւն. 4 մետր 75 սանթիմ լայնութիւն:

Արտաքուստ դրան գլխի խաչքարի վերայ

«Սուրբ Սարգիս»: Ապա «Քրիստոս որդի Դաւթի աւգնէ վանս Հասանայ անարժան ծառայիս յաւուրն ատենի ամէն թվ. ՉԻԳ.»: Մատրանս դրան հարաւային կողմում արտաքուստ կայ երկու նշանաւոր եւ գեղեցկաքանդակ խաչարձան՝ զետեղուած աստիճանաւոր պատուանդանների վերայ: Հիւսիսային խաչարձանի վերայ. (որի երկար. 2 մ 60 ս., լայն. 1 մ 10 ս.) «թվիս Հայոց ՉԼԸ. Աստուծով ես Գրիգոր որդի Հասանայ քաջ եւ յաղթող զաւրավարին եւ մեծի իշխանին Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շողգահո եւ այլ բազում գաւառաց, կանգնեցի զխաչս ի գեղս. որ կոչի Ծար սիրեցելոյն հաւրն իմոյ հայրենիք եւ պարգեւ քաջութեան»:

Հարաւային խաչարձանի ճակատի վերի կողմում քանդակուած է Սուրբ Աստուածածնայ պատկերն. որ գրկած է մանկացեալ Յիսուս Քրիստոսը: Տէրունական պատկերիս շուրջն պատած են քառակերպեան կենդանիք. Սուրբ Հոգին. արեգակն եւ մի թռչուն: Խաչարձանիս ստորոտում. «Սուրբ Աստուածածին Քրիստոս Աստուած... ես Մամքան դուստր Քրդին ու Խորիշահի. ամուսին Հասանայ կանգնեցի զխաչս»: Կան ուրիշ շատ տապանաքարեր եւ պատուական մահարձաններ. բայց անիրաւ քրդերն որը կոտրած են եւ որի գրերը ջնջած: Մամքան տիկնոջ կանգնած արձանի համանմանն ամենայն մասամբ կայ փոքր-ինչ հեռի դէպի արեւմուտ (5 քայլաչափ). որի վերայ փորագրուած է.

«Քրիստոս Աստուած. նշանս բարեխաւս Դաւլաթին. Աստուծով ես Դաւլաթս, ամուսին իմ մեծ իշխան Միրզաջան Խիկար, որդիքս իմ Տաւիտ բէկ, Մելիք պէկի գանգնեցին զխաչս փրկութիւն հոգոյ ի տանէն Գեղամայ. դուստր Մելիք Ղուկասին թ. ՋՂԸ.»:

Սորա մօտ. «Այս է հանգիստ պարոն Ճհանկիր բէկին թվ. ՌՃԻԵ.»: Այս է հանգիստ Մելիք Պէկին կողակից Շայամին, որ հանգուցաւ (ի) տապանս թվ. ՌՃԿԶ.»: Այստեղ են նաեւ Շահփարու եւ Վահրամի տապանաքարերն: Մատրանս հիւսիսային կողմում. «....Միրզա Ճհան կանգնեցաք զխաչս բարեխաւս եղբաւրն իմ պարոն Ճհան Բնուր (՞) Շահիճանին... թվ. ՋԿ.»:

Բ. Մատուռ. ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ. քարուկիր. որ հիմնարկուած է գիւղաքաղաքիս միջում. արտաքին որմերի կէսն շինուած է սրբատաշ քարով եւ միւս կէսն՝ (ստորին մասն) անտաշ. երկարութիւնն՝ 6 մետր 65 սանթիմ. լայնութիւնն՝ 4 մետր 6 սանթիմ:

Դրնագլուխ քարի վերայ

«Թվ. ՉԻԸ. ի հայրապետութեան տէր Աթանասի, ի պարոնութեան Դուփին որդոյն Ուհան երէցու, Ուհանէս շինեցաք զսուրբ Սարգիս կենաց բարեխաւս, հոգոց փրկութիւն, ով կարդ....»:

Դրան հարաւային կողմի շարխաչերի տակ. «Ես հայր Անտուն տվի սուրբ Սարգիսս Համարբակի հողին... Ա. ժամ տվին զծառազարդին»:

Մատրանս դրան վերայ. «Շահանշահ կանգնեց խաչս որդոց..... (եղծուած է)»:

Մատրանս հարաւ–արեւելեան կողմում արտաքուստ. «Յանուն Աստուծոյ մեք Խաչատուր, Ջաքարէս կանգնեցաք սուրբ խաչ բարեխաւս հաւրն իմոյ եւ եղբարց Վելին, Ովանէսին, Մարգարէին, Միրաքին.. թվ. ՋԼԳ.»:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Համարեա թէ պատկից է Բ. մատրանս հիւսիսային կողմին եւ կիսաւեր. բայց ունի 26 մետր 10 սանթիմ երկարութիւն եւ 11 մետր 55 սանթիմ լայնութիւն: Հարաւային դրան վերայ մի խաչքարի ստորոտում. «Ի թուին ՈՀԴ. ես Մելիք հոգեւորդի իմ Ակուտին ու Մխիթար եղբայր կանգնեցաք զխաչս»:

Գ. ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ մատուռ, խիստ մօտ մայր եկեղեցու արեւելեան կողմին, շինուած անտաշ քարով, երկարութիւնն՝ 6 մետր 40 սանթիմ, լայնութիւն՝ 4 մետր 40 սանթիմ: Դրան ճակատակալ քարին վերայ. «Խորբ տէր (ս) շինեցի Սուրբ Գրիգոր ի հալալ արդեամբ ինձ, ամուս(ն)ոյ, իմ որդոյ Մարգարէին, յիշէք 'ի Տէր թվ. ՉԻԳ.»:

Դրանս հիւսիսային քարին վերայ. «Յանուն Աստուծոյ Կուկս միաբանեցայ սուրբ Գրիգորիս (տվի) իմ հողն Սոսթանիսի տիրն այլագ հինգշաբաթ աւր ժամն...»:

Մատրանս հարաւային որմին վերայ կրկին արտաքուստ.

«Աստուծով մեք Տաբբբի որդիքս տվաք զմեր Կապին հողն ի սուրբ Գրիգորիս. Սոսթանէս ետ Ղազարու տաւնին Ա. ժամ.....»: Սորա մօտ. «Գրիգոր Ջաջուռ կանգնեցաք խաչս մեզ եւ ծնողաց մերոց. Աստուած ողորմի Շ.»: Բոլոր մատուռների շուրջն լի է խիտաւխիտ գերեզմաններով եւ խաչարձաններով:

Սուրբ Աստուածածին վանք

Սրբատաշ քարով շինուած տաճարս, որ կանգուն է նոյնութեամբ, գտնւում է Ծարի հարաւային վիմահեղձի տակ երկու ջրախառնուրդի մօտ, որք են Տաք-ջրի եւ Զրիւլ գիւղի վտակներն: Մենաստանս թէեւ փոքր է, բայց շատ գեղեցիկ է ամէն մասամբ: Վանուցս արձանագրութիւնն.

«Ի ժամանակին յորում տիրեալ ազգն Նետողաց բազում աշխարհաց եւ մինչեւ յՈվկիանոս ծով եւ Ստամպալն, ի Պոնտոս եւ մինչեւ ցգետն Եփրատես տիրելով գոռոզաբար եւ ծանր հարկապահանջութեամբ ցաւեցուցանելով զամենեսեան՝ զմեծամեծս եւ զփոքունս 'ի մահ եւ 'ի գերութիւն մատնելով, յայսմ ժամանակի դառնութեան, որ էաք մեք տէր Յովհաննէս Դոփեան տրուպ եւ նուաստ եւ տկար հոգի, հասաւ մեզ հրաման ի նախահարցն մերոց գնալ ի մեր հայրապետացն առաջնո յաթոռն հռչակելի Հախպատ. դարձ արարեալ 'ի մեր հայրենական եւ բնիկ տունս հարազատ աւագ եղբաւր Հասանայ քաջ զաւրականին եւ հռչակաւոր արիացելոյն, որ եւ որդի իւր Գրիգոր սիրող եկեղեցոյ եւ քահանայից եւ ամուսինն իւր բարեհամբաւ Ասփայ դուստր մեծի կոմսի Տարսայիճի իշխեցողի կողմանցն Սիւնեաց՝ եւ մեր հայեցեալ 'ի ձորակս, զի հոսէին ջուրք աստի եւ անտի եւ միջի նոցա բլրակ մի գեղեցիկ, ես հաճեցայ ընդ սա եւ մտայ յանապատս եւ սկսայ շինել մատուռ մի եւ յայնմ խորհրդի եկն Գրիգոր եղբաւրորդի մեր եւ իշխան գաւառիս եւ այլ շատ շատ կողմանց իշխեցող եւ կամեցաւ շինել զսուրբ Աստուածածինս ի բարեխաւս մեզ եւ ամենայն քրիստոնէից. ես տէր Յովհաննէս արարի սկիզբն շինութեան եկեղեցւոյ 'ի թուին ՉԾ.»:

Տաճարիս մօտ եղած սքանչելի խաչարձանի վերայ

«Աստուծով ես Սայտի որդի պարոն Շանշին քաջ եւ յաղթող զաւրաւարին եւ մեծ իշխանաց յազգէն եւ ի թուին ՊՀԹ. տեղեացս տէր եւ պարոն Փոքր Սիւնեաց, Ականայ, Հաթերքոյ եւ Հանդաբերդոյ եւ ծովակին Գեղամայ մինչ 'ի Շաղվաքայ՝ կանգնեցաք զխաչս հաւր մերոյ Շանշին....»:

Կայ եւ մի այլ փոքր վանք Ծարիս արեւելեան ստորոտում՝ երկու ջրերի խառնուրդում: Տաք-ջուր. Բղխում է այս Ծարի հարաւային կողմի ջրաձորից. նշանաւոր է ծծմբային ջուրս իւր տեսակին մէջ եւ առատ: Միայն ափսո՛ս, որ իւր մօտ չկան պէտք եղած շինութիւններ եւ խիստ խոր է ջերմուկի ձորն եւ նեղ՝ հորիզոնն: Այսու ամենայնիւ բազմաթիւ յաճախորդներ են հաւաքւում այստեղ ամռան երեք ամիսներում շրջակայ գաւառներից. որք եւ պատսպարւում են վրաններում:

ԳԱՒԱՌԻՍ ԲԵՐԴԵՐՆ

Ա.-ն Բերդն է Ծարն. որին արդէն ծանօթացանք. որի մէջ այժմ բնակւում են ֆաբրիկեան ցեղից՝ քուրդեր:

Բ.-ն է Ղըզ-Ղալա կոչուած բերդն. որ գտնւում է Ծարի հիւսիսային կողմում եւ Սոթի ու Զարգրիլի արեւելեան հանդէպ արձանացած սարի վերայ. որ մօտ 9000 ոտք բարձր է եւ միանգամայն սահման Արցախի եւ Գեղամայ կամ ասել Ծար եւ Սոթ գաւառների:

Գ.-ն է բոլորից նշանաւորն. որ է Հանդարերդն եւ որն այժմ կոչւում է Լեւա-Ղալա: Բերդս հիմնուած է մի միապտոյտ եւ ճուտաձեւ բարձրացած ապառաժի վերայ, որ առանձնացած է իւր չորս կողմերից: Բերդարարք ժայռիս հիւսիսային խորանդունդ ձորով հոսում է Թարթառի մի օժանդակն, որի ակունքներն առած են իւրեանց սկիզբը Ղըզ-Ղալա, Ռմբասար, Գինալ (11051 ոտք) եւ Մանուշակ (Բանովշալի 10100 ոտք) խաչենահայեաց լանջերից եւ միացած նոյն խորանդունդ ձորում: Արեւելեան կողմում. ձորի աջ կողմի հարթակի վերայ երեւում է Զափնի աւերակ գիւղն եւ կիսաւեր եկեղեցին. ոչ ինչ պակաս խոր ձոր է եւ հարաւային կողմն. միայն մի թրաձեւ սեռով բերդաժայռս հաղորդակցութիւն ունի իւր արեւմտեան կողմի սարի հետ, որի վերայ է Լեւա գիւղի աւերակն: Այսու ամենայնիւ բուն բերդաժայռն շատ բարձր է սեռից: Մի նեղ, զառիվեր եւ երկիւղալի կածան. որ փորուած է քարից. առաջնորդում է արեւմտեան կողմից. անցնում հիւսիսային վիմափոր եւ քարուկիր. բայց կիսաւեր դռնից. որի մօտ է դռնապանների վիմափոր այրն եւ ապա՝ հիւսիս–արեւելեան կողմով մօտենում բերդի դրան: Հարկ է յայտնել. որ կիսաւեր դուռնս եւ պատս ծառացած են ինչպես արտաքին պարիսպ եւ դուռն, որոց համանմանն կայ եւ բուն բերդի հարաւ-արեւելեան կողմում:

Ներքին բերդն ունի ամուր շրջապարիսպ, շատ բուրգեր, 100 մետր երկարութիւն, 80 մետր լայնութիւն, 6 մետր 10 սանթիմ՝ պարսպի բարձրութիւնն, եւ միայն մի դուռն՝ հիւսիսային կողմից: Ամրոցիս մակերեւոյթն զգալի կերպով թեքուած է դէպի արեւելք, որի վերնամասն կազմուած է առանձին ամրոց. որ ունի միայն մի դուռն. նշանաւոր ամրութիւն եւ պալատանման ձեւ: Մակերեւոյթի վերայ կայ ցորենի եւ գարի ամբար. հայ եփելու փուռն եւ այլ շինութեանց հետքեր[1]: Ամենայն ինչ կատարեալ է. միայն ափսո՛ս, որ ջուր չկայ բերդումս: Սակայն կան եօթն վիմափոր. բոլորշի եւ խոր հորեր. որոց հինգն՝ արեւմտեան եւ երկուսն՝ արեւելեան կողմում: Նեղ են բոլոր հորերի բերաններն. լայն եւ բոլորակ՝ մէջերքն եւ տակերն. եւ մօտ 5 մետր խորութիւնն: Ջուրը բերած են մօտակայ աղբիւրից եւ լցած հորերիս մէջ 'ի պաշար պատերազմի: Այժմ բերդումս բուսած են ծառեր եւ. հետզհետէ ժամանակի մշտագործ մուրճն քանդում է ամրոցիս քարերը (68):

1 Գաւառիս իշխողներն թէեւ տիրապետած եւ իշխած են նաեւ Սոթի Շաղուաքայ գաւառների վերայ եւս, զոր օրինակ տեսանք արձանագրութեանց մէջ, սակայն մենք չուզեցինք շեղուել Սարգիս Ա. ընդհանրական կաթուղիկոսի Հայոց ՆԾԹ. եւ Փրկչ. 1006 թուի որոշած սահմանից: Միայն բարոք համարեցինք ներկայացնել ազնիւ ընթերցողաց Մեծ եւ Փոքր Սիւնեաց մէջ ընկած բնական սահմանագիծը. որի վերայ հիմնուած է եւ հանգուցեալ հայրապետի որոշումն: Սահմանագիծն սկսեալ Գինալ (11057), Ռմբասար (7760), Ղըզ-Ղալա (9000), Կարմիրկումուր (8000) Քեթ-Քիթ (11284), Քեթի (10000), Սարմուսաղ, Զինկիլ (9980), Կալին սար՝ Ղալին-Ղալա (11002), Պել սար՝ Դալի-Դաղ (11907), Մեծ բեւեռաթափ՝ Մխթեօքաւ (1185), սահմանն սարերիս գագաթնագծերովն հասած է Հակարի գետի ակունքներին, որ առած են իրեանց սկիզբը Պել-սարի հարաւահայեաց լանջերից:

Ձուկն եւ ձկնեղէն

Կուր գետից ու նրա մէջ թափուող հարաւային գետերից եւ գետակներից եւ նոյն կողմերում եղող լճերից ելնում են.

	Սալիանի վերի կողմից Փութ	Սալիանի վարի կողմից Փութ
1) Սպիտակ ձուկն (ռուս. բելուգա)	150	3154
2) Թարթ (օսետր. կամ շիպա)	21538	29773
3) Երկարաքիթ ձուկն (սեւրուգա)	139098	564048
4) Կարմրախայտ ,, (լոսոս)	419	15820
5) Շարմագի կամ շամահի (շեմահի)	27958	325870
6) Լոքո (սոմա)	29556	70646
7) Մէջքն ոսկրոտ միջակ[1] (սուտակ)	8998	204000
8) Թեփամորթ (ոչ այնքան քաղցր) ,, ,, (լեշչա)	6174	755236
9) Խաշամ (խաշամա)	20699	271318
10) Դասփիչ (կութումա)	741	66831
11) Օձաձուկն (մինոկի)	1500	3300
12) Սազան (սազան)	126606	1.006.300
13) Օձաձուկն (բալիկ)	78748	16017
Սպիտակ, Թարթ եւ Երկարաքիթ ձկներից միայն ելնում են.		
Զկնհաւկիթ (իկրա)	6064	17109
Սոսինձ	438	1675
Փորաթել[2] (վեսղիկա)	838	2075
Թմբկի երեսի համար Փար:		
Վերջին 3 ձկներից շինում են նաեւ զիւրկեար եւ դէօշ մեծ քանակութեամբ:		
Լոքո ձկնից ելնում է եւ այլ սոսինձ	356	546
Գետերից եւ գետակներից այլ եւ այլ մանր ձկներ	21423	607246

Արցախեան նահանգի բոլոր գետերից եւ գետակներից ելնում է չորս տեսակ մանր ձուկն. բազմափուշ կողակ, սակաւափուշ կողակ, կարմրախայտ եւ երկարաքիթ կամ բեղլու: Ա. տեսակն ելնում է միայն Թարթառ եւ Հակարի գետերից, որ համեմատաբար մեծ-մեծ են լինում, քան թէ գետակներից ելածներն:

Իսկ Բ. եւ Գ. տեսակներն ելնում են բոլոր գետակներից եւ վտակներից, որք համեմատաբար մանր եւ քաղցր են լինում, քան Թարթառ եւ Հակարի գետերից ելածներն: Բայց քաղցր են միայն Հակարուց ելած մեծ կարմրախայտն, որ Երասխով գալով մտնում է Հակարու մէջ. այսպէս են եւ Երասխից ելածներն: Համարեա թէ միեւնոյն տեսակ ձկներ ելնում են ե՛ւ Կասպից ծովիցն, ե՛ւ Դարբանդի կողմերում՝ Մեծ-Սամուր գետից:

1 Միջակ մեծութեամբ ձուկն: Թուանշաններն ներկայացնում են տարեկան ելած ձկների քանակութիւնը:
2 Գործ է ածւում կերակրի մէջ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Նշանաւոր տեղ գրաւած է Մուղանի դաշտն ոչ միայն Հայոց, այլեւ օտարազգի պատմութեանց էջերում: 50 մղոնից աւելի է դաշտիս երկարութիւնն Երասխի ձախ ափից մինչեւ Կոտրած կամրջի մօտերքն եւ 2-23 լայնութիւն՝ Գագայ սարից եւ Հատրութից մինչեւ Կուր: Դաշտս կոչուած է Գարդարայլոց, Մուղանի եւ Արցախի դաշտ: Ըստ ասութեան հմուտ երկրագէտների աւելի բարձր է Սեւ ծովի մակերեւոյթն Մուղանի դաշտիս մակերեւութից, այս իսկ է պատճառն, որ դաշտիս վերայ, մանաւանդ Կուր գետի եզերքներում, տեղ-տեղ լճանալով, անշարժ մնացած են բաւական ջրեր: Ագուանից թագաւորների եւ իշխանների ժամանակ դրախտի նմանութիւն ունեցած է դաշտս, քանզի ահագին առու հանած են Երասխից եւ ջրարբի արած ընդարձակ դաշտիս ամենամեծ մասը. վասն որոյ դաշտս լի եղած է ամենայն բարութեամբ, ինչպէս գրում է Կիր (եր. 137). «Եւ ապա եկին հասին (թաթարք) յաշխարհս Աղուանից ամենայն աղխիւք բազմութեամբ իւրեանց եւ ի բերրի եւ յարգաւանդ դաշտին, որ կոչի Մուղան, լի ամենայն բարութեամբ, ջրով եւ փայտիւ, մրգով եւ որսով, անդ հարին զխորանս իւրեանց»: «Եւ դարձան յերկիրն Մուղանայ, որ միշտ կանաչ լինի խոտն ամառն եւ ձմեռն վասն պարարտութեան երկրին» (Վարդ. պատմիչ, եր. 18): Այստեղ ձմեռանոց հաստատեցին թաթարներն, դաշտիս ստորին մասում թագ կապեց նոյնը Նագիր-Շահն: Դաշտումս ներկայացաւ Աղուանից Ներսէս կաթուղիկոսն թաթարաց զօրագլուխ Սարթախին (Կիր., եր., 215-216), Վարդան Բարձրբերդցին (ՁԺԳ.-ին, եր. 204-209), Հուլաւու-Էլղանին՝ Սարգիս եւ Գրիգոր վարդապետների հետ, եւ Հայոց Կաթուղիկոս Աբրահամ Կրետացին Նագիր-Շահին՝ թագադրութեան ժամանակ: Բայց այժմ ո՛չ ջուր կայ դաշտումս եւ ո՛չ բնակիչ, ո՛չ ծառ կայ եւ ո՛չ մի միրգ կամ պտուղ, այլ ամռան սարսափելի տաք, թունաւոր եւ ահարկու օձեր, կատաղի կարիճներ եւ մորմեր եւ քառասնոտնեայ մահաթոյն զեռուններ: Գուցէ աւերակ քաղաքիս եւ բերդերիս մասին է նոյն Վարդ. Բարձ. (եր. 198-199). «Դարձաւ Հուլաւուն յիջեւանս ի ձմերոցս ի դաշտն Մուղանայ եւ ի կայս ամարայնի ի Դաուին (?) կոչեցեալն կամ ըստ այլոց ի Դարան դաշտ, զի այրք եւ բերդուկք քարանց կան անդ շուրջանակի առ լերամբքն, զոր սիրեաց եւ շինեաց անդ շինուածս ըստ սրտի իւրում: Եւ խորհեցաւ շինել քաղաք, յորմէ պատճառէ տառապեցաւ երկիր, մարդ եւ անասուն՝ փայտս ծանունս ի հեռաստանէ բերելով»:

2) Զորս գաւառներս եւս կազմում էին Ուտի նահանգի մասն, բայց պատկանում էին Հայոց թագաւորութեան Արցախի հետ, որից անբաժան եղած են ամէն ժամանակ, ինչպէս եւ Աղուանից թագաւորութեան ենթարկուած ժամանակ եւ յետոյ: Այժմս մի տուն անգամ հայ չկայ գաւառներումս, մինչդեռ կանխաւ մի տուն անգամ մահմեդական եղած չէ: Եկեղեցեաց աւերակներ եւ հանգստարանների քարեր բոլորովին անհետացրած են մահմեդականներն:

3) Աւանդութիւն Տիգրանակերտ գաւառի Հովուասարի մասին.«Մի աղքատ մարդ ոչխարի կաթ է խնդրում մի հարուստ հովուից, բայց հովիւս կաթ չէ տալիս: Իսկոյն չոքում է նեղասրտած աղքատ մարդն եւ անում այս աղօթքը: «Աստուած, եթէ մի հօտ ոչխար տաս ինձ, ամէն խնդրողի կաթ կտամ ես»: Լսում է ամենաբարի Յիսուս Քրիստոս եւ իսկոյն ոչխար փոխում մօտի բոլոր սպիտակ քարերը: Աղքատն այնքան ուրախանում է, որ կարծես թեւ է առնում, որ թռչի, որովհետեւ մի հօտ ոչխարի տէր եղաւ յանկարծ եւ ոչխարները քշում է դէպի սարն: Յիսուս Քրիստոս ուրախութեան տարեկան ծերունու կերպարանքով մօտենում է նոր հարստացած հովւին եւ աղերսելով խնդրում. «Հովի՛ւ ջան, որդի՛ս, սիրտս կաթ է ուզում, խնդրեմ էս սեւ ոչխարը կթես, ինձ տաս խմեմ եւ օրհնեմ քեզ»: Ինչքան աղաչում է, հովիւն չէ տալիս կաթ, էս պատճառաւ խաչակնքում է Տէրն եւ իսկոյն էլի քարանում են ոչխարներն եւ հովիւն: Էն օրից մինչեւ էսօր հայերէն Հովուի սար է ասում էս սարն, թուրքերն էլ՝ Զոբան դաղի: Ամէն ժամանակ գայլերն անպակաս են սարիցս»: Այժմ մի խաչարձան է քարացեալ հովիւն համանուն սարի վերայ տնկուած: Սարիս բարձրութիւնն է 2316 ոտք: Սարիս հետ հաղորդակցութիւն ունի հիւսիսային

կողմից Վանքասարն, որ թուրքերէն կոչում է Բէշիկ-դաղի (օրորոցի սար) եւ գրեթէ ունի միեւնոյն բարձրութիւնն, որի վերայ Աղուանից Վաչէ Բ. շինած է մի խաչաձեւ մենաստան, որի գլուխն այժմ խոնարհուած է ամբողջապէս: Բ. Աւանդութիւն. «Մի չրեբ (տամուլ) կին ուխտ է գալիս վանքս եւ խնդրում մի արու զաւակ: Միւս տարում ուխտի եկած ժամանակ ծնում է մանուկը վանքումս, բայց որովհետեւ արաբ է լինում կինն եւ մկրտւում է ուխտ օրից վերջն իւր մանկան հետ, այս պատճառաւ արաբացիք աշխատում են բարձրանալ վանքն, սպանել կինն էլ, մանուկն էլ: Կինն աղօթք է անում. «Տէ՛ր իմ Յիսուս, փրկի՛ր ինձ»: Փրկիչն հրամայում է օձերին, որ հաւաքւում են, լցւում սարս, խածնում բարձրացողներին եւ մինչեւ ցայսօր լիքն է այս սարն օձերով: Կինն էլ մի քարի օրորոցում մեծացնում է վանքիս մէջ իւր մանուկը». սորա համար իբր թէ Բէշիկլու են անուանում սարս:

4) Աղուանից Ա. մայրաքաղաքն էր Զոզա[1], բայց որովհետեւ յաճախակի արշաւանքներ էին գործում հիւսիսային խուժադուժ ազգերն Զոզայի վերայ, վասն որոյ հարկ եղաւ տեղափոխել թագաւորանիստ աթոռը:

Պարսից չար Պերոզ թագաւորին հրամանաւ Աղուանից Վաչէ Բ. բարեպաշտ թագաւորն շինում է Պարտաւ քաղաքս Գարգարացւոց դաշտի վերայ: «Եւ ի հրամանէ Պերոզի Պարսից արքայի շինեցաւ ի Վաչէէ Պերոզապատ մեծ քաղաք, որ այժմ կոչի Պարտաւ» (Մով. Կաղ., եր. 33): Փրկչ. 551 եւ Հայկական 1 թուականին Զոզայից քաղաքս է փոխադրւում նաեւ Աղուանից կաթուղիկոսական աթոռն. «Յետ այսորիկ գերեցաւ ի Խազրաց աշխարհս Աղուանից. հրկէզ եղեն եկեղեցիք եւ կտակարանք: Ապա յորժամ սկիզբն հայ թուականին եղեւ, ի սոյն ամի փոխեցին զաթոռ հայրապետութեան Աղուանից ի Զոզայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ. վասն հինահալած արշաւանաց թշնամեաց Խաչին Քրիստոսի. եւ նստուցին հայրապետ զտէր Աբաս ի գաւառէն Մեծ իրանաց» (Մով. Կաղ., եր. 91): Բաղաքիս պարիսպն ունեցած է չորս դուռն, երբ խազիրներն պաշարում են քաղաքս, որի բնակիչք «Եւ զկմ եղեալ առհասարակ ընդ չորս դրունս քաղաքին աճապարէին անկանիլ ի լեռնակողմն Արցախական գաւառին» (Նոյն, եր. 104-107):

Քաղաքիս մէջ գահակալած են Աղուանից Վաչէ Բ. եւ Վաչական Գ. բարեպաշտ թագաւորներն, շատ կաթուղիկոսներ, Վարազ-Գրիգոր, Ջուանշիր[2] եւ Վարազ-Տրդատ իշխաններն նոյնպէս Վաչական Գ. Շուփհաղիշոյ կաթուղիկոսի հետ (Մով. Կաղ., եր. 65-69):

Պարտաւիս մէջ ժողով գումարեց Հայոց Եղիա կաթուղիկոսն Փրկչ. 709 թուին եւ գահընկէց արաւ Աղուանից Ներսէս Բակուր կաթուղիկոսը (Նոյն, եր. 238): Բ. ժողովը գումարեց քաղաքումս Հայոց Սիսն կաթուղիկոսն Փրկչ. 768-ին եւ եկեղեցու բարեկարգութեան համար հաստատեց 24 կանոն: Քաղաքս եկած են նաեւ Հայոց Եսայի կաթուղիկոսն (Մով. Կաղ., եր. 262) եւ Գէորգ Բ. կաթուղիկոսն (Մով. Կաղ., եր. 268-269): Քաղաքումս վերականգնեց Համամ իշխանն Աղուանից կործանեալ թագաւորութիւնը (Նոյն. եր. 268-269. Ասող., եր. 161. Ստեփ. Օր., եր. 43):

Քաղաքիս վերայ արշաւած են պարսիկք, խազիրք, հոնք, արաբացիք, գէլէմէնկ (մարաց ցեղի մի տեսակն. տե՛ս Սեբ. գպ., գլ. ԼԷ.), ռուսք (Մով. Կաղ., 270). վրացիք, թաթարք, վերստին պարսիկք, օսմանցիք եւ լեկզիներն (Ես. Կաթ., եր. 21-40): Վերջապէս ամէն բարութեամբ լի եւ վաճառաշահ եղած է քաղաքս, այս պատճառաւ իւրաքանչիւր արշաւող ազգ ճգնած է իւրացնել այս իւղալի պատառը: Աղուանից Ես. Կաթ. զրուածներից (Եր. 31-32) երեւում է, որ Հայոց ՌՃՀ. (Փրկչ. 1721-ին) թուին Պարտաւն տակաւին կորուսած չէր իւր քաղաք լինելու փառքը[3]: Երեւի թէ այնուհետեւ աւերակ դարձած է քաղաքս:

Մահմեդականաց աղօթարանս Իմամզատէ եղած է Պարտաւի մայր եկեղեցին Սուրբ Գրիգոր անուամբ, որի մէջ ամփոփուած են երկու նահատակուող եղբարք՝ Մանկիկ եւ Մերդազատ Հայոց ՃԿ. 711 թուին (Մով. Կաղ., եր. 259): Ուշիմ ընթերցողն այժմ իմացաւ, թէ Իմամզատէում

1 Որի մասին տե՛ս «Աղուանից Եր. եւ Դր.»:

2 Սորա անուամբ Ջուանշիր կոչուած են գաւառներս: Ուտեաց յետագաներից են Ուտի-Առանձնակ գաւառի եւ բոլոր հայադաւան գիւղերի բնակիչներն:

3 Վկայում է եւ Ծարեցի Յովհաննէս վարդապետն (Սամ. Ան. եր. 189)

եղած գոյդ տապանաքարերն են երկու եղբարց գերեզմաններն: Պարտաւումս նահատակուած են այլ եւս երկու հարազատ եղբարք՝ Արծրունի իշխանք Սահակ եւ Համազասպ, որոց յիշատակութիւնն կատարում է Հայաստանեայց Եկեղեցին ի շարս սրբոց (Յատմ. Տէր-Իսրայ., հատ. Ա., եր. 155): Բայց սոցա մարմիններն չարժանացան հողին, այլ այրեցին եւ մոխիրը դնեցին մէջ թափեցին (Ղեւոնդ. եր. 162-165. Հայոց Մէջ. թուին):

5) Բազմաշխատ Ղ. Վ. Ինճիճեան իւր Հնախ. Ա. հատ. եր. 329-332 (առնելով օտարազգի պատմութիւններից) գրած է. թէ սկիզբն թագիր գօրանալով մեծ ցեղ դարձան եւ առաջ բերին թագաւորներ. «յորոց ծնան Սակք եւ Մագբութք». եւ թէ «ի սկզբանէ, անդ Շակք անուն ժողովուրդ հայկական բնակեալ անդ յԻտի նահանգին մերում. որոց եւ գլխաւորի անուամբ կոչեցաւ գաւառն Շակաշէն». (Սակ-Շակ-Շակաշէն): Որպէս թէ տակաւին չհիմնարկուած Գանձակ քաղաքն Շակաշէն էր կոչում գաւառս: Խորենացին անուանում է գաւառս Շիկաշէն, իսկ Կաղանկատուացու հեղինակներն 141 եւ 251 եր.՝ Շակաշէն, իսկ 170 եւ 265 եր. Արշակաշէն են անուանում Գանձակի միեւնոյն գաւառը: Աւելի ուղիղ եւ հայկական է թւում Շիկաշէնն, քանզի շէկ բառով բարգաւաճած շատ անուններ ունինք նոյնիսկ Արցախում եւ Կաղանկատուացու Պատմութեան մէջ, ինչպէս է Շիկաշէն. Շիկատափ, Շիկահող, Շիկահեր եւն: Եւ զոր օրինակ տեսանք փոփոխութեանց ենթարկուած բոլոր գաւառների անունները. անհաւանական չէ, եթէ փոխուած լինի եւ Շիկաշէնն յԱրշակաշէն:

Բաղդատի խալիֆայի հրամանաւ եւ արքունի դանձով Փրկչ. 836 թուին գալիս է արաբ Խազը-Փատկոսի որդին եւ հիմնարկում Գանձակ քաղաքը Շիկաշէն գաւառումն «իսկ նորա որդին Խազը-Փատկոսին)... եկեալ արքունի հրամանաւ եւ գանձուք շինեաց զ Գանձակ քաղաք յԱրշակաշէն գաւառի» (Մով. Կաղ. եր. 265): Այնուհետեւ. Պարտաւի փոխարէն ամիրայանիստ քաղաք է դառնում Գանձակն. ուր փոխադրւում է եւ Աղուանից կաթուղիկոսարանն (Մատ. Ուր. եր. 278), տակայն այս Գանձակն կործանւում է Փրկչ. 1139 թուին մեծ շարժով. «Ի ՇՁԸ. թուականին եղեւ շարժ սաստիկ եւ կործանեցաւ քաղաքն Գանձակ եւ տապալեցան շինուածք որ ի նմա ի վերայ բնակչաց իւրոց. եւ եկն թագաւորն Վրաց Դեմետրէ հայրն Դաւթի եւ Գէորգեայ եւ տարաւ զդրունս քաղաքի յաշխարհն իւր». (Կիր., եր. 65 եւ Վարդ. Բարձր., 162): Վերստին շինում են Գանձակ քաղաքը նոյն իսկ փլած տեղում: Սակայն 1235 Փրկչ. թուին[1] դարձեալ աւերւում է նոյն քաղաքն. «Երեւեցան յառաջագոյն նշանք աւերման... որպէս ի վերայ Երուսաղէմի յառաջ քան զաւեր նորա, նոյնպէս եւ այսմ քաղաքի (Գանձակի), քանզի յանկարծ պատառեալ երկրի եւ արտաքս ելեալ ջուր սեաւ.... եւ յանկարծակի հասին զօրք թաթարին եւ պատեցին զքաղաքն յամենայն կողմանց... իսկ բնակիչք քաղաքին իբրեւ տեսին, թէ առաւ քաղաքն ի թշնամեացն, մտեալ իւրաքանչիւր ոք ի տուն իւր այրեաց ի վերայ իւր զշինուածն, զի մի անկցի ի ձեռս թշնամեացն... եւ այսպէս ամայի եկաց քաղաքն ի չորս ամս եւ ապա հրաման եառն շինութեան քաղաքին» (Կիր., եր. 137-138): 1239-ին շինուած Գանձակն եւս կործանում է Ա. Շահ-Աբասի հրամանաւ 1606-ին եւ շինում այժմեան քաղաքն Գեանջա անուամբ:

Ահա այսպէս կործանւում է եւ երրորդ անգամ շինուած Գանձակ քաղաքն: Բայց տակաւին երեւում են Հին-Գանձակի աւերակներն նորից բաւական վար՝ համանուն գետակի աջ ու ձախ ափերի վերայ՝ տների, շուկաների, բերդերի, աշտարակների, կամուրջների բեկորներն եւ հետքերն: Այժմ երեւում են իրարից զանազան չափով հեռու երեք բազմաչեայ, բայց փլած կամուրջներ. որոց Ա.-ն՝ այժմեան կամուրջից վար. Բ-ն՝ երկթուղու կամուրջից վերեւ, իսկ Գ.-ն՝ սրանից վար: Գետակի աջ ու ձախ կողմերում դեռ երեւում են բերդերի աւերակներն, որք հաղորդակցութիւն ունեցած են միմիանց հետ ստորին կամուրջներովս, որոց մօտ գետակի ձախ ափի բերդն եղած է բաւական ընդարձակ. որի աշտարակներից մի քանիսն կիսակործան են: Գետակի աջ կողմում նախ ընկած են վերոյիշեալ քաղաքի եւ շուկայի աւերակներն, որոց ստորոտում աւերակ բերդն, որ միացած է եղել երկու զուգահեռական պատերով եւ բաժանուած

1 Վարդ. Բարձ., եր. 189:

երկու միջնորմ պատերով, այժմ երևում են միայն բերդերիս հիմքերն: Այս բերդերից փոքր-ինչ վար եղած է Հայոց թաղն եւ եկեղեցին, որի մէջ է ամփոփուած ս. Խոսրով նահատակի մարմինն[1]: Պարսիկներն եկեղեցիս փոխած են մզկիթի, որը անուանում են Գեօղ-իմամ: Խոսրովի գերեզմանն եւս զարդարուած է թանկագին կերպասներով: Շինութիւնս ամէն մասամբ նման է Պարտաւի Իմամզատէին, տարբերութիւնն այն է միայն, որ Գեօղ-իմամիս գաւիթն լի է գերեզմաններով եւ սորա գմբէթի արտաքին կողմն խաչազարդարուած է գոյնզգոյն մանր ապիւներով:

Հին-Գանձակումս ծնած եւ սնած են Գօշ-Մխիթարն եւ պատմարան Կիրակոս Գանձակեցին: Գանձակումս կաթուղիկոս օծուեցան ի շարս այլոց մանկահասակ Յովհաննէս եւ Գագիկ (Կիր., եր. 105 եւ 116):

Իսկ Նոր-Գանձակիս վերայ եղած են Ռուս-պարսկական պատերազմներն, նախ 1804-ին դեկտ. 3-ին ռուսներն յաղթում եւ գրաւում են քաղաքս, որը եւ Ելիսաւետապոլ անուանում ի պատիւ Ելիսաւետա կայսերուհւոյն ռուսաց: Երկրորդ՝ 1826-ին այս պատերազմում վերջնական կերպով յաղթում են պարսիկներն:

6) Կողթ գաւառիս մէջ այժմ եւս գտնում են ջարդուած քարերում քարախունկ, ինչպէս ակնարկում է Խորենացին: Գտնում են քարերը ջարդած ժամանակ, բայց խիստ սակաւ:

Շամքոր եւ Զակամ գեղակների պատճառաւ երկու գլխաւոր մասերի բաժանուած է գաւառս եւ ստացած յետոյ երկու առանձին անուն՝ Շամքոր եւ Զակամ:

7) Կողթ գաւառիս արեւելեան մասում շինուած է Շամքոր[2] քաղաքն Զ. դարում որպէս թէ յանուն Շաթ-Խազրի (Կիր., եր. 113-114):

Բագրատունի Աշոտ Գ. Ողորմած թագաւորի կրտսեր որդին Գուրգէն Թ. դարի վերջին քառորդում քաջութեամբ տիրում է ի միջի այլոց Սեւորդեաց ձորին, Կայան եւ Կայծոն բերդերին (Վարդ. Բարձ., 122):

Գուրգէն այս գործողութեամբ դնում է հիմը մի առանձին թագաւորութեան: Գուրգէնիս որդի Դաւիթ Անհողին, Ժ. դարի առաջին քառորդում յաջորդելով իւր հօր, աւելի ընդարձակում է իւր տէրութեան սահմանները. հնազանդեցնում Թիֆլիսի ամիրան, յաղթում Գանձակի Փալտուն ամիրային՝ սրախողխող եւ գետավէժ անելով նորա զօրքերը, տիրում Զաւէ եւ Կայենի եւ Քաւս կամ Քուստի եւ Կողթ գաւառներին եւ սոցա բոլոր բերդերին եւ ժառանգում թագաւոր Աղուանից անունը (Ասող., եր. 257):

Այնուհետեւ Դաւիթ թագաւորն յաղթում է Պարսից Ապուսուարի 100000-ից բաղկացած զօրացն եւ տիրում Արցախի Գարգման գաւառին եւս եւ շատ բերդերի (Մատ. Ուռ., եր. 92-96): Աղուանից թագաւոր կոչուցեալ նաեւ Կիւրիկէ Ա.՝ որդի Դաւիթ Անհողինի, որովհետեւ տիրում էր Աղուանից երկրի հարաւ-արեւմտեան մասին այն է իւր հօր տիրած բոլոր գաւառներին եւ բերդերին: Այս պատճառաւ Մատթ. Ուռ. (եր. 278) գրում է. «Եւ թագաւորք Աղուանից Գագիկ (Գուրգէն) եւ Դաւիթ եւ Կորիկէ (Կիւրիկէ)[3], որք նստէին այժմուս ի Լօռէ քաղաք»: Շարունակաբար տիրեցին եւ սոցա որդիքն եւ թոռներն:

Յետոյ նոյն գաւառները գրաւեցին Սելճուկեաններն պարսիկ զօրքով. ապա՝ «Այսպէս եւ միւս իշխանն Զաքարէ անուն եւ եղբայր իւր Սարգիս հայրն Շալաւէի եւ Իւանէի, ազգականք մեծ իշխանացն... առին բազում գաւառս ի Պարսից եւ զբերդս ամուրս զ Գարգման, զ Քարահերձ եւ զ Երգեվանք, զ Տաւուշ, զ Կածարէթ եւ զ Տէրունական, զ Գադ եւ զ Շամքոր քաղաք ի նեղ էարկ. զոր յետոյ էառ որդի նորա Վահրամ հայր Աղպուղին, պապն Վահրամայ եւ Զաքարէի եւ Իւանէի[1]» (Կիր., եր. 95): «Եւ ապա ձեռն տուեալ (Իւանէ եղբայր Սպասալարին) ազգայնոյն իւրոյ Վահրամայ որդւոյ Զաքարիեայ. առնու զՇամքոր» (Վարդ. Բարձ., եր. 184):

1235-ին թարգմանիչներն գրաւում են նոյն «տէրն գնա (զՇամքոր)... եւ այրեցին զշինուածն, որ ի նմա. ապա յարձակեցան ի վերայ այլ բերդիցն, որ ընդ իշխանութեամբ Վահրամայ ի Տէրունականն եւ յԵրգեվանքն եւ ի Մածնաբերդն, զոր ունէր Կիւրիկէ Բագրատունի որդի Աղսարթանայ եւ ի Գարգման եւ յայլ կողմանս եւ ի Զարեք եւ ի Գետարակս... ի Տաւուշ եւ ի Կածարեթ եւ ի Նոր բերդն եւ. Գադ» (Կիր., եր. 141-142): Յետոյ դարձեալ ծաղկում է քաղաքս: Վերջապէս քաղաքիս հայ բնակչաց մեծ մասն փոխադրւում է Թիֆլիս եւ շինում իւր համար առանձին եկեղեցի, որ կոչւում է Շամքորցւոց Թաղ եւ Շամքորցւոց եկեղեցի: Իսկ Շամքոր աւերակ քաղաքում մնացեալ նշանաւոր եւ ապիւսաշէն եւ բարձրագոյն գիտարանն կործանւում է 1840 թուականին մեծ շարժով:

Գաւառիս երկրորդ մասն էր Զակամ, որ կրկին է. Ստորին-Զակամ եւ Վերին-Զակամ: Երկու Զակամներս միասին Ագուանից Եսայի կաթուղիկոսն (եր. 23) անուանում է «Ամիրշամ Շատինլու, որ են Զակամներն»: Իսկ Առաք. պատ. (եր. 9) որոշակի գրած է. «Մելիքսեթ եպիսկոպոսն ի Վերին Զակամայ»:

Համարեա թէ Զակամներիս արեւմտեան մասն այժմ կոչւում է Շամշատին, որ կարծում ենք. ունի մի քանի կապ Ամիրշամ Շատինլու անուան հետ: Հաւանական է թւում մեզ, որ արաբացւոց ժամանակից մնացած լինին անունս գաւառիս վերայ, վասն զի արաբական բառ է Ամիր-Շամ (Դամասկոսի հրամանատար) անունս:

8) Կողթ գաւառիս մէջ է եւ Խաղխաղ քաղաքի աւերակն, ինչպէս գիտէ ընթերցողն: Բոլորովին անյայտ է մեզ քաղաքիս հիմնարկութեան եւ աւերման տարեթիւերն եւ շինողի անունն, միայն յայտնի է. որ քաղաքս ձմեռոց էր Աղուանից թագաւորներին[2]:

Համոզուած ենք. որ աւերակս է Խաղխաղ քաղաքն եւ Զակամ գետակս է Լոփնաս գետն: Մեր համոզմունքն հիմնուած է հետեւեալ կէտերի վերայ.

Ա. Որ Խաղխաղ քաղաքն գտնւում էր Կուր գետի աջ կողմում:

Բ. Որ Խաղխաղ քաղաքս մօտ էր Վրաց սահմանին, քանզի Կուր գետի ձախ ափն պատկանում էր Վրաց:

Գ. Որ պատերազմն եղած է Խաղխաղ քաղաքի դիմացն եւ Պարսից յաղթուած զօրքն սկսած է Լոփնաս գետովն ի վեր փախչիլ դէպի ամուլ անտառներն: «Սեբուխտ... ոչ եկաց մնաց ի կողմանս Ճորայ, այլ կուտեաց զամենայն բազմութիւն զօրու իւրոյ եւ փութանակի անցանէր ընդ մեծ գետն Կուր անուն եւ պատահէր նմա (Վարդանայ) մերձ ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի...: Անցանէր. բովանդակէր ամենայն զօրօք իւրովք, ռազմ արարեալ զբոլոր մեծութիւն դաշտին ի ներքս փակէր» (Եղիշէ. եր. 140: Մով. Կաղ., եր. 87): «Ընդ այն ժամանակս (Ե. դարի երկրորդ քառորդում) թագաւորն Ռոսմոսոքեան իւրովք զօրօք եւ Թորեվեան զնդիւն գումարեալ ժողովեաց զամենայն զօրս Հոնաց եւ էանց յայս կոյս Կուրական գետոյն... նստուցանէր զղակիշ իւր մերձ ի Խաղխաղ քաղաք» (Մով. Կաղ., եր. 73):

Պատմաբաններիս մատնանիշ արած բոլոր յատկութիւնները մենք գտանք միայն աւերակիս մօտ, որք են դաշտ, Վրաց սահմանի մօտ, գետակ, որի եղերքով ճանապարհ կայ, որ խոր եւ անտառապատ ձորերով առաջնորդում է մինչեւ Ճամբարակ գիւղն: Զորրորդ եւ գլխաւոր փաստն

---

1 Բնիկ Գանձակեցի է Խոսրով նահատակս, որը զՔրիստոս չուրանալու համար կապեցին թթենի ծառից եւ նահատակեցին, որի մարմինը ամփոփեցին հայք եկեղեցումս. (նոյն Յայսմ., հատ. Բ., եր. 5):

2 Քաղաքումս ժողով գումարեց Աղուանից Միքայէլ կաթուղիկոսն (Մով. Կաղ., եր. 258):

3 Աշոտ-Ողորմածի որդի Գուրգէնից ծնուած էր Դաւիթ-Անհողին թագաւորն, որից Կիւրիկէ թագաւորն եւ Կիւրիկէից Աբաս թագաւորն, որ տիրում էր Գարդման գաւառին եւ Մածնաբերդին, այսպէս եւ իւր յետագաներն մինչեւ Մէլիք-Առստամ Բարսում գիւղի:

1 Սպասալար Զաքարէն եւ Իւանէն չեն սոքա, այլ ազգական են սոքա նոցա: Սպասալարների համար գրած է Կիր., եր. 94. Զաքարէ եւ Իւանէ էին. «Որոիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարեայ որ հատուածեալ ի Բրթաց ի Բաբիրական խելէն (եկն ի Հայաստան)»: Իսկ միւս Զաքարէի եւ Իւանէի մասին որոշ գրում է նոյն Կիր., եր. 95. թէ միւս իշխաններն Զաքարէ եւ Սարգիս եղբարք էին, բայց ազգական Սպասալար եղբարց: Զաքարէ իշխանիցս ծնուած էր Վահրամ, որ հայր էր Աղպուղէին, եւ պապ Վահրամին եւ Զաքարէին եւ Իւանէին: Վահրամ իշխանս էր վերեւ յիշուած բոլոր բերդերի տէր Թաթարաց եկած ժամանակ:

2 Եղիշէ. եր. 140. «Զմերոց էր թագաւորացն Աղուանից». Մով. Կաղ., եր. 87. «թագաւորութեանն»:

այն է, որ ցարդ Խալխալ է կոչւում քաղաքիս աւերակին վերայ եղած Թրքարնակ գիւղն: Դաշտիս վերայ չկայ մի այնպիսի աւերակ քաղաք, որ ունենայ այդ բոլոր յատկութիւնները եւ անունը բացի Խաղխաղ աւերակից:

9) Ջաբրայէլ անունը, կարծում ենք, թէ գաւառս ստացած է Ջաբրայէլ Հայ իշխանի անունից, ինչպէս Ջուանշիր իշխանից՝ Ջուանշիր գաւառ (Գագա., եր. 201 եւ 182):

10) Անյայտ է մեզ բերդիս շինողի անունն, շինութեան տարեթիւն եւ միանգամայն սորա անցեալն:

11) Անծանօթ է մեզ եւ այս բերդիս անցեալն, միայն տակաւին թարմ է Հասարակութեան մէջ Աւան-իւզբաշու աւանդութիւնն եւ կենդանի սորա անունն եւ քաջութեան համբաւն: Հարկ է յայտնել, թէ այս կողմերում բնակած է եւ Աւան անուն իշխան եւ Մելիք-Աւան (Գաղանիք եր. 201): Թէ երկուքիցս որն հիմնած է բերդս, չգիտենք:

12) Ինչպէս միւս բոլոր բերդերն, նոյնպէս եւ բերդս պատկանում է Արցախի իշխաններին: Եւ ինչպէս Գտիչ է կոչւում Դողայ մօտին վանքն, նմանապէս Գտիչ է կոչւում եւ վանքիս մօտի բերդն: Ամրոցի մասին գրում է Թովմայ Արծրունին (եր. 177-185), թէ Ազուանից հայ իշխաններից Ապումուսէ ոմն, հաւաքում է երկրի բազմութիւնը եւ «լէգէոնս զօրականաց զսակաւս (ամրանայ) ի լեառնն ամուր անուանեալն Բթիջ»: Իմանալով, Բուզա ոստիկանն մեծ զօրքով յարձակւում է Գտիչ բերդի վերայ, բայց յաղթւում է չարաչար.: Վերջապէս «եղեւ թիւ պատերազմաց նոցա (Բուզայի եւ Ապումուսի) ԻԸ. (28) անգամ եւ հարան զօրքն արքունի յայսքան հանդէսս եւ ի կռուի»: Բուզան ակամայից ստիպեալ գրում եւ յայտնում է ամիրապետին, որից հրաման է ստանում ընդունել զԱպումուսէն մեծ պատուով իբրեւ յաղթող զօրավար: Վասն որոյ Բուզան «եհան ընդառաջ նորա (Ապու-Մուսէի) գունդս-գունդս վառեալ զինու եւ ընտրեալ երի վարօք եւ եատ տանել ընդառաջ նորա նժոյգս մեծազարդս եւ երեւելիս եւ երգեցիկս եւ գովասացս եւն.»: Բերդումս պատերազմեց եւ Դիզակի Մելիք-Եսային եւ յաղթեց Իբրահիմ Ճըռ-խանին: Արդէն յայտնի է, որ Դող աւանիս շրջապարիսպը շինած են Դողայ մելիքներն եւ նորոգած Դող կամ Գտիչ բերդիս պարիսպը:

13) Դիզափայտ սարիս բարձրութիւնն է 8186 ոտք: Սարիս կատարի վերայ եղած է Կատարոյ անուն նշանաւոր վանք: Մենաստանիս մէջ ապաստանարան գտած էին Սանեսան թագաւորի երեք որդիքն՝ Մովսէս, Դանիէլ եւ Եղիա՝ 3870 մարդով, որք հաւատացած էին Յիսուս Քրիստոսին Ս. Գրիգորիսի քարոզութեամբն: Գալիս է Սանեսան թագաւորն զօրքով[1] նահատակում իւր որդիները եւ հաւատացեալները սրով: Այսպէս նահատակւում են նաեւ Ռոսմոսոք թագաւորի Թէվոփիլէ Սուրբ զօրավարի որդիք-հաւատացեալ Մովսէս եւ Անդրոդոսէս Ագիտարոսեան գնդով միասին (Մով. Կաղ., եր. 73-78): Անծանօթ է մեզ Դիզափայտիս մօտ եղած բերդի անցեալն:

14) Ինչպէս տեսանք, Հերհերի եկեղեցու արձանագրութեանց մէջ (որ հովարան էր Ամարասայ վանքին) Բոչիզ կոչուած է Մովսեսեղ գիւղս եւ եղած մելիքանիստ աթոռ Մելիք-Փաշայեանց ազնիւ տոհմին մինչեւ Մելիք-Շահնազարեան Մելիք-Բագու ժամանակներն: Առաք. պատմագիրն (Գ. գլ.) յիշում է գրելով . «Մելիք Փաշիկն ի Բոչիզ գեղջէ»:

15) Պատմութիւններից որոշակի երեւում է, մանաւանդ Մով. Կաղանկատուացուց, որ Ամարաս գիւղաքաղաքն (ոմանք աւան են անուանում եւ ոմանք՝ գիւղաքաղաք) շինուած է եղել Ամարասայ այժմեան վանքի մօտ. «Երթեալ լուսաւորէր զՎրաց եւ զԱղուանից աշխարհն (Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ): Եւ երթար ի Հարանդ գաւառ ուսուցանէր եւ խրատէր պահել զպատուիրանս Որդւոյն Աստուծոյ եւ արկաներ հիմն եկեղեցւոյ ի գիւղաքաղաքին Ամարասայ, եւ կացուցանէր զգործունեայս եւ հրամանատարս շինել զեկեղեցին»... յետոյ գրած է. «Զոր (զՍուրբ մարմինն Գրիգորիսի) բարձեալ աշակերտացն բերէին յԱմարաս գիւղաքաղաքն... անդ եղեալ առ եկեղեցոյն հուպ ՝ի բեմն ի Հիւսիսոյ կողմանէ (մի եւ նոյն տեղումն է եւ այժմ)» (Մով. Կաղ., եր. 28-31): Հաւանական է թւում մեզ, որ ոչի ծանրութեան պատճառաւ գիւղաքաղաքի շինութիւնները փոխադրած լինեն յետոյ վանքիս մօտից հանդիպակաց սարին հիւսիսահայեաց լանջի վերայ, որի մեծ աւերակն մնում է արդէն, եւ որի մասին գրած ենք: Ազուանից Վաչական Գ. թէ ինչպէս եկաւ գտաւ սուրբ Գրիգորիսի գերեզմանը, ով ցանկանում է թող կարդայ Մով. Կաղ., հատ. Ա., գլ. ԺԹ.-ԻԴ.:

16) Քարայրներս նշանաւոր գեր կատարած են ժամանակին. մէն մի անառիկ բերդի չափ օգնած է Արցախի Հայոց: Տակաւին անհետացած չէ ժողովրդեան յիշողութիւնից եւ աւանդութիւնից քարայրներիս պատմութիւններն: Հոնոտի քարայրում նախ երկար ժամանակ մնացած է Աւան-իւզբաշին, որոյ անուն զովութեամբ է յիշում Ազուանից Եսայի կաթուղիկոսն (եր. 47): Ապա 1826 թուի ռուս-պարսկական պատերազմի ժամանակ բնակում է քարայրումս Թարխանեան Սափարի իւզբաշին իւր բաջերով եւ շարունակ ալիւր հասցնելով՝ Շուշին ազատում սովից (Գագա., եր. 362-366): Ահա այսպէս օգտակար եղած են քարայրներն, այսպէս եւ Աւանայ եւ Ամարաթներն այրերն:

17) Արդէն յայտնի է գրականութիւնից Աւետարանոցի եւ Շուշու բերդերի պատմութիւններն, բայց անյայտ են Բրդաշենջի բերդի անցեալն, միայն յայտնի է, որ շինուած է Ազուանից իշխաններից: Ղալի-Խութ բերդի մասին գրած է Մով. Կաղանկատուացու շարայարողն (եր. 264). «Էանց Բարան զգեղեցիկն Երասխ ի Պարսից եւ յԱմարաս գաւառ բնակեցաւ, բան խաղաղութեան սկսաւ խօսել, զի ՝ի հնազանդութիւն նմա եկեսցեն (պաշարեալ հայք)... եկ տալ պատերազմ ընդ ամրացելոցն ի բերդին: Յայնժամ ապաւինեալ բերդեցեացն ի զօրութիւնն Քրիստոսի... ի հարուածս սաստիկս հարկանէին զպարսկական գունդն եւ զերծանէք յայնմանէ զՔրիստոս փառաւորէին»: Անծանօթ է մեզ նաեւ Ագջկարերդի անցեալն:

18) Վանքս շինուած է Հայոց ԶԺԲ. թուականին Աշոտ թագաւորի որդի Շահանշահից, բայց նորոգուած է մերթ ընդ մերթ: Ոմանք կարծում են, թէ վանքս շինուած է ոմն Յովհաննէս անուն վարդապետից, որի գերեզմանն կայ հիւսիսային փոքր խորանի մէջ, եւ որի անունն գրուած է նոյն խորանի առաստաղի ծեփի վերայ. եւ ոմանք կարծում են, թէ շինուած է Յովսէփ անուն վարդապետից: Սակայն վարդապետներս նորոգած են միայն: Բայց հազար ափսոս, որ քայքայւում է հետզհետէ, զի փոքր-ինչ խախտուած է տանիքից:

19) Վանքս շինուած է Ջալալ-Դօլան իւր բարեպաշտ հօր Վախթանկ իշխանի կտակի համաձայն, իսկ հրաշագան գաւիթը շինած են ինքն Ջալալ-Դօլան, իւր ամուսին Մամքան եւ իւր որդի Աթաբակն իրր Դամբարան իւրեանց ցեղի համար: «Շինեաց (Ջալալ-Դօլայն) եկեղեցի մի գեղեցկազարդ յօրինուածով զմրէթայարդ երկնանման տաճար փառացն Աստուծոյ... որ կոչի Գանձասար. հանդէպ խոխանարերդոյ ՝ի տեղի շիրմի իւրեանց եւ յոլով ամս աշխատ եղեն ի նմա: Եւ իրրեւ առ զաւարտումն, արար նաւակատիս մեծահանդէս առ ՝ի յօրհնել զեկեղեցին, անդ էր եւ կաթուղիկոսն Ազուանից տէր Ներսէս բազում եպիսկոպոսօք, այլ եւ մեծ վարդապետն Վանական, յոլով բարուն ինք. անդ էին եւ սուրբ վարդապետքն Խաչենոյ Գրիգորիս եւ տէր Եղիա հարազատք միմեանց, զոր զարդարեալ էր Աստուած երկուց մարդով... եւ բազում քահանայիւք (700), եւ իրրեւ կնքեցաւ օծմամբ, ճաշ մեծ յօրինեալ ինքնին իսկ (Ջալ. Դօլ.) ձեռովք իւրովք պաշտէր զրազմեալսն... եւ եղեւ այս ՝ի ՈՁԹ. թուին Հայոց յաւուր մեծի տօնի Վարդաւառին» (Կիր., եր. 159): Ջալա-Դօլաս Ղազուինում նահատակւում է Արղունին անօրէն հրամանաւ Հայոց ՁԺ. թուին, որի մարմինը բերել տալով՝ իւր որդի Աթաբակն ամփոփել է տալիս Գանձասարի գաւթում տաճարի դրան մօտ (Կիր. եր. 234-236): Հարկ է յայտնել, որ ականաւոր իշխանս Ջալալ-Դօլայ նահատակուած է ՁԺ. թուին, իսկ սորա գերեզմանի շիրմաքարն կրում է Հայոց ՊԶ. թիւը: Յայտնի է, թէ («Այս է հանդիստ մեծին Ջալալի. յաղաթս յիշեցէք թվ. ՊԶ.») տապանաքարս կամ նահատակութիւնից 170 տարի յետոյ ձգուած է եւ կամ փոխուած է հին տապանաքարն եւ ձգուած նորս եւ կամ այլ է Ջալալ-Դօլայի եւ այլ Ջալալի գերեզմաններն, բայց տապանաքարն միայն մի հատ է:

1 «Յառաջ քան զտեսչաւորեալն տեառն Աբասայ ի թշնամեաց հրդեհեցան ի Դիզափայտ լերին ի Կատարոյ վանս... Սուրբն Մովսէս, սուրբն Դանիէլ, սուրբն Եղիա, սոքա որդիք գոյով Սանեսանայ արքային Մասքութաց, որ աշակերտեալ սրբոյն Գրիգորիսի եւ երեք հազար ութ հարիւր եւ եօթանասուն այր ընդ նոսա: Ամենեքեան սոքա ի լեառնն Դիզափայտ... արիւնարբուն Սանեսան ի սուր սուսերի արկ զնոսա»: (Մով. Կաղ., եր. 92):

20) Մենաստանումս յիշատակ գրուած էր այն ձեռագիր աւետարանն, որ այժմ գտնւում է Շաքուայ Գեօգ-Բուլաղ գիւղում: Բակ իշխանն (Եղիշէ, Է. եզ., եր. 233) «Եւ թէն հարիւր արամբ գնաց փախստեայ... յամուրն Արցախայ եւ կեցեալ բարեպաշտութեամբ... մինչեւ յայս բարեպաշտ իշխանս Ջաջուռ եւ 'ի սմին որդի Այեսալ քրիստոսասէր Վանինի, որ եւ ստացաւ զայս աստուածախաւս աւետարանս յիշատակ եւ փրկութիւն հոգւոյ հաւր իւրոյ բարեպաշտ իշխանին Ջաջռոյ եւ ետ 'ի սուրբ մենաստանն, որ կոչի Հաւապտուկ, որ է շինեալ յանուն Սուրբ Աստուածածնին եւ է բնական տուն եւ շիրիմ Ջաջուռ իշխանին եւ նախնեաց իւրոց եւ է ի գաւառին Արցախայ, որ կոչի Խոխանաբերդ» (Աղ. երկիր եւ Դրաց., եր. 234-235):

21) Բերդս շատ հին է եւ, ինչպէս կարծում ենք, շինուած է Հայոց թագաւորներից եւ յետոյ ենթարկուած Աղուանից իշխանութեան: Որպէս ակներեւ է Բարագլխի Հին-Հանդստարանի արձանագրութիւնից՝ Հասան մեծն բերդս տուած էր Սմբատ անուն ոմն իշխանազնի իբր հայրենիք եւ գերեզմանատուն: Բերդիս մասին գրում է Աղուանից պատմիչն (Մով. Կաղ., եր. 263). «ելին գաղտաբար 'ի Պարտաւայ արք ընտիրք 'ի Տաճկաց եւ յաւարի առին զԱմարաս գաւառ՝ գերի առեալ իբրեւ ոգիս հազարս եւ 'ի Մեծերանաց սահմանի ամրացեալք 'ի տեղւոջն, որ կոչի Շիկաքար: Յայնժամ արի եւ շքեղատեսակն Սահղի Սմբատեան Եռանշահիկն ոչէր՝ քաջազօր եղբարք իւրովք եւ զօրօք 'ի լուսանալ առաւօտուն 'ի վերայ յարձակեալ առհասարակ դիպեալ զնոսա ցիր եւ ցան կացուցանէին եւ որպէս յառիւծոյ ժանեաց զգերեալսն ի բաց կորզէին»:

22) Հին է Կաչաղակաբերդիս շինութիւնն, որ կոչւում է եւ Խաչենոյ բերդ: (Մով. Կաղ., եր. 272-273) «առեալ զմնացեալ դուստրն Սպրամ... մտանէ 'ի բերդն Խաչենոյ եւ... ամուսնացուցանէ զՍպրամ ընդ Ատրներսեհի Սահլի որդւոյ»: Բայց յետոյ պատկանում էր Ջալալեաններին:

23) Ինչպէս Ուլու-պապ, նոյնպէս եւ Խոխանաբերդն պատկանում է Ջալալեաններին: Գրում է Կիրակոս (եր. 185) վերջին բերդիս մասին. Ջալալ-Դօլայ «իբրեւ ետես զյարձակումն անօրինաց (թաթարաց) ամրացոյց զբնակիչս իւրոյ աշխարհին ի բերդն, որ կոչի Խոխանաբերդ... եւ իբրեւ եկին պաշարել զնա, տեսին, զի ոչ էր հնար առնուլ զամուրսն, կոչէն զնա սիրով խաղաղութեան առ իւրեանս եւ նա իմաստնաբար հաճեաց զմիտս նոցա»:

24) եւ 25) Երկու բերդերս եւ Անանուն (Առաջաձորի մօտի) բերդն եւս պատկանում են Վախթանկեան-Ջալալեաններին, սակայն պատմութեանց մէջ չկայ ակնարկութիւն սոցա մասին:

26) Արդէն իմացանք, որ Աղուանք էր կոչւում պատս: Մովսէս (եր. 65 եւ 66) գրած է. «Ապա կամ եղեւ արքայի առնել ժողով յԱղուէն բազմամբոխ ատեան... Ես Վաչական (Գ.) Աղուանից արքայ եւ Շուփհաղիշայ... եւ ազատ մարդիկ եւ նահապետք Արցախայ... եւ այլք բազումք, որք միաբան առաջի իմ եկին 'ի հանդէս ի հովոցի տեղւոջս Աղուէնն»: Արդ, ժողովրդեան բերանում ցարդ մնացեալ Աղուանք եւ «ի հովոցի տեղւոջս Աղուէնն» կարծել են տալիս մեզ հաւատալ, թէ ժողովն եղած է պատիս մօտերքում, թէ պատս է Աղուէնն, եւ ոչ թէ Աղուէ գաւառն, քանզի եթէ Աղուէ գաւառում եղած լինէր, կյիշէր պատմաբանն գաւառ բառը, մանաւանդ թէ Աղուէ գաւառում չկայ Հովասուն տեղ:

27) ԺԲ. դարում նշանաւոր է Հաթերքս, այստեղ էին նստում Վախթանկեան իշխաններն: Բայց որովհետեւ այս թագաւորական եւ իշխանազն ցեղի մէջ եղած են ժամանակից շատ Վախթանկներ եւ Հասաններ, վասն որոյ հարկ համարեցինք որոշել այստեղ, որպէս զի առիթ չտալ շփոթութեանց:

Ա. Վախթանկ Սմբատեան, որից ծնուած է Հասան, որի մասին գրած է Ս. Օրբել. (Բ. հատ., եր. 79-81), թէ Սիւնեաց Գրիգոր թագաւորն եւ իւր եղբայր Սմբատն անզաւակ էին. «բայց միայն մի դուստր ունէր Գրիգոր (թագաւորն) Կատայ անուն... բայց Գրիգոր որ իշխէր Բաղաց. ետ ածել ի Խաչենոյ իշխանացն մանուկ մի Հասան անուն 'ի Գեռաքարեցեացն եւ ետ զդուստր իւր Կատայն նմա 'ի կնութեան եւ կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ, եւ ինքն եւ եղբայր իւր Սմբատ... մեռանի 615 թուին (Հայոց): Մինչ զբերդն կամէին առնուլ (տաճիկքն) Հասան կացոց բերդապահս եւ ինքն առեալ զկին իւր եւ զընտանիս 'ի գիշերի ել 'ի բերդէն եւ անց գնաց 'ի գաւառ իւր 'ի տուն 'ի Խաչէն»: Հասան թագաւորիցս ծնում է Ղարա-Գրիգորն, որի կինն լինում է Դօփ՝ դուստր իշխանաց իշխանի Սարգսին, սոցանից ծնւում է Քաջն-Հասան, որի ամուսինն է Մամքան՝ դուստր Քրդին, սոցանից ծնւում է Գրիգորն, որի կինն է Մեծ-Սիւնեաց Տարսայիճ իշխանի դուստր Ասֆան: Գրիգորիցս ծնուած է Վահրամ իշխանն: Այս ցեղին է վերաբերում Վերին-Խաչենն, Հանդարերդն, Շարն իւր վանքերով եւ Խաթրայ վանքն:

Բ. Հասան, որից ծնւում է Վախթանկ Սակառն[1]: Վախթանկ Սակառնի ամուսինն է Խորիշահ (քոյր է սա սպասպարապետ Զաքարէի եւ Իւանէի), որդի սոցա Ջալալ-Դօլա-Հասան, որի ամուսինն էր Մամքան թոռն Բագրատ թագաւորին, սոցա որդին Աթաբակ եւն: Այս ցեղին է պատկանում Վաղահասի եպիսկոպոսանոցն, Գանձասարայ եւ Սուրբ Յակոբայ եւ Վանքառի վանքերն եւ հանգստարաններն եւ Ականայ, Խոխանայ, Նատրայ, Կաչաղակայ եւ Անանուն բերդերն:

Գ. Վախթանկ թագաւորապն, որի որդին է Հասան, որի կենակիցն էր Մամա դուստր Կիւրիկէ թագաւորին (սորա այր եւ կին կրօնաւոր եղան Դատի վանքում), սոցանից ծնւում է Վախթանկ, որի ամուսինն էր Արգուխաթունեան-Բուրդ իշխանաց իշխանի դուստրն, եւ քոյրն Դաւիթ եւ Սադուն իշխանների (Կիր., եր. 125): Այս ցեղին է պատկանում Դատի կամ Խոթա վանքն, Հաթերք-գղեակն եւ աւանն. Հաւքախաղացն եւ Հակառակաբերդն: Գերդաստանիս մասին գրում է Գոշ Մխիթարն (եր. 68-73). «բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութիւն (Դատաստանագիրք գրելն) եղեւ ի թուականութեանս Հայոց ՈԼԳ., ... յայսմ անիշխանութեան թագաւորութեան մերոյ ի վաղնջուց. ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանաց ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ կրօնաւորեցելոյ եւ որդւոյ նորա Վախտանգայ 'ի գղեկին, որ անուանի Հայթերք»:

28) Ասողաբլրի մատեանս մէջ ամփոփուած է Թագուհի անուն նահատակուհու մարմինն, որ Աղուանից երկրի Ուտի գաւառի բնիկ Բագնաց գիւղից էր եւ իշխանական ցեղից: Նահատակուած է հոնաց կամ Ռոսմոսոքեան զօրաց Ագիսարոսեան գնդի գնտապետ Թէոփիլոս իշխանի հրամանաւ (Մով. Կաղ., եր. 73-77, նաեւ եր. 160-164):

29) Հաւքախաղաց բերդս շինած է Աղուանից Ամրներսեհ իշխանի որդի Գրիգոր իշխանն (Մով. Կաղ., եր. 273): Իսկ թէ ով շինած է Հաթերք-գղեակը եւ Հակառակաբերդը, անյայտ է մեզ: Միայն յայտնի է, որ թամամարներն չափազանց մարդ կոտորած են Հաւքախաղացը գրաւելու ժամանակ (Կիր., եր. 157-158):

30) Կանխաւ միացած է եղել Խաչէն գաւառի հետ Ջրաբերդ գաւառիս այն մասն, որ ընկած է Թարթառ գետի, Խաչէն գետակի եւ դաշտաբերանի մէջ: Բաժանումն տեղի ունեցած է մելիքութեան ժամանակ: Մայրաքաղաքի հանդստարանի մատեան արձանագրութիւնից երեւում է, որ Փրկչ. 1260 թուին իշխում էր Ջալալ-Դօլի թոռն Ուքան իշխանն. (տե՛ս Առաջաձոր գիւղի Անապ. արձանագ. մէջ):

31) Թէ ո՞րից եւ ե՞րբ շինուած է քաղաքս, չունինք հաւաստի տեղեկութիւն: Միայն գիտենք, որ մի ժամանակ եպիսկոպոսանիստ ամթոռ եղած է:

32) Խաղիրներն պաշարում են Պարտաւը, ամէն ոք աճապարում է փախչել եւ պատսպարւիլ Արցախեան լեռներում: Աղուանից Վիրոյ կաթուղիկոսն եւս փախչելով ապաստանում է քարայրիս, որը գուցէ շինած լինին այն ժամանակ եւ որը Կողթ ագարակ է անուանում Մով. Կաղանկատուացին (եր. 104-129): Խեղճ կաթուղիկոսն այստեղ եւս նեղուելով խուզարկու թշնամիներից, աճապարանօք փախչում է Ջարաբերդ ամրոցն Թարթառի ձորով:

33) Եղիշ-առաքելալի գլուխը գողանալով բերած եւ թաղած էին այստեղ Վաչական Գ. թագաւորի ժամանակ, վասն որոյ կոչում էր Գլխոյ վանք. «Ապա հրաման տայր յուղարկել զնա... ի վերնակողմ գաւառն Մեծ-Կուէնից 'ի բարձրավանդակ լեառն, 'ի տեղի մենաստանի նորա ի Գլխոյ վանս» (Մով. Կաղ., եր. 169 տե՛ս եւ 186): Բայց թէ երբ Հիւրեկ կամ Հոռեկ փոխուած է վանքիս անունն, անյայտ է:

1 Կոչւում է եւ Տաճկիկ (տե՛ս Կիր., յեր. 158):

34) Այս գիւղն առանձնապէս սեպհական էր Աղուանից թագաւորներին իրրեւ ամառանոց: Վաչական Գ. յատկապէս շինել տուած է այս փոքրիկ, բայց գեղեցիկ եկեղեցին յանուն Պանդալիոնի, որի մէջ պահւում էր եւ գտնուած մասունքներն (Մով. Կաղ., եր. 49 եւ 62):

35) Վաչական Գ-ի թագուհու անունն Շուշանիկ էր (Մով. Կաղ., եր. 46), որդու անունն՝ Պանդալիոն (եր. 47) եւ աղջկայ անունն՝ Խնչիկ (եր. 62): «Եւ զուսար մի Խնչիկ անուն տղայ հասակաւ յոյժ սիրելի արքայի (Վաչականայ), որոյ անուամբ շինեալ էր Դատաստակերտ մի՝ տայ նմա մասն մի 'ի Սուրբ Նշխարացն եւ 'ի նմին Դատաստակերտի մեծապէս կատարի յիշատակ սրբոյն (Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի) պատուով» (Մով. Կաղ., եր. 62):

36) Աւանդութեամբ ասում են, որ վանքս հիմնարկուած է նոյն բարեպաշտ Վաչական Գ. թագաւորից: Մենաստանս, որ նախ կոչուած էր Ներսմերհայ (տպ. 'ի Փարիզ՝ Ներս-Միհրայ) ուխտ, յետոյ կոչուեցաւ Զրվշտիկ: Բայց առաքելիս սուրբ մարմինը, որ նախ ամփոփած էին Հիւրեկայ (Մով. Կաղ., եր. 9-10 Ուռեկան) վանքում, Վանքս շինուելուց յետոյ ապա փոխադրում են այստեղ, որ այժմ կոչւում է Եղիշ առաքեալ:

37) Այս ամենաբարեպաշտ թագաւորիս մասին գրուած է (Ս. Օրբել., Ա. հատ., եր. 128) «Ապա մեռան 'ի Բարկուշատ թագաւորքն Վաչական եւ Արլ-Աբաս (փեսայ Վաչական թագաւորիս)»: Երեւի թէ մեռնելուց յետոյ բերած եւ այստեղ ամփոփած են նոյն թագաւորի մարմինը:

38) Լճակս առաջ եղած չէ, այլ գոյացած է 1139-ին. «'ի ՇՁԸ. թուականին եղեւ շարժ սաստիկ եւ կործանուեցաւ քաղաքն Գանձակ... փլաւ եւ լեռն Ալհարակ ի շարժմանէն եւ արգել զձորակն, որ անցանէր ընդ մէջ նորա, եւ եղեւ ծովակ, որ է մինչեւ ցայսօր, լինեն 'ի նմա ձկունք ազնիւ» (Կիր., եր. 65):

39) 5000 ոտքից պակաս չէ գրեթէ սարիս բարձրութիւնն, որի գագաթին վերայ եղած մատրան տեղում շինուած է եղել մեծ վանք: Վանքումս գրած է Հայոց ՌՃԻ.-ին Գանձակի Համտինա գիւղացի Ղազար քահանան այն աւետարանը, որ այժմ կայ Ճալէթի վանքում (տե՛ս Աղ. եր. եւ Դրացիք, եր. 251):

40) Առաքել պատ. (եր. 9) Մեծ-Շահ-Արասի օրով Աղուանից երկրից Ասպահան գաղթած ժողովրդոց շարքում գնելով, գրած է. «գնացին Սարուխան ըէկն եւ իւր եղբայր Նազարն յՈսկանապատ գեղջէ»:

41) Արդէն իմացանք, որ այստեղ կան պղնձահանք եւ երկաթահանք, որք պատկանում էին Գարդման գաւառիս իշխաններին: Աւանդաբար ասում են, թէ սուրբ Մեսրոպ պղնձահանքի ձորումս պատահած է Գարդմանայ Խուրս իշխանին եւ աղանդաւորներին: Աւանդութիւնս արդարացնում է Խորենացին (գիրք Գ., գլ. Կ.) գրելով. «ինքն (սուրբն Մեսրոպ) գառնայ զ Գարդմանաց ձորովն, զի եւ ի նմա լուաւ լինել յընկերաց նոցին աղանդոյն: Զորս գտեալ, ածէ եւ զնոսա 'ի գիտութիւն ճշմարտութեան հանդերձ վերստին ուղղութեամբ իշխանին Գարդմանայ, որում անուն էր Խուրս»:

42) Ինչպէս երեւում է, Գօշ-Մխիթար իւր Դատաստանագրքի նախադրութիւնը (եր. 69-74) սկսած է վանքումս եւ վերջացրած Սուրբ Հռիփսիմէի վանքում (վերջին վանուցս մասին տե՛ս Փառիսոս գաւառի Բարսում գիւղի նկարագրութեանց մէջ): «Բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութիւն եղեւ 'ի թուականութեանս Հայոց ՈԼԳ. ... յաշխարհիս Առանայ 'ի նահանգիս որ կոչի մայրաքաղաքիս Գանձակ՝ յանապատս եւ յեղբայրանոցս անուանեալ Դասնոյ, սկզբնաւորեալ 'ի լեռնակողմն մենաստանի կոչեցելոյ Հռոմաշէն ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցեաց կուսանացն յիշեցելոց»:

43) Աւանդութիւն, հետաքրքրութեան եւ ուշադրութեան արժանի վիպասանութիւնն, որ կապուած է այս գուգանի հետ: «Մի շատ հարուստ մարդ է լինում Գիչին Սավար գիւղիս իշխանը: Եօթն գուգան է ունենում մեր Գիչին իւր տանից պակուած (գոյացած), ամէն մի գուգան ունենում է մի գունով եղներ. առաջի գուգանի եղները բոլորն էլ սեւ են լինում, Բ. գուգանին՝ բոլորն էլ սպիտակ, Գ.-ինն՝ կարմիր, Դ.-ինն՝ մոխրագոյն, Ե.-ինն՝ մուգ կարմիր եւն: Մեր Գիչին ունենում է անհեսապ ոչխար, տաւար, գոմէշ, այծ, եղնը, հերինջ, աչառ (արջառ): Իւր կալումն աջ ու ձախ շուռ է տուել 12 ջոխտ եղներ եւ կամնը: Ահագին են Գիչու ցորենի եւ գարու հորերը: Գիչու կալի մեծութեամբ կալ[1] եղած չէ, տան մեծութեամբ՝ տուն, ապրանքի մեծութեամբ՝ ապրանք, հարստութեան մեծութեամբ՝ հարստութիւն: Էս սարիս երի (վերեւի) կողմում եղած է ամառ ժամանակներում Գիչու ապրանքը. սարի գլխից մինչեւ Գիչու կամնատունն շարած է եղել թիւնկ (խնցեղէն խոզովակ). սարի գլխին կթել են կովերը, ոչխարները եւ էշերը եւ կամնները լցած թիւնկերի մէջ եւ հապէս հաւաքուած են բոլոր կամնները էս տեղ իւր կամնատունն: Գիչին ունեցած է 12 տղայ. սրանցից ամէն մէկը մին բանի պահապան է եղել. օրինակ մին ոչխարի հօտին վերայ, մին տաւարի նախրներին, մին՝ գոմէշների, մին՝ ձիերի եւն: Հէնց համարի թա Գիչու տարեկան ծախած ոչխարի, բրգի, գոմշի, եզան, մատղաշի, ձիու փողը էկս մլէօնի (միլիոնի) է հասել: Գիչին մի անգամ գնում է Գեանջա՝ տան համար հագուստեղէն առնելու, խանութպաններն ապքատ համարելով ծաղրում են: Գիչին բարկանալով առնում է (գնել) մի խանութում գտնուած ամբողջ ապրանքը եւ տալիս է փողերը եւ գարմացնում ամբողջ քաղաքը: Շահ-Աբասը լսելով Գիչու անունը՝ գոնաղ է գալիս. մի շարաթ մնում Գիչու տանն, ամէն օր ուտում, խմում իւր զօրքերով միասին. օրական 100 ոչխար եւ 25 հերինջ են մորթում ամէնը կերակրելու համար. դու տես թէ հաց որչափ գնացած կլինի: Շահ-Աբաս այս սարերը շահական ֆերմանով պարգեւում է Գիչուն եւ շնորհակալութիւն յայտնելով հեռանում»:

44) Քարայրիս[2] մասին գրած է Կիրակոս (եր. 103 եւ 105). «Բնաջինջ եղաք ի թագաւորաց եւ յիշխանաց. կաթուղիկոսանքն Աղուանից այսր անդր յածելով, վասն ոչ ունելոյ հաստատուն տեղի ամենայն: Դէպ եղեւ նոցա գալ ի քարայրս մի 'ի սահմանս բերդին՝ որ կոչի Զարեք եւ անդ գտաբիլ եւ անդուստ հովուել գհօտ իւրեանց»: «Եւ կալաւ գաթոռն Աղուանից տէր Յովհաննէս զամս բազում: Սա հաստատեաց զաթոռ իւր 'ի սահմանս Զարեքին ի քարի անդ՝ զոր ասացաք վերագոյն»:

45) Ոչ մի գաւառ գարդարուած չէ այնքան քարեայ խաչարձաններով, որքան Գարդման գաւառս եւ նոյնիսկ Գարդման աւանս: Գեղեցիկ խաչարձաններով զարդարուած են աւանիս գերեզմաններն. թող այն, որ բաւականին եւս կոտրատած եւ ջարդած են մահմեդականք:

46) Սարիս անունը յիշում է Ուխտանէս եպիսկոպոսն (եր. 96). «Բայց է բլուր մի յաշխարհին Ուտիացւոց՝ մերձ առ ստորոտով լերինն, որ կոչի Արաթիւն, որ զեռ եւս կոչի բլուրն այն Բարսղաբլուր. (այժմ կոչւում է բլուրս Դղում (Ղարադ-թափէ):

Երբ երաշտ են լինում տարիներն, բարձրանում են սարիս գագաթն սրբասէր քահանայք, վեր առնում լճացեալ (գերեզմանի մօտից) ջրից մի-մի փոքր քար եւ բերում գիւղերն, անում պատարագ. թափորով մի մաքուր եւ ջրալի ամանի մէջ ձգում քարը, եւ ապա գալիս է անձրեւ:

Աւանդութիւն. «Սուրբ հգնաւոր եղած է Արութիւնս, որ ձմեռներն բնակած է բարձր սարիս գլխին, իսկ ամառներն իջած՝ Կուր գետի եզերքն, որպէս զի իւր անձն ճնշէ ամառն տաքութեամբ, մոծակներով, ճանճերով եւ բոռով, իսկ ձմռան՝ սարիս գագաթի անտանելի սառնամանիքներով»:

47) Այս բերդն պատկանում էր Արցախի Գարդման գաւառի իշխաններին՝ սկսեալ Առանշահիկ կամ Եռանշահիկ իշխանների օրից վեր: Մեր կարծիքով այս իսկ է Գարդման բերդն, իսկ սորա մօտինն՝ Մլգնաբերդն, որի մէջ վաղուց եղած է վանք, իսկ այժմ նորաշէն եւ փոքր եկեղեցին, որի մասին գրած ենք արդէն: Մեր համեստ կարծիքով, կրկնում ենք, այս է Գարդման բերդն, որի մասին գրած է Յովհան կաթողիկոսն (եր. 162). «Գնայ Բուզա ի գաւառն Գարդմանայ եւ պատնէշ եւ պաշարումն շուրջ զ Գարդման բերդիւ եղեալ ըմբռնէ անտի եւ զիշխանն Գարդմանայ զ Կարիճն»: Բերդիս խիստ մօտ է եւ Հարցհանգիստ գիւղն, որի հարաւային մօտից բարձրացած սարի վերայ ամփոփուած են գաւառիս կռապաշտ իշխանաց մարմիններն, թերեւս այս պատճառաւ կոչուած է Հարց-Հանգիստ-Հարցհանգիստ: Վարդան պատմիչն եւս գրած է. «Եւ յետ երեց ամաց անցելոց (սկզ. 1117-ին) դարձեալ եկն Տաթարն եւ էառ զ Գանձակ շահաստան... զ Սա-

1 Արդարեւ չափազանց մեծ է Գիչու կալն եւ բակն:

2 Քարաներձ է անուանում Կիրակոս Գանձակեցին (եր. 95):

դամ (Զակամ), զԲարահերձ, զՏէրեւին (Տէրունական եւ զմեծ զդեկն թագաւորանիստ զԳարդման, զԵրգեվանք, զՄածնաբերդ...» (տպ. Երուս. 1870):

Կիւրիկեան թագաւորներն հետզհետէ իւրացնում են Գարդման, Փառիսոս, Բաւս կամ Բուստի եւ Զաւէ գաւառները եւ տիրում սոցա բոլոր բերդերին, ինչպէս գրած ենք կանխաւ: Որ այլ է Մածնաբերդն (այժմ Մլզնաբերդ) եւ այլ Գարդման բերդն, որ երկու ամրոցներս գտնւում էին Գարդման գաւառում, որ Մածնաբերդին իշխում էր Ագսարթան եւ Գարդման բերդին՝ Վահրամ իշխանն, որոշակի յայտնում է Կիրակոս (եր. 89-80). «Ագսարթան, որ եղեւ ժառանգակալ Մածնաբերդոյ... Գարդմանայ եւ Երգեվանիցն եւ Տէրունականին եւ Տաւուշոյ եւ այլ կողմանց իշխանութեան Վահրամայ իշխանի»: Գաւառներս բերդերով միասին գրաւում են վրացիք եւ վրացիների ձեռքից՝ պարսիկներն եւ սոցանից՝ Զաքարէ եւ Սարգիս իշխաններն. «Զաքարէ... եւ եղբայր իւր Սարգիս... առին բազում գաւառս 'ի պարսից եւ զրերդս ամուրս զԳարդման, զԲարահերձ (միւնոյն քարայրն է, որի մէջ նստում էին կաթուղիկոսներն, որը այստեղ անուանում է Բարահերձ) եւ զԵրգեվանք, զՏաւուշ, զԿածարեթ եւ զՏէրունականն եւն» (Կիր., եր. 95): Այժմ պարզ է, որ Մածնաբերդն մնացած է նոյն Ագսարթանի ձեռքում, իսկ Գարդմանս՝ Վահրամին:

Անծանօթ են գաւառիս Ա. Գ. Դ. բերդերի բուն անուններն եւ անցեալն:

48) Թէ ով շինած է քաղաքս եւ որ թուին, անյայտ է մեզ. միայն յայտնի է, որ քաղաքումս նստում էին հայ իշխաններ: Ժ. դարի վերջերում մաերմական բարեկամութիւն եւ սերտ սէր հաստատուած էր Աղուանից եւ Մեծ Սիւնեաց իշխանների եւ թագաւորների մէջ:

Մեծ-Սիւնեաց Սմբատ Բ. թագաւորի կինն Շահանդուխտ Աղուանից Սեւադայ իշխանի դուստրն էր: Սեւադայ իշխանիս որդի Սենեքերիմն եղաւ թագաւոր Մեծ-Սիւնեաց: Այս պատճ. Մեծ-Սիւնեաց Սենեքերիմ թագաւորն պայծառացնում է քաղաքս եկեղեց. եւ բերդով. եւ կոչւում թագաւոր Փառիսոսի. նոյնպէս եւ իւր որդի Գրիգորն... քանզի նոյն իսկ ժամանակներում բուն Աղուանից յարութիւն առած թագաւորութիւնն հաստատուած էր Դարբանդում: Սենեքերիմ թագաւորս նահատակւում է Բաղարերդում: Գրիգոր թագաւորից յետոյ Փառիսոս քաղաքս մնում է հայ իշխանոց ձեռքում, ինչպէս տեսանք Փառիսոսի խաչերի արձանագրութեանց մէջ: «Ի՛ ՇՀԸ. թվին փոխի յաշխարհէս մեծ վարդապետն Սարգիս, որ է 'ի «Փառիսոյ» (Ս. Անեցի, եր. 128): Քաղաքումս ծնուած էր նաեւ Յովհաննէս Սարկաւագ վարդապետն:

49) Կիրակոս Գանձակեցին (եր. 105-106), Փառիսոս եւ Բաւս կամ Բուստի գաւառներիս վերին մասերը միացնելով, անուանում է Միափոր գաւառ (այս է լեռների մէջ ընկած եւ լայնագոգ ձեւ ստացած գաւառ), իսկ Ղարա-Մուրատիս վանքը՝ Խամշի: Բարահերձում բնակող Աղուանից Յովհաննէս կաթուղիկոսն նեղուելով այլազգիներից՝ գիմում է Զաքարէ եւ Իւանէ իշխաններին. «Եւ նոքա (նոյն իշխաններն) մեծաւ պատուով ընկալան, եւ բնակեցոյց զնա Իւանէ 'ի գաւառն Միափոր 'ի վանքն, որ կոչի Խամշի: Սա (Յովհաննն. կաթուղ.) սկսաւ շինել անդ եկեղեցի մեծ եւ հրաշալի (որ է այժմեան վանքն) եւ մինչեւ աւարտեալ էր . խափանումն եղեւ. զի եկն Սուլթանն Խորասանայ՝ Ջալալատդին կոչեցեալ եւ եհար զթագաւորութիւնն Վրաց»: Այնուհետեւ վանքումս էին բնակում Աղուանից կաթուղիկոսներն (Կիր., եր. 171), որք յետոյ լրացնում են վանքիս պակասորդը:

Երկու Ղարա-Մուրատ գիւղերիս հայ բնակիչներն տեղափոխուած են Շուլաւերի կողմերն:

50) Աւերակ գիւղիցս էր Մելիքսեթ եպիսկոպոսն, որ գաղթող ժողովրդի հետ գնաց Ասպահան, որի մասին գրում է Առաք. պատ. (եր. 9). «Մելքիսէթ եպիսկոպոսն 'ի Վերին-Զակամայ 'ի Մելիքզատա գեղջէ»: Ահա այսպէս միւնոյն Փառիսոս գաւառի վերնամասն յաճախակի փոփոխութեանց ենթարկուելով կոչւում է Միափոր, ապա՝ Վերին-Զակամ եւ ապա՝ Շամշադնի գաւառ:

51) Վանքիս մասին գրում է Կիրակոս (եր. 142), որ աշակերտ եղած էր Վանական վարդապետին, թէ մի անգամ շինած էր Վանական վարդապետն մի վանք այժմեան վանքի տեղում, որ աւերուած էր Ջալալատդին Սուլթանից: Ապա գրում է 208-209 երեսում. «առ Տէր փոխեցաւ (Վանական)... 'ի Վանսն, զոր իւր շինեալ էր. որ կոչի Խորանաշատ վանն յոլով եկեղեցեացն՝ որ 'ի նմա ընկալաւ զանունն, որ կայ հանդէպ Երգեվանից բերդին եւ 'ի Թիկանց Գարդմանայ. առնէր շինուածս երեւելիս. զաւթի շինելով 'ի կոփածոյ վիմաց 'ի գուռն մեծ եկեղեցւոյն, զոր իւր իսկ շինեալ էր եւ զրան վարդապետութեան ուսուցանէր այնոցիկ. որ ժողովէին առ նա յամենայն գաւառաց... եւ տարեալ թագեցին զնա 'ի գլուխ վանիցն յարեւելից կուսէ, մօտ 'ի փոքրագոյն եկեղեցին, ուր էին զերեզմանք ազգատացն. զի ինքն (Վանական) այսպէս հրամայեաց... եւ այս եղեւ 3Զ. (1251) թուին»:

52) Գրաւոր ոչինչ տեղեկութիւն չկայ բերդիս շինողի մասին, բայց աւանդաբար ոմանք ասում են, թէ Սենեքերիմ թագաւորն շինել տուած է բերդս. ոմանք՝ թէ միայն նորոգած է:

53) Անյայտ է եւ բերդիս շինել տուողի անունն եւ տարեթիւն: Զարեքայ[1] բերդ է անուանում Կիր. (եր. 103-105 եւ 142) ամրոցս, որ կայ ուղիղ Բարահերձին հիւսիսային կամ հիւսիս-արեւմտեան հանդէպ. Շամբոր գետակի ձախ ափում: Ինչպէս Փառիսոս բերդն, նմանապէս եւ այս պատկանում էր գաւառիս հայ իշխաններին, բայց ազատ մնացած չէր թաթարների ճանկից, ինչպէս Զարեք ամրոցս, նոյնպէս եւ Գետարակ աւանն, որը բերդ է անուանում Կիրակոս (եր. 31):

Հին-Գետարակի արեւելեան հանդէպ կայ Սուրբ Սարգիս անուն մի մատուռ (տե՛ս նոյն աւանի նկարագրութեան շարքում), որի մէջ, ասում են, բնակած է Յովհան Մայրագոմեցի մականուանեալ վարդապետն: Հաստատում է այս Կիրակոս (եր. 31) գրելով. «Նա (Եղբ կաթ.) ոչ տարաւ ընդ իւր արս իմաստուն, մանաւանդ զՅոհան վարդապետն Մայրավանեցի, որ յոյժ տեղեակ էր աստուածային գրոց... իսկ նա (Եղբ) փոխանակ զդջալոյ՝ հալածեաց զՍուրբն (Յոհան) անարգանօք Մայրագոմեցի կոչելով... եւ երթեալ Յովհաննու ընտրեաց իւր տեղի լռութեան 'ի կողմանս Գետարակս բերդոյ»:

54) Վահրամ իշխանիս մասին արդէն տեղեկութիւն տուած ենք 7-րդ ծանօթ. մէջ:

55) Անծանօթ է մեզ բերդիս անցեալն եւ անունն. կայ եւ մի խիստ հին եւ աւերակ բերդանման շինութիւն Պատի գեղի արեւմտեան կողմում եւ եկեղեցաձորի արեւելեան կողմում՝ Օհանի բերդ անուն (Աղան-գալա), որի շրջապատն գիւղեր են թրքաբնակ: Վարդ. Բարձրբերդցի (եր. 134-135) գրում է. «Ի սոյն աւուրս կին մի՝ Մամ անուն՝ գայ 'ի Պարսից երեք որդովք ի գաւառն Փառիսոսոյ առ Գրիգոր փառաւոր իշխանն: Եւ տան որդիքն պատանդ զմայրն եւ առնուն զՇօթս զլերդն Շամիրամայ, եւ անտի ընտանեցեալ ընդ Ալպղիզ ամիրայն Գանձակայ՝ սպանին զնա եւ առին զԳանձակ... եւ սիրոյ ազգաւ գնացեալ առ նա Փիլիպէ որդի Գրիգորոյ, ըմբռնէ զնա 'ի կապանս զկնի մահուան հօրն եւ առնու ի նմանէ զՇաշուաշ եւ զՇօթս»: Փառիսոս գաւառիս բերդերն են Փառիսոս, Գետարակ, Զարեք կամ Մամռուտ, Վահրամ իշխանի բերդ, Օհան-բերդ եւ Աղջկայ բերդն, ընդամէնն վեց բերդ: Գոնէ մենք կարծում ենք, որ Ղզղալա կոչուածն է Շամիրամայ[2] բերդն, Օհանինն՝ Շօթն եւ Վահրամինն՝ (Ղալաթոյուն) Շաշուաշն:

56) Բարայրիս մասին գրում է Կիրակոս (եր. 142-148). «Մեծ վարդապետն Վանական, իւրովք աշխատութեամբ փորեալ էր իւր քարայրս 'ի կատարս բարձրագոյն քարի միոջ, որ կայ հանդէպ գեղջն, որ կոչի Ոլորուտն, 'ի հարաւոյ կողմանէ Տաւուշ բերդի. եւ շինեալ էր յայրի անդ եկեղեցի մի փոքրիկ եւ անդ դադարէր գաղթութեամբ»: Ապա պատմում է Կիրակոս, թէ քարայրիցս գերի բռնուեցաւ թաթարներից Վանական վարդապետն եւ ինքն, որ աշակերտ էր նոյն Վանականին...:

57) Գիւղս նշանաւոր մարդիկներ տուած է թէ՛ հայ եկեղեցականութեան եւ թէ՛ գրականութեան: Տաւուշեցի էր Յովհաննէս վարդապետն, որ եղած է վարժապետ Գօշ-Մխիթարի եւ քարոզիչ (Կիր., եր. 121): Գիւղիցս էր եւ Վանական վարդապետն, որի իսկական անունն էր Յովհաննէս (Յառաջ., Գօշ., դատ., եր. 85): Գիւղիցս է եւ Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեանցն, որ նշանաւոր է իւր գրականութեամբ:

58) Վանքիս մասին գրած է Կիրակոս (եր. 89-90), թէ Վասակ իշխանն Բագրատունի, «որ

---

1 Առաքել վարդապետ (եր. 193) գրում է «Դաւիթ եպիսկոպոսն, որ էր 'ի Շամքոր ձորէն եւ 'ի ցեղէ իշխողաց, զոր Ղարամանենց կոչեն... 'ի ձոր Շամքոր... շինեաց անապատ, զոր կոչեն Զարեքի անապատ»:

2 Շմեւղ է կոչում բերդս Վարդան պատմիչն (եր. 18):

շինեաց զեկեղեցին հրաշազան 'ի վանքն, որ Անապատ կոչի՝ հուպ 'ի Նոր բերդն առաջնորդութեամբ եւ ձեռնտուութեամբ արքեպիսկոպոսին Յովհաննէսի Տուեցոյ քաղաքին Շամքորոյ եւ Գարգմանայ եւ Երզնկայեցոյն եւ Տկրունականին եւ Տաշոյ...: Եւ աւարտումն եկեղեցւոյն, որ օծաւ եւ կնքեցաւ յանուն Սուրբ Աստուածածնի՝ 'ի ՈՁԹ. թուականին Հայոց»: Երեւի թէ Վարագ անունը ստացած է վանքս Կենաց փայտի այստեղ բերուելուց յետոյ:

59) Վանքիս մասին գրում է Կիրակոս (եր. 122-126), թէ եղաւ սաստիկ շարժ, կործանեցաւ Հին-Գետիկ վանքն, որ կար Կայենի գաւառում Ազատեւ գետի աջ կողմի վերայ: Այնուհետեւ Գօշ-Մխիթարն սկսում է շինել Նոր-Գետիկ վանքը (որ է այժմեանն) Տանձուտի ձորում: Ա. վանքն օծւում է յանուն ս. Լուսաւորչի, Բ՝ յանուն ս. Կարապետի: Ապա գրում է. «Յայսմ ամի (ՈԽԷ.) եղեւ աւարտ հռչակաւոր եւ խնդրատես եկեղեցւոյն (Նոր) Գետկայ, զոր շինեաց վարդապետն Մխիթար իւր միաբանօք ձեռնտուութեամբ Վախթանկայ Խաչենեցւոյ տեառն Հայթերքոյ եւ եղբարց իւրոց Գրիգորոյ եւ Գրիգորիսի եւ Խոյդանայ եւ Վասակայ եւ այլոց իշխանաց բարեպաշտաց որդոց Քրթին Դաւթի եւ Սադունին, նաեւ քոյր նոցա Արզու խաթուն[1] կին Վախթանկա Հաթերքեցւոյ. սա բաղում ինչ օժանդակ եղեւ, (Արզու խաթուն) արար եւ վարագոյր զեղեցիկ գոտերօք իւրովք ծածկոյթ Սուրբ խորանին, զարմանալի տեսողաց. ի մագոյ այծից կակղագունաց ներկեալ պէս-պէս եւ զանազան, գործ քանդակակերպ եւ ներկեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք տնօրինականօք Փրկչին եւ այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն... արար ծածկոյթ այլ եւ այլոց եկեղեցեաց, Հաղբատայ եւ Մակարայ վանից եւ Դատի վանայ... եւ օծեալ կնքեցաւ եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնին»:

60) Ինչպէս տեսանք 51-րդ ծանօթութեան մէջ Երզնկանք բերդս գանւում է Խորանաշատ վանքի արեւմտեան հանդէպ: Երզնկանք եւ Տաւուշ եւ Կածարեթ (գ. բերդ Դբոբկեան, որ է Տկրունական) բերդերս պատկանում էին տեղական իշխաններին, սակայն ենթարկուելով փոփոխութեանց հետզհետէ անցան ձեռքից ձեռք այլ եւ այլ տիրապետողներին, ինչպէս տեսանք բոլոր քաղաքների եւ բերդերի անցքերից: Տաւուշ բերդիս մասին գրում է Անանին (եր. 133). «Ի... շրդ... ամի եկն Զալի ամիրապետն եւ պաշարեաց զՏայուշ գաւուրս խ. եւ էառ զնա հանելով զթագաւորն Աբաս»:

61) Ամրոցս խիստ մօտ է Վարագայ մենաստանին, որի հիւսիսային հանդէպ արձանացած է բերդաքարս, որի մասին գրում է Կիրակոս (եր. 89): «Ընդ սա (ընդ Աղսարթան) խարէութեամբ վարեցաւ Դաւիթ իշխան Նոր բերդին, զի էր եւ նա յազգէ Բագրատունեաց, հայրն Վասակայ իշխանի, որ շինեաց զեկեղեցին (Վարագ)... հուպ ի Նոր բերդն» (որ է Յից քարի բերդն):

62) Անծանօթ են մեզ քարայրիս, ամրոցիս եւ ճգնաւորիս պատմութիւնն, ժամանակն, անունները եւ գործերն:

63) Ազնիւ ընթերցողն տեսաւ, որ անյայտ է Սուրբ Աստուածածին մեծ վանք շինել տուողի անունն, միայն յայտնի է, որ շինուած է Հայոց Շի. եւ Փրկչ. 1071 թուին: Այստեղ ամփոփուած է Խաչատուր Վարդապետ Տարոնեցին, որ մի ժամանակ վանահայր եղած է վանքիս, որի մէջ իսկ յօրինած է Խորհուրդ խորի հրաշալի երգը, որը նախ երգեց Լուսի քաղաքի Զաքարէ Սպասալարի ժողովում եւ ապա՝ վանքումս: Վանքումս ամփոփուած են Անի քաղաքում թագաւորող Բագրատունի թագաւորներից Սմբատ եւ Գագիկ թագաւորների մարմիններն: Սեղանատան մասին գրած է Կիրակոս (եր. 130). «տէր Յովհաննէս Արմանեցին, որ եւ Հաղարծնին էր առաջնորդ... շինեաց ի Հաղարծինն զսեղանատունն երեւելի... Խաչատուր Վարդապետն, եւ եղբայր իւր Բարսեղն (սոքա են մի տապանաքարի տակ հանգիստ եւ զրկախառնուած քնացողներն) շինեաց եկեղեցի մի երեք խորանի հանդէպ վանիցն գմբեթաւոր յանուն սրբոյ Գէորգայ»: Վանքերիս արեւելեան կողմումն է Սուրբ Գէորգ, որ է երեք մատուռներից մին:

64) Նախ հարկ է խոստովանել, որ տկարանում է այցելուի գրիչն նկարագրել ճշտիւ այն

1 Միեւնոյն օրինեալ տիկինն է, դուստր Քրթին, քոյր Դաւիթ եւ Սադուն իշխաններին եւ շինող Դատի վանուց հրաշազան գաւթին:

ամէն քանդակները, նախշերը, ատաղձանների շրջունքների փորուածքները՝ ամէնի առիւծը, որ իւր ճանկերի մէջ ցախջախում է կատաղի ցուլը եւ վերջապէս տկարանում գրիչն ներկայացնել սիրելի ընթերցողաց զեղարուեստի այն ամէն սքանչելի նրբագործութիւնները, որք զարդարուած են տաճարներիս բարերին վերայ:

Երկրորդ՝ Նոր վանքս շինուած է զանազան անձանց մասնաւոր նուէրով:

Երրորդ՝ անյայտ է հին տաճարիս շինել տուողի անունն եւ շինութեան ժամանակն:

Չորրորդ՝ յայտնի է, որ վանքս կրում է Ս Աստուածածին անունը, թէ ե՞րբ փոխուած է Մակարայ վանք կամ ինչ գիպուածից կամ պարագայից ստացած է վերջին անունս, անյայտ է:

65) Որոշակի յայտնի չէ վանքիս շինողի անունն եւ շինութեանն իսկական տարեթիւն, վասն որոյ ոչինչ չունինք ասելու վանքիս մասին:

66) Գաւարգին եւ Գագ բերդերի մասին գրած է Վարդ. Բարձրաբերդցի (եր. 190). «Իսկ Մոլար Նուինն... նախ առնու զՇամքոր Հնարիւք... զՏաւուշ, զԿածարեթ, զՏէրունականն... զՆորբերդն, որ էր Վասակայ թագաւորին եւ զԳաւարգին անմատչելի ամրոցն եւ զԳագ անուանի բերդ եւ զաւառ ի Գակգայ թագաւորէ որ է շինեալ. ուր կար հռչակաւոր Ուխտն յԵրեւանի աշխարհի խաչ եւ եկեղեցի կազմեալ եւ օրհնեալ ի Սրբոյն Մեսրոպայ վարդապետէն եւ թարգմանչէն Հայոց, որ կայ ի Գլուխս եւ Հայի ի զաշան լայնանիստ եւ երկայնատարած եւ զայլ ամրոցս եւ զայրն վիմփոր»: Իսկ 160-161 եր. գրած է նոյն Վար. Բարձ. «Ի ՇՀԹ. թուին.... յորում ժամանակի լցաւ զաշան Գագայ անթիւ եւ անհամար հեծելովք յամենայն ազգաց յանօրինաց հաւաքեալ, որք կամեցան այրել զսուրբ խաչն, որ յանուն զօրավարին Սարգսի: Եւ ի բարկութենէն Տեառն խելացնորեալ կոտորէին զմիմեանս»:

67) Մեր կարծիքը հիմնած ենք հետեւեալ կէտերի վերայ:

Նախ՝ Հնարքով շինուած ամրոց լինելու էր Հնարակերան:

Երկրորդ՝ Միսական Առանի եւ Շարայեան Գուշարայի միջեւ սահման լինելու էր Հնարակերան, որ հաստատուած էր Հայոց Վաղարշակ թագաւորից (Խոր., Բ. գիրք., Ը. գլ.):

Երրորդ՝ Հնարակերա ամրոցն լինելու էր վրացիարնակ եւ սահմանագլուխ Հայոց եւ Վրաց: Հայոց Աբրահամ կաթուղիկոսն է. գարու սկզբում իւր առ Կիւրիոն գրած նամակում թուարկելով Վրաց եպիսկոպոսները եւ եպիսկոպոսանիստ քաղաքները. ի թիւս որոց ասում է. «Խահակ եպիսկոպոս Հնարակերտի» (Ուխտ հատուած բ. եր. 86):

Չորրորդ՝ ակներեւ է, որ էր գարում տեղ չունէին վրացիք Խրամի եւ Զորագետի աջ կողմում:

68) Մարի բոլոր ամրոցներից նշանաւորն է Հանդաբերդն, որի մասին գրած է Ազուանից պատմչի շարայարողն (եր. 273). «Ատրներսէհ շինէ զբերդն Հանդու եւ զապարանս իւր տանէ ի գիւղն, որ կոչի Վակուներ, ուր եւ բազանիքն են արքունականք... Լինին սորա (Ատրներսեհի) որդիք Գրիգոր եւ Ապու-Սէթ. Գրիգոր շինէ զՀաւախաղացին բերդն եւ յայն կողմն ձգէ զձեռն իւրոյ իշխանութեան. եւ Գրիգորի լինին որդիք հինգ, յորոց էրէց որդին Ապուլի սպանանի.. եւ միւս որդին Սահակ, որ եւ Սեւադա կոչեցաւ, այր քաջ եւ յաջող, սա առհասարակ տիրեաց Գարգմանայ եւ Բաւսայ եւ Փառնայ գաւառաց, այլ եւ աւազակապետաց Զորագետոյն բովանդակ եղեւ իշխան»:

Ծանօթութեանցս վերջում յայտնում ենք, որ Սալիան գիւղաքաղաքի հիւսիսային հանդէպ Կուր գետի ձախ կողմում կայ մի աւերակ քաղաքատեղի Ղբբբս-Զրաղ անուն: Աւերակիս ծաւալի մեծութիւնն կարծել է տալիս մեզ, թէ այս եղած լինելու է Փայտակարան քաղաքն, որի հարաւային ստորոտով ի հնումն հոսած է Կուր գետն, բայց յետոյ փոխելով իւր ընթացքը հոսում է այժմ Սալիանի մօտով:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Ազայի շէն 109
Աբլահ 297, 298
Ագուլիս 7, 12, 135, 139, 140, 231
Ադի շէն 315, 316
Ազատ գիւղ 298
Ազոխ 205
Աթաշկեան 40, 48
Աթենաս 48
Աթլի գաւառ 61
Ալազան գետ 14, 33-36, 38, 45, 46, 59, 61, 66
Ալակիւռ դաղ 71
Ալամանց գոմեր 208
Ալանաց երկիր, Ալանք 20, 52, 67
Ալապ - տես Հալեպ
Ալբանիա 33
Ալեա գիւղ 134
Ալեքսանա ղուզուն կարան 229
Ալեւան գաւառ 61, 82, 83
Ալթի աղաջ 36, 81, 85
Ալճարակ լիճ 291
Ալուխանայ շէն 240
Ախնջի գետ 174, 191, 319, 327
Ախտի, Ախտու 36, 38, 40, 41, 66, 71
Ական, Ականայ 186, 265, 267, 270, 309
Աղահէճ 33, 161
Աղաջ-ղալա 191
Աղբերդ գաւառ 59, 142, 145
Աղ-բուլաղ 103, 197, 325
Աղդամ 14
Աղդան սար 190
Աղդաշ գաւառ 59, 142
Աղէքսանդրապոլ 7, 18
Աղթամար 91, 218, 235
Աղիւսաշէն 314
Աղ-Ղոշա 29
Աղ-չայ 78
Աղջա-ղալա 148
Աղջկայ բերդ 81, 96, 211, 230, 224, 327, 342
Աղստեւ գաւառ եւ գետ 34, 46, 172, 190, 332, 334, 341-343
Աղսու 34, 36, 58-60, 85-88, 95, 97, 145, 146, 331
Աղտան 334, 336
Աղուանաձոր 335
Աղուանից դաշտ 25, 34, 37, 61, 101
Աղուանից երկիր, Աղուանք 7-17, 22, 27, 29, 37, 39, 40, 45 53, 58-69, 76, 81, 83, 85, 86, 89, 93-96, 99, 110, 111, 117-119, 121, 124, 127, 129, 130-133, 137, 138, 142, 144, 145, 150, 159, 174, 176, 234, 237, 238, 263, 327
Աղունոյ գետ 33, 161, 202
Աղուէ գաւառ 160, 175, 226, 230
Աղփիլաքեան գիւղ 120, 134
Աղքիլիսա 319, 340
Աղ-օղլան 194
Ամարաս 158, 159, 173, 175, 207, 214, 218, 219, 253
Ամենափրկիչ վանք (Նիւկզարի մօտ) 311
Ամիդ 312, 335, 336
Ամուր աւան 38, 112, 119
Այեալ 122
Այերիանօ - տես Առան
Այտին բուլաղ 134
Անդամէջ 236
Անի 85, 118, 322
Անուզ - տես Հենգուզակ
Անուշ բերդ 138
Աշան 107, 211, 230
Աշուղ-Բայրամ 105
Աշուղի գիւղ 332, 333, 340, 342
Ապահէճ 267
Առան 33, 226, 258
Առաջաձոր 109, 171, 255-258, 263
Առաքել գիւղ 255
Առաքելոց վանք 11
Առոսպիժան գաւառ 61
Ասիա 29, 33, 67
Ասլի Բէկ գիւղ 120
Ասկերան 226, 245
Ասպիսնկայ անապատ 234
Աստապատ 94
Աստրախան - տես Հաշտարխան
Ավանաշէն գիւղ 103
Ատրենիս 309
Ատրպատական 46, 61, 101
Ապաքսուան 312
Ապանոսա 160, 172, 175
Արաշ գաւառ 34-36, 59, 61, 141-148
Արարատ 10
Արարատեան նահանգ 25, 31, 127, 324
Արբաթ գետ 35
Արգաւոն գիւղ 233
Արգն 334
Արգնի 343
Արզրում 91, 137
Արթին երի 79
Արծաթահանք սար 238
Արկազ գիւղատեղի 20
Արկաթալու շէն 228
Արշակաշէն 172
Արչակ գիւղ 19
Արջաբար գետ 170
Արջկան գետ 34, 36, 60, 61, 111, 117, 119, 132, 133, 142, 143, 145
Արտազ 21
Արտամէտ 312
Արտաշատ 21
Արտաշիպ գիւղ 232
Արցախ 7-9, 12-15, 19, 31-40, 49, 53, 58, 59, 69, 70, 72, 78, 80, 82, 87, 89, 92-98, 101-112, 115, 119, 122, 123, 129-135, 140, 157-161, 170-172, 188, 191, 206, 212, 213, 218, 219, 230-233, 237-240, 252, 253, 266, 287
Արութիւնայ սար 293, 306, 307, 315, 326
Արութիւնաշէն 259
Արփա 267
Արփաւուտ 88-90
Աւանեսխոռ 256
Աւան Իւզբաշու բերդ 203
Աւանայ կարան 229
Աւար 23, 24, 27
Աւար Ղոյսու 22-25, 28, 66
Աւետարանոց 92, 97, 103, 104, 206, 208, 209, 211, 230, 287
Աւծոպայ ուխտ 312
Աւշառան (Աւշարան) 34, 43, 61, 78, 81, 82
Ափշերոն 13
Ափիտուլա 186

Բ

Բաբա դաղ 33, 41, 60, 100
Բաբաջան 319
Բաբ էլ Աբուաբ 67
Բագաւան 61, 82, 83, 85
Բագտրիա 46, 51, 190
Բագու 14, 17, 33-48, 72, 78, 82-84, 92, 96-98, 107, 125, 127, 149, 150, 160, 171, 212, 290, 302
Բադրբեօվ 276
Բազարջուղ 123
Բազրկեան 293
Բաթում 83, 84
Բալախանի 42, 43, 90
Բալաքեան 60, 66, 71, 141
Բալլուղայա - տես Բարաթունջ
Բալլուջա 171
Բախտիարի 341
Բահլիան շէն 98, 99
Բաղաեատ 145
Բաղանոոտ գաւառ 61
Բաղասական գաւառ եւդաշտ 33-36, 45, 60, 71, 119, 141, 149
Բաղդատ 312
Բաղշիք (Բախշիկ) 186, 298, 299, 310
Բաղք 51, 193, 256
Բալեաթ 176
Բալեաթ դափու 65
Բանազուր 194
Բանանց 11, 34, 171, 189, 191, 292, 302_307, 315, 319, 341
Բանոր նան 240
Բաշգեղ 318, 319, 324
Բաշլի 29
Բաշլու գիւղ 39
Բաշկեօնուկ աւան 148
Բաշ-Գունգիւտ 148
Բասարկեչար 304
Բասլաց երկիր 67
Բատով (ջերմուկ) 42
Բարկիուշատ (Բարկուշատ) 51, 59, 145, 195, 211
Բարսում 322-324
Բարտալ 115
Բաքանք 46
Բեթ գաւառ 60
Բելուկան 174, 176, 202, 226
Բեխ գաւառ 60
Բերդ 328, 329
Բերդաձոր 9, 159-161, 174, 176, 192, 228, 309
Բերդավանք 194
Բերդաքար 270
Բզովնա 83
Բէկլար Գեանդ 113
Բէշքեանդ 106
Բիլիստան շէն 99
Բինեթլու 193
Բիւրբիւլու 123
Բլբլակ շէն 213
Բլեղ 38, 113
Բլովիկ 325
Բողրխան 216, 263
Բոստանչի գիւղ 76
Բովեր 171
Բջնի 335
Բրաջուր 189, 302
Բրդաճոնջ 206, 230
Բրտանոց 170
Բրտի շէն 291
Բուզովնա 13
Բուլանլուղ 324
Բուխովլու 139
Բուղդալու 170
Բում 4148, 131, 132, 147, 148
Բոզաւանդ 39, 110, 111
Բոզ-դաղ 34, 36, 59-61, 89, 104-109, 111, 117, 119, 124, 125, 142, 145, 149
Բոզլու 178
Բոզլուխ գիւղ 289, 298
Բոլնիս 289
Բորոմ 179

Գ

Գագք 202
Գաթք 46
Գանձակ (Գանջա, Կանջայ) 15, 33-39, 53, 86, 107, 140, 144, 159, 160, 172, 179, 180, 183, 184, 188, 189, 191, 209, 229, 232, 234, 236, 265, 273, 276, 277, 293, 298-306, 315, 323, 324, 330
Գանձակ գիւղ 103
Գանձասար 92, 136, 159, 171, 218, 244, 252, 253, 257, 263, 277, 304, 325, 331, 337
Գառնակեր 321, 322
Գարգար 34, 58, 172, 173, 204, 226, 228, 230, 231, 238, 245, 317
Գարգարք 34, 35, 45, 47, 49, 171, 176, 230
Գարդման 33, 34, 36, 45, 46, 49, 53, 58, 59, 86, 99, 110, 149, 158-161, 170, 171, 173, 234, 261, 283, 293, 307, 314, 315, 323
Գարդման (Գիրդեման) 12, 34, 35, 42, 43, 58-60, 86, 96-100, 105, 110, 146
Գաւ 47, 71
Գեւանանքար 254, 255
Գեղամայ լիճ 316, 326, 309
Գեղամեան լեռներ 161, 173, 174
Գեղարքունիք 11, 34, 287
Գեղաուէ (Գեղաւու) գաւառ 60, 124
Գետաբակ 170, 171, 316, 326
Գետամէջ 186, 267, 268, 301
Գետաշէն 186, 189, 273, 274, 293, 296, 297, 306, 337
Գեօգ-բուլաղ 121, 372
Գեօգչայ գաւառ 38, 60, 110, 144, 288
Գեօզ 207
Գեօյ-բէկլու 134
Գեօյ-բուլաղ 134
Գիշի 214
Գիս, Գիսանի 48, 49, 134, 137, 138, 147, 148, 159
Գիրդադիլ 111, 112, 119
Գիրկ 35, 36, 104, 105

Գիլեաթաղ 271
Գիւմրատեղ 240
Գիւրդա Ծէն 97
Գիւրճվան 43
Գլակայ վանք 330
Գլուխ գաւառ 309
Գղուար(ք) 46, 47, 71
Գոմեր գիւղ 232, 244
Գոմորանց 239
Գողթան 110, 195
Գովջան 43
Գոտանոց 202
Գվեղ 337
Գտիչ վանք 158, 159, 202, 203, 244
Գուգարք 46
Գուսար 35, 36, 41, 44, 71, 72
Գուր գաւառ 69, 71, 77
Գուրջստան 312
Գօշայ վանք 171

Դ
Դադի վանք 158, 265-270
Դաթունա 17, 24, 25, 27
Դահրազ 89, 227
Դահրաւ 241
Դաղստան 17, 18, 20, 23, 27-33, 49, 72, 135, 140, 141, 147
Դամիր բուլաղ 42
Դամիւրով - տես Գեղարդ վանք
Դամպլաձոր 305
Դամուր դափու 67
Դանակերտ 69
Դանիէլ դաշ 170
Դաշբուլաղ 103, 105, 109, 122, 123, 171, 242, 243
Դաշ դափու 65
Դաշտակ 61, 111
Դաշու շէն 227
Դապասարան (Տապասարան, Թաբասարան) 29, 65, 70
Դասան 60, 96
Դաստակիլ 280
Դաստափոր 301, 302
Դատի-բեկանց վանք 285
Դարաբաս 198-241
Դարա-Քարքանջ 89
Դարբանդ (Դերբենտ) 17, 20, 27-41, 46, 49, 52, 60, 62-72, 75, 78, 83, 141, 149, 150, 159, 160, 219
Դարբանդի ծով 44
Դարիալ 66
Դաւաչի 35, 43, 46, 72, 81, 150
Դդում բլուր 315
Դեղձնուտի վանք 11
Դիալլու 42
Դիզակ 96, 97, 103, 104, 114, 158-160, 171, 173, 192, 199, 202, 204, 234, 255, 283, 303
Դիզափայտ 34, 35, 158, 172-174, 203, 204
Դիլիջան 161, 170, 171, 312, 341, 343
Դիլլի 341
Դիպան 139
Դիոի 192, 193
Դիտարան - տես Դիտիւան
Դիտիւան 332
Դիւտական 279
Դող 92, 95, 97, 171, 197-204
Դոնի շէն 276, 279, 280
Դոստլու 337
Դոքնկեանայ բերդ 329, 342
Դոնավարգ 110, 227, 228
Դվալանոց 309
Դվնիկ 330
Դրագետ 240
Դրազարկ 182, 240, 300
Դրախտիկ 104, 204, 207
Դուարի 96
Դուպարա-դափու 65
Դուրկան (Դուրկեան) 34, 38, 41, 112, 114, 131, 144, 145
Դօնդարա-չայ 97

Ե
Եալ-բուզ 33
Եաղուբլու 116
Եանշաղ 173, 263, 365
Եարմջան 178
Եգիպտոս 42, 335
Եգնարածանց 267
Ելենդորֆ 189
Ելիսաւետպոլ 172, 186
Եկեղեցաձոր 202
Եղակեր 186, 282, 283
Եղեգիս 127, 266
Եղիշ Առաքեալ (Զրվշտիկ) վանք 281, 282
Եղնասար վանք 296, 330
Եղջերուասար 341
Եղցաթումբ 274
Եմիշջան 230
Ենիղափու 65
Ենիջա 265
Ենկիջա 217
Երասխ (Արաքս, Արազ) 33-37, 46, 61, 89, 101, 161, 172-175, 192, 202, 283
Երգեվանք 341
Երեւան 91, 185, 265, 334, 343, 310
Երեւանցւոց թաղ 179
Երի Հոուաթաղ 259
Երից մանկանց վանք 183, 275, 280
Երնջակ 294
Երուսաղէմ 180, 183-187, 338
Եւթնփորակեան բաց. 61, 82, 83
Եւլախ 176
Եւրոպա 29, 31, 33, 67, 135, 160
Եփրատ գետ 309
Եուղունիկի կարան 229

Զ
Զակամ 34, 172, 190, 191, 232, 305, 318, 319, 326, 330
Զայզիտ 134, 137, 147, 148
Զանգեզուր 103, 104, 109
Զառափ 116
Զառ-Զբիլ 174
Զառիստ 58, 171, 174, 202, 229
Զարզբիլ 288
Զարխու շէն 93, 95, 96
Զարկեարան 42, 43, 98, 99
Զարղուն 33, 34, 36, 49, 60, 61, 125, 133, 147, 148
Զաքաթալա 37, 60, 139, 140
Զաւէ 159, 160, 171, 174, 337, 343
Զէյուա 79, 280
Զինաւոր 226
Զիրա 44
Զմիւռնիա 7
Զողայ 62
Զորայ 62
Զուլեան 111
Զուռնաբաղ 300

Է
Էիբլօղա 186
Էլբրուս 33
Էջմիածին 7, 10, 69, 91, 92, 115, 129, 136, 186, 187, 205, 232, 234, 236, 297, 330, 335, 345
Էրմանի բազար 143, 144
Էրմանիտ 132, 147, 148
Էրբաջ 289
Էօլմազ 116

Ը
Ընեցիք 197
Ընկուզուտ 190
Ըշխնեցէք 205
Ըմբի խոռ 33, 161
Ըռնաւա 277
Ըռստակ 158-160, 173, 263, 283, 293
Ըռուշանայ շէն 106
Ըռուսաց երկիր - տես Ռուսաստան
Ըստաթէի վանք - տես Տաթեւ
Ըստիսական 173

Թ
Թաթլու 330
Թալա 139, 141, 148
Թալաբի 42, 71, 76-78, 80
Թալաստան 148
Թալիշ 96, 97, 173, 200, 277-279, 286
Թաղասեռ 89, 175, 195, 196, 234
Թաղավարդ 104
Թաղլար 89, 103, 104, 198, 202, 203-206
Թաղոտ 198, 201
Թամիր խան-Շուրա 18, 28, 30, 32
Թամցի Եղցի 240
Թանդիրլու 170
Թառնագիւտ - տես նաեւ Տիգրանակերտ 172, 175
Թարգմանչաց վանք 11, 158, 306, 308, 309
Թարթառ 132, 158, 173, 176-178, 238, 245, 259-269, 275-284
Թարսայ գետ 327, 337, 342
Թավրէզ 91, 183, 188, 212, 234, 295, 312
Թաւուզ 234
Թեոդան 289, 290
Թէհրան 150
Թէոդոսիա 231
Թլեթուտ 186
Թիփլիզ - տես Թիֆլիս
Թիքեանլու 148
Թիֆան դաղ 33, 35, 40, 44, 66
Թիֆլիս (Տփխիս) 7, 8, 19, 26, 28, 34, 35, 38, 39, 86, 95, 101, 140, 150, 160, 187, 195, 219, 276, 287, 293, 303, 305, 306
Թխախոռ 259
Թոսիկ շէն 114
Թովմա Առաքեալի վանք 7
Թովուզ (Թոուզ) 12, 14, 170, 174, Թոփրաղ դալա 191
Թրղի 173, 263, 264, 280, 283, 284
Թուբի շէն 103
Թունիլար 139
Թօփեր շէն 116

Ի
Իկոնիոն 188
Իղրի 38
Իմերէթ 184
Ինը Մասանց անապատ 12
Ինի-Սելու 41
Ինջայ 285, 292
Ինջիլլու 121, 123
Իջեւան 11
Իվանովկայ 39
Իտելեցիք 197
Իրիցի շէն 325

Լ
Լաբան 9
Լալի գիւղ - տես Աշուղի գիւղ
Լաճին 41, 46, 60, 81, 96, 99-101
Լամբրուն 181
Լաչին դալա 337
Լար 101
Լաքի 144
Լիտր 287
Լոր 205, 286
Լփինք 41, 46-50, 64, 97, 78, 81, 82, 85, 149, 150
Լոռի 19

Խ
Խադարի վանք 309
Խազազ 211, 218
Խազիրք 18, 27, 28, 50, 52, 53, 58
Խազնա-դաղ (Դանձասար) 146
Խազրաց ծով 44
Խաթրայ բերդ 263, 269
Խաթրայ վանք 171, 260, 263, 265, 267, 268, 276
Խալթան 36, 41, 44, 80, 81, 142, 143
Խալխալ (Խաղխաղ) 148, 190
Խամշի վանք 159, 171, 318
Խանագեալ 38, 111
Խանածախ 116, 239, 240, 264
Խանաբատ 142, 245
Խանասար 142
Խանաւատ 36
Խանի շէն 89
Խանձաձոր 217
Խանձք (Խանցկ) 95, 105, 106, 109, 171, 242, 243
Խանքեանդ 188, 238, 239
Խաշնի 79, 80
Խաչակապ 292, 307, 309
Խաչաղբիւր 329, 307
Խաչբուլաղ 331
Խաչեն 58, 78, 85, 95, 97, 98, 104-123, 128, 130, 134, 142, 144, 158-160, 171, 173, 200, 230, 232, 238, 243, 244, 252-258, 262-266, 270, 279, 283, 295, 303, 309, 332, 333
Խաչենաբերդ 265
Խաչենագետ 34, 172, 238, 244, 245, 254

Խաչենաձոր 287
Խաչթառակ 334
Խաչխոռհատ 273
Խաչկեադուկ 286
Խաչմաչ 211, 212, 232
Խաչմաս 35, 38, 73, 74, 78, 147, 148
Խարմանջուղ 197
Խեճի գաւառ 61, 119, 149, 150
Խերխան 216, 218
Խիզան 9
Խինալուղ 40
Խլաթայ գաւառ 331
Խնածախ 85
Խնձորաբակ 261
Խնձորեսկ 103, 207, 217
Խնձորստան 109, 243, 244
Խնուս 96
Խնօ 38
Խոզանագետ 202
Խոթավանք 170, 171, 265
Խոխանաբերդ 122, 254, 263
Խողմաղ 61, 111
Խոյ 117, 120, 121, 135, 143, 150, 188, 240, 245, 298
Խոյլըլար 188
Խոշաւատ 110
Խոշկաշէն 12, 38, 114
Խոջալլու 242
Խոսրով բերդ 117
Խոտորաշէն 265, 293
Խորանաշատ 158, 325, 327
Խորասան 312
Խորոզլու 177
Խորուագետ 309
Խտըր-Զնդան 83
Խրամ 14, 33, 37, 46, 161, 174
Խրամորթ 245
Խրաւանդ 242
Խրխափոր 11
Խրսան 47
Խցաբերդ 228
Խուժաստան 91
Խունիսայ վանք 320
Խունկըթալա 260
Խունձախ 20, 23, 24, 28
Խուտափիրին 192, 193

Ծ
Ծակառաշէն 186
Ծակուռ 197, 198
Ծաղկագուզ 332
Ծաղկավանք 197, 198
Ծաղկոց վանք 321
Ծամձոր 193, 194, 265
Ծառեխ 217
Ծար 33, 34, 115, 159-161, 170-174, 182, 267, 274, 283, 294
Ծափանիս 115
Ծիրանաւոր 322
Ծիրիկ 114
Ծմակաճող 171, 255, 257, 263
Ծոպ 312
Ծովատեղ 97, 213-216, 266
Ծովդէայք (Ծաւդէաց, Ծովդէից) 46, 49, 50, 53

Կ
Կազբեկ 33, 283
Կալա-բաթա 111
Կալեր 309
Կալ-տակ 38, 133
Կախան 206
Կախաւան 34, 41, 42, 45, 49, 60, 66, 133, 138-141, 149, 150
Կախեթ 27, 96, 97, 160, 183
Կածարէթ 329, 341
Կաղզվան 40
Կամբեճան 60, 139
Կամիճիկ 47
Կայեն 14, 15, 33, 34, 101, 122, 161, 174, 283
Կայթաղ 29, 66, 70
Կանաչաւոր 267
Կանգարք 34
Կաչաղակաբերդ 262
Կապաղակ 60, 113, 115, 116, 124, 131, 136, 147
Կապիճան 60, 139
Կապկոհ 33
Կապտավանք 11, 329
Կապրիստան 59, 85, 86
Կասպք 47, 49, 50, 53, 82
Կասպից ծով 27, 28, 33-36, 39, 40, 44-46, 59, 61, 72, 81-83, 283, 309
Կարկաժան 238, 239
Կարմախան 45, 101, 150
Կարմիր աղբիւր 328
Կարմիր եկեղեցի 120
Կարմիր վան 41
Կարմիր վանք 9
Կարմիր քար - տես Արութիունաշէն
Կարմրագել 108
Կարմրագուճ 196
Կարվանսարա 334, 336, 342
Կաւաք 158, 197
Կաքաւաբերդ 205
Կաֆայ 102, 231, 294, 296
Կեամրիս (Կամրիս) 334, 343
Կեաւուր ղալա 99, 130
Կեարդանա 101
Կեղուայձոր 236
Կեռստավանք 315
Կեսարիա 277
Կեփաս - տես Ալհարակ
Կեօրազլար 148
Կիլիկիա 240
Կիլհին 35
Կիշի 104, 106, 230
Կիչան 270
Կիսապատ 186
Կիրանց 307
Կիւզոան շէն 105
Կիւլամբիւր 312
Կիւլլուդաղ 121
Կիւլստան 98, 159, 173, 278, 283-285, 292, 323, 334
Կիւրճստան - տես Վրաստան
Կից գիւղ 236
Կղարծի 92, 211, 217, 264
Կոթ 320, 337
Կոխմուխ 147, 148
Կոկիսոն գաւառ 60, 101, 107, 110
Կոկիսոն գետ 34, 36, 39, 42, 45, 59-61, 107, 111, 112, 119, 124, 131, 142, 145, 149, 150
Կոհկաֆ 33
Կողբ 40, 171, 199
Կողթ 161, 171, 172, 189, 190
Կողոնիա 127
Կոճողուտ 258, 259
Կոշիկ անապատ 287
Կոստանդնուպոլիս 7, 231
Կովկաս 29, 97, 110
Կովկասեան լեռ. 27, 33-39, 45, 46, 48, 51, 60, 65, 66, 68, 71, 72, 80-85, 88, 96, 98, 111, 124, 127-133, 138, 139, 141, 150, 161
Կոտայք 13
Կոզէն 191
Կուլաթաղ 186
Կուսապատ 125, 271-273, 323
Կուր 28, 33, 36, 40, 45, 46, 59, 61, 89, 101, 119, 142, 145, 146, 149, 158, 161, 171, 172, 174, 179, 189, 191
Կուրակ 34, 172, 173, 188, 189, 289, 290, 293
Կուրդալան 83
Կուրջիվան 97
Կուրու 38
Կօկթափա 186
Կօրիս 174

Հ
Հաբանդ 59, 142, 173
Հաբանք 59, 142
Հադրութ (Հատրութ) 89, 92, 97, 103, 104, 110, 194-197
Հազարագետ 202
Հազրա 131
Հաթամ բուլաղ 121
Հաթերք 11, 173, 186, 199, 261-266, 270, 297, 298, 338
Հալէպ 312
Հախում 330
Հակառակաբերդ 268, 270
Հակարի 14, 33, 35, 158, 161, 172, 174, 193
Հաղարծին 171, 187
Հաղբատ 11, 159, 268, 295, 304
Հաճիլար 174
Հաճի Կարամ - տես Զալապլար
Հաճիշէն 186
Հաճի սամլու 174
Հաճիքեանդ 298, 299
Համասրապակ 186
Համբասի 59, 146
Համզա սար 333
Հայաստան (Հայք) 8, 10, 11, 17, 22, 27, 29, 32, 45, 47-49, 67, 139, 140, 144, 186, 218, 219, 236, 238, 330
Հայկազն 205
Հանդաբերդ 262, 265, 267, 309
Հանի 61
Հաշտարխան 18, 44, 78
Հաշու 59, 85
Հաչաջուր 334, 341
Հաջի Կաբուլ 41
Հառինջ 127
Հասան 34, 170, 329-331
Հասանղալայ 115
Հասանղայա 177
Հատիս 186
Հարար 97
Հարաւ 216
Հարթապտուկ 274
Հարճլանք 159, 160, 174
Հարցիանգիստ 183, 184, 189, 309, 310, 316, 324
Հացի 104
Հացոտ 123
Հաւայտուն - տես Հենգուզակ
Հաւապտուկ 122, 254, 255
Հաւարիկ 119, 142
Հաւթասիով 41
Հաւքախաղաց 262, 265, 269
Հաքարի 202
Հեճար 59, 146, 147
Հեճմատակք 46, 47, 71
Հենգուզակ 109
Հեջար 59
Հերմինի վանք 324
Հեփթաղք 47
Հիլիս 243
Հին Առաքել 193
Հին Գետաբակ 319, 320
Հին Գետիկ 341
Հինզար 285
Հին Թաղլար 193
Հին Խրխափոր 285
Հին Ղարաբուլաղ 290-292, 302
Հին Մոխրաթաղ 272, 273
Հին Շարխաչ 340
Հին Պարիս 289
Հին Փիփ 314
Հին Ռեաթուկ 211, 226
Հիրոեր 158, 213, 214, 218
Հիւնի խաչ 245
Հիւնոտ 228
Հիւրեկայ վանք - տես Հոռեկայ վանք
Հիւքիւրաթաղ 197, 203
Հկակու շէն 198
Հղորդի 104, 109, 110, 216
Հնարակերտ 33
Հնդկաստան 40, 48
Հնդար գիւղ 97, 98
Հողաբերդ 191
Հողի գաւառ 61, 111, 113, 149, 150
Հողմաղ գաւառ 61, 111
Հոմէնք 48, 49
Հոնք (Հոնաց աշխարհ) 27, 32, 46, 52, 67
Հոռաթաղ 272
Հոռեկ (Հոռեկայ) վանք 158, 278, 279
Հոռոմաշէն 311
Հոռոմոս 295
Հոսաբակ 309
Հովուի սար 175, 337
Հոփսիմէ վանք 322
Հրեշտակապետաց վանք 321
Հրէից աւան 62
Հունոտի կարան 228

Ջ
Ջորագետ 34, 161, 172, 174

Ղ
Ղաբալա (Ղապալա) 35, 37, 41, 48, 49, 66, 107, 119, 124, 125
Ղաբաղ թափէ 315
Ղաբարթու - տես Մեղրակեր
Ղազախ 35, 36, 53, 172, 174, 191, 192, 320, 332, 342, 343
Ղազանիշ 20
Ղազանչեցոց 12
Ղազանչի 191, 195, 198, 231, 238, 245, 270, 271
Ղազի-Ղումուխ 29

Ղազուին 312
Ղալաբոյուն 119, 326
Ղալադարասի 9, 174
Ղալակեայ 105, 109
Ղալա-ղափու 65
Ղալաղշլաղ 174, 265
Ղալաչա 292, 320
Ղալաջուղ 131
Ղալին-խուլ բերդ 230
Ղալի Ղումուխ 28
Ղահտուլ 286
Ղահրիլար 177, 178
Ղայաբաշի 117, 150
Ղայիբալի 238
Ղանլու ղոբի 141
Ղանղալ 326
Ղապալա 23, 60, 148
Ղաջար շէն 96
Ղասմքեանդ 20, 36, 71, 85
Ղաւախան 97, 216, 217
Ղարաբաղ 8, 11, 15, 58, 115, 125, 171, 174, 212, 238, 287, 288, 293, 298
Ղարաբուլաղ 208, 289, 317
Ղարադաղ 22, 35, 188, 193, 194-198, 205, 211, 226, 243, 271
Ղարադաղլու 188
Ղարա-դարա 123
Ղարալի 208
Ղարա խաչ - տես Սեւ խաչ
Ղարաղաճ 40
Ղարաղայա 327
Ղարաղան 93
Ղարա-Ղոյսու 28
Ղարա-ղոյունլու 119
Ղարամանլու 177, 178
Ղարամուրատ 304, 306, 324, 330
Ղարաչայ - տես Սեւ գետ
Ղարաչինար 286
Ղարաքեշիշ ղալա 111
Ղարուն 93
Ղափան 11, 193, 196, 217
Ղափանլու 189
Ղեւոնդեանց անապատ 159, 207, 208
Ղզլար 18, 20, 27, 54, 69, 78, 80
Ղզղալա - տես Աղջկայ բերդ
Ղզբլղայա 119
Ղզբլբիլիսա 319
Ղզմեյդան 82, 85
Ղլիջբաղ 245
Ղշլաղ 105, 109, 245
Ղշլաղ-Բունգիւտ 134, 148
Ղոբա 226
Ղոգանայ շինատեղ 329
Ղոզլու 35, 119
Ղոզլու չայ 85
Ղոշուն 59
Ղոջաբեկլու 126
Ղոուշ 38
Ղրիմ 294
Ղրխբուլաղ 334
Ղրխլար 68
Ղրխլար ղափու 65, 68
Ղրղի 327
Ղուբա 34-48, 54, 63, 66, 71-79, 83, 150, 160
Ղութղաշէն 23, 66, 136, 147, 148
Ղուլալի 324 326, 341
Ղում 139, 148
Ղումուխ 66.
Ղունիբ 20, 23, 28
Ղուշչիլար 194
Ղուրա 54
Ղուրու չայ 35, 172-174, 197, 202-205
Ղօշայ վանք 337
Ղօշաջի 325

Ճ
Ճաթղոան 310
Ճալէթ 38, 127-130
Ճարակոյս 197
Ճար 36-38, 49, 60, 66, 101, 139-141, 149, 150
Ճարո-Բելաքան 60, 71
Ճարտար 89, 97, 103, 104, 107, 230, 264
Ճիղբ 46, 47, 49, 53, 72, 78, 80, 81, 149
Ճոխ 22
Ճոխանց 309
Ճորայ քաղ. 62
Ճորայ կապան 32
Ճչաքար 342
Ճոբվիզ 310

Մ
Մազան Նանէ 193
Մազրա 34, 228
Մազրոլու 142, 143
Մազբթաց աշխարհ 27, 70
Մազբթաց ծով 44
Մազբութք 46, 49, 50, 53, 62
Մաթոսի գիւղատեղի 344
Մալական 186
Մալբել 126
Մալղ 134, 138, 14, 148
Մակարավանք 11
Մահմնա 186
Մահրաւ 205
Մաղայոզ 232
Մաղավուզ 265, 274-276, 279, 327
Մաճակ 71
Մամասէի վանք 213
Մամատաձոր 197
Մամոուտ 190, 326
Մամրթլու - տես Մամոուտ
Մայմեխ 341
Մայրաքաղաք 259, 283, 295
Մանաձկերտ (Մանազկերտ) 338
Մանաշիթ 289
Մաշադի շէն 216
Մաջան 54, 80
Մասազի 83
Մասիս 21, 264
Մատաթ-քեւանդ 208
Մատաղիս 260, 261, 279
Մատրասա 12, 43, 90-94, 150
Մարազա 38, 85
Մարալեան 171
Մարալեան Սարով 177, 178
Մարաղա 177, 178
Մարանդ 188
Մարդակերտ 272
Մարեւկա 85
Մարզպանեան 60
Մարսան 42, 139, 149
Մարտունի 11
Մարք 51
Մաւաս 211, 213
Մեժլիս 120
Մելիքգատա 305, 319
Մելիքջանլու 196
Մեծարանք 173
Մեծ Իրանաց վանք 262
Մեծ-Իրանք 173
Մեծ Թալատան 111
Մեծ-Կողմանք 27, 158, 173, 295
Մեծ Կուէնք 173, 181
Մեծ Վարամուրատ 318
Մեծ-Ղոզլի 123
Մեծ Մազրա 287, 288
Մեծ շէն 102, 186, 243, 264, 273, 274, 276, 280
Մեծ Սադիր 170
Մեծ Սեոգիթլու (Սօկուլու) 115, 136
Մեծ Սիւնիք 198, 205, 239, 240
Մեղրակեր 271
Մեղրի 231
Մէհմանայ 170, 271
Մէյսարի 92
Մէյտի շէն 240, 241
Մէյսարի 45, 86, 93
Մթկուարի - տես Կուր
Մթնաձոր (Ղարանլուխ դէրէ) 264
Միլին դաշտ 172
Միլին քաղ. 195, 196
Միհրաւան 58
Մինկեաչեւիր 179
Միջագետք 335
Միրզաբէկլու 126
Միրզիկ 186, 189, 301, 302
Միրիշալլու 227
Միրի շէն 92
Միւս-Հաբանդ 173
Մլզնաբերդ 158, 183, 184, 309, 310, 315, 323, 324
Մհակ սար 300
Մշահանի վանք 269
Մշկապատ 101, 218, 230
Մոգաց երկիր (Մոկք) 91, 117, 235
Մոգդոկ 19, 54, 80
Մոլլա-դարա 123
Մոլլա-Խալիլ 62
Մոխրաբակ 266
Մոխրաթաղ 183, 186
Մոխրենիս 11, 198, 201-203
Մոկք 301
Մոշ-Խմնատ 103, 207, 208
Մոսկվա 10, 49, 88
Մովսէս 191, 327, 328
Մորոնորոյ վանք 334
Մամնայ 212, 216
Մուռ 34, 173, 174, 263, 280-284, 292
Մոուր 299, 300
Մոուտ անապատ 180
Մրնաւան 51
Մրղուզ 170, 337
Մրջման 262, 274
Մրցունիս 186, 297
Մուխանց 38, 147, 148
Մուխանք 172, 175
Մուղան 35, 160, 169, 172, 175, 218
Մումպարաք 142
Մուսկուր 70
Մուրատխան 106
Մուրզախան 20

Յ
Յիրեր 97, 104
Յնդուսար 198
Յոնաց աշխարհ 231
Յովհաննէսի բերդ 203
Յունաց աշխարհ - տես Յունաստան
Յունաստան 29, 48, 102

Ն
Նախիջեւան 40, 91, 94, 142, 232, 288, 294
Նախիջեւանիկ 109, 226
Նանենց 117
Նաղարա-թափա 121
Նաղլըջա 120
Նատարի ղալա 263
Նարին ղալա 64, 65, 315
Նաւուր 328
Նաւուրայ-ջուր 170
Նեմիթապատ 144, 145
Ներսմիհրի վանք 281
Ներքին Աղդան 336
Ներքին Թաղավարդ 206, 207, 230
Ներքին Ղոթիլ 323
Ներքին Ճամբարակ 337
Ներքին շէն 227, 235, 286, 289
Ներքին Զայլու 276
Նիժ 36, 114, 126, 128, 131, 136
Նինկի 103-107, 217
Նիւկզար 310, 312, 315, 323
Նովուր 44
Նովուր-ղշլաղ 136, 148
Նովուր-ճլակ 80
Նորագեղ 245, 324
Նորաշէն 105, 194, 286, 292, 305, 327, 328
Նորաշէն (Գանձակ) 179, 185, 188
Նոր-Առաքել 192, 193
Նորավանք 300
Նոր-բերդ 331
Նոր Գետաբակ 320, 321
Նոր Գետիկ 338
Նոր-Գրախտիկ 206
Նոր-Խաչմաս 74
Նոր Խրխափոր 285, 286
Նոր Ղարաբուլաղ 292
Նոր Մոխրաթաղ 273
Նոր Շէն 98, 130, 265
Նոր Պարիս 289
Նոր Ջուղա 93, 94
Նոր Սարաթովկա-տես Փնտխլու
Նոր Վարագ 11
Նոր Փիփ 312-314, 323
Նոր Քեաթուկ 226
Նուխի 18, 34, 36-39, 41, 49, 60, 133, 141, 142
Նուկզար 13

Շ
Շաբրան (Շաբորան) 34-36, 72, 78
Շակաշէն (Շիկաշէն) 160, 161, 172, 179, 188, 189
Շահբուլաղ 172, 175
Շահբունեաց գաւառ 232
Շահդաղ 33, 39-41, 72, 132, 283
Շահկերտ 294
Շահմասուր 255
Շահնաբաթ 40

Շահ-Փեքար 191
Շաղախ 193, 203
Շաղուագ 267, 309
Շամախի 7, 10, 13, 17, 19, 33, 34, 37-48, 53, 58-60, 69, 72, 78, 80-96, 101, 107, 110, 126, 141, 143, 146, 149, 150, 160, 174, 232
Շամիրամակերտ 19
Շամխալ 18
Շամշադին 172-174, 305, 342
Շամքոր 34, 172, 189, 190, 293, 310-323, 326
Շատախ 330
Շաւաշական գաւառ 21
Շաւշ 91
Շաքար բէկ գիւղ 330
Շաքէ (Շաքի) 38, 42, 48, 49, 53, 60, 66, 86, 101, 107, 110, 111, 117, 126, 130, 134-140, 143, 144, 147, 149, 150, 160, 232
Շեխեր 205, 206
Շէյխ Լալա 110
Շէյխ Շալբրուս 33, 39, 40
Շիլեան 145
Շիլտի 38
Շիկաբար 262
Շիմար երի - տես Ցոի
Շիրակ 31
Շիրազ 190
Շիրին բուլաղ - տես Կարմիր եկեղեցի
Շիրուան (Շրուան) 29, 59
Շիքիւրչի շէն 105
Շլորուտ 327
Շխմուրատ 11, 158, 330, 331
Շհրատեղ 240
Շմեղ 319
Շնաթաղ 236
Շնքար 201, 342
Շորաղբիւր (Շորբուլաղ) 107, 123
Շոութ 235
Շուլաւեր 265, 274, 318
Շուշի 7, 8, 10, 12, 15, 23, 34, 73, 92, 171, 174, 175, 191, 211, 212, 219, 226-230, 236-239, 244, 263, 269, 273, 280, 287, 305, 327, 337
Շուշուասար 228
Շուքավանք 264
Շօշ (Շօշու գիւղ) 103, 104, 228, 304
Շօշկայ վանք 212, 216

Ո
Ողեր 197
Ոսկանապատ 186, 189, 300-304, 315
Ոսկեպար 320
Ոստան 58, 85, 96, 274
Որդնաշատ 175, 195, 196
Որմսդպերոժ 61
Որշատ 107
Որոտեան (Որոտան) 205, 286
Որվան 205

Չ
Չաթախ 170
Չալապլար 193
Չալդաղ 317
Չախաջուղ 35, 78
Չայքեանդ 117
Չանաղ բուլաղ 112
Չանկեալ 123
Չարաբերդ 123, 173, 181, 183, 200
Չարեբայ վանք 158, 234, 302, 320, 326
Չարեք բերդ 314, 316
Չարղաթ 123, 142
Չարտախ 186
Չարտախլու 324
Չափարի դալա 292
Չափար 265, 269, 270
Չափնի 73
Չաւդաո 189
Չիլքինլու 325
Չինաստան 178
Չինարի 325, 331
Չինչին 329
Չող 46, 47, 49-51, 62, 63, 66, 71, 72, 114, 130, 159
Չոմախլու 119
Չոր 64
Չորաթան 319, 327, 328
Չովդաո-տես Հարցիանգիստ
Չուխուրեուրդ 85

Պ
Պազկանք (Պանձկանք) 173, 174, 192
Պալլուջա 105, 239, 240, 301, 303
Պայեաթ 63
Պանդ 298
Պանդալիոն վանք 299, 300
Պաշնճաղ 36, 114, 123, 128-130, 134, 141, 142
Պապարաթմա 141, 143
Պառաւաթումբ 217
Պառաւաքար 330
Պատի գեղ 324
Պարախ 76
Պարսկաստան (Պարսից երկիր) 34, 48, 51, 53, 67, 83, 86, 93, 94, 117, 135, 160, 178, 192, 207, 211, 226, 228, 234, 264, 271, 276, 283, 297, 324, 334
Պարտաւ 63, 115, 159, 176, 177, 232, 276
Պետերբուրգ 8, 18, 20, 21, 31, 85
Պետրովսկ 17, 18, 22, 25, 28, 30
Պերոզապատ 46
Պէշդեենա գոմեր 185
Պիան 160, 172, 175, 192, 206
Պիժանիանի (Ատր-պեջան) 61
Պլեթանց 196
Պղնձահանք 217
Պողրխան 211, 227
Պոնտոս 309
Պպէն շէն 244
Պտգեսբերք 159, 244, 262, 310
Պտէզ 130, 137, 147, 148
Պտկաթաղ 198
Պտրէցիք 11, 241, 242, 262
Պօղոս բուլաղ 63, 71
Պօղոս քիլիսա 174, 343, 344

Ջ
Ջաբրայէլ 172-174, 192, 193, 229
Ջաբանի 85
Ջալալ Հասան 240
Ջալէթ 159
Ջակիր 323, 324
Ջաղացներ 208
Ջամիլլու 239
Ջանեաթաղ 186, 270, 271
Ջանհասան 240
Ջառչի դափու 65
Ջարկեալար 188
Ջաւանշիր 9
Ջաւատ 61
Ջափարաւատ 121, 134, 150
Ջիզիրա 91, 312, 313
Ջիլան 193
Ջիմի 42
Ջիւվջամիշ 120
Ջոխտակ եղցի 207, 262, 321, 343, 344
Ջոխտ Պոլվածառ 207, 208
Ջողու 126, 130, 148
Ջովլան 130
Ջրաբերդ 97, 98, 103, 104, 107, 109, 112-117, 120-125, 130, 134, 158-160, 170-173, 181, 213, 226, 228, 238, 240, 263-265, 270, 279, 281, 283, 284, 288, 293, 294, 296, 303, 324, 332-334, 341
Ջրաբերդի անապատ 11
Ջրագող բերդ 119
Ջրակոյս 197
Ջրվշտիկ վանք 132, 158, 186
Ջուանշիր 172, 173
Ջուղա 91

Ռ
Ռանի - տես Առան
Ռաշտի ծով 44
Ռեւ 245
Ռեւազլու 333, 334
Ռմբասար 170, 174
Ռոճա 22
Ռոտիբաղա 61
Ռստակ 174
Ռոցպատեան 160, 172, 175
Ռուշանաշէն 38
Ռուսաստան (Ռուսիա) 26, 54, 63, 70, 71, 73, 77, 80, 83, 85, 96, 136, 160

Ս
Սաբաթլու 123
Սաբեթ կէչմազ 317
Սալա 337
Սալեան 61, 83, 92
Սալթի Ղոյսու 28
Սալմաստ 91, 312
Սալն անապատ 237
Սահան (Սոհան) 49
Սաղեան (Սաղիան, Սալեան) 7, 10, 13, 40, 45, 46, 48, 86, 87, 93-95, 98
Սամուր35, 38, 41, 63, 70, 71
Սանահին 11, 97
Սարաֆան 54, 80
Սարգսաշէն 208
Սարդարաշէն 245
Սարի շէն 193
Սարհատլու - տես Խաչթառակ
Սարմատք 46
Սարով 178, 188
Սարսանք 276
Սարուշէն 211-213
Սարուճա (Սարուջա) 36, 61
Սաւալան 62, 283
Սաւեանկա 321
Սեաւ այգի 171
Սեւան 304
Սեւաստ (Սեբաստիա) 91
Սեւ գետ 34, 78, 285
Սեւ խաչ 326
Սեւ ծով 27, 33, 39, 66, 83
Սեւորդեաց լեռնաշղթա 36
Սեւ ջուր 119
Սեւ քաղաք 42, 83 84
Սեւ քար 193, 341
Սզնէք 211
Սէյսուլան 178
Սէյդիշէն 78, 244
Սիբիրիա 38
Սինեւ 65
Սիսական 174
Սիսական Ոստան 174
Սիսեան 11
Սիրթենգիջա 113
Սիւնիք 35, 70, 73, 207, 217, 256, 267, 274, 282, 300, 304, 308
Սխտորաշէն 211, 213
Սկեւռայ 181
Սղնախ 139, 140, 211, 325, 342
Սոթ (Սոթք) 14, 33, 228, 267, 309
Սոլթան Նուխի 113, 125
Սոլթան-պուտ 176
Սոկութլու (Սօկիւթլու) 12, 123
Սողոմոնի Շէն 227
Սորուջա 120
Սոֆուլու 14
Սպահան (Ասպահան) 91, 150
Սպանդարանպերոժ 61
Սպիտակ գետ - տես Աղսու
Սպիտակ խաչ վանք 158, 159, 194
Սպիտակ հէօլ 226
Սպիտակ տղա 194
Սպիք 71
Սոի գիւղ 333, 337
Ստամբուլ (Ստամբոլ) 91, 312
Ստեփան երի 79
Սրաշէն 265
Սրհան 130, 131
Սրվեղ 333
Սուլակ 28
Սուլթանէ 319
Սուլտանեցիք 304
Սուլտուզ 121
Սուլուլ քար 244
Սուլուք (Սուլուկ) 186, 189, 297-299
Սուղայիդ 35, 46, 59, 81, 83, 85
Սումին 265
Սուրախան 40, 43, 48, 61
Սուքման - տես Սուղայիդ
Սօս 103, 218, 219

Վ
Վայկունիք (Վակունիք, Վակունիս) 115, 159-161, 174, 202
Վահանայ վանք 51
Վաղադնագետ 202
Վաղազուն 327
Վաղահաս 9, 259-261
Վաղարշապատ 8, 185, 186
Վաճառ 255, 257
Վայոց ձոր 11, 267
Վան 19, 91, 232, 264, 297, 312, 335
Վանդամ 131, 147, 148,

Վանեսայ սար 198
Վանքաշէն 12, 38, 39, 107, 108, 110, 112, 254, 255, 258, 259
Վանք գիւղ 107, 171, 186, 194, 203, 255, 259
Վանքասար 125, 175
Վանքատեղ 120, 121
Վատն 47
Վատնեան դաշտ 34, 36, 37, 51, 62, 63, 71, 72, 74, 149
Վարագայ վանք 19, 158, 171, 297 301, 331, 342
Վարագաբուն 211, 226
Վարանդայ 58, 96-99, 103, 104, 106, 109, 111-114, 117, 120, 158-160, 171, 173, 192, 200, 204, 210, 211, 214, 223, 232, 283, 303
Վարարակն 239
Վարդանի գիւղ 126, 262
Վարդանակերտ 46, 61, 160, 172, 174
Վարդանլու 47, 148
Վարդաշէն 37, 114, 127, 128
Վարդենիս 11
Վարնկաթաղ 276
Վաքա 245
Վենետիկ 9, 10
Վերին Աղդան 336, 337
Վերին Ջակամ 304, 306
Վերին Թաղավարդ 207, 208
Վերին Թանդիրլու 170
Վերին Ղօթիլ 323
Վերին Ճամբարակ 337
Վերին շէն 287-289
Վերին Ծնաթաղ 186
Վերին Զայլու 277
Վէլէմիւր 76
Վէլիջան 194
Վլադիկաւկաս 66
Վնեսայ դալա 203
Վրաստան (Վրաց երկիր) 20, 26, 27, 51, 67, 160, 183, 184, 232, 303
Վրկանայ ծով 44

Տ
Տագ 194, 203
Տաթեւ 116, 207, 236, 265, 300, 304
Տաճկաստան 143
Տաճկահայաստան 160
Տամիրխան Շուրի - տես Թամիրխան Շուրա
Տայիս 202
Տանձուտ 316, 321
Տապասարան 70
Տարսոն 181, 188, 310
Տաւրոս 181
Տաւուշ (գետ) 34, 173, 174, 191, 306, 316, 319, 324, 328-330, 341, 342
Տաւուշ (երկիր) 234
Տաք ջուր 132
Տեղ 205, 207, 282
Տզրկածով 340
Տիգրանակերտ (Տկուանակերտ) 35, 171, 172, 175, 190, 230
Տինար 19
Տրի (Տոի) 160, 172, 175
Տրտու - տես նաեւ Թարթար 34
Տուզաղ 200
Տումի 201-205
Տուչկատակ 160, 172, 175
Տփխիս 7, 8, 10

Ր
Ռուբաս 35, 70

Ց
Ցախաց քար 300
Ցից քար 342
Ցնծանալ 186, 301
Ցոի 43, 80
Ցոցագետ 240
Ցօր (Ցոր) 89, 92, 194, 195, 203
Ցօրաբերդ 203

Ու
Ուզուն թալայ 332, 333
Ուլվար 79, 80
Ուլուպապ 244, 262
Ուղտկակա 186
Ուշ Տալ 109
Ուջան 144
Ուջար 146
Ուռելանջ 340
Ուռեկան 143
Ուտի Առանձնակ 160, 171, 172, 176, 179, 188, 272
Ուտիք (Աշխարհն Ուտեացոց) 14, 46, 47, 49, 50, 60, 61, 130, 133, 172
Ուրծ 303
Ուրմիա 277

Փ
Փաթակլու 104
Փաթանող 24, 25
Փախրաքիշ 45, 95, 96,
Փանլուլ 238
Փայտակարան 46, 61, 82, 83, 89, 101
Փամբակ 324
Փառակայ 110
Փառիս 173, 315
Փառիսոս 158-160, 170-173, 316, 317, 319, 324, 326
Փառիսոսի վանք 315
Փառնէս 173
Փառուխ 264
Փասավանք 235, 301
Փասխք 46, 47
Փատառ 126, 147, 148
Փարա-գիւղ 319
Փարախ 202
Փարիզ 49
Փեյղամպեր 175
Փիբ 292
Փիթդաղ 86
Փիլիպլու 132
Փիլիպպու 38
Փիկոնակք (Փիքաւնա) 46, 47
Փիր-Դինար 105
Փիր Մամալ 226
Փիր Մուրատ 125
Փիր Նազար 316
Փիր Սիաթ 34, 59, 85, 86, 88, 146
Փնտխլու 318
Փոթի 110
Փոխք 46
Փոքր Ասիա 188
Փոքր Ղարամուրատ 318
Փոքր Ղոգլու 123
Փոքր Սեօգիթլու 115
Փոքր Սիւնիք 58, 171, 309
Փուսխք 46, 47

Ք
Քալախանի 92
Քալբանդ 104
Քաղա գաւառ 59
Քաղադաշտ 59, 146, 147, 150
Քաղաեատ 59
Քամալ 306
Քանաքեռ 310
Քանդակ 34-36, 59, 142
Քաշան 91
Քառասնի (Քուասնի) 171, 227
Քարագեղ 331
Քարագլուխ 193, 262
Քարագլուխ (Գիւլիստանում) 284
Քարահատ (Քարհատ) 170, 171, 209, 234, 307
Քարահերձ 159, 314
Քարահունջ 218, 264, 288
Քարավազի կամուրջ 33, 161
Քարատակ գիւղ 323
Քարատնիս 202
Քարին-տակ գիւղ 228
Քարքանջ 89, 90
Քաւս տես Քուստի
Քաֆքաֆ 33
Քեաբիրլու 172
Քեաթուկ 245
Քեարխանայ վանք 302
Քեաֆուր-Ղումուխ 18, 28, 29, 30
Քեշիշ-քեանդ 191
Քեշխուրդ 104
Քերթ 104, 218
Քեւանդ գիւղ 42, 43, 98
Քեօբաչի 29, 66
Քեօնդալան գետ 35, 174, 206-209
Քեօշք 299
Քեօվլուջ 97
Քիլիսաքեանդ 179, 305
Քիլուար 36, 43, 44, 54, 77-80
Քիշ - տես Գիս վանք
Քիրս 34, 172-174, 207, 211, 238, 263
Քիւռ-Դամիր 146
Քիւքեալ 148
Քշտաղ գաւառ 135
Քմքաձոր 276
Քոթուկլու 141
Քոլատակ 263
Քոչբէկ 196
Քոչէզ (Քոչիզ) 158, 200, 214
Քրտագետ 202
Քուռգիւտ 38, 123, 130, 137, 147
Քուշք 182
Քուստի 53, 158-160, 174, 324, 327
Քուրդալան 218
Քուրմուղխ 49
Քօշկ 186

Օ
Օդեսա 67
Օթմանլու 130
Օխտը եղցի 242
Օծկայ վանք 242
Օկրուջա 326
Օհան երի 79
Օհանասար 123
Օձուն 19
Օտաթափէ 276
Օրաբան գետակ 60, 124, 137
Օրաբան գիւղ 38, 130, 133, 147, 148
Օրթա-ղափու 65
Օքսուզլու 342

Ֆ
Ֆերեայ գիւղ 93
Ֆէրրոյ կղզի 82

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաս 369, 379
Աբդ-ար-Ռաշիդ ալ-Բակուվի 13
Աբեթէ վարդ. 109
Աբլ-Աբաս 51, 374
Աբլհասան 329
Աբրահամ (աստ.) 129
Աբրահամ 117
Աբրահամ (գրիչ) 289
Աբրահամ Թառումեան 273
Աբրահամ Խանդամիրեանց 233
Աբրահամ կաթ. 86, 366, 380
Աբրահամ Կանաչհողեցի 325
Աբրահամ Յովհաննիսեան Մեհրաբեանց 123
Աբրահամ (նահապետ) 50
Աբրահամ (որդի Գրիգորի) 107
Աբրահամ (որդի թաղլարեցի Պաղունց Պօղոսի) 205
Աբրահամ պարոնտէր 209
Աբրահամ վարդ. 336
Աբու Միսլիմ (Աբու Մսլիմ) 22, 29
Աբու Մուսէ 201
Աբու Սեդ (եղբ. Վասակայ) 255
Ագաթանգեղոս 45, 46, 67
Ադամ 129
Ադամ (կանգնող խաչի) 227
Ադամ Մէլիք (որդի Մելիք Պապին) 216
Ադիլ-բէկ Զուլկատարեան 190
Ազատ 353
Ազարիա աբեղայ 197
Ազարիա եպս. 159
Ազարիա (տարբեր) 261, 296
Ազարիէ (շինող եկեղ.) 290
Ազիզ մահտեսի (ստ. աւետ.) 336
Ազիզ 306
Ազիզ (մայր Ղոչ սարկաւագի) 228
Ազիզ (մայր Պետրոսի, Պօղոսի եւ Բաղդասարի) 104
Ազիզղուլի 223
Աթա (տարբեր) 35, 209, 225
Աթաբագ ամիր 349
Աթաբակ (որդի Զալալ Դոլայի) 257, 258, 372, 374
Աթաբակ 252, 253
Աթանաս 327
Աթանաս (գրիչ) 312
Աթանաս եպս. 212
Աթանաս կաթ. 242, 363
Աթանաս վարդ. Զարաբերդցի 180
Աթանաս վարդ. Զրաբերդցի 129
Աթանաս տէր 266, 268,
Աթանաս 255
Աթի 286
Աժդահակ 51
Աիփջան
Ալազիզ ամիրայ Դանձակայ 378
Ալահդատ 108
Ալայվերտի (որդի Մէլիք Միրզախանի) 243
Ալեգսանոս աբեղայ 304
Ալեքսան (գրիչ) 294
Ալեքսան եպս. 214
Ալեքսան Զղեթանց 341
Ալեքսան քահ. 354
Ալթա
Ալթուն (որդի Վահրամայ) 268
Ալթար Կազի 122
Ալիլդատ Սրտծեցի 268
Ալի որդի Զենովբի 207
Ալի- սոլդան 142
Ալլահեար-բէկ Զուլկատարեան 190
Ալլահվերտի քօխայ Պանա-զուրցի 183
Ալլահվերտի 294
Ալլահղուլի սուլթան (մելիք Զրաբերդի) 223
Ալլահղուլի 294
Ախիջան որդի Զալալի 195
Ակոբ 289
Ակովիկ սբ. 199
Ակուլ 223
Ակուտ 363
Ահի (ոմն) 182
Ահմատ աղա Ախունդ 77
Աղաբեկ որդի Պակնայզարի
Աղաճան 108
Աղայ (հայր Բարսեղ եպս.) 214
Աղաջան Խաչատուրեան 180
Աղայպաստ որդի Զալալի 257
Աղա 220
Աղաբեկ 222
Աղաջան
Աղասի պեկ
Աղա Քալի Լազրովենց 103
Աղբաղ 344
Աղբերկան որդի Գայլաձագի 338
Ագբուղա որդի Հասանայ 267, 300
Աղէկ որդի Ճալալի 257
Աղէքսանդր Բ. (կայսր ռուսաց) 23, 184, 231
Աղէքսանդր Դ. (կայսր ռուսաց) 231
Աղէքսանդր եպս. 232
Աղէքսանդր (թագ. վրաց) 183
Աղեքսանդր Մակեդոնացի 41, 47, 48, 67, 68
Աղեքսանդր Իսահակեանց 186
Աղէքսանդր քահ. 102
Աղըզ 353
Աղխան (մայր Պետրոս կաթ.-ի) 242
Աղպաստ որդի Զալալի 253
Աղսարթան 377, 379
Աղութ խաթուն 232
Ամիր 182
Ամիրխան 182 318
Ամիր Հասան որդի Զալալի 257
Ամիրպէկ 206
Ամիրջան 64
Ամիր Վահապ 297
Ամր Ալի-Բաբա Ղաբալեցի 66
Ամրին փրխոլ - տես Փրխոլ
Այեսալ 372
Այլարա 331
Այտին 182
Այտին 252
Այտին (որդի պ. Տուրսունի) 261, 268
Այտին 243
Այտին (որդի Սաւարշի) 182
Այտին որդի (Զեսբարի) 122
Անահիտ (աստ.) 48
Անանիա 233
Անանիա 333
Անաստաս Տէր-Մկրտչեանց 222
Անդաւ 344
Անդեաս 13
Անդրեաս 325
Անդրեաս բէկ 274
Անդրէաս եպս. 233
Անդրէաս Զաքարեան 49, 68
Անդրեաս (սբ.) 234
Անդրի Իսրայելեան 241
Աներոդոգես (որդի Թէվոփիլէ զօրավարի) 371
Անթառամ 239
Աննա (դուստր Մէլիք Ղորխ-մազի) 328
Աննա Վարթանեանց 128
Աննա (դուստր Գրիգորի) 223
Աննման 92
Անտոն եպս. 209
Անտոն նահատակ Թիֆլիսեցի 238
Անտոն վարդ. 93
Անտոն քահ. 92, 93
Անտոն 290
Անտուն 363
Աշոտ որդի Ամիր Հասանայ 266
Աշոտ Յովհաննիսեան 10
Ապաղայ խան 143, 278
Ապաղայ փադիշահ 280
Ապաղայ ելչխան 299
Ապաջուր երէց 253
Ապիրատ 325
Ապողոն 48
Ապրահամ Ապրել (որդի Ուղտի-կակա) 272
Ապրես աղա 275
Ապրէս Բէկնազարեան 8
Ապուշ (որդի Գրիգորի) 380
Ապումուսէ 371
Ապու-Սէթ (որդի Ատրներսեհի) 380
Աջամ 318
Աջամ 195
Աջիշեր (որդի Գորգորոյ) 329
Առան Սիսական 33, 51
Առան վարդ. 215
Առաքել 64
Առաքեալ 314
Առաքեալ թղկա 128
Առաքել 142, 291
Առաքել Բաբաեանց 69
Առաքել Դաւրիժեցի 375, 377
Առաքել կաթ. Աղուանից 127, 129
Առաքել (հայր Ղուլու) 239
Առաքել Մուրատեանց 127, 128
Առաքել Յարութիւնեանց 219
Առաքել (որդի Մէլիք Եկանի) 198
Առաքել վարդ. 251, 282
Առաքել պատմիչ - տես Առաքել Դաւրիժեցի
Առաքել քահ. 228
Առաքել քահ. Շնաթաղու 236
Առստակես կաթ. 248
Առստամ Ափանասեան 186
Առստամ (մելիք) 123
Առուստամ 210
Առուստամ բեկ 323
Առուստամ բեկ Բապայ Բեկեան մելիք Շահնազարեանց Շափուրենանց 287, 288
Առուստամ Գիւգիեան Մատա-թեանց 210
Առուստամ Մատաթով 210
Ասուդար Ասդոհ 333
Ասայ 52
Ասլան 113
Ասլան բէկ (թոռ Մէլիք Վանու) 125
Ասլան բէկ (որդի Աթաբէկեանց Յակովբ Բէկի) 125, 269
Ասիր Ասլիզատ 328
Ասպտեր 336
Ասողիկ 67
Աստուածատուր 222
Աստուածատուր Գրիգորեան Բահադուրեանց 236
Աստուածատուր Թառումեանց 273
Աստուածատուր արքեպ. Հաղ-բատայ 304
Աստուածատուր կաթ. Էջմիածնի 92
Աստուածատուր (որդի Դավթի եւ Գիւլինարի) 92
Ասրի բէկ Մելիք Թամրազեանց 278
Ասուդար 195
Ասփայ (դուստր Տարսայիճի)24, 262, 266, 267, 308, 309,
Ավանէս 115
Ավանէս եպս. 195
Ավանէս երէց
Ավաք 336
Ատոմ 309
Ատի բէկ 290
Ատրներսեհ 52
Ատրներսեհ (որդի Սահլի) 373, 374, 380
Արամ 51
Արամ (եղբայր Մէլիք Եկանի) 198
Արամ (որդի Մէլիք Եկանի) 198, 199, 200
Արամազդ 48
Արամայէլ 58
Արան Շահվարդ 105
Արզու խաթուն 266, 267, 338, 374, 379
Արզման Իսրայէլեան 241
Արզման (որդի Պետրոսի) 208
Արզուման Խաչատրեան Տէր Սարգսեանց 358
Արզուման ուզպաշի (որդի Սարգսի) 181
Արթին ուշաղի 77
Արիստակէս եպս. 253
Արիստակէս (Առստակէս) եպս. 95
Արիստակէս աստ. 205
Արիստակէս վարդ. 97
Արղութին 257
Արղութ 338
Արղան 336, 372
Արշաւիր Արշարունի 82
Արտաշէս արքայ 21, 29, 32, 48

Արտաշէս Մաթեւոսեան 10
Արտաշիր Զուշերի որդի 113
Արտաւազ (տարբեր) 333, 338, 348
Արտեմիդես 48
Արուէր 344
Արութիւն 34
Արութիւն (ճգն.) 376
Արութիւն 106
Աւագ 344
Աւագ Դանիէլեան Ղազարեանց 236
Աւագեան Ս. Ա. 11, 12
Աւագ Մայիլեանց 180
Աւագ (որդի Իւանէ Աթաբէկի) 122, 344
Աւագ (որդի Ստեփանի) 323
Աւագ վարդ. (տարբեր) 181, 294
Աւանէս երէց Շաշուացի 289
Ասլան մէլիք 215, 216, 371, 372
Ավար խաթուն 289
Աւաքճան (որդի մէլիք Ցիւսէյինի) 211
Աւելդատ Սրտժեցի 325
Աւետ 93
Աւետիս (ազգէն Հասանայ) 297
Աւետիս աղայ Թառումեանց 234
Աւետիս (որդի Ստեփանի) 323
Աւետիս քահ. 354
Աւետիս Մաի 20
Աւետիս (շինող մատուռի) 290
Աւետիք 223
Աւթայ (ամուսին Արդաւազայ) 338
Աւթանդիլ որդի Բալուի 223
Աւշառեանց 97
Աւսալ 64

Բ

Բաբա 372
Բաբա տէր Մատթէոսեան Թառումեանց 234
Բագրատ Բագրատունի (Կիւրիկեան իշխան) 323
Բալ 243
Բալա-բէկ 75
Բալաբէկ (որդի Իշխանի) 223
Բալայ Զաքարեանց 244
Բալախանում
Բալա Ղազար - տես Ղազար
Բախտամ մելիք 200
Բակ իշխան 122
Բակում Մելիք Բեկլարեանց 221
Բահրամ Բէկ Դեօգչաեանց 74
Բաղդասար 197, 344
Բաղդասար 232
Բաղդասար բեկ 221
Բաղդասար Գրիգորեան Յովսէփեանց 104
Բաղդասար Կիլ 149
Բաղդասար Հասան-Ջալալեանց 143, 159, 237, 251, 252, 269
Բաղդասար Յարութիւնեան Բաղրեանց 222
Բաղդասար Շամխալեան 226, 238
Բաղդասար Սողոմոնեան 227
Բաղի (Պաղի) մէլիք 209, 210, 228
Բաղրամ (որդի Յովսէփի) 143
Բաղրբէկ (որդի Մէլիք Արամի) 200
Բայում 112
Բաջի 220
Բարդուղիմէոս (Բարթուղիմէոս) 209, 234, 235
Բարեատինսկի 21
Բարիզ 90
Բարին 343
Բարխուտար 320
Բարսեղ 340
Բարսեղ արհեպ. 214
Բարսեղ եպս. 95
Բարսեղ եպս. (պարոն տէր) 98, 330
Բարսեղ երէց 254
Բարսեղ Կեսարացի 199
Բարսեղ (որդի Ապաջուրի) 253
Բարսեղ (որդի Հայրապետի) 242
Բարսեղ (եղբ. Խաչատուր Արմանեցու) 379
Բարսեղ կաթ. հայոց 273
Բարսեղ քահ. (գրիչ աւետարանի) 234
Բարսեղ քահ. 95
Բարսում ճգնաւոր 354
Բափադար 113
Բաքդար Սուլդան 236
Բենիամին 353
Բերամ (որդի Մէլիք Ջիմշիտի) Շահնազարեանց) 206
Բերեզինա 66, 68
Բէլէք-բէկ 127
Բէկ (ոմն) 343
Բէկ (որդի Աշոտոյ) 343
Բէկիխաթուն 328
Բէկիջան (դուստր Համբուլի) 232
Բէկիսուլթան 328
Բէկլար-բէկ Մէլիք Շահնազարեանց Շահփուրեանց 287
Բէկլար (որդի Մէլիք Իսախանի) 278
Բէկլար Ֆրիդոնեան Մէլիք-Բէկլարեան 286
Բէկլար Տէր-Բարսեղեան 352
Էյրամ-բէկ (որդի Մէլիք Ջիմշիտի Շահնազարեանց) 233
Բհաթուր-բէկ 135
Բոբոնա (ամուսին Բէկի) 343
Բուդաղեան եղբարք 94
Բուզանդ - տես Փաւստոս Բուզանդ
Բուլբուլ տիրացու 64
Բուխով 139
Բուղա 53, 376
Բուղտայ 127
Բուչկիեւ Դ. 68
Բուսլան (որդի Գայլաձագի) 338
Բուրթել 127

Գ

Գաբրիէլ 90, 93
Գաբրիէլ եպս. (որդի Տէրունց Յարութիւնի) 306
Գաբրիէլ վարդ. 241
Գագիկ Բագրատունի թագ. 344, 379, 380
Գագիկ թագ. (որդի Մուսէի) 201
Գագիկ իշխանաց - իշխան Աղուանից 207
Գալստեան 106
Գալուստ Գաբրիէլեան 217
Գալուստ Հաթերրեցի 270
Գալուստ (ոմն) 233
Գայլաձագ 338
Գասբար (որդի Խուշուդի) 143
Գասպար 344
Գասպար Խոջա 221
Գասպար (ատ. աւետ.) 312
Գասպար վարդ. 223
Գաւրկի 314
Գէորգ Բարխուտարեանց - տես Մակար Բարխուտարեանց
Գէորգ Գ. կաթ. 7, 184, 231
Գէորգ զաւրավար 335
Գէորգի Գ. թագ. վրաց 335
Գէորգի թագ. վրաց 295, 368
Գէորգ ճգնաւոր 340
Գէորգ նահապետ Սեւորդեաց 46
Գէորգ (սբ.) 70, 205, 233, 251
Գէորգ վանահայր 255
Գէորգ վարդ. 129
Գէորգ Վասակով 185
Գէորգ Տէր-Յովհաննիսեան 180
Գէորգ Փարեմուզեանց 20, 32
Գէորգ Քալանթարեանց 94
Գէրգ 339
Գիշի 375, 376
Գիւգի (Գրիգոր) հայր Առուստամ Մատաթովի 210
Գիւլաղայ (մայր Բարսեղ եպս.) 214
Գիւլինար 92
Գիւտ քահ. Աղանեանց 375
Գնդիկ (ոմն) 93
Գոգչան 92
Գոզալ 198
Գոհար 329
Գոնցա 300
Գորգ 64
Գրիգոր 125
Գրիգոր 87, 223, 254, 268, 274, 282, 290, 323, 328, 331, 334, 336, 338, 339, 353
Գրիգոր 199
Գրիգոր 227
Գրիգոր 236
Գրիգոր (շինող եկեղեցու) 206
Գրիգոր Այտինով 241
Գրիգոր աղա Այվազեանց 213
Գրիգոր ավագ քահ. Թումանեանց 185
Գրիգոր Բարխուտարեանց 239
Գրիգոր Բատամեանց 219
Գրիգոր Գեղաքարեցի 295
Գրիգոր Գոտիեանց 260
Գրիգոր եղբայր Վախթանկայ 379
Գրիգոր եպս. 228, 297, 335
Գրիգոր եպս. Աշտարակեցի 335
Գրիգոր (եպս. ամենայն հիւսիսական կողմանց) 102
Գրիգոր եպս. Գանձակայ 291
Գրիգոր եպս. Մանուչարեան 330
Գրիգոր երէց 208, 221
Գրիգոր թագ. 76
Գրիգոր Թառումյան 273
Գրիգոր թոռն Խաչենիսենց 349
Գրիգոր իշխան Փառիսոսի 378
Գրիգոր իշխան (ամուսին Աստիեի) 261, 262, 308, 309
Գրիգոր Լուսաւորիչ 49, 66, 78, 84, 88, 184, 202, 218, 219, 234, 371
Գրիգոր կաթ. Աղուանից (1645թ.) 234, 251, 260
Գրիգոր կաթ. հայոց 303, 304, 344
Գրիգոր (հայր Յակովբի) 237
Գրիգոր (որդի Ապրհամի) 223
Գրիգոր (որդի Ատրներսեհի) 374, 380
Գրիգոր (որդի Հասանայ) 267, 268, 362, 364
Գրիգոր (որդի Ղուկասի) 271
Գրիգոր (որդի Զաքուռայ) 256, 363
Գրիգոր (որդի Սենեքերիմայ) 52, 67, 69
Գրիգոր (որդի Սենեքերիմ թագաւորի) 377
Գրիգոր (որդի Վահրամայ) 268
Գրիգոր (որդի Վախթանկայ) 260, 265, 267
Գրիգոր (որդի Վասակայ) 268, 325
Գրիգոր (ուսուցիչ Սիմէօն դաբուռու) 201
Գրիգոր վարդ. 209, 253, 278, 366, 372
Գրիգոր քահ. 266, 340
Գրիգոր քահ. Հայրապետեան Մէլիք Դադաեանց 73
Գրիգորիս Ա. կաթ. Աղուանից 27, 32, 46, 47, 62, 66, 78, 80, 216, 217, 219, 233, 251, 374
Գրիգորիս Աղթամարցի 91
Գրիգորիս կաթ. Աղթամարայ 19
Գրիգորիս կաթ. Աղուանից (1560թ.) 95, 290
Գրիգորիս (սբ.) 372
Գրիգորիս Ուրֆայեցի 91
Գրիգոր Մէլիք Բէկլարեան 286
Գրիգոր Որբելեանով 140
Գրիգոր տիրացու 183
Գրիգոր Ուլուբէկայ որդի 108
Գրիգոր Օհանեանց 262
Գուլաղա 318
Գուլամար 220
Գուլդանէ 318
Գուլիար 313
Գունդուզ (որդի Սաւարշի) 182
Գուրգեն (որդի Աշոտ Գ.-ի) 369
Գուրզադին 143, 278

Դ

Դաթունա (Դաւիթ) 26, 27
Դալի Մահրասայ 180, 274, 282
Դալվաթ 198
Դանիէլ 183, 188, 290, 331
Դանիել բէկ (որդի Մէլիք-Բէկի) 238
Դանիէլ եպս. 95
Դանիել եպս. (Էջմիածին) 129
Դանիէլ որդի Յովհաննիսի (ատ. աւետարանի) 19
Դանիէլ քահ. Տէր-Ներսիսեան 134
Դասապետ վարդ. 339
Դատ Առաքեալ 268
Դարեհ Ա. 48
Դարիճան (կողակից Մելիք Ղորխմազի) 329

Դարչօ Հախվերտեանց 352
Դաւիդ 106
Դաւիթ աբեղա 215
Դաւիթ Ադամեան 227
Դաւիթ Անհողին 369
Դաւիթ առաջնորդ 348
Դաւիթ Բարխուդարեանց 140
Դաւիթ եպս. 228
Դաւիթ եպս. (առաջ. Զարեքայ անապ.) 234
Դաւիթ եպս. 215, 311, 320
Դաւիթ էրէց 228, 256
Դաւիթ էրէց 198
Դաւիթ թագ. վրաց 368
Դաւիթ (իշխան Նոր բերդի) 379
Դաւիթ Լազարեանց 135
Դաւիթ խան 215
Դաւիթ կաթ. Աղուանից 215, 251
Դաւիթ կաթ. 235
Դաւիթ կաթ. (Աղթամարայ) 127
Դաւիթ Մարգարէ 212, 332
Դաւիթ Ծիրանշահանց 277
Դաւիթ (ոմն.) 243, 277, 284, 286, 290, 317, 327
Դաւիթ որդի Գաբրիէլի 210
Դաւիթ որդի Կարապետի 92
Դաւիթ որդի Վասակայ 332
Դաւիթ որդի Քրդի 374, 379
Դաւիթ (ստ. աւետ.) 235
Դաւիթ քահ. 330
Դաւշա (եղբայր Հասանայ, որդի Վախթանկայ) 250
Դալաթ 363
Դալաթ (դուստր Մէլիք Պաղու) 209
Դեմետրէ (թագ. վրաց) 336, 338, 368
Դէլոյիխան 264
Դէմուրով Գէորգ Դեմինեան 19
Դի-խան - տես Օհան-խան
Դուփ որդի Ուհան երիցու 363
Դօսդաշ 220
Դօփ (Դոփ, Դաւփ) 261, 267, 353, 373

Ե
Եաղուպ 90
Եաղուբ պէկ 256
Եարաջ 113
Եաւրի Կոսունց 284
Եգանեան 0. 10
Եզիտ Բ. Խալիֆա 29
Եթար Եաղուբեանց 127
Ելեն 183
Ելթի
Եկաղ 290
Եկան Մէլիք (որդի Ղուկազ վարդ.-ի) 198, 200, 203
Եղահ 297
Եղիա 258, 286
Եղիա աբեղայ 330
Եղիազար 209, 220, 302
Եղիազարեանց Յովհաննէս
Դաւթեան - տես Լազրեւ Իւան Դաւիդիչ
Եղիազար կաթ. Գանձասարի 138
Եղիազար (Եղիա) կաթ. Էջմիածնի 236, 367
Եղիա եպս. 214, 257
Եղիա Մարգարէ 13
Եղիայ էրէց 232
Եղիա (առաջ. Գանձասարի)252
Եղիա վարդ. 285, 372
Եղիա քահ. 223
Եղիշէ (Եղիշ, Եղիշա) առաքեալ 49, 62, 122, 128, 129, 131, 138, 143, 159, 296
Եղիշէ (պատմիչ) 46, 47, 68, 70 71
Եղիշէ 277, 290
Եղիսաբէթ 180, 239, 319, 320
Եղիսաբէթ Կանկաճեանց 62, 69
Եղիսապետ (մայր Սարգիս վարդ.-ի) 199
Եղու 204
Ենոք 344
Եպիփան (որդի Սարգսի քահ.) 352
Եսայի (գրիչ աւետարանի) 234
Եսայի (Ըսայի) որդի Մէլիք Եկանի 198-200
Եսայի 75
Եսայի 182
Եսայի դպիր Տէր-Խաչատրեանց 321
Եսայի Հասան-Զալալեան 41, 92, 136, 175, 195, 251, 278, 304
Եսայի (Նչեցի) 300
Եսայի Նարաեանց 352
Եսայի պատրիարք Երուսաղէմի 7
Եսայի վարդ. Կրճեվանցի 198
Եսայի քահ. Բանանցեցի 304
Եսուաղէն 52
Ետկար 286, 293, 318
Երեմիայ կաթ. Գանձասարի 198, 220, 228, 234, 251, 253
Երզնկեանց Ռոստոմ բէկ 10
Երմոլով գեներալ 65
Եւա 129, 304
Եւայ 215
Եփրեմ 95
Եփրեմ Խուրին Ասորի287
Եփրեմ կաթ. 180, 356
Եփրեմ (որդի Սարգսի քահ.) 352

Զ
Զալ (որդի Մահտեսի) 343
Զալի 344
Զանէ 319
Զանի 106
Զանկի Խարիթոն 25, 26
Զարդագուն 309
Զարդմբեր 309
Զաւելի Մովսէսեան 277
Զաքար 318
Զաքարա 139
Զաքարէ 363
Զաքարէ Զաքարեան 343, 344
Զաքարէ (եղբայր Սարգսի) 369, 377
Զաքարէ (որդի Սարգսի) 248, 250
Զաքարէ սպասալար 170, 374, 377, 379
Զաքարիա 122
Զաքարիա եպս. 159
Զաքարիա եպս. (նկարիչ աւետարանի) 20
Զաքարիա կաթ. Աղթամարայ 218
Զաքարիա կաթ. Էջմիածնի 232, 267, 268, 297, 335
Զաքարիա մարգարէ 251
Զաքարիա Ծահանշահ 295
Զաքարիա վարդ. 208
Զաքարիա վարդ. 236
Զիլփիխան 264
Զոհագ 182
Զոսիմա քահ. 345
Զրադաշտ 48
Զուբով Վ. 54, 63, 71, 76, 77
Զօհրապ տէր Մատթէոսեան Թառումեանց 234

Է
Էդրես (Իդրիսի) 64
Էլիկում 300
Էղիսաբէթ
Էմին (ստ. աւետարանի) 19
Էմխաթուն 182
Էսուղնա (դուստր ամիր Հասանայ) 253
Էվազ 318
Էվատ (որդի Համզայի) 313

Ը
Ըռոմանոս քեւխայ 136
Ըռստակես երէց 64
Ըռստիմ 318
Ըռուզ բէկ 257
Ըսպընդիար (որդի Մսչարայ) 108
Ըստեփանոս (սբ.) 200

Թ
Թագուհի 374
Թագուհի (կողակից Ումիկի) 338
Թագուհի (քոյր Եփրէմի) 296
Թադէոս 92
Թադէոս առաքեալ 112, 185, 208, 209, 235
Թադէոս միայնակեաց 303
Թադեոս քահանայ 94
Թադեոս քահանայ 232
Թաթար-խան 64
Թաթէոս 264
Թալիշ բէկ Բէկլարեանց 285
Թահմազ-խան 195
Թահմազ-շահ 109, 216
Թաղայ (որդի Զիթաղի) 343
Թաղի 343
Թաղի (հայր Մէլիք Ղորխմազի) 328
Թաղի (որդի Մատինի, էլչի) 87
Թամազ շահ - տես Թահմազ-շահ
Թամար (թագուհի վրաց) 122, 335
Թամել 347
Թամթար 331
Թամուր (որդի Յակոբի) 92
Թանգսող 109
Թանգրի-խան 29
Թանգրղուլի 293
Թանում 324
Թաշտ 353
Թավար (դուստր Մէլիք Եկանի) 198
Թարխան 291
Թաւրոս երէց 218
Թելլու 121
Թէոդորոս 199
Թէոդորոս (սբ.) 233, 335
Թէոս Բարխուտարեանց 239
Թէոփիլոս իշխան 374
Թէվոփիլէ 371
Թիթեղնիկ 241
Թիւլի Արզուման 181
Թիւնի 221
Թոմա վարդ. 97
Թոմա քահ. 347
Թոմաս 216
Թովմա Արծրունի 371
Թովմա առաքեալ 235
Թովմայ կաթ. Աղուանից 78, 128, 129
Թովմայ Մեծոբեցի 53
Թովմաս Աւան Լալաեան-Իւզբաշեանց 208
Թովմաս վարդ. 129
Թովմաս քահ. Տէր-Գրիգորեանց 223
Թորոս 149
Թորոս աղայ 211
Թորոս փիլիսոփայ 182, 300
Թուման Պեկաջ-Թուման 223
Թումար խանում (ամուսին Մէլիք Ադամի) 272
Թումա (գրիչ) 181
Թուման 90
Թուխիկ 90

Ժ
Ժամհարեան եղբայրք 196

Ի
Իբրահիմ 371
Իբրահիմ խան 238
Իգնատիոս վարդ. 127
Իգնատիոս 323, 339, 352
Իգնատիոս վարդ. (եղբ. Սիմէոն կաթ. Աղուանից) 280
Ինթաղի (քույր Մանուէլ վարդ.) 220
Ինճիճեան Ղ. 36
Իշխան 195, 223
Իշխան (եղբայր Պետրոս կաթ.ի) 242
Իոստամ 125
Իսահակ եպս. Հնարակերտի 380
Իսամ (որդի Բալի) 243
Իսիքնազ 125
Իսմայէլ 67
Իսմայիլ շահ 109
Իսրայէլ 183, 294
Իսրայէլ արքեպ. 159
Իսրայէլ (գրիչ աւետարանի) 235, 301
Իսրայէլ Գրիգորեան Բահադուրեանց 236
Իսրայէլ եպս. Աղուանից (է. դար) 27, 29, 32, 46, 62, 81, 82
Իսրայել եպս. Մեծ Կողմանց 46
Իսրայել (որդի Զաքարի) 121
Իսրայէլ (որդի Մէլիք Հաթամի) 179
Իւան Դաւիդիչ Լազրեւ (գեներալ) 18, 19, 21, 26, 27, 32
Իւանէ (եղբայր Հասանայ, որդի Վախթանգայ) 250
Իւանէ Աթաբակ 122, 170, 248,

280, 343, 344, 369
Իւան շահ 348
Իւսսան 233
Իւսուֆ-խան 70
Իսաղուլեանց Սարդար 69

Լ
Լանկ-Թամուր 50, 53, 67
Լաշայ 343
Լեւոն Խաչիկեան 10, 12
Լեւոն թագ. հայոց 70, 295, 310
Լէո 8
Լէօբօլդ 70
Լինչ 14

Խ
Խազը Փատկոս 368
Խաթուն 242, 264, 280, 318
Խաթուն Խաթայի (դուստր Մէլիք Եկանի) 198
Խալթ (Խալաթ) որդի Հարբայ 344
Խալաթ (որդի Սմբատայ) 344
Խալաթ վարժ. 129
Խալաթեանց Գր. 10
Խայոմթենչայ 317
Խանզատէ (ամուսին Մէլիք Շահնազարի) 349
Խանխաթուն 264
Խանպաճի (դուստր Մէլիք Եկանի) 198
Խանում 221, 223
Խանում (քույր Մելիք Եկանի) 198
Խանում-աղա (կին Մէլիք Եկանի) 198
Խաչատուր 108, 143, 281, 344, 363
Խաչատուր Աղսախկալով 62
Խաչատուր Բարխուտարեանց 239
Խաչատուր Եղիազարեան Շամախեցի 90
Խաչատուր եպս. ամենայն հիւսիսական կողմանց 231
Խաչատուր երեց 298
Խաչատուր Կեչառեցի 127
Խաչատուր Հախվերտեանց 352
Խաչատուր վարդ. 183, 338, 340, 344
Խաչատուր վարդ. Տարոնացի 379
Խաչատուր քահ. 91, 303
Խաչիկ 93
Խաչիկ վրդ. Դաղեան 9, 11
Խասխաթուն 113, 223
Խատապայ (որդի Մարեցի Զարմանի) 294
Խաւշէ 273
Խաւչախ 262
Խարպանդայ խան 309
Խիմշէ (որդի Աթաբակի) 252
Խնչիկ (դուստր Վաչական Գ.-ի) 374
Խոյդան 262
Խոյդան (եղբայր Վախթանկայ) 338, 379
Խոյտան 353
Խոնդի խաթուն 215
Խոնդշայ 108
Խոնտի 223
Խոնտբէկ (դուստր Ախիճանի) 195
Խոջա-Դարման 91
Խոսրով 182, 257, 315
Խոսրով Բ. - տես Խոսրով Մեծ թագ. հայոց
Խոսրով (կոյս) 209
Խոսրով Մեծ թագ. հայոց 32, 46, 67, 68, 118
Խոսրով (արքայ Պարսից) 58
Խոսրով Նահատակ 118
Խոսրով Նուշիրաւան 68
Խոսրով Փաթիշահ 19
Խոտբաշխ 113
Խորեն 317
Խորենացի - տես Մովսէս Խորենացի
Խորիշահ 256
Խորիշահ (ամուսին Հասանայ) 363
Խորիշահ (ամուսին Վախթանկայ) 248, 250, 374
Խորիշահ (մայր Հասանայ) 249
Խպլա 113
Խուդաթ Մէլիք 211
Խուդա Վովիսացի 94
Խութլափ (հայր Սիրաւքի) 195
Խութլու 256
Խութլու բէկ (որդի Խոյդանայ) 248
Խութլու բուդա 349
Խութլու խաթուն 182
Խունի 296
Խունկ քահ. 109
Խուչախ 247
Խուտում 275
Խուրս իշխան 375

Ծ
Ծատուր 314
Ծեր (նահատակ) 242

Կ
Կաբրել 220
Կաղանկատուացի տես Մովսէս Կաղանկատուացի
Կանան 309
Կանդեմիր իշխան 66
Կատայ 246, 339
Կատինկայ Մելիք Բեկլարեան 75
Կարապետ 92, 258, 339, 350
Կարապետ աբեղայ 295
Կարապետ Բարխուտարեանց 239
Կարապետ Գանջեցեանց 144
Կարապետ եպս. 273, 296
Կարապետ երէց 312
Կարապետ կաթ. Աղուանից 128, 129
Կարապետ Կոստանեանց 11, 15, 47
Կարապետ Մայիլեանց 125
Կարապետ Յովհաննիսեան Բալաթարեանց 88
Կարապետ Սարկաւագ 94
Կարապետ տէր 93
Կարապետ ուշաղի 139
Կարապետ օղլը 148
Կարապետ խոջա Աղատուր 75
Կարին (իշխ. Գարդմանայ) 376
Կեսբեր Յակոբ 223
Կիրակոս (առաջն. վանքի) 207
Կիրակոս Գանձակեցի 67, 86, 133, 325, 369, 376, 377, 379
Կիրակոս 320
Կիրակոս վարդ. (առաջն Վարագայ Ս.Նշանի) 301
Կիրակոս վարդ. 94
Կիրակոս վարդ. 19
Կիրակոս վարդ. 186
Կիրակոս քահանայ 234
Կիրակոս (ստ. աւետարանի) 235
Կիւրիկէ թագ. 266, 307, 327, 369, 374
Կիւրիոն կաթ. 380
Կիւրկին բէկ Աւշառեանց 97
Կոկոն (ոմն) 207
Կոհար-աղայ 229
Կոչ (որդի Սեթիկի) 303
Կոսի 291
Կոստանդ 182, 252, 286
Կոստանդին կաթ. 123, 259, 335
Կոստանտել 195
Կովկաս (նահապետ) 29
Կրասիլնիկեան 73
Կուլի 90, 121
Կուկ 363
Կուլո 107

Հ
Հախիջան 216
Հախնազար 220, 278, 318
Հաճի Ալի խան 236
Հաճի Զալապի 115, 136, 142 147
Հաճի Փահրատ 278
Համազասպ 344, 367
Համամ իշխան 52, 367
Համան 293
Համբոլ 232
Համզա 313
Համզաբէկ 218
Համիտ-բէկ Զուլկատարով 190
Հայկ (նահապետ) 29
Հայրապետ 242, 273, 274, 281, 313, 317, 343
Հայրապետ Դօլուխանեանց 221
Հայրապետ (ստ. աւետարանի) 243
Հայրապետ տէր 129
Հայրուտ 332
Հապուլ 182
Հասան 63, 246, 247, 256, 261, 262, 268, 348, 364
Հասան բէկ 129, 287
Հասան (եղբայր տէր Յովհաննէսի) 261
Հասան խան 343
Հասան (հայր Վախթանկայ) 338, 374
Հասան Մեծ 249, 250, 373
Հասան (որդի Ղարա Գրիգորի) 267
Հասան (որդի Վախթանկայ) 254, 262, 265-267, 295, 373
Հասան (որդի Վահրամայ) 268
Հասան (որդի Վասակայ) 241, 260
Հասան (որդի Սայու) 299
Հասրմբեր 277
Հաւաս 246
Հեթում թագ. 181, 182
Հեթում Երկրորդ 249
Հեղա 246
Հերակլ Բ. 305, 318
Հերակլ (կայսր Բիւզ.) 67, 100
Հերակլես 48
Հերիք 223, 225
Հերիքնազ (կողակից Սայու) 203
Հերիքնազ 239, 294
Հերիքնազ (կողակից Մէլիք Աբովի) 253
Հիւսէին խան 147
Հիւսէին Ղուլի խան 84
Հիւրիա 285
Հոգեջան 344
Հոյանն Կարապետ - տես Յովհաննն Մկրտիչ
Հոռոմ 286
Հովաղեղ 223
Հոհաստոն 329
Հռիփսիմէ 75, 236
Հռիփսիմէ (դուստր Մէլիք Ղորխմազի) 328
Հռոմսիմէ (դուստր Մէլիք Պաղու) 209
Հուլալու 366
Հուոիփսիմ 313
Հուրի 183
Հօհանէս Դաշտեցի 140

Ղ
Ղազար (Բալա-Ղազար) 74, 78
Ղազար (գրիչ աւետարանի) 231
Ղազար երեց 110
Ղազար կրօնաւոր (գրիչ աւետարանի) 234
Ղազար 204, 215, 220, 296, 313
Ղազար (որդի Գրիգորի) 282
Ղազարոս 20, 25
Ղազարոս 129
Ղազարոս քահ. 134
Ղազար քահ. Գանձակեցի 129
Ղազար քահ. Համտինացի 375
Ղալաբէկ 264
Ղահրաման Մայիլեանց 180
Ղահրամանեան Կ. 12
Ղահրաման մէլիք 243
Ղամար-Սուլթան 298
Ղայպայպուշ 105
Ղասապ վարդ. 338
Ղասում տանուտէր Հիրհերայ 214
Ղարա-Գրիգոր 267, 373
Ղարրա Նուին 338
Ղարա-Բեշիշ 19
Ղարաք (որդի Ջերգամի) 202
Ղարիբ Անդրիասեանց 85
Ղարչղա խան 303
Ղեւոնդ (պատմիչ) 61, 67
Ղեւոնդ (շինող մատուռի) 290
Ղոչ սարկաւագ 228
Ղուբաթ 113
Ղուլի 84, 117, 121, 214, 290, 314
Ղուկաս աւետարանիչ 96, 127, 221, 234
Ղուկաս 129, 318, 331, 332, 336
Ղուկաս կաթ. Կարնեցի 69
Ղուկաս հայր Գրիգորի 271
Ղուկաս վարդ. 19
Ղուկաս վարդ. 214

Ղուկաս (ստ. աւետարանի) 232
Ղուկազ վարդ. (հայր Մէլիք Եկանի) 198-200
Ղուկաս քահ. 134
Ղուկաս քահ. 182

Ճ
Ճանղու 294
Ճաշ 113
Ճար (որդի Ումեկի) 338
Ճհանկիր բէկ 363
Ճուանշիր 113

Մ
Մազրվան 220
Մաթոս 110
Մաթեոս 277
Մալիջան (ստ. աւետարանի) 232
Մակաեւ 70
Մակար Ա. կաթ. 231
Մակար արքեպ. 184
Մակար եպս. Բարխուտարեանց 7-17, 160
Մակար վարդ. Արցախեցի 129
Մակրտիչ 195
Մահեզար 116
Մահմատ սուլթան 91, 336
Մաղաք 94, 314, 321
Մաղաքիա քահանայ 232,
Մամ 378
Մամա (դուստր Կիւրիկէ թագ.) 374
Մամա խաթուն 247, 269, 317
Մամ (Մամքան, դուստր Քրդի) 250, 254, 256, 265-267,
338, 363, 372-374
Մամաք (կողակից Գայլաձագի) 338
Մամխաչուն 280
Մանասան բէկ 211
Մանկասար 242, 264, 327
Մանուէլ 127, 268
Մանուէլ եպս. 200
Մանուէլ (որդի Համասուտանց Միրզախանի) 220
Մանուէլ վարդ. 210
Մանուէլ փիլիսոփայ 240
Մասան 193
Մասուդի 66
Մատաթեանց իշխան 32
Մատթէոս 212
Մատթէոս աւետարանիչ 181, 335
Մատթէոս (գրիչ աւետարանի) 19
Մատթէոս եպս. 281
Մատթէոս երեց 115
Մատթէոս (որդի Յակոբի) 92
Մարգար 222, 239, 260, 263
Մարգար (ստ. աւետարանի) 235
Մարգար Բարխուդարեանց 140
Մարգարիտ 80
Մարգարիտ (դուստր Ուխտիկայ) 309
Մարգարիտ (մայր Մէլիքի եւ Նուկզարի) 277
Մարգարիտ Շոութեցի 199
Մարգար Լազարով 89
Մարեա 314
Մարեամ 108
Մարեան (դուստր տէր Սարգսի) 243
Մարիամ Աստուածածին 335
Մարիամ (ստ. աւետարանի) 235
Մարիամ (ոմն) 198
Մարիամ 239
Մարիամ (մայր Մէլիք Եկանի) 198
Մարիամ (տնտես. եկ.) 214
Մարիան (մայր Մէլիք Միրզախանի) 243
Մարինայ (դուստր Վախթանգայ) 250
Մարկիանոս կայսր 67
Մարկոս 264, 274
Մարկոս աւետարանիչ 20
Մարկոս տէր Մատթէոսեան Թառումեանց 234
Մարհան (կողակից Սասնայ Հանդաբերդցու) 252
Մարմար (ամուսին Այտնի) 122
Մարտիրոս 102
Մարտիրոս 117
Մարտիրոս 183
Մարտիրոս 223
Մարտիրոս 235
Մարտիրոս 247, 300, 313, 330, 335, 337, 339
Մարտիրոս (առաջնորդ ամենայն հիւս. կողմանց) 294
Մարտիրոս եպս. 214, 297
Մարտիրոս պարոն տէր 232
Մարտիրոս Սիմոնեանց 342
Մարտիրոս Տէր Բարսեղեան 352
Մարտիրոս Տէր-Դանիէլով 140
Մարտիրոս օղլը 148
Մարքարիտ Մէլիք-Ջիմշիտեանց 208
Մելիտեն քահ. 257
Մելիք (ոմն) 108, 363
Մելիք Եգան (Եկան) 12
Մելիք Մելքում (որդի Զալապովի) 142
Մելիք Յովսէփ 210
Մելիք Ճահնազարեան 209, 210,
Մելիք Ճահնազարեանց Կ. 69
Մելիք Ջհանկիր 191
Մելիքսեթ 232
Մելիքսեթ (որդի Սողոմոն վարդ.-ի) 102
Մելքիսեդ 234, 257, 279, 281, 282, 377
Մելքիսեդեկ եպս. Մուրատեանց 378
Մելքիսեթ արքեպ. 159
Մելքոն, Մելքում (տարբեր) 208, 274, 285, 286, 328, 344
Մեհրալի-բէկ Զուլկատարեան 190
Մեհրապ 95, 257
Մեղիդիւթ 290
Մեկեոիոս սբ. 233
Մեսրոպ Ատիշինեցի 182
Մեսրոպ Բաբաեան 98
Մեսրոպ 235, 282
Մեսրոպ Թառումեանց 273
Մեսրոպ Մաշտոց 47, 66, 138, 269
Մեսրոպ Սմբատեանց 10, 13
Մեսրոբ վարդ. (որդի Սիմէօնի) 203
Մեսրոպ քահ. 196
Մէժլում 183, 294
Մէժլում (որդի Մէլիք Յաղամի) 273
Մէժլում (որդի Միխիթարի) 282
Մէլիս (որդի Մելիքի) 108
Մէլիք (ոմն) 108, 178, 277, 363
Մէլիք Աբով 253, 323
Մէլիք Ալլահվերտի 271
Մէլիք Աղապէկ 298
Մէլիք Առստամ 323
Մէլիք Առուշան 271
Մէլիք Բաղի Մէլիք Ճահնազարեան 298, 371
Մէլիք Բէկ 363
Մէլիք Բէկլարեաններ 292, 296
Մէլիք Բէկլար (որդի Մէլիք Աբովի) 253
Մէլիք Նաւրի Մէլիք Ճահնազար Ճահփուրեան 288
Մէլիք Նաւրի Ոսկանապատու 304
Մէլիք Նսայի 183, 371
Մէլիք Թամրազ 277, 278, 296
Մէլիք Իսրայէլ 294
Մէլիք Իսրայէլեաններ 272
Մէլիքխաթուն 335
Մէլիք Հաթամ (Ադամ) 179, 272-276, 281, 294
Մէլիք Հախնազար 313
Մէլիք Հայկազ 135
Մէլիք Հասան 105
Մէլիք Ղուկաս 363
Մէլիք Մատթէոս 305
Մէլիք Ղորխմազ 328
Մէլիք Միզա 210
Մէլիք Միրզախան Խօնծրուստանցի 243
Մէլիք Մնացականեաններ 297
Մէլիք Յովսէփ 253, 284, 292
Մելիք Յովսէփ իշխանապետ "Ոսկանապատու ծորոյս" 304
Մէլիք Յուսէին Սէին (որդի Մէլիք Ճահնազարի) 210, 211
Մէլիք Նարնպէկ 294
Մէլիք Ճահնազար 349
Մէլիք Ճահնազար (որդի Մէլիք Բաղու) 214
Մէլիք Ճահնազար (որդի Մէլիք Սէինի) 209-211
Մէլիք (որդի Սայտունի) 253
Մէլիք Ովանէս 305
Մէլիք Պապ 215
Մէլիք Ջիմշիտ 210-211
Մէլիք Ջհանբախշ 211, 221
Մէլիք Սարգիս 304
Մէլիք Ստեփան 284
Մէլիք Փաշայեանց 215, 371
Մէլիք Փաշիկ 215
Մէլքէմ 298
Մէհրապ պէկ տէր Խաչենոյ 233
Մէհրիզատ (որդի Մկրտչի) 182
Մէջլիս 257
Միանապար-բէկ 288
Մինա Խաթուն (դուստր Զալալի) 261, 262
Մինաս (սբ.) 197, 233
Միր-Դաւիթ-խան Ծատուրեան
Մէլիք Ճահնազարեանց 288
Միրաք 293, 363
Միրզայի (որդի Տուրսունին) 257
Միրզա-Ղուլի բէկ 214
Միրզայ Օհաննէսեան Զարկարեանցով (Միրզայ Օհանեան) 212, 213
Միրզաջան Խիկար 363
Միրզաջան Խոջաբաղրեանց 219
Միրզաջան Յովհաննիսեան 78
Միրշաֆ 91
Միքայել 90, 93
Միքայել Բաղդասարեանց 130
Միքայել-բէկ Ղազար-բէկեանց 136
Միքայել Զալեանց 75
Միքայել Ծատուրեան 109
Միքայել կաթ. Աղուանից 369
Միքայել վարդ. 95
Մլեհ 269
Մխիթար 77, 225, 246, 295, 299, 304, 309, 319,
329, 333, 334, 344, 363
Մխիթար Գօշ 33, 94, 270, 337, 338, 340, 344,
369, 374, 378, 379
Մխիթար քահանայ 19
Մկըր (որդի Սիմէոնի) 90
Մկրտիչ աբեղայ 64
Մկրտիչ աբեղայ 237
Մկրտիչ Արզրումցի 234
Մկրտիչ Բարխուտարեանց 239
Մկրտիչ եպս. 195, 297
Մկրտիչ (տարբեր) 183, 257, 274, 320, 336
Մկրտիչ Մուրատեանց 127
Մկրտիչ Յովհաննիսեան 299
Մկրտիչ Ջաղէթեանց 192
Մկրտիչ վարդ. (առաջ. Ամիթի) 335
Մկրտիչ վարդ. Զարեբայ 235, 302
Մնացական Գրիգորեանց վասակով 185
Մնացական մէլիք 181
Մնացական (որդի Կորգի) 181
Մոլար Նուին 380
Մովսէս Արղութեանց 18, 19, 32
Մովսէս-բէկ Աթաբէկեանց 201
Մովսէս Խորենացի 20, 46, 47, 50, 51, 61, 64, 70, 82, 161, 369
Մովսէս կաթ. հայոց 235, 330
Մովսէս կաթ. (1633թ.) 97
Մովսէս Կաղանկատուացի 27, 37, 46, 51, 58, 61, 62, 68,
80, 82, 131, 138, 143, 371, 372
Մովսէս Ներսիսեանց 320
Մովսէս (ոմն) 202, 253, 321, 335
Մովսէս (որդի Թէվոփիլէ զօրավարի) 371
Մովսէս (որդի Իթափդուողի) 117
Մովսէս սարկաւագ 241
Մովսէս վարդ. 204
Մովսէս քահ. 235
Մովրով 303
Մռաւ (ոմն) 182
Մսլիմ (զօրավար) 67
Մսչար (հայր Ըսպընդիարի) 108
Մսրմէլիք (ամուսին Ներսեսի) 303
Մրհապետ (ոմն) 204

Միքայէլ Ա. (Մուխայէլ) կաթող. Էջմիածնի (1569 թ.) 19
Մուհամատ մարգարէ 29
Մուհամմատ-Համզա 68
Մուղալ խաթուն 236
Մումխանում 220
Մուսաէլ 208
Մուշեղ (որդի Հեջուբի) 248
Մուշքար. հայր Օսէփի (կանգնող խաչի) 121
Մուսայէլ Դօլուխանեանց 288
Մուսէ 280
Մուսէս Զուղայէցի 318
Մուսի 136
Մուստաֆա-խան 86
Մուրադ 211
Մուրադխան 328
Մուրադշայ 298
Մուրատ 113
Մուրատ խոնթքար 336
Մուրատ (ոսկերիչ) 199
Մուրատ (որդի Նիազի) 296
Մուրթուզա-բէկ 131
Մուրթուզա խան 354
Մուրթուզա ղուլի 290
Մուրթուզա-ղուլի խան 90, 314

Յ
Յաբեթ 29, 50, 51
Յազկերտ 68
Յալբանդ փաթիշահ 19
Յակոբ (տարբեր) 235, 261, 305, 222, 277, 290, 322, 335, 248, 349
Յակոբ Սոթեցի 297
Յակոբոս (որդի Աբրահամ Սպարապետի իւզբաշու) 284
Յակովբ Բարխուտարեանց 239
Յակովբ Իշխանեան 223
Յակովբ կաթ. Զուղայեցի 115, 205, 231, 294
Յակովբ (հայր Մծբնայ) 248, 249
Յակովբ (նկարիչ) 212
Յակովբ վարդ.198
Յակովբ վարդ. 208
Յակովբ վարդ. (նուիրակ Դերբենտում) 69
Յակովբոս (Յակովբ) Տեառն-եղբայր 49, 121, 183, 187, 197, 199, 251, 33
Յակօբ Բալաեանց 73
Յակովբ կաթ. (1283թ.) 181
Յակովբ տանուտէր 237
Յակովբջան խոջա 221
Յաշաք 198
Յարութիւն 241, 258, 278, 301, 323, 328, 343
Յարութիւն (տանուտեր վէրին Շէնի) 287
Յարութիւն աբեղա 208
Յարութիւն բէկ Աթաբէկեան272
Յարութիւն բէկ Ղազեանց 225
Յարութիւն բէկ Սիլիկեանց 127
ՅարութիւնՂազարեան 89
Յարութիւն Շահպարոնեանց 140
Յարութիւն վարդ. 180
Յարութիւն Տէր-Զաքարեանց 125
Յասան բէկ Ամթեցի 235
Յեզուտ Խոսրով 118
Յիսուս Քրիստոս 20, 99, 100, 102, 109, 112, 114, 122, 125, 129, 136, 138, 179, 185, 204, 207, 239
Յոհան 220, 242, 260, 301, 314, 327, 331, 332
Յովասափ 286
Յովասափ միայնակեաց 250
Յովհան Մայրագոմեցի.
Յովհան վրդ. Մայրավանեցի 320, 378
Յոհան (որդի Մէլիք Իսախանի) 278
Յոհան քահ. Զուղայեցի 95
Յոյսիկ երէց 294
Յովհանն (Ովհաննէս) աւետարանիչ 95, 182, 207, 231, 332
Յովհանն (գրիչ) 182
Յովհանն Մկրտիչ (Հովհաննէս Մկրտիչ, Հովհան Կարապետ, Հոյանն Կարայբետ) 208, 235, 233, 241, 183, 249, 251, 258, 335
Յովհաննէս 87, 110, 220, 253, 261, 267, 274, 278, 347, 348, 364, 321, 324, 327, 330, 333, 339
Յովհաննէս (ստ. աւետարանի) 218
Յովհաննէս աբեղայ 95
Յովհաննէս աբեղայ 235
Յովհաննէս աթոռակալ Վարագայ 297
Յովհաննէս աղայ Թառումեանց 234
Յովհաննէս առաջնորդ Մշահանի վանքի 269
Յովհաննէս Աստուածաբան 182
Յովհաննէս Արմանեցի 379
Յովհաննէս արքեպ. Ըստաթէի (Տաթեւ) 236
Յովհաննէս (գրիչ) 184
Յովհաննէս (գրիչ աւետարանի) 183
Յովհաննէս Դոփեան 364
Յովհաննէս երէց Շատախեցի 303
Յովհաննէս երէց Պետանց 294
Յովհաննէս եպս. Ամարասայ 207
Յովհաննէս եպս. 223, 224, 322, 330
Յովհաննէս կաթ. Դրասխանակերտցի 376
Յովհաննէս Միայնակեաց 286
Յովհաննէս Մկրտիչ - տես Յովհանն Մկրտիչ
Յովհաննէս (շինող եկեղեցու) 143
Յովհաննէս եպս. Անոյ 201
Յովհաննէս աստուածաբան - տես Յովհանն աւետարանիչ
Յովհաննէս (ստ. աւետարանի) 235
Յովհաննէս (որդի Տաւութի) 233
Յովհաննէս սբ. աւետարանիչ - տես Յովհանն աւետարանիչ
Յովհաննէս Աւրբել (Որպէլ) 127, 129
Յովհաննէս-բէկ Մուրատեանց 127
Յովհաննէս եպս. 195
Յովհաննէս Լազրեւ
Յովհաննէս Խալափեանց 105

Յովհաննէս կաթ. Գանձասարայ (Աղուանից) 122, 133, 180, 195, 215, 251, 252, 253, 257, 261, 278, 295, 232, 248, 322, 330, 376, 377
Յովհաննէս Կարապետ - տես Յովհանն Մկրտիչ
Յովհաննէս ձեռնաւոր Ոսկանապատոյ 301
Յովհաննէս Միրումեանց 187
Յովհաննէս Մնացականեանց 187
Յովհաննէս պարոն տէր 184
Յովհաննէս Պետրոսեան Մայիլեանց 109
Յովհաննէս Սարկաւագ 15
Յովհաննէս վարդ. 321, 331, 345, 372
Յովհաննէս վարդ. Ծարեցի 367
Յովհաննէս վարդ. Տաւուշեցի 378
Յովանէս տանու տէր 335
Յովհաննէս տիրացու 102
Յովհաննէս Տուեցի 378
Յովհաննէս ռաբունապետ 205
Յովհաննէս փակակալ Դետամիջոյ 287
Յովհաննէս Փանեանց 69
Յովհաննէս Փիփեցի 321
Յովհաննէս քահ. 91, 122
Յովհանջան Տէր-Մատթէոսյան Թառումեանց 234
Յովսէփ (գրիչ ձեռագրի) 142
Յովսէփ 183, 325, 348
Յովսէփ-բէկ Ջաւատ-Բեկեան Ղազարեանց 74
Յովսէփ վարդ. 208, 372
Յովսէփ վարդ. Իսրայէլբէկեան Ջալալեանց 253
Յովսէփ վարդ. Մարուքեանց 356
Յովսէփ վարդ. Փինաչեանց 272
Յովսէփ քահանայ (գրիչ աւետարանի) 235
Յովսէփ Զառապ Դրիգորեան 180
Յովսէփ վարդ. Արցախեցի 112, 253
Յովսէփ տէր 115
Յովսէփ քահանայ 121, 321
Յորդանան (ոմն) 344
Յորդան եպս. 257
Յուդայ Յակովբեան առաքեալ 121, 202, 344
Յունան հոնաց եպս-պետ 27, 32
Յուսէփ ուստայ 212
Յուսէփ փիլիսոփայ 182
Յուսաբ խան 303

Ն
Նադիր շահ 50, 53, 86, 146, 199, 200, 297, 366
Նազար 64
Նազար բէկ 375
Նազլու 220
Նախշուն 115
Նահապետ կաթ. 232
Նանակուլ Մէլիք Շահնազարեանց 221
Նանի (ոմն) 243
Նաղաշ 204
Նապաթ 108
Նասիր սարկ. 352
Նատար 314
Նարին Ղազանչեցի (ստ. աւետարանի) 232
Նարկիզ 313
Ներսեհ իշխան Աղուանից 201
Ներսէս առաջ. Դանձասարի 252
Ներսէս-Բակուր կաթ. Աղուանից 367
Ներսէս Ե. կաթ. Աշտարակեցի 11, 140, 180, 186, 187
Ներսէս բէկ սարումեանց 78
Ներսէս բէկ Տեր-Ներսիսեանց 170
Ներսէս բէկ Աբրահամեան Տէր-Ներսիսեանց 309
Ներսէս (գրիչ) 330
Ներսէս եպս. 225, 335
Ներսէս եպս. Ամարասայ 253
Ներսէս կաթ. Աղուանից 179, 183, 195, 223, 250, 260, 277, 278, 366, 372
Ներսէս (ոմն) 224, 227, 306, 320
Ներսէս Սարգիսեանց 10
Ներսէս Սուքիասեանց 280
Ներսէս վարդ. 284
Ներսէս քահ. (ստ. աւետարանի) 13, 185, 303
Նիկալայ-բէկ Փիրումեանց 177
Նիկալայ Պալովիչ 140
Նիկալայ Զօրաբովիչ Ճավճավաձէ 18, 20
Նիկալայ Գալաշեանց 95, 110
Նիկար 106
Նիկողայոս (գրիչ) 102, 294
Նիկողայոս 121
Նիկողայոս (գրիչ աւետարանի) 231
Նշանգայ 64
Նոյ նահապետ 44
Նոյեմզար 275
Նորադին 143, 278
Նուկզար 277
Նունզար 107
Նուրացիան (մայր Յովհաննէսի) 297
Նփաղհան 317

Շ
Շաթ-Խազր 86, 134
Շալուէ (որդի Սարգսի) 369
Շահ Աբաս 264, 288, 298, 303, 312, 323, 330, 344
Շահ Աբաս Ա. (Շահ Ապազ) 50, 70, 86, 179, 232, 368, 375, 376
Շահ Աբաս Բ. 182-184, 209
Շահ Ալթման Պահաթուր 335
Շահանդուխտ 377
Շահանդուխտ (դուստր Մէլիք Պաղու) 209
Շահանշահ (Շահանշէ, Շահնշահ) 257, 267, 300, 344, 372
Շահաւոր 217
Շահ Դաման (1560թ.) 95
Շահդիշէն 232
Շահեն վարդ. 224
Շահզատ 239
Շահիջան 293
Շահ-Իսմայիլ 218

Շահխաթունեանց Յ. 10, 11, 129, 143
Մահտեսի Շահկեալդի 226
Շահմար 217
Շահնա 282
Շահնազար 209, 290
Շահնազար Գ. Մէլիք 228, 344
Շահնազարեան 17, 29, 51
Շահնազարեան Ա. 10
Շահնազար Պապալեանց 205
Շահպատ 220
Շահպանդ 257
Շահպուտաղ 125
Շահ-Սուլէմսն (Սէլիման)205, 214, 234, 236, 280, 290, 293, 304, 324, 344
Շահ-Սեփի 234, 290, 294
Շահ-Սուլթան Հիւսեյին 70, 87
Շահվերտի խան 323
Շահրման 108
Շահրուպան 328
Շահում (տարբեր)107, 204, 206
Շահփար 275, 363
Շաղախ 193
Շաղակ 317
Շաղուպատ 274
Շամիլ 21, 26, 27, 29, 30, 66, 140
Շամշիղամար232
Շանշէ 268, 364
Շապան տանատէր 236
Շապուհ 122
Շաւուր 325
Շերանշահ 340
Շէյխ-Աբու-Իսախ 68
Շիրին 143
Շիօ 198
Շմաւոն 257, 343
Շոլկովնիկեանց 145
Շողաքաթ 113
Շուշանիկ (կողակից Վաչական Գ.-ի) 374
Շուղիկ 261
Շուփհաղիշոյ 367, 373

Ո
Ոհան 241
Ոհան պարոնտէր Դանճոյ 298
Ոհանէս 223, 264
Ոհանէս Ղալապէկ 298
Ոհանէս պարոնտէր 264, 298
Ոսաղա 113
Ոսկան նահատակ 324
Ոսկի 201, 207
Ովանէս եպս. 200, 328
Ովանէս կաթ. Աղուանից - տես Յովհաննէս կաթ. Աղուանից
Ովանէս (տարբեր) 113, 214, 281, 318, 363
Ովանէս (որդի Իշխանի) 242
Ովանէս վարդ. 318, 320
Ովսէփ 294

Զ
Զալաղան ուզպաշի 243
Զալապի խոջա Շաքեցի 310
Զիլաեւ 21, 24
Զինկիզ խան 50
Զօլի ամիրապետ 379

Պ
Պազուխ 297
Պալի 313
Պախա 217
Պաղտամ (որդի Մէլիք Եկանի) 198
Պաղտասար (որդի Մէհրապ պէկի) 233
Պաղր (որդի Մէլիք Եկանի) 198
Պաղում (որդի Մէլիք Եկանի)198
Պանդալեոն բժիշկ 109, 183, 209, 234, 251, 374
Պանդալիոն (որդի Վաչական Գ.-ի) 374
Պապա 225, 246
Պապայ Հախումեանց 235
Պապաս 206
Պապաջան (որդի Իշխանի) 242
Պապաք 256, 290
Պապէ 282
Պապի 243
Պասկեւիչ 271
Պարխաս Խուպիճան 143
Պարոս 344
Պաստամ 257
Պաստամ (որդի Մէծին Զալալի) 252
Պատօ պէկ 298
Պարոն 318
Պարսամ Մուրատ 105
Պալիխան 292
Պաւղոս առաքեալ 122, 207, 332
Պետրէ առաջ. 344
Պետրոս (տարբեր) 242, 195, 136, 207, 261, 277, 330, 344
Պետրոս առաքեալ 332
Պետրոս բէկ 85
Պետրոս բեկ Զաւատբէկեան Ղազարեանց 74, 75
Պետրոս Գրիգորեան Բահադարեանց 236
Պետրոս Գրիգորեան Յովսէփեանց 104
Պետրոս եպս. 215
Պետրոս կաթ. Աղուանից 94, 95, 129, 174, 182-184, 209, 214, 242, 256, 290, 304, 214, 320, 324, 354
Պետրոս Մարաթեանց 208
Պետրոս Մեծ (կայսր Ռուսաց)18
Պետրոս Յակովբեան Ներսիսեանց 88
Պետրոս (որդի Գէորգ Զուղայեցու) 92
Պետրոս վարդ 64
Պերոզ 367
Պէկի (որդի Վահրամայ) 268
Պըլը-Պուղի 7, 228,
Պըրընղուխտ 108
Պլուտարքոս 289
Պհար 256
Պողոս ուզբաշի 243
Պոմպէոս 51
Պոռշ 266, 268
Պոռշ (որդի Վասակայ) 247
Պրոկղ 95
Պուճայ 64
Պուտաղ 252
Պօղոս 64, 223, 282, 301, 328, 340
Պօղոս Ամիրխանեանց Գանձակեցի 308
Պողոս Բաղդասարեան Թաղլարեցի 205
Պողոս Գրիգորեան Յովսէփեանց 104
Պողոս Զառափեանց 186, 187
Պողոս (որդի Գրիգոր Աբոլլեցու) 296
Պողոս (որդի Գաւթի եւ Գիլինարի) 92
Պողոս Շահպարոնեան 140
Պողոս վարդ. 92
Պողոս վարդ. Մարգարեանց 345, 346

Զ
Զալալ (տարբեր) 122, 195, 248, 251, 295, 300
Զալալատդին 377
Զալալ Գօլա Հասան 374
Զալալ-Գօլա 238, 249, 251-254, 256-258, 260, 261, 372
Զալալեաններ 248, 373
Զալալ (որդի Սաւարշի) 182
Զանգուլի 293
Զաքարա իշխան 122, 372, 373
Զաքարա (որդի Խաղբակայ) 225
Զաւար-բէկ 74, 75
Զաւատ-խան 180, 305, 306
Զափար Ղալի խան 117
Զերգամ (հայր Ղարաքի) 202
Զհան շահ 50, 52, 53, 257, 297, 303, 304
Զհանշայ (ոմն)267
Զղալ սարտար 91
Զոնտար 113
Զուանշիր իշխան 67, 100, 110, 118
Զուրճի Ուքան 241

Ռ
Ռահիմ-բեկ Շուշեցի 85
Ռեմանոս 295
Ռըստակէս 264
Ռոինով Ա. Ս. 26
Ռոսմոսոք 371
Ռստակէս 212
Ռստակէս 353
Ռստակես Գ. կաթ. հայոց 287
Ռուստամ 188

Ս
Սադիկ 215
Սադրադին 280
Սադուն 331
Սադուն (որդի Քուրդ իշխանի) 374, 379
Սաթենիկ 20, 21
Սալահ ադ-դին 338
Սահակ Աբրահամեան 222
Սահակ իշխ. Արծրունի 367
Սակո 262
Սահակ եպս. 215, 216
Սահակ 227, 250, 290, 295, 319, 320
Սահակ վրդ. 90
Սահակ Սեւադայ 174, 380
Սահակ քահանայ 127
Սահլ Սմբատեան 373
Սաղդաթեար 313
Սամուէլ եպս. Դատեանց 308
Սամուր 315
Սայեամ 222
Սայի Բէկ 272
Սայի (որդի Սարգսի) 203
Սայտուն 252, 253
Սայտի (որդի Շանշի) 364
Սանաթ 87
Սանաս 116
Սանաս երեց 254
Սանեսան թագ. մաչքթաց 62, 371
Սանվարի 41
Սառա (տարբեր) 107, 198
Սառիկ 318
Սասնայ 277, 317
Սասնայ Հանդաբերդցի 252
Սավոյինայ 298
Սատ 315
Սատոյ 51
Սարգիս Ալեքսանեանց 290
Սարգիս (տարբեր) 92, 116, 182, 223, 243, 246, 248, 254, 267, 274, 278, 280, 287, 313, 333, 317, 327
Սարգիս Ամիր սպասալար 344
Սարգիս առաջնորդ Գետամիջոյ ուխտի 287
Սարգիս Բագրատունեան 343
Սարգիս Բաղրբէկեան Մէլիք Շահնազարեանց 288
Սարգիս Բարխուդարեանց 140, 239
Սարգիս բէկ 225
Սարգիս բէկ Ղարախանեան 145
Սարգիս բէկ Մուսայէլբէկեան Մէլիք Շահնազարեանց 288
Սարգիս Բ. կաթ. հայոց 335
Սարգիս Բրտանց 294
Սարգիս եպս. 202
Սարգիս (թոռն Մէլիք Մատթէոսի) 305
Սարգիս իշխանաց իշխան (հայր Խորիշահի) 250
Սարգիս իշխան (եղբայր Զաքարէի) 377
Սարգիս կաթ.161, 237, 252, 330
Սարգիս կաթ. Աղուանից 252
Սարգիս Կաճկաճեանց 69
Սարգիս Կարնեցի 256
Սարգիս կրօնաւոր 234
Սարգիս (հայր Շալուէի եւ Իսանէի) 369
Սարգիս Մեծ 248
Սարգիս Շահպարոնեանց 140
Սարգիս Շնորհալի 251
Սարգիս (որդի Ասլանայ) 259
Սարգիս (որդի Բազարի) 259
Սարգիս (որդի Գրիգորի Դոփեան) 309
Սարգիս (որդի Խմիշի) 224
Սարգիս (որդի Սիմոնի Թիֆլիսեցու) 238
Սարգիս (որդի վահրամի Դոփեանց) 262, 267, 268
Սարգիս (որդի տէր Գրիգորի) 266
Սարգիս Զալալեան 10, 17, 75, 107
Սարգիս (սբ.) 201
Սարգիս վարդ. (տարբեր) 95, 115, 129, 199, 314, 320, 339, 366
Սարգիս տէր 64
Սարգիս տէր Ազարեանց 183, 299
Սարգիս տէր Բարսեղեանց 352

Սարգիս տէր Օհանեան 97
Սարգիս քահ. (տարբեր) 19, 86, 106, 109, 205, 280, 352
Սարգիս քահ. Տէր-Սարգսեանց 289
Սարթախ 366
Սարտար 90
Սարտար Ջղալ աղլի 312
Սարուի Աւան (շինող եկեղ.) 290
Սարուխան բէկ 375
Սարուխան (որդի Մէլիք Թամրազի) 296
Սարում 264
Սաւարշ 182
Սափար 344
Սափար Թարխանեան 372
Սափար (որդի Մէլիք Նկանի) 198
Սափար (որդի Մէլիք Եսայու) 199
Սաքար (որդի Մովսէսի) 137
Սեդրակ Բարխուդարեան 9, 11, 12
Սեդրակ քահ. Տէր-Յովհաննիսեան Տէր Մարտիրոսեանց 140, 141
Սեմ 50
Սենեքերիմ 52, 67, 75
Սենեքերիմ (որդի Սեւադայի) 377, 378
Սերոբ քահ. 347
Սեւադայ 161, 247, 377
Սէբէոս 175
Սէյին բէկ (որդի Մէլիք Շահնազարի) 209
Սէյտի (որդի Շանշէի) 268
Սէյրար 294
Սիմաւոն Մէլիք 184
Սիմէոն Գանձակեցի 95
Սիմէօն երէց 290
Սիմէօն (տարբեր) 182, 90, 201, 260, 281, 319
Սիմէօն եպս. 248
Սիմէօն կաթ. Աղուանից 115, 248, 280
Սիմէօն Յովսէփեան Դաւիթեանց 115
Սիմէօն տանուտէր 290
Սիմէօն քահ. 222, 324
Սիմէոն վարդ. (Նվիրակ Էջմիածնի) 335
Սիսխաթուն 353
Սիրական (որդի Ծատուրի) 236
Սիրունիկ 317
Սիրաւք (որդի Խութլափի) 195
Սիօն կաթ. հայոց 367
Սհար խանում 272
Սմբատ (ոմն) 338, 373, 246
Սմբատ Բագրատունի 379
Սմբատ Բ. թագ. Սիւնեաց 377
Սմբատ թագ. 344
Սմբատ իշխ. 254
Սմբատ Մամիկոնեան 20, 32, 67
Սմբատ (որդի Աշոտոյ) 343
Սմբատ (որդի Լիպարիտի) 266
Սմպատ (որդի Ջաջուռի) 255
Սմբատ (որդի Փիրուամզի) 252
Սմբատ Փարսատանեան 340
Սնպատ 225, 246
Սողոմոն (տարբեր) 112, 207, 318
Սողոմոն Յար. Նալչագարեանց 310
Սողոմոն վարդ. 102
Սողոմոն քահ. 75
Սողրաթմիշ 105
Սոռի Զիթախէնց 328
Սոսթանէս 363
Սոստանէս (որդի Հայրապետի) 242
Սոտումակ 112
Սպանդիար 313
Սպանդիար-Նայիպ 68
Սպարապետ 284
Սպրամ 373
Ստափչինսկի Անդրէյ Միխայէլովիչ 76, 79
Ստեփան Բարխուտարեանց 239
Ստեփան Իսրայէլեան 241
Ստեփան Կաճկաճեանց 69
Ստեփան (Ստեփաննոս, տարբեր) 64, 94, 107, 121, 122, 127, 343, 344
Ստեփան (որդի Մելիք Առստամի) 323
Ստեփան (որդի Մելիք Ղորխմազի) 328
Ստեփաննոս առաջ. Գանձասարայ 227
Ստեփաննոս եպս. 127
Ստեփաննոս Լազարեանց 73
Ստեփաննոս կաթ. Աղուանից 143, 225, 278, 280, 297, 299
Ստեփաննոս նախավկայ 200
Ստեփաննոս (սբ.) 197
Ստեփաննոս վարդ. առաջ. Ապիսնկայ անապատի 234
Ստեփաննոս վարդ. (տարբեր) 180, 212, 269
Ստեփաննոս քահ. (տարբեր) 143, 181
Ստեփաննոս Տարսայիճ 300
Ստեփաննոս Օրբէլեան 51
Սրաադին 278
Սրապիոն 315
Սրապիոն Շխեանց Ծուշեցի 234
Սրաջադին 143
Սութան շահ 113
Սուլթան Խալ 106
Սուլթան 64, 107
Սութան Կուլեանց 87
Սուլթա նաւի 336
Սուլխան (որդի Մանտեսի) 343
Սուլտան Մէլիք 232
Սուրապ (ոմն) 195
Սուրվատ 113
Սուքեաս 334
Սուքիաս 125, 275

Վ

Վազգեն Յակոբեան 10
Վալիճան 195
Վախթանգ 64, 252, 260
Վախթանկ (տերԽաչենոյ) 248, 250, 253, 266, 267, 338, 373, 374
Վախվախխով 24
Վահագն 48
Վահան (տարբեր) 64, 183
Վահրամ 224, 225, 348, 363, 369
Վահրամ իշխան 170, 268, 275, 326, 369, 377
Վահրամ (որդի Գրիգորի) 267, 373
Վաղարշ թագ. 52, 67
Վաղարշ թագ. հայոց 32, 33, 51 161
Վանական վարդ. 295, 325, 327, 372, 377, 378
Վանէս 329
Վանին 122
ՎանիՋաջուռեան 122
Վաչագան (Վաչական) Գ. 281, 367, 371-374
Վաչական (տարբեր) 51, 52, 69, 80, 131
Վաչէ 32, 51, 177, 348, 366, 367
Վառվառա Բահաթրեանց 237
Վառվառա 239
Վասակ 122, 255, 332, 338, 348, 353
Վասակ իշխան Բագրատունի 378
Վասակ իշխան Նոր բերդի 379, 380
Վասակ (Եղբայր Վախտանկ խաչենցու) 338, 379
Վասակ (որդի Հասանայ) 262
Վասակ թագ. 161
Վասիլ թագ. 335
Վասիլ իշխան. 297
Վասխոտ 113
Վարազ-Գրիգոր 226
Վարազ-Պերոժ 138
Վարազ-Տրդատ 226
Վարանցով 140
Վարդ 58, 59
Վարդան (առաջորդ ուխտի Գանձասարայ) 250
Վարդան Արեւելցի 67, 86, 289, 366, 376, 380
Վարդան Երէց 232, 221
Վարդան զաւրավար 32, 46, 68, 122
Վարդան (տարբեր) 59, 63, 69, 100, 121, 200, 232, 242 248, 281, 287, 294, 297, 328, 329, 338
Վարդանէս 314
Վարդխաթան 20, 323
Վել 363
Վելիճան (Վելիջան) 223, 253, 293, 318
Վելիջան պարոն Խաչենաձորց 287
Վերտի (որդի Մէլիք Նկանի) 198.
Վէլիջան Ջալալեան 203
Վիրոյ կաթ. Աղուանից 276, 374
Վլաս 131
Վլաս վարդ. Շամախեցի 93, 114, 115, 142
Վշտասպ 48
Վռամ 220
Վրդանէս (տարբեր) 115, 195, 202, 205, 212
Վարկ 82

Տ

Տարրբ 363
Տալիթայ 343
Տաղտան 223
Տանկիկ - տես Վախթանկ
Սակառ
Տարսայիճ 300, 373
Տաւիթ (որդի Գօրգինի) 286
Տաւիտ բէկ 363
Տաւութ 206, 233
Տաւտար (որդի Ջանասի) 291
Տեօնմազ 282
Տէր-Աբրահամ Սպանդունի 69
Տէր-Առաքել 129
Տէր-Աստուածատրեանց 32
Տէր-Աւետիս Տէր-Իսրայելեանց 125
Տէր-Իսրայէլ 64
Տէր-Մուքայէլ 64
Տէր-Ոսկան 142
Տէր-Ոսկանեան 196
Տէր-Սարգսեանց 201
Տիգրան Նրուանդեան 51
Տիրածէր 299, 327
Տիրացու 308
Տողմիշ 353
Տրդատ (թագ.) 29, 32, 52, 67, 68, 289
Տրդատ 64
Տուրսուն 252, 268
Տուրսուն (որդի Աղբուղի) 267, 268

Ր

Բաֆի 8

Ց

Ցիցիանով 18, 33, 310

Ու

Ուղուբաբեան Բ. Ա. 9, 11, 12, 14
Ուլուբէկ 19
Ուլուխան 102, 284
Ուլուպապ 373
Ուլուպէկ 257
Ուխտանէս 202, 376
Ուհան Գբենեցի 251
Ուհանէս 363
Ուհան (որդի Ետկարի) 278
Ուղուրլու խան 184, 290, 303
Ումիտ 107, 232
Ունծ Ալէքսիոս 352
Ունայր 51
Ուսէփ երէց 207
Ուրպէլեան 308
Ուքան իշխան 275, 374

Փ

Փարի (տարբեր) 293, 329
Փախրադին 280
Փախրայտին ամիր 275
Փաւստոս Բուզանդ 46, 47
Փափազյան Հ. Դ. 12
Փեփրոնէ Խուբեանց Մէլիք Բէկլարեանց 285
Փիլիպէ (որդի Գրիգորի) 378
Փիլիպոս առաքեալ 234
Փիլիպոսմ (Փիլիպպէ) 52, 133, 239
Փիլիպոս կաթ. 102, 185, 186, 234, 297, 318
Փիրպուտաղ 285
Փրխոլ ամիր 103

Քաղոյ Յովսէփ-բէկ Մէլիք-Շահնազարեանց 213
Քալպալի խան 303
Քամալ 107
Քամալ բէկ 293

Քամիլ 223
Քարամ 110
Քելլ 319
Քեռժվան 328
Քերովբէ Տէր-Մարտիրոսեանց 184, 300
Քերոբեան Ա. Ա. 12
Քուրդ իշխան 266, 338

Օ
Օհան Գբրիելեան 80
Օհան եպս. 94, 95
Օհանէս (որդի Օսէփ բէկի) 284
Օհան խան 80
Օհան (տարբեր) 92, 108, 112, 159, 199, 227
Օհանջան-բէկ 77, 85
Օմար 71
Օսեփ Արեմաթացի 234
Օսէփ (որդի Մէլիք-Եկանի) 198
Օսման փաշա 86
Օվանէս բէկ Իսրայէլբեկեան 288
Օվասափ որդի Թումանի 90
Օվսէփ որդի Մուշքարի 121
Օտոփ 109
Օրբելի Յովսէփ 11
Օրտուխան 64

Ֆ
Ֆաթալի խան 223
Ֆարաւոն վարդ. Երուսաղէմայ 180
Ֆարազալի բէկ 290
Ֆիրկովիչ Կարայիմ 67

ՑԱՆԿ

ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿԻՐ ԵՒ ԴՐԱՑԻՔ 16
Նպատակ 17
Պետրովակ 18
Թէմիրխանշուրա 18
Արկայ աւերակ գիւղատեղի 20
Ղունիր 21
Ճոխ 22
Կիրճ 23
Խունձախ 23
Փաթանոզ 24
Հայկական եկեղեցի 24
Զանկի խարիթոն օղլու ցուցմունքը 26
Հայկակա՞ն, թէ՞ յունական 27
Կարեւոր տեղեկութիւններ 27
Զեկուցումն 34
Աղուանից երկրի սահմանները 36
Բնական նկարագիր 36
Հանքեր 41
Քարահանքեր 41
Նաւթահանքեր 45
Կասպից ծով 46
Լճակներ 47
Բնակիչներ 48
Կրօնական նկարագիր 51
Քրիստոնէական կրօն 52
Քաղաքական նկարագիր 53
Բարբառներ 56
Փոփոխմունք 59
Զոզա Ա. մայրաքաղաք Աղուանից 62
Դարբանդ 65
Դարբանդի գաւառներն 71
Ճղրաց գաւառներ 73
Ղուբա 73
Խաչ-մաս 74
Արքունի ձմեռանոց 77
Թալաբի 77
Քիլվար 79
Քիլվարի շուրջը 80
Խաշնի 80
Ուլվար 80
Դի-խան 80
Շիհար-երի-ցոի 81
Խալթանի ամառանոց 81
Լփնաց երկիր 82
Լփնաց մայրաքաղաք 82
Աւշարան 83
Բաղու 84
Ռատանի գաւառ 86
Շամախի 86
Շամախու գաւառ 89
Ս. Ստեփաննոսի վանք 95
Գարդման գաւառ 97
Բերդեր 99
Գարդման բերդ 100
Կոկիսոն գաւառ 102
Հոզի գաւառ 112
Խենի գաւառ 120
Ղապալա գաւառ 124
Եղիշ Առաքել 131
Շաքէ գաւառ 133
Շաքի քաղաք 134
Գետնի տակից ելած ճաշոց 136
Գիս վանք 137
Ճառի գաւառ 139
Շարունակութիւն դարբանդեան պարսպի 140
Բաղասական գաւառ 141
Ստորին գաւառներ. Արաշ գաւառ 141
Աղ-դաշ գիւղաքաղաք 144
Աւերակ բերդատեղի 144
Քաղադաշտ գաւառ 145
Հեջար գաւառ 146
Շաքուայ գաւառների տաճկացեալ հայոց մասին 147
Արտահանումն 150
ԱՐՑԱԽ 153
Յառաջաբանութիւն 154
Արցախի սահմաններն 159
Բնական նկարագիր 160
Արցախեան գաւառներ 170
Դաշտային կամ ստորին գաւառներ 170
Լեռնային գաւառներ կամ Միջին-Արցախ 171
Հարաւային կամ վերին գաւառներ 172
Պիան գաւառ 173

Մուխանք կամ Մուղան գաւառ 173
Գաւառ Տուչքատակ, Տիզրանակերտ եւ այլն 174
Ուտի-Առանձնակ գաւառ 174
Հասան-Ղալա 176
Ղահրիլար կամ Խորոզլու 176
Ղարամանլու 176
Սարով 176
Մարալեան-Սարով 177
Եարմջան 177
Սէյսիւլան 177
Մարաղա 177
Շակաշէն կամ Գանձակի գաւառ 177
Նոր-Գանձակ քաղաք 178
Մասունքներ 182
Սուրբ Լուսաւորիչ եկեղեցի 183
Միաղասեան երկսեռ ծխ. ուսումնարան 183
Սուրբ Գէորգ եկեղեցի 183
Սուրբ Աստուածածին եկեղեցի 184
Սուրբ Աստուածածին ուխտատեղի 186
Սուրբ Սարգիս մատուռ 186
Ս. Կիրակոս եւ Յուղիտա 186
Գանձակիս խաղողների տեսակներն 187
Ղափանլու աւերակ 187
Ելենդօրֆ 188
Կողթ գաւառ 188
Շամքոր աւերակ քաղաք 188
Դիտարաններ 189
Զակամ 189
Խալխայ 189
Կոզէն գիւղ 190
Հոդաբերդ 190
Ղազախ - Փոքրիկ քաղաք 190
Լեռնային գաւառներ 191
Պագկանք կամ Դիզակ գաւառ 191
Ջաբրայէլ 191
Խուտափիրին կամուրջ 192
Ջալալլար-Հաճի-Կարամ 192
Անապատ կամ Սուրբ Լուսաւորիչ 193
Սպիտակ-Խաչ վանք 194
Կաւաք 196
Դոզ աւանիս Մելիքների դամբարանն 198
Սուրբ Ստեփաննոս Նախավկայ 199
Անապատ 200
Կարմիր եկեղեցի 200
Գաւառիս վանքերն 201
Գոչայ վանք 201
Գաւառիս բերդերն 202
Ջալալեան Վեղիջան-Իշխանի բերդն կամ Յօրարերդ 202
Վնէկայ գալա 203
Դոզ բերդ 203
Դիզափայտի բերդ 204
Վարանդայ գաւառ 204
Ղեւոնդեանց անապատ 207
Կուսանաց անապատ 209
Մելիքական ապարաններ 210
Շուշկայ վանք 212
Գրիգորեան ուսումնարան 213
Մամասէի վանք 213
Կարմիր եկեղեցի 215
Բողրխանի վանք 216
Մասեկ ուխտատեղի 217
Սուրբ Լուսաւորիչ 217
Մատթէ ուխտատեղի 218
Ամարաս վանք 218
Եղիշայ Կուսի անապատ 220
Կոհակ ուխտատեղի 221
Ոսկեանց Խաչ 222
Ամենափրկիչ (Ջարկեա մարդ) ուխտատեղի 222
Բռի Եղցէ (եկեղեցի) 224
Ղորա ուխտատեղի 226
Նահատակուհի 226
Գաւառիս բերդերն 230
Բրդահոնջին (բերդաւանչ) Ղալա 230
Շուշի քաղաք 231
Անապատ Կուսանաց 236
Թեմական դպրոց Ջ. Դասեան 237
Ամենափրկիչ եկեղեցի 241
Օխտը (եօթն) եղցի 242
Պոդեսրերք վանք 245
Անապատ Կիչանի 247
Կոշիկ անապատ 248
Ս. Յակովբ վանք 248
Գանձասար վանք 250
Պառաւաձորի եկեղեցին 254
Դարպասներ 254
Հաւապուկ վանք 254
Համամի ձոր 255
Վաճառ աւերակ գիւղաքաղաք 256
Ամենափրկիչ վանք 259
Խաթրայ վանք կամ Խթրավանք 261
Խաչեն գաւառիս բերդերն 262
Դաղի վանք 265
Դոփի սրգիւրն եւ թոռներն 267
Մշահանի վանք 269
Գաւառիս բերդերն 270
Հաւրթախաղայ (Լաչին Ղալա) 270
Ջրաբերդ գաւառ 270
Մելիք Իսրայէլեանների Ա. ապարանն 273
Կարմիր աւեւարան 274
Մայրաքաղաքի Հանդստարան 275
Մայրաքաղաք կամ քդրքատեղ 275
Պառաւի կամուրջ 277
Հռեկայ կամ Հիւրեկայ վանք 278
Մելիք Բէկլարեանների ապարանն 279
Երից Մանկանց վանք 280
Եղիշ-Առաքեայ կամ Ջրվշտիկ վանք 281
Ջրաբերդ գաւառիս բերդերն 284
Ամենափրկիչ վանք Կիւլստանի 285
Դատի-Բէկանց վանք 285
Մելիք-Շահնազարեանցների մասին 288
Միջի վանք 291
Երի վանք 291
Ալհարակ լճակ 291
Կոսի կալ 292
Բերդ Մելիք-Բէկլարեանների 292
Ղալաչա 292
Ջափարի գալա 293
Աւագ Սուրբ Նշան 293
Մասունքներ 296
Անապատ 296
Եղնասար վանք 296
Մրցունիս 297
Պանդալիոն վանք 299
Հաճի Քեանդ 300
Սուրբ Աստուածածնայ վանք 301
Սուրբ Սարգսի վանք 301
Քեարխանայ վանք 302
Թարգմանչաց անապատ 306
Թարգմանչաց վանք 308
Մլղնարերդ վանք (Մածնարերդ վանք) 310
Ամենափրկիչ վանք Նիւկզարի մօտ 311
Կարմիր եկեղեցի (կամ Հոռոմաշէն) 311
Հին-Փիփ գիւղ 314
Օխտը եղցի կամ Բարահերձ 314
Գարդման աւան 314
Գաւառիս բերդերն 315
Փառիսոս գաւառ 316
Փառիսոսի վանք 317
Փառիսոս քաղաք (Ղալաքեանդ) 317
Խամշի վանք 319
Հին-Գետաբակ 320
Ջարէքայ անապատ 320
Խունիսայ վանք 321
Խորանաշատ վանք 325
Գաւառիս բերդերն 326
Բուստի կամ Բաւս գաւառ 327
Շիմուրատայ վանք 331
Վարագայ Սուրբ Նշան վանք 332
Սրվեղ վանք 333
Մորոյ Ջորոյ կամ Ծովզի վանք 334
Սուրբ Կիրակի Մատուռ 337
Լաչին-Ղայաի-Ջոր 337
Գօշ-Մխիթարայ վանք 338
Սուրբ Հռիփսիմէ մատուռ 340
Հոզին Սուրբ մատուռ 340
Հին-Շար-Խաչ 341
Գաւառիս բերդերն 342
Երզեվանք բերդ 342
Ջաւէ գաւառ (Ղազախ) 343
Ջուխտակ վանք 344
Մաթոսի գիւղատեղ 344
Հաղարծին վանք 345
Մակարայ վանք 349
Առաքելոց վանք 351
Կիրանց վանք 352
Դեղձնուտի վանք 353
Դվեղայ Սուրբ Սարգիս վանք 354
Սուրբ Աստուածածնայ վանք 355
Գաւառիս բերդերն 359
Հարաւային կամ վերին գաւառներ 362
Գաւառիս բերդերն 363
Մայր եկեղեցի 366
Սուրբ Աստուածածին վանք 366
Մանոթութիւններ 369
Տեղանունների եւ անձնանունների ցանկ 384